15 Կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմին. յոտն եկաց՝ և պաշտեր զնոսա:

16 Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զոգիսն բանիւ. և զամ հիւանդսն բժշկեաց:

17 Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն եսայեայ մարգարէին՝ ասելոյ՝ զանձինս մեր առ եաւ և զհիւանդութիւնս մեր կրեաց:

18 Տեսեալ Յիսուս զբազումս ի շուրջ զինքեանս՝ հրամայեաց երթալ յայն կողմն:

19 Եւ մերձեցեալ մի դպիր՝ ասէ ցնա. վարդապետ, երթիցեմ զհետ քո ուր և գնասցես:

20 Ասէ ցնա Յիսուս. աղուէսք ունին զանդս, և հաւք երկնից բոյս. իսկ որդի մարդոյ ոչ ունի ուր զգլուխ իւր դիցէ:

21 Եւ այլ ոմն ի աշակերտացն ասէ ցնա. տէր, հրամայեա ինձ նախ երթալ և թաղել զհայր իմ:

22 Ասէ ցնա Յիսուս. հետևեա ինձ, և թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց:

23 Եւ մտեալ նա ի նաւ՝ հետևեցան նմա աշակերտք նորա:

24 Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովու, մինչև ծածկեցան ալեաց նաւն. և նա ննջէր:

25 Եւ մերձեցեալ աշակերտք նորա՝ յարուցին զնա՝ ասելով. տէր, փրկեա զմեզ, կորնչիմք:

26 Ասէ ցնոսա Յիսուս. ընդէ՞ր երկնչիք, սակաւահաւատք: Յետ այնորիկ յարուցեալ՝ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ:

27 Եւ զարմացեալ մարդիկն ասէին. զի՞նչ է այս, զի և հողմ և ծով հնազանդին նմա:

28 Եւ եկեալ նորա յայն կողմն յերկիրն գադարացոց, ընդ առաջ եհան նմա երկու դիւահարք ելեալք ի գերեզմանաց, դժնդակք յոյժ, մինչև ոչ ոք կարէր անցանել ճանապարհաւ անտի:

29 Եւ ահա գոչեցին՝ ասելով. զի՞նչ է մեզ և քեզ, Յիսուս որդի աստուծոյ. եկիր յառաջ քան զժամանակ տանջել զմեզ:

30 Էր ընդ նոսա հեռի ոչխարաց խոշոր հոտ արածեալ:

31 Դևքն ուրեմն աղաչեցին զնա՝ ասելով. եթէ հանես զմեզ, արձակեա զմեզ ի հոտն խոզից:

32 Եւ ասէ ցնոսա. երթայք: Եւ նոքա ելեալ գնացին ի հոտն խոզից. և ահա ամենայն հոտն խոզից ընկեցաւ ի ծովն ի վիմաց, և մեռան ի ջուրս:

33 Եւ հովիտքն փախեան, և գնացեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն և զդիւահարացն:

34 Եւ ահա ամենայն քաղաքն ելին ընդ առաջ Յիսուսի. և տեսեալ զնա՝ աղաչեցին զի անցցէ ի սահմանաց նոցա:

մարքոսն ասումեմ ձեզ, որ խոպայելի մէջն էլ իսկի մին ժամանակ էսպէսի հաւատք չը գտի:

11 Բայց ասումեմ ձեզ, որ շատ մարդիք արևելքիցն և արևմտիցն կըգան, և աբրահամի և իսահակի և յակոբի հետ երկնքի արքայութենումն կընստին:

12 Իսկ արքայութեան որդիքն դուրս կելլեն դրսի խաւարն, որ էն տեղ լայ և ատամներուն կըճըռելն կըլինի:

13 Եւ Յիսուս ասաց հարիւրապետին. գնա՝ և ինչպէս որ հաւատացիր՝ թող էնպէս լինի քեզ. և նորա տյան էն օրումն առողջացաւ:

14 Եւ երբոր Յիսուս եկաւ պետրոսի տունն, տեսաւ որ նորա զրքանչն տենալ մէջն վէրընկած էր:

15 Նորա ձեռքին բռնեց, և տենան թողեց նորան. վերկացաւ և ծառայութիւն էր տնում նորանց:

16 Երբոր իրիկուն էլաւ՝ շատ դիւահարներ բերին նորան մօտ՝ և (մէնակ) խօսքով հանեց դևերըն, և ամէն հիւանդներըն բժշկեց:

17 Որ կատարվի եսայի մարգարէի ձեռովն ասված բանն.

գալեկի. նա գհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։

18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրև, հրամայեաց երթալ յայնկոյս։

19 Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ եկից և ես զկնի քո յորում վայր և երթիցես։

20 Ասէ ցնա Յիսուս. աղուէսունք որջք ունին՝ և թռչնոց երկնից բոյնք, այլ որդի մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ իւր։

21 Եւ մի ոմն յաշակերտացն նորա ասէ ցնա. տէր՝ ետու՛ր ինձ հրամանն՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ։

22 Ասէ ցնա Յիսուս. եկ զկնի իմ, և թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց։

23 Եւ երբեմն եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա։

24 Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեացն անտի, և ինքն ննջէր։

25 Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ա-

թե՛ նա մեր հիւանդութիւնսն վերացուց՝ և մեր ցաւերըն վերկալաւ։

18 Յիսուս երբեմն շատ ժողովուրդներ տեսաւ իրան չորս կողմանէ. հրաման տուաւ էն կողմն գնալ։

19 Եւ մին կարդացօղ մօտ եկաւ և նորան ասաց. վարդապետ՝ ես էլ քո ետևէդ կըգամ որ տեղ որ գնաս։

20 Եւ Յիսուս նորան ասաց. աղուեսներն կենալոց փոսեր ունին. և երկնքի լըռչուններն բուն. բայց որդին մարդոյ միւն տեղ չունի՝ որ իրան գլուխըն դնէ։

21 Եւ նորա աշակերտներից միւն ասաց նորան. Տէր ինձ հրաման տուր՝ որ գնամ առաջ իմ հայրըն թաղեմ։

22 Յիսուս նորան ասաց. իմ ետևէս եկ, և թո՛ղ մեռելներն որ իրանց մեռելներըն թաղեն։

23 Եւ երբոր մտաւ նաւն, նորա աշակերտներն նորա ետևէն գնացին։

24 Եւ ահա մեծ ալեկոծութիւն էլաւ ծովի մէջն. մինչև որ նաւն էլ ծածկվումէր ալիքներից. և ինքն քնած էր։

25 Եւ աշակերտներն մօտ եկին՝ նորան զարթնացրին և

սեն · տէր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք ։

26 Եւ ասէ ցնոսա · ընդէ՞ր վհատասիրտք էք սակաւահաւատք· յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ ։

27 Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին · որպիսի՞ ոք իցէ սա՝ զի և հողմք և ծով հնազանդին սմա ։

28 Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ · որպէս զի չէր հնար անցանել ուղիք ընդ այն ճանապարհ ։

29 Եւ ահա աղաղակեցին և ասեն · զի՞ կայ մեր և քո Ցիսուս որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ ։

30 Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական ։

31 Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին · եթէ հանես զմեզ ասա՛, հրամայն տուր մեզ երթալ յերամակ խոզիցն ։

ասացին· Տէր՝ մեզ փրկեր՝ որ կորչումիմք ։

26 Եւ նորանց ասաց· ինչո՞ վախկոտ էք պակասահաւատներ։ Յն ժամանակն վերկացաւ՝ քամիներին և ծովին սաստեց, և մեծ խաղաղութիւն էլաւ ։

27 Եւ մարդիքն զարմացան և ասումէին· Ես ի՞նչպէսի մարդ է՝ որ քամիներն և ծովն էլ հնազանդվումեն սոքան ։

28 Եւ երբոր էն կողմն անցին գերգեսացոց երկիրն, երկու դիւահար մարդ պատահեցին նորան, գերեզմաններիցն դուրս եկած՝ որ էնքան չար էին, մինչև որ հնար չէր, թէ մին մարդ էն ճանապարհովն անցկենալ ։

29 Եւ ահա աղաղակեցին և ասացին · Ցիսուս որդի Աստուծոյ քեզ ի՞նչ բան կայ մեզ հետ · որ եկել ես անժամանակ մեզ տանջել ։

30 Եւ նորանցից հեռու մին խոզի երամակ (արած) կար որ արածումէր ։

31 Եւ դևերն աղաչումէին նորան և ասում, Թէ որ մեզ ես տեղիցս հանես, հրամայն տուր մեզ՝ որ գնանք էն խոզերի երամակն (արած)։

32 Եւ ասէ ցնոսա՝ երթ-
թայք. և նոքա ելեալ գնա-
յին յերամակն խոզից. և ի-
մեաց ամենայն երամակն՝ ի
դարէ անտի՝ ի ծով, և մե-
ռան ի ջուրսն։

33 Եւ խոզաբածքն փա-
խեան, և երթեալ՝ ի քաղաքն
պատմեցին զամենայն, և զիւր
դիւահարացն։

34 Եւ ահա ամենայն քա-
ղաքն ել ընդ առաջ Յիսու-
սի. իբրև տեսին զնա՝ աղաչե-
ցին, զի գնասցէ՝ ի սահմանաց
նոցա։

ԳԼ. Թ։

1 Եւ մտեալ՝ ի նաւ անց
յայնկոյս, և եկն՝ ի քաղաք
իւր։

2 Եւ ահա մատուցին ա-
նա անդամալոյծ մի, որ դնէր
՝ի մահիճս. և տեսեալ Յի-
սուսի զհաւատս նոցա՝ ասէ
ցանդամալոյծն. Թողեալ լի-
ցին քեզ մեղք քո։

3 Եւ ահա ոմանք՝ ի
դպրացն ասեն ընդ միտս. Հայ-
հոյէ դա։

4 Եւ ծանուցեալ Յիսու-

32 Եւ նորանց ասաց՝ գնա-
ցէք. և նորանք դուրս եկին
գնացին խոզերի երամակն. և
խոզերի ամէն երամակն էն
բարձր տեղեցն վազեց ծովի
մէջն. և ջրերի միջումն մե-
ռան։

33 Եւ խոզաբածներն փա-
խան և գնացին քաղաքն.
պատմեցին ամէնըն, և դիւա-
հարների բաներըն էլ։

34 Եւ ահա ամէն քաղաքն
դուրս եկաւ Յիսուսի առաջն.
երբոր նորան տեսին՝ աղա-
չեցին որ գնայ իրանց երկրի-
ցըն։

1 Եւ նաւն մտաւ անցկա-
ցաւ էն կողմն, և եկաւ իրան
քաղաքն։

2 Եւ ահա մին անդամա-
լոյծ (մարդ) բերին նորա մօտ,
որ մահիճի (ⲙⲁⲃⲓⲁ) մէջն
դրած էր. և Յիսուս նորանց
հաւատքըն տեսնելով. ան-
դամալուծին ասաց. քո մե-
ղքերն թողմած լինին քեզ։

3 Եւ ահա կարդացօղնե-
րիցն մին քանիսն իրանց
մտքումն ասացին. Թէ հայհո-
յումէ դա։

4 Եւ Յիսուս նորանց մտած-

սի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա · ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր ։

5 Զի՞նչ դիւրին է · ասել՝ լքողեալ լիցին քեզ մեղք քո, կամ ասել արի և շրջեա՛ ։

6 Այլ զի գիտասջիք՝ եւ թէ իշխանութիւն ունի որդի մարդոյ երկրի թողուլ դմեղս · յայնժամ ասէ ցանդամալոյծն · արի՛ առ զմահիճս քո՝ եւ երթ՛ ի տուն քո։

7 Եւ յարուցեալ գնաց՝ ի տուն իւր ։

8 Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան · և փառաւոր առնէին զԱստուածն այնպիսի իշխանութիւն մարդկան ։

9 Եւ անցեալ ընդ այն Յիսուս՝ եառն զայր մի, զի Նաեր՝ ի մաքսաւորութեան՝ մատթէոս անուն · և ասէ ցնա՝ ե՛կ զկնի իմ · և յարուցեալ գնաց զկնի նորա ։

10 Եւ եղև իբրեւ բազմեալ էր նա՝ ի տան, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք մուտ քին լմայաւ և ասաց նոր անդ · ի՞նչու է ք ընդ բան մատուցանէ դուք ձեր սրտեբուծին ։

5 Որ՞ն է հեշտ, ասել՝ թէ քո մեղքերդ թողեալ լինին քեզ, թէ ասել՝ վե՛ր կաց և մա՛ր եկ ։

6 Բայց որ դուք լմանաք՝ թէ որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ մեղայ թողութիւն առնել ։ Ասէ ժամանակն անդամալուծին ասաց · վե՛րկաց քո մահիճդ (ᾆρον τὴν κλίνην) վերա և գնա՛ քո առնդ ։

7 Եւ նա վերկացաւ՝ և գնաց իրան տունն ։

8 Երբոր ժողովուրդներն տեսին, զարմացան՝ և Աստուծոյ փառք էին տալիս, որ էնպէսի իշխանութիւն է տուել մարդկանց ։

9 Եւ Յիսուս երբոր էն տեղից առաջ գնաց, տեսաւ մին մատթէոս անուն մարդ, որ նստած մաքսաւորութիւն (τελωνίου) էր անում. և նորան ասաց · իմ եաւէտ եկ· և նա վերկացաւ գնաց նորա նաւէն ։

10 Եւ էլաւ երբոր նորա տան մէջն սեղանի վերայ նըստած էր, և ահա ուրիշ էլ

եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի՝ և ընդ աշակերտս նորա ։

11 Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա . ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր ։

12 Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա . ոչ է պիտոյ բժիշկ կարողացն՝ այլ հիւանդացն ։

13 Երթայք՝ ուսարուք զի՞նչ է . ողորմութիւն կամիմ , և ոչ զզոհ . զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս ։

14 Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՝ և ասեն . ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն ։

15 Ասէ ցնոսա Յիսուս . միթէ մարթի՞ իրիք իւիք մանկանցն առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իւիք . այլ եկեսցեն աւուրքն՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն , և ապա պահեսցեն։

շատ մաքսաւորներ (Հէ-Տրա-Չէնէք) և մեղաւորներ եկել էին . և Յիսուսի և նորա աշակերտների հետ նստած էին ։

11 Երբոր փարիսեցիքն տեսին , նորա աշակերտներին ասացին . ի՞նչու ձեր վարդապետն մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ (հայց) է ուտում ։

12 Բայց Յիսուս երբոր լսեց, նորանց ասաց . կարօղներին բժիշկ պէտք չէ , այլ հիւանդներին ։

13 Գնացէք սովրեցէք՝ լմե՞նչ է (որ կասի՝) ողորմութիւն եմ կամենում՝ և ոչ մատաղ . ինչու որ ես չեմ եկել որ արդարներին կանչեմ , այլ մեղաւորներին ։

14 Յն ժամանակն յոհաննէսի աշակերտներն նորա մօտ եկին և ասացին . ի՞նչու մենք և փարիսեցիքն շատ պատ ենք պահում , և քո աշակերտներդ չեն պահում ։

15 Յիսուս նորանց ասաց . միթէ կարելի՞ է որ հարսնեկի տղայքն սուգ անեն քանի որ փեսան նորանց հետ է . բայց օրեր կըգան՝ որ փեսան նորանցից վերկառնվի , և նրանից ետև կըպահեն ։

16 Ո՛չ որ արկանէ կապկապ
անթժամ ՚ի վերայ հնացեալ
ձորձոյ · զի առնու եւ լանէ
զլրումթիւնն նորա ՚ի հանդերձէն, և ևս չար պատառումն
լինի ։

17 Եւ ո՛չ արկանեն գինի
նոր ՚ի տիկս հինս · ապա թէ
ոչ՝ տիկքն պատառին՝ և գինին հեղուս, և տիկքն կորընչին · այլ արկանեն գինի նոր
՚ի տիկս նորս, և երկոքին պահին ։

18 Մինչդեռ նա զայս խոսեր ընդ նոսա, ահա իշխան
մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր · դուստր
իմ արդ եւս վախճանեցաւ ·
այլ եկեալ դիցես զձեռն քո
՚ի վերայ նորա՝ և կեցցէ ։

19 Յարեաւ Յիսուս՝ և
գնաց զկնի նորա աշակերտաքն հանդերձ ։

20 Եւ ահա կին մի տեառ-
նէս երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի
դրօշակ հանդերձի նորա ։

21 Քանզի ասէր ՚ի մտի իւ-
րում · թէ միայն մերձենամ
՚ի հանդերձս նորա՝ փրկիմ ։

16 Ո՛չ ոք չըմաշված կար-
կատանի կտոր հին շորի վը-
րայ չի՛ քցիլ · ինչու որ՝ նա
էն հին շորի ուժը էլ կառնէ դուրս կըգնայ՝ և նորա
պատառվածքն էլ աւելի չար
կըլինի ։

17 Եւ նոր գինին հին տը-
կերի մէջ չեն ածել · ապա
թէ ոչ՝ տըկերն կըպատառվին՝ և գինին կըթափվի, և
տըկերն էլ կըխորչին · բայց
նոր գինին նոր տըկերի մէջ
կածեն · և երկուքն էլ կըպահվին ։

18 Դեռքանի որ նա էս
խոսումէր նորանց հետ, ահա
մին իշխան եկաւ նորան երկրպագութիւն արաւ՝ և ասաց · իմ աղջիկս հենց հիմիկ
մեռնելոյ վերայ է· միայն թէ
ելէկ և քո ձեռըդ նորա վերայ դիր՝ և կապրի ։

19 Յիսուս վերկացաւ և աշակերտներովն գնաց նորա ետևէն ։

20 Եւ ահա մին կին, որ
տասներկու տարի միշտ արիւն
թափելով ցաւագար էր· մօտ
եկաւ՝ և ետևից նորա շորի
ծայրին դիպաւ ։

21 Ինչուր՝ իրան մտքումն
ասումէր՝ թէ մէնակ նորա շորին դիպչիմ, կըփրկըվիմ ։

22 Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ և եսես զնա՝ ասէ . քաջալերեսցի դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ . և փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ :

23 Իբրեւ եկն Յիսուս ի տունն իշխանին , և եսես զխոզաղարան և ամբոխ յոյժ , ասէ ցնոսա . ի բաց դնացէք :

24 Զի ոչ եմէ մեռեալ ե աղջիկդ՝ այլ ննջէ :

25 Եւ ծաղր առնէին զնա. և իբրեւ եղ ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա , և յարեաւ աղջիկն :

26 Եւ ել համբաւս այս ի ամենայն երկիրն ընդ այն :

27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս , զկնի եղեն նորա կոյրք երկու , աղաղակէին՝ և ասէին . ողորմեաց մեզ որդի դաւիթ :

28 Եւ իբրեւ եկն ի տունն , մատեան առ նա կոյրքն . և ասէ ցնոսա Յիսուս . հաւատայք՝ եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ . ասեն ցնա՝ այո տէր :

29 Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ . ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ :

22 Բայց երբոր Յիսուս յետդարձաւ և նորան տեսաւ, ասաց . ժիր կաց օվ դուստր՝ քո հաւատդ քեզ ապրեցոյցուց . և հենց ին ժամն (ժամհաւն) կինն ազատվեցաւ :

23 Երբոր Յիսուս եկաւ իշխանի տունն, և տեսաւ փողփոչողներն և շատ ամբոխ (խալխ), նորանց ասաց. հեռու դնացէք:

24 Ինչուար՝ էդ աղջիկդ մռաած չէ , բայց քնած է :

25 Եւ ծաղր էին անում նորան. և երբոր ամբոխն (խալխն) դուրս էլաւ, ներս մտաւ՝ նորա ձեռքէն բռնեց . և աղջիկն վերկացաւ :

26 Եւ էս համբաւս դուրս եկաւ էն ամէն երկիրն :

27 Եւ ինչ ժամանակ որ Յիսուս էն տեղիցն անց էր կենում, երկու կոյր աղաղակում էին նորա ետևէն՝ և ասում . որդի դաւիթ՝ մեզ ողորմա :

28 Եւ երբոր տունն մտաւ , կուրերն նորա մօտ եկին . և Յիսուս նորանց ասաց . հաւատո՞ւմէք թէ կարօղ եմ էդ անել ձեզ . և նորան ասացին . հա՛ Տէր :

29 Յն ժամանակն նորանց աչքերին մօտեցաւ՝ և ասաց . ձեր հաւատացին պէս՝ թող լինի ձեզ :

30 Եւ բացան աչք նոցա. և սպառնաց նոցա Յիսուս՝ և ասէ · զգոյշ կայէք՝ մի ոք գիտասցէ :

31 Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն :

32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար :

33 Եւ յելոյծեալ դիւին՝ խօսեցաւ համրն · և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն · Թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի :

34 Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս :

35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս, ուսուցանէր ի ժողովուրդոցն, և քարոզէր զաւետարանն արքայութեան · և բժշկէր զամենայն ախտս և զնեմս հիւանդութեան ի ժողովրդեանն :

36 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա · զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ :

30 Եւ նորանց աչքերն բացան · և Յիսուս նորանց սպառնաց՝ և ասաց · զգոյշ կացէք, որ մին մարդ չիմանայ :

31 Եւ նորանք որ դուրս գնացին, էն ամէն երկրումն նորա անունըն յայտնի արին :

32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում, ահա մին համր (լռիկ) դիւահար մարդ բերին նորա մօտ :

33 Եւ երբոր դևն դուրս եկաւ, համր (լռիկ) (մարդն) խօսեց · և ժողովուրդն երկնչաքարմացան և ասացին · իսկի մին ժամանակ իսրայէլի մէջն էսպէսի բան չի երևեցաւ :

34 Բայց փարիսեցիքն ասում էին · Թէ դա դևերի իշխանովն է հանում դևերըն :

35 Եւ Յիսուս ամէն քաղաքներն և գիւղերն մանէր պատիս նորանց ժողովարաններումն և աւետարանէր արքայութեան աւետարանըն քարոզումէր · և ժողովրդի միջի ամէն յաւերըն և ամէն հիւանդութիւնները բժշկում էր :

36 Եւ ժողովուրդներըն որ տեսաւ՝ խղճէն եկաւ նորանց վերայ · որ աշխատած և ցրուած էին · ինչպէս ոչխարներ որ հովիւ (չոպան) չունին :

37 Ցայնժամ ասէ ցաշա-
կերտսն իւր. Հունձք բազում
են՝ և մշակք սակաւ։
38 Աղաչեցէք զտէր
հնձոյ՝ զի հանցէ մշակս ի
հունձս իւր։

37 Յն ժամանակն իրան ա-
շակերտներին ասաց. Հունձք
շատ են՝ և մշակներն քիչ։
38 Ուրեմն աղաչեցէք հնձի
Տիրոջն՝ որ մշակներ ուղար-
կէ իրան հունձն։

ԳԼ. Ժ։

1 Եւ կոչեցեալ առ ինքն
զերկոտասանեսին աշակերտ-
սըն իւր, ետ նոց իշխանութիւն
այսոց պղծոց հանել զնոսա,
և բժշկել զամենայն ցաւս
և զամենայն հիւանդութիւնս։

2 Եւ առաքելոցն երկո-
տասանից էին անուանք այ-
սոքիկ. առաջին սիմովն՝ ա-
նուանեալն պետրոս, և անդ-
րեաս եղբայր նորա։

3 Յակոբոս զեբեդեայ, և
յովհաննէս եղբայր նորա. փի-
լիպպոս, և բարթուղիմէոս.
թովմաս, և մատթէոս մաք-
սաւոր. յակոբոս ալփեայ, և
ղեբբէոս՝ որ անուանեցաւ թա-
դէոս։

4 Սիմովն կանանացի. և
յուդայ իսկարիովտացի՝ որ և
մատնեացն զնա։

5 Զսոսա երկոտասանեսին
առաքեաց Յիսուս, պատուի-
րեաց նոցա՝ և ասէ, ի ճա-
նապարհ հեթանոսաց մի եր-

1 Եւ իրան տասներկու ա-
շակերտներին իրան մօտ կան-
չեց, և նորանց իշխանութիւն
տուաւ ամէն պիղծ դևերին
վերայ, որ նորանց հանեն. և
ամէն ցաւերըն և ամէն հի-
ւանդութիւններըն բժշկեն։

2 Եւ էն տասներկու առա-
քելոց անուններն էս էին. ա-
ռաջինն սիմոն՝ պետրոս կոչ-
ուածն, և նորա եղբայր անդ-
րէասն։

3 Յակոբոս զեբեդեանն՝
և նորա եղբայր յովհաննէսն.
փիլիպպոս և բարթողիմէոս՝
թովմաս և մատթէոս մաքսա-
ւորն (հրեայ), յակոբոս
ալփեանն. և ղեբբէոս որ
թադէոս կոչվեցաւ։

4 Սիմոն կանանացին՝ և
յուդա իսկարիոտացին՝ նա,
որ մատնեց նորան։

5 Յս տասներկուսին Յի-
սուս ուղարկեց, նորանց պա-
տուէր տուաւ և ասաց. հե-
թանոսների ճանապարհն չը

թայեք, և ՚ի քաղաք տամա-
ցուսոյ մի մտանիցէք ։

6 ԱՅԼ երթայք առաւել
առ ոչխարան կորուսեալս տա-
նըն Իլի ։

7 Եւ երբ երթայեք՝ քա-
րոզեցէք և ասացէք , թէ մեր-
ձեալ է արքայութի երկնից ։

8 Զհիւանդս բժշկեցէք ,
զբորոտս սրբեցէք , զդեւս հա-
նէք , ձրի առիք՝ և ձրի տուէք ։

9 Մի ստանայք ոսկի՝ և մի
արծաթ՝ և մի պղինձ ՚ի գօտիս
ձեր ։

10 Մի պարկ ՚ի Ճանապարհ,
և մի երկուս հանդերձս, մի կո-
շիկս , մի ցուպ · զի արժանի
է մշակն կերակրոյ իւրոյ ։

11 Ցոր քաղաք մտանիցէք
կամ ՚ի գեօղ , հարցանիցէք՝
թէ ո՞ է ՚ի նմա արժանի . և
անդ լինիջի՛ք՝ մինչև ելանի-
ցէք անտի ։

12 Եւ երբեւ մտանիցէք ՚ի
տունն , ողջոյն տայջիք նմա՝ և
ասասջի՛ք · ողջոյն տանս այս-
միկ ։

13 Եթէ իցէ տունն արժա-
նի, եկեսցէ ողջոյնն ձեր ՚ի վե-
րայ նորա · ապա թէ ոչ իցէ
արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ
դարձցի։

գնաք· և սամարացւոց քաղաքն
չը մանէք ։

6 Ռայց աւելի գնայէք խո-
րայելի տան կորած ոչխարնե-
րին մօտ ։

7 Եւ երբոր կըգնաք, քա-
րոզեցէք և ասացէք· թէ եր-
կընքի արքայութին մօտացել է։

8 Հիւանդներըն բժշկե-
ցէք · բորոտներըն սրբեցէք·
դևերըն հանեցէք· ձրի (տո-քո-
ա) առեալէք՝ ձրի (տո-քոա)
տուէք ։

9 Վ՚եր չի՛ առնէք ո՛չ ոս-
կի՝ և ո՛չ արծաթ , և ո՛չ
պղնձէ փող ձեր գօտիկներուն։

10 Ո՛չ Ճանապարհի պարկ,
և ո՛չ երկու շոր՝ ո՛չ կօշիկ՝
ո՛չ գաւազան· ինչուր՝ մշակն
իրան կերակրին արժանի է ։

11 Ո՛ր քաղաք՝ կամ (որ)
գիւղ որ մտնէք , հարցրէք՝
թէ նորանում ոք է արժանի,
և էնտեղ կացէք՝ մինչև որ
էն տեղից դուրս գնաք ։

12 Եւ երբոր տունըն կը-
մըտնէք, ողջոյն տուէք նորան
և ասացէք· ողջոյն էս տանս

13 Թէ որ էն տունն արժա-
նի է , ձեր ողջոյնն նորա վե-
րայ կըգայ · բայց թէ որ ար-
ժանի չէ՝ ձեր ողջոյնն յետ
կըդառնայ դէպի ձեզ ։

14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ եւ ոչ լսիցէ բանից ձերոց, ի բերեալ ելանիցէք ի տանէն՝ կամ ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին ոտից ձերոց։

15 Ամէն ասեմ ձեզ՝ դիւրաւ դոյն լիցի երկրին սադոմացւոց եւ գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։

16 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց։ եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։

17 Զգոյշ լինիջիք ի մարդկանէ։ զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց առնջեսցեն զձեզ։

18 Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տարիցին զձեզ վասն իմ՝ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց։

19 Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի հոգայցէք՝ թէ ինչպէս կամ զինչ խօսիցիք։ զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։

20 Զի ոչ եթէ դուք լ-

14 Եւ ով որ ձեզ չի ընդունի եւ ձեր խօսքին ականջ չի դնի, երբոր էն տանիցն կամ էն քաղաքիցն դուրս կը գնաք, ձեր ոտներիցն վերշին փոշի թօափեցէք։

15 Ճշմարիտն ասում եմ ձեզ, որ օգոմայեցոց եւ գոմոլացոց երկրին համար աւելի հեշտ կըլինի դատաստանի օրուն քան էն քաղաքին։

16 Հա ես ուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխարներ գայլերի մէջ։ սրա համար խոհեմ էլէք՝ ինչպէս օձերն, եւ միամիտ՝ ինչպէս աղաւնիքն։

17 Զգոյշ կացէք մարդկանցիցն։ ինչուոր ձեզ դատաստան կըքաշեն եւ իրանց ժողովրանների մէջն կըտանջեն ձեզ։

18 Եւ դատաւորների եւ թագաւորների առաջն կըտանեն ձեզ իմ պատճառով՝ որ (նրա համար) նորանց եւ հեթանոսներին վկայուէ լինի։

19 Բայց երբոր կըմատնեն ձեզ, հոգս մի անէք՝ թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսիք։ ինչուոր՝ հենց էն ժամուին (ահաւոտին) կըտրուի ձեզ ինչ որ պիտի խօսիք։

20 Պատճառնոր չէ թէ

ցէք՝ որ խօսիցիք՝ այլ հո-
գին հօր ձերոյ՝ որ խօսիցի ՚ի
ձեզ ։

21 Մատնեսցէ եղբայր զեղ-
բայր ՚ի մահ, և հայր զորդի՝
և յարիցեն որդիք ՚ի վերայ
հարց՝ և սպանանիցեն զնոսա։

22 Եւ եղիջիք ատելեաք
յամենեցունց վասն անուան
իմոյ · քակ որ համբերեսցէ
իսպառ, նա կեցցէ ։

23 Եւ յորժամ հալածեսց-
են զձեզ ՚ի քաղաքին յայս-
միկ՝ փախիջիք յայլ · և եթէ
յայնմանէ հալածիցին զձեզ՝
փախիջիք ՚ի միւս ։ Ամէն ա-
սեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքա-
ղաքս իլի՝ մինչև եկեսցէ որ-
դի մարդոյ ։

24 Ոչ է աշակերտ առաւել
քան զվարդապետ, և ոչ ծա-
ռայ քան զտէր իւր ։

25 Շատ է նմա աշակերտին՝
եթէ եղիցի իբրև զվարդա-
պետ իւր, և ծառային՝ իբ-
րև զտէր իւր · եթէ զտանուա-
տէրն բզեղզեբուղ կոչեցին,
որչափ ևս առաւել զընտա-
նիս նորա ։

26 Մի այսուհետև երկնչիք
ՙի նոցանէ · զի ոչ ինչ
է ՚ի ծածուկի՝ որ ոչ յայտ-
նեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծա-
նիցի ։

դուք էք որ կըխօսիք, քայց
ձեր հօր հոգին է որ ձեզա-
նուամ կըխօսի ։

21 Ընդայրն եղբօրըն մահու
կըմատնէ, և հայրն որդւոյն ·
որդիքն վերկըկենան իրանց
հարանց վերայ՝ և նորանց կը-
սպանեն ։

22 Եւ ամէնին ատելի կը-
լինիք իմ անուընիս համար ·
քայց ով որ կըհամբերէ
մինչև վերջն՝ նա կաղրի ։

23 Եւ երբոր էս քաղա-
քումս հալածեն ձեզ, փախէք
ուրիշն · և Թէ որ նորանից
էլ հալածեն ձեզ, փախէք
էն մեկելն ։ Ճշմարիտըն ա-
սումմ ձեզ, որ չէք վերջացը-
նել իսրայէլի քաղաքներըն ·
մինչև որդին մարդոյ կըգայ ։

24 Աշակերտն վարպետիցն
աւելի չէ, և ոչ ծառան ի-
րան տիրոջնից ։

25 Բաւական է Թէ աշա-
կերտն իրան վարպետի նման
լինի · և ծառան՝ իրան տի-
րոջ նման ։ Թէ որ տանուա-
տէրին բզեղզեբուղ կոչեցին,
ապա ո՞րքան աւելի նորա
ընտանիքըն ։

26 Արահամար էլ մի վախե-
նաք նորանցից · ինչուոր իս-
կի ծածուկ բան չըկայ՝ որ
յայտնի չըլինի · և Թաքուն

նիցի ։

27 Զ որ ասեմ ձեզ ՚ի լա-
ւարի՝ ասացէք ՚ի լոյս . և զոր
լսէք յառնկանէ՝ քարոզեցէք
՚ի վերայ տանեաց ։

28 Եւ մի երկնչէք յայնցա-
նէ՝ որ սպանանեն զմարմին ,
և զոգի ոչ կարեն սպանա-
նել . այլ երկերիւղ դուք ա-
ւելի յայնմանէ՝ որ կարօղն
է զոգի և զմարմին կորուսա-
նել ՚ի գեհենի ։

29 Մի՞ ասլաքէն երկու
ճնճղուկք դանկի միոջ վաճա-
ռին , և մի ՚ի նոցանէ յեր-
կիր ոչ անկցի առանց հօր
ձերոյ ։

30 Ա՛յլ ձեր և ամենայն իսկ
հեր գլխոյ թուեալ է ։

31 Եւ արդ՝ մի երկնչիցիք՝
զի լաւ էք քան զբազում
ճնճղուկս ։

32 Ա՛մենայն որ խոստովա-
նեսցի յիս առաջի մարդկան,
խոստովանեցից և ես զնմա-
նէ առաջի հօր իմոյ որ յեր-
կինսն է ։

33 Եւ որ ուրասցի զիս ա-
ռաջի մարդկան , ուրասցայց և
ես զնա առաջի հօր իմոյ՝ որ
յերկինսն է ։

34 Մի՛ համարիք եթէ եկի
արկանել խաղաղութիւն յեր-

քան որ չիմացվի ։

27 Ինչ որ խաւարումն ա-
սում եմ ձեզ , լուսով մէջն ասա-
ցէք. և ինչ որ ականջում
լսում էք՝ կըարըներկին վերայ
քարոզեցէք ։

28 Մի՛ վախենաք նրանցից՝
որ մարմինըն սպանում են և
հոգին չեն կարող սպանել .
բայց աւելի վախեցէք նորա-
նից՝ որ կարող է հոգին և
մարմինըն կորցնել գեհենի
մէջն ։

29 Չէ՞ որ երկու ծիտ մին
դանկի են ծախվում . և նո-
րանցից մինն չի՛ ընկնիլ գե-
տինն առանց ձեր հօրն ։

30 Բայց ձեր գլխի ամէն մա-
զերն էլ համարված է ։

31 Ըրեմն մի վախենաք .
ինչուր՝ դուք աւելի լաւ
էք քան շատ ծըտեր ։

32 Ա՛մէն ով որ ինձ մարդ-
կանց առաջին կըդաւանէ. ես
էլ նորան կըդաւանեմ իմ
հօրս առաջին որ երկնքումն
է ։

33 Եւ ով որ ինձ կուրանայ
մարդկանց առաջին՝ ես էլ
նորան կուրանամ իմ հօրս
առաջին՝ որ երկնքումն է ։

34 Չը՛ կարծէք թէ եկել
եմ երկրիս վերայ խաղա-

կիր · ոչ եկի արկանել խա-
զաղութիւն , այլ սուր ։

35 Քանզի եկի քակել զայր
ի հօրէ իւրմէ , և զդուստր
ի մօրէ իւրմէ , և զհարսն ի
սկեսրէ իւրմէ ։

36 Եւ թշնամիք առն ըն-
տանիք իւր ։

37 Որ սիրէ զհայր կամ
զմայր առաւել քան զիս՝ ոչ
է ինձ արժանի · և որ սիրէ
զուստր կամ զդուստր առա-
ւել քան զիս՝ չէ ինձ արժա-
նի ։

38 Եւ որ ոչ առնու զխաչ
իւր՝ և գայ զկնի իմ , չէ ինձ
արժանի ։

39 Որ գտանէ զանձն իւր ,
կորուսցէ զնա՝ և որ կորոյս
զանձն իւր վասն իմ , գտցէ
զնա ։

40 Որ ընդունի զձեզ՝ զիս
ընդունի , և որ զիս ընդունի՝
ընդունի զառաքիչն իմ ։

41 Որ ընդունի զմարգարէ
յանուն մարգարէի՝ զվարձս
մարգարէի առցէ · և որ ըն-
դունի զարդար յանուն ար-
դարոյ՝ զվարձս արդարոյ առ-
ցէ ։

զուխիւն քցել · չեմ եկել
խաղաղութիւն քցել , բայց
սուր ։

35 Պատճառն որ՝ եկի որ
մարդը իրան հօրիցն , և աղ-
ջիկը իրան մօրիցն , և հար-
սն իրան սկեսուրիցն բա-
ժանեմ ։

36 Եւ մարդոյ թշնամիներն
իրան ընտանիքն կլինին ։

37 Որ որ հօրըն կամ մօ-
րըն ինձանից աւելի կըսիրե,
նա ինձ արժանի չէ · և որ
որ իրան որդին կամ աղջի-
կըն ինձանից աւելի կըսիրե,
նա ինձ արժանի չէ ։

38 Եւ որ իրան խաչըն
չառնե և իմ ետևէս գայ, նա
ինձ արժանի չէ ։

39 Որ որ իրան անձըն
կըգտնե՝ կըկորցնե նորան, և
որ որ իրան անձըն ինձ հա-
մար կորցրուց , կըգտնե նո-
րան ։

40 Որ որ ձեզ կընդունի՝
ինձ կընդունի · և որ որ ինձ
կընդունի, իմ ուղարկողին
կընդունի ։

41 Որ որ մարգարէ կըն-
դունի մարգարէի անունովն՝
նա մարգարէի վարձք կառնէ ·
և որ որ արդարը կընդու-
նի արդարի անունովն՝ ար-
դարի վարձք կառնէ ։

12 Եւ ով որ կամի ձեզանից առաջինը լինել, նա ձեր ծառան թող լինի։

13 Որովհետեւ եւ Որդի մարդու չեկաւ, որ իրան սպասաւորեն, այլ սպասաւորելու, եւ տալու իւր հոգին փրկանք շատերի համար։

ԺԱ։

1 Եւ երբ Յիսուս աւարտեց իւր տասներկու աշակերտների պատուիրանները տալը, գնաց անտի քարոզելու եւ ուսուցանելու իւր քաղաքներում։

2 Իսկ Յովհաննէս երբ լսեց բանտում գործածների մասին, ուղարկեց իւր աշակերտներից երկուսին,

3 Եւ ասաց նրան. դու ես որ գալոց ես, թէ ուրիշ ակնկալենք։

4 Պատասխանի եւ Յիսուս ասաց նրանց. գնացէք պատմեցէք Յովհաննէսին, ինչ որ լսում էք եւ տեսնում։

5 Կոյրերը տեսանում են, կաղերը գնում են, բորոտները սրբւում են, խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում, եւ աղքատներին աւետարանւում է։

6 Եւ երանելի է նա, որ ինձ վրայ չի գայթակղւում։

12 Եւ ով որ կամի ձեզանից առաջինը լինել, ձեզանից ծառան թող լինի։

13 Որովհետեւ եւ Որդի մարդու չեկաւ, որ իրան սպասաւորեն, այլ սպասաւորելու, եւ տալու իւր հոգին փրկանք շատերի համար։

ԺԱ։

1 Եւ երբ Յիսուս իւր տասներկու աշակերտների պատուիրանները վերջացրուց, էն տեղից գնաց որ նորանց քաղաքներում քարոզ տայ եւ սովորցնէ։

2 Իսկ Յովհաննէս երբ բանտում (գընահատ) քրիստոսի գործերը լսեց, իրան աշակերտների ձեռով ուղարկեց,

3 Եւ նորան ասաց. դու ես էն որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք։

4 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. գնացէք Յովհաննէսին պատմեցէք, ինչ որ լսում էք եւ տեսնում։

5 Կուրերն տեսնում են, կաղերն գնում են, բորոտներն սրբւում են խուլերն (լսուելն) լսում են, մեռելներն յարութիւն են առնում, եւ աղքատներին աւետարան է քարոզւում։

6 Եւ երանելի է նա, որ ինձ վրայ չի գայթակղւի։

7 Երբ երթեալ նոքա դնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդսն զՂովհաննէ. ընդէ՞ր ելէք տեսանել յանապատն, եղէ՞ղն շարժուն ի հողմոյ։

8 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդի՞ ի հանդերձս փափկութեան զարդարեալ։ ահաւադիկ որ զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են։

9 Այլ զի՞նչ ելէք տեսանել։ մարգարէ՞։ այո՛ ասեմ ձեզ, և առաւել քան զմարգարէ։

10 Զի նա է վասն որոյ գրեալն է. ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։

11 Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ ի հնուանդս կանանց մեծ քան զՂովհաննէս մկրտիչ։ բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա։

12 ԵՒաղց յաւուրցն Ղովհաննու մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադա-

7 Ասաց երբոր նոքանք գնացին, Յիսուս սկսաւ ժողովուրդներին ասել Յովհաննէսին համար. (դուք) դուրս գնացիք ընդ տեսանելոյ անապատումն (չէօլա՞ն), մին եղեգը (գամչը)՝ որ քամուչ շարժըվո՞ւմէ։

8 Ապա ընդ տեսանելոյ դուրս գնացիք. մին մարդ փափուկ շորիքով զարդարած։ ահա նոքանք որ փափուկ հագած են՝ թագաւորաց պալատներումն են։

9 Ուրեմն (դուք) ընդ տեսանելոյ դուրս գնացիք. մին մարգարէ՞։ իրաւի ասումեմ ձեզ, որ մարգարէից էլ շատ աւելի է։

10 Ինչուար՝ նա էն է՝ որ նորա համար գրված է. (թէ) ահա ես իմ հրեշտակը կուղարկեմ քու երեսիդ առաջին, որ քու առաջիդ քո ճանապարհն պատրաստէ։

11 Ճշմարիտն ասումեմ ձեզ. որ կանանց ծնողներուն մէջն աւելի մեծ առաջ եկած չէ՝ քան Յովհաննէս մկրտիչն. բայց երկնքի արքայութեան միջի փոքրն նորանից մեծ է։

12 Ասաց Յովհաննէս մկրտչի օրերեանց մինչև հիմի երկնքի արքայութիւն ուժով առնը-

տի, և բառնք յափշտակեն զնա։

13 Քանզի ամեն այն օրէնք և մարգարէք մինչև զյովհաննէս մարգարէացան։

14 Եւ թէ կամիք ընդունել՝ նա է եղիա՝ որ գալոցն է։

15 Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

16 Որո՞մ նմանեցուցից զազգս այս. նման է մանկտւոց՝ որ նստիցին ի հրապարակս, կալ. դայցեն զընկերս իւրեանց,

17 Եւ ասիցեն. փող հարաք ձեզ՝ և ոչ կարաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք։

18 Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր. և ասեն՝ դև ունի նմա։

19 Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւնն յորդւոց իւրոյ։

20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն քաջութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին։

վումն՝ և ուժովներն յափըշտակուեմն նորան։

13 Ընդ որս՝ ամեն օրէնքն և մարգարէքն մինչև Յոհաննէսն մարգարէացան։

14 Եւ թէ կամիցաք ընդունել, նա է եղիան, որ պէտք է գայ։

15 Ով որ լսելոյ ականջ ունի՝ լսէ։

16 Որո՞մ նմանեցնեմ ես սպզբս. էն տըղայոցն նման է՝ որ փողոցներումն նըստին և իրանց ընկերներին կանչեն,

17 Եւ սուն. փող փչեցինք ձեզ համար՝ և պար չեկիք. սուգ արինք ձեզ համար՝ և լաց չելաք։

18 Յոհաննէսն եկաւ, ոչ ուտումէր և ոչ խմումէր. և ասումեն՝ դև կայ նորանում։

19 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ և խմումէ, և ասումեն. ահա ուտող և խմող մարդ. մաքսաւորների (հնչմբռ-չէնէրէ) և մեղաւորների բարեկամ. և իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներից։

20 Էն ժամանակն սկսեց նախատինք տալ էն քաղաքներին՝ ուր որ նորա շատ հրաշքներն էլան՝ և չապաշխարեցին։

21 Վա՛յ քեզ քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա· զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի ձեզ եղեն, վաղուց ևս արդեօք խորտով և մոխրով ապաշխարեալ էր:

22 Այլ ասեմ ձեզ· դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ:

23 Եւ դու Կափառնայում, մի մինչև յերկինս բարձրասցիս· այլ մինչև ի դժոխս իջցես· զի եթէ ի սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի քեզ եղեն, ապաքէն կային և մինչև ցայսօր:

24 Այլ ասեմ ձեզ՝ եթէ երկրին սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ:

25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս և ասէ· դոհանամ զքեզ Հայր՝ տէր երկնի և երկրի· զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի պիտանոց, և յայտնեցեր տղայոց:

26 Այ՛ն Հայր· զի այսպէս հաճոյ եղև առաջի քո:

21 Վա՛յ քեզ քորազին· վա՛յ քեզ Բեթսայիդա· ընդեւուր՝ եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջն էլած էին էն հրաշքներն որ ձեր մէջն էլան, շատ կանուխ քրձով (Տոպրակ շորով) և մոխրով ապաշխարել էին:

22 Այլ ասումեմ ձեզ· դատաստանի օրումն աւելի հեշտ կըլինի Տիւրոսի և Սիդոնի երկրին համար՝ քան ձեզ:

23 Եւ դու Կափառնայում· մինչև երկինք չի՛ բարձրանաս, բայց մինչև դժոխք կըցածանաս· ընդեւուր՝ եթէ սոդոմի մէջն էլած էին էն հրաշքներն՝ որ քեզանումէլան, ուղղիդ որ՝ մինչև էս օր դեռ Ծուռմին:

24 Այլ ասումեմ ձեզ· որ դատաստանի օրումն սոդոմացոց երկրին համար աւելի հեշտ կըլինի՝ քան քեզ:

25 Էն ժամանակն Յիսուս պատասխան տուաւ և ասաց· դոհանումեմ քեզանից· ով Հայր երկնքի և երկրի տէր· որ իմաստուններից և գիտուններից էս բանը ծածկեցիր՝ և տղայոց յայտնեցիր:

26 Իրաւի է ով Հայր· ընդեւուր՝ էսպէս հաճոյ էլաւ քո առաջից:

27 Ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ. և ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր, և ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ումի որդին կամիցի յայտնել։

28 Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։

29 Առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք ինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։

30 Զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ վոքրոզի է։

27 Ամէն բան ինձ տրվվաւ իմ հօրիցն. և ոչ ով չի՛ ճանաչում որդին՝ բայց միայն հայրն. և ոչ ով չի՛ ճանաչում հօրըն՝ բայց միայն որդին. և ումի որ որդին կամենայ յայտնել։

28 Ինձ մօտ եկէք՝ ամէ վաստակածներ և բեռնաւորներ. և ես հանգիստ կըտամ ձեզ։

29 Իմ լուծըս ձեզ վերայ առէք, և ինձանից սովորեցէք. ինչուր՝ ես հեզսիրտ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձին համար հանգստութիւն կըգտնէք։

30 Ինչուր՝ իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթեւ է։

ԳԼ. ԺՒ։

1 Ցայնժամ գնաց Յիսուս ընդ արտերայն նոյա ի շաբաթուս. և աշակերտքն նորա քաղցեան, և սկսան հասկ կորղել և ուտել։

2 Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթուս։

3 Եւ նա ասէ ցնոսա. ոչ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր ա-

1 Ին ժամանակին Յիսուս շաբաթի օրուին գնաց նորանց արտերի միջին, և նորա աշակերտներն սովեցին, և սկսեցին հասկ պոկել և ուտել։

2 Երբոր փարիսեցիքն տեսին՝ նորան ասացին. ահա քո աշակերտներդ բան են անում, որ արժան չէ շաբաթի օրուին անել։

3 Իա էլ ասաց նորանց. դուք չէ՞ք կարդացել էն՝ որ

բար դաւիթի, յորժամ քաղցեաւն. և որ ը նմայն էին։

4 Զ[ի]նդ եմուտ ի տունն Աստուծոյ և եկեր զհացն զառաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ՝ որոյ ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։

5 Կամ ոչ եկիք ընթերցեալ յօրէնս՝ զի ի շաբաթի քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթին, և անմեղք են։

6 Բայց ասեմ՝ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է սա։

7 Իւ եթէ գիտէիք զինչ է՝ ողորմութիւն կամիմ և ոչ զզոհս. ապա ոչ դատապարտիք զանպարտսն։

8 Զի տէր է շաբաթուց՝ որդին մարդոյ։

9 Իւ գնացեալ անտի Յիսուս եկն ի ժողովուրդն նոցա։

10 Իւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պարտ իցէ ի շաբաթուց բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։

դաւիթն արաւ էն ժամանակն որ ինքն սովեց. և նորանք էլ որ նորա հետն էին։

4 Թէ ինչպէս Աստուծոյ տունն մտաւ և առաջաւորութեան (Աստուծոյ սեղանի վերայ դրած) հացըն կերաւ. որ օրէնք չէր նորան ուտել, և ոչ էլ նորանց որ նորա հետն էին, բայց միայն քահանայից։

5 Կամ գիտէ՞ք կարդացեալ օրէնքումն, որ քահանայքն շաբաթի օրերուն տաճարի մէջն շաբաթըն պղծումն, և մեղք չէ նորանց։

6 Բայց ասումեմ ձեզ՝ որ տաճարիցն էլ մեծն է էս տեղ։

7 Բայց գիտ որ գիտէիք ինչ է էն բանն՝ գիտ ողորմութիւն եմ ուզում և ոչգիտ մատաղ, դուք չէիք դատապարտել էն անմեղներն։

8 Ինչուար՝ շաբաթուց տէրն՝ որդին մարդոյ է։

9 Իւ Յիսուս էն տեղից գնաց՝ եկաւ նորանց ժողովրանի մէջ։

10 Իւ էնտեղ մինումէ կար՝ որ նորա ձեռն չորացած էր. նորան հարցրին և ասացին՝ գիտ շաբաթի օրուն պիտք է բժշկութիւն անել. որ նորա վերայ չարախօսեն։

11 Եւ նա ասէ ցնոսա. Ով է ի մէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթի՞ս. միթէ ոչ ունիցի և յարու-ցանիցէ զնա։

12 Իսկ արդ՝ որքա՜փ ևս առաւել է մարդ քան զոչ-խար. ապա ուրեմն պարտ է ի շաբաթի՞ս բարիս գործել։

13 Յայնժամ ասէ յայրն. Ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև միւս-սըն։

14 Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ Լիցէ որպէս կորուս-ցեն զնա։

15 Եւ Յիսուս իբրև գի-տաց, մեկնեցաւ անտի. և զնա-ցին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամե-նեսեան։

16 Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայտնեսցեն զնմանէ ու-մեք։

17 Զի լցցի, որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի։

18 Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. և դիցե զոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ։

11 Եւ նա ասաց նոցանց. Ով է ձեզանից էն մարդն. որ մին ոչխար ունենայ և էն ընկնի փոսի մէջ շաբաթի օրուայն, միթէ չի բռնիլ նո-ցան և վերկայնիլ։

12 Ապա որքան աւելի է մարդ քան թէ ոչխար. նրա-համար պէտք է շաբաթի օ-րուայն բարիք գործել։

13 Էն ժամանակն ասաց էն մարդոյն. ձեռդ մեկնիր, նա էլ մեկնեց. և ողջ է-լաւ էն մեկելին պէս։

14 Բայց փարիսեցիքն դուրս գնացին. և նորա համար խոր-հուրդ արին՝ թէ ինչպէս կոր-ցընեն նորան։

15 Եւ Յիսուս երբոր իմա-ցաւ, էն տեղից հեռացաւ. և շատ ժողովուրդներ նորա հետէն գնացին. և ամէնքըն բժշկեց։

16 Եւ նորանց սաստեց՝ որ իրանից մին մարդոց քան չի յայտնեն։

17 Որ կատարվի եսայի մար-գարէի ձեռով ասվածն։

18 Ահա իմ մանուկա՝ որ ես ընտրեցի. և իմ սիրելի՝ որ իմ անձն հաւանել է նո-րան. իմ հոգիս նորա վերայ կըդնեմ, և հեթանոսներին իրաւունքըն կըպատմէ։

19 Մի՛ հակառակեսցի՛ և
ոչ ազազակեսցէ, և ոչ ոք լը-
սիցէ ՚ի հրապարակս զձա-
յնս նորա ։

20 Զեղէգն ջախջախեալ
ոչ փշրեսցէ, և պատրոյգն
առկայծեալ ոչ շիջուսցէ ·
մինչև հանցէ ՚ի յաղթու-
թիւն զդատաստանն ։

21 Եւ յանուն նորա հե-
թանոսք յուսասցին ։

22 Այնժամ մատուցաւ
առ նա դիւահար մի կոյր և
համր, և բժշկեաց զնա · ոյր
կն համրն և կոյրն խօսիլ և
տեսանել ։

23 Զարմացան ամենայն
ժողովուրդքն՝ և ասէին· մի-
թէ սա իցէ քրիստոս որդի դա-
ւիթ ։

24 Եւսայ փարիսեցիքն իբրև
լուան՝ ասեն· ոչ խնդք հա-
նէ դա զդևս՝ եթէ ոչ բէ-
եղզեբուղաս իշխանաւն դի-
ւաց ։

25 Իբրև գիտաց Յիսուս
զմտարհուրդս նոցա՝ ասէ ցնո-
սա · ամենայն թագաւորու-
թիւն բաժանեալ յանձն իւր՝
աւերի. և ամենայն քաղաք
կամ տուն բաժանեալ յանձն
իւր՝ ոչ կացցէ ։

26 Եւ եթէ սատանայ զսա-
տանայ հանէ, յանձն իւր բաժա

19 (Նա) չի՛ հակառակիլ ·
և չի՛ ազազակիլ, և փողոց-
ներուն մէջն՝ ոչ ոք նորա ձայ-
նըն չի՛ լսիլ ։

20 Զարդված եղէգըն (գա-
ւազան) չի՛ փշրիլ, և վերջի
կայծն հասած պատրիլըն չի՛
անցնիլ · մինչև զատաստանն
դրուի հանել յաղթութեան ։

21 Եւ նորա անուանին հե-
թանոսներն յոյս կըդնեն ։

22 Յն ժամանակն մին կոյր
և համր (լռիկ) դիւահար բե-
րին նորա մօտ՝ և նորան բժըշ-
կեց· ենպէս որ համրն և կոյրն
խօսիլ և տեսնալ ։

23 Ամէն ժողովուրդներն
զարմացան և ասումէին · չը-
լինի՞ թէ սա է քրիստոս դաւիթի
որդին ։

24 Բայց փարիսեցիքն երբ որ
լսեցին՝ ասացին· Թէ դա դև-
ներըն ուրիշ բանով չի հա-
նում · բայց միայն բեեղզէ-
բուղ դևերի իշխանի ձեռօվն ։

25 Երբոր Յիսուս նորանց
միաբերն իմացաւ, ասաց նո-
րանց · ամէն թագաւորութիւն որ
իրան մէջը բաժանված է՝ կը-
կործանվի · և ամէն քաղաք
կամ տուն որ իրան մէջը բա
ժանված է՝ չի՛ ծնալ ։

26 Եւ Թէ որ սատանան սա
տանային հանէ, իրան միջուն

նեցաւ. արդ՝ վիարդ կացցէ թագաւորութիւն նորա։

27 Եւ եթէ ես բէելզեբուղաւ հանեմ դևս՝ որդիքն ձեր ըստ հանիցեն. վասն այսորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։

28 Ապա թէ հոգւով Աստուծոյ հանեմ ես զդևս, ուրեմն հասեալ է ի վերձեր արքայութիւն Աստուծոյ։

29 Կամ զիաշրդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, և ապա զտունն նորա յափրշտակիցէ։

30 Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։

31 Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի թողցի։

32 Եւ որ ոք ասիցէ բան ընդդէմ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի՝ և մի ի հանդերձելումն։

բաժանվեցաւ. եւ ինչպէս նորա թագաւորութիւնն կըկենայ։

27 Եւ եթէ ես բէելզեբուղաւ հանում դևերըն, ապա ձեր որդիքն ինչով կըհանեն. նրահամար նորանք կըլինին ձեզ դատաւոր։

28 Ապա թէ որ ես Աստուծոյ հոգովն եմ հանում դևերըն, ուրեմն Աստուծոյ արքայութիւնն ձեզ վերայ հասել է։

29 Կամ ինչպէս մին մարդ կարող է ղօրաւոր մարդոյ տունըն մանել՝ և նորա բաներըն յափշտակել. թէ որ առաջ էն ղօրաւոր մարդըն չը կապէ. և յետոյ նորա տունն յափշտակէ։

30 Որ որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ հակառակ է. և որ որ ինձ հետ չի՝ ժողովում՝ (նա) ցրվում է։

31 Դրահամար ասում եմ ձեզ. ամէն մեղք և հայհոյանք կըթողվին մարդկանց, բայց հոգոյ դէմ հայհոյանքն չի՝ թողվիլ։

32 Եւ որ որդոյն մարդոյ դէմ բան ասէ՝ կըթողվի նորան. բայց որ սուրբ հոգոյն դէմ ասէ, նորան չի՝ թողվիլ, ոչ էս աշխարհքումըս՝ և ոչ էն։

33 Կամ արարէք զծառն բա-
րի՝ և զպտուղ նորա բարի,
կամ արարէք զծառն չար՝ և
զպտուղ նորա չար· քանզի՝ ի
պտղոյ անտի ծառն ճանաչի։

34 Ծննունդք լժիւց, զիա՞րդ
կարիցեք բարիս խօսել՝ որ
չարքդ եք· քանզի՝ ի յաւե-
լուածոյ սրտի խօսի բերան։

35 Մարդ բարի՝ ի բարի
գանձուց սրտի իւրոյ հանէ
զբարիս· և մարդ չար՝ ի չար
գանձուց սրտի իւրոյ հանէ
զչարիս։

36 Ասացի ձեզ· թէ
ընդ ամենայն դատարկ բանի
զոր խօսիցին մարդիկ, տացեն
համար յաւուրն դատաստա-
նի։

37 Զի ի բանից քոց ար-
դարասցիս· և ի բանից քոց
պարտաւորեսցիս։

38 Յայնժամ պատասխանի
եւտուն նմա ոմանք ի դպրացն
և ի փարիսեցւոց՝ և ասեն·
վարդապետ՝ կամիմք նշան լինչ
տեսանել ի քէն։

39 Նա պատասխանի ետ՝ և
ասէ ցնոսա· ազգ չար և շնա-
յօղ նշան լինդրէ· և նշան
մի տացի նմա, բայց նշանն

33 Կամ ծառն բարի ա-
րէք՝ և նորա պտուղն էլ
բարի· կամ ծառն չար ա-
րէք՝ և նորա պտուղն էլ չար·
ինչուար՝ ծառն իրան պտղից
կըճանաչվի։

34 (իժ) օձի զաւակներ՝ դուք
ինչպէս կարող եք բարի բա-
ներ խօսիլ, որ չար էք· ին-
չուար՝ սրտի աւելցածից կը-
խօսի բերանն։

35 Հարի մարդն իրան սրտի
բարի գանձից (խազնայից)
բարիք կըհանէ, և չար մարդն
իրան սրտի չար գանձից չար
կըհանէ։

36 Միայն Թէ ասումեմ ձեզ·
Թէ ամէն դատարկ բանի հա-
մար որ մարդիք կըխօսին՝ պա-
տասխան պիտի տան դատաս-
տանի օրուն։

37 Ինչուար՝ քո խօսքերից
կարդարանաս, և քո խօսքե-
րից կըդատապարտվիս։

38 Էն ժամանակն մին քա-
նիսն կարդացողներից և փա-
րիսեցիներից պատասխան
տուին և ասացին· վարդապետ՝
ուզումինք որ քեզանից մին
նշան տեսնինք։

39 Նա պատասխան տուաւ
և նորանց ասաց· չար և շնա-
յող ազգն նշան է ուզում,
և նշան չի՛ տըվիլ նորան·

Յովհաննու մարգարէի ։

Ի0 Զի որպէս էր Յովհան ՚ի փոր կիսին զերիս տիւս և զերիս գիշերս , նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս ։

Ի1 Ընդ հինուեցոյնք յարիւցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա , զի զդջացան ՚ի քարոզութիւն Յովհաննու . և արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ ։

Ի2 Դիշխանն հարաւոյ յարիւցէ ՚ի դատաստանի ընդ ազգիս յայսմիկ՝ և դատապարտեսցէ զսա . զի եկն ՚ի ծագս երկրի՝ լսել զիմաստութիւն Սողոմոնի . և ահա մեծ քան զՍողոմոն է աստ ։

Ի3 Ա՛յր յորժամ այսն պիղծ ելանէ ՚ի մարդոյ՝ շրջի ընդ անջրգին տեղիս . խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ ։

Ի4 Ցայնժամ ասէ. դարձայց ՚ի տուն իմ՝ ուստի ելի . և եկեալ գտանէ զնա պարապորդ , մաքրեալ և յարդարեալ ։

Բայց միայն Յովնան մարգարէի նշանն ։

Ի0 Պատճառանօր՝ ինչպէս Յովնան երեք օր և երեք գիշեր կէտ ձկան փորուն էլաւ, էնպէս էլ որդին մարդոյ երեք օր և երեք գիշեր երկրի սրտուն կըլինի ։

Ի1 Ընինուեցոյոց մարդիքն դատաստանուն վերկըկենան էս ազգիս հետ , և սորան կըդատապարտեն . ինչուր՝ նանք Յովնանու քարոզութենեն ապաշխարեցին . և հիմիկ ահա Յովնանից աւելի մեծն է էս տեղ ։

Ի2 Հարաւային երկրի թագուհին դատաստանուն վերկըկենայ էս ազգիս հետ՝ և սորան կըդատապարտե . ինչուր՝ նա երկրի ծայրից եկաւ՝ որ սաղոմոնի իմաստութին լսե . և ահա սաղոմոնից աւելի մեծն է էս տեղ ։

Ի3 Բայց ինչ ժամանակ որ պիղծ դևն դուրս է գալիս մարդուց՝ անջուր տեղերուն ման է գալիս . հանգիստ է խնդրում և չի գտնում ։

Ի4 Ին ժամանակն ասում . կեա դառնամ իմ տունս՝ որ էն տեղից դուրս եկի . և գալիս է նորան գտնում՝ պարապ՝ սրբված և պատրաստված ։

Ա5 Յայնժամ երթայ՝ և առ-
նու ընդ իւր եօթն այլ այս
չարագոյնս ք զինքն, և մտեալ
բնակէ անդ · և լինի յետին-
ն ըն մարդոյն այնորիկ չար քան
զառաջինն · այնպէս եղիցի և
ազգիս այսմիկ չարի ։

Ա6 Մինչդեռ նա ընդ ժողո-
վուրդսն խօսէր, ահա մայր
նորա և եղբարք նորա կային
արտաքոյ՝ և խնդրէին խօսել
ընդ նմա ։

Ա7 Եւ ասէ ոմն ցնա · ահա
մայր քո՝ և եղբարք քո կան
արտաքոյ, և խնդրեն խօսել
ընդ քեզ ։

Ա8 Ընդ պատասխանի ետ այն-
միկ՝ որ ասացն ցնա, և ասէ·
ցի՝ ով է իմ մայր, կամ ո՞վ են
իմ եղբարք ։

Ա9 Եւ ձգեալ զձեռն իւր
յաշակերտսն՝ ասէ· ահա մայր
իմ և եղբարք իմ ։

Ն0 Զի որ առնիցէ զկամս
հօր իմոյ որ յերկինսն է, նա
է իմ եղբայր՝ և քոյր՝ և
մայր ։

Ա5 Ընդ ժամանակն դնուամբ
իրանից էլ աւելի չար՝ եօթն ըն
դև է առնում իրան հետ, և
մտնում բնակվում են տեղ ·
և են մարդոյ յետինն աւելի
չար է լինում քանթէ առա-
ջինն · Եսպէս էլ կըլինի էս
չար ազգիս ։

Ա6 Դեռ քանի որ նա ժողո-
վուրդներին հետ խօսում էր,
ահա նորա մայրն և նորա եղ-
բարքն դուրսն կանգնել էին՝
և ուզում էին որ նորա հետ
խօսին ։

Ա7 Ընդ մին մարդ նորան ա-
սաց · ահա քո մայրդ և քո
եղբարքդ դուրսն կանգնած
են, և ուզումեն որ քեզ հետ
խօսին ։

Ա8 Ընդ պատասխան տուաւ
նորան՝ որ ասաց իրան, և ա-
սաց · ո՞վ է իմ մայրս կամ
ո՞վ են իմ եղբարքս ։

Ա9 Եւ իրան ձեռքն դէպի
աշակերտներն մեկնեց՝ և ա-
սաց · ահա իմ մայրս և իմ
եղբարքս ։

Ն0 Ինչուռ՝ ով որ իմ հօրս
կամքն կատարէ որ երկնի-
քումն է, նա է իմ եղբայրս՝
քոյրս և մայրս ։

ԳԼ · ԺԳ ։

Ա Յաւուր յայնմիկ ելեալ Ա Ընդ օրումն Յիսուս տա-

Յիսուս ՚ի տանէն՝ նստէր առ ծովեզերն ։

2 Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ՚ի նաւն՝ և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն։

3 Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք՝ և ասէր ։

4 Ահա ել սերմանահան սերմանել. և ՚ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչունն երկնից՝ և եկեր զնա ։

5 Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ՝ առ ՚ի չգոյէ հիւթոյ երկրին։

6 ՚Ի ծագել արեւու տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ ։

7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա ։

8 Եւ այլն անկաւ յերկիրն բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրապատիկ, և էր որ վաթսնապատիկ. և էր որ երեսնապատիկ ։

9 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ ։

10 Եւ մերձեցան աշակերտքն և ասեն ցնա ՝ Վասն զի՞ ընդ նոսա խօսիս առակօք ։

11 Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա ՝ Զի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, իսկ նոցա ոչ տուեալ է ։

12 Զի որ ունի՝ տացի նմա, և առատասցի. և որ ոչ ունի՝ և զոր ունի առցի ի նմանէ ։

13 Վասն այսորիկ ընդ նոսա խօսիմ առակօք, զի տեսանելով ոչ տեսանիցեն, և լսելով ոչ լուիցեն և ոչ իմասցեն ։

14 Եւ կատարի ի նոսա մարգարէութիւն Եսայեայ, որ ասէ ՝ Լսելով լուիցէք, և ոչ իմասջիք, և տեսանելով տեսանիցէք, և ոչ հայեսջիք ։

15 Զի ծանրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջովք ծանրութեամբ լուան, և զաչս իւրեանց խուփ արարին, զի մի երբեք տեսցեն աչօքն, և ականջովք լուիցեն, և սրտիւ իմասցեն, և դարձցին, և բժշկեցից զնոսա ։

16 Ձեր երանի՝ զի աչք ձեր տեսանեն, և ականջք ձեր լսեն ։

17 Ամէն ասեմ ձեզ, զի բազումք մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր դուք տեսանէք, և ոչ տեսին, և լսել զոր լսէք, և ոչ լուան ։

18 Դուք ուրեմն լուարուք առակին զոր ասացի ։

19 Ամենայն որ լսէ զբան արքայութեան, և ոչ իմանայ, գայ չար և յափշտակէ զոր սերմանեցաւ ի սրտի նորա, սա է որ ընդ ճանապարհաւ սերմանեցաւ ։

20 Եւ որ ընդ ապառաժի սերմանեցաւ, սա է որ զբանն լսէ, և անդէն ընդունի զնա ուրախութեամբ ։

21 Եւ ոչ ունի արմատ ՚ի նմա, այլ ժամանակաւոր է. և յորժամ եղեւ նեղութիւն կամ հալածանք վասն բանին, անդէն գայթակղի ։

22 Եւ որ ՚ի փշոց սերմանեցաւ, սա է որ զբանն լսէ, և հոգս աշխարհի և խաբէութիւն հարստութեան խեղդեն զբանն, և անպտուղ լինի ։

23 Եւ որ ՚ի բարի երկիրն սերմանեցաւ, սա է որ զբանն լսէ և իմանայ, որ և պտղաբերէ, և առնէ զմին հարիւրապատիկ, և զմին վաթսնապատիկ, և զմին երեսնապատիկ ։

24 Այլ առակ մի արկ առ նոսա՝ և ասէ ՝ Նմանեցաւ արքայութիւն երկնից մարդոյ որ սերմանեաց զսերմն բարի յագրի իւրում ։

25 Եւ մինչդեռ ննջէին մարդիկ, եկն թշնամի նորա և սերմանեաց զիւղ ՚ի մէջ ցորենոյն, և գնաց ։

26 Եւ յորժամ բուսաւ խոտն և պտուղ արար, յայնժամ երեւեցաւ և զիւղն ։

27 Եկին ծառայք տանուտերին և ասեն ցնա ՝ Տէր, ո՞չ զբարի սերմն սերմանեցեր յագրի քում, և ուստի՞ ունի զիւղ ։

28 Եւ նա ասէ ցնոսա ՝ Թշնամի մարդ արար զայդ։ Եւ ասեն ծառայքն ցնա ՝ Կամիս՝ երթեալ ժողովեսցուք զնա ։

29 Եւ նա ասէ ՝ Ոչ, գուցէ ժողովելով զիւղն՝ արմատաւ հանիցէք ընդ նմա զցորենն ։

30 Արձակեցէք զերկոսին միանգամ ընդ հունձս, և ՚ի ժամ հնձանացն ասիցեմ հնձողացն ՝ Ժողովեցէք նախ զիւղն, և կապեցէք զնա խուրձս առ այրել, և զցորենն ժողովեցէք ՚ի շտեմարան իմ ։

31 Այլ առակ մի արկ առ նոսա՝ և ասէ ՝ Նմանեցաւ արքայութիւն երկնից հատու մանանխոյ, զոր առեալ մարդ սերմանեաց յագրի իւրում ։

32 Որ փոքրագոյն է քան զամենայն սերմունս, և յորժամ աճեցանէ՝ մեծագոյն է քան զամենայն ընդեղէնս, և լինի ծառ, մինչեւ գալ թռչնոց երկնից և բնակել ՚ի ճիւղս նորա ։

33 Այլ առակ մի խօսեցաւ ընդ նոսա ՝ Նմանեցաւ արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կին ծածկեաց ՚ի երիս սաթս ալրոյ, մինչեւ ելցէ ամենայն խմոր ։

34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն առակօք, և առանց առակի ոչ խօսէր ընդ նոսա ։

35 Զի կատարեսցի բան մարգարէին որ ասէ ՝ Բացից ՚ի առակս զբերան իմ, հանից զբանս որ ՚ի սկզբանէ գոյացան ։

36 Յետ այսորիկ արձակեաց զժողովուրդսն, և եկն ՚ի տունն, և մերձեցան աշակերտքն նորա և ասեն ՝ Յայտնեա մեզ զառակն զիւղոյն արտին ։

37 Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա ՝ Որ սերմանեցուցանէ զբարի սերմն՝ է Որդի մարդոյ ։

38 Եւ արտն է աշխարհ, և սերմն բարի՝ սոքա են որդիք արքայութեան, և զիւղն՝ որդիք չարին ։

39 Եւ թշնամին որ սերմանեաց զնա՝ է սատանայ, և հունձն՝ կատարած աշխարհի, և հնձողքն՝ հրեշտակք են ։

40 Եւ որպէս ժողովեն զիւղն և հրով այրեն, նոյնպէս լիցի ՚ի կատարած աշխարհի ։

41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն ՚ի թագաւորութենէ նորա զամենայն գայթակղութիւնս և զանիրաւութիւնս ։

42 Եւ արկցեն զնոսա ՚ի հնոցն հրոյ, անդ լիցի լալ և կրճտել ատամանց ։

43 Յայնժամ արդարքն պայծառասցին իբրեւ զարեգակն ՚ի թագաւորութեան Հօր իւրեանց ։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ ։

44 Նմանեցաւ արքայութիւն երկնից գանձի ծածկեալ յագրի, զոր գտեալ մարդ ծածկեաց, և յերկիւղէ նորա երթեալ ծախեաց զամենայն զոր ունէր, և գնեաց զագրն զայն ։

45 Դարձեալ նմանեցաւ արքայութիւն երկնից մարդոյ վաճառականի որ խնդրէր զգեղեցիկ մարգարիտս ։

46 Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ գնաց ծախեաց զամենայն զոր ունէր, և գնեաց զնա ։

47 Դարձեալ նմանեցաւ արքայութիւն երկնից ուռկանի որ ձգեալ ՚ի ծովն, և ամենայն ազգ ձկանց ժողովեաց ։

48 Եւ յորժամ լցաւ, հանին ՚ի ափն, և նստեալ ընտրեցին զբարիսն ՚ի կարասիս, և զանպիտանսն արկին արտաքս ։

49 Նոյնպէս լիցի ՚ի կատարած աշխարհի ։ Ելցեն հրեշտակք և բաժանեսցեն զչարսն ՚ի մէջ արդարոց ։

50 Եւ արկցեն զնոսա ՚ի հնոցն հրոյ, անդ լիցի լալ և կրճտել ատամանց ։

51 Ասէ ցնոսա Յիսուս ՝ Միթէ գիտացէք զայս ամենայն ։ Ասեն ցնա ՝ Այո, Տէր ։

52 Եւ նա ասէ ցնոսա ՝ Վասն այսորիկ ամենայն գրագէտ որ ուսեալ է զարքայութիւն երկնից, նմանի մարդոյ տանուտեր որ հանէ ՚ի գանձուց իւրմէ զնորս և զհին ։

53 Եւ եղեալ զայս առակս՝ անցին անտի ։

54 Եւ եկեալ ՚ի քաղաքն իւր՝ ուսուցանէր նոցա ՚ի ժողովարանին իւրեանց, մինչեւ զարհուրեալ ասէին ՝ Ո՞ւստի այսմ իմաստութիւն և զօրութիւնք ։

55 Միթէ ոչ է սա որդի հիւսնոյն ։ Ոչ մայրն նորա կոչի Մարիամ, և եղբարքն նորա Յակոբոս և Յովսէ և Սիմոն և Յուդա ։

56 Եւ քոյրք նորա ոչ ամենեքեան ընդ մեզ են ։ Ուստի՞ ուրեմն սմա զայս ամենայն ։

57 Եւ գայթակղէին ՚ի նմա ։ Իսկ Յիսուս ասէ ցնոսա ՝ Զի ոչ է մարգարէ անպատիւ, բայց ՚ի գաւառի իւրում և ՚ի տան իւրում ։

58 Եւ ոչ արար անդ զբազումս զօրութիւնս ՚ի վերայ անհաւատութեան նոցա ։

9 Որ ունիցի ականջս լսել, լուիցէ։

10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա։

11 Նա պատասխանի եւ՝ ասէ ցնոսա. քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից, և նոցա չէ տուեալ։

12 Զի որ դուցէ՝ տացի նմա և յաւելցի. և որ ոչն դուցէ, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։

13 Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն, և ոչ տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն ի միտ։

14 Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի տեսջիք։

15 Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծանրունս լուան. և զաչս իւրեանց կափուցին՝ զի մի երբեք տեսցեն աչօք՝ և ականջօք լուիցեն և

9 Ո՛վ որ լսելոյ ականջ ունի՝ լիցի լսէ։

10 Եւ աշակերտանքն մօտ եկին՝ և նորան ասացին. Ընդէ՞ր նորանց հետ առակներով ես խօսում։

11 Նա պատասխան տուաւ՝ և նորանց ասաց. Նրահամար որ՝ ձեզ տրվված է երկնքի արքայութեան խորհուրդները գիտել, բայց նորանց չի՛ տրվված։

12 Որովհետև՝ ով որ ունի՝ նորան կըտրվի և կաւելանայ. և ով որ չունի, նորանից՝ էն էլ որ ունի, վերկառնըվի։

13 Ընդհամար առակներով եմ խօսում նորանց հետ, որ տեսնումեն՝ և չէն տեսնում. և լսումեն՝ և չէն լսում, և մտքներն չէն առնում։

14 Եւ եսայեայ մարգարէութիւնն կատարվումէ նորանց վերայ՝ որ ասում. լսելով կլսէք, և չէք իմանալ, և տեսնելով կըտեսնէք, և չէք տեսնիլ։

15 Ինչուորէ՝ էս ժողովըրդիս սիրտն թանձրացաւ, և իրանց ականջներովն ծանր լսեցին, և իրանց աչքերըն խփեցին՝ որ իսկի մին ժամանակ աչքերով չըտեսնեն՝ և ականջնե-

սրտիւք իմասցին, և դարձցին և բժշկեցից զնոսա:

16 Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջայ ձերոյ՝ զի լսեն:

17 Ամէն ասեմ ձեզ. զի բազումք մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լսեան:

18 Դու արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին:

19 Զամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան՝ և ոչ առնու՝ ի միտ, գայ չարն՝ և յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ:

20 Դու որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղակի ընդունի զնա:

21 Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի:

22 Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և սրտով չընդունի զնա, և հոգս աշխարհի և խաբէութիւն մեծութեան, և այլ զանազան ախտք մտանեն, և խեղդեն զբանն, և պտուղ չտայ:

23 Իսկ որ ի բարի հող սերմանեցաւ՝ այն է, որ լսէ զբանն, և հասկանայ, որ և պտուղ տայ, և առնէ զայս՝ հարիւրապատիկ, և զայս՝ վաթսնապատիկ, և զայս՝ երեսնապատիկ:

24 Առակ մի ետ նոցա՝ և ասէ. նմանեցաւ արքայութիւն երկնից մարդոյ մի՝ որ սերմանեաց զսերմունս բարի յագրի իւրում:

25 Եւ մինչդեռ քնանային մարդիկ՝ եկն թշնամի նորա՝ և սերմանեաց զիւրն ի միջի ցորենոյն, և գնաց:

26 Եւ յորժամ բուսաւ խոտն՝ և պտուղ ետ, յայնժամ երևեցան և զիւրն:

27 Եկին ծառայք տանուտերին՝ և ասեն ցնա. տէր, ո՞չ զբարի սերմունս սերմանեցեր յագրի քում. ուստի՞ ունի զիւրն:

28 Եւ նա ասէ ցնոսա. զայն թշնամի մարդ արար. և ծառայքն ասեն ցնա. կամիս՝ երթեալ ժողովեսցուք զայն:

29 Եւ նա ասէ. ոչ, գուցէ ժողովելով զիւրն՝ արմատաքակ առնիցէք զցորենն ընդ նմա:

30 Արձակեցէք զամենեսին մինչև ի հունձս. և ի ժամ հնձանն ասիցեմ հնձողացն. ժողովեցէք նախ զիւրն՝ և կապեցէք զնոսա ի կապանս՝ հրկիզել զնոսա, և զցորենն ժողովեցէք ի շտեմարան իմ:

31 Առակ մի ետ նոցա՝ և ասէ. նմանեցաւ արքայութիւն երկնից հատու մանանխոյ՝ զոր առեալ մարդ՝ սերմանեաց յագրի իւրում:

32 Որ փոքրագոյն է քան զամենայն սերմունս. իսկ յորժամ աճեցանէ՝ մեծագոյն է քան զամենայն ընդեղէնս՝ և լինի ծառ, մինչև գան թռչունք երկնից՝ և բնակեսցեն ի ճիւղս նորա:

33 Առակ մի ետ նոցա. նմանեցաւ արքայութիւն երկնից խմորոյ՝ զոր առեալ կին՝ ծածկեաց ի երիս չափս ալևրի, մինչև խմորեցաւ ամենայն:

34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս ընդ բազմութիւնսն առակաւք, և առանց առակի ոչ խօսէր ընդ նոսա:

35 Զի լցցի բանն որ ասացաւ ընդ մարգարէին՝ որ ասէ. բացից ի առակս զբերան իմ, հանից զբանս որ ի սկզբանէ գոյացան:

36 Յետ այսորիկ արձակեաց զբազմութիւնսն՝ և եկն ի տուն. և մերձեցան աշակերտք նորա՝ և ասեն. պատմեա մեզ զառակ զիզանացն ագրոյ:

37 Եւ նա պատասխանի ետ՝ և ասէ. որ զբարի սերմունսն սերմանէ՝ է Որդի մարդոյ:

38 Եւ ագրն է աշխարհ. իսկ բարի սերմունսն՝ սոքա են որդիք արքայութեան. և զիզանիքն՝ որդիք չարին են:

39 Եւ թշնամին որ սերմանեաց զնոսա՝ է սատանայ. և հունձն՝ կատարած աշխարհի է. և հնձողքն՝ հրեշտակք են:

40 Եւ որպէս ժողովին զիզանիսն՝ և հրով այրեն, նոյնպէս լիցի կատարած աշխարհի:

41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր՝ և ժողովեսցեն ի թագաւորութենէ նորա զամենայն գայթակղութիւնս՝ և զանիրաւութիւնս,

42 և արկցեն զնոսա ի հնոցն հրոյ. անդ լիցի լալ և կրճտել ատամանց:

28 Եւ սկսաւ Պետրոս ասել ցնա. ահա մեք ամենայն ինչ թողաք՝ և հետևեցաք քեզ ։

29 Եւ Յիսուս պատասխանի ետ՝ և ասէ. ճշմարտապէս ասեմ ձեզ՝ զի չիք որ թողցէ տուն՝ կամ եղբարս՝ կամ քոյրս՝ կամ հայր՝ կամ մայր՝ կամ կին՝ կամ որդիս՝ կամ արտ՝ վասն իմ՝ և վասն աւետարանին ։

30 Եթէ ոչ հարիւրապատիկ առցէ հիմա՝ յաշխարհիս այսմիկ՝ տուն՝ և եղբարս՝ և քոյրս՝ և մայր՝ և որդիս՝ և արտ՝ հանդերձ հալածանաւք ։ և յաշխարհին գալոցի՝ զկեանս յաւիտենական ։

31 Եւ բազումք առաջինք՝ որ յետինք լինիցին ։ և յետինք՝ որ առաջինք լինիցին ։

32 Եւ էին ի ճանապարհի՝ ելանելով յԵրուսաղէմ ։ և Յիսուս էր առաջի նոցա ։ և զարհուրեցան ։ և հետևեալքն երկնչէին ։ և առեալ զտասներկուսն՝ սկսաւ ասել ցնոսա զինչ իցէ պատահելոց նմա ։

33 Ահա ելանեմք յԵրուսաղէմ ։ և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետաց և դպրաց ։ և դատապարտեսցեն զնա մահու ։ և մատնեսցեն զնա հեթանոսաց ։

34 Եւ ծաղր առնիցեն նմա ։ և թքանս տացեն նմա ։ և գանակոծեսցեն զնա ։ և սպանցեն զնա ։ և յետ երից աւուրց յարիցէ ։

35 Եւ մատուցեալ առ նա Յակոբոս և Յովհաննէս՝ որդիք Զեբեդեայ՝ ասեն ցնա. Վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք՝ արասցես մեզ ։

36 Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ կամիք զի արասցեմ ձեզ ։

37 Եւ նոքա ասեն. տուր մեզ զի մի՝ ընդ աջմէ քումմէ՝ և մի՝ ընդ ձախմէ քումմէ նստցուք՝ ի փառս քո ։

38 Եւ Յիսուս ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խնդրէք ։ կարէ՞ք արբուցանել զբաժակն զոր ես արբուցանեմ ։ և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիլ ։

39 Եւ նոքա ասեն. կարեմք ։ և Յիսուս ասէ ցնոսա. զբաժակն զոր ես արբուցանեմ՝ արբուցանիցէք ։ և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիցիք ։

40 Բայց նստել ընդ աջմէ իմմէ՝ և ընդ ձախմէ՝ ոչ է իմ տալ ։ այլ որոց պատրաստեալ է ։

41 Եւ լուեալ տասանցն՝ սկսան բարկանալ վասն Յակոբայ և Յովհաննու ։

42 Եւ Յիսուս կոչեալ զնոսա՝ ասէ ցնոսա. գիտէք զի որ իշխեն ազգաց՝ տիրեն նոցա ։ և մեծամեծք նոցա՝ հպատակեն նոցա ։

43 Այլ ոչ այդպէս իցէ ի ձեզ ։ այլ որ կամիցի ի ձեզ մեծ լինել՝ եղիցի ձեզ սպասաւոր ։

44 Եւ որ կամիցի ի ձեզ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ ։

45 Զի և Որդի մարդոյ ոչ եկն՝ զի սպասաւորեսցի՝ այլ սպասաւորեսցէ ։ և տացէ զանձն իւր փրկանս վասն բազմաց ։

46 Եւ գան յԵրիքով ։ և ելեալ նորա յԵրիքովայ՝ և աշակերտացն նորա՝ և ամբոխին բազմի՝ որդի Տիմէոսի Բարտիմէոս կոյր՝ նստէր առ ճանապարհաւ ։ և խնդրէր ։

47 Եւ լուեալ՝ զի Յիսուս Նազովրեցի է՝ սկսաւ աղաղակել՝ և ասել. Յիսուս որդի Դաւթի՝ ողորմեա ինձ ։

48 Եւ բազումք նզովէին զնա՝ զի լռեսցէ ։ նա աւելի աղաղակէր. Որդի Դաւթի՝ ողորմեա ինձ ։

49 Եւ կացեալ Յիսուս՝ հրամայեաց կոչել զնա ։ և կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեա՝ յարիր՝ կոչէ զքեզ ։

50 Եւ նա ձգեալ զհանդերձ իւր՝ յարոյց՝ և եկն առ Յիսուս ։

51 Եւ պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. զի՞նչ կամիս զի արասցեմ քեզ ։ և կոյրն ասէ ցնա. Վարդապետ՝ զի տեսից ։

52 Եւ Յիսուս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ ։ և անդէն տեսեալ՝ հետևեցաւ նմա ճանապարհաւ ։

ԳԼ. ԺԵ ։

1 Եւ յորժամ մերձեցան յԵրուսաղէմ՝ ի Բեթփագէ և ի Բեթանիա՝ առ լերինն Ձիթենեաց՝ առաքէ երկուս ի աշակերտացն իւրոց ։

2 Եւ ասէ ցնոսա. երթայք ի գեղն որ առաջի ձեր է ։ և անդէն մտեալ՝ գտանիցէք զերինջ կապեալ՝ յորում ոչ ոք երբեք նստաւ ։ արձակեցէք զնա՝ և բերէք ։

3 Եւ եթէ ոք ասիցէ ձեզ. զի՞ արձակէք զնա ։ ասասջիք՝ զի Տէր պիտոյ է նմա ։ և անդէն զնա առաքեսցէ հոս ։

4 Եւ գնացեալ՝ գտին զերինջն կապեալ առ դրան արտաքս ի ճանապարհի ։ և արձակեցին զնա ։

5 Եւ ոմանք ի կայնելոցն անդ՝ ասեն ցնոսա. զի՞ արձակէք զերինջն ։

6 Եւ նոքա ասացին ցնոսա որպէս պատուիրեաց Յիսուս ։ և թողին զնոսա ։

7 Եւ բերին զերինջն առ Յիսուս ։ և արկին զհանդերձս իւրեանց ի վերայ նորա ։ և նստաւ ի վերայ նորա ։

8 Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածեցին ճանապարհաւ ։ և այլք կտրէին ոստս ի ծառոց՝ և տարածանէին ճանապարհաւ ։

9 Եւ որ առաջի երթային՝ և որ հետևեալ էին՝ աղաղակէին՝ և ասէին. օրհնեալ է որ գայ յանուն Տեառն ։

10 Օրհնեալ է որ գայ յանուն Տեառն՝ զարքայութիւն հաւր մերոյ Դաւթի ։ օրհնութիւն ի բարձունս ։

11 Եւ մտեալ Յիսուս յԵրուսաղէմ՝ ի տաճարն ։ և դիտեալ զամենայն կողմանս՝ և ոչ ինչ այլ՝ քան զի երեկոյ եղեալ էր՝ ել ի Բեթանիա ընդ տասներկուսն ։

12 Եւ ի վաղիւն՝ յորժամ ելին ի Բեթանիայ՝ քաղցեալ էր ։

13 Եւ տեսեալ զթզենի մի հեռուստ՝ որ տերեւս ունէր՝ եկն՝ գուցէ գտանիցէ ինչ ի նմա ։ և մերձեցեալ ընդ նա՝ ոչ ինչ գտանէ՝ բայց միայն տերեւս ։ զի ոչ էր ժամանակ թզոյ ։

14 Եւ Յիսուս պատասխանի ետ՝ և ասէ ցնա. ոչ ոք յաւիտեան ի քէն պտուղ մի ուտիցէ ։ և լսէին աշակերտքն նորա ։

15 Եւ գան յԵրուսաղէմ ։ և մտեալ Յիսուս ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն ի տաճարէն ։ և զսեղանս դրամատանց՝ և զաթոռս վաճառողաց աղաւնեաց՝ կործանեաց ։

16 Եւ ոչ ետ զի ոք անցուսցէ զամանս ընդ տաճարն ։

17 Եւ ուսուցանէր՝ և ասէր ցնոսա. ոչ գրեալ է՝ զի տուն իմ՝ տուն աղօթից կոչեսցի ամենայն ազգաց ։ դուք արարէք զնա որջ աւազակաց ։

18 Եւ լուեալ դպրացն և քահանայապետացն՝ խորհէին զկորուստ նորա ։ զի երկնչէին ի նմանէ ։ զի ամենայն ամբոխ զարհուրեալ էր ի վարդապետութենէ նորա ։

19 Եւ յորժամ երեկոյ եղեւ՝ ել արտաքս ի քաղաքէն ։

20 Եւ ի վաղիւն անցանելով՝ տեսին զթզենին ցամաքեալ արմատիւք ։

21 Եւ Պետրոս յիշեալ՝ ասէ ցնա. Վարդապետ՝ ահա թզենին զոր անիծեր՝ ցամաքեալ է ։

22 Եւ Յիսուս պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. ունիջիք հաւատս Աստուծոյ ։

23 Ճշմարտապէս ասեմ ձեզ՝ զի որ ասիցէ լերինդ այդմիկ. վերացիր՝ և արկանիցիս ի ծով ։ և ոչ տարակուսիցի սրտիւ իւրով՝ այլ հաւատասցէ՝ զի զոր ասիցէ՝ եղիցի ։ եղիցի նմա ։

24 Վասն այսորիկ ասեմ ձեզ՝ զամենայն զոր աղաչիցէք՝ և խնդրիցէք՝ հաւատասջիք՝ զի առիք ։ և եղիցի ձեզ ։

25 Եւ յորժամ կայնիցիք աղաչել՝ ներեցէք եթէ ինչ ունիցիք ընդ մարդոյ ։ զի և Հայր ձեր որ յերկինս է՝ ներիցէ ձեզ զյանցանս ձեր ։

26 Եւ եթէ դուք ոչ ներէք՝ և Հայր ձեր որ յերկինս է՝ ոչ ներիցէ ձեզ զյանցանս ձեր ։

27 Եւ գան կրկին յԵրուսաղէմ ։ և յորժամ ի տաճարին էր՝ մատուցեալ առ նա քահանայապետքն և դպիրքն և երէցքն ։

28 Եւ ասեն ցնա. ո՞ր իշխանութեամբ այսոքիկ առնես ։ և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնս զայս՝ զի զայսոքիկ առնես ։

29 Եւ Յիսուս պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. հարցից և ես ձեզ մի բան՝ և պատասխանի տուք ինձ ։ և ասասջիք ինձ ։ և ես ձեզ ասեմ ո՞ր իշխանութեամբ այսոքիկ առնեմ ։

30 Մկրտութի՞ւնն Յովհաննու յերկնից էր՝ թէ յայնմանէ ։ պատասխանի տուք ինձ ։

31 Եւ նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին՝ եթէ ասիցուք՝ յերկնից ասասցէ՝ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա ։

32 Եւ եթէ ասիցուք՝ յայնմանէ ։ զարհուրեցան ի ժողովրդենէ ։ զի ամենեքեան զՅովհաննէս ունէին զի իսկ մարգարէ էր ։

33 Եւ պատասխանի տուեալ՝ ասեն ցՅիսուս. ոչ գիտեմք ։ և Յիսուս ասէ ցնոսա. ոչ ես ասեմ ձեզ ո՞ր իշխանութեամբ այսոքիկ առնեմ ։

ԳԼ. ԺԶ ։

1 Եւ սկսաւ առակաւ խօսել ցնոսա ։ մարգ մի տնկեաց՝ և ցանկապատ արար շուրջանակի նորա ։ և փորեաց հնձան՝ և շինեաց աշտարակ ։ և մշակաց ետ զնա ։ և գնաց ճանապարհորդ ։

2 Եւ առաքեաց առ մշակսն ի ժամ՝ զծառայ մի՝ զի ի մշակացն առցէ ի պտղոյ մարգոյն ։

3 Եւ նոքա առեալ զնա՝ ծեծեցին ։ և արձակեցին զնա դատարկ ։

4 Եւ դարձեալ առաքեաց առ նոսա ծառայ այլ ։ և զնա գանակոծեցին՝ և պատուհասեցին ։

5 Եւ դարձեալ առաքեաց այլ ։ և զնա սպանին ։ և զայլս բազումս ։ զոմանս ծեծեցին՝ և զոմանս սպանին ։

6 Եւ մնացեալ էր նմա մի որդի սիրելի ։ և առաքեաց զնա առ նոսա յետինս ։ և ասէ. ամաչեսցեն զորդի իմ ։

7 Եւ մշակքն նոքա ասացին ցմիմեանս. սա է ժառանգն ։ եկայք սպանցուք զնա ։ և մեզ եղիցի ժառանգութիւնն ։

8 Եւ առեալ զնա՝ սպանին ։ և արկին արտաքս ի մարգոյն ։

9 Զի՞նչ արասցէ տէր մարգոյն ։ եկեսցէ՝ և կորուսցէ զմշակսն ։ և տացէ զմարգն այլոց ։

10 Ոչ զայս գրոյ ընթերցեալ էք ։ զքարն զոր անարգեցին շինողքն ։ նա եղեւ գլուխ անկեան ։

11 ՅՏեառնէ եղեւ այն ։ և է հրաշալի առ աչս մեր ։

12 Եւ խնդրէին զնա կալանաւորել ։ և երկնչէին ի ժողովրդենէ ։ զի գիտացին՝ թէ առակս զայս ասաց ցնոսա ։ և թողեալ զնա՝ գնացին ։

13 Եւ առաքեցին առ նա զոմանս ի փարիսեցւոցն և ի հերովդիանոսացն՝ զի որսասցեն զնա ի խօսից ։

14 Եւ եկեալ նոքա՝ ասեն ցնա. Վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես ։ և ոչ հոգաս զոք ։ զի ոչ նայիս ի դէմս մարդկան ։ այլ ճշմարտութեամբ զճանապարհ Աստուծոյ ուսուցանես ։ արդեօք արձակ է տալ հարկս կայսեր ։ տամք՝ թէ ոչ տամք ։

15 Եւ նա գիտացեալ զկեղծաւորութիւն նոցա՝ ասէ ցնոսա. զի՞ զիս փորձէք ։ բերէք ինձ դահեկան մի՝ զի տես

ասէ ցնոսա . յորժամ երեկոյ լինի՝ ասէք , պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է երկին :

3 Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շառագունի տըրտմութեամբ երկին: Ո՛րդ՝ զերեսս երկնի կարէք քննել , իսկ զնշան ժամանակիս ո՞չ կարէք գիտել :

4 Ազգ չար և շնացօղ՝ նշան խնդրէ , և նշան մի տացի նմա , բայց նշանն Յովնայ նու մարգարէի. և եւթող զնոսա և գնաց :

5 Գնացին և աշակերտքն յայնկոյս , և մոռացան առնուլ հաց :

6 Ասէ ցնոսա Յիսուս . տեսէք և զգոյշ լերուք ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոցն :

7 Նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին թէ հաց ոչ բարձաք :

8 Գիտաց Յիսուս և ասէ. զի՞ խորհիք ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ ունիք :

9 Տակաւին չիմանայք՝ և ոչ յիշէք զհինգ նկանակն ի և սացց նորանց. որ ժամանակ իրիկուն է լինում՝ ասումէք թէ պարզ կըլինի. ինչուոր՝ երկինքն կարմրացել է :

3 Եւ առաւօտն (ասումէք) էս օր մրրիկ (ﻫﻮﺭﻯ ﺳﻮﺩ) (կըլինի.) ինչուոր երկինքն տրամութենով կարմրացել է: Ապա երկնքի երեսըն կարօղ էք քննել՝ բայց էս ժամանակիս նշանըն չէ՞ք կարօղ հասկանալ :

4 Չար և շնացօղ ազգն նշան է խնդրում . և նշան չի՛ տըվվիլ նորան, բայց միայն Յոնան մարգարէի նշանն. և նորանց թողէց և գնաց :

5 Աշակերտներն էլ գնացին էն կողմի , և մոռացան հաց վերառնել :

6 Յիսուս նորանց ասաց , տեսէք և զգոյշ կայէք սադուկեցոց և փարիսեցոց խմորիցն :

7 Նորանք իրանց միջումն միաք էին անում՝ և ասումէին. թէ հաց չենք վերկալել :

8 Յիսուս իմացաւ և ասաց . ով թերահաւատներ՝ ինչո՞ւ էք ձեր մտքումն հոգս անում՝ թէ հաց չունինք :

9 Դեռ չէ՞ք իմանում՝ և մտքներդ չէ՞ք բերում էն

հինգ հազարսն, և քանի սակաւ բարձիք։

10 Եւ ոչ զեօթն նկանակն ի չորս հազարսն, և քանի զամբիւղս բարձիք։

11 Ընդ՝ զիա՞րդ ոչ խոնայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել ի խմորոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց։

12 Յայնժամ ի միտ առին, թէ ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յայտնդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց։

13 Եւ եկեալ Յիսուս ի կողմանս փիլիպպեայ կեսարիացւոյ, հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր. զի՞ ոք ասեն զինեն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։

14 Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս մկրտիչ, և այլք զեղիա, և կեսք զերեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։

15 Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զի՞ ասէք զինեն թէ իցեմ։

16 Պատասխանի եւ սիմոն

հինգ հացըն հինգ հազար մարդկանցն, և քանի զթոց վերառիք։

10 Եւ ոչ եւ եօթըն հացըն չորս հազար մարդկանցն. և քանի զթոց վերառիք։

11 Որպէս՞ չէք իմանում՝ որ հացի համար չասացի ձեզ՝ զգոյշ կացէք՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորիցն։

12 Յն ժամանակն հասկացան որ չասաց՝ թէ խմորիցն զգոյշ կենան, այլ փարիսեցւոց և սադուկեցւոց օրէնքիցն։

13 Եւ Յիսուս դուրս գնաց փիլիպպեայ կեսարիայի կողմերն, և աշակերտներին հարցրնուէր և ասուէր. թէ մարդիքն ինձ համար ով են ասում՝ որ որդին մարդոյ լինի։

14 Եւ նորանք ասացին. միոնն (ասում) թէ յօհաննէս մկրտիչն է. ուրիշներն էլ՝ թէ եղիան. և կեսն էլ՝ թէ երեմիան, կամ մարգարէներիցն միոնն։

15 Յիսուս նորանց ասաց. ապա դուք ով էք ասում ինձ համար որ լինիմ։

16 Սիմոն պետրոսն պատաս-

պետրոս՝ և ասէ· դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կեն-դանւոյ:

17 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա· երանի քեզ սիմոն որդի յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ հայր իմ որ յերկինս է:

18 Եւ ես քեզ ասեմ· զի դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց չնա մի յաղթահարեսցեն:

19 Եւ տայ քեզ զբանականս արքայութեանն երկնից· և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս· և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս:

20 Յայնժամ սաստեաց ա-շակերտացն, զի մի ումեք ա-սիցեն՝ թէ նա է քրիստոս:

21 Յայնմհետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, և բազում չարչարանս չարչարիլ ի քահանայապետից և ի դպրաց և ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ, և յերրորդ աւուր յառնել:

խան տուաւ նորան և ասաց· դու ես քրիստոս՝ կենդանի Աստուծոյ որդին:

17 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորան· երանի քեզ՝ Յովնանի որդի սիմոն, ինչուղու՝ մարմին և արիւն քեզ չի՛ յայտնեց, բայց իմ հայրս՝ որ երկնքումն է:

18 Եւ ես ասումեմ քեզ· որ դու ես վէմ, և ես վիմիդ վերայ իմ եկեղեցիս կըշինեմ, և դժոխքի դռներն չեն յաղթիլ դորան:

19 Եւ երկնքի արքայութեան բանալիքըն քեզ կըտամ, և ինչ որ երկրի վերայ կըկապես, երկնքումն էլ կապվածկըլինի· և ինչ որ երկրի վերայ կարձակես, երկնքումն էլ արձակվածկըլինի:

20 Յն ժամանակն աշակերտներին սաստեց՝ որ իսկի մին մարդոյ չասեն· թէ նա քրիստոս է:

21 Ներանից ետև Յիսուս սկսեց աշակերտներին յայտնել, թէ պէտք է նորան՝ որ երուսաղէմ գնայ և քահանայապետներից և կարդացողներից և ժողովրդի ծերերից շատ չարչարանքով չարչարվի՝ սպանվի և երեք օրումն յարութիւն առնի:

22 Եւ առեալ զնա մեկուսի պետրոսի, սկսաւ կսկիծել ընդ նմա և ասել. քա՛ւ լիցի քեզ տէր, մի եղիցի քեզ այդ։

23 Եւ նա դարձեալ՝ ի պետրոս՝ ասէ. երթ յետս իմ սատանայ. դայթակղուածդ իմ ես. զի ոչ խորհիս դու զբանն, այլ զմարդկանն։

24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր. եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ։

25 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։

26 Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։

27 Զի գալոց է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւ-

22 Եւ պետրոսն նորան մին կողմն տարաւ. և սկսեց նորա հետ հակառակիլ և ասել՝ քա՛ւ լիցի քեզ Տէր՝ էդ բանդ չը՛ լինի քեզ։

23 Եւ նա դարձաւ դէպի պետրոսն՝ և ասաց. յե՛տ դնա՝ ինձանից սատանայ՝ ինձ գայթակղեցնելն ես. ինչուռը՝ դու Աստուծոյ բաներըն միտք չես անում, բայց մարդկանց բաներըն։

24 Յետոյ ժամանակն Յիսուս իրան աշակերտներին ասաց. եթէ որ մին մարդ կամենում իմ ետևէս գալ, նա թո՛ղ իրան անձըն ուրանայ՝ և իրան խաչըն վերառնէ, և իմ ետևէս գայ։

25 Պատճառնոր՝ ով որ իրան անձըն կուզէ ապրեցնել, կըկորցնէ նորան. և ով որ իրան անձըն կըկորցնէ ինձ համար, կըգտնէ նորան։

26 Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհըս ստանայ՝ և իրան անձին վնաս տայ. կամ թէ ի՞նչ գին կըտայ մարդ՝ իրան անձըն փրկելոյ համար։

27 Ինչուռը՝ գալու է որդին մարդոյ իրան հօր փառքովն իրան հրեշտակներին հետ. և էն ժամանակն ամէն մէկին

բաքանչիւր ըստ գործս իւր ։

28 Ամէն ասեմ ձեզ · զի
եղին ոմանք ՚ի սոցանէ՝ որք
աստ կան· որք ոչ ՚ճաշակեսցեն
զմահ՝ մինչև տեսցեն
զորդի մարդոյ եկեալ ար-
քայութեամբ իւրով ։

ԳԼ · ԺԲ ։

1 Եւ յետ վեց աւուրը առ-
նու Յիսուս զՊետրոս
եւ զՅակոբոս եւ զՅովհան-
նէս զեղբայր նորա, և հանէ
զնոսա ՚ի լեառն մի բարձր
առանձինն ։

2 Եւ այլակերպեցաւ առա-
ջի նոցա· և լուսաւորեցան
երեսք նորա իբրև զարեգակն,
և հանդերձք նորա եղեն սպի-
տակ իբրև զլոյս ։

3 Եւ ահա երևեցան նո-
ցա Մովսէս և Եղիա՝ որ խո-
սէին ընդ նմա ։

4 Պատասխանի եւ պետ-
րոս և ասէ ցՅիսուս · տէր՝
բարւոք է մեզ աստ լինել ·
եթէ կամիս՝ արասցուք երիս
տաղաւարս՝ մի քեզ և մի
Մովսէսի և մի եղիայի ։

5 Եւ մինչդեռ նա խօսէր,

հատուցումն կըտայ իւրա-
քանչիւր ըստ գործոց իւրոց ։

28 Ճշմարիտ ասեմ ձեզ , որ կան ոմանք ի կայնողներուդ
մին քանիսն կան, որ մահ չեն
տեսնիլ՝ մինչև որ որդին մար-
դոյ տեսնեն իրեն թագաւո-
րութեամբ եկած ։

ԺԷ · ԺԲ ։

1 Եւ վեց օրից ետև Յի-
սուս պետրոսին և յակոբին և
նորա եղբայր յովհաննէսին ի-
րեան հետ առաւ , և նորանց
առանձին մին բարձր սար հա-
նեց ։

2 Եւ նորանց առաջին՝ նո-
րա կերպարանքն փոխվեցաւ՝
և նորա երեսն արեգական պէս
լուսաւորվեցաւ , և նորա շո-
րերն լուսոյ պէս սպիտակ է-
լան ։

3 Եւ ահա մովսէսն և ե-
ղիան նորանց երևեցան՝ որ նո-
րա հետ խօսումէին ։

4 Պետրոսն պատասխան
տուաւ՝ և ասաց Յիսուսին ·
Տէր՝ լաւ է որ մենք էստեղ
կենանք · եթէ որ կամենաս ,
երեք տաղաւար (շաբաք) կըշի-
նենք՝ մինըն քեզ համար՝
մինըն մովսէսին , և մինըն ե-
ղիային ։

5 Եւ դեռ քանի որ նա

ահա ամպ լուսաւոր հո-
վանի եղև ՚ի վերայ նոցա.
ձայն եղև յամպոյն՝ և ասէ.
դա՛ է որդի իմ սիրելի՝ ընդ
որ հաճեցայ, դմա լուարո՛ւք։

6 Եւ զլսելն աշակերտացն,
անկան ՚ի վերայ երեսաց իւ-
րեանց՝ և երկեան յոյժ։

7 Եւ մատուցեալ Յիսուս
բուռն եհար զնոսայնիկ՝ և ա-
սէ. յո՛տն կացէք՝ և մի՛
երկնչիք։

8 Ամբարձին զաչս իւ-
րեանց՝ և ո՛չ զոք տեսին՝ բայց
միայն զՅիսուս։

9 Եւ մինչդեռ իջանէին
՚ի լեռնէ անտի, պատուիրեաց
նոցա Յիսուս՝ և ասէ. մի՛
ումեք ասիցէք զտեսիլդ՝ մին-
չեւ որդի մարդոյ ՚ի մեռելոց
յարիցէ։

10 Հարցին ցնա աշակերտքն
և ասեն. զիա՞րդ դպիրքն ա-
սեն, եթէ եղիայի նախ պարտ
է գալ։

11 Պատասխանի ետ Յի-
սուս՝ և ասէ ցնոսա. եղիա
դա՛յ՝ և հաստատեսցէ զա՛մ։

12 Այլ ասեմ ձեզ՝ զի ե-

խօսումէր՝ ահա մին լուսաւոր
ամպ շուաք արաւ նորանց վե-
րայ. էն ամպիցն ձայն էլաւ՝
և ասաց. դա՛ է իմ սիրելի
որդին՝ որ դորան հաւանել
եմ. դորան ակա՛նջ դրէք։

6 Երբոր աշակերտներն
լսեցին, իրանց երեսներին
վերայ վէր ընկան. և շատ
վախեցան։

7 Եւ Յիսուս մօտեցաւ՝
նորանց բռնեց և ասաց. վե՛ր-
կացէք՝ և մի՛ վախենաք։

8 Իրանց աչքերըն բարձ-
րացրին և ո՛չ ով չի տեսին,
բայց միայն Յիսուսին։

9 Եւ երբոր էն սարիցն
վէրէկին գալիս, Յիսուս նո-
րանց պատուէր տուաւ և ա-
սաց. էդ տեսիլքըդ իակի մին
մարդոյ չասէք, մինչև որ որ-
դին մարդոյ մեռելների մի-
ջիցն յարութիւն առնէ։

10 Աշակերտներն նորան
հարցրին և ասացին. ի՞նչպէս
է՝ որ կարդացօղներն ասու-
մեն՝ թէ առաջ եղիան պէտք
է գայ։

11 Յիսուս պատասխան տը-
ւաւ՝ և ասաց նորանց. եղիան
կըգայ՝ և ամէն բան կըհաս-
տատէ։

12 Բայց ասումեմ ձեզ՝ որ

զնա եկեալ. իսկ է· և ոչ ծա-
նեան զնա, այլ արարին ընդ
նա՝ զոր ինչ կամեցան· նոյն-
պէս և որդի մարդոյ չարչա-
րելոց է ՚ի նոցանէ ։

13 Յայնժամ ՚ի միտ առին
աշակերտքն՝ թէ վասն յով-
հաննու մկրտչի ասաց ցնոս ։

14 Եւ իբրև եկին ՚ի ժո-
ղովուրդն, մատեաւ այր մի՝
՚ի ծունր իջանէր և ասէր·
տէր ողորմեայ որդւոյ ի-
մում, զի լուսնոտի՝ և չարա-
չար հիւանդանայ· բազում
անգամ անկանի ՚ի հուր՝ և
երբեմն ՚ի ջուր ։

15 Եւ մատուցի զնա աշա-
կերտացն քոյ՝ և ոչ կարա-
ցին բժշկել ։

16 Պատասխանի եւս Յի-
սուս՝ և ասէ· ով ազգ ան-
հաւատ և թիւր, մինչև ցե՞րբ
իցեմ ընդ ձեզ՝ մինչև ցե՞րբ
անսայցեմ ձեզ· ածէ զնա
առ իս ։

17 Եւ սաստեաց ՚ի նա Յի-
սուս՝ և ել ՚ի նմանէ դեւն,
և բժշկեցաւ մանուկն ՚ի ժա-
մէն յայնմանէ ։

18 Յայնժամ մատեան ա-
շակերտքն առանձինն՝ և ա-
սեն ցՅիսուս· մեք ընդէ՞ր
ոչ կարացաք հանել զնա ։

եղեան հնոյ հիմիկ եկած է՝
և նորան չըճանաչեցին· այլ
ինչ որ ուզեցին՝ նորան արին·
ենպէս էլ որդին մարդոյ նո-
րանցից պիտի չարչարվի ։

13 Յն ժամանակին աշակերտ-
ներն հասկացան՝ թէ յօհան-
նէս մկրտչին համար ասաց
նորանոյ ։

14 Եւ երբոր ժողովըրդի
մէջն եկին, մին մարդ մօտե-
ցաւ՝ ծունր էր դնում և
ասում էր· Տէր իմ որդուս ո-
ղորմեա· որ լուսնոտում՝ և
սաստիկ հիւանդանում· շատ
անգամ կրակն է ընկնում· և
մին քանի անգամ էլ ջուրն ։

15 Եւ նորան քո աշակերտ-
ներին մօտ բերի՝ և չըկարա-
ցին բժշկել ։

16 Յիսուս պատասխան տը-
ւաւ և ասաց· ով անհաւատ
և ծուռ ազգ· մինչև ե՞րբ
ձեզ հետ պիտի լինիմ՝ մինչև
ե՞րբ ձեզ պիտի համբերեմ·
նորան ինձ մօտ բերէ ։

17 Եւ Յիսուս նորան սաս-
տեց· և դեւն նորանից դուրս
եկաւ, և տղան հենց էն ժա-
մումն (առհասարակ) բժշկվեցաւ ։

18 Յն ժամանակին աշակերտ-
ներն առանձին մօտ եկին·
և Յիսուսին ասացին· մենք
ինչու չըկարացինք հանել նո-
րան ։

19 Եւ նա ասէ ցնոսա. վա՛յ ձեր թերահաւատութեան ձերոյ։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանեխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեցարուք ատեղր, և փոխեսցի. և ոչ ինչ անկարելի լինիցի ձեզ։

19 Նա էլ նորանց ասաց. ձեր թերահաւատութեան համար։ Շմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ որ մանանեխի (խոպոպուկի) հատի չափ հաւատ ունենաք, և էս սարիս ասէք՝ էստեղից Քնաեղ փոխվիր կըփոխվի. և իսկի մին բան անկարելի չի՛ լինիլ ձեզ համար։

20 Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք։

20 Սիայն թէ՝ էս ցեղս ուրիշ բանով դուրս չի գալ՝ եթէ ոչ աղօթքով և պասով։

21 Եւ մինչդեռ շրջէին նորա ՚ի գալիլեայ՝ ասէ ցնոսա Յիսուս. մատնելոց է որդի մարդոյ ՚ի ձեռս մարդկան։

21 Եւ դեռքանի որ նորանք գալիլեայի մէջն մեն էին գալիս, Յիսուս նորանց ասաց. որդին մարդոյ մարդկանց ձեռքն պէտք է մատնըվի։

22 Եւ սպանցեն զնա, և յերրիք աւուր յարիցէ. և տրտմեցան յոյժ։

22 Եւ նորան կըսպանեն՝ և երեք օրումն յարութիւն կառնէ. և նորանք շատ տրտմեցան։

23 Իբրև եկին նորա ՚ի կափառնաում՝ մատեան՝ որք զերկդրամեանն պահանջէին՝ առ պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ոչ տայ զերկդրամեանն. և ասէ՝ այո։

23 Երբ որ նորանք եկին կափառնայում, երկդրամեան հարկ ուղղիչներն եկին պետրոսի մօտն և ասացին. ձեր վարդապետն երկդրամեանն չի՞ տալիս, և նա ասաց՝ հա։

24 Եւ իբրև եմուտ ՚ի տունն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և ասէ. զինչ թուի քեզ սիմոն. թագաւորք աշխարհի յումեքէ առնուն գհարկս կամ գչհան, յորդւոց իւրոց

24 Եւ երբ որ տունն մտաւ, Յիսուս նորանից առաջ սկսեց և ասաց. սիմոն՝ ի՞նչպէս է երևում քեզ. ազգերի թագաւորներն ումից են առնում դրհաճարկըն կամ տուրքըն,

բանդ՝ Թէ Յոտաբաց ։

25 Եւ իբրև ասաց՝ Թէ Յոտաբաց, ասէ ցնա Յիսուս. ապա ուրեմն ազատ են որդիքն ։

26 Բայց զի մի գայթակղեցուսցուք զնոսա, երթ՝ ի ծով՝ և ընկեա կարթ, և զառաջին ձուկն որ ելանիցէ՝ ա՛ռ և բաց զբերան նորա, և գտանիցես ստատեր. և զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո ։

ԴԼ · ԺՐ ։

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն. ո՞վ իցէ՝ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից։

2 Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ի մէջ նոցա,

3 Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։

4 Ուրդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեան երկնից ։

5 Եւ որ ոք ընկալցի մա-

լրանց որդիքներիցն, թէ օտարներիցն ։

25 Եւ երբ որ ասաց՝ Թէ օտարներիցն. Յիսուս նորանա-ասց. ապա ուրեմն՝ ազատ են որդիքներն ։

26 Բայց որ նորանց չըգայթակղայնանք՝ գնա ծովն և Ձանկըն քցիր, և առաջին ձուկն որ դուրս կըգայ՝ ա՛ռ, նորա բերանըն բաց՝ և մին սատեր (ֆողչ անուն է) կըգտանես՝ և էն ա՛ռ և նորանց տուր իմ տեղս և քո տեղդ ։

ԺՐ ։

1 Էն օրուն աշակերտանեն Յիսուսի մօտ եկին՝ և ասացին. ովքանից ով մեծ կըլինի երկնքի արքայութեան մէջն ։

2 Եւ Յիսուս մին երեխայ կանչեց իրան մօտ՝ և նորան կինդնայորուց նորանց միջուն։

3 Եւ ասաց. Ճշմարիտըն ասումեմ ձեզ. Թէ որ չըդառնաք և չըլինիք երեխաներին նման, չէք մտնիլ երկընքի արքայութիւնն ։

4 Ուրեմն ով որ իրան անձըն էս երեխայիս նման կըխոնարհցնէ, նա է մեծ երկընքի արքայութեան մէջն ։

5 Եւ ով որ մին էսպէսի

նուկ մի այսպիսի յանուն իմ, դիս ընդունի ։

6 Եւ որ որ գայթակղեցուսցէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ որ հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ՚ի խորս ծովու ։

7 Վա՛յ աշխարհի ՚ի գայթակղութեանց։ Հարկ է գալ գայթակղութեանց ։ բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ որով գայթակղութիւն ։

8 Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա ՚ի քէն։ լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել ՚ի կեանս ։ քան երկուս ձեռս և երկուս ոտս ունել , և անկանել ՚ի հուրն յաւիտենական ։

9 Եւ եթէ աչն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ՚ի քէն ։ լաւ իցէ քեզ միականի մտանել ՚ի կեանս, քան երկուս աչս ունել՝ և անկանել ՚ի գեհեն հրոյն ։

10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ՚ի փոքրիկանցս յայսցանէ։ ասեմ ձեզ, երևեսայ իմ անուանովս կընդունի , նա ինձ կընդունի ։

6 Եւ ով որ կըգայթակղացնէ էս փոքրներիցս մինըն՝ որ ինձ հաւատացեալ են, լաւ էր նորան՝ որ մին իշու ջաղացի քար նորա վըզիցն կախվի և ծովի խոր տեղն խեղդըվի ։

7 Վա՛յ աշխարհքիս՝ գայթակղութիւններին համար ։ պէտք է որ գայթակղութիւններ գան , բայց վա՛յ էն մարդոյն՝ որ նորա ձեռովն կըգայ գայթակղութիւնն ։

8 Թէ որ քո ձեռդ կամ ոտդ քեզ գայթակղացնէ, կտրիր նորան՝ և քեզանից դէն գցիր՝ լաւ է քեզ՝ որ մինձեռնանի կամ կաղ մտնես կեանքն , քանթէ երկու ձեռք և երկու ոտք ունենաս՝ և յաւիտենական կրակին մէջ ընկնիս ։

9 Եւ թէ որ քո աչքդ քեզ գայթակղացնէ , հանիր նորան՝ և քեզանից գցիր ։ լաւ է քեզ՝ որ մինաչքանի մտնես կեանքն , քանթէ երկու աչք ունենաս՝ և գեհենի կրակն ընկնիս ։

10 Զգոյշ կացէք՝ որ էս փոքրներիցս մինն չանարգէք։ ասումեմ ձեզ՝ որ նորանց

ղն հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերես հօր իմոյ՝ որ յերկինս է ։

11 Զի եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն ։

12 Զիարդ թուի ձեզ · եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի ի նոցանէ, ոչ թողուցու զիննսուն և զինն ոչխարն ի լերինս, և երթայցէ խնդրիցէ զմոլորեալն ։

13 Եւ եթէ լինիցի գտանել զնա· ամէն ասեմ ձեզ · զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել՝ քան ի վերայ իննսուն և իններորց· որ չեն մոլորեալ ։

14 Այսպէս ոչ են կամք առաջի հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ի փոքրըկանոցս յայսցանէ ։

15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք· եթէ լուիցէ քեզ , շահեցար զեղբայր քո։

16 Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս և՝ կամ երկուս · զի ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան ։

17 Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ

հրեշտակներն երկնքումն միշտ իմ հօր երեսըն տեսնումն՝ որ երկնքումն է ։

11 Պատճառնոր՝ որդին մարդոյ եկաւ՝ որ ապրեցնէ կորածըն ։

12 Ինչպէս է երևում ձեզ՝ թէ որ մին մարդ հարիւր ոչխար ունենայ՝ և նորանցից մինն մոլորվի, նա չէ թողիլ իննսունն և իններն ոչխարըն սարերումն, և գնալ էն մոլորվածին մանգալ ։

13 Եւ երբոր կըգտնէ նորան · Ճշմարիտըն ասումմ ձեզ · որ նորա վերայ աւելի ուրախ կըլինի, քան էն իններսուն և իններն վերայ· որ չեն մոլորված ։

14 Նոյպէս էլ իմ հայրս՝ որ երկնքումն է, չի կամենում, որ էս փոքրներիցս մինն կորչի ։

15 Թէ որ քո եղբայրդ քեզ դէմ մեղք անէ · գնա նորան յանդիմանիր՝ երբոր դու և նա մէնակ լինիք · Թէ որ լսէ քեզ՝ քո եղբայրըդ շահեցիր։

16 Բայց թէ որ չի լսէ քեզ, մին կամ երկու ուրիշըն էլ քեզ հետ առ · ինչուր՝ երկու կամ երեք վկայի բերանով ամէն բան կըհաստատվի։

17 Բայց թէ որ նորանց էլ

ոչ, ասասջ՛ը յհկեղեցւոջ· ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև պՀեթանոսն և մաքսաւոր ։

18 Ամէն ասեմ ձեզ· զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս ։

19 Դարձեալ ասեմ ձեզ· եթէ երկու ՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զո՛նչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ՚ի հօրէ իմմէ որ յերկինս է։

20 Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանունն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա ։

21 Յայնժամ մատեաւ առ նա պետրոս՝ և ասէ· տէր՝ քանի՞ յա անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թո՞ղից նմա. մինչև յեօթն անգամ ։

22 Ասէ ցնա Յիսուս· ոչ ասեմ քեզ՝ թէ մինչև յեօթն անգամ, այլ մինչև յհոթանասնեկին եօթն։

23 Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից՝

չի՛ լսէ, եկեղեցոյն ասա՝ ապա թէ որ եկեղեցոյն էլ չի՛ լսէ, թո՛ղ լինի քեզ համան ինչպէս հեթանոս կամ մաքսաւոր (հիւ֊տրս֊ուչի)։

18 Ճշմարիտըն ասումեմ ձեզ, թէ էն՝ որ երկրիս վրայ կըկապէք, երկնքումն էլ կապված կըլինի ։ և էն՝ որ երկրիս վերայ կարձակէք, երկնքումն էլ արձակված կըլինի ։

19 Նոս էլ ասումեմ ձեզ՝ թէ որ ձեղանից երկու հոգի երկրի վերայ միաբան լինին ամէն բանի համար, ինչ որ խնդրեն՝ կըլինի նորանց իմ հօրիցս որ երկնքումն է ։

20 Ինչուորՙ որ տեղ երկու կամ երեք հոգի իմ անունովս ժողովված լինին՝ էնտեղ ես նորանց մէջն եմ ։

21 Յն ժամանակն պետրոս նորա մօտ եկաւ և ասաց· Տէր թէ որ իմ եղբայրս ինձ դէմ մեղք անի, քանի՞ անգամ պէտք է թողութիւն տամ նորան · մինչև եօթն անգամ ։

22 Յիսուս նորան ասաց· չեմ ասում քեզ՝ թէ մինչև եօթն անգամ , բայց մինչև եօթանասնաւն անգամ եօթն ։

23 Սրահամար երկնքի արքայութիւնն նմանվեցաւ մի

առն թագաւորի, որ կամեցաւ
համար առնուլ ի մէջ ծա-
ռայից իւրոց ։

24 Եւ իբրև սկսաւ առ-
նուլ, մատուցաւ առ նա պար-
տապան մի բիւր քանքարոց ։

25 Իբրև ոչ ունէր հատու-
ցանել, հրամայեաց զնա վա-
ճառել տէրն նորա, և զկին
նորա՝ և զորդիս՝ և զամենայն
որ ինչ և ունիցի՝ և հա-
տուցանել ։

26 Եւ անկեալ ծառայն եր-
կիրպագանէր նմա՝ և ասէր.
երկայնամիտ լեր առ իս՝ և զա-
մենայն հատուցից քեզ ։

27 Գթացեալ տէր ծառա-
յին այնորիկ՝ արձակեաց զնա,
և զիւղն եթող նմա ։

28 Եւ ելեալ ծառայն այն
եգիտ զմի ի ծառայակցաց
իւրոց, որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան. և կալեալ
զնա խեղդէր՝ և ասէր. հա-
տո՛ւր ինձ զոր պարտիսդ ։

29 Արդ՝ անկեալ ծառա-
յակիցն առ ոտս նորա, աղա-
չէր զնա և ասէր. երկայնա-
միտ լեր առ իս՝ և հատու-
ցից քեզ ։

30 Եւ նա ոչ կամէր. այլ
եթող մարդոյ. որ ուզու-
մէր իւրան ծառաներիցն հա-
մար (հէռու) առնել ։

24 Եւ երբոր սկսեց առնել,
նորա մօտ մին տասն հազար
քանքարի պարտական բերին։

25 Երբոր չունէր վճարել,
նորա տէրն հրաման տուաւ՝
որ նորան և նորա կինըն և
նորա որդիքըն և ամէն ինչ
որ ունէր ծախեն՝ և պարտ-
քըն վճարէ ։

26 Եւ ծառան երեսին վե-
րայ ընկնելով երկրպագուի էր
անոնք նորան և ասում. եր-
կայնամիտ կաց ինձ համար, և
ամէնըն կըհատուցանեմ քեզ ։

27 Տէրն խղճայ էն ծառա-
յի վերայ՝ նորան արձակեց,
և պողըն էլ բաշխեց նորան։

28 Եւ երբոր էն ծառան
դուրս եկաւ՝ իրան ընկեր ծա-
ռաներիցն մինըն գտաւ՝ որ
իրան հարիւր դահեկան պար-
տական էր, և նորան բռնեց՝
խեղդումէր և ասում. վճա-
րիր ինձ ինչ որ պարտական
ես ։

29 Ապա էն ընկեր ծառան՝
նորա ոտներն ընկաւ, նորան
աղաչումէր և ասումէր. եր-
կայնամիտ կաց ինձ համար՝ և
կըհատցընեմ քեզ ։

30 Եւ նա չէր կամենում.

չոգաւ արկ զնա ՚ի բանտ՝ մինչև հատուսցէ զվարսն ։

34 Իբրև տեսին ծառայա-
կիցքն որ ինչ եղևն՝ տրտմե-
ցան յոյժ, և եկեալ ցուցին
տեառն իւրեանց զամենայն
որ ինչ եղևն ։

32 Ցայնժամ կոչեաց զնա
տէրն իւր և ասէ . ծառայ
չար՝ զամենայն զվարսն թո-
ղի քեզ՝ վասն զի աղաչեցեր
զիս ։

33 Իսկ արդ՝ ո՞չ էր պարտ
և քեզ ողորմել ծառայակ-
ցին քումմ, որպէս և ես քեզ
ողորմեցայ ։

34 Եւ բարկացեալ տէրն
նորա՝ մատնեաց զնա դահ-
ճից, մինչև հատուսցէ զա-
մենայն զվարսն ։

35 Նոյնպէս և հայր իմ
որ յերկինս է՝ արասցէ ձեզ,
եթէ ոչ թողուցուք իւրա-
քանչիւր եղբօր իւրում ՚ի
սրտից ձերոց զյանցանս նո-
ցա։

ԳԼ . ԺԹ ։

1 Եւ եղև՝ իբրև կատա-
րեաց Յիսուս զբանս զայս-
սիկ , փոխեցաւ ՚ի գալիլեէ՝
և եկն ՚ի սահմանս հրէաս-

այլ գնաց՝ նորան քոյեց
բանտն (չքնաղանն) մինչև որ
պարտքըն վճարէ ։

34 Երբոր նորա ընկեր ծա-
ռանեըն տեսին ինչ որ էլաւ,
շատ տրտմեցան՝ և եկին ամէն
ինչ որ էլաւ, իրանց տիրոջն
յայտնեցին ։

32 Յն ժամանակն իրան տէրն
կանչեց նորան և ասաց . ով
չար ծառայ՝ ես ամէն պարտ-
քըդ բաշխեցի քեզ . որով-
հետև դուռ աղաչեցիր ինձ ։

33 Ուրեմն պէտք չէ՞ր քեզ
էլ՝ որ քո ընկեր ծառային
ողորմէիր՝ ինչպէս որ ես քեզ
ողորմեցայ ։

34 Յւ նորա տէրն բարկա-
ցաւ՝ և նորան մատնեց դա-
հիճների (մէլլոռներ) ձեռքն.
մինչև որ ամէն պարտքըն
վճարէ ։

35 Յսպէս էլ իմ հայրս որ
երկնքումն է , ձեզ կանէ . թէ
որ դուք ամէն մէկդ իրան եղ-
բօրն՝ ձեր բոլոր սրտիցն
չըթողէք նորանց յանցան-
քըն ։

ԺԹ ։

1 Եւ էլաւ՝ երբոր Յի-
սուս էս խօսքերըս վերջաց-
րուց , գալիլեացիցն գնաց՝ և
հրէաստանի (ջըհուդաստանի)

տանի յայնկոյս յորդանանու ։

2 Եւ գնացին ղՀետ նորա ժողովուրդք բազումք , և բժշկեաց զնոսա անդ ։

3 Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա և ասէին . եթէ արժան իցէ ումք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասու ։

4 Պատասխանի եւս նոցա և ասէ . չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ Հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա, և ասէ ։

5 Վասն այսորիկ թողցէ այր զՀայր և զմայր՝ և երթիցէ զՀետ կնոջ իւրոյ , և եղիցին երկոքեան ի մարմին մի ։

6 Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին . արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ ։

7 Ասեն ցնա . իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ և արձակել ։

8 Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ Հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր . այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս ։

կողմերն եկաւ , յորդանանի էն կողմն ։

2 Եւ շատ ժողովուրդներ նորա եւեթէն գնացին՝ և նորանց էնտեղ բժշկեց ։

3 Եւ փարիսեցիքն նորա մօտ եկին՝ նորան փորձումէին և ասումէին . Թէ արժա՞ն է մին մարդոյ՝ որ իւրան կինըն բաց Թողէ ամէն պատճառ (պա-ճա՛ռ) համար որ լինի ։

4 Նորանց պատասխան տըւաւ և ասաց . դուք չէ՞ք կարդացել՝ Թէ նա որ սկըզբիցն ստեղծեց՝ նորանց արու և էգ արաւ , և ասաց ։

5 Սրահամար մարդն իւրան Հայրըն և մայրըն կըԹողէ և իւրան կընկան Հետն կըդնայ՝ և երկուքն մին մարմին կըլինին ։

6 Ուրեմն երկու չեն , այլ մին մարմին են . ապա էն որ Աստուած միաւորեց , Թող մարդն չըջոկէ ։

7 Նորան ասացին . ապա ինչո՞ւ մօսէան պատուիրեց մեզ՝ որ դուրս անելոյ Թուղթ տանք և բաց Թողնէք ։

8 Նորանց ասաց . մօսէս ձեր քարասրտութեան Համար պատուէր տուաւ ձեզ՝ որ ձեր կանայքըն բաց Թողէք , բայց սկըզբիցն էնպէս չէլաւ ։

9 Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակեսցէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ։

9 Մեայն Թէ ասումեմ ձեզ՝ ամէն ով որ իրան կինըն քաց կըլթողէ, և ոչ Թէ պոռնըկութեան պատճառաւն, և (մին) ուրիշըն կառնէ՝ նա շնուԹիւն է գործում. և նա էլ՝ որ էն քաց Թողածըն կառնէ, շնուԹիւն է գործում։

10 Ասեն ցնա աշակերտքն իւր. եԹէ այդպէս ինչ ինչ ինդ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ։

10 Իրան աշակերտներն նորան ասացին. Թէ որ մարդոյ և կնկան մէջն էդպէսի ինչ գժուարութիւն կայ, լաւ է չի կարգվիլն։

11 Յր նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տըւեալ է։

11 Յր նա ասաց նորանց. ամէնքն կարող չէն էդ բանիդ, բայց նորանք՝ որ նորանց տըվված է։

12 Զի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք՝ որ ի մարդկանէ եղեն ներքինիք. և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից. որ կարօղն է տանել՝ տարցի։

12 Ինչուռ՝ կան ներքինիք (խոպանէր)՝ որ իրանց մօր փորիցն էնպէս են ծնվել. և կան ներքինիք՝ որ մարդկանցից են էլած ներքինիք. և կան ներքինիք՝ որ իրանց անձըն ներքինի են արել երկընքի արքայութեան համար. ով որ կարող է տանիլ՝ Թող տանի։

13 Յայնժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա՝ և աղօթիցս արասցէ. և աշակերտքն նորա սաստէին նոցա։

13 Յն ժամանակն երեխաներ բերին նորա մօտ՝ որ ձեռն դնէ նորանց վերայ և աղօթք անէ. և նորա աշակերտներն սաստումէին նորանց։

14 Ասէ Յիսուս · Թո՛ղ
տուք մանկտւոյդ՝ և մի ար-
գելուք զդոսա գալ առ ես ,
զի այդպիսեացդ է արքայու-
թիւնն երկնից ։

15 Եւ եդեալ ձեռս ՚ի վե-
րայ նոցա՝ դնաց անտի ։

16 Եւ ահա մատուցեալ
ոմն առ նա՝ ասէ· վարդա-
պետ բարի՝ զի՞նչ բարի գոր-
ծեցից՝ զի ընդունիցիմ ըզ-
կեանս յաւիտենականս ։

17 Եւ նա ասէ ցնա · զի՞
հարցանես զիս զբարւոյ, մի է
բարի· եթէ կամիս ՚ի կեան-
սըն յաւիտենականս մտա-
նել՝ պահեա զպատուիրանսն ։

18 Ասէ ցնա՝ զո՞րս · ասէ
ցնա Յիսուս· զմի սպանա-
ներն՝ և մի շնար՝ և մի գո-
ղանար և մի սուտ վկայեր ,

19 Պատուեսո զհայր քո և
զմայր , և սիրեսցես զընկեր
քո երբև զանձն քո ։

20 Ասէ ցնա պատանին ·
զայդ ամենայն պահեցի ՚ի
մանկութենէ իմմէ· արդ՝ ի՞ն
իւիք պակաս իցեմ ։

21 Ասէ ցնա Յիսուս· եթէ
կամիս կատարեալ լինել ,
երթ՝ վաճառեա զինչս քո՝

14 Յիսուս ասաց · Թո՛ղ
տուէք եղ երեխաներիդ՝ և
դորանց մի արգելէք որ ինձ
մօտ գան · ինչուր՝ եղպէ-
սիներուն է երկնքի արքայու-
թիւնն ։

15 Եւ նորանց վերայ ձեռք
դրաւ՝ և էնտեղինյն գնաց ։

16 Եւ ահա մինն նորա մօտ
եկաւ և ասաց · բարի վարդա-
պետ՝ ես ի՞նչ բարի (բան)
գործեմ՝ որ յաւիտենական
կեանքըն ընդունիմ ։

17 Նա էլ նորան ասաց ·
ի՞նչու ես ինձ բարոյ համար
հարցնում՝ · մին է բարի · թէ
որ կամենումես յաւիտենական
կեանքն մտնել , պատուէ-
րանքներըն պահիր ։

18 Նորան ասաց՝ ո՞րըն ·
Յիսուս նորան ասաց · (էն որ
ասումէ) մի սպաներ , մի շնար,
մի գողանար , մի սուտ վկա-
յեր ,

19 Պատուիր քո հօրըն և
քո մօրըն , և քո ընկերըդ՝
քո անձիդ պէս սիրիր ։

20 Էն տղան նորան ասաց ·
եղ ամէնըդ իմ երեխայութե-
նիցն պահեցի · ապա ի՞նչ
բանով եմ պակաս ։

21 Յիսուս նորան ասաց ·
թէ որ կամենումես կատա-
րեալ լինիլ , գնա՝ քո ապրան-

և տուր աղքատաց, և ունի-
ցիս գանձս յերկինս, և ե՛կ
զկնի իմ ։

22 Իբրև լուաւ պատանին
զբանն, գնաց տրտմեալ, զի
ունէր ստացուածս բազումս։

23 Ասէ Յիսուս ցաշա-
կերտան . ամէն ասեմ ձեզ .
զի դժուարաւ մտցէ մեծա-
տուն յարքայութիւն երկ-
նից ։

24 Դարձեալ ասեմ ձեզ .
դիւրին է մալխոյ մտանել
ընդ ծակ ասղան, քան մեծա-
տան յարքայութիւն Աստու-
ծոյ մտանել ։

25 Իբրև լուան աշա-
կերտքն՝ զարմացան յոյժ՝
և ասեն . ևկ ո՞ կարիցէ ապ-
րել ։

26 Հայեցաւ ՚ի նոսա Յի-
սուս՝ և ասէ. առ ՚ի մարդ-
կանէ այդ անկար է, այլ առ
Աստուծոյ ամենայն ինչ զօ-
րաւոր ։

27 Յայնժամ պատասխանի
ետ պետրոս և ասէ ցնա . ա-
հաս՛ իկ մեք թողաք զամենայն.
և եկաք զկնի քո, արդ զի՞նչ
լինիցի մեզ ։

28 Ասէ ցնոսա Յիսուս .
ամէն ասեմ ձեզ. զի դուք
քըն ծախիր՝ և աղքատներին
տուր , և գանձ (ֆաղնայ) կու-
նենաս երկնքումն՝ և իմ ե-
ւևէս ե՛կ ։

22 Իբրեւ որ տղան էս բանըս
լսեց , տրտմեցաւ և գնաց .
պատճառնոր՝ շատ ապրանք
ունէր ։

23 Յիսուս աշակերտներին
ասաց . Ճշմարիտըն ասումեմ
ձեզ՝ որ հարուստ մարդն
շատ դժուար կըմտնէ երկըն-
քի արքայութիւնն ։

24 Մինէլ ասումեմ ձեզ .
աւելի հեշտ է՝ որ ուղտն ա-
սեղի ծակովին անցկենայ՝ քան
թէ հարուստն երկնքի արքա-
յութիւնն մտնէ ։

25 Աշակերտներն երբոր լսե-
ցին , շատ զարմացան և ասա-
ցին . ապա ո՛վ կարէ ապրիլ ։

26 Յիսուս նորանց մտիկ
տուաւ և ասաց . էդ բանդ
մարդկանց կողմանէ անկարե-
լի է , բայց Աստուծոյ կող-
մանէ՝ ամէն բան կարելի է ։

27 Յն ժամանակն պետրոս
պատասխան տուաւ և ասաց
նորան . ահա մենք ամէն բան
թողինք և քո ետևէդ եկինք.
ապա ի՞նչ պիտի լինի մեզ ։

28 Յիսուս նորանց ասաց .
Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝

որ եկիք զինի իմ, ՚ի միւս-
անգամ գալստեան՝ յորժամ
նստցի որդի մարդոյ յաթոռ
փառաց իւրոյ, նստջիք և
դուք յերկոտասան աթոռ՝
դատել զերկոտասան ազգն
իսրայելի ։

29 Եւ ամենայն որ ոք ե-
թող զտուն՝ կամ զեղբարս
կամ զքոյր կամ զհայր կամ
զմայր՝ կամ զկին կամ զըր-
դիս՝ կամ զագարակս վասն
անուան իմոյ, հարիւրապա-
տիկ առցէ՝ և զկեանսն յա-
ւիտենական ժառանգեսցէ ։
30 Բազումք եղիցին առա-
ջինք յետինք՝ և յետինք ա-
ռաջինք ։

ԳԼ · Ի ։

1 ՚Նման է արքայու-
թիւնն երկնից առն տա-
նուտեառն, որ ել ընդ ա-
ռաւօտս ՚ի վարձու ուներ
մշակս յայգի իւր ։

2 Եւ արկ վարձս մշակացն
աւուրն դահեկան, և առա-
քեաց զնոսա յայգի իւր ։
3 Եւ ելեալ զերրորդ ժա-
մու՝ տեաս այլս զի կային
դատարկ ՚ի հրապարակս ։

թէ դուք որ իմ ետուէք եկիք,
իմ մեկնել գալոյ ժամանա-
կուն՝ երբոր որդին մարդոյ
իրան փառաց աթոռի վերայ
կընստի, դուք էլ առաքե-
լոց աթոռի վերայ կընստիք՝
և իսրայելի տասներկու ցեղին
կըդատիք ։

29 Եւ ամէն ով որ թողեց
տունը՝ կամ եղբարքը՝ կամ
քրվերքը՝ կամ հայրը կամ մայրը
կամ կինը կամ որդիքը կամ
արտերը իմ անունիս համար,
հարիւրապատիկ կառնէ՝ և
յաւիտենական կեանքըն կը-
ժառանգէ ։

30 Շատ առաջիններ կե-
տինք կըլինին՝ և կեսինները
առաջինք ։

1 Պատճառնոր՝ երկնքի
արքայութիւնն նման է մին
տանուտէր մարդոյ՝ որ առա-
ւօտանոյ դուրս եկաւ՝ իրան այ-
գոյ (պաղէ)ի համար մշակներ
բառնել ։

2 Եւ էն մշակներին՝ օրն
մին դահեկան խօսեց, և նո-
րանոյ ուղարկեց իրան այգին ։
3 Եւ երեք ժամի (սահաթ)
ժամանակն դուրս եկաւ՝ ու-
րիշներ էլ տեսաւ որ փողոցնե-
րի մէջն պարապ կանգնել էին ։

4 Ասէ և ցնոսա. երթայք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տայ ձեզ։

5 Գնացին և նոքա. և դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս։

6 Իսկ զմետասաներորդ ժամու ելեալ եդիտ այլս՝ զի կային դատարկ, ասէ և ցնոսա. ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ։

7 Ասեն ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ՝ ի վարձու. ասէ ցնոսա. երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։

8 Իսկ իքրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն։

9 Իքրև եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահեկան։

10 Իսկ եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա։

11 Իքրև առին, տրտնջէ-

4 Նորանց էլ ասաց. դուք էլ գնացէք իմ այգիս՝ և ինչ որ արժան է՝ կըտամ ձեզ։

5 Նորանք էլ գնացին. և միևնէլ վեց ժամին և ինն ժամին դուրս եկաւ՝ և էնպէս արաւ։

6 Իսկ տասնումին ժամին էլ դուրս եկաւ՝ ուրիշներ գտաւ որ պարապ կանգնել էին. նորանց ասաց. ինչո՞ւ էք էստեղ բոլոր ցերեկս պարապ կանգնել։

7 Նորան ասացին. նրահամար որ՝ ոչ ով մեզ բանի չի բռնեց. նորանց ասաց. դուք էլ գնացէք իմ այգիս, և ինչ որ արժան է՝ կառնէք։

8 Իսկ երբոր իրիկուն էլաւ, այգոյ տէրն իրան տան վերակացուին ասաց. մշակները կանչի՛ր և նորանց վարձքըն տուր՝ յետիններից սկսած մինչև առաջիններն։

9 Երբոր նորանք եկին՝ որ տասնումին ժամինն էին, ամէն մէկն մին դահեկան առին։

10 Առաջիններն էլ եկին՝ և կրծուեցին թէ աւելի կառնեն և նորանք էլ ամէն մէկն մին դահեկան առին։

11 Երբոր առին, տան տի-

ին զտանուտեառնէն՝ և ասէ-
ին ։

12 Թէ ղրկա՛ Յեսինեդ մի
ժամ գործեցին, և հասա-
րակորդս մեզ արարեր զգո-
սա, որ զծանրութիւն առու-
ըըն քարձաք և զտօթ ։

13 Ն՚ա պատասխանի ետ
միում՝ ի նոցանէ՝ և ասէ ։
Ընկեր՝ չզրկեմ զքեզ, ո՛չ
դահեկանի միոջ սակ արկեր
ընդ իս ։

14 Ա՛ռ զքոյդ՝ և երթ, և
թէ կամիմ Յեսնոյս տալ
որպէս և քեզ ։

15 Իթէ չիցէ՞ ինձ իշխա-
նութիւն Յիմաս առնել զինչ
և կամիմ. կամ թէ ակն քո
չար է, զի ես առատս եմ ։

16 Ա՚յսպէս եղիցին Յեսինք
առաջինք՝ և առաջինք Յե-
սինք ։ զի բազումք են կո-
չեցեալք, և սակաւք են
ընտրեալք ։

17 Իբրև՛ ելանէր Ցիսուս
Յերէմ, առ ինքեանսն առա-
նձինն, և՝ ի ճանապար-
հին ասէ ցնոսա ։

18 Ահաւասիկ ելանեմք Յե-
րուսաղէմ ։ և որդի մարդոյ
մատնեսցի քահանայապետիցն՝
և դպրաց ։ և դատապարտես-
ցեն զնա՝ ի մահ ։

րոջիցն տրտնջումէին և ա-
սում ։

12 Թէ եղ Յեսիններդ մին
ժամ աշխատեցին, և դորանց
մեզ հետ հաւասար արիր, որ
օրի ծանրութիւնըն և տա-
քութիւնըն քաշեցինք ։

13 Ն՚ա նորանցից մէնին պա-
տասխան տուաւ և ասաց ։
Ով ընկեր՝ չեմ զրկում քեզ ։
չէ՞ որ դու ինձ հետ մին դա-
հեկան ես խօսացել ։

14 Վառնըն ա՛ռ և գնա ։ ես
ուզումեմ որ ես Յեսիններիս
տամ ինչպէս քեզ ։

15 Իրի՞թ ես իշխանութիւն
չունի՞մ իմ ապրանքիս վերայ՝
որ ինչ որ ուզեմ անեմ. կամ
թէ քո աչքդ չար է՝ որ ես
առատաձեռն եմ ։

16 Ի՚նպէս Յեսիններն ա-
ռաջինք կըլինին, և առաջին-
ներն Յեսինք ։ ինչուր՝ շատ
են կանչըված, բայց քիչ են
ընտրըված ։

17 Իրբոր Ցիսուս գնումէր
երուսաղէմ, տասներկուսըն
առանձին իրան հետ առաւ՝ և
ճանապարհումն ասաց նորանց ։

18 Ա՚հա վեր ենք էլումէ
երուսաղէմ՝ և որդին մարդոյ
կըմատնըվի քահանայապետ-
ների և կարգացօղներին ձեռ-
քըն, և մահով կըդատա-

19 Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ։

20 Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ. երկիրպագանել՝ և խնդրէր ինչ ի նմանէ։

21 Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս. ասէ ցնա. ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութեան քումմ։

22 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտիլ. ասեն ցնա. կարող եմք։

23 Ասէ ցնոսա Յիսուս. զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է ի հօրէ իմմէ։

պարանն նորան։

19 Եւ նորան կըմատնեն հեթանոսներուն ձեռքն՝ որ նորան խայտառակեն և ծեծեն և խաչ հանեն, և երեք օրուան յարութիւն կառնէ։

20 Յն ժամանակն զեբեդեայի որդոց մայրն իրան որդոցն հետ նորա մօտ եկաւ՝ երկրպագութիւն էր անում, և նորանից մին բան էր խնդրում։

21 Նա էլ ասաց նորան. ի՞նչ ես խնդրում. նորան ասաց. ասա՝ որ էս իմ երկու որդիքս միւնն քո աջ կողմդ՝ և միւնն ձախ կողմդ նստին քո արքայութեանդ։

22 Յիսուս պատասխան տուաւ և ասաց. չէք գիտում՝ թէ ի՞նչ էք խնդրում. կարո՞ղ էք դուք էն բաժակըն (ի՞մը) խմել՝ որ ես պիտի խմեմ. կամ էն մկրտութենովն մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ. նորանք ասացին. կարող ենք։

23 Յիսուս նորանց ասաց. իմ բաժակը կըխըմէք, և էն մկրտութենովն որ ես պիտի մկրտվիմ՝ կըմկրտվիք. բայց՝ իմ աջ և ձախ կողմս նստացընելն՝ իմս չէ՝ որ տամ, բայց միայն նորանց որ իմ հօրիցս տըվված է։

24 Եւ լուեալ տասանցն, բարկացան ՚ի վերայ երկուցն եղբարց։

25 Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն՝ և ասէ. դիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա։

26 Ոչ այնպէս իցէ և ՚ի ձեզ մի՛ջի. այլ որ կամիցի ՚ի ձեզ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։

27 Եւ որ կամիցի ՚ի ձեզ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։

28 Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։

29 Եւ ելանելն նոցա յերիքովէ, դնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։

30 Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ Յիսուս որդի դաւթի։

31 Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և

24 Եւ էն տասներն երբոր լսեցին, բարկացան էն երկու եղբարց վերայ։

25 Յիսուս նորանց կանչեց իրան մօտ. և ասաց. դիտուտիք՝ որ ազգերի իշխանները նորանց վերայ տիրապետութիւն են անում, և մեծամեծները նորանց վերայ իշխանութիւն են անում։

26 Այնպէս չըպիտի լինի ձեր միջումդ. բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող ձեզ պաշտօնեայ լինի։

27 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել, թող ձեզ ծառայ լինի։

28 Ինչպէս որ՝ որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն, բայց որ ինքն ծառայէ. և շատերի տեղակ իրան անձն փրկութեան դին տայ։

29 Եւ երբոր երիքովից դուրս եկին, շատ ժողովուրդ ներ գնացին նորա ետևէն։

30 Եւ ահա երկու կոյր ճանապարհին վերայ նստած էին. երբոր լսեցին՝ թէ Յիսուս անցկենում, աղաղակեցին և ասացին. Յիսուս որդի դաւիթ՝ մեզ ողորմա։

31 Եւ ամբոխն (խալխն) սաստեց նորանց՝ որ ձայն չըհանեն. և նորանք էլ աւե-

ասէին, տէր՝ ողորմեայ մեզ որդի դաւթի։

32 Ցտեղի առ Ցիսուս, կոչեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք, զի արարից ձեզ։

33 Նսեն ցնա. տէր՝ զի բացցին աչք մեր։

34 Ու գթացեալ Ցիսուս մերձեցաւ յաչս նոցա; և յաղվաղակի տեսին. և գնացին զկնի նորա։

ԳԼ. ԻՆ։

1 Երբեւ մօտ եղեն յԵրէմ, և եկին ի բեթփագէ մերձ ի լեառն ձիթենեաց. յայնժամ Ցիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոյ։

2 Ու ասէ ցնոսա. երթայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, և անդէն գտանէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին. լուծէք ածէք ինձ։

3 Ու եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջի՛ք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի առաքեսցէ զնոսա։

4 Բայց այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ։

5 Նասացէք դստեր սիովնի. ահա արքայ քո գայ առ քեզ հեզ և հեծեալ ի վերայ էշոյ և յաւանակ որդւոյ լծոյ։

6 Երթեալ աշակերտքն և արարին որպէս հրամայեաց նոցա Ցիսուս։

7 Եւ ածին զէշն և զաւանակն, և եդին զհանդերձս իւրեանց ի վերայ նոցա, և նստաւ ի վերայ նոցա։

8 Բազումք ի ժողովրդենէն տարածեցին զհանդերձս իւրեանց ճանապարհի. և այլք կտրէին ոստս ի ծառոց և տարածանէին ճանապարհի։

9 Ժողովուրդքն որ երթային առաջի նորա և որ հետևէին կանչէին և ասէին. օսաննա որդւոյ դաւթի. մեծարեալ որ գայ յանուն տեառն։

10 Եւ մտեալ նորա յԵրուսաղէմ՝ ամենայն քաղաքն շարժեցաւ և ասէին. ո՞վ է սա։

11 Ժողովուրդքն ասէին. սա է մարգարէն Ցիսուս որ յանազարէթ գաւառէ գալիլեացւոց։

12 Եւ մտեալ Ցիսուս յեկեղեցի հանեալ զամենեսեան որ ծախէին և գնէին ի տաճարին, և զսեղանս դրամակերտացն և զաթոռս վաճառողացն աղաւնեաց կործանեաց։

13 Եւ ասէ ցնոսա. գրեալ է. տունն իմ տունն աղօթից կոչեսցի, դուք արարէք զնա քարայր աւազակաց։

14 Եւ մատեան առ նա կուրք և կաղք ի տաճարին, և բժշկեաց զնոսա։

15 Տեսեալ ապա քահանայապետացն և դպրացն զսքանչելիսն զոր արար, և զմանկունսն որ աղաղակէին ի տաճարին և ասէին. օսաննա որդւոյ դաւթի. տէր՝ որդի դաւթի. մեզ ողորմեա։

16 Ցիսուս կանգնեաց՝ կանչեաց նորանց և ասաց. ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ։

17 Նորան ասացին. տէր՝ որ մեր աչքերն բացվին։

18 Ու Ցիսուս խղճայ. նորանց աչքերին մօտեցաւ՝ և շուտով տեսին. և նորա ետևէն գնացին։

ահա թ֊ագաւորդ քո գայ քեզ հեզ, և հեծեալ ի էշ և յաւանակի իշոյ։

6 Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս։

7 Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ ի վերայ նոցա։

8 Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին, և այլք հատանէին ոստս ի ծառոց՝ և տարածանէին ի ճանապարհին։

9 Եւ ժողովուրդքն՝ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. օրհնութիւն որդւոյ դաւթի. օրհնեալ որ գայ յանուն տեառն. օրհնութիւն ի բարձունս։

10 Եւ ի մտանելն նորա յԵրեմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէ՝ ով իցէ սա։

11 Եւ ժողովուրդքն ասեն. սա է մարգարէն Յիսուս՝ որ ի Նազարեթէ գալիլեացւոյ։

12 Եւ եմուտ Յիսուս ի տաճարն՝ և եհան արտաքս

ահա՝ քո թ֊ագաւորդ քեզ մօտ է գալիս. հեզահոգի՝ և էշըն և իշի քուռակըն հեծած։

6 Աշակերտներն գնացին և արին՝ ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց։

7 Եւ էշըն և քուռակըն բերին՝ և իրանց շորերըն նորանց վերայ քցեցին, և նորանց վերայ նստեց։

8 Եւ շատ ժողովուրդներ իրանց հագուստըն ճանապարհի վերայ փռեցին. և ուրիշներն ծառերիցն ճղներ էին կտրում և ճանապարհի վերայ փռում էին։

9 Եւ ժողովուրդներն որ առաջին և ետևէն գնում էին, աղաղակում էին և ասում. օրհնութիւն որդւոյն դաւթի. օրհնեալ է նա՝ որ գալիս է Տէառնոյ անունովն. օրհնութիւն ի բարձունս։

10 Եւ երբոր նա երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքն դղրդաց և ասաց՝ սա ով է։

11 Եւ ժողովուրդներն ասացին. սա Յիսուս մարգարէն է՝ որ գալիլեայի Նազարէթիցն է։

12 Եւ Յիսուս մտաւ տաճարն՝ և ամէնին որ տաճարի

զամենեսին, որ վաճառէին և գնէին ի տաճարի անդ. և զսեղանս հատուածաց կործանեաց՝ և զթոռս աղաւնեվաճառացն։

13 Եւ ասէ ցնոսա. գրեալ է՝ տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք արարիք զայս սպառ աւազակաց։

14 Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ի տաճարին, և բժշկեաց զնոսա։

15 Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զքրանչելիսն զոր արար, և զմանկանն որ աղաղակէին ի տաճարին և ասէին, ովսաննա, օրհնութիւն որդւոյ դաւթի, բարկացան։

16 Եւ ասեն ցնա. լսե՞ս զի՛նչ ասեն դոքա. ասէ ցնոսա Յիսուս. այո, չէի՞ ընթերցեալ ձեր՝ թէ ի բերանոյ տղայոց և ծնդկեցուց կատարեցեր զօրհնութիւն։

17 Եւ թողեալ զնոսա եկ արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, և անդ ագաւ։

18 Եւ այգուն իբրև դարձ

մէջն ծախուածին և առնուածին, դուրս հանեց. և բոլոր փոխոզներուն (սեղանաւորներ) տախտակները՝ և աղաւնի ծախոզներուն աթոռները կործանեց։

13 Եւ ասաց նորանց. գրված է՝ թէ իմ տունս աղօթքի տուն պէտք է կոչվի. և դուք աւազակներուն քուն էք արել զայն։

14 Եւ տաճարի մէջտեղ կուրեր և կաղեր եկին նորա մօտ՝ և նորանց բժշկեց։

15 Երբոր քահանայապետներն և կարդացօղներն էն հրաշքներըն տեսին որ արաւ, և երեխաներըն որ տաճարի մէջտեղ աղաղակուածին և ասում. ովսաննա, օրհնութիւն որդոյ դաւթի, բարկացան։

16 Եւ նորան ասացին. լսո՞ւես թէ զորանք ի՞նչ են ասում։ Յիսուս նորանց ասաց. հա. դուք էն չէ՞ք կարդացել՝ թէ տղաներուն և կաթնկերներուն բերանէն օրհնութիւն հատատեցիր։

17 Եւ նորանց թողնէ՝ քաղաքէն դուրս գնաց դէպի բեթանիա՝ և (գիշերն) էնտեղ մնաց։

18 Եւ առաւօտանց երբոր

ձաւ անդրէն ՚ի քաղաքն՝ քաղցեաւ ։

19 Եւ տեսեալ Թզենի մի ՚ի վերայ Ճանապարհին՝ եկն ՚ի նա, և ոչ ինչ եգիտ ՚ի նմա՝ բայց միայն տերև. և ասէ ցնա. Մի այսուհետև ՚ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և առժամայն չորացաւ Թզենին ։

20 Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, Թէ զի՞ արդ վազվազակի ցամաքեցաւ Թզենին ։

21 Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն Թզենւոյդ առնիցէք, այլ Թէպէտ և լերինդ ասիցէք. բարձիր և անկիր ՚ի ծով, եղիցի ։

22 Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք ։

23 Եւ իբրև եկն ՚ի տաճարն, մատեան առ նա մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն. որո՞վ իշխանութեամբ առնես զայդ. և ո՞վ եւ քեզ զիշխանութիւնդ զայդ ։

մինել յետ դարձաւ քաղաքն, սովեց ։

19 Եւ Ճանապարհին վերայ մին Թզղի ծառ տեսաւ՝ նորա մօտ եկաւ և նորա վերայ բան չգտաւ, բայց միայն տերև. և նորան ասաց. սրանիցդ ետեւ յաւիտեան քեզմանից էլ պտուղ չըլինի. և շուտով էն Թզղի ծառն չորացաւ ։

20 Աշակերտներն երբոր տեսան՝ զարմացան և ասացին. Թէ ի՞նչպես շուտով Թզղի ծառն չորացաւ ։

21 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց. Ճշմարիտըն ասումմ ձեզ. Թէ որ հաւատք ունենաք և չի երկմտէք, ոչ Թէ միայն Թզղի ծառին էդ կանէք, այլ Թէ որ էդ սարիդ էլ ասէք՝ վեր կաց և ծովն ընկիր, կըլինի ։

22 Եւ ամէն ինչ՝ որ աղօթքի մէջ հաւատքով խնդրէք, կառնէք ։

23 Եւ երբոր եկաւ տաճարն՝ դեռ քանի որ էնտեղ սովորցնումէր, քահանայապետներն և ժողովրդի ծերերն նորա մօտ եկին և ասացին. դու ի՞նչ իշխանութեամբ նովքեան անում էդ. և ո՞վ տուաւ քեզ էդ իշխանութիւնը ։

24 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

25 Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր, յերկնից թէ՝ ի մարդկանէ. և նորա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին,

26 Եթէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին։

27 Պատասխանի ետուն Յիսուսի և ասեն. ոչ գիտեմք. ասէ ցնոսա և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

28 Իսկ դու ինչ կարծես. առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ. որդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ։

29 Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տէր, և ոչ չոգաւ։

24 Յիսուս պատասխան տուեալ՝ և ասաց նորանց. ես էլ ձեզանից մի բան կհարցնեմ. թէ որ էն ինձ ասէք, ես էլ ձեզ կասեմ՝ թէ ի՞նչ իշխանութեամբ եմ անում էս։

25 Յովհաննէսի մկրտութիւնը՞ր տեղից էր, երկնքի՞ց էր, թէ մարդկանցի՞ց. և նորանք իրանց մէջ միտք էին անում և ասում էին։

26 Թէ որ ասենք՝ երկնքի՞ց էր, կասէ մեզ թէ՝ ապա ինչո՞ւ չըհաւատացիք նորան. և թէ որ ասենք՝ մարդկանցի՞ց, ժողովրդից՝ վախենում ենք. ինչուր՝ ամէնքն Յովհաննէսին մարգարէի տեղ էին ընդունում։

27 Պատասխան տուին Յիսուսին և ասացին. չենք գիտում. նա էլ նորանց ասաց. ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութեամբ եմ անում էս։

28 Մի՞այն թէ՝ ի՞նչպէս է երևում ձեզ. մին մարդ երկու որդի ունէր. և եկաւ առաջինին ասաց. որդի՝ գնա էս օր այգումն (պաղատէ) բան արա։

29 Ի՛ւ նա պատասխան տուաւ և ասաց. կըգնամ Տէր՛ և չըգնաց։

30 Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս. նա պատասխանի ետ և ասէ. ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայդին։

31 Արդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն. ասեն՝ յետինն. ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջիս քան զձեզ յարքայութիւն երկնից։

32 Զի եկն Յովհաննէս Ճանապարհաւ արդարութեան՝ և ոչ հաւատացին նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա։

33 Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր. որ տնկեաց այգի, և ցանդիվ պատեաց զնա, և փորեաց ՚ի նմա հնձան, և շինեաց աշտարակ. և ետ զնա գիշակս, և գնաց ՚ի տար աշխարհ։

34 Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։

30 Յետ մեկնելի մօտն էլ գնաց և ինպէս ասաց. նա պատասխան տուաւ և ասաց. չեմ կամենում. բայց յետոյ զղջացաւ՝ և գնաց այդին։

31 Հիմիկ ես երկուսիցս որն արաւ իրան հօր կամքըն. ասացին՝ յետինն։ Յիսուս նոքանց ասաց. Ճշմարիտըն ասում ձեզ. որ մաքսաւորներն (հիւ-տյու-էնէրն) և պոռնիկներն ձեզանից առաջ կըմանեն երկնքի արքայութիւնն։

32 Ինչուր՝ յօհաննէսն արդարութեան Ճանապարհովն եկաւ՝ և չըհաւատացիք նորան. և մաքսաւորներն և պոռնիկներն հաւատացին նորան. և դուք տեսիք և չըղըջացաք՝ որ յետոյ հաւատաք նորան։

33 Ուրիշ առակ էլ լսեցէք. մին տանուտէր մարդ կար. որ այգի (պաղ) տնկեց և նորան պարսպով պատեց. և նորա մէջն հնձան փորեց և աշտարակ (պո-րջ) շինեց, և տուաւ նորան մշակներին. և գնաց հեռու աշխարհք։

34 Երբ որ պտղի ժամանակն մօտեցաւ, իրան ծառաներըն ուղարկեց մշակներին մօտ՝ որ նորա պտուղներըն առնեն։

35 Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տա-
ջեցին՝ զոմն քարկոծեցին :

36 Դարձեալ առաքեաց այլ
ծառայս բազումս քան զա-
ռաջինսն, և արարին նոցա
նոյնպէս :

37 Ցետոյ առաքեաց առ
նոսա զորդի իւր՝ և ասէ.
Թերևս ամաչեսցեն յորդւոյ
սմանէ իմմէ :

38 Իսկ մշակքն իբրև տե-
սին զորդին, ասեն ընդ
միմս. սա է ժառանգն, ե-
կայք սպանցուք զսա, և
կալցուք զժառանգութիւն նո-
ցա :

39 Եւ առեալ հանին զնա
արտաքոյ քան զայգին՝ և
սպանին :

40 Արդ՝ յորժամ եկեսցէ
տէր այգւոյն, զի՞նչ արասցէ
մշակացն այնոցիկ :

41 Ասեն ցնա. զչարսն չա-
բաւ կորուսցէ. և զայգին
տացէ այլոց մշակաց, որք
տացեն նմա զպտուղս ի ժա-
մու իւրեանց :

42 Ասէ ցնոսա Յիսուս.
չիոչ՞ երբէք ընթերցեալ
14 Որպէս այր մի գնացեալ ի տաճարս, կոչեաց զծառայս իւր՝ և եւս նոցա զինչս իւր։

15 Եւ ածէ եւս ՀինգԹաղանդս՝ և ածէ եւ երկուս՝ ածէ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։

16 Ընդ ածեալ վազվազակի՝ որ առ զհինգն՝ գործեաց նոքօք, և շահեցաւ այլ եւս հինգ։

17 Նոյնպէս և որ զերկուանն, շահեցաւ այլեւս երկուս։

18 Իսկ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, և ծածկեաց զարծաթն տէրոջ իւրոյ։

19 Ետ բազում ժամանակ եկն տէր ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ի մէջ նոցա։

պանդն եւ եկին՝ և ասացին. Տէր՝ Տէր՝ բանց մեզ։

12 Եւ պատասխանի առաւ և ասաց. Ճշմարիտն ասեմ ձեզ՝ Թէ չեմ ճանաչ զձեզ։

13 Արթնուն կացէք, քանզի չգիտէք զիրաւի ոչ զօրն և ոչ ժամուն (ոմանք՝ զժամն)։

14 Քանզի պէս պէսի մարդ որ ճգնաւոր աշխարհն գնացեալ է՝ կոչեաց իրան ծառայսն կանչեց. և իրան ապրանքն նոքա՛նց առաւ։

15 Ումումին հինգ թանքար առաւ՝ մէկէյն երկու, և մէկէյն մին. ամէն մէկին իրան կարողութեան չափովն՝ և գնաց։

16 Եւ որ հինգըն առաւ, շուտով գնաց՝ և բանացրաւ և ուրիշ հինգ եւ շահեցաւ։

17 Նոյնպէս եւ նա՝ որ երկուսըն առաւ, ուրիշ երկուս եւ շահվեցաւ։

18 Իսկ նա՝ որ մինը առաւ, գնաց, գնախրն փորեց՝ և իրան տիրոջ արծաթն ծածկեց։

19 Շատ ժամանակից հետև էն ծառանեաքի տէրն եկաւ՝ և հաշանչից հետոր առաւ։

20 Եւ մատուցեալ՝ որ
ղՀինգ քանքարն առ, մա-
տոյց այլ ևս հինգ քանքար՝
և ասէ. տէր՝ հինգ քանքար
եառեր ինձ, արդ՝ աւասիկ
հինգ այլևս քանքար ի վե-
րայ շահեցայ:

21 Ասէ ցնա տէրն իւր. ազ-
նիւ ծառայ՝ բարի և հաւա-
տարիմ, որովհետև ի սա-
կաւուդ հաւատարիմ ես, ի
վերայ բազմաց կացուցից
զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քո:

22 Մատուցեալ և որոյ
զերկուս քանքարսն առեալ
էր՝ և ասէ. տէր՝ երկուս
քանքարս եառեր ինձ, ահա
ասասիկ երկուս ևս այլ քան-
քարս՝ զոր ի վերայ շահե-
ցայ:

23 Ասէ ցնա տէրն իւր.
ազնիւ ծառայ՝ բարի և հա-
ւատարիմ, որովհետև ի սա-
կաւուդ հաւատարիմ ես, ի
վերայ բազմաց կացուցից
զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քո:

24 Մատուցեալ և որոյ զմի
քանքարն առեալ էր, և ա-
սէ. տէր՝ գիտէի, զի այր մի
խիստ ես, հնձես՝ զոր ոչ
սերմանեցեր, և ժողովես՝
ուստի ոչ սփռեցեր:

20 Եւ նա՝ որ հինգ քան-
քար առաւ՝ առաջ եկաւ ու-
րիշ հինգ քանքար էլ բե-
րաւ տուաւ՝ և ասաց. տէր՝
դու ինձ հինգ քանքար տուիր.
և ահա ուրիշ հինգ քանքար
էլ նորանց վերայ շահվեցայ:

21 Իրան տէրն նորան ա-
սաց. ազնիւ ծառայ՝ բարի և
հաւատարիմ՝ որովհետև ե-
փիչ քանուդ հաւատարիմ
ես, քեզ շատ բանի վերայ
կըդնեմ. մտիր քո տիրոջ
ուրախութիւնն:

22 Նա էլ որ երկու քան-
քար էր առել, առաջ եկաւ
և ասաց. տէր՝ դու ինձ ե-
րկու քանքար տուիր. ահա ե-
րկու ուրիշ քանքար էլ՝ որ
նորանց վերայ շահվեցայ:

23 Իրան տէրն նորան ասաց.
ազնիւ ծառայ՝ բարի և հա-
ւատարիմ. որովհետև էդ
քիչ քանուդ հաւատարիմ
ես, քեզ շատ բաների վերայ
կըդնեմ, մտիր քո տիրոջ
ուրախութիւնն:

24 Նա էլ՝ որ մին քանքար
էր առել, առաջ եկաւ և
ասաց. տէր՝ գիտումիի՝ որ
դու մին քարասիրտ մարդ ես,
որ հնձումես էն՝ որ չը՛սեր-
մացիր. և էն տեղից հաւա-
քումես՝ որ չը՛ փռեցիր:

25 Երկեայ՝ գնացի և թա-
գուցի զքանքարն քո յերկրի-
արդ՝ աւասիկ քոյդ յքեզ։
26 Պատասխանի եւս տէրն՝
և ասէ ցնա. ծառայ չար և
վատ՝ գիտէիր եթէ հնձեմ՝
ուստի ոչ սերմանեցի, և
ժողովեմ՝ ուսկի ոչ սփռեցի։

27 Պարտ էր քեզ արկա-
նել զարծաթդ իմ՝ ի սեղա-
նաւորս, և եկեալ ես ես
կոսեօք պահանջէի զիմն։

28 Արդ՝ առէք ի դմանէ
զքանքարդ՝ և տուք այնմ
որ ունիցի զտասն քանքարն։
29 Զի ամի որ ունիցի՝
տացի և յաւելցի, և որ ոչն
ունիցի՝ և զոր ունիցին, քաձէ-
ցի ի նմանէ։

30 Եւ զծառայդ անպիտան
հանէք ի խաւարն արտաքին.
անդ եղիցի լալ և կրճել
առամանց։
31 Եւ յորժամ եկեսցէ որ-
դի մարդոյ փառօք իւրովք՝
և ամենայն հրեշտակք ընդ
նմա, յայնժամ նստցի յա-
թոռ փառաց իւրոց։

32 Եւ ժողովեսցին առաջի
նորա ամենայն ազգք, և մեկ-

25 Վախեցայ գնացի և քո
քանքարդ գետնի մէջ թաքցը-
րի. ահա ահա քունն քեզ։
26 Տէրն պատասխան տուաւ՝
և ասաց նորան. չար և ծոյլ
ծառայ՝ գիտուէիր՝ որ ես
տեղից եմ հնձում, որ չը-
սերմեցի. և ես տեղից եմ հա-
ւաքում՝ որ չը փռեցի։
27 Պէտք էր քեզ՝ որ իմ
արծաթըն տաւակ փոխողներին
(τοῖς τραπεζίταις) տայիր՝ և ես
կըգայի և շահով կառնէի
իմըն։
28 Ապա առէք դորնից քան-
քարըն, և տուէք նորան որ
տասն քանքարըն ունի։
29 Ինչուր՝ ամէն ոք որ
ունի՝ նորան կըտըվի և կա-
ւելանայ. և նա որ չունի,
նորանից էն էլ որ ունի՝ վեր
կառնըվի։
30 Եւ էդ անպիտան ծա-
ռայիդ հանեցէք դրսի խա-
ւարն՝ որ էնտեղ լաց և ա-
տամունների կրճտելն կըլինի։
31 Եւ որ ժամանակ որ-
դին մարդոյ իրան փառքովն
կըգայ՝ և ամէն հրեշտակներն
նորա հետ, էն ժամանակն
իրան փառաց աթոռին վերայ
կընստի։
32 Եւ ամէն ազգերն կը-
ժողովվին նորա առաջին. և

նեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զոդիս յայծեաց։

33 Եւ կացուսցէ զոդիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծիսն ՚ի ձախմէ։

34 Ցայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի։

35 Զի քաղցեայ՝ և եռուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս։

36 Մերկ՝ և զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ և տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ և եկիք առ իս։

37 Ցայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծարաւի՝ և արբուցաք։

38 Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք։

39 Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ ՚ի բանտի, և եկաք առ քեզ։

նորանոյ կըջոկէ իրարից՝ ինչպէս մին հովիւ (չոպան) ոչխարներըն այծերից կըջոկէ։

33 Եւ ոչխարներըն իրան աջ կողմն կըկանգնացնէ՝ և այծերըն ձախ կողմն։

34 Յն ժամանակն թագաւորն կասէ նորանոյ՝ որ աջ կողմն են, եկէք՝ իմ հօրս օրհնըվածներ՝ ժառանգեցէք էն արքայութիւնըն, որ աշխարհքի սկըզբից պատրաստըված է ձեզ համար։

35 Ինչուր՝ ես սովեայ՝ և տուէք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և խմացրէք ինձ. օտար էի՝ և ինձ ձեզ մօտ առէք։

36 Մերկ էի՝ և ինձ հագցըրէք. հիւանդ էի՝ և ինձ ակն տուէք. բանտի (պընաւն) մէջ էի՝ և ինձ մօտ եկէք։

37 Յն ժամանակն արդարներն պատասխան կըտան նորան և կասեն, Տէր՝ (մեկը) ե՞րբ տեսինք քեզ սոված՝ և կերակուր տուինք. կամ ծարաւ՝ և խմացրինք։

38 Ե՞րբ տեսինք քեզ օտար՝ և մեզ մօտ առինք, կամ մերկ՝ և հագցրինք։

39 Ե՞րբ տեսինք քեզ հիւանդ՝ կամ բանտի մէջ՝ և եկինք քեզ մօտ։

40 Պատասխանի տայէ Յիսուս՝ եւ ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, որովհետեւ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։

41 Ցայնժամ ասասցէ եւ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք՝ ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նոցա։

42 Զի քաղցեայ՝ եւ ոչետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ եւ ոչ արբուցիք զիս։

43 Օտար էի՝ եւ ոչ ժողովեցիք զիս, մերկ էի՝ եւ ոչ զգեցուցիք զիս, հիւանդ՝ եւ ի բանտի՝ եւ ոչ տեսիք զիս։

44 Ցայնժամ պատասխանի տացեն եւ նոքա՝ եւ ասասցեն. տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ։

45 Ցայնժամ պատասխանի տացէ նոցա՝ եւ ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ եւ ոչ ինձ արարէք։

40 Թագաւորն էլ պատասխան կըտայ՝ եւ նորանց կասէ. Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որովհետեւ էս իմ փոքր եղբայրներիցս մըրնին արիք, ինձ արիք։

41 Յետոյ ժամանակն նորանց էլ կասէ՝ որ ձախ կողմն են. ինձանիցս դուն գնացեք անիծածնե՛ր՝ յաւիտենական կրակի մէջն, որ պատրաստուած է սատանայի եւ նորա հրեշտակներուն համար։

42 Ինչուո՛ր ես սովեցի՝ եւ չը՛տուիք ինձ ուտել. ծարաւեցի՝ եւ ինձ չը՛խմացուիք։

43 Օտար էի՝ եւ ինձ ձեզ մօտ չառիք. մերկ էի՝ եւ ինձ չը՛հագուրիք. հիւանդ՝ եւ բանտի (պէտտան) մէջ էի՝ եւ ինձ ակն չը՛տուիք։

44 Յետոյ ժամանակն նորանք էլ պատասխան կըտան եւ կասն. Տէր՝ (մենք) քեզ ե՞րբ տեսինք սոված կամ ծարաւ կամ օտար կամ մերկ՝ կամ հիւանդ կամ բանտի մէջ՝ եւ քեզ ծառայութիւն չըրինք։

45 Յետոյ ժամանակն պատասխան կըտայ նորանց՝ եւ կասէ. Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որովհետեւ էս փոքրներիցս մըրնին չարիք՝ ինձ էլ չարիք։

16 Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն ի կեանսն յաւիտենականս։

ԳԼ. ԻԶ։

1 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր։

2 Գիտէք, զի յետ երկուց աւուրց զտիկ լինի. և որդի մարդոյ մատնի ի խաչ հանել։

3 Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքն և ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափա։

4 Եւ արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս՝ և սպանցեն։

5 Բայց ասէին, թէ մի՛ ի տօնի ատ՝ զի մի խռովու- թիւն լինիցի ի ժողովրդեանն։

6 Իբրև եկն Յիսուս ի բեթանիա ի տուն սիմոնի բորոտի,

7 Մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա ի բազմականին։

16 Եւ նորանք կըզնան յաւիտենական տանջանքն, և արդարներն յաւիտենական կեանքն։

ԻԶ։

1 Եւ ելաւ՝ երբոր Յիսուս էս ամէն խօսքերըս վերջացրուց, իրան աշակերտներին ասաց։

2 Գիտեմք՝ որ երկու օրից ետև զատիկ կըլինի. և որդին մարդոյ կըմատնըվի որ խաչվի։

3 Յն ժամանակն քահանայապետներն և կարդայօղներն և ժողովըրդի ծերերն ժողովվեցան քահանայապետի սրահն՝ որ նորա անունն կայիափա էր։

4 Եւ խորհուրդ արին՝ որ հնարքով Յիսուսին բռնեն և սպանեն։

5 Բայց ասում էին՝ թէ էս տօնում (չանենք) որ ժողովըրդի մէջն խռովութիւն չըլինի։

6 Երբոր Յիսուս եկաւ բեթանիա սիմոն բորոտի տունն,

7 Նորա մօտ մին կին եկաւ՝ որ մին շիշով (շո-շոյ) թանկագին իւղ ունէր և (էնտեղ) սեղան նստօղների

8 Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան՝ և ասեն . ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ :

9 Զի մարթի էր վաճառել զդա ամենապին՝ և տալ աղքատաց :

10 Գիտաց Յիսուս՝ և ա՛ռ նոսա . զի՞ աշխատ առնէք զկնի՝ գործ մի բարի գործեաց դա ինձ :

11 Զամենայն ժամ պաղքատս ընդ ձեզ ունիք , բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք :

12 Արկանել դորա զիւղդ՝ի մարմին իմ , առ՝ի թաղելոյ զիս նշանակեաց :

13 Ասեմ ամէն ասեմ ձեզ , զի ուր և քարոզեսցի աւետարանդ սա յամենայն աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա՝ի յիշատակ դորա :

14 Յայնժամ գնաց մի յերկոտասանից անուանեալն Յուդա սկարիովտացի՝ առ քահանայապետսն , և ասէ :

15 Զի՞նչ կամիք տալ ինձ , և ես մատնեցից զնա

8 Երբոր աշակերտներն տեսին , բարկացան և առաջին . ինչո՞ւ եղ իւղը (պղտեսղն) կորաւ :

9 Ինչուորՙ կարելի՛ էր շատ թանկ ծախել դրան և աղքատներին տալ :

10 Յիսուս իմացաւ և նոցանց ասաց . ինչո՞ւ էք եղ կնկանդ նեղութիւն տալիս . դա մի բարի բան գործեց ինձ վերայ :

11 Ամէն ժամանակ աղքատները ձեզ հետ ունիք՝ բայց ինձ միշտ ձեզ հետ չունիք :

12 Դորա եղ իւղը իմ մարմնոյս վերայ թափելն՝ իմ թաղվիլըս նշանակեց :

13 Բայց ճշմարիտըն ասում ձեզՙ որ ամէն աշխարհքի մէջՙ որ տեղ որ էս աւետարանս կըքարոզվի , դորա յիշատակին համար էն էլ կըխօսվի՝ որ դա արաւ :

14 Էն ժամանակին տասներկուսից միննՙ որ Յուդա Իսկարիոտացի էր անուանվածՙ գնաց քահանայապետներին մօտ և ասաց :

15 Ինչ էք կամենում տալ ինձ . և ես կըմատնեմ նո-

ձեզ. և նոքա կշտեցին նմա երեսուն արծաթի ։

16 Եւ յայնմհետէ լինդրէր պարապ՝ զի մատնեսցէ զնա նոցա ։

17 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն. ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն ։

18 Եւ նա ասէ ցնոսա. երթայք ՚ի քաղաքն առ այս անուն, և ասացէք ցնա. վարդապետ ասէ՝ ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկ աշակերտօքս հանդերձ ։

19 Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, և պատրաստեցին զզատիկն ։

20 Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երիսնամանսն աշակերտացն ։

21 Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ՝ ձեզ, զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս ։

22 Եւ արամէացան յոյժ. և սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ՝ մի թէ ե՞ս իցեմ տէր ։

լան ձեր ձեռքն. և նորանք երեսուն արծաթի (փող) խոստացան նորան ։

16 Եւ նրանից եւս յարմար ժամանակ էր ուզում որ նորան մատնէ նորանց ձեռքն ։

17 Եւ բաղարջակերաց առաջին օրումն աշակերտանքն Յիսուսի մօտ եկին և ասացին. ո՞ր տեղ ես կամենում՝ որ քեզ համար զատիկ ուտելոյ տեղ պատրաստենք ։

18 Նա էլ նորանց ասաց. գնացէք քաղաքն՝ էս անուն մարդոյ մօտ, և նորան ասացէք. վարդապետն ասում է՝ իմ ժամանակս մօտացել է՝ զատիկը իմ աշակերտներիս հետ քեզ մօտ կանեմ ։

19 Եւ աշակերտներն արին ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց. և զատիկը պատրաստեցին ։

20 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ տասներկու աշակերտներին հետ սեղան էր նստել ։

21 Եւ երբոր նորանք դեռ ուտում էին. ասաց՝ ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որ ձեզանից միևն կը մատնէ ինձ ։

22 Եւ շատ տրտմեցան. և նորանց ամէն մէկն սկսեցին նորան ասել. Տէր՝ չէմ թէ ես եմ ։

23 Նա պատասխանի ետ և ասէ · որ մեկուց ընդ իս ղձեուն իւր Ի սկաւառակն՝ նա մատնելոց է զիս ։

24 Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա · բայց վայ մարդոյն այնմիկ՝ որով որդի մարդոյ մատնեսցի · լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն ։

25 Պատասխանի ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝ և ասէ · միթէ Ո՞ իցեմ վարդապետ · ասէ ցնա՝ դու ասացեր ։

26 Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ առ Յիսուս հաց՝ օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն՝ և ասէ · առէք կերայք՝ այս է մարմին իմ ։

27 Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա և ասէ · արբէք Ի դմանէ ամենեքեան։

28 Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ Ի վերայ բազմաց հեղանի Ի թողուլ թիւն մեղաց ։

29 Բայց ասեմ ձեզ · ոչ ևս արբիցի յայսմհետէ Ի

23 Նա պատասխան տուաւ և ասաց · Էն որ ինձ հետ իրան ձեռքն սկաւառակի (աման) մէջն կըմատչնէ, նա կըմատնէ ինձ ։

24 Մարդոյ որդին կըգնայ՝ ինչպէս որ նորա համար գրված է · բայց վայ էն մարդուն՝ որ նորա ձեռովն որդին մարդոյ կըմատնըվի· լաւ էր նորան՝ թէ էն մարդն ծնված չըլինէր ։

25 Յուդան որ նորան մատնելու էր՝ պատասխան տուաւ և ասաց · միթէ Ո՞ ես եմ վարդապետ՝ նորան ասաց՝ դու ասացիր ։

26 Եւ դեռ որ նորանք ուտումէին, Յիսուս հաց առաւ՝ օրհնեց և կտրեց, և աշակերտներին տուաւ՝ և ասաց · առէք կերէք՝ էս է իմ մարմինս ։

27 Եւ բաժակն (Խոչն) առաւ՝ գոհացաւ՝ նորանց տուաւ, և ասաց · դրանից ամէնքդ խմեցէք ։

28 Ինչուոր՝ էդ է իմ արիւնս նոր ուխտի և պայմանի՝ որ շատերի վերայ թափվումէ, մեղաց թողութեան համար ։

29 Միայն թէ՝ ասումէմ ձեզ՝ թէ սրանից ետև որ

քերոյ որթոյ մինչև յօրն յայն՝ յորժամ արբից զնա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ ։

30 Եւ օրհնեցին, և ելին ի լեառն Ձիթենեաց ։

31 Ցայնժամ ասէ ցնոսա Ցիսուս. ամենեքեան դուք գայթագղելոց կք լինիլ յիս գիշերի, զի գրեալ է՝ Թէ հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարքն հօտին ։

32 Եւ յետ յառնելոյն իմոյ, յառաջեցից քան զձեզ ի գալիլեա ։

33 Պատասխանի ետ պետրոս՝ և ասէ ցնա. Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթագղեցայց ։

34 Ասէ ցնա Ցիսուս. ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչչև հաւուս խօսեալ լցէ, երիցս ուրասցիս զիս ։

35 Ասէ ցնա պետրոս. Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց. նոյնպէս և ամենայն աշակերտքն ասէին ։

36 Ցայնժամ գայ Ցիսուս ընդ նոսա ի գիւղ մի՝ որում անուն էր գեթսեմանի, և ա-

Թի (Հաւէ) բերբիոյն էլ չեմ խմիլ՝ մինչև էն օրն՝ որ դուքան ձեզ հետ նոր խմեմ իմ հօրս արքայութեան մէջն ։

30 Եւ օրհնեցին՝ և դուրս ելան ձիթենեաց սարն ։

31 Յն ժամանակն Ցիսուս նորանց ասաց. դուք ամենքդ ես գիշերս կըգայթակղվիք ինձանից. ինչուր՝ գրված է՝ Թէ հովիւըն (չոպանը) կըզարկեմ՝ և հօտի (ոխրու) ոչխարներն կըցրվին ։

32 Եւ իմ յարութիւն առնելուցն ետև ձեզանից առաջ կըդնամ գալիլեա ։

33 Պետրոս պատասխան տըւաւ և ասաց նորան. Թէ և ամենքն էլ գայթակղվին քեզանից, բայց ես չեմ գայթակղվիլ ։

34 Ցիսուս նորան ասաց. Ճշմարիտըն ասումեմ քեզ. Թէ ես գիշերս՝ դեռ հաւն չը՛խօսած՝ երեք անգամ կուրանաս ինձ ։

35 Պետրոս նորան ասաց. Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ՝ չեմ ուրանալ քեզ. Էնպէս էլ ամէն աշակերտներն էին ասում ։

36 Յն ժամանակն Ցիսուս նորանց հետ մին գիւղ եկաւ՝ որ նորա անունն գեթսեմանի

ե՞ ցնոսա· նստարուք այդր, մինչև երթայց կացից յա-
ղօթս։

37 Եւ առեալ զնդ իւր զպետրոս՝ և զերկուս որդիսն
զեբեդեայ, սկսաւ տրտմել և
հոգալ։

38 Ցայնժամ ասէ ցնոսա· տրտում է ոգի իմ մինչև ՚ի
մահ, կացէք աստ՝ և սկեցէք
ընդ իս։

39 Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ՚ի վերայ
երեսաց իւրոց, եկաց յա-
ղօթս՝ և ասէ· Հայր իմ, ե-
թէ հնար է՝ անցցէ բաժակս
այս յինէն· բայց ոչ որպէս
ես կամիմ, այլ որպէս դու։

40 Գայ առ աշակերտսն, և
գտանէ զնոսա ՚ի քուն, և ա-
սէ ցպետրոս· Այդպէս ոչ
կարացիք մի ժամ արթուն
կալ ընդ իս։

41 Արթուն կացէք և ա-
ղօթս արարէք՝ զի մի անկա-
նիցիք ՚ի փորձութիւն· Հո-
գիս յօժար է՝ բայց մարմինս
տկար։

42 Դարձեալ երկրորդ ան-
գամ չորաւ՝ եկաց յաղօթս
Ցիսուս՝ և ասէ· Հայր իմ՝

էր՝ և նորանց ասաց· Եղ տեղ
նստեցէք· մինչև որ գնամ
աղօթք անեմ։

37 Եւ պետրոսըն և զերե-
ղեայի երկու որդիքըն իրան
հետ առաւ, սկսեց տրտմիլ
և հոգս քաշել։

38 Ին ժամանակն նորանց
ասաց· իմ հոգիս մեռնելոյ
չափ տրտմած է· Էստեղ կա-
ցէք և ինձ հետ արթուն
մնայէք։

39 Եւ մին քիչ առաջ
գնաց՝ իրան երեսին վերայ ըն-
կաւ՝ աղօթք արաւ՝ և ասաց·
իմ Հայր՝ թէ որ կարելի է
(թող) էս բաժակս (մահս) ին-
ձանից անցկենայ· բայց չէ
թէ ինչպէս ես եմ կամենում,
այլ ինչպէս դու։

40 Ու գալով աշակերտներն մօտն,
և նորանց քընի մէջ գտաւ՝
և ասաց պետրոսին· Էդպէս՝
մին ժամ (սահման) կ՚ը չըկա-
րացիք ինձ հետ արթուն
մնալ։

41 Արթուն կացէք՝ և ա-
ղօթք արէք՝ որ փորձանքի
մէջ չընկնիք· Հոգիս յօժար
է՝ բայց մարմինս տկար։

42 Մինել երկրորդ անգամ
Ցիսուս գնաց և աղօթք ա-
րաւ՝ և ասաց· իմ Հայր՝ թէ

եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբիցի զսա. եղիցին կամք քո:

43 Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի եղեն աչք իւրեանց ծանրացեալք:

44 Եւթող զնոսա՝ և գնաց, եկաց յաղօթիս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց:

45 Ցայնժամ գայ առ աշակերտսն՝ և ասէ ցնոսա. ննջեցէք այսուհետև՝ և հանգեիք բուք. զի ահա հասեալ է ժամ, և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց:

46 Արիք երթիցուք աստի. զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոցն է զիս:

47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա յուդա մի յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրթովք՝ ի քահանայապետիցն՝ և ի ծերոց ժողովրդեանն:

48 Եւ որ մատնելոցն էր զնա, ետ նոցա նշան՝ և ասէ. ընդ որում ես համբուրեցից՝

կարելի է, որ ես բաժակս (Եսայ.) յինէն անց կենայ. ապա թէ ոչ՝ կըլամիմ սորան. թող քո կամքդ լինի:

43 Եւ մինել եկաւ նորանց քընի մէջ գտաւ. ինչուրը՝ նորանց աչքերն ծանրացել եին:

44 Նորանց թողեց և գնայ՝ և երրորդ անգամ աղօթք արաւ՝ և մինել էն խօսքըն ասայ:

45 Յէն ժամանակն աշակերտներին մօտ եկաւ՝ և նորանց ասայ. այսուհետև քունն էլէք՝ և հանգիստ առէք. ինչուրը՝ ահա հասել է ժամանակն՝ և որդին մարդոյ մատնըվելուն մեղաւորաց ձեռքըն:

46 Վերկայեք գնանք էս տեղից. ինչուրը՝ ահա հասաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ:

47 Եւ դեռ քանի որ նա էն խօսումէր, ահա յուդա՝ էն տասներկուսիցն մինն՝ եկաւ՝ և նորա հետ մեծ ամբոխ (խալխ) սրերով և բռընբներով՝ քահանայապետներըն և ժողովրդի ծերերըն:

48 Եւ նա՝ որ նորան մատնելու էր, նորանց նշան տըւաւ և ասաց. որին որ ես

նա է, զնա՛ ունկնդիք ։

49 Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ · ո՛ղջ եր վարդապետ · և համբուրեաց ընդ նմա ։

50 Եւ Յիսուս ասէ ցնա · ընկեր՝ վասն որո՛յ եկիր դ · Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յիսուս, և կալան զնա ։

51 Եւ ահա միոմն յայնցանէ՝ որ էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և եհար զծառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան զունկն նորա ։

52 Յայնժամ ասէ ցնա Յիսուս · դարձո՛ զսուր քո ՚ի տեղի իւր · զի ամենեքեան՝ որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին ։

53 Թէ համարիցիս՝ Թէ ո՛չ կարեմ աղաչել զՀայր իմ · և հասուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց ։

54 Ա՛յլ զիարդ լնուցուն գիրք՝ Թէ այսպէս պարտ է լինել ։

55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն · իբրև ՚ի կըհամբուրիմ՝ նմա է · նո՛ր բռնեցէ՛ք ։

49 Եւ շուտով Յիսուսի մօտ եկաւ՝ և ասաց · ո՛ղջ կաց վարդապետ՝ և նորան համբուրեց ։

50 Եւ Յիսուս նորան ա՛ց ասաց · ընկեր (դու) ինչի՛ համար եկիր · և էն ժամանակն մօտ եկին Յիսուսին ձեռք ձգեցի՛ն՝ և նորան բռնեցի՛ն ։

51 Եւ ահա՛ նորանցից մի՛ն՝ որ Յիսուսի հետ էին, ձեռքն մեկնեց և իրան սուրըն հա՛նեց՝ և քահանայապետի ծառային զարկեց, և նորա ականջըն կտրեց ։

52 Յի՛ն ժամանակն Յիսուս նորան ասաց · քո՛ սուրըդ իրան տեղն դի՛ր · պատճառո՛վ՝ նորանք որ սուր կառնեն, սրով պիտի ընկնի՛ն ։

53 Կամ Թէ կարծո՛ւմս՝ որ չեմ կարող իմ Հօրըս աղաչել՝ և հիմիկ տասներկու գունդ (պէօլո՛ւկ) հրեշտակներըն՝ աւելի կըհասցնէ ինձ էստեղ ։

54 Բայց ինչպէ՞ս կըկատարվին գրքերն՝ Թէ էսպէս պէտք է լինել ։

55 Յի՛ն ժամանակն Յիսուս էն ամբոխին (խալխին) ասաց·

վերայ աւազակի եղիք սուսեր- ըօք և բրօք՝ ուզեր զիս. հա- նապազ առ ձեզ ՚ի տաճա- րին նստէի և ուսուցանէի, և ոչ կալայք զիս։

56 Այլ այս ամենայն եղեւ՝ զի լցցին գիրք մարգարէիցն. յայնժամ աշակերտքն ամե- նեքին թողին զնա և փա- խեան։

57 Իսկ նոցա կալեալ զՅի- սուս՝ աճին առ կայափա քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին։

58 Իսկ պետրոս զհետն եր- թայր բացագոյն մինչև ՚ի սրահ քահանայապետին. և մտեալ ՚ի ներքս նստէր ընդ սպասա- ւորսն տեսանել զվախճանն։

59 Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ. զի սպանցեն զնա։

60 Եւ ոչ գտանէին ՚ի բազ- մայ սուտ վկայիցն մատուցե- լոյ. յետոյ մատուցեալ եր- կուս սուտ վկայք,

61 Ասէին՝ Թէ սա ասէր՝ կարօղ եմ քակել զաւազարն Աստուծոյ, և զերիս աւուրս շինել։

62 Եւ յարուցեալ քահա- ինչպէս մին աւազակի վերայ սրերով և բշնրերով դուրս եկիք ինձ բռնել. միշտ ձեզ մօտ տաճարումն նստումէի՝ և սովորցնումէի՝ և չբռնե- նեցիք զիս։

56 Հայց էս ամէնս էլաւ՝ որ մարգարէների գրքերն կա- տարվին. էն ժամանակն ա- մէն աշակերտներն նորան թո- ղին և փախան։

57 Հայց նորանք Յիսուսին բռնեցին և տարան կայափա քահանայապետի մօտն, որ տեղ որ կարդացօղներն և ծե- րերն ժողովված էին։

58 Եւ պետրոս հեռուանց գնումէր նորա ետևէն մինչև քահանայապետի սրահն. և ներս մտաւ ծառաներին հետ նստեց՝ որ վերջըն տեսնէ։

59 Հայց քահանայապետ- ներն և բոլոր տիւանն Յի- սուսի համար սուտ վկայու- թիւն էին ուզում՝ որ նո- րան սպանեն։

60 Եւ էն շատ սուտ վկանե- րին որ էնտեղ էին եկել, բան չէին գտնում. յետոյ երկու սուտ վկաներ առաջ եկին։

61 Սուտումէին՝ Թէ սա ա- սումէր՝ ես կարօղ եմ Աս- տուծոյ տաճարըն քանդել՝ և երեք օրումն շինել։

62 Եւ քահանայապետն

նայապետն ասէ ցնա . չունիս ինչ պատասխանի , զինչ դո- քա ամբաստանեն զքէն ։

63 Եւ Յիսուս լուռ կայր . պատասխանի ետ քահանայա- պետն և ասէ ցնա . երդմնե- ցուցանեմ զքեզ ՅԱստուած կենդանի , զի ասացես մեզ՝ Թէ դուն ես Քրիստոսն որ- դի Աստուծոյ ։

64 Ասէ ցնա Յիսուս . դու ասացեր . բայց ասեմ ձեզ , Յայսմհետէ տեսանիցէք զոր- դի մարդոյ նստեալ ընդ աջ- մէ զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից ։

62 Յայնժամ քահանայա- պետն պատառեաց զհան- դերձս իւր , և ասէ . հայհո- յեաց , զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա արդ լուայք զհայ- հոյութիւնն դորա ։

66 Զի՞նչ հաճոյ ի՞ ձեզ . նոքա պատասխանի ետուն և ասեն . մահապարտ է ։

67 Յայնժամ թքին ընդ երեսս նորա , և կոփեցին զնա . և ոմանք ապտակեցին, և ասեն ։

68 Մարգարէացո մեզ Քրիստոս՝ ով է՝ որ եհարն զքեզ ։

վերկացաւ նորան ասաց . պա- տասխան չի՞ տալիս՝ ինչ որ դորանք քեզանից գանգատու- մեն ։

63 Եւ Յիսուս լուռ էր կե- նում . քահանայապետն պա- տասխան տուաւ , և նորան ա- սաց . կենդանի Աստուծովն եմ երդում տալիս քեզ՝ որ ասես մեզ՝ Թէ դուն ես որդի Աստուծոյ Քրիստոսն ։

64 Նորան ասաց . դու ա- սացիր . բայց ասում ձեզ՝ որ հիմիկուց եւս կըտեսնէք որդին մարդոյ (Աստուծոյ) զօրութեան աջ կողմն նստած՝ և երկնքի ամպերին վերայ ե- կած ։

65 Յն ժամանակն քահա- նայապետն իրան շորերըն պա- տառեց և ասաց . հայհոյեց . էլ ի՞նչ պէտք է մեզ վկայ- ներ , ահա հիմիկ դորա հայհոյան- քըն լսեցիք ։

66 Ինչ հաճոյ է ձեզ . նո- րանք պատասխան տուին՝ և ասացին . (դա) մահապարտ է ։

67 Յն ժամանակն Թքեցին նորա երեսին . և բռընց- քով Թակեցին . և մին քա- նիսն էլ ապտակ (ինչէ) տուին նորան, և ասացին ։

68 Դուն Քրիստոս՝ մարգա- րէացիր մեզ՝ նա ով է որ քեզ զարկեց ։

69 Իսկ պետրոս նստէր արտաքոյ ՚ի գաւթին. մատեաւ առ նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յիսուսի գալիլեացւոյ էիր։

70 Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝ և ասէ, Թէ ոչ գիտեմ զինչ խօսիդ։

71 Ել իբրև եկ նա արտաքս քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. և սա ընդ Յիսուսի նազովրեցւոյ էր։

72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, Թէ ոչ գիտեմ զայրն։

73 Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ, ասեն պետրոսի. արդարև և դու ՚ի նոցանէ ես, քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ։

74 Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ, Թէ ոչ գիտեմ զայրն. և իսկոյն հաւ խօսեցաւ։

75 Եւ յիշեաց պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց, Թէ մինչչև հաւուս խօսեսցի՝ երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝ եկաց դառնապէս։

69 Եւ պետրոս դուրսն նստած էր սրահումն. մին աղախին (աղջնաշատ) նորա մօտ եկաւ, և ասաց. դու էլ էն Յիսուս գալիլեացւոյ հետն էիր։

70 Նա ամէնի առաջին ուրացաւ՝ և ասաց. չեմ գիտում Թէ դու ինչ ես խօսում։

71 Եւ երբոր նա դռնիկն դուրս գնաց, մին ուրիշ կին նորան տեսաւ՝ և նորանց որ էն տեղ կային ասաց. սա էլ Յիսուս նազովրեցւոյ հետն էր։

72 Եւ միևէլ երդումով ուրացաւ՝ Թէ ես էն մարդըն չեմ ճանաչում։

73 Եւ մին քիչ յետոյ՝ նորանք որ էնտեղ կանգնած էին, եկին պետրոսին ասացին. իրաւի որ դու էլ նորանցից ես. ինչուորՙ քո խօսքդ էլ յայտնում քեզ։

74 Էն ժամանակն սկսեց անիծել և երդվիլ՝ Թէ ես էն մարդըն չեմ ճանաչում, և շուտով հաւն կանչեց։

75 Եւ պետրոս յիշեց Յիսուսի էն խօսքըն՝ որ ասաց, Թէ հաւն դեռ չը՛ կանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ. և դուրս գնաց դառն արտասուներով լաց էլաւ։

ԳԼ · ԻՀ ։

1 Եբրև այդ եղև, խոր-
հուրդ արարին ամենայն քա-
հանայապետքն և ծերք ժո-
ղովրդեանն վասն Յիսուսի
սպանանել զնա ։

2 Կապեցին զնա, և ա-
ռին գնացին. և տուն ՚ի ձեռս
պոնտացւոյ պիղատոսի դատա-
ւորի ։

3 Յայնժամ տեսեալ Յու-
դայի՝ որ մատնեացն զնա,
թէ պարտաւորեցաւ, զղջա-
ցաւ՝ և դարձոյց զարծաթն
առ քահանայապետսն և ծերս
ժողովրդեանն,

4 Եւ ասէ. մեղայ, զի
մատնեցի զարիւն արդար. և
նոքա ասեն. մեզ ընդէ փոյթ,
դու գիտես ։

5 Եւ ընկէց զարծաթն ՚ի
տաճարին՝ և գնաց, և չո-
գաւ խեղդեցաւ ։

6 Իսկ քահանայապետիցն
առեալ զարծաթն՝ ասեն.
ոչ է արժան ընդունել զայդ
՚ի կորբանն, քանզի գինք ա-
րեան են ։

7 Խորհուրդ առեալ, գնե-
ցին զնոսա զագարակն բրտի
՚ի դերեզման օտարաց ։

8 Վասն այնորիկ կոչեցաւ

1 Եբրեր առաւօտ էլաւ,
ամէն քահանայապետներն և
ժողովրդրդի ծերերն Յիսու-
սի համար խորհուրդ արին՝
որ սպանեն նորան ։

2 Նորան կապեցին, և ա-
ռին գնացին, և պոնտացի
պիղատոս դատաւորի ձեռքն
տուին ։

3 Յն ժամանակն Յուդան՝
որ նորան մատնեց՝ տեսաւ որ
դատապարտվեցաւ, զղջա-
ցաւ՝ և էն արծաթէրն կետ
դարձրուց քահանայապետնե-
րին և ժողովրդրդի ծերերին ։

4 Եւ ասաց. մեղայ՝ ին-
չուոր արդար արիւն մատնե-
ցի. նորանք էլ ասացին՝ մենք
հոգս չունինք. դու գիտես ։

5 Եւ արծաթէրն քցեց տա-
ճարի մէջն՝ և կետ եկաւ, և
գնաց խեղդվեցաւ ։

6 Բայց քահանայապետ-
ներն էն արծաթէրն առին՝ և
ասացին. արժան չէ՝ որ էդ
դանձանակի մէջն ընդունենք,
ինչուոր՝ արիւնի գին է ։

7 Խորհուրդ արին՝ և նո-
րանով բրուտի արտատեղրն
գնեցին՝ որ օտարականների
դերեզմանատեղ լինի ։

8 Նրահամար՝ էն արտա-

ագարակն այն, ագարակ ա-
բեան՝ մինչև ցայսօր։

9 Ցայնժամ լցաւ՝ որ ա-
սացաւն Ի ձեռն երեմիայ մար-
գարէի. և առին զերեսուն ար-
ծաթին զգինս վաճառելոյն,
զոր արկին յորդւոցն Իլի։

10 Եւ ետուն զնա յագա-
րակն բրտի. որպէս հրամա-
յեաց ինձ Տէր։

11 Եւ Յիսուս եկաց առա-
ջի դատաւորին. եհարց ցնա
դատաւորն՝ և ասէ. դո՞ւ ես
թագաւորն հրէից. և Յի-
սուս ասէ. դու ասես։

12 Եւ Ի չարախօսիլն նո-
ցա Ի քահանայապետէյն և
Ի ծերոց, ոչ ինչ ետ պա-
տասխանի։

13 Ցայնժամ ասէ ցնա պի-
ղատոս. ո՞չ լսես՝ որչափ դո-
քա հակառակ քո վկայեն։

14 Եւ ոչ ետ նմա պատաս-
խանի՝ և ոչ բան մի, մինչև
զարմանալ դատաւորին յոյժ։

15 Ըստ տօնի սովոր
էր դատաւորն արձակել ժո-
ղովրդեանն կապեալ մի՝ զոր
տեղն՝ արիւնի արտ կոչվեցաւ
մինչև ես օր։

9 Յն ժամանակն կատար-
վեցաւ էն՝ որ երեմիա մար-
գարէի ձեռովն ասվեցաւ. և
էն երեսուն արծաթի փողըն
առին՝ էն ծախվածի գինըն՝
որ նորան իսրայելի որդիքնե-
ըիցն առել էին։

10 Եւ նորան բրուտի ար-
տին տուին՝ ինչպես որ հրա-
մայեց ինձ Տէրն։

11 Եւ Յիսուս կանգնեց
դատաւորի առաջին. դատա-
ւորն հարցրուց նորան՝ և ա-
սաց. դո՞ւ ես հրէից (ըստհա-
նէքէ) թագաւորն. և Յիսուս
ասաց. դու ես ասում։

12 Եւ երբոր քահանայա-
պետներն և ծերերն նորանից
չարախօսութիւն էին անում,
նա իսկի պատասխան չը տա-
ւաւ։

13 Յն ժամանակն պիղա-
տոս ասաց նորան. չե՞ս լսում
թէ դորանք որչափ քեզ
հակառակ են վկայում։

14 Եւ նորան իսկի մին բան
էլ պատասխան չըտուաւ. մին-
չև որ դատաւորն էլ շատ
զարմացաւ։

15 Ըստ սովորութիւն էր
դատաւորին՝ որ տօնի ժամա-
նակումն մին բանտարկեալ

կամէին :

16 Ունէին յայնժամ կա-
պեալ մի նշանաւոր, որում
անուն էր Յեսու բարաբբաս:

17 Իբրեւ ժողովեցան, ասէ
ցնոսա պիղատոս. զո՞ կամիք
յերկուց ասի՝ զի արձակեցից
ձեզ, զՅեսու բարաբբա՞ եւ
զԹէ զՅիսուս զանուանեալն
Քրիստոս :

18 Գիտէր զի թէ առ-
նախանձու մատնեցին զնա :

19 Եւ մինչ նստէր յատե-
նին, առաքեաց առ նա կինն
իւր եւ ասէ. չկայ ինչ քո եւ
արդարոյն այնորիկ, զի բա-
զում անյագ անցին ընդ իս այ-
սօր յանուրջս վասն նորա :

20 Իսկ քահանայապետքն եւ
ծերք հաւանեցուցին զժողո-
վուրդսն, զի խնդրեսցեն զբա-
րաբբայն՝ եւ զՅիսուս կո-
րուսցեն :

21 Պատասխանի եւս դա-
տաւորն՝ եւ ասէ ցնոսա. զո՞
կամիք զի արձակեցից ձեզ
յերկուց այսի. Եւ նոքա ա-
սեն՝ զբարաբբա :

արձակէ ժողովրդին համար.
որին որ ուղումէին :

16 Եւ ժամանակն մին ա-
նուանի բանտարկեալ ու-
նէին. որ նորա անունն յե-
սու բարաբբա էր :

17 Երբոր հաւաքվեցան,
պիղատոս նորանց ասաց. Ես
երկուսիցս հրըն էք ուղում՝
որ ձեզ համար արձակեմ.
Յեսու բարաբբայն, թէ
Յիսուսին, որ Քրիստոս է
կոչված :

18 Գիտէր՝ նախանձով էին մատնել
նորան :

19 Եւ դեռքանի որ դա-
տաստան էր նստած, նորա
կինն ուղարկեց նորա մոտն՝
և ասաց. Էդ արդար մար-
դոյ հետ դուս բան չունիս.
ինչուոր՝ շատ բաներ երա-
զումն էս օր իմ դէմովս անց-
կայան նորա համար :

20 Բայց քահանայապետ-
ներն և ծերերն՝ ժողովուրդ-
ներին հաւանացրին՝ որ բա-
րաբբային ուղեն՝ և Յիսու-
սին կորցընեն :

21 Պատասխան տուաւ դա-
տաւորն և ասաց նորանց՝ Ես
երկուսիցս հրըն էք ուղում՝ որ
արձակեմ ձեզ համար. և նո-
րանք ասացին՝ բարաբբային :

22 Ասէ ցնոսա պիղատոս. խակ զի՞ արարից զՅիսուս զնազովեցին Քրիստոս:

23 Ասեն ամենեքեան՝ խաչեսցի. և նա ասէ, զի՞նչ չար արար. և նոքա առաւել ևս ազաղակէին և ասէին, խաչեսցի:

24 Եւ տեսեալ պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն՝ և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք:

25 Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն՝ և ասէ. արիւն դորա՝ ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց:

26 Յայնժամ արձակեաց նոցա զբարաբբայն, և զՅիսուս զան հարեալ՝ ետ՝ ի ձեռս՝ զի խաչեսցի:

27 Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս. և ժողովեցին՝ ի վերայ նորա զամենայն գունդն:

28 Մերկացին զնա, և արկին զնովաւ քղամիդ կարմիր:

29 Եւ բոլորեալ պսակ՝ ի

22 Պիղատոս ասայ նորանց. ապա ի՞նչ անեմ՝ Քրիստոս կոչվածՅիսուսին:

23 Ամենքն էլ ասային. պէտք է խաչվի. և նա ասայ. ի՞նչ չար բան է արել. և նորանք էլ աւելի աղաղակու-մին և ասում՝ պէտք է խաչվի:

24 Եւ պիղատոս երբոր տեսաւ՝ թէ խակի օգուտ չի՝ նում, բայց աւելի խռովութիւն է լինում, ջուր առաւ՝ ժողովրդի առաջին ձեռներըն լուայ՝ և ասայ. ես էդ արդարիդ արիւնից անպարտ եմ, դուք դիտէք:

25 Ամէն ժողովուրդն պատասխան տուաւ և ասայ. դորա արիւնն մեզ վերայ և մեր որդոց վերայ:

26 Էն ժամանակն բարաբբային արձակեց նորանց համար, և Յիսուսին ծեծեց, և ձեռներն տուաւ՝ որ խաչվի:

27 Էն ժամանակն դատաւորի զինուորներն՝ Յիսուսին տարան պալատն, և ամէն զինուորների գունդը (պէօլյուկը) հաւաքեցին նորա վերայ:

28 Նորան մերկայրին՝ և նորա վերայ մին կարմիր քղամիդ (ֆէրաճէ) քցեցին:

29 Եւ փըշերիցն մին թագ

փշոց՝ եդին ՚ի գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին նորա. ՚ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. ողջ եր Թագաւոր հրէից։

30 Եւ թքեալ ՚ի նա՝ առնուն զեղէգնն և ծեծէին զգլուխ նորա։

31 Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին ՚ի նմանէ զքղամիդն՝ և ազուցին նմա՛ զհուր հանդերձն, և տարան զնա ՚ի խաչ հանել։

32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի կիւրենացի՝ անուն սիմոն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն նորա։

33 Եւ եկեալ ՚ի տեղին ա-նուանեալ գողգոթա, որ է տեղի կառափնէից,

34 Տուին նմա ըմպել գինի լուդ լեղի խառնեալ. և իբրև ճաշակեաց, ոչ կամեր ըմպել։

35 Եւ հանեալ զնա ՚ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի մարգարէէն. բաժանեցին զհանդերձս իմ վիճակս. և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

բոլորացուրին՝ նորա գլուխն դրին, և նորա աջ ձեռին մին եղէգ (ղմռիշ). նորա առաջին ծունրը դնելով ծաղր էին անում և ասում. ողջ կաց հրէից (Ջհուտանէրէ) թագաւոր։

30 Եւ նորան թքելով՝ էն եղէգը առնում էին և նորա գլուխը թակում էին։

31 Եւ երբոր ծաղր արին նորան, էն կարմիր քղամիդն (քէրճէն) նորանից հանելին՝ և նորան տարան որ խաչ հանեն։

32 Եւ երբոր դուրս էլան, մին կիւրենացի մարդ գտին՝ սիմոն անուն. նորան ուժով բռնեցին գաշեցին՝ որ նորա խաչն վերառնէ։

33 Եւ երբոր գողգոթա տեղն եկին, որ գլխատեղց տեղ է,

34 Նորան լեղց հետ խառնած գինի տուին խըմել՝ և երբոր համըն առաւ, չէր կամենում որ խըմէ։

35 Եւ երբոր նորան խաչ հանեցին, նորա շորերըն վիճակով բաժանեցին. որ կատարվի էն խօսքն՝ որ մարգարէից ասած էր՝ թէ իմ շորերըս իրանց միջումն բաժանեցին՝ և իմ կապայիս վրայ վիճակ էին քցում։

36 Եւ նստեալ պահէին զնա ։

37 Եւ եդին ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նորա . Թէ՝ այս է Յիսուս Թագաւորն հրէից ։

38 Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա՝ և մի յահեկէ ։

39 Եւ որ անցանէին՝ հայհոյէին զնա , շարժէին զգլուխս իւրեանց ,

40 Եւ ասէին . վայ՛հ որ քակէիր զտաճարն , և զերիս աւուրս շինէիր զնա . ապրեցո՛ զքեզ , Թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ ։

41 Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք՝ և ասէին ։

42 Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցանել . և Թէ Թագաւոր է Իսրայէլ՝ իջցէ այժմ ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա ։

43 Յիմէ յուսացաւ Աստուած , փրկեսցէ այժմ զդա՝

36 Եւ նստած պահումէին նորան ։

37 Եւ նորա վնասն (տո-ՀԸՆ) գրեցին՝ և իրան գլխին վերայ դրին՝ Թէ սա է Յիսուս հրէից (ՅԱՀՈՎՆԷՐ) Թագաւորն ։

38 Ին ժամանակն նորա հետ երկու աւազակներ էլ խաչ հանեցին՝ միսն նորա աջ կողմն՝ և մէկէլն նորա ձախ կողմն ։

39 Եւ նորանք որ կենաղից անցկէն կենում , հայհոյումէին նորան . իրանց գլխանըրն շարժումէին ,

40 Եւ ասումէին՝ վա՛հ որ տաճարըն քանդումէիր՝ և երեք օրում շինումէիր . ապրեցրու քեզ՝ Թէ որ Աստուծոյ որդին ես , վէր ել խաչեդ ։

41 Ինպէս էլ քահանայապետներն ծաղր էին անում կարդացօղներին և ծերերին հետ՝ և ասումէին ։

42 Ուրիշներըն ապրեցրուց. ինքն իրան չի՛ կարում ապրեցնել . Թէ որ իսրայէլի Թագաւորն է , հիմիկ Թող վէր գայ խաչեդ , և հաւատանք դորան ։

43 Թէ որ Աստուծոյն յուսացաւ , հիմիկ Թող փրկէ

եթէ կամի զդա · քանզի ա-
սաց՝ եթէ Աստուծոյ որդի
եմ ։

Ա4 Զ նոյն և աւազակքն՝ որ
խաչեալ էին ընդ նմա , նա-
խատէին զնա ։

Ա5 Եւ ի վեց ժամէ աւուրն՝
խաւար եղև ի վերայ ամենայն
երկրի մինչև ցինն ժամ ։

Ա6 Եւ զինն ժամուն կո-
չեաց Յիսուս ի ձայն մեծ և
ասէ · Էլի՝ Էլի՝ լամա սա-
բաքթանի · այս ինքն է ·
Աստուած իմ Աստուած իմ՝
ընդէ՞ր թողեր զիս ։

Ա7 Ոմանք յայնոցանէ որ
անդն կային , երբեմն լուան՝
ասէին · զեղելայ կարդայ դա։

Ա8 Եւ վազվազակի ընթա-
ցաւ միոմն ի նոցանէ՝ առ
սպունգ մի քացախով , հա-
րեալ յեղեգան՝ եւ ըմպել
նմա ։

Ա9 Եւ կէսքն ասէին · Թող
տեսցուք եթէ գայ եղիա
փրկել զդա ։

50 Եւ Յիսուս դարձեալ
աղաղակեաց ի ձայն մեծ՝ և
արձակեաց զոգին ։

51 Եւ ահա վարագոյր տա-

դոթան , եթէ որ ուղումէ դո-
րան · ինչուորՙ ասաց · եթէ
Աստուծոյ որդի եմ ։

Ա4 Նոյնպէս եւ աւազակներն՝
որ նորա հետ խաչեալ էին՝
նորան նախատումէին ։

Ա5 Եւ օրի վեց ժամիցն
(ահաւասիկ) մինչև լինն ժամն
ամէն երկրի վերայ խաւար
էյաւ ։

Ա6 Եւ լինն ժամին (ահաւասիկ)
դէմ , Յիսուս մեծ ձայնով
կանչեց եւ ասաց · էլի էլի՝
լամա սաբաքթանի · որ կաս-
ւի · իմ Աստուած՝ իմ Աս-
տուած՝ ինչուՙ թողիր ինձ ։

Ա7 Մին քանի մարդիք նո-
րանցից՝ որ կեռտեղ կանգնած
էին՝ երբոր լսեցին , ասու-
մէին՝ գա եղիային է կան-
չումՙ ։

Ա8 Եւ շուտով նորանցից
մինն վազեց՝ մին սպունգ
(սպունգն) քացախով լիքն ա-
ռաւ՝ եղէգի (գաւազի) վերայ
անցրուց՝ և նորան տուաւ, որ
խըմէ ։

Ա9 Եւ միսն ասումէին ·
Թող տեսնենք · եթէ եղիան
կըգայ դորան փրկել ։

50 Եւ Յիսուս մինէլ մեծ
ձայնով կանչեց՝ և արձակեց
հոգին ։

51 Եւ ահա տաճարի վա-

Հարկն ելաւ յերկուս՝ ի վերուստ մինչև ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան։

52 Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։

53 Եւ ելեալ ի գերեզմանացն յետ յարութեանն նորա, մտին ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց։

54 Իսկ հարիւրապետն՝ և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժուածն և զեղեալսն, երկեան յոյժ՝ և ասեն. արդարև Աստուծոյ որդի էր սա։

55 Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ՝ և հայէին, որք եկին ընդ Յիսուսի ի գալիլեէ պաշտել զնա։

56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակովբայ՝ և Յովսեայ մայր, և մայր որդւոցն Զեբեդեայ։

57 Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն Յարիմաթեայ՝ որում անուն էր Յովսէփ. որ և աշակերտեր

բազուբն երկու (կաւոր) Հղվեցաւ վերևիցն մինչև ցածն, և երկիրն շարժվեցաւ. և քարերք պատառվեցան։

52 Եւ գերեզմանունք բացեալ էլան. և շատ մարմինունք սուրբք ննջեցելոց յարութիւն առին։

53 Եւ գերեզմանունքիցն դուրս եկին նորա յարութենէյն եառ՝ սուրբք քաղաքն մտին՝ և շատերին երևեցան։

54 Բայց հարիւրապետն և նորանք՝ որ նորա հետ Յիսուսին պահէին, երբոր էն շարժմունքըն և էն էլածները տեսին, շատ վախեցան և ասացին. Հշմարիտ որ սա Աստուծոյ որդի էր։

55 Էն տեղ շատ կանայք կային՝ որ հեռուանոյ կանգնել էին՝ և մտիկ էին տալու. որ գալիլեայիցն Յիսուսի եւ անէն եկին որ ծառայութիւն անեն նորան։

56 Մորանց միջումն էր Մարիամ Մագդաղենացին՝ և Մարիամ Յակոբի և Յոսէի մայրն՝ և զեբեդեայի որդոց մայրն։

57 Եւ երբոր իրիկուն էլաւ, արիմաթեայիցն մին հարուստ մարդ եկաւ՝ որ նորա անունն Յոսէփ էր, որ ինքն

յաւ իսկ Յիսուսի ։

58 Այ մատուցեալ առ պի-
ղատոս, խնդրեաց զմարմինն
Յիսուսի · յայնժամ պիղա-
տոս հրամայեաց տալ զմար-
մինն ։

59 Եւ առեալ զմարմինն
յովսէփ՝ պատեաց սուրբ
կտաւովք,

60 Եւ եդ ՚ի նոր դերեզ-
մանի՝ զոր փորեաց ՚ի վիմի ·
և թաւալեցուցեալ կափա-
րիչ դրան գերեզմանին վէմ
մի մեծ՝ գնաց ։

61 Էր եւ Մարիամ Մագ-
դաղենացի՝ և միւս Մարիամն,
նստէին հանդէպ գերեզմա-
նին ։

62 Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ
է յետ ուրբաթին, ժողո-
վեցան քահանայապետքն և
փարիսեցիքն առ պիղատոս ։

63 Եւ ասեն · տէր յի՛շե-
ցաք զի մոլորեցուցիչն այն ա-
սէր՝ մինչ կենդանին էր ·
թէ յետ երից աւուրց յառ-
նեմ ։

64 Արդ՝ հրամայեա զգու-
շանալ գերեզմանին մինչև
երիս աւուրս, գուցէ գիշեր
եւ աշակերտք էլեալ զնա-
սուսին ։

58 Այ գնաց պիղատոսի
մօտն՝ և Յիսուսի մարմինը
խնդրեց · էն ժամանակն պի-
ղատոս հրամայեց՝ որ մարմի-
նըն տան ։

59 Եւ յոսէփն մարմինըն
առաւ՝ յիստակ կտաւներով
պատանեց,

60 Եւ (մին) նոր գերեզմա-
նի մէջ դրաւ՝ որ քարի մէջն
փորել էր · և գերեզմանի
դռան առաջին մին մեծ քար
գցեց (նորան) փակելոյ հա-
մար · և գնաց ։

61 Էն տեղ էր մարիամ
մագդաղենացին և մէկել մա-
րիամն, որ գերեզմանին դէմ
նստած էին ։

62 Եւ նորա էգուցվան օ-
րուն՝ որ ուրբաթիյն ետև
է, քահանայապետներն և
փարիսեցիներն հաւաքվեցան
պիղատոսի մօտ ։

63 Եւ ասացին · տէր
մտքներս բերինք, որ էն մո-
լորեցնօղն դեռ քանի որ կեն-
դանի էր, ասումէր · թէ ե-
րեք օրիցն ետև յարուցիւն
կառնեմ ։

64 Ուրեմն հրամայեա տուր ·
որ մինչև երեք օր գերեզմա-
նըն զգուշացվեն նով պահեն ·

աշակերտքն գիշերի՝ գողա-
նայցեն զնա, և ասիցեն ժո-
ղովրդեանն, թէ յարեաւ ՚ի
մեռելոց. և լինիցի յետին
մոլորութիւնն չար քան զա-
ռաջինն։

65 Ասէ ցնոսա պիղատոս.
ունիք զզօրականն, երթայք
զգուշացարուք որպէս և գի-
տէք։

66 Եւ նոքա երթեալ զգու-
շացան գերեզմանին, և կնքե-
ցին զվէմն հանդերձ զօրա-
կանօքն։

որ չըլլինի թէ աշակերտանե
գիշերը գան նորան գողնա
և ժողովրդին ասեն՝ թ
մեռելներէն միջնէն յարու
թիւն առաւ. և յետին մո
լորութիւնն չար լինի քան
թէ առաջինն։

65 Պիղատոս ատոր նորանց
պահապան զինուորներ ունիք
գնացէք զգոյշ պահեցէք ինչ
պէս որ գիտուիք։

66 Նորանք էլ գնացին գե
րեզմանին պահպանութիւն
արին. և պահապան զինուոր
ներուն հետ քարը կնքեցին
(Ջօհրեցին)։

ԳԼ. ԻՉ։

1 Եւ յերեկոյի շաբա-
թուն՝ յորում լուսանայր միա-
շաբաթին, եկին Մարիամ Մագ-
դաղենացի, և միւս Մարիամն՝
տեսանել զգերեզմանն։

2 Եւ ահա շարժուածմեծ
եղև. զի հրեշտակ Տեառն ի-
ջեալ յերկինից՝ մատուցեալ
՚ի բաց թաւալեցոյց զվէմն
՚ի դրաց անտի, և նստէր ՚ի
վերայ նորա։

3 Եւ էր տեսիլ նորա իբ-
րև զլոյսակն, և հանդերձ
նորա սպիտակ իբրև զձիւն։

4 Եւ յահէ անտի նորա

1 Եւ շաբաթի իրիկունն՝
որ մէկ շաբթի էր լուսա-
նում, Մարիամ Մադդաղե-
նացին եկաւ՝ և մէկէլ մա-
րիամն էլ, որ գերեզմանըն
տեսնեն։

2 Եւ մեծ շարժուածմ էլաւ՝
ինչուորՏէրի հրեշտակն
երկնքէյն վէր եկաւ՝ գնաց
դռնիցն էն քարըն հեռու
թօլարաւ՝ և նորա վերայ
նստեց։

3 Եւ նորա կերպարանքն
փայլակի պէս էր՝ և նորա հա-
գուստն ձիւնի պէս սպիտակ։

4 Եւ նորա ահիցն պահա-

խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս:

5 Պատասխանի եա հրեշտակն՝ և ասէ ցկանայսն. Մի երկնչիք դուք, զիտեմ զի զՅիսուս զխաչեալն խնդրէք:

6 Չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր կայր:

7 Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ ի գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ:

8 Եւ ելեալ վաղվաղակի ի դերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն:

9 Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս՝ և ասէ. ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա՝ և երկիրպագին նմա:

10 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոյ՝ զի երթիցեն ի գալիլեա, և անդ տեսցեն զիս:

պահապանէն շիրթիվեցան, և մեռելի նման եղեն:

5 Հրեշտակն պատասխան տուաւ՝ և էն կանանցն ասաց. Դուք մի վախենաք. գիտեմ ես՝ որ Յիսուս խաչվածըն էք ուզում:

6 Նստեղ չէ. պատճառն որ՝ յարութիւն առաւ՝ ինչպէս որ ասաց. եկէք տեսէք էն տեղըն որ նա կար:

7 Եւ շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք՝ թէ նա յարութիւն առաւ. և ահա նա ձեզանից առաջ գալիլեա կըգնայ. էն տեղ նորան կըտեսնէք. ահա ասացի ձեզ:

8 Եւ շուտով դերեզմանէն դուրս եկին՝ վախով և շատ ուրախութիւնով վազուզ՝ որ աշակերտներին պատմեն:

9 Եւ ահա Յիսուս պատահեց նորանց՝ և ասաց. Ողջ կացէք. և նորանք մօտ եկին՝ նորա ոտներըն բռնեցին և նորան երկրպագութիւն արին:

10 Յն ժամանակն Յիսուս նորանց ասաց. Մի վախենաք. գնացէք իմ եղբարներիս ասացէք՝ որ գնան գալիլեա, և էնտեղ կըտեսնեն ինձ:

11 Երբեմն նորա գնացին, ահա ամանք ՚ի գորականացն եկին ՚ի քաղաքն՝ և պատմեցին քահանայապետին զամենայն որ ինչ եղեն։

12 Եւ նորա ժողովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ արծաթի յոյժ եառուն զօրականացն,

13 Եւ ասեն. ասացէք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք։

14 Եւ եթէ լուր լսիլ այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։

15 Եւ նոցա առեալ զարծաթսն, արարին որպէս ուսանեն. և եղ համբաւս այս ՚ի հրեից մինչեւ ցայսօր։

16 Իսկ մեսսան աշակերտքն գնացին ՚ի գալիլեայ ՚ի լեառնն՝ ուր Յամադիր եղեւ նոցա Յիսուս։

17 Երբեմն տեսին զնա, երկիրպագին նմա. և ոմանք յերկուայեան։

18 Եւ մատուցեալ Յիսուս խոսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխա-

11 Երբ որ նորանք գնացին, ահա (պահապան) գնացուցանեցին ՚ի քաղաքն՝ և ամէն ինչ որ էրաւ պատմեցին քահանայապետներին։

12 Եւ նորանք ծերերին հետ հաւաքված խորհուրդ արին՝ և էն (պահապան) զինուորներին շատ փող տուին

13 Եւ ասացին. ասացէք՝ եթէ նորա աշակերտներն գիշերն գնա որ մենք քնած էինք՝ եկին գողացան նորան։

14 Եւ եթէ որ էդ բանդ դատաւորի ականջն հասնէ, մենք նորան կըհաւանացնենք՝ և ձեզ անհոգ կանենք։

15 Եւ նորանք փողն առին՝ և էնպէս արին ինչպէս որ սովորեցին. և էս ձայնս հրէաների (Ջուհա-անէրէ) մէջն դուրս եկաւ մինչև էսօր։

16 Հետց տասնումէն աշակերտներն գնացին գալիլեա էն սարն՝ որ Յիսուս նորանց հետ խոսք էր կապել։

17 Երբ որ նորան տեսին, երկրպագութիւն արին նորան, և մին քանիսն երկմըտեցան։

18 Եւ Յիսուս մօտ եկաւ, նորանց հետ խոսեց՝ և ասաց. ամէն իշխանութիւն

նուէրն յերկինս և յերկիր. որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ։

19 Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։

20 Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի։

ինձ արժանաւոր երկնքումն և երկրումն. ինչպէս որ հայրն ինձ ուղարկեց, ընդպէս եւ ես ձեզ ուղարկումեմ։

19 Երթեալ գնացէք ամէն հեթանոսներըն աշակերտ շինեցէք՝ նորանց մկրտեցէք Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ անունովն։

20 Նորանց սովորցրէք՝ որ ամէն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամէն օր, մինչև աշխարհքի վերջն։

ՒՒԵՏՐՈՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ·



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ·

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի որդւոյ Աստուծոյ ։

2 Որպէս և գրեալ է ՚ի մարգարէս · ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհ քո առաջի քո ։

3 Ձայն բարբառոյ յանապատի , պատրաստ արարէք զճանապարհ Տեառն , և ուղիղ արարէք զշաւիղս նորա։

4 Եւ եղև՝ ի յովհաննէս մկրտէր յանապատի , և քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց ։

5 Եւ երթայր առ նա ա-

1 Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ որդւոյ աւետարանի սկիզբն ։

2 Ինչպէս որ մարգարէներումն գրված է՝ (թէ) ահա ես իմ հրեշտակըս կուղարկեմ քո առաջիդ՝ որ քո ճանապարհըդ քո առաջիդ պատրաստէ ։

3 Կանչօղի ձայն անապատումն՝ (թէ) պատրաստ արէք Տէրի ճանապարհըն՝ և շիտակ արէք նորա գնալոյ ճանապարհըն ։

4 Եւ էլաւ՝ որ Յօհաննէս անապատումն (ընթերա-ցո) մկրտուէր՝ և ապաշխարութեան մկրտութիւն էր քարոզում՝ մեղաց թողութեան համար ։

5 Եւ հրէաստանի (ըն-

մինայն աշխարհն հրէաստա-
նի, և ենէմացիք ամենեքեան.
և մկրտէին ՚ի նմանէ ՚ի յոր-
դանան գետ՝ խոստովանեալ
զմեղս իւրեանց։

6 Եւ էր յովհաննէս զգե-
ցեալ ատև ուղտոյ, և գօտի
մաշկեղէն ընդ մէջ իւր. և
կերակուր նորա մարախ և
մեղր վայրենի։

7 Քարոզէր և ասէր. դայ
զօրագոյնն քան զիս կէնի իմ,
որում չեմ բաւական խո-
նարհել լուծանել զկօշկաց
նորա։

8 Ես մկրտեցի զձեզ ջրով,
և նա մկրտեսցէ զձեզ հոգ-
ւովն սրբով։

9 Եւ եղև՝ յաւուրսն յայ-
նոսիկ եկն Յիսուս ՚ի նազա-
րեթէ գալիլեացւոց, և մկր-
տեցաւ ՚ի յովհաննէ ՚ի յոր-
դանան։

10 Եւ նոյնժամայն ընդ վե-
րանալ ՚ի ջրոյն, տեսս ե-
լեալ զերկինս, և զՀոգին
Աստուծոյ իբրև զաղաւնի՝
գլ իջանէր ՚ի վերայ նորա։

11 Ձայն եղև յերկնից՝ և
ասէ. դու ես որդի իմ սի-
րելի, ընդ քեզ հաճեայ։

12 Եւ նոյնժամայն Հոգին
հանէ զնա յանապատ։

ասաւածէ) ամէն աշխարհքն և
ամէն երուսաղէմացիքն գը-
նուէին նորա մօտ՝ և նորա-
նից մկրտվուէին յորդանան
գետուն՝ իրանց մեղքերըն
խոստովանելով։

6 Եւ յօհաննէս ուղտու
բուրդ էր հագած, և կաշ-
վէ գօտիկ իրան մէջքուն՝ և
նորա կերակուրն մարախ (էր)
և վայրի մեղր։

7 Քարոզումէր և ասում.
ինձանից զօրաւորն իմ եռևէս
է գալիս՝ որ նորան ես չեմ
արժանի խոնարհվիլ և նորա
կօշկիների կապըն արձակել։

8 Ես ջրով մկրտեցի ձեզ՝
և նա սուրբ հոգով կըմկըր-
տէ ձեզ։

9 Եւ էլաւ որ էն օրե-
րուն Յիսուս գալիլեացւոց
նազարեթիցն եկաւ, և յօ-
հաննէսիցն յորդանանուն
մկրտվեցաւ։

10 Եւ շուտով որ ջրիցն
դուրս եկաւ՝ տեսաւ երկին-
քըն ճղված՝ և Աստուծոյ
հոգին աղաւնու պէս՝ որ վէր
էր գալիս նորա վերայ։

11 Ձայն էլաւ երկնքիցն և
ասաց՝ դու ես իմ սիրելի որ-
դին, քեզ հաւան կացայ։

12 Եւ շուտով հոգին նո-
րան անապատն (չէօլն) հանեց։

13 Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատանայէ, և էր ընդ գազանս. և հրեշտակք պաշտէին զնա:

14 Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս ՚ի գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝ և ասէր.

15 Թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք՝ և հաւատայէք յաւետարանն:

16 Իբրև անցանէր առ ծովեզերբն գալիլեացւոց, եւ տես զսիմովն և զանդրէաս զեղբայր սիմովնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ՚ի ծով. քանզի ձկնորք էին:

17 Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք զկնի իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան:

18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, գնացին զկնի նորա:

19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, հասս զյակովբոս զբեդեայ՝ և զՅովհաննէս զեղբայր նորա. և զնոսա ՚ի նաւին միջ կազմէին ուռկանս, և կոչեաց զնոսա:

13 Եւ նա ենտեղ էր քառասուն օր սատանայիցն փորձեալ. և գազաններովն հետ էր՝ և հրեշտակներ ծառայում էին նորան:

14 Եւ երբոր Յոհաննէս մատնեցաւ՝ Յիսուս եկաւ գալիլեա. Աստուծոյ աւետարանըն քարոզելով և ասում՝

15 Թէ ժամանակն կատարվել է, և Աստուծոյ արքայութիւնն հասել է. ապաշխարեցէք՝ և աւետարանին հաւատացէք:

16 Երբոր գալիլեացոյց ծովի եզերքն (դրաչէն) մօտ անց էր կենում, տեսաւ սիմոնին և նորա անդրէաս եղբօրըն՝ որ նորանք ուռկաններըն (ճոռէբըն) ծովն էին քցել. ինչուր՝ ձուկըն բռնող էին:

17 Եւ Յիսուս նորանց ասաց. իմ եաւէս եկէք՝ և կանեմ ձեզ որ մարդկանց հոգսորդ լինիք:

18 Եւ շուտով ուռկաններըն թողին և նորա եաւէն գնացին:

19 Եւ ենտեղից որ մին քիչ առաջ գնաց՝ յակոբոս զեբեդեանին և նորա Յոհաննէս եղբօրըն տեսաւ. երբոր նորանք նաւի մէջն ուռկաններըն շինում էին՝ և նորանց կանչեց:

20 Եւ վազվազակի թողեալ
զՆաւսն իւրեանց զդեղեցոս
ի նաւին վարձկանացն հան-
դերձ, գնացին զհետ նորա։
21 Եւ մտանեն ի կափառ-
նաում, և իսկ և իսկ ի շաբա-
թուն մտեալ ի ժողովուրդն,
ուսուցանէր զնոսա։
22 Եւ զարմանային ընդ
վարդապետութիւն նորա, զի
ուսուցանէր զնոսա իբրև իշ-
խանութեամբ՝ և ոչ որպէս
դպիրքն։

23 Եւ էր ի ժողովրդեանն
նոցա այր մի, յորում այս
պիղծ դեւր ի նմա. որ ա-
ղաղակեաց՝ և ասէ։
24 Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր
և քո՝ Յիսուս Նազովրեցի,
եկիր կորուսանել զմեզ. գի-
տեմ զքեզ՝ ով ես սուրբդ
Աստուծոյ։
25 Սաստեաց ի նա Յիսուս՝
և ասէ. կարկեաց՝ և ել ի
նմանէ։
26 Եւ զարկեալ զնա այն
պիղծ. և աղաղակեաց ի ձայն
մեծ, և ել ի նմանէ։

27 Եւ զարմացան ամենե-
քեան, մինչև հծծել ընդ մի-
մեանս՝ և ասել. զի՞նչ է այս
նոր վարդապետութիւն, զի
20 Եւ շուտով իրանց զե-
րեզեցոս հօրըն վարձկաննե-
րին հետ նաւի մէջն թողին,
և նորա եաւէն գնացին։
21 Եւ մտին կափառնայում՝
և շուտով շաբաթի օրուն
ժողովարանի մէջն մտաւ՝ և
սովորցնուածքը նորանց։
22 Եւ զարմանուածքին նո-
րա վարդապետութեանն վե-
րայ. ինչուորՙ ինչպէս իշխա-
նութեամբ էր սովորցնում
նորանց՝ և ոչ թէ նորանց
կարդացօղներին պէս։
23 Եւ նորանց ժողովարա-
նի մէջն մին մարդ կար՝ որ
պիղծ դեւ կար նորանում. որ
աղաղակեց և ասաց։
24 Թո՛ղ արա՝ դու ի՞նչ
բան ունիս մեզ հետ՝ Յիսուս
Նազովրեցի. եկիր որ մեզ կորցը-
նես. գիտուամինք քեզ (թէ) ով
ես դու՝ Աստուծոյ սուրբդ։
25 Յիսուս նորան սաստեց՝
և ասաց. պապանձվիՙր՝ և դո-
րանից դուրս եկ։
26 Եւ պիղծ դեւն նորան
գետինն զարկեց. և մեծ ձայ-
նով աղաղակեց, և նորանից
դուրս եկաւ։
27 Եւ ամէնքն զարմացան
մինչև որ իրար հետ քափաս-
լով հարցնուամէին՝ և ասում.
ես ի՞նչ նոր վարդապետու-

իշխանութեամբ և այսոց պղծոց սատակ՝ և հնազանդին սմա ։

28 Եւ եկ լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց ։

29 Եւ վազվազակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն ՚ի տուն սիմոնի և անդրեաս՝ Յակոբաւ և Յովհաննու հանդերձ ։

30 Եւ զոքանչ սիմոնի դնէր ջերմացեալ, և վազվազակի ասեն ցնա վասն նորա ։

31 Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա ։

32 Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս ։

33 Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն ։

34 Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պեսպես ախտից, և դեւս բազումս եհան. և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է ։

35 Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ՝ ել և

թիւն է՝ որ իշխանութեամբ պղծոյ դևերին էլ սաստուկ՝ և հնազանդվումն նոցան ։

28 Եւ նորա համբաւն գալիլեացւոց ամէն կողմերն դուրս գնաց ։

29 Եւ շուտով ժողովարանէն որ դուրս էլաւ, եկաւ սիմոնի և անդրէասի տունն՝ Յակոբի և Յոհաննէսի հետ ։

30 Եւ սիմոնի զոքանչն տենդով վերբնկած էր՝ և շուտով նորա համար ասացին նորան ։

31 Եւ մօտ եկաւ նորա ձեռքէն բռնեց՝ և նորան վերկացրուց. և տենդն թողեց նորան՝ և նա ծառայումէր նոցանց ։

32 Եւ երբոր իրիկուն էլաւ արեգական մընելոյ ժամանակն, ամէն հիւանդներն և դիւահարներն բերին նորա մօտ ։

33 Եւ բոլոր քաղաքն ժողովված էր դրանների առաջին։

34 Եւ շատ հիւանդներ բժշկեց կերպ կերպ ցաւերից՝ և շատ դևեր հանեց. և թոյլ չէր տալիս դևերին որ խօսին. ինչուոր՝ գիտումէին նորան որ Քրիստոս է ։

35 Եւ առաւօտանց որ լուսացաւ՝ վեր կացաւ դուրս ե-

գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս ։

36 Եւ գնաց ետես նորա սիմոն՝ և որ ընդ նմայն էին։

37 Եւ երբեմն գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ ։

38 Եւ ասէ ցնոսա · եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից · զի յայս իսկ ելեալ եմ ։

39 Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս, և զդևս հանէր։

40 Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր և ասէր · Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։

41 Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա՝ և ասէ ցնա · կամիմ՝ սրբեաց ։

42 Եւ երբեմն ասացն ցնա, վազվազակի գնաց ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ։

43 Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վազվազակի, և ասէ ։

կաւ և մին անապատ տեղ գնաց, և ենտեղ ալօթք էր անում ։

36 Եւ սիմոնն նորա եւևէն գնաց, և նորանք էլ որ նորա հետ էին ։

37 Եւ երբոր նորան գտին՝ նորան ասացին, թէ ամէնքն քեզ մարն են գալիս ։

38 Եւ նորանց ասաց · եկէք ուրիշ մօտիկ գիւղաքաղաքներն էլ գնանք, որ էնտեղ էլ քարոզեմ · ինչուր ես հենց սրա համար եմ եկած ։

39 Եւ ամէն գալիլեացոց երկրի մէջն նորանց ժողովարաններումն քարոզութիւն, և դևեր էր հանում ։

40 Մին բորոտ նորա մօտ եկաւ, աղաչում՝ ծունր էր դնում՝ և ասում · Տէր՝ եթէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել ։

41 Յիսուս էլ խղճալով ձեռն մեկնեց, նորան մօտեցաւ՝ և նորան ասաց · կամենում՝ սրբվիր ։

42 Եւ երբոր էս ասաց նորան, շուտով բորոտութիւնն գնաց նորանից՝ և սրբվեցաւ ։

43 Եւ նորան սաստելով՝ շուտով դուրս հանեց նորան, և ասաց նորան ։

ԺԱ Ձգնչէ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային. և մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա։

Ա5 Եւ նա եղեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ ևս կարօղ լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա ամենայն կողմանց։

ԳԼՈՒԽ Բ։

1 Եւ մտեալ դարձեալ ի կափառնաում յետ աւուրց,

2 Լուր եղև եթէ ի տան է. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։

3 Եւ գային առ նա՝ բերին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։

Դ Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխն անտի, քակեցին զտարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զա-

ԺԱ Ձգնչէ կաց խակի մին մարդոյ բան չասես. քայց գնա քահանային քեզ ցոյց տուր, և քո սրբութեան համար պատարագ արա՝ էն որ մովսէն հրամայեց՝ նորանց վկայութիւն լինելոյ համար։

Ա5 Եւ նա երբոր դուրս գնայ, սկսեց շատ քարոզել և էն բանըն տարածել, մինչև որ էլ նա կարօղ չէր յայտնի մտնել քաղաք՝ բայց դուրս անապատ (չէօլ) տեղերում էր. և ամէն կողմերիցն գալիս էին նորա մօտ։

ԳԼՈՒԽ Բ։

1 Եւ մինէլ որ մտաւ կափառնայում՝ մին քանի օրից ետև,

2 Լսեցաւ թէ տանն է. և շատ մարդիք ժողովվեցան՝ մինչև որ տեղ էլ չըկար և ոչ էլ դռան առաջին. և (Աստուծոյ) բանըն խօսում էր նորանց։

3 Եւ գալիս էին նորա մօտ՝ և մին անդամալուծ էին բերում չորս մարդով վեր առած։

Դ Եւ երբոր կարում չէին մօտենալ նորան՝ ամբոխի (խալխ) պատճառաւն՝ էն տան ծածկըն քակեցին, որ

ռաստաղն իջուցին զմահիճսն, յորում կայր անդամալոյծն ։

5 Եւ տեսեալ Յիսուսի զհաւատսն նոցա, ասէ ցանդամալոյծն . որդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո ։

6 Եւ էին ոմանք ի դպրացն անտի՝ որ անդ նստէին. և խորհէին ի սիրտս իւրեանց .

7 Զիա՞րդ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս . ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ միայն Աստուածն ։

8 Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ . զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր ։

9 Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի առ զմահիճս քո և երթ ի տուն քո ։

10 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն ։

11 Քեզ ասեմ, արի առ

տեղ որ Յն էր . և օձորքըն բաց արին և էն մահիճըն (աէօշէկըն) վեր բերին, որ նոքանուն անդամալուծն կար։

5 Եւ Յիսուս նորանց հաւատքըն տեսնելով՝ անդամալուծին ասաց . որդի թողք քո մեղքերդ թողված լինին քեզ ։

11 Եւ նորանք որ ձեզ չընդունին, և ձեզ ականջ չըդնեն, երբոր ենտեղիցն դուրս կըգնաք՝ ձեր ոտների փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն լինի։

12 Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն ։

13 Եւ դեւս բազումս հանէին, և օծանէին իւղով զբազումս հիւանդս՝ և բժշկէին զնոսա ։

14 Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտնի եղև անուն նորա. և ասէր, թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ ։

15 Այլք ասէին թէ եղիա է, իսկ այլքն՝ թէ մարգարէ է, կամ թէ իբրև զմի ի մարգարէից ։

16 Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես զդլուխն հատի զյովհաննու, սա է նա. յարեաւ ի մեռելոց ։

17 Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զյովհաննէս, և կապեաց զնա, և եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա, զի նա կին արար զնա ։

18 Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո ։

12 Եւ դուրս ելան, քարոզումէին՝ որ ապաշխարեն ։

13 Եւ շատ դեւեր էին հանումն, և շատ հիւանդներ իւղով օծումէին՝ և նորանց բժշկումէին ։

14 Եւ հերօդէս թագաւորն լսեց. (քանզի նորա անունն յայտնի էլաւ. և ասումէր՝ թէ յօհաննէս մկրտիչն մեռելների միջիցն յարութիւն առաւ, և նրահամար զօրութիւններ են լինում նորա նով ։

15 Ուրիշներն ասումէին՝ թէ եղիան է. և ուրիշներն՝ թէ մարգարէ է, կամ թէ մարգարէներիցն մէնին պէս ։

16 Երբոր հերօդէս լսեց, ասաց. սա յօհաննէսն է՝ որ նորա գլուխըն ես կարեցի. նա մեռելների միջիցն յարութիւն առաւ ։

17 Քանզի՝ ինքն հերօդէս ուղարկեց, յօհաննէսին բռնեց՝ և նորան կապեց՝ և դրաւ բանտի (չինաւի) մէջ՝ հերօդիայի համար, որ իրան եղբօր փիլիպպոսի կինն էր, պատճառն որ՝ նա իրան կին առաւ նորան ։

18 Քանզի՝ յօհաննէս հերօդէսին ասումէր՝ թէ օրէնք չէ քեզ՝ որ քո եղբօր կինըն ունենաս ։

19 Եւ հերովդեա ոխացեալ էր ընդ նմա, և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր։
20 Զի հերովդէս երկնչէր ՚ի յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ. և սպասէր նմա. և լուեալ ՚ի նմանէ բազում ինչ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա։

21 Իբրև օր մի լինէր պատշաճ, յորժամ ընթրիս տայր հերովդէս յաւուր ծնընդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց գալիլեացւոց.

22 Եւ ՚ի մտանել դստերն հերովդիայ՝ և ՚ի կաքաւել, հաճոյ եղև հերովդի և բազմականացն։ Ասէ թագաւորն ցաղջիկն. խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տայ քեզ։
23 Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն, տայ քեզ, մինչև ցկէս թագաւորութեան իմոյ։
24 Նա եւեալ ասէ ցմայր իւր՝ զի՞նչ խնդրեսցիմ. և նա ասէ, զգլուխն Յովհաննու մկրտչի։

19 Եւ հերովդիան նորա դէմ ոխ էր պահում, և ուզում սպանել նորան՝ և չէր կարում։
20 Պատճառնոր՝ հերովդէսն յովհաննէսից վախումէր. ինչուորը՝ նորան արդար և սուրբ մարդ էր ճանաչում. և նորան մխիթ էր տալիս. և նորանից շատ բան լսելով՝ անուշիկ, և քաղցրութեամբ նով ականջ էր դնում նորան։
21 Երբոր մին յարմար օր պատահէց, որ ժամանակ հերովդէս իրան ծնընդի օրուայն ընթրիք (հացկերոյթ) էր տալիս իրան իշխաններին և զօրապետներին և գալիլեացոց մեծամեծներին։
22 Եւ հերովդիայի աղջիկն որ մտաւ՝ և պար եկաւ, հերովդէսին և նորա հետ նստածներին հաճոյ եղաւ. թագաւորն ասաց աղջկանն. խնդրիր ինձանից ինչ որ կամենաս, և կըտամ քեզ։
23 Եւ շատ անգամ երդում կերաւ նորան՝ թէ ինչ բան որ դու խնդրես ինձանից, կըտամ քեզ, մինչև իմ թագաւորութեան կէսն։
24 Նա դուրս գնաց և իրան մօրն ասաց՝ ի՞նչ խնդրեմ. և նա ասաց, Յովհաննէս մկրտչի գլուխը։

25 Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ . կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ՚ի վերայ սկուտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի :

26 Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն , այլ վասն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա :

27 Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ , և հրամայեաց բերել զգլուխն նորա . և չբաւ գլխատեաց զնա ՚ի բանտին :

28 Եւ եբեր զգլուխն նորա սկուտեղ՝ և ետ ցաղջիկն . և աղջիկն տարաւ ետ մօր իւրում :

29 Իբրև լուան աշակերտքն նորա , եկին բարձին զմարմինն՝ և եդին ՚ի գերեզմանի:

30 Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին :

31 Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք դուք առանձինն յանապատ տեղի , և հանգիջիք սակաւ մի. զի էին բազումք որ երթային և գային , և հայց անդամ չժամանէին ուտել :

25 Եւ շուտով մինել մտաւ թագաւորի մօտ՝ և ասաց . կամենումիմ որ հիմիկ շուտով սկուտեղի (պինախ) վերայ տաս ինձ յօհաննէս մկրտչի գլուխը :

26 Եւ թագաւորն շատ տրտմեցաւ . բայց իրան երդմունքի և կանչած մարդկանցն համար չկամեցաւ անարգել նորան :

27 Եւ թագաւորն շուտով դահիճ (ձէլլադ) ուղարկեց և հրամայեց , որ նորա գլուխը բերէ. և գնաց նորա գլուխը կտրեց բանտի միջումն :

28 Եւ նորա գլուխը սկուտեղով (պինախով) բերաւ՝ և աղջկանն տուաւ . և աղջիկն տարաւ տուաւ իրան մօրն :

29 Երբոր նորա աշակերտներն լսեցին, եկին նորա մարմինը վերկալան՝ և գերեզմանի մէջ դրին :

30 Առաքեալներն Յիսուսի մօտ ժողովվեցան , և նորան պատմեցին ամէն ինչ որ արին և ինչ որ սովորցրին :

31 Եւ Յիսուս նորանց ասաց . դուք առանձին անապատ (չէօլ) եկէք, և մինչիչ հանգիստ առէք . պատճառն որ՝ շատ մարդիք էին որ գնում էին և գալիս էին , և

32 Եւ գնացին նաւուս յա-
նապատ տեղի առանձինն :

33 Եւ տեսին զնոսա ոմն եր-
թայն, և զգացին բազումք.
և հետի յամենայն քաղաքաց
խուռն ընթանային անդր, և
մերձենային առ նոսա :

34 Եւ ելեալ եհես ամբոխ
բազում, և գթացաւ ՚ի նո-
սա, զի էին իբրև ոչխարք՝ ո-
րոց ոչ իցէ հովիւ. և սկսաւ
ուսուցանել զնոսա յոյժ :

35 Եւ իբրև բազում ժամ
եղև, մատուցեալ աշակերտքն
առ ի. տեղիս անապատ է,
մինչդեռ աւուր կայ,

36 Արձակեա զժողովուրդսդ,
զի երթեալ շուրջ յագա-
րակս և ՚ի գեօղս՝ գնեսցեն
իւրեանց ինչ ուտիցեն, զի
առ ուտել ինչ ոչ ունին :

37 Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա. դուք տուք դո-
ցա ուտել. ասեն ցնա՝ եր-
թիցուք գնեսցուք երկերիւր
դահեկանի հաց, և տացուք
դոցա ուտել :

հաց ուտելոյ ժամանակ էլ
չունէին :

32 Եւ նաւով առանձին ա-
նապատ տեղ գնացին :

33 Եւ տեսին նորանց որ
գնում էին՝ և շատ մարդիք ի-
մացան. և ամէն քաղաքնե-
րից իրար վերայ դիզված ո-
տով կնաեղ էին վազում, և
նորանց մօտենում էին :

34 Եւ դուրս եկաւ, շատ ամ-
բոխ (ձալն) տեսաւ, և նո-
րանց վերայ խղճաց. ինչուոր
ոչխարներին պէս էին, որ հո-
վիւ (չոպան) չունին. և սկսեց
նորանց շատ բան սովորցը-
նել :

35 Եւ երբոր շատ ժամա-
նակ անցաւ՝ աշակերտներն
մօտ եկին և ասացին. Ես
տեղս անապատ է. դեռ քա-
որ ցերեկ է,

36 Թող արա էդ ժողո-
վուրդներըդ որ չորս կողմով
էլած շէներն և գիւղերն
գնան՝ իրանց համար գնեն
ինչ որ ուտելու լինին. պատ-
ճառնոր՝ էստեղ ուտելոյ բան
չունին :

37 Նա պատասխան տուաւ
և նորանց ասաց. դուք տը-
ւէք դորանց ուտել. նորան
ասացին՝ գնանք երկու հա-
րիւր դահեկանի հաց գնինք,
և դորանց տանք՝ որ ուտեն :

38 Ասէ ցնոսա · քանզի նկանակ ունիք՝ երիվայք տեսէք · իբրև պիտացին , ասեն ցնա՝ հինգ՝ և երկուս ձկունս։

39 Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար խոտոյ ։

40 Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր և ուր յիսուն ։

41 Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, համբեցաւ յերկինս , օրհնեաց՝ մանրեաց զնկանակսն՝ և ետ աշակերտան ի սրկեն նոցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն ։

42 Կերան և յագեցան ,

43 Եւ բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և ի ձկանց անտի ։

44 Եւ էին որ կերանն՝ իբրև արք հինգ հազար ։

45 Եւ նոյնժամայն ձեռնհաց զաշակերտան մտանել ի նաւ , և յառաջադոյն քան զնա երթալ յայնկոյս ի բեթսայիդա , մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ ։

46 Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ եւ ի լեառն կալ յաղօթս ։

38 Նորանց ասաց · քանի՞ հատ հաց ունիք՝ գնացէք տեսէք · երբոր գիտացին , նորան ասացին · հինգ՝ և երկու ձուկն ։

39 Եւ հրամայեց նորանց , որ դաս դաս կանանչ խոտի վերայ նստին ։

40 Եւ դաս դաս նստեցին մինտեղ հարիւր՝ և մին տեղ յիսուն ։

41 Եւ էն հինգ հացըն և երկու ձուկըն առաւ , դէպի երկինքն նայեց՝ օրհնեց , էն հացերըն կոտորեց , և աշակերտներին տուաւ՝ որ քցեն նորանց առաջն · և էն երկու ձուկըն բաժանեց ամէնին ։

42 Կերին և կըշտացան ,

43 Եւ մնացած կտորներըն տասներկու քոթոց լիքն վեր կալան , և ձկներիցն էլ ։

44 Եւ նորանք որ կերին՝ հինգ հազարի չափ մարդիք էին ։

45 Եւ շուտով աշակերտներըն վռազացրուց , որ նաւ մտնեն , և իրանից առաջ էն կողմն բեթսայիդա գնան՝ մինչև ինքն ժողովուրդներն արձակէ ։

46 Եւ նորանցից բաժանվեցաւ , և վերկաւ սարն՝ որ աղօթք անէ ։

47 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ ծովուն, և ինքն ի ցամաքի ։

48 Եւ տեսս զնոսա հոգմա- կոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և ջուր- րորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի վերայ ծովուն, և կամէր զանց առ- նել առ նոքօք ։

49 Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, հա- մարեցան թէ առաչօք ինչ լինիցի, և զաղաղակ բարձին։

50 Քանզի ամենեքեան տե- սին զնա՝ և խռովեցան. և նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալե- րեցարուք, ես եմ՝ մի երկն- չիք ։

51 Եւ ել ի նաւն առ նո- սա, և դադարեաց հողմն ։ Եւ առաւել ևս յիմարեալ էին ի միտս իւրեանց, և զար- մանային յոյժ.

52 Քանզի և ի վերայ հա- ցին ոչ խմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ ։

53 Եւ իբրեւ անցին կայն- կուս, եկին յերկիրն գեննե- սարեթ ։

47 Եւ երբոր իրիկուն է- լաւ՝ նաւն ծովի մէջն էր, և ինքն ցամաքումն ։

48 Եւ նորանց տեսաւ՝ որ նաւ վարելոյ ժամանակն ա- լեկոծվումին. ինչուոր քա- մին ներհակ էր նորանց. և գիշերի չորս բաժընի ժամա- նակն ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ, և ուզու- մէր որ նորանցմէ անցկենայ։

49 Նորանք երբոր տեսին՝ որ ծովին վերայ գնումէր՝ կարծեցին թէ աչքի երևոյթ բան լինի, և ձայնով աղա- ղակ բարձրացրին ։

50 Ինչուոր՝ ամենքն նորան տեսին՝ և շըփոթվեցան. և նա շուտով նորանց հետ լսե- սեց և ասաց. սրտապինտ կա- ցէք, ես եմ՝ մի վախենաք ։

51 Եւ վեր էլաւ նաւն նո- րանց մօտ՝ և քամին հան- դարտեց. և իրանց մտքնե- րումն էլ աւելի չիմարվածէին, և շատ պարմանումէին.

52 Ինչուոր՝ էն հացին վե- րայ էլ չիմացան. պատճառն որ՝ նորանց սիրտն թմրած էր ։

53 Եւ երբոր էն կողմն անց- կացան, գեննեսարեթի եր- կիրն եկին ։

54 Եւ երբեւ եկին ՚ի նաւէն անտի՝ իսկ եւ իսկ ծանեան զնա ամենայն ազգ տեղւոյն այնորիկ ։

55 Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ ։

56 Եւ ուր եւ մտանէր ՚ի գիւղս կամ ՚ի քաղաքս կամ յայգարակս, ՚ի հրապարակս դնէին զհիւանդսն եւ աղաչէին զնա զի զգեղ ՚ի բդեղոյս հանդերձից նորա միւնոյն։ եւ որ միանգամ միւնոյնն՝ փրկէին ։

54 Եւ երբոր էն նաւէյն դուրս ելին, էն տեղի մարդիքն շուտով ճանաչէյին նոքան ։

55 Եւ էս կողմն էն կողմն ամէն գաւառն վազելով սկսէյին հիւանդներին մահճակներով (աէօշէնէօվ) բերել՝ որտեղ որ լսուէյին՝ թէ էնտեղ է ։

56 Եւ որտեղ որ մանուէյր դիւղեր կամ քաղաքներ կամ շէներ՝ յաւազարներըն վրայներրի մէջն էին դնում, և նորան աղաչուէյին՝ որ լինի թէ նորա շորերի ծայրին (փշշէրին) մօտենան. և ամէն նոքանք որ մօտեցան՝ փրկվէյան ։

ԳԼ · Ը ։

1 Եւ ժողովին առ նա փարիսեցիքն և ոմանք ՚ի դպրացն՝ որ եկեալ էին ՚ի Երուսաղէմ ։

2 Եւ տեսեալ զոմանս յաշակերտաց նորա՝ զի խառնակ ձեռօք, այսինքն է՝ անլուայ ուտէին հացս, բամբասէին ։

3 Զի փարիսեցիքն և ամենայն հրէայք՝ եթէ ոչ

1 Եւ ժողովվէյան նորա մօտ փարիսեցիներն և գրագայօղներիցն միւրանիան՝ որ երուսաղէմիցն էին եկել ։

2 Եւ երբոր տեսին՝ որ նորա աշակերտներիցն միւ քանիսն՝ խառնըված ձեռքով, այսինքն՝ առանց լուանալոց հայ էին ուտում, բամբասէյին ։

3 Պատճառնոր՝ փարիսեցիներն և ամէն հրէաներն

բռնակիր լուսանցն զնեցաս, հայց ոչ ուսանն. քանզի ուսնին պատանդումի իւն ձերոցն։

4 Եւ ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուսանն. և այլ ինչ բազում է՝ զոր ընկալան ունել, մկրտութիւնս բաժակաց և սոսմանաց և պղնձեաց և մահճաց։

5 Ապա հարցանէն ցնոսա փարիսեցիքն և դպիրք՝ թէ ընդէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդումի նախ ձերոցն. այլ խառնակ ձեռօք հայց ուտեն։

6 Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա՝ թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասացեալ. ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտք նոցա հեռացեալ ի բացեայ են ինէնից։

7 Զուր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս։

8 Թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան (ջրհոսանէրն)՝ թէ որ բաւարն յոյժ չըլուանան ձեռներըն՝ հայց չեն ուտում. ինչուր ձերերի աւանդումի իւնըն են պահում։

4 Եւ փողոցիցն որ գալիս են՝ եթէ առաջ չըլուացվին, չեն ուտում. և ուրիշ էլ շատ բան կայ, որ ընդունելու պահել. բաժակների (ճաւէրի) և փարչերի և պղընձէ ամանների և մահիճների (ռէօշէնէրի) լուացմունքներ։

5 Ճեաց փարիսեցիներն և կարդացօղներն հարցրին նորան՝ թէ ինչի՞ քո աշակերտներդ ձերերի աւանդութեան պէս չեն դնում. այլ խառնըված ձեռքով հայց են ուտում։

6 Նա պատասխան տուաւ և նորանց ասաց՝ թէ եսայի լաւ մարգարէացաւ ձեզ կեղծաւորներիդ վերայ՝ ինչպէս որ ասացեալ է ժողովուրդս պատուում ինձ, և նորանց սրտերն ինձանից հեռացած ջոկված են։

7 Զուր աստեղն են պաշտում ինձ. մարդկանցից պատուերած վարդապետութիւններն են սովորցնում։

8 Աստուծոյ պատուիրանքըն թողած՝ մարդկանց ա-

կան աւանդութիւն · ինչպէս լուացմունս ամանաց և բաժակաց , և այլոց նմանեաց սոյն առնէք բազումս :

9 Եւ ասէ ցնոսա · բարւոք խոտեք զպատուիրանն Աստուծոյ , զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք :

10 Ջի Մովսէս ասէ · պատուեա զհայր քո և զմայր , և որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ , մահու վախճանեսցի :

11 Եւ դուք ասէք · եթէ ասիցէ որ ցհայր կամ ցմայր՝ կորբան , որ է պատարագ , զոր ինչ օգտեսցիս :

12 Եւ ոչ եւս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ մօր :

13 Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեն , զոր աւանդեցիք · և բազում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք :

14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն , ասէ ցնոսա · լուարուք ինձ ամենեքեան՝ և ի միտ առէք :

15 Ոչ ինչ արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա , այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ պղծէ

աւանդութիւնքն էք պահում , փարչերի և ամանների լուացմունքներ՝ և սորանց նման եւ շատ բաներ էք անում :

9 Եւ նորանց ասաց · լաւ էք անարգում Աստուծոյ պատուիրանքըն , որ ձեր աւանդութիւնըն պինդ պահէք :

10 Ինչուր՝ Մովսէս ասաց · քո հօրըդ և մօրըդ պատուիր , և նա որ հօրիցն կամ մօրիցն չարախօսութիւն կանէ , թող մահով մեռնի :

11 Եւ դուք ասումէք՝ թէ որ մինն հօրն կամ մօրն ասէ թէ՝ կորբան, այսինքն պատարագ (է) էն՝ որ ինձանից պետք է շահիս :

12 Եւ էլ թոյլ չէք տալիս նորան՝ որ մին բան անէ հօրն կամ մօրն :

13 Եւ Աստուծոյ բանըն անարգումէք ձեր աւանդութիւնով որ աւանդեցիք · և ուրիշ էլ շատ բաներ՝ որ սրան նման է՝ անումէք :

14 Եւ ամէն ժողովուրդըն իրան մօտ կանչեց , և նորանց ասաց · ամէնքդ ինձ լսեցէք՝ և մտքներդ առէք :

15 Իսկի մին բան չկայ որ դրսիցն մարդոյ մէջ մտած՝ կարօղանայ պղծել նորան · այլ որ նորանից դուրս է գա-

զմարդն։

16 Որ ունիցի ականջս լսե-
լոյ՝ լուիցէ։

17 Իսկ երբեմն եհաս ի տուն
յամբոխել անտի, հարցանէին
ի նմա աշակերտքն վասն ա-
ռակին։

18 Իսկ ասէ ցնոսա. այդ-
պէս և դուք անմիտ էք, ոչ
իմանայք՝ եթէ ամենայն որ
արտաքուստա ի ներքս մտանէ
ի մարդ, ոչ կարէ զնա պղծել։

19 Զի ոչ ելէ ի սիրտ
նորա մտանէ, այլ յորովայն՝
և արտաքս ելանէ, և սրբէ
զամենայն կերակուրսն։

20 Իսկ ասէր, թէ որ ինչ
ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ
զմարդ։

21 Զի ի ներքուստա ի
սրտէ մարդկան խորհուրդք
չարութեան ելանեն. շնու-
թիւնք, պոռնկութիւնք,

22 գողութիւնք, սպանու-
թիւնք, ագահութիւնք, չա-
րութիւնք, նենգութիւք, գի-
ջութիւնք, չարակնութիւն,
հայհոյութիւն, ամբարտա-
ւանութիւն, անզգամութիւն։

23 Ա՛յս ամենայն չարիք ի

լեա՝ էն է՝ որ մարդոյն պղծու-
մէ։

16 Իւր որ լսելոյ ականջ ու-
նի՝ լսիցէ։

17 Իսկ երբոր էն ամբոխէն
(խալխէն) տուն եկաւ՝ աշա-
կերտներն հարցրին նորան էն
առակին համար։

18 Իսկ նորանց ասաց. էդ-
պէս դուք էլ անխելք էք.
չէք իմանում՝ թէ ամէն ինչ
որ դրսիցն է մտնում մարդ-
ոյ մէջն՝ չի կարող պղծել
նորան։

19 Պատճառնոր՝ ոչ թէ
նորա սիրտն է մտնում, բայց
փորն՝ և դուրս է գալիս, և
ամէն կերակուրներըն սրբում։

20 Իսկ ասումէր՝ ինչ որ
մարդուցն դուրս է գալիս՝
էն է պղծում մարդոյն։

21 Ինչուռ՝ ներսից մարդ-
կանց սրտիցն չար խորհուրդ-
ներ են դուրս գալիս, շնու-
թիւններ, պոռնկութիւններ,

22 գողութիւններ, սպա-
նութիւններ, ագահութիւն-
ներ, չարութիւններ, նեն-
գութիւններ, պիղծ ցանկու-
թիւններ, նախանձութիւն,
հայհոյութիւն, ամբարտաւա-
նութիւն, անզգամութիւն։

23 Իսկ ամէն չար բաներս

նեբքուատ եւ անոն, և պղծեն զմարդ ։

24 Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս տիւրոսի և սիդովնի · և մտեալ ի տուն՝ ոչ ումեք կամէր գիտնել, և ոչ կարաց ծածկել ։

25 Լուաւ կինն մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յոգւոյ պղծոյ · եկն անկաւ առաջի նորա ։

26 Եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ ազգով · և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ նորա ։

27 Եւ Յիսուս ասէ ցնա · Թո՛ղ առաջ՝ նախ յագեսցին մանկունքն · զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց ։

28 Նա պատասխանի եւ ասէ · Տէր՝ և շունք ի վըշտանաց սեղանոյ մանկանցն կը ըակիրեն ։

29 Եւ ասէ ցնա · վասն այդր բանի ւրէթ, եւ դեւն ի դստեր իդ քումմէ ։

30 Գնաց ի տուն իւր, և գտիր զդեւն ելեալ զգեն · և զդուստրն, զի անկեալ դնէր ի մահիճս ։

նեբքուատ եւ անոն, և պղծեն զմարդ ։

24 Եւ ենտեղոյն վերկայաւ՝ և եկաւ տիւրոսի և սիդոնի կողմերն · և տուն որ մտաւ՝ չէր ուզում որ մըտնի յայտնըվին, և չըկարաց ծածկըվիլ ։

25 Մին կին նորա համար լուց՝ որ նորա աղջկին պիղծ դևից չարչարված էր · եկաւ և նորա առաջին ընկաւ ։

26 Եւ էն կինն հեթանոս էր՝ փիւնիկեցի ասորոց ազգից · և աղաչում էր նորան՝ որ դևըն ելան աղջկանից դուրս հանէ ։

27 Եւ Յիսուս նորան ասաց · Թո՛ղ՝ որ առաջ երեխաներն կըշտանան · ինչուր՝ լաւ չէ՝ երեխաների հացն առնել և շներին գցել ։

28 Նա պատասխան տուաւ և ասաց · Տէր՝ շներն էլ երեխաների սեղանի փըշրանքներից են կերակրըվում ։

29 Եւ նորան ասաց · Եղ խօսքիդ համար գնա, դևն դուրս եկաւ քո աղջկանից ։

30 Գնաց իրան տունն, և գտաւ որ դևն դուրս էր ելել, և աղջիկը՝ որ մահճի (ԽԵՕՇՀՒ) վերայ վեր ընկած էր ։

31 Եւ եկեալ Միւսանգամ ի սահմանացն տիւրոսի եւ սիդովնի, եւ եկն ի ծովեզերն գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի դեկապօլիս ։

32 Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր . եւ աղաչէին զի ձեռն դիցէ ի վրա նորա ։

33 Եւ առեալ զնա ՚ի միոյ կողմանէ՚ի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ եւ նեղուք անդր, եւ կալաւ զլեզուէ նորա ։

34 Հայեցաւ յերկինս՝ յոգոց եհան՝ եւ ասէ . եփփաթէայ՝ որ է, բացիր ։

35 Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, եւ լուծան կապանք լեզուի նորա . եւ խօսէր ուղիղ ։

36 Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն . եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին.

37 Եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին . զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ եւ համրոյ խօսել ։

34 Եւ մինէ տիւրոսի եւ սիդովնի կողմերէն գալիլեա դարձաւ, եւ գալիլեացւոց ծովի եզերն (գաւառն) եկաւ՝ դեկապօլիսի միջին կողմերն ։

32 Եւ մին խուլ (հաս) եւ համր (լռնէ) (մարդ) բերին նորա առաջը. եւ աղաչեցին որ ձեռքն դնէ նորա վրայ ։

33 Եւ նորան ամբոխէն (խուռնէն) մին կողմն տարաւ, իրան մատներն նորա ականջներին մէջ տարաւ՝ եւ թքեց էտեղ, եւ նորա լեզուին բռնեց ։

34 Երկինքն նայեց, յոգոց հանեց եւ ասաց . եփփաթա՝ որ է ասել, բացվի՛ր ։

35 Եւ շուտով հենց էն ժամուն (ահաւասիկ) նորա ականջները բացվան, եւ լեզուն կապանքներն արձակվեցան. եւ շիտակ խօսեցաւ ։

36 Եւ նորանց պատուիրեց՝ որ խակի մընին չասեն . եւ որչափ նա պատուիրեցաւ նորանց, նորանք էլ աւելի քարոզեցին .

37 Եւ չափից էլ աւելի զարմանեցան եւ ասում . սա ամէն բան լաւ գործեց . ինչուր՝ խուլերին (հաւէրին) լսել է տալիս՝ եւ համրերին (լռնէրին) խօսել ։

ԳԼ · Ը ։

1 Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել · կոչեաց զաշակերտսն իւր՝ և ասէ ցնոսա ։

2 Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ · զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, և ոչ ունին զինչ ուտիցեն ։

3 Եւ եթէ արձակեմ զդոսա նոքիս ի տունս իւրեանց՝ նքթիցեն ի ճանապարհի· զի ոմանք ի դոցանէ ի հեռաստանէ եկեալ են ։

4 Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա· ուստի կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ ։

5 Եւ հարցանէր զնոսա · քանի՞ նկանակ հաց ունիք · և նոքա ասեն՝ եօթն ։

6 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ երկրի · և առեալ զեօթն նկանակն՝ գոհացաւ՝ եբեկ, և ետայր յաշակերտսն զի արկցեն · և արկին առաջի ժողովրդեանն ։

7 Եւ ձկունս սակաւ ունէին · և զայն ևս օրհնեաց, և հրամայեաց արկանել ։

1 Ընդ օրերսն յորժամ միանգամ շատ ժողովուրդ կար, և բան չունէին ուտելոյ · իրան աշակերտաներըն կանչեց՝ և ետ բանոյ ասաց ։

2 խղճամ գալիս է էդ ժողովրդիդ վերայ · ինչուար՝ հիմիկ երեք օր է՝ որ ինձ մօտ են, և բան չունին որ ուտեն։

3 Եւ եթէ որ նորանց տանից արձակեմ դէպի իրանց տունն՝ տկարանալ ճանապարհումն · ինչուար՝ դորանցից կան, որ հեռու տեղից են եկել ։

4 Նորա աշակերտներն պատասխան տուին նորան · որտեղից կարող ես հացով կըշտացնել դորանց էս անապատ (չէօլ) տեղումն ։

5 Եւ նորանց հարցնում՝ եթէ քանի՞ հատ հաց ունիք · և նորանք ասացին՝ եօթն ։

6 Եւ ժողովրդին հրամայեց որ երկրի վերայ նստին · և էն եօթն հացըն առաւ՝ գոհացաւ, կտրեց, և աշակերտներին էր տալիս՝ որ բցեն · և բցեցին ժողովրդի առաջը։

7 Եւ մին քիչ ձուկըն ունէին · և նորան էլ օրհնեց, և հրամայեց որ բցեն ։

8 Կերան և յագեցան, և բարձին զնշխարս կտորոյն եօթն զամբիլ։

9 Եւ էին որ կերանն՝ իբրև չորք հազարք. և արձակեաց զնոսա։

10 Եւ նոյնժամայն մտեալ ՚ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն ՚ի կողմանս դաղմանուենայ։

11 Եւ ելին փարիսեցիքն՝ և սկսան վիճել ընդ նմա, և խնդրեցին ՚ի նմանէ նշան յերկինից՝ փորձելով զնա։

12 Եւ ողբացաւ յոգի իւր՝ և ասէ. զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այսմիկ։

13 Եւ թողեալ զնոսա. դարձեալ եմուտ ՚ի նաւ՝ և գնաց յայնկոյս։

14 Եւ մոռացան հայ բառնալ. բայց միայն մի նկանակ ունէին ընդ իւրեանս ՚ի նաւին։

15 Եւ պատուիրէր նոցա և ասէր. զգոյշ եղերուք ՚ի խմորոյ անաի փարիսեցւոց և ՚ի խմորոյ Հերովդիանոսից։

16 Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հայս ոչ ունիմք։

8 Կերին և կըշտացան. և աւելցած կտորներըն եօթն զամբիւղ վերկալան։

9 Եւ նորանք որ կերին՝ չորս հազարի չափ էին. և նորանց արձակեց։

10 Եւ շուտով էն ժամուն (ահաւոտիկ) աշակերտներին հետ նաւ մտաւ՝ և դազմանուձանայի կողմերն եկաւ։

11 Փարիսեցիներն եկին՝ և սկսեցին նորա հետ հակառակել. և նորան փորձելով՝ նորանից մին նշան էին խնդրում երկնքից։

12 Եւ նա շատ տրտմեցաւ իրան սրտումն՝ և ասաց. Ինչ է, որ էս ազգս նշան է խընդրում. Ճշմարիտըն ասում եմ ձեզ, թէ որ էս ազգիս նշան տրվի։

13 Նորանց թողից. մինել նաւ մտաւ՝ և էն կողմն գնաց։

14 Եւ մոռացան իրանց հետ հաց վերառնել՝ բայց մէկակ մին հաց ունէին իրանց հետ նաւի մէջն։

15 Եւ նորանց պատուիրեաց և ասում. զգոյշ կացէք էն փարիսեցիների խմորից և հերովդեսեանների խմորից։

16 Եւ իրար հետ միտք էին անում և ասում, թէ նրա համար՝ որ հաց չունինք։

17 Գնացէք Յիսուս՝ և ա-
սէք ցնոսա . գլի խորհիք՝ ի
սիրտս ձեր թ՚երահաւատք՝
թէ հաց ոչ ունիք . տակա-
ւին ոչ համանայք և ոչ յի-
շէք . ապշութիւն ունի գսիրտս
ձեր :

18 Աչք գոն՝ և ոչ տեսա-
նէք , ականջ են՝ և ոչ լսէք,
և ոչ համանայք տակաւին , և
ոչ յիշէք :

19 Յորժամ գհինգ նկա-
նակն՝ ի հինգ հազարսն , և
քանի՞ սակաւի լի բարձիք
գկտորոցն . և ասեն , երկո-
տասան :

20 Ւրե յորժամ գեօթն
նկանակն՝ ի չորս հազարսն ,
քանի՞ զամբիղ լի բաւնէք
գկտորոցն . և նորա ասեն ,
եօթն :

21 Ւրե ասէ ցնոսա . իսկ
գնաջդ ոչ համանայք :

22 Գան՝ ի բեթսայիդա .
և ածեն առաջի նորա կոյր
մի , և աղաչէին գնա՝ գի մեր-
ձենայի՝ ի նա :

23 Ւրե առեալ գձեռանէ
կուրին՝ եհան արտաքոյ շի-
նին , եմուռք յաչս նորա , և
ձեռն եդ՝ ի վերայ նորա , և
հարցանէր ցնա՝ թէ տեսա-
նիցէ լինչ :

17 Յիսուս իմացաւ և նո-
րանց ասաց՝ թէ ի՞նչ էք միտք
անում ձեր սրանովդ՝ ով
թերահաւատանիք , թէ հաց
չունիք . դեռ չի՞ք համառում
և չի՞ք յիշում . միտքն ձեր
թիւն քառնել է ձեր սրտե-
րըն :

18 Աչք ունիք՝ և չէք տես-
նում . ականջ ունիք՝ և չէք
լսում . և դեռ չէք համա-
նում , և չէք յիշում :

19 Որ ժամանակ էն հինգ
հացըն հինգ հազարին համար
(կտրեցի), քանի՞ զթոց լիքն
վեր առիք նորա կտորներըն .
և նորան ասացին՝ տասներ-
կու :

20 Ւրե որ ժամանակ եօթն
հացըն չորս հազարին համար,
քանի՞ զամբոց լիքն վեր առիք
նորա կտորներըն . և նորանք
ասացին , եօթն :

21 Ւրե նորանց ասաց . ապա
ի՞նչպես չէք համառում :

22 Բեթսայիդա եկին , և
նորա առաջն մին կոյր բերին,
և նորան աղաչումէին՝ որ մո-
տենայ նորան :

23 Ւրե կուրի ձեռքըն
բռնեց՝ հանեցն դուրս հա-
նեց , նորա աչքերին մէջ
թքեց , և ձեռքն դրաւ նորա
վերայ . և նորան հարցնումէր՝
թէ մին բան տեսնումէ :

24 Ասացաւ՝ և ասէր. տե-
սանեմ զմարդիկս՝ զի շրջին
իբրև զծառս։

25 Դարձեալ եդ ձեռս ի
վերայ աչաց նորա՝ եբաց, և
տեսանէր. ողջացաւ՝ և տե-
սանէր համարձակ զամենայն։

26 Արձակեաց զնա ի տուն
իւր՝ և ասէ. ի շէնդ մի
մտանիցես, այլ երթ ի տուն
քո. և յորժամ ի շէնն
մտանիցես՝ մի ումեք ասիցես
ի շինին։

27 Եւ ել Յիսուս աշակեր-
տօքն հանդերձ ի շէնս կե-
սարեայ փիլիպպեայ. և ի
ճանապարհին հարցանէր զա-
շակերտսն և ասէր. զի ոս-
տեք առնեն զինէն մարդիկ՝
լինել իցեմ։

28 Նոքա եւս պատաս-
խանի՝ և ասեն. զյովհաննէս
մկրտիչ, և այլք՝ զեղիա, և
այլք՝ զմի որ ի մարգարէից
անտի։

29 Նա ցնոսա. իսկ դուք
զի ոստեք ասէք զինէն՝ լինել
իցեմ. պատասխանի ետ պետ-
րոս, և ասէ ցնա. դուն ես
Քրիստոսն։

30 Եւ սաստեաց ի նոսա՝
զի մի ումեք ասիցեն զնմանէ։

24 Ասացեալ՝ և ասէր. մարդկանց տեսանումն՝ որ
ծառերի պէս մեզ են գալիս։

25 Մինէլ ձեռներըն նորա աչքերին վերայ դրաւ՝ բաց
արաւ, և տեսնումէր. ողջացաւ՝ և ամէն բան համար-
ձակ տեսնումէր։

26 Նորան ուղարկեց իրան տունն՝ և ասաց. շէնն չի՛
մտնես, բայց քո տունդ գնա. և երբոր շէնն մտնես՝
շէնի մէջն մըրնին չասես։

27 Եւ Յիսուս աշակերտներին հետ դուրս գնաց փի-
լիպպեայ կեսարիայի շէներին. և ճանապարհումն աշակեր-
տներին հարցնումէր և ասում՝ մարդիքն ինձ համար
ո՞վ են ասում՝ որ լինիմ։

28 Նորանք պատասխան տա-
րին՝ և ասացին. (թէ) Յո-
հաննէս մկրտիչն, և ուրիշ-
ներն՝ (թէ) եղիան, և ուրիշ-
ներն՝ (թէ) մարգարէներուն
մինն։

29 Նորանց ասաց. ապա
դուք ո՞վ էք ասում ինձ հա-
մար՝ որ լինիմ. պետրոսն
պատասխան տուաւ, և նորան
ասաց. դուն Քրիստոսն ես։

30 Եւ նորանց սաստիկ՝ որ
իսկի մըրնին բան չասեն իրան
համար։

31 Եւ սկսաւ ուսուցանել
զնոսա, թէ պարտ է որդւոյ
մարդոյ բազում չարչարանս
ընդունել, և անարգել յե-
րիցանց և ի քահանայապե-
տից և ի դպրաց, և մե-
ռանել՝ և յերիր աւուր յա-
րնել ։

32 Եւ համարձակ զբանն
խօսեցաւ. և առեալ զնա Պե-
տրոս սկսաւ սաս-
տել նմա ։

33 Եւ նա դարձաւ եւս
դաշակերտսն, սաստեաց պետ-
րոսի և ասէ. երթ յետս իմ
սատանայ. զի ոչ խորհիս դու
զԱստուծոյն՝ այլ զմարդ-
կան ։

34 Եւ կոչեցեալ առ ինքն
զժողովուրդն աշակերտօքն
հանդերձ՝ ասէ ցնոսա. եթէ
ոք կամի գալ զկնի իմ՝ ու-
րասցի զանձն իւր, և բարձ-
ցէ վասն իւր՝ և եկեսցէ
զկնի իմ ։

35 Զի որ կամիցի ապրե-
ցուցանել զանձն իւր՝ կորուս-
ցէ զնա. և որ կորուսցէ զանձն
իւր վասն աւետարանին, ապ-
րեցուսցէ զնա ։

36 Զիա՞նչ օգուտ է մար-
դոյ՝ եթէ զաշխարհս ամենայն

31 Եւ սկսեալ սովորցնել նո-
րանց, թէ պէտք է՝ որ որ-
դին մարդոյ շատ չարչարանք
քաշէ, և անարգվի ծերերիցն
և քահանայապետներիցն և
գրագիտացողներիցն, և մեռնի՝
և երեք օրուն յարուցի նա-
ւնէ ։

32 Եւ համարձակ խօսեալ
բանըն. և պետրոս նորան մին
կողմ քաշեց՝ և սկսեց սաս-
տել նորան ։

33 Եւ նա դարձաւ, աշա-
կերտներին տեսաւ՝ պետրոսին
սաստեց և ասաց. Չէա դնա
ինձանիկ սատանայ. ինչուա՞ր
դու Աստուծոյ բաներըն
միտք չես անում՝ բայց մարդ-
կանց բաներըն ։

34 Եւ ժողովուրդըն աշա-
կերտներին հետ իրան մօտ
կանչեց, և նորանց ասաց. եթէ
որ մինն ուզում իմ ետևէս
գալ՝ նա թող իրան անձըն
ուրանայ, և իրան խաչըն վեր-
առնէ՝ և իմ ետևէս գայ ։

35 Պատճառնոր՝ ով որ կա-
մենայ իրան անձըն ապրեցը-
նել՝ կկորցնէ նորան. և ով
որ իրան անձըն աւետարանին
համար կկորցնէ, կապրեցնէ
նորան ։

36 Ինչ օգուտ է մարդոյ՝ որ
ամէն աշխարհքըս ստանայ՝ և

շահեսցէ , և զանձն իւր տուժեսցէ ։

37 Քանզի զի՞նչ տացէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ ։

38 Զի որ ոք ամօթի համարեսցի զիս և զբանս իմ՝ ի շնացօղ և ի մեղաւոր ազգիս այսմիկ , և որդի մարդոյ յամօթի արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց ։

39 Եւ ասէ ցնոսա . ամէն ասեմ ձեզ . զի են ոմանք ի սոցանէ որ սա կան , որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ ։

Գ Լ Ո Ւ Խ ։

1 Եւ յետ վեց աւուրց առնու Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս , և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձին . և յայլակերպեաց եղև առաջի նոցա ։

2 Եւ հոլովք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ , որպէս թէ ափիւնք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել ։

իրան անձին վնաս տայ ։

37 Պատճառնոր՝ ի՞նչ բան կըտայ մարդն իրան անձին տեղակ ։

38 Ինչուռը՝ ով որ ինձ և խօսքերըս ամօթի կըհամարէ էս շնացօղ և մեղաւոր ազգիս միջումն , որդին մարդոյ էլ նորան ամօթի կանի՝ երբոր իրան հօր փառքովն և սուրբ հրեշտակներովն կըգայ ։

39 Եւ նորանց ասայ . Ճշմարիտըն ասումմ ձեզ . թէ էստեղ կանգնածներիցի մին քանիսն կան՝ որ մահ չեն տեսնիլ՝ մինչև որ Աստուծոյ արքայութիւնըն տեսնեն զօրութեունով եկած ։

Թ ։

1 Եւ վեց օրիցն հետև Յիսուս պետրոսին և Յակոբին և Յովհաննէսին իրան հետ առաւ , և նորանց առանձին մին բարձր սար հանեց . և նորա կերպարանքն փոխվեցաւ նորանց առաջին ։

2 Եւ նորա շորերն փայլուն և շատ սպիտակ էլան . որ երկրիս վերայ կտաւ սպիտակացընօղներն չեն կարօղ էնպէս սպիտակացնել ։

3 Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսէսիւ հանդերձ, եւ խօսէին ընդ Յիսուսի:

4 Պատասխանի եւ պետրոս՝ եւ ասէ Յիսուսու. ռաբբի՝ բարւոք է մեզ աստ լինել. եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսէսի եւ մի եղիայի:

5 Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին:

6 Եւ եղեւ ամպ մի հովանի՝ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն անտի՝ եւ ասէ. դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք:

7 Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ ևս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս:

8 Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ:

9 Եւ նոքա զբանն ի մտի ունէին, և խնդրէին ընդ միմեանս՝ Թէ զինչ է յիցէ ի մեռելոցն յառնել:

3 Եւ եղիան մաՏէին հետ նորանոց երեւեցաւ, և Յիսուսու հետ խոսում էին:

4 Պետրոս պատասխան արաւ՝ և Յիսուսին ասաց. ռաբբի՝ լաւ է որ մենք էս տեղ կենանք. և երեք տաղաւար (չատր) կըշինենք՝ մինը քեզ համար և մինը մովսէսին և մինը եղիային:

5 Պատճառնոր՝ չէր գիտում ինչ էր խոսում. ինչուորը՝ խիստ վախեցած էին:

6 Եւ մին ամպ էլաւ՝ որ նորանց վերայ շուաք արաւ. էն ամպիցն ձայն էլաւ՝ և ասաց. դա է իմ սիրելի որդին, դորան ականջ դրեք:

7 Եւ շուտով որ էս կողմն էն կողմն նայեցին՝ էլ ուրիշ մարդ չտեսին, բայց մենակ Յիսուսին իրանց հետ:

8 Եւ երբոր էն սարիցն վէր էին գալիս, նորանց պատուիրեց՝ որ իսկի մըրնին չըպատմեն ինչ որ տեսին. բայց էն ժամանակն որ որդին մարդոյ մեռելներն միջիցն յարութիւն առնէ:

9 Եւ նորանք էն խօսքըն մտքներումն էին պահում, և իրար հետ հարցնում էին՝ Թէ ինչ է էն մեռելներն միջիցն յարութիւն առնելն:

10 Հարցին ցնա և ասեն . զի՞նչ է այն զոր դպիրքն ա-
սեն՝ եւթէ նախ եղիայի պարտ
է գալ :

11 Ն՚ա պատասխանի եւ նո-
ցա՝ և ասէ . եղիա նախ եկեալ
յարդարեսցէ զամենայն . իսկ
գիտիրդ գրեալ է զորդւոյ
մարդոյ, զի բազում՝ ինչ չար-
չարեսցի և անգոնեցի :

12 Ա՚յլ ես ասեմ ձեզ , ե-
թէ եղիա եկն , և արարին ընդ
նմա զի՛նչ և կամեցան . որ-
պէս և գրեալ է վասն նորա:

13 Յո եկեալ առ աշա-
կերտսն, տեսին ամբոխ շուրջ
զնոքաք , և զդպիրսն՝ զի վի-
ճէին ընդ նոսա :

14 Յո վաղվաղակի ամենայն
ժողովուրդն իբրև տեսին
զնա՝ զարմացան , և ընդ ա-
ռաջ ընթացեալ ողջոյն տա-
յին նմա :

15 Յո եհարց զնոսա՝ թէ
զի՞նչ վիճէիք ընդ նոսա :

16 Պատասխանի եւ մի ոմն
՚ի ժողովրդենէն՝ և ասէ .
վա՛րդապետ՝ ածի զորդի իմ
առ քեզ , զոր ունի այս համր:

10 Նորան հարցրին և ա-
սացին . ի՞նչ է էն՝ որ կար-
դացօղներն ասումեն՝ թէ
պէտք է որ առաջ եղիան գայ:

11 Ն՚ա պատասխան տուաւ
նորանց՝ և ասաց . եղիան ա-
ռաջ կըգայ , և ամէն բան
կարգին կըդնէ . բայց ի՞նչպէս
է գրված որդի մարդոյ հա-
մար , թէ շատ պիտի չար-
չարվի և անարգվի :

12 Մ՚իայն թէ ես ասումեմ
ձեզ՝ թէ եղիան եկաւ, և ին-
չ որ ուզեցին , նորան արին .
ինչպէս որ էլ նորա ՚համար
գրված է :

13 Յո երբոր եկին աշա-
կերտներին մօտ , նորանց չորս
կողմանը ամբոխ (խալխ) տեսին,
և կարդացօղներին՝ որ նո-
րանց հետ հակառակութիւն
էին անում :

14 Յո շուտով ամէն ժողո-
վուրդն երբոր տեսին նորան,
զարմացան և առաջ վազելով՝
նորան բարև էին տալիս :

15 Յո նորանց հարցրուց՝
թէ ի՞նչ էիք հակառակում
նորանց հետ :

16 Ժ՚ողովրդի միջից մին
պատասխան տուաւ՝ և ասաց.
վ՚արդապետ՝ իմ որդին քեզ
մօտ բերի , որ նորան համր
(լալիկ) դև բռնել է :

17 Եւ ուր հասանէ՝ զար-
կուցանէ զնա . և փրփրէ՝ և
կրճտէ զատամունս իւր և ցա-
մաքի . և ասացի ցաշակերտան
քո զի հանցեն , և ոչ կարա-
ցին հանել զնա :

18 Պատասխանի ետ նոցա
և ասէ . ով ազգ անհաւատ՝
մինչև կ՚երբ իցեմ առ ձեզ .
մինչև ցի՞րբ անասցեմ ձեզ .
ածէք զնա առ ես :

19 Եւ ածին զնա առ նա .
իբրև եահաւ զնա սյան , վազ-
վազակի շարժէեաց զնա , և
անկեալ կերկիր թաւալէր և
փրփրեայր :

20 Եհարց ցհայր նորա և
ասէ . քանի՞ ժամանակք են՝
յորմէհետէ այդ եղև դմա .
և նա ասէ՝ ՚ի մանկութե-
նէ :

21 Յաղուստ անգամ ՚ի հուր
արկանէ զնա և ՚ի ջուր՝ զի
կորուսցէ . արդ՝ եթէ կա-
րօդ լինէ ես , օգնեա մեզ Տէր՝
գթացեալ ՚ի վերայ մեր :

22 Եւ Յիսուս ասէ ցնա .
ասացեր՝ եթէ կարօդ ես . ա-
մենայն ինչ հնարաւոր է այնմ,
որ հաւատայն :

23 Եւ վազվազակի աղաղա-

17 Եւ որտեղ որ նորան
հասնումէ՝ նորան գետնով է
տալիս և փրփրացնումէ՝ և ա-
տամներըն կըրճտացնումէ և
ցամաքումէ . և քո աշակերտ-
ներին ասացի՝ որ հանեն , և
և չըկարացին հանել նորան :

18 Եւ նորանց պատասխան տը-
ւաւ և ասաց . ով անհա-
ւատ ազգ՝ մինչև ե՞րբ ձեզ
հետ պիտի լինիմ , մինչև
ե՞րբ ձեզ պիտի համբերեմ .
նորան ինձ մօտ բերէք :

19 Եւ նորան բերին նորա
մօտ . երբոր դեւն նորան տե-
սաւ , շուտով սաստիկ շարժեց
նորան . և գետինն ընկած
թաւալումէր և փրփրումէր :

20 Եւ նորա հօրըն հարցրուց
և ասաց . քանի՞ ժամանակ
է՝ որ էդ բանդ էլաւ դո-
րան . և նա ասաց՝ երեխայու-
թենէն :

21 Շատ անգամ կրակի
մէջն է քցում և ջրի մէջն՝
որ դորան կորցնէ . տպա եթէ
որ մին բան կարօդ ես՝ օգ-
նիր մեզ Տէր՝ ողջալով մեզ
վերայ :

22 Եւ Յիսուս նորան ասաց .
ասացիր՝ եթէ որ կարօդ ես .
ամէն բան կարելի է նորան՝
որ հաւատումէ :

23 Եւ շուտով տղայի հայրն

կեայ հայր մանկանն՝ և ասէ. հաւատամ, օգնեա անհաւատութիւն իմում եղեալ ինձ:

24 Իբրև եհաս Յիսուս՝ եւ թէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսպէս պղծոյ և ասէ. համրիր և խուլ այս՝ ես ասեմ քեզ, հրամայեմ, ել ի նմանէ, և այլ եւս մի մտանիցես ի նա:

25 Եւ աղաղակեաց՝ և յայժ ոչկեաց պղծ, և ել. և եղև սպառանեալն իբրև զմեռեալ, մինչև բազումք իսկ ասել թէ մեռաւ:

26 Եւ Յիսուս կալաւ զձեռանէն նորա՝ յարոյց զնա, և կանգնեցաւ:

27 Եւ իբրև եմուտ նա ի տուն, աշակերտքն առանձինն հարցին զնա. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա:

28 Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ սլահովք և աղօթիւք:

29 Եւ անտի ելեալ անցանէին առ գալիլեայսովք. և ոչ կամէր եթէ ոք գիտասցէ:

30 Վասնզի ուսուցանէր զաշակերտան իւր՝ և ասէր ցնոսա. որդի մարդոյ մատնեցեալ՝ և տացեն. հատանեն մեռանել՝ իմ անհաւատութիւն եղեալ ինձ օգնիլ:

24 Եւ իբրեւ Յիսուս տեսաւ՝ թէ ժողովուրդն վերայ է կիսովում, են պիղծ դևին սաստեց և ասաց. ով համր (չլսէ) և խուլ (չասա) դև՝ ես հրամայեմ եմ տալիս քեզ, դորանից դուրս եկ, և մին եւ դորա մէջ չըմտանես:

25 Եւ շատ աղաղակից՝ և սաստիկ չարչարեց նորան, և դուրս եկաւ. և տղան մեռածի պէս էլաւ, մինչև որ շատերն ասում էին՝ թէ մեռաւ:

26 Եւ Յիսուս նորա ձեռքից բռնեց, նորան վերկայցուց, և կանգնեց:

27 Եւ երբեւ նա տուն մտաւ՝ աշակերտներն առանձին հարցրին նորան՝ (թէ) մենք ինչու՞ չըկարացինք հանել նորան:

28 Եւ նորանց ասաց. էդ ցեղը ուրիշ բանով դուրս չի՛ գալ, եթէ ոչ պատով և աղօթքով:

29 Եւ են տեղից դուրս եկած՝ գալիլեացոց միջովն անց էին կենում. և չէր ուզում որ մինն իմանայ:

30 Ինչուո՞ր՝ իրան աշակերտներըն սովորցնում՝ և նո-

սա, Թէ որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա. և եբեւ սպանցի՝ յերիր աւուր յառիցէ։

34 Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին հարցանել ցնա։

32 Եկին ՚ի կափառնաում. և իբրև եմուտ ՚ի տունն, հարցանէր զնոսա. զի՞նչ վիճէիք ընդ միմեանս։

33 Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին ՚ի ճանապարհին՝ Թէ ով մեծ իցէ։

34 Եւ իբրև նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն և ասէ ցնոսա. եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշտօնեայ։

35 Եւ առեալ մանուկ մի կացոյց ՚ի մէջ նոցա. և ընդկալեալ զնա ՚ի գիրկս իւր, ասէ ցնոսա։

36 Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունիցի, ոչ զիս ընդունի՝ բանց առաքիչն զիմ Թէ որդին մարդոյ մարդկանց ձեռքն պիտի մատնըվի, և նորան կըսպանեն. և երբոր կըսպանվի, երեք օրուան յարուցիւն կառնէ։

31 Եւ նորանք էն բանըն չէին իմանում. և վախուճէին որ հարցնեն նորան։

32 Կափառնայում եկաւ. և երբոր տուն մտաւ, նոքանց հարցնուածը՝ (Թէ) ճանապարհուն ինչ էիք հակառակում իրար հետ։

33 Եւ նորանք լուռ էին կենում. պատճառնոր՝ ճանապարհուն իրար հետ հակառակումին՝ Թէ ով լինի մեծն։

34 Եւ երբոր նստեց, տասն երկուսին կանչեց և նորանց ասաց. Թէ որ մինն ուզումէ առաջին լինել՝ Թող ամէնիցն փոքր՝ և ամէնին պաշտօնեայ լինի։

35 Եւ մին երեխայ առաւ, կանդնացրուց նորանց միջումն. և նորան առաւ իրան գիրկն՝ և նորանց ասաց։

36 Որ որ էսպէսի երեխաներիցն մինըն իմ անունովս կընդունի՝ ինձ կընդունի. և որ որ ինձ կընդունի՝ ինձ չի

այլ զայն՝ որ առաքեսցէ զնա։

37 Պատասխանի եւ նմա յովհաննէս եւ ասէ. վարդապետ՝ տեսաք զոմն, զի յանուն քո դեւս հանէր՝ եւ վերս կնի ոչ շրջէր, եւ արգելաք զնա։

38 Յն նա ասէ. մի արգելուք զնա. զի ոչ ոք է՝ որ առնէ զօրութիւն յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս։

39 Զի որ ոչն է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է։

40 Յն որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս այս՝ ի դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի կորուսցէ վարձս իւր։

41 Յն որ ոք գայթագղեցուսցէ զմի ի փոքրկանացս՝ որ հաւատան ինձ, լաւ էր նմա առաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան իշոյ, և ընկեցեալ ի ծով։

42 Յն եթէ գայթագղեցուսցէ զքեզ ձեռն քո, կամ՝ ընկեաւ ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն յաւիտենից, քան երկուս

ընդունիլ, այլ նորան՝ որ ինձ առաքեաց։

37 Ցօհաննէան նորան պատասխան տուաւ և ասաց. վարդապետ՝ մինը տեսինք որ քո անունովդ դևեր էր հանում, և մեր եւևէն մանչէը գալիս, և արգելեցինք նորան։

38 Յն նա ասաց. մի արգելէք նորան. ինչուոր՝ ոչ ով չըկայ՝ որ իմ անունովս զօրութիւն անէ, կարենայ հայհոյել ինձ։

39 Պատճառնոր՝ նա որ մեզ հակառակ չէ՝ մեր կողմն է։

40 Յն ով որ մին բաժակով (ճաաճ) ջուր կըխմացնէ ձեզ ես անունովս՝ զի դուք Քրիստոսինն էք, ճշմարիտըն ասում ձեզ՝ նա չի կորցնիլ իրան վարձքըն։

41 Յն ով որ կըգայթակղեցայնէ ես փոքրներիցս մինըն՝ որ ինձ հաւատում են, աւելի լաւ էր նորան՝ որ իրան վրայից մին իշու ջաղացի քար անցկացնըվի, և ծովն ձգվի։

42 Յն եթէ քո ձեռդ քեզ գայթակղեցայնէ՝ կարիր նորան, քեզանից դէն քցիր. ինչուոր՝ լաւ է քեզ՝ որ խեղ (ճաճաճ) մտնես յաւիտենա-

ձեռս ունել՝ և երթալ ի գեհեն ի հուրն անշէջ ։

Յ3 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի ։

Յ4 Եւ եթէ ոտն քո գայթագղեցուսցէ զքեզ, հատ՝ ընկեա զնա ի քէն. լաւ է քեզ կաղ մտանել ի կեանսն յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝ և անկանել ի գեհեն ի հուրն անշէջ ։

Յ5 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի ։

Յ6 Եւ եթէ աչն քո գայթագղեցուսցէ զքեզ, հան զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւնն Աստուծոյ, քան երկուս աչս ունել՝ և անկանել ի գեհեն ։

Յ7 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի ։

Յ8 Ամէն ամենայն ընչ հրով յաղեսցի, և ամենայն ողջակէզ աղաւ յաղեսցի ։

Յ9 Բարւոք է աղ. և եթէ աղն անհամեսցի, ընդ համ-

կան կեանքն, քանթէ երկու ձեռք ունենաս՝ և գեհենն գնաս էն անանցնելի կրակի մէջն ։

Յ3 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ և կրակն չի անցնում ։

Յ4 Եւ եթէ քո ոտդ քեզ գայթակղեցնէ, կտրէր նորան՝ քեզանից դէն քցիր. լաւ է քեզ որ կաղ մտնես յաւիտենական կեանքն, քան թէ երկու ոտք ունենաս՝ և գեհենն ընկնես էն անանցնելի կրակի մէջն ։

Յ5 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ և կրակն չի անցնում ։

Յ6 Եւ եթէ քո աչքդ քեզ գայթակղեցնէ՝ դուրս հանիր նորան. լաւ է քեզ՝ որ մի աչքով Աստուծոյ արքայութիւնն մտնես, քանթէ երկու աչք ունենաս՝ և գեհենը ընկնես ։

Յ7 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ և կրակն չի անցնում ։

Յ8 Պատճառնոր՝ ամէն բան կրակով պէտք է աղանվի, և ամէն մատաղն աղով պէտք է աղանվի ։

Յ9 Աղն բարի է. և թէ որ աղն անհամանայ, ինչով պի-

մեսցի . արդ՝ դուք կալարծուք յանձինս ձեր զաղն , և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս ։

ԳԼ . Ժ ։

1 Եւ անտի յարուցեալ գայ ՚ի սահմանս հրէաստանի յայնկոյս յորդանանու . և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա , և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա ։

2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին , Եթէ արժան իցէ առն զկին իւր արձակել ։

3 Նա պատասխանի ետ նոցա և ասէ . զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս ։

4 Եւ նոքա ասեն . Մովսէս հրաման ետ գիր մերկութեայ գրել , և արձակել ։

5 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա . վասն խստասրտութեանձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն ։

6 Այլ ՚ի սկզբանէ արարածոց արու և էգ արար զնոսա Աստուած , և ասէ .

ի համբանայ . ուրեմն դուք այն բնութեամբ ձեր անձնեղուսին , և իրար հետ խաղաղութիւն արէք ։

ԺԹ ։

1 Եւ էնտեղից վերկացաւ եկաւ հրէաստանի (ըհոռոմի) կողմերն՝ յորդանանի էն կողմն . և մինէլ ժողովուրդըն կիտված գնուէին նորա մօտ , և ինչպէս որ նորա սովորութիւն էր՝ մինէլ սովորցընուէր նորանց ։

2 Բայց փարիսեցիներն մօտ եկին , և փորձելով նորան հարցնուէին և ասում . Թէ արժանի է մարդոյ՝ որ իրան կինըն բաց թողէ ։

3 Նա պատասխան տուաւ նորանց և ասաց . Մովսէն ինչ պատուիրեց ձեզ ։

4 Եւ նորանք ասացին . Մովսէսն հրաման տուաւ՝ դուրս անելոյ թուղթ գրել , և դուրս անել ։

5 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց . ձեր քարասրտութեան համար էն պատուիրանքըն գրեց ձեզ ։

6 Բայց ստեղծագործութեան սկզբից Աստուած նորանց արու (ոչխ) և էգ արաւ , և ասաց .

7 Ա՚ման այսօրիկ թողջէ այր գՀայր իւր և զմայր, և կրթիցէ գՀետ կնոջ իւրոյ։

8 Եւ եղիցին երկուքն ՚ի մարմին մի. և այնուհետև ոչ են երկուս՝ այլ մարմին մի։

9 Ա՚րդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ։

10 Եւ ՚ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա։

11 Եւ ասէ ցնոսա. եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և արասցէ այլ, շնայ։

12 Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլում, շնայ։

13 Եւ մատուցանէին առ նա մանկունս՝ զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որ մատուցանէին։

14 Իրբև տեաս Յ՚, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. թո՚ղ՚ւ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։

15 Ա՚մէն ասեմ ձեզ. որ ոչ ընկալցի զարքայութիւն Աս-

7 Սրտհամարը մարդն իրան հօրըն և մօրըն կըթողէ, և իրան կնկան հետն կըգնայ։

8 Եւ երկուքն մին մարմին կըլինին. և նրանից ետև երկու չեն՝ բայց մին մարմին են։

9 Ուրեմն ինչ որ Աստուած միաւորեց՝ թո՚ղ մարդն չը՚ջոկէ։

10 Եւ տան մէջն աշակերտներն միևնէլ հենց էն բանըն հարցրին նորան։

11 Եւ նորանց ասաց. թէ որ մարդ իրան կինըն բաց թողէ՝ և մին ուրիշըն առնէ, շնութիւն է գործում։

12 Եւ կինն՝ թէ որ իրան մարդուցն դուրս գնայ՝ և ուրիշ մարդոց լինի, շնութիւն է գործում։

13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ ձեռըն դնէ նորանց վերայ. բայց աշակերտներն սաստում էին նորանց՝ որ բերում էին։

14 Երբ որ Յիսուս տեսաւ՝ բարկացաւ և նորանց սաստեց և ասաց. թո՚ղ՚ւ տուէք էդ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան, և մի արգելէք դորանց. ինչուա՚ր՝ էդպէսներուն է Աստուծոյ արքայութիւնն։

15 Ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ (թէ) ով որ Աստուծոյ

տուծոյ իբրև զմանուկ՝ ուչ մոյկ ի նա ։

16 Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ՝ և օրհնեայ զնոսա ։

17 Եւ ընդ ելանելն նորա ուտել ի ճանապարհ, տհասասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր, հարցանէր ցնա և ասէր . վարդապետ բարի՝ զի՞նչ արարիցի զի կեանսն յաւիտենական ժառանգեցից ։

18 Եւ Յիսուս ասէ ցնա . զի՞ առես զիս բարի . չի՛ր որ բարի՝ բայց մի Աստուած ։

19 Զպատուիրանս գիտես. մի շնար , մի սպանաներ , մի գողանար , մի սուտ վկայեր , պատուեա՛ զՀայր քո և զմայր։

20 Ն՚ա պատասխանի ետ և ասէ ցնա. վարդապետ՝ զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ , արդ՝ զի՞նչ ևս պակաս իցեմ ։

21 Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա , և ասէ ցնա . մի ինչ պակաս ե՛ ի քէն . երթ կամիս կատարեալ լինել , երթ զոր ինչ ունիս վաճառեա՛ և տուր աղքատաց , և ունիցիս գանձս յերկինս , և առ գլուխն՝ և եկ գինի իմ ։

արքայութիւն չընդունի ինչպէս երեխայ՝ նա չի՛ մանիլ նր մէջ։

16 Եւ նորանց գիրկն առաւ՝ ձեռըն դրաւ նորանց վերայ՝ և նորանց օրհնեց ։

17 Եւ էնտեղիցն որ դուրս գնայ ճանապարհն , ահա մին հարուստ մարդ վազելով եկաւ՝ ծունր էր դնում՝ նորան հարցնում և ասում . բարի վարդապետ . ինչ գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ ։

18 Եւ Յիսուս նորան ասաց . ինչո՞ւ ես ինձ բարի ասում՝ ուչ ով բարի չըկայ , բայց միայն մինն Աստուած։

19 Պատուիրանքներըն գիտուածս՝ մի շնար , մի սպաներ, մի գողանար, մի սուտ վկայեր , քո հօրըդ և մօրըդ պատուիր։

20 Ն՚ա պատասխան տուաւ և նորան ասաց . վարդապետ՝ էդ ամէնըդ իմ երեխայութենէնիցն արի. ապա էլ ինչ բանով եմ պակաս ։

21 Եւ Յիսուս նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց, և նորան ասաց . մին բան պակաս է քեզանիկ . թէ որ կամենաս կատարեալ լինիլ , գնա, ինչ որ ունես՝ ծախիր և աղքատներին տուր . և գանձ (նաչայ) կունենաս երկինքումն . և խաչըն առ և իմ հետևէս եկ ։

22 Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում · զի ունէր ինչս բազումս ։

23 Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշակերտան · զիաւրդ դժուարին է՝ որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ ։

24 Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա · իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա եւ ասէ· որդեակք՝ հիւսիսափ դժուարին է յուսացելոյ մինչ՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ ։

25 Դիւրին է մալեոյ ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան յարքայութիւն մտանել ։

26 Եւ նոքա առաւել եւս զարմանային՝ եւ ասէին ընդ միմեանս · իսկ ո՞ կարասցէ ապրել ։

27 Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ · առ ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ի Աստուծոյ ։

28 Սկսաւ ասել ցնա պետրոս, ահաւասիկ մեք թողաք զամենայն, եւ եկաք զկնի քո։

22 Եւ նա էն բանին համար դժուարացաւ՝ եւ տրտում գնաց · զի պատճառն որ՝ շատ ապրանք ունէր ։

23 Եւ Յիսուս նկատելով էն կողմն նայելով՝ աշակերտներին ասաց · ինչքան դժուար է՝ որ նորանք որ ապրանք ունին՝ Աստուծոյ արքայութիւնն մտնեն ։

24 Եւ աշակերտներն զարմացել էին նորա խօսքերին վերայ · բայց Յիսուս միևնոյն պատասխան տուաւ նորանց եւ ասաց · որդեակնե՛ր՝ ճշմարիտ դժուար է՝ որ նորանք՝ որ բանց յոյսն ապրանքի վերայ են դրել, Աստուծոյ արքայութիւնն մտնեն ։

25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցկենայ, քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնն մտնէ ։

26 Եւ նորանք էլ աւելի զարմանումէին՝ եւ միմեանց ասումէին · ապա ով կըկարենայ ապրիլ ։

27 Յիսուս նորանց մտիկ տուաւ եւ ասաց · մարդկանց կողմանէ՝ էդ անկարելի է, բայց ոչ թէ Աստուծոյ կողմանէ ։

28 Պետրոս սկսեց նորան ասել · ահա մենք ամէն բան թողնինք, եւ քո ետևէդ եկինք։

29 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ ո՛չ ոք է որ ելթող զտուն կամ զհղբարս կամ զքոյր կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս՝ վասն իմ կամ վասն աւետարանին.

30 Եթէ ո՛չ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տուներս և եղբարս և քոյրս և մարս և որդիս և ագարակս հալածանօք հանդերձ, և յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենական.

31 Այլ բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք։

32 Եւ էին ի ճանապարհի մինչդեռ ելանէին Երուսաղէմ. և երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և զարմացեալ էին որ զհետն երթային և երկնչէին։ Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իւրեն ընդ նա։

33 Թէ ահաւասիկ ելանեմք Երուսաղէմ. և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետին և դպրոցի. և դատեսցեն զնա ի մահ, և մատնեսցեն զնա ի հեթանոսս.

29 Յիսուս պատասխան տուեալ և ասաց. Ճշմարիտն ասեմ ձեզ՝ Եթէ ոչ ոք չըկայ՝ որ տունը կամ եղբայրները կամ քրվէրքը կամ հօրը կամ մօրը կամ որդիքը կամ արտերը թողուց՝ հնձ համար կամ աւետարանին համար։

30 Իր հարիւրապատիկ հիմիկ էս ժամանակումս չառնէ տներ և եղբարներ և քրվէրք և մարք և որդիք և արտեր հալածմունքի հետ, և էն նոր գալու աշխարհքումն յաւիտենական կեանքըն։

31 Պատճառնոր՝ շատ առաջիններ յետինք կըլինին՝ և յետիններն առաջինք։

32 Եւ Ճանապարհի վերայ էին՝ որ երուսաղէմ էին գնում, և Յիսուս նորանցից առաջ էր գնում. և նորանք՝ որ հետէն գնում էին, զարմացած էին և վախենում էին։ Եւ տասներկուսին միեղ առաւ, սկսեց նորանց ասել՝ Եթէ ինչ բաներ էրան վերայ պիտի անցկենան։

33 Թէ ահա վեր ենք էլում երուսաղէմ. և որդին մարդոյ կըմատնըվի քահանայապետների և կարգաւորների ձեռքն. և նորան մահով

նեսցեն զնա հնձանոսայ.

34 Եւ հատակեսցեն զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքա-
նիցեն ի նա, և սպանցեն. և յերիր աւուր յարիցէ:

35 Եւ երթային առ նովաւ յակովբոս և յովհաննէս՝ որ-
դիքն զեբեդեայ. և ասեն ցնա. վարդապետ՝ կամիմք զի
զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես մեզ:

36 Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ կամիք յինէն՝ զի արարից ձեզ:

37 Եւ նոքա ասեն ցնա. տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ՝ ի փառսն քումմ:

38 Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմ-
պել զբաժակն՝ զոր ես ըմպե-
լոյ եմ, կամ զմկրտուիլն մկրտիլ՝ զոր ես մկրտելոյն եմ:

39 Եւ նոքա ասեն ցնա, կարեմք. և Յիսուս ասէ ցնո-
սա. զբաժակն՝ զոր ես ըմպե-
լոյ եմ՝ ըմպիցէք, և զմկըր-
տուիլն՝ զոր ես մկրտելոյն եմ՝ մկրտիցիք:

կըդատապարտեն, և նոքան հնձանոնեըին կըմատնեն.

34 Եւ նոքան ծաղը կանեն, և նոքան կըծեծեն, և նոքա վերայ կըթքեն, և կըսպանեն. և երեք օրուն յարութիւն կառնէ:

35 Եւ զեբեդեայի որդիքն՝ յակոբոն և յոհաննէսն նո-
քա մօտ էին գնում՝ և նո-
քան ասացին. վարդապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քեզա-
նից խնդրենք՝ մեզ անես:

36 Եւ նա նորանց ասաց. ի՞նչ էք խնդրում ինձա-
նից՝ որ ձեզ անեմ:

37 Եւ նորանք ասացին նո-
քան. տուր մեզ՝ որ մինն քո աջ կողմդ և մէկէլն քո ձախ կողմդ նստինք քո փառքումդ:

38 Յիսուս պատասխան տը-
ւաւ և նորանց ասաց. չէք գիտում՝ (թէ) ինչ էք խընդ-
րում. կարօղ էք էն բա-
ժակըն (խաչն) խմել՝ որ ես պիտի խմեմ, կամ էն մըկըր-
տութենովն մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ:

39 Եւ նորանք ասացին նո-
քան. կարօղ ենք. և Յի-
սուս նորանց ասաց. էն բա-
ժակըն (խաչն)՝ որ ես պիտի խմեմ, կըխմէք, և (էն) մկրտու-
թենովն՝ որ ես պիտի մկրտվիմ՝ կըմկրտվիք:

Ա0 Ա՛յլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ ե՛ իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ։

Ա1 Եւ լուեալ զայն տասանցին, սկսան բարկանալ Յակովբայ և յովհաննու։

Ա2 Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա. գիտէք՝ զի որ կամենան իշխանքն ն՛ն հեթանոսաց, տիրեն նոցա, և մեծամեծք նոցա իշխեն նոցա։

Ա3 Ո՛չ նա՛յնպէս իցէ և՛ ի ձերում միջի. այլ որ կամիցի՛ ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։

Ա4 Եւ որ կամիցի՛ ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ։

Ա5 Քանզի և որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։

Ա6 Եւ գան Յերիքով. և ըստ ելանելն նո՛ր Յերիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդովք, որդի տիմէի բարտիմէոս կոյր նստեր մուրացիկ յանցս ճանապարհի։

Ա0 Բայց իմ աջ և իմ ձախ կողմն նստուցանելն իմն չէ որ պատրաստեալ է։

Ա1 Եւ են (մեկեր) տասներկուքն որ լսեցին, սկսեցին բարկանալ Յակոբի և Յոհաննէսի վերայ։

Ա2 Եւ Յիսուս նորանց իրան մօտ կանչեց, և նորանց ասաց. գիտուք՝ որ հեթանոսներուն իշխան կոչվածներն նորանց վերայ տիրուն, և նորանց մեծամեծներն իշխանութիւն են անոնց նորանց վերայ։

Ա3 Այնպէս չի՛ պիտի լինի ձեր միջումդ. բայց ձեղմնից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ պաշտօնեայ լինի։

Ա4 Եւ ձեղմնից ով որ կամենայ առաջին լինել՝ թող ամենից ծառայ լինի։

Ա5 Պատճառնոր՝ որդին մարդոյ եկ չեկաւ՝ որ իրան ծառայեն՝ բայց որ ինքն ծառայէ, և իրան անձին շատերի տեղակ փրկութեան պին տայ։

Ա6 Եւ երիքով եկին. և երբոր նա աշակերտներովն և շատ ժողովուրդներով երիքովիկն դուրս եկաւ, տիմէի որդի բարտիմէոս կոյրն ճանապարհի վերայ նստած էր մուրացող։

47 Իբրև լուաւ՝ թէ Յիսուս նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. որդի դաւթի Յիսուս՝ ողորմեայ ինձ։

48 Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա աւելի աղաղակէր. որդի դաւթի ողորմեայ ինձ։

49 Յետեզի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեայ արի՝ կոչէ զքեզ։

50 Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս։

51 Պատասխանի եւ նմա Յիսուս և ասէ. զինչ կամիս՝ թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. ռաբբունի՝ զի բացայց։

52 Եւ Յիսուս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր ընդ նորա ի ճանապարհին։

47 Եւ երբոր լսեց՝ թէ Յիսուս նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. Յիսուս որդի դաւթի՝ ինձ ողորմեայ։

48 Եւ շատ մարդիկը սաստուկին նորան՝ որ լուռ կեցնայ. և նա էլ աւելի աղաղակումը. որդի դաւթի՝ ինձ ողորմեայ։

49 Յիսուս կանգնեց և հրամայեց՝ որ նորան կանչեն. կուրին կանչելով՝ և նորան ասացին. սիրտըդ պինդ բռնիր. վերկայ, քեզ կանչում։

50 Եւ նա իրան շորերըն վեր քցեց՝ վերկացաւ և Յիսուսի մօտ եկաւ։

51 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց. ինչ ես կամենում, որ անեմ քեզ. կուրն նորան ասաց. ռաբբունի՝ որ բացվիմ։

52 Եւ Յիսուս նորան ասաց. գնա՝ քո հաւատքդ քեզ ապրեցրուց. և շուտով բացվաւ, և ճանապարհումն նորա եաւէն գնումը։

ԳԼ. ԺԱ։

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ՝ ի բեթփագէ և ի բեթանիա մօտ ի լեառն ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի։

1 Եւ երբոր երուսաղէմին մօտենան, բեթփագէ և բեթանիա (եկին) ձիթենեայ սարին մօտ՝ էն աշակերտներից երկուսը ուղարկեց։

2 Եւ ասէ ցնոսա. երթայք դուք ի գիւղ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյնժամայն իբրև մտանէք ի նա, գտանէք յաւանակ մի կապեալ՝ յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա և ածէք։

3 Եւ եթէ ոք առասցէ ձեզ՝ եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք՝ եթէ տէր իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։

4 Ազան, և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա։

5 Եւ ոմանք յորոց անդն կային, ասեն ցնոսա. զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։

6 Եւ նոքա ասեն ցնոսա, որպէս ասացն Յիսուս. և թոյլ եւտուն նոցա։

7 Ածեն զյաւանակն առ Յիսուս. և արկանեն ի վերայ նորա հանդերձս, և նստաւ ի վերայ նորա։

8 Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի վր ճանապարհին, և այլք ոստս ի ծառոց հատանէին և արկանէին զճանապարհսն։

2 Եւ նորանց ասաց. գնացէք դուք էդ գիւղդ՝ որ ձեր առաջին կայ. և շուտով երբոր նորա մէջ մտնէք, մին քուռակ կըգտնէք կապած՝ որ նորա վերայ իսկի մարդ չէ նստած. նորան արձակեցէք և բերէք։

3 Եւ թէ որ մինն ասէ ձեզ. թէ ինչո՞ւ համար էք էդ քուռակըդ արձակում, ասացէք՝ թէ նա տէրին պէտք է. և շուտով նորան էստեղ կուղարկէ։

4 Գնացին և քուռակըն դուրսն դրսնեցի մէջ դըռնեցի առաջին կապած, և նորան արձակեցին։

5 Եւ մին քանիսն նորանցից՝ որ էնտեղ կանգնած էին՝ ասացին նորանց. ի՞նչ էք անում. ինչո՞ւ համար էք արձակում էդ քուռակըդ։

6 Եւ նորանք ասացին նորանց, ինչպէս որ Յիսուս ասաց. և թոյլ տուին նորանց։

7 Քուռակըն Յիսուսի մօտ բերին. և նորա վերայ շորեր քցեցին, և նորա վերայ նստեց։

8 Եւ շատ մարդիք իրանց շորերըն ճանապարհի վերայ փռումէին, և ուրիշներն ծառերից ճղեր էին կտրում և ճանապարհի վերայ փռում։

9 Իւ որ առաջին և զկնի երթային, աղաղակէին, և ասէին. ովսաննայ բարձրեալն։

10 Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն. օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ դաւթի. խաղաղութիւն յերկինս՝ և փառք ի բարձունս։

11 Իւ եմուտ Յիսուս յերուսաղէմ ի տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր երեկոյացեալ ժամն, ել ի բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։

12 Իւ ի վաղիւ անդր մինչ դեռ ելանէին ի բեթանիա, քաղցեաւ։

13 Իւ եւեթ թզենի մի ի բացուստ տերևալից. և եկն՝ թէ գուանիցէ ինչ ի նմա. և իբրև եկն ի նա՝ ոչ ինչ եգիտ, բայց միայն տերև. զի ոչ խակ էր ժամանակ թզոյ։

14 Պատասխանի եւս և ասէ ցնա. մի եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կերիցէ. և լսէին աշակերտքն նորա։

15 Գան յերուսաղէմ. և

9 Իւ նորանք որ առաջին և եւեւէն գնումէին՝ աղաղակումէին և ասում. ովսաննայ բարձրեալն։

10 Օրհնեալ (եա)՝ որ Տէրի անունովն ես գալիս. օրհնեալ է մեր դաւիթի հօր եկած թագաւորութիւնն. խաղաղութի երկնքումն՝ և փառք ի բարձունս։

42 Ապա վեր կայեք գնանք· ահա մօտեցաւ նա՝ որ սրիսկ ինձ մատնէ ։

43 Ու դեռքանի որ նա էն խօսումէր, յուդա իսկարիօտացին՝ էն տասներկուսիցն մինն եկաւ , և նորա հետ ամբոխ (խալՔ) սրերով և բՀրըներով՝ քահանայապետներիցն և կարդացօղներիցն և ծերերիցն ։

ԽԴ Տուեալ էր նշան մատնչին՝ եւ ասէր. ընդ որում ես համբուրեցից՝ նա է. կալջի՛ք զնա՝ եւ տարջի՛ք զգուշութեամբ։

ԽԵ Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա. ռաբբի ռաբբի։ եւ համբուրեաց զնա։

ԽԶ Եւ նորա արկին ՚ի նա ձեռս՝ եւ կալան զնա։

ԽԷ Եւ մի ոմն յայնցանէ՝ որ զնովաւն կային՝ ձգեալ սուր, եւ եհար զծառայ քահանայապետին, եւ ՚ի բաց եհան զունկն նորա։

ԽԸ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. իբրեւ ՚ի վերայ աւազակի ելիք սուսերօք եւ բրոք ունել զիս։

ԽԹ Հանապազ առ ձեզ էի՝ եւ ուսուցանէի ՚ի տաճարին, եւ ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրքն մարգարէիցն։

Ծ Այնժամ թողին զնա աշակերտքն ամենեքեան՝ եւ փախեան։

ԾԱ Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զիւրեւ կոտաւ մի ՚ի մերկուց. ունէին զնա երիտասարդքն։

ԾԲ Մատնիչն նորանոյ նշան էր տուեալ՝ եւ ասէր, թէ որ զին որ ես կըհամբուրեմ՝ նա է, նորան բռնեցէք եւ զգուշութեամբ տարէք։

ԾԳ Եւ շուտով մօտ եկաւ եւ նորան ասաց. ռաբբի, ռաբբի, եւ նորան համբուրեց։

ԾԴ Եւ նորանք ձեռք ձգեցին նորան՝ եւ նորան բռնեցին։

ԾԵ Եւ նորանոյից մինն՝ որ նորա մօտ կային՝ սուրը քաշեց, եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա ականջն կարեց։

ԾԶ Յիսուս պատասխան տուեալ եւ նորանոյ ասաց. ինչպէս մին աւազակի վերայ սրերով եւ բըհըրնեղով դուրս եկիք ինձ բռնել։

ԾԷ Մինչ ձեզ մօտ էի եւ տաճարումն սովորցնուէի. եւ ինձ չը բռնեցիք. բայց նրա համար՝ որ մարգարէների գիրքերն կատարվին։

ԾԸ Յն ժամանակն ամէն աշակերտներն նորան թողին՝ եւ փախան։

ԾԹ Եւ մին երիտասարդ նորա եւևէն գնուէր՝ որ մերկ մարմնոյն վերայ կտաւ էր առել. եւ երիտասարդներն բռնուէին նորան։

52 Եւ նորա թողեալ ըզկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ։

53 Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն կայիափա. և գային ընդ նմա ամենայն քահանայապետքն՝ և դպիրքն և ծերքն։

54 Եւ պետրոս երթայր ի հեռաստանէ զկնի նորա մինչև ի ներքս իսկ ի գաւիթ քահանայապետին, և նստեր ընդ սպասաւորսն՝ և ջեռնոյր առ լուսոյն։

55 Իսկ քահանայապետքն՝ և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին։

56 Զի բազումք սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայութիւնքն։

57 Ոմանք յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին.

58 Թե մեք լուաք ի դմանէ՝ զի ասէր. Ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ՝ առանց ձեռագործի։

52 Եւ նա կտաւըն բայց թողոյց՝ և մերկ փախաւ նորանից։

53 Եւ Յիսուսին տարան կայիափա քահանայապետին մօտ. և ամէն քահանայապետներն և կարգաւորներն և ծերերն նորա մօտ էին գալիս։

54 Եւ պետրոս հեռուանոց գնում էր նորա ետևէն մինչև հենց քահանայապետի սրահի ներսն, և սպասաւորների հետ նստում էր՝ և լուսոյ մօտն տաքանում էր։

55 Բայց քահանայապետները և ամէն տիւանն Յիսուսին հակառակ մեռ վկայութիւն էին ուզում՝ որ նորան սպանեն՝ և չէին գտնում։

56 Պատճառնոր՝ շատ մարդիք սուտ վկայութիւն էին վկայում նորանից. և վկայութիւններն իրար նման չէին։

57 Ոմանք վերկացան և նորանից սուտ էին վկայում, և ասում.

58 Թե մենք դորանից լսեցինք, որ ասում էր՝ (Թե) ես էդ ձեռքով շինած տաճարըդ կըքանդեմ, և երեք օրում ուրիշը կըշինեմ՝ որ ձեռքով չի՛ շինած։

59 Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա։

60 Ապա յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՅիսուս, և ասէր. ոչինչ տաս պատասխանի, զի՞նչ դոքա զքէն վկայեն։

61 Իւ նա լուռ եւեթ կայր՝ և չտայր ինչ պատասխանի. դարձեալ քահանայապետն հարցանէր զնա կրկին ան. գամ և ասէր. դու ես Քրիս. տոս՝ որդի Աստուծոյ օրհնե. լոյն։

62 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. բայց տեսանիցէք զորդի մարդոյ նըստեալ ընդ աջմէ զօրութեանն, և եկեալ ընդ ամպս երկնից։

63 Իւ քահանայապետն պատառեալ վազվազակի զպատմուճանս իւր՝ և ասէ. զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք։

64 Լսա լուսաք ամենեքին զհայհոյութիւնն ի բերանոյ դորա. զինչ թուի ձեզ. և ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է։

65 Իւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել, կռփել և ասել՝ մարգարէացի մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է այն որ

59 Բայց ինչպէս էլ նորանոյ վկայութիւնն իրար նման չէր։

60 Ապա քահանայապետն վերկացաւ մէջ տեղն և Յիսուսին հարցնումէր և ասում. իսկի պատասխան չի՞ս տալիս, ինչ՞ ձեզ քեզանից վկայումեն։

61 Իւ նա լուռ էր կենում՝ և իսկի մին պատասխան չէր տալիս. քահանայապետն մինէլ երկրորդ անգամ նորան հարցնումէր և ասում. դու ես Քրիստոսն՝ օրհնեալ Աստուծոյ որդին։

62 Յիսուս պատասխան տըւաւ և նորան ասաց. դու ասացիր՝ որ ես եմ. բայց կըտեսնէք որդին մարդոյ զօրութեան աջ կողմն նստած, և երկնքի ամպերով եկած։

63 Իւ քահանայապետն շուտով իրան շորերըն պատառեց՝ և ասաց. էլ ինչ պէտք է մեզ վկայ։

64 Լսում եք հայհոյանքըն լսեցիք. ինչպէս է երևում ձեզ. և ամէնքն դատապարտեցին նորան՝ թէ մահապարտ է։

65 Իւ մին քանիսն սկսեցին նորա երեսին թքել, գլխին վերայ շոր քցել, բունցքով թակել և ասել. մեզ մարգարէացիր Քրիստոսդ՝ թէ

եհարն զքեզ · և սպասաւորքն սպասակ հանէին նմա ։

66 Եւ պետրոս մինչդեռ էր ի խնարս ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին,

67 Եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր · հայեցաւ ընդ նա՝ և ասէ · և դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր ։

68 Նա ուրացաւ և ասէ · ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դուդ ասես · և իբրև եղ յարտաքին գաւիթն, և հաւ խօսեցաւ ։

69 Դարձեալ եռես զնա աղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ՝ որ շուրջն կային, Թէ և սա ի նոցանէ է ։

70 Եւ նա դարձեալ ուրացաւ · և յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային, ասեն ցպետրոս · արդարև և դու ի նոցանէ ես, քանզի գալիլեացի ես, և խօսքդ իսկ քո նման են ։

71 Եւ նա սկսաւ նզովել, երդնուլ և ասել՝ Թէ ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ ասէք ։

72 Եւ նոյնժամայն կրկին էն հիլ է՝ որ քեզ զարկեց · և սպասաւորնեըն նորան սպասակ (*ախէէ*) էին տալիս ։

66 Եւ պետրոսն դեռ որ ներքին կողմն սրահի մէջն էր, քահանայապետի մին աղախին (*ղպաՀաշ*) եկաւ,

67 Եւ նորան տեսաւ՝ որ տաքանումէր · մտիկ տուաւ նորան՝ և ասաց · դու էլ Յիսուսս նազօրեցոյն հետ էիր ։

68 Նա ուրացաւ և ասաց · չեմ ճանաչում և չեմ գիտում, Թէ դու ինչ ես խօսում · և երբոր դուրս գնաց դրսի սրահն, հաւն խօսեց ։

69 Մինել էն աղախինն (*ղպաՀաշն*) նորան տեսաւ, և սկսեց ասել նորանց՝ որ չորս կողմանն էին կանգնած, Թէ սա էլ նորանցից է ։

70 Եւ նա մինել ուրացաւ · և մինքիչ յետոյ նորանք՝ որ չորս կողմանն կանգնած էին, մինել ասացին պետրոսին · շնտակ՝ որ դու էլ նորանցից ես, ինչուր՝ գալիլեացի ես, և հենց քո խօսելդ էլ նման է ։

71 Եւ նա սկսեց անիծել, երդում ուտել և ասել՝ Թէ չեմ գիտում էն մարդն՝ որ դուք ասում էք ։

72 Եւ շուտով հաւն երկ-

հաւ խօսեցաւ. և յիշեաց պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, Թէ չև՛ կանչէ հաւուն երկիցս խօսեալ՝ զիս դու երիցս ուրասցիս զիս. և սկսաւ լալ։

ԳԼ. ԺԷ։

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտան խորհուրդ արարեալ քահանայապետքն հանդերձ ծերովքն և դպրօք՝ և ամենայն առեանն, կապեցին զՅիսուս՝ և տարան մատնեցին պիղատոսի։

2 Հարց զնա պիղատոս և ասէ. դո՞ւ ես թագաւորն հրեից. նա պատասխանի եւ նմա և ասէ՝ դու ասես։

3 Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ո՛չ ինչ տայր պատասխանի։

4 Իսկ պիղատոս դարձեալ հարցանէր զնա. ոչի՞նչ տաս պատասխանի, տես՝ քանի՛ մեղադրանքն զքե՛ն։

5 Եւ Յիսուս այնուհետև ո՛չ ինչ եւս պատասխանի, մինչև զարմանալ յոյժ պիղատոսի։

ԺԷ. ԺԸ։

1 Եւ շուտով առաւօտանց՝ քահանայապետներն ծերերին և կարդացօղներին հետ՝ և բոլոր ազգն էլ խորհուրդ արին, և Յիսուսին կապեցին՝ և տարան մատնեցին պիղատոսին։

2 Եւ պիղատոս նորան հարցրուց և ասաց. դո՞ւ ես հրեից թագաւորն. նա պատասխան տուաւ նորան և ասաց. դու ես ասում։

3 Եւ քահանայապետներն շատ չարախօսում էին նորանից. և նա խակ պատասխան չէր տալիս։

4 Նայց պիղատոս մինէլ հարցնում էր նորան. խակ պատասխան չե՞ս տալիս, տես՝ որքան չարախօսում են նորանից։

5 Եւ Յիսուս նրանից ևս խակ մի պատասխան չէ՛ տուաւ, մինչև որ՝ պիղատոսն շատ զարմանում էր։

6 Բայց ըստ ծանի արձա-
կեը նոցա զմի ոք զկապեալ ,
զոր ինքեանք խնդրէին ։

7 Էր՝ որում անուն էր
բարաբբաս՝ կապեալ ընդ
խռովիչսն , որոց ՚ի խռովելն՝
այր մի սպանեալ էր ։

8 ՚Ի ձայն բարձր սկսաւ ա-
զաղակել ամբոխն և խնդրել՝
որպէս սովոր էր , զի արձա-
կեսցէ նոցա զբարաբբայն ։

9 Պատասխանի եա պիղա-
տոս և ասէ ցնոսա . կամի՞ք՝
զի արձակեցից ձեզ զարքայն
հրէից ։

10 Գիտէր զի՝ նախանձու մատնեցին զնա
քահանայապետքն ։

11 Եւ զամբոխն հաւա-
նեցուցին՝ զի արձակեսցէ նո-
ցա զբարաբբայն ։

12 Դարձեալ պատասխանի
եա պիղատոս և ասէ ցնոսա .
խոկ զի՞նչ կամիք՝ ի՛ց արարիցէ
զարքայն հրէից ։

13 Էր նորա զարձեալ աղա-
ղակէին՝ յոյժ եալ ՚ի քահա-
նայապետէն , ՚ի խաչ հան
զդա ։

14 Ասէ ցնոսա պիղատոս .

6 Բայց ծանի ժամանակաւն
մին բանտարկեալ էր արձա-
կում նորանց համար՝ որին
որ իւրանք խնդրեսցէին ։

7 Էր մինն կալ՝ որ նորա
անունն բարաբբա էր՝ խռո-
վութիւն անօրէնսն հետ
կապեալ , որ իւրանց խռովու-
թեանն մին մարդ էին սպա-
նել ։

8 Ամբոխն (խալխն) սկսեց
բարձր ձայնով աղաղակել ,
և խնդրել՝ ինչպէս որ սովոր
էր , որ բարաբբային արձակէ
նորանց համար ։

9 Պիղատոս պատասխան
տուաւ և նորանց ասաց . կա-
մի՞ք՝ որ հրէից թագա-
ւորըն արձակեմ ձեզ համար։

10 Գիտէր՝ զի մատնեցին զնա
քահանայապետքն նա-
խանձով էին մատնել նորան։

11 Ու ամբոխին (խալխն) էլ
հաւանացրին՝ որ բարաբբա-
յին արձակէ նորանց համար։

12 Պիղատոս մինէլ պատաս-
խան տուաւ և նորանց ասաց .
ապա հրէից թագաւորին ի՞նչ
էք ուզում՝ որ անեմ ։

13 Էր նորանք քահանայա-
պետներին դըրդված մինէլ
աղաղակեցին՝ խաչ հանիր զը-
րան ։

14 Պիղատոս նորանց ասաց .

զի՞նչ ինչ չար արարեալ է-
ցէ զորա . և նորա առաւել
եւս ազաղակէին և ասէին . Ի
խա՛չ հան զդա :

15 Իսկ պիղատոս իբրև
զմիտս կամեցաւ հաճել զամ-
բոխին, արձակեաց նոցա զբա-
րաբբաս . և զՅիսուս զան
հարեալ եւս ի ձեռս , զի ի
խա՛չ եւանիցէ :

16 Իսկ զինուորքն տարան
զնա ի ներքս ի դաւիթն՝ ուր
հրաւարակն էր . և կոչեն
միանդամայն զամենայն զդուն-
դըն :

17 Իսկ զգեցուցանեն նմա
բազմիդ կարմիր և Ծիրանեա,
և եդին ի գլուխ նորա պսակ
արարեալ ի փշոց :

18 Իսկ սկսան ողջոյն տալ
նմա՝ և ասել . ո՛ղջ եր ար-
քայդ հրէից :

19 Իսկ ծեծէին զգլուխն և-
զկեղամբ , և ի թքանէին ընդ
երեսս , և ի ծունր իջեալ
երկիրպագանէին նմա :

20 Իսկ իբրև կատակեցին
զնա՝ մերկացուցին զբազմիդն
և զԾիրանեա, և զգեցուցին
նմա զիւր հանդերձն , և ա-
ծին արտաքս , զի ի խա՛չ
հանցեն զնա :

զա ի՞նչ չար բան է արել .
և նորանք էլ աւելի ազաղա-
կումէին և ասում . խա՛չ հա-
նելր զորան :

15 Բայց պիղատոս՝ որովհե-
տև կամեցաւ ամբոխի (խալխ)
կամքըն կատարել , բարաբ-
բասին արձակեց նորանց հա-
մար. և Յիսուսին ծեծից , և
ձեռներն տալաւ , որ խա՛չին :

16 Իսկ զինուորնեըն նորան
տարան ներսի սրահն՝ որտեղ
որ հրապարակն (ջայհանն) էր .
և բոլոր գունդըն (պէօլուքն)
մին տեղ կանչեցին :

17 Իսկ նորան կարմիր քող-
միզ (քեբռճեք) և Ծիրանի շո-
րեր հագցրին, և փշէներից շի-
նած պսակ նորա գլուխն դրին :

18 Իսկ սկսեցին նորան ող-
ջոյն տալ՝ և ասել . ո՛ղջ կաց
հրէից (ջըհուդներէք) թագա-
ւոր :

19 Նորա գլուխըն եղե-
գով (ջամշով) թակում էին, և
նորա երեսին թքում էին՝ և
ծունր դնելով երկրպագու-
թիւն էին տալիս նորան :

20 Իսկ երբոր ծաղր արին
նորան՝ էն քղամիդըն (քեբռ-
ճէն) և Ծիրանի շորերըն նո-
րանից հանեցին, և իրան շո-
րերըն հագցրին իրան , և
դուրս տարան , որ խա՛չ հա-
նեն նորան :

21 Եւ ուրեմն պահակն զսենեկապետն կուբինացին՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յապարակէ, զհայրն ազեքսանդրի և զոսկեփայլսն նորա · զի բարձցէ զխաչափայտն նորա ։

22 Եւ առնեն զնա ի գող գողգոթա՝ տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կառափելոյ ։

23 Եւ տային նմա գինի զմռսեալ , և նա ոչ առ · և հանին զնա ի խաչ ։

24 Եւ բաժանեցին զհանդերձս նորա , արկեալ վիճակս ի վերայ՝ թէ ո զինչ առնուցու ։

25 Էր ժամ երրորդ՝ և հանին զնա ի խաչ ։

26 Եւ էր գիր վերոյ նորա գրեալ՝ թէ Թագաւոր Հրէից ։

27 Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս աւազակս · մի ընդ աջմէ՝ և մի ընդ ահեկ նորա ։

28 Եւ լցաւ գիրն, որ ասէ՝ թէ ընդ անօրէնս համարեցաւ ։

29 Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց և ասէին · վահ, որ քակէիր զաւազանն՝ և զերիս աւուրս չինէիր ,

24 Եւ ուժով բռնեցին սմանն կուբինացւոյն , ազեքսանդրի և առուիթ հօրըն՝ որ յանդիման եկաճ էն տեղւոյն անոյ էր կենուժ · որ նորա խաչափայտն վերառնէ ։

22 Եւ տարան նորան մին գողգոթա (տեղ) տեղ, որ կըթարգմանի՝ գլխատեղի տեղ ։

23 Եւ նորան գրմռսած գինի էին տուին , և նա չառաւ · և նորան խաչ հանեցին ։

24 Եւ նորա շորերըն բաժանեցին , վիճակ քաշելով նորանց վերայ՝ թէ ով ինչ տիմի առնէ ։

25 Երեք ժամն (սահմն) էր՝ և նորան խաչ հանեցին ։

26 Եւ նորա գիասի (սուէ) գիրն, գրված էր՝ թէ հրէից թագաւորն է ։

27 Եւ նորա հետ երկու աւազակ խաչ հանեցին · միսը նորա աջ կողմն՝ և միսը ձախ կողմն ։

28 Եւ կատարվեցաւ էն գիրն, որ ասում՝ թէ անօրէնները հետ համարվեցաւ ։

29 Եւ նորանք՝ որ կենակալ անց էին կենում , նորան հայհոյումէին , իրանց գլխները շարժումէին և ասում · վահ, որ աւաշարըն քանդումէիր՝ և երեք օրումն չինումէիր ,

30 Ապրեցո՛ զանձն քո և ձգ՛ ի խաչեդ։

31 Եղիցես և քահանայապետ պեսաից այսպէս արարեալ ընդ միմեանս հանգիպեալ դպրացն՝ ասելոյն։ զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցա՛նել։

32 Վերխաոսոդ արբոյդ խոլոդելի էջգ՛ այժ՛ ի խաչէ պահ, զի տեսցուք և հաւատասցուք դմա։ և որ ընդ նմա ի խաչն եկեալ էին՝ նախատէին զնա։

33 Էր։ էբրև վեց ժամ և գնի՝ խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցնոն ժամ։

34 Էր։ յերկորդ ժամուն ազաղակեաց Հիսուս ի ձայն մեծ, և ասէ։ Ելի Ելի լամա սաբաքթանի։ որ թարգմանի՝ Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՛ր թողեր զիս։

35 Էր։ ոմանք ի նոցանէ՝ որ չուբըն կային գնոսա, իբրև լուան, ասէին՝ Եղէ կեղիա կարդայ։

36 Էր։ ընթացեալ մի ոմն՝ եփեց սպունգ մի քացախով, և հարեալ յեղեգան՝ ասպր ընծել նմա, և ասէ։ Թո՛ղ, տեսցո՛ք տեսցուք՝ գնի եղիա՞ ի-

30 Ապրեցրո՛ւ քո անձդ և մի՛ եկ խաչիդ։

31 Նոյպէս եղ քահանայապետ պեսաների կարդացողների հետ իրար մէջ ծաղր էին ա՛նում՝ և ասում՝ ուրիշներին ապրեցրուց՝ իրան անձը չի՛ կարում ապրեցնել։

32 Նոդ Քրիստոսոդ խորացելի Իսպասուրդ հիմիկ Իսրայէլ եղ խաչիդ մի՛ գայ, որ տեսնենք և դորան հաւատանք։ և նորանը եղ՝ որ նոյա հետ խաչուած էին, նորան նախատանք էին տալիս։

33 Էր։ երբոր վեց ժամ (սև. հաւ) եղաւ՝ խաւար ամէն երկրի բան բռնեց մինչև իննը ժամը։

34 Էր։ իննը ժամի ժամանակ գուռն Հիսուս մեծ ձայնով աղաղակեց և ասաց։ Ելի Ելի լամա սաբաքթանի։ որ կը նշանակի՝ իմ Աստուած, իմ Աստուած, ինչո՞ւ նոյնիսկ թողիր զիս։

35 Էր։ միներանէն նորանցից՝ որ նորա մօտ կանգնած էին, երբոր լսեցին, ասացին՝ Եղիան կը կանչուի։

36 Էր։ միեն վազեց մի սպունգ (սիւնկը) քացախով լցուց, և եղեգի (գաւազի) վերայ անցուց, և տուաւ նորան՝ որ խմէ, և ասաց։ Թո՛ղ տեսնենք՝

ըսուցանել զդա ։

37 Իբր Հիսուս արձակեաց
նմա մեծ՝ և եհան զդևն ։
38 Իբր վարագոյր տաճարին
պատառեցաւ յերկուս՝ ի վե-
րուստ մինչև ի խոնարհ ։
39 Իբր տեսեալ հարիւրա-
պետին՝ որ կայր առդի, եթէ
ազագակեալ և եհան զդևն,
ասէ ։ արդարև այս որ-
դի Աստուծոյ էր ։

40 Էին և կանայք՝ որ հա-
յէին ի հեռաստանէ ։ յորս
էր Մարիամ Մագդալենացի ։
և Մարիամ յակովբեայ փոքր-
կան ։ և յովսեայ մայրն ։ և
սողոմէ ։
41 Որք յորժամ էին ի գա-
լիլեա՝ հետևեցան նմա և
պաշտէին զնա ։ և այլ բա-
զում կանայք՝ որ բնդ նմա
էին ելեալ ի Երուսաղէմ ։

42 Իբր երեկոյ եղեւ՝
քանզի ուրբաթի էր՝ որ ի
շաբաթին մտանէր ։
43 Էկեալ յովսեփ՝ որ յա-
րիմաթեայ էր՝ պատուական
խորհրդական՝ որ և ինքն էր
սպասէր արքայութեանն
Աստուծոյ ։ համարձակեցաւ՝
եմուտ առ պիղատոս ։ և
խնդրեաց զմարմին Յիսուսի ։
44 Իսկ պիղատոս զարմացաւ՝ եթէ
եղեալ կրցին՝ որ նորա
վերջ բերեր ։
45 Իբր Հիսուս մեծ ձայն
արձակեաց՝ և հոգին հանեաց ։
46 Իբր տաճարի վարագուրն
երկու կողք պատառեցաւ՝
վերի ի վար մինչև ցատն ։
47 Իբր հարիւրապետն՝ որ
էառեալ կանգնած էր ։ երբեմն
տեսանէր եթէ (Հիսուս) ազագա-
կեալ և հոգին հանեաց, ասաց ։
Ճշմարիտ որ ես մարդս Աս-
տուծոյ որդի էր ։
48 Կանայք էլ կային՝ որ
հեռուստից մտիկ էին տալու
որ նորանց միջումն էր մա-
րիամ Մագդալենացին, և մա-
րիամ՝ փոքր յակոբի և յո-
սեի մայրն, և սողոմէն ։
49 Իբր նորանք՝ երբեմն նա
գալիլեա էր՝ նորա ետևէն
գան էին գալիս և նորան նա-
խատելին ։ և էլ ուրիշ շատ
կանայք՝ որ հետ նորա հան
երուսաղէմ էին եկել ։
50 Իբր երբեմն իրիկուն էլաւ,
ինչուան՝ ուրբաթի որ էր՝ որ
շաբաթին էր մտնում ։
51 Ասելին եկաւ՝ որ արի-
մաթիացին էր՝ պատկառելի խ-
րհրդական մարդ՝ որ ինքն էլ
Աստուծոյ արքայութեանն
սպասում էր ։ սա համարձակ-
վեցաւ՝ պիղատոսի մտամտաւ։

թեդրեայ զմարմինն Յեսուայ։

ԽԴ Եւ պիղատոս զարմացաւ՝ թէ այնչափ վազ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ՝ թէ արդարև այնչափ վազ մեռաւ։

ԽԵ Եւ իբրև տեղեկաց ի հարիւրապետէն անտի, շնորհեաց զմարմինն յովսեփայ։

ԽԶ Եւ յովսէփ գնեաց կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի, զոր էր փորեալ ի վէմ. և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին։

ԽՀ Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մարիամ յակովբայ և յովսեայ, տեսին զտեղին՝ ուր եդաւ։

ԳԼ.

Ա Եւ իբրև անց շաբաթին, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ յակովբայ և սաղոմէ՝ չորեքշաբթի կիրակին, գնեցին պատրաստեցին խունկս, գնացին օծանիլ զնա։

Բ Եւ լոյս առաւօտու միում շաբաթիուն գան ի գերեզմանն ընդ արեւագալն։

և Յեսուայ Մարիամին իջեցրեց։

ԽԴ Եւ պիղատոս զարմացաւ՝ որ էնքան չուտով մեռաւ, և հարիւրապետին իրան մոտ կանչեց, նորան հարցրուց և ասաց՝ թէ իրաւի որ էնքան չուտով մեռաւ։

ԽԵ Եւ երբոր էն հարիւրապետին տեղեկացաւ (բանէն)՝ մարմինըն յոսէփին շնորհեց։

ԽԶ Եւ յոսէփ կտաւ գնեց և նորան վէր բերաւ և կտաւով պատեց, և գերեզմանի մէջ դրաւ՝ որ նորան քարից էր փորել։ և մի մեծ քար գցեց գերեզմանի դռան առաջին։

ԽՀ Բայց Մարիամ Մագդաղենացին և յակոբի և յոսէի Մարիամն տեսին էն տեղն՝ որ դրվաւ։

ԳԼ.

Ա Եւ երբոր շաբաթն անցկացաւ, Մարիամ Մագդաղենացին և յակոբի Մարիամն և սալոմէն գնացին խունկ պատրաստեցին, որ գան նորան օծեն։

Բ Եւ միշաբթի առաւօտուն արեգական գալուց ժամանակն՝ եկին գերեզմանն։

3 Էր ասկէն ցմեռնոտս՝ ինչ
Յիսուսէցուցին մեզ դիմել ի
դրաց դերեզմանին ։

4 Էր հայեցեալ տեսին՝ զի
Յիսուսէցեալ էր վէմն
ի դերեզմանէն ։ քանզի էր
մեծ յոյժ ։

5 Էր մտեալ ի ներքս ի
դերեզմանն՝ տեսին երիտա-
սարդ մի, զի նստէր ընդ աջ-
մէ կողմանէ՝ զգեցեալ պատ-
մուճան ապխակ, և զարհու-
րեցան ։

6 Էր նա ասէ ցնոսա ։ մի
երկնչիք, զՅիսուս խնդրէք
զնազովրեցի զխաչեցեալն, յա-
րեաւ՝ չէ աստ ։ ահաւասիկ
տեղին՝ ուր եդին զնա ։

7 Այլ երթայք ասացէք
ցաշակերտս նորա և ցպետ-
րոս՝ եթէ առաջադագոյն
երթայ քան զձեզ ի գալի-
լիա, անդ տեսանիցէք զնա՝
որպէս ասաց ձեզ ։

8 Էր իբրև լուան՝ ելին
և փախեան ի դերեզմանէն,
քանզի զահն հարեալ էին և
չէ ումեք ինչ ասացին, զի
երկնչէին ։

9 Յարուցեալ Յիսուս ա-
ռաւօտուն առաջինի միաշա-

3 Էր իրար ասումէին՝ ինչ
պիտի էր քարը մեզ համար
դերեզմանի դրանիցն դէն
թաւլանք ։

4 Էր նայեցին տեսին՝ որ
քարն դերեզմանիցն հեռու էր
թաւլատած ։ ինչուար չատ մեծ
էր ։

5 Էր դերեզմանի մէջն որ
մտին, մին երիտասարդ տեսին՝
որ աջ կողմն նստած էր՝ սպի-
տակ կապոյ հագած, և չատ
վախցան ։

6 Նա ասաց նոցանից ։
մի վախնաք ։ դուք Յիսուս
Նազովրեցի խաչվածըն էք ո-
գուտ ։ նա յարութիւն առաւ ։
կատակ չէ ։ ահա էն տեղըն՝
ուր որ նորան դրին ։

7 Հայդ գնայէք նորա ա-
շակերտներն և պետրոսին ա-
սացէք՝ թէ ձեզ նա ձեզա-
նից առաջ կըգնայ գալիլեա
կատակ կըտեսանէք նորան՝ ին-
պէս որ նա ասաց ձեզ ։

8 Էր կրթար լսեցին՝ դուրս
եկին և փախան գերեզմանիցն,
պատճառնար՝ ահով բռնը-
ված էին, և խոկ մէնին բան
չասացին ։ ինչուար վախնում-
էին ։

9 Յիսուս որ յարութիւն
առաւ՝ միշաբթի առաւօ-

բաղձուն՝ երևեցաւ մարիամ մու մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դեւն ։

10 Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ որ ընդ նմայն էին, մինչդեռ սգային և լային ։

11 Նոքա երբեւ լուան՝ թէ կենդանի է, և երևեցաւ նմա, ոչ հաւատացին ։

12 Ցետոյ երևեցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան ։

13 Նոքա չքան պատմեցին այլոց, և ոչ նոցա հաւատացին ։

14 Ցետոյ մինչդեռ բազմեալ էին մեռատանքն՝ երևեցաւ նոցա, և թշնամանեաց զանհաւատուԹիւն նոցա և զխըստասրտուԹիւն . զի որ երևեցաւ նոցա յարուցեալ՝ ի մեռելոց՝ և նոքա ոչ հաւատացին ։

15 Եւ ասէ ցնոսա . երթա՛յք յաշխարհ ամենայն, և քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց ։

16 Որ հաւատայ և մկրտեցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի ։

17 Նշանք այսոքիկ՝ որ հաւատանն, երթիցեն զհետ այ-

տանց առաջ երևեցաւ մարիամ մագդաղենացոյն՝ որ նորանից եօթն դեւ էր հանել ։

10 Եւ նա գնաց պատմեց նորանց՝ որ նորա հետն էին, դեռ քանի որ լաց և սուգ էին անում ։

11 Նորանք երբոր լսեցին՝ թէ (նա) կենդանի է, և երևեցաւ նորան՝ չը՛հաւատացին ։

12 Ցետոյ ուրիշ կերպարանքով երևեցաւ նորանց՝ որ յանդին էին գնում ։

13 Նորանք գնացին ուրիշներին պատմեցին՝ և նորանց էլ չը՛հաւատացին ։

14 Ցետոյ՝ երբոր տասնումէնն սեղան էին նստած՝ նորանց երևեցաւ և նորանց անհաւատութիւնն և քարասրտութին յանդիմանեց՝ որ չը՛հաւատացին նորանց , որ ինքն մեռելների միջիցն յարութիւն առած երևեցաւ նորանց ։

15 Եւ նորանց ասաց՝ գնացէք ամէն աշխարհք, և աւետարանըն ամէն ըստեղծուածներին քարոզեցէք ։

16 Որ որ հաւատայ և մկրտվի՝ կապրի . և որ որ չը՛հաւատայ՝ կըդատապարտվի ։

17 Նորանց՝ որ հաւատացմեն, էս նշաններս կըհետևին·

նոցիկ · յանուն իմ դեւս հանցին , լեզուս խօսեսցին ,

18 Ի ձեռս իւրեանց օձս քարձցեն , և եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ · Ի վերայ հիւանդացս ձեռս դիցեն՝ և բժշկեսցին ։

19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս , և նստաւ ընդ աջմէ հօր ։

20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցութեամբ · և զբանն հաստատէին ամենայն նշանօք՝ որ երթայր ղհետ նոցա ։

իմ անուանովս դեւերը կըհանեն , լեզուները կըխօսին ,

18 իրանց ձեռներովն օձեր վեր կառնեն , և եթէ որ մին մահադեղ խմեն՝ վնաս չի՛ տալ նորանց · հիւանդներվն վերայ ձեռք կըդնեն՝ և կըբժշկվին։

19 Եւ ինքն Տէր Յիսուսն նորանց հետ խօսելուն ետև՝ երկինքն համբարձաւ , և հօր աջ կողմն նստեց ։

20 Եւ նորանք դուրս գընացին , բոլոր աշխարհքի մէջն քարոզուելով՝ Տէրն օգնականութիւնովն , և Աստուծոյ խօսքըն հաստատուելով՝ ամէն նշաններով՝ որ հետևումէին նորանց ։

ԵՒԹՏՐՈՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻՈՅ

ԳԼՈՒԽ ՌՈՒՋԻՆ

1 Հրանդի բազումք ժո-
ժարեցին վերստին կարգել
պատմութիւնն վասն լրացն
հաստատելոց ՚ի մեզ ։

2 Որպէս աւանդեցին մեզ՝
որ ՚ի սկզբանէ ականատեսք
և սպասաւորք եղեն բանին ։

3 Կամ եղև և ինձ, որ ՚ի
սկզբանէ զհետս երթեալ էի
ամենայնի՝ ճշմարտութեամբ
կարգաւ գրել քեզ՝ քաջդ
Թէոփիլէ ։

4 Զի ծանիցես զբանիցն՝
որոց աշակերտեցար, զճշմար-
տութիւն ։

5 Ի հ եղև յաւուրս հե-
րովդէի արքայի հրէաստանի,
քահանայ ոմն անուն զաքա-
րիա ՚ի դասակարգէ աբիայ ։
և կին նորա ՚ի դստերաց ա-
հարովնի, և անուն նորա ե-
լիսաբեթ ։

6 Ի հ էին արդարք երկո-

1 Որովհետև շատ մար-
դիք յօժարեցին՝ որ նոր կար-
գեն էն բաներէն պատմու-
թիւնը՝ որ մեր մէջն հաս-
տատուեցան ։

2 Ինչպէս որ մեզ աւանդե-
ցին նորանք՝ որ սկըզբէն է
բանց աչքովն տեսին և սպա-
սաւոր էլան բանին ։

3 Ես էլ, որ սկըզբէն ա-
մէն բաներէն ճշմարտութե-
նով հետևեցի՝ կամեցայ, որ
կարգով գրեմ քեզ՝ ով պա-
տուականդ Թէոփիլէ ։

4 Որ իմանաս էն բաներէն
ճշմարտութիւնը, որ սովո-
րեցեր ։

5 Ի հ հերովդէս հրէաստա-
նի (Ջհուտասդանի) թագա-
ւորի օրերուն, մին քահանայ
էլաւ վաքարիա անուն՝ աբի-
այի դասակարգութենէն. և
նորա կինն ահարօնի աղջիկ-
ներէն, և նորա անունն ե-
լիսաբեթ ։

6 Ի հ երկուսն էլ Ա-

քին առաջի Աստուծոյ, գնայ ի յամենայն պատուիրանս և յիրաւունս Տեառն անարատ։

7 Եւ ոչ դոյր նոցա որդեակ, քանզի եղիսաբեթ ամուլ էր. և երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց։

8 Եւ եղև ի քահանայանալն նորա ըստ կարգի առաջի Աստուծոյ,

9 Ըստ օրինի քահանայութեանն՝ եհան նմա խունկ արկանել մտեալ ի տաճարն Տեառն։

10 Եւ ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝ ի ժամ խնկոցն։

11 Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն. զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն։

12 Եւ խռովեցաւ զաքարիա՝ իբրև եւես, և անկաւ ահ ի վերայ նորա։

13 Ասէ ցնա հրեշտակն Տեառն. մի երկնչիր զաքարիա՝ զի լսելի եղեն աղօթք քո, և կին քո եղիսաբեթ ծնցի քեզ որդի՝ և կոչեսցես զանուն նո-

տուածոյ առաջին արդար է՝ ինն՝ և Տէրն ամէն պատուիրանօքն և իրաւունքն բուն անմեղ էին գնում։

7 Եւ նորանք որդի չունէին, պատճառնոր՝ եղիսաբեթն ամուլ (չբեբէր) էր. և երկուսն էլ իրանց օրերըն անց էին կացրել։

8 Եւ էլաւ որ՝ երբոր նա Աստուծոյ առաջին քահանայութիւն էր անում՝ իրան հասած կարգի օրերում,

9 Քահանայութեան սովորութեան պէս (վիճակ) ընկաւ նորան՝ որ Աստուծոյ տաճարն մտնէ, և խնկարկութիւն անէ։

10 Եւ ժողովրդի ամէն բազմութիւն դուրսն աղօթք էին անում՝ խնկարկութեան ժամանակում։

11 Եւ Տէրի հրեշտակն երևեցաւ նորան. որ կանգնած էր խնկի սեղանի աջ կողմն։

12 Եւ զաքարիան երբոր տեսաւ՝ շփոթվեցաւ, և վախ ընկաւ նորա վերայ։

13 Տէրի հրեշտակն նորան ասաց. մի վախենար զաքարիա. ինչուր՝ քո աղօթքդ լսվեցաւ, և քո եղիսաբեթ կինդ մին որդի կըծնի քեզ՝ և նո-

բա Յովհաննէս ։

14 Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն, եւ բազումք ի ծննդեան նորա խնդասցեն ։

15 Զի եղիցի մեծ առաջի Տեառն ։ Եւ գինի եւ օղի մի արբցէ ։ Եւ հոգւով սրբով լցցի անդստին Յորովայնէ մօր իւրոյ ։

16 Եւ զբազումս յորդւոցն իսրայէլի դարձուսցէ ի Տէր Աստուած իւրեանց ։

17 Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով զօրութեամբ եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յորդիս, և զանհաւանս յիմաստութիւն արդարոց ։ պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ ։

18 Եւ ասէ զաքարիա ցհրեշտակն ։ Եւ ի՞նչ գիտասցէ զայդ, զի ես ծեր եմ, և կինն իմ անցեալ զաւուրբք իւրովք ։

19 Պատասխանի եւ հրեշտակն և ասէ ցնա ։ ես եմ գաբրիէլ՝ որ կամ առաջի

բա անունըն Յօհաննէս կոչեսցես ։

14 Եւ քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն կըլլայի, և շատ մարդիկ նորա ծնվելոյն կուրախանան ։

15 Ինչուոր՝ (նա) մեծ կըլլի նի Տէրի առաջին՝ և գինի և և օղի (հոբէեանօզ խմելիս) լմնզ չը՛խմէ, և դեռ իրան մօր փորուն՝ սրբ հոգովն կըլցվի ։

16 Եւ իսրայէլի որդիքնե բիցն շատ հոգի կըդարձնէ դէպի իրանց Տէր Աստուածըն ։

17 Եւ ինքն կըգայ նորա առաջին եղիայի հոգովն և զորութենովն՝ որ հարանց սըրտերըն դէպի որդիքն դարձընէ՛, և անհնազանդներն դէպի արդարների իմաստութիւնըն՝ որ Տէրին համար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ ։

18 Եւ զաքարիան հրեշտակին ասաց ։ ապա ինչո՞վ ճանաչեմ էդ բանըդ ։ պատճառոր՝ ես ծեր եմ, և իմ կինս իրան օրերըն անց է կացրել ։

19 Հրեշտակն պատասխան տուաւ և նորան ասաց ։ ես գաբրիէլն եմ՝ որ Աստուծոյ

Աստուծոյ, և առաքեցայ խօսել ընդ քեզ՝ և աւետարանել քեզ զայդ։

20 Եւ ահա եղիցիս համր, և մի կարասցես խօսել մինչև ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխանակ որ ոչ հաւատացեր բանիւ իմով՝ որք լցցին ի ժամանակի իւրեանց։

21 Եւ ժողովուրդն սկսաւ նեղ զաքարիայ, և զարմանային ընդ յամրէն նորա ի տաճարին։

22 Եւ իբրև ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա. և իմացան՝ թէ տեսիլ եւս ի տաճարին. և նա նշանագրի խօսէր ընդ նոսա, և կայր պատանձեալ։

23 Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տուն իւր։

24 Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ եղիսաբեթ կինն նորա, և թաքուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր.

25 Զի՛նչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ։

առաջնոյն եմ կանչուիմ, և ուղարկիւեցայ՝ որ քեզ հետ խօսիմ, և եդ բանըդ քեզ աւետիք տամ։

20 Եւ ահա համր (լռիւ) կըլլնիս, և չես կարենալ խօսիլ, մինչև էն օրն՝ որ եդ բանըդ կըլլնի. պատճառն որ՝ չը հաւատացիր իմ խօսքերիս՝ որ իրանց ժամանակուանն պիտի կատարվին։

21 Եւ ժողովուրդն սպասաւէին զքաքարիային՝ և զարմանային նորա տաճարի մէջուանն ուշանալոյն համար։

22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէր կարում խօսիլ նորանց հետ. և իմացան՝ թէ տեսիլ տեսաւ. և նա նշաններով էր խօսում նորանց հետ՝ և կար պապանձված։

23 Եւ էլաւ՝ երբոր նորա պաշտօնի օրերն լցվան, գընաց իրան տունն։

24 Եւ էն օրերիցն ետև նորա եղիսաբեթ կինն յղացաւ, և հինգ ամիս իրան անձն ծածուկ էր պահում՝ և ասում էր.

25 Ինչ բան է՝ որ Տէրն ինձ վերայ գործեց էս օրերումս՝ որ ինձ վերայ նայեց՝ որ իմ նախատինքըս մարդկանց միջոյն վեր առնէ։

26 Եւ յամենայն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Աստուծոյ՝ ի քաղաք մի գալիլեացւոց, որում անուն էր Նազարեթ,

27 առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ ի տանէ Դաւթի. եւ անուն կուսին Մարիամ։

28 Եւ եկեալ առ նա՝ ասէ. ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ։

29 Եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի՛ իցէ ողջոյնս այս։

30 Եւ ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս առ Աստուծոյ։

31 Եւ ահա յղասջիր՝ եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս։

32 Նա եղիցի մեծ, եւ որդի բարձրելոյն կոչեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն դաւթի հօր նորա. եւ թագաւորեսցէ ի վերայ տանն յակովբայ ի յաւիտեան։

33 Եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի։

26 Եւ վեցերորդ ամսում գաբրիէլ հրեշտակն Աստուածանից ուղարկվեցաւ գալիլեացոց մին քաղաք՝ որ նորա անունն նազարեթ էր,

27 Մին կուսի մօտ՝ որ նշանված էր մին մարդոյ՝ որ նորա անունն յօսէփ էր՝ գաւթի տնից. եւ էն կուսի անունն մարիամ (էր)։

28 Եւ հրեշտակն որ նորա մօտ եկաւ՝ ասաց՝ ուրախ լեր շնորհքով լցվածդ. Տէրն քեզ հետ։

29 Եւ նա էն խօսքերին համար շփոթվեցաւ, եւ լրան մտքումն մտածումէր՝ թէ ինչպէսի բան պիտի լինի էս բարեւս։

30 Եւ հրեշտակն նորան ասաց. մի վախենար մարիամ. ինչուր՝ Աստուածանից շնորհք գտար։

31 Եւ ահա կը յղանաս՝ եւ որդի կը ծնիս. եւ նորա անունն Յիսուս կը կանչես։

32 Նա մեծ կը լինի, եւ որդի բարձրելոյն կը կոչվի. եւ Տէր Աստուած նորա գաւիթի հօր աթոռն կը տայ նորան. եւ յաւիտեան կը թագաւորէ։

33 Եւ նորա թագաւորութեանն վերջ չի լինիլ։

34 Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ դիտեմ:

35 Պատասխանի եւ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ որդի Աստուծոյ կոչեսցի:

36 Եւ ահա եղիսաբեթ ազգական քո՝ եւ նա յղի է ի ծերուհ իւրում. եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր.

37 Զի ոչ տկարասցի առ Աստուծոյ ամենայն բան:

38 Եւ ասէ Մարիամ. ահա աւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. եւ գնաց ի նմանէ հրեշտակն:

39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ:

40 Եւ եմուտ ի տունն Զաքարիայ, եւ ետ ողջոյն եղիսաբեթի:

41 Եւ եղև իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու եղիսաբեթ

34 Եւ Մարիամ ասաց հրեշտակին. Եդ բանդ ի՞նչպէս կրկնի ինձ, որ ես մարդ չեմ գիտում:

35 Հրեշտակն պատասխան առաւ եւ նորան ասաց. սո՛ր հոգին կըգայ քեզ վերայ, եւ բարձրելոյ զօրութիւնն քեզ վերայ շուաք կանէ. ինչու որ՝ նա էլ, որ քեզանից պիտի ծնվի, սո՛ր է, եւ Աստուծոյ որդի կըկոչվի:

36 Եւ ահա քո ազգական եղիսաբեթին, նա էլ յղի է իբրեն ծերուհենուն. եւ էս նորա վեցերորդ ամիսն է՝ նա որ ամուլ էր կոչված.

37 Ինչուոր՝ Աստուծոյ առաջին խոսք մին բան անկարելի չէ:

38 Եւ Մարիամն ասաց. ահա (ես) Տէրի աղախին (ըլլաշ) եմ. թող քո խոսքդ ինձ էս լինի ինձ. եւ հրեշտակն գնաց նորանից:

39 Մարիամն էն օրերուն վերկացաւ, եւ վռազով սարերի կողմն գնաց Յուդայի քաղաքն:

40 Եւ զաքարիայի տունն մտաւ, եւ եղիսաբեթին բարեւ տուաւ:

41 Եւ էլաւ երբոր եղիսաբեթն Մարիամու բարեւն

բելի , խաղայ մանուկն յո-
բովայնի նորա . և լցաւ եղի-
սաբեթ հոգւով սրբով .

42 Եւ ՚ի ձայն բարձր ազա-
ղակեաց և ասէ . օրհնեալ ես
դու ՚ի կանանս , և օրհնեալ
է պտուղ որովայնի քո :

43 Եւ ուստի՞ է ինձ այս ,
զի եկեսցէ մայր Տեառն իմոյ
առ իս :

44 Զի ահաւասիկ իբրև ե-
ղև ձայն ողջոյնի քո յականջս
իմ , խաղայ ցնծալով մա-
նուկս յորովայնի իմում :

45 Եւ երանի՛ որ հաւատա-
ցեալ եղիցի կատարումն
ասացելոցս նմա ՚ի Տեառնէ :

46 Եւ ասէ Մարիամ . մե-
ծացուսցէ անձն իմ զՏէր .

47 Եւ ցնծացաւ հոգի իմ
Աստուածն փրկիչ իմ ,

48 Զի հայեցաւ ՚ի խոնար-
հութիւն աղախնոյ իւրոյ . զի
ահա յայսմհետէ երանեսցեն
ինձ ամենայն ազգք :

49 Զի արար ինձ մեծա-
մեծս հզօրն , և սուրբ է ա-
նուն նորա :

50 Եւ ողորմութիւն նորա
ազգաց յազգս երկիւղածաց
իւրոյ :

լսեց , երեխան նորա փորուձ
խաղաց . և եղնաբեթ սուրբ
հոգով լցուաւ .

42 Եւ բարձր ձայնով ա-
ղաղակեց և ասաց . օրհնեալ
ես դու կանանց միջումն , և
օրհնեալ է քո փորի պտուղն :

43 Եւ ես ի՞նչ տեղից է ինձ՝
որ իմ Տէրի մայրն ինձ մօտ
գայ :

44 Ինչուոր՝ ահա երբոր քո
բարեւի ձայնն իմ ականջս հա-
սաւ , իմ երեխաս իմ փորիս
մէջն ուրախանալով խաղաց :

45 Եւ երանի է նորան՝ որ կը-
հաւատայ՝ թէ էն բաներն կը-
կատարվին , որ Տէրիցն իրան
ասված են :

46 Եւ մարիամն ասումէր .
Թող իմ անձս փառաւորէ
Տէրին .

47 Եւ իմ հոգիս ուրախա-
ցաւ՝ իմ փրկիչ Աստուծոմս :

48 Պատճառնոր՝ իրան ա-
ղախնոյ (ստրուհուն) խոնարհու-
թեանն մտիկ տուաւ , ինչու
որ՝ ահա հիմիկուց եւս ա-
մէն ազգերն երանի կըտան
ինձ :

49 Պատճառնոր՝ զօրաւորն
մեծ մեծ բաներ արաւ ինձ ,
և սուրբ է նորա անունն :

50 Եւ նորա ողորմութիւնն
սերոնդ սերունդ աստուածա-
վախներին վերայ է :

51 Ընդ որում եղեւ բազ-
կաւ իւրով · ցրուեաց զամ-
բարտաւանս մտաց սրտից իւ-
րեանց ։

52 Քակեաց զՀզօրս յա-
թոռոց , և բարձրացոյց զխո-
նարհս ։

53 Զքաղցեալս լցոյց բա-
րութեամբ , և զմեծատունս
արձակեաց ունայնս ։

54 Պաշտպանեաց Իսրայէլի
ծառայի իւրում՝ յիշել զո-
ղորմութիւնս ։

55 Որպէս խօսեցաւ առ
Հարս մեր՝ Աբրահամու և
զաւակի նորա՝ յաւիտեան ։

56 Եւ կայ Մարիամ առ նմա
իբրև ամիսս երիս , և դար-
ձաւ ՚ի տուն իւր ։

57 Եւ եղիսաբեթի լցան
ժամանակք ծննանելոյ , և
ծնաւ որդի ։

58 Եւ լուան որ շուրջ զնո-
վաւ էին՝ և ազգատոհմ նո-
ա , զի մեծ արար Տէր զո-
ղորմութիւն իւր ընդ նմա ·
և խնդացին ընդ նմա ։

59 Եւ եղև յաւուրն ու-
թերորդի՝ եկին թլփատել
զմանուկն , և կոչէին զնա
յանուն հօր իւրոյ զաքարիա։

51 Զ օրութիւն արաւ ի-
րան բազուկովն՝ ցրուեց ամ-
բարտաւանները իրանց սըր-
տի մտածմունքներովն ։

52 Զ օրաւորներին իրանց
աթոռիցն կործանեց , և խո-
նարհներին բարձրացրուց ։

53 Սովածներին բարութե-
նով լցրուց, և հարուստներին
դատարկ թողեց ։

54 Իրան իսրայէլ ծառային
խնամք տարաւ՝ իրան ողոր-
մութիւններըն յիշելով ։

55 Ինչպէս որ մեր հարանց
խոստացաւ՝ աբրահամին և
նորա զաւակին՝ մինչև յաւի-
տեան ։

56 Մարիամ մնաց նորա մօտ
երեք ամսի չափ՝ և (ապա)
դարձաւ իրան տունն ։

57 Եւ եղիսաբեթի ծնա-
նելոյ ժամանակն լցվաւ , և
որդի ծնաւ ։

58 Եւ նորանք՝ որ նորա
չորս կողմինն էին՝ և նորա
ազգականները լսեցին՝ թէ
Տէրն իրան ողորմութիւնը
մեծ արաւ նորա վերայ · և
ուրախացան նորա հետ ։

59 Եւ էլաւ՝ ութ օրուն
եկին, որ երեխային թլփա-
տեն , և նորան իրան հօր ա-
նունովն զաքարիա էին կո-
չում ։

60 Պատասխանի եւ մայր նորա եւ ասէ. ոչ՝ այլ կոչեսցի Յովհաննէս:

61 Եւ ասեն ցնա. քանզի ոչ ոք է յազգի քումմէ, որոյ կոչի անուն Յովհաննէս:

62 Ակնարկէին հօրն նորա՝ թէ զի՞նչ կամիցի կոչել զնա:

63 Եւ խնդրեաց տախտակ, գրեաց՝ եւ ասէ. Յովհաննէս է անուն դորա. եւ զարմացան ամենեքին:

64 Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի՝ եւ լեզուն նորա, եւ խօսէր՝ եւ օրհնէր զԱստուած:

65 Եւ եղեւ ահ ՚ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զայս, եւ որ շուրջ բնակեալ էին զնոքօք. եւ ընդ ամենայն լեռնականսն հրէաստանի պատմէին ամենայն բանքս այսոքիկ:

66 Եւ եդին ամենեքեան՝ որ լսէին՝ ՚ի սիրտս իւրեանց, եւ ասէին. զի՞նչ լինիցի մանուկս այս. եւ ձեռն Տեառն էր ընդ նմա:

67 Եւ զաքարիա հայր նորա լցաւ հոգւով սրբով, մարգարէացաւ եւ ասէ.

68 Օրհնեալ Տէր Աս-

60 Ընդ մայրն պատասխանի տուաւ եւ ասաց. չէ՝ այլ կոչեսցի Յովհաննէս պիտի կոչուի:

61 Եւ նորան ասացին՝ թէ ոչ ով չէ՛կայ քո ազգումդ՝ որ նորա անունն Յոհաննէս կոչուի:

62 Նորա հօրն աչքով էին անուամ՝ թէ ի՞նչ կը կամենայ կոչել նորան:

63 Եւ նա տախտակ խնդրեց, գրեց՝ եւ ասաց. դորա անունն Յոհաննէս է. եւ ամենքն զարմացան:

64 Եւ շուտով նորա բերանն եւ լեզուն բացուաւ. եւ խօսումէր՝ եւ Աստուծոյն օրհնումէր:

65 Եւ ահ ընկաւ ամենին վերայ, որ էս (բանըս) լսումէին, եւ որ նորանց չորս կողմանն բընակուածք էին. եւ հրէաստանի սարերուն ամէն կողմերումն էս ամէն բանըրս պատմըվումէին:

66 Եւ ամենքն՝ որ լսումէին՝ իրանց սրտերումն դրին եւ ասացին. էս երեխան ի՞նչ պիտի լինի. եւ Տէրի ձեռն նորա հետն էր:

67 Եւ նորա հայր զաքարիան սուրբ հոգով լցաւ, մարգարէացաւ եւ ասաց.

68 Օրհնեալ է իսրայէլի

տուաճ Իսրայէլի, զի յայց եղ մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրում ։

69 Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ ։

70 Որպէս խօսեցաւ բերանով սրբոյ՝ որ յաւիտենից մարգարէիցն նորա էին ։

71 Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց ։

72 Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, և յիշել զուխտն իւր սուրբ՝

73 Զերդումն, զոր երդուաւ աբրահամու հօր մերում՝ տալ մեզ,

74 Առանց երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս, պաշտել զնա,

75 Սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց ։

76 Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյ կոչեսջիր. զիեր թիցես առաջի երեսաց Տեառն պատրաստել զճանապարհս նորա ։

ՏԵՐ Աստուածն՝ որ մեզ տեսութիւն եկաւ՝ և իւրան ժողովրդին համար փրկութիւն արաւ ։

69 Եւ իւրան դաւիթ ծառայի տանիցն փրկութեան եղջիւր վերկացրուց մեզ համար ։

70 Ինչպես որ խօսեց սրբոց բերանովը՝ որ յաւիտենից նորա մարգարէներն էին ։

71 Փրկութիւն մեր թշնամիներից, և ամէն մեզ ատողների ձեռքից ։

72 Որ մեր հարանց վերայ ողորմութիւն անէ, և իրան ուրբ ուխտը և պայմանը յիշէ՝

73 Ին երդումն, որ մեր հայր աբրահամին երդուաւ՝ որ մեզ տայ,

74 Որ մեր թշնամիների ձեռքից ազատուած՝ առանց վախի պաշտենք իրան,

75 Սրբութենով և արդարութենով նորա առաջին՝ մեր կենաց ամէն օրերում ։

76 Եւ դու ով երեխայ՝ բարձրելոյն մարգարէ կըկոչուիս ։ ինչուր՝ պիտի գնաս Տէրի երեսայ առաջին՝ որ նորա ճանապարհը պատրաստես ։

77 Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ՚ի թողութիւն մեղացն նոցա ։

78 Ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ արեգակն ՚ի բարձանց ։

79 Երևել՝ որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու նըստեին, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան։

80 Եւ մանուկն աճէր՝ և զօրանայր հոգւով . և էր յանապատս մինչև յօր երևելոյ նորա իսրայէլի ։

77 Նորա ժողովրդին փրկութեան գիտութի տաս՝ իւրանց մեղացն թողութեան համար ։

78 Որ ողորմութեան համար, որ նորանով արեգակն վերևիցն տեսութիւն եկաւ մեզ ։

79 Որ երևի նորանց՝ որ խաւարուտին և մահի շուաքումն նստած էին, որ մեր ոտները դէպի խաղաղութեան ճանապարհն շիտակէ ։

80 Եւ երեխան աճումէր՝ և հոգով զօրանումէր . և անապատներումն (ἐρήμοις) էր մինչև էն օրն՝ որ նա երևեցաւ իսրայէլին ։

ԳԼ . Բ ։

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ եել հրաման յոգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս ։

2 Այս առաջին աշխարհագիրն եղև ՚ի դատաւորութեան ասորւոց կիւրենեայ ։

3 Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիրն յիւրաքանչիւր քաղաքն։

4 Եել և յովսէփ ՚ի գա-

1 Եւ հէլաւ որ էն օրերումն՝ հրաման դուրս եկաւ օգոստոս կայսերից, որ աշխարհքի միջի մարդիքն գրի տակ ձգվին ։

2 Այս առաջին աշխարհագիրն կիւրենի ասորոց դատաւորութեան ժամանակումն էլաւ ։

3 Եւ ամենքն գնումէին որ էն աշխարհագիրն մտնեն ամէն մէկն իրան քաղաքն

4 Յոսէփն էլ գալիլեայի

լինէք ՚ի քաղաքէ նազարեթ՝ ՚ի հրէաստան ՚ի քաղաք դաւթի, որ կոչի բեթղեհեմ · վասն լինելոյ նորա ՚ի տանէ և յազգէ դաւթի,

5 Մտանել յաշխարհս մարեմաւ հանդերձ՝ զոր խոստացաւն էր նմա, և էր յղի։

6 Եւ եղև ՚ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա։

7 Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց ՚ի խանձարուրս՝ և եդ զնա ՚ի մսուր · զի ոչ գոյր նոցա տեղի յիջևանին։

8 Եւ հովիւք էին ՚ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։

9 Եւ հրեշտակ Տեառն եբաւ եցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցին առ նոսա. և երկեան երկիւղ մեծ։

10 Եւ ասէ ցնոսա հրեշտակն · մի երկնչիք՝ զի ահա աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն ·

ցըն՝ նազարէթէ քաղաքէն գնաց հրէաստան (ըստհոռոմն) դաւթի քաղաքն, որ բեթղեհեմ է կոչվուս · ինչուր՝ նա դաւթի տանէն և ազգէն էր,

5 Որ աշխարհագիրն մանէ մարիամու հետ՝ որ նշանված էր նորան, և յղի էր։

6 Եւ երբոր նորանք էն տեղ հասին, նորա ծնանելոյ օրերն լցվան։

7 Եւ իրան առաջինեակ որդին ծնաւ, և պատեց խանձարուրներէ (քաբոնէէ) մէջ՝ և մսուրի (խորէ) մէջ դրաւ · ինչուր՝ էն վէրգալոյ տեղումն տեղ չըկար նորանց համար։

8 Եւ էն տեղումն հովիւներ (չօպաններէ) կային դուրս տեղն կացօղ՝ որ գիշերի ժամանակն իրանց հօտերն (ֆըրոներըն) պահուսկին։

9 Եւ Տէրի հրեշտակն երևեցաւ նորանց, և Տէրի փառքն նորանց վերայ ծագեց. և մեծ վախով վախեցան։

10 Եւ հրեշտակն նորանց ասաց · մի վախենաք, ինչուր՝ ահա մեծ ուրախութեան աւետիք եմ տալիս ձեզ, որ ամէն ժողովրդին պիտի լինի·

11 Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի դաւթի։

12 Եւ այս նշանակ ձեզ. դտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս, և եդեալ ի մսուր։

13 Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած՝ և ասէին.

14 Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։

15 Եւ եղեւ իբրև վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչև ցբեթղէհէմ, և տեսցուք զբանս այս՝ որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։

16 Եւ եկին փութանակի. և գտին զՄարիամ և զՅովսէփ, և զմանուկն եդեալ ի մսուր։

17 Եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։

18 Եւ ամենեքեան՝ որ լսէին, զարմանային վասն բանիցն՝

11 Պատճառնոր՝ ես օր ձեզ փրկիչ ծնեալ՝ դաւթի քաղաքումն, որ նա օծեալ Տէր է։

12 Եւ ես լինի՛ ձեզ նշանակ մին երեխայ կըդտնիք խանձարուրներով (քաթաւչներով) պատած, և մսուրի (աֆորի) մէջ դրած։

13 Եւ յանկարծակի էն հրեշտակին հետ էլաւ երկնաւոր զօրքի բազմութիւնըն, որ Աստուծոյն օրհնութիւնին՝ և ասում.

14 փառք (լինի՛) Աստուծոյ ի բարձունս, և երկրի վերայ խաղաղութի, և մարդկանց մէջ հաճոյութիւն։

15 Եւ էլաւ երբոր հրեշտակներըն նորանցից վերացան երկինքն, հովիւներըն (չօպաններն) իրար ասացին. եկէք գնանք մինչև բեթղէհէմ, և տեսնենք բիչ է ես բանս՝ որ էլաւ, որ Տէրն ցոյց տուաւ մեզ։

16 Եւ վռազով եկին և գտին մարիամին և յոսէփին, և երեխային մսուրի մէջ դրած։

17 Եւ իմացան էն բանըն՝ որ էն երեխայի համար ասվեցաւ նորանց։

18 Եւ ամէնքն՝ որ լսումին, զարմանում էն բաներին

ղոք լսեցան ընդ նոսա հո-
վիւքն ։

19 Եւ Մարիամ զամենայն
զբանս զայսոսիկ պահէր, և խոր-
հէր նոքա ի սրտի իւրում։

20 Եւ դարձան հովիւքն,
փառաւորք առնէին և օրհնէին
զԱստուած վասն ամենայնի՝
զոր լուան և տեսին . որպէս
պատմեցաւ նոցա ։

21 Եւ իբրև լցան աւուրք
ութ թլփատել զնա, և կո-
չեցաւ անուն նորա Յիսուս՝
որ կոչեցեալն էր ի հրեշ-
տակէն , մինչեւ յղացեալ էր
զնա յորովայնի ։

22 Եւ իբրև լցան աւուրք
սրբութեան նորա ըստ օրի-
նացն Մովսէսի , ածին զնա
յԵրուսաղէմ Յանդիման առ-
նել Տեառն ։

23 Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն , Թէ ամենայն արու՝
որ բանայ զարգանդ , սուրբ
Տեառն կոչեսցի ։

24 Եւ տալ պատարագս՝ ըստ
ասացելոյն յօրէնս Տեառն,
զոյգ տատրակաց , կամ եր-
կուս ձագս աղաւնեաց ։

25 Եւ ահա այր մի էր Յե-
րուսաղէմ , որոյ անուն էր

համար՝ որ հովիւներն նո-
րանց հետ խօսեցին ։

19 Եւ Մարիամ էս ամէն
բաներըս պահում էր , և իրան
սրտումն մտածում էր ։

20 Եւ հովիւներն դարձան.
Աստուծոյն փառաբանում էին
և օրհնում էին ամէն բա-
ներին համար՝ որ տեսին. ինչ-
պէս որ նորանց պատմուե-
ցաւ ։

21 Եւ երբոր ութ օր լցաւ՝
որ նորան թլփատեն , նորա
անունն Յիսուս կոչուեցաւ՝ էն
որ հրեշտակիցն էր կոչած,
դեռքանի որ նա չէր Քաղ-
ված փորումն ։

22 Եւ երբոր նորա սըր-
բութեան օրերն լըցվան՝ մո-
սէսի օրէնքին պէս, նորան տա-
րան երուսաղէմ՝ որ Տէրի ա-
ռաջին կանգնացնեն ։

23 Ինչպէս որ Տէրի օրէն-
քումն գրված է՝ Թէ ամէն ա-
րու (որչ ջուհ)՝ որ արգանդ
բանայ, Տէրին սուրբ պիտի
կոչվի ։

24 Եւ որ Տէրի օրէնքումն
ասածին պէս պատարագ բե-
րեն մին զուխտ տատրակ
(ղո-տրէ), կամ աղաւնու երկու
ձագ ։

25 Եւ ահա երուսաղէմումն
մին մարդ կար՝ որ նորա ա-

սիմէոնին. և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի, և հոգի սուրբ էր ի նմա։

26 Եւ էր նորա հրամանն առեալ ի հոգւոյն սրբոյ՝ մի տեսանել զմահ, մինչև տեսցէ զօծեալն Տեառն։

27 Եւ եկն հոգւովն ի տաճարն. և իբրև մատին ծնօղքն զմանուկն Յիսուս առնել նոցա ըստ սովորութեան օրինացն ի վերայ նորա.

28 Եւ նա առընկալաւ զնա ի գիրկս իւր, և օրհնեաց զԱստուած, և ասէ.

29 Ընդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քումմ ի խաղաղութիւն.

30 Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո,

31 Զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

32 Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քումմ Իսրայէլի։

33 Եւ էին հայրն և մայրն նորա զարմացեալ ի վերայ բանիցն, որ խօսէին վնմանէ։

34 Եւ օրհնեաց նոսա սիմէոն նուէնն սիմէօն էր. և էն մարդն արդար և աստուածավախ էր, և իսրայէլի մխիթարութեանն սպասումէր, և սուրբ հոգի կար նորանումմ։

26 Եւ նա սուրբ հոգուէն հրաման էր առեալ՝ որ մահ չըտեսնէ, մինչև որ Տէրի օծեալըն տեսնէ։

27 Եւ նա հոգովն եկաւ տաճարն. և երբոր ծնօղներն Յիսուս երեխային բերին՝ որ օրէնքի սովորութեան պէս նորա վերայ անեն.

28 Նա էլ նորան առաւ ընդունեց իրան գիրկն, և Աստուծոյն օրհնեց՝, և ասաց.

29 Տէր հիմիկ քո խօսքիդ պէս խաղաղութեամբ ես արձակումմ քո ծառայիդ.

30 Ինչուորտ՝ իմ աչքերս քո փրկութիւնըդ տեսին,

31 Որ նորան ամէն ժողովուրդների առաջին պատրաստեցիր։

32 Լոյս՝ որ հեթանոսներին պիտի յայտնըվի, և փառք քո իսրայէլ ժողովըրդիդ համար։

33 Եւ նորա հայրն և մայրն զարմացել էին էն բաներին վերայ՝ որ նորա համար խօսվում էին։

34 Եւ սիմէօնն օրհնեց նո-

մեռնի, և ասէ ցմարիամ մայր նորա. ահա սա կայ ի գլուխի և ի կանգնումն բազմաց ի մէջ իսրայէլի, և ի նշան հակառակութեան։

35 Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր, զի յայտնեսցին ի բազումսրտից խորհուրդք։

36 Եւ անդ էր աննա մարգարէ՝ դուստր փանուէլի յազգէ ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ընդ առն ամս եօթն ի կուսութենէ իւրմէ։

37 Եւ էր այրի ամաց իբրև ութսուն և չորից՝ որ ոչ մեկնէր ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զցայգ և զցերեկ։

38 Եւ սա ի նմին ժամու յարուցեալ դոհանայր ըզՏէն, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակն ունէին փրկութեանն երուսաղէմի։

39 Եւ իբրև կատարեցին զամենայն ըստ օրինացն Տեառնէն, դարձան անդրէն ի գալիլեա ի քաղաքն իւրեանց նազարեթ։

40 Եւ մանուկն աճէր և զօ-

բանայ, և նորա մայր մարիամին ասացեալ. ահա սա կայ շատ մարդկանց համար ընկնելոյ և կանգնելոյ պատճառ իսրայէլի միջումն, և հակառակութեան նշան։

35 Եւ հենց քո անձնովդ սուր կանցնէ, որ շատ սրտերիս խորհուրդները յայտնըվին։

36 Եւ կնտեղ էր աննա մարգարէ՝ փանուէլի աղջիկ ասերի ազգիցն. սա ինքն շատ օրերըլ անց էր կացրել՝ որ իրան կուսութեան ժամանակին եօթն տարի էր ճնացել մարդոց հետ։

37 Եւ ութսուն և չորս տարոց չափ օրըևէրի էր՝ որ տաճարիցն չէր հեռանում, բայց պասով և աղօթքով դիշերուցերեկ ծառայումը (Ա Տն)։

38 Եւ սա էլ էն ժամուըմըն (սահմռուած) վերկացաւ և Տէրիցն գոհանումը, և նորա համար ամենին հետ խօսումը՝ որ երուսաղէմի փրկութեանն սպասումին։

39 Եւ երբոր ամէն բաներըն Տէրի օրէնքին պէս կատարեցին, կեա դարձան գալիլեա՝ իրանց նազարէթ քաղաքն։

40 Եւ երեխան աճումը

բանայր լի խաստուխթեամբ. և շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա :

41 Եւ երիթային ծնօղք նորա ամի ամի յերուսաղէմ ի տօն զատկին :

42 Եւ իբրև եղեն նորա ամք երկուասան, յերանեալ նոցա յերուսաղէմ ըստ սովորուխթեան տօնին,

43 Եւ կատարել զաւուրսն՝ և դառնալ անդրէն, Յիսուս մանուկն յերուսաղէմ. և ոչ գիտացին ծնօղքն նորա :

44 Կարծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրև աւուր միոյ ճանապարհ՝ և խնդրէին զնա ընդ ազգսն և ընդ ծանօթս :

45 Եւ իբրև ոչ գտին, դարձան անդրէն յերուսաղէմ խնդրել զնա :

46 Եւ եղև յետ երից աւուրց՝ գտին զնա ի տաճարին, զի նստեր ընդ վարդապետսն, լսեր ի նոցանէ, և հարցաներ զնոսա :

47 Զարմանային ամենեքեան՝ որ լսէին ի նմանէ՝ ընդ խաստուխթիւնն և ընդ պատասխանիս նորա :

և զօրանայր խաստուխթեամբ նոր լցեալ. և Աստուծոյ շնորհքն նորա վերայ էր :

41 Եւ նորա ծնօղքն տարուց տարի երուսաղէմ էին գնում զատկի տօնումն :

42 Եւ երբոր նա տասն երկու տարեկան էլաւ, նորանք տօնի սովորուխթեան պէս երուսաղէմ գնացին :

43 Եւ երբոր (էն) օրերն կատարվեցան՝ և յետ դարձան, Յիսուս տղան երուսաղէմումն մնաց. և նորա ծնօղքն չիմացան :

44 Կարծումէին՝ թէ նա Ճանապարհի ընկերներին հետ կըլինի. մին օրվան չափ ճանապարհ եկին՝ և նորան մանէին գալիս դրացիների (հարևաններն) և ծանօթների մօտն :

45 Եւ երբոր չը՛գտին, յետ դարձան երուսաղէմ՝ որ նորան ման գան :

46 Եւ էլաւ որ երեք օրից ետև նորան տաճարի մէջն գտին, որ վարդապետներին հետ նստած էր. նորանց ականջ էր դնում, և նորանցից հարցնում էր :

47 Եւ ամէնքն՝ որ նորանից լսումէին՝ զարմանումէին նորա խաստուխթեան և պատասխաններին վերայ :

48 Եւ իբրեւ տեսին զնա՝ ապանչացան. և ասէ ցնա մայրն Յր · Որդեակ՝ ընդէ՞ր գործ գործեցեր դու ընդ մեզ · ա՛ հաւասիկ հայր քո և ես տա՛ ռապեաք՝ խնդրէինք զքեզ ։

48 Եւ երբոր նորան տեսին՝ շատ զարմացան · և նորա մայրն ասաց նորան · որդեակ՝ ես ինչ բան արիր մեզ հետ · ահա՛ քո հայրդ և ես մեծ նեղութենով ման էինք գալիս քեզ համար ։

49 Եւ ասէ ցնոսա · զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք՝ եթէ ՚ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել ։

49 Եւ նորանց ասաց · ինչ էիք ինձ ման գալիս · չէի՞ք գիտում՝ թէ պէտք է, որ ես իմ հօր տանն լինիմ ։

50 Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա ։

50 Եւ նորանք չիմացան էն բանըն՝ որ նորանց հետ խօսեց ։

51 Եւ էջ ընդ նոսա, և գնաց ՚ի Նազարէթ · և էր նոցա հնազանդ · և մայր նորա պահէր զամենայն զբանսն ՚ի սրտի իւրում ։

51 Եւ նորանց հետ վէրկաւ, և գնաց նազարէթ · և նորանց հնազանդ էր · և նորա մայրն էն ամէն բանը րըն պահումէր իրան սրտումն ։

52 Եւ Յիսուս զարդանայր իմաստութեամբ և հասակաւ, և շնորհօք Աստուծոյ և ՚ի մարդկանէ ։

52 Եւ Յիսուս աճումէր իմաստութենով և հասակով, և շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց առաջին ։

ԳԼ · Գ ·

1 ՚Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն տիբերիոսի կայսեր, ՚ի դատաւորութեան հրէաստանի պիղատոսի պոն տացւոյ, և ՚ի չորրորդպետութեան գալիլեացւոյ հերովդէ, և ՚ի փիլիպպոսի եղբօր

1 Տիբերիոս կայսերի տէրութեան տասն և հինգ տարուն, պոնտացի պիղատոսի հրէաստանի վերայ դատաւորութեան ժամանակուն, և հերոդէսի՝ գալիլեացոց վերայ չորրորդապետութեան

նորա չորրորդ պետութեան ի-
տուբացւոց և տրաքոնացւոց
աշխարհին , և ի չորրորդ պե-
տութեան լիսանեայ աբի-
լենացւոց ,

2 Եւ ի քահանայապետու-
թեան աննայի և կայիափայ՝
եղև բան Աստուծոյ ի վերայ
Յովհաննու որդւոյ զաքարիայ՝
յանապատի անդ :

3 Եւ եկն յամենայն կողմն
Յորդանանու քարոզել մկրը-
տութիւն ապաշխարութեան
ի թողութիւն մեղաց :

4 Որպէս և գրեալ է ի
դիրս պատգամաց եսայեայ
մարգարէի . ձայն բարբառոյ
յանապատի . պատրաստ արա-
րէք զճանապարհ Տեառն, ու-
ղիղ արարէք զշաւիղս նո-
ա :

5 Ամենայն ձորք լցին, և
ամենայն լերինք և բլուրք խո-
նարհեսցին. և եղիցին դժուա-
րինքն ի դիւրինս , և առա-
պարքն ի հարթ ճանապար-
հս :

6 Եւ տեսցէ ամենայն մարդ

ժամանակումն , և նորա փի-
լիպպոս եղբօր՝ իտուրացոյ և
տրաքոնացոյ աշխարհին վե-
րայ չորրորդապետութեան
ժամանակումն , և լիսանիայի
աբիլենացոյ վերայ չորրոր-
դապետութեան ժամանա-
կումն ,

2 Եւ աննայի և կայիա-
փայի քահանայապետութեան
օրերումն՝ Աստուծոյ խօսքն
զաքարիայի որդի յովհաննէ-
սին վերայ եկաւ՝ անապատի
(չէօլի) միջումն :

3 Եւ նա եկաւ յորդանա-
նի ամէն կողմերն, որ ապաշ-
խարութեան մկրտութիւնը
քարոզէ՝ մեղաց թողութեան
համար :

4 Ինչպէս որ եսայի մար-
գարէի խօսքերի գրքումն
գրված է՝ (թէ) կանչողի ձայն
անապատումն . (թէ) պատ-
րաստ արէք Տէրի ճանապար-
հը , և շիտակ արէք նորա
գնալոյ ճանապարհները :

5 Ամէն ձորեր լցվին,
և ամէն սարեր և դարեր
խոնարհվին . և դժուարները
հեշտ լինին, և դարուփոսերն
հաւասար ճանապարհներ լի-
նին :

6 Եւ ամէն մարմին

մին զքրիստոսութիւն Աստուծոյ ։

7 Եւ ասէ ցժողովուրդսն եւեալս մկրտիլ ՚ի նմանէ · Ծնունդք լժիյ՝ ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն՝ որ գալոց է ։

8 Արարէք այսուհետեւ պտուղս արժանի ապաշխարութեան · եւ մի սկսանիցիք ասել՝ եթէ ունիմք հայր զաբրահամ · զայս ասեմ ձեզ, եթէ կարօղ է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս աբրահամու ։

9 Եւայց ահաւասիկ տապար առ արմին ծառոց կայ · ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարւոք, հատանի եւ ՚ի հուր արկանի ։

10 Հարցանէին զնա ժողովուրդքն եւ ասէին · իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք ։

11 Պատասխանի եւ ասէ ցնոսա · որ իցեն երկու հանդերձք, տացէ զմին այնմ՝ որ ոչն գուցէ · եւ որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ ։

12 Եկին եւ մաքսաւորք մկրտիլ, եւ ասեն ցնա · վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք ։

Աստուծոյ փրկութիւնն տեսնէ ։

7 Եւ էն ժողովուրդներին՝ որ դուրս էին եկած, որ նորանից մկրտվին՝ ասաց · (իժ) օձի զաւակներ՝ ո՞վ սովորցրուց ձեզ փախչել էն բարկութենից՝ որ գալու է ։

8 Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղներ արէք · մի սկսէք ասել՝ թէ մենք աբրահամ ունինք հայր էս ասում եմ ձեզ, թէ Աստուած կարօղ է էս քարերից որդիք հանել աբրահամի համար ։

9 Եւայց ահա կացինն ծառերի արմատին (հէոչ) մօտ դրած է · ամէն ծառ՝ որ բարի պտուղ չի բերում, կըկտրվի եւ կրակի մէջ կըգցվի ։

10 Եւ ժողովուրդներն նորան հարցնում էին եւ ասում · ապա ի՞նչ գործենք ։

11 Պատասխան տուաւ եւ նորանց ասաց · նա՝ որ երկու շոր ունի, թող միւնը նորան տայ՝ որ չունի · եւ նա էլ՝ որ կերակուր ունի, թող էնպէս անէ ։

12 Մաքսաւորներն (հէոյբուսէնէը) էլ եկին՝ որ մկրտվին, եւ նորան ասացին · վարդապետ՝ ի՞նչ գործենք ։

13 Իւ նա ասէ ցնոսա. Մի՛ ինչ աւելի քան զկրամայեալն ձեզ առնիցէք։

14 Հարցանէին զնա և զի. նուորքն և ասէին. և մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնոսա. Մի զոք խուիցէք՝ և մի զոք զրպարտիցէք, շատ լիցին ձեզ ԹՈՇակքն ձեր։

15 Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ և խորհէին ամենքեան՝ ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու՝ միթէ սա իցէ Քրիստոս։

16 Պատասխանի ետ ամենեցուն և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական քառնալ զկօշկիս. նա մկրտեսցէ զձեզ հոգւով սրբով և հրով։

17 Որոյ հեծանոյն՝ ի ձեռին իւրում սրբել զկալ իւր՝ և ժողովել զցորեանն՝ ի շտեմարանս իւր, և զյարդն այլեսցէ անշէջ հրով։

18 Բազում և այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն։

19 Բայց հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ՝ ի

13 Իւ նա ասաց Նորանց. Ձեզ հրամայածիցն աւելի քան մի՛ անէք։

14 Հարցնուէին և ասէին. ապա մենք ի՞նչ գործենք. Նորանց ասաց. Իսկի մէնին մի՛ նեղացընէք՝ մէնին զրպարտութիւն մի՛ անէք, Թոշ ձեր վարձքերն բաւական լինին ձեզ։

15 Դէտ որ ժողովուրդն սպասուէին՝ և ամէնքն իրանց սրտերումն մտածուէին յոհաննէսին համար՝ միթէ սա լինի Քրիստոս։

16 Նա ամէնին պատասխան տուաւ և ասաց. ես ջրով եմ մկրտում ձեզ. բայց ինձանից էլ զօրաւորն է գալիս՝ որ ես արժանի չեմ նորա կօշկիները վեր առնել. նա ձեզ սուրբ հոգով և կրակով կըմկրտէ։

17 Որ նորա հոսկելին իրան ձեռին է՝ որ իրան կալը կըսրբէ՝ և ցորենը իրան համբարն կըժողովէ, և դարմանը կայրէ անանցնելի կրակով։

18 Ուրիշ էլ շատ բաներ մխիթարութենով աւետիք էր տալիս ժողովրդին։

19 Բայց հերծդէս չորրորդապետն նորանից յանդիման-

նմանէ վասն հերովդեայ կնոջ եղբօր իւրոյ, և վասն ամենայն չարեացն՝ զոր գործեաց հերովդէս,

20 Յաւել և զայն ևս ի վերայ ամենայնի. և եդ ի բանտի զյովհաննէս։

21 Եւ եղև ի մկրտիլ ամենայն ժողովրդեանն, և ընդ Յիսուսի մկրտիլն և կալ յաղօթս, բանալ երկնից,

22 Եւ իջանել հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի ի վերայ նորա, և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. դու ես որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ։

23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից՝ սկսեալ՝ որոց որպէս կարծէր, որդի Յովսեփայ. որ Յակովբայն. որ Հեղեայն. որ մատաթեայն։

24 Որ ղեւեայն. որ մեղքեայն. որ յաննեայն. որ յովսեփայն։

25 Որ մատթեայն. որ ամովսայն. որ նաւումայն. որ եսղեայն. որ նանգեայն։

26 Որ մահաթեայն. որ մատաթեայն. որ սեմեայն. որ յովաննայ իբրան եղբօր կնկան հերովդեայի պատառոմն, և էն ամէն չար գործքերին համար՝ որ հերովդէսն արաւ,

20 Էն ամէնին վերայ էս էլ՝ աւելացրուց՝ որ յոհաննէսին բանտի (պընաքի) մէջ դրաւ։

21 Եւ էլաւ ամէն ժողովրդը դի մկրտվելոյ ժամանակն, և երբոր Յիսուս մկրտվեցաւ՝ և աղօթք էր անում, երկինքն բացվաւ։

22 Եւ սուրբ հոգին մարմնաւոր կերպարանքով աղաւնու պէս վէր էր գալիս նորա վերայ. և երկնքիցն ձայն եկաւ՝ որ ասում էր. դու ես իմ սիրելի որդին՝ քեզ հաւան կացայ։

23 Եւ Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի չափ լինել՝ որ ինչպէս որ կարծըվում էր, Յոսեփի որդին էր. և նա՝ Յակոբին. և նա՝ Հեղիին. և նա՝ մատաթիայինն։

24 Եւ նա՝ ղևիին. և նա՝ մելքիին. և նա՝ յաննէին. և նա՝ Յոսեփին։

25 Եւ նա՝ մատթէին. և նա՝ ամոսին. և նա՝ նաւում. մին. և նա՝ էսղիին. և նա՝ նանգէին։

26 Եւ նա՝ մահաթիին. և նա՝ մատաթիին. և նա՝ սե-

սեքեայն • որ Յովդայն ։

27 Որ Յովհաննայն • որ բե-
սայն• որ զօրաբաբելին • որ
սաղաթիէլին • որ ներեայն ։

28 Որ Մելքեայն • որ ադ-
դեայն • որ կոսամայն • որ
եղմովդադայն • որ երայն ։

29 Որ Յեսուայն • որ եղիա-
զարայն • որ Յովրամայն • որ
Մատթայն • որ ղեւեայն ։

30 Որ սիմէոնին • որ Յու-
դայն • որ Յովսեփայն • որ
Յովնամայն • որ եղեկիմայն ։

31 Որ Մելքայն • որ Մեն-
նայն • որ Մատտաթայն • որ
Նաթանայն • որ Դաւիթն ։

32 Որ Յեսսեայն • որ ովբե-
դայն • որ Բոոսայն • որ սաղ-
մովնայն • որ Նաասսովնին ։

33 Որ ամինադաբայն • որ
արամայն • որ ադմեայն • որ
առնեայն • որ եսրովմայն • որ
փարեսին • որ Յուդային ։

34 Որ Յակովբայն • որ Իսա-
հակայն • որ աբրահամուն • որ
Թարային • որ Նաքովրայն ։

միին • և նա՝ Յոսէքին • և նա՝
Յոդին ։

27 Եւ նա՝ Յոնանին • և նա՝
ռեսին • և նա՝ զօրաբաբէլին •
և նա՝ սաղաթիէլին • և նա՝
ներիին ։

28 Եւ նա՝ Մելքիին • և նա՝
ադդէին • և նա՝ կոսամին •
և նա՝ եղմոդադին • և նա՝ ե-
րին ։

29 Եւ նա՝ Յեսուին • և նա՝
եղիազարին • և նա՝ Յորամին •
և նա՝ Մատթային • և նա՝
ղևիին ։

30 Եւ նա՝ սիմէոնին • և նա՝
Յուդային • և նա՝ Յոսէփին •
և նա Յոնամին • և նա՝ եղե-
կիմին ։

31 Եւ նա՝ Մելքիին • և նա՝
Մէննային • և նա՝ Մատտաթին •
և նա՝ Նաթանին • և նա՝
դաւիթին ։

32 Եւ նա՝ Յեսսէին • և նա՝
Յոբէդին • և նա՝ Բոոսին • և
նա՝ սաղմոնին • և նա՝ նա-
ասսոնին ։

33 Եւ նա՝ ամինադաբին •
և նա՝ արամին • և նա՝ ադ-
մէին • և նա՝ առնէին • և նա՝
Եսրոմին • և նա՝ փարեսին • և
նա՝ Յուդային ։

34 Եւ նա՝ Յակոբին • և նա՝
Իսահակին • և նա՝ աբրահա-
մին • և նա՝ Թարային • և նա՝
Նաքորին ։

35 Որ սերուքայն · որ ռաքաւայն · որ փաղեկային · որ եբերայն · որ սաղային ։

36 Որ կայնանայն · որ արփաքսադայն · որ սեմայն · որ նոյին · որ զամբքայն ։

37 Որ մաթուսաղային · որ ենովքայն · որ յարեդին · որ մաղաղիէլին · որ կայնանայն ։

38 Որ ենովսայն · որ սեթայն · որ ադամայն · որ Աստուծոյն ։

35 Եւ նա՝ սերուքին · և նա՝ ռագաւին · և նա՝ փաղեկին · և նա՝ եբերին · և նա՝ սաղային ։

36 Եւ նա՝ կայնանին · և նա՝ արփաքսադին · և նա՝ սեմին · և նա՝ նոյին · և նա՝ զամբքին ։

37 Եւ նա՝ մաթուսաղային · և նա՝ ենոքին · և նա՝ յարեդին · և նա՝ մաղաղիէլին · և նա՝ կայնանին ։

38 Եւ նա՝ ենոսին · և նա՝ սեթին · և նա՝ ադամին · և նա՝ Աստուծոյն ։

ԳԼ · Դ ։

1 Եւ Յիսուս լի հոգւով սրբով դարձաւ ի յորդանանէ · և վարեր հոգւովն յանապատ ,

2 Յաւուրս քառասուն փորձեալ ի սատանայէ · և ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայնոսիկ · և ի կատարելն նոցա՝ քաղցեաւ ։

3 Եւ ասէ ցնա սատանայ · եթէ որդի ես Աստուծոյ, ասա քարիդ այդմիկ՝ զի հաց լինի ։

4 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ · գրեալ է,

1 Եւ Յիսուս սուրբ հոգովն լցեալ յորդանանեայն դարձաւ · և հոգովն վարվեցաւ անապատն (չէջ) ։

2 Քառասուն օր սատանայիկն փորձվեցաւ · և էն օրերուն ոչ կերաւ և ոչ խըմեց · և երբոր նորանք կատարվեցան , սովեց ։

3 Եւ սատանան նորան ասաց · եթէ որ դու Աստուծոյ որդին ես , էդ քարիդ ասա՝ որ հաց լինի ։

4 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց · դըր-

եթէ ոչ հայիւ միայն կեցոյէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ:

5 Եւ հանեալ զնա ՚ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի ՚ի վայրկեան ժամանակի:

6 Եւ ասէ ցնա սատանայ. քեզ տայց զայս ամենայն իշխանութիւն եւ զփառս սոցա, զի ինձ տուեալ է, եւ ում կամիմ՝ տամ զսա:

7 Արդ՝ դու եթէ անկեալ երկիրպագանիցես առաջի իմ, քեզ եղիցի ամենայն:

8 Պատասխանի եւ նմա Յիսուս եւ ասէ. գրեալ է, երկիրպագցես Տեառն Աստուծոյ քումմ, եւ զնա միայն պաշտեսցես:

9 Եւ ած զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց ՚ի վերայ աշտարակի տաճարին, եւասէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ ասի ՚ի վայր:

10 Զի գրեալ է՝ եթէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ:

ված է, թէ ոչ միանակ հայոյ կատրի մարդ, այլ Աստուծոյ ամէն խօսքովն:

5 Եւ նորան միւն բարձր սար հանեց՝ եւ աշխարհքի ամէն թագաւորութիւններըն ցոյց տուաւ նորան միւն աչքի թափ տալոյ ժամանակում:

6 Եւ սատանան ասաց նորան. ես ամէն իշխանութիւնն ներըս եւ սորանց փառքըն քեզ կըտամ. ինչուոր՝ ինձ տրվածք է, եւ ում որ կամենամ՝ կըտամ սորան:

7 Ուրեմն՝ եթէ իմ առաջիս ընկած երկրպագութիւն անես, ամէնն քեզ լինի:

8 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. գրված է՝ թէ քո Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն անես, եւ նորան միանակ պաշտես:

9 Եւ տարաւ նորան Երուսաղէմ, եւ տաճարի աշտարակին (քովրջին) վերայ կանգնացրուց, եւ նորան ասաց. թէ որ Աստուծոյ որդի ես, էստեղից քեզ վէր քցիր:

10 Պատճառնոր՝ գրված է՝ թէ իւրան հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ քեզ պահեն.

11 Զի՝ ի վերայ ձեռաց բարձցին զքեզ, մի երբեք հարցես զքարի զոտն քո։

12 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ · ասացեալ է, թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։

13 Ու կատարեալ զամենայն փորձուածիւնն սատանայի, ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի։

14 Ու դարձաւ Յիսուս զօրութեամբ հոգւոյն ի գալիլեա · և եղ համբաւ ընդ ամենայն կողմանս գաւառին։

15 Ու նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց։

16 Ու եկն ի նազարէթ՝ ուր սնեալն էր · և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուրն շաբաթուց ի ժողովուրդն։

17 Ու ետուն նմա գիրս ղեսայեայ մարգարէի, և յայտեաւ ընթեռնուլ · և իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն էր ·

18 Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս · աւետարանել աղքատաց ա-

11 Որ ձեռներին վերայ քեզ վեր առնեն՝ որ խափի մին ժամանակ քո ոտըդ քարի չի դիպչըցնես։

12 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց · ասված է՝ թէ մի փորձեր քո Տէր Աստուծդդ։

13 Ու սատանան երբոր էն ամէն փորձուածիւններըն կատարեց, հեռացաւ նորանից մին ժամանակ։

14 Ու Յիսուս հոգի զօրութենովն դարձաւ գալիլեա · և նորա համբաւն դուբս գնաց էն գաւառի ամէն կողմերն։

15 Ու նա սովորցնուէր նորանց ժողովարաններուն, և ամէնիցն փառաւորվուէր։

16 Ու եկաւ նազարէթ՝ որտեղ որ մեծացել էր · և իրան սովորութեան պէս շաբաթ օրուն ժողովարանին մէջ մտաւ։

17 Ու եսայի մարգարէի գիրքըն տուին նորան՝ և վերկացաւ՝ որ կարդայ · և երբոր գիրքըն բացաւ՝ էն տեղըն գտաւ՝ որ նորանում գրված էր ·

18 Տէրի հոգին ինձ վերայ է · և հենց նրահամար էլ օծեց ինձ · նա ինձ ուղար-

ռաքեաց զնա, բժշկել զբեկեալսն սրտիւք,

19 Քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել. արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի։

20 Եւ խրեալ զդիրքն՝ ետ ցպաշտօնեայն, և նստաւ. և ամենեցունց՝ որ ի ժողովրդեանն էին աչք՝ ի նա հայէին։

21 Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։

22 Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդբանս շնորհացն՝ որ ելանէին ի բերանոյ նորա. և ասէին՝ ո՞չ սա է որդին Յովսեփայ։

23 Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս. բժիշկ՝ բժշկեա զանձն քո. որչափ լուաք զոր արարեր ի կափառնաում, արա և աստ ի քում գաւառի։

24 Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։

կեց՝ աղբատներին աւետիք տալ, սրտով կաթուածներին բժշկել,

19 Գերիներին թողութիւն քարոզել, և կուրերին տեսութիւն. խոցուածներին արձակել դէպի թողութիւն, Տէրի ընդունելի տարին քարոզել։

20 Եւ գիրքըն խրեց՝ և պաշտօնեային տուաւ, և նըստեց. և ժողովարանի մէջ ամէն մէկուն աչքերն նըրան էին մեկի տալիս։

21 Եւ սկսեց ասել նորանց՝ (թէ) Էսօր էս գիրքս կատարվեցաւ ձեր ականջներումն։

22 Եւ ամէնքն վկայում էին նորան, և զարմանում էին շնորհաց խօսքերին վերայ՝ որ դուրս էին գալիս նորա բերանից. և ասում էին՝ չէ՞ որ սա Յոսէփի որդին է։

23 Եւ նորանց ասաց. լինի թէ էս առակը ասէք ինձ. բժիշկ՝ քո անձդ բժշկիր. որչափ բաներ լսեցինք՝ որ կափառնայումի մէջն արիր՝ էստեղ էլ արա քո գաւառումդ։

24 Եւ ասաց. ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ մարգարէն ընդունելի չէ իրան քաղաքումն։

25 Ընդարձակ ասեմ ձեզ· զի բազումք այրիք էին յաւուրս եղիայի ՚ի մէջ իսրայէլի՝ յորժամ փակեցաւն երկինք զեւթն ամս և վեց ամիս, և եղև սով մեծ ընդ ամենայն երկիրն։

26 Եւ ոչ առ մի ՚ի նոցանէ առաքեցաւ եղիա, բայց միայն ՚ի սարեփթայ սիդովնացւոյ՝ առ կին մի այրի։

27 Եւ բազումք բորոտք էին յիսրայէլի առ եղիսէէ մարգարէէ· և ոչ ոք ՚ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն նեեման ասորի։

28 Եւ լցան ամենեքին բարկութեամբ ՚ի ժողովրդեանն՝ իբրև լսէին զայս։

29 Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտաւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ դահավէժ առնել զնա։

30 Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր։

31 Եւ էջ ՚ի կափառնաւմ ՚ի քաղաքն գալիլեացւոց, և

25 Իրաւի ասեմ ձեզ· թէ եղիայի օրերուն իսրայէլի մէջն շատ որբեւէրներ կային՝ երբ որ երկինքն երեք տարի և վեց ամիս փակվեցաւ, և ամբողջ երկրի մէջ մեծ սով եղաւ։

26 Եւ եղիան նորանցմէ մէկուն մօտ չուղարկվեցաւ, բայց միայն սիդովնացւոյ սարեփթա (քաղաքին)՝ մին որբևէրի կընկան մօտ։

27 Եւ շատ բորոտներ կային իսրայէլի մէջն եղիսէ մարգարէի ժամանակուն. և նորանցմէ ոչ ով չըսրբվեցաւ, բայց միայն նեեման ասորին։

28 Եւ ամէնքն՝ որ ժողովրանի մէջն էին, բարկութենով լցվան՝ երբոր էս լսեցին։

29 Եւ վերկացան՝ նորան քաղաքէն դուրս հանեցին, և տարան նորան մինչև էն սարի գլուխն՝ որ նորանց քաղաքն նորա վերայ էր շինված՝ որ բարձր տեղէն վէր քցեն նորան։

30 Եւ նա նորանց մէջէն անցաւ գնաց։

31 Եւ վերեկաւ կափառնաւմ՝ գալիլեացւոց քաղաքն,

ուսուցանէր զնոսա ՚ի շաբաթին ։

32 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա ։

33 Եւ էր ՚ի ժողովրդեանն այր մի, զոր ոգին դիւի պղծոյ, և աղաղակեաց ՚ի ձայն մեծ,

34 Ասէ . Թո՛ւլայր՝ զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ . գիտեմ զքեզ՝ ո՛վ ես սո՛ւրբդ Աստուծոյ ։

35 Սաստեաց ՚ի նա Յիսուս և ասէ . պապանձեա՛ց և ե՛լ ՚ի դմանէ. զգետնեաց զնա դևն ՚ի միջի անդ՝ և ել ՚ի նմանէ, և ընդ ո՛չ ինչ եղեալ նմա ։

36 Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս և ասէին . զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ պղծոց՝ և ելանեն ։

37 Եւ երթայր հռչակ զնորա մասին ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառսն ։

38 Եւ յարուցեալ ՚ի ժողովոյն և շարեալ օրերուն սովորցուց նոցա ։

32 Եւ զարմանուէին նորա վարդապետութեան վերայ, զի ընդ նորա խօսքն իշխանութիւն էր ։

33 Եւ ժողովարանի մէջն մին մարդ կար՝ որ նորան պիղծ դև բռնել էր, և մեծ ձայնով աղաղակեց ,

34 Եւ ասաց . Թո՛ղ արա՛ դու ի՞նչ բան ունիս մեզ հետ Յիսուս Նազովրեցի. եկիր՝ մեզ կորցնես . գիտեմ քեզ՝ (թէ) ո՛վ ես դու՝ Աստուծոյ սո՛ւրբդ ։

35 Յիսուս սաստեց նորա և ասաց . պապանձի՛ր և դո՛ւրս եկ դորանից . դևն էն մէջ տեղուն գետինն զարկեց նորան՝ և դուրս եկաւ նորանից, և իսկի մին վնաս չը՛տրծեց նորան ։

36 Եւ զարմանք եղաւ ամենին վերայ . իրար հետ խոսո՛ւէին և ասում . էս ի՞նչ բան է՝ որ իշխանութեամբ և ուժով պիղծ դևերին սաստում՝ և դուրս են գալիս ։

37 Եւ նորա համբաւն դնում էր գաւառի ամէն չորս կողմերն ։

38 Եւ վերկացաւ էն ժո-

զովրգնէք անտի, եմոեա՛ւ ի տուն սիմոնի։

39 Զ՚ոքանչ սիմոնի տագ-նապէր ջերմամբ մեծաւ, և աղաչէին զնա վասն նորա։

40 Կացեալ առ նմա՝ սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա։

41 Ու ընդ արևուն մտա-նել՝ ամենեքեան, որոյ էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա. և նա իւրաքանչիւր ուրեք ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա։

42 Ելանէին դևք ի բազ-մաց, աղաղակէին և ասէին՝ եթէ դու ես որդի Աստու-ծոյ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա՝ թէ Քրիստոսն է։

43 Ու իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ տեղի. և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչև առ նա՝ և ար-գելուին զնա՝ զի մի գնասցէ ի նոցանէ։

44 Ու նա ասէ ցնոսա. և այլոց քաղաքաց պարտ է ինձ զովարանիցն, և մատաւ սիմոնի տուն։

39 Սիմոնի զոքանչն սաստիկ տենդով չարչարուէր՝ և նո-քան աղաչէին նորա համար։

40 Ելոյա մօտ կանգնեց՝ սաստեց տենդին, և թողեց նորան. և շուտով վերկացաւ՝ և նորանց ծառայուէր։

41 Ու արեգական մտնելոյ ժամանակն՝ ամենքն՝ որ կերալ կերալ ցաւերով հիւանդներ ունէին՝ նորանց բերուէին նորա մօտ. և նա նորանց ամեն մէկին վերայ ձեռք էր դնում՝ և նորանց բժշկու-մէր։

42 Շատ մարդկանցից էլ դուրս էին գալիս դևեր, և աղաղակում էին և ասում՝ թէ դու ես Աստուծոյ որդին. և նա սաստում նորանց՝ և թոյլ չէր տալիս՝ որ խօսին. ինչուորի՝ գիտուէին՝ թէ նա Քրիստոսն է։

43 Ու երբոր յերեկ էլաւ՝ դուրս եկաւ գնաց անապատ (չէօլ) տեղ. և ժողովուրդ-ներն մանէին գալիս նորան՝ և եկին մինչև նորա մօտ. և արգելուէին նորան՝ որ չը-գնայ իրանցից։

44 Ու նա ասաց նորանց. պէտք է՝ որ ես ուրիշ քա-

աւետարանել զարքայութիւնն Աստուծոյ, ըլլ յայն իսկ առաքելոյ։

45 Եւ քարոզէր ի ժողովուրդսն գալիլեացւոց։

Գլ. Ե։

1 Եւ եղև ի խնդրել զնովաւ ժողովրդեանն և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին գեննեսարեթի։

2 Եւ եահես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորքն ելեալ ի նոցանէ՝ լուանային զդործ-խսն։

3 Եւ նա ի մի նաւուցն՝ որ էր սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն. նստաւ՝ և ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն։

4 Եւ իբրև լռեաց ի խօսելոյն, ասէ ցսիմոն. խաղաց ի խորն, և արկէք զդործս ձեր ձեր յորս։

5 Պատասխանի ետ սիմոն և ասէ ցնա. վարդապետ՝ զա-

զքներին էլ Աստուծոյ արքայութիւնն աւետարանել ինչուան՝ հնոյ սրահամար ու զարկվելոյ։

45 Եւ գալիլեացւոց ժողովարանների մէջն քարոզուելը։

Գլ. Ե։

1 Եւ էլաւ որ ժողովուրդն նորա վերայ կիտվուելը, և Աստուծոյ բանն լսուելը, և ինքն գեննէսարեթի ծովակին մօտ կանգնած էր։

2 Եւ երկու նաւ տեսաւ՝ որ ծովակին մօտ կանգնած էին, և ձուկ որսողներն նորանցիկ դուրս էին եկած՝ և զործիքներըն լուանում էին։

3 Նա էն նաւերից մըն՝ որ մէջն մտաւ՝ որ սիմոնին էր, և նորան աղաչեց՝ որ նաւը մի քիչ ցամաքից ներս տանի. նստեց՝ և նաւից սովորցնում ժողովուրդներին։

4 Եւ երբոր խօսքն վերջացրուց, սիմոնին ասաց. նաւն դէպի խորն տար, և ձեր զործիքներըդ քցեցէք որսալոյ համար։

5 Սիմոն պատասխան տուաւ՝ և նորան ասաց. վարդա-

մենայն դիշերս աշխատ եղեաք՝ և ոչ ինչ կալաք , բայց վասն քո բանիդ արկցուք զոր ծիս ։

6 Զայս իբրև արարին՝ փակեցին ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ , մինչև պարպատէին ուռկանք նոցա ։

7 Նւ ակնարկէին որսակցացն ի միւս նաւն՝ գալ օգնել նոցա . և եկին՝ և լցան երկոքին նաւքն , մինչև մերձ յընկղմել նոցա ։

8 Իբրև եաես սիմովն պետրոս՝ անկաւ առ ծունկս Յիսուսի և ասէ . ի բաց գնա յինէն Տէր , զի այր մեղաւոր եմ ես ։

9 Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան՝ որ ընդ նմայն էին վասն որսոյ ձկանցն , զոր ըմբռնեցին ։

10 Նոյնպէս և զյակովբոս և զյովհաննէս զորդիսն զեբեդեայ , որ էին որսակիցք սիմովնի . և ասէ ցսիմովն Յիսուս . մի երկնչիր՝ յայսմհետէ զմարդիկ որսայցես ի կենաս ։

11 Նւ հանեալ զնաւն ի պետ՝ էս բոլոր պիշերս աշխատեցինք՝ և խկի մին բան չըբռնեցինք , միայն թէ քո խօսքիդ համար դործիքներըս կըրըցնենք ։

6 Նրբոր էս արին՝ ձըկնեըի մեծ բազմութիւն ներս փակեցին , մինչև որ նոյանց ուռկաններըն (Խոռէըն) պատռտուէին ։

7 Նւ աչքով էին անուամ մէկէլ նաւի մէջ լինող հորսընկերներին՝ որ գան իրանց օգնեն . և եկին՝ և երկու նաւն էլ լցուան , մինչև որ թաւվուլոյ մօտ էին ։

8 Նրբոր սիմոն պետրոսն տեսաւ՝ ընկաւ Յիսուսի ծընկներն և ասաց . Տէր՝ ինձանից հեռու գնա , ինչուայ՝ ես մեղաւոր մարդ եմ ։

9 Պատճառնոր՝ ահ պատեց նորան և ամէնին էլ՝ որ նորա հետ էին՝ էն ձըկնեըի հորսին համար , որ բռնեցին ։

10 Նյնպէս էլ զեբեդիայի որդիքներին՝ յակոբին և յոհաննէսին , որ սիմոնի հորսընկերներն էին . և Յիսուս սիմոնին ասաց . մի վախենար՝ սրանից ետև մարդկանց կըորսաս դէպի կեանքն ։

11 Նւ նաւերն հանեցին ցա-

ցամաք, թողլն զամենայն, և գնայլին զհետ նորա։

12 Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքայն, ահա այր մի լի բորոտութեամբ լրբև եռնս զՅիսուս՝ անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։

13 Ձկնաց զձեռն իւր՝ հպայց ՚ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն։

14 Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ երթ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա։

15 Եւ լոյծեր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկել ՚ի հիւանդութեանց իւրեանց։

16 Եւ նա լայր տայր յանապատ տեղիս, և կայր յաղթիս։

17 Եւ եղև ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն

մանքն, ամէն բանեորըն թողլին, և նորա եւևէն գնացին։

12 Եւ էլաւ՝ երբոր նա քաղաքներէյն մընի մէջ հասաւ, ահա մին մարդ՝ որ բորոտութենով լիքն էր, երբոր Յիսուսին տեսաւ՝ երեսին վերայ ընկաւ, նորան աղաչէց՝ և ասաց. Տէր՝ թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել։

13 Իրան ձեռքն մեկնեց՝ հասցրուց նորան՝ և ասաց. կամենումէմ՝ սրբվիր. և շուտով բորոտութիւնն գնաց նորանից։

14 Եւ նա պատուիրեց նորան՝ որ իսկի մընին չասէ, բայց թէ՝ գնա, քո անձըդ ցոյց տուր քահանային, և քո սրբութեան համար պատարագ բեր՝ ինչպէս որ Մօսէսն էլ հրամայեց, որ նորանց վկայութիւն լինի։

15 Եւ նորա համբաւն էլ աւելի շատանումէր. և շատ ժողովուրդներ ժողովուէին՝ որ լսեն և իրանց հիւանդութիւնները բժշկին։

16 Եւ նա քաշվումէր և նապատ (չոլ) տեղերքանք, և աղօթք էր անում։

17 Եւ մին օր էլաւ՝ որ ինքն սովորցնումէր՝ և փարիսեցիներն և օրինաց վարդապետ-

վարդապետք նստէին , որ ժո-
ղովեալ էին Յամենայն քա-
ղաքաց գալիլեացւոց՝ և
հրէաստանի և երուսաղէմ ·
և զօրութիւն Տեառն էր ՚ի
բժշկել զնոսա ։

18 Եւ ահա մարդիք բերէին
մահճօք զայր մի՝ որ էր ան-
դամալոյծ , և խնդրէին զնա
մուծանել ՚ի ներքս՝ և դնել
առաջի նորա ։

19 Եւ երբեմն ոչ գտանէին՝
թէ ընդ ո՛ր մուծանիցեն զնա
՚ի ներքս վասն ամբոխին, ե-
լին ՚ի տանիս , և ՚ի յատից
կախեցին զնա , և իջուցին
մահճօքն հանդերձ ՚ի մէջ
առաջի Յիսուսի ։

20 Եւ տեսեալ զհաւատսն
նոցա՝ ասէ ցնա · այր դու՝
թողեալ լիցին քեզ մեղք քո ։

21 Սկսան խորհել դպիրքն
և փարիսեցիքն , և ասեն · ո՞
է սա՝ որ խօսի զհայհոյու-
թիւնս , ո՞վ կարէ թողուլ
զմեղս՝ բայց միայն Աստուած ։

22 Իբրև գիտաց Յիսուս
զխորհուրդս նոցա , պատաս-
խանի եաւ և ասէ ցնոսա · զի՞
ինչ նստած էին , որ գալի-
լեացւոց և հրէաստանի ամէն
քաղաքներից և երուսաղէ-
մից հաւաքված էին · և Տէ-
րի զօրութիւնն կար նորանց
բժշկելոյ համար ։

18 Եւ ահա մարդիք մին
մարդ էին բերում մահիճով
(κλίνη)՝ որ անդամալուծ
էր , և ուզում էին՝ որ նորան
ներս տանեն , և նորա առաջին
դնեն ։

19 Եւ երբոր տեղ չէին
գտնում՝ որ նորան ներս տա-
նեն՝ էն ամբոխի (ὄχλος)
պատճառով , վեր ելան կը-
տուրն , և օճառքից կախեցին
նորան , և մահիճովն (κλίνη)
վեր բերին մէջ տեղն
Յիսուսի առաջին ։

20 Եւ նորանց հաւատքն
որ տեսաւ՝ նորան ասաց · ով
մարդ՝ թող քո մեղքերդ
թողված լինին քեզ ։

21 Կարգացողներն և փա-
րիսեցիները սկսին միտք ա-
նել , և ասացին · սա ո՞վ է՝
որ հայհոյանք է խօսում · ո՞վ
կարող է մեղքերն թողնել՝
բայց միայն Աստուած ։

22 Յիսուս երբոր նորանց
մտածմունքները իմացաւ ,
պատասխան տուաւ և նորանց

խորհիք ՚ի սիրտս ձեր ։

23 Զ[ի]նչ դիւրագոյն է՝ ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա ։

24 Ա.ԻՀ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս ։ ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի ած զմա[ն]հիճս քո՝ և երթ ՚ի տուն քո։

25 Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ առ զլուրև յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց ՚ի տուն իւր, և փառաւորէր առնէր զԱ.ստուած ։

26 Զարմանք կալան զամենեսեան, և փառաւորէր առնէին զԱ.ստուած ։ լի եղեն ահիւ, և ասեն՝ եթէ տեսաք այսօր նոր նշան ։

27 Եւ յետ այնորիկ ել ան՝ տի՝ և ետես մաքսաւոր մի՝ ո[ր]ում անուն էր ղևի, զի նստէր ՚ի մաքսաւորութեան։ և ասէ ցնա, ե՛կ զկնի իմ ։

28 Եւ թողեալ զամենայն, յարեաւ գնաց զկնի նորա ։

ասաց ։ [Ի]նչ էք միտք անում ձեր սրտերուն ։

23 Ո՞րն է աւելի հեշտ։ ասել՝ թէ քո մեղքերդ թողուած լինին քեզ, թէ ասել՝ վեր կաց և գնա ։

24 Բայց որ իմանաք՝ թէ որդին մարդոյ իշխանութիւն ունի՝ երկրիս վերայ մեղքերըն թողելոյ ։ անդամալուծին ասաց, քեզ եմ ասում՝ վեր կաց քո մահիճդ (պէտ) առ՝ և գնա քո տունդ։

25 Եւ հենց էն ժամուն (սահմանում) ամէնի առաջին վերկացաւ, իրան վերայ առաւ էն՝ որ նորա վերայ ընկած դրած էր, գնաց իրան տունն, և փառք էր տալիս Աստուծոյն ։

26 Զարմանք բռնեց ամէնին, և փառք էին տալիս Աստուծոյն ։ ահով լցվան, և ասում էին՝ թէ էսօր նոր նշան տեսինք ։

27 Եւ նրանից ետև Ցի՛սուս էնտեղից դուրս գնաց՝ և մի մաքսաւոր (հր-չու-չէ) տեսաւ՝ որ նորա անունն ղևի էր, և նստած մաքսաւորութիւն էր անում ։ և նորան ասաց, իմ ետևէս ե՛կ ։

28 Եւ նա ամէն բան թողեց, վերկացաւ գնաց նորա ետևէն ։

29 Եւ որպէս ընդունելոյ մեծ նմա զևի ՚ի տան իւրում. և էր ժողովուրդ բազում մաքսաւորաց և այլոց՝ որ էին բազմեալ ընդ նոսա ։

30 Եւ արտնջէին փարիսեցիքն և դպիրքն նոցա ցնմանէ առ աշակերտսն նորա՝ և ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք ։

31 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաւոյ ։

32 Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն ։

33 Եւ նոքա ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ՝ և խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն. և քոյդ ուտեն և ըմպեն ։

34 Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարօղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել ։

29 Եւ զևի նորան մեծ հացկերութիւն արաւ իրան տան մէջն. և շատ ժողովուրդ կար մաքսաւորներէն (հրէտ-չիներէն) և ուրիշներէն՝ որ նորանց հետ սեղան էին նստեր ։

30 Եւ փարիսեցիներն և նորանց կարդացօղներն նորանից տրտնջումէին նորա աշակերտներէն առաջին՝ և ասում. ինչո՞ւ էք մաքսաւորներէն և մեղաւորներէն հետ ուտում և խմում ։

31 Յիսուս պատասխան տըւաւ և նորանց ասաց. առողջներին բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներին ։

32 Ձեմ եկել՝ որ արդար ներըն կանչեմ, այլ մեղաւորներըն՝ որ ապաշխարեն ։

33 Եւ նորանք ասացին նորան. ինչո՞ւ յօհաննէսի աշակերտներն շատ ժամանակ պաս են պահում՝ և աղօթք են անում, էնպէս էլ փարիսեցիներինն. և քո (աշակերտներդ) ուտում են և խմում ։

34 Եւ նա նորանց ասաց. միթէ կարօղ էք հարսանիքի տղաներին, դեռ քանի որ փեսան նորանց հետ է, հրաման տալ՝ որ պաս պահեն ։

35 Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն. ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ։

36 Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չիաբանի կապերան՝ որ ի նորոյն։

37 Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղուլ, և տիկքն կորնչին։

38 Այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է, և երկոքինն պահին։

39 Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է։

35 Օրեր կըգան՝ երբոր վեռոն վերկառնվի նորանցմէ. ապա էն օրերուն կըպահեն։

36 Մին առակ էլ ասաց նորանց, թէ ոչ ով մին նոր շորթից հին հագուստի վերայ (կարկատան) չի՛ քցիլ. ապա թէ չէ՝ էն նորըն էլ կըպատառէ, և կտորն՝ որ նորիցն է, հընին հետ չի՛ միաբանվիլ։

37 Եւ ոչ ով նոր գինին հին մըկերի մէջ չի՛ ածիլ. ապա թէ չէ՝ նոր գինին հին մըկերըն կըպատառէ. ինքն կըթափվի, և մըկերն կըկորչին։

38 Հայց նոր գինին նոր մըկերի մէջ պէտք է ածվի, և երկուքն էլ կըպահվին։

39 Եւ ոչ ով չըկայ՝ որ հինըն խմէ՝ և նորըն կամենայ. ինչուոր՝ ասուէ՝ թէ հինն աւելի քաղցր է։

ԳԼ. Զ։

1 Եւ եղև ի շաբաթու երկրորդումն առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շնչին ընդ ափ, և ուտէին։

1 Եւ էլաւ՝ որ նա երկրորդի առաջին շաբաթի օրուըմըն արտերովն անց էր կենում, և նորա աշակերտներն հասկ էին պոկում՝ ափի մէջն փըշըրումէին, և ուտում։

2 Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա · ընդ
ձեզ՝ զոր չէ օրէն ՚ի շաբաթի՞ գործել ։

3 Պատասխանի եւս Յիսուս եւ ասէ · ընդ
էիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն
Դաւիթ , յորժամ քաղցեաւն
ինքն՝ եւ որ ընդ նմայն էին ։

4 Զիարդ եմուտ նա ՚ի
տունն Աստուծոյ , և զհացն
զաջաչաւորութեան եկեր , և
եւս այնոցիկ՝ որ ընդ նմայն է-
ին · զոր ոչ էր օրէն ուրեք
ուտել , բայց միայն քահա-
նայապետացն ։

5 Եւ ասէ ցնոսա · Տէր է
որդի մարդոյ և շաբաթի ։

6 Եւ եղև ՚ի միւսում շա-
բաթի մտանել նմա ՚ի
ժողովուրդն՝ և ուսուցանել ·
և էր անդ այր մի՝ և ձեռն
իւր աջ դեռացեալ էր ։

7 Եւ սպասէին նմա դպ-
իրքն և փարիսեցիք՝ թէ է ՚ի
շաբաթի՞ բժշկիցէ , զի գը-
տանիցեն չարախօսութիւն ընդ-
նմանէ ։

8 Եւ նա գիտէր զխոր-
հուրդս նոցա , ասէ ցայրն՝
որոյ ձեռն դեռացեալ էր ·

2 Եւ փարիսեցիներիցն մին
քանիսն ասացին նորանց · Ընդ
ինչո՞ էք անուամ՝ որ շաբաթի
օրուանն օրէնք չէ ։

3 Ցիսուս նորանց պատաս-
խան տուաւ և ասաց · Դուք
չէ՞ք կարդացել էն՝ որ Դա-
ւիթն արաւ , երբեմն սովիլ
ինքն և նորանք՝ որ նորա հետն
էին ։

4 (Թէ) ինչպէս նա Աս-
տուծոյ տունն մտաւ , և առա-
ջաւորութեան (Հացոց-ծոյ ան-
պատիւ վերջոյ բառիս) հացն կե-
րաւ , և նորանց էլ տուաւ՝
որ նորա հետ էին · որ օրէնք
չէր ուտել , բայց միայն քա-
հանայապետներին ։

5 Եւ նորանց ասաց · որ-
դին մարդոյ շաբաթի էլ Տէ-
րըն է ։

6 Եւ էլաւ՝ որ նա մտկէ
շաբաթի օրուանն ժողովարանի
մէջ մտաւ՝ և սովորցնում էր ·
և էնտեղ մին մարդ կար՝ և
նորա աջ ձեռն չորացել էր ։

7 Եւ կարդացօղներն և
փարիսեցիներն սպասում էին
նորան՝ եթէ շաբաթի օրուանն
բժշկէ , որ նորանից չարախօ-
սելոյ պատճառ գտնեն ։

8 Եւ նա գիտուէր նորանց
մտածմունքներըն, և էն մարդ-
ուն՝ որ նորա ձեռն չորա-

արի անոց ի մէջ . և նա յա-
րուցեալ եկաց :

9 Ասէ ցնոսա Յիսուս. Հար-
ցից ինչ զձեզ . զի՞նչ արժան
է ի շաբաթիս , բարի՞ ինչ
առնել՝ եմի՞ չար գործել ,
ոգի՞ մի ապրեցուցանե՞լ՝ եմի՞
կորուսանել :

10 Եւ հայեցեալ շուրջ զա-
մենեքեանս զպարապին՝ ասէ
ցնա . Ձգեա զձեռն քո . և նա
ձգեաց , և հաստատեցաւ ձե-
ռըն նորա իբրև զմիւսն :

11 Եւ նորա լցան յիմարու-
թեամբ , և խոսէին ընդ մի-
մեանս՝ եմի՞ գի՞նչ առնիցեն
Յիսուսի :

12 Եւ եղև ընդ աւուրսն
ընդ այնոսիկ ել ի լեառն
կոչ յաղօթս , և հաներ ըղ-
գիշերն ի պրտիս յաղօթիսն
Աստուծոյ :

13 Եւ իբրև այգ եղև՝ կո-
չեաց զաշակերտան իւր , և
ընտրեաց ի նոցանէ երիսուա-
սանս . զորս և առաքեալս
անուանեաց :

14 Զսիմովն՝ զոր և պետ-
րոս անուանեաց , և զանդ-
րեաս զեղբայր նորին՝ , և զյա-
կովբոս և զյովհաննէս , և զփի-
լիպպոս և զբարթողիմէոս ,

ցել էր՝ ասաց . վէր կաց ի՛կ
մէջ տեղն . և նա վերկացաւ
կանգնեց :

9 Յիսուս ցնորանց ասաց .
Մին բան հարցնեմ ձեզանից .
ի՞նչ արժան է շաբաթի օ-
րում՝ , բարի բան անել՝ եմի՞
չար գործել , մին հոգի ապ-
րեցնե՞լ՝ եմի՞ կորցնել :

10 Եւ շուռ բարկացած չորս
կողմակ ամենին վերայ նայեց՝
և ցնորան ասաց . քո ձեռըդ
մեկնիր . և նա մեկնեց , և
նորա ձեռն միկելին պէս հա-
ստատեցաւ :

11 Եւ նորանք յիմարութեան
նով լցան , և իրար հետ խո-
սումէին՝ եմի՞ ի՞նչ անեն Յի-
սուսին :

12 Եւ էլաւ էն օրերումն՝
որ վերէլաւ սարն՝ աղօթք ա-
նել , գիշերըն լուսացրուց
աղօթք անելով դէպի Աս-
տուած :

13 Եւ երբոր առաւօտ է-
լաւ՝ իրան աշակերտներըն
կանչեց , և ցորանցից տաս-
երկուսին ընտրեց՝ որ էլ ա-
ռաքեալ անուանեց ցորանց :

14 Սիմոնին՝ որ էլ պետրոս
անուանեց ցորան , և նորա
անդրէաս եղբօրըն , և յա-
կոբին և յոհաննէսին , և փի-
լիպպոսին և բարթողիմէոսին ,

15 Եւ զմաղթէաս և զթովմաս, և զյակովբոս ալփեայ, և զսիմոն զկոչեցեալն նաքանձայպէտ,

16 Եւ զյուդա յակովբայ, և զյուդա իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ։

17 Եւ իջեալ նորովք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ, և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն ժողովրդեանն, յամենայն հրէաստանէ և երուսաղէմէ և յայնմ կողմանէ և ՚ի ծովեզերէն սիւռոսի և սիդովնի,

18 Որ եկին լսել ՚ի նմանէ և բժշկել ՚ի հիւանդութիւնս իւրեանց։ և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։

19 Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բռնութեամբ ելանէր ՚ի նմանէ և բժշկէր զամենեսին։

20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտան իւր՝ և ասէ. երանի ազքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւնն Աստուծոյ։

21 Երանի՝ որ քաղցեալ էք այժմ, զի յագեսցին. երա-

15 Եւ մաղթէոսին և թովմասին, և յակոբոս ալփեանին, և սիմոնին՝ նախանձայղյոյն կոչվածին։

16 Եւ յակոբայ յուդային, և յուդա իսկարիոտացին՝ որ եղ մատնիչ ելաւ։

17 Եւ վեր եկաւ նորանց հետ մին տափակ տեղ. և էնտեղ էր նորա աշակերտներն ժողովն և ժողովրդին մեծ բազմութիւն, ամէն հրէաստանիցն և երուսաղէմիցն և մէկել կողմերիցն և սիւռոսի և սիդոնի ծովի եղերիցն (ղուզիյն)։

18 Որ եկին նորանից լսել և իրանց հիւանդութիւններից բժշկվիլ. և պիղծ դևերից չարչարվածներն բժշկվում էին։

19 Եւ ամէն ժողովուրդն խնդրում՝ որ մատնանայ նորան, ինչուար՝ նորանից շատ զօրութիւն էր դուրս գալիս և ամէնին բժշկում էր։

20 Եւ նա իրան աչքերն դէպի իրան աշակերտներն բարձրացրուց՝ և ասաց. երանի էք ձեզ՝ հոգով աղքատներիդ, որ ձերն է Աստուծոյ արքայութիւնն։

21 Երանի նորանց՝ որ հիմիկ սոված են, որ պիտի կըշ-

նել՝ որ լան այժմ, զի ծիծաղեսցին։

22 Իբրանի ես ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն անուն չար զձենջ վասն որդւոյ մարդոյ։

23 Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց։

24 Բայց վայ ձեզ մեծատանդ, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։

25 Վայ ձեզ՝ որ յագեալք էք այժմ, զի քաղցիցէք. վայ ձեզ՝ որ ծիծաղիք այժմ, զի սգայցէք և լայցէք։

26 Վայ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձենջ ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա։

27 Այլ ձեզ ասեմ՝ որ լսէք. սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք առ լեայ ձերոց։

28 Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց։

տանան. երանի նորանց՝ որ հիմիկ լայ են լինում, որ պիտի ծիծաղեն։

22 Իբրանի ես ձեզ, երբոր մարդիկ նախատինք կըտան ձեզ, և երբոր ձեզ կըջոկեն և կատեն, և ձեզ վերայ չար անուն կըհանեն՝ որդոյ մարդոյ պատճառով։

23 Ուրախ եղէք էն օրում և ցնծացէք, ինչուր՝ ահա ձեր վարձքն շատ է երկընքում. հենց էդ կերպով մարգարէներին էին անում նորանց հարքն։

24 Բայց վայ ձեզ հարուստներիդ, ինչուր՝ ձեր մխիթարութիւնըդ ընդունեցիք։

25 Վայ ձեզ՝ որ հիմիկ կըշտացել էք, ինչուր՝ պիտի սովիք. վայ ձեզ՝ որ հիմիկ ծիծաղում էք, ինչուր՝ սուգ պիտի անէք, և լայ պիտի լինիք։

26 Վայ ձեզ՝ երբոր ամէն մարդիք ձեզանից բարի ասեն, ինչուր՝ էդպէս էլ սուտ մարգարէներին էին անում նորանց հարքն։

27 Բայց ձեզ՝ որ լսում էք, ասում եմ. սիրեցէք ձեր թշնամիներըն, բարի արէք ձեզ ատողներին։

28 Օրհնեցէք ձեզ անիծողներին, աղօթք արէք ձեզ նեղացնողներին վերայ։

29 Որ հարկանէ զծնօտ քո՝ մատո՛ նամա և զմիւսն · և որ հանէ՛ ի քէն զբաճկո՛ն քո՝ մի՛ արգելուր ի նմանէ և զշապիկըդ։

30 Ա՛մենայնի՛ որ խնդրէ՛ ի քէն՝ տո՛ւր , և զոր ինչ հա նէ որ ի քէն՝ մի՛ պահանջեր։

31 Եւ որպէս կամիք՝ զի ա րասցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջի՛ք և դուք նոցա ։

32 Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր՝ ո՞վ շնորհ է ձեր , զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց ։

33 Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր , զի և մեղաւորք պնդեն զոր՛ծն ։

34 Եւ եթէ տայք փոխ այ նոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր . քանզի և մեղաւորք մեղաւո րաց փոխ տան , զի առցեն անդրէն զկշիռն ։

35 Ա՛յլ սիրեցէ՛ք զթշնա միս ձեր , և բարի արարէ՛ք առեք ոչինչ ձերոյ . և տուք

29 Ն՛ա որ քո մին երեսիդ զարկուս՝ մի՛կելն եւ դէմ արա նորան. և նա որ քո կա պան քեզանից հանուս՝ շա պիկըդ եւ մի արգելեր նորա նից ։

30 Ա՛մէնին՝ որքան ուզու մ քեզանից՝ տո՛ւր , և ինչ որ միւնն քեզանից հանուս՝ յետ մի ուզեր ։

31 Ու ինչպէս որ կամենու մ՛ք՝ զի մարդիքն ձեզ անեն, էնպէս եւ դուք արէ՛ք նո րանց ։

32 Ու զի որ դուք ձեզ սի րողներին սիրէ՛ք՝ ո՞ւնչ շնորհք է ձեզ , ինչուո՛ր՝ մեղաւոր ներն եւ իրանց սիրողներին սիրումն ։

33 Ու զի որ ձեր բարե րարներին բարի անէ՛ք՝ ո՞ւնչ շնորհք է ձեզ , ինչուո՛ր՝ մե ղաւորներն եւ հենց էնպէս են անում ։

34 Ու եթէ փոխ տաք նո րանց՝ որ նորանից յետ առ նելոց յոյս ունիք՝ ո՞ւնչ շնորհք է ձեզ . ինչուո՛ր՝ մեղաւոր ներն եւ մեղաւորներին փոխ են տալիս , որ հաւասար չա փըն յետ առնեն ։

35 Ա՛յց սիրեցէ՛ք ձեր թշ նամիներըն , և բարի արէք ձեզ ասողներին . և փոխ տը

փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք բարձրելոյ. զի նա քաղցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց։

36 Լերուք ողորմած՝ որպէս և Հայրն ձեր ողորմած է։

37 Մի դատէք՝ և ոչ դատիցիք. մի պատժէք՝ և ոչ պատժիցիք. արձակեցէք՝ և արձակիցիք։

38 Տուք՝ և տացի ձեզ. չափ բարւոք թաղեալ շարժուն ղեղուն տացեն ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափիք, չափեսցի ձեզ։

39 Ասաց և առակ մի առ նոսա. միթէ կարէցէ կոյր կուրի առաջնորդել, ոչ ապաքէն երկոքին ի խորխորատ անկանիցին։

40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամ կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր։

41 Զի՞ տեսանես զչիւղ յականն եղբօր քո, և ի բում ականն զգերանդ ոչ նշմարես։

42 Կամ զիա՞րդ կարես ասել եղբայր քո. եղբայր՝ թող հանից զչիւղ յականէ

ւէք նորանց՝ որ յետ առնելոյ յոյս չունիք. և ձեր վարձքն շատ կըլինի, և բարձրելոյ որդիք կըլինիք. ինչուր՝ նա քաղցր է չարերի և երախտամոռների վերայ։

36 Ողորմած եղէք՝ ինչպէս որ ձեր Հայրն եղ ողորմած է։

37 Մի դատէք՝ և չէք դատըվիլ. մի պատժէք՝ և չէք պատժըվիլ. արձակեցէք՝ և կարձակվիք։

38 Տուէք՝ և կըտըվվի ձեզ. լաւ թափ տըվված շարժված առատ չափ կըտան ձեր գոգն. որ չափով որ չափէք՝ նորանով կըչափվի ձեզ։

39 Մին առակ եղ ասաց նորանց՝ Թէ միթէ կարօղ է կոյրն կուրին առաջնորդել, չէ՞ որ երկուքն եղ փոսն մէջ կընկնին։

40 Աշակերտն իրան վարդապետէն լաւ չէ. ամէն կատարեալն իրան վարդապետին պէս կըլինի։

41 Ինչո՞ւ քո եղբօր աչքին մէջն ծեղն տեսնուս, և քո աչքիդ մէջն գերանն չես տեսնում։

42 Կամ ինչպէս կարող ես քո եղբօրդ ասել. եղբայր՝ թող քո աչքիդ ծեղն հանեմ,

քումմէ, և դու ՚ի քումմ ա-
կան ղգերանդ ոչ տեսանես ·
կիզծաւոր՝ հան նախ ղգերա-
նըդ յականէ քումմէ, և ա-
պա հայեսջի՛ր հանել զչիւղ
յականէ եղբօր քո ։

Ա3 Զի ոչ է ծառ բարի՝
որ առնէ պտուղ չար, և ոչ
դարձեալ ծառ չար՝ որ առ-
նէ պտուղ բարի ·

Ա4 Զի իւրաքանչիւր ծառ
՚ի պտղոյ իւրմէ ճանաչի · զի
ոչ եղէկ ՚ի փշոյ քաղեն թուզ,
և ոչ ՚ի մորենւոյ կթեն խա-
ղող ։

Ա5 Մարդ բարի ՚ի բարի
գանձուց սրտի իւրոյ բղխէ
զբարի, և մարդ չար ՚ի չա-
րէն բղխէ զչար · քանզի ՚ի
յաւելուածոյ սրտին խօսի բե-
րան նորա ։

Ա6 Զի՞ կոչէք զիս՝ Տէր
Տէր, և զոր ասեմ ոչ առ-
նէք ։

Ա7 Ամենայն՝ որ գայ առ իս,
և լսէ զբանս իմ և առնէ
զնոսա, ցուցից ձեզ ումմ
նման է ։

Ա8 Նման է առն՝ որ շինի-
ցէ տուն · որ փորեաց և խո-
րեաց, և եդ հիմն ՚ի վերայ
վիմի · ՚ի յառնել հեղեղաց՝
բաղխեաց գետ զտունն, և ոչ
և զո աչքիդ միջի գերանըն
չես տեսանում · կիզծաւոր՝ ա-
ռաջ զո աչքիցդ գերանըն
հանիր, և ապա մտիկ արա՝
որ զո եղբօր աչքիցն ծղոտն
հանես ։

Ա3 Ինչուար՝ բարի ծառ չը-
կայ՝ որ չար պտուղ բերէ, և
ենպէս էլ չար ծառ չը կայ՝
որ բարի պտուղ բերէ ·

Ա4 Ինչուար՝ ամէն մէկ ծառ
իրան պըտղիցն է ճանաչվում ·
պատճառնոր՝ ոչ փըշերիցն
թուզ են քաղում, և ոչ մո-
շիցն խաղող են կըթում ։

Ա5 Բարի մարդն իրան սրտի
բարի գանձուցն (խազնոյէցն)
բարիք է բղխում, և չար
մարդն չար (գանձուցն) չա-
րիք է բղխում · ինչուար՝
սրտի աւելցածիցն է խօսում
նորա բերանն ։

Ա6 Ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր
կոչում, և էն որ ասում եմ,
չէք անում ։

Ա7 Ամէն՝ ով որ ինձ մօտ է
գալիս, և իմ խօսքերըս լսու-
մէ և նորանց անում, ցոյց
տամ ձեզ՝ թէ ո՞ւմ նման է ։

Ա8 Նման է էն մարդուն՝
որ տուն կըշինէ · որ փորեց և
խորացրուց, և հիմըն քարի վե-
րայ դրաւ · ջրի հեղեղները որ
վերկացան՝ գետն էն տանըն

կարաց շարժել զնա. զի հատուտեալ էր հիմն ՚ի վերայ վիմի։

49 Իսկ որ լսէ զբանս իմ՝ և ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն ՚ի վերայ հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ, և վազվազակի անկաւ. և եղև կործանումն տանն այնորիկ մեծ։

ԳԼ. Ը։

1 Եւ իբրև կատարեաց զամենայն զբանս իւր ՚ի լսելս ժողովրդեանն, եմուտ ՚ի Կափառնաւում։

2 Հարեւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդ գոյեալ՝ մերձ էր ՚ի վախճանել, որ էր նմա պատուական։

3 Իբրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զհերսն ՚ի հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա։

4 Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ ո՞րում դիւրս զայս առնես։

5 Զի սիրէ զազգս մեր,

[թակեց, և չը՛կարաց շարժել նորան. [ինչուա՞ր՝ նորա հիմն քարի վերայ հաստատուած էր։

49 Բայց նա՝ որ իմ խօսքերը լսուեմ՝ և չի անում, նըմանի է մարդոյն՝ որ տունը հողի վերայ կըշինէ առանց հիմունքի. գետն նորան թակեց, և շուտով վէր ընկաւ. և էն տան կործանվիլն սաստիկ եղաւ։

Ը։

1 Եւ երբոր իրան ամէն խօսքերըն կատարեց ժողովրդի ականջներուն, մտաւ Կափառնայում։

2 Մին հարեւրապետի ծառայ խիստ հիւանդացած՝ մեռնելոյ մօտ էր, որ պատուական էր նորան։

3 Երբոր Յիսուսի համար լսեց, հրէաներուն (ջութանէք) ծերերըն ուղարկեց՝ որ աղաչեն նորան՝ որ գայ իրան ծառային ապրեցնէ։

4 Եւ նորանք Յիսուսի մօտ եկին՝ նորան խիստ աղաչելով, և ասում, թէ արժանի է նա՝ որ էս շնորհքը անես նորան։

5 Զի սիրում է մեր ազ-

և զժողովրդականսն նա շինեաց մեզ։

6 Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչ ևիչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարեւրապետն բարեկամս, և ասէ ցնա. Տէր՝ մի ինչ աշխատ լինիր, պի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես։

7 Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ։

8 Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս, և ասեմ ումա՝ երթ, և երթայ. և այլում՝ թէ եկ, և գայ. և ծառայի իմում՝ թէ արա զայս, և առնէ։

9 Եւ իբրև լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն՝ որ երթային զհետ նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յիսրայէլի այսչափ հաւատս գտի։

10 Եւ դարձան անդրէնն պատգամաւորքն ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։

գին սիրեաւմ, և ժողովարա-
նըն նա շինեց մեզ համար։

6 Եւ Յիսուս նորանց հետ գնայր. երբոր տաիցին շատ հեռու չէր, հարիւրապետն բարեկամներ ուղարկեց նորա մօտ, և նորան ասաց. Տէր՝ աշխատանք մի քաշեր, ինչու որ արժանի չեմ՝ որ իմ (տան) ծառքի տակն մտնես։

7 Նրանամար էլ ես իմ անձըս արժանաւոր չըհամարեցի՝ որ քեզ մօտ գամ. բայց խօսքով ասա՝ և իմ տղաս կըբժշկվի։

8 Ինչուր՝ ես էլ մին իշխանութեան տակ լինող մարդ եմ. իմ ձեռքս տակն զինուորներ ունիմ, և մըրկին ասում՝ թէ գնա, և նա գնում. և մեկելին՝ թէ եկ, և գալիս է. և իմ ծառային՝ թէ էս բանըս արա, և անում։

9 Եւ երբոր Յիսուս էս լսեց՝ զարմացաւ, դարձաւ դէպի ժողովուրդն՝ որ նորա ետևէն գնում էին՝ և ասաց. Ճշմարիտըն ասում ձեզ՝ թէ իսրայէլի մէջն էլ էսքան հաւատք չըգտի։

10 Եւ էն ուղարկվածմարդիքըն գան տուն, և հիւանդ ծառային բժշկված գտին։

11 Եւ եղև ՚ի վաղիւն երթայր ՚ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում:

12 Իբրև մերձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա:

13 Իբրև ետես զնա Տէր՝ գթացաւ ՚ի նա և ասէ. մի լար:

14 Եւ մատուցեալ մերձեցաւ ՚ի դագաղն. և որք բարձեալն տանէին՝ ետեղի առին. և ասէ, պատանի դուք քեզ ասեմ՝ արի:

15 Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր:

16 Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւորէ առնէին զԱստուած՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ՚ի միջի մերում, և թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում ՚ի բարութիւն:

17 Եւ ել ղերծյս այս ընդ

11 Եւ հետևի օրուցին էլաւ՝ որ միւս քաղաք էր դնում, որ նորա անունն Նային էր. նորա աշակերտներն էլ նորա հետ դնում էին և շատ ժողովուրդ էլ:

12 Երբոր մօտեցաւ քաղաքի դըռանն, ահա միւս մեռեալ էին դուրս բերում՝ որ իրան մօր միածնուկ որդի էր, և նա որբևէրի էր. և քաղաքիցն շատ ժողովուրդ կար նորա հետ:

13 Երբոր Տէրն նորան տեսաւ՝ խղճայ նորա վերայ և ասաց. լայ մի լինիր:

14 Եւ մօտ եկաւ, նաժին մօտեցաւ. և նորանք՝ որ վեր առած տանում էին, կանգնեցին. և ասաց, ով երիտասարդ՝ քեզ եմ ասում՝ վեր կաց:

15 Մեռեալն վերկացաւ, նստեց և սկսեց խօսել. և նորան տուաւ իրան մօրն:

16 Եւ ահ բռնեց ամենին, և Աստուծոյն վառք էին տալիս՝ և ասում, թէ միւն մեծ մարգարէ առաջ է եկել մեր միջումն, և թէ Աստուած իւրան ժողովրդին տեսութիւն եկաւ բարութենով:

17 Եւ էս ձայնս նորա հա-

ամենայն հրէաստան վասն նո-
ցա՝ և ընդ ամենայն կողմանս
աշխարհին ։

18 Եւ պատմեցին Յովհան-
նու աշակերտքն իւր վասն ա-
մենայնի այսորիկ ։

19 Եւ կոչեաց առ ինքն
երկուս ոմանս յաշակերտաց
իւրոց՝ Յովհաննէս , առա-
քեաց առ Տէր և ասէ · դո՛ւ
ես՝ որ գալոցն ես , եթէ այ-
լում ակն կալցուք ։

20 Եւ եկեալ արքն առ նա՝
ասեն · Յովհաննէս մկրտիչ
առաքեաց զմեզ առ քեզ՝ և
ասէ , դո՛ւ ես՝ որ գալոցն ես,
թէ այլում ակն կալցուք ։

21 Եւ ՚ի նմին ժամու բժըշ-
կեաց զբազումս ՚ի հիւան-
դութենէ և ՚ի հարուածոց
և յայսոց չարաց , և կուրաց
բազմաց շնորհեաց տեսանել ։

22 Պատասխանի ետ նոցա և
ասէ · երթա՛յք պատմեցէ՛ք
Յովհաննու՝ զոր տեսէքդ և
լուայք · զի կոյրք տեսանեն ,
և կաղք գնան , բորոտք սըր-
բին , խուլք լսեն , մեռեալք
յառնեն , աղքատք աւետա-
րանին ։

մար դուբս գնաց բոլոր
հրէաստանն՝ և էն աշխարհ-
քի ամէն կողմերն ։

18 Եւ Յօհաննէսին պատմ-
ին իրան աշակերտներն էս
ամէն բաներիս համար ։

19 Եւ Յօհաննէս իրան ա-
շակերտներիցն երկու հոգի
կանչեց իրան մօտ , ուղարկեց
Տէրին մօտ և ասաց · դո՛ւ
ես էն՝ որ պէտք է գաս , թէ
ուրիշի սպասենք ։

20 Եւ էն մարդիքն նորա
մօտ եկին և ասացին · Յօհան-
նէս մկրտիչն մեզ ուղարկեց
քեզ մօտ՝ և ասումէ , դո՛ւ ես
էն՝ որ պէտք է գաս, թէ ու-
րիշի սպասենք ։

21 Եւ (Յիսուս) հենց էն
ժամուն (ահա՛ ուր) շատ
մարդկանց բժշկեց հիւան-
դութիւններից և չարչարան-
քից և չար դևերից , և շատ
կուրերին տեսնել շնորհեց ։

22 Պատասխան տուաւ նո-
րանց և ասաց · գնացէ՛ք
Յօհաննէսին պատմեցէ՛ք՝ ին-
չը որ տեսէք և լսեցէք · թէ
կուրերն տեսնումեն , կաղերն
գնումեն , բորոտներն սրբը-
վումեն , խուլերն (չոռէրն)
լսումեն , մեռելներն յարու-
թիւն են առնում , աղքատնե-
րին աւետարան է քարոզվում ։

23 Ու երանի ինձ՝ որ ոչ դայթագղեսցի յիս։

24 Ու իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. զի՞ ելէք յանապատն տեսանել, եղէ՞գն շարժուն ՚ի հողմոյ։

25 Այլ զի՞նչ ելէք տեսանել; այր ՚ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահա՛ ականիկ որք ՚ի հանդերձս եւ ՚ի փափկութեան են՝ յարքունիս են։

26 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. այո՛, ասեմ ձեզ՝ առաւել եւս քան զմարգարէ։

27 Զի սա է՝ վասն որոյ գրեալն է, Թէ ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի քո։

28 Ամէն ասեմ ձեզ. մեծ ՚ի ծնունդս կանանց մարգարէ քան զյովհաննէս ոչ ոք է. բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա։

23 Ու երանի է նորան՝ որ ինձ վերայ չի դայթակղըվի։

24 Ու երբոր յօհաննէսի ուղարկված մարդիքն գնացին, սկսեց ժողովուրդներին հետ յօհաննէսի համար խօսել. (դուք) ի՞նչ տեսնելու դուրս գնացիք անապատն, մին եղէ՞գ (ղամիշ)՝ որ քամուըն շարժըվումէ։

25 Ա՛պա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մին մարդ փափուկ շորերով զարդարված. ահա՛ նորանք՝ որ փառաւոր շորերուըմն եւ փափկութենուըմն են՝ թագաւորներին պալատներուըմն են։

26 Ա՛պա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մին մարգարէ՞. իրաւի ասումեմ ձեզ՝ որ մարգարէէն էլ աւելի է։

27 Ինչուըր՝ սա էն է՝ որ նորա համար գրված է, Թէ ահա իմ հրեշտակըս ուղարկումեմ քո առաջիդ՝ որ քո առաջիդ քո ճանապարհըդ պատրաստէ։

28 Շմարիտըն ասումեմ ձեզ՝ որ կանանց ծնվածներին միջումն ոչ ով աւելի մեծ մարգարէ չը կայ՝ քան յօհաննէսն. բայց Աստուծոյ արքայութենան միջի փոքրն նորանէց մեծ է։

29 Եւ ամենայն ժողովուրդն երբեւ լուաւ՝ եւ մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած՝ զի մկրտեցան ՚ի մկրտութիւնն Յովհաննու։

30 Իսկ փարիսեցիքն եւ օրինականք զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց՝ զի ոչ մկրտեցան ՚ի նմանէ։

31 Ասէ՝ ումո՞ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ՝ եւ ումի՞ իցեն նմանօղք։

32 Նմանեն մանկտւոյ՝ որ ՚ի հրապարակս նստիցին, կարդայեն զմիմեանս եւ ասիցեն. փող հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցիք, ողբացաք՝ եւ ոչ լացիք։

33 Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէիք՝ դեւ կայ ՚ի նմա։

34 Եկն որդի մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ, եւ ասէք՝ ահա այր կերօղ եւ արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց։

35 Եւ արդարացաւ իմաստութիւնն յորդւոյ իւրոյ։

36 Աղաչէր զնա ոմն ՚ի փա-

29 Եւ ամէն ժողովուրդն երբոր էս լսեցին՝ եւ մաքսաւորներն (հաւատացնելէն), Աստուծոյն արդարացուցին. ինչուր՝ Յովհաննէսի մկրտութենովն մկրտվեցան։

30 Բայց փարիսեցիներն եւ օրէնք գիտօղներն Աստուծոյ խորհուրդը անարգեցին իրենց անձերուն. ինչուր՝ չմկրտվեցան նորանից։

31 Ասպա ումի նմանեցնեմ էս ազգիս մարդիքը. եւ ումի նման են։

32 Են տղայոց նման են՝ որ փողոցներուն նստին, իրար կանչեն եւ ասեն. փող փչեցինք ձեզ համար՝ եւ պար չեկիք, սուգ արինք՝ եւ լայ չէլաք։

33 Յովհաննէս մկրտիչն եկաւ՝ ոչ ուտուէմբ եւ ոչ խմուէմբ, եւ ասուէիք՝ դեւ կայ նորանուէմ։

34 Որդին մարդոյ եկաւ՝ ուտուէմ եւ խմուէմ, եւ ասուէք. ահա ուտօղ եւ խմօղ մարդ՝ մաքսաւորներուն (հաւատացնէն) եւ մեղաւորներուն բարեկամ։

35 Եւ խմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներովն։

36 Փարիսեցիներէն մին

բիսեցւոցն՝ զի կերիցէ Հաշ ընդ նմա . և մտեալ ՚ի տունն փարիսեցւոյն՝ բազմեցաւ :

37 Եւ կին մի էր ՚ի քա-
ղաքին մեղաւոր . իբրև գի-
տաց, թէ բազմեալ է ՚ի տան
փարիսեցւոյն , բերեալ շիշ
մի իւղոյ ազնուի ,

38 կայր յետոյ առ ոտս նո-
րա , լայր . և արտասուօքն
սկսաւ թրջանալ զոտս նորա , և
հերով գլխոյ իւրոյ չնջէր, և
համբուրէր զոտս նորա , և օ-
ծանէր իւղովն :

39 Եւ տեսեալ փարիսե-
ցւոյն՝ որ կոչեացն զնա , ասէր
ընդ միտս իւր . սա թէ մար-
գարէ ոք էր , ապա գիտէր՝
թէ ո՛վ և ո՛րպիսի ոք կին
մերձենայ ՚ի սա , զի մեղաւոր
է :

40 Պատասխանի եւ Յիսուս
և ասէ ցնա . սիմովն՝ ունիմ
ինչ ասել քեզ . և նա ասէ.
ասա վարդապետ . և ասէ .

41 Երկու պարտապանք էին
ուրումն փոխատուի.մինն պար-
տէր հինգ հարիւր դահեկան,

աղաչումէր նորան՝ որ հայց
ուտէ իւրան հետ . և մտաւ
փարիսեցոյ տունն՝ և սեղան
նստեաց :

37 Եւ էն քաղաքումն մին
մեղաւոր կին կար . երբոր ի-
մացաւ , թէ փարիսեցոյ տա-
նըն սեղան է նստած , մին
շիշ (շու-շայ) պատուական իւղ
բերաւ .

38 Ներա ետևիցն նորա ո-
տաց մօտ կանգնած էր, և լաց
էր լինում . և արտասուն-
քովն նորա ոտներըն սկսեց
թրջել , և իրան գլխի մազե-
րովն սրբումէր , և նորա ոտ-
ներըն համբուրումէր, և իւ-
ղովն օծումէր .

39 Եւ (էն) փարիսեցին՝ որ
նորան կանչեց , երբոր տե-
սաւ՝ իրան մտքումն ասումէր.
սա թէ որ մին մարգարէ էր,
ապա կրգիտէր՝ թէ ո՛վ կամ
ի՛նչպէսի կին է նա՝ որ իրան
մօտենումէ , ինչուր՝ մեղա-
ւոր է :

40 Յիսուս պատասխան տը-
ւաւ և նորան ասաց . սիմօն՝
մին բան ունիմ ասել քեզ .
և նա ասաց . ասա վարդա-
պետ . և ասաց .

41 Երկու մարդ պարտա-
կան էին մին փոխ տուօղի .
մինն հինգ հարիւր դահեկան

և միւսն չիսուն ։

42 Եւ երբեւ ոչ դոյր նոցա հատուցանել , երկոցունցն շնորհեաց · արդ ասա՝ ով ա- ւաւել սիրեսցէ զնա ։

43 Ասէ սիմոն · ինձ այս - պէս թուի՝ եթէ որում զքա- զուածն շնորհեաց · և նա ասէ ցնա · ուղիղ դատեցար ։

44 Եւ դարձեալ ՚ի կինն կողմն , ասէ ցսիմոն · տեսա- նե՞ս զայս կին , մտի ՚ի տունն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ե - տուր , իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ , և հերով իւրով չնչեաց ։

45 Համբոյր մի դու ոչ ե- տուր ինձ · սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դա - դարեաց ՚ի համբուրելոյ զոտս իմ ։

46 Իւղով զգլուխ իմ ոչ օծեր · սա իւղով անուշիւ օծ ։

47 Վասն որոյ ասեմ քեզ · թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք , զի յոյժ սիրեաց · զի որում շատ թողուցուս՝ շատ սիրէ , և որում սակաւ՝ սակաւ ։

պարտական էր , և մեկնէն՝ չիսուն ։

42 Եւ երբոր նորանք բան չունէին՝ որ վճարեն , երկուսին էլ բաշխեց · հիմիկ ասա՝ նորանցից ով աւելի կըսիրէ նորան ։

43 Սիմոն ասաց · ինձ էս- պէս կ երևում , թէ նա՝ որ նորան շատ բաշխեց · և նա ասաց նորան · շիտակ դատե- ցիր ։

44 Եւ դարձաւ դէպի կինն, և սիմոնին ասաց · տեսնո՞ւ - մես էս կինը , քո տունդ մը- տի՝ իմ ոտացս ջուր չը՛տը - ւիր , բայց սա իբրեն արտա - սուներովն իմ ոտներըս թրը- ջեց , և իբրեն մազերովն սըր- բեց ։

45 Դու ինձ համբոյր չը՛ - տուիր ինձ · սա՝ ահա քանի որ էստեղ եմ մտել՝ իմ ոտ- ներըս համբուրելուցն չը՛ - դադարեց ։

46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխը · սա՝ անուշ իւղով օծեց ։

47 Ընդհամար ասում եմ քեզ · սրա շատ մեղքերն ի - բան թողված կըլինին , ին- չուր շատ սիրեց · պատճառն որ՝ որին որ շատ կըթողվի՝ նա շատ կըսիրէ, և որին որ քիչ՝ նա քիչ ։

48 Եւ ասէ ցնա . Թողեալ լիցին քեզ մեղք քո :
49 Եւ սկսան՝ որ բազմակն էին ընդ նմա , ասել ընդ միտս իւրեանց . Ով է սա՝ որ զմեղս Թողու :

50 Եւ նա ասէ ցկինն . Հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ՝ ի խաղաղութիւն :

48 Եւ նորան ասաց . Քո մեղքերդ Թողված լինին քեզ:
49 Եւ նորանք՝ որ նորա հետ սեղան էին նստած, սկսեցին իրանց մտքումն ասել . սա ով է՝ որ մեղք կ Թողում :

50 Եւ նա ասաց էն կնկանըն . Քո հաւատքդ ապրեցրուց քեզ՝ գնա՛ խաղաղութենով :

ԳԼ . Ը :

1 Եւ եղև յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս , քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ . և երկոտասանքն ընդ նմա ,
2 Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց և ի հիւանդութեանց . Մարիամ՝ որ կոչէր մագդաղենացի , յորմէ եօթն դեւն ելեալ էր ,
3 Եւ Յովհաննա կին քուզայ՝ հաղարապետին Հերովդի, և շուշան, և այլք բազումք, որք պաշտէին զնա յընչից իւրեանց :

4 Եւ ի ժողովել բազում

1 Եւ նրանից եաև էլաւ՝ որ նա մանէր գալիս քաղաքներն և գիւղերն, քարոզելովը և Աստուծոյ արքայութիւնն աւետարանելովը . և էն տասներկուքն էլ նորա հետ ,
2 Եւ քանի մի կանայք՝ որ չար դևերից և հիւանդութիւններից բժշկված էին . Մարիամն՝ որ մագդաղենացի էր կոչվում , որ նորանից եօթն դև էին դուրս եկել ,
3 Եւ Յոհաննան՝ հերովդէսի տնտես քուզայի կինն , և շուշանն , և շատ ուրիշներ, որ իրանց ապրանքներից նորան ծառայութիւն էին անում :

4 Եւ երբոր շատ ժողո-

ժողովրդոց, և ըստ քաղաքաց քաղաքաց եկեղց առնա՝ ասէ առակաւ։

5 Եւ սերմանացան սերմանել զսերմանիս իւր. և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղև կոխան, և թռչունք երկնից կերան զնա։

6 Եւ այլն անկաւ յապառաժի. և ընդ բուսանելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւթից։

7 Եւ այլն անկաւ ի մէջ փշոյ, և ընդ նմին բուսեալ փշոյն՝ հեղձուցին զնա։

8 Եւ այլն անկաւ յերկիրն բարի և պարարտ. և բուսեալ՝ արար պտուղ հարիւրապատիկ. զայս իբրև ասեցաւ, ասէ. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

9 Հարցանէին զնա աշակերտքն՝ լիցէ զինչ իցէ առակն։

10 Եւ նա ասէ. ձեզ տրեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն՝ և մի տեսցեն, և լսիցեն՝ և մի իմասցին։

11 Բայց առակն այս ինչ է. սերմն բանն Աստուծոյ է։

վուրդնեք Հաւաքվեցան, և ամէն մէկ քաղաքներից նորա մօտ եկին՝ առակով ասաց։

5 Մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց՝ որ իւր սերմունքըն ցանէ. և իւրն սերմելոց ժամանակին՝ կաը որ ճանապարհն վերայ ընկաւ՝ և կոխվեցաւ, և երկնքի թռչուններն նորան կերին։

6 Եւ մէկէն քարքարուտ տեղ ընկաւ. և բուսնելոյ ժամանակն՝ չորացաւ հողի պակասութեան պատճառովն։

7 Եւ մէկէն փշերի մէջն ընկաւ, և փշերն նր հետ բուսան՝ և խեղդեցին նորան։

8 Եւ մէկէն բարի և պարարտ երկրի վերայ ընկաւ. և բուսաւ՝ և հարիւրապատիկ պտուղ տուաւ. երբոր ես խօսեց, ասաց. ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ։

9 Աշակերտներն նորան հարցնում էին՝ թէ ինչ է էն առակն։

10 Եւ նա ասաց. ձեզ տրվեցաւ է Աստուծոյ արքայութեան խորհուրդներն գիտել, բայց ուրիշներին առակներով. որ տեսնեն՝ և չտեսնեն, և լսեն՝ և չհամանան։

11 Մի նայնթէ առակն էս է. սերմն Աստուծոյ բանն է։

12 Եւ որք առ Ճանապարհաւն, այնոքիկ են՝ որ լսենն. և ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի հաւատասցեն՝ և ապրեսցին։

13 Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձութեան հեռանան։

14 Իսկ որ ի մէջ փշոյն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսենզբանն՝ և ի հոգս և ի մտածութիւն և ի ցանկութիւն աշխարհիս զբազեալ հեղձնուն, և անպտուղ լինին։

15 Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ։

16 Ոչ ոք լուցանէ ճրագ և ծածկեալ ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճօք, այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։

12 Եւ որ Ճանապարհի վերայ են, նորանք են՝ որ լսումն. և ապա սատանան գալիս է՝ բանըն նորանց սրտիցն հանումէ, որ չը հաւատան՝ և ապրին։

13 Եւ որ քարքարուտի վերայ են, նորանք են՝ երբոր լսեն՝ բանըն ուրախութեամբ ընդունումեն, և արմատ (ῥίζα) չունին. նորանք մին ժամանակ հաւատումեն, և փորձութեան ժամանակումն հեռանումեն։

14 Բայց են՝ որ փըշերի մէջն ընկաւ, նորանք են՝ որ երբոր բանըն լսումեն՝ հոգսերով և մեծութեամբ և աշխարհքի ցանկութիւններով զբաղվածք՝ խեղդվումեն, և պտուղ չեն տալիս։

15 Բայց են՝ որ պարարտ երկրին վրը(ընկաւ),նորանք են՝ որ բարի և յօժար սրտով բանըն լսումեն և ընդունումեն, և համբերութեամբ պըտուղ են տալիս։

16 Ոչ ով ճրագ չի վառիլ և ամանի տակ թաքցնիլ՝ կամ մահիճի (ὑποκλίνῃ) տակ դնիլ, բայց ճրագակալի վերայ կըդնի, որ նորանք՝ որ ներս են մտնում, լոյս տեսնեն։

17 Զի՞նչ ծաճուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, և ելցէ ի յայտ:

18 Տեսէք այսուհետև զինչդ լսէքդ. զի որ գուցէ՝ տացի նմա, և որ ոչն գուցէ՝ և զոր կարծէն՝ թէ ունիցի, բարձցի ի նմանէ:

19 Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն:

20 Ազդ եղև նմա և ասեն. մայր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և կամին զքեզ տեսանել:

21 Եւ ասէ ցնոսա. մայր իմ և եղբարք իմ սոքա են՝ որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն:

22 Եւ եղև ի միում աւուրց ինքն ել ի նաւ՝ և աշակերտքն նորա, և ասէ ցնոսա. եկայք անցցուք յայն կոյս ծովակիս. և գնացին:

23 Եւ մինչդեռ նաւէին՝ ի քուն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ ի ծովակն՝ և ուռնոյր, և տապնապէին:

17 Իսկի ծաճուկ բան չը-կայ՝ որ չը'յայտնըվի. և ոչ թաքուն բան՝ որ չիմացվի, և դէպի լոյսն գայ:

18 Ապա տեսէք՝ թէ դուք ի'նչպէս էք լսում. ինչուր՝ ով որ ունի, նորան կըտրվի, և ով որ չունի՝ էն էլ որ կարծումէ՝ թէ ունի, նորանից վեր կառնըվի:

19 Նորա մայրն և նորա եղբարքն նորա մօտ եկին, և չէին կարում նորա մօտ հասնել (մարդկանց) բազմութեան պատճառովին:

20 Նորան իմաց արին և ասացին. քո մայրդ և քո եղբարքդ դուրսն կանգնած են՝ և ուզումեն քեզ տեսնել:

21 Եւ նորանց ասաց. իմ մայրս և իմ եղբարքս սորանք են՝ որ Աստուծոյ խօսքըն լսումեն և անում:

22 Եւ էլաւ օրերից մըն-նումից՝ որ ինքն նաւ մտաւ, և նորա աշակերտներն էլ, և նորանց ասաց. եկէք անց կենանք ծովակի էն կողմն. և գնացին:

23 Եւ դեռ որ նաւով գնումէին՝ նա քուն մտաւ. և քամոյ մրրիկ ընկաւ էն ծովակի մէջ և (ծովն) բարձրանումէր, և նեղութեան մէջ էին:

24 Մատուցեալ զարհեստս զայն զնա և ասեն. վարդապետ վարդապետ՝ կորնչիմք աւասիկ. և նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջրոյն՝ և հանդարտեցին, և եղև խաղաղութիւն:

25 Ասէ ցնոսա. ո՞ւր են հաւատք ձեր. և զահի հարեալ զարհամարհեան, և ասէին ցմիմեանս. ով արդեօք իցէ սա՝ զի և հողմոյ և ջրոյ հրամայ տայ, և հնազանդին սմա:

26 Եւ նաւեցին իջին յաշխարհն գերգեսացւոց. որ է յայնկոյս հանդէպ գալիլեայ:

27 Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում էին դևք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգենեալ՝ և ոչ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս:

28 Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի կայ իմ և քո Յիսուս որդի Աստուծոյ բարձրելոյ. աղաչեմ զքեզ՝ մի տանջեր զիս:

29 Հանդի հրամայ տայր

24 Մօտ եկին, նորան զարթնացուցին և ասացին. վարդապետ վարդապետ՝ ահա կորչումենք. և նա վերկացաւ, և զսաստիկն ջրոյն և զալեացն արգելոյց, և դադարեցին, և խաղաղութիւն եղաւ:

25 Ասաց նորանց. ո՞ւր է ձեր հաւատքն. և խիստ վախեցած զարմացան, և իրար ասում էին. ա՛ռ ալի՛տ լինի՝ որ զսաստիկներին և ջրերին հրամայէ, և հնազանդվում են նորան:

26 Եւ նաւալ գնացին, հասին գերգեսացոց աշխարհքն՝ որ են կողմն է գալիլեայի դիմացն:

27 Եւ երբոր նա դուրս էր գալիս ցամաքն, քաղաքիցն մին մարդ պատահեց նորան՝ որ նորանում դևեր կային. և շատ ժամանակ շոր չէր հագած՝ և ոչ տան մէջ բնակված, այլ գերեզմաններումն:

28 Եւ Յիսուսին որ տեսաւ, աղաղակեց և նորա առաջին ընկաւ, և բարձր ձայնով ասաց. քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ Յիսուս բարձրեալ Աստուծոյ որդի. աղաչում քեզ՝ մի տանջեր ինձ:

29 Պատճառնոր՝ նա պիղծ

այսոյն պղծոյ ելանել ՚ի մար-
գոյ անտի · ղի բազում ժա-
մանակս յաւիւժակեալ էր
գնա, և կապէր ՚ի շղթայս,
և պահէր յերկաթս, և խզէր
զկապանսն, և վարէր ՚ի դի-
ւէն յանապատս :

30 Եւ հարց ցնա Ցիսուս՝ և
ասէ · զի՞նչ անուն է քեզ ·
և նա ասէ, լեգեովն · զի դիւք
բազումք մտեալ էին ՚ի նա:

31 Եւ աղաչէին զնա՝ զի
մի հրամայն տայէ նոցա եր-
թալ յանդունդս :

32 Եւ էր անդ երամակ մի
խոզից բազմաց արօտական ՚ի
լերինն, և աղաչէցին զնա՝ զի
հրամայն տայէ նոցա մտանել
՚ի նոսա · և հրամայեաց նոցա:

33 Եւ ելեալ դևքն յա-
նէն՝ մտին ՚ի խոզականն · և
դիմեաց երամակն ՚ի գահէ
անտի ՚ի ծովակին՝ և հեղձաւ:

34 Իբրև տեսին խոզաբածքն
զերթն՝ որ եղեն, փախեան, և
պատմեցին ՚ի քաղաքին և
յագարակսն :

35 Եւ իբրև ելին տեսանել
զդևին հրամանն էր տալիս՝ որ
էն մարդուցն դուրս գայ · ին-
չուոր՝ շատ անգամ յափշտա-
կել էր նորան, և շղթայեան ե-
րով (պաճուճեալ) կապվուսէր,
և երկաթներով մէջ պահվու-
սէր, և նա կապանքներըն
կորուսէր, և դևիցն քաշվու-
սէր անապատ տեղ :

30 Ցիսուս նորան հարցը-
րուց՝ և ասաց · քո անունդ
ի՞նչ է · և նա ասաց, լե-
գեօն · ինչուոր՝ շատ դևեր
էին մտած նորա մէջ :

31 Եւ աղաչուսէին նորան՝
որ չը հրամայէ նորանց գնալ
անդունդն :

32 Եւ կնտեղ շատ խոզերի
մին երամակ (նիւտ) կար ՚
որ էն սարին վերայ արածու-
սէին, և աղաչեցին նորան՝
որ հրաման տայ իրանց մըտ-
նել նորանց մէջ · և հրա-
մայեց նորանց :

33 Եւ դևերն էն մարդու-
ցըն դուրս եկին՝ և խոզերին
մէջ մտին · և երամակն էն
բարձր տեղիցն վազեց ծով-
ակին մէջ՝ և խեղդվեցաւ :

34 Երբոր խոզաբածներըն
տեսին էն բաներն՝ որ էլան,
փախան, և էն քաղաքի և շէ-
ներն մէջն պատմեցին :

35 Եւ երբոր (մարդիք)

զգործան, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դևքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտն Յիսուսի. և երկեան:

դուրս ելան էն բանէրն տեսնելոյ, և Յիսուսի մօտ եկին, էն մարդէն գտին՝ որ նորա նիւ դևէրն դուրս էին եկել, որ հագված և խելքն գլուխըն եկած՝ Յիսուսի ոտներին մօտ նստած էր. և վախեցան:

36 Պատմեցին նոցա՝ որոյ տեսեալն էր, թէ ղնիացդ փրկեցաւ դիւահարն:

36 Նորանք՝ որ տեսել էին, պատմեցին նորանց, թէ ինչպէս էս փրկվեցաւ էն դիւահարն:

37 Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկոզմամբքն գերգեսացւոց՝ զբնալ ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ ատպնապէին. և նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն:

37 Եւ գերգեսացոց ամէն չորս կողմերն ելած մարդիքն աղաչումէին նորան՝ որ իրանց սահմաններիցն դնայ, պատճառն որ՝ սաստիկ ահով և վախով բռնըված էին. և նա նաւ մտաւ՝ և կէտ դարձաւ:

38 Աղաչէր զնա այրն՝ ուստի դևքն ելեալ էին, շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ և ասէ.

38 Էն մարդն՝ որ նորանից դևերն դուրս էին եկել, նորան աղաչումէր՝ որ նորա հետ մանդայ. արձակեց նորան՝ և ասայ.

39 Դարձիր ի տուն քո, և պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած. գնաց ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս:

39 Դարձիր քո տունդ, և պատմիր ամէն՝ ինչ որ Աստուած քեզ արաւ. նա գնաց քաղաքն՝ և քարոզումէր ինչ որ Յիսուս իրան արաւ:

40 Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակնուն[ե]էին նմա:

40 Եւ երբոր Յիսուս կէտ դարձաւ, ժողովուրդն ընդունեց նորան. ինչուր՝ ամէնքըն էլ սպասումէին նորան:

41 Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նորա.

42 Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա:

43 Եւ կին մի էր ի տեառնատեսուհեան արեան ամաց երկոտասանից, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ:

44 Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց բղխուն արեան նորա:

45 Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային, ասէ պետրոս՝ և որ ընդ նմա էին. վարդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ:

41 Եւ ահա մին մարդ եկաւ՝ որ նորա անունն Յայրոս էր, և նա ժողովարանի իշխան էր. Յիսուսի ոտներըն ընկաճ՝ աղաչէր զնա որ իրան տունն մտնէ:

42 Ինչուորայ՝ մին միածին աղջիկ ունէր, իբր տասներկու տարեկան, և նա մեռնելոյ մօտ էր. և նորա գնալոյ ժամանակին՝ ժողովուրդներն նեղայնուէին նորան:

43 Եւ մին կին կար՝ արիւն վաթսներկու տարուց՝ որ իրան ամէն ապրանքներըն բժշկներին էր տուել՝ վըճայրել. որ նորան հնար չէր եղած՝ մընիյն բժշկվելոյ:

44 Այս մօտ եկաւ, և եւսի ցըն նորա շորի ծայրերին (ՙՂՂՇՂՐՔ) դիպաւ. և շուտով հենց էն ժամուն (ՙՀՀՔՈՒՏՆ) նորա արիւնի վազելն դադարեց:

45 Եւ Յիսուս ասաց. Ո՞վ է՝ որ ինձ դիպաւ. երբոր ամենքըն ուրանուէին, պետրոս և նորանք՝ որ նորա հետ էին՝ ասային. վարդապետ՝ ժողովուրդներդ պնդուն և նեղայնուն քեզ:

46 Յր ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ ինձ. քանզի գիտայի՝ եթէ զօրութիւն ել ինէն ի

47 Իբրև եռես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, լեզ վասն որոյ իրայ մերձեցաւ ի նա՝ պատմեայ առաջի ամենայն ժողովրդեանն, և լեզ որպէս բժշկեցաւ առժամայն։

48 Յր ասէ. քաջալերեայ դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն։

49 Յր մինչդեռ նա խօսէր, դայ ոմն ի տանէ ժողովրդապետին, և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ զքա։

50 Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա՝ և ասէ. մի երկնչիր, միայն հաւատա՝ և կեցցէ։

51 Յր մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զպետրոս և զյակովբոս և զյովհաննէս, և զհայր մանկանն և զմայրն նորա։

52 Լային ամենեքեան՝ և

46 Յր Յիսուս ասաց. մինն դիպաւ ինձ. ինչուր՝ իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից։

47 Երբոր կինն տեսաւ՝ որ չը ծածկվեցաւ նորանից, դողալով եկաւ՝ և նորա առաջին ընկաւ, և ամէն ժողովրդի առաջին պատմեց՝ լեզ ինչ բանի համար նորան դիպաւ, և լեզ ինչպէս հենց էն ժամուցն բժշկվեցաւ։

48 Յր (նա) ասաց. սրտապինդ կաց դուստր՝ քո հաւատքդ ողջացրուց քեզ, գընա խաղաղութեանով։

49 Յր դեռ որ նա խօսում էր, էն ժողովրդապետի տանից մին մարդ եկաւ, և նորան ասաց. քո աղջիկդ մեռաւ, էլ դորան մի աշխատացրեր։

50 Բայց Յիսուս երբոր լսեց, նորան պատասխան տուաւ և ասաց. մի վախեցար, միայն հաւատա՝ և նա կապրի։

51 Յր տունն որ մտաւ՝ խնկի մընին չը լզեց որ մտնէ, բայց միայն պետրոսին, և յակոբին և յոհաննէսին, և եղբեխայի հօրն և նորա մօրն։

52 Ամենքն լայ էին լինում՝

կոճէին զնա · և նա ասէ , մի լայք՝ զի չէ մեռեալ , այլ ննջէ ։

53 Եւ նոքա ծաղր առնէին զնա , զի գիտէին՝ թէ մեռաւ ։

54 Եւ նորա հանեալ զա մենեսին արտաքս ,

55 Կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ · արի կաց մանուկ դուս ։

56 Եւ դարձաւ ոգի նորա , և կանգնեցաւ վաղվաղակի · և հրամայեաց տալ նմա ուտել ։

57 Եւ զարմացան ծնօղքն նորա · և նա պատուիրէր մի ումեք ասել՝ որ լինէ եղեն ։

ԳԼ· Թ ։

1 Եւ կոչեցեալ զերկոտասան աւետեալսն , եառ նոցա զօրութիւն և իշխանութիւն ՚ի վերայ ամենայն դիւաց , և ջնջել զհիւանդութիւնս ։

2 Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ , և բժշկել զհիւանդս ։

և նորա վերայ սուգ էին առնում · և նա ասաց , լայ մի լինիք , ընչուորք՝ մեռած չէ , այլ քնած է ։

53 Եւ նորանք ծաղր էին անում նորան , ընչուորք՝ գիտումէին , որ մեռաւ ։

54 Եւ նա ամէնին դուրս հանեց ,

55 Նորա ձեռքին բռնեց , խօսեց և ասաց · ուլ երեխայ՝ վերկաց , կանգնիր ։

56 Եւ նորա հոգին դարձաւ , և շուտով կանգնեց · և հրամայեց՝ որ նորան բան տան ուտելոյ ։

57 Եւ նորա ծնօղքն զարմացան · և նա պատուիրուածքը՝ որ իսկի մընին չասեն էն՝ ինչ որ էլաւ ։

1 Եւ տասներկու առաքեալներին կանչեց , և նորանց զօրութիւն և իշխանութիւն տուաւ ամէն դևերին վերայ , և հիւանդութիւններ բժըշկելոյ ։

2 Եւ նորանց ուղարկեց՝ որ Աստուծոյ արքայութիւնն քարոզեն , և յաւադարնեըն բժշկեն ։

3 Եւ ասէ ցՆոսա. Մի՛ ինչ
բառնայք ՚ի ձանապարհ. մի՛
գաւազան և մի՛ մախաղ, մի՛
հաց և մի՛ արծաթ, մի՛ եր-
կուս հանդերձս ունիցիք։

4 Եւ յոր տուն մտանի-
ցէք՝ անդ ապրի՛ք, և անտի
դնայցէ՛ք։

5 Եւ որք ոչ ընդունի-
ցին զձեզ, յորժամ ելանի-
ցէք ՚ի քաղաքէն յայնմանէ,
զփոշի ոտից ձերոց թօթա-
փեսջի՛ք ՚ի վկայութիւն նո-
ցա։

6 Եւ ելեալ շրջէին ընդ
քաղաքս և ընդ գեօղս՝ աւե-
տարանէին, և բժշկէին ընդ
ամենայն տեղիս։

7 Լուաւ Հերովդէս չոր-
րորդապետ զգործսն ամենայն.
և պարմանայր վասն ասելոյն
յոմանց,

8 Թէ Յովհաննէս յարեաւ
՚ի մեռելոց, և յոմանց՝ Թէ
եղիա յայտնեցաւ, և յայլոց՝
Թէ մարգարէ ոմն յառաջ-
նոցն յարեաւ։

9 Ասէ Հերովդէս. զյով-
հաննէս ես գլխատեցի. իսկ

3 Եւ նորանց ասաց. ես-
կի՛ մին բան վեր չառնէք ճա-
նապարհի համար. ոչ գա-
ւազան, ոչ պարկ, ոչ հաց
և ոչ արծաթ, երկու հա-
գուստ էլ չունենաք։

4 Եւ որ տուն որ մտնէք՝
էնտեղ մնացէ՛ք, և էնտեղի-
ցըն գնացէ՛ք։

5 Եւ նորանք՝ որ ձեզ չըն-
դունին, երբոր էն քաղաքի-
ցըն դուրս կըգնաք, ձեր ոտ-
ների փոշին թափ տուէք՝ որ
նորանց վկայութիւն լինի։

6 Եւ դուրս գնային և ման
էին գալիս քաղաքներն և
գիւղերն՝ աւետարանըն քա-
րոզուելիս, և ամէն տեղ բը-
ժըշկութիւն էին անում։

7 Հերովդէս չորրորդապե-
տըն էն ամէն գործերըն լը-
սեց. և զարմանում էր նորա
համար՝ որ մին քանիսն ա-
սում էին,

8 Թէ Յոհաննէսն մեռել-
ների միջից յարութիւն ա-
ռաւ, և մին քանիսն՝ Թէ ե-
ղիան յայտնըվեցաւ՝ և ու-
րիշներն՝ Թէ առաջին մար-
գարէներից մինն յարութի
առաւ։

9 Հերովդէսն ասաց. Յո-
հաննէսի գլուխըն ես կտրե-

սա ճիլ լցէ՝ զորմէ ղայսպիսի
իբս լսեմ · և խնդրեր տեսա-
նել զնա ։

10 Դարձան առաքեալքն, և
պատմեցին նմա զամենայն՝ զոր
արարին · և առեալ զնոսա՝
խուսեաց առանձինն ՚ի տեղի
անապատ քաղաքի միոյ , ո-
րում անուն էր Բեթսայիդա։

11 Եւ ժողովուրդքն իբրև
գիտացին , գնացին զհետ նո-
ցա · և ընկալեալ զնոսա՝ լա-
սէր ընդ նոսա վասն արքա-
յութեան Աստուծոյ , և ո-
րոց պէտք էին բժշկութեան՝
բժշկէր ։

12 Եւ օրն սկսաւ տարաժա-
մել · մատեան երկոտասանքն
և ասեն ցնա · արձակեա զժո-
ղովուրդսդ, զի երթեալ շուրջ
՚ի գիւղսն և յադարակս՝ հան-
գիցեն , և դտցեն կերակուր·
զի աստ յանապատ տեղւոջ
եմք ։

13 Աստ ցնոսա · դուք տուք
դոցա ուտել · և նոքա ասեն·
ոչ գոյ մեր աւելի քան զհինգ
նկանակ և զերկուս ձկունս ,
բայց եթէ երթիցուք գնես-
ցուք բաւական ժողովրդեանդ

ցի · բայց սա ճիլ է՝ որ նո-
րանից էսպէսի բաներ եմ
լսում · և խնդրում էր, որ տես-
նէ նորան ։

10 Առաքեալներն դարձան և
պատմեցին նորան ամէն՝ ինչ
որ արին · և նորանց առաւ՝
գնաց առանձին մի անապատ
(չէօլ) տեղ , մի քաղաքի մօտ՝
որ նորա անունն բեթսայիդա
էր ։

11 Եւ ժողովուրդները եր-
բոր գիտացին , նորա եաւէն
գնացին · և նորանց ընդու-
նեց և նորանց հետ Աստուծոյ
արքայութեան համար
խօսումէր , և նորանց՝ որ
բժշկութեան կարօտ էին՝
բժշկումէր ։

12 Եւ օրն սկսեց մտնել ·
տասներկուքն մօտ եկին և
նորան ասացին · Թող արա
էդ ժողովուրդըդ , որ չորս
կողմով էլած գիւղերն և շէ-
ներն գնան , հանգիստ առ-
նեն , և կերակուր գտնեն՝ ին-
չուր՝ էստեղ անապատ տե-
ղում ենք ։

13 Նորանց ասաց · դուք
տուէք դորանց ուտել՝ և նո-
րանք ասացին · մենք հինգ
հատ հացից և երկու ձըկնից
աւելի բան չունինք , եթէ
ոչ՝ գնանք էդ ժողովրդիդ

կերակուր ։

14 Քանզի էին արք իբրև հինգ հազար ։ ասէ ցաշակերտան . բազմեցուցէք զոմանսա դասս դասս՝ յխոտն յխոտն ։

15 Եւ արարին այնպէս , և բազմեցուցին զամենեսեան ։

16 Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս , օրհնեաց և եբեկ՝ և տայր ցաշակերտան արկանել ժողովրդեանն ։

17 Կերան և յագեցան ամենեքեան. և բարձին զոմանս կոտորոցն՝ երկոտասան սակառի ։

18 Եւ եղև՝ ի կալն նորա յաղօթս առանձինն , էին ընդ նմա և աշակերտքն նորա. եհարց զնոսա և ասէ . զի՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ ։

19 Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն . զՅովհաննէս մկրտիչ , և այլք զեղիա, իսկ այլք՝ թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ ։

20 Ասէ ցնոսա . դուք զի՞ ոք ասէք զինէն՝ թէ իցեմ . պատասխանի ետ պետրոս և

համար բաւական կերակուր դնեմք ։

14 Ինչուար՝ հինգ հազարի չափ մարդիք էին ։ աշակերտներին ասաց . նստացրէք դրանց դաս դաս՝ յխոտն յխոտն։

15 Եւ էնպէս արին , և ամէնին նստացրին ։

16 Եւ էն հինգ հացըն և երկու ձուկըն առաւ , դէպի երկինքն նայեց , օրհնեց և կտրեց,և տալիս էր աշակերտներին՝ որ քցեն ժողովրդին։

17 Ամէնքն կերին և կշտացան . և կտորների փշրանքները վերկալան՝ տասներկու քթոց ։

18 Եւ էլաւ՝ երբոր նա առանձին աղօթք էր անում՝ նորա աշակերտներն էլ նորա հետ էին . հարցրուց նրանց և ասաց . ժողովուրդներն ինձ համար ո՞վ են ասում՝ որ լինիմ ։

19 Եւ նորանք պատասխան տուին և ասացին . Յոհաննէս մկրտիչն , և ուրիշներն՝ (թէ) եղիան , և ուրիշներն՝ թէ առաջին մարգարէներից մին յարութիւն առաւ ։

20 Նորանց ասաց . դուք ո՞վ էք ասում ինձ համար՝ որ լինիմ . պետրոս պատասխան

ասէ · ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ։

21 Նա սատեաց ՚ի նոսա, և պատուիրեաց մի ումեք ասել զայն ։

22 Եւ ասէ, Թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարիլ և անարգիլ ՚ի քահանայապետից և ՚ի դերոց և ՚ի դպրաց, և սպանանիլ՝ և յերիր աւուր յառնել ։

23 Եւ ասէր առ ամենեսին, եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝ և առցէ զխաչ իւր հանապազ՝ և եկեսցէ զկնի իմ ։

24 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։

25 Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի ։

26 Զի որ ամօթ հայցի զիս և զբանս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ առցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրով՝ և հօր և հրեշտակաց սրբոց ։

27 Ասացի արդարև ասեմ

տուաւ և ասաց · Աստուծոյ Քրիստոսն ։

21 Նա սատեց նորանց, և պատուիրեց՝ որ էն իսկի մընին չասեն ։

22 Եւ ասաց՝ Թէ պէտք է, որ որդին մարդոյ շատ չարչարվի և անարգվի քահանայապետներիցն և ծերերիցն և կարդացողներիցն, և սպանվի՝ և երեք օրուանն յարութիւն առնէ ։

23 Եւ ամենին ասումէր, Թէ որ մինն կամենում իմ եաւևէս գալ՝ Թող իրան ան ձնէն ուրանայ՝ և ամեն օր իրան խաչն առնէ՝ և իմ ետևէս գայ ։

24 Պատճառնոր՝ ով որ կամինայ իրան անձն ապրեցընել՝ կըկորցնէ նորան · և ով որ իրան անձն կըկորցնէ ինձ համար՝ կապրեցնէ նորան ։

25 Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ աշխարհքըս ստանայ, և իրան անձն կորցնէ, կամ (նորան) ինաս տայ ։

26 Ինչուար՝ ով որ ինձ և իմ խօսքերըս ամօթ կըհա մարէ՝ որդին մարդոյ էլ նորան ամօթ կանէ՝ երբոր իրան և հօր և սուրբ հրեշտակներն վառ բոնն կըգայ ։

27 Բայց ուղղորդէն ասու

ձեզ, եթէ են ոմանք ի դո-
յանէ՝ որ այդը կան, որք մի
ճաշակեսցեն զմահ, մինչև
տեսցեն զարքայութիւն Աս-
տուծոյ։

28 Եւ եղև յետ այսոյ բա-
նից իբրև աւուրք ութ, ա-
ռեալ զպետրոս և զյակով-
բոս և զյովհաննէս՝ եկ ի
լեառն կալ Յաղօթս։

29 Եւ ի կալ նմա յաղօթս՝
եղև տեսիլ երեսաց նորա այ-
լակերպ. և փոխեցաւ հան-
դերձ նորա՝ և եղև սպիտակ
փայլուն։

30 Եւ ահա արք երկու խո-
սէին ընդ նմա. որ էին Մով-
սէս և եղիա,

31 Երևեալ փառօք. և ա-
սէին զելևոյն նորա՝ զոր կա-
տարելոյ էր յԵրուսաղէմ։

32 Իսկ պետրոս՝ և որ ընդ
նմայն էին՝ ծանրացեալք ի
քնոյ՝ զարթեան, տեսին զը-
փառսն նորա՝ և զերկուս արսն,
որ կային առ նմա։

33 Եւ եղև ի մեկնելն նո-
ցա ի նմանէ, ասէ պետրոս
ցՅիսուս. վարդապետ՝ բար-
ւոք է մեզ աստ լինել, և
արասցուք երիս տաղաւարս,

մեմ՝ ձեզ. մեկ Էստեղ լինող-
ներիցըն մին քանիսն կան, որ
մահ չեն տեսանիլ, մինչև որ
Աստուծոյ արքայութիւնըն
տեսնեն։

28 Եւ ելաւ՝ որ ութ օրի
չափ էս խօսքերիցս ետև, պետ-
րոսին և Յակոբին և Յոհան-
նէսին առաւ՝ և վեր ելաւ մին
սար աղօթք անելոյ։

29 Եւ նորա աղօթք անե-
լոյ ժամանակն՝ նորա երեսի
կերպարանքն ուրիշ կերպ է-
լան. և նորա հագուստն փոխ-
վեցաւ՝ և սպիտակ փայլուն
ելաւ։

30 Եւ ահա երկու մարդ
խօսումէին նորա հետ. որ նո-
րանք մովսէսն և եղիան էին,

31 Փառքով երևեցած՝ և
նորա վախճանին համար խո-
սումէին՝ որ երուսաղէմումն
պէտք էր կատարէ։

32 Բայց պետրոսն և նո-
րանք՝ որ նորա հետ էին՝ որ
քնով ծանրացած էին, զարթի-
նացան՝ տեսին նորա փառ-
քըն, և էն երկու մարդն՝ որ
նորա մոտ կանգնած էին։

33 Եւ ելաւ երբոր նորանք
հեռանումէին նորանից, պետ-
րոսն ասաց Յիսուսին. վար-
դապետ՝ լաւ է, որ մենք էս
տեղ կենանք, և երեք տա-

մի քեզ և մի մովսէսի՝ և մի եղիայի . և ոչ գիտէր զինչ խօսէր ։

34 Եւ երբեք զայս ասաց , եկն ամպ և հովանի եղեւ ի վերայ նոցա . և երկեան ի մտանելն նոցա ընդ ամպովն։ 35 Ձայն եղեւ յամպոյն և ասէ . դա է որդի իմ ընտրեալ , դմա լուարուք ։ 36 Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն . և ինքեանք լռեցին , և ոչ ուրեք պատմէին յաւուրսն յայնոսիկ և ոչ ինչ՝ յորոց տեսին ։

37 Եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի լեռնէ անտի , ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում ։ 38 Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ . վարդապետ՝ աղաչեմ զքեզ , հայեաց յորդի իմ , զի միամօր է ինձ ։

39 Եւ ահա այս հարկանի ի նմա , և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ զնա և թաւալեցուցանէ և փրփրեցուցանէ , և հազիւ մեկնի ի նմա՝ զաւար (չոքբբ) շինենք , մի՝ նըն քեզ համար . և մինըն մովսէսին և մինըն եղիային . և չէր գիտուն՝ թէ ինչ էր խօսում ։

34 Եւ երբոր էս ասայ , մին ամպ եկաւ և նորանց վերայ շուաք արաւ . և վախեցան , երբոր էն ամպին մէջ մտին։ 35 Ձայն էլաւ ամպիցն և ասայ . դա է իմ ընտրված որդին՝ դորան ականջ դրէք ։ 36 Եւ էն ձայնն որ էլաւ՝ Յիսուս մէնակ գտաւ՝ և նորանք լուռ կացան և էն օրերումըն իսկի մին մարդոց չըպատմեցին էն բաներիցն՝ որ տեսին ։

37 Եւ էլաւ էգուցվան օրումըն՝ երբոր էն սարիցն վէր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորա առաջն եկաւ ։ 38 Եւ ահա էն ժողովրդիցն մին մարդ աղաղակեց և ասայ . վարդապետ՝ աղաչումմ քեզ , մտիկ տուր իմ որդուս . ինչուոր՝ միածնուն է ինձ ։ 39 Եւ ահա դևը բռնումմ նորան , և յանկարծ գոռում՝ և նորան գետնով է տալիս , և թաւալացնումմ նորան և փրփրացնումմ , և դը-

նէ խորտակեալ զնա ։

Ի0 Եւ աղաչեցի զաշակերտսն քո , զի հանցեն զնա , և ոչ կարացին ։

Ի1 Պատասխանի եւ Յիսուս և ասէ . Ով ազգ ան - հաւատ և թիւր, մինչև կ՚երբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ . մատո այսր զորդին քո ։

Ի2 Եւ մինչդեռ մատչէր , զարկոյց զնա դեւն՝ և շար - ժըլեաց ։

Ի3 Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ , և բժշկեաց զմա - նուկն . և ետ զնա ցհայր իւր ։

Ի4 Եւ զարմանային ամենե - քեան ՚ի վերայ մեծամեծացն Աստուծոյ . և ՚ի զարմանալն ամենեցուն ՚ի վերայ ամենայնի՝ ըսէ առնէր , ասէ ցաշակերտսն իւր . դիք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ . զի որ - դի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան ։

Ի5 Եւ նորա ոչ գիտէին զբանն , և էր ծածկեալ ՚ի նոցանէ՝ զի ՚ի գիտասցեն . և երկնչէին հարցանել ցնա

ժուռաը [Թէ նորան կոտրատե - լուցըն եւս հեռանումէ նո - բանից ։

Ի0 Եւ քո աշակերտներին աղաչեցի , որ հանեն նորան , և չկարացին ։

Ի1 Յիսուս պատասխան տը - ւաւ և ասաց . ով անհաւատ և ծուռ ազգ , մինչև ի՞րբ ձեզ հետ պիտի լինիմ և համ - բերեմ ձեզ . քո որդին էս - տեղ բե՛ր ։

Ի2 Եւ դեռ որ մօտ էր գա - լիս , դևն գետնով զարկեց նորան՝ և շատ սաստիկ շար - ժեց ։

Ի3 Յիսուս սաստեց պիղծ դևին , և տղային բժշկեց . և նորան տուաւ իրան հօրն ։

Ի4 Եւ ամէնքն զարմանու - մէին Աստուծոյ մեծամեծ գործքերին վերայ . և դեռ որ ամէնքն զարմանումէին էն ա - մէն բաներին վերայ՝ որ անու - մէր , իրան աշակերտներին ա - սաց . էս բաներըս դրէք դուք ձեր ականջներն . որ որդին մարդոյ մարդկանց ձեռքն պի - տի մատնըվի ։

Ի5 Եւ նորանք չէին գի - տում էին բանըն և ծածկը - ված էր նորանցից՝ որ չը՛գի - տենան . և վախումէին հարցը -

վասն բանին այնորիկ ։

16 Յմուտ խորհուրդ ՚ի նո-
սա՝ թէ ո՞ արդեօք մեծ իցէ
՚ի նոցանէ ։

17 Ցիսուս իբրեւ ծանեաւ
զխորհուրդս սրտից նոցա, առ
մանուկ մի՝ կացոյց ՚ի մէջ
նոցա առ իւր ,

18 Յոր ասէ ցնոսա · որ ոք
ընկալցի զմանուկս զայս յա-
նունն իմ՝ զիս ընդունի , եւ
որ զիս ընդունիցի՝ ընդունի
զառաքիչն իմ · զի որ փոք-
րիկն է յամենեսեան ՚ի ձեզ՝
նա եղիցի մեծ ։

19 Պատասխանի եւս յով-
հաննէս եւ ասէ · վէրդապետ՝
տեսաք զոմն՝ որ յանունդ քո
դեւս հանէր՝ եւ արգելաք զնա,
զի ո՛չ հետի ընդ մեզ ։

50 Ասէ ցնոսա Ցիսուս · մի՛
արգելուր , զի որ ո՛չն է ձեր
թշնամի՝ ՚ի ձեր կողմն է ։

51 Յոր եղեւ ՚ի կատարել ա-
ւուրց վերանալոյ նորա՝ եւ
ինքն զերեսս հաստատեաց եր-
թալ յերուսաղէմ ։

52 Յոր առաքեաց հրեշտակս
առաջի երեսաց իւրոց· եւ իբ-
նել նորան էն բանին հա-
մար ։

46 Մին խորհուրդ մտաւ
նորանց մէջ ՝ թէ նորանցից
ո՛վ լինի մեծն ։

47 Ցիսուս երբոր նորանց
սրտերի մտածմունքներըն ի-
մացաւ՝ մին երեխայ առաւ՝ եւ
նորանց միջումն կանգնացրուց
իրան մօտ ,

48 Յո նորանց ասաց · ով
որ էս երեխային կընդունի
իմ անունովս՝ ինձ կընդունի·
եւ ով որ ինձ կընդունի՝ իմ
ուղարկօղին կընդունի · պատ-
ճառն որ՝ ով որ ձեր ամե-
նիդ մէջն շատ փոքրն է՝ նա
մեծ կըլինի ։

49 Ցովհաննէսն պատասխան
տուաւ եւ ասաց · վէրդապետ՝
մինը տեսինք՝ որ քո անու-
նովդ դեւեր էր հանում՝ եւ
արգելեցինք նորան , ինչուր՝
մեզ հետ ման չէր գալիս ։

50 Ցիսուս նորանց ասաց·
մի՛ արգելէք նորան · պատ-
ճառն որ՝ ով որ ձեր թշնա-
մի չէ՝ ձեր կողմն է ։

51 Յոր էլաւ՝ երբոր նորա
վերանալոյ օրերն կատարվու-
մեին , եւ ինքն երեսըն հաս-
տատեց՝ որ դնայ երուսաղէմ ։

52 Յոր իրան երեսի առա-
ջին պատգամաւորներ ուղար-

բև չոգան՝ մտին ՚ի գիւղ մի սամարացւոց պատրաստել ինչ նմա ։

53 Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա երթալ յերուսաղէմ ։

54 Իբրև տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս, ասեն • Տէր՝ կամիս, զի ասասցուք, և իջցէ հուր յերկնից՝ և սատակեսցէ զնոսա ։

55 Դարձաւ սաստեաց ՚ի նոսա՝ և ասէ • ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք ։

56 Զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել • և գնացին յայլ գեօղ ։

57 Եւ մինչդեռ երթային նոքա ՚ի Ճանապարհի, ասէ ոմն ցնա • եկից զկնի քո՝ յորժամ վայր և երթիցես ։

58 Ասէ ցնա Յիսուս • աղուէսունք որջք ունին, և թռչնոյ երկնից դադարք • և որդւոյ մարդոյ ոչ ունի՝ ուր զլիսկն զլուխ ։

59 Ասէ ցմիւս ևս • եկ զկնի իմ • և նա ասէ • Տէր՝ հրամանն տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ ։

կեց՝ և երթոր գնացին՝ սամարացոց մին գիւղ մտին՝ որ նորա համար բան պատրաստեն ։

53 Եւ չընդունեցին նորան. ինչուորո՝ երան երեսըն դրած էր՝ որ երուսաղէմ գնայ ։

54 Երբոր յակոբոս և յոհաննէս աշակերտներն տեսին՝ ասացին • Տէր՝ կըկամենաս՝ որ ասենք, և կրակ վերդայ երկընքիցն՝ և նորանց սատակէ ։

55 Դարձաւ՝ սաստեց նորանց և ասաց • չէք գիտուա՝ թէ որ հոգւոյ էք դուք ։

56 Պատճառնոր՝ որդին մարդոյ չեկաւ՝ որ մարդկանց հոգիներըն կորցնէ, այլ որ ապրեցնէ՝ • և գնացին ուրիշ գիւղ ։

57 Եւ դեռ որ Ճանապարհուճն գնուէմին՝ մին մարդ նորան ասաց • ես էլ քո ետևէդ կըգամ՝ որ տեղ որ գնաս ։

58 Յիսուս նորան ասաց • աղուէսներն բուն ունին, և երկնքի թռչուններն դադարելոյ տեղ՝ և որդին մարդոյ տեղ չունի՝ որ իրան գլուխըն դնէ ։

59 Մին ուրիշին ասաց՝ իմ ետևէս եկ • և նա ասաց • Տէր հրամանն տուր՝ որ գնամ առաջ իմ հայրըս թաղեմ ։

60 Ասէ ցնա Յիսուս. Թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու երթ պատմեա՛ զարքայութիւնն Աստուծոյ։

61 Ասէ և այլ ոմն. եկից զկնի քո Տէր, բայց նախ հրամա՛ն տուր ինձ հրաժարել ՚ի տանէ իմմէ։

62 Ասէ ցնա Յիսուս. ո՛չ ոք արկանէ ձեռն զմաճուկ՝ և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ։

60 Յիսուս նորան ասաց. Թո՛ղ մեռելներին՝ որ իրանց մեռելներըն թաղեն. և դու գնա՝ Աստուծոյ արքայութիւնըն պատմի՛ր։

61 Մէն ուրիշն էլ ասաց. Տէր քո ետևէդ կըգամ. մի՛ այն թէ առաջ հրամա՛ն տուր ինձ, որ իմ տանս բա՛րև տամ անեմ։

62 Յիսուս նորան ասաց. ո՛չ ով՝ որ ձեռըն մաճի վրայ քցէ՝ և յետ նայի՝ Աստուծոյ արքայութեան համար յաջողված չէ։

ԳԼ. Ժ։

1 Յետ այսորիկ երևեցոյց Տէր և այլ եւս եօթանասունն և երկուս. և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ՚ի տե՛ղիս, ուր ինքն երթալոց էր։

2 Եւ ասէ ցնոսա. հունձք բազում են, և մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր։

3 Երթա՛յք, ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ՚ի մէջ գայլոց։

1 Սրանից ետև Տէրն ուրիշ եօթանասունն և երկու հոգի էլ կարգեց. և նորանց երկու երկու իրան առաջին ուղարկեց էն ամէն քաղաքներըն և տեղերն՝ որ տեղ որ ինքն պէտք էր գնայ։

2 Եւ նորանց ասաց. հունձքըն շատ է, և մշակներն քիչ. ուրեմն աղաչեցէ՛ք հընձի Տիրոջն՝ որ մշակներ ուղարկէ իրան հունձքն։

3 Գնացէ՛ք. ահա ուղարկումեմ ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ։

4 Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս, և ՚ի ճա-
նապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք։

5 Ցո՛ր տուն մտանիցէք՝ նախ ասացէ՛ք՝ Թէ ողջոյն տա-
նըս այսմիկ։

6 Եւ եթէ իցէ անդ որ-
դի ողջունի, հանգիցէ ՚ի վե-
րայ նորա ողջոյնն ձեր. ապա
թէ ոչ՝ ՚ի ձեզ դարձցի։

7 Եւ ՚ի նմին տան ագանի-
ջի՛ք, ուտի՛ջ և ըմպի՛ջիք ՚ի
նոցանէ. զի արժանի է մը-
շակն վարձու իւրոյ. մի՛ փո-
խիցիք տանէ ՚ի տուն։

8 Ցո՛ր քաղաք մտանիցէք՝
և ընդունիցին զձեզ, ուտի-
ջի՛ք զինչ առաջի դնիցեն
ձեր։

9 Եւ բժշկեսջի՛ք՝ որ ՚ի
նմա հիւանդք իցեն. և ա-
սասջի՛ք նոցա, մերձեալ է ՚ի
վերայ ձեր արքայութիւն Աս-
տուծոյ։

10 Իսկ յոր քաղաք մտանի-
ջէք՝ և ոչ ընդունիցին զձեզ,
իբրև ելանիցէք ՚ի հրապա-
րակս նորա, ասասջի՛ք.

11 Եւ զփոշիս որ կպուեալ
է ՚ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝
Թօթափեսցուք ՚ի ձեզ. բայց
զայս գիտասջի՛ք՝ զի մեր-
ձեալ է արքայութիւն Աս-
տուծոյ։

4 Ա՛ւ եր մի՛ առնէք ո՛չ քսակ,
ո՛չ պարկ, ո՛չ կօշիկներ. և
ճանապարհումն իսկի մընին
բարև չը՛տաք։

5 Որ տուն որ մտնէք՝ ա-
ռաջ ասացէք՝ Լա՛ց ողջո՛յն
էս տանս։

6 Թէ որ էնտեղ ողջունի որ-
դի լինի, ձեր ողջոյնն նորա վե-
րայ կըմնայ. ապա Թէ չէ՝
յետ կըդառնայ դէպի ձեզ։

7 Եւ էն տանն մնացէք,
նորանցից կերէք և խմեցէք.
ինչուր՝ մշակն իրան վարձ-
քին արժանի է. տանից տուն
մի՛ փոխվիք։

8 Որ քաղաք որ մտնէք՝ և
ձեզ կընդունին, կերէք՝ ինչ
որ կըդնեն ձեր առաջին։

9 Եւ հիւանդներին՝ որ էն-
տեղ լինին՝ բժշկեցէք. և նո-
րանց ասացէք՝ (Լա՛ց) Աստու-
ծոյ արքայութիւնն մօտացել
է ձեզ վերայ։

10 Բայց որ քաղաք որ մըտ-
նէք, և ձեզ չընդունին՝ եր-
բոր դուրս գաք նորա բայ
փողոցներն՝ ասացէք.

11 Էս փոշիս էլ՝ որ ձեր
քաղաքիցն մեր ոտներիս է
կպել՝ Լա՛փ ենք տալիս ձեզ
վերայ. միայն Թէ էս գիտա-
ցէք, որ Աստուծոյ արքայու-
թիւնն մօտացել է։

12 Ասեմ ձեզ, զի սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ։

13 Վա՛յ քեզ քորազին. վա՛յ քեզ բեթսայիդա. զի եթէ ի տիւրոս և ի սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ, վաղուց ևս արդեաք ի խորտ և ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր։

14 Բայց տիւրոսի և սիդովնի ընդարձակագոյն լիցի ի դատաստանի՝ քան ձեզ։

15 Եւ դու կափառնաւսւմ, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև ի դժոխս իջցես։

16 Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ, որ զիս առաքեաց։

17 Դարձան եօթանասունն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր՝ և դեւք հնազանդին մեզ յանուն քո։

18 Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ

12 Ասում ձեզ՝ որ սոդոմացոց համար աւելի հեշտ կըլինի էն օրուն՝ քանթէ էն քաղաքին համար։

13 Վա՛յ քեզ քորազին. վա՛յ քեզ բեթսայիդա. պատճառն որ՝ եթէ տիւրոսի և սիդօնի մէջն էլած էին էն զօրութիւնները՝ որ ձեր մէջն էլան՝ շատ առաջուց քրբէի (հագի շորի) և մոխրի մէջ նստած ապաշխարել էին։

14 Բայց տիւրոսի և սիդոնի համար աւելի հեշտ կըլինի դատաստանի օրուն՝ քանթէ ձեզ համար։

15 Եւ դու կափառնայում՝ որ մինչև երկինքն բարձրացած ես՝ մինչև դժոխքն ալի՛ վէր դաս։

16 Ով որ ձեզ կըլսէ՝ ինձ կըլսէ. և ով որ ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ. և ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին կանարգէ. և ով որ ինձ կըլսէ՝ նորան կըլսէ, որ ինձ ուղարկեց։

17 Էն եօթանասունն և երկուքն ուրախութենով կուգէն դարձան և ասացին. Տէր՝ դեւերն էլ հնազանդուում են մեզ քո անունովդ։

18 Եւ նորանց ասաց. տեսնում էի սատանային, որ կայծա-

յերկնից եբրև զնայլակն ։

19 Ա՛հա տուաւ ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զնայրիս և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչեցեն ։

20 Բայց ընդ այն մի խընդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս ։

21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս հոգւովն սրբով և ասէ. գոհանամ զքէն հայր՝ Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց՝ և յայտնեցեր զայս տղայոց. այո հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո ։

22 Ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ՝ թէ որ է որդի, եթէ ոչ հայր, և ո՞ է հայր՝ եթէ ոչ որդի, և ում կամիցի որդին յայտնել ։

23 Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. երանի աչացն՝ որ տեսանիցեն՝ զոր տեսանէք ։

կի պէս երկնքէյն վէր եր ընկնում ։

19 Ա՛հա իշխանութիւն տըւի ձեզ՝ որ օձերը և կարիճները և թշնամոյ ամէն զօրութիւնըն կոխէք, և ձեզ խոկի ոչնաս չանեն ։

20 Մէյան թէ՝ նորա համար մի ուրախանաք՝ որ դևերըն հնազանդվումեն ձեզ՝ բայց ուրախայէք՝ որ ձեր անունները երկնքումն գրվածեն ։

21 Հենց էն ժամումն (սուհուռմն) Յիսուս սուրբ հոգովն ցնծացաւ և ասաց. գոհանումեմ քեզանից ով հայր՝ երկնքի և երկրի Տէր, որ էս մաստուններից և գիտուններից էս բանս ծածկեցիր և տղայոյն յայտնեցիր սրան. իրավ՝ ով հայր. ինչուր՝ էսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ ։

22 Ամէն բան տըվվաւ ինձ իմ հօրիցս. և ոչ ով չի գիտումե՝ թէ ով է որդին՝ բայց միայն հայրն. և թէ ով է հայրն՝ բայց միայն որդին, և ում որ որդին կամինայ յայտնել ։

23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ և ասաց. երանի է էն աչքերին որ տեսնումեն էն՝ որ դուք տեսնումէք ։

24 Ասեմ ձեզ · ի լաղում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել՝ զոր դուք տեսանէք, և ոչ տեսին · և լսել՝ զոր լսէք դ, և ոչ լուան։

25 Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և ասէր · վարդապետ՝ ի՞նչ գործեցից՝ զի կեանս յաւիտեան ժառանգեցից ։

26 Եւ նա ասէ ցնա · Յօրէնս ի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթերնուս ։

27 Նա պատասխանի ետ և ասէ · սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց · և զընկեր քո իբրև զանձն քո ։

28 Եւ ասէ ցնա · ուղիղ եւտուր զպատասխանիդ, զայդ արա՝ և կեցցես ։

29 Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս · և ո՞վ է իմ ընկեր ։

30 Պատասխանի ետ Յիսուս և ասէ · այր մի իջանէր յԵրուսաղէմ յԵրիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց,

24 Ասեմ ձեզ՝ թէ շատ մարգարէքն և թագաւորներ կամեցան տեսանել էն՝ որ դուք տեսնուիմք, և չը՛տեսին · և լսել էն՝ որ դուք լսուիմք, և չը՛լսեցին ։

25 Եւ ահա մին օրէնք գիտող վերկացաւ՝ նորան փորձումէր և ասում · վարդապետ՝ ի՞նչ պիտի անեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ ։

26 Եւ նա ասաց նորան · օրէնքումն ի՞նչ է գրված, ի՞նչպէս ես կարդում ։

27 Նա պատասխան տուաւ և ասաց · սիրիր քո Տէր Աստուածդ քո ամէն սրտովդ, քո ամէն անձնովդ, քո ամէն զօրութենովդ, և քո ամէն մտքովդ · և քո ընկերըդ քո անձին պէս ։

28 Եւ նորան ասաց · շիտակ պատասխան տուիր՝ եդ արա՝ և կապրիս ։

29 Նա՝ որովհետև կամեցաւ իրան անձըն արդարացընել՝ Յիսուսին ասաց · և իմ ընկերս ո՞վ է ։

30 Յիսուս պատասխան տըւաւ և ասաց · մին մարդ երուսաղէմիցն վէր էր գալիս երիքով · և աւազակներն

օրը մերկացուցին զնա՝ և վերա
ՙի վերայ եդին, թագին կի
սամահ և գնացին ։

31 Դեպ եղև քահանայի
միջ իջանել ընդ նայն ճա
նապարհ, և տեսեալ զնա՝
զանց արար ։

32 Նոյնպէս և ղևտացի մի
եկեալ ընդ նայն տեղի՝ ե
տես և զանց արար ։

33 Սամարացի ոմն ճանա
պարհորդեալ եկն ընդ նայն
առ նովաւ, և տեսեալ զնա՝
գթացաւ ։

34 Եւ մատուցեալ սպա
տեաց զվէրս նորա ; արկեալ
ՙի վերայ ձէթ և գինի . և ե
դեալ ՙի վերայ գրաստու իւ
րոյ՝ ած զնա ՙի պանդոկի մի,
և դարմանեաց զնա ։

35 Եւ ՙի վաղիւ անդր իբ
րև ելանէր անտի, հանեալ
ետ ցպանդոկապետն երկուս
դահեկանս՝ և ասէ, դարմանն
տար դմա, և զոր ինչ ծա
խեսցես ՙի դա՝ ՙի միւսանգամ
գալստեան իմում հատուսիցեմ
քեզ ։

36 Ընդ ո՞ր կարծեցուսցէ ՙի
նոցանէ գթուիլ քեզ մերձաւոր
լեալ անկելոյն ՙի ձեռս աւա
զակաց ։

ձեռքն ընկաւ՝ որ մերկացրին
նորան՝ և խոցեր դրին նորա
վերայ, կիսամահ թողլին և
գնացին ։

31 Պատահեց՝ որ մին քա
հանայ հենց էն ճանապար
հովին գնում էր՝ և նորան տե
սաւ՝ (թողեց) անցկացաւ ։

32 Նոյնպէս էլ մին ղևտացի
հենց էն տեղն եկաւ, տեսաւ
և անցկացաւ ։

33 Մին սամարացի՝ որ ճա
նապարհ էր գնում՝ եկաւ
հենց նորա մօտ . և նորան որ
տեսաւ՝ խեղճն եկաւ ։

34 Եւ մօտ եկաւ՝ նորա խո
ցերին վերայ ձէթ և գինի ա
ծեց և պատեց . և իրան ա
նասունին վերայ դրաւ՝ մին ի
ջևան (հանդիսասրա) տարաւ նո
րան, և նորա համար հոգա ա
րաւ ։

35 Եւ հետևի օրումն՝ եր
բոր էն տեղից դուրս էր
գնում՝ երկու դահեկան հա
նեց և իջևանի (հանդիսասրա
յի) տիրոջն տուաւ և ասաց .
դորա համար հոգա արա, և
ինչ որ դորա համար կըծա
խես՝ իմ մեկնել գալդ ժա
մանակն կըվճարեմ քեզ ։

36 Հիմիկ էն երեքից ո՞րն
է երևում քեզ՝ թէ մօտա
ւոր է էն աւազակների ձեռքն
ընկած մարդոյն ։

37 Եւ նա ասէ. որ արար
ողորմութիւն ի վերայ նո-
ցա: ասէ ցնա Յիսուս. երթ
և դու արա նոյնպէս:

38 Եւ եղև ի գնալն նոցա,
և ինքն եմուտ ի գեօղ մի. և
կին ոմն անուն Մարթա ըն-
կալաւ զնա ի տան իւրում:

39 Եւ նորա էր քոյր մի,
որում անուն էր Մարիամ.
որ և եկն նստաւ առ ոտն
Տեառն, և լսէր զբանս նորա:

40 Եւ Մարթա զբազեալ
էր ի բազում սպասու. եկն
եկաց առ նմա և ասէ. Տէր
ոչ ինչ է փոյթ քեզ, զի քոյրդ
իմ միայն ետ զիս սպա-
սու. արդ՝ ասա դմա, զի օգ-
նեսցէ ինձ:

41 Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. Մարթա Մարթա՝
դու հոգաս և զբազում լ-
ինիք զբազեալ ես.

42 Բայց աստ սակաւ ինչ
պիտոյ է. Մարիամ մանն բա-
րի ընտրեաց, որ ոչ բարձ-
ցի ի նմանէ:

37 Եւ նա ասաց. նա՝ որ ո-
ղորմութիւն արաւ նորա վե-
րայ: Յիսուս նորան ասաց.
գնա դու էլ հնոյ կնպէս ա-
րա:

38 Եւ էլաւ որ նորանց
գնալոյ ժամանակին ինքն էլ
մին գիւղ մտաւ. և մին կին
Մարթա անուն նորան ընդու-
նեց իրան տունն:

39 Եւ նա մին քոյր ունէր՝
որ նորա անունն Մարիամ էր.
որ էլ եկաւ Տէրի ոտներին
մօտ նստեց, և նորա խօսքե-
րըն լսում էր:

40 Մարթան ծառայութեան
համար շատ զբազմունքի մէջ
էր. եկաւ նորա մօտն կանգ-
նեց և ասաց. Տէր՝ դու խո-
կի հոգս չունիս՝ որ իմ քոյրս
ինձ մենակ թողեց ծառա-
յութեան մէջ. ապա ասա
դորան՝ որ օգնէ ինձ:

41 Յիսուս պատասխան տը-
ւաւ և ասաց. Մարթա Մար-
թա՝ դու հոգս ես քաշում
և շատ բաներով զբաղված
ես.

42 Բայց էստեղ քիչ բան
պէտք է. (*) Մարիամն բարի
բաժինըն ընտրեց՝ որ վեր չաա-
նըվիլ սորանից:

(*) Յո-Նոյէն՝ բայց մին բան պէտք է:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ ՚ի տեղւոջ ուրէք կալ յաղօթս. և իբրև դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէր՝ ուսո՛ մեզ յաղօթս կալ, որպէս և Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց:

2 Ասէ ցնոսա, Յորժամ կայցէք յաղօթս, ասացէ՛ք. Հա՛յր մեր՝ սուրբ եղիցի անո՛ւն քո. եկեսցէ արքայութի՛ւն քո:

3 Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ զօրըստօրէն:

4 Եւ թո՛ղ մեզ զմեղս մեր, զի և մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ. և մի՛ տա՛ներ զմեզ ՚ի փորձութի՛ւն:

5 Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ՚ի ձէնջ՝ որոյ եցէ բարեկա՛մ, և երթայցէ առ նա ՚ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բարեկա՛մ՝ տո՛ւր ինձ փո՛ղս երիս նկանակս.

6 Զի բարեկամ իմ եկն առ իս յուղեւոյ, և ո՛չ ինչ ունիմ դնել առաջի նորա:

7 Եւ նա՛ ՚ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ.

1 Եւ էլաւ որ մին տեղ աղօթէր էր անուա՛մ. և երբոր դադարեց, իրան աշակերտներէն մէկն մին ասաց նորան. Տէր՝ սովորցո՛ւր մեզ աղօթք անել, ինչպէս որ Յօհաննէս իրան աշակերտներին սովորցուց:

2 Ասաց նորանց. երբոր աղօթք անէք, ասացէ՛ք. Մեր Հա՛յր, քո անունդ սուրբ լինի. քո արքայութի՛ւնդ գա՛յ:

3 Մեր ամէն օրվան հացն օրէցօր տո՛ւր մեզ:

4 Եւ մեր մեղքերն թո՛ղ մեզ. որ մենք էլ թողումենք էն ամէնին՝ որ պարտական են մեզ. և մեզ փորձանքի մէջ մի՛ ձգիր:

5 Եւ նորանց ասաց. Ձեզանից ո՞վ է, որ բարեկամ ունենայ, և կէս գիշերու՛ն նորա մօտ գնայ, և նորան ասէ. բարեկա՛մ՝ ինձ երե՛ք հաց փո՛խ տուր.

6 Ինչուո՛ր՝ իմ բարեկամ ինձ մօտ եկաւ՝ անապատէն, և բան չունիմ՝ որ նորա առաջին դնեմ:

7 Եւ նա՝ պատասխան տա՛ներսէն և ասէ. Մի՛ աշխա

մի աշխատ առներ զիս, զի դուրըդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի. ոչ կարեմ յառնել և տալ քեզ։

8 Ասեմ ձեզ՝ եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժոռութեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։

9 Եւ ես ասեմ ձեզ, խընդրեցէք՝ և տայցի ձեզ, հայեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ։

10 Զի ամենայն՝ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։

11 Ո՞ր ոք ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, մի թէ փոխանակ ձկանն օձ տայցէ նմա։

12 Եւ կամ խնդրիցէ ձու, մի թէ կարիցէ տայցէ նմա։

13 Իսկ եթէ դուք, որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ եւս առաւել հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրենն ի նմանէ։

14 Եւ հանէր դեւ մի համր, տայներ ինձ. ինչու որ՝ դրուռներըն փակված են, և երեխանեռս ինձ հետ անկողնումն (կոթավ-ում) (թեքընկած) են. չեմ կարօղ վեր կանալ և տալ քեզ։

8 Ասում ձեզ՝ թէ որ բարեկամութեան համար վեր չկենայ և տայ նորան, բայց նորա խիստ աղաչանքին համար վերկկենայ և կըտայ նորան՝ ինչ որ էլ պէտք լինի։

9 Եւ ես ասում ձեզ, խնդրեցէք՝ և կըտըվի ձեզ, մանեկէք՝ և կըգտնէք, (դուռըն) թակեցէք՝ և կըբացվի ձեզ։

10 Ինչու որ՝ ամէն ով որ կըխնդրէ՝ կառնէ, և ով որ մանկըգայ՝ կըգտնէ, և ով որ կըթակէ՝ կըբացվի նորան։

11 Ձեղանից ով է էն հայրն՝ որ նորանից իւրան որդին ձուկըն ուզէ, միթէ ձկան տեղակ օձ կըտայ նորան։

12 Եւ կամ ձու ուզէ, միթէ կարիճ կըտայ նորան։

13 Ուպա թէ որ դուք, որ չար էք՝ գիտումէք բարի պարգևներ տալ ձեր որդոյն, էլ ո՛րքան աւելի ձեր Հայրն երկընքիցըն բարի բաներ կըտայ նորանց, որ ուզումեն նորանից։

14 Եւ մին համր (լուիկ) դև

և եղև յելանել դիւին՝ լսո-
սեցաւ համբն, և զարմացան
ամենայն ժողովուրդքն ։

15 Եւ ոմանք ի նոցանէ ա-
սեն՝ բէեղզեբուղաւ իշխա-
նաւն դիւաց հանէ դա զդևս ։

16 Եւ այլք փորձէին և նըշ-
ան յերկնից խնդրէին ի նը-
մանէ ։

17 Իսկ նորա դիտացեալ ըզ
խորհուրդս նոցա՝ ասէ ցնո-
սա . ամենայն թագաւորու-
թիւն բաժանեալ յանձն՝ ա-
ւերի , և տուն բաժանեալ
յանձն՝ կործանի ։

18 Ապա եթէ և սատանայ
բաժանեցաւ յանձնէ , զիարդ
կայցէ թագաւորութիւն նո-
ա . զի ասէք զինէն եթէ
բէեղզեբուղաւ իշխանաւն դի
ւաց հանէ դա զդևս ։

19 Եթէ ես բէեղզեբուղաւ
հանեմ զդևս , որդիքն ձեր
ո՞ւ հանիցեն . վասն այդորիկ
նոքին եղիցին ձեր դատաւորք։

20 Իսկ եթէ մատամբ Աս-
տուծոյ հանեմ զդևս , ապա
հասեալ է ի վերայ ձեր ար-
քայութիւնն Աստուծոյ ։

էր հանուա՛ , և ելաւ էն դևի
դուրս գալոյ ժամանակին՝ որ
համր (մարդն) խօսեց, և ամէն
ժողովուրդներն զարմացան ։

15 Եւ նորանցից մին քա-
նիսն ասացին (թէ՝ դա դևե-
րի իշխան բէեղզեբուղովն է
հանում դևերըն ։

16 Եւ ուրիշներն փորձու-
մէին և երկնքիցն մին նշան
էին խնդրում նորանից ։

17 Բայց նա նորանց մտած-
մունքները իմանալով՝ նո-
րանց ասաց . ամէն թագա-
ւորութիւն որ իրան մէջ
բաժանված է՝ կաւերվի, և
տուն՝ որ իրան մէջն բաժան
ված է՝ կըկործանվի ։

18 Ապա թէ որ սատանան
էլ ինքն իրանից բաժանվե-
ցաւ, նորա թագաւորութիւ-
նըն ի՞նչպէս կըկենայ . պատ-
ճառն որ՝ ինձ համար ասա-
մէք , թէ դա դևերըն իշխան
բէեղզեբուղովն է հանում
դևերըն ։

19 Եթէ ես բէեղզեբուղովն
եմ հանում դևերըն , (ապա)
ձեր որդիքն ո՞վով են հա-
նում . դրա համար նորանք
կըլինին ձեզ դատաւոր ։

20 Բայց եթէ Աստուծոյ
մատովն եմ հանում դևերըն,
ապա Աստուծոյ արքայութիւ-
նըն ձեզ վերայ հասել է ։

21 Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր, ի խա-
ղաղութեան են ինչք նորա։

22 Այլ եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեացէ նմա, զսպառա-
զինութիւնն հանէ՝ յոր յու-
սացեալ էր, և զաւար նորա բաշխեացէ։

23 Որ ոչ է ընդ իս՝ հակա-
ռակ իմ է, և որ ոչ ժողո-
վէ ընդ իս՝ ցրուէ։

24 Յորժամ այսն ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջըր-
դին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ
ուստի ելի։

25 Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։

26 Յայնժամ երթայ և առ-
նու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնա-
կէ անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։

27 Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի ի

21 Երբոր զօրաւորը (մարդ) զէնք հագած իրան տունը պահէ, նորա ապրանքները խաղաղութեան են։

22 Այլ թէ որ նորանից էլ աւելի զօրաւորը գայ (նորա) վերայ՝ և նորան յաղթէ, նո-
րա զէնքերը՝ որ յոյսն նո-
րանց վերայ էր դրել, կըհա-
նէ և նորա աւարը (թալա-
նը) կըբաժանէ։

23 Ով որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ հակառակ է, և ով որ ինձ հետ չի ժողովում՝ (նա) ցրվում է։

24 Երբոր պիղծ դևն դուրս է գալիս մարդուց՝ անջուր տեղերանքում է մանգալիս և հանգիստ խնդրում. և երբոր չի գտնում՝ ասում. Կըտ առնամ իմ տունս՝ որտեղից որ դուս եկի։

25 Եւ գալիս է նորան սըրբըված և պատրաստված է գըտնում։

26 Յետոյ գնում է և իրանից էլ աւելի չար եօթն դև է առնում՝ և մտնում բնակվում են նրանք, և էն մարդուց յետինն աւելի չար է լինում քան թէ առաջինն։

27 Եւ ելաւ դեռ քանի որ էս խօսումէր, ժողովրդի մի-

ժողովրդենէ անոի և ասէ . երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ , և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ ։

28 Իւ նա ասէ . նա՝ երանի այնոցիկ է , որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն ։

29 Իւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդոցն , սկսաւ ասել . ազգս այս ազգ չար է . նշան խնդրէ , և նշան չիտի նոյ մարգարէին տացի սմա՝ բայց նշանն յովնանու ։

30 Զի որպէս եղև յովնան նշան նինուէացւոց , այնպէս եղիցի և որդի մարդոյ ազգիս այսմիկ ։

31 Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ և դատապարտեսցէ զնոսա , զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն սողոմոնի . և ահա առաւել քան զսողոմոն է աստ ։

32 Արք նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցեն զնա , զի ապաշխարեցին ի քարոզութեան յովնանու . և ահա առաւել

Ջիւղն մին կին ձայն բարձրացուցեալ և ասաց . երանի է ծնողին՝ որ քեզ պահեց , և ծիծերին՝ որ քեզ ծծացին ։

28 Իւ նա ասաց . էլ աւելի նորանից՝ որ Աստուծոյ բանն լսումն և անում ։

29 Իւ երբոր ժողովուրդներըն , նորա վերայ դեզվում էին սկսեց ասել . ես ազգս չար ազգ է . նշան է խընդրում , և երկնքիցն նշան չի տրվիլ սորան՝ բայց միայն յովնանու նշանն ։

30 Պատճառն որ՝ ինչպէս որ՝ յովնան նշան էլաւ նինուէացոց համար , ենպէս էլ որդին մարդոյ ես ազգիս համար կըլինի ։

31 Հարաւային երկրի թագուհին դատաստանում վերկըկենայ ես ազգիս մարդկանց հետ և սորանց կըդատապարտէ , պատճառն որ՝ նա երկրի ծայրիցն եկաւ , որ սաղոմոնի իմաստութիւնըն լսէ , և ահա սաղոմոնիցն էլ աւելին էստեղ է ։

32 Նինուէացոց մարդիքն դատաստանում վեր կըկենան ես ազգիս հետ և սորան կըդատապարտեն , ինչու որ՝ նորանք յովնանու քարոզութենովն ապաշխարեցին . և

քան զյովնան է աստ ։

33 Աչք ուրուք լուցեալ ՀՐ-
ԱԳ դնէ ի թաքստեան , և
ոչ ընդ գրուանաւ , այլ ի
վերայ աշտանակի , զի որ մը-
տանեն՝ լոյս տեսանիցեն ։

34 Ճրագ մարմնոյ ակն է ։
յորժամ ակնն առատ է , ա-
մենայն մարմինն լուսաւոր ե-
ղիցի ։ և երբ ակն չար է , և
մարմինն խաւարին եղիցի ։

35 Ածդ զգոյշ լեր, գուցե
լոյսդ որ ի քեզ է՝ խաւա-
րիցէ ։

36 Ի թէ մարմինդ քո ամե-
նայն լուսաւոր է և չգուցէ
մասն ինչ խաւարին , եղիցի
լուսաւոր ամենայն ։ որպէս
յորժամ Ճրագն նշուղիւք լու-
սաւորեսցէ զքեզ ։

37 Ի ու մինչդեռ խօսէր զայս
աղաչէր զնա ոմն փարիսեցի՝
զի Ճաշ կերիցէ առ նմա՝ և
նա մտեալ բազմեցաւ ։

38 Իբրև եռնս փարիսեցին՝
զարմացաւ , զի նախ ոչ մը-
կրտեցաւ յառաջ քան զՃաշ։
39 Ասէ ցնա Տէր ։ այժմ
դուք փարիսեցիք զարտաքինն
բաժակին և զպնակին սրբէք։
և ներքինն ձեր լի է յափըշ-
հա յօնանիցն էլ աւելին էս-
տեղ է ։

33 Աչք ով Ճրագ չի վա-
ռում և թաքուն տեղ դնում
և ոչ տաշտի տակ , քայց
Ճրագակալի վերայ , որ ներսանք
որ ներս են մտնում՝ լոյս
տեսնեն ։

34 Մարմնոյ Ճրագն աչքն է ։
երբոր աչքն պարզ է , ամէն
մարմինն լուսաւոր կըլինի ։ և
երբոր աչքն չար է՝ մարմինըն
էլ խաւար կըլինի ։

35 Ուրեմն՝ զգոյշ կաց, չը-
լինի որ էն լոյսն , որ քեզա-
նում է՝ խաւար լինի ։

36 Թէ որ քո ամէն մար-
մինդ լուսաւոր է և իսկի խա-
ւարի մին մասն չը'կայ, ամէնն
լուսաւոր կըլինի։ ինչպէս էն
ժամանակն՝ որ Ճրագն իրան
շաւղներովն լուսաւորէ քեզ ։

37 Ի ու դեռ որ էս խօսումէր՝
մին փարիսեցի աղաչումէր նո-
քան՝ որ նորա մօտ հայ ու-
տէ ։ և նա մտաւ՝ և սեղան
նստեց ։

38 Ի երբոր փարիսեցին տե-
սաւ՝ զարմացաւ , որ Ճա-
շիցն առաջ չը'լուացվաւ ։

39 Տէրն ասաց նորան ։ հի-
միկ դուք փարիսեցիներդ բա-
ժակի (ի ու) և պնակի դըր-
սի կողմըն սրբումէք ։ և ձեր

տակութեամբ և չարութիւն ։

Ա0 Ա՛նմիտք՝ ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն արար ։

Ա1 Բայց այլ զարժանն խոկ, տուք ողորմութիւն և ահա ամենայն սուրբ ի ձեր ։

Ա2 Ա՜յլ վա՛յ ձեզ փարիսեցւոց՝ զի տասանորդէք զանանուխն և զփեգենայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրոյն Աստուծոյ. զայս արժան էր առնել, և զայնու ոչ անցանել ։

Ա3 Վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս, և զնախաղոյնս ի հրապարակս ։

Ա4 Վա՛յ ձեզ՝ զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և մարդիկ գնան ի վերայ և ոչ գիտեն ։

Ա5 Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ ցնա. վարդապետ՝ զայս բանս ասելով և զմեզ թշնամանես։

Ա6 Իւ նա ասէ. և ձեզ վա՛յ օրինականացդ. զի բառնայք ի ներսինն յափշտակութենով և չարութենով լիքն է ։

Ա0 Ա՛նմիտներ՝ չէ՞ որ նա որ զդրսինըն արար՝ ներսինըն եւ նա՞ արար ։

Ա1 Բայց ասէիլի էն արէք որ արժանն է, ողորմութիւն տուէք և ահա ձեր ամէն բանն սուրբ է ։

Ա2 Բայց վա՛յ ձեզ փարիսեցիներիդ՝ որ անանուխի և փեգենայի և ամէն բանջարի տասանորդ էք տալիս և աստուծոյ իրաւունքին և սիրոյն անց էք կենում. էս պէտք էր անել, և նորանով անց չըկենալ ։

Ա3 Վա՛յ ձեզ փարիսեցիներիդ, որ ժողովարանների մէջումն վերևի տեղերըն էք սիրում, և փողոցների մէջն առաջին բարեւներըն ։

Ա4 Վա՛յ ձեզ՝ որ դուք գերեզմանների պէս էք, որ չեն տեսնըվում և մարդիք նորանց վերայ գնումն և չեն գիտում ։

Ա5 Պատասխան տուաւ օրէնք գիտողներից միւն և ասաց նորան՝ վարդապետ՝ էդ բաներըդ ասելով մեզ էլ նախատինք ես տալիս ։

Ա6 Իւ նա ասաց. ձեզ օրէնք գիտողներիդ էլ վա՛յ·

նայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ միով ՚ի բեռինն ոչ մերձենայք։

47 Վա՛յ ձեզ, զի շինէք գչիրիան մարգարէիցն, հարքն ձեր սպանին գնոսա։

48 Ապա ուրեմն վկայէք՝ և թէ կամակից էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին գնոսա, և դուք զգեբեզմանս նոցա շինէք։

49 Վասն այնորիկ իմաստութիւն Աստուծոյ ասաց. առաքեցից ՚ի նոսա մարգարէս և առաքեալս, և ՚ի նոցանէ սպանանիցեն և հալածեսցեն։

50 Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ ՚ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ,

51 Ցարենէն աբելի մինչև յարիւնն զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ առնարան. այո առեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ։

52 Վա՛յ ձեզ օրինակապետից. զի թագուցանէք զփականս գիտութեանն. դուք ոչ մտանէք, և որ մտանելոյն են՝ արգելուք։

53 Եւ ՚ի խօսելն զայս ամ-

ինչս որ՝ դժուար տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, և դուք մին մատով չէք մօտենում էն բեռներին։

47 Վա՛յ ձեզ, որ մարգարէների տապանները շինում էք և ձեր հարքն սպանեցին նորանց։

48 Ապա ուրեմն վկայում էք՝ թէ ձեր հարանց գործերին հետ կամակից էք. ինչու որ՝ հարանք կոտորեցին նորանց, և դուք նորանց գերեզման նե՛ր շինում էք։

49 Սրա համար Աստուծոյ իմաստութիւնն ասաց. Թէ՝ մարգարէներ և առաքեալներ կուղարկեմ նորանց մօտ, և նորանցից կըսպանեն և կըհալածեն։

50 Որ ամէն մարգարէների արիւնն որ աշխարհքի սկըզբից թափված է՝ էս ազգիս խնդրըվի,

51 Աբելի արիւնից մինչև զաքարիայի արիւնն՝ որ սեղանի և տաճարի մէջն կորաւ. իրաւի՝ ասում եմ ձեզ, էդ ազգից կըխնդրըվի։

52 Վա՛յ ձեզ օրէնք գիտողներիդ՝ որ գիտութեան բանալիքըն թաքցնում էք. դուք չէք մտնում, և նորանց՝ որ մտնելու են՝ արգելում էք։

53 Եւ երբոր էս ամէն բա-

նայն առ Յոսաբ առաջի ամ-
նայն ժողովրդեանն, զամո-
թի հարկանելին. և սկսան
դպիրքն և փարիսեցիքն զչա-
րել և դրգռել ընդ նմա վա-
սն բազում իրայ։

54 Լուս սպասել որսալ ինչ
բանս ի բերանոյ նորա, զի
չարաիսսեսցեն զնմանէ։

ԳԼ. ԺՌ։

1 Որովք ի կուտել բիւ-
բաւորաց ժողովրդեանն՝ մին-
չև կոխել զմիմեանս, սկսաւ
ասել ցաշակերտան իւր. նախ՝
զդիյշ լերուք անձանց ի լե-
մորոյ փարիսեցւոցն, որ է
կեղծաւորութիւն։

2 Զի ոչ ինչ է ի ծածուկ՝
որ ոչ յայտնեսցի, և գաղտ-
նի՝ որ ոչ ծանիցի։

3 Վասն զի՝ զոր ասիցէք
ի խաւարի, լսելի լիցի ի
լոյս. և զոր յունկանէն խո-
սեցարուք ի շտեմարանս, քա-
րոզեսցի ի վերայ տանեաց։

4 Բայց ձեզ ասեմ սիրե-
լեաց իմոց. մի զարհուրիցէք
յայնցանէ՝ որ սպանանեն զը-

ներըս ասաց նորանց ամէն ժո-
ղովրդի առաջին. շատ ա-
մօթ էին քաշում՝ և կար-
դացողներն և փարիսեցիներն
սկսեցին նախանձով բարկա-
նալ և շատ բաների համար
նորա հետ հակառակել։

54 Լուս սպասուէին՝ որ նորա
բերանից մին խօսք որսան,
որ չարաիսսին նորա վերայ։

ԺՌ։

1 Ընդ ժամանակն երբոր
հազարաւոր ժողովուրդներ
դիզվուէին՝ մինչև որ իրար
կոխ էին տալիս՝ սկսեց իրան
աշակերտներին ասել. առաջ
անձներիդ զգոյշ պահեցէք
փարիսեցոց խմորիցն՝ որ կեղ-
ծաւորութիւն է։

2 Ինչու որ՝ խոկի ծածուկ
բան չըկայ՝ որ չըյայտնըվի՝
և թաքուն բան՝ որ չիմայ-
վի։

3 Պատճառն որ՝ ինչ որ
խաւարումն ասէք, լուսոյ մէջ
կըլսըվի. ինչ որ ներսիներս
տան միջումն ականջում խո-
սիք՝ կտըրների վերայ կըքա-
րոզվի։

4 Բայց ձեզ՝ իմ սիրելի-
ներս ասում եմ. մի վախենաք
նորանցից՝ որ մարմինըն սպա-

մարմին, և յետ այնորիկ ա-
ւելի ինչ ոչ ունիցին առնել։
5 Ա.ՅԼ ցուցից ձեզ յումմ
մէ երկնչիջիք · երկնչիջի՛ք
յայնմանէ՝ որ յետ սպանա-
նելոյ ունի իշխանութիւն ար-
կանել ՚ի գեհեն · այո ասեմ
ձեզ՝ յայնմանէ երկնչիջի՛ք ։

6 Ո՞Չ ապաքէն հինգ ձագ
երկուց դանդաց վաճառի, և
մի ՚ի նոցանէ ոչ է մոռա-
յեալ առաջի Աստուծոյ ։
7 Ա.ՅԼ ձեր և ամենայն իսկ
հեր գլխոց թուեալ է · մի
երկնչիջի՛ք՝ դի քան զբազում
ձագս լաւ էք դուք ։

8 Ա.սեմ ձեզ · զի ամենայն
որ խոստովանեսցի յիս առա-
ջի մարդկան, և որդի մարդ
դոյ խոստովանեսցի զնմանէ
առաջի հրեշտակաց Աստու-
ծոյ ։
9 Իւ որ ուրասցի զիս ա-
ռաջի մարդկան, ուրացեալ
լիցի առաջի հրեշտակաց Աս-
տուծոյ ։
10 Իւ ամենայն որ ասէ
բան զորդւոյ մարդոյ՝ թող-
ցի նմա · բայց որ զհոգին
սուրբ հայհոյիցէ՝ մի թողցի
նմա ։
11 Ա.ՅԼ յորժամ տանիցին
նուաճն, և նրանից եւս աւե-
լի բան չունին՝ որ անեն ։
5 Բայց ցոյց կըտամ ձեզ՝
թե ումից պէտք է վախե-
նաք · նորանից վախեցէ՛ք, որ
սպանելուցն եւս իշխանու-
թիւն ունի գեհենի մէջ քըցե-
լոյ · իրաւի ասումեմ ձեզ՝
նորանից վախեցէ՛ք ։
6 Չի՞ որ հինգ ծիտ երկու
դանկի են ծախվում · և նո-
րանցից միւնն էլ Աստուծոյ ա-
ռաջին մոռացած չէ ։
7 Բայց ձեր գլխի հենց ա-
մէն մազերն էլ համարված
է · մի վախենաք · ինչու որ՝
դուք աւելի լաւ էք քան շատ
ծըտեր ։
8 Ասումեմ ձեզ՝ թե ա-
մէն ով որ ինձ մարդկանց ա-
ռաջին կըդաւանէ՝ որդին
մարդոյ էլ նորան կըդաւանէ
Աստուծոյ հրեշտակների ա-
ռաջին ։
9 Իւ ով որ ինձ կուրանայ
մարդկանց առաջին՝ (նա էլ)
ուրացված կըլինի Աստուծոյ
հրեշտակների առաջին ։
10 Իւ ամէն ով որ որդոյ
մարդոյ դէմ բան ասէ՝ կը-
թողվի նորան · բայց ով որ
սուրբ հոգոյն հայհոյէ՝ նորան
չի՛ թողվիլ ։
11 Բայց երբոր կըտանեն

ղձեալ ՚ի ժողովուրդս և ՚ի պետութիւնս և յիշատակութիւնս, մի հոգայցէք՝ որպէս լիցի ինչ պատասխանի տայցէք. կամ ինչ ասիցէք:

12 Զի հոգին սուրբ ուսուսցէ ձեզ ՚ի նմին ժամու՝ զինչ պարտ իսկ խօսել:

13 Ասէ ոմն ՚ի ժողովրդենէն ցնա. վարդապետ՝ ասա ցեղբայր իմ բաժանել ընդ ես զժառանգութիւնն:

14 Իսկ նա ասէ ցնա. այր դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ՚ի վերայ ձեր:

15 Իսկ ասէ ցնոսա. տեսէք և զգայջ լերուք յամենայն պահպանութենէ, զի ոչ եթէ ՚ի մի՛ բազմից ընչից ուրուք կեան կեանք նորա:

16 Խօսեցաւ առ նոսա առակ մի՛ և ասէ. ասէն ուրուք մարդոյ մեծատան եռուն անդք առհասարակս.

17 Իսկ խորհէր ՚ի միտս իւր՝ և ասէր. զի՞ գործեցից՝ զի ոչ ունիմ ուր ժողովեցից զպտղիւնս իմ:

18 Իսկ ասէ. զայս՞ զինչ

ձեզ ժողովարանների մէջ և դատաւորների և իշխանների առաջին, հոգս մի՛ առնէք՝ իբրեւ թէ ինչ պատասխան պիտի տաք կամ ինչ պիտի ասէք:

12 Պատճառն որ՝ սուրբ հոգին հենց էն ժամուն (ահա ԲՈՒՖ) կըսովորցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսել:

13 Ժողովըրդի միջէն մին ասաց Նորան. վարդապետ՝ իմ եղբօրս ասա՝ որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանէ:

14 Իսկ նա ասաց Նորան. ով մարդ՝ ինձ ո՞վ կարգեց ձեզ վերայ դատաւոր կամ բաժանօղ:

15 Իսկ Նորանց ասաց. տեսէք և զգոյշ կացէք ամէն ագահութենէյն, պատճառն որ՝ խոկի մըտի կեանքն իրան կիսուած ալիրանքներէյն չէ:

16 Նորանց մին առակ խօսեց և ասաց. մին հարուստ մարդոյ արտերն առատ պտուղ տուին:

17 Իսկ իրան մտքումն մտածումէր և ասում. ի՞նչ անեմ՝ որ տեղ չըկայ որ իմ պտուղներըս ետեղ ժողովեմ:

18 Իսկ ասաց. դիտումմ

արարիչ · քակեցից զշաւմա-
բանս իմ, և ևս մեծամեծս շի-
նեցից · և անդր ժողովեցից
զզօրեան և զամենայն քարու-
թիւնս իմ ·

19 Եւ ասացից ցանձն իմ ·
անձն՝ ունիս բազում բարու-
թիւնս համբարեալ ամաց
բազմաց· հանգիր՝ կեր՝ արբ
և ուրախ լեր ։

20 Ասէ ցնա Աստուած ·
անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ
'ի քէն 'ի բաց պահանջիցեն,
իսկ զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ
լինիցի ։

21 Նոյնպէս և որ գանձ
անձին, և ոչ Աստուած մե-
ծանայցէ ։

22 Ասէ յաշակերտան իւր ·
վասն այդորիկ ասեմ ձեզ · մի
հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զի՞նչ
ուտիցէք, և մի ընդ մարմնոյ ·
թէ զի՞նչ զգեսուցուք ։

23 Զի ոգի առաւել է քան
զկերակուր, և մարմին քան զը
հանդերձ ։

24 Հայեցարուք ընդ ագ-
ռաւսըս, զի ոչ սերմանեն և ոչ
հնձեն, որոց ոչ գոն շտեմա-
րանք՝ և ոչ համբարանոցք,
և Աստուած կերակրէ զնոսա·
որչափ ևս առաւել զձեզ՝ որ

լինչ կանեմ · իմ համբարնե-
րըս կըբանդեմ, և էլ աւե-
լի մեծ կըշինեմ, և իմ ցո-
րնիս և ամէն բարիքներըս
կըժողովեմ էնտեղ ։

19 Եւ իմ անձիս կասեմ ·
ով անձն՝ շատ բարիքներ ու-
նիս շատ տարիների համար
ամբարված · ապա հանգիստ
առ՝ կեր՝ խմիր և ուրախ լեր։

20 Աստուած ներան ասայ ·
ով անմիտ · էս գիշերուս քո
հոգիդ քեզանից կիտ կըխն-
դրըվին · ապա էն որ պատ-
րաստեիր՝ ո՞ւմ կըլինի ։

21 Նինպէս էլ նա՝ որ իրան
անձին համար գանձ (խաշնայ)
հաւաքէ, և Աստուծով չը-
հարուստանայ ։

22 Իրան աշակերտներին ա-
սայ · դրահամար ասուսիմ
ձեզ · հոգս մի անէք հոգոյ
համար՝ թէ ինչ պիտի ու-
տէք, և ոչ մարմնոյ համար՝
թէ ինչ պիտի հագնիք ։

23 Ինչուր՝ հոգին աւելի է
քան թէ կերակուրն, և մար-
միևն քան թէ հագուստն ։

24 Մտիկ արէք ագռաւներ-
բին · որ ոչ սերմուսին և ոչ
հնձուսին · որ ներանք ոչ
մառաններ ունին և ոչ տա-
բարներ, և Աստուած կերա-
կրուսի ներանց · ապա որքան

լաւ էք քան զԹռչունս ։

25 Ո՞վ ՚ի ձէնջ առ հո-
գալ՝ կարիցէ յաւելուլ ՚ի
հասակ իւր կանգուն մի ։

26 Իսկ արդ՝ եթէ ՚ի փո-
քուն ՚չէք բաւական՝ վասն
այլոցն զի՞ հոգայցէք ։

27 Հայեցարուք ընդ շու-
շանն՝ հրպէս աճէ, ո՛չ ջա-
նայ՝ և ո՛չ նիւթէ. ասեմ
ձեզ՝ և ո՛չ սողոմոն յամենայն
՚ի փառսն իւր՝ զգեցաւ իբ-
րև զմի ՚ի նոցանէ ։

28 Իսկ եթէ զխոտն՝ որ այ-
սօր ՚ի բացի է՝ և վաղիւ ՚ի
հնոց արկանելի, Աստուած
այնպէս զգեցուցանէ. հրչափ
և առաւել զձեզ՝ Թերահա-
ւատք ։

29 Եւ դուք մի խնդրէք՝
զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմ-
պիցէք, և մի զբաղնուք.

30 Զի զայն ամենայն հե-
թանոսք աշխարհի խնդրեն.
այլ ձեր հայր գիտէ՝ զի պի-
տոյ է այն ամենայն ։

31 Բայց խնդրեցէք զարքա-
յութիւն Աստուծոյ. և այն
ամենայն յաւելցի ձեզ ։

էլ աւելի ձեզ՝ որ Թռչուն-
ներից աւելի լաւ էք ։

25 Ձեզանից ո՞վ կարող է ի-
րան հոգս անելով իրան հա-
սակին վերայ մի՛ն գազ աւե-
լացնել ։

26 Ապա Թէ որ փոքր բա-
րի համար բաւական չէք՝ ին-
չի՞ ուրիշ բաների համար
հոգս էք անում ։

27 Մտի՛կ արէք շուշան
(ծաղկին), Թէ ինչպէս է մե-
ծանում. ո՛չ ջանք է անում
և ո՛չ մանում. ասում եմ
ձեզ՝ Թէ սաղոմոնն էլ իրան
ամեն փառքի մէջն նորանց
մընի նման չը՛հագաւ ։

28 Բայց Թէ որ խոտըն որ
էս օր յանդումն կայ՝ և է-
գուց փուռն մէջ կըբցվի, Աս-
տուած էնպէս է հագցնում,
ապա հրքան էլ աւելի ձեզ՝
ո՛վ Թերահաւատներ ։

29 Եւ դուք մի խնդրէք, Թէ
ինչ պիտի ուտէք, կամ ինչ
պիտի խմէք և հոգս մի քաշէք։

30 Ինչու որ՝ էդ ամեն բա-
ներըդ աշխարհի հեթանոս-
ներն են խնդրում. բայց ձեր
հայրն գիտում՝ որ էն ամենն
պէտք է (ձեզ) ։

31 Բայց Աստուծոյ արքա-
յութիւնըն խնդրեցէք և էն
ամէն կաւելանայ ձեզ ։

32 Մի երկնչիր հօտ փոք-
րիկ. զի հաճեցաւ Հայր ձեր
տալ ձեզ զարքայութիւն։

33 Վաճառեցէք զինչս ձեր
և տուք ողորմութիւն. և ա-
րարէք ձեզ քսակս առանց հը-
նանալոյ, դանձ անպակաս յեր-
կինս. ուր ոչ գող մերձենայ,
և ոչ ցեց ապականէ։

34 Զի ուր գանձն ձեր է,
անդ և սիրտք ձեր եղիցին։

35 Եղիցին գօտիք ձեր սըր-
դեալ ընդ մէջս՝ և ճրագունք
լուցեալք։

36 Եւ դուք նմանօրք մարդ-
կան՝ որ ակն ունիցին տեառն
իւրեանց՝ թէ երբ դառնայցէ
ի հարսանեաց. զի յորժամ
գայցէ և բախիցէ, վաղվաղա-
կի բանայցեն նմա։

37 Երանի՛ իսկ ծառայիցն
այնոցիկ՝ զորս եկեալ տէրն
գտցէ արթուն. ամէն ասեմ
ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝
և բազմեցուսցէ զնոսա, և ան-
ցեալ պաշտիցէ զնոսա։

38 Եւ եթէ յերկրորդ՝ կամ

32 Մի վախնար փոքր (ոխ-
րուկ). ինչու որ՝ ձեր Հօրն
հաճոյ էլաւ՝ որ արքայութիւ-
նըն տայ ձեզ։

33 Ձեր ապրանքըն ծախե-
ցէք՝ և ողորմութիւն տուէք՝
ձեզ համար քսակներ շինե-
ցէք՝ առանց հնանալոյ՝ ան-
պակաս գանձ (խազնայ) երկին-
քու՝ որտեղ որ ոչ գող կ
մօտենում և ոչ ցեցն կ ա-
պականում։

34 Պատճառն որ՝ ինչ տեղ
որ ձեր գանձն է՝ էնտեղ էլ
ձեր սրտերն կըլինին։

35 Թող ձեր գօտիկներն
պինտ կապված լինին մէջ-
քերումդ և ճրագներն վառ-
ված։

36 Եւ դուք էն մարդկանց
նման՝ որ իրանց տիրոջն սպա-
սումն՝ թէ երբ կըդառնայ
հարսանիքիցըն՝ որ երբոր
գայ, և դուռըն թակէ՝ շու-
տով բանան նորա համար։

37 Երանի է էն ծառանե-
րին՝ որ տէրն՝ երբոր գայ,
արթուն գտնէ նորանց. ճըշ-
մարիտըն ասումիմ ձեզ՝ թէ
նա գօտիկըն մէջքն կըկապէ
և նորանց սեղան կընստուց-
նէ և առաջ եկած կըծառա-
յէ նորանց։

38 Եւ թէ որ գիշերի երկ-

երրորդ պահու եկեսցէ՝ և գոյէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ։

39 Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հրսկէր, և չտայր թոյլ ակն հատանել ի տան իւրում։

40 Եւ դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ։

41 Ասէ պետրոս. Տէր՝ առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան։

42 Եւ ասէ Տէր. ո՞վ իցէ հաւատարիմ անտես և խմաստուն, զոր կացուցց տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ տալ ի ժամու զկերակուրս։

43 Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գըտանիցէ արարեալ այնպէս։

44 Ըղդարև ասեմ ձեզ՝ զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցանիցէ զնա։

45 Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. Յամէ տէր իմ ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայս, ուտել և ըմպել և արբենալ։

46 Եկեսցէ տէր ծառային այնորիկ յօր ոչ սպասէ, և ի ժամ զոր ոչ գիտէ, և պատառեսցէ զնա, և զբաժինն անհաւատից դիցէ։

47 Եւ ծառայն այն որ գիտաց զկամս տեառն իւրոյ, և ոչ պատրաստեաց և ոչ արար ըստ կամաց նորա, հարկանելոց է բազում։

48 Եւ որ ոչ գիտաց, և արար արժանս հարկաց, սակաւ հարկանելոց է։ Եւ ամենայն որում տուեալ է բազում, բազում խնդրեսցի ի նմանէ. և որում ապաւորեցին բազում, աւելի խնդրեսցեն ի նմանէ։

49 Զկրակ եկի արկանել ի վերայ երկրի, և զի՞նչ կամիմ եթէ վառեալ իցէ։

50 Եւ զմկրտութիւն մի մկրտիմ, և զինչ կամիմ մինչև կատարեսցի։

51 Զխաղաղութի՞ւն կարծէք թէ եկի տալ ի վերայ երկրի. ոչ ասեմ ձեզ, այլ զբաժանումն։

52 Եղիցին ի հետայ հինգ ոք ի միում տանէ բաժանեալք, երիք ընդդէմ երկուց, և երկուք ընդդէմ երից։

53 Բաժանեալ հայր ընդդէմ որդւոյ, և որդի ընդդէմ հօր, մայր ընդդէմ դստեր, և դուստր ընդդէմ մաւրն, սկեսուր ընդդէմ հարսին իւրոյ, և հարսն ընդդէմ սկեսրոջ։

54 Ասէր և առ ժողովուրդսն. Յորժամ տեսանիցէք զամպ ելանել յարեւմտից, անդէն ասէք եթէ անձրեւ գայ, և լինի այնպէս։

55 Եւ յորժամ զհարաւ փչել, ասէք եթէ տապ լինի, և լինի։

56 Ծպտողք, զերեսս երկրի և զերկնից գիտէք ճանաչել, զի՞նչ ոչ գիտէք ճանաչել զժամանակս զայդ։

57 Եւ ընդէ՞ր ոչ ինքեանք ի ձեզ դատիցէք զարդարն։

58 Զի յորժամ երթիցես ընդ հակառակորդ քո առ իշխանն, ի ճանապարհի ջան ածիր ազատել ի նմանէ, գուցէ տարցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնեսցէ զքեզ դահճապետին, և դահճապետն արկցէ զքեզ ի բանտ։

59 Ասեմ քեզ՝ ոչ ելանիցես անտի մինչև հատուցանիցես զվերջին դրամն։

16 Եւ եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և ի ժամու յորում ոչ գիտիցէ· ընդ մէջ կարիասցէ զնա, և զբաժան նորա ընդ անհաւատս դիցէ։

16 Կըգայ էն ծառայի տէրն էն օրուընի՝ որ նա չի սպասիլ, և էն ժամուընի (սահմուն), որ նա չի գիտեալ· նորան միջիցն կըկտրէ և նորա բաժինըն անհաւատներին հետ կըդընէ։

17 Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամայ նորա, արբցէ զան բազում։

17 Եւ ծառան որ իրան տիրոջ կամքըն գիտենայ և նորա կամացն պէս չըպատրաստի, շատ ծեծ կուտէ։

18 Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի զանի ինչ գործիցէ, արբցէ զան սակաւ։ Ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ· և որում բազում աւանդեցաւ· առաւել ևս պահանջեսցեն ի նմանէ։

18 Եւ նա որ չըգիտենայ և ծեծի արժանի բան գործէ, քիչ ծեծ կուտէ· էն ամէնին ում որ շատ տրվվաւ՝ նորանից շատ կըխնդրըվի· և ում որ շատ (բան) պահ տրվվաւ՝ նորանից էլ աւելի կըխնդրըն։

19 Հուր եկի արկանել յերկիր· և զինչ՝ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր։

19 (Իս) եկի՝ որ կրակ քցեմ երկրիս վերայ· և ինչ ուզում որ հէնց հիմուկուց բորբոքվէր։

20 Եւ մկրտութիւն մի ունիմ նիմ մկրտիլ, և զինաւրդ փութամ մինչև կատարեսցի։

20 Հայց մին մկրտութիւն ունիմ որ պիտի մըկրտվիմ· և քանի հոգս եմ քաշում մինչև որ էն կատարվի։

51 Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր, ոչ՝ ասեմ ձեզ, այլ բաժին։

51 Մըտիմէ կարծուիք թէ եկի խաղաղութիւն տալ երկրիս վերայ· չէ՝ ասում ձեզ՝ բայց բաժանմունք։

52 Զի եղիցին յայսմհետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն յերկուց, և երկուքն յերից։

52 Ինչու որ՝ սրանից ետև հինգ հոգի մին տան մէջ բաժանված կըլինին՝ երեքն երկուսից և երկուքն երեքից։

53 Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և որդի ՚ի հօրէ, մայր ՚ի դստերէ՝ և դուստր ՚ի մօրէ, սկեսուր ՚ի հարսնէ՝ և հարսն ՚ի սկեսրէ իւրմէ ։

54 Ասայ և ցժողովուրդսն. յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից, իսկոյն ասէք՝ թէ անձրև գայ, և լինի այնպէս.

55 Եւ յորժամ հարաւ շընչեալ, ասէք՝ թէ խորշակ լինի, և լինի այնպէս ։

56 Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք ։

57 Ընդ ինքը և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն ։

58 Ցորժամ երթայցես ընդ ոսոխի քումում առ իշխան, ՚ի ճանապարհի տուր զկշտիւն զերծանել ՚ի նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորըն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ ՚ի բանտ ։

59 Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին բնիոնն ։

53 Հայրն կըբաժանվի որդուցն և որդին հօրիցն, մայրն (իրան)աղջկանիցն և աղջիկն իրան մօրիցն. կեսուրն (իրան) հարսիցն և հարսն իրան կեսուրիցն ։

54 Ժողովուրդներին էլ ասայ. երբոր տեսնուիք թէ արևմտիցն ամպ կ դուրս գայ՝ շուտով ասուիք՝ թէ անձրև կըգայ, և ենպէս կ լինուի ։

55 Եւ երբոր հարաւային քամին փչուի, ասուիք՝ թէ շոգ կըլինի և ենպէս կ լինուի ։

56 Կեղծաւորներ՝ երկնքի երեսըն գիտուիք փորձել. բայց ես ժամանակըս ինչի՞ չէք փորձուի ։

57 Եւ ինչի՞ հենց ձեզանից էլ չէք ընտրուի էն՝ որ արժանն կ ։

58 Երբոր քո հակառակ ոսոխի հետ իշխանի մօտ գնայուս լինիս, ճանապարհուդ տալիքըն տուր՝ որ նորա ձեռքիցն ազատվիս. որ չը՛լինի թէ քեզ դատաւորին մօտ քաշէ՝ և դատաւորն դահճին (ձեռքը) մատնէ, և դահիճն բանտի մէջ քցէ ։

59 Ասուիմ քեզ. ենտեղից դուրս չես գալ՝ մինչև որ վերջին դանկըն էլ չըվճարես։

ԳԼ· ԻԳ։

1 Եկեալ ոմանք ՚ի նմին ժա
մանակի, և պատմեցին նմա
վասն գալիլեացւոցն, որոց
զարիւնն պիղատոս խառնեաց
ընդ զոհս նոցա։

2 Պատասխանի եւ ասէ
ցնոսա. Համարիք եթէ այն
գալիլեացիք եղեն մեղաւոր
քան զամենայն գալիլեացիս,
ի զայնպիսի անցս կրեցին։

3 Այլ, ասեմ ձեզ. այլ
եթէ ոչ ապաշխարիցէք, ա
մենեքեան նոյնպէս կորնչիջիք։

4 Կամ նոքա ուԹոտա
սանքն, յորոց վերայ աշտա
րակն անկաւ ՚ի սեղովամ, և
սպան զնոսա. համարիք ե
Թէ նոքա պարտապանք եղեն
քան զամենայն մարդիկ որ
բնակեալ են յԵրուսաղէմ։

5 Այլ, ասեմ ձեզ. այլ ե
Թէ ոչ ապաշխարիցէք՝ ամե
նեքեան նոյնպէս կորնչիջիք։

6 Ասաց և զառակս զայս.
Թզենի մի էր ուրուք տըն
կեալ յայգւոջ իւրում. և
եկն խնդրել պտուղ ՚ի նմա
նէ. և ոչ եգիտ։

7 Ասէ յայգեգործն. ահա

1 Էին ժամանակուն
մին քանի մարդիկ եկին և
պատմեցին նորա էն գալիլեա
ցիներուն համար, որ նորանց
արիւնըն պիղատոս նորանց
մատաղի հետ խառնեց։

2 Պատասխան տուաւ և
նորանց ասաց. միԹէ կար
ծիմէք ԹէԷն գալիլեացիներն
աւելի մեղաւոր էլան, քան ԹՀ
ամէն գալիլեացիներըն, որ էն
պէսի բան եկաւ նորանց վրը։

3 Ձէ՛ ասուամ ձեզ. բայց
ԹՀ որ չապաշխարէք, ամէնդ
էլ էնպէս կըկորչիք։

4 Կամ էն տասնուԹ հո
գին որ սեղովամի մէջ աշտա
րակն (բա՛բէն) վերընկաւ նո
րանց վերայ, և նորանց սպա
նեց. մի ԹՀ կարծումէք ԹՀ
նորանք աւելի պարտական
էլան քան ամէն մարդիկ որ
երուսաղէմուն բնակուած են։

5 Ձէ, ասուամ ձեզ. բայց
ԹՀ որ չապաշխարէք՝ ամէնդ
էլ էնպէս կըկորչիք։

6 Էս առակըս էլ ասաց.
մին մարդ իրան այգոյ (բա՛ղէ)
մէջ մին ԹըզիՀ ծառ էր տնկել.
և եկաւ, որ պտուղ խնդրէ
նորանից, և չըգտաւ։

7 Այգեպանին ասաց. ա

երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թըզենւոջդ՝ և ոչ գտանեմ. արդ՝ կտրեա զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։

8 Նա պատասխանի ետ և ասէ. տէր՝ թո՛ղ զդա այս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ.

9 Թերևս արասցէ պտուղ, ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա։

10 Ւ ուսուցանէր ի մի. ում ի ժողովրդանոցսն ի շաբաթս։

11 Ւ ահա կին մի՝ զոր ոգնէր այս հիւանդութեան ամս ութետասան. և էր կարկամեալ, և ոչ կարէր ամենևին ի վեր հայել։

12 Ւ տեսեալ զնա Ցիսուս՝ կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա. կի՛ն դու՝ արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ։

13 Ւ եդ ի վերայ նորա ձեռն, և առ ժամայն ուղղեցաւ, և փառաւորէր զԱստուած։

14 Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց հա՞ երեք տարի է՝ որ գալիսեմ պտուղ խնդրել եդ թըզի ծառիյդ, և չեմ գտնում. ուրեմն կարիր դորան, էլ ինչո՞ւ դա երկիրըդ խափանում։

8 Նա պատասխան տուաւ և ասաց. տէր՝ ես տալիս էլ թո՛ղ դորան, մինչև որ դորա չորս կողմն փորեմ և աղբ ածեմ։

9 Ի՞ր լինի թէ պտուղ բերէ, ապա թէ չէ՝ տարուցն ետև կտրիր դորան։

10 Ւ մին ժողովարանի մէջ սովորցնում էր շաբաթի օրում։

11 Ւ ահա մին կին՝ (կար) որ հիւանդութեան դև բռնել էր նորան տասնուերկու տարի. և կծկըված էր և իսկի չէր կարում դէպի վեր նայիլ։

12 Ւ Ցիսուս որ նորան տեսաւ՝ իրան մօտ կանչեց՝ և նորան ասաց. ա՛յ կին՝ արձակված ես քո հիւանդութենից։

13 Ւ ձեռըն դրաւ նորա վերայ, և շուտով շիտակվեցաւ, և Աստուծոյն փառաւորում։

14 Ժողովարանի դլխաւորն շատ բարկացաւ, թէ ինչու համար Ցիսուս շաբաթի օ.

Յիսուս, և ասէ ցժողովուրդն· վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բըժշկեցարուք, և մի՛ յաւուրը շաբաթու։

15 Պատասխանի ետ նմա Տէր՝ և ասէ· կեղծաւորք՝ իւրաքանչիւր ոք ի՛ ձէնջ՝ ի շաբաթու՞ն արձակէ զեզն իւր կամ զէշ՝ ի մսրտ՝ և տանի տայ ջուր։

16 Իսկ այս՝ դուստր աբրահամու էր· զոր կապեաց սատանայ ահաւադիկ ուրեմն տասն ամ, ո՞չ էր արժան արձակել՝ ի կապանաց անտի՝ ի շաբաթու։

17 Եւ զայս իբրև ասէր, յամօթ լինէին ամենեքեան՝ որ հակառակն կային նմա· և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր՝ ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին՝ ի նմանէ։

18 Եւ ասէր· ո՞ւմ նման է արքայութիւն Աստուծոյ, և որո՞ւմ նմանութեան նմանեցուցից զնա։

19 Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ արկ՝ ի պարտէզ իւր· աճեաց և եղև ծառ, և թռչունք երկրու՞ն բժշկեց· պատասխան տուաւ և ժողովըրդին ասաց· վե՛ց օր կայ՝ որ նորանցում օրերնիս եկէք բժշկվիցէք և չ՚ի՛ շաբաթի օրուն։

15 Տէրն պատասխան տուաւ նորան և ասաց· կեղծաւորներ՝ միթէ ձեզանից ամէն մէկն շաբաթի օրուն իրան եզը՞ն կամ էշը՞ն չի՞ արձակիլ մսուրիցն և տանիլ ջուր տալ։ 16 Բայց սա՝ որ աբրահամի աղջիկն էր՝ որ հիվիկ տասնուվեց տարի է, որ սատանան կապել է սորան· միթէ արժան չէ՞ր որ շաբաթի օրուն էն կապանկից արձակվի։

17 Եւ երբոր էս ասաց՝ ամօթով էին լինում էն ամէնքն՝ որ հակառակ կային նորան· և ամէն ժողովուրդն ուրախանում էր ամէն փառաւոր գործերին համար՝ որ նորանով գործվում էին։

18 Եւ ասում էր· Աստուծոյ արքայութիւնն ո՞ւմ նման է· և ի՞նչ նմանութեամբ նմանեցնեմ նորան։

19 Մանանեխի (խրդոլի) հատի նման է, որ նորան մին մարդ առաւ իրան պարտէզի (պօռօնդ) մէջն ցանեց· մե-

նից քնակեալ էին յոստոնէ ։

20 Եւ դարձեալ ասէ . Ձեմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ ։

21 Նմանէ է խմորոյ , զոր առեալ կնոջ թաքոյց յալիւր երից գրուայ, մինչև խմորեցաւ ամենայն ։

22 Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ ուսուցանէր . և ճանապարհ արարեալ յերուսաղէմ .

23 Ասէ ոմն ցնա . Տէր՝ եթէ սակաւք իցեն , որ ապրելոց իցեն . և նա ասէ ցնա սա ։

24 Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ . զի ասեմ ձեզ , զի բազումք խնդրեսցեն մտանել և ոչ կարասցեն ։

25 Յորմէ հետէ մտցէ տանուտէրն և փակեսցէ զդուռնն , և սկսանիցիք կալ արտաքոյ՝ և բախել զդուռնն , և ասել . Տէր Տէր՝ բաց մեզ . և պատասխանի տուեալ ասիցէ ձեզ . ոչ գիտեմ զձեզ ուստի էք ։

26 Յայնժամ սկսանիջիք ասել . կերաք առաջի քո և ծայաւ և ծառ էլաւ և երկրին քի թաղչուններն նորա ճըղիլին վերայ բնակիլած էին ։

20 Եւ միսեալ ասաց . Ձեմ նմանեցնեմ Աստուծոյ արքայութիւնըն ։

21 Խմորի նման է, որ նորան մին կին առաւ և երեք չափ ալիւրի մէջ պահեց , մինչև որ ամէնն խմորվեցաւ։

22 Եւ մանէր գալիս քաղաքներուն և գիւղերուն և սովորցնուէր . և երբոր ճանապարհ ընկած գնուէր դէպի երուսաղէմ ,

23 Մէնն ասաց նորան . Տէր՝ միթէ քիչ են նորանք՝ , որ պիտի ապրին . և նա ասաց նորանց ։

24 Ջանք արէք որ նեղ դըռնովն ներս մտնէք . ասումէմ ձեզ , թէ շատ մարդիք կըխնդրեն մտնել և չեն կարենալ ։

25 Երբանից հետև որ տան տէրն կըմտնէ և դուռըն կըփակէ . և կըսկսէք դուրսն կանգնիլ և դուռըն թակել՝ և ասել . Տէր Տէր՝ բաց մեզ . պատասխան տալով կասէ ձեզ . չեմ ճանչնում ձեզ թէ ինչ տեղից էք ։

26 Էն ժամանակն կըսկսէք ասել . (մենք) քո առաջից

արքաբ, և ՚ի հրապարակս ՚ի ներ ուսուցեալ ։

27 Եւ ասիցէ· ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք· ՚ի բաց կայեք յինէն ամենայն մշակքդ անիրաւութեան ։

28 Անդ եղիցի լալ և կրճտել ատամանց, յորժամ տեսանիցէք զաբրահամ և զիսահակ և զյակոբ՝ և զամենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, և զձեզ հանեալ արտաքս ։

29 Եւ եկեսցեն յարևելից և յարևմտից և ՚ի հիւսիսոյ և ՚ի հարաւոյ, և բազմասցին յարքայութեան Աստուծոյ ։

30 Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք ։

31 ՚Ի նմին աւուր մատուան ոմանք փարիսեցիք, և ասեն ցնա· ել և գնա աստի, զի հերովդէս կամի սպանանել զքեզ ։

32 Եւ ասէ ցնոսա· երթայք ասացէք աղուեսուն այնմիկ· ահաւասիկ հանեմ դեւս, և բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ· և յերիր աւուր կատարիմ ։

կերլինք և խմեցինք և (դու) մեր փողոցներուն սովորցրիր։

27 Եւ կասէ· ասումեմ ձեզ, ես չեմ ճանաչում ձեզ· թէ ինչ տեղից էք· հեռու կայեք ինձանից դուք անիրաւութեան ամէն մշակները։

28 Այնտեղ կլինի լայ և ատամների կրճտեն· երբ որ աբրահամին և իսահակին և յակոբին և ամէն մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջն կտեսնէք՝ և ձեզ դուրս հանած ։

29 Եւ արևելքից և արևմուտքից, և հիւսիսից և հարաւից կըգան և Աստուծոյ արքայութեանումն կընստին ։

30 Եւ ահա յետիններ կան՝ որ առաջին կըլինին· և առաջիններ կան՝ որ յետին կըլինին ։

31 Հենց էն օրումն մին քանի փարիսեցիք մօտ եկին և նորան ասացին· դուրս եկ և գնա էստեղից· ինչու որ՝ հերովդէս կամենում որ քեզ սպանէ ։

32 Եւ նորանց ասաց· գնացէք ասացէք էն աղուէսին, թէ ահա դևեր եմ հանում և բժշկութիւններ եմ կատարում էսօր և էգուց և երեք օրումն կըկատարեմ ։

33 Բայց պարտ է այսօր և վաղիւ և ի միւսում աւուր գը նալ. զի ոչ է մարգարէ մերձակ քեզ կորնչել արտաքոյ քան զերուսաղէմ։

34 Ո՛րուսաղէմ երուսաղէմ՝ որ կոտորիչ զմարգարէս, և քարկոծ առնիչ զառաքեալսն առ քեզ. քանի՞ յօժարեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցարուք։

35 Ահա թողեալ լիցի ձեզ տուն ձեր։ Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ ևս տեսանիցէք զիս, մինչև ասիցէք՝ օրհնեալ է՝ եկեալն յանուն Տեառն։

33 Բայց էսօր և էգուց և մեկեղ օրն պէտք է գնալ ինձ որ՝ կարելի չէ՝ որ մին մարգարէ երուսաղէմիցն դուրս կորչի։

34 Ո՛րուսաղէմ երուսաղէմ՝ որ մարգարէները կոտորում և քեզ մօտ ուղարկվածները քարկոծում. քանի՛ անգամ կամեցայ քո որդիքները ժողովել՝ ինչպէս որ հաւն իրան ձագերը թևերի տակն (է ժողովում). և չկամեցար։

35 Ահա ձեր տունդ թողված կըլինի ձեզ. բայց ասում եմ ձեզ՝ եթէ էլ ինձ չէք տեսնիլ՝ մինչև որ ասէք. օրհնեալ է Տէրի անունով եկածն։

ԳԼՈՒԽ Ի։

1 Եւ եղև ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց, և նոքա սպասէին նմա։

2 Եւ ահա այր ումն էր անդ ջրգողալ առաջի նորա։

3 Պատասխանի ետ Յիսուս և ասէ յօրինաւորսն և ցփարիսեցիս. Եթէ արժան իցէ ի շաբաթու բժշկել։

1 Եւ եղաւ որ նա մին շաբթի օրում փարիսեցոց իշխանների մըրնի տունն մտաւ՝ որ հաց ուտէ. և նորանք սպասումիմն նորան։

2 Եւ ահա՝ էնտեղ մին ջրգողված մարդ կար նորա առաջին։

3 Յիսուս պատասխան տուաւ և էն օրէնք պիտօղներին և փարիսեցիներին ասաց. միթէ արժա՞ն չէ շաբաթի օրում բժշկութիւն անել։

4 Եւ նոքա լուռ եղեն. և բուռն հարեալ զնմանէ՝ բը-
ժշկեաց զնա, և արձակեաց։
5 Եւ ասէ ցնոսա. Հիր ու-
րուք ՚ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ՚ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յա-
ւուր շաբաթու։
6 Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

7 Ասաց և առ կոչնական-
սըն առակ մի, հայեցեալ թէ զնիւղդ քարձնտիը լինէին, ասէ ցնոսա։

8 Ցորժամ կոչիցէ ոք ըզ-
քեզ ՚ի հարսանիս՝ կամ ՚ի կո-
չունս, մի բազմիցես յառա-
ջին բարձին. գուցէ պա-
տուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ ՚ի նմանէ.

9 Եւ եկեալ՝ որ զքեզն և
զնա կոչեաց, ասիցէ ցքեզ. տուր սմա տեղի. և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել։

10 Այլ յորժամ կոչիցիս,
երթիջի՛ր՝ բազմանջի՛ր ՚ի յե-
տին տեղւոջ. զի յորժամ դայ-
ցէ՝ որ կոչեացն զքեզ, ասի-
ցէ ցքեզ. բարեկամ՝ ՚ի վե՛ր
մատիր. յայնժամ եղիցի քեզ

4 Եւ նորանք լուռ կացան.
և ձեռով բռնեց նորան և նորան բժշկեց և արձակեց։
5 Եւ նորանց ասաց. Ձե-
զանից հրի էշն կամ եզն ջրհորի մէջ ընկնի և շուտով չհանեն նորան շաբաթի օ-
րուն։
6 Եւ չկարացին պատաս-
խան տալ նորան էն բանի համար։

7 Էն կանչված մարդ կանցն
էլ մին առակ ասաց, տեսնե-
լով՝ թէ ինչպէս վերևի տե-
ղերըն ընտրումէին. ասաց նո-
րանց։

8 Երբոր մինն քեզ հար-
սանիք կամ հացկերոյթիւն կանչէ, առաջին բարձին վե-
րայ մի նստիր. չըլինի թէ քեզանից էլ աւելի պատուա-
կան (մարդ) լինի կանչված նորանից։

9 Եւ նա՝ որ քեզ և նո-
րան կանչեց, գայ և քեզ ա-
սէ. սորան տե՛ղ տուր. և ա-
պա սկսես ամօթով յետին տեղուն նստիլ։

10 Հապա երբոր կանչվիս՝
դնա յետին տեղուն նստիր. որ նա՝ որ կանչեց քեզ՝ եր-
բոր գայ, ասէ քեզ. բարե-
կամ՝ վերև նստիր. էն ժա-
մանակն քեզ հետ նստողնե-

վաւաք առաջի բարձակեացն քոյ ։

11 Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի ։

12 Ասէ և ցկոչնատէրն ։ Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս քո, և մի զեղբարս քո, և մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և մի զմեծամեծս. զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն ։

13 Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զնեղս և զկաղս և զկոյրս ։

14 Եւ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ. և հատուսցի քեզ փոխարէն ի յարութիւն արդարոց ։

15 Իբրև լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա. երանի՛ է որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ ։

16 Ասէ ցնա Յիսուս. Մարդ ոմն արար ընթրիս մեծ, եւ կոչեաց զբազումս ։

17 Եւ առաքեաց զծառայ իւր ընդ ժամ ընթրեացն՝ ասել ցկոչեալսն. եկայք, զի արդ պատրաստ են ամենայն ։

18 Եւ սկսան ամենեքին միաբանութեամբ պատճառել. առաջին ասէ ցնա. արտ գնեցի, և պիտոյ է ինձ ելանել և տեսանել զայն. խնդրեմ զքեզ, ունիմ զքեզ պատճառեալ ։

19 Եւ այլ ասէ. եզս հնգետասան գնեցի, և երթամ փորձել զնոսա. խնդրեմ զքեզ, ունիմ զքեզ պատճառեալ ։

20 Եւ այլ ասէ. կին առի, եւ վասն այնորիկ ոչ կարեմ գալ ։

21 Եւ դարձեալ ծառայն եկեալ պատմեաց զայս տեառն իւրում. յայնժամ բարկացեալ տէրն տանն ասէ ցծառայ իւր. ել շուտ յհրապարակս և յանցս քաղաքին, և զաղքատս և զնեղս և զկաղս և զկոյրս մտո՛ւր արա հոս ։

22 Եւ ասէ ծառայն. տէր, արարեալ է որպէս հրամայեցեր, և տեղի կայ ։

23 Եւ ասէ տէրն ցծառայն. ել յճանապարհս և ի ցանկապատս, և զամենեսեան որ գտանիցեն՝ հարկանել ստիպեա՛ զնոսա, զի լցցի տունս իմ ։

24 Զի ասեմ ձեզ, թէ ոչ ոք յայնոցիկ արանցն որ կոչեցան՝ համտեսցէ զընթրեացս իմոց ։

25 Եւ երթային ընդ նմա բազումք ամբոխք. եւ դարձեալ դարձեալ ասէ ցնոսա ։

26 Եթէ ոք գայ առ իս, և ատեցէ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքոյրս, այլ և զանձն իւր, ոչ կարէ լինել ինձ աշակերտ ։

27 Եւ որ ոչ կրէ զխաչ իւր և գայ զհետ իմ, ոչ կարէ լինել ինձ աշակերտ ։

28 Զի որ ոք կամի ի ձէնջ աշտարակ շինել, ոչ նախ նստեալ հաշուէ զծախսն, եթէ ունիցի զինչ կատարել զնա ։

29 Զի մի՛ եթէ դիցէ զհիմունս, և ոչ կարասցէ կատարել, ամենեքին որ տեսանեն՝ սկսցին ծաղր առնել նմա ։

30 Եւ ասասցեն. թէ այս մարդ սկսաւ շինել, և ոչ կարաց կատարել ։

31 Կամ որ թագաւոր երթայ պատերազմել ընդ այլ թագաւորի, ոչ նախ նստեալ խորհրդակցի, եթէ կարասցէ հանդիպել տասն հազարաւ այնմ որ գայ ընդ նա քսան հազարաւ ։

32 Եթէ ոչ, ապա դեռ հեռի նորա, առաքեսցէ դեսպանս և խնդրեսցէ զհաշտութիւն ։

33 Ուստի ամենայն որ ոչ ուրանայ զամենայն զոր ինչս ունի, ոչ կարէ լինել ինձ աշակերտ ։

34 Աղ բարի է. եթէ աղն անհամեսցի, ընդ որո՞վ համեսցի ։

35 Ոչ պիտանի է ոչ ի հող և ոչ ի պարարտութիւն, այլ արտաքս արկցեն զնա. որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ ։

16 Եւ նա ասէ· այր ոմն
գործեաց ընթրիս, և հրա-
ւիրեաց զբազումս ։

17 Եւ առաքեաց զծառայ
իւր ի ժամու ընթրեացն կո-
չել զհրաւիրեալսն՝ թէ ե-
կայք, զի ահաւասիկ պատ-
րաստ է ամենայն ինչ ։

18 Եւ սկսան մի ընդ միոջէ
ամենեքեան հրաժարել· ա-
ռաջինն ասէ· ագարակ գնե-
ի, և հարկ է ելանել տե-
սանել զնա, աղաչեմ զքեզ՝
կալ զիս հրաժարեալ ։

19 Եւ միւսն ասէ· լուծս
հինգ եզանց գնեցի, և ե-
ղէմ փորձել զնոսա, աղա-
չեմ զքեզ՝ կալ զիս հրաժա-
րեալ ։

20 Եւ միւսն ասէ· կին ա-
ռի, և վասն այնորիկ ոչ կա-
րեմ գալ ։

21 Եւ եկեալ ծառայն պատ-
մեաց զայն տեառն իւրում ։
Ցայնժամ բարկացեալ տա-
նուտէրն՝ ասէ ցծառայն իւր·
ել վաղվաղակի ի հրապարակս
և ի փողոցս քաղաքիդ, և
զաղքատս և զլեղս և զկաղս
և զկոյրս մտից այսր ։

22 Եւ ասէ ծառայն· տէր՝

16 Եւ նա ասաց· մին մարդ
ընթրիք (էրիէվէն հոյկէրու-
ֆէն) արաւ և շատ մարդիկ
հրաւիրեց ։

17 Եւ ընթրիքի ժամն (սա-
հաթն) որ եկաւ՝ իրան ծառան
ուղարկեց՝ որ էն հրաւիրած-
ներըն կանչէ թէ եկէք որ
ահա ամէն բան պատրաստ է ։

18 Եւ ամէնքն սկսեցին մին
մին լետ քաշվիլ· առաջինն
ասաց· արտ գնեցի, և պէտք
է՝ որ գնամ նորան տեսնեմ·
աղաչումեմ քեզ՝ որ ինձ թող
տաս ։

19 Եւ մէկէլն ասաց· հինգ
զուխտ եզ գնեցի, և գնում
եմ որ նորանց փորձեմ· ա-
ղաչումեմ քեզ՝ որ ինձ թող
տաս ։

20 Եւ մէկէլն ասաց· կին
առի, և նրահամար չեմ կա-
րող գալ ։

21 Եւ ծառան եկաւ և էս
բանըս պատմեց իրան տիրոջն·
էն ժամանակն տան տէրն
բարկացաւ և իրան ծառային
ասաց· դուրս գնա շուտով
քաղաքիդ բաց տեղերանքն և
փողոցներն· և աղքատներին
և խեղերին, և կաղերին և
կուերներին բեր մտցրու էս-
տեղս ։

22 Եւ ծառան ասաց· տէր

եղև զոր հրամայեցերն, և կայ և‌ս տեղի։

23 Եւ ասէ տէրն ցծառայն, ել՝ ի ճանապարհս և՝ ի ցանդըս, և արա այսր մտանել, զի լցցի տունս իմ։

24 Ասեմ ձեզ, զի ո՛չ ոք այնոցն կոչեցելոց ճաշակեսցէ ընթրեացց իմոց։

25 Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք. դարձաւ և ասէ ցնոսա։

26 Եթէ ոք գայ առ ի‌մ՝ և ո՛չ ատեայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքոյրս, նա և զանձն‌ և‌ս իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել։

27 Զի որ ո՛չ բառնայ զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել։

28 Ո՞վ ոք ի՝ ձէնջ կամի՛ շինել աշտարակ, և ո՛չ նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական ի կատարումն։

29 Զի գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և ո՛չ կարիցէ կատարել, ամենեքին որ տեսի՛ն զսա սկսան ծաղել զնմա

30 և ասել՝ եթէ այս մարդ սկսաւ շինել և ո՛չ կարաց կատարել։

31 Կամ ո՞ր թագաւոր երթիցէ պատերազմել ընդ այլ թագաւորի, և ո՛չ նախ նստեալ խորհրդակցիցի եթէ կարո՞ղ է հազարաւք հանդիպել ընդ գալոյ նորա ի վերայ իւր։

32 Եթէ ո՛չ, մինչդեռ նա հեռի է, առաքեսցէ դեսպանս և խնդրեսցէ զհաշտութիւն։

33 Ուստի ամենայն որ ո՛չ ուրանայ զամենայն ինչս իւր՝ ո՛չ կարէ իմ աշակերտ լինել։

34 Աղ բարի է. եթէ աղն անհամեսցի՝ ընդ ո՞ր ինչ համեսցի։

35 Ո՛չ պիտանի է ոչ ընդ երկիր և ոչ ընդ պարարտ, այլ արտաքս արկանի՛ցի։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Եւ ժողովեցան առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք լսել զնա։

2 Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպիրքն՝ ասելով եթէ այս ընդունի զմեղաւորս և ուտէ ընդ նոսա։

3 Եւ նա ասաց առակս զայս ցնոսա՝ ասելով։

4 Ո՞ր ոք ի՝ ձէնջ ունիցի հարիւր ոչխար, և կորիցէ զմի ոմն ի նոցանէ, ո՛չ թողցէ զիննսուն և զինն ի տեղիս անապատի՝ և երթիցէ զկորուսեալն մինչև գտցէ զնա։

5 Եւ գտեալ դիցէ զնա ի վերայ ուսոց իւրոց՝ ուրախ լիցի։

6 Եւ եկեալ ի տուն իւր՝ կոչեսցէ զբարեկամս և զդրացիս՝ ասելով ցնոսա՝ ուրախ լերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ զկորուսեալն։

7 Ասեմ ձեզ, զի նոյնպէս ուրախութիւն լինիցի յերկինս վասն մի մեղաւորի որ ապաշխարեսցէ, քան վասն իննսուն և‌ինն արդարոց որ ո՛չ կարիցեն ապաշխարել։

8 Կամ ո՞ր կին որ ունիցի տասն դահեկան, եթէ կորուսցէ զմի դահեկան, ո՛չ վառեսցէ զճրագ և ծածկեսցէ զտունն և ո՛չ խնդրեսցէ ամենայն ինչ մինչև գտցէ զնա։

9 Եւ գտեալ կոչեսցէ զբարեկամս և զդրացիս՝ ասելով ցնոսա՝ ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդահեկանն զկորուսեալն։

10 Ասեմ ձեզ, զի նոյնպէս ուրախութիւն լինիցի առաջի հրեշտակաց աստուծոյ վասն մի մեղաւորի որ ապաշխարեսցէ։

11 Ասէ և այր մի ունէր երկու որդիս։

12 Եւ ասաց կրտսերն ցհայրն՝ հայր, տո՛ւր ինձ զբաժին ինչից որ հասանի ինձ։ Եւ նա բաժանեաց նոցա զկեանս։

13 Եւ ոչ յետ բազում աւուրց ժողովեաց կրտսերն զամենայն ինչս իւր և գնաց ի հեռի երկրի, և անդ ցրուեաց զկեանս իւր՝ ապականելով։

14 Եւ յորժամ ամենայն ինչս նորա կորուսին՝ եղև սով սաստիկ յերկրին յայնմիկ, և նա սկսաւ կարօտանալ։

15 Եւ գնաց և մերձեցաւ առ մի ոմն ի քաղաքացիսն երկրին յայնմիկ, և նա առաքեաց զնա յագարակս իւր արածել զխոզս։

16 Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր ի տարեալ խոզուց, և ո՛չ ոք տայր նմա։

17 Եւ յորժամ եկն յինքն՝ ասաց՝ քանի՞ մշակք հարկաւորք հաց առատանան ի հօրէ իմմէ, և ես սովով կորնչիմ։

18 Յարիցեմ և երթիցեմ առ հայր իմ, և ասասցեմ ցնա՝ հայր, մեղայ յերկինս և առաջի քո։

19 Ո՛չ եմ արժան կոչել զանուն որդւոյ քո, արա զիս իբրև զմի ոմն ի մշակաց քոց հարկաւորաց։

20 Եւ յարեաւ և եկն առ հայր իւր։ Եւ մինչդեռ նա հեռի էր՝ տեսանէ զնա հայրն և գթայ, և վազեալ անկանի ի վերայ պարանոցի նորա և համբուրէ զնա։

21 Եւ ասաց որդին ցհայրն՝ հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ո՛չ եմ արժան կոչել զանուն որդւոյ քո։

22 Եւ ասաց հայրն ցծառայսն իւր՝ արագ հանէք զպատմուճանն առաջինն և զգեցուցէք զնա, և տո՛ւք մատանի ի ձեռն նորա և կօշիկս ի ոտս նորա։

23 Եւ բերէք զհամեստ հորթն և մորթեցէք, և կերիցուք և ուրախ լիցուք։

24 Զի այս որդի իմ մեռեալ էր և կենդանացաւ, կորուսեալ էր և գտաւ։ Եւ սկսան ուրախանալ։

25 Եւ որդի նորա մեծն էր յագարակի։ Եւ յորժամ գայր և մերձենայր ի տանն՝ լուաւ զձայն երգոց և զխրախճանս։

26 Եւ կոչեալ մի ոմն ի մանկանցն՝ հարցանէր զինչ իցէ այս։

27 Եւ նա ասաց ցնա՝ եղբայր քո եկն, և մորթեաց հայր քո զհամեստ հորթն, զի առողջ զնա ընկալաւ։

28 Եւ բարկացաւ և ո՛չ կամէր մտանել։ Ելեալ հայրն՝ աղաչէր զնա։

29 Եւ նա պատասխանի ետ հօր իւրում՝ ասելով՝ ահա այսչափ ամս ծառայեմ քեզ և զպատուիրանս քո ո՛չ անցի, և ինձ ո՛չ տուեր երբէք զուարակ մի, զի ուրախ լինիցիմ ընդ բարեկամս իմ։

30 Իսկ յորժամ եկն որդի քո այս որ կերեալ զկեանս քո ընդ պոռնիկս՝ մորթեցեր նմա զհամեստ հորթն։

31 Եւ նա ասաց ցնա՝ որդեակ, դու միշտ ընդ իս ես, և ամենայն ինչ իմ քոյ‌ն‌ են։

32 Եւ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո սա մեռեալ էր և կենդանացաւ, կորուսեալ էր և գտաւ։

Եւ ասէր և առ աշակերտս իւր՝ մարդ մի էր հարուստ, որ ունէր տնտես, և նա ամբաստանեցաւ առ նա թէ ցրուէ զինչս տեառն իւրոյ։

2 Եւ կոչեալ զնա՝ ասէ ցնա՝ զի՞նչ է այս որ լսեմ զքեզ։ Տո՛ւր հաշիւ տնտեսութեան քոյ, զի ո՛չ կարես ևս տնտես լինել։

3 Եւ ասաց տնտեսն ի մտի իւրում՝ զի՞նչ արարից, զի տէր իմ առնու ի ինէն զտնտեսութիւնս։ Փորել ո՛չ կարեմ, մուրալ ամաչեմ։

4 Գիտացի զի՞նչ արարից, զի յորժամ ի տնտեսութենէ ելանիցեմ՝ ընկալցին զիս ի տունս իւրեանց։

5 Եւ կոչեալ զամենայն պարտապանս տեառն իւրոյ՝ ասէր ցառաջինն՝ քանի՞ պարտիս տեառն իմոյ։

6 Եւ նա ասաց՝ հարիւր չափ իւղոյ։ Եւ ասէ ցնա՝ ա՛ռ զգիրս քո և նստեալ շուտով գրեա հիսուն։

7 Ապա ասէ ցայլ մի՝ դու քանի՞ պարտիս։ Եւ նա ասաց՝ հարիւր չափ ցորենոյ։ Եւ ասէ ցնա՝ ա՛ռ զգիրս քո և գրեա ութսուն։

8 Եւ գովեաց տէրն զտնտես անիրաւութեանն, զի խելամտութեամբ արար։ Զի որդիք աշխարհիս խելամտագոյնք են քան զորդիս լուսոյ ի ազգի իւրեանց։

9 Եւ ես ասեմ ձեզ, արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասիցէ՝ ընկալցին զձեզ ի յաւիտենական տունս։

10 Որ հաւատարիմ է ի սակաւուն՝ հաւատարիմ է և ի բազում, և որ անիրաւ է ի սակաւուն՝ անիրաւ է և ի բազում։

11 Եթէ ուրեմն ի մամոնայի անիրաւութեան հաւատարիմ ո՛չ եղէք՝ զճշմարիտն ո՞ւմ յանձն արասցէ ձեզ։

12 Եւ եթէ ի պատկանելոյ ուրուք հաւատարիմ ո՛չ եղէք՝ զձերն ո՞ւմ տացէ ձեզ։

13 Ո՛չ կարէ ոք երկոցունց տանց ծառայել, զի կամ զմի ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմի մերձեցիցի և զմիւսն անարգիցէ։ Ո՛չ կարէք աստուծոյ ծառայել և մամոնայի։

14 Եւ լսէին զայս ամենայն փարիսեցիքն, որ էին սիրասէր արծաթոյ, և ծաղր առնէին զնմա։

15 Եւ ասէ ցնոսա՝ դուք էք որ արդարացուցանէք զանձինս ի մարդկանց, և աստուած գիտէ զսիրտս ձեր, զի որ ինքն ի մարդկանց բարձրանայ՝ նա ի նախատինս առաջի աստուծոյ է։

16 Օրէնքն և մարգարէքն մինչև ցՅովհաննէս էին, և յայնմհետէ աւետարանի թագաւորութիւն աստուծոյ, և ամենայն ոք զնա ի բռնութիւն առնու։

17 Դիւրագոյն է երկնից և երկրի անցանել, քան զմի տառ օրինացն անկանել։

18 Ամենայն որ արձակէ զկին իւր և առնու զայլ՝ շնանայ, և որ զարձակեալն ի կնոջէ առնու՝ շնանայ։

19 Եւ մարդ մի էր հարուստ, և հագանէր զծիրանի և զկտաւ, և ամենայն աւուր զուարճանայր փառաւորապէս։

20 Եւ աղքատ մի էր անուն Ղազարոս, որ արկանէր առ դրան նորա, լի վէրս,

21 և ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանաց որ անկանէին ի սեղանոյ հարստոյն, և ո՛չ ոք տայր նմա, այլ և շունք գային լիզէին զվէրս նորա։

22 Եղև յետ մահուան աղքատին՝ և տարան զնա հրեշտակք ի գիրկս Աբրահամու։ Մեռաւ և հարուստն և թաղեցաւ։

23 Եւ ի դժոխս ամբարձ զաչս իւր՝ մինչդեռ էր ի տանջանս, և տեսանէ զԱբրահամ հեռի և զՂազարոս ի գիրկս նորա։

24 Եւ նա աղաղակեալ ասաց՝ հայր Աբրահամ, ողորմեա ինձ և առաքեա զՂազարոս՝ թաթխեսցէ զծայր մատանւոյ իւրոյ ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ, զի տանջիմ ի բոցոյս։

25 Եւ ասէ Աբրահամ՝ որդեակ, յիշեա զի առեր զբարիսդ քո ի կենդանութեան քում, և Ղազարոս նոյնպէս զչարիսն, և այժմ նա մխիթարի և դու տանջիս։

26 Եւ ամենայնիւ զայսոսիկ ի մեզ և ի ձեզ հաստատեալ է անդունդ մեծ, զի որ կամիցին անցանել ի ձենջանէ առ մեզ՝ ո՛չ կարիցեն, և ո՛չ ոք անցանիցէ ի մեզանէ առ ձեզ։

27 Եւ ասէ՝ ուրեմն աղաչեմ զքեզ, հայր, զի առաքեսցես զնա ի տուն հաւր իմոյ,

28 զի հինգ եղբարս ունիմ, զի վկայեսցէ ցնոսա, զի մի՛ և նոքա եկեսցեն յայս տանջանաց վայր։

29 Ասէ Աբրահամ՝ ունին զՄովսէս և զմարգարէսն, լուիցեն նոցա։

30 Եւ նա ասէ՝ ո՛չ, հայր Աբրահամ, այլ եթէ ոք ի մեռելոց երթիցէ առ նոսա՝ ապաշխարեսցեն։

31 Ասէ ցնա՝ եթէ զՄովսէս և զմարգարէսն ո՛չ լուիցեն, ո՛չ եթէ ոք ի մեռելոց յարիցէ՝ հաւատասցեն։

Եւ ասէ ցաշակերտս իւր՝ անհնար է գայթակղութեանց չգալ, բայց վա՛յ նմա որով գան։

2 Լաւ է նմա եթէ քար ջրաղացի կապեալ իցէ վիզ նորա և ընկեցեալ իցէ ի ծով, քան զի գայթակղեցուցանիցէ զմի ոք ի փոքունցս յայսոսիկ։

3 Զգուշացարուք ձեզ։ Եթէ մեղանչիցէ եղբայր քո՝ նզովեա՛ զնա, և եթէ ապաշխարեսցէ՝ թո՛ղ ցնա։

4 Եւ եթէ եւթն անգամ յաւուր մի մեղանչիցէ ցքեզ, և եւթն անգամ դարձցի առ քեզ՝ ասելով թէ ապաշխարեցի, թո՛ղ ցնա։

5 Եւ ասեն առաքեալքն ցտէրն՝ յաւելո՛ զհաւատս մեզ։

6 Եւ ասէ տէրն՝ եթէ ունիցիք հաւատս իբրև զհատ մանանխոյ, և ասիցէք ցթթենի այս՝ արմատահան եղիր և տնկեցարո՛ ի ծովս, և հնազանդեսցի ձեզ։

7 Ո՞ր ոք ի՝ ձէնջ ունիցի ծառայ հերկեալ կամ արածեալ, որ ասիցէ ցնա դարձեալ յանդի՝ մո՛ւտ եկ և նստի՛ր ընդ ուտելիս,

8 և ո՛չ ասիցէ ցնա՝ պատրաստեա՛ զինչ ուտիցեմ, և զգեցո՛ զանձն քո և սպասաւորեա՛ ինձ մինչև կերայց և արբից, և ապա դու կերիցես և արբցես։

9 Միթէ շնորհակալ լինիցի ծառային՝ զի արար զհրամանսն զոր պատուիրեաց նմա։ Ո՛չ կարծեմ։

10 Նոյնպէս և դուք յորժամ արարիցէք զամենայն զոր պատուիրեցաւ ձեզ՝ ասացէք թէ ծառայք անպիտանք եմք, զոր էաք պարտ առնել արարաք։

11 Եւ եղև ի գնալն իւրում յԵրուսաղէմ՝ անցանէր ընդ մէջ Սամարիոյ և Գալիլեայ։

12 Եւ մտեալ նորա ի գեղ մի՝ ընդդիմացան նմա տասն բորոտք արանց, որ կային հեռի,

13 և բարձրացուցին ձայն՝ ասելով՝ Յիսո՛ւս վարդապետ, ողորմեա՛ մեզ։

14 Եւ տեսեալ նոցա՝ ասէ՝ գնացէ՛ք, ցո՛յց զանձինս քահանայապետին։ Եւ եղև ի գնալն իւրեանց՝ սրբեցան։

15 Եւ մի ոմն ի նոցանէ տեսեալ զի սրբեցաւ՝ դարձաւ փառաւորելով զաստուած մեծաձայն,

16 և անկեալ ի վերայ երեսաց նորա առ ոտս նորա՝ շնորհակալ լինէր նմա։ Եւ նա էր Սամարացի։

17 Եւ պատասխանի ետ Յիսուս՝ ասելով՝ ո՞չ տասնեքեան սրբեցան, և ուր են իննեքեան։

18 Ո՞չ գտան որ դարձցին և տացեն փառս աստուծոյ, բայց եթէ այս օտարազգի։

19 Եւ ասէ ցնա՝ յարո՛ւց և գնա՛, զի հաւատք քո կենդանացուցին զքեզ։

20 Եւ հարցեալ նորա ի փարիսեցեաց՝ երբ գայցէ արքայութիւն աստուծոյ, պատասխանի ետ նոցա և ասէ՝ ո՛չ գայ արքայութիւն աստուծոյ ընդ հետս հսկողութեան,

21 և ո՛չ ասիցեն՝ ահա՛ աստ է, կամ անդ է։ Զի ահա՛ արքայութիւն աստուծոյ ի ձեզ է։

22 Եւ ասէ ցաշակերտսն՝ եկեսցեն աւուրք յորում ցանկասջիք տեսանել զմի աւուր ի որդւոյ մարդոյ, և ո՛չ տեսանիցէք։

23 Եւ ասիցեն ձեզ՝ ահա՛ աստ է, կամ անդ է։ Մի՛ երթայք և մի՛ հետեւիք։

24 Զի որպէս փայլակն որ փայլատակեալ ի մի կողմանէ երկնի՝ լուսաւորէ ընդ կողմանս երկնի, նոյնպէս լինիցի և որդի մարդոյ յաւուր իւրում։

25 Բայց նախ պարտ է նմա բազում չարչարանս կրել և մերժեալ լինել յազգէ յայսմ։

26 Եւ որպէս եղև յաւուրս Նոյի՝ նոյնպէս լինիցի և յաւուրս որդւոյ մարդոյ։

27 Ուտէին, ըմպէին, կանայք առնուին, արանց տային մինչև յաւուրն յորում մտանէր Նոյ ի տապանն, և եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսեան։

28 Նոյնպէս որպէս եղև յաւուրս Ղովտի՝ ուտէին, ըմպէին, գնէին, ծախէին, տնկէին, շինէին,

29 յաւուրն յորում ել Ղովտ ի Սոդոմայ՝ տեղացաւ հուր և ծծումբ յերկնից և կորոյս զամենեսեան։

30 Նոյնպէս լինիցի յաւուրն յորում որդի մարդոյ յայտնեսցի։

31 Յաւուրն յայնմիկ որ իցէ ի տանիսն և կարասիք նորա ի տան՝ մի՛ իջցէ առնուլ զայն, և որ ի դաշտի՝ նոյնպէս մի՛ դարձցի յետս։

32 Յիշեցէ՛ք զկին Ղովտի։

33 Որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զայն, և որ կորուսցէ զանձն իւր՝ կենդանացուսցէ զայն։

34 Ասեմ ձեզ, զի յայնմ գիշերի իցեն երկու ի մի մահիճի, մի առցի և մի թողցի։

35 Երկու իցեն աղախնայք որ միասին աղանիցեն, մի առցի և մի թողցի։

36 Երկու իցեն ի դաշտի՝ մի առցի և մի թողցի։

37 Եւ պատասխանի տուեալ ասեն ցնա՝ ո՞ւր, տէր։ Եւ նա ասէ ցնոսա՝ ուր իցէ դիակունն՝ անդ ժողովեսցին և արծուիք։

Եւ ասաց առակս զայս ցնոսա՝ զի պարտ է միշտ աղաչել և մի՛ ձանձրանալ,

2 ասելով՝ դատաւոր մի էր ի քաղաքի մի, որ զաստուածն ո՛չ երկնչէր և զմարդն ո՛չ ամաչէր։

3 Եւ այրի մի էր ի քաղաքին յայնմիկ, և գայր առ նա՝ ասելով՝ դատեա՛ զիրաւունս իմ ի հակառակորդէ իմմէ։

4 Եւ նա ոչ կամէր յաւուրս բազումս։ Ապա ասաց ի մտի իւրում՝ եթէպէտ զաստուածն ո՛չ երկնչիմ և զմարդն ո՛չ ամաչեմ,

5 սակայն զի ո՛չ դադարեցուցանէ զիս այրիդ զայդ, դատեցից զիրաւունս նորա, զի մի՛ ի վերջոյ եկեալ ապտակեսցէ զերեսս իմ։

6 Եւ ասէ տէրն՝ լուարո՛ զի՞նչ ասէ դատաւորն անիրաւութեան։

7 Եւ աստուած ո՞չ առնիցէ զիրաւունս ընտրելոցն իւրոց որ գոչեն առ նա ցերեկ և գիշեր, և համբերէ ի նոսա։

8 Ասեմ ձեզ, զի առնիցէ զիրաւունս նոցա շուտով։ Բայց որդի մարդոյ յորժամ եկեսցէ՝ արդեօք գտցէ զհաւատս յերկրի։

9 Եւ ասաց առակս զայս առ որս ոմանս որ վստահանային ի վերայ անձանց իւրեանց թէ արդարք են, և արհամարհէին զայլս։

10 Երկու մարդիկ ելին ի տաճարն աղօթել, մի փարիսեցի և մի մաքսաւոր։

11 Փարիսեցին կայր և զայսպէս աղօթէր ի մտի իւրում՝ աստուած, գոհանամ քեզ զի ո՛չ եմ իբրև զայլ մարդիկ յափշտակիչք, անիրաւք, շնացողք, կամ իբրև զայս մաքսաւոր։

12 Պահեմ երկիցս յաւուր մի, տասանորդեմ զամենայն զոր ինչ ունիմ։

13 Եւ մաքսաւորն հեռի կայր, և ո՛չ կամէր զաչս յերկինս վերացուցանել, այլ հարկանէր զկուրծս իւր՝ ասելով՝ աստուած, ողորմեա՛ ինձ մեղաւորի։

14 Ասեմ ձեզ, զի իջանէր սա արդարացեալ ի տուն իւր քան զայն։ Զի ամենայն որ զանձն իւր բարձրացուցանէ՝ խոնարհեցուցցի, և որ զանձն իւր խոնարհեցուցանէ՝ բարձրացուցցի։

15 Եւ մատուցանէին առ նա և զմանկունս՝ զի մերձեցուցցէ նոցա, և տեսեալ աշակերտացն՝ նզովէին զնոսա։

16 Եւ Յիսուս կոչեալ զնոսա՝ ասէ՝ թո՛ղ զմանկունսդ գալ առ իս և մի՛ արգելուք զնոսա, զի նոցա է արքայութիւն աստուծոյ։

17 Ամէն ասեմ ձեզ, որ ո՛չ ընկալցի զարքայութիւն աստուծոյ իբրև զմանուկ՝ ո՛չ մտցէ ի նա։

18 Եւ հարցեալ նորա ոմն ի մեծամեծաց՝ ասէ՝ վարդապե՛տ բարի, զի՞նչ արարեալ զկեանս յաւիտենական ժառանգեցից։

19 Եւ ասէ ցնա Յիսուս՝ զի՞ ասես զիս բարի, ո՛չ ոք է բարի բայց միայն մի աստուած։

20 Զպատուիրանսն գիտես, մի՛ շնանար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր, պատի՛ զհայր քո և զմայր քո։

21 Եւ նա ասաց՝ զայս ամենայն պահեցի յանմանկութենէ իմմէ։

22 Եւ լուեալ Յիսուսի՝ ասէ ցնա՝ մի՛ ինչ պակասէ քեզ, ա՛ռ զամենայն զոր ինչ ունիս և բաշխեա՛ աղքատաց, և ունիցիս գանձ յերկինս, և եկ հետեւեա՛ ինձ։

23 Եւ նա լուեալ զայս՝ տրտմեցաւ յոյժ, զի մեծատուն էր յոյժ։

24 Եւ տեսեալ Յիսուսի զի տրտմեցաւ՝ ասէ՝ որպէս դժուարաւ մտանիցեն մեծատունք ի թագաւորութիւն աստուծոյ։

25 Զի դիւրագոյն է ուղտի անցանել ընդ ծակ ասեղան, քան մեծատան մտանել ի թագաւորութիւն աստուծոյ։

26 Եւ ասեն որ լսէին՝ ուրեմն ո՞վ կարէ ապրել։

27 Եւ նա ասէ՝ զոր մարդկան անհնար է՝ հնար է աստուծոյ։

28 Եւ ասէ Պետրոս՝ ահա՛ մեք թողաք զամենայն զոր ինչ ունէաք, և հետեւեցաք քեզ։

29 Եւ ասէ ցնոսա՝ ամէն ասեմ ձեզ, զի ո՛չ ոք է որ թողցէ զտուն կամ զծնողս կամ զեղբարս կամ զկին կամ զորդիս վասն արքայութեան աստուծոյ,

30 և ո՛չ առցէ բազմապատիկ յաստ և յայսմ ժամանակի, և յաւիտենական կեանս ի հանդերձեալսն։

31 Եւ առեալ զտասն աշակերտսն՝ ասէ ցնոսա՝ ահա՛ ելանեմք յԵրուսաղէմ, և կատարեսցին ամենայն որ գրեցան մարգարէիցն վասն որդւոյ մարդոյ։

32 Զի մատնեսցի հեթանոսաց և ծաղր արարցեն և նախատեսցին և թքանեսցին,

33 և գանեսցեն զնա և սպանցեն, և յերրորդում աւուր յարիցէ։

34 Եւ նոքա ոչ ինչ իմացան ի սոցանէ, և էր բան այս ծածուկ ի նոցանէ, և ո՛չ գիտէին զասացեալսն։

35 Եւ եղև մերձենալ նորա ի Յերիքով՝ կոյր մի նստէր առ ճանապարհաւ մուրացիկ,

36 և լուեալ նորա զանցանել բազմութեան՝ հարցանէր զինչ իցէ այս։

37 Եւ պատմեցին նմա թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։

38 Եւ նա աղաղակեաց՝ ասելով՝ Յիսո՛ւս, որդի Դաւթի, ողորմեա՛ ինձ։

39 Եւ որ առաջի էին՝ սաստէին նմա զի լռեսցէ։ Եւ նա բազում եւս աղաղակէր՝ որդի Դաւթի, ողորմեա՛ ինձ։

40 Եւ կայեալ Յիսուս՝ հրամայեաց զնա տանել առ ինքն։ Եւ մերձեցեալ նորա՝ հարցանէ զնա

41 ասելով՝ զի՞նչ կամիս արարից քեզ։ Եւ նա ասաց՝ տէր, զի տեսից։

42 Եւ Յիսուս ասէ ցնա՝ տեսի՛ր, հաւատք քո կենդանացուցին զքեզ։

43 Եւ նա անդէն տեսանէր, և երթայր հետեւեալ նմա՝ փառաւորելով զաստուած։ Եւ ամենայն ժողովուրդ տեսեալ՝ տուին փառս աստուծոյ։

Եւ մտեալ Յիսուս՝ անցանէր ընդ Երիքով։

2 Եւ ահա՛ մարդ մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մեծաւոր մաքսաւորաց, և նա էր մեծատուն,

3 և խնդրէր տեսանել զՅիսուս զոր իցէ, և ո՛չ կարէր ի բազմութենէն, զի հասակաւ կարճ էր։

4 Եւ վազեալ յառաջ՝ ելանէ ի վայրենի սիկամորենի մի, զի տեսցէ զնա, զի անտի պարտ էր անցանել։

5 Եւ եկեալ Յիսուս ի տեղին՝ հայեցեալ տեսանէ զնա, և ասէ ցնա՝ Զաքէոս, շուտով իջի՛ր, զի այսօր ի տան քում պարտ է ինձ հանգչել։

6 Եւ նա շուտով իջեալ ընկալաւ զնա ուրախութեամբ։

7 Եւ տեսեալ ամենեցուն՝ տրտնջէին ասելով՝ զի առ մարդ մեղաւոր մտանէ հանգչել։

8 Եւ կայեալ Զաքէոս՝ ասէ ցտէրն՝ ահա՛ կէս ինչից իմոց, տէր, տամ աղքատաց, և եթէ զոք զրկեցի՝ չորեքկի՛ս հատուցից։

9 Ասէ Յիսուս՝ զի այսօր փրկութիւն եղև տանդ այսմիկ, զի և նա որդի է Աբրահամու։

10 Զի եկն որդի մարդոյ որոնել և կեցուցանել զկորուսեալն։

11 Եւ մինչդեռ նոքա լսէին զայս՝ յաւելեալ ասաց առակ մի, վասն զի մերձ էր Երուսաղէմի, և նոքա կարծէին թէ յանդիման իսկ երթայցէ արքայութիւն աստուծոյ։

12 Ասէ ուրեմն՝ մարդ մի ազնուական գնաց ի հեռի երկիր առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ։

13 Կոչեալ տասն ծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս, և ասէ ցնոսա՝ գործեցէ՛ք մինչև եկից։

14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա, և առաքեցին դեսպանս զհետ նորա՝ ասելով՝ ո՛չ կամիմք զայս թագաւոր լինել ի վերայ մեր։

15 Եւ եղև ի դառնալն իւրում՝ առեալ զթագաւորութիւնն՝ հրամայեաց կոչել զծառայսն զոր ետ զարծաթն, զի գիտասցէ զինչ ինչ գործեցին։

16 Եւ եկեալ առաջինն՝ ասէ՝ տէր, մնասդ քո տասն մնաս շահեցոյց։

17 Եւ ասէ ցնա՝ ապրո՛ղ, ծառա՛ բարի, զի յոր չափ հաւատարիմ եղեր, տասանց քաղաքաց իշխան լեր։

18 Եւ եկն երկրորդն՝ ասելով՝ տէր, մնասդ քո հինգ մնաս արար։

19 Ասէ և ցայս՝ և դու եղիր հինգից քաղաքաց իշխան։

20 Եւ եկն այլ մի՝ ասելով՝ տէր, ահա՛ մնասդ քո զոր ունէի ես ծրարեալ ի թաղի պահեցի,

21 զի երկնչէի ի քէն, զի մարդ խիստ ես, առնուս զոր ո՛չ դրեցեր, և հնձես զոր ո՛չ սերմանեցեր։

22 Ասէ ցնա տէրն՝ ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ, ծառա՛ չար։ Գիտացեր զի մարդ խիստ եմ ես, առնում զոր ո՛չ դրեցի, և հնձեմ զոր ո՛չ սերմանեցի,

23 և ընդէ՞ր ո՛չ տուեր զարծաթն իմ ի սեղանաւորս, և ես եկեալ տոկոսիւ պահանջէի զնա։

24 Եւ ասէ ցկայսն՝ ա՛ռ ի նմանէ զմնասն և տո՛ւր նմա որ ունի տասն մնաս։

25 Եւ նոքա ասեն ցնա՝ տէր, ունի տասն մնաս։

26 Ասեմ ձեզ, զի ամենայն որ ունիցի՝ տացի նմա, և որ ո՛չ ունիցի՝ և զոր ունի առցի ի նմանէ։

27 Բայց զթշնամիսդ իմ զայնոսիկ որ ո՛չ կամեցան զիս թագաւոր լինել ի վերայ իւրեանց՝ բերէ՛ք և սպանէ՛ք առաջի իմ։

28 Եւ ասացեալ զայս՝ երթայր առաջի նոցա ելանել յԵրուսաղէմ։

29 Եւ եղև մերձենալ նորա ի Բեթփագէ և ի Բեթանիա առ լեառնն որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս ի աշակերտացն իւրոց

30 ասելով՝ երթայք ի գեղն որ առաջի ձեր է, յորում մտեալ գտանիցէք զհամեստ հորթն կապեալ, զոր ո՛չ ոք երբէք ի մարդկանէ հեծաւ, արձակեցէ՛ք և բերէ՛ք զնա։

31 Եւ եթէ ոք հարցանիցէ ձեզ՝ զի՞ արձակէք զնա, ասասջիք ցնա՝ զի տէր զնա պիտոյ է։

32 Եւ գնացեալ առաքեալքն գտին որպէս ասացն ցնոսա։

33 Եւ մինչդեռ արձակէին զհորթն՝ ասեն տէրունք նորա ցնոսա՝ զի՞ արձակէք զհորթն։

34 Եւ նոքա ասացին՝ զի տէր զնա պիտոյ է։

35 Եւ բերին զնա առ Յիսուս, և արկեալ զհանդերձս իւրեանց ի վերայ հորթնոյն՝ նստուցին զՅիսուս։

36 Եւ մինչդեռ նա երթայր՝ տարածանէին զհանդերձս իւրեանց ճանապարհին։

37 Եւ մերձենալ նորա ի սանդարամետս լերինն Ձիթենեաց՝ սկսան ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախանալ և գոհանալ զաստուած մեծաձայն վասն ամենայն զօրութեանց զոր տեսին,

38 ասելով՝ օրհնեալ թագաւորն որ գայ յանուն տեառն, խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս։

39 Եւ ոմանք ի փարիսեցեաց ի բազմութենէն ասեն ցնա՝ վարդապե՛տ, սաստեա՛ աշակերտացդ քոց։

40 Եւ նա պատասխանի ետ և ասէ՝ ասեմ ձեզ, զի եթէ սոքա լռեսցեն՝ քարինքն աղաղակեսցեն։

41 Եւ մերձենալ նորա՝ տեսեալ զքաղաքն՝ լայր վասն նորա,

42 ասելով՝ եթէ գիտացեր և դու, և յաւուրդ քոդ զայդ, զխաղաղութիւնդ քո, բայց այժմ ծածուկ է յաչաց քոց։

43 Զի եկեսցեն աւուրք ի քեզ, և պատնեշեսցեն զքեզ թշնամիք քո, և շուրջանակի պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ ամենայնիւ,

44 և հարցեն զքեզ ի գետին և զորդիս քո որ ի քեզ, և ո՛չ թողցեն ի քեզ քար ի վերայ քարի, վասն զի ո՛չ գիտացեր զժամանակ այցելութեան քոյ։

45 Եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն ասելով ցնոսա՝

46 գրեալ է թէ տունն իմ տուն աղօթից է, և դուք արարէք զայն որջ աւազակաց։

47 Եւ էր ուսուցանել զամենայն աւուր ի տաճարին։ Եւ քահանայապետքն և դպիրքն և իշխանքն ժողովրդեան խնդրէին սպանանել զնա,

48 և ո՛չ գտանէին զինչ արասցեն, զի ամենայն ժողովուրդ կախեալ լսէին նմա։

Եւ եղև միում աւուր ուսուցանել նորա զամենայն ժողովուրդն ի տաճարին և աւետարանել, եկեալ քահանայապետքն և դպիրքն ընդ երիցունս

2 և ասեն ցնա՝ ասա՛ մեզ, ո՞ր իշխանութեամբ զայդ առնես, կամ ո՞ր ոք է որ զիշխանութիւնդ զայդ ետ քեզ։

3 Եւ պատասխանի տուեալ Յիսուս՝ ասէ ցնոսա՝ հարցանե՛մ և ես զձեզ մի բան, և ասացէ՛ք ինձ։

4 Մկրտութի՞ւնն Յովհաննու յերկնից էր, թէ յմարդկանէ։

5 Եւ նոքա խորհեցան ընդ միմեանս՝ ասելով՝ եթէ ասիցուք թէ յերկնից՝ ասիցէ՝ զի՞ ո՛չ հաւատացէք նմա։

6 Եւ եթէ ասիցուք թէ յմարդկանէ՝ ամենայն ժողովուրդ քարկոծեսցէ զմեզ, զի համոզեալ են թէ Յովհաննէս մարգարէ է։

7 Եւ պատասխանի տուեալ՝ ասեն թէ ո՛չ գիտեմք զի՞ւր էր։

8 Եւ Յիսուս ասէ ցնոսա՝ ո՛չ ես ասեմ ձեզ ո՛ր իշխանութեամբ զայդ առնեմ։

9 Եւ սկսաւ առակս զայս ասել ցժողովուրդն՝ մարդ մի տնկեաց զայգի մի, և տուեալ զնա մշակաց՝ գնաց ի հեռի երկիր ամս բազումս։

10 Եւ ի ժամանակի առաքեաց առ մշակսն ծառայ մի, զի ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշ

ամնիցեն, սկսանիցին ծաղը առնել զնա·

30 Եւ ասել· Թէ այս այր սկսաւ շինել, և ոչ կարաց կատարել։

31 Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի· և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարօղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝ որ գայ ի վերայ նորա քսան հազարաւ։

32 Ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակս առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն։

33 Արդ՝ այսպէս ամենայն որ ի ձէնջ՝ որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։

34 Բարւոք է աղ· ապա թէ աղն անհամեսցի, ի՞ւ համեսցի։

35 Ո՛չ յերկիր՝ և ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս· որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼ· ԺԷ։

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք

տեսանեն, սկսեն ծաղը անել նորան·

30 Եւ ասել· Թէ էս մարդս սկսեց շինել, և չըկարաց աւարտել։

31 Կամ թէ՝ ո՞ր թագաւոր կըգնայ ուրիշ թագաւորի հետ կռիւ կանչ· և չի նստիլ առաջ միտք անել՝ եթէ տասն հազարով կարօղ է դէմ կենայ նորան՝ որ քսան հազարով պիտի գայ իրան վերայ։

32 Ապա թէ չէ՝ քանի որ հեռու է՝ պատգամաւոր կուղարկէ՝ և կաղաչէ՝ որ խաղաղութիւն անէ։

33 Ուրեմն՝ էսպէս էլ ձեզանից ամէն մէկն՝ որ իրան ամէն ապրանքիցն· չըհրաժարվի՝ չի կարօղ ինձ աշակերտ լինել։

34 Աղն լաւ (բան) է· բայց թէ որ աղն անհամանայ, ի՞նչով պիտի համեղանայ։

35 Ո՛չ հողի համար է պիտանի և ոչ աղբի համար· այլ պէտք է դուրս քցվի· ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ։

ԳԼ· ԺԷ։

1 Եւ ամէն մաքսաւորներն (հիւպատոսներն) և մեղաւոր-

ւորք՝ լսել՝ ի նմանէ ։

2 Տրանջէին վարիսեցիքն և դպիրք՝ և ասէին . ընդ ի՞նչ սա զմեղաւորս ընդունի՝ և ուտէ ընդ նոսա ։

3 Ասաց առ նոսա զառակս զայս ։

4 Ո՞վ որ իցէ ի ձենջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար , և կորուսանիցէ մի ի նոցանէ . ոչ թողուցու զինն՝ նըստուն և զինն յանապատի, և երթայցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ զնա ։

5 Եւ իբրև գտանէ , դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց իւրն դալով .

6 Եւ երթայ ի տուն . կոչէ զբարեկամս և զդրացիս , և ասէ ցնոսա . ուրախ եղէ ընդ իս, զի գտի զոչխարըս իմ զկորուսեալ ։

7 Ասեմ ձեզ . զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն և հինգ արդարոց՝ որոց չիցէ պէտ ապաշխարութիւն ։

8 Կամ ո՞վ իցէ կին , որոյ

նէրն մատենուամբն նորան որ (բան) լսեն նորանից ։

2 Փարիսեցիներն և գրագրայցողներն տրտնջումեն և ասում . սա ի՞նչու է մեղաւորներին ընդունում և նոքանց հետ ուտում ։

3 Նա առակըս ասաց նոքանց ։

4 Ձեզանից ո՞վ է էն մարդըն՝ որ հարիւր ոչխար ունենայ , և նորանցից մինըն կորցնէ . նա չի՞ թողել էն իննսուն և իններն անապատում (չէօլում) և էն կորածի ետևէն գնալ՝ մինչև որ գտնէ նորան ։

5 Եւ երբոր կըգտնէ՝ ուրախանալով իրան ուսերին վերայ կըդնէ նորան .

6 Եւ տուն կըգնայ . բարեկամներին և դրացիներին (հարևաններին) կըկանչէ և նոքանց կասէ . ուրախացէք ինձ հետ . ինչու որ իմ կորած ոչխարըս գտի ։

7 Ասում ձեզ , թէ էսպէս աւելի ուրախութիւն կըլինի երկնքումն մին մեղաւորի համար՝ որ ապաշխարէ, քան թէ իննսուն և ինն արդարների համար՝ որ ապաշխարութիւն պէտք չէ նորանց ։

8 Կամ ո՞վ է էն կինն՝ որ

իցեն դրամք տասն. և եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել ՚ի տան և խնդրիցէ առեալ՝ մինչև գտանիցէ։

9 Եւ երբեմն գտանէ, կո՛չէ զբարեկամս և զդրացիս՝ և ասէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։

10 Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ։

11 Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք.

12 Ասէ կրտսերն ՚ի նոցանէ ցհայրն. հա՛յր՝ տուր ինձ բաժին, որ անկանի ՚ինձ։ Եւ նա բաժանեաց նոցա ընչեհանան։

13 Եւ ՚ի սակաւ բազում առեալ՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդեցն՝ գնաց յաշխարհ հեռի. և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր առնաձակութեամբ։

14 Եւ երբեմն սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորել։

տասն դրամ ունիցի, և թէ որ մին դրամ կորիցէ՝ ՚չվառիլ և տան մէջն աւելել և շատ շուտ գալ՝ մինչև որ գտնէ։

9 Եւ երբեմն կըգտնէ՝ բարեկամներին և դրացիներին (հարևաններին) կըկանչէ և կասէ. ուրախացէք ինձ հետ. ՚ինչու որ իմ դրամըս գտի՝ որ կորցրել էի։

10 Ասում ձեզ, էնպէս էլ՝ Աստուծոյ հրեշտակներն առաջին ուրախութիւն կըլինի միև մեղաւորի համար որ կապաշխարէ։

11 Եւ ասաց. միև մարդ երկու որդի ունէր.

12 Ներանից փոքրն ասաց հօրն. հայր՝ ՚ինձ բաժին տուր ՚ինչ որ կըհասնէ ՚ինձ ապրանքներիդ, և նա իրան ապրանքըն բաժանեց նոցա։

13 Եւ շատ օր չանցկացաւ՝ որ փոքր որդին ամէն բանը կըժողովեց և հեռու աշխարհք գնաց. և էնտեղ իրան ապրանքըն մսխեց, ՚ինչու որ՝ անառակութեամբ կեանք էր վարում։

14 Եւ երբոր ամէնըն հատցրուց՝ սաստիկ սով էլաւ էն աշխարհքումն և ինքն սկսեց չքաւորվիլ։

15 Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս։

16 Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն, զոր խոշքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։

17 Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. քանի՞ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացս լիցք, և ես աստ սովամահ կորընչիմ։

18 Յարուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. հայր՝ մեղայ յերկինս, և առաջի քո.

19 Եւ ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո, արա զիս իբրև զմի ի վարձկանաց քոց։

20 Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայր՝ և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ ղպարանոցս նորա, և համբուրեաց զնա։

21 Եւ ասէ ցնա որդին. հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի քո, ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո։

22 Ասէ հայրն ցծառայս իւր.

15 Եւ գնաց էն աշխարհքի քաղաքացիներէն մէնա մնաւ. և նա նորան ուղարկեց իրան գանդն որ խոզ արածացնէ։

16 Եւ ցանկանում՝ որ իրան փորըն լցնէ էն եղջիւրովն՝ որ խոզերն ուտում էին՝ և ոչ ով չէր տալիս նորան։

17 Եւ երբոր իրան խելքն եկաւ, ասաց. քանի՞ բանվորներ կան իմ հօրս տանն՝ հացով լցված՝ և ես էստեղ սովամահ կորչում եմ։

18 Ելեր կենամ գնամ իմ հօրս մօտ և նորան ասեմ. հայր. ես մեղայ երկնքի դէմ և քո առաջիդ.

19 Եւ էլ արժանի չեմ, որ քեզ որդի կոչվիմ. ինձ քո բանվորներէն մէնկին պէս արա։

20 Եւ վերկացաւ եկաւ իրան հօր մօտ. և դեռ որ հեռու էր՝ հայրն տեսաւ նորան և խղճաց. վերացաւ և առաջն վազից՝ նորա վզովն ընկաւ՝ և համբուրեց նորան։

21 Եւ որդին ասաց նորան. հայր՝ ես մեղայ երկնքի դէմ և քո առաջիդ և էլ չեմ արժանի՝ որ քեզ որդի կոչվիմ։

22 Հայրն ասաց իրան ծա-

վաղվաղակի հանիք զպատմուճանն առաջինն, և ադուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա, և կօշիկս յոտս նորա։

23 Եւ ածէք զեզն պարարակ՝ զնէք, կերիցուք և ուրախ լիցուք,

24 Զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։ Եւ սկսան ուրախ լինել։

25 Եւ էր երէց որդին նորա յագրարակի։ Եւ մինչդեռ գայր՝ և մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց։

26 Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՛նչ իցէ այն։

27 Եւ նա ասէ ցնա։ Զի եղբայր քո եկեալ է, և երզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։

28 Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել։ Եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա։

29 Պատասխանի եւ ասէ ցհայրն։ Այս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի։ Ուր մի երբէք ոչ

առաներին։ Յուստով առաջին կապան հանեցէք և հագցրէք նորան և մատանի դրէք նորա ձեռն և կօշիկներ նորա ոտներն։

23 Եւ մսացու եզըն բերէք մորթեցէք՝ ուտեմք և ուրախ լինիմք։

24 Քանզու որ՝ էս իմ որդիս մեռած էր, և կենդանացաւ։ կորած էր, և գտաւ։ Եւ սկսեցին ուրախ լինիլ։

25 Եւ նորա մեծ որդին յանդումն էր։ Եւ երբոր գալիսէր և տանն մօտեցաւ՝ տաղերի և պարգալոյ ձայնըն լսեց։

26 Եւ ծառաներից մէկին կանչեց իրան մօտ՝ հարցնում՝ թէ ինչ (բան) է։

27 Եւ նա ասաց նորան։ Նրա համար որ քո եղբայրդ եկել է և քո հայր մսացու եզըն մորթեց՝ որովհետև ողջունեց նորան։

28 Բարկացաւ և չէր ուզում ներս մտնիլ՝ և հայրն դուրս եկաւ աղաչում նորան։

29 Պատասխան տուաւ՝ և ասաց հօրն։ Էս քանի՞ տարի է՝ որ քեզ ծառայում եմ և քո պատուիրանքից [illegible] մին ժամանակ [illegible] եկել։

եռուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։

30 Յորժամ եկն որդին քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զհներ դմա զգէզն պարարակ։

31 Եւ ասէ ցնա. որդեակ՝ դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է։

32 Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։

մին ուղղ չըտուիր ինձ՝ որ իմ բարեկամներիս հետ ուրախ լինիմ։

30 Իրբոր եդ քո որդիդ եկաւ՝ որ քո ապրանքըդ պոռնիկներին հետ կերաւ, մսացու եղբն մորթեցիր դորա համար։

31 Եւ նորան ասաց. որդեակ՝ դու ամէն ժամանակն ինձ հետ ես. և ամէն ինչ որ իմս է՝ քունն է։

32 Հայց ուրախ լինել և խնդալ պէտք էր. ինչու որ՝ էս քո եղբայրդ մեռած էր և կենդանացաւ. կորած էր և գտաւ։

ԳԼ. ԺԶ։

1 Եւ ասէր առ աշակերտսն. այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. և եղև ըղձնճանկամբաստանութիւն որպէս թէ վատնիցէ զինչս նորա։

2 Կոչեաց, և ասէ ցնա. զի՞նչ է այս զոր լսեմս զքէն, տուր զհամար տնտեսութեան քո. զի ոչ ևս կարես լինել տնտես։

3 Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսու-

1 Եւ աշակերտներին ասաց. մին հարուստ մարդ կար՝ որ տնտես ունէր. և չարաբասութիւն էլաւ նորանից իբր թէ նորա ապրանքըն նա մսխուէ։

2 Կանչեց՝ և ասաց նորան. էս ի՞նչ է որ ես լսումէ քեզանից. քո տնտեսութեան համարըն տուր. ինչու որ՝ էլ կարող չես տնտես լինել։

3 Տնտեսն իրան մտքումն ասաց. ի՞նչ անեմ. որ իմ տէրս տնտեսութիւնըն ինձա-

թիւնս · գործել ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ ։

4 Գիտեմ զինչ արարից · զի յորժամ ՚ի բաց լինիցիմ ՚ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ՚ի տունս իւրեանց ։

5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ՚ի պարտապա նաց տեառն իւրոյ , ասէ ցա ռաջինն · քանի՞ ինչ պարտիս տեառն իմում ։

6 Եւ նա ասէ · Հարիւր մար ձիթոյ , ասէ ցնա · կա զգիր քո , և նիստ գրեա վաղ վազակի յիսուն ։

7 Դարձեալ ասէ ցմիւսն · դու քանի՞ ինչ պարտիս · և նա ասէ · Հարիւր քոռ ցորեանոյ · և ասէ ցնա · կա զգիր քո՝ և նիստ գրեա ուրծսուն ։

8 Եւ գովեաց տէրն զտըն տեսն անիրաւութեան , զի իմաստութեամբ արար· զի որդիք աշխարհիս այսորիկ ի իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց ։

9 Եւ ես ձեզ ասեմ · արա՛ քէք ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութեան · զի յորժամ պակասիցէ այն՝ ընդ նիս առնուսցէ զձեզ յաւիտենական տունս ։

10 Որ հաւատարիմ է ի սակաւուն , հաւատարիմ է և ի բազում · և որ անիրաւ է ի սակաւուն , անիրաւ է և ի բազում ։

11 Եթէ ուրեմն ի մամոնայի անիրաւ հաւատարիմ ոչ եղէք , զճշմարիտն ո՞վ ձեզ հաւատասցէ ։

12 Եւ եթէ ի բաց հանդերձելոցն հաւատարիմ ոչ եղէք , զձերն ո՞վ տացէ ձեզ ։

13 Ոչ ոք կարէ երկոցունց տանուտերաց ծառայել · կամ զմի ատիցէ և զմիւսն սիրիցէ , կամ զմիոյն հնազանդիցի և զմիւսն անարգիցէ · ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի ։

14 Լսէին զայս ամենայն փարիսեցիքն , որ էին սիրահարք արծաթոյ , և ծաղր առնէին զնովաւ ։

15 Եւ ասէ ցնոսա · Դուք էք որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան , և Աստուած գիտէ զսիրտս ձեր · զի որ ինքն ինքեան բարձրանայ , նա նախատեալ լինի առաջի Աստուծոյ ։

16 Օրէնքն և մարգարէքն մինչև ցՅովհաննէս · յայնմհետէ աւետարանի արքայութիւն Աստուծոյ , և ամենայն ոք զնա ի բռնութիւն առնու ։

17 Դիւրին է երկնից և երկրի անցանել , քան զմի տառ օրինացն անկանել ։

18 Ամենայն որ արձակէ զկին իւր և առնու զայլ , շնանայ · և որ զարձակեալն ի կնոջէ առնու , շնանայ ։

19 Էր մարդ մի հարուստ , և հագնէր զծիրանի և զբիսոն , և ամենայն աւուր զուարճանայր փառաւորապէս ։

20 Էր և մուրացիկ մի անուն Ղազարոս , որ ընկեցեալ էր առ դրան նորա , լի վէրս ։

21 Եւ ցանկանայր կշտանալ ի փշրանաց որ անկանէին յսեղանոյ հարստոյն · այլ և շունք գային լիզէին զվէրս նորա ։

22 Եղև մեռաւ մուրացիկն , և տարան զնա հրեշտակք ի գիրկս Աբրահամու · մեռաւ և հարուստն , և թաղեցաւ ։

23 Եւ ի դժոխս վերացուցանէ զաչս իւր , որ էր ի տանջանս , և տեսանէ զԱբրահամ հեռուստ , և զՂազարոս ի գիրկս նորա ։

24 Եւ նա կոչեցեալ ասէ · Հա՛յր Աբրահա՛մ , ողորմեա՛ ինձ , և առաքեա՛ զՂազարոս , զի թրջեսցէ զծայր մատանւոյ իւրոյ ջրով և զովասցուսցէ զլեզու իմ , զի տանջիմ ես ի բոցոյ սորայդմանէ ։

25 Եւ ասէ Աբրահամ · Որդեա՛կ , յիշեա՛ զի առեր զբարիս քո ի կենդանութեան քում , և Ղազարոս զհակառակսն · և նա ի հանգստեան է , և դու տանջիս ։

26 Եւ ամենայնիւ զմեզ և զձեզ միջի անդունդ մեծ հաստատեալ է , զի որ կամիցին անցանել ի կողմանէ ի կողմանէ , ոչ կարասցեն , և ոչ անտի կարասցեն անցանել մեզ ։

27 Եւ նա ասէ · Ապա աղաչեմ զքեզ , հա՛յր , զի առաքեսցես զնա ի տուն հաւր իմոյ ։

28 Զի հինգ եղբարս ունիմ , զի վկայեսցէ նոցա , զի մի՛ և նոքա եկեսցեն յայս տանջանաց տեղի ։

29 Ասէ ցնա Աբրահամ · Ունին զՄովսէս և զմարգարէսն , լուիցեն նոցա ։

30 Եւ նա ասէ · Ոչ , հա՛յր Աբրահա՛մ , այլ եթէ ոք ի մեռելոցն երթիցէ առ նոսա , ապաշխարեսցեն ։

31 Ասէ ցնա · Եթէ զՄովսէս և զմարգարէսն ոչ լուիցեն , ոչ եթէ ոք յարիցէ ի մեռելոց , հաւատասցեն ։

ԺԶ

1 Ասէ և ցաշակերտսն իւր · Էր մարդ մի հարուստ , որ ունէր գանձապետ մի , և նա ամբաստանեցաւ առ նա , թէ նա է որ ցրուէ զհարստութիւն նորա ։

2 Եւ կոչեցեալ զնա ասէ ցնա · Զի՞նչ է զայս որ լսեմ զքեզ · տո՛ւր հաշիւ գանձապետութեան քո , զի ոչ կարես ևս գանձապետել ։

3 Ասէ գանձապետն ՚ի ներքս ՚ի սիրտ իւր · Զի՞նչ արարից , զի տէր իմ առնու ՚ի ինէն զգանձապետութիւնս · մուրանալ ոչ կարեմ , ամաչեմ ։

4 Գիտեմ զինչ արարից · զի յորժամ ՚ի բաց լինիցիմ ՚ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ՚ի տունս իւրեանց ։

5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ՚ի պարտապանացն տեառն իւրոյ , ասէ ցառաջինն · քանի՞ ինչ պարտիս տեառն իմում ։

6 Եւ նա ասէ · Հարիւր մար ձիթոյ , ասէ ցնա · կա զգիր քո , և նիստ գրեա վաղվաղակի յիսուն ։

7 Դարձեալ ասէ ցմիւսն · դու քանի՞ ինչ պարտիս · և նա ասէ · Հարիւր քոռ ցորենոյ · և ասէ ցնա · կա զգիր քո՝ և նիստ գրեա ուրծսուն ։

8 Եւ գովեաց տէրն զտըն տեսն անիրաւութեան , զի իմաստութեամբ արար· զի որդիք աշխարհիս այսորիկ ի իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց ։

9 Եւ ես ձեզ ասեմ · արա՛ քէք ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութեան · զի յորժամ պակասիցէ այն՝ ընդ

կալցին զՆեզ ՚ի յարկան յաւիտենական։

10 Որ ՚ի փոքուն հաւատարիմ է, և ՚ի բազմին հաւատարիմ է. և որ ՚ի փոքուն անիրաւ է, և ՚ի բազմին անիրաւ է։

11 Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զՃշմարիտն ո՞վ հաւատասցէ։

12 Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞վ տացէ Ձեզ։

13 Ո՛չ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։

14 Իբրև լսէին զայս ամենայն փարիսեցիքն՝ որ բանսէր արծաթասէրք էին, և անդրանկին զնա։

15 Եւ ասէ ցնոսա. դուք էք՝ որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։

յաւիտենական բնակարաններին մէջ ընդունին Ձեզ։

10 Ով որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, (նա) շատ բանի մէջ ալ հաւատարիմ է. և նա որ քիչ բանի մէջ անիրաւ է, շատ բանի մէջ ալ անիրաւ է։

11 Ուրեմն՝ եթէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չէյաք, ապա ճշմարիտը ո՞վ կրնայ Ձեր Ձեռքն։

12 Եւ եթէ որ օտար բանի մէջ հաւատարիմ չէյաք, ապա Ձերը ո՞վ կրնայ Ձեզ։

13 Ո՛չ ով ծառայ չի կրնար երկու տիրոջ ծառայել. ինչու որ՝ կամ մէկին կատէ և մէկէլին կրսիրէ. կամ մէկին կրպատուէ և մէկէլին ոչընչի տեղ կրհամարէ. կարող չէք Աստուծոյ ծառայել և մամոնային։

14 Եւս ամէն բաներըն երբոր փարիսեցիներն լսուէին՝ որովհետև արծաթասէր էին, ծաղր էին անոնք։

15 Եւ նարանց ասաց. դուք էք՝ որ մարդկանց առաջին Ձեր անձնեերըդ արդարացնուէք՝ բայց Աստուած գիտուէ Ձեր սրտերըն. պատճառն որ՝ ով որ մարդկանց առաջին բարձր է՝ նա պիղծ է Աստուծոյ առաջին։

16 Օրէնքն և մարգարէքը մինչև Յովհաննէս. յայնմհետէ ասէ արքայութիւնն Աստուծոյ աւետարանի, և ամենայն որ զնա բռնաբարէ։

17 Դիւրին իսկ երկնից և երկրի անցանել, քան Յօրինայն միոյ նշանախեցի անկանել։

18 Ամենայն՝ որ արձակէ զկին իւր, և առնէ այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ։

19 Այր ոմն էր մեծատուն և ագանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս։

20 Եւ աղքատ ոմն անուն ղազարոս անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ.

21 Եւ յանկայր յագել ՚ի փշրանացն՝ որ անկանէին ՚ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք ևս գային, և լեղուին զվէրս նորա։

22 Եւ եղև մեռանել աղքատին. և տանել հրեշտակաց

16 Օրէնքն և մարգարէքն մինչև Յովհաննէսն (եկան). ընդհանից եւս Աստուծոյ արքայութիւնն աւետարանվում, և ամէն մարդ ուժով բռնուէ նորան։

17 Աւելի հեշտ է որ երկինքն և երկիրս անցկենան, քան օրէնկիցն մին պղտիկ նշանագիրը վեր ընկնի։

18 Ամէն ով որ իրան կինըն դուրս կ՚անուէ և ուրիշ առնուէ. շնութիւն է գործուէ. և նա որ էն դուրս արածըն առնուէ՝ շնութիւն է գործուէ։

19 Մին հառուստ մարդ կար՝ և շատ ապնիւ բեհեզներ և ծիրանի շորեր էր հագնուէ՝ և ամէն ժամանակ շատ ուրախութեան մէջ էր։

20 Եւ մին աղքատ մարդ էլ կար՝ ղազարոս անուն. որ խոցերով լցված նորա դրան մօտ վեր ընկած էր։

21 Եւ ցանկանուէր՝ որ իրան փորըն լցնէ էն փշրանքներից՝ որ էն հարուստի սեղանից ընկնուէին՝ բայց շուներն էլ գալիս էին և նորա խոցերըն լիզուէին։

22 Եւ էլաւ որ աղքատն մեռաւ և հրեշտակներն տա-

զնա ՚ի դոդն աբրահամու. մեռաւ և մեծատունն՝ և թաղեցաւ ։

23 Եւ ՚ի դժոխսն ամբարձ զաչս իւր, մինչ ՚ի տանջանսն էր. եւտես զաբրահամ ՚ի հեռաստանէ, և զղազարոս ՚ի գոդ նորա հանգուցեալ ։

24 Եւ նա աղաղակեաց և ասէ. հայր աբրահամ՝ ողորմեայ ինձ, և առաքեա զղազարոս, զի թացցէ զձագ մատին իւրոյ ՚ի ջուր, և զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ ՚ի տապոյ սմանէ ։

25 Եւ ասէ ցնա աբրահամ. որդեակ՝ յիշեա, զի ընկալար անդէն զբարիս քո ՚ի կեանսըն քումմ, և ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ՝ սա աստ մխիթարի, և դու պայդր պապակիս ։

26 Եւ ՚ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցեն աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ պտի ոք առ մեզ անցանել ։

27 Ե՛ւ ասէ. արդ աղաչեմ

բան նորան աբրահամի դոդն. հարուստն էլ մեռաւ՝ և թաղվեցաւ ։

23 Եւ դժոխքի մէջն՝ երբոր տանջանքի մէջ էր. իրան աչքերըն բարձրացրուց աբրահամին հեռուանց տեսաւ՝ և ղազարոսին էլ որ նորա գոգումն հանգիստ առած էր ։

24 Եւ նա աղաղակեց և ասաց. հայր աբրահամ. ինձ ողորմիր և ղազարոսին ուղարկիր որ իրան մատի ծայրըն թացանէ ջրումն և իմ լեզուս հովացնէ. ինչու որ՝ ես սաստիկ տաքութենիցս պապակվումմ ։

25 Եւ աբրահամն նորան ասաց. որդի՝ միտքդ բեր, որ քո բարիքըդ քո կեանքումդ ընդունեցիր՝ ինպէս էլ ղազարոն չարչարանքներ. հիմի՝ սա էս տեղ մխիթարվումմ և դու էդ տեղ պապակվումս ։

26 Եւ էս ամենից վերայ՝ մեր մէջն՝ և ձեր մէջն մեծ անդունդ կայ, որ եթէ կամեն նոնան էստեղից ձեզ մօտ անցկենալ՝ չեն կարող, և ոչ էլ էդ տեղից մինն կարող է մեզ մօտ անցկենալ ։

27 Եւ ասաց. ապա աղա

պքեզ Հայր, զի արձակեսցես զգա՛ւ ի տուն հօր իմոյ ։

28 Զի իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութի՛ւն · զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանացն ։

29 Եւ ասէ աբրահամ · ունին զմովսէս և զմարգարէս՝ եղիցին նոցա լուիցեն ։

30 Եւ նա ասէ · ո՛չ՝ Հայր աբրահամ, բայց եթէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ապաշխարեսցեն ։

31 Եւ ասէ ցնա · եթէ մովսէսի և մարգարէիցն ո՛չ լսեն, և ո՛չ թէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն ։

չումեմ քեզ Հայր՝ որ դարան ուղարկես իմ հօրս տունն ։

28 Ինչուա՛ որ՝ ես կ՚ուզեմ հինգ եղբայր ունիմ · որ նորանց վկայութի՛ւն տայ · որ նորանք եւ չերթան էս տանջանքիս տեղը ։

29 Եւ աբրահամ ասաց · նորանք մօսէսին և մարգարէներին ունին՝ թո՛ղ նորանց ականջ դնեն ։

30 Եւ նա ասաց · չէ, Հայր աբրահամ, բայց թէ որ մեռելներից միւն նորանց մօտ գնայ, կապաշխարեն ։

31 Եւ նորան ասաց · թէ որ մօսէսին և մարգարէներին ականջ չեն դնում՝ եւ թէ որ մեռելներից միւն յարութի՛ւն առնէ՝ չեն հաւատալ ։

ԳԼ · ԺԻ ։

1 Ասաց և առ աշակերտս իւր · ո՛չ է մարթ չգալ գայթագղութեան · բայց վա՛յ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցէ ։

2 Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար կախէր զպարա՛նոցէ նորա՝ և անկաներ ի ծով, քան թէ գայթագղե՛

1 Իրան աշակերտներին էլ ասաց · թէ կարելի չէ՝ որ գայթակղութի՛ւն չըգայ · բայց վա՛յ է էն մարդոյն՝ որ նորա ձեռովն կըգայ ։

2 Աւելի լաւ էր նորան՝ որ նորա վըզից ջաղացի քար կախվէր և ծովն ընկնէր՝ քան թէ էս փոքրներից մէնի

ցուցանէ զի որ ի փոքրկանցըս յայսցանէ :

3 Զգոյշ կացէք անձանց. եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա. և եթէ ապաշխարիցէ, թող նմա :

4 Եւ եթէ հօճն անգամ մեղիցէ քեզ, և հօճն անգամ դարձցի ի քեզ՝ և ասիցէ, ապաշխարեմ, թողցես նմա :

5 Եւ ասեն առաքեալքն Տեառն . յաւել մեզ հաւատս :

6 Եւ ասէ Տէր . եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանոյ, և ասիցէք թմենւոյս այսմիկ . խլեայց և տընկեայ ի ծովս, և հնազանդեսցի ձեզ :

7 Իսկ ո՞վ որ ի ձէնջ , որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ , որ իբրև մտանիցէ յարտաքակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի . մեր անց բազմեայ :

8 Այլ ո՞չ ասիցէ ցնա. թէ պատրաստեայ զինչ ընթերեցայ իցեմ , և գօտի ածեալ պաշտեայ զիս՝ մինչև կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես դու :

գայթակղացնէ :

3 Զգոյշ կացէք անձինքդ . թէ որ քո եղբայրդ մեղք անիցէ՝ սաստեցէ նորան . և թէ որ ապաշխարէ՝ թողուլ թիւն տուր նորան :

4 Եւ թէ որ հօճն անգամ քեզ դէմ մեղք անիցէ՝ և հօճն անդամ քեզ մօտ դառնայ և ասէ՝ (թէ) ապաշխարեմ՝ թողուլիւն տուր նորան :

5 Եւ առաքեալներն ասացին Տէրնն՝ մեր հաւատքըն աւելացրու :

6 Եւ Տէրն ասաց . թէ որ մանանեխի (նշաւակի) հատիկն չափ հաւատք ունիցիք, և ես թըզի ծառիս ասէք . պոկվի՛ր և ծովի մէջն տընկվի՛ր՝ կըվնազանդվի ձեզ :

7 Բայց ձեզանից ո՞վ է նա՝ որ մին հողագործ կամ հովիւ (հօտաւ) ծառայ ունենայ որ երբ որ գայդիցէն (դայ տուն) մտնէ՝ շուտով ասէ նորան՝ թէ եկ սեղան նստիր :

8 Բայց չասէ՞ նորան՝ թէ պատրաստիր ինչ որ իրիկունս պիտի ուտեմ և գօտիկըդ կապած լինի ծառայիր՝ մինչև որ ուտեմ և խմեմ , և յետոյ դու էլ կեր և խմիր :

Մ[իթէ] շնորհս ինչ ու-
նիցի ծառայն այսմիկ , զի ա-
րար զամենայն հրամանն :

10 Նոյնպէս և դուք՝ յոր-
ժամ առնիցէք զամենայն
հրամայեալսն ձեզ , ասասջի՛ք՝
[թէ] ծառայք անպիտանք եմք.
զոր պարտէաքն առնել , ա-
րարաք :

11 Եւ եղև մինչդեռ երթայր
նա Երուսաղէմ, և ինքն ան-
ցանէր ընդմէջ սամարեայ և
գալիլեացւոյ :

12 Եւ մինչդեռ մտանէր ՚ի
գեօղ ուրեմն , պատահեցին
նմա տասն այր բորոտ՝ որք
կային ՚ի հեռաստանէ :

13 Բարձին զձայնս՝ և ասեն.
Յիսուս վարդապետ՝ ողոր-
մեայ մեզ :

14 Եւ երբեմն տեսեալ զնոսա ,
ասէ ցնոսա . երթայք ցու-
ցէք զանձինս քահանայիցն. և
եղև երբեմն գնացին , առժա-
մայն սրբեցան :

15 Մի ոմն ՚ի նոցանէ երբեմն
տեսեալ՝[թէ] բժշկեցաւ , դար-
ձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ փա-
ռաւորս առնէր զԱստուած :

16 Անկաւ ՚ի վերայ երեսաց
իւրոյ առ ոտս նորա , և գո-
հանայր ցնմանէ . և ինքն էր
սամարացի :

9 Միթէ կէն ծառայիցն
շնորհակալ կըլլինի՝ որ կը-
մէն հրամանները արաւ :

10 Նոյնպէս եղ դուք՝ երբոր
ամէն ձեզ հրամայված բանե-
րըն անէք , ասացէք [թէ]՝ մենք
անպիտան ծառաներ ենք. կէն
որ պարտական էինք անելոյ ,
արինք :

11 Եւ էլաւ՝ երբոր նա ե-
րուսաղէմ էր գնում՝ և ինքն
սամարիայի և գալիլեացոյ մի-
ջիցն էր անցկենում :

12 Եւ երբոր միւղ էր
մտնում՝ տասն բորոտ մար-
դիք պատահեցին նորան որ
հեռուանոյ կանգնեցին :

13 Ձայներըն բարձրացրին՝
և ասացին . Յիսուս վարդա-
պետ՝ մեղ ողորմեա :

14 Եւ երբոր տեսաւ նո-
րանց՝ ասաց նորանոյ . գնա-
ցէք անձներըդ քահանանե-
րըն ցոյց տուէք . և էլաւ եր-
բոր գնացին՝ շուտով սրբվե-
ցան :

15 Նորանցիոյ միւն երբոր
տեսաւ՝ [թէ] բժշկվեցաւ ,
յետ դարձաւ՝ բարձր ձայնով
փառք էր տալիս Աստուծոյնէ

16 Իրան երեսին վերայ ըն-
կաւ նորա ոտներն առաջին, և
գոհանուէր նորանից. և ինքն
սամարացի էր :

17 Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ. Ոչ տասն սո-
քա սրբեցան, իսկ արդ՝ ի-
նո՞ւքն ո՞ւր են։

18 Զի ոչ գտան դառնալ
տալ փառս Աստուծոյ, բայց
միայն այլազգիս այս։

19 Եւ ասէ ցնա. արի գնա.
զի հաւատք քո կեցուցին զը-
քեզ։

20 Իբրև հարցաւ՚ի փարի-
սեցւոցն՝ Թէ ե՞րբ գայէ ար-
քայութիւն Աստուծոյ. պա-
տասխանի ետ նոցա և ասէ.
ոչ գայ արքայութիւն Ա-
ստուծոյ խորանօք։

21 Եւ չասիցեն, Թէ ահա-
ւասիկ աստ է՝ կամ անդ. զի
ահա՛ արքայութիւն Աստու-
ծոյ ի՚ներքս ի՚ձեզ է։

22 Ասաց և առ աշակերտան՝
եկեսցեն աւուրք ցանկանալոյ
ձեզ մի յաւուրցն որդւոյ մար-
դոյ տեսանել՝ և ոչ տեսա-
նիցէք։

23 Եւ եթէ ասիցեն ձեզ՝
եթէ ահաւասիկ է՝ կամ անդ,
մի երթայցէք ղհետ։

24 Զի որպէս փայլակըն
փայլատակեալ՝ ի՚ներքոյ երկ-
նից՝ ընդ երկինս՝ ծագիցէ,

17 Յիսուս պատասխան տը-
ւաւ և ասաց. չէ՞ որ տասն
էին սորանք որ սրբվեցան.
ապա էն ինն ո՞ւր են։

18 Որ իսկի չե՛գտան որ
յետ դառնան՝ և Աստուծոյն
փառք տան. բայց միայն ես
այլազգիս։

19 Եւ ասաց նորան. վե՛ր
կաց գնա. ինչու որ քո հա-
ւատդ ապրեցրուց քեզ։

20 Երբոր փարիսեցիներէցն
հարցվեցաւ՝ Թէ Աստուծոյ
արքայութիւնն ե՞րբ պիտի
գայ. պատասխան տուաւ նո-
րանց և ասաց. Աստուծոյ
արքայութիւնն դրըսին նշան-
ներով չի՛ գալ։

21 Եւ չեն ասիլ՝ Թէ ահա՛
էստեղ կամ էնտեղ է. ին-
չու որ՝ ահա՛ Աստուծոյ ար-
քայութիւնն հենց ձեր ներ-
սումն է։

22 Աշակերտներին էլ ա-
ւաց. օրեր կըգան՝ որ դուք
կըցանկանաք որդոյ մարդոյ
օրերիցն մինըն տեսնելոյ, և
չէք տեսնիլ։

23 Եւ Թէ որ ասեն ձեզ՝
ահա՛ էստեղ է կամ էնտեղ՝
եւևէն չե՛րթնաք։

24 Պատճառն որ՝ ինչպէս
կայծակն որ փայլումէ, երկըն-
քի տակն (մին կողմիցն) լոյս

նոյնպէս և որդի մարդոյ յա-
ւուրն իւրում ։

25 Բայց նախ պարտ է նմա
բազումս չարչարիլ՝ և մեր-
ժիլ յազգէս յայսմանէ ։
26 Եւ որպէս եղև յաւուր-
սըն նոյի , նոյնպէս եղիցի և
յաւուրս որդւոյ մարդոյ ։
27 Ուտէին՝ ըմպէին՝ կա-
նայս առնէին՝ և արանց լի-
նէին, մինչև յօրն՝ յորում
եմուտ նոյ ի տապանն , և ե-
կեղ ջրհեղեղն՝ և կորոյս զա-
մենեսին ։

28 Նոյնպէս՝ և որպէս յա-
ւուրսն ղովտայ եղև , ուտէ-
ին , ըմպէին, գնէին, վաճառէ-
ին , տնկէին, շինէին ։

29 Եւ յորում աւուր ել
ղովտ ի սոդոմայ, տեղաց հուր
և ծծումբ յերկնից՝ և կորոյս
զամենեսին . ըստ նմին օրինա-
կի եղիցի և յաւուրն , յո-
րում որդի մարդոյ յայտնե-
լոց է ։

31 Յայնմ աւուր որ կայցէ
ի տանէս՝ և կարասի իւր ի
տան , մի իջցէ առնուլ զայն .
և որ յանդի ելցէ , նոյնպէս

է տալիս մինչև երկնքի տա-
կողն (մեկեղ կողմն)՝ էնպէս
էլ որդին մարդոյ իրան օ-
րումն ։

25 Բայց առաջ պէտք է՝
որ նա շատ չարչարվի և ա-
նարգվի էս ազգիցս ։
26 Եւ ինչպէս որ նոյի օրե-
րումն էլաւ՝ էնպէս էլ որդոյ
մարդոյ օրերումն կըլինի ։
27 Ուտումէին՝ խմումէին .
կին էին առնում և մարդոյ
էին գնում , մինչև էն օրն որ
նոյ մտաւ տապանն . և ջրհե-
ղեղն եկաւ և ամենին կորոյը-
րուց ։
28 Նոյնպէս էլ՝ ինչպէս որ
ղովտի օրերումն էլաւ . ու-
տումէին , խմումէին , գնու-
մէին ծախումէին , տնկումէին
շինումէին ։
29 Եւ էն օրումն՝ որ ղովտ
սոդոմիցն դուրս եկաւ՝ կրակ
և ծըծումբ (չու-չու-ըդ) թափ-
վեցաւ երկնքիցն և ամենին
կորոյրուց ։
30 Հենց էն կերպովն էլ
կըլինի էն օրումն՝ որ որդին
մարդոյ կըյայտնըվի ։
31 Էն օրումն՝ նա որ կըտ-
րի վերայ լինի և իրան բա-
ներն տան մէջն՝ թող վեր
չըգայ, որ նորանոյ առնէ . և

մի դարձցի յետս։

32 Ցեղեցէք զկինն զովտայ։

33 Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա։

34 Ասեմ ձեզ. Յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահիճս, մին առցի՝ և միւսն թողցի։

35 Եւ եթէ եղիցին երկու աղալ ի միասին, մին առցի՝ և միւսն թողցի. և եթէ իցեն երկու յանդի, մին առցի՝ և միւսն թողցի։

36 Պատասխանի եւս և ասեն ցնա. Ո՞ Տէր։

37 Եւ նա ասէ ցնոսա. ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին։

ոլ որ յանդուամ լինի՝ էնպէս էլ թող չեղաւ նայ։

32 Մրաքնեղդ բերէք զովտի կինըն։

33 Ով որ կըկամենայ իրան անձըն ապրեցնել՝ կըկորցնէ նորան. և ով որ կըկորցնէ, կապրեցնէ նորան։

34 Ասում ձեզ. էն գիշերուն եթէ երկու հոգի մահճի (թէօշէկի) մէջ լինին՝ մինն կառնըվի և մեկըն կըթողվի։

35 Եւ եթէ երկու հոգի միասեղ աղալոց վերայ լինին՝ մինն կառնըվի և մեկըն կըթողվի. և եթէ երկու հոգի յանդուամ լինին՝ մինն կառնըվի և մեկեըն կըթողվի։

36 Պատասխան տուին՝ և նորան ասացին. Տէր՝ որտեղ (պտեղ լինի)։

37 Եւ նա ասաց նորանց. որտեղ որ մարմին կայ, արծիւներն էլ էնտեղ կըհաւաքվին։

ԳԼ. ԺԸ.

1 Ասաց և առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթըս և մի ձանձրանալ։

1 Էն առակ էլ ասաց նորանց՝ նրա վերայ թէ պէտք է նորանց՝ որ ամէն ժամանակ աղօթք անեն և չձանձրանան։

2 Ասէ · դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր՝ և ի մարդկանէ ոչ ամաչէր ։

3 Իւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր · դատ արա ինձ յոսոխէ իմմէ ։

4 Իւ ոչ կամէր ի բազում ժամանակս · յետ այնորիկ ասէ ի մտի իւրում, եթէ և զԱստուածոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ,

5 Գոնէ վասն աշխատ առնելոյ ինձ այրեայնմ՝ արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ լթախանձիցէ զիս ։

6 Իւ ասէ Տէր · լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր ։

7 Իսկ Աստուած ոչ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի· և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա ։

8 Այո ասեմ ձեզ · զի առասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի · Իսկ որդի մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդ-

2 Ասայ · մին դատաւոր կար մին քաղաքի մէջ, որ Աստուածանից չէր վախենում և մարդկանցից էլ չէր ամաչում ։

3 Իւ մին որբևէրի էլ կար էն քաղաքումն, նորա մօտ էր գալիս և ասում, Թէ իրաւունք արա ինձ իմ հակառակ ոսոխիցս ։

4 Իւ նա շատ ժամանակ չէր կամենում · Նրանից ետև իրան մտքումն ասայ· Թէ և Աստուածանից չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում,

5 Բայց որովհետև էս որբևէրիս աշխատացնումն ինձ՝ իրաւունք կանեմ՝ որ չը գայ աղաչելով խափան ձանձրայնէ ինձ ։

6 Իւ Տէրն ասայ · լսէք զինչ Թէ անիրաւ դատաւորն ինչ էր ասում ։

7 Բայց Աստուած միԹէ իրան ծառաներին համար վրէժ չի՞ լնդրիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակումն դէպի նա · և մէնակ նորանց համար երկայնամիտ կըլինի ։

8 Իրաւի՝ ասումեմ ձեզ՝ Թէ շուտով վրէժխնդրութիւն կանէ նորանց համար· բայց որդին մարդոյ երբոր

դեռք հաւատաս յերկրի ։

9 Ասայ և առ ոմանս պան-
ծացեալս յանձինս, թէ ար-
դարք իցեն՝ և խոտիցեն զբա-
զումս, զառակս զայս ։

10 Որք երկու ելլեն ՚ի տա-
ճարն կալ յաղօթս, մին փա-
րիսեցի՝ և միւսն մաքսաւոր ։

11 Փարիսեցին կայր մեկու-
սի, և զայս առանձինն աղօ-
թէր մատուցանէր. Աստ-
ուած իմ՝ գոհանամ զքէն,
զի ոչ եմ իբր զայլս ՚ի մարդ-
կանէ, զյափշտակողս՝ և զա-
նիրաւս՝ և զշունս, կամ իբ-
րև զայս մաքսաւոր ։

12 Ամէն պահեմ երկիցս ՚ի
շաբաթու, և տամ տասա-
նորդս յամենայն ստացուածոց
իմոց ։

13 Իսկ մաքսաւորն կայր մե-
կուսի, և ոչ կամէր և ոչ
զաչսն ընդ երկինս ամբառ-
նալ. այլ կոծէր զկուրծս իւր՝
և ասէր. Աստուած՝ քաւեա
զիս զմեղաւորս ։

14 Ասեմ ձեզ. էջ սա ար-
կեգայ՝ միթէ հաւատաք կըզըտ-
նէ երկրի վերայ ։

9 Մին քանի մարդկանց
էլ՝ որ իրանց մտքերումն
պարծենումէին՝ իբր թէ ար-
դար են՝ և ուրիշներին ոչ
ինչ էին համարում՝ էս ա-
ռակըս ասաց ։

10 Երկու մարդիկեր էլան
տաճարն որ աղօթք անեն.
մինն փարիսեցի և մէկէլն
մաքսաւոր (հրեշտակ) ։

11 Փարիսեցին ջոկ կանգ-
նած էր և առանձին էս ա-
ղօթքըս էր անում. իմ Աս-
տուած, դոհանումեմ քեզա-
նից՝ որ ես ուրիշ մարդկանց
պէս չեմ՝ յափշտակողների,
և անիրաւների, և շնացող-
ների կամ թէ էս մաքսաւո-
րիս պէս ։

12 Բայց շաբաթումն երկու
անգամ պաս եմ պահում և
իմ ամէն ապրանքներիցս տա-
սանորդ եմ տալիս ։

13 Իսկ մաքսաւորն հեռու
կանգնած էր և իրան աչքե-
րըն էլ չէր կամենում դէպի եր-
կինքն բարձրացնել. բայց
իրան կուրծքըն (դոշըն) թա-
կում էր և ասում. Աստուած՝
քաւիր ինձ մեղաւորիս ։

14 Ասում ձեզ՝ թէ սա

դարացեալ ՚ի տուն իւր քան զնա · զի ամենայն՝ որ բարձ_ րացուցանէ զանձն իւր , խո_ նարհեսցի · և որ խոնարհէ_ ցուցանէ զանձն, բարձրասցի ։

15 Մատուցանէին առ նա և մանկիկս՝ զի մերձենայցէ ՚ի նոսա· իբրև տեսին աշակերտք՝ սաստէին նոցա ։

16 Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ · Թոյլ տուք մանկուսդ գալ առ իս, և մի արգելուք զոսա · զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ ։

17 Ամէն ասեմ ձեզ · որ ոչ ընդունիցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ , ոչ մտցէ ՚ի նա ։

18 Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ · վարդապետ բա_ րի՝ զի՞նչ գործեցից, զի ըզկեանսն յաւիտենականս ժա_ ռանգիցից ։

19 Ասէ ցնա Յիսուս · զի՞ ասես զիս բարի · չի՛ք ոք բա_ րի՝ բայց մի Աստուած ։

20 Զպատուիրանս գիտես·

արդարացած գնաց իրան տուն_ նըն քանզի՝ նա · ինչու որ՝ ամէն ով որ իրան անձըն բարձրացնումէ՝ կըխոնարհվի, և ով որ իրան անձըն խո_ նարհացնումէ՝ կըբարձրանայ ։

15 Երեխաներ էլ բերու_ մէին նորա մօտ՝ որ նորանց մօտենայ · աշակերտներն ե_ րբոր տեսին · սաստումէին նո_ րանց ։

16 Բայց Յիսուս նորանց ի_ րան մօտ կանչեց · և ասաց · Թոյլ տուէք եղ երեխանե_ րիդ՝ որ ինձ մօտ գան և մի արգելէք դորանց · ինչու որ՝ եղպէսիներին է Աստուծոյ արքայութիւնն ։

17 Ճշմարիտըն ասումէմ ձեզ · Թէ ով որ Աստուծոյ արքայութիւնըն չընդունի ինչպէս երեխայ՝ նա չի՛ մտնիլ նորա մէջ ։

18 Եւ մին իշխան՝ հարց_ րուց նորան և ասաց · բա_ րի վարդապետ՝ ինչ գոր_ ծեմ, որ յաւիտենական կեան_ քըն ժառանգեմ ։

19 Յիսուս նորան ասաց · ինչու ես ինձ բարի ասում· ոչ ով բարի չը՛կայ բայց մի_ այն մինն Աստուած ։

20 Պատուիրանքներըն դի_

մի շնար, մի սպանաներ, մի գո-
ղանար, մի սուտ վկայեր, պա-
տուեա զհայր քո և զմայր :

21 Եւ նա ասէ . զայդ ամե-
նայն պահեցի ի մանկութե-
նէ իմմէ :

22 Իբրև լուաւ զայն Յի-
սուս՝ ասէ ցնա . միւս ևս պա-
կաս է քեզ . զամենայն ինչ՝
զոր ունիս , վաճառեա և տուր
աղքատաց , և ունիցիս գան-
ձս յերկինս , և եկ զկնի իմ :

23 Նա իբրև լուաւ զայս,
տրտմեցաւ . քանզի էր մեծա-
տուն յոյժ :

24 Իբրև եւեթ զնա Յի-
սուս տրտմեալ , ասէ . հրպէս
դժուարաւ որ ինչս ունիցին՝
մտանիցեն յարքայութի՛ն Ա-
ստուծոյ :

25 Դիւրագոյն իցէ մալխոյ
ընդ ծակ ասղան անցանել ,
քան մեծատան յարքայու-
թիւն Աստուծոյ մտանել :

26 Եւ որ լուանն՝ ասէին .
և ո՞ կարիցէ ապրել :

27 Եւ նա ասէ . անհնա-
րինք առ ի մարդկանէ հը-
նարաւորք են Աստուծոյ :

28 Եւ ասէ պետրոս . ահա

տուածս . մի շնար , մի սպանէր
մի գողանար , մի սուտ վկա-
յեր , պատուիր քո հօրըդ,
և մօրըդ :

21 Եւ նա ասաց . էդ ամե-
նըդ իմ երեխայութենիցն
պահեցի :

22 Յիսուս երբոր էս լսեց՝
նորան ասաց . մին բանել պա-
կաս է քեզ . ամէն ինչ՝ որ ու-
նիս . ծախիր և աղքատներին,
տուր և դանձ(ուչաց)կունենաս
երկնքումն, և իմ եաւէս եկ :

23 Նա երբոր էս լսեց՝
տրտմեցաւ . ինչու որ շատ
հարուստ էր :

24 Յիսուս երբոր նորան
տրտմած տեսաւ , ասաց . նո-
րանք որ ապրանք ունին՝
ի՞նչպէս դժուարութենով
կըմտնեն Աստուծոյ արքայու-
թիւնն :

25 Աւելի հեշտ է որ ուղտն
ասիղի ծակով անցկենայ, քան
թէ հարուստն Աստուծոյ ար-
քայութիւնն մտնէ :

26 Եւ նորանք որ լսեցին՝
ասումէին . էլ ո՞վ կարէ ապ-
րիլ :

27 Եւ նա ասաց . էն բա-
ներն որ անկարելի են մարդ-
կանց մօտ՝ կարելի են Աստու-
ծոյ մօտ :

28 Եւ պետրոսն ասաց . ա-

ասիկ մեք թողաք զամենայն
ինչ զմեր , և եկաք զքեզ։
29 Եւ նա ասէ ցնոսա · ա-
մէն ասեմ ձեզ · եթէ ոչ ոք է՛
որ եթող զտունս կամ զնո-
ղըս կամ զեղբարս կամ զկին
կամ զորդիս՝ վասն արքայու-
թեան Աստուծոյ ,

30 Եթէ ոչ առնուցու բազ-
մապատիկ ՚ի ժամանակի յայս-
միկ. և յաշխարհին՝ որ գա-
լոցն է՝ զկեանսն յաւիտենա-
կանս ժառանգեսցէ ։

31 Եւ առեալ զերկոտասան-
սըն առաքինին՝ ասէ ցնոսա ·
ահաւասիկ ելանեմք յերու-
սաղէմ · և կատարեսցին ամե-
նայն գրեալքն մարգարէիւք
վասն որդւոյ մարդոյ ։

32 Զի մատնեսցի հեթա-
նոսաց և կատակեսցի ·

33 Եւ հարկանիցեն և սպա-
նանիցեն զնա , և յերրիր ա-
ւուր յարիցէ ։

34 Եւ նոքա ոչ ինչ իմացան
յայնցանէ, այլ էր բանն ծած-
կեալ ՚ի նոցանէ , և ոչ գի-
տէին զասացեալսն ։

35 Եւ եղև ՚ի մօտենալն նորա
յերիքով , կոյր ոմն նստէր առ

հան մնէք մեր ամէն բաներըն
թողինք և քո եաւէպ եկինք։
29 Եւ նա ասաց նորանց ·
Ճշմարիտըն ասեմ ձեզ ,
թէ ոչ ով չըկայ՝ որ տունե-
րը կամ ծնօղները կամ եղ-
բարներըը կամ կինը կամ
որդիքը թողէ՝ Աստուծոյ
արքայութեան համար ,

30 Որ շատ աւելի չառնէ
էս ժամանակումս՝ և էն աշ-
խարհումն՝ որ գալու է՝ յա-
ւիտենական կեանքըն ժառան-
գէ ։

31 Եւ էն տասներկուսին ա-
ռանձին առաւ և նորանց ա-
սաց · ահա վեր ենք ելլում
երուսաղէմ և ամէն բաներն
որ մարգարէներն ձեռովն որ-
դոյ մարդոյ համար գրված
են , կըկատարվին ։

32 Ինչու որ՝ հեթանոսներուն
ձեռքն կըմատնըվի և ծաղր
կըլինի ։

33 Եւ կըծեծեն և կըսպանեն
նորան · և երեք օրումն յա-
րութիւն կառնէ ։

34 Եւ նորանք ոչ ինչ չի-
մացան էն բաներուն՝ բայց
խօսքն ծածկըված էր նորան-
ցից և ասած բաներըն չէին
գիտում ։

35 Եւ երբոր նա երիքովին
մօտենում էր , մին կոյր Հան-

Ճանապարհաւն մուրացիկ ։

36 Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն ։
37 Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ ։

38 Աղաղակեաց և ասէ, Յիսուս որդի Դաւթի ողորմեայ ինձ ։
39 Եւ որ առաջին երթային, սաստէին նմա, զի լռեսցէ ։ և նա և աւս առաւել աղաղակէր, որդի Դաւթի ողորմեայ ինձ ։
40 Ել տեղի առ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ նա, եհարց զնա և ասէ ։

41 Զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ ։ և նա ասէ ։ տէր զի բացցին աչք իմ՝ և տեսից ։
42 Եւ Յիսուս ասէ ցնա ։ հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ ։
43 Եւ առժամայն ետես, երթայր գնոր՝ և փառաւոր առնէր զԱստուած ժողովրդեանն տեսեալ, տայր օրհնութիւն Աստուծոյ ։

պարհի վերայ նստած էր մուրացական ։
26 Երբոր ժողովրդի անցկենալը լսեց, հարցնումէր թէ ին՞չ է ։
37 Եւ պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազովրեցին անց է կենում ։
38 Աղաղակեց և ասաց. Յիսուս որդի Դաւթի՝ ինձ ողորմեայ ։
39 Եւ նորանք՝ որ առաջ էին գնում, սաստումէին նորան՝ որ լռեայ ։ և նա էլ աւելի աղաղակումէր ։ որդի Դաւթի՝ ինձ ողորմեայ ։
40 Յիսուս կանգնեց և հրամայեց՝ որ նորան իրան մօտ բերեն ։ և երբոր իրան մօտ եկաւ՝ հարցրուց նորան և ասաց ։
41 Ի՞նչ ես ուզում դու որ անեմ քեզ ։ և նա ասաց ։ Տէր՝ որ իմ աչքերս բացվին և տեսնեմ ։
42 Եւ Յիսուս ասաց նորան, նայիր, քո հաւատքդ ապրեցրուց քեզ ։
43 Եւ շուտով տեսաւ, և նորա ետևէն գնումէր և Աստուծոյն փառաւորումէր ։ և ամէն ժողովուրդն՝ որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծոյն ։

1 Եւ մտեալ շրջէր ընդ երիքով։

2 Եւ ահա այր մի անուն կոչեցեալ զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն։

3 Եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս, և ոչ կարէր՝ ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։

4 Եւ ընթացեալ յառաջս, ել՝ ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։

5 Իբրև եկն՝ ի տեղին, հայեցաւ՝ ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. զաքէ՝ փութիա՛ կաց այսր, զի այսօր՝ ի տան քումմ արժան է ինձ ագանել։

6 փութացաւ և կաց՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ։

7 Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։

8 Եւն եկաց զաքէոս՝ և ասէ ցՏէր. Տէր՝ ահա զկէս

4 Եւ մտաւ երիքովի միջովն անց էր կենում։

2 Եւ ահա մին մարդ անունն զաքէոս կոչված. և նա մաքսաւորների (հարկահաւաքների) գլխաւորն էր, և ինքն էլ հարուստ։

3 Եւ ուզումէր որ տեսնէ՝ թէ ո՞վ է Յիսուսն, և մարդկանց բազմութեան պատճառով չէր կարում. ինչու որ հասակովն կարճ էր։

4 Եւ առաջ վազեց և վեր ելաւ մին ժանտաթզկի ծառ՝ որ տեսնէ նորան. ինչու որ (Յիսուս) հենց էնտեղովն պէտք էր անցկենար։

5 Երբոր էն տեղն եկաւ՝ Յիսուս վեր նայեց և նորան ասաց. զաքէ՛ շուտ արի՛ էդ տեղիցդ վէր եկ, ինչու որ պէտք է ինձ՝ որ էս օր քո տանդ վեր գամ։

6 Նա վազով վէր եկաւ և ուրախութենով ընդունեց նորան։

7 Ումէնքն երբոր տեսին. տրտնջումէին և ասում. թէ մեղաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ առնելոյ համար։

8 Զաքէոսն եկաւ կանգնեց և Տէրին ասաց. Տէր՝

ընչից խմոյ տայց աղքատաց • և եթէ զոք զրկեցի, հատուց ոյից չորեքկին ։

9 Եւ ասէ ցնա Յիսուս • այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ • քանզի և սա որդի աբրահամու է ։

10 Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկո- րուսեալն ։

11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի և ասէ, վասն մերձենալոյ նորա յերուսաղէմ, և համարելոյ նոցա, եթէ առժամայն յայտ- նելոյ է արքայութիւն Աս- տուծոյ ։

12 Ասէ • այր ոմն ազնուա- կան գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորու- թիւն, և դառնալ ։

13 Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս, և ասէ ցնոսա • յարգեցէք զայդ՝ մինչև եկից ։

14 Եւ քաղաքացիքն նորա, ատէին զնա, առաքեցին հրեշ- տակս զկնի նորա և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր ։

ահա իմ ապրանքներիս կէսըն աղքատներին կըտամ և եթէ մինըն զրկեցի՝ չորս տակ կըվե- ճարեմ (նորան) ։

9 Եւ Յիսուս նորան ասաց, էս օր փրկութիւն էլաւ էս տանս • ինչու որ՝ սա էլ աբ- րահամու որդի է ։

10 Պատճառն որ՝ որդին մարդոյ եկաւ, որ մանպայ և ապրեցնէ կորածին ։

11 Եւ դեռ որ նորանք էս բանըս լսումէին՝ մին առակ աւելացրուց և ասաց • իրան երուսաղէմին մօտենալոյ հա- մար, և նորանց կարծելոյ համար՝ թէ Աստուծոյ աբ- քայութիւնն շուտով պիտի յայտնըվի ։

12 Ասաց • մին մեծազգի մարդ գնաց հեռու աշխարհը, որ թագաւորութիւն առնէ իրան համար և յետ դառ- նայ ։

13 Եւ իրան ծառաներին կանչից, տասն մնաս տուաւ նորանց, և ասաց նորանց• էդ բանայրէք մինչև որ գամ ։

14 Եւ նորա քաղաքացիներն, նորան ատումէին • նորա ետե- ւէն պատգամաւորներ ուղար- կեցին և ասացին • թէ չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ ։

15 Եւ եղև դառնալ նմա առեալ զթագաւորութիւնն, և կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո՞վ զինչ շահեցաւ։

16 Ելն առաջինն և ասէ. տէր Հապն քո՝ տասն Հաս արար։

17 Եւ ասէ ցնա. ազնիւ ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի։

18 Ելն երկրորդն և ասէ. Հապն քո արար հինգ Հաս։

19 Ասէ և ցնա. և դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց։

20 Ելն միւսն և ասէ. տէր՝ ահա Հապն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վարշամակի։

21 Երկնչէի ի քէն, զի այր ամամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, և հնձես՝ զոր ոչ սերմանեցեր։

22 Եւ ասէ ցնա. ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ամամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ

15 Եւ երթայ՝ որ նա թագաւորութիւնըն առեալ՝ յետ դարձաւ. և էն ծառանեարքն՝ որ արծաթըն նորանց էր տուեալ, կանչեց, որ գիտասցայ, թէ ով ի՞նչ շահվեցաւ։

16 Ընդառաջինն եկաւ և ասաց. տէր քո Հասդ տասն Հաս (շահ) արաւ։

17 Եւ նորան ասաց. ազնիւ և բարի ծառայ՝ որովհետև էդ քիչ բանումդ հաւատարիմ էլար՝ թագդ տասն քաղաքի վերայ իշխանութիւն ունենաս։

18 Երկրորդն եկաւ և ասաց. քո Հասդ հինգ Հաս (շահ) արաւ։

19 Նորան էլ ասաց. թագդու էլ հինգ քաղաքի վերայ լինիս։

20 Մեկելն էլ եկաւ և ասաց. տէր ահա քո Հասդ՝ որ վարշամակի (տահկասէջ) մէջ պատած պահումի։

21 Վախենումի պեղանից. ինչու որ դու մին քարասիրտ մարդ ես. վեր ես առնում էն՝ որ չըդրիր՝ և հնձումես էն՝ որ չըսերմեցիր։

22 Եւ ասաց նորան. քո բերանից քեզ կըդատեմ, անհաւատ ծառայ. դու գիտէիր՝ որ ես մին քարասիրտ մարդ եմ, վեր եմ առնում

եդի. և հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։

23 Եւ ընդէ՞ր ոչ եռուր զարձաքեն իմ՝ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջիլ։

24 Եւ ասէ ցսպասաւորսն. առէք ի դմանէ ղՊիասն, և տարայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն Պիասն։

25 Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն Պիաս։

26 Ասեմ ձեզ, եթէ ամենայնմի՝ որ ունիցի, տացի. և յայնմանէ՝ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։

27 Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ։

28 Եւ իբրև զայս ասաց, գնաց յառաջ՝ երանել յԵրուսաղէմ։

29 Եւ եղև իբրև մերձեցաւ ի բեթփագէ և ի բեթանիա առ լերինն՝ որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ և ասէ։

30 Երթայք դուք ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ, յոր էն՝ որ չըդրի և հնձուած որտեղ որ չըսերմեցի։

23 Ինչո՞ւ իմ արծաթըս տակ վոխօղներին (տաքինէրին) չըտուիր որ ես դայի շահով յետ առնէի։

24 Եւ ծառաներին ասաց. առէք դորանից էն Պիասըն և տարէք տուէք նորան՝ որ տասն Պիասըն ունի։

25 Եւ նորան ասացին. տէր. (նա) տասն Պիասըն ունի։

26 Ասում եմ ձեզ, թէ ամէնին որ ունի, կըտրվի. և նա որ չունի, նորանից էն էլ, որ ունի, վեր կառնվի։

27 Բայց էն իմ թշնամիներըս՝ որ չէին ուզում, որ ես նորանց վերայ թագաւորեմ, էստեղ բերէք և սպանեցէք իմ առաջիս։

28 Եւ երբոր էս ասաց. առաջ գնաց, որ վեր էլնի Երուսաղէմ։

29 Եւ էլաւ երբոր բեթփագէին և բեթանեային մատեցաւ էն սարին մօտ՝ որ ձիթենեաց սար է կոչվում, նորան աշակերտներից երկուսը ուղարկեց և ասաց.

30 Գնացէք դուք էդ գիւղը, որ մեր դիմացն է. և երբոր

իբրև մոանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք ՚ի մարդկանէ երբեք ոչ նստաւ· լուծէք զնա և ածէք։

31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէ՞ր լուծանէք, այնպէս ասասջի՛ք ցնա, թէ Տեառն իւրում պիտոյ է։

32 Իբրև չոքան որ առաքեալքն ցնան, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն։

33 Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնոսա· զի՞ լուծանէք զյաւանակդ։

34 Եւ նոքա ասեն· Տեառն իւրում պիտոյ է։

35 Եւ ածին զնա առ Յիսուս· և արկին զնովաւ հանդերձս, և հեծուցին զՅիսուս։

36 Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին ճանապարհաւն։

37 Եւ իբրև այն ինչ մերձ եղև ՚ի գառ ՚ի վայր լերինն ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած ՚ի ձայն մեծ վասն ամենայն եղելոց զօրութեանցն՝ զոր տեսին·

մտնէք նորա մէջ՝ մին քուռակ կըգտնէք կապուած, որ նորա վերայ խակի մին ժամանակ մարդ չը՛նստեց· նորան արձակեցէք և բերէք։

31 Եւ թէ որ մինն հարցնէ ձեզ՝ թէ ինչո՞ւ էք արձակում՝ նորան էսպէս ասացէք՝ թէ Տէրին պէտք է սա։

32 Իրբոր գնացին նորանք որ ուղարկուեցան, էնպէս գտին ինչպէս՝ որ նորանց ասաց· քուռակըն կանգնած էր։

33 Եւ երբոր քուռակըն արձակում՚էին՝ նորա տէրերն ասացին նորանց· ինչո՞ւ էք արձակում էդ քուռակըդ։

34 Եւ նորանք ասացին· Տէրին պէտք է սա։

35 Եւ նորան բերին Յիսուսի մօտ· և շորեր քցեցին նորա վերայ, և Յիսուսին հեծացրին։

36 Եւ դեռ որ գնում՚էր՝ իրանց շորերըն փռում՚էին ճանապարհին վերայ։

37 Եւ երբոր դեռ նոր մօտեցաւ որ ձիթենեաց սարիցն դէպի ցածն վէր գայ՝ աշակերտներն ամէն բազմութիւնն ուրախութենով սկսեց օրհնում՚էլ Աստուծոյ բարձր ձայնով՝ էն ամէն էլաճ զօրութիւններին համար որ տեսել էին։

38 Եւ ասէին. օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տ՚ն. խաղաղութիւն յերկինս, և փառք ՚ի բարձունս:

39 Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն յամբոխէ անտի ասեն ցնա. վարդապետ՝ սաստեա աշակերտացդ քոյ:

40 Պատասխանի ետ և ասէ. ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն:

41 Եւ իբրև մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց ՚ի վերայ նորա, և ասէ.

42 Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զնաղաղութիւնն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց:

43 Զի եկեսցեն աւուրք ՚ի վերայ քո, և պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց.

44 Եւ յատակեսցեն զքեզ, և զորդիս քո ՚ի քեզ. և ոչ թողուցուն քար ՚ի քարի վերայ յամենայնի ՚ի քեզ. փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո:

38 Եւ ասումէին. օրհնեալ է դա՝ որ գալիս է թագաւորը Տէրի անունովն. խաղաղութիւն (լինի) երկնքումն և փառք ՚ի բարձունս:

39 Եւ փարիսեցիներից մին քանիսն, որ ժողովուրդների մէջն էին, նորան ասացին. վարդապետ՝ սաստիր քո աշակերտներիդ:

40 Պատասխան տուաւ և ասաց՝ ասումեմ ձեզ՝ որ եթէ սորանք էլ լուռ կենան՝ էգ քարերդ կաղաղակեն:

41 Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքին՝ և լաց էլաւ նորա վերայ և ասաց.

42 Եթէ գոնեայ էս օրս դու տեղայիր քո խաղաղութիւնդ. բայց հիմիկ ծածկվեցաւ քո երեսից:

43 Ինչու որ՝ օրեր կըգան քեզ վերայ, և քո թշնամիներդ քո չորս կողմովդ պատնէշ (վէրէբ) կըպատեն և քեզ կըպաշարեն և ամէն կողմից քեզ կընեղացնեն:

44 Եւ հիմնայատակ կանեն քեզ և քո որդիքըդ էլ քո միջումդ. և խիճ քար քարի վերայ չեն թողնիլ քո միջումդ. ինչու որ՝ չըճանաչեցիր (ուտուծդ) քեզ տես գալդ ժամանակըն:

Ա5 Եւ մտեալ ՚ի տաճարն սկսաւ հանել ղազաւնեվաճառսն, և զդնօղս. և զսեղանս հատուածառացն յրուեաց։

Ա6 Եւ ասէ ցնոսա. գրեալ է՝ և եղիցի տուն իմ տուն աղօթից, և դուք արարիք զդա այրս աւազակաց։

Ա7 Եւ ուսուցանէր ՚ինոսա հանապազ ՚ի տաճարին. իսկ քահանայապետքն և դպիրք և գլխաւորք ժողովրդեանն խընդրէին սպա կորուսանել,

Ա8 Եւ ո՛չ գտանէին՝ թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամենայն կախեալ կայր ընդմանէ ՚ի լսել։

Ա5 Եւ մտաւ տաճարն և սկսեց դուրս հանել աղաւնի ծախողներին և դնօղներին և ըստակ փոխողների տախտակներըն յրվեց։

Ա6 Եւ նորանց ասաց. գրված է՝ թէ իմ տունս աղօթքի տուն պիտի լինի, և դուք դորան աւազակների բուն արիք։

Ա7 Եւ ամեն օր սովորցնուէր նորանց տաճարի միջումն. բայց քահանայապետներն և կարդացօղներն և ժողովրդի գլխաւորներն խնդրումէին, որ կորցնեն նորան։

Ա8 Եւ չէին գտնում՝ թէ ինչ անեն. պատճառն որ՝ ամեն ժողովուրդն նորանից կախված էր որ (նորա խօսքըն) լսէ։

ԳԼ · Ի։

1 Եւ եղև ՚ի միում աւուրցն յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն ՚ի տաճարի անդ՝ և աւետարանէր, հասին ՚ի վերայ քահանայապետքն և դպիրք ծերովքըն հանդերձ,

2 Եւ ասեն ցնա. ասա մեզ՝ որիվ իշխանութեամբ դործես դու զայդ, կամ որ է՝

1 Եւ էլաւ որ էն օրերից մընումն՝ դեռ քանի որ տաճարումն սովորցնումէր ժողովրդին և աւետանումէր, քահանայապետներն և կարդացօղներն ծերերին հետ վերայ հասին։

2 Եւ նորան ասացին. ասա մեզ. դու ի՞նչ իշխանութենով ես անում էդ։

որ ետ քեզ զայդ իշխանութիւն։

3 Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, և ասացէք ինձ։

4 Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ։

5 Նոքա խորհեցան ի միտս իւրեանց և ասեն.

6 Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս զՅովհաննէ, եթէ մարգարէ է։

7 Եւ պատասխանի եառնն չգիտեալ թէ ուստի լցէ։

8 Եւ Յիսուս ասէ ցնոսա. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս։

9 Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն գնաց ի հանապարհ ժամանակս բազումս։

10 Եւ ի ժամուն՝ առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի կամ ի՞նչ է նա, որ եդ իշխանութիւնդ տուաւ քեզ։

3 Պատասխան տուաւ և ասաց նորանց. եսկզ ձեզանից մին բան կըհարցնեմ, և ասացէք ինձ։

4 Յովհաննէսի մկրտութիւնն երկնքից՞ն էր, թէ մարդկանից՞ն։

5 Եւ նորանք իրանց միջումն միտք արին և ասացին.

6 Թէ որ ասենք, երկնքից՞ն. կասէ. ապա ինչո՞ւ չըհաւատացիք նորան. և թէ որ ասենք, մարդկանից՞ն՝ ամէն ժողովուրդն մեզ քարկոծ կանեն. ինչուս որ՝ իրանց մտքումն հաստատ դրել են Յովհաննէսին համար՝ թէ (նա) մարգարէ է։

7 Եւ պատասխան տուին՝ չըգիտեցէ, թէ որտիղից է։

8 Եւ Յիսուս նորանց ասաց. ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշխանութեանով եմ անում էս։

9 (Ապա) սկսեց էս առակըս ասէլ ժողովըրդին. մին մարդ այգի (քաղ) տնկեց, և մշակներին տուաւ նորան, և ինքն հանապարհ գնաց շատ ժամանակ։

10 Եւ ժամանակն որ եկաւ՝ մին ծառայ ուղարկեց մշակ-

պաղծ այգւոյն տացեն նմա. և մշակքն գան հարկին զնա, և արձակեցին ունայն:

11 Եւ յաւել միւս առ ծառայ յղել. նոքա և զնա առ գան հարկին՝ անարգեցին, և առաքեցին ունայն:

12 Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և զնա վիրաւորեցին, և հանին արտաքս:

13 Ասէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքեսից զորդի իմ սիրելի, թերևս՝ ի սմանէ պատկառեսցին:

14 Իբրև տեսին զնա մշակքն խորհեցան ընդ միմեանս և ասեն. սա է ժառանգն. սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն:

15 Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին. արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն:

16 Ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տացէ զայգին այլոց, իբրև լուան՝ ասեն. քաւ՝ մի լիցի:

17 Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. իսկ զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է. թէ զվէմն զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան:

ներին մօտ, որ այդպ (քաղէ) պըտղոյն իրան տան. և մշակներն ծեծեցին նորան և դատարկ յետ արձակեցին:

11 Եւ նրա վերայ մին ուրիշ ծառայ էլ ուղարկեց. և նորան էլ ծեծեցին, լմուքը մուրն և դատարկ յետ ուղարկեցին:

12 Եւ նրա վերայ երրորդին էլ ուղարկեց. նորանք նորան էլ խոցեցին և դուրս հանեցին:

13 Այդպ տէրն ասաց. ի՞նչ անեմ. իմ սիրելի որդիս կուղարկեմ՝ լինի թէ սորա նից ամաչեն:

14 Մշակներն երբոր նորան տեսին՝ իրար հետ խորհուրդ արին և ասացին. սա է ժառանգն. սպանենք սորան. որ ժառանգութիւնն մեզ լինի:

15 Եւ այդպն (քաղէն) դուրս հանեցին նորան և սպանեցին. ապա այդպ տէրն ի՞նչ պիտի անէ նորանց:

16 Չէ՞ որ կըգայ և էն մշակներըն կըկորցնէ և այգին ուրիշներին կըտայ, երբոր էս լսեցին՝ ասացին. քաւ լինի:

17 Եւ նա մտիկ տուաւ նոցանց և ասաց. ապա ի՞նչ է էն որ գրված է՝ թէ էն քարն՝ որ շինողներն անարգեցին՝ նա եղաւ անկիւնի գլուխ:

18 Ամէնայն՝ որ ընդ հարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։

19 Եւ խնդրէին գլխաւորքն և քահանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու, և երկեան ՚ի ժողովրդենէն. զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն։

20 Եւ ապա սպասեցին, և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարըս ունել. զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ ՚ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորի։

21 Հարցին զնա և ասեն. վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն՝ այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես։

22 Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ։

23 Եւ նայեցեալ ընդ խրատանկութիւնն նոցա ասէ ցնոսա.

24 Ցուցէք ինձ զդահեկանն. և նոքա ցուցին. և ա-

18 Ամէն՝ ով որ ես քարիս վերայ ընկնի՝ կըփշրվի՝ և ում վերայ որ (նա) ընկնի՝ կըջարդէ նորան։

19 Եւ կարդացօղներն և քահանայապետներն հենց էն ժամուն (ուհաւնուն) ուզում էին, որ ձեռք ձգեն նորա վերայ և ժողովըրդից վախեցան. ինչու որ՝ գիտացին որ՝ իրանց համար ասաց էն առակըն։

20 Եւ ապա սպասեցին և նենգաւոր մարդիկ ուղարկեցին՝ որ կեղծաւորութենով իրանց անձներըն արդար երևացրին. որ խօսքով բռնեն նորան՝ որ մատնեն նորան դատաւորի տէրութեանն և իշխանութեանն։

21 Նորան հարցրին և ասացին. վարդապետ. գիտուս մենք, որ շիտակ ես խօսում և սովորցնում և երեսպաշտութիւն չես անում. բայց ճշմարտութենով Աստուծոյ ճանապարհըն սովորցնում ես։

22 Արժա՞ն է մեզ՝ որ կայսերին հարկ տանք, թէ չէ։

23 Եւ նորանց չարութիւնըն տեսնելով՝ ասաց նորանց. (ինչո՞ւ էք փորձում ինձ.)

24 Ցոյց տուէք ինձ էն դահեկանըն. և նորանք ցոյց

սէ · զՅլը պատկեր և զդիր ունի · պատասխանի ետուն և ասեն՝ զկայսեր ։

25 Եւ նա ասէ ցնոսա · արդ երթայք տուք զկայսերն կայսեր , և զԱստուծոյն Աստուծոյ ։

26 Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն · և զարմացեալ ընդ պատասխանին նորա լռեցին ։

27 Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն , որք հակառակ կէին չլինել յարուցմեան , հարցին ցնա՝

28 Եւ ասեն · վարդապետ Մովսէս գրեաց մեզ , եթէ ուրուք եղբայր մեռանիցի , ունիցի կին և անորդի լիցի , զի առնուցու եղբայր նորա ըզ կինն , և յարուսցէ զաւակ եղբօր իւրում ։

29 Արդ՝ եօթն եղբարք էին · և առաջնոյն առեալ կին մեռաւ անորդի ։

30 Եւ զնա և երկրորդն , մեռաւ և նա անորդի ։

31 Եւ զնա և երրորդն · նոյնպէս և եօթանեքին · և ոչ թողին որդիս ։

32 Մեռաւ և կինն ։

տուին · և ասաց · Ճշմ պատկերըն և գիրըն ունի (սա) · պատասխան տուին և ասացին · կայսերին ։

25 Եւ նա ասաց նորանց · տուեալ գնայջք կայսերինըն կայսերին տուէք , և Աստուծունըն Աստուծոյ ։

26 Եւ չկարացին խօսքեր ըմբռնել նորան ժողովրդեան առաջին · և նորա պատասխանին վերայ զարմացան և լռեաց ։

27 Սադուկեցիներիցն՝ որ հակառակումին թէ յարութիւն չկայ , մին քանիսն մօտ եկին և նորան հարցրին ։

28 Եւ ասացին · վարդապետ · Մովսէն գրեց մեզ · թէ որ մէնի եղբայրն մեռնի , որ կին ունենայ , և անորդի լինի՝ որ նորա եղբայրն էն կինըն առնէ և իրան եղբօր համար զաւակ վերկացնէ ։

29 Ապա՝ եօթն եղբարք կային՝ և առաջինն կին առաւ և առանց զաւակի մեռաւ ։

30 Երկրորդն էլ նորան առաւ , և նա էլ առանց զաւակի մեռաւ ։

31 Երրորդն էլ նորան առաւ · էնպէս հենց էն եօթն էլ , և որդի չըթողին ։

32 Եւ ամէնիցն ետև էն կինն էլ մեռաւ ։

33 Արդ՝ ի յարութեան ո՛վ նոցանէ լինիցի կին. զի եօթանեքեան կալան զնա կին։

34 Պատասխանի եւ ասէ ցնոսա Յիսուս եւ ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն՝ եւ արանց լինին։

35 Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել՝ եւ յարութենէն որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն, եւ ոչ արանց լինին։

36 Վասնզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ եւ որդիք Աստուծոյ. քանզի յարութեան որդիք են։

37 Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ Տէր Աստուածդ աբրահամու եւ զԱստուածդ սահակայ եւ զԱստուածդ յակովբայ։

38 Ոչ Աստուած է մեռելոց՝ այլ կենդանեաց, զի ամենեքեան նմա կենդանի են։

39 Պատասխանի եւսն ոմանք ի դպրացն եւ ասեն.

33 Ապա յարութեան ժամանակաւն նորանցիկ ո՞րին պիտի լինի կին. ինչուա որ՝ եօթն եղբ կին առին նորան։

34 Յիսուս պատասխան արաւ նորանց եւ ասաց. Ես աշխարհքիս որդիքն կին են առնուն եւ մարդոյ են գնուն։

35 Բայց նորանք որ արժանի լինին եղեն աշխարհքին հասնելոյ եւ մեռելներէն միջին յարութիւն առնելոյ. ոչ կին կառնեն եւ ոչ մարդոյ կըգըննան։

36 Պատճառն որ՝ եղ չեն կարօղ մեռնիլ. ինչուա որ՝ հրեշտակներուն հաւասար են և Աստուծոյ որդիք, նրանմար որ յարութեան որդիք են։

37 Բայց դրահամար թէ մեռելներն յարութիւն կառնեն՝ Մովսէսն եղ մարգարէացաւ մոշի մօտն՝ ինչպէս որ տէրն համար առումէ Աստուած աբրահամու և Աստուած սահակայ և Աստուած յակոբայ։

38 Ոչ Աստուած մեռելներուն չէ՝ բայց կենդանիներուն. ինչուա որ՝ ամէնքն կենդանի են նորան։

39 Կարգացողներէցն մին ըսին պատասխան տուին նո-

վիբդապետ՝ բարուք ասա-
ցեր ։

Ա0 Եւ ոչ եւս ոք իշխեր հար-
ցանել զնա՝ եւ ոչ ինչ ։

Ա1 Ասէ եւ առ նոսա ։ զի-
ՀԱրդ սահն զՔրիստոսէ՝ ԹԷ
որդի է դաւիթ ։

Ա2 Զի ինքն դաւիթ ասէ
ի գիրս սաղմոսաց՝ ասաց Տէր
ցՏէր իմ , նիստ ընդ աջմէ
իմմէ ,

Ա3 Մինչեւ եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց ։

Ա4 Իսկ արդ՝ եթէ դաւիթ
զնա Տէր կոչէ , զիարդ որդի
նորա իցէ ։

Ա5 Եւ լսելոյ ամենայն ժո-
ղովրդեանն ասէ ցաշակերտ-
սն ։

Ա6 Զգայք ձերոցք ի դպը-
րացն , որ կամին պատմուճա-
նօք շրջել , և սիրեն ողջոյնս
ի հրապարակս և դնախաթիռ-
ս ի ժողովուրդս և զբարձ
երէցս յընթերս ։

Ա7 Որ ուտեն զտունս այր-
եաց , և պատճառանօք յեր-
կարեն զաղօթս . նոքա ըն-
կալցին աւելի դատաստանս ։

բան և ասացին . վիբդապետ՝
լաւ ասացիր ։

Ա0 Եւ եղ խոկի մինն չէր
համարձակիլ՝ որ նորանից
խոկի մին բան հարցնել ։

Ա1 Եւ նորանց էլ ասաց ։
ԹԷ չգիտեն են ասում ՀՔրիստոսի
համար՝ ԹԷ դաւիթ որդին
է ։

Ա2 Եւ դաւիթ ինքն սաղ-
մոս գրքումն ասում ։ Տէրն
իմ Տէրին ասաց՝ ԹԷ իմ աջ
կողմն նստիր ,

Ա3 Մինչեւ որ քո թշնամի-
ներըդ քո ոտացդ կոխելիք
դնեմ ։

Ա4 Ուպա՝ ԹԷ որ դաւիթն
Տէր է կոչում նորան . ինչ-
պէս նորա որդի կըլինի ։

Ա5 Եւ ամէն ժողովրդի ա-
ռաջին որ լսում էին՝ ասաց
աշակերտներին ։

Ա6 Զգայք կացէք կարդա-
ցողներից որ լայն կապանք-
ով կամենում մանդալ և
սիրում բաց տեղերանքումն
բարև առնելըն ։ և ժողո-
վարանների մէջն առաջին ա-
թոռներըն և ընթրիքներումն
վերևի տեղերըն ։

Ա7 Որ որբևնչիների որբևէ-
րիների տներըն ուտում են,և
պատճառներով երկար աղօթք
են անում . նորանք աւելի դա-
տապարտութիւն կընդունին ։

ԳԼ· ԻԱ·

1 Եւ հայեցեալ եաես ըզ-մի ծառուձան՝ որ արկանէին պտուղս իւրեանց՝ ի գանձանակսն ։

2 Եւ եաես և զկին մի այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս ։

3 Եւ ասէ· արդարև ասեմ ձեզ· զի այրին այն աղքատ՝ աւելի արկ քան զամենեսին ։

4 Զի ամենեքին նոքա՝ ի մըթերից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ· բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ ։

5 Եւ յոմանց ասելն զմանոյ պատճարէն, թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ·

6 Այդ զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար՝ ի քարէ վերայ, որ ոչ քակեսցի ։

7 Հարցին զնա և ասեն· վարդապետ՝ ե՞րբ լինիցի այդ և ո՞րն նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ ։

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հարուստներն՝ որ իրանց տուրքերն գանձանակն էին քցում ։

2 Մին որբևէրի աղքատ կին էլ տեսաւ՝ որ երկու լումայ քցել էնտեղ ։

3 Եւ ասաց· Ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ թէ էն աղքատ որբևէրին ամէնքից աւելի քցեց ։

4 Ինչու որ՝ նորանք ամէնքն իրանց աւելցածներից քցեցին Աստուծոյ ընծաների մէջն՝ բայց նա իրան կարօտութենից իրան բոլոր կեանց ապրուստըն՝ որ ունէր՝ քցեց ։

5 Եւ երբոր մին քանի մարդ ասում էին տաճարի համար՝ թէ գեղեցիկ քարերով և աշտարակներով (քարջէրով) զարդարված է, նա ասաց ։

6 Էդ ամէնըդ որ տեսնում էք՝ օրեր կըգան՝ որ էդ տեղ քար քարի վերայ չի թողվիլ՝ որ չըքանդվի ։

7 Հարցրին նորան և ասացին· վարդապետ՝ էդ ե՞րբ կըլինի· և ի՞նչ է նշանն երբոր էդ պիտի լինի ։

8 Եւ նա ասէ · զգոյշ կացէք , մի խաբիցիք · զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝ Թէ ես եմ · և մերձեաւ ժամանակ , մի երթայցէք զկնի նոցա ։

9 Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք · զի պարտ է նախ այնմ լինել · այլ ոչ առ ժամայն կատարած ։

10 Յայնժամ ասէ ցնոսա · յարիցէ ազգ յազգի վերայ , և թագաւորութիւն՝ ի թագաւորութեան վերայ ։

11 Եւ շարժմունք մեծամեծք · և ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք , եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից ։

12 Բայց յառաջ քան զայս ամենայն , մեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ՝ և հալածեսցեն . մատնեսցեն ի ժողովուրդս և ի բանտս , և տանիցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ ։

13 Եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն ։

14 Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրճել տա-

8 Եւ նա ասաց · զգոյշ կացէք՝ որ չըխաբվիք · ինչու որ՝ շատ մարդիք կըգան իմ անունովս և կասեն՝ Թէ ես եմ · և ժամանակն մոտեցաւ · նորանց հետևէք մի գնաք ։

9 Եւ երբոր կռիւներ և խռովութիւններ կըլսէք՝ մի շխռմվիք · ինչու որ՝ պէտք է, որ առաջ էն լինի , բայց դեռ շուտով վերջն չէ ։

10 Էն ժամանակն նորանց ասաց · ազգ ազգի վերայ վեր կըկենայ և թագաւորութիւն թագաւորութեան վերայ ։

11 Եւ մեծամեծ դեռնաշարժութիւններ և տեղ տեղ սովեր և սաստիկ մահեր (կըլինին) · և երկնքիցն սոսկալը բաներ և մեծամեծ նշաններ կըլինին ։

12 Բայց էս բաներիցս առաջ իրանց ձեռներըն ձեզ վերայ կըձգեն և կըհալածեն (և) ժողովարանների և բանտերի մէջ կըմատնեն , և կըտանեն դատաւորներն և թագաւորների առաջին՝ իմ անունիս համար ։

13 Էն կըլինի ձեզ վկայութեան համար ։

14 Լաւեմն ձեր սրտի մէջ դրէք՝ որ առաջուց միտք չա-

լոյ պատասխանի։

15 Զի ես տայ ձեզ բե-
րան և իմաստութիւն, որ-
ում ոչ կարիցեն կալ հակա-
ռակ՝ կամ տալ պատասխանի
ամենայն հակառակորդքն ձեր։
16 Մատնեսջիք և ի ծնո-
ղաց և հարցից և յազգա-
կանաց և ի բարեկամաց, և
սպանանիցեն ի ձենջ։
17 Եւ եղիջիք ատելք
յամենեցունց վասն անուան
իմոյ։
18 Եւ մազ մի ի գլխոյ ձեր-
մէ ոչ կորիցէ։
19 Եւ համբերութեամբ
ձերով սասցիք զոգիս ձեր։
20 Այլ յորժամ տեսանիք
զձեզ շուրջ պատեալ զօրօք
զերուսաղէմ, յայնժամ գի-
տասջի՛ք թէ մերձ է աւեր
նորա։
21 Յայնժամ որ ի հրէաս-
տանի իցեն՝ փախիցեն ի լե-
րինս, և որ ի միջի նորա ի-
ցեն՝ խուսեսցեն, և որ ի գա-
ւառսն իցեն՝ մի մտցեն ի նա։

22 Զի աւուրք վրէժխնդ-
րութեան են այնոքիկ՝ առ ի
կատարելոյ ամենայն գրելոյ։
23 Բայց վա՛յ իցէ յղեաց և

նէք պատասխան տալոյ հա-
մար։
15 Ինչու որ՝ ես բերան և
իմաստութիւն կըտամ ձեզ,
որ ձեր ամէն հակառակողներն
չեն կարենալ դէմ կենալ
կամ պատասխան տալ նորան։
17 Կըմատնըվիք եղ ծնօղնե-
րից և եղբարներից և ազ-
գականներից և բարեկամնե-
րից, և ձեզանից կըսպանեն։
17 Եւ ամէնին ատելի կըլի-
նէք իմ անունիս համար։
18 Եւ ձեր գլխից մին մազ
չի՛ կորչիլ։
19 Եւ ձեր համբերութիւ-
նովն ձեր հոգին կըշահէք։
20 Բայց երբոր կըտեսնէք
թէ երուսաղէմ չորս կողմովն
պատած է զօրքերով՝ էն ժա-
մանակն գիտացէք թէ նորա
քանդվիլն մօտիկ է։
21 Էն ժամանակն նորանք՝
որ հրէաստանումն են՝ թող
սարերն փախչին, և նորանք՝
որ նորա միջումն են՝ թող
դուրս քաշվին, և նորանք՝
որ նորա գաւառներումն են՝
թող չի մտնեն նորա մէջն։
22 Ինչու որ՝ էն (օրերն)
վրէժ խնդրելոյ օրերն են՝ որ
ամէն գրվածներն կատարվին։
23 Բայց էն օրերումն վա՛յ

ամենդոսաց յաւուրսն յայնո-
սիկ · զի եղիցի տագնապ մեծ
՝ի վերայ երկրի, և բարկու-
թիւն ժողովրդեանն այսմիկ ։

24 Եւ անկցին ՝ի սուր սու-
սերի, և գերեսցին յամենայն
հեթանոսս · և երուսաղէմ ե-
ղիցի կոխան յազգաց՝ մինչև
կատարեսցին ժամանակք հե-
թանոսաց ։

25 Եւ եղիցին նշանք յա-
րեգակն և ՝ի լուսին և յաս-
տեղս · և յերկրի տագնապ հե-
թանոսաց՝ յահեղ բարբա-
ռոց եր֊ովս և ծովոյ և խռով֊
թեան ։

26 Ցնդանելոց ոգւոց մարդ-
կան յերկիւղ և ՝ի կարծեաց
եկելոց ՝ի վերայ տիեզերաց ·
զի զօրութիւնք երկնից շար-
ժեսցին ։

27 Եւ յայնժամ տեսցեն
զորդի մարդոյ եկեալ՝ ամ-
պով զօրութեամբ և փառօք
բազմաւք ։

28 Եւ յորժամ սկսանիցի
այս լինել, ամբարձէք և
բարձրացուսջիք զգլուխս ձեր,

կըլինի յազգաց֊ներին և ծին֊
ուռազներին · ինչու որ՝ մեծ
նեղութիւն կըլինի երկրիս
վերայ և (Աստուծոյ) բար֊
կութիւնն էն ժողովըրդին
վերայ ։

24 Եւ սրի բերան կընկնին
և ամէն հեթանոսներուն մէջ
գերի կըտանվին · և երուսա֊
ղէմ հեթանոսներուին կոխ֊
ուած կըլինի մինչև որ՝ հե֊
թանոսներուն ժամանակներն
կատարվին ։

25 Եւ նշաններ կըլինին,
արեգակումն և լուսնումն և
աստղներումն՝ և երկրումս
հեթանոսներուն սաստիկ ահ և
վախ (կըլինի) ինչպէս ծովուն և
խռովութեան ահաւոր ձայնե֊
րուն ։

26 Որովհետև մարդկանց
հոգիքն դուրս կըգան վախի
համար և էն բաներուն մոխիկ
տալու համար՝ որ բոլոր աշ֊
խարհքի վերայ պիտի գան ·
ինչու որ՝ երկնքի զօրութիւն֊
ներն կըշարժվին ։

27 Եւ էն ժամանակն կը֊
տեսնեն որդին մարդոյ ամպե֊
րի վերայ եկած զօրութեամբ
և շատ փառքով ։

28 Եւ երբոր էս բաներս
կըսկսին լինել՝ վեր կալէք և
բարձրացրէք ձեր գլխե֊

ղի մերձ է փրկութիւն ձեր։

29 Ու ասայ առակ մի նո-
ցա. տեսէք զթզենիդ և զա-
մենայն ծառ.

30 Զորժամ ցուցանիցեն ըզ-
պտուղ իւրեանց, տեսանէք՝
և ի ձեզանէ գիտէք, եթէ
մերձ է ամառն։

31 Նոյնպէս և դուք՝ յոր-
ժամ տեսանիցէք զայս ամե-
նայն եղեալ՝ գիտասջիք, թէ
մերձ է արքայութիւնն Աս-
տուծոյ։

32 Ամէն ասեմ ձեզ. թէ
ոչ անցցէ ազգս այս, մինչև
այս ամենայն լինիցի։

33 Երկինք և երկիր անց-
ցեն, և բանք իմ ոչ անցա-
նիցեն։

34 Զգոյշ լերուք անձանց,
գուցէ ծանրանայցեն սիրտք
ձեր շուայտութեամբ և ար-
բեցութեամբ և հոգւոյք աշ-
խարհականաք, և յանկարծա-
կի հասանիցէ ի վերայ ձեր
օրն այն.

35 Զի իբրև զորոգայթի
հասանիցէ ի վերայ ամենե-
ցուն, որ բնակեալ են ընդ
ամենայն երեսս երկրի։

36 Արթուն կացէք այսու-

ներըդ. ինչու որ՝ ձեր փրկու-
թիւնն մօտ է։

29 Ու նորանց մին առակ
ասաց. տեսէք թզըկի ծառըն
և ամէն ծառերըն.

30 Երբոր իրանց պտուղըն
երևացնումեն՝ տեսնումէք և
նորանցից գանաչումէք, թէ
ամառն մօտ է։

31 Նոյնպես էլ դուք՝ երբոր
էս ամէն բաներըս էլած տես-
նէք՝ գիտացէք, որ Աստու-
ծոյ արքայութիւնն մօտ է։

32 Ճշմարիտըն ասումեմ
ձեզ՝ թէ էս պորտս չի՛ անց-
կենալ, մինչև որ՝ էս ամէն
բաներըս լինին։

33 Երկինքն և երկիրս անց-
կըկենան և իմ խօսքերս չեն
անցկենալ։

34 Զգոյշ կացէք անձնե-
րիդ՝ որ ձեր սրտերն չըծան-
րանան շատակերութեանով և
արբեցութեանով և աշխարհ-
ական հոգսերով, և էն օրն
յանկարծ գանգ ձեզ վերայ.

35 Ինչու որ՝ (գինց) որո-
գայթի (թակէն) պես կըգաս-
նէ էն ամէնին վերայ՝ որ բո-
լոր երկրի երեսին վերայ
բնակված են։

36 Արթուն կացէք,

հետև, յամենայն ժամ աղօթելով ալաբէք · պի արժանի լինիջիք պերձանել յայնմ յամենայնէ՝ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ ։

37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ապանէր ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց ։

38 Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն՝ լսել ի նմանէ ։

ամէն ժամանակ աղօթելով աղաչէք, որ արժանի լինիք ազատվիլ էն ամէն բաներէյն՝ որ պիտի լինին, և կանգնիլ որդւոյ մարդոյ առաջին ։

37 Եւ յերեկն տաճարումն սովորցնուէր և գիշերներն դուրս էր գալիս և կենուէր էն սարուն՝ որ ձիթենեաց (սար) էր կոչվուէր ։

38 Եւ ամէն ժողովուրդն առաւօտանց շուտով գնուէր տաճարն նորա մօտ՝ որ նորանից բան լսէ ։

ԳԼ· ԻՌ ։

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր պասքա։

2 Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա · բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի ։

3 Ապա եմուտ սատանայ ի Յուդա ի կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ի թուոյ երկոտասանիցն ։

4 Զոգաւ եղ բանս ընդ քահանայապետսն՝ և ընդ զօրապիրս՝ և ընդ իշխանս ժողովրդեանն, պի մատնեսցէ զնա նոցա ։

1 Բաղարջակերաց տօնն մօտեցաւ՝ որ պասքա էր կոչվուէ ։

2 Եւ քահանայապետներն և կարդացօղներն խնդրուէին՝ թէ ինչպէս սպանեն նորան · բայց ժողովրդէյն վախենուէին ։

3 Ապա սատանան մտաւ իսկարիոտացի տասն՝ Յուդայի մէջ՝ որ տասներկուսի թիւն էր ։

4 Գնաց գնաց քահանայապետներն և կարդացօղներն և ժողովրդի իշխաններին հետ խօսք կապեց՝ որ նորան մատնէ նորանց ։

5 Եւ խնդացին, եւ խոստացան տալ նմա արծաթ։

6 Եւ յանձն առ, եւ խընդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն։

7 Ելին օր բաղարջակերաց, յորում օրէն էր զոհուել զպասեքն։

8 Եւ առաքեաց զՊետրոս եւ զՅովհաննէս եւ ասէ. երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք։

9 Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք։

10 Եւ ասէ ցնոսա. ահա իբրեւ մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջի՛ք զհետ նորա ի տունն, յոր մտանիցէ.

11 Եւ ասասջի՛ք ցտանուտէրն տանն. վարդապետ ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ։

12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատունն մի մեծ զարդարեալ, անդ պատրաստեսջի՛ք։

5 Եւ նորանք ուրախացան եւ խոստացան՝ որ արծաթ տան նորան։

6 Եւ նա խօսք տուաւ եւ յարմար ժամանակ էր ուզում՝ որ նորան ամբոխից (խալխից) հեռու դատճ մատնէ նորանց։

7 Հաղարջակերաց օրն եկաւ՝ որ օրէնք էր պասէքըն (զատկի գառնըն) նորանում մորթել։

8 Եւ պետրոսին եւ յոհաննէսին ուղարկեց եւ ասաց. գնացէք պասէքըն պատրաստեցէք մեզ համար որ ուտենք։

9 Եւ նորանք ասացին. ո՞ւր տեղ ես կամենում՝ որ պատրաստենք։

10 Եւ նորանց ասաց. ահա երբոր քաղաքն կըմտնէք՝ մին մարդ կըպատահի ձեզ ջրի կուժը վերկալած. նորա ետեւէն գնացէք էն տունն՝ որ նա կըմտնէ.

11 Եւ էն տան տիրոջն ասացէք. վարդապետն ասում է քեզ. ո՞ւր է իմ վէր գալոց տեղն՝ որ նորա նում պասէքն ուտեմ իմ աշակերտներիս հետ։

12 Եւ նա մին մեծ զարդարված վերնատունն ցոյց կըտայ ձեզ, եւ էն տեղ պատրաստեցէք։

13 Եւ գնացեալ զտին որպէս և ասացն նոցա · և պատրաստեցին զպասեքն ։

14 Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ , և երկոտասան առաքեալքն ընդ նմա ։

15 Եւ ասէ ցնոսա · ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ ։

16 Ասացց ասեմ ձեզ , թէ ոչ և ես կերայց ՚ի սմանէ՝ մինչև լցցի յարքայութեան Աստուծոյ ։

17 Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ· առէք զայդ՝ և բաժանեցէք ՚ի ձեզ ։

18 Ասեմ ձեզ՝ թէ չայամ հետէ ոչ արբից ՚ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ ։

19 Եւ առեալ հաց գոհացաւ՝ եբեկ և ետ նոցա և ասէ · այս է մարմին իմ , որ վասն բազմաց աուեալ · զայս արասջիք առ իմոյ յիշատակի ։

20 Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ՝ և ասէ· այս բաժակ է նոր ուխտ ի մոլ արեամբ վասն ձեր հեղլոյ ։

13 Եւ գնացին էնպէս գտին՝ ինչպէս որ ասաց նորանց · և պատեքըն պատրաստեցին ։

14 Եւ ժամն (ահաւնէն) որ էլաւ՝ սեղան նստեց · և տասներկու առաքեալներն էլ նորա հետ ։

15 Եւ նորանց ասաց · ցանկանալով ցանկացայ՝ որ էս պատեքըս ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվելուցն առաջ ։

16 Ասացց ասումեմ ձեզ՝ թէ սորանից էլ չեմ ուտիլ՝ մինչև որ՝ կատարվի Աստուծոյ արքայութենումն ։

17 Եւ բաժակըն (խաւըն) առաւ՝ գոհացաւ և ասաց · առէք գորան և ձեր միջումն բաժանեցէք ։

18 Ասումեմ ձեզ՝ թէ սրաննից եաև որթի (վեչի) բերքիցն չեմ խմիլ՝ մինչև որ՝ Աստուծոյ արքայութիւնն գայ ։

19 Եւ հաց առաւ , գոհացաւ , կորեց և նորանց տըւաւ և ասաց· ես է իմ մարմինս՝ որ շատերին համար տըվվոլումէ · էս արէք · իմ յիշատակիս համար ։

20 Նոյնպէս էլ ընթրիքիցն եաև բաժակըն (խաւըն) առաւ , և ասաց · էս բաժակս նոր ուխտ և պայման է իմ արիւնով՝ որ ձեզ համար թափվումէ ։

21 Բայց առասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս ։

22 Եւ որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ , բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն մատնիցի ։

23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ ։

24 Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա . թէ ո՞ ի նոցանէ համարիցի մեծ ։

25 Եւ նա ասէ ցնոսա . թագաւորք ազգաց տիրեն նոցա . եւ որ իշխենն նոցա՝ բարեբարբք կոչին .

26 Այլ դուք ոչ այնպէս այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ կրտսերն , եւ առաջնորդն իբրեւ պատաւորն ։

27 Որ է մեծ , քան զառնլոն՝ եթէ պատաւորն . ոչ ապա քեզ բազմացայն . բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր ։

28 Եւ դուք էք՝ որ յանգ կացիք ընդ իս ի փորձութիւնս իմ .

29 Եւ ես ուխտեմ ձեզ՝ որ-

21 Բայց ահա իմ մատնողի ձեռն ինձ հետ է սեղանոյս ։

22 Եւ որդին մարդոյ կերթայ նայ ինչպէս որ՝ սահմանված է . բայց վայ է մարդոյն՝ որ նորա ձեռովն կը մատնուի ։

23 Եւ նոքանք սկսեցին հարցնել իրանց միջումն՝ թէ իրանցիցի ոմն է նա՝ որ պիտի էն բանն գործէ ։

24 Նորանց միջումն հակառակութիւն էլ եղաւ՝ թէ իրանցիցի ոմն պիտի մեծ համարվի ։

25 Եւ նա ասաց . ազգերի թագաւորներն տիրապետում են նորանց վերայ , և նորանք՝ որ իշխանութիւն են անում նորանց վերայ՝ բարերար են կոչվում ։

26 Բայց դուք էնպէս չէ . այլ ով որ ձեր միջումն մեծ է՝ թող փոքրի պէս լինի , և առաջնորդն ծառայի պէս ։

27 Որ է մեծ . սեղան նստողն , թէ ծառան . չէ՞ որ սեղան նստողն . բայց ես՝ ձեր միջումն ծառայի պէս եմ ։

28 Եւ դուք էք , որ միշտ ինձ հետ էիք իմ փորձութիւններումս ։

29 Եւ ես հաստատ խոս-

պէս և հայր իմ ուխտեայ լինիմ
զարքայութիւն ։

30 Ձի ուտիցէք և ըմպիցէք
ի սեղան իմ յարքայութեանն
իմում, և նստիցիք յերկո-
տասան աթոռս՝ դատել զեր-
կոտասան ազգս իսրայէլի ։

31 Եւ ասէ Տէր · սիմոն սի-
մոն՝ ահա սատանայ խնդրեաց
զձեզ խարբալել իբրև զցո-
րեան ։

32 Ասէ ես աղաչեցի վասն
քո՝ զի մի պակասեսցին հա-
ւատք քո · և դու երբեմն
դարձցիս՝ և հաստատեսցես
զեղբարս քո ։

33 Եւ նա ասէ ցնա · Տէր՝
ընդ քեզ պատրաստ եմ և ի
բանտ և ի մահ երթալ ։

34 Եւ նա ասէ ցնա · ասեմ
քեզ պետրէ, չիցէ այսօր հա-
ւեռ խոսեալ՝ մինչև երիցս
ուրասցիս զիս չգիտել ։

35 Եւ ասէ ցնոսա · յոր-
ժամ առաքեցի զձեզ առանց
քսակի և մախաղի և կօշկաց,
միթէ կարօտացայք իմիք ։

36 Եւ նոքա ասեն · և ոչ
իմիք · ապա ասէ · այլ այժմ
որ ունիցի քսակ՝ զառնիցէ,
տանուսիմ ձեզ արքայութիւ-
նըն ինչպէս որ՝ հայրն էլ ինձ
հաստատ խոստացաւ ։

30 Որ ուտէք և խմէք իմ
սեղանիս վերայ իմ արքայու-
թեննուս · և տասներկու ա-
թոռի վերայ նստէք՝ իսրա-
յէլի տասներկու ցեղին դա-
տաստան անելոյ համար ։

31 Եւ Տէրն ասաց · սիմոն
սիմոն · ահա սատանան ուզեց՝
որ ձեզ խախալէ ցորենի պէս ։

32 Բայց ես աղաչեցի քեզ
համար՝ որ քո հաւատքդ չը-
պակասի · և դու մին ժամանակ
դառնաս և քո եղբարներըդ
հաստատես ։

33 Եւ նա ասաց նորան ·
Տէր · ես պատրաստ եմ՝ որ
քեզ հետ հենց բանտի (պա-
տէն) և մահի մէջ էլ գնամ ։

34 Եւ նա ասաց նորան · ա-
սում եմ քեզ պետրէ, որ ես
օր դեռ որ հաւն չբլաւացել,
դու երեք անգամ կուրանաս
չըգիտել լինիս ։

35 Եւ նորան ասաց · երբոր
ուղարկեցի ձեզ առանց քսա-
կի, և պարկի և կօշիկների՝
միթէ կարօտացաք մին բանի ։

36 Եւ նորանք ասացին · խա-
կի մին բանի էլ · ապա ա-
սաց · բայց հիմիկ ով որ քսակ

նոյնպէս և մխալ. և որ ոչն ունելի, վաճառեսցէ զնորս իւր՝ և գնեսցէ իւր սուսեր։

37 Ասացի ձեզ. զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճռեալ է։

38 Եւ նորա ասեն. Տէր՝ ահաւասիկ են աստ երկու սուրք. և նա ասէ ցնոսա. բաւական են։

39 Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ՚ի լեառն ձիթենեաց. գնացին զհետ նորա և աշակերտքն։

40 Իբրև եհաս ՚ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօթս կացէք չմտանել ՚ի փորձութիւն։

41 Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրև քարբնկէց մի, եդ ծունր՝ կայր յաղօթս,

42 Եւ ասէր. Հայր՝ եթէ կամիս անցո զբաժակս գայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոդ լիցին։

43 Երևեցաւ նմա հրեշտակ

ունի, թէպէտ վեր առնէ, էնպէս էլ պարկը, և ով որ չունի՝ թէպէտ իրան շորերըն ծախէ և իրան համար սուր գնէ։

37 Ասացի ձեզ, թէ էս էլ որ գրված է, պէտք է որ կատարվի ինձանով թէ անօրէններին հետ համարվեցաւ. պատճառն որ՝ ինչ որ ինձ համար ասված է՝ գլուխ է եկած։

38 Եւ նորանք ասացին. Տէր ահա էստեղ երկու սուր կայ. և նա ասաց նորանց. բաւական են։

39 Եւ դուրս էլաւ իրան սովորութեան պէս գնաց ձիթենեաց սարն՝ աշակերտներն էլ նորա ետևէն գնացին։

40 Երբոր էնտեղն հասաւ՝ նորանց ասաց. աղօթք արէք՝ որ փորձութեան մէջ չըմտնէք։

41 Եւ ինքն նորանցից հեռացաւ մին քար քցելոց չափով՝ ծունր դրաւ՝ աղօթք էր անում.

42 Եւ ասում. Հայր՝ եթէ կամենում՝ էս բաժակը (Ասըշն) անցկացրու ինձանից. միայն թէ՝ ոչ իմ կամքս՝ բայց քո (կամքդ) լինի։

43 Եւ հրեշտակ երևեցաւ

յերկինից՝ և զօրացուցանէր զը-
նա · և էր ՚ի տապնապի , և
մտադիւրութեամբ ևս կայր
յաղօթս ։

Ջ4 Եւ հոսկին ՚ի նմանէ
քրտունք իբրև զկայլակս ա-
րեան՝ ոլոռն ոլոռն , հեղեալ
յերկիր ։

Ջ5 Եւ յարուցեալ յաղո-
թիցն՝ եկն առ աշակերտսն ,
եգիտ զնոսա ՚ի քուն ՚ի տրտո-
մութենէն ·

Ջ6 Եւ ասէ ցնոսա · զի՞ նըն-
ջէք , արիք կայէք յաղօթս՝
զի մի՛ մտանիցէք ՚ի փորձու-
թիւն ։

Ջ7 Եւ մինչդեռ խօսէր ,
ահաւասիկ ամբոխ · և որ կո-
չէրն Յուդա՝ մի յերկոտասա-
նից՝ առաջնորդէր նոցա ։
Իբրև մերձեցաւ առ Յիսուս
համբուրեաց զնա · քանզի
զայն նշան տուեալ էր նոցա,
թէ ընդ որում ես համբու-
րեցից , նա է՝ զնա ունի-
ցիք ։

Ջ8 Ասէ ցնա Յիսուս · Յու-
դա՝ համբուրելով մատնես
զորդի մարդոյ ։

Ջ9 Իբրև տեսին՝ որ զնովա-
ւրն էին՝ որ ինչ եղեւն , ա-

նորան երկնքիցն , և զօրաց-
նուժքը նորան , և մեռնելոյ
չափ խռովութեան մէջ էր
և աւելի ջանքով աղօթք էր
անուն ։

Ջ4 Եւ քրտունքն վաղուժքը
նորանից, ինչպէս արիւնի կա-
թիլք՝ որ կլոր կլոր երկրի
վերայ էին թափվում ։

Ջ5 Եւ աղօթքիցն վերկա-
ցաւ եկաւ աշակերտներին
մօտ և նորանց քնի մէջն
գտաւ տրտմութեան պատ-
ճառովին ·

Ջ6 Եւ նորանց ասաց · ին-
չու էք քնում · վերկացէք
աղօթք արէք , որ փորձու-
թեան մէջ չըմտնէք ։

Ջ7 Եւ դեռ որ խօսումըր՝
ահա ամբոխ (խուռն), և նա
որ յուդա էր կոչվում էն
տասներկուսիցն մինն առաջ-
նորդումըր նորանց · երբոր
մօտեցաւ Յիսուսին՝ համ-
բուրեց նորան · պատճառն
որ՝ էն նշան էր տուել նո-
րանց , թէ որին որ ես կըս-
համբուրեմ՝ նա է՝ նորան
բռնեցէք ։

Ջ8 Յիսուս նորան ասաց ·
յուդա համբուրելով ես որ-
դին մարդոյ մատնում ։

Ջ9 Երբոր նորանք՝ որ նորա
հետն էին՝ տեսին ինչ որ է-

սեն ցնա . Ցի՛ր՝ հարցուք ըզ-
նասա սրով :

50 Լու. եհար ա՞ն՝ ի նո-
ցանէ զքահանայապետին ձա-
ուդ , և ի բաց եհան զաջդ
սենդն նորա :

51 Պատասխանի՛ր Յիսուս
և ասէ . Լի՛ղ սուր մինչև
ցայդ վայր . և մատուցեալ
յուշկին՝ բժշկեաց զնա :

52 Լու. ասէ ցկեհալոն՝ ի վե-
րայ նորա՝ զքահանայապետ-
սէն և ցիշխանս տաճարին և
ցծերս , իբրև ի վերայ ա՛ռա-
պելի եկիք սուսերօք և բռօք :

53 Զաւուրս ընդ ձեզ եմ
ի տաճարին , և ո՛չ ձգեցիք
ձեռս ի իս . այլ ա՛յս է ձեր ժամ
և իշխանութիւն խաւարի :

54 Լու. կալեալ զնա՝ տա՛ր
և մուծին ի տուն քահանա-
յապետին . և պետրոս եր-
կիւղ գնաց նորա հետևողն :

55 Իբրև էսուին կրակ ի մէջ
դահլիճին՝ և նստան չուրջ ,
նստաւ և պետրոս ի մէջ նո-
ցա :

56 Լու. զնա ապախին ա՛ն-
դր նստեալ առ լոյսն , հայեցաւ
ընդ նա և ասէ . և սա ընդ
նոսա էր՝ որ ընդ նմա՛ն էին :

լաւ՝ նորան ասացին . Ցի՛ր
սրով զարկի՞ք նորան՝ :

50 Լու. նորանցմէ մէնն քա-
հանայապետի ծառային զար-
կեց և նորա աջ ականջն
կտրեց :

51 Յիսուս պատասխանե՛ր
և ասաց . Լի՛ղ սուրը
մինչև եղ տեղը . և ակա-
ջին մատեցաւ և բժշկեց
նորան :

52 Լու. իրան վերայ եկած
ներին , քահանայապետներին
և տաճարի իշխաններին և
ծերերին ասաց . ինչպէս մէն
աւազակի վերայ դուրս եկիք
սրերով և բշրլներով :

53 Ամէնօր ձեզ հետ էի
տաճարումն , և ձեռներըս
չերկնեցիք ինձ վերայ . ես է
ձեր ժամն (սահմանն) և իշ-
խանութիւն խաւարի :

54 Լու. նորան բռնեցին տա-
րան և մացրին քահանայա-
պետի տունն . և պետրոս հե-
ռուանց գնում էր նորա հետն :

55 Երբոր սրահի մէջն կրակ
վառեցին և իրար կողմով
նստեցին , պետրոսն էլ նստեց
նորանց միջումն :

56 Մէն ապախին (զբաղած)
տեսաւ նորան՝ որ լոյսով մօ
նստած էր . մտիկ տուաւ նո-
րան և ասաց . սա էլ նորանց
հետ էր՝ որ նորա հետն էին :

57 Իսկ պետրա ուրացաւ և ասէ · Ոչ, պիտի չնա կին դուս

58 Էր ։ Յետ սակաւ մըն, ալ մի եաես զնա , և ասէ · և դուս ի նոցանէ ես , և պետրոս ա սէ · Այր դուս՝ չիմ ինոցա նէ ։

59 Էր ։ Իբրև ժամ մի անց ի վերայ , ալ ոմն վիճէր և ասէր · ապդ և սա ընդ նմա էր , քանզի գալիլեացի է ։

60 Ըսէ պետրոս · Այր դուս՝ չգիտեմ զինչ խոսիսդ · և առ ժամայն մինչդեռ նա զայն ասէր , խոսեցաւ հաւ ։

61 Դարձաւ Տէր՝ և հայե ցաւ ի պետրոս · և յիշեաց պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա · մինչչև հաւուս խո սեալ իսկ , երիցս ուրացցես զիս գիտել զինէ ։

62 Էր ելեալ արտաքս՝ և լաց դառնապէս ։

63 Էր ։ արքն , որ պահէին զնա , սկսան առնել զնովաւ , և հարկանէին ։

64 Ծածկէին զերեսս նորա և առնջէին ։ և հարցանէին զնա և ասէին · մարգարէացո՝ զի՞նչ է որ զքեզ հարկանէ ։

57 Իսկ պետրոս ուրա ցաւ և ասաց · Ոչ կին · ես նորան չեմ գիտեմ ։

58 Էր ։ Միւրիշ մի ուրիշն տեսաւ նորան և ա սաց · դուն ալ նորանցիկ ես և պետրոս ասաց · Ով մարդ՝ ես նորանցիկ չեմ ։

59 Էր ։ երբոր մէկ ժամ (սա հաւ) վերայ անցկացաւ մէկ ուրիշն հաստատութիւնը և ա սաւ՝ , չըսուակ , որ սա ալ նո րա հետն էր · ինչու որ գալի լեացի է ։

60 Պետրոս ասաց · Ով մարդ՝ չեմ գիտեր իմ դուս ինչ ես խոսում ։ և հենց էն ժամուն դեռ որ նա էն ա սում էր՝ հաւն խոսեց ։

61 Տէրն դարձաւ և մտիկ տուաւ պետրոսին և պետրոսն միտքն բերաւ Տէրի էն խոս քըն որ ասաց նորան՝ Մէկ հաւն դեռ չը խոսաց , երեք ան դամ կուրանաս չգիտեիր ինձ ։

62 Էր ։ դուրս գնաց և դառն արտասուքով լաց ե ղաւ ։

63 Էր ։ մարդիկն՝ որ նորան պահում էին՝ նոքա էին ա նում նորան և գործում ։

64 Աչքը երեսն նորան ծածկեին և չարչարում էին նորան հարցնելով՝ և ասում ։

մարգարէացիր ինձ է նա՝ որ քեզ պարկեց։

65 Եւ ուրիշ շատ բաներ հայհոյանքով խօսուէին նորա դէմ։

66 Եւ երբոր առաւօտ է՝ ամէն ժողովրդի ծերերն և քահանայապետները և դպիրները ժողովեցան և նորան հանեցին տարան իրանց ատեանն և ասացին՝ Եթէ որ դու Քրիստոսն ես՝ ասա մեզ։

67 Եւ նորանց ասաց՝ Եթէ որ ասեմ ձեզ՝ չէք հաւատալ,

68 Եւ եթէ որ միւս բան հարցնեմ ձեզ՝ ինձ պատասխան չէք տալ կամ արձակել։

69 Հայց սրանից հետև որդին մարդոյ՝ Աստուծոյ զօրութեան աջ կողմն կը նստի։

70 Եւ ամէնքն ասացին՝ ուրեմն դու ես Աստուծոյ որդին։ Եւ նա ասաց նորանց՝ դուք էք ասում՝ որ ես եմ։

71 Եւ նորանք ասացին՝ էլ ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, մի մեզէն իսկ լսեցինք նորա բերանից։

ԳԼՈՒԽ ԻԳ։

1 Եւ նորանց ամէն բազ-

1 Եւ յարուցեալ ամենայն

բազմութիւնն նոցա, ածին զնա առ պիղատոս։

2 Եւ սկսան չարաբանս լինել զնմանէ եւ ասել. զսա զայս գտաք խոտորեցուցանող զազգս մեր, եւ արգելուցիչ՝ ի տալոյ հարկս կայսեր, եւ ասէր զանձն՝ եւ թէ Քրիստոս իւրէ թագաւոր։

3 Իսկ պիղատոս եհարց զնա եւ ասէ. դուն ես թագաւորն հրեից. նա պատասխանի եւ նմա եւ ասէ. դու ասացեր։

4 Ասէ պիղատոս ցքահանայապետսն եւ ցժողովուրդսն. չգտանեմ ինչ մեղս յայսմ մարդոյ։

5 Եւ նոքա պնդէին եւ ասէին, եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամենայն հրէաստան՝ սկսեալ ի գալիլեայ մինչեւ ցայսր։

6 Իսկ պիղատոս իբրեւ լսեաւ զգալիլեայ, եհարց՝ եթէ գալիլեացի իւրէ այր է։

7 Եւ իբրեւ գիտաց՝ թէ յիշխանութենէ հերովդի է, եւ առաքեալ զնա առ հերովդէս. քանզի եւ նա յերուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։

մութիւնն վերկացաւ եւ նոքա առան պիղատոսի մեծ։

2 Եւ սկսեցին չարաբանել թիւն առել նորանից եւ ասել. սոքա գտինք՝ որ մեր ազգին ծռումէր՝ եւ արգելուցիչ կայսերին հարկ տալոյն, եւ ինքն իրան համար ասէ՝ թէ Քրիստոս թագաւոր է։

3 Բայց պիղատոս հարցը՝ բուց նորան եւ ասաց. դուն ես հրեից թագաւորն. նա պատասխան առաւ նորան եւ ասաց. դու ասացիր։

4 Պիղատոս ասաց քահանայապետներին եւ ժողովրդին. ես՝ մին գտա չեմ գանում էս մարդուս մէջ։

5 Եւ նորանք սաստկացուցին եւ ասում՝ թէ ժողովրդներըն խռովացնում եւ բոլոր հրէաստանի մէջն սովորցնում գալիլեայից սկսած մինչեւ էսաեղս։

6 Բայց պիղատոս երբոր գալիլեայի համարլսեց՝ հարցրուց. եթէ էդ մարդդ գալիլեացի է։

7 Եւ երբոր իմացաւ՝ թէ հերովդէսի իշխանութենիցն է. տանիլ առաւ նորան հերովդէսի մօտ. ինչու որ՝ նա էլ էն օրերումն երուսաղէմումն էր։

8 Ւր հերովդէան իբրև եա՛ւ զՅիսուս, ուրախ եղև յոյժ. զի կամէր ի բա՛ւական ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում՛ անգամ զնմանէ, և ակն ունէր նշան ինչ լինել[a] տեսա՛նել ի նմանէ։

9 Հարցանէր զնա բանիւք բազմօք. և նա ոչ ինչ ետ նմա պատասխանի։

10 Կային քահանայապետքն և դպիրք՝ և պնդապետն լարեալ զնմանէ։

11 Արհամարհեաց զնա և հերովդէս հանդերձ իւրովք զօրականաւքն. և այպն արա՛բեալ, արկ զնովաւ հանդերձ լոյս ապիատակա, և ետ տանել անդրէն առ պիղատոս։

12 Ւր եղեն բարեկամք պիղատոս և հերովդէս յաւուրն յայնմիկ. քանզի յառաջ թշնամի՛ք եին միմեանց։

13 Կոչեաց պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն,

14 Ւր ասէ ցնոսա. ածիք մա՛ռուցիք ինձ զայրս զայս իբրև զխռովարեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ ա՛

8 Ւր հերովդէսն՝ երբոր Յիսուսին տեսաւ՝ շատ ուրախ եղաւ. ինչու որ շատ ժամանակից ի՛ւր ալ կ՛ուզէր զանիկա տեսնել. որովհետև լսած էր զանի՛կա, ու յուսով էր որ՝ շատ անգամ նորա համար լուսնէն, և սպասումի՛ն որ միւն նշան տեսնէ նորանից եղած։

9 Շատ խօսքերով հարցուռնուէր նորան՝ և նա իսկի միւն պատասխան չտուաւ նորան։

10 Քահանայապետներն և կարգաւորներն կանգնած էին և շատ սաստիկ չարախօսում՛ էին նորանից։

11 Հերովդէսն էլ իրան պիռնուրներին հետ անարգեց նորան. և ծաղր անելով՝ միւն սպիտակ շոր քցից նորա վրայ և յետ տանիլ տուաւ պիղատոսի մօտ։

12 Ւր պիղատոս և հերովդէս բարեկամ էլան էն օրուն՝ ինչու որ առաջ իրար հետ թշնամի էին։

13 Պիղատոս կանչից քահանայապետներին և իշխաննե՛րին և ժողովրդին,

14 Ւր ասաց. դուք ինձ մօտ բերիք էս մարդը ինչպես ժողովրդի մոլորեցնող. և ահա ձեր առաջին

առջի ձեր դաստեցայ , և ինա
ինչ չ՝ գան յառնա յայսմիկ
ղօրդ դուք չարախոսեցէք ըս-
դմանէ ։

15 Ոչ և չ՝ հերսիցես ,
քանզի եառ առնել զդա առ
նա ։ և արդ՝ չ՝ ինչ մահու
արժանի է գործեալ դորա ։

16 խրատեցից զդա , և ար-
ձակեցից ։

17 Ո՞վ հարկ էր ի մի լսա
ածիլ արձակել նոցա ։

18 Իւ նոքա ազազակէին ա-
մենայն բազմալեամբն՝ և
ասէին ։ քարկ զդա՝ և ար-
ձակեա մեզ զբարաբբա ։

19 Որ էր վասն խառնու-
լեան իրիք եղեալ ի քաղա-
քին և սպանուլեան մտեալ
՝ի բանտ ։

20 Դարձեալ պիղատոս
սկսաւ խոսել ։ քանզի կամէր
արձակել զՅիսուս ։

21 Իւ նոքա անդրէն ազա-
զակէին և ասէին ։ ՝ի խաչ
հան զդա ։

22 Իւ նա երիցս ասէ ցնոսա
զի՞նչ չար արար սա՝ չ՝ ինչ
ինա մահու գոլ ՝ի սմա ։ ըզ-
բաստեցից զսա և արձակեցից ։

դաստեցի՝ և խակի ինաս չի-
գրոխ էս մարդասէս էն բանե-
րին համար , որ դուք չա-
րախոսեցիք դորանից ։

15 Իւ չ՝ եղ հերսիցան ։
ինչու որ՝ դորան ածիլ տուի
նորա մեռ ։ և ահա խակի մեռ-
նելոց արժանի բան չի՝ գոր-
ծել դա ։

16 Կըխրատեմ դորան՝ և
կարձակեմ ։

17 Պատճառն որ՝ ածի ժո-
ղովուրդն հարկաւոր էր՝
որ մին մարդ արձակէ նորանց
համար ։

18 Իւ նորանք ամէն բազ-
մութեամբն ազազակուեցին և
ասում ։ դորան վեր առ և
բարաբ բացին արձակիր մեզ
համար ։

19 Իր նա քաղաքումն էլած
խառնուլեան և մարդասպա-
նուլեան համար բանան էր
մտել ։

20 Պիղատոսն միւն էլ սկսեց
խոսել ։ ինչու որ՝ կամենում
էր արձակել Յիսուսին ։

21 Իւ նորանք միւն էլ ա-
զազակուեցին և ասում ։ խաչ
հանիր դորան ։

22 Իւ նա երեք անգամ ա-
սաց նորանց ։ ի՞նչ չար բան
գործեց սա ։ խակ մեռնելոց
ինաս չի՝ գտի սորանում ։ կըխը-
րատեմ սորան և կարձակեմ ։

23 Եւ նորա սոխակին մեծաձայն՝ եւ խնդրելին զնա ի խաչ հանել, եւ զօրանային բարբառք նոցա եւ քահանայապետքն։

24 Եւ պիղատոս հաւանեցաւ առնել զկայցուածս նոցա։

25 Արձակեաց նոցա զբարբաջն՝ զոր վասն խռովութեան եւ սպանութեան արկեալ էր ի բանդ, զոր եւ խնդրելին իսկ։ Եւ զՅիսուս մատնեաց կամաց նոցա։

26 Երբեւ առին զնացին զնա, բռնաւորելին զումն սիմոն կիւրենացի՝ որ գայր յանդէպ, եւ դին ի վերայ նորա զխաչն բերել զկնի Յիսուսի։

27 Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, եւ կանանց՝ որ կոծելին եւ աշխարհէին զնա։

28 Դարձաւ Յիսուս եւ ասէ ցնոսա։ դուստերք երուսաղէմի՝ մի լայք ի վերայ իմ, այլ լայք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց։

29 Զի ահաւասիկ աւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի ամ-

23 Եւ նորանք բարձր ձայնով սոխակոծէին եւ խնդրուէին՝ որ խաչ հանէ նորան՝ եւ նորանց եւ քահանայապետներն ազաղակէին զբռնաւորէին։

24 Եւ պիղատոս հաւանեցաւ՝ որ նորանց խնդիրքն առնէ։

25 Խարաբբային արձակեց նորանց համար՝ որ խռովութեան եւ մարդասպանութեան համար բանտի մէջ էր քցված՝ որ նորանք էլ հենց նորան էին խնդրում. եւ Յիսուսին մատնեց նորանց կամայն։

26 Երբոր նորան առին գնային, մին սիմոն կիւրենացի (ասած) մարդ բռնեցին՝ որ յանդիպի էր գալիս, (և) խաչն նորա վերայ դրին, որ Յիսուսի հետևէն բերէ։

27 Եւ շատ ժողովուրդ էր գնում նորա հետևէն, և կանայք էլ՝ որ կոծ և սուգ էին նորա վերայ։

28 Յիսուս դարձաւ և նորանց ասաց, երուսաղէմի աղջիկներ՝ լաց մի լինիք ինձ վերայ՝ այլ լաց էլէք ձեր անձերիդ և ձեր որդոց վերայ։

29 Ինչու որ՝ օրեր գըտան

լոց և որովայնիկ՝ որ ոչ ծը-
նան, և սեռանց՝ որ ոչ դիե-
ցուցին ։

30 Յայնժամ սկսանիցին ա-
սել ընդ միմեանս թէ անկերպս
ի վերայ մեր, և բլուրոց՝ թէ
ծածկեցէք զմեզ ։

31 Զի եթէ ընդ փայտ դա-
լար զայս առնեն, ընդ չորն
ո՞ինչ լինիցի ։

32 Ածին և այլ երկուս չա-
րագործս՝ սպանանել ընդ նը-
մա ։

33 Իբրև չոքան ի տեղին՝
գոչեցեալ գագաթին, անդ հա-
նին զնա ի խաչ. և զչարա-
գործսն զմին ընդ աջմէ՝ և զ-
մըն ընդ ձախմէ խաչեցին ։

34 Իսու Քեսուս ասէ. Հայր՝
թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն՝
զինչ գործեն։ Իսու ի բաժա-
նել զհանդերձս նորա, որ-
կին վիճակս ։

35 Իսու կայր ժողովուրդն
հայեցեալ. անգամնէին զնա
իշխարքն հանդերձ նոքօք՝ և
ասէին. զայլս ապրեցոյց, ա-
պրեցուսցէ և զանձն՝ եթէ դա
է Քրիստոս որդի Աստուծոյ

որ նորանգամ կասեն՝ թէ
երանի ամուլներին (չքնեքնե-
րին) և են փորերին, որ չը-
ծնան, և են ծընդերին, որ չը-
ծրծացրին ։

30 Իսն ժամանակն կսկսեն
ասել սարերին՝ թէ մեզ վե-
րայ ընկէք, և բլուրներին՝ թէ
ծածկեցէք մեզ ։

31 Քնչու որ՝ եթէ կանանջ
փայտին էս են անում, ապա
չորին ինչ կըլինի ։

32 Ուրիշ երկու չարագործ
մարդիկ էլ տարան, որ նո-
րա հետ սպանեն ։

33 Իրբոր եկին կնտեղն՝ որ
գագաթին էր կոչվում՝ էն-
տեղ խաչ հանեցին նորան.
և էն չարագործներըն էլ, մի-
նը աջ կողմն և մեկելը ձախ
կողմն խաչեցին ։

34 Իսու Քեսուս ասաց. Հայր՝
ների՛ նոցա. քնչու որ՝ չեն գիտում թէ
ինչ են անում. և երբոր
նորա չորերըն բաժանում էին,
վիճակ քցեցին ։

35 Իսու ժողովուրդն կանգ-
նած նայում էին. իշխաններն
նորանց հետ ծաղր էին ա-
նում՝ և ասում. ուրիշնե-
րին ապրեցրուց՝ թո՛ղ իրան
անձըն էլ ապրեցնէ՝ եթէ

ընտրեալն ։

36 Այլն առնէին զնա և դնէաւորքն , եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ ։

37 Եւ ասէին . եթէ դու ես թագաւորն հրէից՝ փրկեա զանձն քո ։

38 Եւ էր գիր գրեալ՝ ի վերայ նորա՝ յունարէն և հռոմայեցերէն և եբրայեցերէն գրով , եթէ սա է արքայն հրէից ։

39 Իսկ մի ոմն՝ ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա , և ասէր . ո՞չ դու ես Քրիստոս՝ փրկեա զանձն քո և մեզ ։

40 Պատասխանի եւս ընկերն միւսոյն սաստելով նմա և ասէ . չերկնչի՞ս դու Աստուծոյ՝ զի ի նմին պատժի կաս ։

41 Եւ մեք յիրաւի , զի արժանի՝ որոյ գործեցաքն՝ առնեմք դիպուածս . և սա ոտիբառ ինչ ոչ գործեաց ։

42 Եւ ասէ Յիսուս . յիշեա զմեզ Տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով ։

43 Եւ ասէ ցնա Յիսուս . ամէն ասեմ քեզ . այսօր ընդ

դա է Քրիստոս , Աստուծոյ ընտրեալն ։

36 Զինուորքն էլ ծաղր էին առնում նորան . և մօտ գալով քացախ էին տալիս նորան ։

37 Եւ ասում . թէ որ դու հրէից թագաւորն ես՝ փրկիր քո անձդ ։

38 Եւ դիր էր գրված նորա վերայ , յունարէն , լատիներէն և եբրայեցերէն գրով , թէ սա է հրէից թագաւորն ։

39 Եւ էն կախված չարագործներից մինն հայհոյում էր նորան և ասում . չէ՞ որ դու ես Քրիստոսն . փրկիր քո անձդ և մեզ էլ ։

40 Նորա ընկերն պատասխանի տուաւ սաստելով նորան՝ և ասաց . չե՞ս վախենում դու Աստուածանից . որ դու հէնց էն պատժի մէջն ես ։

41 Եւ մենք իրաւունքով . ինչու որ՝ մեր արած գործքերին արժանի հատուցումն ենք առնում . և սա խիկ անիրաւ բան չգործեց ։

42 Եւ Յիսուսին ասաց . Տէր յիշիր երբոր քո թագաւորութեանովդ գաս ։

43 Եւ Յիսուս ասաց նորան . Ճշմարիտն ասում

թա իսկս ՚ի գրաքաղին ։

44 Եւ եը իբրև վերերորդ ժամ. և խաւար եղև ՚ի ամենայն երկիրն մինչև ցիններորդ ժամ. խաւարեցաւ արեգակն ։

45 Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ ։

46 Եւ կարդաց Յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. Հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. զայս եբրև ասաց, եհան զոգի։

47 Եւ տեսեալ հարիւրապետն՝ զոր ինչ եղեն, փառաւորէր զԱստուած՝ և ասէ. արդարև այրս այս արդար էր ։

48 Եւ ամենայն ժողովուրդքն՝ որ եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն՝ և լսէին, բաղձին զկուրծս՝ և դառնային ։

49 Այլին և ամենայն ծանօթքն նորա ՚ի հեռաստանէ. և կանայք, որ եկեալ էին ընդհետ նորա ՚ի գալիլեէ՝ տեսանէին զայն ։

50 Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեպարծ և արդար ։

քեզ, թէ էս օր ինձ հետ դրախտումն կրկնիս ։

44 Եւ վեց ժամին (ժամ՝ն ին) դէմ էր. և ամէն երկրի վրայ խաւար էլաւ մինչև ինն ժամն. արեգակն խաւարեցաւ ։

45 Եւ տաճարի վարագուրն մէջիցն պատառվեցաւ ։

46 Եւ Յիսուս մեծ ձայնով կանչեց և ասաց. Հայր իմ հոգիս քո ձեռքդ եմ աւանդում. երբոր էս ասաց. հոգին հանեց ։

47 Եւ հարիւրապետն՝ որ տեսաւ ինչ որ էլաւ. Աստուծոյն փառք տուաւ և ասաց. շիտակ որ՝ էս մարդս արդար էր ։

48 Եւ ամէն ժողովուրդներն, որ եկիլ էին և էն էլած բաներըն տեսնումէին, կուրծքերըն (բօշերըն) թափ-կումէին և կիտ էին դառնում ։

49 Եւ նորա ամէն ծանօթներն էլ հեռուանց կանգնած էին և էն կանայքն էլ, որ գալիլեայից նորա եաւէն էին եկիլ՝ և տեսնումէին էն ։

50 Եւ ահա մին մարդ՝ յոսէփ անուն՝ որ խլման էր՝ բարեպարծ և արդար մարդ.

51 Այ չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. Յարիմաթեայ քաղաքէ հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ:

52 Այս մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Ցիսուսի.

53 Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ, և եդ ի կառածոյ գերեզմանին. ուր չէր բնաւ ոք եդեալ:

54 Եւ օրն էր ուրբաթի, և շաբաթի լուսանայր:

55 Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի գալիլեէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նորա:

56 Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանդարտեցին ըստ պատուիրանին:

51 Այս չէր միաբանվել նոցանց խորհուրդին և գործքերին հետ. հրէականի քաղաքիցն (էր)՝ որ հենց ինքն էլ սպասումէր Աստուծոյ արքայութեանն:

52 Այս գնաց պիղատոսի մօտ և Ցիսուսի մարմինը խնդրեց:

53 Եւ վէրբերաւ նորան ամբիւ կտաւով պատեց և քարից փորած գերեզմանի մէջ դրաւ՝ որ էն տեղ էլ իսկի մին մարդ դրած չէր:

54 Եւ օրն ուրբաթին էր և շաբաթի էր լուսանում:

55 Եւ էն կանայքն՝ որ գալիլեայիցն նորա հետ էին եկել՝ գնումէին նորա ետևէն՝ տեսին գերեզմանը և թէ ինչպէս դրվաւ նորա մարմինը:

56 Ցետ դարձան և խունկեր և իւղեր պատրաստեցին. և շաբաթի օրումն հանդարտեցին պատուիրանքի պատճառովն:

ԳԼ. ԻԴ:

1 Այլ միշաբաթուն վաղքաջ ընդ առաւօտն եկին ի գերեզմանն. բերին զոր պատրաստեցին և այլ կանայք ընդ նոսա.

1 Այլ մէկ շաբթի օրումն առաւօտանոց կանուխ եկին գերեզմանն, և բերին էն խընկերը, որ պատրաստեցին. և ուրիշ կանայք էլ նորանց հետ:

2 Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ՝ ի դերեզմանէն առ՝
3 Եւ մտեալ՝ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։
4 Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նոսա՝ ի հանդերձս լուսաւորս։
5 Եւ երբեմն զահի հարան, և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս։
6 Չ՚ա՛ստ՝ այլ յարեաւ. յիշեցէ՛ք՝ որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էին՝ ի գալիլեայ,
7 Եւ ասէր՝ Թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնիլ՝ ի ձեռս մարդոյ մեղաւորաց, և ի խաչ ելանել՝ և յերրորդ աւուր յառնել։
8 Եւ յիշեցին զբանսն նորա։
9 Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մեսասանելոցն, և այլոց ամենեցուն։
10 Եւ էին մարիամ մագդաղենացի և յովհաննա և

2 Եւ քարըն գերեզմանիցն հեռու թօղաբած գտին։
3 Եւ ներս մտին և Տէր Յիսուսի մարմինըն չը՛գտին։
4 Եւ երբոր նրահամար շատ զարմանումէին՝ ահա երկու մարդ հասին նորանց լուսաւոր շորերով։
5 Եւ երբոր ահով լցան և իրանց երեսներըն դեպի երկիրն խոնարհացրին՝ նորանց ասացին. *ինչի՞ եք կենդանին մեռելների մէջն խնդրում։
6 Չ՚ասեղ չէ. բայց յարութիւն առաւ. մտքընդ բերէք ինչպէս որ (նա) ձեզ հետ խօսեց՝ երբոր դալիլեայումն էր։
7 Եւ ասումէր՝ թէ պէտք է, որ որդին մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռքն մատնվի և խաչ հանվի և երեք օրումն յարութիւն առնէ։
8 Եւ նորա խօսքերըն յիշեցին։
9 Եւ յետ դարձան և էս ամէն բաներըս պատմեցին տասնուէմընին և ամէն ուրիշներին։
10 Եւ (նորանք) էին մարիամ մագդաղենացին, և

մարիամ Յակոբայ, և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն։

41 Իսկ երևեցան առաջի նո- ցա շաղիափուխիւն բանքն նոցա՝ և չհաւատացին նոցա։

42 Ելոյց պետրոս յարու- ցեալ ընդ ամենայն ի գերեզմա- նէն, և հայեցեալ տեսանէ բա- կաւառն լոկ՝ ի կային. և դար- նայ՝ ընդ միտս դարմանալ՝ թէ ինչ եղև։

43 Իսկ ահա երիսուք ի նո- ցանէ երթ ային ի քաղաքն ի գիւղ մի, որ հեռի էր յե- րուսաղէմէ վաթսուն ասպա- րիսք, և էր անուն նորա Եմմաուս։

44 Իսկ նորա խոսէին ընդ միմեանս վասն ամենայն ա- յիցն անցելոց։

45 Իսկ եղև ընդ խոսելն նո- ցա և ընդ միմեանս՝ և Յիսուս ինքն Հասեալ ընդ նոսա։

46 Իսկ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա։

47 Իսկ ասէ ցնոսա. զինչ են բանքդ՝ զոր ունիք ընդ միմեանս՝ մինչ դեռ յօհաննան, և յակոբայ մա- րիամ և նորանց հետ ասէին՝ նոքա էլ՝ որ էս բանըս պատ- մեցին առաքեալներին։

41 Իսկ նորանց ասածներն առասպելական խոսք երևե- ցաւ նորանց առաջին և չէին հաւատում նորանց։

42 Ելոյց պետրոսն վերկա- ցաւ վազեց գերեզմանն՝ և նայելով տեսաւ՝ որ կտաւներն միայն կային, և գնաց զար- մանալով իրան մտքումն՝ թէ ինչ էլաւ։

43 Իսկ ահա նորանցից եր- կու հոգի հենց էն օրսն մի գիւղ էին գնում՝ որ վաթ- սուն ասպարեզով (տանկիլոմ) երուսաղէմից հեռու էր, և նորա անունն էմմաուս էր։

44 Իսկ նորանք իրար հետ խոսում էին ամեն անցկա- ցած բաների համար։

45 Իսկ էլաւ երբոր նորանք խոսում էին և հակառակում հենց Յիսուս ինքն էլ մօ- տեցաւ՝ և գնում էր նորանց հետ։

46 Իսկ նորանց աչքերն բռնված էին՝ որ չէ՛ճանա- չէին նորան։

47 Իսկ նորանց ասաց. էդ ինչ խոսքեր են՝ որ դուքանց համար իրար հետ հակառա-

գնացըր՝ և արամաձ կը։

18 Պատասխանի՝ ու ան
ի՛նոյանէ՝ ըսում՝ անուն կը
կղեօվատ, և ասէ ցնա. դուն
միայն կաս յերուսաղէմ՝, որ
չ՚գիտցեր զինչ գործեցաւ
ի՛նձա յաւուրս յայսոսիկ։

19 Եւ ասէ ցնոսա. զի՞նչ.
և նորա ասին. զՅիսուսէ նա
զղիցեցւոյ, որ եղև այր մար-
գարէ՝ հղօր արդեամբը և
բանիւբ առաջի Աստուծոյ,
և ամենայն ժողովրդեանն։

20 Իրպէս մատնեցին զնա
քահանայապետքն և իշխանքն
մեր ի յատաստան մահու՝
և հանին զնա ի խաչ։

21 Մենք ակն ունէաք՝ թէ
նա է՝ որ փրկելոյն էր զիս-
րայէլ. այլև հանդերձ այսու
ամենայնիւ, այս երրորդ օր
է՝ յորմէ հետէ այն գործե-
ցաւ։

22 Այլև կանայք ոմանք ի
մեջ պարմայուցին զմեզ.
որք կանխեալ ընդ առաւօտս
եղան ի գերեզմանն,

23 Եւ ոչ գտին զմարմինն
նորա՝ եկին և ասին. թէ և
տեսիլ ևս հրեշտակաց տեսին,

կուռքէ դնողց ժամանակն.
և արամաձ կը։

18 Պատասխան տուաւ ան
բանիս մէն, որ նորա անունն
կղեօպաս կը, և ասաց նո
րան. միթէ երուսաղէմումն
դու միայնակ ես մեացեալ՝ որ
չիմացար էն բաներն, որ ես
օրերումն գործուեցաւ նորա
նում։

19 Եւ նա ասաց նորանց.
ի՞նչ. և նորանք ասացին.
Յիսուս նազովրեցւոյ համար՝
որ մի մարգարէ մարդ էլաւ
զօրաւոր՝ գործքերով և խօս
քերով Աստուծոյ և ամէն
ժողովրդի առաջին։

20 Թէ ինչպէս մեր քահա
նայապետներն և իշխաններն
մահի պատասխանին մատնեցին
նորան և խաչ հանեցին նորան։

21 Մենք յոյս ունէինք թէ
նա է՝ որ իսրայելին պիտի
փրկէ. բայց էս ամէնից վե
րայ, էս երեք օր է՝ որ էն
գործուեցաւ։

22 Եւ էլ մեր միջիցն մի
քանի կանայք զարմայրեցին մեզ.
որ առաւօտուն կանուխ գե
ղացին գերեզմանն,

23 Եւ նորա մարմինը չգըտ
նին. եկին և ասացին. թէ
հրեշտակների տեսիլք էլ տե

որք ասէին զնմանէ՝ [illegible] կենդանի է ։

24 Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս, որպէս և կանայքն ասացին. բայց զնա ոչ տեսին ։

25 Եւ նա ասէ ցնոսա. Ո՛վ անմիտք և հեզդասիրտք ի հաւատալ յամենայնի, զոր խոսեցան մարգարէքն ։

26 Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարիլ Քրիստոսի, և մտանել ի փառս իւր ։

27 Եւ սկսեալ ի Մովսէսէ և յամենայն մարգարէից, մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ ։

28 Եւ մերձեցան ի գեօղն յոր երթային, և նա պատրաստէր հեռագոյն ևս ուրեք երթալ ։

29 Եւ բռնադատեցին զնա՝ և ասեն. առ մեզ գիր, զի լոյս երեկս է՝ և տարաժամեալ է օր, և եմուտ ա՛ռնել անդ ընդ նոսա ։

30 Եւ եղև ի բազմիլն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, երբեկ և եւս նոցա։

31 Եւ նոցա բացան աչք՝ և ծանեան զնա. և նա եղև

սին՝ որ նորա համար ասէ մէին՝ [illegible] կենդանի է ։

24 Եւ մեզանից մին քանի գնացին գերեզմանն և հենց էնպէս գտին, ինչպէս որ կանայքն ասացին՝ բայց նորան չտեսին ։

25 Եւ նա ասաց նորանց. Ո՛վ անմիտներ և [illegible] ներ հաւատալու էն ամէն բաներին՝ որ մարգարէները խոսեցին ։

26 Չէ՞ որ պէտք էր՝ որ հենց էնպէս Քրիստոսն չարչարվի և իրան փառքն մտնէ։

27 Եւ սկսեց մովսէսից և ամէն մարգարէներից, մեկնեում նորանց ամէն՝ ինչ որ գրված էր իրան համար։

28 Երբ որ մօտեցան էն գիւղին, որ գնում էին՝ նա էնպէս ցոյց էր տալիս՝ [illegible] ա՛լի հեռու տեղ է գնալու ։

29 Եւ բռնադատեցին նորան և ասացին. մեզ մտա՛ հետ, [illegible] որ իրիկուն է և օրս անց է կացել՝ և մտաւ որ նորանց հետ էտեղ մնայ ։

30 Եւ էլաւ երբ որ նոնորանց հետ սեղան նստեց՝ հացըն առաւ, օրհնեց, կարեց և տուաւ նորանց ։

31 Եւ նորանց աչքերն բացվան և նորան ճանաչե-

ի նոցանէ անբևեռելի ։

32 Իսւ ասէն ցմիմեանս. ճշ
մարիտ և սիրտք մեր ջմլէին ի
մեզ՝ մինչ խոսէրն ընդ մեզ
ճանապարհայն . և ճրպէս
բանայր մեզ զգիրս ։

33 Իսւ յարուցեալ նոյն
ժամայն՝ դարձան Երուսա
զեմ , և գտին ժողովեալ զմի
ասասնան՝ և զորս ընդ նո
սայն էին ։

34 Իսւ ասէն՝ Թէ արդարև
յարեաւ Տէր՝ և երևեցաւ
սիմովնի ։

35 Իսւնոքա պատմէին զայն՝
որ ճանապարհայն , և Թէ
ինքն ծանօթացաւ նոցա ի
բեկանել հացին ։

36 Մինչդեռ զայն խոսէին,
ինքն իսկ Ցիսուս եկաց ի
միջ նոցա՝ և ասէ ցնոսա .
խաղաղութիւն ընդ ձեզ . ես
եմ , մի երկնչիք ։

37 Իսւ զահի հարեալ երկիւ
չէին . և համարէին ոգի ինչ
տեսանել ։

38 Իսւ ասէ ցնոսա . զի՞
խռովեալ էք՝ և ընդէ՞ր խոր
հուրդք ելանեն ի սիրտս ձեր

յին և նա անբևեռելի էլաւ
նորանցից ։

32 Իսւ իրաւ ասացին . չէ՞
որ հնոց մեր սրտերս հալվու
մէին մեզանում , երբոր ճա
նապարհումն մեզ հետ խո
սում՝ և ինչպէս գրքերըն
բաց էր անում մեզ համար։

33 Իսւ շուռալ վերկացան
յետ գարձան երուսաղէմ, և
էն ասանուամբնին ժողոված
գտին և նորանց , որ էլ նո
րանց հետ էին ։

34 Իսւ ասացին. Թէ իրաւ
որ՝ Տէրն յա բուեթիւն առաւ՝
և երևեցաւ սիմանին ։

35 Իսւ նորանք պատմում էին. որ ճանապարհումն էլաւ, և Թէ ինչպէս իրան ճանա չացրուց իրանց հաց կարելոց ժամանակին ։

36 Դեռ քանի որ էս խո սում էին , հենց ինքն Ցիսուս կանգնեց նորանց միջումն և նորանց ասաց . խաղաղու թիւն (լինի՛) ձեզ հետ՝ ես եմ , մի վախենաք ։

37 Իսւ ահով լցուած վախե ցան՝ և համարումէին Թէ հո գի են տեսնում ։

38 Իսւ նորանց ասաց . ին չո՞ւ էք շփոթ ված՝ ինչու՞ հա մար խորհուրդներ են վեր կենում ձեր սրտերումն ։

39 Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։

40 Եւ զայս ասացեալ՝ ետ նոցա զձեռսն և զոտս։

41 Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի խնդութենէն և զարմանային, ասէ ցնոսա. ունիք ինչ կերակուր աստ։

42 Եւ նոքա եդին նմա ձկան խորովելոյ մասն, և խորիսխ մեղու։

43 Եւ առ՝ եկեր առաջի նոցա, և զմնացորդսն ետ նոցա։

44 Եւ ասէ ցնոսա. այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ դեռ ձեզն էի, թէ պարտ է կատարել ամենայն գրեալ օրէնսդոյն Մովսիսեան և ի մարգարէսն և ի սաղմոսսն վասն իմ։

45 Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս։

46 Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոսի, և յառնել ի մեռելոց

39 Տեսէք իմ ձեռներըս և ոտներըս՝ որ հենց ես եմ, բռնեցէք ինձ և տեսէք. ինչու որ հոգին մարմին և ոսկերք չունի, ինչպես որ ինձ տեսնուելիք որ ունիմ։

40 Եւ ես որ ասաց՝ ձեռներըն և ոտներըն ցոյց տուաւ նորանց։

41 Եւ դեռ չեն որ չեին հաւատում ուրախութենէն և զարմացած էին. նորանց ասաց. խակի կերակուր ունիք հասել։

42 Եւ նորանք խորոված ձկան կտոր տուին նորան և մեղրի հացի կտոր։

43 Եւ առաւ կերաւ նորանց առաջին, և աւելցածներըն տուաւ նորանց։

44 Եւ ասաց նորանց. ես էն բաներն են՝ որ ձեզ հետ խոսեցի՝ քանի որ ձեզ հետ էի՝ թէ ամէն պէտք է կատարուի որ մտած օրէնքումն և մարգարէներումն և սաղմոսներումն ինձ համար գրուած է։

45 Յետ ժամանակն նորանց մտքներըն բացաւ՝ որ գրքերըն իմանան։

46 Եւ նորանց ասաց. թէ հարկ պէտք էր, որ Քրիստոսն չարչարուի և երեք օրուն մե-

ականց յաւուր երրորդի ։

47 Իւ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ Երուսաղէմէ։

48 Իւ դուք էք վկայք այսոցիկ ։

49 Իւ ահա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ ՚ի ձեզ ։ և դուք նստարուք ՚ի քաղաքիս Երուսաղէմ՝ մինչև զգեցուսցէ զձեզ զօրութիւն ՚ի բարձանց։

50 Իսկ ինոսա մինչև ՚ի բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա ։

54 Իւ եղև օրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, և վերանայր յերկինս ։

52 Իւ նոցա երկիրպագեալ նմա՝ դարձան Երուսաղէմ՝ ուրախութեամբ մեծաւ ։

53 Իւ էին հանապազ ՚ի տաճարին, գովէին և օրհնէին զԱստուած ։

ականցն միջինի յարութիւն առնել ։

47 Իւ նորա անուանիցի ապաշխարութիւն և մեղաց թողութիւն քարոզիլ ամենայն ազգաց միջոցի սկսեալ Երուսաղէմէ ։

48 Իւ դուք էք իսկ բանիս համար վկայ ։

49 Իւ ահա ես իմ հօրս աւետիսըն կուղարկեմ ձեզ ։ դուք նստեցէք Երուսաղէմ քաղաքումն՝ մինչև վերինն զօրութիւն հագիցի

50 Իւ նորանց հանել մինչև բեթանիա ։ և իւրեանց ձեռներըն բարձրացուց և նոքանց օրհնեց ։

51 Իւ էյտւ՝ դնա որ նա օրհնութիւնը նորանց՝ հեռացաւ նորանցից և դէպի երկինքն վերանութիւնը ։

52 Իւ նորանք երկրպագութիւն արին նորան, և մեծ ուրախութենով չեռ դարձան Երուսաղէմ ։

53 Իւ ամէն ժամանակ աստուածային էին ։ գովութիւն և օրհնութիւն Աստուծոյ ։

ՅՈՒՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ·

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ·

1 Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն:

2 Նա էր ի սկզբանէ առ Աստուած:

3 Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ՝ որ ինչ եղեն:

4 Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան.

5 Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու:

6 Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս:

7 Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքեան հաւատասցեն նովաւ:

8 Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն:

1 Սկզբուն էր բանն, և բանն Աստուծոյ մօտն էր, և բանն Աստուած էր:

2 Նա սկզբուն Աստուծոյ մօտն էր:

3 Ամէն ինչ նորանով էլաւ, և առանց նորան խկի ոչ ինչ չէլաւ, ինչ որ էլաւ:

4 Նորանով կեանքն էր, և կեանքն մարդկանց լոյսն էր:

5 Եւ լոյսն խաւարուն լոյս էր տալիս և խաւարն՝ չի՛մացաւ նորան:

6 Մին մարդ էլաւ Աստուածանից ուղարկված՝ որ նորա անունն Յոհաննէս (էր)։

7 Սա վկայութեան համար եկաւ, որ լուսոյ համար վկայէ, որ ամէնքն նորանով հաւատան:

8 Նա չէր լոյսն՝ բայց որ լուսոյն համար վկայէ:

9 Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհս։

10 Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև. և աշխարհ զնա ոչ ճանեաւ։

11 Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։

12 Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա.

13 Որք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։

14 Եւ բանն մարմին եղև՝ և բնակեաց ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։

15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց և ասէ, սա է՝ զորմէ ասէի, որ գալոցն էր՝ առաջի իմ եղև. զի նախ քան զիս էր։

16 Զի ի լրութենէն անտի նորա՝ մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց։

9 (Էր) էր ճշմարիտ լոյսն, որ ամէն մարդոյն լուսաւորէ անուամբ՝ որ ես աշխարհքս գալու է։

10 Աշխարհքումն էր և աշխարհքն նորանով էլաւ, աշխարհքն չընճանաչեց նորան։

11 Իրաններին մէջ եկաւ և իրաններն չընդունեցին նորան։

12 Բայց նորանք՝ որ նորան ընդունեցին՝ իշխանութիւն տուաւ նորանց՝ որ Աստուծոյ որդիք լինին. նորանց որ նորա անունին հաւատումն։

13 Որ նորանք ոչ արիւնից և ոչ մարմնոյ կամքից, և ոչ մարդոյ կամքից, բայց Աստուածմանից ծնան։

14 Եւ բանն մարմին էլաւ և մեր միջումն բնակվեցաւ. և նորա փառքն տեսինք ինչպէս հօրից էլած միածին որդոյ փառքն՝ շնորհքով՝ և ճշմարտութեամբ լիքն։

15 Յոհաննէսն վկայումէ նորա համար. աղաղակեց և ասաց, սա է՝ որ սորա համար ասացի, թէ նա որ ինձանից ետև գալու էր, ինձանից առաջ էլաւ. ինչու որ՝ նա ինձանից առաջ էր։

16 Ինչու որ նորա լիութենից մենք ամենքս շընորհք առանք՝ շնորհքի տեղ։

17 Զի օրէնքն ՚ի ձեռն մովսեսի տուաւն . շնորհքն և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն :

18 Զաստուած ոչ ոք ետես երբեք , բայց միածինն որդի . որ է ՚ի ծոց հօր , նա պատմեաց :

19 Եւ այս է վկայութիւնն Յովհաննու , յորժամ առաքեցին առ նա հրէայքն յերուսաղեմէ քահանայս և ղևտացիս , զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞վ ես :

20 Եւ խոստովան եղև , և ոչ ուրացաւ . խոստովան եղև , եթէ ես ոչ եմ Քրիստոս :

21 Եւ հարցին ցնա . խակ ո՞վ ես դու , եղիա՞ ես . և ասէ . ոչ եմ . խակ մարգարէ՞ն ես դու . պատասխանի եաւ՝ թէ ոչ :

22 Իսկ ասա՛ մեզ՝ դու ո՞վ ես , զի պատասխանի տաքցուք՝ որոյ առաքեցինն զմեզ . զի՞ ասես վասն քո :

23 Ասէ , ես՝ ձայն բարբառոյ յանապատի . ուղի՛ղ արարէք զճանապարհս Տեառն , որպէս ասաց Եսայի մարգարէ :

24 Եւ որք առաքեցանն՝ ՚ի փարիսեցւոց անտի էին :

17 Պատճառն որ՝ օրէնքն Մովսէսի ձեռովն տրվաւ . շնորհքն և ճշմարտութիւնն Յիսուսի Քրիստոսի ձեռովն էլաւ :

18 Որ չի տեսաւ Աստուծոյն իսկի մին ժամանակ , բայց միածինն որդին՝ որ հօր ծոցումն է՝ նա պատմեց :

19 Եւ էս է յօհաննէսի վկայութիւնն , երբոր հրէաներն (Ջհուտանէն) երուսաղէմիցն քահանաներ և ղևտացիներ ուղարկեցին նորա մօտ՝ որ հարցնեն նորան՝ թէ դու ո՞վ ես :

20 Եւ (նա) խոստովանեցաւ և չուրացաւ . և խոստովանեցաւ՝ թէ ես չեմ Քրիստոսն :

21 Եւ նորան հարցրին . ապա դու ո՞վ ես . միթէ եղիան ես . և ասաց . չեմ . ապա մարգարէ՞ն ես դու . պատասխան տուաւ՝ թէ չէ :

22 Ապա ասա՛ մեզ , դու ո՞վ ես , որ պատասխան տանենք նորանց , որ մեզ ուղարկեցին . ի՞նչ ես ասում քեզ համար :

23 Ասաց . ես եմ ձայն կանչողի անապատումն (չօլտա) թէ շիտակեցրէք Տէրի ճանապարհն , ինչպէս որ եսայի մարգարէն ասաց :

24 Եւ նորանք՝ որ ուղարկվեցան , փարիսեցիներից էին :

25 Հարցին ցնա՝ և ասեն. իսկ դո՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, և ոչ եղիա, և ոչ մարգարէն։

26 Պատասխանի ետ նոցա Յովհաննէս և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ դիտէք։

27 Որ զկնի իմ գալոցն է, որ առաջ իմ եղև. որում ես ոչ արժանի՝ եթէ լուծիչ զկօշայս կօշկացն նորա։

28 Ա՛յս ի բեթաբարայ եղև յայնկոյս Յորդանանու, ուր էր Յովհաննէս՝ և մկրտէր։

29 Ի վաղիւ անդր առնուն զՅիսուս՝ զկնի դայր առ նա, և ասէ. ահաւասիկ գառնն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

30 Սա է՝ վասն որոյ ես ասեի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս։

31 Ես ես ոչ դիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել։

25 Նորան հարցրին և ասացին. ապա ինչու՞ ես մկրտում, եթէ դու ոչ Քրիստոսն ես, և ոչ եղիան, և ոչ էլ մարգարէն։

26 Յովհաննէս պատասխան առաւ նորանից և ասաց. ես ջրով եմ մկրտում ձեզ. ձեր միջումն կայ (մինն)՝ որ դուք նորան չէք դիտում։

27 Որ նա ինձանից եւս գալու է, որ ինձանից առաջ էլաւ. որ ես արժանի չեմ՝ որ նորա կօշիկների կապանքն արձակեմ։

28 Այս բեթաբարայումն էր լաւ, յորդանանի կողմն. որ տեղ որ Յովհաննէսն էր՝ և մկրտումը։

29 Յետևի օրումն (Յովհաննէս) տեսաւ Յիսուսին՝ որ իրան մօտն էր գալիս, և ասաց. ահա Աստուծոյ գառն՝ որ աշխարհի մեղքըն վեր է առնում։

30 Սա է՝ որ սորա համար ես ասում էի՝ թէ ինձանից եւս մարդ կըգայ՝ որ ինձանից առաջ էլաւ. ինչու որ՝ նա հենց ինձանից առաջ էր։

31 Ես ես նորան չէի դիտում. բայց որ յայտնի լինի Իսրայէլին՝ նրա համար ես եկի որ ջրով մկրտեմ։

32 Ա կայեաց Յովհաննէս և ասէ, Թէ տեսանէի զհոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր ՚ի վերայ նորա։

33 Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Յորմ վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ և հանգչիցի ՚ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ հոգւովն սրբով։

34 Եւ ես տեսի և վկայեցի՝ եթէ սա է որդին Աստուծոյ։

35 ՚Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշակերտաց ան՚տի նորա երկու։

36 Եւ նայեցեալ ընդ Յիսուսի՝ զի գնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ։

37 Լուան ՚ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսեր, և գնացին զհետ Յիսուսի։

38 Իբրև դարձաւ Յիսուս՝ և ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք. Նոքա ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանի նեայ կոչի վարդապետ, ո՞ւր են օթևանք քո։

39 Ասէ ցնոսա. Եկայք և

32 Յովհաննէս վկայեց և ասաց. Թէ տեսուածի հոգին՝ որ աղաւնու պէս վէր էր գալիս երկնքիցն և նորա վերայ ճնուածը։

33 Եւ ես չէի գիտում նորան. բայց նա որ ինձ ուղարկեց՝ որ ջրով մկրտեմ, նա ասաց ինձ, Թէ ում վերայ տեսնես որ հոգին վէր գայ և նորա վերայ ճնայ՝ նա է որ սուրբ հոգովն կմկրտէ։

34 Եւ ես տեսի և վկայեցի՝ Թէ սա է Աստուծոյ որդին։

35 Յետևի օրուանն յՅոհաննէսն կանգնած էր և երկու հոգի էլ նորա աշակերտներից։

36 Եւ մտիկ տուաւ Յիսուսին՝ որ ման էր գալիս, և ասաց. ահա (էս է) Քրիստոսն՝ Աստուծոյ գառն։

37 Յն երկու աշակերտներն լսեցին նորանից՝ որ խօսում էր, և Յիսուսի ետևէն գնացին։

38 Իրբոր Յիսուս դարձաւ և նորանց տեսաւ՝ որ գնում էին իրան ետևէն՝ նորանց ասաց. Ի՞նչ էք ուզում. Նորանք ասացին նորան. Ռաբբի՝ (որ Թարգմանված աւետում՝ վարդապետ.) քո բնակարանն ո՞րտեղ է։

39 Նորանց ասաց. եկէք և

տեսէք · եկին և տեսին՝ ուր կին օթեվանք նորա · և առ նմա ապան այն օր , զի ժամ էր իբրև տասներորդ ։

Ճ0 Էր անդրէաս եղբայր սիմոնի վիմի , մի յերկուց աներ , որ լուան՝ն ՚ի յովհան նէ՝ և գնային զկնի նորա ։

Ճ1 Գտանէ սա նախ զեղբայր իւր զսիմոն , և ասէ ցնա · գտաք զմեսիայ՝ որ թարգմանի Քրիստոս ։

Ճ2 Այս աճ զնա առ Ցիսուս· Հայեաւ ընդ նա Ցիսուսի՝ ասէ· դու ես սիմոն որդի յովնանու , դու կոչեսցիս կեփաս, որ թարգմանի պետրոս ։

Ճ3 ՚ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ՚ի գալիլեա · գտանէ զփիլիպպոս , և ասէ ցնա Ցիսուս · ել զկնի իմ ։

Ճ4 Էր փիլիպպոս ՚ի բեդսայիդայ , ՚ի քաղաքէ անդրեայ և պետրոսի ։

Ճ5 Գտանէ փիլիպպոս զնաթանայէլ , և ասէ ցնա· զորմէ գրեաց մովսէս յօրէնսն՝ և մարգարէքն · գտաք զՑիսուս որդի յովսեփայ ՚ի նազարեթէ ։

Ճ6 Ասէ ցնա նաթանայէլ, իսկ ՚ի նազարեթէ մարթի՞նչ

տեսէք · եկին և տեսին՝ որ տեղ որ նորա բնակարանն էր· և էն օրն նորա մօտ Ճեացին, ինչու որ՝ տասն ժամի (ութ֊ե՞կ) մօտ էր ։

Ճ0 Անդրէասն վէմ սիմոնի եղբայրն էն երկուսիցն մինն էր՝ որ յօհաննէսիցն լսեցին և նորա եւէն գնացին ։

Ճ1 Այս առաջ երան սիմոն եղբօրըն գտաւ և նորան ասաց · մեսիային գտինք՝ որ կըթարգմանվի Քրիստոս ։

Ճ2 Այս նորան բերաւ Ցիսուսի մօտ · Ցիսուս նորան մտիկ տուաւ և ասաց · դու սիմոնն ես յօնանի որդին · դու պիտի կոչվիս կեփաս, որ կըթարգմանվի պետրոս ։

Ճ3 Ցետևի օրուն կամեցաւ, որ դուրս գնայ գալիլեա· փիլիպպոսին գտաւ , և Ցիսուս նորան ասաց · իմ ետևէս եկ ։

Ճ4 Էր փիլիպպոս բեթսայիդացի էր , անդրէասի և պետրոսի քաղաքիցն ։

Ճ5 փիլիպպոսն գտաւ նաթանայէլին և նորան ասաց · նա որ նորա համար մովսէսն օրէնքուն գրեց և մարգարէներն , գտինք Ցիսուսին յօսէփի որդուն նազարէթիցն ։

Ճ6 Նաթանայէլն նորան ասաց · միթէ կարելի՞ է որ

իցէ քաւուց լմիք լինել. ասէ ցնա փիլիպպոս. եկ և տես:

47 Իբրև եահս Յիսուս զնաթանայէլ՝ զի գայր առ նա, ասէ վասն նորա. ահա արդարև իսրայելացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ:

48 Ասէ ցնա նաթանայէլ. ոտտի՞ ճանաչես զիս. պատասխանի եաս Յիսուս և ասէ ցնա. մինչև էր փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւոյ, տեսի զքեզ:

49 Պատասխանի եաս նմա նաթանայէլ և ասէ. ռաբբի՝ դու ես որդի Աստուծոյ, դու ես թագաւորն իսրայէլի:

50 Պատասխանի եաս նմա Յիսուս և ասէ. վասնանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի ի ներքոյ թզենւոյն, հաւատաս, մեծամեծս ևս քան զայս տեսցես:

51 Եւ ասէ ցնա. ամէն ամէն ասեմ ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ՝ և զհրեշտակս Աստուծոյ՝ զի իջանիցեն ի վերայ որդւոյ մարդոյ:

նաղարէթիցն բարի բան լինի՝ փիլիպպոս նորան ասաց. եկ և տես:

47 Երբոր Յիսուս տեսաւ նաթանայէլին՝ որ իրան մօտն էր գալիս՝ ասաց նորան հա՛մար. ահա ուղղրդ իսրայէլացի. որ նորանում խաբէութիւն չկայ:

48 Նաթանայէլն ասաց նորան. ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ. Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց. դեռ որ փիլիպպոսն քեզ չէր կանչել՝ որ թզղի ծառի տակին էիր՝ քեզ տեսի:

49 Նաթանայէլն պատասխան տուաւ նորան և ասաց. ռաբբի՝ դու ես Աստուծոյ որդին, դու ես իսրայէլի թագաւորն:

50 Յիսուս պատասխան տուաւ նորան և ասաց. որովհետև ասացի քեզ՝ թէ թզղի ծառի տակին տեսի քեզ՝ հաւատում. սրանից էլ աւելի մեծ բաներ կըտեսնես:

51 Եւ նորանց ասաց. ճշմարիտըն ճշմարիտըն ասում ձեզ. թէ (սրանից ետև) երկինքըն բացված կըտեսնէք, և Աստուծոյ հրեշտակները՝ որ վեր կելլեն և վեր կըգան որդոյ մարդոյ վերայ:

ԳԼ· Ե ։

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի կանա գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յիսուսի ։

2 Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիսն ։

3 Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. գինի ոչ ունին ։

4 Եւ ասէ ցնա Յիսուս. ղի կայ իմ եւ քո՝ կին դու, չե՛ կ հասեալ ժամանակ իմ ։

5 Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք ։

6 Եւ էին թաղկունք կնճեայք վեց՝ ըստ սրբուլթեան հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս ։

7 Ասէ ցնոսա Յիսուս. լըցէք զթաղկունսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ ի վեր ։

8 Եւ ասէ ցնոսա. արդ՝ առէք եւ բերէք տաճարապետի. եւ նոքա բերին ։

9 Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի

1 Եւ երրորդ օրուն հարսանիք էր գալիլեացոյ կանայումն, եւ Յիսուսի մայրն էնտեղ էր ։

2 Յիսուս էլ եւ նորա աշակերտներն կանչվեցան էն հարսանիքն ։

3 Եւ գինին որ պակասեցաւ՝ մայրն ասաց Յիսուսին գինի չունին ։

4 Եւ Յիսուս նորան ասաց. ով կին դու՝ քեզ ինչ բան կայ ինձ հետ. իմ ժամանակս դեռ չի հասել ։

5 Նորա մայրն սպասաւորներին ասաց. ինչ որ ասէ ձեզ՝ արէք ։

6 Էն տեղ վեց քարէ կաթսա կային հրէաների լուացմունքին համար՝ որ նորանցիյ ամէն մէկն երկու կամ երեք մար (չոփ) էին տանում ։

7 Յիսուս նորանց ասաց. էդ կարասներըդ ջրով լցէք. նորանց լցրին մինչեւ բերանն ։

8 Եւ նորանց ասաց. հիմիկ առէք եւ բերէք (սեղանի) վերակացուին համար եւ նորաէք բերին ։

9 Եւ երբոր վերակացուն էն ջրի համըն առաւ որ գի-

եղեալ , և ո՛չ գիտէր ուսոյն իւրէ . բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն . խօսի ընդ փեսային տաճարապետն .

10 Եւ ասէ . ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ . և յորժամ արբեն նան , յայնժամ զյոռին . դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցսոյժմ :

11 Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս Ի կանա գալիլեացւոց , և յայտնեաց զվառս իւր . և հաւատացին Ի նա աշակերտքն նորա :

12 Ցետ այսորիկ էջ Յիսուս Ի կափառնաում , ինքն և մայր իւր և եղբարք իւր . և անդ լինէր ո՛չ բազում ինչ աւուրս :

13 Եւ էր մերձ զատիկն հրէից , և ել Յիսուս յերուսաղէմ :

14 Եւ եգիտ Ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս , և զըլլումափոխսն՝ որ նստէին :

15 Եւ արար խարազան չըւանեայ , և եհան զամենեսին Ի տաճարէն , զոչխարսն և զարջառս , և զդրամս հատուփաճառացն ցրուեաց , և զսեղանսն կործանեաց :

նի էր ելած՝ և չէր գիտում թէ ինչ տեղից է . բայց սպասաւորները գիտում էին՝ որ ջուրը լցրել էին՝ վերակացուն փեսային հետ խօսեց .

10 Եւ ասաց . ամէն մարդ անոյշ գինին առաջ է տալիս . և երբոր կըհարբենան՝ էն ժամանակն՝ վատըն (բայց) դու էդ անոյշ գինիդ մինչև հիմիկ պահեցիր :

11 Նշանների սկիզբը Յիսուս էս արաւ գալիլեացոց կանայումն՝ և իրան փառքն յայտնեց . և նորա աշակերտներն հաւատացին նորան :

12 Սրանից եաւև Յիսուս վերեկաւ կափառնայում , ինքն և իրան մայրն և իրան ղեղբարներն . և շատ օր չըմըննային էն տեղ :

13 Եւ հրէից զատիկն մօտիկ էր և Յիսուս վեր ելաւ երուսաղէմ :

14 Եւ տաճարումն գտաւ նորանց՝ որ եղներ և ոչխարներ և աղաւնիներ էին ծախում , և փող փոխողներին էլ որ նստած էին :

15 Եւ չուանէ խարազան (չախա) շինեց և ամէնին տաճարիցն հանեց , ոչխարներին և եղներին՝ և (փող) փոխողների պղինձներըն ցրվեց և տախտակներըն կործանեց :

16 Եւ որ պաղատեինն վա-
ճառէին՝ ասէ ցնոսա . առէք
զայդ ասոր , և մի առնէք
զտուն հօր իմոյ՝ տուն վա-
ճառի :

17 Ապա յիշեցին աշակերտ-
քըն նորա , թէ գրեալ է .
նախանձ տան քո կերիցէ զիս:

18 Պատասխանի եառն
հրէայքն և ասեն ցնա՝ զի՞նչ
նշան ցուցանես դու մեզ՝ վի
զայդ առնես :

19 Պատասխանի ետ Յի-
սուս՝ և ասէ ցնոսա. քակեցէք
զտաճարդ զայդ , և զերիս ա-
ւուրս կանգնեցից զդա :

20 Ասեն ցնա հրէայքն .
զքառասուն և վեց ամ շի-
նեցաւ տաճարս , և դու զե-
րիս աւուրս կանգնե՞ս զսա :

21 Բայց նա ասէր վասն
տաճարի մարմնոյն իւրոյ :

22 Իսկ յորժամ յարեաւն
ի մեռելոց , յիշեցին աշա-
կերտքն նորա , թէ այս է՝
զոր ասացն . և հաւատացին
գրոյն , և բանին՝ զոր ասաց
Յիսուս :

23 Եւ իբրև էր Երուսա-

16 Եւ նորանք որ աղաւնի
էին ծախում , նորանց ասաց .
դրան վերառէք էստեղից՝ և
իմ հօրս տունըն մի անէք ա-
ռուտուրի տուն :

17 Էն ժամանակն նորա ա-
շակերտներն յիշեցին թէ
գրված է՝ քո տան նախանձն
ուտում ինձ :

18 Հրէաներն պատասխան
տուին և ասացին նորան. դու
ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ՝
որ անում ես էդ :

19 Յիսուս պատասխան տը-
ւաւ և ասաց նորանց . քան-
դեցէ՛ք էդ տաճարըդ, և ե-
րեք օրումն կանգնացնեմ դո-
րան :

20 Հրէաներն ասացին նո-
րան . էս տաճարս քառասուն
տարումն շինվեցաւ՝ և դու
երեք օրումն կըկանգնացնե՞ս
դորան :

21 Բայց նա իրան մարմնոյ
տաճարին համար էր ասում :

22 Ապա երբոր նա մեռել-
ների միջիցն յարութիւն ա-
ռաւ՝ նորա աշակերտներն
յիշեցին թէ էս էն է՝ որ
նա ասաց . և հաւատացին
գրքին՝ և էն խօսքին որ Յի-
սուսն ասաց :

23 Եւ երբոր երուսաղէ-

ղէմ՝ ի գտակին՝ ի տօնի, բազումք հաւատացին յա-նուն նորա. զի տեսանէին զնշանս՝ զոր առնէր։

24 Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա. քանզի ինքն գիտէր զամենայն.

25 Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կայր ի մարդն։

մումն էր գտակի տօնուցն՝ շատ մարդիք հաւատացին նորա անուն։ ինչու որ տեսնուելին էն նշաններըն՝ որ նա անում էր։

24 Բայց ինքն Յիսուս իրան անձըն չէր հաւատում նորանոյ. պատճառն որ՝ ինքն ամէն բան գիտուէր։

25 Եւ պէտք չէր որ մինն վկայէր մարդոյ համար. ինչու որ՝ հենոյ ինքն գիտուէր՝ թէ ինչ կայ մարդոյ ներսումն։

ԳԼ. Գ։

1 Եւ էր այր մի ի փարիսեցւոցն՝ Նիկոդեմոս անուն նորա իշխան հրէից։

2 Սա եկն առ նա գիշերի՝ եւ ասէ ցնա. ռաբբի՝ գիտեմք եթէ ՅԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իսկ ընդ նմա։

3 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ։

1 Եւ փարիսեցիներիցն մին մարդ կար՝ անունն Նիկոդիմոս՝ հրէաների իշխան։

2 Սա գիշերուն նորա մօտ եկաւ եւ նորան ասաց. ռաբբի գիտուինք որ Աստուածանից վարդապետ ես եկել. ինչու որ՝ ոչ ովչիկարօղ էդ նշաններըդ անել՝ որ դուս նումես, թէ որ Աստուած նորա հետ չըլինի։

3 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. ճշմարիտըն ճշմարիտըն ասումիմ քեզ. թէ որ մինն նոր չըծնըվի՝ կարօղ չէ Աստուծոյ արքայութիւնըն տեսնել։

4 Ասէ ցնա Նիկոդեմոս. զիարդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծեր իցէ. միթէ մարթի՞նչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ:

5 Պատասխանի եւս Յիսուս և ասէ. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ:

6 Զի ծնեալն ՚ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ՚ի հոգւոյ՝ հոգի է:

7 Դուն մի զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանիլ վերստին:

8 Զի հովմ ուր կամի՝ շնչէ. և զձայն նորա լսես. այլ ոչ գիտես՝ ուստի գայ, կամ յո՞ երթայ. ոյնպէս է ամենայն ծնեալն ՚ի հոգւոյն:

9 Պատասխանի եւս Նիկոդեմոս և ասէ ցնա. զիա՞րդ մարթի այդմ լինել:

10 Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնա. դուն ես վարդապետ իսրայէլի՝ և զայդ ո՞չ գիտես:

11 Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք,

4 Նիկոդիմոս նորան ասաց. մարդ ի՞նչպէս կարող է ծնանիլ՝ որ ծեր է. միթէ կարելի՞ է՝ որ մինել երկրորդ անգամ իրան մօր փորն մտնէ և ծնանի:

5 Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ քեզ. թէ որ մինն ջրից և հոգուց չըծնանի. նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել:

6 Պատճառն որ՝ մարմնուց ծնվածն՝ մարմին է. և հոգուց ծնվածն՝ հոգի է:

7 Դուն մի զարմանար՝ որ ասացի քեզ, թէ պէտք է ձեզ՝ որ նոր ծնվիք:

8 Ինչու որ՝ քամին որ տեղ որ ուզումէ, փչումէ և նորա ձայնըն լսումես. բայց չես գիտում՝ թէ ի՞նչ տեղից է գալիս կամ որ տեղ է գնում. հենց էլ էնպէս (է) ամէն հոգուց ծնվածն:

9 Նիկոդիմոս պատասխան տուաւ և նորան ասաց. էդ ի՞նչպէս կարող է լինիլ:

10 Յիսուս պատասխանն տըւաւ և նորան ասաց. դուն ես իսրայէլի վարդապետ և էդ բանըդ չե՞ս գիտում:

11 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ քեզ՝ թէ ինչ որ գի-

և զոր տեսաք՝ վկայեմք. և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։

12 Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից հաւատայցէք։

13 Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ, որ էն յերկինս։

14 Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ։

15 Զի ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։

16 Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։

17 Զի ոչ առաքեաց Աստուած զորդի իւր յաշխարհ՝ զի դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։

18 Որ հաւատայ ՚ի նա, ոչ

տուժինք՝ էն ենք խօսում ինչ որ տեսինք՝ էն ենք վկայում. և մեր վկայութիւնը չէք ընդունում։

12 Իմայց եթէ որ երկրաւոր բաներըն ասացի ձեզ և չէք հաւատում. ապա ինչպէս կըհաւատաք եթէ որ երկնաւոր բաներըն ասեմ։

13 Եւ ոչ ով վեր չելաւ երկինքն, եթէ ոչ որդին մարդոյ՝ որ երկնքիցն վէր եկաւ՝ նա որ երկնքումն է։

14 Եւ ինչպէս որ Մօսէսն օձը բարձրացրուց անապատումն՝ հենց էնպէս էլ պէտք է որդին մարդոյ բարձրանայ։

15 Որ ամէն ով որ հաւատայ նորան՝ յաւիտենական կեանքըն ընդունի։

16 Պատճառն որ՝ Աստուած էնպէս սիրեց աշխարհքին. մինչև որ իրան միածին որդին տուաւ. որ ամէն ով որ հաւատայ նորան՝ չըկորչի, այլ յաւիտենական կեանքըն ընդունի։

17 Ինչու որ՝ Աստուած իրան որդին չուղարկեց աշխարհքս՝ որ աշխարհքին դատէ՝ բայց որ աշխարհքն նորանով փրկվի։

18 Ով որ հաւատումէ նո-

դատապարտեսցի · և որ ոչ հաւատայ ՚ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է · զի ոչ հաւատայ յանուն միածնի որդւոյն Աստուծոյ ։

19 Եւ այս իսկ է դատաստան · զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս · զի էին գործք իւրեանց չարութեան ։

20 Ամենայն՝ որ զչար գործէ՝ ատեայ լոյս · և ոչ գայ առ լոյսն , զի մի յանդիմանեսցին գործք նորա ։

21 Իսկ որ առնէ ճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա , թէ Աստուծով գործեցան ։

22 Ետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն հրէաստանի · և անդ շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր ։

23 Մկրտէր և Յովհաննէս ՚ի յայնոսիկ մերձ առ սաղիմ, զի ջուրք բազում էին անդ· և գային և մկրտէին ։

24 Զի չևևս էր արկեալ Յովհաննէս ՚ի բանտ ։

բան՝ չի դատապարտվիլ՝ և ով որ չըհաւատում նորան՝ հենց հիմիկ դատապարտվածէ՝ ինչու որ՝ չըհաւատայ Աստուծոյ միածին որդոյ անունին ։

19 Եւ հենց ես է դատաստանն՝ որ լոյսն եկաւ աշխարհքս՝ և մարդիկը խաւարըն աւելի սիրեցին քան լոյսըն · ինչու որ՝ նորանց գործքերն չար էին ։

20 Պատճառն որ՝ ամէն ով որ չար է գործում՝ լոյսըն ատումէ և դէպի լոյսն չի գալիս , որ նորա գործքերն չի յանդիմանվին ։

21 Բայց նա՝ որ ճշմարտութիւն է գործում · դէպի լոյսն է գալիս՝ որ նորա գործքերն յայտնի լինին թէ Աստուծով գործվեյան ։

22 Սրանից ետև Յիսուս եկաւ հրէաստանի երկիրն՝ և նորա աշակերտներն էլ · և էնտեղ նորանց հետ մէն էր գալիս և մկրտում էր ։

23 Յօհաննէսն էլ յայնոսիկ մէջն էր մկրտում՝ սաղեմայ մօտ · ինչու որ՝ շատ ջուր կար էնտեղ · և (մարդիկը) գալիս էին և մկրտվումէին ։

24 Պատճառն որ՝ յօհաննէսն դեռ բանտի մէջ չէր դրած ։

25 Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ հրէից վասն սրբութեան ։

26 Ուկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա . ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու , որում դուն վկայեցեր , ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամենեքին գան առ նա ։

27 Պատասխանի եհ Յովհաննէս եւ ասէ . ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչ ինչ , եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ։ի վերուստ ։

28 Դուք ձեզէն վկայէք ինձ , զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոս , այլ թէ առաքեալ եմ առաջի նորա ։

29 Որ ունի հարսն՝ նա է փեսայ . իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա , ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային . արդ՝ այս ուրախութիւն որ իմ է , լցեալ է ։

30 Նմա պարտ է աճել , եւ ինձ մեմանալ ։

31 Որ ։ի վերուստն գայ՝ ։ի վերոյ է քան զամենայն . որ յերկրէ ասէ է , յերկրէ է՝ եւ յերկրէ խօսի ։

25 Եւ Յօհաննէսի աշակերտներն հրէաներին հետ հակառակելին սրբութեան համար ։

26 Յօհաննէսի մօտ եկին եւ նորան ասացին . ռաբբի՝ նա որ Յորդանանի էն կողմն էր քեզ հետ՝ որ դուն նորա համար վկայեցիր . ահա նա մկրտուէմ , եւ ամէնքն նորա մօտ են գալիս ։

27 Յօհաննէսն պատասխան տուաւ եւ ասաց . մարդ իսկի կարող չէ ինքն իրանից մի բան առնել , թէ որ վերևից երկնքիցն աըլված չըլնի նորան ։

28 Դուք ձեղանից վկայութիւն եք տալիս ինձ համար՝ որ ասացի ձեզ՝ թէ ես Քրիստոսն չեմ՝ բայց թէ նորա առաջին ուղարկված եմ ։

29 Որ որ հարսըն ունի՝ նա է փեսան . բայց փեսայի բարեկամն՝ որ կայ եւ լսում է նորան , փեսայի ձայնին համար ուրախութենով ուրախանում է . ուրեմն էս իմ ուրախութիւնս լցված է ։

30 Նորան պէտք է որ աճի (մեծանայ) եւ ես պակասեմ ։

31 Նա որ վերևիցն է գալիս , ամէնիցն վերև է . նա որ էս երկրիցս է՝ երկրիցն է եւ երկրիցն է խօսում ։

32 Որ յերկինքէն գայ, զոր
ինչ եռես և զոր լուաւ՝
վկայէ. և վկայութիւն նո-
ր ոչ ոք ընդունի։

33 Որ ընդունի վկայու-
թիւն նորա՝ կնքեաց, թէ
Աստուած ճշմարիտ է։

34 Զի զոր Աստուածն ա-
ռաքեաց՝ զբանս Աստուծոյ
խօսի. զի ոչ ելիւ չափով
տայ Աստուած զհոգին։

35 Հայր սիրէ զորդի, և
զամենայն ինչ եւս ի ձեռն
նորա։

36 Որ հաւատայ յորդի, ու-
նի զկեանս յաւիտենա-
կան. և որ ոչ հնազանդի
որդւոյ, ոչ տեսցէ զկեանս,
այլ բարկութիւն Աստուծոյ
մնայ ի վերայ նորա։

32 Ի նա որ երկնքէն է գա-
լիս՝ ինչ որ տեսաւ և ինչ
որ լսեց՝ վկայումէ և նորա
վկայութիւնը խսկի մինն չի
ընդունում։

33 Ով որ նորա վկայութիւ-
նըն ընդունումէ՝ կընքով
(ջոհրով) հաստատեց թէ Աս-
տուած ճշմարիտ է։

34 Պատճառն որ՝ նա որ
Աստուած ուղարկեց նորան,
Աստուծոյ բանըն է խօսում.
ինչու որ՝ Աստուած հոգին
չափով չի տալիս։

35 Հայրն սիրում որդուն
և ամէն բան նորա ձեռքն
տուաւ։

36 Ով հաւատումէ որդուն՝
յաւիտենական կեանքըն ու-
նի՝ և ով որ չի հնա-
զանդվում որդուն՝ կեանքըն
չի տեսնիլ, այլ Աստուծոյ
բարկութիւնն է մնում նորա
վերայ։

ԳԼ. Դ։

1 Երբեւ գիտաց Յիսուս՝
եթէ լուան փարիսեցիքն՝ ե-
թէ Յիսուս բազում աշա-
կերտս առնէ և մկրտէ քան
զՅովհաննէս.

2 Թանզի ոչ եթէ Յի-
սուս ինքնին մկրտէր՝ այլ ա-
շակերտքն նորա։

1 Երբոր Յիսուս գիտաց՝
թէ փարիսեցիներն լսեցին՝
թէ Յիսուս շատ աշակերտ-
ներ է անում և յօհաննէ-
սից էլ աւելի է մկրտում.

2 ինչու որ՝ չէ թէ Յիսուսն
ինքն էր մկրտում՝ բայց նորա
աշակերտներն։

3 Եւ թողլ զՀրէաստան երկիրը և եկն միւսանգամ ի գալիլեա։

4 Եւ էր նմա անցանել ընդ սամարիա։

5 Գայ նա ի քաղաք մի սամարացւոյ՝ որում անունն էր սիւքար. մերձ ի դեօղն, զոր ետ յակովբ որդւոյ իւրում յովսեփայ։

6 Եւ անդ էր աղբիւր մի յակոբայ. և Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստէր ի վերայ աղբերն. և էր ժամ իբրև վեցերորդ։

7 Գայ կին մի ի սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. տուր ինձ ըմպել։

8 Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր, զի կերակուր դնեսցեն։

9 Ասէ ցնա կինն սամարացի. դու որ հրէայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խընդրես ի կնոջէ սամարացւոյ, զի ոչ երբէք խառնակին հրէայք ընդ սամարացիս։

10 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. եթէ դիտէիր դու զպարգեւն Աստուծոյ, և ո՞վ է՝ որ ասէդ

3 Հրէաստանի (Ըստ հայոց պատմ.) երկիրըն թողեց և մնել եկաւ գալիլեա։

4 Եւ պէտք էր նորան՝ որ սամարիայի միջովն անցկենայ։

5 Ապա նա սամարացւոյ մին քաղաք եկաւ՝ որ նորա անունն սիւքար էր։ Էն գիւղին մօտ՝ որ Յակոբ տուաւ իւրան որդի Յոսէփին։

6 Եւ Յակոբի մին աղբիւր կար էնտեղ. և Յիսուս ձանապարհիյն վաստակել էր՝ և էն աղբիւրին վերայ նստել էր. և վեց ժամին (տասներորդ) դէմ էր։

7 Սամարիայիցն մին կին եկաւ՝ որ ջուր հանէ. Յիսուս նորան ասաց. ինձ տուր որ խմեմ։

8 Պատճառն որ՝ նորա աշակերտներն քաղաքն էին գնացել՝ որ կերակուր գնեն։

9 Սամարացի կինն ասաց նորան. դու որ հրէայ ես՝ ի՞նչպէս ես ուզում ջուր խմել ինձանիյ՝ մին սամարացի կնկանից. ինչու որ՝ հրէաները իսկի չեն խառնվում սամարացոց հետ։

10 Յիսուս պատասխան արաւ նորան և ասաց՝ եթէ որ դու Աստուծոյ պարգեւն գիտեիներիր և եթէ ով է նա՝ որ

ցքեզ՝ Թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր ՚ի նմանէ՝ և տայր քեզ ջուր կենդանի։

11 Ասէ ցնա կինն. Տէր՝ դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի։

12 Մի՞թէ դու մեծ ինչ ոք իցես՝ քան զՀայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ. և ինքն աստի արբ, և որդիք նորա և խաշինք նորա։

13 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. ամենայն որ ըմպէ ՚ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւի. բայց որ ըմպէ ՚ի ջրոյն, զոր ես տայ նմա՝ մի՛ ծարաւեսցի յաւիտեան։

14 Այլ ջուրն զոր ես տայ նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ՚ի կեանսն յաւիտենական։

15 Ասէ ցնա կինն. Տէր՝ տուր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից. և մի՛ եկից այսր հանել ջուր։

16 Ասէ ցնա Յիսուս. երթ կոչեա զայր քո՝ և եկ այսր։

քեզ ասումն՝ Թէ տուր ինձ խմել, ապա դու նորանից կըխնդրէիր և նա կենդանի ջուր կըտար քեզ։

11 Կինն ասաց նորան՝ Տէր դու իսկի ջուր քաշելոյ ա֊ման էլ չունես՝ և հոլս խոր է. ապա ի՞նչ տեղից պիտի ու֊նենաս կենդանի ջուրըն։

12 Մի՞թէ դու մին աւելի՞ մեծ մարդ ես քան մեր հայր Յակոբն՝ որ էս հորըս տուաւ մեզ. և ինքն սորանից խմեց, և նորա որդիքն և նորա ա֊նասուններն։

13 Յիսուս պատասխան տը֊ւաւ նորան և ասաց. ամէն ով որ էդ ջրիցն խմում՝ մի֊նէլ կըծարաւի. բայց ով որ էն ջրիցն խմի՝ որ ես կըտամ նորան՝ նա յաւիտեան չի ծա֊րաւիլ։

14 Հապա էն ջուրն՝ որ ես կըտամ նորան՝ ջրի աղբիւր կըլինի նորանում, որ յաւի֊տենական կենաց մէջ կըբըղ֊խի։

15 Կինն նորան ասաց. Տէր տուր ինձ էն ջուրըն, որ չը֊ծարաւիմ և չըգամ էստեղ ջուր հանելոյ։

16 Յիսուս նորան ասաց. գնա կանչի՛ր քո մարդուն՝ և եկ էստեղ։

17 Պատասխանի ետ նմա կինն և ասէ. չի՛ք իմ այր. ասէ ցնա Յիսուս. բարւոք ասացեր՝ թէ չի՛ք իմ այր.

18 Զի հինգ այր փոխեալ ես քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդարև ասացեր։

19 Ասէ ցնա կինն. Տէր՝ թուի ինձ, թէ մարգարէ ես դու։

20 Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիրպագին, և դուք ասէք՝ եթէ յերուսաղէմ է տեղի, ուր արժան իցէ երկիրպագանել։

21 Ասէ ցնա Յիսուս. կին դու՝ հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լերինս յայսմիկ և ոչ յերուսաղէմ երկիրպագանիցէք հօր։

22 Դուք երկիրպագանէք՝ որում ոչն գիտէք, մեք երկիրպագանեմք որում գիտեմք. զի փրկութիւն ի հրեից է։

23 Այլ եկեսցէ ժամանակ՝ և այժմ իսկ է. յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիրպագանիցեն հօր հոգւով և ճշմարտութեամբ. քանզի

17 Կինն պատասխան տուաւ նորան և ասաց. ես մարդ չունիմ. Յիսուս նորան ասաց. լաւ ասացիր՝ թէ մարդ չունիմ։

18 Պատճառն որ՝ դու հինգ մարդ ես փոխել՝ և նա որ հիմիկ ունիս քո մարդդ չէ. էդ շիտակ ասացիր։

19 Կինն նորան ասաց. Տէր երևոյմ ինձ՝ թէ դու մարգարէ ես։

20 Մեր հարքն էս սարումն երկրպագութիւն արին. և դուք ասուիք՝ թէ երուսաղէմն մէնակ է էնտեղն՝ որ պէտք է երկրպագութիւն անել։

21 Յիսուս նորան ասաց. ով կին. հաւատա ինձ՝ որ ժամանակ կըգայ, որ ոչ էս սարումն երկրպագութիւն կանեն հօրն, և ոչ էլ երուսաղէմումն։

22 Դուք երկրպագութիւն էք անում նորան՝ որ դուք չէք գիտում. մենք երկրպագութիւն ենք անում նորան՝ որ գիտումենք. ինչու որ փրկութիւնն հրէաներիցն է։

23 Բայց ժամանակ կըգայ և հենց հիմիկ է՝ որ ճշմարիտ երկրպագողներն հոգով և ճշմարտութիւնով երկրպագութիւն կանեն հօրն, պատ-

և հայր այնպիսի երկրպագուս
իւր խնդրէ ։

24 Հոգի է Աստուած , և
երկրպագուայ նորա՝ հոգւով
և ճշմարտութեամբ պարտ
է երկրպագանել ։

25 Ասէ ցնա կինն , գիտեմք՝
զի Մեսիայ գայ՝ անուանեալն
Քրիստոս . Յորժամ եկեսցէ
նա, պատմեսցէ մեզ զամենայն ։

26 Ասէ ցնա Յիսուս . ես
եմ՝ որ խօսիմս ընդ քեզ ։

27 Եւ յայն բան եկին ա-
շակերտքն նորա , և զարմա-
նային՝ զի ընդ կնոջն խօսէր .
բայց ոչ ոք ասաց ՝ի նոցանէ,
թէ զինչ խնդրես , կամ
զինչ խօսիս ընդ դմա ։

28 Եւ թողեալ կինն զսափորն
իւր՝ և գնաց ՝ի քաղաքն, և
ասէ ցմարդիկն .
29 Եկայք տեսէք զայր մի ,
որ ասաց ինձ զամենայն՝ որ
ինչ իմ գործեալ է . միթէ
նա իցէ Քրիստոսն ։
30 Եւ ելին ՝ի քաղաքէն՝ և
գային առ նա ։
31 Եւ մինչդեռ եկեալ էին
նոքա , աղաչէին զնա աշա-

ձաձն որ՝ հենց հայրն եւ էնպէս իրան երկրպագողներն է ուզում ։
24 Աստուած հոգի է , և նորան երկրպագողներն եւ պէտք է՝ որ հոգով և ճշմարտութեամբ երկրպագուելիւն անեն (նորան)։
25 Կինն ասաց նորան. գիտումենք՝ որ Մեսիան պիտի գայ՝ որ Քրիստոս է կոչվում. երբոր կըգայ՝ նա ամէն բան կըպատմէ մեզ ։
26 Յիսուս նորան ասաց . (նա) ես եմ՝ որ քեզ հետ խօսումեմ ։
27 Եւ էս խօսքիս վերայ նորա աշակերտներն եկին, և զարմանումէին , որ էն կնկան հետ խօսումէր . բայց նորանից իսկի մինն չասաց՝ թէ ինչ ես ուզում կամ ինչ ես խօսում դորա հետ ։
28 Կինն իրան կուժըն թողեց և գնաց քաղաքն և մարդկանց ասաց .
29 Եկէք տեսէք մի մարդ՝ որ ինձ ասաց էն ամէնըն ինչ որ գործել եմ . միթէ նա է Քրիստոսն ։
30 Դուրս էլան քաղաքիցն և նորա մօտ էին գալիս ։
31 Եւ դեռ որ նորանք չէին եկած՝ աշակերտներն աղա-

կերաքն և ասէին. ռաբբի՝ հայ կեր։

32 Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ գիտէք։

33 Ասէին աշակերտքն ընդմիմեանս. միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել։

34 Ասէ ցնոսա Յիսուս՝ իմ կերակուրս այն է՝ զի արարիչ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա։

35 Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ ևս չորք ամիսք են, և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ. ամբարձէք զաչս ձեր, և տեսէք զարտորայսն, զի սպիտակացեալ են՝ և ի հունձս հասեալ։

36 Ւր որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ զպտուղ ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէնն, և որ հնձէ՝ հասարակ ցնծասցեն։

37 Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է՝ որ սերմանէ, և այլ է՝ որ հնձէ։

38 Ւրս առաքեցի զձեզ հընձել՝ զոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին, և դուք ի վաստակս նոցա մտէք։

ջումէին նորան և ասում. ռաբբի՝ հայ կեր։

32 Նա նորանց ասաց. ես կերակուր ունիմ ուտելոյ, որ դուք չէք գիտում նորա։

33 Աշակերտներն իրար ասումէին. միթէ մին մարդ դորան բան բերաւ ուտելոյ։

34 Յիսուս նորանց ասաց. իմ կերակուրս է՝ որ նորա կամքըն անեմ, որ ուղարկեց ինձ, և նորա գործըն կատարեմ։

35 Միթէ դուք չէք ասում՝ թէ չորս ամիս էլ կայ, և հունձքն կըզայ. ահա ես ասումեմ ձեզ. բարձրացրէք ձեր աչքերըն՝ և տեսէք արտերըն՝ սպիտակացել են՝ և հընձին հասել։

36 Ւր նա որ հնձումէ՝ վարձք է առնում և յաւիտենական կենաց մէջ պտուղ է ժողովում՝ որ նա որ սերմումէ և նա որ հնձումէ իրար հետ ուրախանան։

37 Այնտով ճշմարիտ է խօսքն՝ թէ ուրիշ է՝ որ սերմումէ և ուրիշ է որ հնձումէ։

38 Ւրս ուղարկեցի ձեզ հընձել էն՝ որ դուք չըսերմացէք. ուրիշներն աշխատեցին, և դուք նորանց աշխատանքի մէջն մտիք։

39 Եւ ՚ի քաղաքէն յայն-
մանէ սամարացւոց բազումք
հաւատացին ՚ի նա վասն բա-
նի կնոջն վկայելոյ՝ եթէ ա-
սաց ինձ զամենայն՝ որ ինչ
իմ գործեալ էր ։

40 Իսկ երբեմն եկին առ նա
սամարացիքն, աղաչէին զնա
լինել առ նոսա. և եղև անդ
աւուրս երկուս ։

41 Եւ ևս բազումք հաւա-
տացին ՚ի նա վասն բանին նո-
րա ։

42 Եւ ասէին ցկինն՝ եթէ
ոչ այսուհետեւ վասն քո խո-
սիցդ հաւատամք, զի մեք ի-
նքեանք լուաք ՚ի դմանէ. և գի-
տեմք՝ եթէ դա է Քրիստոս
փրկիչ աշխարհաց ։

43 Եւ յետ երկուց աւուրց
ել անտի և գնաց ՚ի գալի-
լեա ։

44 Զի ինքն իսկ Յիսուս
վկայեաց՝ եթէ մարգարէ յի-
րում գաւառի պատիւ ոչ
ունի ։

45 Ա՛յլ յորժամ եկն նա
՚ի գալիլեա, ընկալան զնա
գալիլեացիքն. զի տեսեալ ևս
էր զամենայն նշանսն, զոր ա-
րար Երուսաղէմ ՚ի տօնին.
քանզի և նոքա եկեալ էին ՚ի

39 Եւ սամարացոց էն քա-
ղաքին շատ մարդիկ հաւա-
տացին նորան էն կնկան խօս-
քին համար՝ որ վկայումէր՝
եթէ ասաց ինձ ամէնըն՝ ինչ
որ գործել էի ։

40 Ապա երբոր սամարացի-
ներն նորա մօտ եկին, նորան
աղաչեցին որ իրանց հետ մնայ.
և երկու օր մնաց էնտեղ ։

41 Եւ էլ շատ մարդիկ հա-
ւատացին նորան՝ նորա խօս-
քին համար ։

42 Եւ էն կնկան ասումէին՝
եթէ սրանից ետև ոչ թէ քո
խոսքերիդ համար ենք հաւա-
տում. ինչու որ՝ հենց մենք
ինքներս լսեցինք դորանից. և
գիտումենք Ճշմարտապէս՝ որ
դա է աշխարհքի փրկիչն ։

43 Եւ երկու օրից ետև էն-
տեղից դուրս եկաւ և գնաց
գալիլեա ։

44 Պատճառն որ՝ հենց
Քրիստոս ինքն վկայեց՝ եթէ
մարգարէ իրան պատուոյ
պատիւ չունի ։

45 Բայց երբոր նա գալի-
լեա եկաւ, գալիլեացիները
ընդունեցին նորան. ինչու որ՝
տեսել էին էն ամէն նշաննե-
րըն, որ տօնի ժամանակուն
արաւ Երուսաղէմի մէջն. պատ-

տօնն ։

Ճառն որ՝ նորանք էլ եկել էին էն տօնն ։

16 Երկն դարձեալ՝ ի կանա գալիլեացւոց՝ ուր արար ըմբ- ջուրն գինի . և անդ էր թա- գաւորական մի , որոյ որդի նո- րա հիւանդ կայր ի կափառ- նայում ։

16 Մինել գալիլեացոց կա- նան եկաւ՝ էնտեղ որ ջուրը գինի արաւ . և էնտեղ մին թագաւորացեղ մարդ կար, որ նորա որդին կափառնայումի մէջն հիւանդ էր ։

17 Նա երբոր լսեց, թէ Յիսուս հրեաստանիցն եկել է գալիլեա. նորա մօտ եկաւ և աղաչումէր՝ որ վէր գայ և իրան որդին բժշկէ . ինչու որ՝ մեռնելոյ մօտ էր ։

17 Նա երբոր լսեց՝ թէ Յիսուս եկեալ է ի հրէաստանէ ի գալիլեա՝ եկն առ նա և աղաչէր՝ զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել ։

18 Յիսուս նորան ասաց՝ թէ որ նշաններ և հրաշքներ չըտեսնէք՝ չէք հաւատալ ։

18 Ասէ ցնա՝ եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք ։

19 Թագաւորացեղն նորան ասաց . Տէր՝ վէր եկ դեռ քանի որ չի մեռել իմ տղան

19 Ասէ ցնա թագաւորաղն. Տէր՝ էջ մինչչև մեռանայ իցէ մանուկն իմ ։

50 Յիսուս նորան ասաց . գնա՝ քո որդիդ կենդանի է . և մարդն հաւատաց էն խօսքին՝ որ Յիսուս նորան ասաց՝ և գնաց ։

50 Ասէ ցնա Յիսուս. երթ որդին քո կենդանի է . և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս՝ և գնաց ։

51 Եւ դեռ որ վէր էր գալիս՝ նորան ծառաներն նորա առաջն եկին , աւետիս տուին և ասացին , թէ քո տղան կենդանի է ։

51 Եւ մինչդեռ իջանէր՝ ընդառաջ եղեն նմա ծառայքն նորա , աւետիս եառուն և ասեն , թէ մանուկն նորա կենդանի է ։

52 Նորանց հարցնումէր են ժամին (ասհալէն) համար՝ որ նորանում ողջացաւ . և նորան ասացին . երեկ եօթն

52 Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքին նեաց . և ասեն ցնա . երէկ յեօթներորդ ժամու եթող

զնա ջերմն ։

53 Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամուէ՝ յորում ասացն ցնա Յիսուս. Թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր ։

54 Զայս դարձեալ երկրորդ նշանս արար եկեալ ի Հրէաստանէ ի գալիլեա ։

53 Նորա հայրն իմացաւ՝ թէ հենց էն ժամուէն (է)՝ որ Յիսուս նորան ասաց. Թէ քո որդիդ կենդանի է. և հաւատաց ինքն և նորա բոլոր տունն ։

54 Այս մինէլ երկրորդ նշան արաւ Յիսուս՝ երբոր հրէաստանիցն եկաւ գալիլեա ։

ԳԼ. Ե ։

1 Յետ այսորիկ տօն էր հրէից. և ել Յիսուս յերուսաղէմ ։

2 Իսկ էր յերուսաղէմ ի պրոբատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդա՝ հինգ սրահ ։

3 Ցորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակնուն էին ջրոյն յուզելոյ ։

4 Իսկ հրեշտակ Տեառն ի ջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր ջուրսն. և որ նախ ի շարժուն ջուրցն էջանէր՝ բժշկէր՝ ո՛չ ունէր լոկ նշան հիւանդութեան ։

1 Սրանից ետև տօն էր հրէաների. և Յիսուս վերէլաւ երուսաղէմ ։

2 Իսկ երուսաղէմի մէջն պրոպատիկէ աւազանումն, որ եբրայեցերէն բեթհեզդա էր կոչվում՝ հինգ սրահ կայր ։

3 Որ նորանցում խիստ շատ հիւանդներ կային վէր ընկած կուրերը, կաղերը, չորացածները, որ ջրերի շարժվելոյն էին սպասում ։

4 Իսկ Տէրի հրեշտակն ժամանակով վէր էր գալիս էն աւազանն՝ և ջրերըն շարժումէր. և ով որ առաջ վէր էր գալիս էն շարժված ջրերի մէջն՝ բժշկվումէր՝ որ իսկի հիւանդութեան նշան չէր ճնում ։

5 Եւ անդ էր այր մի, որոյ
երեսունն և ութ ամ էր՝ ի
հիւանդութեան իւրում։

6 Զնա իբրև տեսս Յի-
սուս՝ զի անկեալ դնէր, և
գիտաց՝ եթէ բազում ժամա-
նակք են այնուհետև, ասէ
ցնա. կամիս ողջ լինել։

7 Պատասխանի եւ նմա
հիւանդն. Տէր՝ ոչ զոք
ունիմ, թէ յորժամ ջուրքն
յուզիցին՝ արկցէ զիս յաւա-
զանն. և մինչ ես դանդաղիմ,
այլ ոք քան զիս յառաջագոյն
իջանէ։

8 Ասէ ցնա Յիսուս. արի
առ զմահիճս քո՝ և գնա։

9 Եւ ողջացաւ այրն, և
յարեաւ՝ առ զմահիճս իւր՝
և շրջէր. և էր շաբաթի յա-
ւուրն յայնմիկ։

10 Ասէն հրէայքն ցբժշըշ-
կեալն. շաբաթի է՝ և ոչ է
արժան քեզ առնուլ զմա-
հիճս քո։

11 Պատասխանի եւ նոցա
և ասէ. որ բժշկեացն զիս,
նա ասաց ցիս, առ զմահիճս
քո՝ և գնա։

12 Հարցին ցնա և ասեն.

5 Եւ էնտեղ մին մարդ
կար, որ երեսուն և ութ
տարի էր իրան հիւանդութե-
նում։

6 Երբոր Յիսուս նորան
տեսաւ՝ որ վէր ընկած էր.
և գիտաց՝ թէ շատ ժամա-
նակ է Ճեպել՝ նորան ասաց.
կամենո՞ւմես, որ ողջ լինես։

7 Հիւանդն պատասխան
տուաւ նորան. Տէր՝ իսկի մին
մարդ չունիմ՝ որ երբոր
ջրերն շարժվին՝ ինձ աւազա-
նի մէջն ձգէ՝ և մինչև որ ես
շարժվումիմ, մին ուրիշ ին-
ձանից առաջ (էնտեղ) վեր է
գալիս։

8 Յիսուս նորան ասաց.
վեր կաց, քո մահիճըդ (մէջ-
ընդդէր) առ և գնա։

9 Եւ էն մարդն ողջացաւ
և վերկացաւ՝ իրան մահիճն
առաւ և մանեը գալիս. և էն
օրն շաբաթի էր։

10 Հրեաներն ասացին
բժշկվածին. շաբաթի է, և
արժան չէ քեզ, որ քո մա-
հիճըդ (մէջընդդէր) վեր առ-
նես։

11 (Նա) պատասխան տուաւ
նորանց՝ և ասաց. նա՝ որ ինձ
բժշկեց՝ նա ասաց ինձ՝ թէ
քո մահիճըդ առ և գնա։

12 Հարցրին նորան և ասա-

ՙի՞լ է այն՝ որ ասաց ցբել, առ ղմահիճս քո՝ և շրջեայց։

13 Եւ բժշկեսցէն ոչ միտեր՝ թէ ՙի՞լ էցէ · քանզի Յիսուս խոյս ետ ուստի՝ բազումքն ՙի տեղւոջէ անտի։

14 Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ՙի տաճարին, և ասէ ցնա · ահաւադիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր՝ զի՛ մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։

15 Գնաց այրն՝ և պատմեաց հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զնա։

16 Եւ ուստի այսորիկ հալածէին զՅիսուս հրէայքն, զի զայն առնէր ՙի շաբաթու։

17 Եւ Յիսուս պատասխան ետ նոցա · Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։

18 Վասն այսորիկ առաւել խնդրէին հրէայքն սպանանել զնա · զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէր զանձն Աստուծոյ։

19 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա · ամէն ամէն ՙի՞լ է ՙի՛ն մարդն՝ որ քեզ ասաց՝ թէ քո մահիճդ առ և մանե՛ակ։

13 Եւ բժշկվածն չէր գիտում թէ ՙի՞լ է · ինչուն որ Յիսուս ամբոխի (խալխի) պատճառովն Ենտեղւոյն քաշվեցաւ։

14 Յետոյ ետև Յիսուս նորան գտաւ տաճարումն և նորան ասաց· ահա՛ ողջացար· միևչէ՛լ չի՛ մեղանչնա՛ որ էլ աւելի չար բան չըլինի՛ քեզ։

15 Մարդն գնաց և հրէից նեղիչն պատմեց՝ թէ Յիսուսն էր որ ինձ բժշկեց։

16 Եւ նրահամար հրէանեղն Յիսուսին հալածում էին՝ որ շաբաթի օրումն էն (բանըն) էր անում։

17 Եւ Յիսուս պատասխան տուաւ նորանց· թէ իմ հայրս մինչև հիմի գործում՝ և ես էլ գործումմ։

18 Ընդահամար հրէաներն էլ աւելի հետևումմէին՝ որ սպանեն նորան · որ ոչ թէ մէնակ շաբաթի օրերըն էր քանդում՝ բայց Աստուծոյն էլ իրան հայր էր կոչում և իրան անձըն Աստուծոյն հաւասար էր անում։

19 Յիսուս պատասխան տըւաւ և ասաց նորանց՝ Ճշմա-

ամէն ասեմ՝ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն ղի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ։

20 Զի Հայր սիրէ զորդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա, զոր ինքն առնէ, և մեծագոյնս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս, զի դուք զարմանայք։

21 Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի՝ զորս կամի կենդանի առնէ։

22 Զի ոչ եթէ Հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ որդոյ իւրոյ.

23 Զի ամենեքեան պատուեսցեն զորդի, որպէս պատուեն զՀայր՝ որ ոչ պատուէ զորդին՝ ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա։

24 Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ, որ առա-

րիտն Ճշմարիտն ասումեմ ձեզ. լսէորդին մարդոյ իրանից կարող չէ միւս բան անել, եթէ որ չըտեսանէ Հօրըն որ անում է. ինչու որ՝ ինչըր նա անում, հենց որդին էլ էն բանըն է նորա նման անում։

20 Պատճառն որ՝ Հայրն սիրում է որդուն, և ցոյց է տալիս նորան էն ամէն բանըն, որ ինքն անում է, և սորանցից էլ աւելի մեծ մեծ գործքեր ցոյց է տալիս նորան, որ դուք նորա համար զարմանում էք։

21 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայրն մեռելներըն յարուցանում և կենդանի անում, հենց էնպէս էլ որդին՝ ում որ կամենում՝ կենդանի է անում։

22 Զի չէ թէ Հայրն միայն դատում է, բայց ամէն դատաստանըն տուաւ իրան որդուն։

23 Որ ամէնքն պատուեն որդուն, ինչպէս որ Հօրըն պատուում են. ով որ որդուն չի պատուում՝ Հօրն էլ չի պատուում, որ ուղարկեց նորան։

24 Ճշմարիտըն Ճշմարիտն ասումեմ ձեզ. թէ նա որ իմ խօսքիս ականջ է դնում և հա-

քեացն զնա, ընդունի զկեանսըն յաւիտենականս. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս:

25 Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ և արդէն իսկ է՝ յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ. և որք լսիցեն՝ կեցցեն:

26 Զի որպէս հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եւ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում:

27 Իշխանութիւն եւ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է:

28 Ընդ այն զի դարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին՝ որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա:

29 Եւ եկեսցեն արտաքս՝ որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարուցիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարուցիւն դատաստանաց:

30 Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դատաստան նորան՝ որ ինձ ուղարկեց, յաւիտենական կեանքըն կընդունի և դատաստան չի մտնիլ, քանզի մահիցն փոխեալ դէպի կեանքն:

25 Ճշմարիտըն ճշմարիտըն ասում ձեզ՝ թէ ժամանակ կ՚գալիս և հենց հիմիկ է՝ երբոր մեռելներն Աստուծոյ որդոյ ձայնըն կըլսեն. և նորանք, որ կըլսեն՝ կապրին:

26 Պատճառն որ՝ ինչպէս որ հայրն իրան անձնուրճ կեանք ունի, հենց էնպէս էլ որդոյն տուաւ՝ որ իրան անձնուրճ կեանք ունենայ:

27 Եւ նորան իշխանութիւն տուաւ, որ դատաստան անի. ինչու որ՝ որդի մարդոյ է:

28 Ներա վերայ ինչու էք զարմանում. պատճառն որ՝ ժամանակ կըգայ, որ ամէնքն՝ որ գերեզմաններուրճն են, նորա ձայնըն կըլսեն:

29 Եւ դուրս կըգան նորանք՝ որ բարի են գործել դէպի կենայ յարութիւնն, և նորանք՝ որ չար են արել՝ դէպի դատաստանի յարութիւնն:

30 Ես ինձանից չեմ կարող իսկի մին բան անել, բայց ինչպէս որ

տաստանն իմ արդար է. վի
ոչ խնդրեմ զկամս իմ, այլ
զկամս այնորիկ որ առաքեացն
զիս։

31 Եթէ ես վկայեմ վասն
իմ, վկայութիւն իմ չէ
ճշմարիտ։

32 Այլ է՝ որ վկայէ վասն
իմ. և դուք գիտէք, եթէ
ճշմարիտ է վկայութիւնն՝ զոր
վկայեաց վասն իմ։

33 Դուք առաքեցիք առ
յովհաննէս և վկայեաց ճըշ-
մարտութեանն։

34 Այլ ես ոչ եթէ ՚ի
մարդկանէ առնում վկայու-
թիւն. այլ զայս ասեմ՝ զի
դուք ապրեսջիք։

35 Նա էր ճրագն՝ որ լու-
ցեալ էր և ծագէր. և դուք
կամեցարուք ցնծալ առ ժա-
մանակ մի ՚ի լոյս նորա։

36 Այլ ես ունիմ վկայու-
թիւն մեծ և քան զյով-
հաննու. զգործս զորս ետ
ցիս հայր՝ զի կատարեցից
զնոսա. նոքին իսկ գործքն՝
զոր գործեմ, վկայեն վասն
իմ, եթէ հայր առաքեաց
զիս։

37 Եւ որ առաքեացն զիս

ենպէս եմ գտուում և իմ
դատաստանս արդար է. պատ-
ճառն որ՝ իմ կամքըս չեմ
խնդրում՝ այլ նորա կամքըն,
որ ինձ ուղարկեց։

31 Թէ որ ես ինձ համար
վկայումեմ՝ իմ վկայութիւնս
ճշմարիտ չէ։

32 Ուրիշ է որ ինձ համար
վկայումէ. և դուք գիտումէք
թէ ճշմարիտ է էն վկայու-
թիւնն՝ որ ինձ համար վկայէ։

33 Դուք ուղարկեցիք յո-
հաննէսի մօտ և վկայութիւն
տուաւ ճշմարտութեանն։

34 Բայց ես ոչ թէ մարդ-
կանցիյ եմ առնում վկայու-
թիւն. բայց էս ասումեմ՝
որ դուք ապրիք։

35 Նա ճրագ էր՝ որ վառ-
վռմէր և լոյս էր տալիս. և
դուք կամեցաք մի քիչ ժա-
մանակ ուրախանալ նորա լու-
սովն։

36 Բայց ես յօհաննէսիյն
էլ աւելի մեծ վկայութիւն
ունիմ՝ էն գործքերըն, որ
հայրն ինձ տուաւ՝ որ կատա-
րեմ նորանց. հենց էն գործ-
քերն՝ որ գործումեմ, ինձ
համար վկայումեն, թէ հայրն
ուղարկեց ինձ։

37 Եւ հայրն որ ինձ ուղար-

հայր՝ նա վկայեայ վասն իմ. դուք՝ ոչ զձայն նորա երբեք լուարուք. և ոչ զտեսիլ նորա տեսէք։

38 Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։

39 Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենական. և նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել կեանս։

40 Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի կեանսն ունիցիք։

41 Ես փառս ի մարդկանէ ոչ առնում։

42 Այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։

43 Ես եկի յանուն հօր իմոյ՝ և ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցէք։

44 Զի՞արդ կարէք դուք հաւատալ. զի փառս ի միմեանց առնուք, և զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։

կեց՝ նա ինձ համար վկայեց. դուք իսկի մին ժամանակ ոչ նորա ձայնըն լսեցիք և ոչ նորա կերպարանքըն տեսիք։

38 Եւ ոչ էլ նորա խօսքըն ձեզանում բնակված ունիք. պատճառն որ՝ էն որ նա ուղարկեց՝ դուք չէք հաւատում նորան։

39 Քննեցէք գրքերըն. որ դուք կարծումիք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանքըն՝ և հենց նորանք են, որ ինձ համար վկայումն՝ որ նորանցով կարծումիք թէ կեանքըն ունիք։

40 Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ՝ որ կեանքըն ունենաք։

41 Ես մարդկանցից փառք չեմ առնում։

42 Բայց ճանաչումեմ ձեզ՝ որ Աստուծոյ սէրըն չունիք ձեր անձներուն։

43 Ես իմ հօրս անունովն եկի և ինձ չէք ընդունում. թէ որ մին ուրիշ կըգայ իւրան անունովն, նորան կընդունիք։

44 Ինչպէս կարող էք դուք հաւատալ՝ որ իրարից էք փառք առնում, և էն փառքըն որ մին Աստուածմէկից չէք խնդրում։

5 ՄԻ համարիք՝ եթէ ես չարախօս ինչ իսեմ զՀՈԳՈՅ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զՀՈԳՈՅ՝ մովսէս, յոր դուքն յուսացեալ էք։

6 ՋԻ եթէ հաւատայիք դուք մովսէսի, հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց։

7 ՋԻ եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք։

5 Ձը՛ կարծէք՝ որ ես Հօր մօտ չարախօս եմ ձեզանից. կայ միւնն որ ձեզանից չարախօսում է, էն մօսէսն՝ որ դուք ձեր յոյսըն նորա վերայ էք դրել։

6 Ինչու որ՝ եթէ դուք մօսէսին հաւատայիք, ապա ինձ էլ կըհաւատայիք. պատճառն որ՝ նա ինձ համար գրեց։

7 Իսայի ըթէ որ նորա գըրքերին չէք հաւատում, ի՞նչպէս իմ խօսքերիս կըհաւատաք։

ԳԼ. Զ։

1 ՅԵտ այսորիկ գնաց ՅԻսուս յայնկոյս ծովուն գալիլեացւոց ա՛իբերեայ։

2 ԼՒ կՀետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանս՝ զոր առնէր ՚ի վերայ հիւանդացն։

3 ԼՒ ՚ի լեառն ՅԻսուս, և անդ նստէր աշակերտօքն Հանդերձ։

4 ԼՒ էր մերձ զատիկ տօնն հրէից։

5 ԲԱրձ ՚ի վեր զաչս իւր ՅԻսուս և ետես, զի ժողովուրդ բազում գայր առ նա. ասէ ցփիլիպպոս. ուստի՞

1 Արանից յետև գնաց Յիսուս գալիլեացւոց տիբերիա ծովի մեկնէլ կողմն։

2 Ինչ շատ ժողովուրդ էր գնում նորա յետև էն. ինչու որ՝ տեսնում էին նշաններըն՝ որ անում էր հիւանդներին վերայ։

3 Յիսուս վեր էլաւ սարն, և աշակերտներին հետ նստում էր էնտեղ։

4 Ինչ հրէաների զատիկ տօնն մօտիկ էր։

5 Յիսուս իրան աչքերըն բարձրացրուց և տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. փիլիպպոսին ասաց.

ենսցուք հայ՝ զի կերիցեն
զոքա ։

6 Զ այս ասէր փորձելով
զնա · այլ ինքն գիտէր՝ զինչ
առնելոցն էր ։

7 Պատասխանի ետ նմա
փիլիպպոս · երկերիւր դահե-
կանի հայ չէ դոցա բաւա-
կան՝ Թէպէտ և իւրաքան-
չիւր ոք սակաւ ինչ առնու-
ցու ։

8 Ասէ ցնա մի յաշակեր-
տացն նորա անդրէաս՝ եղբայր
սիմոնի վիմի ·

9 Ոչ՝ աստ պատանեակ մի,
որ ունի հինգ նկանակ գա-
րեղէն և երկուս ձկունս ·
այլ այն զինչ է առ այդչափ
մարդիկ ։

10 Ասէ Յիսուս · բազմե-
ցուցէք զմարդիկդ · և էր
խոտ յոյժ ի տեղւոջն · և
բազմեցան մարդիկն Թուով
իբրև հինգ հազար ։

11 Եւ առ զհացն Յիսուս և
գոհացաւ և բաշխեաց բազ-
մականացն · նոյնպէս և ի
ձկանցն որչափ և կամեցան ։

12 Եւ իբրև յագեցան,
ասէ ցաշակերտան · ժողովե-
ցէք զնշխարեալ կտորսդ՝
զի մի ինչ կորիցէ ։

ինչ տեղից հաց գնենք՝ որ դո-
րանք ուտեն ։

6 Այս ասում էր փորձելով
մեզ էր ասում · բայց ինքն
գիտում էր՝ Թէ ինչ պիտի ա-
նէր ։

7 Փիլիպպոսն պատասխան
տուաւ նորան · երկու հարիւր
դահեկանի հաց բաւական չէ
դորանց համար՝ Էնպէս որ ա-
մէն մէկն մի քիչ առնէ ։

8 Նորա աշակերտներիցն
մինն(այսինքն) անդրէասն վէմ
սիմոնի եղբայրն ասաց նո-
րան ։

9 Էստեղ մին տղայ կայ,
որ հինգ գարէ հաց ունի և
երկու ձուկ · բայց էն ինչ
է էդչափ մարդկանց համար ։

10 Յիսուս ասաց· էդ մարդ-
կանցըդ նստացրէք · և շատ
խոտ կար էն տեղն · և մար-
դիկն նստեցին համարով իբր
հինգ հազար ։

11 Եւ Յիսուս հացըն առաւ
և գոհացաւ և բաժանեց նըս-
տողներին · Էնպէս էլ ձըկնե-
րիցն որ չափ որ կամեցան ։

12 Եւ երբոր կըշտացան,
աշակերտներին ասաց · ժողո-
վեցէք էդ աւելցած կտորնե-
րըն՝ որ բան չըկորչի ։

13 Հողովակին և լոյսն երկոտասան սակառի պղտոր-
լոյն ՚ի հինգ գարեղէն նակ-
նակէ անտի, որ յաւելաւ ՚ի
կերուղացն։

14 Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանն զոր արար՝
ասէին. եթէ սա է Հշմարիտ
մարգարէն, որ գալոց էր
յաշխարհ։

15 Յե իբրև գիտաց՝ եթէ գալոց են յափշտակել զնա,
զի արասցին զնա թագաւոր,
դնաց դարձեալ ՚ի լեառն
միայն։

16 Ու իբրև երեկոյ եղև, իջին աշակերտքն նորա ՚ի
ծովեզրն։

17 Ու մտեալ ՚ի նաւ՝ գա-
յին յայնկոյս ծովուն ՚ի կա-
փառնայում. և իբրև նսե-
մացաւ, և չեւս եկեալ էր
առ նոսա Յիսուս։

18 Ու ծովն ՚ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։

19 Ու վարեալ իբրև աս-
պարէզս քսան և հինգ կամ
երեսուն, տեսանեն զՅի-
սուս՝ զի գնայր ՚ի վերայ
ծովուն՝ և մերձ էր ՚ի նաւն,
զարհուրեցան յոյժ։

20 Նա ասէ ցնոսա. Ես
եմ՝ մի երկնչիք։

13 Հողովակին և կտորնե-
րուն սան երկու քառոյ լոյսին
էն հինգ գարէ հայկին՝ որ
ուտողներուն աւելցաւ։

14 Բայց մարդիկն երբոր
տեսին էն նշանըն որ արաւ,
ասումէին՝ թէ սա էն Հշմա-
րիտ մարգարէն է՝ որ պէտք
էր աշխարհը գայ։

15 Յիսուս երբոր գիտաց՝
թէ գալու են իրան յափշըտ-
տակելոյ՝ որ թագաւոր անեն
իրան՝ միևնոյն գնաց սարն մի-
նակ։

16 Ու երբոր իրիկուն է-
լաւ՝ նորա աշակերտներն վեր
եկին ծովի եզրն (դէսպի)։

17 Ու մտին նաւն և գնա-
ցին ծովի էն կողմն կափառ-
նայում. և երբոր մըթնա-
ցաւ՝ Յիսուս դեռ չէր եկել
նորանց մօտն։

18 Ու ծովն՝ սաստիկ քա-
մոյ փչելուն շարժվումէր։

19 Ու երբոր քսան և հինգ
կամ երեսուն սպարէզք
(տանդէզէ) չափ առաջ գնա-
ցին՝ Յիսուսին տեսին՝ որ ծո-
վի վերայ գալիս էր՝ և նա-
ւին մօտիկ էր՝ և շատ ահով
լցվան։

20 Ու նա ասաց նորանց.
ես եմ՝ մի վախենաք։

21 Եւ կամէին ընդունել զնա՝ ի նաւն. և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային։

22 Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր՝ թէ այլ նաւ ոչ դայր անդ բայց միայն ի միոյն, յոր մտին աշակերտքն Յիսուսի. և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին։

23 Իբրև այլ նաւք գային ի տիբերեայ մօտ յայն տեղին՝ ուր ջհային կերան։

24 Իսկ իբրև տես ժողովուրդն՝ եթէ Յիսուս ոչ է անդ և ոչ աշակերտքն նորա, առին նոքա զնաւսն, և եկին ի կափառնայում խնդրել զՅիսուս։

25 Եւ իբրև գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. ռաբբի՝ ե՞րբ եկիր այսր։

26 Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, իբր ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք. այլ զի կերայք ի հացէ անտի՝ և յագեցարուք։

27 Երթայք գործեցէք մի

21 Եւ կամեցան նորան ընդունել նաւի մէջն. և նաւն շուտով հասաւ էն երկիրն՝ որ գնացին։

22 Յետևի օրուցն էն ժողովուրդն՝ որ ծովի էն կողմն էր տեսաւ՝ որ ուրիշ նաւ չըկար էնտեղ էն մընիցն ջոկ՝ որ Յիսուսի աշակերտներն նորա մէջ մտին. և որ Յիսուս աշակերտներին հետ նաւն չէր ստաճ, բայց մէնակ նորա աշակերտներն գնացին։

23 Բայց տիբերիայիցն ուրիշ նաւեր եկին էն տեղն մօտ՝ որ հացըն կերին։

24 Ալա երբոր ժողովուրդն տեսաւ՝ թէ ոչ Յիսուսն էնտեղ է և ոչ նորա աշակերտներն՝ նորանք էն նաւերըն առին և եկին կափառնայում, որ Յիսուսին մանգան։

25 Եւ երբոր նորան ծովի էն կողմն գտին նորան ասացին. ռաբբի՝ ե՞րբ եկիր էնտեղ։

26 Յիսուս պատասխան տըւաւ նորանց և ասաց. Ճշմարիտն Ճշմարիտն ասում ձեզ. դուք ինձ մանգ էք գալիս չէ թէ նրահամար, որ մին նշան տեսիք. բայց որ էն հացիցն կերիք՝ և կշտացաք։

27 Գնացէք ոչ թէ կոր-

զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ Միայ ի կեանսն յաւիտենական, զոր որդին մարդոյ տայէ ձեզ. քանզի զնա հայր կնքեաց Աստուած։

28 Ասեն ցնա. զի՞նչ առնիցեմք՝ զի զգործսն Աստուծոյ գործեսցուք։

29 Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. այս է գործն Աստուծոյ՝ զի հաւատասջիք յայն՝ որ առաքեացն զնա։

30 Ասեն ցնա. զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք և հաւատասցուք զի՞նչ գործիցես։

31 Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ. որպէս և գրեալ է՝ հաց յերկնից ետ նոցա ուտել։

32 Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ։

33 Զի հաց Աստուծոյ է՝ որ իջանէ յերկնից՝ և կեանս տայ աշխարհի։

չէրտ կերակուրըն գործեցէք, բայց էն կերակուրըն, որ յաւիտենական կեանքին՝ մէջ կըմնայ, որ նորան որդին մարդոյ կըտայ ձեզ. պատճառն որ՝ Աստուած հայրն կնքով (ջօհրով) հաստատեց նորան։

28 Նորան ասացին. ի՞նչ պիտի անենք՝ որ Աստուծոյ գործքերըն գործենք։

29 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց. էս է Աստուծոյ գործն՝ որ հաւատաք նորան՝ որ նա ուղարկեց։

30 Նորան ասացին. ի՞նչ նշան կանես՝ որ տեսնենք և հաւատանք ի՞նչ կգործես։

31 Մեր հարքն անապատի (չէօլի) մէջ մանանայ կերին. ինչպէս որ գրված է թէ՝ երկնքէցն հայ տուաւ նորանց ուտել։

32 Յիսուս նորանց ասաց. ճշմարիտըն ճշմարիտըն ձեզ ասեմ ձեզ. թէ մօսէս չըտուաւ ձեզ էնհանցն երկնքէցն, բայց իմ հայրս երկնքէցն ճշմարիտ հայրն կըտայ ձեզ։

33 Պատճառն որ՝ Աստուածանէց հացն էն է՝ որ երկնքէցն վէր է գալիս և աշխարհքին կեանք է տալիս։

34 Ասեն ցնա · Տէր՝ յա-
մենայն ժամ տուր մեզ
զհացն զայն ։
35 Ասէ ցնոսա Յիսուս· ես
եմ հացն կենաց · որ գայ
առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ
հաւատայ յիս՝ ոչ երբէք
ծարաւեսցի ։

36 ԱՅԼ ասացի ձեզ՝ Թէ
տեսէք զիս , և ոչ հաւա-
տայք ։
37 Զամենայն՝ զոր տայ
ինձ հայր , առ իս եկեսցէ ·
և որ գայ առ իս՝ ոչ հանիցէ
արտաքս ։
38 Զի իջի ես յերկնից՝
ոչ զի զկամս իմ արարիցէ ,
այլ զկամս այնորիկ՝ որ ա-
ռաքեացն զիս ։
39 Այս են կամք հօր իմոյ,
որ առաքեացն զիս · զի զա-
մենայն՝ զոր ետ ցիս հայր՝
ոչ կորուսից ի նմանէ, այլ
յարուսցից զնա յաւուրն յետ-
նում ։
40 Այս են կամք հօր իմոյ·
զի ամենայն՝ որ տեսանիցէ
զորդի և հաւատայցէ ի նա,
ընկալցի զկեանսն յաւիտե-
նական · և ես յարուսցից
զնա յաւուրն յետնում ։
41 Տրտընջէին զնմանէ հրէ-
այքն , զի ասաց, Թէ ես եմ

34 Նորան ասացին · Տէր՝
ամէն ժամանակ տուր մեզ
էն հացըն
35 Յիսուս նորանց ասաց ·
իս եմ կենաց հացն · ով որ
ինձ մօտ է գալիս՝ չի սովիլ,
և ով որ ինձ հաւատում՝
իսկի մին ժամանակ չի ծարա-
վիլ ։
36 Բայց ասացի ձեզ՝ Թէ
տեսիք ինձ և չէք հաւատում ։

37 Ամէն՝ ում որ հայրն ինձ
է տալիս, ինձ մօտ կըգայ՝ և
նա որ ինձ մօտ է գալիս՝ դուրս
չեմ հանիլ նորան ։
38 Պատճառն որ՝ ես վէր
չեկի երկնքիցն՝ որ իմ կամ-
քըս անեմ, բայց նորա կամ-
քըն՝ որ ինձ ուղարկեց ։
39 Ի՛նչ է իմ հօրս կամքն,
որ ինձ ուղարկեց · որ էն ա-
մէնըն՝ որ հայրն ինձ տուաւ՝
նորանից չըկորցնեմ· այլ յե-
տին օրումն յարուցանեմ նո-
րան ։
40 Ի՛նչ է իմ հօրս կամքն·
որ ամէն ով որ տեսնէ որ-
դուն և հաւատայ նորան , յա-
ւիտենական կեանքըն ընդու-
նի· և ես յետին օրումն կըյա-
րուցանեմ նորան ։
41 Ընդհանրն տրտնջումէին
նորանից՝ որ ասաց , Թէ ես

հայն իջեալ յերկնից ։

42 Յս ասէին՝ ոչ սա է Յիսուս որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն և զմայրն ։ Իսկ արդ՝ զիա՞րդ սա՝ թէ ես յերկնից իջի ։

43 Պատասխանի եհան Յիսուս, և ասէ ցնոսա ։ Մի քրթմնջէք ընդ միմեանս ։

44 Ո՛չ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա։ և ես յարուցից զնա յաւուրն յետնում ։

45 Գրեալ է ՚ի մարգարէսն, և եղիցին ամենեքեան ուսեալք Աստուծոյ, ամենայն որ լսէ ՚ի հօրէ և ուսանի, գայ առ իս ։

46 Իբրև ոչ եթէ զհայր ուրուք տեսեալ իցէ ։ եթէ ոչ՝ որ էն Աստուծոյ, նա հառես զհայր ։

47 Ամէն ամէն ասեմ ձեզ ։ զի որ հաւատայ յիս, ընդունի զկեանն յաւիտենական ։

48 Յս եմ հայն կենաց ։

49 Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին, և մեռան ։

50 Այս է հացն, որ յերկնից իջեալ է ։ զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի մեռանիցի ։

եմ երկնքիցն վէր եկած հացն։

42 Յս ասումէին ։ չէ՞ որ սա յօսէիի որդին է՝ որ մենք գիտեմք նորա հօրըն ։ ա՞պա ի՞նչպէս է ասում՝ թէ ես երկնքիցն վէր եկի ։

43 Յիսուս պատասխան տուեաւ և ասաց նորանց ։ մի տրտնջիք իրար հետ ։

44 Ո՛չ ով կարօղ չէ ինձ մօտ գալ՝ եթէ հայրն՝ որ ինձ ուղարկեց չը՛ քաշէ նորան ։ և ես յետին օրումն կը յարուցանեմ նորա ։

45 Գրված է մարգարէների մէջն թէ՝ և ամէնքն Աստուածանից սովորած կը լինին ։ ամէն ով որ հօրիցն է լսում և սովորում՝ գալիս է ինձ մօտ ։

46 Իբր չէ թէ մինն տեսել է հօրըն ։ բայց միայն նա՝ որ ինքն Աստուածանից է ։ նա տեսաւ հօրըն ։

47 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ ։ թէ ով որ ինձ հաւատումէ՝ յաւիտենական կեանքըն ընդունում է ։

48 Յս եմ կենաց հայն ։

49 Ձեր հարքն մանանան կերին անապատումն (չէօլումն), և մեռան ։

50 Յս է(էն)հայն, որ երկընքիցն է վէրեկել՝ որ եթէ մինն սորանից ուտէ՝ չի մեռնիլ։

51 Ես եմ հայն կենդանի, որ յերկնից իջեալ ։

52 Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. և հացն զոր ես տայ՝ մարմին իմ է, զոր ես տայ վասն կենաց աշխարհի ։

53 Մարտնչէին ընդ միմեանս հրէայքն և ասէին · զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր ուտել ։

54 Ասէ ցնոսա Յիսուս · ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւնն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ։

55 Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն յաւիտենականս. և ես յարուսցից զնա յաւուրն յետնում ։

56 Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։

57 Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ, և ես ի նմա։

58 Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր, և որ

51 Ես եմ կենդանի հացն, որ երկնքից է վէր եկել ։

52 Ով որ միսն էս հացիցս ուտի՝ յաւիտեան կապրի · և (էն) հացն՝ որ ես կրտամ՝ իմ մարմինս է, որ ես նորան աշխարհքի կենաց համար կըտամ ։

53 Հրեանէրն իրար հետ կռվումէին և ասում՝ ասի՞նչպէս կարօղ է իրան մարմինըն տալ մեզ ուտելոյ ։

54 Յիսուս նորանց ասաց · Ճշմարիտըն Ճշմարիտըն ասումմ ձեզ, թէ որ որդոյ մարդոյ մարմինըն չուտէք և նորա արիւնըն չըխմէք, կեանք չունիք ձեր անձին մէջն ։

55 Ով որ իմ մարմինըս ուտումէ և իմ արիւնըս խմումէ, յաւիտենական կեանքըն ունի · և ես յետին օրումն կըյարուցանեմ նորան ։

56 Ինչու որ՝ իմ մարմինս Ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս Ճշմարիտ խմելիք է ։

57 Ով որ իմ մարմինըս ուտումէ և իմ արիւնըս խըմումէ՝ իմումէն կըբնակ-վի, և ես նորանումէ ։

58 Ինչպէս որ կենդանի Հայրն ինձ ուղարկեց, և ես կենդանի եմ Հօր համար, ընպէս էլ

ուտէն զինս, և նա կեցցէ ինձ։

59 Ասաց ցնոսա Յիսուս. Ոչ ես հայնմ՝ որ յերկնից իջեալ, ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն՝ և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։

60 Զայս ասաց ի ժողովրդեանն յուսուցանելն ի կափառնայում։

61 Եւ բազումք յաշակերտացն իւրեանց ասեն. խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել զմա։

62 Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն, ասէ ցնոսա. միդ գայթակղեցուցանէ զձեզ։

63 Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ, զի երանիցէ ուր էր զառաջինն։

64 Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. բանքն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք։

65 Այլ են ոմանք ի ձէնջ, որ ոչ հաւատան, քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ, ո՞վ են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, և ո՞վ է այն՝ որ մատնելոցն է զնա։ և ասէր։

նա՝ որ ինձ ուտուն, կենդանի կըլինի ինձ համար։

59 Այս է հացն՝ որ երկընքից վէր է եկել, չէ թէ ինչպէս որ ձեր հարքն մանանան կերին և մեռան։ (բայց) ով որ ես հացըս ուտուն՝ յաւիտեան կապրի։

60 Այս բանըս ժողովարանի մէջն ասաց՝ երբոր կափառնայում ուսուցանում էր։

61 Իւ աշակերտներից շատերն երբոր (ես) լսեցին՝ ասացին։ դժուար է էդ բանդ, ո՞վ կարող է լսել դորան։

62 Երբոր Յիսուս գիտաց իրան անձնուն՝ եթէ աշակերտներն տրտնջումէն նորա համար, նորանց ասաց. էդ է գայթակղեցնում ձեզ։

63 Ապա (ինչ) եթէ որդին մարդոյ տեսնէք, որ վեր ելլի (էնտեղն)՝ որ առաջ էր։

64 Հոգին է կենդանացնող, մարմինն մին օգուտ չիտալիս էն բանն՝ որ ես ձեզ հետ խոսեցի՝ հոգի է և կեանք։

65 Բայց ձեզանից մին քանիսն կան, որ չեն հաւատում, պատճառն որ՝ Յիսուս սկըզբից գիտուէր, ո՞վ են նոքանք՝ որ չեն հաւատում, և ո՞վ է նա՝ որ պիտի մատնէր իրան։ և ասումէր։

66 Ասաւ այնորիկ ասացի
ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ
առ իս, եթէ ոչ իցէ տուեալ
նմա ի հօրէ իմմէ ։

67 Յայսմանէ բազումք յա-
շակերտացն նորա չոգան յետս,
և ոչ ևս ընդ նմա ։

68 Ասէ Յիսուս ցերկոտա-
սան աշակերտսն . միթէ և
դուք կամիք երթալ ։

69 Պատասխանի ետ նմա
սիմոն պետրոս . Տէր՝ առ ո՞վ
երթիցուք . բանս կենացդ յա-
ւիտենականացդ ունիս ։

70 Եւ մեք հաւատացաք և
ծանեաք՝ եթէ դու ես Քրիս-
տոսն որդի Աստուծոյ ։

71 Պատասխանի ետ նոցա
Յիսուս . ոչ ես զձեզ ընտրե-
կոտասանդ ընտրեցի , և միդ
ի ձէնջ սատանայ է ։

72 Եւ ասէր զսիմոնեան
յուդայէ սկարիովտացւոյ . զի
նա իսկ մատնելոց էր զնա .
և ա՛ի էր յերկոտասանից ։

66 Ընդհամար ասացի ձեզ՝
թէ ոչ ոք կարող չէ ինձ
մօտ գալ , եթէ իմ հօրիցն
տրիվաձ չըլինի (նորան) ։

67 Յայնմէ ետև նորա ա-
շակերտներէցն շատերն յետ
դնացին, և էլ ման չէին գա-
լիս նորա հետ ։

68 Յիսուս տասներկու ա-
շակերտներին ասաց . միթէ
դուք Ը՞լ կամենումք գնալ ։

69 Սիմոն պետրոսն պատաս-
խան տուաւ նորան. Տէր՝ ո՞վ
մօտ գնանք . (դու) յաւիտե-
նական կենաց խօսքեր ունիս։

70 Եւ մենք հաւատացինք
և ճանաչեցինք՝ թէ դու ես
Քրիստոսն Աստուծոյ որդին։

71 Յիսուս պատասխան տը-
ւաւ նորանց . չէ՞ որ ես ձեզ
տասն երկուսիդ ընտրեցի, և
ձեզանիցդ միևն սատանայ է ։

72 Եւ (էս) իսկապատասխան սի-
մօնեան յուդայի համար էր
ասում . ինչու որ՝ հենց նա
պիտի մատնէր նորան. և ինքն
տասներկուսիցն միևն էր ։

ԳԼ Ի ։

1 Եւ յետ այսորիկ շրջէր
Յիսուս ի գալիլեա . քանզի
ոչ կամէր ի հրէաստանի
շրջել , զի խնդրէին զնա

1 Եւ սրանից ետև Յի-
սուս ման էր գալիս գալիլեա-
յի միջումն . ինչու որ՝ չէր
կամենում հրէաստանումն (շր-

հրեայքն սպանանել ։

2 Եւ էր մերձ տօնն հրեից տաղաւարահարաց ։

3 Ասեն ցնա եղբարքն նո- րա . գնա ասկի և երթ ՚ի հրեաստան, դի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես ։

4 Զի ոչ ոք է՝ որ ՚ի ծա- ծուկ ինչ գործէ, և խնդրէ ինքն համարձակ լինել . եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի ։

5 Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ ՚ի նա ։

6 Ասէ ցնոսա Յիսուս . Ժամանակ իմ չե՛ է հասեալ , բայց ձեր ժամանակ յամե- նայն ժամու պատրաստ է ։

7 Ո՛չ կարէ աշխարհս ա- տել զձեզ . բայց զիս ատեայ, դի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարու- թեան են ։

8 Դուք երթայք ՚ի տօնն յայն , ես ոչ երթամ ՚ի տօնն յայն . դի իմ ժամա- նակ չե՛ է լցեալ ։

9 Զայս ասացեալ ցնոսա՝ ինքն մնայ անդէն ՚ի գալիլեա ։

10 Իբրև ապա ելին եղ- բարքն նորա՝ յերթալ ՚ի տօնն , յայնժամ և նա ելանէ ոչ յայտնապէս , այլ իբրև ՚ի ծածուկ ։

11 Եւ հրեայքն խնդրէին զնա յտօնին , և ասէին . Ո՞ր է նա ։

12 Եւ տրտունջ մեծ էր ՚ի բազմութեանն վասն նո- րա . զի ոմանք ասէին՝ եթէ բարի է նա , և այլք ասէին՝ ո՛չ , այլ մոլորեցուցա- նէ զբազմութիւնն ։

13 Բայց ոչ ոք խօսէր զնա յայտնի վասն երկիւղի հրեից ։

14 Իսկ յորժամ կէս տօնին էր , ել Յիսուս յտա- ճարն , և ուսուցանէր ։

15 Եւ զարմանային հրեայքն՝ ասելով . Զիա՞րդ գրոց գիտէ սա՝ զի ոչ ուսեալ է ։

16 Պատասխանի ետ նո- ցա Յիսուս և ասէ . Ոչ իմ է ուսումն իմ , այլ հօրն՝ որ առաքեաց զիս ։

17 Եթէ ոք կամի կամս նորա առնել՝ գիտասցէ զուսմունքն , եթէ յԱստու- ծոյ են , կամ ես յանձնէ իմէ խօսիմ ։

18 Որ յանձնէ իմէ խօսի՝ զփառս իւր ինքն խնդրէ . իսկ որ խնդրէ զփառս հո- գոյ առաքելոյն՝ ճշմարիտ է , և անիրաւութիւն չիք ՚ի նմա ։

19 Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնս , և ոչ ոք ՚ի ձէնջ առնէ զօրէնսն . զիա՞րդ զիս սպանանել խնդրէք ։

20 Պատասխանի ետ ամբոխն և ասէ . Դեւ ունիս դու . ո՞վ է որ զքեզ սպանանել խնդրէ ։

21 Պատասխանի ետ Յի- սուս և ասէ ցնոսա . Մի գործ արարի , և զարմանայք ամենեքին ։

22 Վասն այսորիկ Մովսէս ետ ձեզ զթլփատութիւն , ոչ զի յՄովսիսէ է , այլ յհարցն , և յաւուր շաբաթու թլփատէք զմարդ ։

23 Եթէ ընդունի մարդ թլփատութիւն յաւուր շա- բաթու , զի մի խախտեսցի օրէնքն Մովսիսի , ինձ բարկանայք , զի զամենայն մարդ յաւուր շաբաթու ա- ռողջացուցի ։

24 Մի դատիք ըստ տես- լեան , այլ զարդար դատաս- տանաւ դատեցէք ։

25 Ասէին ոմանք յերու- սաղէմացւոցն . Ո՞չ այս է զոր խնդրեն սպանանել ։

26 Եւ ահա զբաց խօսի , և ոչ ասեն ցնա ինչ . մի՞ գուցէ և իրաւ գիտացին իշխանքն , եթէ սա է Քրիստոս ։

27 Բայց զայս գիտեմք զի- նչ ուստի է , և Քրիստոս յո- րժամ եկեսցէ՝ ոչ ոք գիտէ զի- նչ ուստի է ։

28 Ուսուցանէր ուրեմն Յիսուս յտաճարին՝ աղա- ղակելով և ասելով . Զիս գի- տէք և զուստի եմ գիտէք , և ոչ յանձնէ իմէ եկի , այլ է ճշմարիտ որ առաքեաց զիս , զոր դուք ոչ գիտէք ։

29 Ես գիտեմ զնա , զի յնմանէ եմ , և նա առաքեաց զիս ։

30 Եւ խնդրէին զնա կալ- նուլ , և ոչ ոք ձգեաց ՚ի նա զձեռս , զի ոչ էր եհաս ժամ նորա ։

31 Եւ բազումք յամբոխէն հաւատացին ՚ի նա , և ասէին . Քրիստոս յորժամ եկեսցէ՝ մի՞ գուցէ զայսքան նշանս առնիցէ , որչափ սա արար ։

32 Լուան փարիսեցիքն զայս ամբոխին զայսպիսի խօսեցեալ վասն նորա , և առաքեցին փարիսեցիքն և քահանայապետքն սպասաւորս զի բռնեսցեն զնա ։

33 Ասէ ցնոսա Յիսուս . Զկնի սակաւ ինչ ժամու ես եմ ընդ ձեզ , և երթամ առ հայր իմ որ առաքեաց զիս ։

34 Խնդրեսջիք զիս և ոչ գտանիցէք , և ուր ես եմ դուք ոչ կարէք գալ ։

35 Ասեն հրեայքն ընդ միմեանս . Ո՞ւր երթիցէ սա՝ զի մեք ոչ գտցուք զնա . մի՞ գուցէ ՚ի գաղթականութիւնն հելլենացւոց երթիցէ , և ուսուցանիցէ հելլենացւոց ։

36 Զի՞նչ է բան սա զոր ասաց՝ խնդրեսջիք զիս և ոչ գտանիցէք , և ուր ես եմ դուք ոչ կարէք գալ ։

37 Յաւուրն յետնում մե- ծի տօնին կայր Յիսուս , և աղաղակեաց ասելով . Եթէ ոք ծարաւի՝ եկեսցէ առ իս և արբցէ ։

38 Որ հաւատայ ՚ի իս՝ որպէս ասաց գիրն , գետք յորովայնէ նորա հոսեսցեն կենդանի ջրոյ ։

39 Զայս ասաց վասն Հո- գոյն սրբոյ , զոր առնուին հաւատացեալքն ՚ի նա . զի ոչ էր տուեալ Հոգին սուրբ , զի Յիսուս ոչ էր դեռ փառաւորեալ ։

40 Ոմանք յամբոխէն լու- եալ զբանս զայս՝ ասէին . Ճշմարիտ է սա մարգարէ ։

41 Ոմանք ասէին . Սա է Քրիստոս ։ Ոմանք ասէին . Ո՞չ յԳալիլեայ գայ Քրիստոս ։

42 Ո՞չ գրեաց գիրն՝ զի յազգէ Դաւթի և յԲեթղե- հեմէ գեղջէ , ուր էր Դաւիթ , գայ Քրիստոս ։

43 Եւ պատառեցաւ ամ- բոխն վասն նորա ։

44 Ոմանք յնոցանէ կա- մէին կալնուլ զնա , և ոչ ոք ձգեաց ՚ի նա զձեռս ։

45 Դարձան սպասաւորքն առ քահանայապետսն և առ փարիսեցիսն , և ասեն ցնոսա . Ընդէ՞ր ոչ բերէք զնա ։

46 Պատասխանի ետուն սպասաւորքն և ասեն . Ոչ երբեք այսպէս խօսեցաւ մարդ , որպէս խօսի մարդս սա ։

47 Պատասխանի ետուն նոցա փարիսեցիքն . Մի՞ և դուք մոլորեցարուք ։

48 Ո՞չ ոք յիշխանացն հաւատաց ՚ի նա , կամ յփարիսեցւոցն ։

49 Այլ ամբոխս այս որ չգիտէ զօրէնսն , անէծք են ։

50 Ասէ Նիկոդէմոս ցնոսա , որ եկեալ էր առ նա յա- ռաջագոյն , որ էր մի յնոցանէ .

51 Մի՞ դատէ զմարդ օրէնքն մեր , եթէ նախ լուիցէ յնմանէ և գիտասցէ զինչ առնէ ։

52 Պատասխանի ետուն և ասեն ցնա . Մի՞ և դու յԳալիլեացւոց ես . քննեա և տես , զի մարգարէ ոչ յառնէ յԳալիլեայ ։

53 Եւ գնաց իւրաքանչիւր ոք ՚ի տուն իւր ։

10 Իբրև եկին եղբարքն նորա, ապա և ինքն եկ՝ ի տօնն, ոչ յայտնի, այլ իբրև ի ծածուկ։

11 Եւ հրէայքն խնդրէին զնա ի տօնի՝ ասէ՛ն և ասէին, Ո՞ւր իցէ նա։

12 Եւ քրթմնջիւն էր ինամանէ՝ ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝ թէ բարւոք է. այլքն ասէին՝ ո՛չ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն։

13 Եւ ո՛չ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին հրէից։

14 Իբրև տօնն կէսքն եղեալ էր՝ եւ Յիսուս ի տաճարն՝ և ուսուցանէր։

15 Զարմանային հրէայքն և ասէին. զիա՞րդ գրիւրն գիտէ սա, զի ուսեալ չէ։

16 Պատասխանի ետ նոցա և ասէ. իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս։

17 Եթէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ վասն վարդապետութեանս, Աստ-

10 Երբոր նորա եղբարքն գնացին, ապա ինքն եկ՝ գնաց էն տօնն, չէ թէ յայտնի, բայց իբր մին ծածուկ կերպով։

11 Եւ հրէանքն խնդրուէին նորան էն տօնուէն և ասում՝ թէ նա ո՞րտեղ պիտի լինի։

12 Եւ ժողովրդի միջուէն տրտնջմունք կար նորա համար. կէսն ասում էին՝ թէ բարի մարդ է. ուրիշներն ասում էին՝ չէ, բայց ժողովրդին մոլորացնում։

13 Եւ ո՛չ ով համարձակ էր խօսում նորա վերայ, հրէանների վախին համար։

14 Երբոր տօնն կէս էլաւ, Յիսուս վեր էլաւ տաճարն՝ և սովորցնում։

15 Հրէանքն զարմանում էին և ասում. սա ի՞նչպէս է գիտում գրքերըն, որ իսկի սովորած չէ։

16 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց. իմ վարդապետութիւնս իմ չէ, այլ նորանն է՝ որ ինձ ուղարկեց։

17 Թէ որ միևն կամենում նորա կամքըն անել՝ նա կիմանայ իմ վարդապետութեան

տուեալ իմէ արդեօք, եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ։

18 Որ յանձնէ իւրմէ խօսի, փառս անձին իւրում խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ՝ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, և անիրաւութիւն ոչ գոյ ի նմա։

19 Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն, և ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն։

20 Զի՞ լինդրէք զիս սպանանել. պատասխանի ետ ժողովուրդն և ասէ. դեւ գոյ ի քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։

21 Պատասխանի ետ Նոցա Յիսուս և ասէ. գործ մի գործեցի, և ամենեքին զարմացեալ էք։

22 Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն, զի ոչ եթէ ի Մովսէսէ էր, այլ ի հարց անտի. և ի շաբաթու թլփատէք զմարդ։

23 Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի օրէնքն Մովսէսի լուծցին, ընդ իս համար, եթէ Առաւծանէ՛ց է, կամ եթէ ես իմ անձնէն եմ խօսում։

18 Նա որ իրան անձնիցն է խօսում, իրան անձին փառքըն է խնդրում. բայց նա՝ որ նորա փառքըն է խնդրում՝ որ ուղարկեց նորան՝ նա ճշմարիտ է, և անիրաւութիւն չըկայ նորանում։

19 Չէ՞ որ Մօսէսն տուաւ ձեզ օրէնքըն, և ձեզանից ոչ ով չի կատարում օրէնքըն։

20 Ի՞նչու էք ուզում ինձ սպանել. ժողովուրդն պատասխան տուաւ և ասաց. դև կայ քեզանում. ո՞վ է ուզում՝ որ քեզ սպանէ։

21 Յիսուս պատասխան արաւ նորանց և ասաց. մի գործ գործեցի, և ամենքըդ զարմայել էք։

22 Նրահամար Մօսէսն ձեզ տուաւ թլփատութիւնըն, չէ թէ որ Մօսէսիցն էր, բայց էն հին հարանցիցն. և շաբաթ օրումն մարդ էք թլփատում։

23 Եպա եթէ մարդ շաբաթ օրումն թլփատութիւն է առնում, որ Մօսէսի օրէնքըն չըքանդվի, ինձ վերայ

ցասուցեա՞լ էք՝ զի ողջոյն իսկ մարդ բժշկեսյ ի շաբաթու ։

24 Մի՛ ըստ աչս դատէք, այլ ուղիղ դատաստան արա՛րէք ։

25 Ասէին ոմանք յԵրուսաղէմացւոց անտի. ո՞չ նա է սա՝ զոր խնդրէինն սպանանել ։

26 Եւ աւասիկ յայտնապէս խօսի, և չասեն ինչ դմա. գուցէ արդեօք և իշխանքն գիտացին՝ թէ սա իսկ է Քրիստոսն ։

27 Այլ զսա գիտեմք ուստի է. իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ո՛չ ոք գիտէ ուստի է ։

28 Աղաղակեաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր և ասէր. և զիս գիտէք, և ուստի եմ գիտէք. և յանձնէ իմմէ ո՛չ եմ եկեալ, այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ո՛չ գիտէք ։

29 Ես գիտեմ զնա, զի ի նմանէ իսկ եմ, և նա առաքեաց զիս ։

30 Խնդրէին զնա ունել, և ել ի ձեռաց նոցա. և ո՛չ ոք արկ ի նա ձեռն, զի բարկացա՞ծ էք՝ որ ես ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրուընէ ։

24 Ո՛չ ըստ երևութով մի դատէք, այլ շիտակ դատաստան արէք ։

25 Երուսաղէմացիներից մին քանիսն ասում էին. չէ՞ որ սա էն է՝ որ ուզում էին նորան սպանել ։

26 Եւ ահա յայտնի խօսում, և բան չեն ասում դորան. չըլինի՞ որ իշխաններն էլ իմացան՝ որ սա է Քրիստոսն ։

27 Բայց սորան գիտումենք թէ որտեղից է. և Քրիստոսն երբոր կըգայ իսկի մինն չի գիտենալ թէ որտեղից է ։

28 Յիսուս աղաղակեց տաճարում, սովորցնում էր և ասում էր. թէ ինձ գիտում էք, և թէ ինչտեղից եմ եկել գիտումէք. և իմ անձնիցս չեմ եկել, բայց նա ճշմարիտ է՝ որ ինձ ուղարկեց. որ դուք նորան չէք գիտում ։

29 Ես գիտումեմ ինորան, ինչու որ հենց նորանից եմ, և նա ուղարկեց ինձ ։

30 Եւ ուզում էին բռնել նորան, և նորանց ձեռներից դուրս գնաց. և ոչ ով ձեռ

չև՝ էր հասեալ ժամ նորա։

31 Եւ բազումք ՚ի ժողովրդենէն հաւատացին ՚ի նա՝ և ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ միթէ աւելի՞ նշանս առնիցէ, քան զոր սոյա առնէ։

32 Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զայսոսիկ զնմանէ. և առաքեցին քահանայապետքն և փարիսեցիք սպասաւորս՝ զի կալցին զնա։

33 Ասէ Յիսուս. փոքր մի ևս ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝ որ առաքեացն զիս։

34 Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք, և ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ։

35 Ասեն հրէայքն ընդ միմեանս. Ո՞ւր երթայցէ դա, զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ՚ի սփիւռս հեթանոսաց երթայցէ՞ և ուսուցանիցէ զհեթանոսս։

36 Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց. խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ։

չէ ձրկէ նորան. ընչուս որ՝ նորա ժամանակն դեռ չէր հասել։

31 Եւ ժողովրդենէն շատ մարդիկ հաւատացին նորան՝ և ասէին. Քրիստոսն երբոր կըգայ՝ միթէ աւելի նշաններ կանէ, քան էն՝ որ սա անուսմ։

32 Եւ փարիսեցիներն լսեցին ժողովրդին էն սրտրտունջն. որ նորա համար սրսիլ էին. և քահանայապետներն և փարիսեցիներն սպասաւորներ ուղարկեցին՝ որ բռնեն նորան։

33 Յիսուս ասաց. մին քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ՝ և գնուսիմ նորա մօտ, որ ուղարկեց ինձ։

34 Ինձ մանը կըփնտրէք և չէք գտնիլ, և որտեղ որ ես գնուսիմ, դուք չէք կարող գալ։

35 Հրեաներն իրար ասացին. ապա դա որ տեղ պիտի գնայ, որ մենք չըգտնենք զորան. միթէ հեթանոսների մէջ ցրված ժողովուրդներն մօտ կըգնայ և հեթանոսներին կըսովորցնէ։

36 Ի՞նչ է էն խօսքն՝ որ ասաց. Մէկ ինձ մանը կըփնտրէք և չէք գտնիլ՝ և որտեղ որ ես գնուսիմ, դուք չէք կարող գալ։

37 Ի վերջնում աւուր մե-
ծի տօնին կայր Յիսուս ա-
ղաղակէր և ասէր . եթէ ոք
ծարաւի լսիցէ՝ եկեսցէ առ-
ի՛ և արբցէ ։
38 Որ հաւատայ յիս՝ որ-
պէս և ասէն գիրք, գետք
յորովայնէ նորա բղխեսցեն
ջրոյ կենդանութեան ։
39 Զայս ասէր վասն Հոգ-
ւոյն՝ զոր ընդունելոց էին,
որ հաւատային ի նա, զի չէ՛
էր Հոգի, քանզի Յիսուս
չէ՛ էր վառաւորեալ ։

40 Ոմանք ի ժողովրդենէն
երբեմն լսելին զբանս դայս,
ասէին . սա է՝ Ճշմարիտ մար-
գարէն ։
41 Այլքն ասէին . սա է
Քրիստոս . իսկ ակնքն ա-
սէին՝ միթէ ի գալիլեայ գա-
լոյ իցէ Քրիստոս ։
42 Ո՞չ գիրք ասէն , եթէ
ի սերմանէ դաւթի , և ի
բեթղեհեմ գեղջէ՝ ուր դա-
ւիթ էր , գալոյ է Քրիս-
տոս ։
43 Ընդ եղև հնձառած ի
մէջ ժողովրդեանն վասն նո-
րա ։
44 Ոմանք ի նոցանէ
կամեցան ունել զնա . այլ ոչ

37 Տօնի վերջին մեծ օրումն
Յիսուս կանգնած էր՝ աղա-
ղակումէր և ասէր . Եթէ որ
միւն ծարաւ է՝ գայ առ ինձ մօտ
գայ, և խմէ ։
38 Նա որ ինձ հաւատումէ՝
ինչպէս որ գիրքն էլ ասէ,
նորա փորձոյն կենդանի ջրերի
գետեր կըզ գային ։
39 Այս բանըս ասէր էր
հոգւոյն համար՝ որ պիտի ըն-
դունէին նորանք , որ հաւա-
տային նորան , ինչու որ՝
դեռ հոգին չըկար, որովհե-
տև Յիսուս դեռ չէր փառա-
ւորուած ։
40 Ժողովրդից միւն քա-
նին երբոր էս խօսքըս լսու-
մէին, ասումէին . սա Ճշմարիտ
մարգարէն է ։
41 Ուրիշներն ասումէին .
սա Քրիստոսն է . բայց կէսն
ասումէին՝ միթէ Քրիստոսն
գալիլեացի՞ կըլայ ։
42 Չէ՞ որ գրքերն ասումեն,
եթէ Քրիստոսն դաւթի զա-
ւակիցն, և բեթղեհեմ գիւ-
ղից պիտի գայ՝ որտեղ որ
դաւիթն էր ։
43 Ընդ տարաձայնութիւն է-
լաւ ժողովրդի միջումն նո-
րա համար ։
44 Ընորանից միւն քանիսն
կամեցան բռնել նորան . բայց

ոք միեաց ՚ի նա ձեռս ։

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փարիսեցիս, և ասեն ցոքա ցնոսա. ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր ։

46 Պատասխանի ետուն սպասաւորքն և ասեն. ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն ։

47 Պատասխանի ետուն փարիսեցիքն և ասեն. միթէ և դո՞ւք մոլորեցարուք ։

48 Միթէ ոք յիշխանացն հաւատաց ՚ի նա կամ ՚ի փարիսեցւոց.

49 Այլ ամբոխս՝ որ ոչ գիտէ զօրէնս և նզովեալ են ։

50 Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ եկեալն էր առ նա գիշերի՝ որ էր ՚ի նոցանէ.

51 Միթէ օրէնքն մեր դատի զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ՚ի նմանէ. կամ գիտեն զի՛նչ գործէ ։

52 Պատասխանի ետուն նմա և ասեն. միթէ և դու ևս՚ի գալիլեէ՞ իցես. քննեա՛ և

իսկի մինն ձեռք չէձգեց նորա վերայ ։

45 Եւ սպասաւորներն գան տեկին քահանայապետներուն և փարիսեցիներուն մօտն. և սորանք ասացին նորանց. ինչու համար նորան չբերիք ետեղ ։

46 Սպասաւորներն պատասխան տուին և ասացին. իսկի մին ժամանակ մին մարդ (էնպէս) չըխօսեց՝ ինչպէս որ էն մարդն ։

47 Փարիսեցիքն պատասխան տուին և ասացին. միթէ դուք էլ մոլորուեցաք ։

48 Միթէ իշխաններեցն կամ փարիսեցներեցն մինն հաւատաց նորան.

49 Բայց էն ամբիկ ժողովուրդն՝ որ օրէնքըն չիպտուտ և անիծուած են ։

50 Նիկոդիմոսն՝ որ առաջ գիշերուն նորա մօտ էր եկել՝ և նորանցից մինն էր. ասաց նորանց.

12 Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո, որով ետուր ինձ, և պահեցի. և ոչ ոք ՚ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։

13 Բայց արդ՝ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։

14 Եւ ետու նոցա զբանն քո, և աշխարհս ատեաց զնոսա, զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ։

15 Ո՛չ զայս աղաչեմ, զի բարձցես զնոսա յաշխարհէ. այլ զի պահեսցես զնոսա ՚ի չարէ։

16 Յաշխարհէ ոսոխ չեն, րպէս և ես չեմ յաշխարհէ։

ամենեան քո է. և ինչ որ քո է՝ էն իմ է. և ես փառաւորեալ եմ նորանովք։

11 Եւ ես էլ աշխարհքումս չեմ, և նորանք աշխարհքումս են, և ես քեզ մօտ եմ գալիս. ով Հայր. սուրբ պահիր նորանց քո անունովդ, որ նորանով տուիր ինձ. որ մին լինէին, ինչպէս որ մենք մին ենք։

12 Դեռ քանի որ աշխարհքումն նորանց հետ էի, ես էի պահում նորանց քո անունովդ, նորանց որ տուիր ինձ, էլ պահեցի. և նորանցից մինն չկորաւ, բայց մէնակ կորուստի որդին՝ որ գիրքն կատարվի։

13 Բայց հիմիկ քեզ մօտ եմ գալիս. և ես բանըս աշխարհքումն խօսումեմ, որ իմ ուրախութիւնըս լիութեամով ունենան իրանց անձերումն։

14 Եւ քո խօսքըդ նորանց տուի, և աշխարհքս նորանց ատեց, պատճառն որ՝ աշխարհքիցս չեն, ինչպէս որ ես էլ աշխարհքիցս չեմ։

15 Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցս վեր առնես նորանց. բայց որ չարիցն պահես նորանց։

16 Ես աշխարհքիցս չեն, ինչպէս որ ես էլ աշխարհքիցս չեմ։

17 Սուրբ սրա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է:

18 Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ:

19 Եւ ՚ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ:

20 Ասէ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց քան նեւն նոցա ՚ի իս:

21 Զի ամենեքին մի իցեն, որպէս դու հայր ՚ի իս՝ և ես ՚ի քեզ, զի և նոքա ՚ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս:

22 Եւ ես՝ զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք:

23 Ես ՚ի նոսա՝ և դու ՚ի իս, զի եղիցին կատարեալք ՚ի մի. և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. սիրեցեր զնոսա որպէս դու զիս սիրեցեր:

24 Հայր՝ զորս ետուր ինձ կամիմ՝ զի ուր եսն եմ, և

17 Ի նորանց սուրբ արա քո ճշմարտութենով. ինչու որ՝ քո խօսքդ ճշմարտութիւն է:

18 Ինչպէս որ ինձ ուղարկեցիր աշխարհը, ես էլ նորանց ուղարկեցի աշխարհը:

19 Եւ ես նորանց վերայ եմ, անձըս սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտութենով սրբուած լինին:

20 Բայց ոչ թէ միայն նորանց համար եմ աղաչում, այլ ամենին համար էլ՝ որ նորանց խօսքովն կըհաւատան ինձ:

21 Որ ամենքն մին լինին, ինչպէս որ դու հայր ինձ նունում՝ և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում լինին. որ աշխարհքն հաւատայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ:

22 Եւ ես՝ էն փառքըն՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի, որ մին լինին՝ ինչպէս որ մենք էլ մին ենք:

23 Ես նորանցում՝ և դու ինձանում, որ մընին մէջ կատարեալ լինին. և աշխարհքն գիտենայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ. և ես սիրեցի նորանց՝ ինչպէս որ դու ինձ սիրեցիր:

24 Հայր նորանք՝ որ դու ինձ տուիր, կամենում եմ՝ որ՝

նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։

25 Հայր արդար՝ և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան, եթէ դու առաքեցեր զիս։

26 Եւ ծանուցի նոցա զանունն քո, և ծանուցից. զի սէրն, զոր սիրեցեր զիս, ՚ի նոսա իցէ, և ես ՚ի նոսա։

լինչեղ որ ես եմ նորանք եղ ինձ հետ լինին. որ իմ փառքըս տեսանեն, որ տուիր ինձ. ինչու որ՝ աշխարհքի լինելուցն առաջ սիրեցիր ինձ։

25 Արդար Հայր՝ աշխարհքն չըճանաչեց քեզ. և սորանք ճանաչեցին, որ դու ուղարկեցիր ինձ։

26 Եւ քո անունըդ ճանաչայրի նորանց, և կըճանաչեմ. որ էն սէրն, որ ինձ սիրեցիր՝ նորանցում լինի. և ես եղ նորանցում։

ԳԼ. ԺԸ։

1 Զայս իբրև ասաց Յիսուս. եւ աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրոնի, ուր էր պարտէզ. յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր։

2 Գիտէր և Յուդա՝ որ զնա մատնելոց էր, զտեղին. զի քազուա անդամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն հանդերձ։

3 Եւ Յուդայի առեալ ընդ իւր զդունդն, և ՚ի քահանայապետիցն և ՚ի փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր ընդ լապտերս և ընդ ջահս և ընդ սուսերս։

1 Յիսուս երբոր էս ասաց. աշակերտներին հետ դուրս գնաց կետրոնի ձորի մեկեղ կողմն, որտեղ որ պարտեղ (պօսոպան) կար. որ նորա մեջ մտաւ ինքն և իրան աշակերտներն։

2 Յուդա էղ՝ որ պիտի մատներ նորան, գիտուէր էնտեղըն. ինչու որ՝ Յիսուս շատ անգամ ժողովվել էր էնտեղն աշակերտներին հետ։

3 Եւ Յուդան պինուդներըն գունդըն (պէօլյուքն) և քահանայապետներից և փա-

սեցւոց սպասաւորս, զայն դըր Ջահիւք և լապտերօք և զինուք։

3 Իսկ Յիսուս իբրև ետես զայս ամենայն, եկեալ ՚ի վերայ նորա, եւ ասէ ցնոսա. զո՞ խնդրէք։

5 Պատասխանի ետուն նմա. զՅիսուս Նազովրեցի. ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ. կայր ընդ նոսա և Յուդա, որ մատնէրն զնա։

6 Իբրև ասաց՝ Թէ ես եմ, յետս յետս չոգան, և զարկան զգետնի։

7 Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք. և նոքա ասեն, զՅիսուս Նազովրեցի։

8 Պատասխանի ետ Յիսուս. ասացի ձեզ Թէ ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛ղ տուք զոցա երթալ։

9 Զի լցցի բանն, զոր ասաց. Թէ զոր ետուրն ցիս, ո՛չ կորուսից ՚ի նոցանէ և ո՛չ զոք։

10 Իսկ սիմովն Պետրոս՝

րիսեցիներիցն սպասաւորները առաւ իրան հետ, և եկաւ էնտեղ ջահերով և լապտերներով (քառաքէրով) և զէնքերով։

4 Բայց Յիսուս երբոր տեսաւ էն ամէնըն, որ իրան վերայ էր եկել, դուրս եկաւ և նորանց ասաց. ո՞ւմ էք ուզում։

5 Պատասխան տուին նորան Թէ՝ Յիսուս Նազովրեցին. Յիսուս նորանց ասաց. ես եմ. Յուդան էլ՝ որ նորան մատնուէր՝ կանգնած էր նորանց հետ։

6 Երբոր (Յիսուս) ասաց Թէ ես եմ (նորանց), յետ գնացին և գետնի վերայ զարկվեցան։

7 Մինէլ հարցրուց նորանց՝ Թէ ո՞ւմ էք ուզում. և նորանք ասացին. Յիսուս Նազորեցին։

8 Յիսուս նորանց պատասխան տուաւ. ձեզ ասացի Թէ ես եմ. ուրեմն Թէ որ ինձ էք ուզում. Թո՛ղ տուէք դորանց, որ գնան։

9 Որ կատարվի էն բանն՝ որ ասաց, Թէ նորանց՝ որ ինձ տուիր, նորանցից իսկի մինըն էլ չեմ կորցնել։

10 Բայց սիմօն պետրոսն՝

քանզի ունէր սուր՝ ձգեաց զնա և եհար զքահանայապետին ծառայ, և կտրեաց զականջն նորա զաջ։ և էր անուն ծառային Մաղքոս։

11 Ասէ Յիսուս ցպետրոս. արկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր. զբաժակն՝ զոր ետ ինձ հայր՝ ոչ ըմպիցեմ զնա։

12 Իսկ գունդն և հազարապետն և սպասաւորք հրէից կալան զՅիսուս, և կապեցին.

13 Եւ առին զնա նախ առ Աննա, որ էր աներ կայիափայի. որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։

14 Եւ էր այն կայիափա էր, որ խրատն ետ հրէից, եթէ լաւ է առն միում մեռանել ի վերայ ժողովրդեանն։

15 Եւ երթային զհետ Յիսուսի սիմովն պետրոս, և միւս աշակերտն. և աշակերտն այն՝ քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի դատիճ քահանայապետին։

16 Եւ պետրոս կայր առ դրանն արտաքոյ. եւ միւս որովհետև սուր ունէր՝ քաշեց էն և քահանայապետի ծառային զարկեց, և նորա աջ ականջն կտրեց. և էն ծառայի անունն Մաղքոս էր։

11 Յիսուս պետրոսին ասաց. սուրըդ դարձրու քոյիր պատեանի (ղընի) մէջն. բաժակըն (Խասըն) էն որ իմ հայրս տուաւ ինձ, էն չըխմե՞մ։

12 Հայոց պինուորների գունդը (պէօլիւքն) և հազարապետն և հրէաների սպասաւորներն բռնեցին Յիսուսին և կապեցին։

13 Եւ տարան նորան առնայի մօտ՝ որ կայիափայի աներն էր՝ որ էն տարվան քահանայապետն էր։

14 Այս էն կայիափան էր՝ որ հրէաներին խըրատ տուաւ՝ թէ լաւ է, որ մին մարդ մեռնի ժողովըրդի վերայ։

15 Եւ սիմոն պետրոն և մեկել աշակերտն գնումին Յիսուսի ետևէն. էն աշակերտն՝ որովհետև ճանաչէր քահանայապետին, Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրահն։

16 Եւ պետրոն դրսումն մօտ կանգնած էր դուրսն. էն

աշակերտն, որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց ցդռնապանն, և եմոյծ Ի՛ներքս պետրոս։

17 Ասէ աղջիկն՝ որ դռնապանն էր, պետրոսի։ միթէ և դո՛ւ յաշակերտաց այնորիկ իսես. և նա ասէ՝ ո՛չ եմ։

18 Կային անդ ծառայքն և սպասաւորքն խարսխ արկեալ. քանզի ցուրտ էր, և ջեռնուին. կայր ընդ նոսա և պետրոս և ջեռնոյր։

19 Իւ քահանայապետն եհարց զՅիսուս վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան նորա։

20 Պատասխանի ետ նմա Յիսուս. ես յայտնապէս խոսեցայ յաշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի Ի ժողովարանին, և Ի տաճարի անդ, ուր ամենայն հրէայք ժողովեալ էին, և Ի ծածուկ ինչ ո՛չ խոսեցայ։

21 Զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որ լուան, թէ զինչ խոսեցայ ընդ նոսա. ահաւանիկ նոքա գիտեն զինչ ասացի ես։

մէկէլ աշակերտն, որ քահանայապետին ճանաչ էր, դուրս եկաւ և դրընապանին ասաց. և պետրոսին ներս մտցրուց։

17 Ընդ աղջիկն՝ որ դռնապան էր՝ պետրոսին ասաց. միթէ դու ՚ի՛ էն մարդոյ աշակերտներիցն ես. և նա ասաց՝ թէ չեմ։

18 Ընտիղն ծառաներն և սպասաւորներն կանգնած էին, կրակը վառած, ինչու որ՝ ցուրտ էր՝ և տաքանում էին. պետրոսն էլ նորանց հետ կանգնած էր և տաքանում էր։

19 Իւ քահանայապետն Յիսուսին հարցրուց (իրան) աշակերտների համար՝ և իրան վարդապետութեան համար։

20 Յիսուս պատասխան տուաւ նորան. ես յայտնի խոսեցի աշխարհքի մէջն. ես ամէն ժամանակ սովորցրի ժողովարանում, և հենց տաճարում, որտեղ որ ամէն հրէաներն ժողովված էին, և խոկի մի ծածուկ բան չխոսեցի։

21 Ինչո՞ւ ես ինձ հարցնում. նորանց հարցրու՝ որ լսեցին, թէ ինչ խոսեցի նորանց հետ. ահա նորանք գիտումն՝ ինչ որ խոսեցի։

22 Իբրև նա զայս ասաց. մի ոմն ՚ի սպասաւորացն, որ անդ կայր, ած ապտակ Յիսուսի, և ասէ. այդպէ՞ս պատասխանի տաս քահանայապետիդ։

23 Ցիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին. իսկ եթէ բարւոյ, ընդէ՞ր հարկանես զիս։

24 Առաքեաց զնա անտի Անան կապեալ առ Կայիափա քահանայապետ։

25 Սիմոն պետրոս կայր անդ՝ և ջերմացեալ. ասեն ցնա. միթէ և դո՛ւ յաշակերտաց անտի նորա իցես. նա ուրացաւ և ասէ՝ թէ չեմ։

26 Ասէ մի ոմն ՚ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ վնասեաց պետրոս. ո՞չ ես իսկ տեսի զքեզ ՚ի պարտիզի անդ ընդ նմա։

27 Դարձեալ ուրացաւ պետրոս. և վաղվաղակի հաւ խօսեցաւ։

28 Եւ ածին զՅիսուս ՚ի վանացն կայիափայ յատեանս դատաւորին. և էր այգուց. և նոքա ոչ մտին

22 Երբոր նա էս ասաց, սպասաւորներից միւնն, որ էնտեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ (ուլէ) տուաւ, և ասաց. Կ՚դպչես ես պատասխան տալիս քահանայապետին։

23 Յիսուս նորան ասաց. Եթէ որ չար բան խօսեցի՝ վկայիր էն չարին համար. բայց եթէ որ բարի (ասացի), ինչո՞ւ ես զարկում ինձ։

24 Եւ անկան նորան կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտն։

25 Եւ սիմօն պետրոսն էնտեղ կանգնած էր և տաքանում էր. նորան ասացին. միթէ դո՛ւ էլ նորա աշակերտներիցն ես. նա ուրացաւ և ասաց՝ եթէ չեմ։

26 Եւ քահանայապետի ծառաներիցն միւնն՝ որ ազգական էր նորան, որ պետրոս նորա ականջն կտրեց, ասաց. չէ՞ որ հենց ես տեսի քեզ էն պարտէզումն (պօռոնուժ) նորա հետ։

27 Պետրոսն միւնէլ ուրացաւ. և շուտով հաւն խօսեց։

28 Եւ Յիսուսին կայիափայի տանիցն տարան դատաւորի պալատն. և առաւօտ էր. և նորանք չմտին պալատի

յատպարանն, զի մի պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն։

29 Ել առ նոսա պիղատոս արտաքս՝ և ասէ· զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ։

30 Պատասխանի ետուն և ասեն ցնա· եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։

31 Ասէ ցնոսա պիղատոս· առէք զնա դուք, և ըստ ձերոյ օրինացն դատեցարուք· ասեն ցնա հրէայքն· մեզ ոչ է արժան սպանանել զոք։

32 Զի լցցի բանն Յիսուսի՝ զոր ասաց, նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ։

33 Եմուտ միւսանգամ յապարանն պիղատոս, կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա· դո՞ւ ես թագաւորն հրէից։

34 Պատասխանի ետ Յիսուս· ի քէ՞ն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն։

35 Պատասխանի ետ պիղատոս· միթէ և ես հրէայ իցեմ· ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ

մէջն, որ չըպղծվին, քայց որ պատիկըն ուտեն։

29 Պիղատոս դուրս եկաւ նորանց մօտ և ասաց· ին մարդոյ համար ի՞նչ չարախօսութիւն էք անում։

30 Պատասխան տուին և նորան ասացին· թէ որ էն մարդն չարագործ չըլինէր, ապա նորան չէինք մատնել քեզ։

31 Պիղատոս նորանց ասաց· դուք առէք նորան, և ձեր օրէնքին պէս դատեցէք· հրէաներն նորան ասացին· մեզ արժան չէ որ մին (մարդ) սպանենք։

32 Որ Յիսուսի խօսքն կատարվի, որ ասաց՝ ցոյց տալով՝ թէ ի՞նչ մահով պիտի մեռնի։

33 Պիղատոս մինէլ մտաւ պալատն, Յիսուսին կանչեց և նորան ասաց· դո՞ւ ես հրէաների թագաւորն։

34 Յիսուս պատասխան տըւաւ· քեզանից ես ասում էդ, թէ ուրիշնե՞րն ասացին քեզ ինձ համար։

35 Պիղատոս պատասխան առաւ· միթէ ես ի՞լ հրէայ եմ· քո ազգդ և քահանայապետներն քեզ մատնեցին ինձ

լինձ, զի՞նչ գործ գործեալ է քո։

36 Պատասխանի ետ Յիսուս. իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ այսմ էր արքայութիւն իմ, սպասաւորք իմ մարտնչէին արդեօք՝ զի մի մատնեցայի հրեից. բայց արդ՝ թագաւորութիւնն իմ չէ աստի։

37 Ասէ ցնա պիղատոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու. պատասխանի ետ Յիսուս. դու ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեան, ամենայն՝ որ ի ճշմարտութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ։

38 Ասէ ցնա պիղատոս. զի՞նչ է ճշմարտութիւն. զայս երբեւ ասաց, դարձեալ ել առ հրեայսն և ասէ ցնոսա. ես ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա։

39 Իսկ է ձեր սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ կամիք՝ զի արձակեցից ձեզ զթագաւորն հրեից։

դու ինչ բան ես ասել։

36 Յիսուս պատասխան տուաւ. իմ թագաւորութիւնս ես աշխարհիցս չէ. եթէ որ իմ թագաւորութիւնս ես աշխարհիցս լինէր, ապա իմ ծառաներս կռիւ կանէին՝ որ չըմատնըվիմ հրէաներուն ձեռքըն. բայց հիմի իմ թագաւորութիւնս էստեղիցս չէ։

37 Պիղատոս ասաց նորան. ապա թէ որ էդպէս է, դու միւն թագաւոր ես. Յիսուս պատասխան տուաւ. դու ես ասում՝ որ ես թագաւոր եմ. բայց ես հենց դրա համար եմ ծնված և հենց դրա համար եմ եկել աշխարհք, որ ճըշմարտութեանն վկայեմ. ամէն՝ ով որ ճշմարտութենիցն է՝ իմ ձայնըս կըլսէ։

38 Պիղատոս նորան ասաց. ինչ է ճշմարտութիւն. երբոր ես ասաց, միւնէլ դուրս նոցա հրէաներուն մօտ և նորանց ասաց. ես իսկի միւն պատճառ չեմ գտնում նորանում։

39 Իսկ ձեր սովորութիւն է՝ որ զատկի ժամանակուն միւն մարդ արձակեմ ձեզ համար. ուրեմն կամնո՞ւմք՝ որ հրէաներուն թագաւորըն արձակեմ ձեզ համար։

10 Ամենեքեան՝ ասեն ցնա. մի՛ զմեզ, այլ զբարաբբա՛ս. եւ էր բարաբբաս աւազակ։

10 Ամենքն աղաղակեցին՝ եւ ասացին. դորան չէ, այլ բարաբբայն (մին) աւազակ էր։

ԳԼ· ԺԹ։

1 Յայնժամ առ պիղատոս զՅիսուս եւ դան եհար։

1 Յն ժամանակին պիղատոս Յիսուսին առաւ եւ ծեծեց։

2 Եւ զինուորացն արարեալ պսակ՝ ի փշոց, եդին ի գլուխ նորա, եւ զգեցուցին նմա հանդերձ ծիրանի։

2 Եւ զինուորներն փշէ՛ ըրեց մին պսակ շինեցին, նորան գլուխն դրին, եւ ծիրանի շոր հագցրին նորան։

3 Եւ գային առ նա, եւ ասէին. ողջ եր արքայ հրեից. եւ հանէին նմա ապտակս։

3 Եւ գալիս էին նորա մօտ, եւ ասում. ողջ կաց հրէից թագաւոր. եւ ապտակներ (ձեռքերով) էին տալիս նորան։

4 Եւ դարձեալ պիղատոս արտաքս եւ ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք՝ թէ ես զնաս ինչ՝ ի նմա ոչ գտանեմ։

4 Պիղատոս մինել դուրս գնաց եւ նորանց ասաց. ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ գիտենաք թէ՝ ես իսկի մին գնաս չեմ գտնում նորանում։

5 Եւ Յիսուս արտաքս եւ ունէր պսակ՝ ի փշոց, եւ հանդերձ ծիրանի. եւ ասէ ցնոսա. ահա այրդ ձեզ։

5 Յիսուս դուրս եկաւ եւ փըշերից պսակ ունէր, եւ էլ ծիրանի հագուստ. եւ նորանց ասաց. ահա էդ մարդդ ձեր առաջիդ։

6 Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ սպասաւորք, գաղաղակ բարձին՝ եւ ասեն. ՝ի խա՛չ հան՝ ՝ի խա՛չ հան

6 Երբոր քահանայապետներն եւ սպասաւորներն նորան տեսին՝ աղաղակեցին եւ ասացին. խա՛չ հանիր դորան.

զդա. ասէ ցնոսա պիղատոս. առէք զդա ՚ի ձեզ, և ձեզէն հանէք ՚ի խաչ. զի ես ՚ի դմա ինաս ինչ ոչ գտանեմ:

7 Պատասխանի ետուն նմա հրէայքն. մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացն մերոց պարտի մեռանել. զի զանձն իւր որդի Աստուծոյ արար:

8 Իբրև լուաւ զբանս զայս պիղատոս, առաւել ևս երկեաւ:

9 Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցՅիսուս. ուստո՞ր ես դու. և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի:

10 Ասէ ցնա պիղատոս. ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ՚ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ:

11 Պատասխանի ետ Յիսուս. ոչ ունէիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են:

12 Եւ յայնմանէ պիղատոս խնդրէր արձակել զնա. և

պիղատոս նորանց ասաց. ձեզ մո՛տ առէք դորան, և հեռց ձեզանից խաչ հանեցէք. ինչու որ՝ ես իսկի գիտաս չեմ գտնում դորանում:

7 Հրէաներն պատասխան տուին նորան. մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին պէս պէտք է մեռնի. ինչու որ՝ իրան անձըն Աստուծոյ որդի արաւ:

8 Երբոր պիղատոս էս բանըս լսեց, էլ աւելի վախեցաւ:

9 Մինէլ մտաւ պալատի մէջ, և Յիսուսին ասաց. դու ինչ տեղից ես. և Յիսուս պատասխան չըտուաւ նորան:

10 Պիղատոս ասաց նորան. ինձ հետ չե՞ս խօսում. միթէ չե՞ս գիտում, որ իշխանութիւն ունիմ քեզ խաչ հանելոյ, և իշխանութիւն ունիմ քեզ արձակելոյ:

11 Յիսուս պատասխան տուաւ. դու իշխանութիւն չունէիր ինձ վերայ, թէ որ վերևիցն չէր տրվուած քեզ. նրահամար՝ նա որ ինձ մատնեց քեզ, նորա մեղքն (աւելի) մեծ է:

12 Եւ նրանից եւս պիղատոս ուզումէր՝ որ նորան արձա-

հրէացքն աղաղակէին և ասէին . եթէ զդա արձակես՝ չես բարեկամ կայսեր . ամենայն ոք, որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր :

13 Իսկ պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ , ած զՅիսուս արտաքս , և նստաւ ի վերայ բեմին, ի տեղւոջն՝ որ կոչէր քարայատակ , և եբրայեցերէն կապպաթա :

14 Էր ուրբաթն զատկի · և էր ժամ իբրեւ վեցերորդ, և ասէ հրէայսն. ահա թագաւորդ ձեր ցձեզ :

15 Իւ նոքա աղաղակէին , բարձ ի մէնջ , բարձ ի մէնջ՝ և հան զդա ի խաչ , ասէ ցնոսա պիղատոս . ես զթագաւորդ ձեր ի խաչ հանիցեմ. պատասխանի ետուն քահանայապետքն. չի՛ք մեր թագաւոր բայց ի կայսերէ :

16 Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա , զի ի խաչ հանիցէ :

17 Իւ նոքա առեալ տարին զնա . և բարձեալ էր ինքն զխաչափայտն , և ելանէր ի տեղին՝ որ անուա-

կէ . և հրէաներն աղաղակէին և ասէին . եթէ որ զորան արձակես՝ կայսերի բարեկամ չես . ամէն ով որ իրան անձըն թագաւոր է կոչում , նա կայսերին հակառակ է :

13 Պիղատոս երբոր էս բաները լսեց , Յիսուսին դուրս բերաւ, և բեմին վերայ նստեց, էնտեղն՝ որ քարայատակ էր կոչվում , և եբրայեցերէն կապպաթա :

14 Զատկի ուրբաթն էր՝ իբր վեց ժամն (սահաթն) էր , և հրէաներին ասաց. ահա ձեր թագաւորն ձեր առաջին (է):

15 Իւ նորանք աղաղակում էին , մեզանից վեր առ, մեզանից վեր առ և խաչ հանիր դորան, պիղատոս նորանց ասաց . ես ձեր թագաւորըն խաչ հանեմ. քահանայապետները պատասխան տուին. մենք թագաւոր չունինք կայսերից ջոկ (սաչ) :

16 Էն ժամանակն նորան տուաւ նորանց ձեռքն, որ խաչ հանվի :

17 Իւ նորանք առին տարան նորան . և խաչափայտըն ինքն էր վերկալել, և դուրս էր գնում էն տեղն՝ որ գալա-

նեալ էր գագաթան, և կոչէր եբրայեցերէն գողգոթա ։

18 Ուր և ՚ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ՚ի միջի զՅիսուս ։

19 Գրեաց և տախտակ մի պիղատոս, և եդ ՚ի վերայ խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի՝ թագաւոր հրէից ։

20 Զայն տախտակ ընթերցան բազումք ՚ի հրէից, զի մօտ էր ՚ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և յունարէն ։

21 Ասեն ցպիղատոս քահանայապետքն հրէից. մի գրեր թագաւոր հրէից, այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ հրէից ։

22 Պատասխանի ետ պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի ։

23 Իսկ զինուորքն երբեմն հանին ՚ի խաչ զՅիսուս. առին զհանդերձս նորա՝ և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. թան էր ասվում. և եբրայեցերէն գողգոթա էր կոչվում ։

18 Ընտեղ խաչ հանեցին նորան՝ և նորա հետ երկու ուրիշ մարդ էլ՝ նորա էս կողմն և էն կողմն. և Յիսուս մէջ տեղն ։

19 Պիղատոս էլ մին տախտակ գրեց, և խաչի վերայ դրաւ. և գրած էր. Յիսուս նազորեցի՝ թագաւոր հրէից ։

20 Էն տախտակըն հրէաներից շատ մարդիկ կարդացին. ինչու որ քաղաքին մօտ էր էնտեղն՝ որ Յիսուս խաչվեցաւ. և էն գրուած էր եբրայեցերէն, լատիներէն և յունարէն (գրով)։

21 Հրէաների քահանայապետներն ասացին պիղատոսին. մի գրեր թագաւոր հրէից, այլ թէ նա ասաց, թէ թագաւոր եմ հրէից ։

22 Պիղատոս պատասխան տուաւ՝ ինչ որ գրեցի, գրեցի ։

23 Էյայց զինուորներն երբոր Յիսուսին խաչ հանեցին, նորա շորերըն առին՝ և չորս բաժին արին, ամէն մէկ զինուորի համար մին բաժին.

իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի՝ ի վե-
րուստ միտանկեալ ամենևին։

24 Ասեն ցմիմեանս. Մի պա-
տառեսցուք զայդ, այլ արկ-
ցուք վիճակս ի վերայ դո-
րա՝ ումի և եղիցի. զի լցցի
գիրն՝ որ ասէ. բաժանեցին
զհանդերձս իմ յիւրեանս,
և ի վերայ պատմուճանի ի-
մոյ վիճակս արկին. զինը-
ւորքն զայս ինչ գործեցին։

25 Եւ կային առ խաչին
Յիսուսի մայրն նորա, և
քոյր մօր նորա Մարիամ
Կղէովպայ, և Մարիամ Մագ-
դաղենացի։

26 Յիսուս իբրև տեսս
զմայրն և զաշակերտն՝ զոր
սիրէր, զկայր մօտ. ասէ
ցմայրն, կին դու՝ ահա որ-
դի քո։

27 Ապա ասէ ցաշակերտն.
ահա մայր քո. և յայնմ
ժամանակէ առ աշակերտն
զնա առ իւր։

28 Ետ այսորիկ իբրև գի-
տաց Յիսուս, եթէ ահա ա-
մենայն ինչ կատարեալ է,
զի կատարեսցի գիրն, ասէ.
Ծարաւի եմ։

29 Եւ անդ կայր աման
ինչ լի քացախով. և նոցա

քայց կապան՝ որովհետև ա-
ռանց կարի էր՝ վերևիցն (մին-
չև ցածն) բոլորն միւս հիւս-
ված։

24 Իրար ասացին. Դորան
չըպատառենք, բայց վիճակ
քցենք դորա վերայ՝ ումի որ
դուրս գայ. որ գիրքն կա-
տարվի, որ ասում՝ Թէ իմ
շորերըս իրանց մէջ բաժա-
նեցին և իմ կապայիս վերայ
վիճակ քցեցին. զինուորներն
էն բանըն արին։

25 Եւ Յիսուսի խաչին մօտ
կանգնած էին նորա մայրն.
և նորա մօր քոյրն, Մարիամ
Կղէոպան՝ և Մարիամ Մագ-
դաղենացին։

26 Յիսուս երբոր տեսաւ
իրան մօրըն և էն աշակերտին՝
որ սիրումէր, որ մօտիկ կանգ-
նած էր՝ մօրն ասաց. Էվ կին՝
ահա քո որդիդ։

27 Յետոյ աշակերտին ա-
սաց. ահա քո մայրդ. և էն
ժամանակիցն՝ էն աշակերտն
իրան մօտ առաւ նորան։

28 Սրանից ետև երբոր Յի-
սուս գիտաց, Թէ ամէն բան
կատարված է, որ գիրքն կա-
տարվի՝ ասաց. Ծարաւ եմ։

29 Եւ էնտեղ մին ման
կար քացախով լիքն. և նո-

սպունգ լցեալ քացախով ընդ լեզուի՝ շուրջ եդեալ զմշակաւ զոպպի՝ մատուցին ի բերան նորա ։

30 Իբրեւ առ Յիսուս զքացեան հանդերձ լեզուին՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է. եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին ։

31 Իսկ հրէայքն՝ քանզի ուրբաթի էր, զի մի անդէն ի խաչին ապականեսին մարմինքն մինչեւ ցշաբաթին, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զպիղատոս, զի խորտակեսցեն զբազկս նոցա՝ եւ բարձցին ։

32 Էկին զինուորքն, եւ զառաջինն խորտակեցին ըզբարձս, նոյնպէս եւ զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն էրեալ էր։

33 Բայց իբրեւ եկին առ Յիսուս՝ եւ տեսին, զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա ։

34 Այլ մի ոմն ի զինուորացն տիզաւ խոցեաց զկողս նորա. եւ եղ վաղվաղակի արիւն եւ ջուր ։

35 Եւ որ եռանն՝ վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութիւն նորա. եւ նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի եւ դուք հաւատասջիք ։

բանք մին սպունգ (ւնէնէր) լցրին քացախով լեղոյ հետ եւ զոպպայի մշտիկի (ֆէնջէլ) վերայ ալատած նորա բերանին մատցրին ։

30 Երբոր Յիսուս էն քացախըն լեղոյ հետ առաւ՝ ասաց. ամէն բան կատարուած է. եւ գլուխըն խոնարհցրուց եւ հոգին աւանդեց ։

31 Բայց հրէաներն՝ որովհետեւ ուրբաթի օրն էր, որ մարմիններն չըմնան խաչի վերայ մինչեւ շաբաթի օրն, ինչուր՝ էն շաբաթի օրն մեծ էր. պիղատոսին աղաչեցին, որ նորանց ծընկներըն ջարդեն. եւ վեր առնըվին ։

32 Զինուորներն եկին եւ առաջինի ծընկներըն ջարդեցին, էնպէս էլ մեկելին՝ որ նորա հետ խաչված էր ։

33 Բայց երբոր Յիսուսի եկին եւ տեսին, որ նա մեռած էր, նորա ծընկներըն չըջարդեցին ։

34 Բայց զինուորներից մին դեղարդով (չէքմէ) նորա կողըն խոցեց. եւ շուտով արիւն եւ ջուր դուրս եկաւ ։

35 Էն նա որ էն տեսաւ՝ վկայեց. եւ վկայութիւնն ճշմարիտ է. եւ նա գիտուն է թէ ճշմարիտըն է ասում, որ դուք էլ հաւատաք ։

36 Ա. Այս եղև՝ զի լցցի գիրն, եթէ ասկր նորա մի վշրեսցի ։

37 Յր դարձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին ՚ի նա՝ յոր խոցեցինն ։

38 Ցետ այսորիկ աղաչեաց զպիղատոս Յովսէփ, որ յարիմաթեայէ էր աշակերտ Յիսուսի ՚ի ծածուկ՝ վասն ահին հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց պիղատոս. եկն և եբարձ զնա ։

39 Յկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ՚ի գիշերի զառաջինն. և եբեր զմուռս խառն ընդ հալոէս՝ երկու լտեւս հարիւր ։

40 Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէնն էր հրէից պատել ։

41 Յր էր ՚ի տեղւոջն, յորում խաչեցաւ՝ պարտէզ, և ՚ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ որ երբէք էր եդեալ ։

42 Անդ վասն ուրբաթուն հրէից· զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս ։

36 Այս էլաւ՝ որ գիրքն կատարվի, թէ նորա ոսկորն չըպիտի փշրըվի ։

37 Եւ միևնէլ ուրիշ գիրք ասումէ, թէ մեկ կըտան նորան՝ որ խոցեցին ։

38 Արանից ետև պիղատոսին աղաչեց Յոսէփն, որ արիմաթեացին էր՝ հրէաներէն վախինն ծածուկ աշակերտ (էր լած) Յիսուսին, որ Յիսուսի մարմինըն վեր առնէ. և պիղատոս հրաման տուաւ. և ապա եկաւ և վերկալաւ նորան։

39 Նիկոդիմոսն էլ եկաւ՝ որ առաջ Յիսուսի մօտն էր եկել գիշերուժի. և զմուռ հալուէի հետ խառնած բերաւ՝ հարիւր լըտրի չափ ։

40 Յիսուսի մարմինըն առին, և էն խընկերին հետ կտաւներով պատեցին, ինչպէս որ հրէաների օրէնք էր պատել ։

41 Եւ էն տեղումն, որ խաչվեցաւ՝ մին պարտէզ (պօռան) կար, և էն պարտէզումն մին նոր գերեզման, որ նորանեւմ իսկի մին ժամանակ մին մարդ չէր դրված ։

42 Ինանեղն դրին Յիսուսին հրէաների ուրբաթիին համար· պատճառն որ՝ գերեզմանն մօտ էր ։

ԳԼ. Ի։

1 Եւ ՚ի միւսում աբբաթի մարիամ մադդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյս ՚ի գերեզման՝ անդր, և տեսանէ զվէմն բարձեալ ՚ի դրաց գերեզմանին։

2 Պատ ընթանայ և գայ առ սիմոնէ պետրոս և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս, և ասէ ցնոսա. բարձին զՏէր ՚ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

3 Եւ ել պետրոս և միւս աշակերտն՝ և գային ՚ի գերեզմանն։

4 Ընթանային երկոքեան ՚ի միասին. և միւս աշակերտն յառաջացաւ վազագոյն քան զպետրոս, և եկն նախ ՚ի գերեզմանն։

5 Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ՚ի ներքս ոչ եմուտ։

6 Եկն և սիմոնէ պետրոս՝ որ գայր զկնի նորա, և եմուտ ՚ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ։

7 Եւ վարշամակն՝ որ էր ՚ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ

1 Եւ՝ մեկ շաբթի օրուն մարիամ մադդաղենացին առաւօտուն լուսանալուց ժամանակուն եկաւ գերեզմանն, և տեսաւ որ քարն գերեզմանի դրանից վերէր առած։

2 Պատ վազեց և եկաւ սիմոն պետրոսի մօտն և մեկել աշակերտի մօտն՝ որ Յիսուս սիրում էր նորան, և ասաց նորանց. Տէրին վերա-ռին էն գերեզմանիցն և չենք գիտում, թէ որտեղ դրին նորան։

3 Դուրս եկաւ պետրոսն և մեկել աշակերտն՝ և գալիս էին գերեզմանն։

4 Երկուքն միասեղ վազում էին. և մեկել աշակերտն վազեց շուտով անցկացաւ պետրոսից, և առաջ եկաւ գերեզմանն։

5 Եւ վեր խոնարհված տեսաւ՝ որ կըտաւներն էնտեղ կային, բայց ներս չմտաւ։

6 Սիմոն պետրոսն էլ եկաւ՝ որ նորա ետևէն գալիս էր, և մտաւ գերեզմանի մէջն, և կտաւներըն տեսաւ՝ որ էն տեղ կային։

7 Եւ վարշամակն՝ որ նորա գլխուն էր ուրիշ կտաւ-

կուսանն կայր, այլ ուրոյն ծալեալ ՚ի մի կողմն։

8 Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ՚ի գերեզմանն, ետես և հաւատաց։

9 Զի չեւ՚ս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել։

10 Ձոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

11 Ռայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչ դեռ լայր՝ խոնարհեցաւ ՚ի գերեզմանն։

12 Յր ՚տեսանէ երկուս հրեշտակս ՚ի սպիտակս, զի նստէին մի ՚ի մնարիցն և մի յանուսիցն՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

13 Յր նոքա ասեն ցնա. կին դու՝ զի լայս. ասէ ցնոսա. զի բարձին զՏէրն իմ ՚ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

14 Զայս իբրև ասաց. դարձաւ ՚ի թիկունս կայս, և տեսանէ զՅիսուս դի կայր. ներին հետ չէկալ, բայց ջոկ ծալած մէկ կողմն դրած էր։

8 Յն ժամանակն մէկէլ աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ գերեզմանն էր եկել, տեսաւ և հաւատաց։

9 Ինչու որ՝ դեռ չէին գիտում գլքերըն թէ պէտք է՝ որ նա մեռելների միջիցն յարուԹիւն առնէ։

10 Պապ աշակերտներն մինէլ գնացին իրար մօտն։

11 Բայց Մարիամն գերեզմանի դուրսն կանգնած էր և լաց էր լինում. և լաց լինելոյ ժամանակն խոնարհվեցաւ (մէկ տուաւ) գերեզմանի մէջ։

12 Յր երկու հրեշտակ տեսաւ սպիտակ շորերով, որ նստած էին, մինն գլխի կողմն և մէկէլն ոտների կողմն, որտեղ որ Յիսուսի մարմինն կար։

13 Յր նորանք ասացին նորան. ով կին՝ ինչու լաց ես լինում՝ նորանց ասաց. նորա համար, որ իմ Տէրիս վեր առին էս գերեզմանիցս, և չեմ գիտում՝ Թէ որտեղ դրին նորան։

14 Յրբոր էս ասաց. դարձաւ իրան յետին կողմն, և Յիսուսին տեսաւ՝ որ կայդ

և ոչ գիտէր՝ թէ Յիսուս էր նա։ Յիսուս էր։

15 Ասէ ցնա Յիսուս. կին դու՝ ընդէ՞ր լաս, զո՞ խնդրես. նա համարեալ պարտիզպանն էր, ասէ ցնա. Տէր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ՝ ուր եդիր զնա, զի ես առից զնա։

15 Յիսուս նորան ասաց. կին դու՝ ինչո՞ւ ես լայ լիս, ո՞ւմ ես մանգալիս. նորան էնգէց երևեցաւ՝ թէ նա պարտէզպանն (պօռոնճի) է, նորան ասաց. Տէր՝ թէ որ դու վերառիր նորան՝ ասա ինձ՝ որտեղ ես դրել նորան. որ ես վերառնեմ նորան։

16 Ասէ ցնա Յիսուս. Մարիամ. և նա դարձաւ, և ասէ ցնա եբրայեցերէն. բաբբունի, որ թարգմանի՝ վարդապետ։

16 Յիսուս նորան ասաց. Մարիամ. և նա յետ դարձաւ և նորան ասաց. եբրայեցերէն՝ բաբբունի, որ կըթարգմանվի՝ վարդապետ։

17 Ասէ ցնա Յիսուս՝ մի մերձենար յիս, զի չեւ՛ս եւ լեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ և ասա ցնոսա. երանեմ ես առ Հայր իմ՝ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ՝ և Աստուած ձեր։

17 Յիսուս նորան ասաց. մի մօտենար ինձ, ինչու որ՝ դեռ չեմ վեր էլլել իմ հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրներս մօտ, և նորանց ասա. ես վեր եմ էլլում իմ հօր մօտ՝ և ձեր հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ և ձեր Աստուծոյ մօտ։

18 Գայ Մարիամ Մագդաղենացի և պատմէ աշակերտացն, եթէ տեսի զՏէրն, և զայս ինչ ասաց ցնա։

18 Մարիամ Մագդաղենացին եկաւ և աշակերտներին պատմեց, թէ նա տեսաւ Տէրին, և էս բաները իրան ասաց։

19 Իսկ էր երեկոյ՝ ի միաշաբաթիոջ աւուրն. և դրօք փակելովք, ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին հրէից, եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա, և ասէ

19 Իսկ մեկ շաբթի օրումն, երբոր իրիկուն էր և դռները փակված, էն տեղ որ աշակերտներն ժողովված էին հրէաներէն վախից. Յիսուս եկաւ և նորանց միջումն կան-

ցնոսա · ողջոյն ընդ ձեզ ։

20 Իբրև զայս ասաց՝ եցոյց նոցա զձեռն և զկող իւր · և ինդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր ։

21 Ասէ ցնոսա դարձեալ · ողջոյն ընդ ձեզ · որպէս ա֊ռաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ ։

22 Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց ՚ի նոսա և ասէ · ա֊ռէք Հոգի սուրբ ։

23 Եթէ ումեք թողուցանէք զմեղս՝ թողեալ լիցի նոցա · եթէ զուրուք ունիցիք՝ կա֊լեալ լիցի ։

24 Իսկ Թովմաս՝ մի յԻերկո֊տասանից՝ որոյ անուանեալն եր֊կուորեակ, ոչ էր ընդ նո֊սա՝ յորժամ եկն Յիսուս ։

25 Ասէին ցնա այլ աշա֊կերտքն, եթէ տեսաք զՏէր · և նա ասէ ցնոսա, եթէ ոչ տեսից ՚ի ձեռս նորա զդրշան բևեռացն, և արկից զմա֊տունս իմ ՚ի տեղիս բևե֊ռացն, և մխեցից զձեռս իմ ՚ի կողս նորա, ոչ հաւա֊տամ ։

26 Եւ յետ ութ աւուրք դար֊ձեալ էին ՚ի ներքս աշա֊կերտքն, և Թովմաս ընդ նմա։ Գայ Յիսուս դռնեց, և նորանց ասաց· ողջոյն ձեզ ։

20 Երբոր էս ասաց· իրան ձեռներըն և իրան կողըն ցոյց տուաւ նորանց և աշակերտ֊ներն ուրախացան, երբոր Տէրին տեսին ։

21 Մինէլ ասաց նորանց · ողջոյն ձեզ · ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում ։

22 Եւ երբոր էս ասաց՝ փչեց դէպի նորանց և ասաց· առէք սուրբ Հոգին ։

23 Թէ որ մընի մեղքըն թո֊ղէք՝ թողված կըլինի նորանց· թէ որ մընին բռնէք՝ բռնըված կըլինի ։

24 Իսայց Թոմասն տասներ֊կուսից մինն՝ երկուորեակ (ջո֊ձաոյ) կոչվածն՝ նորանց հետ չէր՝ երբոր Յիսուս եկաւ։

25 Մեկել աշակերտներն ասումէին նորան · Թէ Տէրին տեսինք՝ և նա ասաց նորանց· Թէ որ նորա ձեռներուն բևեռներն (ջըռմարէքն) չտեսնեմ, և իմ մատներըս չդնեմ բևեռների տեղն, և իմ ձեռներըս չդմայնեմ նո֊րա կողն՝ չեմ հաւատալ ։

26 Եւ ութ օրից եաև աշակերտներն մինել ներսումն էին՝ և Թոմասն (էլ) նորանց

նոսա. պայ Յիսուս դրաքն վակելով. և Ասյ 'ի մէջ՝ և ասէ. ողջոյն ընդ ձեզ։

27 Ապա ասէ Թովմասի. բեր վմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո՝ և մխեա 'ի կողս իմ, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։

28 Պատասխանի եւ Թովմաս՝ և ասէ ցնա. Տէր իմ և Աստուած իմ։

29 Ասէ ցնա Յիսուս. այդ պի տեսեր զիս՝ հաւատացեր. երանի որոց ոչ իսկ տեսեալ և հաւատացեն։

30 Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց՝ որ ոչ է գրեալ 'ի գիրս յայսմիկ։

31 Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ պի հաւատացէք, եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ. և պի հաւատացէք, և կեանն յաւիտենական ընդունիցիք յանուն նորա։

հետ. Յիսուս դրռներըն փակուած լինելով՝ եկաւ և նորանց միջումն կանգնեց և ասաց. ողջոյն ձեզ։

27 Յետոյ Թոմասին ասաց. բեր քո մատներըդ և կտեղ դիր, և իմ ձեռներըս տես, և քո ձեռներըդ բեր և իմ կողս մտցըրու՝ և մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։

28 Թոմասն պատասխան տուաւ և նորան ասաց. իմ Տէրս և իմ Աստուածս։

29 Յիսուս նորան ասաց. էդ որ տեսիր ինձ՝ հաւատացիր. երանի նորանց, որ չեն տեսել և հաւատումեն։

30 Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իրան աշակերտների առաջին՝ որ չեն գրված էս գրքումս։

31 Բայց էս էնքան գրվեցաւ՝ որ հաւատաք. Թէ Յիսուս է Քրիստոսն Աստուծոյ որդին. և որ հաւատալ և յաւիտենական կեանքըն ընդունիք նորա անունովն։

Գ Լ. ԻՆ։

1 Եւ յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ովե-

1 Վրանից ետև Յիսուս մինէլ իրան անձըն յայտնեց իրան աշակերտներին ովր-

երբեն տիբերեայ· Յայտնաց այսպէս ։

2 Էին ի միասին սիմովն պետրոս, և Թովմաս անուանեալն երկուորեակ, և Նաթանայէլ՝ որ ի կանայ գալիլեացւոց, և որդիքն զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու ։

3 Ասէ ցնոսա սիմովն պետրոս· երթամ ձուկն որսալ· ասեն ցնա· գամք և մեք ընդ քեզ· գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչ ինչ ։

4 Իբրև այդ եղև՝ կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ճանեան աշակերտքն, թէ Յիսուս իցէ ։

5 Ասէ ցնոսա Յիսուս· մանկունք՝ միթէ ունիք ինչ ուտելոյ· պատասխանի նմանն և ասեն ցնա· ոչ ։

6 Ասէ ցնոսա· արկէք յաջակողմն նաւին զուռկանդ· և գտանիցէք· արկին, և ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն ։

7 Ասէ աշակերտն այն, զոր սիրէրն Յիսուս՝ ցպետրոս· Տէր է այն· սիմոն պետրոս լուեալ եզրին (զգեստն) մօտ՝ և էս կերպով յայտնեց ։

2 Մինետև էին սիմոն պետրոս, և Թովմաս երկուորեակ (ըստ եբրայեցի) անուանվածն, և Նաթանայէլն՝ որ գալիլեացւոց կանայիցն էր՝ և զեբեդեայի որդիքներն և էն աշակերտներից ուրիշ երկու հոգի էլ ։

3 Սիմոն պետրոսն նորանց ասաց· ես գնում եմ ձուկը բռնելոյ· նորան ասացին· մենք էլ կըգանք քեզ հետ· գնացին և մտին նաւն, և էն գիշերն իսկի բան չըբռնեցին ։

4 Երբոր առաւօտ էլաւ Յիսուս ծովի եզրումն (ըստ եբրայեցի) կանգնած էր՝ բայց աշակերտներն չըճանաչեցին, թէ Յիսուսն է ։

5 Յիսուս նորանց ասաց· մանկտիք իսկի ուտելոյ բան ունիք· պատասխան տուին և նորան ասացին· չէ ։

6 Նորանց ասաց· ուրկանէն (ի ծովն) աջի կողմն քաշեցէք և կըգտանէք· նորանք քաշեցին, և չէին կարում քաշել՝ ձըկներուն շատութեան պատճառովն ։

7 Էն աշակերտն՝ որ Յիսուս սիրուածը նորան՝ պետրոսին ասաց· նա Տէրն է·

սլթոս իբրև լուաւ Թէ Տէր է, արկաւ զինքն ի ծովն ։

8 Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն. այլ իբրև երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն ։

9 Իբրև ելին ի ցամաք, տեսանեն կրակեայ կայծականց, և ձուկն մի ի վերայ և հաց ։

10 Ասէ ցնոսա Յիսուս. բերէք ի ձկանց այսի՝ զոր դուքդ կալարուք այժմիկ ։

11 Համաւ սիմովն պետրոս և ձգեր զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարիւր վաթսուն և երիք. և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեաւ գործն ։

12 Ասէ ցնոսա Յիսուս. եկա՛յք ճաշեցէք. և ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ Թէ դու ո՞վ ես, զի գիտէին Թէ Տէրն է ։

13 Գայ Յիսուս՝ և առնու զհացն՝ և տայ նոցա, նոյնպէս և զձուկն ։

սիմոն պետրոսն երբոր լսեց՝ Թէ Տէրն է. շորըն իւրան վերայ առաւ. ինչու որ՝ մերկ էր, և ինքն իւրան քցեց ծովն մէջն ։

8 Իսկ մեկել աշակերտաներն նաւովն էին գալիս. ինչու որ՝ ցամաքիցն հեռու չէին. բայց երկու հարիւր գազի չափ (էր) և ուռկանըն (Լօռն) ձկներովն քաշուռմէին ։

9 Երբոր դուրս եկին ցամաքն, տեսին անծուխի կրակ վառած, և նորա վերայ մին ձուկ և հաց ։

10 Յիսուս նորանց ասաց. բերէք ինձ էդ ձըկներիցն՝ որ դուք հիմիկ բռնեցիք ։

11 Սիմոն պետրոսն մտաւ և ուռկանըն քաշուռմէր դէպի ցամաքն՝ մեծ մեծ ձըկներով լըքն, հարիւր վաթսուն և երեք հատ. և էնքան բան կար և գործիքն չըպատառվեյաւ ։

12 Յիսուս նորանց ասաց. եկէք ճաշ կերէք. և աշակերտաներիցն ոչ ով չէր համարձակվուռմ հարցնել՝ Թէ դու ո՞վ ես. ինչու որ՝ գիտուռմէին Թէ Տէրն է ։

13 Յիսուս եկաւ և հացըն առաւ՝ և նորանց տուաւ, և էնպէս էլ ձուկըն ։

14 Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն, յարուցեալ ի մեռելոց։

15 Իսկ իբրև ճաշեցին, ասէ յսիմոն պետրոս Յիսուս. սիմոն յովհաննու սիրե՞ս զիս առաւել քան զդոսա. ասէ ցնա. այո Տէր և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա զգառինս իմ։

16 Դարձեալ ասէ ցնա. սիմոն յովհաննու սիրե՞ս զիս. ասէ ցնա. այո Տէր և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա զոչխարս իմ։

17 Ասէ ցնա երիցս անգամ՝ սիմոն յովհաննու սիրե՞ս զիս. տրտմեցաւ պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ Թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես. և դու իսկ զամենայն Ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս. արածեա զոչխարս իմ։

18 Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո և կամէիր.

14 Այս երեք անգամն Յիսուս աշակերտներին երևեցաւ, մեռելներէն միջնէն յարութիւն առնելուն ետև։

15 Իսկ երբոր ճաշը կերին, Յիսուս ասաց սիմոն պետրոսին. սիմոն Յովհաննի (որդի) դորանցիէ աւելի սիրո՞ւմես ինձ. Նորան ասաց. Հա՛ Տէր, դու էլ գիտուս՝ որ քեզ սիրումեմ. Նորան ասաց. արածացրու իմ գառներըս։

16 Մինէլ ասաց Նորան. սիմոն Յովհաննի (որդի) սիրո՞ւմես ինձ. Նորան ասաց. Հա՛ Տէր՝ դու էլ գիտուս՝ որ քեզ սիրումեմ. Նորան ասաց. արածացրու իմ ոչխարներըս։

17 Մինէլ երեք անգամն ասաց Նորան. սիմոն Յովհաննի (որդի՝) սիրո՞ւմես ինձ. պետրոսն տրտմեցաւ. որովհետև երեք անգամ Նորան ասաց. (Թէ սիրո՞ւմես ինձ. և Նորան ասաց. Տէր՝ դու ամէն բան գիտուս և ամէն բան Ճանաչուս, և որ սիրումեմ քեզ. Յիսուս Նորան ասաց. արածացրու իմ ոչխարներըս։

18 Ճշմարիտն Ճշմարիտն ասումեմ քեզ, Թէ դեռ քանի որ տղայ էիր՝ ինքդ քո գօտիկըդ կապումէիր՝ և որ

և յորժամ ծերասցիս, ձեռս
ի վեր կալցես և այլք ած-
ցեն քեզ գօտի, և տարցեն՝
ուր ոչն կամիցիս։

19 Զայս ասաց՝ նշանա-
կեալ թէ որով մահու փա-
ռաւորս առնիցէ զԱստուած։
և զայս իբրև ասաց, ասէ
ցնա. Ես զկնի իմ։

20 Դարձաւ պետրոս՝ և
տեսանէ զաշակերտն, զոր
սիրէր Յիսուս, զի երթայր
զկնի, որ և անկաւ զլանջսն
նորա և ասէ, Տէր՝ ո՞վ է՝ որ
մատնելոցն է զքեզ։

21 Զնա տեսեալ պետրո-
սի, ասէ ցՅիսուս. Տէր՝ իսկ
սա զի՞։

22 Ասէ ցնա Յիսուս. եթէ
կամիմ, զի կացցէ դա՝ մին-
չև ես գամ. քեզ զի՞ փոյթ
է՝ դու ես զկնի իմ։

23 Ել բանս այս յեղ-
բարս՝ և համարեցան, թէ
աշակերտն այն ոչ մեռանի-
ցի. և ոչ ասաց նմա Յի-
սուս ոչ մեռանիցի. այլ թէ
կամիմ ես. թէ կացցէ դա՝
մինչև ես գամ։

տեղ որ ուզուիցէր՝ գնումիցէր,
և երբոր կընդերանաս, ձեռ-
ներըդ վերկառնես. և ուրիշ-
ներն գօտիկ կրկապեն քեզ,
և կըտանեն՝ որտեղ որ չես
ուզել։

19 Այս ասաց՝ ցոյց տալով
թէ նա ի՛նչ մահով պիտի
վհատաւորէ Աստուածն. և ես
երբոր ասաց, նորան ասաց.
իմ հետևէս ես։

20 Պետրոսն կնա դարձաւ
և տեսաւ էն աշակերտին, որ
Յիսուս սիրուումէր նորան, որ
հետևէն գալիս էր. նա՝ որ էլ
նորա լանջքնին (ջուշն) ըն-
կաւ և ասաց. Տէր՝ ո՞վ է նա՝
որ քեզ պիտի մատնէ։

21 Պետրոսն երբոր տեսաւ
նորան, Յիսուսին ասաց. Տէր՝
ապա սա ի՛նչ (կըլինի)։

22 Յիսուս նորան ասաց.
թէ որ կամենուիմ, որ դա
կենայ, մինչև որ ես գամ՝ դու
ի՛նչ հոգս ունիս. դու իմ
հետևէս ես։

23 Այս էս բանս դուրս եկաւ
եղբարների միջումն և կարծե-
ցինն, թէ էն աշակերտն չմեռ-
նիլ. և Յիսուս չասաց նո-
րան. թէ չի մեռնիլ, բայց
թէ՝ որ կամենուիմ որ դա
կենայ մինչև որ ես գամ. (դու
ի՛նչ հոգս ունիս)։

24 Այս աշակերտն է՝ որ վկայէ վասն այսոցիկ. որ և գրեացն իսկ զայսոսիկ, և գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա։

25 Կայ է և այլ ինչ բազում, զոր արար Յիսուս, զոր եթէ գրեաւ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ինչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն, որ թէ գրեալ էին։

24 Այս աշակերտս է, որ էս բաներս համար վկայումէ՝ որ էլ էս բաներըս գրեց. և գիտենք որ նորա վկայութիւնըն ճշմարիտ է։

25 Հայց ուրիշ էլ շատ բաներ կան. որ Յիսուս արաւ՝ որ եթէ նորանք մին մին գրէված լինէին՝ կարծումեմ թէ աշխարհքս էլ բաւական չէր լինել էն գրքերըն տանելոց, թէ որ գրվածք լինէին։

ՎՐԽԱԿՆ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ։

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Զբանն առաջին՝ զոր արարի վասն ամենայնի, ո Թէովփիլէ՛ • զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել։

2 Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ • զորս ընտրեացն, և վերացաւ։

3 Որոց յանդիման կացոյց ինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց՝ ի բազում արուեստս՝ յաւուրս քառասուն երևեալ նոցա՝ և ասել վասն արքայութեանն Աստուծոյ։

4 Եւ ի հաղորդել ընդ նոսա հայեաւ, պատուիրեր տայր նոցա՝ Յերուսաղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն հօր՝ զոր լուարուաբն կինէն։

1 Առաջին խօսքըն արի ինձ Թէոփիլէ՛ ամէն բանի համար • որ Յիսուս սկսաւ անել և սորվցնել։

2 Մինչև էն օրն՝ որ սուրբ Հոգով ձեռնդիր պատուէր տուաւ առաքեալներին՝ (նոր բանց) որ ընտրեց և վերացաւ։

3 Որ իրան չարչարանքից ետև իրան կենդանի կանգնացրուց նորանց առաջին՝ շատ հրաշքներով՝ որ քառասուն օր երևեցաւ նորանց՝ և Աստուծոյ արքայութեան համար խօսեց։

4 Եւ նորանց հետ հացով հաղորդվելոյ ժամանակին, պատուէր էր տալիս նորանց՝ որ Երուսաղէմից չըհեռանան, բայց սպասեն հօր աւետիքին՝ որ (ասաց) ինձանից լսեցիք։

5 Զի յովհաննէս մկրըտեաց ՚ի ջուր՝ այլ դուք մկրտիցիք ՚ի հոգին սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ։

6 Իսկ նոքա մատուցեալ հարցանէին զնա՝ և ասէին. Տէր՝ եթէ ՚ի ժամանակի սմա յապրիկ հաստատանիցիս իսրայէլի զարքայութիւն խրատիցես։

7 Ասէ ցնոսա. ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր հայր եդ յիւրում իշխանութեան։

8 Այլ առնիջիք զօրութիւն ՚ի հասանել հոգւոյն սրբոյ ՚ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք Երուսաղէմ և յամենայն հրէաստանի և ՚ի սամարիա, մինչև ՚ի ծագս երկրի։

9 Իսկ զայս իբրև ասաց՝ մինչ դեռ հայէին նոքա՝ վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նոցա։

10 Իսկ մինչդեռ ակնդիտեալ էին ընդ երկինս երթալոյ նորա, և ահաւասիկ արք երկու երևեցան նոցա ՚ի հանդերձս սպիտակս։

5 Ինչու որ յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք սուրբ հոգով կըմկրտուիք։ ոչ թէ շատ օրերէս հետև։

6 Իսկ նորանք մեծ եկին հարցնուելին նորան և ասելին։ Տէր՝ միթէ հիմիկ ես ժամանակումս պիտի հաստատես իսրայէլի թագաւորութիւնը։

7 Ասաց նորանց. ձեզ (պէտք) չէ որ գիտենաք ժամերըն (սահմանները) և ժամանակներըն, որ հայրն իւրան իշխանութեանն դրաւ (պահեց)։

8 Բայց երբոր հոգին ձեզ վերայ կըհասնի. դուք զօրութիւն կառնէք. և ինձ վկայ կըլինիք երուսաղէմումն և ամէն հրէաստանի և սամարիայի մէջն, մինչև երկրի ծայրերն։

9 Իսկ երբոր ես ասաց, դեռ քանի որ նորանք նայելու էին՝ վերացաւ. և ամպն վերկալաւ նորան նորանց աչքերէն։

10 Իսկ դեռ որ խոնա մտիկ տալով նայում էին նորա դէպի երկինքն գնալուն՝ և ահա երկու մարդիկ երևեցան նորանց սպիտակ շորերով։

11 Որք և ասացին. արք գալիլեացիք՝ ի կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացաւ ի ձեզանէ յերկինս, այնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսիք զնա երթալ յերկինս:

12 Ապա դարձան յերուսաղէմ յանուանեալ լեառնէն ձիթենեաց. որ է մերձ յերուսաղէմ ըստ շաբաթուս հանապարհի:

13 Եւ իբրև մտին, ելին ի վերնատունն՝ ուր վանքն լակ էին. պետրոս և յակոբոս, յովհաննէս և անդրէաս, փիլիպպոս և թովմաս, բարթողիմէոս և մատթէոս, յակովբոս ալփեան և շմաւոն նախանձայոյզ՝ և յուդա յակովբեան:

14 Որք ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանմբք, և մարեմաւ մարգն Յիսուսի՝ և եղբարբք նորա:

15 Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ. և էր անդ բազմութիւն անուանց իբրև հարիւր և քսանից:

16 Ա՛րք եղբարք՝ պարտ էր

11 Որ եւ ասացին. ով գալիլեացի մարդիկ՝ ինչ էք կանգնած և մտիկ էք տալիս դէպի երկինքն. Յիսուսն՝ որ ձեզանից վերացաւ երկինքը, հենց էսպէս կըզայ՝ ինչպէս որ նորան տեսիք գնալ դէպի երկինքն:

12 Ապա էն ձիթենեաց անուանված սարիցն կամ դարձան երուսաղէմ. որ մօտ էր երուսաղէմին՝ (մին) շաբաթի օրի ճանապարհի չափ:

13 Եւ երբոր մտին, վերևցան վերնատունն՝ որտեղ որ բնակւած էին. պետրոսն և յակոբոսն, յոհաննէսն և անդրէասն, փիլիպպոսն և թոմասն, բարթողիմէոսն և մաթէոսն, յակոբոս ալփեանն և շմաւոն նախանձայոյզն՝ և յուդա յակոբեանն:

14 Որոնք ամէնքն միշտ միաբան աղօթք էին անում կանանց հետ, և Յիսուսի մայր Մարիամի՝ և նորա եղբարց հետ:

15 Եւ էն օրերումն պետրոսն վերկայեաւ եղբայրների մէջն՝ և ասաց. և էտեղ հաւաքւած և քսան հոգիների չափ բազմութիւն կային:

16 Մարդիկ եղբարք՝ պէտք

կատարել գրոյն· զոր յառաջագոյն ասաց հոգին սուրբ՝ ի բերանոյ դաւթի՝ վասն յուդայի· որ եղև առաջնորդ առնելոցն Յիսուսի։

17 Զի ի թիւս մեր էր ընդ մեզ· և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։

18 Այս ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան· և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նորա։

19 Եւ յայտնի եղև ամենեցուն՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ· մինչև կոչել գեղջն այնմիկ բառիբառոյն իւրեանց ակեղդամայ· այսինքն է գեօղ արեան։

20 Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց· եղիցի բնակութիւն նորա աւերակ, և մի ոք իցէ՝ որ բնակիցէ ի նմա· և վկարգ նորա առցէ այլ։

21 Արդ՝ պարտ է յարմանցս այսոցանէ՝ եկեալոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ և ել առ մեզ Տէր Յիսուս։

22 Սկսեալ ի մկրտութենէն որ էն գրվածն կատարվէր։ որ առաջուց ասաց սուրբ հոգին դաւթի բերանովն յուդայի համար, որ Յիսուսի բռնողներին առաջնորդ էլաւ։

17 Պատճառն որ՝ նա մեզ հետ մեր համարումն էր։ և էս պաշտօնիս վիճակն նորան (էլ) հասած էր։

18 Այս անիրաւութեան վարձքովն մին դիւղ ստացաւ և սուտաւ միջիցն ձղվեցաւ, և նորա ամէն փորն դուրս լափվեցաւ։

19 Եւ յայտնի էլաւ ամենին՝ որ երուսաղէմումն բնակված են։ մինչև որ էն դիւղի անունն իրանց լեզուովն ա-կեղդամայ կոչվեցաւ։ որ է ասել՝ արիւնի դիւղ։

20 Քանզի որ՝ սաղմոս գրքումն գրված է՝ (թէ) նորա բնակութիւնն աւերակ (լռ-ըե) պիտի լինի, և մինն էլ չըլինի՝ որ նորանումն բնակվի։ և նորա կարգըն (մին) ուրիշն պիտի առնէ։

21 Հիմի պէտք է՝ որ էս մարդկանցիցս որ մեզ հետ եկել են էն ամէն ժամանակին՝ որ Տէր Յիսուսն մեզ հետ ներս մտաւ և դուրս էլաւ։

22 Յովհաննէսի մկրտութենէ

յովհաննու մինչև յօրն՝ յոր-
դում վերացաւ ՚ի մէնջ՝
վկայ յարութեան նորա ընդ
մեզ լինել միւսմ ՚ի սուրբ-
նէ։

23 Եւ կացուցին երկուս.
զյովսէփ՝ որում բարսաբայն
կոչէին, որ անուանեցաւն
Յուստոս՝ և զմատաթիա։

24 Այցեալ յաղօթս ասեն.
դուն Տէր՝ սրտագէտ ամենայնի
յայտնեա զմի ոք՝ զոր ընտրե-
ցեր ՚ի սոցանէ յերկոցունց։

25 Առնուլ զվիճակ պաշ-
տամանս այսորիկ՝ և զառա-
քելութեան, յորմէ անկաւ
Յուդաս՝ գընալ ՚ի տեղի
իւր։

26 Եւ ետուն վիճակս նո-
ցա, և ելանէր վիճակն մա-
տաթիայ. և համարեցաւ ընդ
միտասան առաքեալսն։

ԳԼՈՒԽ Ա։

1 Զ՚ի կատարել աւուրցն
պենտեկոստէից՝ էին ամենք-
քեան միաբան ՚ի միասին։

2 Եւ եղև յանկարծ ա-
կի հնչեաց յերկինց՝ ահաւոր

նիցն սկսաւ մինչև էն օրն՝
որ մեզանից վերացաւ. որ
սորանցից միոն մեզ հետ վկայ
լինի նորա յարութեանն։

23 Եւ երկու (մարդ) կանգ-
նացրին. յովսէփին՝ որ բար-
սաբա էին կոչում, որ յուս-
տոս անուանվեցաւ՝ և մատա-
թիային։

24 Եւ աղօթք անելով ա-
սացին. դուն Տէր՝ որ ամէնի
սիրտն գիտումես՝ ցոյց երկու-
սիցս միոնն յայտնիր՝ որն
որ ընտրեցիր։

25 Որ ցս պաշտօնիս՝ և ա-
ռաքեալ լինելոյ վիճակն
առնէ, որ նորանից յուդան
վեր ընկաւ՝ որ գնայ իրան
տեղն։

26 Եւ նորանց վերայ վիճակ
քցեցին և վիճակն ընկաւ մա-
տաթիային վերայ, և նա տաս-
նումին առաքեալներին հետ
համարվեցաւ։

ԳԼՈՒԽ Բ։

1 Եւ երբոր պենտեկոս-
տէի օրերն կատարվումէին,
ամէնքն միաբան միև տեղ
էին։

2 Եւ յանկարծակի երկն-
քէին սաստիկ ձայն էլաւ՝ սաս-

եբբև սաստիկ հողմոյ · և ե-
լից զամենայն տունն՝ յորում
նստէին ։

3 Եւ երևեցան նոցա բա-
ժանեալ լեզուք իբրև ՚ի
հրոյ · և նստաւ իւրաքան-
չիւր ՚ի վերայ նոցա ։

4 Եւ լցան ամենեքեան
հոգւով սրբով , և սկսան
խօսել յայլևայլ լեզուս՝ որ-
պէս և հոգին տայր բարբա-
ռել նոցա ։

5 Եւ էին յԵրուսաղէմ
բնակեալ հրէայք՝ արք եր-
կիւղածք յամենայն ազգաց՝
որ ՚ի ներքոյ երկնից ։

6 Եւ իբրև եղև բար-
բառս այս՝ եկն միաբան բազ-
մութիւնն և խռնեցաւ · զի
լսէին յիւրաքանչիւր լեզուս
խօսել նոցա ։

7 Այլանչանային ամենե-
քեան՝ և զարմանային՝ և ա-
սէին ընդ միմեանս · ոչ աւա-
սիկ ամենեքին սոքա, որք խո-
սին՝ գալիլեացիք են ։

8 Եւ զիա՞րդ լսեմք մեք յի-
րաքանչիւր բարբառս մեր՝
յորում ծնեալ եմք ։

9 Պարթեւք և մարք և ե-
լամացիք՝ և որ բնակեալ են

տիկքամոս պէս եկած և լցրուց
(էն) ամէն տունը՝ որ նորա-
նում նստած էին ։

3 Եւ երևեցան նորանց՝
բաժանված լեզուներ ինչ-
պէս կրակից · և նստեց նորանց
ամէն մէկին վերայ ։

4 Եւ ամէնքն սուրբ հո-
գով լցվան , և սկսեցին ու-
րիշ լեզուներով խօսել՝ ինչ-
պէս որ հոգին նորանց խօսել
էր տալիս ։

5 Եւ երուսաղէմումն բնակ-
ված էին հրէաներ (ըզհոս-
նէր)՝ Աստուածավախ մար-
դիկ՝ երկնքի ներքև (եղած)
ամէն ազգերից ։

6 Եւ երբ որ էս ձայնս է-
լաւ՝ բազմութիւնն եկաւ
միտեղ և կխռովեցաւ · պատ-
ճառն որ՝ լսումին նորանց՝
որ ամէն մէկի լեզուներովն
խօսումին ։

7 Հիանումին ամէնքն և
զարմանում՝ և միմն մընմին
ասում-էին · ահա չէ՞ որ սո-
քանք ամէնքն՝ որ խօսումեն ,
գալիլեացի են ։

8 Եւ ի՞նչպէս (է՝) որ մենք
ամէն մէկս մեր լեզուներով
լսումենք՝ որ նորանում ծըն-
ված ենք ։

9 Պարթևներ և մարք և
ելամացիք , և նորանք՝ որ

՚ի Միջագետս, ՚ի Հրէաստանի, և ՚ի դամիրս, ՚ի պոնտոս, և Յասիայ ։

10 ՚ի փռիւգիայ, և ՚ի պամփիլիայ, ՚ի Եգիպտոս, և ՚ի կողմանս Լիբացւոց, որ ընդ Կիւրենացիս, և որ եկք հռոմայեցիք ։

11 Հրէայք՝ և եկք նոցուն, կրէտացիք և արաբացիք՝ լսեմք խօսից նոցա ՚ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ ։

12 Այո՛ զարմանային ամենեքեան զարմացեալք, և ասէին ցմիմեանս. ա՛ստ կամիցի այս լինել ։

13 Իւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, թէ քաղցեալ իցեն ։

14 Ցարուցեալ պետրոս հանդերձ մնացեալսն՝ ամբարձ զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա. արք հրէաստանեայք՝ և որ բնակեալ էք յերուսաղէմ ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի՝ և ունկն դիք բանից իմոց ։

15 Ո՛չ որպէս դուք կարծէք, թէ սքա արբեալ են

բնակիմ են Միջագետուն, Հրէաստանուն, և դամիրքուն, պոնտոսուն, և ասիայի մէջն ։

10 Փռիւգիայի և պամփիլիայի մէջն՝ եգիպտոսուն, և Լիբացոց չորս կողմերուն, նորանք՝ որ կիւրենացոց հետ (են), և նոր եկած հռոմայեցիքն ։

11 Հրէաներ՝ և նորանց մօտ դարձածներ, կրետացիք և արաբացիք. լսումնիք որ՝ նորանք մեր լեզուներովս Աստուծոյ մեծամեծ բաներըն խօսումն ։

12 Հիանումէին ամէնքն և զարմանումէ, և միսն մըսին ասումէին. ես ի՞նչ (բան) պիտի լինի ։

13 Իւ կէսերն ծաղր անելով ասումէին՝ թէ (սորանք) քաղցումով (հնդոյ՛) հարբած են ։

14 Ա՛ւ երկացաւ պետրոս կէս առաքեալներին հետ՝ իրան ձայնը բարձրացուց՝ և նորանց հետ խօսեց. ով հրէաստանցի մարդիկ՝ և ամէնքդ՝ որ բնակիած էք երուսաղէմուն, ես ձեզ յայտնի լինի՝ և իմ խօսքերիս ականջ դրէք ։

15 Զի թէ ինչպէս որ դուք կարծումիք, թէ սորանք հար-

ցեն. զի դեռ երեք ժամ է եւ մնաց։

16 Այլ այս է՝ որ ասացաւ ի Յովելէ մարգարէին.

17 Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցին ուստերք ձեր, և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, և ծերք ձեր երազովք երազեսցին։

18 Եւ ի վերայ ծառայից իմոց՝ և ի վերայ աղախնայից իմոց՝ յաւուրս յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, և մարգարէասցին։

19 Եւ տայց նշանս յերկինս՝ ի վեր՝ և նշանս յերկիր՝ ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխոյ։

20 Արեգակն դարձցի ի խաւար, և լուսին յարիւն՝ մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ և երեւելի։

21 Եւ եղիցի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեսցէ։

22 Ա՛րք իսրայէլացիք՝ լուարուք զբանս գայսորիկ. Յիսուս Նազովրեցի, գայր ցուցեալ Աստուծոյ ի ձեզ բառ են. ինչուան որ՝ դեռ օրիս երեք ժամն (առաւօտ) է։

16 Բայց ես է՝ որ Յովելի մարգարէին ձեռնին ասացեալ։

17 Եւ կըլլի սրանից և ետև յետին օրերուն՝ Աստուած՝ ասում՝ որ իմ հոգուս կըթափեմ ամէն մարմնոց վրայ. և ձեր որդիքներն, և ձեր աղջիկներն կըմարգարէանան. և ձեր երիտասարդներն տեսիլքներ կըտեսնեն, և ձեր ծերերն երազներով երազ կըտեսնեն։

18 Եւ իմ ծառաներուն վրայ՝ և աղախիններուն (աղախնէրին) վրայ՝ էն օրերուն իմ հոգուս կըթափեմ և կըմարգարէանան։

19 Եւ նշաններ կըտամ վերև՝ երկնքուն՝ և նշաններ ներքև՝ երկրումս, արիւն և կրակ և ծըխոյ մրրիկ (քիքլոց)։

20 Արեգակն խաւար կըդառնայ, և լուսինն արիւն՝ դեռ որ Տէրի մեծ և երևելի օրն չեկած։

21 Եւ կըլլի ամէն՝ ով որ Տէրի անունէն կըկանչէ՝ կազատի։

22 Ով իսրայէլացի մարդիկ՝ էս բաներըս լսեցէք. Յիսուս Նազովրեցին՝ էն մարդը, որ Աստուածմէ ցոյց

զօրութեամբ և նշանօք և արուեստիւք, զոր արար Տէր Աստուած ի միջի ձեր առաւել ի մեզ։

23 Զի նա նկատեալ լսորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ՝ մատնեալ ի ձեռս անօրինաց, բևեռեալ ի փայտի սպանիք։

24 Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ։

25 Դաւիթ իսկ ասէ զնմանէ. յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ է, զի մի սասանեցայց։

26 Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնակիսցէ յուսով։

27 Զի ոչ լթողցես զանձն իմ ի դժոխս՝ և ոչ տացես սրբոյ քումմէ տեսանել զապականութիւն։

28 Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց ի քաղցրութենէ։

արկիւաւ ձեզանուամ զօրութեամբ և նշաններով և հրաշքներով որ Աստուած նորա նով արաւ ձեր միջոցի. ինչպէս որ հինգ դուք էլ գիտուիմք։

23 Նորան որ Աստուծոյ սահմանուած խորհրդովն և կանուխ գիտութենովն մատնուած էր, անօրէնների ձեռքովն փայտի վերայ բևեռած սպանեցիք։

24 Որ նորան Աստուած յարոյց մահի ցաւերըն խափանելով. ինչու որ՝ կարելի չէր, որ նա բռնուի նորանից։

25 Ասում նորա համար առաջուց տեսնում էի Տէրըն ամէն ժամ (առհաւ) իմ առաջիս. ինչու որ՝ իմ ոջ կողմն էր, որ չըտատափիմ։

26 Այսհամար իմ սիրտս ուրախ էլաւ՝ և իմ լեզուս ցնծացաւ, և իմ մարմինս էլ յուսով կըբնակվի։

27 Պատճառն որ՝ իմ անձըս չես թողնիլ դժոխքումն՝ և քո սրբոյն չես տալ ապականուելիւն տեսնել։

28 Կեանքի ճանապարհներըն ճանաչացրիր ինձ (և) քո երեսիդ ուրախութենովն լցրիր ինձ։

29 Ա՛րք եղբարք՝ պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին դաւթի. զի մեռաւ և թաղեցաւ. և դերեզման նորա կայ՝ ի մէջ ձերում մինչև յայսօր։

30 Այլ մարգարէ էր, և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած, ՚ի պտղոյ յորովայնէ նորա նըստուցանել յաթոռ նորա։

31 Ցառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարուցութեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա ՚ի դժոխս՝ և ոչ մարմին նորա եաես զապականութիւն։

32 Զայս Յիսուս յարոյց Աստուած՝ որում ամենեքեան մեք վկայեմք։

33 Աջովն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս հոգւոյն սրբոյ ընկալեալ ՚ի հօրէ՝ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսանէք և լսէք։

34 Այլ ոչ եթէ դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն՝ ասաց Տէր յՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ,

35 Մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

36 Արդ՝ ճշմարտիւ գիտաց

29 Մարդիկ եղբարք՝ պէտք է որ համարձակութեամբ ասեմ դաւիթ նահապետին համար. թէ նա մեռաւ և թաղուեցաւ. և նորա գերեզմանն մինչև ցայս օր մեր միջումն կայ։

30 Որովհետև (նա) մարգարէ էր, և գիտէր՝ որ Աստուած երդումով երդուաւ նորան՝ որ նորա փորի պտղից նորա աթոռին վերայ նստուցանէ։

31 Առաջուց իմացած խօսեց Քրիստոսի յարութեան համար. որ նորա հոգին դժոխքում չըթողուաւ՝ և նորա մարմինն ապականութիւն չըտեսաւ։

32 Այս Յիսուսին Աստուած յարոյց՝ որ նորան մենք ամենքս վկայումենք։

33 Աստուծոյ աջովն բարձրացած և սուրբ հոգոյ աւետիքն հօրից առած՝ (նա) թափեց ես, որ դուք տեսնում եք և լսում եք։

34 Պատճառն որ՝ ոչ թէ դաւիթն վերկեաւ երկինքն, բայց հենց ինքն ասում՝ Տէրն իմ Տէրին ասաց. իմ աջ կողմն նստիր,

35 Մինչև քո թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դնեմ։

36 Հաստիկ թող ճշմարտու-

ցէ ամենայն տունն Իսրայէլի, զի և Տէր զնա և օծեալ Աստուած արար. զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք:

37 Եւ լուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց. և ասեն ցպետրոս՝ և ցայլ առաքեալսն. զի՞նչ գործեսցուք՝ արք եղբարք:

38 Ասէ ցնոսա պետրոս. ապաշխարեցէք՝ և մկրտեսցի իւրաքանչիւրոք ի ձեզ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղացն, և ընկալջիք զպատեհս հոգւոյն սրբոյ:

39 Զի ձեզ են աւետիքս՝ և որդւոց ձերոց, և ամենայն հեռաւորացն՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր:

40 Եւ այլովք բազմօք բազմօք վկայութիւն դնէր, և միխիթարէր զնոսա և ասէր. ապրեցարուք յազգէ ասի խոտորելոյ յայսմանէ:

41 Ընդունել զբան նորա մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երիք հազարք:

42 Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, և հաղորդութեան

թենով պիտենայ Իսրայէլի ամէն տունն, որ Աստուած նորան Տէր և օծեալ արաւ, զՅիսուսին՝ որ դուք խաչեցիք:

5 եւ ի բերանս նոցա ոչ գտաւ նենգու-
թիւն, զի անարատ են առաջի աթոռոյն
Աստուծոյ։

6 Եւ տեսի զհրեշտակ մի զաւրաւոր
թռչեալ միջնորդ երկնի, ունելով աւետա-
րան յաւիտենից աւետարանել բնակչաց
երկրի եւ ամենայն ազգի եւ ցեղի եւ լե-
զուի եւ ժողովրդոց,

7 ասելով մեծաձայն՝ Երկիւղ արարէք
Աստուծոյ եւ տուք նմա պատիւ, զի եկն
ժամ դատաստանի նորա, եւ երկիր պագէք
արարչին երկնի եւ երկրի եւ ծովու եւ
աղբերաց ջուրց։

8 Եւ այլ հրեշտակ երկրորդ հետեւեցաւ
ասելով՝ Անկաւ անկաւ Բաբելոն քաղաք
մեծ, որ զամենայն ազգս արբոյց ի գինւոյ
բարկութեան պոռնկութեան իւրոյ։

9 Եւ հրեշտակ երրորդ հետեւեցաւ նո-
ցա ասելով մեծաձայն՝ Եթէ ոք երկրպա-
գեսցէ գազանին եւ պատկերին նորա եւ
առցէ նշան յանուանէ նորա,

10 եւ նա արբցէ ի գինւոյ բարկութեան
Աստուծոյ, որ խառնեալ է անպատուական
յբաժակի բարկութեան նորա, եւ տանջեսցի
հրով եւ ծծմբով առաջի հրեշտակացն սր-
բոց եւ առաջի գառնին։

11 Եւ ծուխ տանջանաց նոցա ելանէ
յաւիտեանս յաւիտենից, եւ ոչ ունին հան-
գիստ տուընջեան եւ գիշերի, որ երկրպա-
գեն գազանին եւ պատկերին նորա, եւ
եթէ ոք առցէ նշան անուան նորա։

12 Ասդ է համբերութիւն սրբոց, որ
պահեն զպատուիրանս Աստուծոյ եւ զհա-
ւատս Յիսուսի։

13 Եւ լուայ ձայն յերկնից ասելոյ ցիս՝
Գրեա՛ երանի մեռելոց որ ի Տէր մեռանին
յայսմհետէ։ Այո, ասէ Հոգին, զի հանգիցին
յաշխատութեանց իւրեանց, զի գործք նո-
ցա հետեւին նոցա։

14 Եւ տեսի եւ ահա ամպ սպիտակ, եւ
ի վերայ ամպոյն նստեալ էր որդի մարդոյ,
ունելով ի գլխոյ իւրում պսակ ոսկի, եւ
ի ձեռին իւրում մանգաղ սուր։

15 Եւ այլ հրեշտակ ելանէր յեկեղեցւոջ
աղաղակելով մեծաձայն առ նստեալն ի
վերայ ամպոյն՝ Արձակեա՛ զմանգաղ քո
եւ հնձեա՛, զի եկն ժամ հնձելոյ քոյ, զի
սպիտակեցաւ հունձ երկրի։

16 Եւ արձակեաց նստեալն ի վերայ
ամպոյն զմանգաղ իւր ի վերայ երկրի, եւ
հնձեցաւ երկիր։

17 Եւ այլ հրեշտակ ելանէր յեկեղեցւոջ
որ յերկինս, եւ նա ունէր մանգաղ սուր։

18 Եւ այլ հրեշտակ ելանէր յեկեղեցւոջ
որ ունէր զիշխանութիւն ի վերայ հրոյ,
եւ աղաղակեաց մեծաձայն առ ունելոյն
զմանգաղ սուր՝ ասելով՝ Արձակեա՛ զման-
գաղ քո սուր եւ հաւաքեա՛ զողկոյզս որթ-
ոյ երկրի, զի հասին խաղողք նորա։

19 Եւ արձակեաց հրեշտակն զմանգաղ
իւր յերկիր, եւ հաւաքեաց զողկոյզս որթոյ
երկրի, եւ արկ յհոսանս բարկութեան Աս-
տուծոյ մեծի։

20 Եւ կոխեցաւ հոսանքն արտաքոյ քա-
ղաքին, եւ ելանէր արիւն յհոսանացն մին-
չեւ ի սանձս ձիոց, ի հազար եւ վեց հա-
րիւր ասպարէզս։

ԺԵ

1 Եւ տեսի նշան այլ յերկինս մեծ եւ
հրաշալի, զի հրեշտակք եւթն ունէին զե-
ւթն պատուհասսն վերջինս, զի նոքա-
ւ կատարեսցի բարկութիւն Աստուծոյ։

2 Եւ տեսի իբրեւ զծով ապակի խառն
հրով, եւ զյաղթողսն գազանին եւ զպատ-
կերին նորա եւ զթիւ անուան նորա կա-
նգնեալ ի վերայ ծովուն ապակւոյ, ունել-
ով զչնարս Աստուծոյ,

3 եւ երգէին զերգ Մովսիսի ծառայի
Աստուծոյ եւ զերգ գառնին, ասելով՝ Մե-
ծամեծ եւ հրաշալի են գործք քո Տէր Աս-
տուած Ամենակալ, արդար եւ ճշմարիտ
են ճանապարհք քո թագաւոր սրբոց։

4 Ո՞վ ոչ երկնչիցի քեզ Տէր եւ ոչ փա-
ռաւորեսցէ զանուն քո, զի միայն դու սուրբ
ես, զի ամենայն ազգք եկեսցեն եւ երկրպա-
գեսցեն առաջի քո, զի յայտնեցան դատաս-
տանք քո։

5 Եւ յետ այսորիկ տեսի եւ ահա բացաւ
տաճարն խորանի վկայութեան յերկինս,

6 եւ եկին եւթն հրեշտակքն որ ունէին
զեւթն պատուհասսն յտաճարէն, հագեալք
սպիտակ հանդերձս եւ ոսկեզօծ գօտեաւք
զկուրծս իւրեանց։

7 Եւ չորեքին կենդանեացն տուին եւթն
հրեշտակացն եւթն ոսկի լի բարկութեամբ
Աստուծոյ որ կենդանի յաւիտեանս յաւի-
տենից։

8 Եւ լցաւ տաճարն ծխոյ յփառաց Աս-
տուծոյ եւ յզաւրութենէ նորա, եւ ոչ ոք
կարէր մտանել յտաճարն մինչեւ կատար-
եսցին եւթն պատուհասքն եւթն հրեշտակ-
ացն։

ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ յտաճարէն ասելոյ
ցեւթն հրեշտակսն՝ Երթա՛ք եւ արկէ՛ք զեւ-
թն բաժակսն բարկութեան Աստուծոյ յեր-
կիր։

2 Եւ գնաց առաջին եւ արկ զբաժակն
իւր յերկիր, եւ եղեւ խոց չար եւ ցաւագին
ի մարդիկն որ ունէին զնշանն գազանին
եւ որ երկրպագանէին պատկերին նորա։

3 Եւ երկրորդ հրեշտակ արկ զբաժակն
իւր յծով, եւ եղեւ արիւն իբրեւ ի մեռելոյ,
եւ ամենայն հոգի կենդանի մեռաւ յամե-
նայն որ էին յծովուն։

4 Եւ երրորդ հրեշտակ արկ զբաժակն
իւր յգետս եւ յաղբերս ջուրց, եւ եղեն
արիւն։

5 Եւ լուայ հրեշտակի ջուրց ասելոյ՝
Արդար ես Տէր որ ես եւ որ էիր սուրբ,
զի զայսպէս դատեցեր,

6 զի զարիւն սրբոց եւ մարգարէից
թափեցին, եւ արիւն տուեր նոցա ըմպել,
արժանի են։

7 Եւ լուայ զսեղանոյն ասելոյ՝ Այո՛,
Տէր Աստուած Ամենակալ, ճշմարիտ եւ
արդար են դատաստանք քո։

8 Եւ չորրորդ հրեշտակ արկ զբաժակն
իւր ի վերայ արեգական, եւ տրեալ է նմա
տանջել զմարդիկ հրով։

9 Եւ

յերկինից · զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ համարիր ։

10 Այս եղև իրիցս, և վերացաւ ամենայն զարձեալ յերկինս ։

11 Եւ ահա անդրէն երեք արք եկին կացին առ ապարանիսն՝ ուր էին էի, առաքեալք ՚ի կեսարիայ առ իս ։

12 Եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ նոսա՝ և մի՛ ինչ խղճել · եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս, և մտաք ՚ի տունն առնն այնորիկ ·

13 Եւ պատմեաց մեզ՝ որպէս տեսս զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր և ասէր ցնա · առաքեա՛ ՚ի Յոպպէ, և կոչեա զսիմոն զկոչեցեալն պետրոս ։

14 Որ խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեսցես դու՝ և ամենայն տունդ քո ։

15 Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն Հոգին սուրբ ՚ի վերայ նոցա · որպէս և ՚ի վերայ մեր ՚ի սկզբանն ։

16 Յիշեցի զբանն Տեառն՝ զոր ասէրն · Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր · բայց դուք մկրտիցիք ՚ի Հոգին սուրբ ։

տուաւ · էն որ Աստուած սրբեց՝ դու մի՛ համարիր զայն ։

10 Այս երեք անգամ էլաւ, և բոլոր ամէնն միմեանց վերացաւ երկինքն ։

11 Եւ ահա շուտով երեք մարդիկ եկին կանգնեցին էն տան առաջին, որտեղ որ ես կայի, կեսարիայից ինձ մօտ ուղարկուած ։

12 Եւ Հոգին ինձ ասաց որ նորանց հետ գնամ՝ և ինչի կասկածանք չանեմ · սոքանք էլ էս վեց եղբայրքս ինձ հետ եկին, և մտինք էն մարդոյ տունն ։

13 Եւ պատմեց մեզ՝ թէ ինչպէս տեսաւ հրեշտակին իւրեան տան միջումն, որ կանգնած էր՝ և ասում էր նորան · ուղարկիր Յոպպէ, և պետրոս կոչուած սիմոնին կանչիր ։

14 Որ քեզ հետ բաներ կխօսի, որ նորանով կապրիս դու՝ և քո ամէն տունդ ։

15 Եւ երբոր սկսեցի խօսել, սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ · ինչպէս որ մեզ վերայ սկզբումն ։

16 Յիշեցի Տէրի էն խօսքըն՝ որ ասում էր · Յովհաննէսն ջրով մկրտեց · բայց դուք սուրբ Հոգով կըմկրտուիք ։

17 Իսկ արդ՝ եթէ գիտասցէ ամենայն պարզևն եւ Աստուած եւ նոցա՝ որպէս եւ մեզ՝ ի հաւատալն ի Տէր Յիսուս Քրիստոս ։ ես ո՞վ էի արգելուլ զԱստուած ։

18 Եւ լուեալ զայս, լռեցին եւ փառաւորեալ զԱստուած՝ եւ ասէին ։ ուրեմն եւ ի հեթանոսս եւ Աստուած զապաշխարութիւն կենաց ։

19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն՝ որ եղեւ ի վերայ Ստեփաննոսի՝ հասին մինչեւ ի փիւնիկէ եւ ի կիպրոս եւ յանտիոքիայ ։ ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն հրէից ։

20 Եւ էին ոմանք ի նոցանէ արք կիպրացիք եւ կիւրենացիք՝ որք մտեալ յանտիոք՝ խօսէին ընդ յոյնսն աւետարանեալ զՏէր Յիսուս ։

21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա ։ եւ բազմութիւն հաւատացելոց դարձաւ ի Տէր ։

22 Լո՛ւ եղեւ բանս այս յականջս եկեղեցւոյն, որ էր Երուսաղէմ, ւանն նոցա։ եւ առաքեցին զբառնաբաս մինչ-

17 Որպէս՝ եթէ որ Աստուած հաւասարակից պարգևըն նոցանց էլ տուաւ ։ ինչպէս որ մեզ՝ որ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք ։ ես ինչպէս կարող եմ Աստուծոյն արգելել ։

18 Եւ երբոր լսեցին ես, լուռ կացան եւ փառաւորուեցին Աստուծոյն եւ ասեցին ։ ուրեմն հեթանոսներին էլ Աստուած կենաց ապաշխարութիւնը տուաւ ։

19 Եւ նորանք որ ցրուած էին նեղութենէն՝ որ սաստիանոսի վերայ էլաւ, մինչև փիւնիկէ եւ կիպրոս եւ անտիոքիա հասին ։ խակ մըրնչին Աստուծոյ բանըն չէին խօսում, բայց միայն հրէաներին ։

20 Եւ նորանցից մինքանիսն կային՝ կիպրացի եւ կիւրենացի մարդիկ, որ անտիոք մտած, խօսում էին յունաց հետ՝ (և) աւետարանում էին Տէր Յիսուսըն ։

21 Եւ Տէրի ձեռն նորանց հետ էր, և շատերն հաւատային՝ և դէպի Տէրն դարձան ։

22 Եւ բանս, որ նորանց համար էլաւ՝ լսեցաւ էն ակնջացը ականչներուն, որ Երուսաղէմում էր, և բառնա-

չև յանտիոք.

23 Որ երբև եկն՝ և եսես զշնորհսն Աստուծոյ՝ ուրախ եղև, և մխիթարեր զամենեսին՝ յօժարութեամբ սլսոլ կալ նոցա ՚ի Տէր։

24 Զի էր այր զուարթամիտ՝ և լի հոգւով սրբով և հաւատովք. և յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն։

25 Եւ եել ՚ի տարսոն խնդրել զսօղոս, և գտեալ զնա՝ ած յանտիոք։

26 Եւ եղև նոցա զամն ողջոյն ժողովել յԱկեղեցին՝ և ուսուցանել ժողովուրդ բազում, և անուանել նախ յանտիոք զաշակերտան Քրիստոնեայս։

27 Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յերուսաղէմ մարգարէքն՝ յանտիոք։

28 Յարուցեալ մի ոմն ՚ի նոցանէ անուն ագաբոս՝ նշանակեաց հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհս. որ եղև առ կղովդեաս։

29 Ոմանց յաշակերտաց ան-

բասին ուղարկեցին միջև անտիոք։

23 Նա երբոր եկաւ, և Աստուծոյ շնորհքներըն տեսաւ, ուրախ էլաւ, և մխիթարուեցաւ ամենքին՝ որ սրտի յօժարութենով Տէրին հետ մնան։

24 Ինչու որ՝ նա արդարն մարդով մարդ էր՝ և սուրբ հոգով և հաւատքով լցուած. և շատ ժողովուրդ աւելցաւ Տէրին համար։

25 Եւ դարձաւ գնաց տարսոն՝ որ սօղոսին խնդրէ, և նորան գտաւ բերաւ անտիոք։

26 Եւ էլաւ որ նորանք էն բոլոր տարին ժողովուեցան էն եկեղեցւոյն մէջ՝ և շատ ժողովուրդ էին սովորցուցեր, և աշակերտներն առաջ անտիոքացին Քրիստոնեայ անուանուեցան։

27 Եւ էն օրերուն երուսաղէմից մարգարէներ վէր եկին անտիոք։

28 Նորանցից մինն՝ ագաբոս անուն վերկացաւ՝ հոգին նշանակեց, (լծ) բոլոր աշխարհքիս մէջն մեծ սով պիտի լինի. որ կղովդիոսի ժամանակումն էլաւ։

29 Ոմանց էն աշակերտնե-

ոմէ, որպէս զնարդ կարօղ ոք էր՝ իւրաքանչիւրոք ի նոցա նէ որոշեցին առաքել ի պէտս եղբարցն՝ որ բնակեալ էին ի հրէաստանի ։

30 Զ որ և արարին նոքա՝ առաքեալ առ երիցունսն ի ձեռն բառնաբայ և սողոսի ։

ՐԻՑՆ, ԻՆՉպէս որ միոյն կարօղ էր՝ նորանց ամէն մէկն ընտրեցին՝ որ պէտք լինող բան ուղարկեն էն եղբարցն՝ որ հրէաստանումն բնակված էին ։

30 Որ էլ հենց արին՝ և ուղարկեցին երէցներին մօտ՝ բառնաբասի և սօղոսի ձեռով ։

ԳԼ· ԺՌ ։

1 Ընդ ժամանակն ընդ այնոսիկ սրկ հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զմանս յեկեղեցւոյն ։

2 Եւ սպան զյակովբոս զեղբայրն յովհաննու սրով ։

3 Տեսեալ եթէ հաճոյ է հրեից՝ յաւել ևս ունել զպետրոս ։ և էին աւուրքն բաղարջակերաց ։

1 Էն ժամանակներումն հերովդէս թագաւորն ձեռըն ձգեց՝ որ եկեղեցուն մին քանիսըն չարչարե ։

2 Եւ յակոբին՝ յոհաննէսի եղբօրըն սրով սպանեց ։

3 (Երբոր) տեսաւ՝ թէ հրէաներին հաճոյ է՝ էլ աւելացաւ պետրոսին էլ բռնեց ։ և բաղարջակերաց օրերն էր ։

4 Զոր իբրև կալաւ՝ եդ ի բանտի, և մատնեաց չորից չորքորդաց զինուորաց պահել զնա ։ և կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն ։

4 Նորան երբոր բռնեց բանտի (ղընդանի) մէջ դրաւ, և մատնեց չորս անգամ չորս զինուորներին՝ որ պահեն ։ և կամենումէր՝ որ զատկիցն հետև նորան բերէ ժողովրդի (առաջն) ։

5 Եւ պետրոս ի պահեսցի էր ի բանտին ։ և աղաւթք սաեպ լինէին յեկեղեց-

5 Եւ պետրոսն բանտի մէջումն պահված էր ։ և նորա համար անդադար աղաւթք էր

ույն վասն նորա առ Աստուած ։

6 Իբրև կամեցաւ Ոմն ա-ծել Հերովդէս. ի գիշերին յայնմիկ էր պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք. և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն ։

7 Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ՝ և լոյս ծագեաց ի տանն, և խտեաց զկողն պետրոսի՝ յարոյց զնա՝ և ասէ. արի վաղվաղակի. և անկան շղթայքն ի ձեռաց նորա ։

8 Եւ ասէ հրեշտակն ցնա. ածիր զգեստ քո, և սրիկ զհողմաթափս քո. և արար այնպէս. և ասէ ցնա, սրիկ զձորձս քո՝ և ե՛կ զկնի իմ ։

9 Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր՝ թէ ճշմարիտ իսկ՝ որ լինէ եղելն ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել ։

10 Եւ իբրև անցին նորա ըստ մի պահ և ըստ երկուս, եկին մինչև ի դուռն երկաթի՝ որ հանէր ի քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա. և ելին դուրս՝ և անցին զանգի մի ։ և յանդիման եղեալ հրեշտակն՝ անդէն անհետացաւ ։

6 Իբրև որ Հերովդէս կամեցաւ՝ որ նորան դուրս բերէ, ի գիշերին յայնմիկ պետրոս քնացեր էր երկու զինուորների մէջ՝ երկու շղթայով (շղթէլով) կապած՝ և պահապանները դրան առաջին բանտը պահէին։

7 Եւ ահա Տէրի հրեշտակն եկաւ կանգնեց նորա վերայ՝ և տան մէջն լոյս ծագեց, և խթեց պետրոսի կողին և նորան զարթնացրուց՝ և ասաց՝ վեր կաց շուտով ։ և շղթաները (շղթէլները) վէր ընկան նորա ձեռներից ։

8 Եւ հրեշտակն ասացնորան ։ քո գօտիկը կապիր՝ և հողմաթափներդ քոլիր ոտներդ՝ և կնայէր առաւ ։ և ասաց նորան ։ շորերդ քեզ վերայ քոլիր՝ և իմ ետևէս եկ ։

9 Եւ դուրս եկաւ գնում՝ նորա ետևէն, և չէր գիտում՝ թէ ճշմարիտ է էն բանն՝ որ հրեշտակից էլաւ ։ ինչու որ՝ կարծումէր՝ թէ երազ է տեսնում ։

10 Եւ երբոր նորանք անցկացան առաջին պահապանների և երկրորդ պահապանների, եկին մինչև երկաթի դուռն՝ որ դէպի քաղաքն

մեաալ անցին ընդ փողոց մի. և վաղվաղակի ՚ի բաց եկաց ՚ի նմանէ հրեշտակն ։

11 Եւ պետրոս իբրև ՚ի միտս եղև, ասէ. արդ գիտեմ Ա՛շմարիտ, եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր. և փրկեաց զիս ՚ի ձեռաց հերովդէի, և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն հրէից։

12 Եւ լեալ ՚ի միտս՝ եկն ՚ի տունն Մարեմայ մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին։

13 Եւ ՚ի բաղխել զդուրս դրանն, մատեաւ աղախին մի՝ ունկն դնէր, որում անունն էր Հռովդէ ։

14 Եւ ծանուցեալ զձայն պետրոսի՝ ՚ի խնդալոյն ոչ եբաց զդուռն. ՚ի ներքս ընթացեալ պատմեաց, թէ պետրոս առ դրանն կայ։

15 Ընդ որս ասեն ցնա՝ մոլիս, և նա ևս պնդէր՝ թէ այսպէս է. և նորա ասէին՝ հրեշտակ նորա իցէ ։

16 Եւ պետրոս տակաւ բաղխէր տանուտէր. որ ինքն իբրև նկատեաց բաց էլաւ նորանց համար՝ և մտին մէն փողոց անցկացան, և շուտով հրեշտակն նորանից հեռացաւ ։

11 Եւ պետրոսի միտքն եր-բոր իբրև վերայ եկաւ, ասաց. հիմիկ շնտակ իմացայ, որ Տէրն իբրև հրեշտակն ուղարկեց. և փրկեց ինձ հերոդէսի ձեռքիցն՝ և էն ամէն բաներիցն՝ որ հրէաներն ժողովուրդն սպասուէր ։

12 Եւ երբոր միտք արաւ՝ եկաւ յովհաննէսի մայր մարիամայ տունն, որ մարկոս կոչվեցաւ. ուր էնտեղ շատեր կային ժողովված՝ և աղօթք էին անում ։

13 Եւ դուռըն որ թակեց, մին աղախին (աղաւաղ)՝ որ նորա անունն հռոդէ էր՝ մօտ եկաւ, որ ականջ դնէ ։

14 Եւ պետրոսի ձայնըն որ ճանաչեց՝ ուրախութենիցն դուռըն բաց չարաւ. ներս վազեց և պատմեց, թէ պետրոսն դրանն կանգնած է ։

15 Ընդ որս ասացին նորան՝ խելառվել ես. և նա էլ աւելի հաստատուէր՝ թէ ճիշտ է. և նորանք ասուէին՝ թէ նորա հրեշտակն կլինի։

16 Եւ պետրոսն շուտ շուտ

խէր. երբեմն բացին, տեսին զնա՝ և զարմացան։

17 Իսկ նա ձեռամբ ցուցա-
նէր նոցա լռել. և պատ-
մեաց՝ որպէս Տէր եհան զնա
ի բանտէն. և ասէ. պատ-
մեցէք Յակովբայ և եղբարց
գոյս, և ել գնաց յայլ տե-
ղի։

18 Իսկ երբեմն այդ եղև, էր
խառնակութիւն մեծ ի մէջ
զինուորացն, զի՞ արդեօք
պատրան եղև։

19 Իսկ Հերովդէս երբեմն
խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ,
հարցեալ զպահապանսն հրա-
մայեաց սպանանել, և իջեալ
ի Հրէաստանէ ի կեսարիա՝
և անդ լինէր։

20 Իսկ էր Հերովդէս յա-
րամբ ընդ տիւրացիս և ընդ
սիդովնացիս. և նոքա առ հա-
ւասարակ եկին առ նա և ի բա-
նի արարեալ զբզաստոս սե-
նեկապետն արքայի, խնդրէին
զհաշտութիւն վասն կե-
րակրելոյ երկիրն նոցա յար-
քունուստ։

21 Յաւուր միում յերե-
ւելոջ՝ Հերովդէս զգեցեալ

դուռն թաղուածքէր. երբեմն
բացի արին, տեսին նորան՝ և
զարմացան։

17 Իսկ նա ձեռով ցոյց էր տա-
լիս նոցանից որ լռեն կենան, և
պատմեց՝ թէ ինչպէս Տէրն բան-
տից իւրան հանեց. և ասաց՝ ես
բանըս պատմեցէք յակոբին և
եղբարներին. և դուրս եկաւ
գնաց ուրիշ տեղ։

18 Իսկ երբեմն առաւօտ է-
լաւ, մեծ խռովութիւն էր էն
զինուորների մէջն, (թէ)
պատրան ինչ եղաւ։

19 Հերովդէսն երբեմն ո-
րան ուզեց և չգտաւ, պա-
հապաններին հարցրուց՝ և
հրամայեց տանել՝ որ սպանեն
նորանց. և հրէաստանից վեր
եկաւ կեսարիա՝ և էնտեղ
էր լինում։

20 Իսկ հերովդէսն շատ բար-
կացած էր տիւրացոց և սի-
դօնացոց վերայ. և նորանք ա-
մէնքն միաբան եկին նորա
մօտն. և բզաստոսին թա-
գաւորի ներսէ տան վերա-
կացուին հաւանացնելով խա-
դաղութիւն էին խնդրում.
ինչու որ՝ նորանց երկիրն
թագաւորի երկրից էր կե-
րակրւում։

21 Մէն հանդիսաւոր օր
Հերովդէսն թագաւորական շո

էր պհանդերձ [թաղաւորու-
թեան՝ և նստէր յատենի,
և խոսէր ընդ նոսա հրապա-
րակաւ ։

22 Եւ ամբոխն ազաղակէր՝
թէ Աստուծոյ բարբառ է,
և ոչ մարդոյ ։

23 Եւ անդէն եհար զնա
հրեշտակ Տեառն, փոխանակ
զի ոչ ետ փառս Աստուծոյ ։
և եղեալ որդնալից՝ սատա-
կեցաւ ։

24 Եւ բանն Աստուծոյ
աճէր և բազմանայր ։

25 Բառնաբաս և սաղոս
դարձան Երուսաղէմ՝ լը-
բի կատարեցին զպաշտօնն ։
առեալ էր ընդ իւրեանս և
զյովհաննէս՝ որ կոչեցեալն էր
մարկոս ։

էր հատել, և տիւանուհի
նոսաւ էր, և ամէնի առա-
ջին խօսուէրը նորանց հետ ։

22 Եւ ամբոխն(ձայնն) ա-
ղաղակուէրը՝ թէ էդ Աստու-
ծոյ ձայն է, և ոչ մարդոյ
(ձայն) ։

23 Եւ շուտով Տէրն հրեշ-
տակն զարկեց նորան ։ ինչու
որ՝ Աստուծոյն փառք չըտը-
ւաւ, և որդուներով լցվաւ՝
և սատակվեցաւ ։

24 Եւ Աստուծոյ խօսքն
աճուէր և շատանուէր ։

25 Բառնաբասն և սօղոմն
երբոր պաշտամունքըն կա-
տարեցին, երուսաղէմիցն յետ
դարձան ։ և յօհաննէսին էլ
իրանց հետ էին առել ։ որ
մարկոս էր կոչված ։

ԳԼ ։ ԺԳ ։

1 Էին ոմանք յանտիոք
ըստ եկեղեցւոյն մարգարէք
և վարդապետք, բառնաբաս՝
և շմաւոնն կոչեցեալն նիգ-
ղեր, և ղուկիոս կիւրենացի,
և մանայեն դայեակորդի հե-
րովդի չորրորդապետի, և սա-
ղոս ։

2 Մինչդեռ նի պաշտամանն

1 Անտիոքուն էնտեղ ի-
նօղ եկեղեցոյ միջումն կային
մին քանի մարգարէներ և
վարդապետներ։ բառնաբասն
և նիւդէր սևլած շմաւօնն,
և ղուկիոս կիւրենացին և հե-
րոդես չորրորդապետի ծըծ-
մօր որդի մանայինն, և սա-
ղոսն ։

2 Դեռ քանի որ Տէրի պաշ

Տեառն կայիր՝ և պահէիր, ասէ հոգին սուրբ. որոշեցէք ինձ զբառնաբաս և զսողոս ի գործ՝ յոր կոչեցեալ եմ ի նմա։

3 Յայնժամ պահեալ՝ և աղօթեալ՝ եդին ձեռն ի վերայ նոցա՝ և արձակեցին։

4 Իսկ նոքա առաքեալք ի հոգւոյն սրբոյ՝ իջին ի սե-լևկիա, և անտի նաւեցին ի կիպրոս։

5 Իսկ հասեալ ի սալամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս հրէից. ունէին և զյովհաննէս պաշտօնեայ։

6 Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև ի պափոս, գտին անդ զայր ոմն մոգ սուտ մարգարէ հրէայ, որում անունն էր բարէյեսուս։

7 Որ էր ընդ փոխանակի բդեշխին սերգեայ պօղոսի՝ ասն իմաստնոյ, նորա աղաչեալ զբառնաբաս և զսողոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ.

8 Ընդդէմ եկաց նոցա ելիմաս մոգ, քանզի այսպէս թարգմանի անուն նորա.

ասնի մէջն կայիր՝ և պատկի պահում, ասէ հոգին սուրբ. հոգին ասաց. ինձ համար զոկեցէք բառնաբասին և սողոսին՝ ի գործին համար, որ ես զոքանչ կանչել եմ։

3 Յն ժամանակն պաս պահեցին և աղօթք արին. նոքանց վերայ ձեռքն դրին, և արձակեցին։

4 Յն նորանք սուրբ հոգւոյն ուղարկված՝ վէր եկին սելևկիա, և էնտեղից նաւով գնացին կիպրոս։

5 Յն սաղամինա որ հասին՝ Աստուծոյ խօսքըն պատմում էին հրէանների ժողովարանները. յօհաննէսին էլ պաշտօնեայ ունէին։

6 Ման եկին ամէն կղզուն (ասպյուն) մինչև պափոս, և էնտեղ մին կախարդ մարդ գտին՝ սուտ մարգարէ, հրէայ (ըբհու) որ նորա անունն բարէյեսուս էր։

7 Որ փոխանակ բդեշխ սերգի պօղոսի իմաստուն մարդոյ հետ էր. նա բառնաբասին և պօղոսին աղաչելով, խնդրում էր որ Աստուծոյ խօսքըն լսէ։

8 Նորանց հակառակ կացաւ ելիմաս կախարդն. ինչու որ՝ էսպէս է թարգման

խնդրէր շրջել զվիճականակ բդեշխին ի հաւատոյ ։

9 Իսկ սողոս, որ և պօղոս՝ լցեալ հոգւով սրբով հայեցաւ ի նա,

10 Ու ասէ. ով լի ամենայն նենգութեամբ և խարամանկութեամբ՝ որդի սատանայի՝ թշնամի ամենայն արդարութեան, ոչ լռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս ։

11 Ու արդ՝ ահա ձեռն Տեառն ի վերայ քո, և եղիցիս կոյր չտեսանել զարև մինչև ի ժամանակ մի. և անդէն անկաւ ի վերայ նորա մէգ և խաւար, և շրջեալ խնդրէր առաջնորդս ։

12 Ցայնժամ տեսեալ վիճականակի բդեշխին զիրան՝ որ եղեն՝ հաւատաց, զարմացեալ ի վարդապետութիւնն Տեառն ։

13 Ու ամբարձեալ ի պօղինայ պօղոսեանց՝ եկին ի պերգէ պամփիւլեայ. Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ՝ դարձաւ յերուսաղէմ ։

վուր նորա անուն. ուղղեմք փոխանակ բդեշխին հաւատքիցն փոխել ։

9 Բայց սօղոն, որ էլ պօղոս (է կոչվում) սուրբ հոգով լցված մտիկ տուաւ նորան,

10 Ու ասաց. ով դու՝ որ ամէն խաբեբայութիւնով և խորամանկութիւնով լցված ես. սատանայի որդի և ամէն արդարութեան թշնամի, (էլ) չե՞ս դադարում Տէր ուղիղ ճանապարհները ծռելուց ։

11 Ու հիմի՝ ահա Տէրի ձեռն քեզ վերայ (է), և կոյր կըլինես՝ որ չըտեսանես արեգակը, մինչև մի ժամանակ. և շուռտով մութ և խաւար ընկաւ նորա վերայ, և մարդ էր գալիս ձեռք բռնող մարդիկ էր ուղում ։

12 Յն ժամանակն փոխանակ բդեշխն երբոր տեսաւ էն բաները՝ որ էլան, հաւատաց՝ և Տէրի վարդապետութեանն վերայ զարմացաւ ։

13 Ու պօղոսն և (նորա) հետ լինող մարդիկն պաֆեայիցն դուրս էլան՝ եկին պամփիւլիայի պերգէ քաղաքն. (բայց) յօհաննէսն նորանցից հեռացաւ՝ և յետ դարձաւ երուսաղէմ ։

14 Եւ նոքա գնացեալ ՚ի պերգեայ՝ եկին յանտիոք պիսիդեայ. և մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝ նստան։

15 Եւ յետ ընթերցանելոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին առնոսա ժողովրդապետքն և ասեն. արք եղբարք՝ եթէ իցէն ՚ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարուք։

16 Յոտն եկաց պօղոս՝ շարժեաց զձեռն և ասէ. արք իսրայէլացիք՝ և որք երկնչիք Աստուծոյ՝ լուարուք։

17 Աստուած ժողովրդեանս այսորիկ իսրայէլի ընտրեաց զհարսն մեր. և զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութեան յերկրին եգիպտացւոց. և ՚ի բազուկ բարձր եհան զնոսա անտի։

18 Եւ իբրև քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի։

19 Եւ քակեալ ազգս եօթն երկրին քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա

20 իբրև ամս չորեքհարիւր

14 Եւ նորանք պերգեայից գնացին՝ եկին պիսիդիայի անտիոք. և շաբաթի օրուն ժողովարանին մէջ մտին նստեցին։

15 Եւ օրէնքէն և մարգարէներէն կարդալուչն ետև, ժողովրդապետներն նորանց մօտ ուղարկեցին և ասացին. մարդիկ եղբայրք՝ թէ որ դուք էդ ժողովրդին համար մխիթարութեան խօսքեր ունիք՝ խօսեցէք։

16 Պօղոս վերկացաւ՝ իրան ձեռքն շարժեց և ասաց. ով իսրայէլացի մարդիկ, և դուք որ Աստուածանից վախուցէք՝ լսեցէք։

17 Յս իսրայէլացի ժողովրդիս Աստուածն մեր հարսնցն ընտրեց, և ժողովուրդն բարձրացրուց պանդխտութենուն՝ եգիպտացոց երկրի մէջն. և բարձր բազկով նորանց էնտեղից դուրս հանեց։

18 Եւ քառասուն տարի չափ ժամանակ նորանց կերակրեց անապատի մէջն։

19 Եւ քանանու երկրուն եօթը ազգեր քանդեց՝ և նորանց երկիրըն նորանց ժառանգել տուաւ,

20 Հարիւր և չորս

և Յիսուն ։ և Յետ այսորիկ ետ նոցա դառնաւորս մինչև ի սամուէլ մարգարէ ։

21 Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր , և ետ նոցա Աստուած զսաւուղ որդի կիսեայ՝ այր յազգէ բենիամնի, ամս քառասուն ։

22 Եւ իբրև փոխեաց գնա, յարոյց նոցա զդաւիթ թագաւոր, որում և ասաց վկայութեամբ . գտի զդաւիթ որդի յեսսեայ այր ըստ սրտի իմում . որ արասցէ զամենայն կամս իմ

23 Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց իսրայէլի զփրկիչն Յիսուս ։

24 Ըստ յառաջագոյն քարոզութեանն յովհաննու առաջի երեսաց մտին նորա մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն իսրայէլի ։

25 Եւ իբրև լնոյր յովհաննէս զընթացսն ասէր . զո՞ ոք կարծէք զիս՝ թէ իցեմ . չեմ ես այն . այլ ահա գայ զկնի իմ , որում չեմ արժանի գկօշիկս ոտից լուծանել ։

տարոյ չափ . և որանից ետև նորանց դատաւորներ տուաւ մինչև սամուէլ մարգարէն ։

21 Եւ ապա տուաջ գալով թագաւոր ուզեցին . և Աստուած տուաւ նորանց կեսիայի որդի սաւուղն՝ մին մարդ բենիամինի ցեղից , քառասուն տարի ։

22 Եւ երբոր նորան փոխեց, դաւիթին նորանց համար թագաւոր կանդնացրուց , որ նորան էլ վկայութիւն տուաւ և ասաց . Յեսսէի որդի դաւիթին գտի իմ սրտիս ուզածին պէս մարդ՝ որ նա իմ ամէն կամքըս կանէ ։

23 Սորա զաւակիցն Աստուած աւետիքին պէս խարայէլացոց համար Յիսուս փըրկիչը վերկացրուց ։

24 Ինչպէս որ յովհաննէն նորա երեսի առաջին մըտնելոյ ժամանակումն՝ առաջուց ապաշխարութեան մկրտութիւնըն քարոզեց իսրայէլի ամէն ժողովըրդին ։

25 Եւ երբոր յովհաննէն վերջացընում էր իրան գնալն՝ ասում էր . ինձ համար ոչ էք կարծում որ լինիմ՝ ես էն չեմ . բայց ահա իմ ետևէս գալիս է նա , որ ես չեմ արժանի նորա ոտաց կօշիկներին արձակելոյ ։

26 Ա՛րդիւք եղբարք՝ որդիք ազգիս Աբրահամայ եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն Աստուծոյ. ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ։

27 Զի որ բնակեալ են Երուսաղէմ, եւ իշխանք նո՛ցա՝ անծանօթ եղեն ի նմա՝ նէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ ամենայն շաբաթի ընթերցանութիւն՝ դատեալ կատարեցին։

28 Եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի պիղատոսէ սպանանել զնա։

29 Եւ իբրեւ կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի։

30 Եւ Աստուած յարոյց զնա ի մեռելոց. որ եւ երեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ.

31 Որ եկեալ էին ընդ նմա ի գալիլեայ Երուսաղէմ. որք եւ արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն։

32 Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր.

26 Մարդիկ եղբարք՝ ազգ Աբրահամի եւ որդիքնեք, եւ որ ձեզանէ՛ս ասուածավախ են. ձեզ ուղարկուեցաւ էս փրկութեան խօսքս։

27 Զի նորանք որ բնակուած են Երուսաղէմուն, եւ նորանց իշխաններն նորան չընճանաչեցին. եւ մարգարէների խօսքերին պէս, որ ամէն շաբաթներուն կարդացուին՝ դատաստան անելով կատարեցին։

28 Եւ թէպէտ նորա վերայ մին մեռնելու պատճառ չըգտին՝ պիղատոսին ուզեցին՝ որ նորան սպանէ։

29 Եւ երբոր էն ամէնքն՝ որ նորա համար գրուած էր կատարեցին, փայտին վէր բերին՝ եւ գերեզմանի մէջ դրին։

30 Բայց Աստուած նորան մեռելներէ միջէն յարոյց՝ որ շատ օրերով երեւեցաւ նորանց։

31 Որ նորա հետ գալիլեայէն վեր էին էլեր Երուսաղէմ, որ նորանք հէնց հիմի էլ նորա համար վկաներ են ժողովրդի առաջին։

32 Եւ մենք աւետարանումենք ձեզ էն խոստումնէքն՝ որ հարանց էլած էր։

33 Զի զնոյն Աստուած
հաւատեաց առ մեզ որդիս
նոցա՝ յարուցեալ զՅիսուս.
որպէս և ի սաղմոսին գրեալ
է յերկրորդում. որդի իմ
ես դու. և ես այսօր ծնայ
քեզ ։

34 Եւ զի յարոյց զնա ի
մեռելոց, և ոչ ևս դառ-
նալոց է յապականութիւն.
այսպէս ասէ. եղիէ տայ ձեզ
զսրբութիւնսն դաւթի ճշ-
մարիտս ։

35 Վասնզի և ի միւսում
ասէ. ոչ տայցես սրբոյ քումմ
տեսանել զապականութիւն ։

36 Զի դաւիթ յազգի
ժող իւրում պաշտեաց. և
ի կամ Աստուծոյ ննջեաց,
և յաւելաւ առ հարս իւր՝
և եհաս զապականութիւն ։

37 Բայց՝ զոր Աստուածն
յարոյց՝ ոչ եհաս զապակա-
նութիւն ։

38 Ծանի լիցի ձեզ՝ արք
եղբարք, զի սուրբ ձեզ թո-
ղութիւն մեղաց աւետարա-
նի. և յամենայնէ՝ յորմէ
ոչ կարացիք օրինաքն մով-
սէսի արդարանալ ։

39 Ումեք ամենայն որ հա-
ւատայ՝ արդարանայ ։

33 Ինչու որ՝ Աստուած էն
կատարեց մեզանում՝ որ նո-
րանց որդիքն ենք, Յիսու-
սին յարուցանելով. ինչպէս
որ երկրորդ սաղմոսումն գըր-
ված է. դու իմ որդիս ես,
ես էս օր ծնայ քեզ ։

34 Եւ էն որ մեռելների մի-
ջիցն յարոյց նորան, և որ
էլ չըպիտի դառնայ ապակա-
նութեան մէջ՝ էսպէս ասաց.
թէ ձեզ կըտամ դաւթի հա-
ւատարիմ սրբութիւնները ։

35 Ինչու որ՝ (նա) ուրիշ
տեղումն էլ ասումէ. քո սըր-
բոյն չես տալ որ ապականու-
թիւն տեսնէ ։

36 Բայց դաւիթն էն իրան
ազգումն ծառայեց Աստուծոյ
կամքին՝ և ննջեց՝ և պնաց
աւելացաւ իրանց հարանց
հետն, և ապականութիւն տե-
սաւ ։

37 Բայց նորան՝ որ Աստը-
ւած յարոյց, նա ապականու-
թիւն չըտեսաւ ։

38 Թող յայտնի լինի ձեզ
ա՛մբողիկ եղբարք՝ որ սրանով
մեղաց թողութիւն է աւե-
տարանվում ձեզ. և էն ա-
մէն բաներիցն՝ որ մօսէսի օ-
րէնքովն չըկարացիք արդարա-
նալ ։

39 Սորանով ամէն ով որ
հաւատայ՝ կարդարանայ ։

Ո0 Զգոյշ կայեք՝ գուցէ եկեսցէ ի վերայ ձեր ասացեալն ի մարգարէս.

Ո1 Տեսէք՝ արհամարհողք, և զարմայարուք և եղծարուք. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր. գործ, որ թուիմ ոչ հաւատասցէք՝ եթէ ոք պատմեսցէ ձեզ։

Ո2 Ուր իբրև ելին անտի, ազաչէին ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս։

Ո3 Իբրև արձակեցաւ ժողովուրդն, գնհետ երթային բազումք ի հրէից անտի և ի պաշտօնէից եկամտից՝ պաղղոսի և բառնաբայ. որք խօսէին ընդ նոսա, և հաւատնեցուցանէին զնոսա կալ ՚ի շնորհսն Աստուծոյ։

Ո4 Ուր ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ՝ լսել զբանն Աստուծոյ։

Ո5 Իբրև տեսին հրէայքն զամբոխն՝ լցան նախանձու. և ընդդէմ դարձեալ ասացեալսն ի պողոսէ՝ հայհոյէին։

Ո6 Համարձակեալ պողոս

Ո0 Զգոյշ կայեք՝ որ չըլինի թէ ձեզ վերայ գայէ՝ որ մարգարէներիցն ասացեալ է (թէ)։

Ո1 Տեսէք անարգողներ, և զարմայէք և փչայէք. ինչու որ՝ ես մի գործ եմ գործեմ ձեր օրերուն, (էնպէս) գործ, որ նորան չէք հաւատալ՝ թէ որ մինն պատմէ ձեզ։

Ո2 Ուր երբոր էնտեղից դուրս եկին, աղաչուեցին որ մէկէլ շաբաթուն էլ էն բանըն խօսին իրանց համար։

Ո3 Երբոր ժողովուրդն արձակվեցաւ, էն հրէաներից՝ և նոր դարձած աստուածապաշտ մարդկանցից շատերն գնումէին պօղոսի և բառնաբասի հետէն. որ էլ նորանց հետ խօսումէին, և նորանց հաւանացնումէին՝ որ Աստուծոյ շնորհքի մէջն կենան միշտ։

Ո4 Ուր երբոր մէկէլ շաբաթըն եկաւ, համարեա թէ բոլոր քաղաքն հաւաքվեցաւ՝ որ Աստուծոյ խօսքըն լսեն։

Ո5 Երբոր հրէաներն էն ամբոխըն (խալխն) տեսին, նախանձով լցվան. և պօղոսից ասածի խօսքերին հակառակ կենալով հայհոյումէին։

Ո6 Պօղոսն և բառնաբասն

և բառնաքայ՝ ասէին . առ
ձեզ նախ պարտ էր խօսել
զբանն Աստուծոյ . և քանզի
դուք մերժեցէք զնա, և ոչ
արժանի համարիք զձեզ կեա-
նացն յաւիտենականաց, ա-
հաւասիկ դառնամք ՚ի հե-
թանոս ։

47 Զի այսպէս պատուի-
րեաց մեզ Տէր . եդի զքեզ
՚ի լոյս հեթանոսաց՝ լինել
քեզ ՚ի փրկութիւն մինչև
՚ի ծագս երկրի ։

48 Զայս լուեալ հաճե-
նացան ուրախ լինէին և փա-
ռաւոր առնէին զբանն Տեառն.
և հաւատացին որք էին կար-
գեալ ՚ի կեանսն յաւիտենա-
կան ։

49 Եւ շրջէր բանն Աս-
տուծոյ ընդ ամենայն գա-
ւառն ։

50 Բայց հրէայքն զրգռե-
ցին զպաշտօնեայ կանայս ըն-
կաստս՝ և զգլխաւորս քա-
ղաքին, և յարուցեալ հա-
լածանս ՚ի վերայ սիրոյն և
բառնաքայ՝ հանին զնոսա ՚ի
սահմանացն իւրեանց ։

51 Եւ նոքա թօթափեալ
զփոշին յոտից ՚ի վերայ նո-
ցա, եկին Իկոնիոն ։

52 Եւ աշակերտքն լնուին

համարձակութեամբ աստուա-
ծային . առաջ պէտք էր Աստու-
ծոյ բանն ձեզ խօսել . և
որովհետև դուք դուրս եք ա-
նում նորան, և արժան չէք
համարում ձեզ յաւիտենա-
կան կեանցն . ահա դէպի հե-
թանոսներն ենք դառնում ։

47 Պատճառն որ՝ Տէրն ես-
պէս պատուիրեց մեզ . (թէ)
քեզ հեթանոսներին լոյս դրի՛
որ դուս փրկութիւն լինիս մին-
չև երկրի ծայրերն ։

48 Երբոր հեթանոսներն ես
լսումէին, ուրախանումէին, և
Տէրի խօսքըն փառաւորու-
մէին. և հաւատացին նորանք՝
որ կարգված էին դէպի յա-
ւիտենական կեանքն ։

49 Եւ Աստուծոյ խօսքն
փռվումէր էն ամէն գաւառն ։

50 Բայց հրէաներն դրդե-
ցին աստուածապաշտ պարկեշտ
կանանցըն՝ և քաղաքի գլխա-
ւորներին, և հալածանք վեր-
կայնելով պօղոսին և բառ-
նաբասին վերայ՝ նորանց
դուրս հանեցին իրանց սահ-
մաններիցն ։

51 Եւ նորանք իրանց ոտ-
ների փոշին լսած տուին նո-
րանց վերայ, և եկին Իկոնիոն։

52 Եւ աշակերտներն լցվու-

խնդութեամբ՝ և հոգւով սրբով։

ԳԼ. ԺԴ։

1 Եւ եղև յիկոնիոն՝ ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ հրէից, և խօսել այնպէս. մինչև հաւատալ հրէից՝ և յունաց բազմաց յոյժ։

2 Հայց անհաւան հրէայքն յարուցին և չարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց։

3 Հապա՛ւմ ժամանակս շրջէին համարձակեալք Տեառն՝ վկայութեամբ, բանիւ շնորհայ իւրոյ. և տալ նշանս և արուեստս լինել ի ձեռս նոցա։

4 Եւ եղեն հերձուածք ի բազմութեան քաղաքին. ոմանք էին ի հրէայսն, և ոմանք յառաքեալսն։

5 Իբրև եղև դիմել հեթանոսացն և հրէից իշխանօքն իւրեանց՝ ի թշնամանել և ի քարկոծել զնոսա,

6 Ընդ եղեալ նոցա՝ փախեան ի քաղաքս լեկայոնա-

մէին սւրբախուռթենով և սուրբ հոգւով։

ԳԼ. ԺԴ։

1 Եւ ելաւ իկոնիոնուէ որ նորանք իրար հետ մտնուէ մէին հրէաներէ ժողովարանի մէջ և էնպէս խօսուէմէին. մինչև որ հրէից և յունաց խիստ շատ հոգւէք հաւան կացան։

2 Հայց անհաւան հրէաներըն հեթանոսներէ անձներըն վերկացրին՝ և չարաչար դրդեցին եղբարներին վերայ։

3 Շատ ժամանակ ման էին դալիս համարձակվածՏէրէ վկայութենով նորա շնորհայ խօսքովն. և նշաններ և հրաշքներ տուաւ լինել նորանց ձեռովն։

4 Եւ տարաձայնութիւն ելաւ քաղաքի բազմութեան մէջն. որ մին քանիսն հրէաներէ կողմն էին, և մին քանիսն առաքեալներէ կողմն։

5 Երբոր ելաւ որ հեթանոսներն և հրէաներն իրանց իշխաններովն վերայ վազեցին՝ որ նորանց նախատինք տան և քարկոծ անեն,

6 Նորանք իմացան և փախան (դնացին) լեկայոնացոց

ցուց ՚ի լիւստրա և ՚ի դերբէ՝ և շուրջ զգաւառսն, և անդ աւետարանէին։

7 Եւ այր մի լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յոլովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր պնացեալ։

8 Սա լուաւ զխօսսն պօղոսի. որոյ հայեցեալ ՚ի նա և տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկութեան,

9 Ասէ մեծաձայն. քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յոտն կաց ՚ի վերայ ոտից քոյ ուղիղ. և վազվազէր՝ և դնայր։

10 Եւ ժողովրդոյն տեսեալ զոր արարն պօղոս, բարձին զձայնս իւրեանց լիկայոնատեսն, և ասեն. աստուածք նմանեալք մարդկան իջին առ մեզ։

11 Եւ կոչէին զբառնաբաս դիոս, և զպօղոս հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին։

12 Իսկ քուրմն դիայ՝ որ կայր առաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ՚ի դուռնն՝ հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել։

լիւստրա և դերբէ քաղաքենէն՝ և դաւառի չորս կողմն, և էնտեղ աւետարանումին։

7 Եւ մին լիւստրացի մարդ ոտներով տկար նստած էր՝ որ իրան մօր փորիցն կաղ էր ծընված, և իսկի չէր մանեկած։

8 Սա լսեց պօղոսի խօսքերըն. նա էլ նորա վերայ նայեց և տեսաւ՝ որ հաւատք ունի փրկվելոյ,

9 Մեծ ձայնով ասաց՝ քեզ եմ ասում. մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ քո ոտներիդ վերայ շիտակ կանգնիր. և նա վազումէր և դնումէր։

10 Եւ ժողովուրդն որ տեսաւ էն՝ որ պօղոսն արաւ, իրանց ձայնըն բարձրացրին լիկայոներէն՝ և ասացին. աստուածներն մարդկանց նման էլած վէր եկին մեզ մօտ։

11 Եւ բառնաբասին դիոս էին կոչում, և պօղոսին հերմէս. ինչու որ՝ նա էր խօսքի առաջնորդն։

12 Բայց դիոս (կոքի) քահանան՝ որ քաղաքի առաջին կար, արջառներ և պսակներ հասցրուց դուռն՝ և էն բազմութեանն հետ կամենում էր մատաղ անել։

43 Եւ լուեալ առաքելոյն բառնաբայ և պօղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտասւս վազեցին յամբոխն եւ աղաղակեցին,

44 Եւ ասէին. արբ՝ զի՞նչ գործեք զայդ. մեք ձեզ նմանոգք կարեօք մարդիկ եմք. աւետարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի. որ արար զերկինս և զերկիր և զծով՝ և զամենայն որ ի նոսա։

45 Որ յառեալ ազգն՝ թոյլ եւս ամենայն հեթանոսաց գնալ ի Ճանապարհս իւրեանց։

46 Եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եւ թող բարերարութեամբն տալ յերկինից ձեզ անձրեւս և ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրովք և ուրախութիւն զսիրտս ձեր։

47 Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ի չզոհելոյ նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս։

48 Եւ ի շրջելն նոցա և յուսուցանել՝ եկին Հասին էին գալիս և սովորցնու-

43 Եւ երբոր բառնաբաս և պօղոս առաքեալներն լսեցին, իրանց շորերըն պատառած՝ ամբոխի (խուճի) միջին դուրս վազեցին՝ մեծ ձայնով կանչռռմին,

44 Եւ ասում էին. մարդիկ՝ էդ ի՞նչ էր անում, մենք էլ ձեզ նման կարօտութիւն ունող մարդիկ ենք. որ աւետարանում ենք ձեզ՝ որ էդպէսի ոչ ինչ բաներից յետ դառնաք դէպի կենդանի Աստուածն՝ որ ստեղծեց երկինքըն և երկիրըս և ծովըն և էն ամէնըն՝ որ նորանց մէջն է։

45 Իր անցկացած պորտերում թոյլ տուաւ ամէն հեթանոսներին՝ որ իրանց ճանապարհներովն գնան։

46 Մէյնմէկ ինքն իրան առանց վկայութեան չըմոռեցինչու որ՝ բարերարութեամով երկնքից տուաւ ձեզ անձրևներ և պտղաբեր ժամանակներ, որ կերակուրներով և ուրախութեամով ձեր սըրտերըն լցնէ։

47 Եւ էս ասելով՝ դժուար թէ ժողովուրդներըն դադարցնում էին. որ մատաղ չանեն իրանց համար, բայց գընան ամէն մէկն իրանց տեղ։

48 Եւ երբոր նորանք մանէին գալիս և սովորցնու-

յանախոքէ և յիկոնիէ հրեայք ։ և ի վիճել նոցա համաձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն՝ ի բայ կալ ի նոցանէ, և ասէին, թէ ոչ ինչ ձշմարտութիւն ասեն, այլ զամենայն ասեն. և քարկոծեալ զպօղոս՝ քաշէին արտաքս քան զքաղաքն, և համարէին զնա մեռեալ ։

19 Իսկ ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմաւս ի քաղաքն. և ի վաղիւ անդր եկ բառնաբաս հանդերձ ի դերբէ ։

20 Աւետարանեալ ի քաղաքին յայնմիկ՝ և աշակերտեալ զբազումս, դարձան ի լիւստրայ՝ և յիկոնիոն՝ և յանտիոքիայ

21 Հաստատեալ զանձինս աշակերտելոցն՝ և մխիթարել կալ հաստատուն ի հաւատոյն. և թէ բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւնն Աստուծոյ ։

22 Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երիցունս. աղօթս արարեալ հանդերձ պահօք,

մէին. հրեաներ եկին հասին իկոնիոնիցն և անտիոքիցն. և նորանք որ համարձակութեամբ նալ վճռուեալ էին անուամ, ժողովուրդներըն խաբեցին՝ որ կեան նորանցից, և ասացին, թէ (նորանք) խոկի ձշմարտութիւն չէն ասում, բայց ամէնըն սուտ են խօսում. և պօղոսին քարկոծանելով՝ քաղաքիցն դուրս քաշեցին, և նորան մեռած էին համարում ։

19 Իսկ երբոր աշակերտներն նորա չորս կողմովին պատեցան, վերկացաւ մտաւ քաղաքն. և առաւօտն բառնաբասին հետ դուրս եկաւ դնաց դերբէ ։

20 Իսն քաղաքումն աւետարանեցին. և շատերին աշակերտ շինեցին. և ապա կեան դարձան լիւստրա՝ և իկոնիոն և անտիոքիա ։

21 Աշակերտներն անձներըն հաստատեցին և մխիթարեցին՝ որ հաստատ կենան հաւատքի մէջն. և թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտանել Աստուծոյ արքայութիւնն ։

22 Նորանց ամէն մէկ եկեղեցիներին համար երէցներ ձեռնադրեցին՝ աղօթք արին

Յանձն արարին դնոսա Տեառն՝ յոր հաւատացեալն էին ։

23 Եւ շրջեալ ընդ պիսիդայ՝ եկին ի պամփիւլեայ ։

24 Եւ խօսեցեալ ի պերգէ զբանն Տեառն, իջին յատալիայ ։

25 Եւ անտի նաւարկեալ՝ դնացին յանտիոք, ուստի էին յանձն արարեալ շնորհայն Աստուծոյ ի գործն՝ զոր կատարեցին ։

26 Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա. և զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոյ ։

27 Բրջէին ժամանակս ոչ սակաւ ընդ աշակերտան ։

պատ պահելով . և յանձնեցին նորանոյ Տէրին՝ որ հաւատացել էին նորան ։

23 Եւ պիսիդիայի միջն մանեկած՝ պամփիլիայի մէջ եկին ։

24 Եւ երբոր պերգէի մէջն Տէրի բանըն խօսեցին, վեր եկին աւտալիա ։

25 Եւ էնտեղէցին նաւով դնացին անտիոք, որ էնտեղից Աստուծոյ շնորհքին յանձնըլած էին՝ էն գործին համար՝ որ կատարեցին ։

26 Եւ եկին մինտեղ ժողովեցին եկեղեցին՝ պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ . և թէ նա հեթանոսներին համար հաւատքի դուռըն բացաւրաւ ։

27 (Եւ) քիչ ժամանակ չէրաւ՝ աշակերտներին հետ մնեկին ։

ԳԼ. ԺԵ ։

1 Եւ ոմանք իջեալ ի հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս . եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրել ։

2 Եւ ի լինել ոչ սակաւ հակառակութեան և խըն-

1 Եւ մին քանի՛ հրէաստանիցն վէր էկին եկած՝ եղբարներին սովորցնուէին, թէ որ չըթլփատուիք մօսէսի օրէնքին պէս՝ չէք կարօղ ապրիլ ։

2 Եւ (երբոր) պօղոսն և բառնաբասի հակառակու-

րոյ՝ պօղոսի և բառնաբայ ընդ նոսա, եդին ելանել պօղոսի և բառնաբայ և ոմանց ՚ի նոցանէ՝ առ առաքեալսն և երիցունս Երուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ։

3 Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջէին ընդ փիւնիկէ. և ընդ սամարիայ պատմէին զդարձն հեթանոսաց, և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարցդ։

4 Եւ հասեալ Երուսաղէմ ընկալեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած։

5 Ցարեան ոմանք ՚ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, և ասեն՝ թէ պարտ է թլփատել զդոսա, և պատուիրել պահել զօրէնսն Մովսէսի։

6 Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ։

7 Եւ յետ բազում խնդիր լինելոյ՝ յոտն եկաց պետրոս՝ և ասէ ցնոսա. արք եղբարք՝ դուք ինքնին դիտէք, զի յաւուրցն առաջ-

թիւն և վիճմունք քիչ չէր որ նորանց հետ արին՝ խօսք դրին որ պօղոսն և բառնաբասն և նորանցից մին քանիսն էն խնդիրքին համար գնան երուսաղէմ առաքեալներն և երէցներն մօտն։

3 Նորանք ժողովրդիցն Աստուածմարհ քայլեցան՝ և փիւնիկէի և սամարայի մէջն մանկին, պատմուէին հեթանոսներն դառնալն և մեծ ուրախութիւն էին անում ամէն եղբարներին։

4 Եւ երբոր հասին երուսաղէմ, եկեղեցուցն և առաքեալներին և երէցներին ընդունեցան, և պատմեցին որչափ բան որ Աստուած իրանց հետ արաւ։

5 Փարիսեցոց հերձուածիցն մին քանի հաւատացեալներ վերկացան, և ասումին՝ թէ պէտք է թլփատել դոքսանց և պատուէր տալ՝ որ մօսէսի օրէնքըն պահեն։

6 Եւ առաքեալներն և երէցներն ժողովվեցան՝ որ տեսնեն էս բանիս համար։

7 Եւ շատ քննութիւն լինելուցն ետև պետրոսն վերկացաւ՝ և նորանց ասաց. մարդիկ եղբարք՝ դուք ինքներդ գիտուէք, որ առաջին օրերիցն

նոց ՚ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսացն բանին աւետարանի, և հաւատալ:

8 Եւ սրտագէտն Աստուած վկայեաց նոցա, տալով նոցա Հոգին սուրբ որպէս և մեզ.

9 Եւ ոչ ինչ ընտրութիւն արար ՚ի մէջ նոցա և մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա:

10 Արդ՝ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ ՚ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝ և ոչ մեք կարացաք բառնալ:

11 Այլ հնարհոգն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատամք ապրիլ. կորօրինակ և նոքա:

12 Լռեաց ամենայն ժողովուրդն, և լսէին բանիդ և պօղոսի պատմելոյն. որչափ արար Աստուած նշանս և արուեստս ՚ի հեթանոսս ՚ի ձեռն նոցա:

13 Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ Յակոբոս՝ և ասէ. արք եղբարք՝ լուարուք ինձ:

ձեր միջումն Աստուած ընտրեց՝ որ իմ բերանով հեթանոսներն աւետարանի խօսքըն լսեն, և հաւատան:

8 Եւ սիրտ գիտող Աստուածն վկայութիւն տուաւ նորանց, սուրբ Հոգին տալով նորանց ինչպէս որ էլ մեզ:

9 Եւ ոչ ինչ ջոկութիւն չարաւ նորանց և մեր միջն, որ հաւատքով սրբեց նորանց սրտերըն:

10 Ուրեմն՝ ինչո՞ւ էք Աստուծոյն փորձում, որ լուծ էք դնում աշակերտների վրայն վերայ, որ (էն) ոչ մեր հարքն՝ և ոչ էլ մենք չըկարացինք վեր առնել:

11 Հապա Տէր Յիսուսի շնորհքովն հաւատումենք ապրիլ, ինչպէս որ էլ նորանք:

12 Ամէն ժողովուրդն լուռ կացաւ, և բառնաբասին և պօղոսի պատմելոյն լսումէին թէ Աստուած որչափ նշաններ և հրաշքներ արաւ նորանց ձեռովն հեթանոսների միջումն:

13 Եւ երբոր նորանք լուռ կացան՝ Յակոբոսն պատասխան տուաւ՝ և ասաց. մարդիկ եղբարք՝ ինձ լսեցէք:

14 Համաւն պատմեալ՝ որ-
պէս յառաջագոյն Աստուած
այլ արար՝ առնուլ ժողովուրդ
ի հեթանոսաց անուան իւ-
րոյ ։

15 Եւ ընդ սմին միաբանին
բանք մարգարէիցն, որպէս
և գրեալ է ։

16 Ցետ այսորիկ դարձայց՝
և շինեցից զյարկն Դաւթի՝
որ անկեալն և զաւերածեալսն
նորա վերստին շինեցից՝ և
կանգնեցից զնա ։

17 Որպէս զի խնդրեսցեն
մնացորդք մարդկան զՏէր ։
և ամենայն հեթանոսք՝ յո-
րոց վերայ կոչեցեալ է ա-
նուն իմ, ասէ Տէր ։ որ առ-
նէ զայս ամենայն

18 Ծանեալ է ի յաւիտեան-
ից (Տեառն գործ իւր) ։

19 Վասն որոյ և ես իրա-
ւունս համարիմ, մի դնել
զդժուարիկ՝ զք ի հեթանո-
սացն դառնան առ Աստուած,

20 Այլ տալ թուղթ առ
նոսա, խորշել ի կերակրոյ
կուոց՝ և ի պոռնկութենէ
և ի մեռելոտւոյ՝ և յարեանէ։

21 Զի մովսէս յաղագս
առաջնոց ըստ քաղաքաց զք-

14 Համաւնն պատմեց՝ թէ
ինչպէս Աստուած առաջուց
տեսութիւն արաւ՝ որ հեթա-
նոսներից ժողովուրդ առնէ
իրան անունին համար ։

15 Եւ նորա հետ միաբան-
վումն մարգարէների խօսքե-
րըն. ինչպէս որ էլ գրված է ։

16 Յետոյ եաւ կըդառ-
նամ՝ և դաւթի քնակարա-
նըն կըշինեմ, և նորա վերը ըն-
կածըն և քանդվածըն նոր կը-
շինեմ և կըկանգնացնեմ նորա։

17 Որ մարդկանց մնացած-
ներն Տէրին խնդրեն. և ա-
մէն հեթանոսներն՝ որ նորանց
վերայ իմ անունս կոչված է,
ասում Տէրն ։ (նա՛) որ էս
ամէնըս անում՝

18 Որ յաւիտենից հետէ
յայտնի է Տէրին իրան գոր-
ծըն ։

19 Ներհամար ես էլ իրա-
ւունք եմ համարում, որ նե-
ղուլ իւն չըտան նորանց՝ որ
հեթանոսներից յետ են դա-
ռնում դէպի Աստուած ։

20 Բայց որ թուղթ տըվվի
նորանց, որ յետ քաշվին
կուռքերի կերակուրներից և
պոռնկութենից, և մեռած
բաներից՝ և արիւնից ։

21 Ինչու որ՝ մօսէս առաջին
պորտերից եաւ՝ ամէն քա-

բոլոյն իւր ունի՝ ի ժողովն ըստ ամենայն շաբաթուց ընթերցեալ։

22 Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն ամենայն եկեղեցեաւն, արս ընտրեալս ի նոցանէ առաքել յանտիոք ընդ պօղոսի և ընդ բառնաբայ, զյուդա՝ որ կոչեցեալն բարսաբայ, և զշիղա՝ արս գլխաւորս։

23 Գրեալ առ եղբարս ի ձեռն նոցա զայս ինչ. առաքեալքն և երիցունք և եղբարքդ, յանտիոք և ի սիւրիա և ի կիւղիկիա եղբարցդ՝ որ ի հեթանոսացդ էք, ողջոյն.

24 Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրև ի մէնջ ելեալ խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել զանձինս ձեր. առն թլփատել և պահել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք։

25 Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ բառնաբայ և ընդ պօղոսի։

26 Արք՝ որք մատնեցին զան-

ձինս իւրեանց վասն անուան տեառն մերոյ յիսուսի քրիստոսի։

27 Առաքեցաք զյուդա և զսիղա՝ որ և իւրեանք բերանով պատմեսցեն ձեզ զայս նոյն։

28 Հաճոյ թուեցաւ հոգւոյն սրբոյ և մեզ՝ ոչ ինչ ածել ի վերայ ձեր ծանրութիւն աւելի քան զայս պիտանի,

29 զի ձգիցէք ձեզ ի կռոց պղծութենէ և ի մսոյ խեղդամահից և ի սպանդանոցէ և ի պոռնկութենէ, յորոց եթէ զգուշասցիք ձեզ, բարւոք առնիցէք. ողջոյն։

30 Եւ նոքա արձակեալք եկին յանտիոք, եւ ժողովեալ զբազմութիւնն՝ ետուն զթուղթն։

31 Եւ ընթերցեալ՝ ուրախացան ի մխիթարութենէ։

32 Եւ յուդա և սիղա՝ որ և իւրեանք մարգարէք էին, բազում բանիւ մխիթարեցին զեղբարսն և հաստատեցին։

33 Եւ արարեալ ժամանակ մի՝ արձակեցան խաղաղութեամբ առ առաքեալսն՝ որ առաքեցին զնոսա։

34 Եւ հաճոյ թուեցաւ սիղա մնալ անդ։

35 Եւ պօղոս և բառնաբաս կային յանտիոք՝ ուսուցանելով և աւետարանելով ընդ այլս բազումս զբանն տեառն։

36 Եւ յետ աւուրց ոմանց ասէ պօղոս ցբառնաբաս. դարձցուք այցելուլ զեղբարսն մեր յամենայն քաղաքս յորս քարոզեցաք զբանն տեառն, զի տեսցուք զինչ կան։

37 Եւ բառնաբաս կամէր առնուլ և զյովհաննէս՝ որ կոչեցեալ մարկոս։

38 Եւ պօղոս ոչ կամէր զայնպիսի առնուլ ընդ իւրեանս՝ որ հեռացեալ էր ի նոցանէ ի պամփիլիա և ոչ գնաց ընդ նոսա ի գործն։

39 Եւ եղեւ բարկութիւն մեծ՝ մինչեւ զատանալ ի միմեանց. և բառնաբաս առեալ զմարկոս՝ գնաց ի կիպրոս։

40 Եւ պօղոս ընտրեալ զսիղա՝ ել՝ ընդ եղբարս մատնեալ շնորհաց տեառն։

41 Եւ գնաց զսուրիա և զկիլիկիա՝ հաստատելով զեկեղեցիսն։

ձինս իւրեանոյ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

27 Արդ՝ առաքեցարո՛ք զյուդա և զշիղա. և նոյա՛ւ ի բանից գնոյն պատմել։

28 Զի հաճեալ Թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ քայց միայն ի կարևորացս յայսցնկ։

29 ի քաց կալ ի զոհելոյ կռոց՝ և յարենէ՝ և ի հղձուկնելոյ՝ և ի պոռնկութենէ. յորոյ պահեալ զանձինս բարւոք գործեք. ողջ լերուք։

30 Իւ նոքա արձակեալք՝ իջին յանտիոք, և ժողովեալ զժողովուրդն՝ ետուն զԹուղթըն։

31 Իւ ընթերցեալ՝ ուրախ եղեն ի վերայ մխիթարութեանն։

32 Յուդա և շիղա՝ զի և նոքա մարգարէք էին՝ բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս՝ և հաստատեցին։

33 Իւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առքանոյ անձներըն մատնեցին մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անուանն համար։

27 Սրահամար յուդային և շիղային ուղարկեցինք. որ նոքանք էլ խօսքով հենոյ էն բանըն պատմեն։

28 Ինչու որ՝ սուրբ Հոգոյն և մեզ էլ հաճոյ երևեցաւ՝ որ իսկի աւելի բեռըն չդրնենք ձեզ վերայ, քայց միայն էս հարկաւոր բաներըս։

29 Որ հեռու կենաք կռոքի մատաղ արածից՝ և արիւնից՝ և խեղդվածից՝ և պոռնկութենից. սորանցից որ պահեք (ձեր) անձներըն՝ լաւ կանեք, ողջ կացեք։

30 Իւ նորանք՝ որ արձակվեցան՝ վերեկին անտիոք, և ժողովուրդըն հաւաքեցին՝ և էն Թուղթըն տուին։

31 Իւ երբոր կարդացին, ուրախ էլան էն մխիթարութենն վերայ։

32 Յուդան և շիղան՝ որովհետև նորանք էլ մարգարէք էին՝ շատ խօսքերով մխիթարեցին և հաստատեցին եղբարնեըն։

33 Իւ երբոր մին ժամանակ էնտեղ էլան, եղբարնեըն խաղաղութենով արձակ-

ռաքեալսն ։

34 Եւ հաճոյ թուեցաւ շի-
ղոյի ճառ անդէն ։

35 Բայց պօղոս և բառնա-
բաս շրջէին յանտիոք , ու-
սուցանել և աւետարանել՝
և այլովք բազմօք՝ զբանն
Տեառն ։

36 Իսկ յետ աւուրց ինչ
ասէ պօղոս ցբառնաբաս ,
դարձցուք և շրջեսցուք զեղ-
բարբք՝ ըստ ամենայն քա-
ղաքաց՝ յորս քարոզեցաք
զբանն Տեառն՝ թէ որպէս
ունիցին ։

37 Բառնաբաս կամէր առ-
նուլ և զյովհաննէս՝ զկոչե-
ցեալն մարկոս .

38 Բայց պօղոս աղաչէր՝
թէ զմեկնեալն ի նոցանէ
ի պամփիւղիայ, և չէկեալն
ընդ նոսա ի գործն , մի առ-
նուլ ընդ ինքեանսն ։

39 Եւ եղև դժտութիւն՝
մինչեւ մեկնել նոցա ի մի-
մեանց , բառնաբաս առնուլ
զմարկոս՝ նաւել ի կիպրոս .

40 Եւ պօղոսի ընտրեալ
գշիղա եւ՝ յանձն արարեալ
շնորհացն Աստուծոյ՝ յեղ-
բարց անտի ։

41 Եւ շրջէր ի կողմանս

վեցան գնալ դէպի առա-
քեալներն ։

34 Եւ շիղայն հաճոյ երևե-
ցաւ՝ որ ենտեղ ճնայ ։

35 Բայց պօղոսն և բառնա-
բասն անտիոքի մէջն մանէին
գալիս , որ Տէրի խօսքըն շատ
ուրիշների հետ սովորցնեն և
աւետարանեն ։

36 Բայց մին քանի օրից ետև
պօղոսն ասայ բառնաբասին
դառնանք և մանգանք եղ-
բարներին մօտ՝ էն ամէն քա-
ղաքներն, որ նորանցում Տէ-
րի խօսքըն քարոզեցինք.(տես-
նենք) թէ ինչպէս կան ։

37 Բառնաբասն կամենու-
մէր էն մարկոս կոչվածն յո-
հաննէսին էլ վեր առնել ։

38 Բայց պօղոսն աղաչումէր՝
որ էն պամփիւղիայի մէջ ի-
րանցից ջոկվածըն, և նորանց
հետ գործի մէջ չեկածըն
իրանց հետ չառնեն ։

39 Եւ կռիւ էլաւ նորանց
միջումն . մինչև որ նորանք
ջոկվեցան իրարից . բառնա-
բասն մարկոսին առաւ որ նա-
ւով գնայ կիպրոս .

40 Եւ պօղոսն շիղայն ընտ-
րեց՝ և էն եղբարներից Ա-
ստուծոյ շնորհքին յանձնված
դուրս եկաւ ։

41 Եւ ասորոյ և կիւլիկե-

ասրբոյ և կիւլխկեցւոց, և հաստատէր զեկեղեցիսն։

ԳԼ. ԺԶ։

1 Եւ էին եհաս ՚ի դերբէ և ՚ի լիւստրա. և ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն տիմոթէոս, որդի կնոջ հրեչի հաւատացելոյ՝ և հօր հեթանոսի,

2 Որ վկայեալ էր ՚ի լիւստրացւոց և իկոնացւոց եղբարց։

3 Զսա կամեցաւ պօղոս ընդ իւր առնել. և առեալ թլփատեաց զնա վասն հրէիցն, որ էին ՚ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա՝ թէ հեթանոս էր։

4 Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն՝ որք յերուսաղէմ։

5 Եւ եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս, և յաւելուին ՚ի թիւ հանապազօր։

6 Եւ շրջեցան ընդ փռիւգիա և ընդ կողմանս գաղատացւոց, արգելեալք ՚ի հոգւոյ կոչմանն ման էր գալիս, և եկեղեցիներըն հաստատումբ։

ԳԼ. ԺԶ։

1 Եւ եկաւ հասաւ դերբէ և լիւստրա. և ահա մին աշակերտ կար էնտեղ՝ տիմոթէոս անուն. որ հրէայ հաւատացեալ կնկան՝ և հեթանոս հօր որդի էր։

2 Որ բարի վկայութիւն ունէր լիւստրացի և իկոնացի եղբարներից։

3 Պօղոսն կամեցաւ որ սորան տանի իրան հետ. և առաւ թլփատեց նորան՝ հրէաների պատճառովը, որ էնտեղերումն էին. ինչու որ՝ ամենքն գիտէին՝ որ նորա հայրն հեթանոս էր։

4 Երբոր անց էին կենում էն քաղաքներովն՝ աւանդեցին նորանց պահել էն հրամաններըն, որ երուսաղէմումն լինող առաքեալներից և էլդեցիներից պատուիրած էին։

5 Եւ եկեղեցիներն հաւատքի մէջ հաստատվում էին, և օրէ օր թուով աւելանում էին։

6 Եւ փռիւգիայի և գաղատացոց կողմերն ման էին, սուրբ հոգուց արգել-

ւայն սրբոյ խօսել զբանն յա-
սիա ։

7 Բայց եկեալ առ միւ-
սեաւ՝ թւակոխէին երթալ
ի բիւթանիա, և ոչ հա-
մարձակեաց նոցա Հոգին Յի-
սուսի ։

8 Իւ անցեալ ըստ միւ-
սիա՝ իջին ի տրովադա ։

9 Իւ տեսիլ երևեցաւ ի
գիշերի պօղոսի. այր ոմն
մակեդոնացի կայր, աղաչէր
զնա՝ և ասէր. անցեալ ի
մակեդոնիա՝ օգնեացես մեզ ։

10 Իւ իբրև զտեսիլն ե-
տես, վաղվաղակի խնդրե-
ցաք ելանել ի մակեդոնիա.
տեղեկացեալ՝ թէ հրաւի-
րեաց զմեզ Տէր աւետարա-
նել նոցա ։

11 Իւ ելեալ ի տրովա-
դայ՝ դէպ ուղիղ գնացաք ի
սամոթրակէ, և ի վաղիւ
անդր ի նոր քաղաքն ։

12 Իւ անտի ի փիլիպպուս,
որ է առաջին վիճակ մակե-
դոնացւոց քաղաք՝ կողով-
նիա. և անդ ի քաղաքին
դադարեաք մեր աւուրս ինչ,

13 Յաւուրն շաբաթու ե-
լաք արտաքոյ քաղաքին առ
գետափն՝ ուր համարէր ա-

վաճ՝ որ ասիայի մէջն Ա-
տուճոյ բանըն չըլսօսին ։

7 Բայց երբոր եկին մի-
սիայի կողմերն, որ գնան բիւ-
թանիա, և Քրիստոսի հո-
գին թոյլ չըտուաւ նորանց ։

8 Իւ միսիայոյին որ անց-
կացան՝ վէր եկին տրօադա ։

9 Իւ պօղոսին գիշերուն
տեսիլ երևեցաւ. մին մա-
կեդօնացի մարդ կանգնած էր,
աղաչուելէր նորան՝ և ասու-
մէր. անցկաց մակեդօնիա՝ և
մեզ օգնիր ։

10 Իւ երբոր տեսաւ էն տե-
սիլքին՝ շուտով խնդրեցինք
որ դուրս գանք մակեդօնիա.
ինչու որ՝ իմացանք՝ որ Տէրն
հրաւիրեց մեզ, որ աւետա-
րանենք նորանց ։

11 Իւ տրօադայէն դուրս
եկած՝ շիտակ գնացինք սա-
մոթրակէ. և յետևի օրուն
նոր քաղաքն ։

12 Իւ Ենտեղէն փիլիպ-
պուսն, որ մակեդօնացոց ա-
ռաջին բաժինն է՝ կողմնիա
քաղաքն. և մենք որ Ենտեղ
քաղաքուն մինքանի օր դա-
դարեցինք միասին,

13 Շաբաթի օրուն քաղա-
քէն դուրս ելանք դէպի գե-
տի ափն՝ որ Ենտեղ սովոր էին

ղօթս մատուցանել. և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն ։

14 Եւ կէն ոմն անուն լի-
դիա Թիւատիրա՝ ի քա-
ղաքէ Երկիւղած Աստուծոյ լուաւ՝ զորոյ Տէր լաւ եբաց սրտին ան-
սալ խօսիցն պօղոսի ։

15 Եւ իբրև մկրտեցաւ
ինքն և տունն իւր, աղաչէր և ասէր. եթէ համարիցիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ի տուն իմ ապրուսք. և բռնադատեաց տարաւ զմեզ ։

16 Եւ եղև մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ. որ շահս բա-
զումս տայր տերանց իւրոց մոգելովն ։

17 Նա զհետ եղեալ պօ-
զոսի և մեր՝ աղաղակէր և ասէր. արքս այս՝ ծա-
ռայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճա-
նապարհս փրկութեան ։

18 Եւ զայս առնէր ի բա-
զում աւուրս. զայրացեալ պօղոս՝ դարձաւ և ասէ ցոյն. պատուիրեմ քեզ յանուն

աղօթք անել. և նստած խո-
սումինք ժողոված կանանց հետն ։

14 Եւ մին կին լիդիա ա-
նուն՝ ծիրանի ծախող՝ որ Թի-
ւատիրա քաղաքին էր՝ Աս-
տուածանից վախող՝ լսեց՝ որ հենց Տէրն նորա սիրտը բաց արաւ, որ պօղոսի խօսքերին մտիկ անէ ։

15 Եւ երբոր ինքն և ի-
րան տունն մկրտվեցաւ, ա-
ղաչեցավ և ասումէր. Թէ որ ինձ Տէրին հաւատացած համարիք, մտէք իմ տունս, էնտեղ ճոպէք. և զօր արաւ տարաւ մեզ ։

16 Եւ էլաւ դեռքանի որ մենք գնումէինք աղօթք ա-
նել, մին աղախին (չքաւո-
ր) պատահեց մեզ՝ որ կախար-
դութեան դև (ջոռո-) ունէր. որ կախարդութենովն իրան տէրերին շատ շահ կ բերում ։

17 Նա պօղոսի և մեր եաե-
էն ընկած՝ աղաղակումէր և ասումէր. էս մարդիկ բարձ-
րեալ Աստուծոյ ծառաներն են, որ ձեզ պատմումեն փըր-
կութեան ճանապարհներըն ։

18 Եւ շատ օրեր էս բանըս անումէր. պօղոսին դըժուար եկաւ՝ յետ դարձաւ և դէմն ասաց. Յիսուսի Քրիստոսի

Յիսուսի Քրիստոսի. Ել ի դմանէ. և ել ի նմին ժամու։

19 Իբրև տեսին տեարքն նորա՝ եթէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ զպօղոս և զՇիղա՝ ձգեցին ի հրապարակ առ իշխանսն։

20 Եւ ածեալ զնոսա առ պետականսն՝ ասէին. արբս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր՝ հրեայք են,

21 Եւ պատմեն սովոր օրէնս՝ զոր չէ արժան մեզ ընդունել, և առնել, զի հռովմայեցիք եմք։

22 Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա. և զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց. հրամայեցին գան հարկանել։

23 Եւ բազում վէրս եդեալ ի վերայ նոցա՝ արկին ի բանտ. պատուիրեցին բանտապետին զգուշութիւն պահել զնոսա։

24 Որ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն. և զոտս նոցա պնդեաց ի կոճղս։

անուանովն պատուիրեցաք քեզ՝ դադրես ոչ դորանից. և դարձեալ հինգ էն ժամուցն (առաքեա) դուրս եկաւ։

19 Երբոր նորա տէրերն տեսին՝ լմէ իրանց շահի յոյսն կտրվեցաւ, պօղոսին և շիղային առին քաշեցին տիւանն իշխաններուն մօտն։

20 Եւ նորանց տարան զօրագլուխներուն մօտն՝ և ասացին. Էս մարդիկս խռովացընուն մեր քաղաքըս՝ իրանք հրէաներ են,

21 Եւ մեզ ընդունելի օրէնք են պատմում՝ որ մեզ արժան չէ ոչ ընդունել, և ոչ անել. ինչու որ՝ մենք հռոմայեցի ենք։

22 Եւ ամբոխն (խալքն) կիտվեցաւ նորանց վերայ. և զօրագլուխներըն նորանց շորերըն պատառեցին՝ և հրաման տուին որ ծեծեն։

23 Եւ երբոր շատ խոցեր նորանց վերայ դրին՝ բանտին (գընիաներին) մէջ քցեցին, և բանտապետին պատուիրեցին. որ նորանց զգուշութեամբ պահէ։

24 Նա էլ որ էսպէսի պատուէրը առաւ, նորանց ներսի բանտն քցեց. և նորանց ոտներըն կոճղուցին (չէօխէ-հու-ի) սղնդացրուց։

25 Եւ ՚ի մէջ գիշերոյն պօղոս և շիղա կային յա-
ղօթս՝ և օրհնէին զԱստուած։
և ունկն դնէին նոցա կա-
լանաւորքն ։

26 Եւ եղև յանկարծակի
շարժումն մեծ՝ մինչև ՚ի շար-
ժել հիմանց բանտին ։ և
բացան անդրէն դրունքն ա-
մենայն և ամենեցուն կապանք
լուծան ։

27 Իբրև զարթեաւ բան-
տապետն՝ և ետես բացեալ
զդուրս բանտին , ձգեաց
զսուսեր՝ և կամէր սպա-
նանել զինքն , կարծեր փախու-
եալ զկապեալսն ։

28 Եւ գոչեաց ՚ի ձայն մեծ
պօղոս՝ և ասէ ։ մի՛ ինչ գոր-
ծեր ընդ անձն քո չար, քան-
զի ամենեքին աստ եմք ։

29 Խնդրեաց լոյս՝ և դի-
մաց ՚ի ներքս։ և զահի հա-
րեալ անկաւ առաջի պօղոսի
և շիղայի ։

30 Եւ ածեալ զնոսա ար-
տաքս՝ ասէ ։ տեարք՝ զի՞նչ
պարտ է ինձ առնել՝ զի ապ-
րեցայց ։

31 Եւ նոքա ասեն ։ հաւա-
տա ՚ի Տէր Յիսուս Քրիս-

25 Եւ մէջ գիշերուայն պօ-
ղոսն և շիղան աղօթք էին ա-
նում , և օրհնութիւն էին
տալիս Աստուծոյ։ և (ուրիշ)
բանտապահներն նորանց ա-
կանջ էին դնում ։

26 Եւ յանկարծակի մեծ
շարժմունք էլաւ՝ մինչև որ
բանտի հիմունքներն էլ շար-
ժվում էին ։ և շուտով ա-
մէն դռներն բացվան , և
ամէնի կապանքներն արձակ-
վեցան ։

27 Երբոր բանտապետն
զարթնաւ , և տեսաւ որ
բանտի դռներն բացված էին,
սուրըն քաշեց՝ և կամենու-
մը էր ինքն իրան սպանել ։ ին-
չու որ՝ կարծում էր թէ կա-
պածներն փախել են ։

28 Եւ պօղոսն մեծ ձայնով
կանչեց՝ և ասաց ։ քո ան-
ձիդ չար բան մի գործեր ։
ինչու որ՝ մենք ամէնքս էս-
տեղ ենք ։

29 Ճրագ ուղեց՝ և ներս
վազեց ։ և շատ վախով բան-
տած պօղոսի և շիղայի առա-
ջին վերընկաւ ։

30 Եւ նորանց դուրս հա-
նեց և ասաց ։ տերե՛ր՝ ես ի՞նչ
պէտք է անեմ որ ապրիմ ։

31 Եւ նորանք ասացին ։ հա-
ւատա Տէր Յիսուս Քրիս-

ա՛ռ, և ապրեսցիս դու՝ և ամենայն տունն քո։

32 Եւ խօսեցաւ նմա զբանն Տեառն՝ և ամենեցունն՝ որ էին ՚ի տան նորա։

33 Եւ առեալ զնոսա ՚ի նմին ժամուն գիշերւոյն՝ լուաց ՚ի վիրաց անտի. և մկրտեցաւ նա՛ և ընդն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի։

34 Եւ ածեալ զնոսա ՚ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան. և ուրախ եղև առնեայն տամբն հաւատացեալ Աստուած։

35 Եւ իբրև այդ եղև՝ առաքեցին զօրապետքն զնըւիրականն՝ և ասեն. արձակեա զարսդ զայդոսիկ։

36 Եւ պատմեաց բանտապետն զբանսն պօղոսի՝ եթէ առաքեցին զօրապետքն զի արձակիցիք. արդ ելէք՝ և երթա՛յք խաղաղութեամբ։

37 Իսկ պօղոս ասէ ցնոսա. զան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս հռովմայեցիս արկին ՚ի բանտ, և արդ լռե՞լեաւ զմեզ. ո՛չ այդպէս, այլ եկեսցեն՝ ինքեանք իսկ հանցեն զմեզ։

տոսին, և կապրիս դու և քո ամէն տունդ։

32 Եւ Տէրի բանըն խօսեցին նորան՝ և են ամէնին, որ նորա տանն կային։

33 Եւ նորանց վեր առաւ գիշերի են ժամուն (ահա՛ Ռո՛մ) են խոյերիցն լուացաւ. և շուտով մկրտուեցաւ ինքն՝ և նորա ամէն ընտանիքն։

34 Եւ նորանց տարաւ ի բան տունն՝ նորանց առաջին սեղան դրաւ, և ուրախ էլաւ ամէն ընտանիքներովն՝ որ Աստուծոյն հաւատաց։

35 Եւ երբոր լուսացաւ, զօրապետներն ուղարկեցին սիւանի պաշտօնեաներին՝ և ասացին. արձակիր էդ մարդկանցըդ։

36 Եւ բանտապետն էն խօսքերըն պօղոսին պատմեց, թէ զօրապետներն ուղարկեցին որ արձակվիք. ուրեմն դուրս եկէք, և գնացէք խաղաղութեանով։

37 Բայց պօղոսն ասաց նորանց. ամէնի առաջին ծեծեցին մեզ՝ որ անմեղ հռոմայեցի մարդիկ ենք, և բանտի մէջ ձգեցին. և հիմիկ մեզ թաքուն են հանում. էդպէս չէ, բայց թող հենց իրանք գան մեզ հանեն։

38 Եւ պատմեցին զօրապետքն նուէրքն զոր առին. զահի հարան իբրեւ լուան՝ թէ հոգմայեցիք են. և եկաք աղաչեցին զնոսա։

39 Եւ իբրեւ հանին, աղաչեին գնալ ի քաղաքէն։

40 Եւ եկեալ ի բանտէն՝ մտին առ Լիւդիա. և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա և գնացին։

38 Եւ սուրանի պաշտօնեաներն էն խօսքերըն զօրապետաց լսեցին թէ հռոմայեցիք են. և եկին աղաչեցին նորանց։

39 Եւ երբոր հանեցին, աղաչեցին որ էն քաղաքէն գնան։

40 Եւ բանտէն դուրս եկին մտին Լիւդիայի մօտ. և եղբարներն որ տեսին՝ նորանց մխիթարեցին և գնացին։

ԳԼ. ԺԷ։

1 Եւ շրջեալ ընդ ամփիպօլիս և ընդ ապողոնիա, եկին ի թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ հրէից։

2 Եւ ըստ սովորութեանն պօղոս եմուտ առ նոսա, և ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի գրոց։

3 Բանայր՝ և դնէր առաջի, եթէ պարտ էր Քրիստոսն չարչարիլ և յառնել ի մեռելոց, և թէ նա է Քրիստոսն Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ։

4 Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան, և վիճակեցան

1 Եւ ամփիպօլիսի և ապողոնիայի մէջն մանգալով եկին թեսաղոնիկէ, որ էնտեղ հրէաների ժողովարան կար։

2 Եւ պօղոսն (իրան) սովորութեանն պէս մտաւ նորանց մօտ, և երեք շաբաթի (օրերուն) նորանց հետ խոսեց գրքերիցն։

3 Բաց էր անուն՝ և առաջի դնում, թէ պէտք էր՝ որ Քրիստոսն չարչարվի և մռեալների միջիցն յարութիւն առնէ. և թէ՝ նա էն Յիսուս Քրիստոսն է, որ ես պատմում ձեզ։

4 Եւ նորանցից մին քանիսն հաւան կացան և պօղոսի և շի-

պողոսի և շիղայի , բայց պաշտօնէից հնձանոցայ էր բազմութիւն յոյժ, և ՚ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք ։

5 Եւ նախանձեցան հրէայքն , և առեալ արս ոմանս գեհիկս, անօրէնս՝ ամբոխ արարեալ խառնեցին զքաղաքն . և կացեալ առ յարկսն յարտանան յասոնէի , խնդրեցին զնոսա ածել ՚ի հրապարակ ։

6 Եւ երբեւ ոչ գտին զնոսա՝ քարշէին զյասոնէ և զոմանս եղբարս առ քաղաքապետսն . բողոք բարձեալ՝ ՚ի որք զաշխարհս խառնեցին՝ սոքա և այսր հասին ։

7 Զորս ընկալեալ է յասոնէի . և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն . թագաւոր ոմն ասեն զՅիսուս ։

8 Եւ խառնեցուցին զժողովուրդսն և զքաղաքապետսն, որ լսէին զայս ։

9 Եւ առեալ երաշխաւորութիւն առ ՚ի յասոնէայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա ։

10 Բայց եղբարք վաղվաղ-

զսոյն հետ միաւորիցան. բայց աստուածամարտաշտ հնձանոնքի շատ բազմութիւն կար, և գլխաւոր կանանցեցն եւ քիչ չէ ։

5 Եւ հրէանքն նախանձեցան, և մինչդեռ ամիկ անօրէնն մարդիկ առին՝ ամբոխ (խուռն) արին , քաղաքի մէջն շփոթութիւն չինեցին , և յասոնի տան մօտ հասնելով՝ ուզումէին , որ նորանց առնեն դատաստանաւորն ։

6 Եւ երբոր չգտին նորանց՝ յասոնին և մին քանի եղբարներին քաշումէին՝ քաղքապետներուն մօտն և սամիկ աղաղակումէին՝ թէ սորանք՝ որ աշխարհքին շփոթացրին, հասեղ եւ հասին ։

7 Որ յասոնն ընդունել է նորանց . և սորանք ամէնքն կայսերի հրամաններուն հակառակ են գործում . որ մին Յիսուս թագաւոր են ասում ։

8 Եւ շփոթացրին ժողովուրդները և քաղաքապետներին՝ որ էս լսումէին ։

9 Եւ յասոնիէն և ուրիշ եղբարներէն երաշխաւորութիւն (գումնէաքուէն) առին՝ և նորանց արձակեցին ։

10 Բայց եղբարներն սրդ-

կի գիշերայն յուշարկեցին զպօղոս և զշիղաց ՚ի բերիա. որք իբրև հասին անդր՝ ՚ի ժողովուրդն հրեից գնացին ։

11 Եւ սորա էին ազնուականագոյնք՝ քան որ ՚ի Թեսաղոնիկէ էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ. հանապազ քննէին գգիրս, եթէ իցէ այս այսպէս։

12 Եւ բազումք ՚ի նոցանէ հաւատացին. և ՚ի յունաց կանանց զգաստից՝ և յարանց՝ ոչ սակաւք ։

13 Բայց իբրև գիտացին՝ որ ՚ի Թեսաղոնիկէ հրեայքն էին, եթէ և ՚ի բերիայ պատմեցաւ ՚ի պօղոսէ քանն Աստուծոյ, եկին և անդր՝ շարժել և խռովեցուցանել զժողովուրդսն ։

14 Յայնժամ վաղվաղակի պօղոս առաքեցին եղբարքն գնալ մինչև ՚ի ծովեզը. և Թեսայն շիղաս և տիմոթէոս անդէն ։

15 Եւ որք տանէին զպօղոս, ածին զնա մինչև յաթենս. և առեալ պատուէր ՚ի նմանէ առ շիղաս և տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ նմին և շիղային շուտով գիերուսն Ճանապարհ քեցեին դեպի բերիա. որ նորանք երբոր էնտեղ հասին, գնացին հրեաներէն ժողովարանն ։

11 Ինչու որ՝ սորանք աւելի ազնիւ անձինք էին՝ քան նորանք՝ որ Թեսաղոնիկէուն էին. որ (Աստուծոյ) խօսքըն ամէն յօժարութեամբ ընդունեցին միշտ գրքերըն քննումէին, Թէ էս (բանս) էսպէս լինի ։

12 Եւ նորանցից շատերն հաւատացին. և յոյն պարկեշտ կանանցից և մարդկանցից էլ քիչ չէ ։

13 Բայց էն հրէաներն՝ որ Թեսաղոնիկէուն էին, երբոր գիտացին՝ Թէ բերիայի մէջն էլ Աստուծոյ խօսքն պատմվեցաւ պօղոսից, էնտեղ էլ եկին՝ որ ժողովուրդներըն շարժեն և շփոթացնեն ։

14 Էն ժամանակն եղբարքնէրն պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչև ծովն եղբըն գնայ. և շիղան և տիմոթէոսն էնտեղ մնացին ։

15 Եւ նորանք՝ որ պօղոսին տանում էին, նորան մինչև աթէնքն տարան՝ և որ պատուէր առին նորանից շիղային և տիմոթէոսին համար,

նա, և գնացին։

16 Եւ յամէնն ի ճնալ նոցա պօղոսի, զայրանայր հոգի նորա ի նմա, ղի տեսանէր զքաղաքն։

17 Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ հրէայս և ընդ պաշտօնեայսն՝ և ի հրապարակին զամենայն օր՝ որով և պատահէին։

18 Իմանք և էպիկուրեանցն, և ի ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սերմանաբաղձ այս խօսել. իսկ այլք, Թէ օտարոտի ինչ դիւց Թուի պատմիչ լինել։ քանզի զՅիսուս և զյարուԹիւն աւետարանէր։

19 Եւ առեալ զնա ածին Յարիսպագոսն, և ասէին. կարասցուք իմանալ՝ Թէ զի՞նչ է նոր վարդապետուԹիւնդ՝ որ ի քէն պատմի։

20 Օտարացուցեալ ինչ բերես ի լսելիս մեր. կամիմք դիտել՝ Թէ զի՞նչ կամիցի այս լինել։

որ շուտով զան նորա մօտ, գնացին։

16 Եւ պօղոսն երբոր աՀԷնքումն նորանց սպասումը, նորա հոգին սաստիկ դժուարանումը նորա ներսումն. ինչու որ՝ էն քաղաքըն կռապաշտուԹեան մէջ էր տեսնում։

17 Եւ ժողովարանումն հրէաներին հետ և աստուածապաշտներին հետ խօսումէր՝ և փողոցներումն ամէն օր նորանց հետ՝ որ պատահումէին։

18 Էպիկուրեան և ստոյիկեան փիլիսոփաներից մին քանիսն նորա հետ հակառակումէին. և մին քանիսն ասումէին. Էս (դատարկաբան) սերմ քաղող ինչ է կամենում խօսիլ. բայց ուրիշներն էլ, (ասումէին) Թէ երևումէ, որ մին օտար կռքի համար պատմումէ. պատՀառն որ՝ Յիսուսին և յարուԹիւն էր աւետարանում։

19 Եւ առին տարան նորան արիսպագոսն՝ և ասումէին. կարօղ ենք իմանալ՝ Թէ ի՞նչ է էդ նոր վարդապետուԹիւնը՝ որ դու պատմումես։

20 Մին նոր օտար բան ես բերում մեր ականջներին. կամենումենք իմանալ՝ Թէ ի՞նչ բան պիտի լինի։

21 Զի ամենայնիւք ամենեքեան՝ և եկեղն՝ օտարք ոչ յայլ ինչ պարապէին, քայց ասել ինչ կամ լսել նորա դոյնս ։

22 Եւկայ պօղոս ՚ի մէջ արիապագին՝ և ասէ. արք աթենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսա նեմ զձեզ,

23 Քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր, անծանօթի Աստուծոյ. զոր դուքն յանծանօթս պաշտեք, ես վնոյն պատմեմ ձեզ ։

24 Աստուած՝ որ արար զաշխարհս և զամենայն՝ որ ՚ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ոչ ՚ի ձեռագործ տաճարս բնակէ,

25 Եւ ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմք. նա տայ ամենայնի կեանս և շունչ՝ և զամենայն ինչ ։

26 Արար ՚ի միոջէ արեանէ զամենայն ազգս մարդկան՝ բնակեալ ՚ի վերայ ամենայն երեսաց երկրի. հաստատեալ

21 Ինչու որ՝ ամէն աթենացիք և էնտեղ եկած օտարները՝ էլ ուրիշ բանի չէին հետաքրքրում, քայց միայն որ նոր բան ասեն կամ լսեն։

22 Պօղոսն կանգնեց արիապագի մէջն՝ և ասաց. ով աթենացի մարդիկ, ես ձեզ ամէն կողմանէ կրօնասէր եմ տեսնում.

23 Պատճառն որ՝ ես մանեկի և ձեր պաշտամունքները՝ տեսի, մին սեղան գտի՝ որ նորա վերայ գրած էր, չըճանաչված Աստուծոյն. էն որ դուք առանց ճանաչելոյ էք պաշտում, հենց էն ես եմ պատմում ձեզ ։

24 Աստուած՝ որ էս աշխարհքը և ամէն բան՝ որ նորանում կայ, արաւ՝ նա երկնքի և երկրիս Տէրն է. նա ձեռքով շինած տաճարների մէջն չի բնակվում,

25 Եւ մարդկանց ձեռքով չի պաշտվում՝ իբրև մին բանի կարօտ լինի. նա ամենին կեանքն և շունչը՝ և ամէն բան տալիս է ։

26 Նա մին արիւնից մարդկանց ամէն ազգերը արաւ՝ որ երկրի ամէն երեսին վերայ բնակվին. կարգված ժամա

կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած ։

27 Զի թերևս գտանիցեն զնա՝ և դատանիցեն ։ Նաև ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ ։

28 Զի նովաւ կեամք և շարժիմք և եմք , որպէս և ոմանք ի ձերոց ճարտարաց ասացին , թէ նորա և ազգ իսկ եմք ։

29 Եւ արդ՝ որովհետև ազգք եմք Աստուծոյ , ոչ պարտիմք համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝ կամ քարի , որ ի ճարտարութենէ և ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ , զաստուածականն լինել նմանօղ ։

30 Բայց զժամանակս անդիտութեանն անտես արար Աստուծոյ , արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ուրեք ապաշխարել ։

31 Վասնզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ ։ ի ձեռն առն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենայնեան՝ յարուցեալ զնա ի մեռելոց ։

նակներ և սահմաններ հաստատեաց նորանց բնակութեան համար՝ որ Աստուծոյն խնդրեն ։

27 Որ լինի թէ գտնեն նորան և գտանեն ։ և ինքն հեռու չէ հենց մեր ամէն մէկիցս ։

28 Ինչու որ՝ մենք նորանով ենք ապրում և շարժվում՝ և կանք ։ ինչպէս որ ձեր իմաստուններիցն մին քանի՛սն էլ ասացին , թէ (մենք) հենց նորա ազգիցն էլ ենք ։

29 Եւ հիմիկ՝ որովհետև Աստուծոյ ազգիցն ենք, պէտք չէ՝ որ մենք համարինք՝ թէ աստուածութիւնն նման լինի ոսկոյ՝ կամ արծաթի կամ քարի , որ մարդոյ վարպետութեանով և մտքով փորված շինած է ։

30 Բայց Աստուած՝ որ անգիտութեան ժամանակները անտես արաւ , հիմիկ մարդկանց էս է պատուիրում ։ որ ամէն մէկն ապաշխարէ ։

31 Պատճառն որ՝ (մին) օր հաստատեց՝ որ նորանում արդարութեանով աշխարհքը պիտի դատէ էն մարդոյ ձեռովն՝ որ սահմանեց նորանով ամէնին հաւատք տալ՝ որ նորան մեռելների միջիցն յարոյց ։

32 Իբրև լուան յարուցմ[ի]ւն մեռելոց, ամենք ծաղր առնէին. կէսքն ասէին՝ լուիցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ։

33 Եւ ապա ելոցոս ել գնաց ի միջոյ նոցա։

34 Եւ ոմանք արք անկեալք ի նա, հաւատացին. ընդ որս էր և դիոնէսիոս արիսպագացի, և կին մի անուն դամարիս և այլք ընդ նոսա։

32 Երբոր լսեցին մեռելներուն յարուցմիւնն առնելը, մին քանիսն ծաղր էին անում. կէսերն ասացին՝ էդ բանիդ (համար) քեզանից միևնել պիտի լսենք։

33 Եւ յետոյ պօղոսն նորանց միջիցն դուրս եկաւ գնաց։

34 Եւ մին քանի մարդիկ նորա կողմն ընկան և հաւատացին. որ նորանց հետն էր դիոնէսիոս արիսպագացին, և մին դամարիս անուն կին՝ և ուրիշներ էլ նորանց հետ։

ԳԼ. ԺԸ։

1 Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթենացւոց անտի՝ եկն ի կորնթոս։

2 Եւ եգիտ հրեայ ոմն անուն ակիւղաս՝ յազգէ պոնտացի, այն ինչ եկեալ յիտալիայ. և ղպրիսկիղա կին նորա, վասն հրամանին կղօդեայ՝ որոշել զամենայն հրեայս ի հռովմայ. և յարեւցաւ ի նոսա։

3 Եւ վասն զի համարուեստ էր, եղև առ նոսա և գործէր. քանզի էին խորանակարք արուեստիւք։

1 Ա Յրանից ետև պօղոսն էն աթենացիներից հեռացաւ՝ եկաւ կորնթոս։

2 Եւ մին հրէայ գտաւ պոնտացոյ ազգիցն ակիւղաս անուն, որ իտալիայից նոր եկել էր՝ և նորա պրիսկիղա կինն էլ, կրօդիայի հրամանին համար՝ որ ամէն հրեաներն հռոմից դուրս գնան. և նորանց մօտ մտաւ։

3 Եւ որովհետև հենց մին արուեստից էր (նորանց հետ) ձեաց նորանց մօտ և բան էր անում. պատճառն որ՝ արուեստով խորանակար (չադիր հպրօշ) էին։

4 Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբաթուց, և հաւանեցուցանէր այս և զհեթանոսս։

5 Իբրև իջին ի մակեդոնիա՝ շիղա և տիմոթէոս, ստիպէր հոգւովն պօղոս դնել վկայութիւն հրէից՝ թէ Ցիսուս է Քրիստոս։

6 Եւ յընդդէմ դառնալ նոցա՝ և ի հայհոյել, թօթափեալ զձորձս՝ և ասէ ցնոսա. արիւն ձեր ի գլուխս ձեր, քաւեալ եմ ես. յայսմ հետէ ի հեթանոսս երթամ։

7 Եւ գնացեալ անտի՝ եմուտ ի տուն ուրումն, որում անուն էր տիտոս յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ. որոյ ապարանքն էին մերձ ի ժողովեստն։

8 Կրիսպոս ժողովրդապետ հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով. և բազմաց ի կորնթացւոցն լուեալ՝ հաւատային և մկրտեցան։

9 Եւ ասէ Տէր ի գիշերին տեսլեամբ ցպօղոս. մի երկնչիր՝ այլ խօսեաց և մի լռեր։

10 Վասնզի ես ընդ քեզ

4 Եւ ժողովարանի մէջն ամէն շաբաթ օր խօսուէր, և հրէաներուն և հեթանոսներուն հաւանեցնուէր։

5 Երբոր շիղան և տիմոթէոսն վերեկէն մակեդոնիայէն եկան, պօղոս հոգիովն վառուէր՝ որ վկայութիւն դնէ հրէաներուն՝ թէ Յիսուս է Քրիստոսն։

6 Եւ երբոր նոյանք ներհակ էին դառնում և հայհոյում, շորերըն թափ տուաւ և նորանց ասաց. ձեր արիւնն ձեր գլուխներիդ վերայ (լինի)։ ես անպարտ եմ. հիմիկուց ետև հեթանոսներուն մօտն եմ գնում։

7 Եւ անտեղից գնաց մտաւ մէնակ տունն՝ որ նորա անունն տիտոս յուստոս էր, մին աստուածապաշտ մարդ, որ նորա տունն ժողովարանին մօտ էր։

8 Կրիսպոս ժողովրդապետն իրան ամէն տանովն հաւատաց Տէրին. և կորնթացոց շատերն երբոր լսեցին. հաւատացին և մկրտուեցան։

9 Եւ Տէրն գիշերուան տեսիլքով պօղոսին ասաց. մի վախենար՝ բայց խօսիր՝ և լուռ մի կենար։

10 Ինչու որ՝ ես քեզ հետ

եմ, և ոչ ոք ընդդէմ դարձ-
ցի քո՝ ի չարչարել զքեզ ։
քանզի ժողովուրդ է իմ բա-
զում ի քաղաքիս յայսմիկ ։

11 Եւ նստաւ անդ տարի մի
և ամիս վեց՝ ուսուցանել
նոցա զբանն Աստուծոյ ։

12 Եւ դալխումնաւ՝ փոխա-
նակաւ բդեշխին աքայեցւոց,
յարեան միաբան հրէայք ի
վերայ պօղոսի, և առին զնա
յատեան ։

13 Եւ ասէին, եթէ ար-
տաքոյ օրինաց պատրէ սա
զմարդիկ՝ պաշտել զԱս-
տուած ։

14 Եւ իբրև մերձ էր պօ-
ղոս բանալ զբերան իւր,
ասէ գաղիովն ցհրէայսն ։ Ե-
թէ էր ինչ անիրաւութիւն
կամ խարդախութիւն չա-
րեայ՝ ով հրէայք, ի դէպ
էր ինձ անսալ ձեզ ։

15 Այլ եթէ խնդիրք ինչ
են վասն բանի և անուանց
և օրինաց ձերոց՝ տեսէք ձե-
զէն ։ քանզի դատաւոր այդ-
պիսի իրաց չկամիմ լինել ։

16 Եւ մերժեաց զնոսա յա-
տեանէ անտի ։

17 Եւ առեալ ամենեցուն

եմ, և ոչ ով քեզ ներհակ
չի դառնալ՝ որ քեզ չար-
չարէ. պատճառն որ՝ ես շատ
ժողովուրդ ունիմ ես քա-
ղաքումս ։

11 Եւ նստեաւ մին տարի և
վեց ամիս նստեաւ՝ և նորանոյ
Աստուծոյ խօսքըն սովրցնու-
մէր ։

12 Աքայեցոյ դաղիոս փոխա-
նակ բդեշխի ժամանակուն,
հրէաներն միաբան վերկացան
պօղոսին վերայ, և նորան քա-
շեցին դատաստան ։

13 Եւ ասեմէին, թէ սա
մարդկանոյ խաբումէ՝ որ օրի-
նաց հակառակ Աստուած
պաշտեն ։

14 Եւ երբոր պօղոսն մուն
էր որ իրան բերանըն բանայ,
գաղիոնն հրէաներին ասաց ։
ով հրէաներ, թէ որ մին
անիրաւութիւն կամ մին չար
նենգութիւն լինէր, ինձ ար-
ժան էր որ լսէի ։

15 Բայց թէ որ ձեր օրէն-
քին և խօսքի և անուններուն
համար խնդիրք կան, դուք
ինքն տեսէք ։ ինչու որ՝ դա-
պէսի բաներուն դատաւոր չեմ
կամենում լինել ։

16 Եւ նորանոյ էն դատաս-
տանիցն դուրս հանեց ։

17 Եւ ամեն յոյնքն սոս-

յունացն զսոսթենէս ժողովըրդապետն՝ հարկանէին առաջի առնին. և ոչ ինչ զայնմանէ գալիոնին փոյթ լինէր։

18 Բայց պօղոսի տակաւին ծայեալ աւուրս բազումս, յեղբարց հրաժարեալ՝ նաւէր յասորիս. և ընդ նմա պրիսկիլլա և ակիւղաս, փոքրիկ գլուխ ի կենքրայ-քանղի ուխտադիր էր։

19 Յե հասեալ յեփեսոս՝ զնոսա եթող անդ, և ինքն մտեալ ի ժողովուրդն խօսեր ընդ հրեայսն։

20 Յե աղաչեցին զնա՝ բազում ժամանակս լինել անդ. և ոչ առ յանձն։

21 Այլ հրաժարեալ ի նոցանէ, և ասէ. դարձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամաւք. ամբարձաւ յեփեսոս,

22 Յե իջեալ ի կեսարիա՝ ել և ետ ողջոյն եկեղեցւոյն. էջ յանտիոք։

23 Յե եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ գաղատացւոց աշխարհն և ընդ փռիւգիա, հաստատել զամենայն աշակերտսն։

24 Եկն ոմն հրեայ յեփեսոս, անուն կոչեցեալ ապողոս, ազգաւ ալեքսանդրացի, այր բանիբուն, և հզօր ի գրոցն։

25 Այս էր ուսեալ ի ճանապարհ տեառն, և եռանդնագոյն հոգւով խօսէր և ուսուցանէր զտեառնէ ճշմարտապէս, գիտելով միայն զմկրտութիւն յովհաննու։

26 Եւ սկսաւ յանդգնել ի ժողովարանին. զոր լուեալ պրիսկիլլա և ակիւղաս, առեալ զնա առ ինքեանս, ուսուցին նմա զճանապարհ աստուծոյ ճշմարտագոյնս։

27 Եւ նորա կամեցեալ երթալ յաքայիա, գրեցին եղբարքն և ուսուցին աշակերտացն ընդունել զնա. որ եկեալ նա, օգնեաց բազում հաւատացելոց շնորհաւք։

28 Զի զհրեայսն զօրաւորապէս յանդիմանէր հրապարակաւ, ցուցանելով գրոցն զիսուս թէ նա է քրիստոս։

19 Եղեւ ի ժամանակին զի ապողոս էր յեփեսոս, և անցեալ ի կողմանսն վերնականց, եկն յեփեսոս, և գտեալ զոմանս աշակերտս,

2 Ասէ ցնոսա. զհոգին սուրբ ընկալարուք հաւատացեալք։ Եւ նոքա ասեն ցնա. ոչ եթէ լուաք եթէ հոգին սուրբ իցէ։

3 Եւ նա ասէ ցնոսա. ընդ զի՞նչ ուրեմն մկրտեցարուք։ Եւ նոքա ասեն. ընդ մկրտութիւն յովհաննու։

4 Ասէ ապողոս. յովհաննէս մկրտեաց զմկրտութիւն ապաշխարութեան՝ ասելով ցժողովուրդն զի հաւատասցեն զայնմ որ յետ նորա գայր, այսինքն զքրիստոս յիսուս։

5 Եւ լուեալ՝ մկրտեցան յանուն տեառն յիսուսի։

6 Եւ դնելով ապողոս զձեռսն ի վերայ նոցա, եկն հոգին սուրբ ի վերայ նոցա, և խօսէին լեզուաւք և մարգարէանային։

7 Եւ էին ամենեքեան իբրև տասն և երկու։

8 Եւ մտեալ ի ժողովարանն՝ խօսէր յամենայն համարձակութեամբ երիս ամիսս, վիճելով և համոզելով զբանն աստուծոյ։

9 Եւ յորժամ ոմանք կարծրանային և ոչ հնազանդէին, չարախօսելով զճանապարհն առաջի ամենայն ժողովրդեան, հեռացեալ ի նոցանէ՝ զատոյց զաշակերտսն, ամենայն աւուր խօսելով ի սկուղայի տիրանեայ։

10 Եւ եղեւ այս երկամեայ ժամանակաւ, մինչև ամենեքեան որ բնակէին յասիա լսեցին զբանն տեառն, հրեայքն և յունացն։

11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս գործէր աստուած ձեռամբ պօղոսի։

12 Մինչև զի և ի հիւանդսն բերեալ լինէին ի մարմնոյ նորա թաշտեակք և գոտիք, և հեռանային ի նոցանէ հիւանդութիւնքն, և չարք ոգիք ելանէին ի նոցանէ։

13 Եւ ոմանք ի շրջելոց հրեայից կամէին անուն տեառն յիսուսի կարդալ ի վերայ նոցա որ ունէին զչարս ոգիս՝ ասելով. երդուցանեմ զձեզ զյիսուս զոր պօղոս քարոզէ։

14 Եւ էին որդիք սկուայի քահանայապետի հրեայի եպտա որ այսպէս առնէին։

15 Պատասխանի ետ չարն ոգին և ասէ. զյիսուս ծանեայ, և զպօղոս գիտեմ, դուք ո՞վ էք։

16 Եւ ցատկեալ ի նոսա մարդն որում էր չարն ոգին, և յաղթեալ նոցա՝ զօրացաւ ընդ նոսա, մինչև մերկացեալ և վիրաւորեալ փախեան ի տանէն յայնմանէ։

17 Եւ յայտնի եղեւ այս ամենայն հրեայից և յունացն որ բնակէին յեփեսոս, և անկաւ երկիւղ ի վերայ ամենեցուն, և մեծարեցաւ անուն տեառն յիսուսի։

18 Եւ բազումք ի հաւատացելոցն գային խոստովանելով և յայտնելով զգործս իւրեանց։

19 Եւ բազումք ի գործ արարելոցն զարուեստս՝ ժողովեալ զգրսն, այրէին առաջի ամենեցուն. և համարեցան զարժէքս նոցա, և գտին արծաթոյ հազարս հնգիսուն։

20 Այսպէս զօրութեամբ տեառն բազմանայր և զօրանայր բանն։

21 Եւ յորժամ լցան այս ամենայն՝ դրեաց ի հոգւոյ իւրում պօղոս երթալ յերուսաղէմ՝ անցեալ ի մակեդոնիա և յաքայիա, և ասէր թէ յորժամ եղէց անդ՝ պարտ է ինձ և հռոմ տեսանել։

22 Եւ առաքեալ ի մակեդոնիա զերկուս ի ծառայից իւրոց՝ տիմոթէոս և երաստոս, ինքն մնաց ժամանակս ինչ յասիա։

23 Եղեւ ի ժամանակին զի ոչ սակաւ խռովութիւն եղեւ վասն ճանապարհին տեառն։

24 Զի դեմետրիոս անուն ոմն արծաթագործ, որ շինէր տաճարս արծաթեայս դիանայի, և ոչ սակաւ վաստակ ընծայէր արհեստաւորացն,

25 Ժողովեալ զնոսա և զայլ ևս զայնպիսիս որ զարհեստս նոյն գործէին, ասէ. այրք, գիտէք զի ի վաստակոյ այսմիկ է մեզ բարգաւաճումն մեր։

26 Եւ տեսանէք և լսէք զի ոչ միայն յեփեսոս, այլ գրեթէ յամենայն ասիա զբազումս դարձուցեալ պօղոս այս՝ խրատէ և դարձուցանէ, ասելով թէ ոչ են աստուածք որ ձեռամբ շինին։

27 Եւ ոչ միայն այս վտանգ է մեզ զի մեր արհեստն անարգեսցի, այլ և տաճարն դիանայի տեառն մերոյ յիսուսի ոչինչ համարեսցի, և ապա և փառքն նորա խոնարհեսցի, զոր ամենայն ասիա և տիեզերք պաշտեն։

28 Եւ լուեալ՝ լցան բարկութեամբ, և աղաղակէին ասելով. մեծ է դիանա եփեսոսացւոց։

29 Եւ լցաւ ամենայն քաղաքն շփոթութեամբ, և հարեալ զգայոսն և զարիստարքոս մակեդոնացիս ուղեկիցս պօղոսի, հասին միաբան ի թատրոնն։

30 Եւ պօղոս կամեցեալ մտանել ի ժողովուրդն՝ ոչ եթող զնա աշակերտացն։

31 Եւ ոմանք ի մեծամեծացն ասիոյ որ էին բարեկամք նորա, առաքեալ առ նա՝ աղաչէին զի մի մտցէ ի թատրոնն։

32 Եւ այլք այլ ինչ կոչէին. զի ժողովն խառնակ էր, և ոչ գիտէին ամենեքեան վասն որոյ պատճառի ժողովեալ էին։

33 Եւ ի ժողովրդենէն հանին զաղեքսանդրոս, զոր հրեայքն հրմտեցուցանէին. և աղեքսանդրոս ձեռամբ կոչէր և կամէր պատասխանի տալ ժողովրդեան։

34 Եւ գիտելով զի հրեայ է՝ եղեւ ձայն ամենեցուն իբրև երկուց ժամուց կոչէին ասելով. մեծ է դիանա եփեսոսացւոց։

35 Եւ դադարեցուցեալ գրագիրն զժողովուրդն՝ ասէ. այրք եփեսոսացիք, ո՞ է մարդ որ ոչ գիտէ զքաղաքն եփեսոսացւոց թէ տաճարակից է մեծին դիանայի և պատկերին որ ի յերկնից իջեալ է։

36 Եւ զի անհերքելի են այս՝ պարտ է ձեզ հանդարտ լինել և ոչ ինչ անխորհուրդ առնել։

37 Զի բերէք զայրսդ զայսոսիկ որ ոչ սրբեալք են և ոչ հայհոյիչք զաստուածուհին մեր։

38 Եթէ ուրեք դեմետրիոս և արհեստաւորքն որ ընդ նմա ունին զոք ինչ դատ, դատարանք բացին են և վարիք կան, կոչեսցեն զմիմեանս։

39 Եթէ զոք ինչ խնդրէք, ի կանոնաւոր ժողովի լուծցի։

40 Զի և վտանգ ենք ի հարկանելոյ զմեզ ի վերայ այսմ օրոյ խռովութեան, զի ոչ ոք է պատճառ որով կարասցուք զայս ամբարտաւանութեան ժողովոյ տալ։

41 Եւ այս ասացեալ՝ արձակեաց զժողովն։

20 Եւ յետ դադարելոյ խռովութեանն՝ կոչեցեալ պօղոս զաշակերտսն, և մխիթարեալ՝ ողջունեաց զնոսա, և ել երթալ յաքայիա։

2 Եւ անցեալ ի կողմանսն այնոսիկ, և մխիթարեալ զնոսա բանիւ բազմաւ, եկն յեղլադա։

3 Եւ արարեալ անդ ամիսս երիս, եղեւ նմա դաւաճանութիւն ի հրեայից՝ նաւելոյ նմա երթալ ի սուրիա, եղեւ կամք նորա դառնալ ընդ մակեդոնիա։

4 Եւ ընկերացան նմա մինչև յասիա սովպատրոս պիւռեցի, և արիստարքոս և սեկոնդոս թեսաղոնիկեցիք, և գայոս դերբեցի, և տիմոթէոս, և տիքիկոս և տրոփիմոս ասիացիք։

5 Սոքա եկեալ՝ սպասեցին մեզ ի տրովադա։

6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրց անմուխ հացից ի փիլիպպէ, և եկաք առ նոսա ի տրովադա աւուրս հինգ, ուր կացաք աւուրս եօթն։

7 Եւ ի միում աւուր շաբաթուն ժողովեալ մեզ հանապազ հաց կերակրել, պօղոս խօսէր ընդ նոսա՝ մտադիր եղեալ երթալ ընդ առաւօտն, և երկարեաց զբանն մինչև ի կէս գիշեր։

8 Եւ էին լապտերք բազումք ի վերնատունն ուր ժողովեալ էին։

9 Եւ նստեալ մանկան մի անուն կոչեցեալ եւտիքոս ի պատուհանի, տարեալ ի քուն խորին՝ յորժամ երկարեաց պօղոս զխօսսն, և ի քնոյն անկեալ՝ ի յերրորդ յարկէ ներքս անկաւ, և վերացուցին զնա մեռեալ։

10 Եւ իջեալ պօղոս՝ անկաւ ի վերայ նորա, և գրկեալ՝ ասէ. մի՛ խռովիք, զի անձն նորա ի նմա է։

11 Եւ ելեալ՝ և հացն կերեալ՝ և ճաշակեալ մինչև ի լուսանալ, ապա ելանէ։

12 Եւ բերին զմանկանն կենդանի, և մխիթարեցան ոչ սակաւ։

13 Եւ մեք նաւեցաք ի նաւ և եկաք յասոս, անտի առնուլ զպօղոս. զի այնպէս կարգեալ էր նա, ինքն կամեցեալ գնալ ոտիւք։

14 Եւ յորժամ ընկերացաւ մեզ յասոս, առեալ զնա եկաք ի միտիլինէ։

15 Եւ անտի նաւեցեալ՝ հասաք ընդդէմ քիոսի, և յաջորդ օրն անցաք ի սամոս, և ի տրոգիղիոն կացեալ՝ յաջորդ օրն եկաք ի միլիտոս։

16 Զի պօղոս էր կամեցեալ անցանել զեփեսոս, զի մի ժամանեսցէ նմա ի ասիա. զի շտապէր եթէ կարասցէ զաւուրն պենտեկոստէի լինել յերուսաղէմ։

17 Եւ յորժամ ի միլիտոս էր՝ առաքեալ յեփեսոս՝ կոչեաց զծերակոյտն եկեղեցւոյն։

18 Եւ յորժամ եկին առ նա՝ ասէ ցնոսա. դուք գիտէք ի որում ամենայն ժամանակի եղէ ես ընդ ձեզ, սկսեալ յառաջին աւուրէ յորում ոտն եդի յասիա,

19 Ծառայելով տեառն ամենայն խոնարհութեամբ և արտասուօք, և փորձանաց որ պատահեցան ինձ ի նենգաւորութենէ հրեայից,

20 Զոր ոչ ինչ խնայեցի ի պատմելոյ ձեզ զամենայն որ օգտակար էր, և ուսուցանել ձեզ հրապարակաւ և տնից տնից,

21 Վկայելով հրեայսն և յունացն զապաշխարութիւն առ աստուած և զհաւատ առ տէր մեր յիսուս քրիստոս։

22 Եւ արդ ահա ես կապեալ հոգւով երթամ յերուսաղէմ, զոր ինչ պատահեսցի ինձ անդ չգիտեմ։

23 Բայց զայն միայն զոր հոգին սուրբ ամենայն քաղաքաց ի վկայութիւն տայ ինձ՝ ասելով թէ կապանք և նեղութիւնք հանդերձ են ինձ։

24 Բայց ոչ ինչ զանձն իմ պատուական համարիմ, զի կատարեցից զընթացս իմ և զպաշտօն զոր ընկալայ ի տեառնէ յիսուսէ, վկայել զաւետարան շնորհաց աստուծոյ։

25 Եւ արդ ահա ես գիտեմ զի ոչ տեսանիցէք զերեսս իմ դուք ամենեքեան որոց գնացի քարոզելով զարքայութիւն աստուծոյ։

26 Վասն որոյ վկայեցուցանեմ ձեզ այսօր զի մաքուր եմ ես յարեանց ամենեցուն,

27 Զի ոչ խնայեցի ի պատմելոյ ձեզ զամենայն խորհուրդ աստուծոյ։

28 Ուրեմն զանձինս ձեր առնուցուք և զամենայն հօտ յորում զձեզ հոգին սուրբ եդ վերակացուս, հովիւ լինել զեկեղեցի աստուծոյ զոր ինքն արեամբ իւրով ձեռնադրեաց։

29 Զի գիտեմ զայս՝ զի յետ մեկնելոյ իմոյ մտանիցեն ի ձեզ գայլք ահագինք, որ ոչ խնայեսցեն հօտին,

30 Եւ յերկոցունց կողմանց ձերոց յառնիցեն այրք խօսելով զանիրաւութիւն, դարձուցանել զաշակերտսն զհետ իւրեանց։

31 Վասն որոյ արթուն կացէք, յիշելով զի երեք ամս գիշեր և ցերեկ ոչ դադարեցի զարտասուաւք զմիոյ ամենեցուն խրատել։

32 Եւ արդ ահա ես ձեզ աստուծոյ և բանի շնորհաց նորա, որ կարող է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ ամենայն սրբեալսն։

33 Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ոքի ես ցանկացեալ,

34 Որպէս դուք գիտէք, զի ձեռք իմ ծառայեցին պիտոյիցն ինձ և որ ընդ իս էին։

35 Ամենայնիւ ցուցի ձեզ զի այսպէս աշխատեալ պարտ է ընդունել զանզօրսն, և յիշել զբանս տեառն յիսուսի զոր ինքն ասաց թէ երանի է տալ քան առնուլ։

36 Եւ այս ասացեալ՝ դնելով զծունկսն իւր՝ ընդ ամենեցունց աղաւթս արար։

37 Եւ լալով ամենեցունց՝ անկեալ ի վերայ պօղոսի՝ համբուրէին զնա։

38 Եւ ամենայն ինչ տրտմեցան վասն բանին զոր ասաց թէ զերեսս իմ ոչ տեսանիցէք այլ եւս։ Եւ ապա ընկերացան նմա մինչև ի նաւն։

21 Եւ եղեւ յորժամ ելաք ի նաւ՝ ուղղեցաք ընդ ուղիղ ի կոս, և յաջորդ օրն ի հռոդոս, և անտի ի պատարա։

2 Եւ գտեալ նաւ մի անցանելոյ ի փիւնիկէ՝ նաւեցաք ի նա։

3 Եւ երեւեցաք զկիպրոս, և թողեալ զնա ձախակողմն՝ նաւեցաք ի սուրիա, և եկաք ի տիւրոս. զի անդ էր նաւն ծանրանալ զբեռինն։

4 Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն։ Եւ նոքա պօղոսի ասէին ընդ հոգւոյ մի գնալ յերուսաղէմ։

5 Եւ եղեւ յորժամ լցան զաւուրսն՝ ելեալ գնացաք, և ամենեքեան ընդ մեզ ընկերանային հանդերձ կանանց և որդւովք մինչև ի դուրս քաղաքին. և ծունր դնելով ի ծովեզերս՝ աղաւթս արարաք։

6 Եւ ողջունեալ զմիմեանս՝ ելաք ի նաւ, և նոքա դարձան յիւրեանց։

7 Եւ մեք ընդ ուղիղ նաւելով՝ ի տիւրոսէ եկաք ի պտղոմայիս, և ողջունեալ զեղբարսն՝ կացաք մի աւուր ընդ նոսա։

8 Եւ յաջորդ օրն ելեալ՝ եկաք ի կեսարիա, և մտեալ ի տունն փիլիպպոսի աւետարանչին որ էր ի եօթնից՝ կացաք ընդ նմա։

9 Եւ էին նմա չորս դստերք կոյսք որ մարգարէանային։

10 Եւ մնացելոց մեր աւուրս բազումս՝ իջեալ ոմն ի հրեայից անուն կոչեցեալ ագաբոս ի մարգարէիցն ի հրէաստան,

11 Եկն առ մեզ, և առեալ զգօտի պօղոսի՝ կապեաց զձեռսն իւր և զոտսն, և ասէ. զայս ասէ հոգին սուրբ. զայր որոյ է գօտի այս՝ այսպէս կապեսցեն հրեայքն յերուսաղէմ, և մատնեսցեն ի ձեռս հեթանոսաց։

12 Եւ լուեալ մեզ՝ և ամենայն տեղեաց՝ աղաչէաք զնա մի երթալ յերուսաղէմ։

13 Եւ պատասխանի ետ պօղոս և ասէ. զի՞նչ առնէք լալով և սրտիս իմոյ ցաւ գործէք. զի ես ոչ միայն կապանաց այլ և մեռանելոյ պատրաստ եմ վասն անուան տեառն յիսուսի։

14 Եւ յորժամ ոչ համոզեցաք զնա՝ դադարեցաք ասելով. կամք տեառն եղիցին։

15 Եւ յետ աւուրցս այնոցիկ՝ պատրաստեալ՝ ելաք յերուսաղէմ։

16 Եկին և ընդ մեզ ոմանք ի կեսարացւոց աշակերտացն, տանելով առ ոմն մնասոն կիպրացի հին աշակերտ, առ որ հիւրասիրեսցուք։

17 Եւ յորժամ եկաք յերուսաղէմ՝ ընդունեցան զմեզ եղբարքն ուրախութեամբ։

18 Եւ յաջորդ օրն եմուտ պօղոս ընդ մեզ առ յակոբոս, և ամենայն ծերակոյտ եկեալ էր։

19 Եւ ողջունեալ զնոսա՝ պատմէր մանրաբար զամենայն զոր արար աստուած ի հեթանոսսն ձեռամբ նորա։

20 Եւ նոքա լուեալ՝ փառաւորէին զտէր, և ասեն ցնա. տեսանես, եղբայր, քանի՞ հազարք են ի հրեայից որ հաւատացին, և ամենեքեան նախանձաւորք են օրինացն։

21 Եւ լուան վասն քո թէ ուսուցանես զամենայն հրեայսն որ ի հեթանոսս են զհեռանալ ի մովսիսէ՝ ասելով թէ մի՛ թլպատեսցեն զորդիս իւրեանց և մի՛ ընթանայցեն ըստ սովորութեան։

22 Զի՞նչ ուրեմն է. անպատճառ է զի ժողովեսցի բազմութիւն, զի լուիցեն թէ եկեալ ես։

23 Արդ արա զայս զոր ասեմք քեզ. կան ի մեզ չորք այրք ունելով զուխտ ի վերայ իւրեանց,

24 Զոսա առեալ՝ սրբեա ընդ նոսա, և ծախեա վասն նոցա զի ածիցեն զգլուխս, և գիտասցեն ամենեքեան զի ոչ ինչ է զոր լուան վասն քո, այլ դու ևս ընթանաս կարգաւ պահելով զօրէնս։

25 Եւ զհաւատացելոցն ի հեթանոսս մեք գրեցաք՝ դատեալ զի մի՛ պահեսցեն զինչ զայդպիսի, բայց միայն զի պահեսցեն զանձինս ի կռոց պղծութենէ և ի պոռնկութենէ և ի խեղդեալոյ և ի սպանդէ և ի հարամէ։

26 Ապա պօղոս առեալ զայրսն՝ յաջորդ օրն սրբեալ ընդ նոսա՝ եմուտ ի տաճարն, պատմելով զկատարումն աւուրցն սրբութեան մինչև մատուցանիցի ի վերայ իւրաքանչիւր նոցա զպատարագն։

27 Եւ յորժամ կատարէին զաւուրսն եւթն՝ հրեայքն որ էին յասիա տեսեալ զնա ի տաճարին՝ խռովեցուցանէին զամենայն ժողովուրդն, և ձգեցին զձեռսն ի վերայ նորա,

28 Աղաղակելով. այրք իսրայէլացիք, օգնեցէք. այս է մարդն որ զամենայն ուսուցանէ զամենայն ուրեք զժողովուրդն և զօրէնսն և զտեղիդ զայս, և ոչ միայն այլ և յոյնս մտոյց ի տաճարն, և պղծեաց զսուրբ տեղիդ զայս։

29 Զի տեսեալ էին յառաջագոյն զտրոփիմոս եփեսացի ընդ նմա ի քաղաքի՝ զոր կարծէին թէ պօղոս մտոյց ի տաճարն։

30 Եւ խռովեցաւ ամենայն քաղաքն, և եղեւ ժողովուրդ մի. և բռնեալ զպօղոս՝ քարշեցին զնա արտաքս ի տաճարէն, և անդէն փակեցան դռունք։

31 Եւ որ խնդրէին սպանանել զնա՝ եհաս լուր առ հասարակ գնդապետին թէ խռովեցաւ ամենայն քաղաքն երուսաղէմի։

32 Եւ նա առեալ զզինուորսն և զհարիւրապետսն՝ իջանէր առ նոսա. և նոքա տեսեալ զգնդապետն և զզինուորսն՝ դադարեցուցին զպօղոսէ զհարուածն։

33 Եւ մերձեցեալ գնդապետն՝ բռնեաց զնա, և հրամայեաց կապանաւք երկուս կապել զնա, և հարցանէր թէ ո՞ է և զի՞նչ արարեալ է։

34 Եւ ոմանք ոմանց ինչ կոչէին ի ժողովրդենէն. և յորժամ ոչ կարաց գիտել զճշմարտութիւնն վասն աղաղակին՝ հրամայեաց տանել զնա ի բերդն։

35 Եւ յորժամ եհաս ի սանդուխսն՝ եղեւ ի բռնութենէ զինուորացն վերանալ զնա, զի զբազմութիւն ժողովրդեանն ի վերայ նորա էին։

36 Զի հետևեալ էր բազում ժողովուրդ աղաղակելով. վերացո զնա։

37 Եւ յորժամ մերձենայր պօղոս մտանել ի բերդն՝ ասէ ցգնդապետն. թոյլ տուր ինձ ասել ինչ։ Եւ նա ասէ. գիտե՞ս հելլենարէն խօսել։

38 Ոչ դու ես ուրեմն եգիպտացին որ յառաջագոյն զայսոսիկ խռովեցուցեր և հաներ յանապատ զչորս հազարս այրս սրախողխողս։

39 Ասէ պօղոս. ես այր հրեայ եմ տարսոնացի, ոչ անծանօթ քաղաքի կիլիկեցւոց, և աղաչեմ զքեզ թոյլ տուր ինձ խօսել ընդ ժողովուրդդ։

40 Եւ յորժամ թոյլ ետ նմա՝ պօղոս կայեալ ի սանդուխսն՝ նշան արար ձեռամբ ժողովրդեանն. և յորժամ եղեւ լռութիւն մեծ՝ խօսեցաւ հրեայերէն լեզուաւ ասելով.

22 Այրք եղբարք և հարք, լուարուք ինձ զպատասխանի զոր ես առաջի ձեր ասեմ։

2 Եւ լուեալ թէ հրեայերէն լեզուաւ խօսի ընդ նոսա՝ առաւել եղեւ լռութիւն։ Եւ ասէ.

3 Ես այր հրեայ եմ ծնեալ ի տարսոն կիլիկեցւոց, սնեալ ի քաղաքիդ զայդ առ ոտս գամաղիէլի կրթեալ ըստ ճշմարտութեան հարանց օրինացն, նախանձաւոր աստուծոյ որպէս և դուք ամենեքեան էք այսօր։

4 Որ զայս ճանապարհ հալածեցի մինչև ի մահ՝ կապելով և մատնելով ի բանտս զարս և զկանայս,

5 Որպէս և քահանայապետն վկայէ ինձ և ամենայն ծերակոյտ. յորոց և նամակս ընկալեալ առ եղբարսն՝ երթայի ի դամասկոս, զի և զայնոսիկ որ անդ էին կապեալ տարայց յերուսաղէմ, զի պատժեսցին։

6 Եւ եղեւ ինձ երթալ և մերձենալ ի դամասկոս ի կէս աւուր, յանկարծ պայծառացաւ ի վերայ իմ լոյս մեծ ի երկնից,

7 Եւ անկեալ ի գետին՝ լուայ ձայնի ասելոյ ցիս. սաւուղ, սաւուղ, ընդ զի՞ հալածես զիս։

8 Եւ ես պատասխանի ետու. ո՞վ ես, տէր։ Եւ ասէ ցիս. ես եմ յիսուս նազովրեցի զոր դու հալածես։

9 Եւ որ ընդ իս էին՝ տեսին զլոյսն և երկեան, և ոչ լուան զձայնի որ խօսէր ընդ իս։

10 Եւ ասեմ. զի՞նչ առնեմ, տէր։ Եւ տէրն ասէ ցիս. յարո՛ւց և երթ՛ ի դամասկոս, և անդ ասասցեն քեզ զամենայն զոր կարգեալ է քեզ առնել։

11 Եւ որպէս ոչ կարացի տեսանել ի փառացն լուսոյ այնորիկ՝ առաջնորդեալ ի ձեռաց ուղեկցաց իմոց՝ եկի ի դամասկոս։

12 Եւ անանիա ոմն այր աստուածասէր ըստ օրինացն, վկայեալ ամենայն հրեայից որ բնակէին անդ,

13 Եկն առ իս, և կացեալ՝ ասէ ցիս. սաւուղ եղբայր, ընդունի՛ր զտեսիլ քո։ Եւ ես նմին ժամու նայեցայ ի նա։

14 Եւ նա ասէ. աստուած հարցն մերոց նշանակեաց զքեզ ճանաչել զկամս նորա, և տեսանել զարդարն, և լսել զձայն ի բերանոյ նորա,

15 Զի եղիցիս նմա վկայ առ ամենայն մարդիկ զոր տեսեր և լուար։

16 Եւ արդ զի՞նչ ես դանդաղիս. յարո՛ւց, մկրտեա՛ և լուա՛ զմեղս քո՝ կոչեցեալ զանուն տեառն։

17 Եղեւ ինձ դարձեալ երթալ յերուսաղէմ, և յորժամ աղաւթս առնէի ի տաճարին՝ եղեւ ինձ տեսիլ,

18 Եւ տեսի զնա ասելով ցիս. շտապեա՛ և ել վաղվաղակի յերուսաղէմ, զի ոչ ընդունիցին զվկայութիւն քո վասն իմ։

19 Եւ ես ասացի. տէր, նոքա գիտեն զի ես էի որ ի ժողովարանսն զհաւատացեալսն ի քեզ կապէի և տանջէի զմարմինս զանազան տանջանաւք,

20 Եւ յորժամ թափէր արիւն ստեփանոսի վկային քոյ՝ ես էի կայեալ և հաճեալ սպանման նորա, և պահէի զհանդերձս սպանողացն։

21 Եւ ասէ ցիս. երթ՛ զի ես առաքեցից զքեզ հեռի յազգաց։

22 Եւ լուեալ մինչև ի բանս այս՝ բարձին զձայն իւրեանց ասելով. վերացո՛ զայսպիսի ի երկրէ, զի ոչ պարտ է նմա կենդանի լինել։

23 Եւ աղաղակելով զհանդերձս իւրեանց՝ և հողմ արկանելով ի վեր,

24 Հրամայեաց գնդապետն տանել զնա ի բերդն, և ասաց քարշել զնա և խոզանակաւ քերել, զի գիտասցէ վասն որոյ պատճառի այսպէս աղաղակէին ընդ նմա։

25 Եւ յորժամ կապանաւք ձգեցին զնա՝ ասէ պօղոս հարուածողացն. միթէ օրէն է ձեզ մարդ հռոմայեցի անդատ հարկանել։

26 Եւ լուեալ հարուածողացն՝ գնացին և պատմեցին գնդապետին ասելով. զի՞նչ ուրեմն ունիս առնել, զի մարդ հռոմայեցի է այս։

27 Եւ մերձեցեալ գնդապետն՝ ասէ ցնա. ասա՛ ինձ, դու հռոմայեցի ես։ Եւ նա ասէ. այո։

28 Եւ պատասխանի ետ գնդապետն. ես բազում դրամս ետու զքաղաքացութիւնս զայս։ Եւ պօղոս ասէ. ես և ծնեալ եմ անդ։

29 Եւ անդէն հեռացան ի նմանէ որ խնդրէին զնա հարկանել. և գնդապետն երկեաւ, գիտելով զի հռոմայեցի է, և զի կապեաց զնա։

30 Եւ ի վաղիւն կամեցեալ գնդապետն գիտել զճշմարտութիւնն զոր ինչ մեղադրէին զնա հրեայքն՝ արձակեաց զնա, և հրամայեաց ժողովել զքահանայապետսն և զամենայն ժողովն նոցա, և իջուցեալ զպօղոս՝ կացոյց առաջի նոցա։

23 Եւ պօղոս հայեցեալ ի ժողովն՝ ասէ. այրք եղբարք, ես ամենայն խղճմտութեամբ առաջի աստուծոյ վարեցայ մինչև ցայսօր։

2 Եւ անանիա քահանայապետն հրամայեաց հարկանել զբերան նորա որ կայր առ նովաւ։

3 Եւ պօղոս ասէ ցնա. հարցէ աստուած զքեզ, պատ սպիտակեալ, զի նստիս դատել զիս ըստ օրինացն, և հրամայես զիս հարկանել ընդ օրինացն հակառակ։

4 Եւ որ կային առ նովաւ ասեն. զքահանայապետ աստուծոյ հայհոյես։

5 Եւ պօղոս ասէ. ոչ գիտէի, եղբարք, զի քահանայապետ է. զի գրեալ է թէ զիշխանի ժողովրդեան քոյ ոչ խօսեսցիս չարութեամբ։

6 Եւ գիտելով պօղոս զի մի մասն է սադուկեցւոց և մի մասն փարիսեցւոց՝ աղաղակէր ի ժողովն. այրք եղբարք, ես փարիսեցի եմ որդի փարիսեցւոյ, վասն յուսոյ և յարութեան մեռելոց ես դատիմ։

7 Եւ յորժամ զայս ասացն՝ եղեւ հակառակութիւն փարիսեցւոցն և սադուկեցւոցն, և պառակտեցաւ ժողովն։

8 Զի սադուկեցիքն ասեն թէ չիք յարութիւն մեռելոց, և ոչ հրեշտակ և ոչ հոգի. իսկ փարիսեցիքն խոստովանին զամենայն զայս։

9 Եւ եղեւ աղաղակ մեծ. և յարուցեալ գրագիրքն որ էին ի կողմանէ փարիսեցւոցն՝ կռուէին ասելով. զայրդ զայսոսիկ ոչ գտանեմք ունելով չարիս, զի եթէ հոգի խօսեցաւ ընդ նմա կամ հրեշտակ։

10 Եւ յորժամ եղեւ կռիւ մեծ՝ երկեաւ գնդապետն զի մի՛ պատառեսցեն զպօղոս, և հրամայեաց զօրացն իջանել և խլել զնա ի մէջ նոցա, և տանել ի բերդն։

11 Եւ ի գիշերին յաջորդի կայեալ տէր առ նովաւ՝ ասէ. քաջալերեա՛ զանձն քո, զի որպէս վկայեցեր զիս յերուսաղէմ՝ այսպէս պարտ է քեզ և ի հռոմ վկայել։

12 Եւ յորժամ լինէր ցերեկ՝ արարին հրեայքն դաւադրութիւն, և նզովեցին զանձինս իւրեանց ասելով. մինչև ուտիցուք և արբցուք մեռցուք զպօղոս։

13 Եւ էին որ արարին զդաւադրութիւնս զայս քառասուն և աւելի։

14 Որ մերձեցեալ առ քահանայապետսն և առ երէցսն՝ ասեն. նզովեցաք զանձինս մեր նզովիւք մեծաւք մինչև ուտիցուք զինչ ի պօղոսէ մինչև սպանցուք զնա։

15 Եւ դուք արդ ցուցէք գնդապետին հետ ժողովոյն զի ածցէ զնա առ ձեզ վաղիւն, իբրև թէ ինչ ևս ճշդիւ ուսանիցուք վասն նորա. և մեք պատրաստ եմք սպանանել զնա մինչև ի մերձենալն նորա։

16 Եւ լուեալ որդւոյ քրոջ պօղոսի զդարանակալութիւնն՝ եկեալ և մտեալ ի բերդն՝ պատմեաց պօղոսի։

17 Եւ պօղոս կոչեցեալ զմի ի հարիւրապետացն՝ ասէ. զերիտասարդդ զայդ տար առ գնդապետն, զի ունի ինչ պատմել նմա։

18 Եւ նա առեալ զնա՝ տարեալ առ գնդապետն՝ ասէ. պօղոս կապեալն կոչեաց զիս, և աղաչեաց զերիտասարդդ զայդ տանել առ քեզ, զի ունի ինչ ասել քեզ։

19 Եւ գնդապետն առեալ զձեռն նորա՝ և քաշեալ առ մի կողմն՝ հարցանէր թէ զի՞նչ է զոր ունիս պատմել ինձ։

20 Եւ նա ասէ. հրեայքն համաձայնեցան աղաչել զքեզ զի վաղիւն զպօղոս տարցես ի ժողովն, իբրև թէ ինչ ևս ճշդիւ ուսանիցին վասն նորա։

21 Դու ուրեմն մի՛ հաւանիր նոցա, զի դարանակալեն նմա ի նոցանէ աւելի քան զքառասուն այրս որ նզովեցին զանձինս իւրեանց մինչև ուտիցուք և արբցուք մեռցուք զնա. և արդ պատրաստ են սպասելով զհաստատութիւն քո։

22 Եւ գնդապետն արձակեաց զերիտասարդն՝ պատուիրելով նմա զի մի՛ ումեք ասասցէ թէ զայս ինչ ինձ պատմեցեր։

23 Եւ կոչեցեալ երկուս ի հարիւրապետացն՝ ասէ. պատրաստեցէք զօր երկարս մինչև երթիցեն ի կեսարիա, և հեծեալս եօթանասուն, և նետաձիգս երկերիւր, յերրորդ ժամու գիշերի։

24 Եւ անասունս պատրաստեցէք, զի հեծուցեալ զպօղոս տարցեն առ փելիքս կառավարիչն։

25 Եւ գրեաց նամակ որոյ զկերպարանս էր այսպիսի.

26 Կղավդիոս ղուկիաս փելիքս կառավարչին ողջոյն։

27 Զայրդ զայսոսիկ հրեայքն բռնեալ՝ և սպանանել կամեցեալ ի նոցանէ, հասեալ ես զօրաւք և խլեցի զնա, գիտելով զի հռոմայեցի է։

28 Եւ կամեցեալ գիտել զպատճառն որով մեղադրէին զնա՝ տարի զնա առ ժողովն նոցա։

29 Եւ գտի զնա մեղադրեալ վասն հարցմանց օրինացն նոցա, և ոչ մեղադրեալ ինչ ունելով արժանի մահու կամ կապանաց։

30 Եւ յորժամ ինձ յայտնի եղեւ դաւադրութիւն որ լինելոց էր ի հրեայսն ի վերայ այրոյդ՝ առաքեցի զնա առ քեզ, և պատուիրեցի և մեղադրողացն նորա

24 Հրեայ ոմն ապեղէս ա-
նուն՝ աղէքսանդրացի յազ-
գէ, այր հմտաբարբառ եկն
ևհաս Եփեսոս. զօրաւոր էր
գրովք։
25 Սա էր տեղեկացեալ հա-
մապարհին Տեառն, և եռայր
հոգւով. խօսէր՝ և ուսուցա-
նէր ճշմարտութեամբ վասն
յի. գիտէր միայն զմկրտու-
թիւնն Յովհաննու։
26 Սա սկսաւ համարձակել
ի ժողովրդեանն. և լուեալ
ի նմանէ ակիւղաս և պրիս-
կիլլայ, առին զնա առ ի-
բեանս, և ճշմարտագոյնս
պատմեցին նմա զհանապարհն
Աստուծոյ։

27 Իբրև կամեցաւ նա գնալ
յաքայիա, յօժարեալ եղ-
բարքն գրեցին առ աշակերտ-
սն ընդունել զնա. որ իբրև
եհաս անդր՝ բազում նպաստ
լինէր հաւատացելոցն ի ձեռն
շնորհացն։

28 Վասնզի զնդազգի զհր-
էայսն յանդիմանէր հրապա-
րակաւ. յայտնել գրովք՝ և-
թէ Քրիստոսն է Յիսուս։

24 Մին ապեղէս անուն
հրեայ՝ ազգով աղէքսանդրա-
ցի, ճարտար խօսող մարդ՝
եկաւ հասաւ Եփեսոս. նա
գրքերովն զօրաւոր էր։
25 Սա Տէրի հանապարհին տե-
ղեկացած էր, և հոգով վառվու-
մէր. Յիսուսին համար խօսում-
մէր և ճշմարտութենով սովո-
րեցնում էր և (ինքն) մէնակ յո-
հաննէսի մկրտութիւնն էր գիտում։
26 Սա սկսեց ժողովարանի
մէջն համարձակ խօսել. և
երբոր անկիւլան և պրես-
կիլան նորանից լսեցին, նո-
րան իրանց մօտ առին, և էլ
աւելի ճշմարտութենով Աս-
տուծոյ հանապարհըն պատմե-
ցին նորան։

27 Երբոր նա կամեցաւ
գնալ ախայիա, եղբարներն
յօժար էլան և գրեցին ա-
շակերտներին՝ որ նորան ըն-
դունեն. երբոր նա էնտեղ
հասաւ, հաւատացեալներին
շատ օգնութիւն էր տալիս
շնորհքի ձեռով։
28 Ինչու որ խիստ պնդութե-
նով յանդիմանում էր հրէա-
ներին ամէնի առաջին. գրքերից
ցոյց տալով՝ թէ Յիսուս է
Քրիստոսն։

ԳԼ ԺԹ։

1 Եւ եղև մինչդեռ ապո-

1 Եւ էլաւ դեռ քանի որ

ղոսն 'ի կորնթոս էր, պօղոս էր ընտրեալ գլխովին կողմամբքն՝ և իջեալ յափեսոս, և գտեալ զմանս զաշակերտս,

2 Ասէ ցնոսա. եթէ հոգի սուրբ ընկալարիք՝ 'ի հաւատալն. նոքա ասեն ցնա. այլ և ոչ հոգի սուրբ գոյ՝ լուեալ է մեզ։

3 Եւ ասէ, իսկ յի՞նչ մկրտեցարուք. նոքա ասեն. 'ի յովհաննու մկրտութիւնն։

4 Եւ ասէ պօղոս. յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն. և ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝ 'ի նա հաւատասցեն. այսինքն է՝ 'ի Յիսուս Քրիստոս։

5 Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի։

6 Եւ 'ի դնել 'ի վերայ նոցա պօղոսի զձեռն, եկն հոգին սուրբ 'ի վերայ նոցա. խօսէին լեզուս՝ և մարգարէանային։

7 Եւ էին ամենեքեան արք իբրև երկոտասան։

8 Եւ մտեալ 'ի ժողովուրդն՝ համարձակեր ամիսս

ապօղոսն կորնթոս էր, պօղոսն որ վերի կողմերուաց՝ մանէր եկել՝ վերնակաւ եփեսոս. և մին քանի աշակերտներ գտաւ,

2 Ասաց նորանց. միթէ սուրբ հոգին ընդունեցիք՝ երբոր հաւատացիք. նորանք ասացին նորան. մենք էլ խկի չենք լսել՝ եթէ սուրբ հոգի կայ։

3 Եւ ասաց. ապա ինչով մկրտվեցաք. նորանք ասացին. յովհաննէսի մկրտութենովն։

4 Եւ պօղոսն ասաց. յովհաննէսն ամէն ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնը քարոզեց. և ասում էր. թէ նա՝ որ նորա ետևէն պիտի գայ, նորան հաւատան. այսինքն՝ Յիսուս Քրիստոսին։

5 Եւ երբոր լսեցին, Տէր Յիսուսի անունովն մկրտվեցան։

6 Եւ երբոր պօղոս ձեռն դրաւ նորանց վերայ սուրբ հոգին եկաւ նորանց վերայ. լեզուներ էին խօսում. և մարգարէանում էին։

7 Եւ ամէնքն տասներկու մարդ չափ էին։

8 Եւ ժողովարանին մէջ մտած՝ երեք ամիս համարձակ

երա. խօսէր՝ և հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ։

9 Իբրև ոմանք խստացան՝ և ընդդիմ դաւնային բամբասել զՀանապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ ՚ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն. հանապազօր խօսէր ՚ի դպրանին տիւրաննայ ուրուճն։

10 Եւ այս եղև ՚ի ժամս երկուց ամաց, մինչև ամենայն բնակիչքն Ասիայ լսէին զբանն Տեառն՝ հրէից և հեթանոսաց։

11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ՚ի ձեռն պօղոսի։

12 Մինչ զի և ՚ի հիւանդս տանել ՚ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարշամակս, և մերժել ՚ի նոցանէ ախտիցն, և այսոց չարաց ելանել։

13 Յանդգնեցան ոմանք և ՚ի շրջող հրէից՝ որ երդմնեցուցիչքն էին, անուանել ՚ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այս չարս, զանուն Տեառն Յիսուսի, և ասէին. երդմնեցուցանեմ զձեզ ՚ի Յիսուս՝ զոր պօղոս քարոզէ։

խօսումէր. և Աստուծոյ արքայութեանն համար հաւատացնումէր։

9 Իբրեւ մին քանիսն կըծանր վումէին և ներհակ էին դառնում էն Ճանապարհըն բամբասելով բազմութեան առաջին, նա հեռացաւ նորանցից՝ և աշակերտներըն ջոկեց. ամէն օր մին տիւրան (մարդոյ) ժողովարանում էր խօսում։

10 Եւ էս էլաւ մին երկու տարի, մինչև որ ասիայի ամէն բնակիչներն՝ հրէաներն և հեթանոսներն Տէրի խօսքըն լսեցին։

11 Եւ Աստուած չէ թէ քիչ զօրութիւններ էրգանում պօղոսի ձեռովն։

12 Մինչև որ նորա քրտընքիցն թաշկինակներ (գոհրամանէր) և վարշամակներ (գէշամանէր) տանում էին դնում հիւանդներին վերայ, և ցաւերն հեռանում էին նորանցից՝ և չար դևերն դուրս էին գալիս։

13 Մին քանիսն էն մանեկօղ հրէաներից՝ որ երդում տըւօղ էին՝ համարձակվեցան Տէր Յիսուսի անունըն տալ նորանց վերայ՝ որ չար դևեր ունէին. և ասում էին. երդում եմ տալիս ձեզ էն Յիսուսովն՝ որ պօղոսն քարոզում է։

14 Այլ ուրուն սկևեայ հրէի քահանայապետի եօթն որդիք, որ զայս առնէին։

15 Պատասխանի ետ այն չար՝ և ասէ ցնոսա. զՅիսուս գիտեմ և զպօղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք։

16 Եւ վազեաց այրն՝ յորում էր այն չար՝ ըմբռնեաւ զերկոսեան յաղթահարեաց ցնոսա, մինչև մերկ և վիրաւորս փախչել ՚ի տանէ անտի։

17 Եւ յայտնի եղև ամենայն հրէից և հեթանոսաց՝ որ բնակեալ էին յեփեսոս. և անկաւ երկիւղ յամենեսեան ՚ի նոսա. և մեծանայր անուն Տեառն Յիսուսի։

18 Եւ (այլ) բազումք ՚ի հաւատացելոցն գային, և խոստովան լինէին՝ և պատմէին զգործս իւրեանց։

19 Եւ բազումք ՚ի կախարդասացն բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն. և համարեցան զգինս նոցա՝ և գտանէին արծաթոյ բիւրս հինգ։

20 Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր՝ և զօրանայր։

21 Եւ իբրև կատարեցաւ

14 Մին սկևի հրէայ քահանայապետի եօթն որդիք կային, որ էս անումէին։

15 Չար դևն պատասխան տուաւ և ասայ նորայ. Յիսուսին գիտումէմ՝ և պօղոսին ճանաչումէմ, բայց դուք ո՞վ էք։

16 Եւ էն մարդն՝ որ նորանումէ չար դև կար, վազեց էն երկուսին բռնեց՝ նորանց տակն քցեց, մինչև որ մերկ և խոցված էն տանիցն փախան։

17 Եւ էն յայտնի էլաւ ամէն հրէաներըն և հեթանոսներն՝ որ եփեսոսումն բնակված էին. և ահ ընկաւ նորանց ամէնին վերայ. և Տէր Յիսուսի անունն մեծանումէր։

18 Եւ հաւատացեալներին շատերն գալիս էին՝ խոստովանվումէին, և իրանց գործքերըն պատմումէին։

19 Եւ կախարդումէ հեւ օղներից շատերն գրքերըն բերումէին, և ամէնի առաջին այրումէին. և նորանց գինըն համարեցին՝ և գտնումէին յիսուն հազար արծաթի (դահեկան։)

20 Եւ էսպէս Աստուծոյ խօսքն աճումէր և զօրանում։

21 Եւ երբոր էս կատար-

այս, եդ պօղոս ՚ի մտի շրջել ընդ մակեդոնիա և ընդ ա-քայիա՝ և գալ յԵրուսաղէմ. ասէ՝ եթէ յետ երթալոյն իմ անդր, պարտ է ինձ և զՀռոմ տեսանել։

22 Առաքեաց ՚ի մակեդովնիա երկուս ՚ի պաշտօնէիցն իւրոց՝ զտիմոթէոս և զերաստոս, և ինքն ետաց ժամանակ ինչ յԱսիայ։

23 Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ վասն Ճանապարհին։

24 Իսկ դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս արտեմի դից. և տայր Ճարտարսին լինել ոչ սակաւ շահ։

25 Ընդ ժողովեաց նոսիկ զնո-ռագէսս ասուեստին, և ասէ. արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ մեզ։

26 Եւ տեսանէք և լսէք՝ եթէ ոչ միայն զեփեսայեցոց, այլ գրեթէ զամենայն իսկ ասիացւոց՝ պօղոս այս հաւատնեցուցեալ շրջեաց բազում ժողովս՝ ասելով՝ թէ ոչ են աստուածք ձեռագործք։

27 Եւ ոչ միայն այս Ճգնէ վտեսաւ, պօղոսն միտքն դնաւ որ մակեդոնիայի և աքայիայի միջովն անցկենայ դնայ երուսաղէմ. ասաց՝ թէ իմ հնտեղ գնալուցն եաւս, պէտք է ինձ՝ որ հռոմ էլ տեսնեմ։

22 Իրան պաշտօնեաներիցն երկուսին՝ տիմոթէոսին և երաստոսին ուղարկեց մակեդոնիա, և ինքն մին ժամանակ ետաց ասիայի մէջն։

23 Եւ էն ժամանակումն շատ խռովութիւն էլաւ էն Ճանապարհին համար։

24 Ինչու որ՝ մին արծաթագործ՝ (դեմետրիոս անուն, արտեմիս կըռքի արծաթէ տաճարներ էր շինում՝ և քիչ շահ չէր՝ որ տալիս էր վարպետներին։

25 Ըր էն արուեստի բանվորներըն էլ ժողովեց՝ և ասաց. ով մարդիկ՝ դուք ինքներդ գիտումէք, որ էս գործիցս մենք շահ ունինք։

26 Եւ տեսնումէք և լսումէք՝ որ էս պօղոսն չէ թէ մենակ եփեսայոց, բայց համարեա թէ՝ ամէն ասիացոց շատ ժողովուրդ հաւանացրնելով՝ էն կողմն դարձրուց. որ ասումէ՝ թէ ձեռքով շինած բաներն աստուած չեն։

27 Եւ չէ թէ մենակ մեր

մեր կողմն պալ ՚ի յանդի-
մանութիւն, այլ և զմեծին
Աստուծոյ արտեմայ զմե-
հեանն յոչինչ համարել.
նաև քակլոյց ևս իսկ մե-
ծութիւն նորա, զոր ամե-
նայն ասիա՝ և տիեզերք պաշ-
տեն։

28 Եւ զայս իբրև լուան,
լի եղեն բարկութեամբ. ա-
ղաղակէին և ասէին, մեծ է
արտեմիս եփեսացւոց։

29 Եւ լցաւ քաղաքն խառ-
նուածութեամբ. դիմեցին առ
հասարակ ՚ի թէատրոնն.
յափշտակէին զգայիոս և ա-
րիստարքոս մակեդոնացի՝ ըն-
կերակիցս պօղոսի։

30 Բայց պօղոս իբրև կա-
մեցաւ մտանել յամբոխն,
ոչ թողին զնա աշակերտքն։

31 Իմանք և յասիապետացն՝
որ էին նորա բարեկամք,
յղէին առ նա՝ և աղաչէին,
մի տալ զանձն ՚ի թէա-
տրոնն։

32 Այլք այլ ինչ աղաղա-
կէին, զի էր ժողովն նոցա
խառնակաւ. և բազումք ՚ի
նոցանէ ոչ գիտէին, թէ
վասն ո՛յր ժողովեալ էին։

բանս. Ջանք ի անուամ որ ա-
նարգվի, բայց էլ մեծ Ա-
ստուծոյ արտեմիայի տաճարն
ոչ ինչի տեղ է համարուում.
և նորա մեծութիւնն էլ կը-
քանդվի, որ բոլոր ասիան՝
և աշխարհք են պաշտում նո-
րան։

28 Եւ երբոր էս լսեցին,
բարկութենով լցվան. աղա-
ղակուէին՝ և ասում՝ մեծ
է եփեսացոց արտեմիան։

29 Եւ քաղաքն շփոթու-
թենով լցաւ. ամենքն էլ
միանաղվագեցին թէատրոնն.
և առին քաշեցին գայոսին և
արիստարքոս մակեդոնացոց՝
պօղոսի ճանապարհի ընկեր-
ներին։

30 Բայց պօղոսն երբոր կա-
մեցաւ ամբոխի (խուժի) մէջ
մտնել, աշակերտներն չլեթո-
ղին նորան։

31 Ասիայի գլխաւորներից
մին քանիսն էլ՝ որ նորա բա-
րեկամներն էին, ուղարկեցին
նորա մօտ՝ և աղաչում էին,
որ իրան անձնն չըտայ թէա-
տրոնի մէջ։

32 Ոմն ամբոխում (խուժում)
ամէն մէկերն ուրիշ բան էին
աղաղակում. ինչու որ՝ նո-
րանց ժողովքն խառնված էր,
և նորանցից շատերն չէին գի-

33 Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զաղէքսանդրոս . և իբրև առին զնա հրէայքն յառաջ, աղէքսանդրոս շարժեալ ձեռն՝ և կամէր պատասխանի առնել ամբոխին ։

34 Իբրև գիտացին՝ եթէ այր հրէայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբրև ժամս երկուս աղաղակել, եթէ մեծ է արտեմիս եփեսացւոց ։

35 Լռեցոյց դպրապետն զամբոխն՝ և ասէ . արք եփեսացիք՝ իսկ ո՞ է՝ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զեփեսացւոց քաղաքս մեհենապարզ՝ մեծին արտեմեայ դիցն , և դիոպետեայ ։

36 Եւ զի այդ այդպէս է՝ անշուշտ՝ ձեզ պարտ է հանդարտել , և մի ինչ յանդգնութեամբ գործել ։

37 Ածիք պարտ զայդոսիկ այսր , ոչ մեհենակապուտս՝ և ոչ հայհոյիչս աստուծոյ մերոյ ։

38 Զի եթէ դեմետրիոս և որք ընդ նմա ճարտարք՝

33 Եւ էն շատ ամբոխէ մէջին աղէքսանդրոսին բռնեցին դուրս քաշեցին . և երբոր հրէանէրն նորան առաջ բերին , աղէքսանդրոսն ձեռն շարժեց՝ և կամենուէր ամբոխին (խալխին) պատասխան տալ ։

34 Երբոր գիտացին՝ թէ էն մարդն հրէայ է , ամէնքն էլ մին ձայնով երկու ժամի (սահաթի) չափ աղաղակուէին, թէ մեծ է եփեսացոց արտեմիսն ։

35 Կարդացօղնէրի գլխաւորն էն ամբոխին դադարացրեց՝ և ասաց . ով եփեսացի մարդիկ՝ ո՞վ է էն մարդն՝ որ չի գիտում թէ էս եփեսացոց քաղաքս մեծ արտեմիս կըռբի և դիոպետի կըռբերի տաճարնէրովն պարծած է։

36 Եւ որովհետև էդ շիտակ էդպէս է , պէտք է ձեզ որ հանդարտվիք , և չփիչն դուրս բան չըդործէք։

37 Էդ մարդկանցըդ բերիք էստեղ , ոչ թէ որ կըռբի տուն են կողոպտել՝ և ոչ մեր աստուծոյն հայհոյանք են տուել ։

38 Ուրեմն՝ թէորը դեմետրիոսն և նորա հետ լինօղ

ունելոյն ինչ ընդ ումեք բանս, յառնան երթիցեն, և դատաւորք զոն, և ամբաստան լիցին զվիճանց ։

39 Եպա եթէ վանն այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն վճարեսցեն ։

40 Քանզի և մեզ վիճք վանդի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վանն ժողովոյս այսորիկ, և զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն ։

վարպետներն՝ մընին հետ բան ունենան, թէպզ պնան ախտանն դատաւորներ կան, և թէպզ մինն մընիցի պանդատ անեն ։

39 Ապա թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի, թէպզ օրինաւոր ժողովքի մէջն կատարեն ։

40 Ինչու որ՝ մեզ էլ մեծ վտանգ կայ էսօրվան կռվիս համար. որովհետև յանցանք (ոմն) չկայ, որ էս ժողովքիս համար չենք կարող պատասխան տալ. և էս ասելով՝ ժողովուրդըն արձակեց ։

ԳԼ. Ի ։

1 Եւ եղեւ ամբոխն՝ կոչեաց պօղոս զաշակերտսն, և մխիթարեաց. ողջոյն ետ՝ և ել գնաց ՚ի մակեդոնիա ։

2 Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ և մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք, եկն յելլադայ ։

3 Իբրև արար անդ ամիս երիս, եղև նմա դաւ ՚ի հրէից, մինչդեռ կամէր ելանել յասորիս. խորհուրդ կալաւ

1 Եւ ամբոխն (խալխ) պատրաստուելուն հետև՝ պօղոսն աշակերտներին կանչեց, և մխիթարեց. ողջոյն տուաւ և դուրս եկաւ գնաց մակեդոնիա ։

2 Եւ էն կողմերն որ մանեկաւ՝ և շատ խօսքերով մխիթարեց նորանց, եկաւ ելլադա ։

3 Երբոր էնտեղ երեք ամիս կացաւ, հրէաներն որոգայթ (խալխ) քցեցին նորան, դեռքանի որ կամնում

դառնալ ընդ Մակեդոնիայ ։

4 Եւ երթայր ընդ նմա մինչեւ Յասիայ՝ սոսիպատրոս պիւռա Բերիայեցի, և՝ ի Թեսաղոնիկեացւոց՝ արիստարքոս և սեկունդոս՝ և գայիոս Դերբացի և տիմոթէոս, և ասիացիքն՝ տիւքիկոս և տրոփիմոս ։

5 Սոքա յառաջ երթեալ՝ ետային մեզ՝ ի տրովադայ ։

6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց՝ ի փիլիպպեայ՝ և եկաք առ նոսա ի տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ։ անդ դադարեցաք աւուրս եօթն ։

7 Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչեւ ժողովեալ էաք բեկանել պհոյն, պօղոս խօսէր ընդ նոսա՝ պի դնալոց էր ՝ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն մինչեւ ՝ի մէջ գիշերոյն ։

8 Լինին լապտերք բազումք ՝ի վերնատանն, ուր էաքն ժողովեալ ։

9 Եւ նստէր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս՝ ՝ի վերայ պատուհանին, նիրհէր դուրս դալ ասորոյ երկիրն. խորհուրդ արաւ՝ որ մակեդօնիայի միջովն յետ դառնայ։

4 Եւ մինչեւ ասիա նորա հետ գնուէմբր սոսիպատրոս բիբիայեցին՝ պիւռոսի որդին. և թեսաղոնիկեցիներից արիստարքոն և սեկունդոն՝ և գայիոս դերբացին և տիմոթէոսն, և ասիացիներից՝ տիւքիկոսն և տրոփիմոսն ։

5 Սորանք առաջ գնացին՝ սպասուէմբին մեզ տրօադայի մէջն ։

6 Եւ մենք բաղարջակերաց օրերից ետև նաւով գնացինք փիլիպպիացին, և մինչեւ հինգ օրուայն եկինք տրօադա նորանց մօտ. էնտեղ եօթն օր դադարեցինք ։

7 Եւ շաբաթի օրուն՝ դեռ որ ժողովված էինք հայց կըտրելոյ համար, պօղոսն նորանց հետ խօսուէմբր՝ ինչու որ՝ յետևի օրուայն պէտք էր գնայ. և խօսքըն երկարացրուց մինչև կէս գիշերն ։

8 Եւ շատ լապտերներ (քաննաՓէք) կային էն վերնատանն՝ որ մենք ժողովված էինք ։

9 Եւ մին եւտիքոս անուն երիտասարդ (ՃահՀլ Տպպ) պատուհանին վերայ նստած էր.

ի քուն թանձրութեան ի
խօսելն պօղոսի յաճախ,
ընկղմաւ ի քնոյ անտի՝ ան-
կաւ յերրորդ դասիկոնէն ի
վայր, և բարձաւ մեռեալ։

10 Եւ իջեալ պօղոսի ան-
կաներ զնովաւ. առնոյր զնա
ընդ գիրկս՝ և ասէր. մի խռո-
վիք, զոսկի հոգի սորա ի սը-
մին է։

11 Եւ ել երեկ ղհացն՝ և
ճաշակեաց. և բազում ևս
խօսեցաւ մինչև յառաւօտ,
և ապա ել գնաց։

12 Եւ ածին զպատանին
կենդանի, և մխիթարեցան
ոչ սակաւ։

13 Եւ մեք մտեալ ի
նաւն՝ ամբարձաք յաստղն.
անտի ակն ունէաք միւսան-
գամ առնուլ զպօղոս. զի
այնպէս պատուիրեալ էր՝
մինչ ինքն զյամաքաւն եր-
թալոց էր։

14 Եւ երբեմն դիպեցաւ մեզ
ի յաստղն, առեալ զնա եկաք
ի Մեթիլինէ։

15 Եւ անտի նաւեալ՝ ի
վաղիւ անդր հասաք հանդէպ
քիայ. և ի միւս օրն հասաք
ի սամոս. և ի վաղիւ անդր
եկաք ի Մելիտոն։

16 Զի ի մաի եդեալ էր

պօղոսի երկար խօսելոյ ժա-
մանակն, թանձր քնի մէջ
ննջումէր. և որ խոր քնով
բռնըվածէր՝ տան երրորդ
դասիկոնիցն (պատ.) վէր ըն-
կաւ, և վերկայվաւ մեռած։

10 Եւ պօղոսն վերեկաւ նո-
րա վերայ ընկաւ. և նորան՝
գիրկն էր առնում և ասում
մի շփոթիվիք. ինչու որ՝ սո-
րա հոգին սորանում է։

11 Եւ վեր ելաւ հայրն
կտրեց՝ և կերաւ. և էլ շատ
խօսեց մինչև առաւօտն, և
յետոյ դուրս եկաւ և գնաց։

12 Եւ են տղային բերին
կենդանի, և շատ մխիթար-
վեցան։

13 Եւ մենք նաւն մտինք՝
գնացինք ասօն. էնտեղից յոյս
ունէինք՝ որ մինել պօղոսին
մեզ հետ առնենք. ինչու որ՝
էնպէս էր պատուիրել՝ դեռ
որ ինքն ցամաքովն գնալու
էր։

14 Եւ երբոր ասօնուցի հան-
դիպեցաւ մեզ, վեր առինք
նորան եկինք Մետիլինէ։

15 Եւ էնտեղից նաւով
գնացինք՝ յետևի օրուցի հա-
սինք քիայի դիմացն. և մեկել
օրուցի հասինք սամոն. և
յետևի օրուցի եկինք Մելիտոն։

16 Ինչու որ՝ պօղոսն իրան

պօղոսի նաեւել առ եփեսեաւք՝ որպէս ալ մի լիսկի նմա ժամանակ մինչ յայսմ յաստիայ. քանզի փութայր եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն պենտեկոստէից երթալ յերուսաղէմ։

17 Եւ ի Միլիտեայ յղեալ եփեսոս՝ կոչեաց զերիցունս եկեղեցւոյն։

18 Եւ իբրեւ եկին առ նա, ասէ ցնոսա. դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի յասիայ. որպէս ընդ ձեզ ամենայն ժամանակս եղէ։

19 Ծառայել Տեառն առանձին խոնարհութեամբ եւ բազում արտասուօք եւ փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ ի նենգութեանց հրեից։

20 Որպէս ոչ ինչ զանգիտեի յօգտակարացն չպատմել ձեզ՝ եւ ուսուցանել զձեզ հրապարակաւ եւ առանձին.

21 Տալ վկայութիւն հրեից եւ հեթանոսաց զապաշխարութիւնն՝ որ առ Աստուած, եւ զհաւատոցն՝ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։

մարքի մէջն դրիլ էր՝ որ եփեսոսի մօտովն նաւով անցկենայ՝ որ չըլինի թէ նա ասիայի մէջն մին ժամանակ յետ ձգայ. պատճառն որ՝ վաղվանէն, որ եթէ կարելի լինի նորան՝ պենտեկոստէի օրուանն գնայ երուսաղէմ։

17 Եւ միլիտէյին ուղարկեց եփեսոս՝ եկեղեցոյ երէցներըն կանչել։

18 Եւ երբոր եկին նորա մօտ, նորանոց ասաց. դուք ինքներդ գիտուէք՝ թէ ես առաջին օրեցն եւս որ ասիա եկի՝ ինչպէս էլայ ամէն ժամանակներն ձեզ հետ։

19 Որ ամէն խոնարհութեամբ նով Տէրին ծառայելի՝ եւ շատ արտասուքով եւ փորձութիւններով որ հրէանների նենգութիւնովն պատահեցին ինձ։

20 Ինչպէս որ խոկի մին օգտակար բան վախով չըծածկեցի, որ չըպատմեմ եւ սովորցնեմ ձեզ՝ թէ փողոցում եւ թէ տան մէջն։

29 Եւ պօղոս ասէ. Խնդրեի Աստուծոյ՝ եւ փոքու եւ մեծաւ՝ ոչ միայն զքեզ այլ՝ զամենեսեան որ լսեն ինձ այսօր, լինել այսպիսի որպէս եւ ես եմ, բայց ՚ի կապանաց աստի։

24 Եւ նա երբոր էս պատասխան տուաւ, վեստոսն մեծ ձայնով ասաց. Դժուած ես պօղոս, շատ կարդացողութիւնները դժոխացնում քեզ։

25 Եւ պօղոսն ասաց. Չեմ դժուում՝ ով աղնիւ վեստոս, բայց հեղութեան եւ ճշմարտութեան բաներ եմ խօսում։

26 Թագաւորն էլ էս բաներիս տեղեակ է, որ նորա հետ էլ համարձակ խօսում եմ. ինչու որ չեմ կարծում որ սորանցից միսն էլ քեզանից ծածկուած լինի. պատճառն որ՝ էս բանս ոչ իմ միս անկիւնի (անձնական) տեղ մէջն էլած է։

27 Հաւատո՞ւմես դու մարգարէներին. ով ագրիպպա թագաւոր՝ գիտումեմ որ հաւատումես։

28 Եւ ագրիպպան պօղոսին ասաց. Միս քիչ է մնում ինձ հաւատացնես որ քրիստոնեայ լինիմ։

29 Եւ պօղոսն ասաց. Աստուածմէն խնդրումէի՝ թէ քիչով, թէ շատով լինի որ ոչ թէ միայնակ դու, բայց էն ամէնքն էլ՝ որ էս օր լսումեն ինձ, էնպէս լինէին՝ ինչպէս որ ես եմ, էն կապանքներից զատ (առանց)։

30 Յոան եկայց արբայն և դատաւորն և բերինիկէ, և որ ընդ նոսայն նստէին։

31 Ւրբրև իբրև դնային, խօսէին ընդ միմեանս և ասէին. թէ ոչ ինչ արժանի մահու կամ կապանայ գործէ այրս այս։

32 Իսկ ագրիպպաս յփեստոս ասէ. արձակել մարթէր դայրս դայս՝ եթէ ոչ էր բողոքեալ՝ ի կայսր։

ԳԼ.

1 Ւբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զպօղոս՝ և զայլս ումանս կապեալս ցհարիւրապետ մի, որում ա նուն էր յուղիոս սեբաստեան գնդին։

2 Ւ եղեալ՝ ի նաւ մի անդրամինտացի, որ երթայր ի կողմանս ասիացւոց՝ դնացաք. էր ընդ մեզ և արիստարքոս՝ մակեդոն թեսաղոնիկեցի։

3 Ւ ի վաղիւ անդր իջաք ի սիդովն. և մարդասիրութիւն ցուցեալ յուղիայ առ պօղոս, հրամայեաց առ բարեկաման երթալ՝ և դարման գտանել։

30 Ւ երկայաւ թագաւորն և դատաւորն և բերինիկէն, և նորանք էլ՝ որ նորանց հետ նստած էին։

31 Ւրբոր դնային, իրար հետ խօսում էին և ասում. թէ էս մարդս խակի մեռնելոյ կամ կապանքի արժանի բան չի գործել։

32 Ագրիպպաս փեստոսին ասաց. կարելի էր էս մարդը արձակել՝ թէ որ դէպի կայսրն չէր բողոքել։

ԻՆ։

1 Ւրբոր հրաման էլաւ մեզ՝ որ նաւով գնանք Իտալիա, պօղոսին՝ և ուրիշ մի քանի կապվածներ էլ տուին մի հարիւրապետի, որ նորա անունն յուղիոս էր՝ սեբաստոսի գընդից (ΣΕΒΑΣΤΗΣ)։

2 Ւ որ վեր էլանք մի անդրամինտացի նաւ՝ որ պէտք էր գնայ ասիացոց կողմերն, գնացինք. արիստարքոս մակեդոն թեսաղոնիկեցին էլ մեզ հետ էր։

3 Ւ վեր եկինք սիդոն. և յուլիան սէր ցոյց տալով պօղոսին՝ հրամայեց որ բարեկամների մօտն գնայ՝ և հանգիստ գտնէ։

4 Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք ի կիպրոս՝ վասն հողմոյն ընդդէմ լինելոյ։

5 Յայնժամ ընդ մէջ ծովուն կիւղիկեայ և պամփիլեայ նաւեալ՝ իջաք ի սիւդայ Լիկիացւոց։

6 Եւ անդ գտեալ հարիւրապետին զնաւ մի ազեքսանդրացի՝ որ երթայր ի Տալիա, եմայծ զմեզ անդր։

7 Եւ ի բազում աւուրս ծանրանաւեալք հազիւ հասաք առ կնիդա. և ի չշնորհացուցանել մեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն ի կրետէ առ սալմոնեաւ։

8 Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ի տեղի ինչ՝ որ կոչէր գեղեցիկ նաւահանգիստ. յոր հուսկ էր քաղաքն Ղասեայ։

9 Եւ իբրև բազում ժամանակք անցանէին, և սկսալ ևս լինել նաւելոյն. և վասն այն ինչ ևս պահոցն անցանելոյ, տայր խրատս պօղոս,

10 Եւ ասէ ցնոսա. արք՝ տեսանեմ զի թշնամանօք և բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ և նաւիդ, այլ և

4 Եւ էնտեղից նաւելով գնացինք կիպրոսի յած կողմովն՝ քամու ներհակ լինելոյ պատճառովն։

5 Էն ժամանակն կիւլիկիայի և պամփիլիայի ծովն միջոցեն գնալով՝ վէր եկինք Լիկիացոց սիւռան։

6 Եւ հարիւրապետն էնտեղ մին ազեքսանդրացի նաւ գտաւ՝ որ Իտալիա էր գնում, և մեզ էնտեղ մտցրուց։

7 Եւ շատ օր նաւովն ծանր գնալով՝ դժուար հասինք կնիդէ կողմերն. և երբոր քամին չըթողաց մեզ, նաւով գնացինք կրետէի յած կողմն սալմոնեայի մօտն։

8 Երբոր նորանով դժուար անցկացանք՝ եկինք մի տեղ, որ գեղեցիկ նաւահանգիստ էր կոչւում. որ լոսէ քաղաքն նորա մօտ էր։

9 Եւ երբոր շատ ժամանակ էլ անց էր կացել՝ և նաւով գնալը հաւար սխալմունք էր լինում, ինչու որ պասի ժամանակն էլ անց էր կացել, պօղոսն խրատ էր տալիս,

10 Եւ նորանց ասումէր՝ ով մարդիկ՝ ես տեսնումեմ որ էս նաւարկութիւնն նեղութեններով և շատ վնասով

անձանց մերոց լինելոյ է նաւարկութիւնս ։

11 Իսկ Հարիւրապետն նաւապետին և նաւավարին աւելի անսայլ՝ քան թէ պողոսի ։

12 Իբրև դժպատեհ լիմն թուէը նաւահանգիստն առնի ձմերել, բազումք խորհեցան դնալ անտի. թերևս կարասցեն հասանել ՚ի փիւնիկէ՝ ձմերել ՚ի նաւահանգստին կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն և ընդ արևմտեան ։

13 Իւ ՚ի շնչել հարաւոյն, համարեցան ուր կարծէին հասանել. և արկեալ՝ մօտ անցանէին զկրետեաւս ։

14 Իւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ վրայ հողմ ուռուցիկ, որ կոչի եւրաքիկլոն ։

15 Ընդ յափշտակել նաւին՝ և ՚ի չկանդուրժել ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և գայաք ։

16 ՚ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր կղօդա. հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն ։

պիտի լինի. ոչ թէ մէնակ բեռնիդ և նաւիդ, այլ մեր անձերիս էլ ։

11 Բայց հարիւրապետն նաւապետին և նաւ քշողին աւելի ակնջ էր դնում՝ քան թէ պօղոսի խօսքերին ։

12 Որովհետև էն նաւահանգիստն անյարմար էր երևում ձմեռն անցկացնելոյ համար, շատերն մտածեցին՝ որ էն տեղից դնան. որ լինի թէ ձմեռն ծայրի համար կարօղանան փիւնիկէն հասնիլ կրետացոց էն նաւահանգիստն՝ որ դէպի հարաւի կողմն և արևմտեան էր նայում ։

13 Իւ երբոր հարաւի քամին փչէց, կարծումէին թէ աչք դրած տեղն կրհասանեն. և մօտ քցած՝ կրնտէի կողմովրն անց էին կենում ։

14 Իւ որ շատ ժամանակ չէր անցած՝ նորա վերայ ուռած քամի ընկաւ՝ որ եւրաքիկլօն կ կոչվում ։

15 Երբոր նաւն բռնվեցաւ՝ և քամուն դէմ չըկարաց դիմանալ, թոյլ տուած գնումէինք և գալիս էինք ։

16 Երբոր ջանք արինք գնալ մին կղզի (ապօյ)՝ որ կղօդա էր կոչվում դժուար կարացինք մակոյկն (չոփ՚ն) բռնել ։

17 Զ որ առեալ յօգնակա-
նութիւն կապիչն ընդ նաւն,
երկուցեալ թէ գուցէ ՚ի
յորձանուտն անկանիցին. ի-
ջուցեալ զառագաստն՝ այն-
պէս երթային և գային։

18 Եւ ՚ի սաստկապէս վըշ-
տանալոյն մերոյ՝ ՚ի վաղիւ
անդր վկարասին ընկեցիկ առ-
նէին։

19 Եւ յերրորդ աւուր ըն-
ծ իւրեանց ձեռն զգործին նա-
ւին ընկեցին։

20 Իբրև ոչ արև՝ և ոչ
աստեղք երևէին ՚ի բազում
աւուրս, և ձմեռն ոչ սակաւ
կայր ՚ի վերայ, ապա բառ-
նայր ամենայն յոյս փրկու-
թեան մերոյ։

21 Եւ զի բազում աւուրս
նօթի էին, յայնժամ պօ-
ղոս կացեալ ՚ի մէջ նոցա՝
ասէ. պարտ էր ձեզ՝ ո՛վ
արք, անսալ ինձ, և ոչ ե-
լանել ՚ի կլեսեայ՝ և շահել
վվնասս զայս՝ և զվնաս։

22 Եւ արդ՝ խրատեմ զձեզ
քաջալերել. զի վնաս անձին՝
և ոչ միւսմ ՚ի ձէնջ լինիլ-
սի, բայ ՚ի նաւէդ։

17 Որ էն առին նաւին հետ
օգնութեան համար կապե-
ցին, և վախելով՝ որ չըլինի թէ
յորձանուտն (ՍԻՐԵՈՒՆ) ընկ-
նին, առագաստն (ԸՆԴՆԱՑ)
վեր թողին՝ նայես դնում էին
և գալիս։

18 Եւ երբոր մենք շատ նե-
ղութիւն էինք քաշում, յա-
ռաւի օրուանն կարասին (ՆԱՎ-
ԱՍՏԱՂԸՆ) ծովին մէջ էին
քցում։

19 Եւ երրորդ օրուանն իրանց
ձեռովն նաւի գործիքըն դուրս
քցեցին։

20 Երբոր շատ օրեր՝ ոչ
արև և ոչ աստղներ չէին
երևում, և ձմեռն էլ քիչ
չէր որ մեզ վերայ կար, ապա
մեր ապրելոյ ամէն յոյսն
կտրվեցաւ։

21 Եւ որովհետև շատ օր
սոված էին, էն ժամին պօ-
ղոսն նորանց մէջն կանգնած
ասաց. ով մարդիկ՝ պէտք
էր ձեզ՝ որ ինձ լսէիք, և
կրետիայիցն դուրս չըգայիք
և էս նեղութիւնըը և վնա-
սըս չըքաշէիք։

22 Եւ հիմիկ խրատումեմ
ձեզ՝ որ սրտապնդ կենաք.
ինչու որ՝ ձեզանից իսկի մը-
նի անձին էլ վնաս չի լինիլ,
էդ նաւիցդ զոկ (ՈՒՐՈՒՅՔ)։

23 Քանզի երևեցաւ ինձ յայսմ պիշերի հրեշտակ Աստուծոյ որոյ եմն եմ, և պաշտեմ զնա,

24 Եւ ասէ. Մի երկնչիր՝ պօղո՛ս, կայսեր ևս պարտ է քեզ յանդիման լինել. և ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամենեսեան, որ են ընդ քեզ՝ ի նաւիդ։

25 Վասն այսորիկ քաջալերեցարուք՝ արք, զի հաւատամ Աստուծոյ, լինել այսպէս ինչ՝ զորօրինակ խօսեցաւ ընդ իս։

26 Հայց ի կղզի ինչ հասանել մեզ անկանել։

27 Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչդեռ ծփէաք ի հանդրիւն անդունդս, ՚ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասանել իցեն յաշխարհ ուրուք։

28 Եւ ընկեցեալ զդունդան՝ գտին գիրկս քսան. և սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին՝ և գտին գիրկս հնգետասան։

29 Զահի հարեալ թէ դուցէ ՚ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս. ընդ-

23 Պատճառն որ՝ ես գիշերումն երևեցաւ ինձ ես Աստուծոյ հրեշտակն՝ որ ես նորան եմ, և նորան պաշտեմ

24 Եւ ասաց. Մի վախենար. պօղոս. պէտք է քեզ՝ որ կայսերի դիմացն էլ կանգնիս. և ահա Աստուած քաշեցնէ քեզ էդ ամէնքըդ՝ որ քեզ հետ էդ նաւիդ մէջն կան։

25 Արահամար՝ սրտապինդ կացէք՝ ով մարդիկ. ինչու որ՝ հաւատումեմ Աստուծոյն՝ որ կասէս լինի ինչպէս որ ինձ հետ խօսեց։

26 Հայց պէտք է որ՝ գնանք մին կղզի (ԽՈՑ) ընկնինք։

27 Իրբ որ տասնու չորս գիշերն ելաւ՝ քանի որ դեռ հանդրիւնի անդունդներումն էս կողմս էն կողմն շարժվում՝ մէյնք, կէս գիշերուն նաւավարներն կարծումէին՝ թէ մին աշխարհի հասած լինին։

28 Եւ գընդերըն քցեցին, քսան գիրկ (ղ-լաճ)սոր գտին. և մին քիչ որ կացան՝ մինել քցեցին՝ և տասնուհինգ գիրկ գտին։

29 Վախեցան որ չըլինի թէ դինդ տեղերի մէջ ընկնին, և յետևի կողմից չորս խարիսխ (չանկոր էրկաթ)

ձանապին այգուն լինելոյ։

30 Բայց նաւավարքն խըն-
դրէին փախչել ՚ի նաւէ ան-
տի. և իջուցեալ զկուբն
՚ի ծով անդր պատճառա-
նօք՝ որպէս թէ առաջոյ կող-
մանէ խարիսխս ձգելոց իցեն։
31 Ասէ պօղոս ցհարիւրա-
պետն և ցզօրականսն. եթէ
ոչ դոքա մնան ՚ի նաւիս՝
դուք ապրել ոչ կարէք։

32 Յայնժամ զօրականքն
հատին զլարս կրին՝ և ՚ի
բաց ընկեցին։

33 Եւ մինչդեռ այգն կա-
մէր լինել, աղաչէր պօղոս
զամենեսեան առնուլ կերա-
կուր, ասէ. այս չորեքտա-
սաներորդ օր է՝ որում ակն
ունիք նօթիս կատարել, և
չէ ինչ ճաշակեալ։

34 Վասն որոյ աղաչեմ զը-
ձեզ՝ ճաշակել կերակուր,
զի այն իսկ վասն ձերոյ փրկու-
թեան է. զի ոչ ուրուք ՚ի
ձէնջ մազ մի ՚ի գլխոյ կո-
րիցէ։

35 Եւ երբեւ ասաց զայս,
առեալ հաց՝ գոհացաւ զԱս-
տուծոյ առաջի ամենեցուն.
եբեկ՝ և սկսաւ ուտել։

քցեցին. սպասուածին որ լի-
նայ։

30 Բայց նաւավարներն ու
զուամէին՝ որ էն նաւիցն փախ-
չին և կուբըն (լօտկան) վեր-
բերին ծովն. էն պատճառան-
քովն՝ իբր թէ առաջի կողմիցն
էլ պիտի խարիսխ քցեն։

31 Պօղոսն հարիւրապետին
և զինուորներին ասաց, թէ
որ դորանք էս նաւումս չըմը-
նան, դուք չէք կարող ապ-
րիլ։

32 Էն ժամանակն զինուոր-
ներն կրի (լօտկայի) չուաննե-
րըն կտրեցին՝ և (նորան)
դուրս քցեցին։

33 Եւ դեռ քանի որ ու-
զուամէր որ առաւօտ լինի, պօ-
ղոսն ամէնին աղաչուամէր՝ որ
կերակուր առնեն, ասուամէր.
էս տասնու չորս օրն է՝ որ
դուք սպասելով՝ անօթի էք
մնացել, և մին բան չէք կե-
րել։

34 Նրանհամար աղաչու-
մէմ ձեզ՝ որ կերակուր ու-
տէք, որ հենց էն ձեր փրկու-
թեան համար է. ինչու որ
ձեզանիցէ մըրնի գլխիցն խոկ
մին մազ չի կորչիլ։

35 Եւ երբոր էս ասաց,
հաց առաւ ամէնի առաջին
Աստուածանիցէ գոհացաւ.
կտրեց՝ և սկսեց ուտել։

36 Եւ քաջալերեցան ամենքին, և նոքա առին կերակուր։

37 Եւ էաք ամենայն հոգիք՝ ի նաւին՝ երկերիւր եօթանասունհնգեւ վեց։

38 Իբրեւ յագեցան կերակրովն, և թեթեւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն ի ծով։

39 Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծովուն իցէ. յոր խորհէին թէ հնար լինիցէ իցէ՝ զերծուցանել զնաւն։

40 Եւ զխարիսխան հատեալ՝ ընկեցին ի ծով, թողլայուցին զկապանսն վնասուցն, և՝ ի բաց առին զառագաստան. և եւտուն հողմոյն յափն կոյս ծովուն։

41 Ընկեալ՝ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր, և յետին կողմն քակէր ի բռնութենէն։

42 Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, և մի ոք լուղիցէ և փախիցէ։

36 Եւ ամենքն սրտապնդեցան, և նորանք եւ կերակուր առին։

37 Եւ նաւի մէջն ամենքս երկու հարիւր եօթանասուն և վեց հոգիք էինք։

38 Երբոր էն կերակրովն կշտացան, նաւըն թեթեւացուցին՝ և ցորենըն ծովին մէջ թափեցին։

39 Եւ երբոր առաւօտ է՝ լաւ՝ էն երկիրըն չէին ճանչնալու, բայց մին գոգ տեսնուեցին՝ որ ծովի եզրն (ղաղպ) է. մտածուեցին եթէ հնար լինի, նաւըն էնտեղ պրծացընեն։

40 Եւ էն (խարիսխն) որ հաստատ լաճէր՝ ծովն ձգելին. թեւերի կապանները ըն թուլցուցին. և առագաստըն վերառին, և քամուն տուին դէպի ծովի եզրի (ղաղպ) կողմն։

41 Մինտեղ ընկան՝ որ երկու կողմից ծով ունէր՝ նաւըն ծռեցին. և նաւի առաջին կողմն խրուած անշարժ էր մնում, և յետին կողմն ալիքներուն սաստկութենից քանդվում էր։

42 Եւ զինուորներն խորհուրդ էին արել՝ որ կապածները սպանեն, որ չլինի թէ մինն լողայ փախչի։

ԺՅ Եւ հարիւրապետան՝ քան-
ղի կամեցաւ ապրեցուցանել
պղօղոս, արգել զնոսա ՚ի
խորհրդոյն. հրամայեաց ղի
որ կարօղն լեցեն լուղել՝ ան-
կանիցին նախ, և ՚ի յամաք
ելանիցեն։

ԺԱ Եւ զայլսն՝ զորս ՚ի
տախտակս, և զորս յայլ
ինչ կահ ՚ի նաւէ անտի. և
այսպէս եղև ամենեցուն փըր-
ձանել յերկիր։

ԺՅ Եւ հարիւրապետան՝ որով-
հետև կամեցաւ որ պօղոսին
ապրեցնէ, նորանց էն խոր-
հըրդին խափանեց. հրամա-
յեց որ՝ ով որ կամենայ լող
տալ՝ առաջ ընկնին՝ և դուրս
գնան յամաքն։

ԺԱ Եւ ուրիշներն էլ՝ որն
տախտակներով՝ և որն էն նա-
ւի մին ուրիշ կարասիքներոյն.
և էնպէս էլաւ՝ որ ամենքն
պրծան դուրս եկին յամաքն։

ԳԼՈՒԽ Ի։

1 Եւ ապրեալք՝ յայն-
ժամ գիտացաք թէ Մելիտի-
նէ էր անուն կղզւոյն. բայց
բարբարոսքն չնորհեցին ոչ
սակաւ մարդասիրութիւն մեզ։

2 Քանզի լուցին խարոյկ՝
և ընկալան զամենեսին զմեզ
վասն անձրևին՝ որ ստիպէր
և վասն ցրտոյն։

3 Եւ ՚ի ժողովել պօղոսի
խուրձ մի՛ բազում՝ և դնել
՚ի վերայ խարուկին, իժ մի
՚ի ջերմութենէն ելեալ՝ կա-
լաւ զձեռանէ նորա։

4 Եւ իբրև տեսին բար-
բարոսքն կախեալ զդազանն

1 Եւ երբոր ապրեցանք,
էն ժամանակն գիտացինք՝ որ
էն կղզոյ (ապոյէ) անունն
Մելիտինէ էր. բայց բարբա-
րոսներն քիչ մարդասիրու-
թիւն չէր՝ որ ցոյց տուին մեզ։

2 Ինչու որ՝ կրակ վառե-
ցին՝ և մեզ ամենս ընդու-
նեցին էն անձրևին համար՝
որ վերայ էր գալիս. և սաս-
տիկ ցրտին համար։

3 Եւ երբոր պօղոս՝ մին
քիչ խոշոր էր հաւաքում,
և դնում կրակին վերայ. էն
տաքութենէն մին իժ (օձ)
դուրս եկաւ և նորա ձեռքին
բռնեց։

4 Եւ երբոր բարբարոս-
ներն տեսին՝ որ էն գազանն

դձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. ուրեմն սպանօղ է այրս՝ որ Թէկլա և ապրեցաւ ՚ի ծովէն, իրաւունքն չետուն կեալ։

5 Եւ նորա Թօքսիւեալ զգազանն ՚ի հուրն, եղև նմա չար և ոչ ինչ։

6 Եւ նորա ակն ունէին նմա այտուցք՝ կամ անկանել՝ և յանկարծակի մեռանել. իբրև շատ ակն կալեալ՝ և տեսանէին Թէ ոչ ինչ վնաս եղև նմա՝ դարձեալ դարձուցեալ զբանան՝ ասէին Թէ աստուած ումն է։

7 Եւ շուրջ զտեղեաւն գայնուիկ էին դիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն էր պուպղիոս. որ առ զմեզ յերաշխի դերից աւուրս՝ և սիրով ընկալաւ։

8 Եւ եղև հօրն պուպղեայ ՚ի ջերմն և յախտ Թանչից հիւանդանալ, դնել. առ որ մտեալ պօղոս՝ և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն և բժշկեաց զնա։

9 Եւ իբրև այս եղև, այլ հիւանդք, որ էին ՚ի կղզւոջն՝ գային և բժշկէին։

նորա ձեռիցն կախուած էր, իրար ասումէին՝ ուրեմն էս մարդս մարդասպան է. որ Թէ և ծովիցն ազատեաւ բայց արդար իրաւունքներն չըլծողին որ ապրի։

5 Եւ նա էն գազանըն կրակին մէջ Թափտեաւ. և նորան իսկի մին ցաւս էլ չէլաւ։

6 Եւ նորանք սպասումէին՝ Թէ կամ կուռչի կամ վէր կընկնի և շուտով կմեռնի. երբոր շատ սպասեցին, և տեսին որ իսկի չէլաւ նորան, միտք իրանց խօսքըն դարձըրին՝ և ասումէին, Թէ սա մին աստուած է։

7 Եւ էնտեղի չորս կողմըն՝ էն կղզոյ (ապայ) գլխաւորին դիւղեր կային՝ որ նորա անունն պուպղիոս էր. որ խօսք տալով մեզ երեք օր իրան մօտ առաւ՝ և սիրով ընդունեց։

8 Եւ էլաւ՝ որ պուպղիոսի հայրն տենտով և վորի քշիլովն հիւանդացած վէր ընկած էր. պօղոսն նորա մօտ մտաւ՝ և աղօթք արաւ, և ձեռըն նորա վերայ դրաւ. և նորան բժշկեց։

9 Եւ երբոր էս էլաւ, ուրիշ հիւանդներ որ էն կղզուն կային, գալիս ելին և բժշկվուէմ։

10 Որք և բազում պա-
տուով պատուեցին զմեզ. և
երբեմն գնացաք՝ ետուն՝ որ
ինչ պէտք էին։

11 Յե յետ երից ամսոց ե-
լաք ՚ի նաւ մի աղեքսան-
դրացի՝ որ ձմերեալ էր ՚ի
կղզւոջն՝ նշանաւորաւ դիոս-
կուրացւոց։

12 Յե իջեալ ՚ի սիրակու-
սա՝ եղաք աւուրս երիս։

13 Ուստի գնացեալ հասաք
՚ի հռեգիոն. և յետ աւուր
միոյ ՚ի շնչել հարաւոյն, եր-
կօրեայք եկաք ՚ի պատիողոս։

14 Ուր և գտաք եղբարս՝
աղաչեցեալք ՚ի նոցանէ լինել
աւուրս եօթն. և ապա ե-
լաք ՚ի հռովմ։

15 Յե անտի լուեալ եղ-
բարցդմէնջ՝ ելին ընդ ա-
ռաջ մեր մինչև յորգոստայն
ապիեայ՝ և երիցն կրպակաց.
զոր տեսեալ պօղոսի գոհա-
ցաւ զԱստուծոյ՝ և քաջա-
լերեցաւ։

16 Յե երբեմն մտաք ՚ի հռովմ,
հրամայեցաւ պօղոսի լինել
առանձինն հանդերձ զինուո-
րաւն՝ պահպանաւ իւրով։

17 Յե եղև յետ երից ա-

10 Որ նոքանք էլ շատ պա-
տուով պատուեցին մեզ. և
երբոր գնացինք, ինչ որ մեզ
պէտք էր՝ տուին։

11 Յե երեք ամսից ետև
վերբէրանք մի աղեքսանդ-
րացրի նաւ՝ որ էն ձմռնէն
կղզումն էր անցկացրել՝ և
դիոսկուրացոց նշանըն ուներ։

12 Յե վեր եկինք սիրակու-
սա՝ և երեք օր էնտեղ մնա-
ցինք։

13 Յէն տեղից գնացինք հա-
սինք հռեգիոն. և մին օրից
ետև երբոր հարաւի քամին
փչեց, երկրորդ օրումն եկինք
պատիոլոս։

14 Որ էնտեղ եղբայրներ էլ
գտինք՝ նորանք աղաչեցին՝ որ
եօթն օր էնտեղ մնանք. և
յետոյ դուրս եկինք հռոմ։

15 Յե երբոր էնտեղից եղ-
բայրներն մեզ համար լսեցին
մեր առաջս դուրս եկին մին-
չև ապիոսի որգոստան (պա-
ղաւն)՝ և երեք խանութներն
(թաւերն)՝ պօղոսն որ նո-
րանց տեսաւ, Աստուածանից
գոհացաւ և սրտապինդ էլաւ։

16 Յե երբոր մտինք հռոմ,
պօղոսին հրաման էլաւ՝ որ
իրան պահապան զինուորնե-
րին հետ առանձին կենայ։

17 Յե երեք օրից ետև կ-

ւսեալ՝ կոչել նմա զՀրէիցն գլխաւորս. և իբրև եկին, ասէ ցնոսա. ես՝ արք եղբարք, ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն՝ կամ կրօնիցն հայրենեաց, կապեալ յերուսաղէմ՝ մատնեցայ ի ձեռս հռովմայեցւոց։

18 Որք իբրև դատեցան զիս՝ կամէին արձակել, վասն և ոչ մի ինչ վնաս մահու գտանելոյ յիս։

19 Ի հակառակել հրէիցն, հարկ եղև բողոքել ի կայսր. իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունիմ ինչ չարախօսել։

20 Վասն այսր պատճառանայ աղաչեցի զձեզ՝ տեսանել և խօսել, քանզի վասն յուսոյն իսրայէլի կամ ի շղթայս յայսոսիկ։

21 Այլ նորա ասեն ցնա. մեք ոչ եթուղթս ինչ վասն քո ընկալաք ի Հրէաստանէ, և ոչ եկեալ ոք եղբարցն պատմեաց կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն։

22 Բայց աղաչեմք ի քէն լսել՝ թէ զի՞նչ խորհիցիս, զի վասն հերձուածոյդ այդո-

լաւ՝ որ նա հրէաների գլխաւորներին կանչեց. և երբոր եկին, նորանց ասաց. մար-դիկ եղբարք՝ ես թէ և ժողովրդին՝ կամ հայրենական կրօնքին հակառակ մի բան չեմ գործել, երուսաղէմիցն կապուած մատնըվեցայ հռոմայեցոց ձեռքն։

18 Որոնք երբոր ինձ դատեցին՝ կամէին թողանել, ինչու որ՝ ինձանում իսկի մի մեռնելու պատճառ (ոճ) էլ չըգըտին։

19 Բայց երբոր հրէաները ներհակուի էին անում, պէտք էլաւ որ ես դիմի կայսերն բողոքեմ. ոչ թէ որ իմ ազգիցն մի չարախօսելոյ բան ունիմ։

20 Այս պատճառներիս համար աղաչեցի ձեզ՝ որ տեսնեմ (ձեզ) և խօսիմ. ինչու որ՝ իսրայէլի յուսոյն համար ես էս շղթայիս (ըննձիւ) մէջն կամ։

21 Այլ նորանք ասացին նորան. մենք քեզ համար հրէաստանիցն (ըննհուպատառնէցն) ոչ թուղթ ենք ստացել՝ և ոչէլ եղբարներիցն միոնն եկաւ պատմեց կամ քեզ համար մի չար բան խօսեց։

22 Բայց աղաչումենք որ քեզանից լսենք՝ թէ ինչ խորհուրդ ունիս. ինչու որ՝ էդ

բիկ յայտ իսկ է մեզ, զի ա-
մենայն ուրեք հակառակու-
թիւն կրէ:

23 Ժամ եղեալ նմա օր
մի, եկին ի վանսն առ նա
բազումք. որոց պատմէր
վկայութեամբ զարքայութի՛ն
Աստուծոյ. և հաւանեցուցա-
նէր զնոսա վասն Յիսուսի, յօ-
րինացն մովսէսի և ի մարգա-
րէից՝ յայգուէ մինչև ցերեկոյ:

24 Եւ ոմանք հաւանէին
բանիցն, և կէսքն չհաւա-
տային:

25 Եւ անմիաբանք լեալ
միմեանց՝ արձակէին, յասելն
պօղոսի բան մի. Թէ բար-
ւոք խօսեցաւ Հոգին սուրբ
ի ձեռն եսայեայ մարգարէի
առ հարսն մեր.

26 Եւ ասէ. Երթ առ ժո-
ղովուրդն, և ասասցես. լսե-
լով լուիջի՛ք և մի իմաս-
ջի՛ք և տեսանելով տեսջի՛ք՝
և մի տեսջի՛ք:

27 Զի թանձրացաւ սիրտ
ժողովրդեանն այնորիկ, և
ականջօք խլրեանց ծանր
լուան. և զաչս իւրեանց
կափուցին, զի մի երբեք
տեսցեն աչօք և ականջօքն
լուիցեն և սրտիւք իմասցին՝
հերձուածելոյ համար հենցմեզ
յայտնի է, որ ամէն տեղ ներ-
հակուածին է քաշուած:

23 Երբոր նորա հետ մին
օր ժամանակ դրած էին՝ շատ
մարդիկ նորա մօտ եկին էն
բնակարանը՝ որ նորանց
Աստուծոյ արքայութիւնը
վկայութեամբ պատմէր.
և Յիսուսին համար նորանց
հաւանացնում էր, մօսէսի օ-
րէնքին և մարգարէներին
առաւօտուանց մինչև իրիկուն:

24 Եւ մին քանիսն խօսքե-
րին հաւանում էին, և կէսերն
չէին հաւանում:

25 Եւ իրար հետ չըմիաբան-
ւած՝ արձակվեցան, երբոր
պօղոսն էն մին խօսքըն ասաց.
Թէ սուրբ հոգին եսայի մար-
գարէի ձեռովն մեր հարանց
հետ լաւ խօսեց.

26 Եւ ասաց. գնա՛ ժողո-
վըրդին մօտ՝ և ասա՛. դուք
լսելով կըլսէք՝ և չէք իմա-
նալ. և տեսնելով կըտեսնէք՝
և չէք տեսնիլ:

27 Պատճառն որ՝ էն ժո-
ղովըրդի սիրտն Թանձրացաւ,
և իրանց ականջներովն ծանր
լսեցին. և իրանց աչքերըն
խփեցին, որ իսկի աչքով
չըտեսանեն՝ և ականջներով
չըլսեն, և սըրտով չհմանան՝

և դարձցին, և բժշկեցից զնոսա։

28 Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսայց առաքեցաւ փրկութիւն Աստուծոյ՝ նոքին և լուիցեն։

29 Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին ՚ի նմանէ հրէայքն. որք ունէին ՚ի մէջ ինքեանց զբաղում խնդիրս։

30 Եւ եղև զերկեամ մի բովանդակ իւրով վարձու։

31 Եւ ընդունէր զամենեսեան՝ որ մտանէին առ նա։

32 Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, և ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն համարձակութիւն։

և յետադառնան՝ և ես բժշկեմ նոսա։

28 Եւ հնմիկ՝ յայտնի լինի ձեզ՝ որ Աստուծոյ ես փրկութիւնս ուղարկվեցաւ հեթանոսաներին, և նորանք կլսեն։

29 Եւ երբոր ես ասաց. հրէաներն դուրս գնացին նորանից, որ նորանք իրանց մէջն շատ վէճմունք ունէին։

30 Եւ բոլոր երկու տարի, իրան վարձքովն էլաւ ընտեղ։

31 Եւ էն ամէնին՝ որ նորա մօտ էին մտնում, ընդունում էր։

32 Աստուծոյ արքայութիւնն քարոզումէր, և Տէր Յիսուսի Քրիստոսի համար սովորցնումէր, անխափան ամէն համարձակութենով։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՑԻՑԻՍՆ։

ԳԻԼԻԽ ԱՒԱՋԻՆ։

1 Պօղոս՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ.

2 Որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սրբովք

3 Վասն որդւոյ իւրոյ եղելոյ ի զաւակէ դաւթի ըստ մարմնոյ.

4 Յայտնեցելոյ որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան. ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ.

5 Որով ընկալաք շնորհս և առաքելութիւն՝ ի հնազանդութիւն հաւատոյ յամենայն հեթանոսս վասն անուան նորա։

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ կանչված առաքեալ՝ Աստուծոյ աւետարանին համար ընտրված.

2 Նրն որ առաջուց խոստացաւ իրան մարգարէների ձեռովն սուրբ գրքերում

3 Իրան որդոյ համար՝ որ մարմնով կողմանէ դաւթի զաւակից էլաւ.

4 Եւ Աստուծոյ որդին սահմանվեցաւ զօրութեամբ՝ սրբութեան հոգւոյն կողմանէ՝ մեռելների միջից յարութեան՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի համար.

5 Որ նորանով ընդունեցինք շնորհք և առաքելութիւն՝ որ հաւատքի հնազանդութիւնն ամէն հեթանոսների մէջն հաստատվի նորա անունին համար։

6 Ցորա և դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի։

7 Ամենեցուն որոց էք ի Հռոմ, սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

8 Նախ՝ գոհանամ զԱստուծոյ իմոյ ի Յիսուսի Քրիստոսէ վասն ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ։

9 Վկայ է ինձ Աստուած, զոր պաշտեմ հոգւով իմով յաւետարանի որդւոյ նորա.

10 թէ արպէս զյիշատակ ձեր առնեմ յամենայն յաղօթս իմ ազաչելով՝ զի թերևս երբեք յաջողեսցի ինձ կամաքն Աստուծոյ գալ առ ձեզ։

11 Քանզի անձկասցեալ եմ տեսանել զձեզ, զի փոխեցից ի ձեզ շնորհս ինչ հոգևորս՝ առ ի հաստատել զձեզ.

12 Այսինքն է, մխիթարակից լինել ձեզ վասն ընդ

6 Որ նորանց միջումն դուք էք Յիսուսի Քրիստոսի կանչուած էք։

7 Ձեզ ամէնիդ՝ որ Հռոմայ էք՝ Աստուծոյ սիրելիներիդ՝ կանչուած սրբերիդ՝ շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցն և Տէր Յիսուս Քրիստոսիցն։

8 Առաջ գոհանում իմ Աստուածանիցս՝ Յիսուսի Քրիստոսի ձեռովն ձեզ ամէնիդ համար. ինչու որ՝ ձեր հաւատքդ ամէն աշխարհքի պատմըւած է։

9 Աստուած ինձ վկայ է՝ որ նորան ես պաշտումիմ իմ հոգւոյս՝ նորա որդոյ աւետարանովն՝ թէ ինչպէս ձեր յիշատակութիւն անումիմ.

10 Միշտ ժամանակ իմ աղօթքումս աղաչելով՝ որ լինի թէ մին անգամ յաջողվի ինձ՝ Աստուծոյ կամքովն ձեզ մօտ գալ։

11 Ինչու որ՝ շատ ցանկանումիմ ձեզ տեսնելոյ՝ որ միւս հոգևոր շնորհք ձեզ վերայ դարձնեմ. ձեզ հաստատելոյ համար.

12 Այսինքն՝ որ ձեզ հետ միխիթարվիմ ես իմ և ձեր հա-

միաբանոյ իմոյ և ձերդ հաւատոյ ։

13 Ո՛չ կամիմ եթէ տպէտք իսկք՝ ընդարձակ • զի բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ, և արգելեալ մինչև ցայժմ, զի և ի ձեզ գտից պտուղ ինչ որպէս և յայլ հեթանոսս։

14 Քանզի յունաց և բարբարոսաց՝ իմաստնոց և անմտից պարտապան եմ,

15 Այնպէս՝ որչափ իմով ամն, յօժարութեամբ և ձեզ՝ որ ի հռովմ էք՝ աւետարանել ։

16 Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ամենայն հաւատացելոյ • նախ հրէի՝ և ապա հեթանոսի։

17 Զի արդարութիւնն Աստուծոյ նովաւ յայտնի ի հաւատոյ ի հաւատս. որպէս և գրեալ է, թէ արդարն ի հաւատոյ կեցցէ ։

18 Քանզի յայտնեցաւ է բարկութիւն Աստուծոյ յերկնից ի վերայ ամենայն ամբարշտութեան և անիրաւութեան

ւսոտքիս համար՝ որ իրաւ հետ ունիմք ։

13 Այդ զարձ՝ չեմ կամ նուաճ որ դուք չըգիտենաք՝ թէ շատ անգամ յօժար է լայ, որ ձեզ մօտ գամ՝ և մինչև հիմիկ արգելվեցայ. որ ձեր միջումն էլ մին պտուղ գտնեմ՝ ինչպէս որ ուրիշ հեթանոսների մէջն էլ ։

14 Պատճառն որ՝ ես յունաց և բարբարոսաց իմաստուններին և անմիտներին պարտական եմ ,

15 Ինչպէս որքան որ ձեզ գալիս է՝ յօժար եմ ձեզ էլ, որ հռոմայ էք՝ աւետարանը քարոզելոյ ։

16 Ինչու որ՝ (ես) աւետարանը ամօթ չեմ համարում. պատճառն որ՝ Աստուծոյ զօրութիւն է ամէն նորանց փրկելոյ համար՝ որ հաւատումն՝ առաջ հրէային և հեթհեթանոսին ։

17 Ինչու որ՝ Աստուծոյ արդարութիւնն նորանով յայտնըվում՝ հաւատքից հաւատքի մէջ. ինչպէս որ էլ գրված է. թէ արդարն հաւատքից կապրի։

18 Պատճառն որ՝ Աստուծոյ բարկութիւնն երկնքից կըյայտնվի մարդկանց ամէն ամբարշտութեան և անիրա-

թեան մարդկան. որք զՔրիստոսաթիւնն անիրաւութիւն ։

19 Վասն զի գիտութիւն Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա ։

20 Զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի, որք արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն նորա. զի ոչ գոյանիցին ամենևին տալ պատասխանի ։

21 Զի ճանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին՝ կամ գոհացան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցաւ անմտութիւ սիրտք նոցա ։

22 Զանձինս առ իմաստուն ունէին՝ յիմարեցան։

23 Եւ փոխեցին զփառս անեղին Աստուծոյ՝ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց ։

24 Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած ի ցանկութիւն սրտից նոցա ի պղծութիւն

ւութեան վերայ՝ որ (Աստուծոյ) ճշմարտութիւնըն անիրաւութենով խափանումն ։

19 Ընդհակառակ որ՝ Աստուծոյ գիտութիւնն յայտնի է նորանցում. ինչու որ՝ հենց Աստուած յայտնեց նորանց։

20 Պատճառն որ՝ նորա աներեւոյթ բաներն. որ է՝ նորա միշտ լինելն և զօրութիւնըն և Աստուածութիւնն աշխարհքի սկզբից ստեղծուածներուս իմացվելով տեսնվելումն՝ ենպէս որ խակի չկարենան պատասխան տալ։

21 Ինչու որ՝ Աստուծոյն ճանաչելին և նորան Աստուծոյ պէս չփառաւորեցին՝ կամ շնորհակալ էլան. բայց իրանց մտածմունքներուն մէջ չքացան՝ և նորանց սրտերըն անմտութենով խաւարեցան։

22 Իրանց անձնները՝ որ իմաստուն տեղ համարուածմէին, յիմարեցան ։

23 Ու չապականելի Աստուծոյ փառքըն փոխեցին ապականելի մարդոյ և թռչուններուն և չորքոտանիներուն և սողացողներուն պատկերին նմանութեան հետ ։

24 Ընդհակառակ Աստուած նորանց մատնեց իրանց սըրտերուն ցանկութեան մէջ՝ որ

թիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս։

25 Որք փոխանակեցին զՃշմարտութիւն Աստուծոյ ընդ ստութեան. հնազանդեցան՝ և պաշտեցին զարարածս, և ոչ զարարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

26 Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ՚ի կարիս անարգութեան. զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ՚ի պէտս անբնականս։

27 Նոյնպէս և արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց ՚ի միմեանս. արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին, և զվարձս փոխարինին՝ որ պարտ էր մոլորութեան նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին։

28 Ւրպէս՝ զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ՚ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ՚ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս։

29 Ջլեցեալս ամենայն ա-

պզեվին. որ իրանց մարմինքն իրանց անձներուն խայտառակին։

25 Նորանք որ Աստուծոյ Ճշմարտութիւնը ստութեան հետ փոխեցին. հնազանդվեցան և պաշտեցին ստեղծվածներին և ոչ թէ ստեղծողին՝ որ օրհնըվածէ յաւիտեան. ամէն։

26 Նրահամար Աստուած մատնեց նորանց խայտառակ ցանկութիւններուն մէջ. որ նորանց կանայքն բնական գործածութիւնը փոխեցին անբնական գործածութեան հետ։

27 Ւնպէս ալ արձ մարդիկ կանանց բնական գործածութիւնը թողին և իրանց ցանկութիւններով իրար հետ բորբոքեցան. արձ մարդ որ մարդոյ հետ խայտառակութիւն կ՚ելլէին գործածելէ էն փոխադարձը՝ որ արժան էր իրանց մոլորութեանն՝ իրանց անձներուն ընդունելէ։

28 Ւ նրահամար որ չընտրեցին՝ Աստուածն Ճանաչել Աստուած մատնեց նորանց անարգութեան մտքի մէջ՝ որ անարժան բաներ գործեն։

29 Ւն լցվածներն ամէն ա-

նիրաւութեամբ , պողնկու-
թեամբ, անզգամութեամբ,
ապահովութեամբ , չարութիւ-
նով , լինաքանձու, սպանու-
թեամբ, հեւիւ, նենգութեամբ , չա-
րաբարութեամբ, շոգմոգք ,

30 Զարախօսք, աստուածա-
տեացք, թշնամանօղք, ամ-
բարտաւանք, մերձարհաւաճք,
գտիչք չարեաց, գծնօղս ա-
նարդաք ։

31 Անմիտք, ուխտադրուժք,
անգորոյնք, անողորմք ։

32 Որք հասեալ էին յԱս-
տուծոյ իրաւանցն վերայ , ե-
թէ ոք զայսպիսիսն գործեն՝
արժանի են մահու ։ Եւ ոչ
միայն որ զայն առնեն , այլ
եւ որ կամակիցն լինին գոր-
ծելեացն ։

նիրաւութենով , պողնկու-
թենով , անզգամութենով ,
ապահովութենով , չարութե-
նով , լինքն նախանձութենով ,
մարդասպանութենով, կռւով,
խաբեբայութենով , չարա-
սրտութենով ,

30 Քսուներ , բամբասօղ-
ներ , աստուածատօղներ ,
թշնամանք խօսօղներ , ամ-
բարտաւաններ , գոռոզներ՝
չար բաներ հնարօղներ՝ ծնօղ-
ներին անարգօղներ ։

31 Անմիտներ , խօսք չըպա-
հօղներ , անդուրեներ , ան-
մարդկներ , անողորմներ ։

32 Որ նորանք լաւ հասկա-
նումին Աստուծոյ իրաւունք .
նորքն՝ թէ նորանք որ էսպէ-
սի բաներ գործումեն՝ մահվի
արժանաւոր են՝ եւ ոչ թէ
միանակնորանք, որ էս անումեն,
բայց նորանք էլ՝ որ էն գոր-
ծօղներին կամակից են լի-
նում ։

ԳԼ· Բ ։

1 Ա ման որոյ առանց պա-
տասխանի տալոյ ես՝ ով մարդ,
որ դատիդ · վի որով դա-
տիս զընկերն, զանձն քո դա-
տապարտես , վի դու զնոյն

1 Ղրահամար դու առանց
պատասխան տալոյ ես՝ ով
մարդ, որ (ուրիշի) դատումես·
պատճառն որ՝ ինչ բանով
որ քո ընկերիդ դատումես՝

գործես՝ որով դատիսն ։

2 Քանզի դիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է՝ ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն ։

3 Իսկ արդ՝ խորհիլ՞ս զայս՝ ով մարդ, որ դատիս զայնսոսիկ՝ որ զայնպիսիսն գործեն՝ և դու զնոյնն գործես, եթէ դու սպրիլըդ ի յես՝ ի դատաստանայ անտի Աստուծոյ ։

4 Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա, և երկայնմտութեամբն արհամարհիցես. չգիտեյո՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ ։

5 Այլ ըստ խստութեան քում, և ըստ անզղջ սրտի՝ գանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան և յայտնութեան արդար դատաւորութեանն Աստուծոյ ։

6 Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց ։

նորանով քո անձըդ դատապարտութեան. ինչու որ՝ դու էլ հենց էն բաներն ես գործում՝ որ նորանով դատուես ։

2 Պատճառն որ՝ գիտենք մենք թէ Աստուծոյ դատաստանն շիտակ է նորանց վերայ, որ էնպէսի բաներ են գործում ։

3 Հապա՝ ով մարդ, որ դատուես նորանց՝ որ էսպէսի բաներ են գործում և դու հենց էն ես գործում՝ միթէ կարծո՞ւես, թէ դու պրծում կըմնաս Աստուծոյ դատաստանից ։

4 Միթէ նորա քաղցրութեան մեծութիւնըն և նրբելըն և երկայնամտութիւնըն ոչ ինչ կըհամարես. միթէ չի՞ս գիտում, որ Աստուծոյ քաղցրութիւնն քեզ դէպի ապաշխարութիւնն է տանում ։

5 Հապա դու քո խստութենովդ և անզղջ սրտովդ բարկութիւն ես կիտում քո անձիդ համար՝ բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրուայն ։

6 Նա որ ամէն մէկին ի-րանց գործքերին պէս հատուցումըն կըտայ ։

7 Որ համբերութեամբ են ի գործս բարութեան՝ զփառս և զփառիս և զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտենից ։

8 Իսկ որ ի հակառակութենէ անտի են՝ և ապստամբք ի ճշմարտութենէն և զկետ երթեալ զանիրաւութեան, բարկութիւն և սրտմտութիւն՝

9 Նեղութիւն և անձկութիւն ի վերայ ամենայն մարդոյ՝ որ գործէ զչար ։ նախ հրէի՝ և ապա հեթանոսի ։

10 փառք, պատիւ և խաղաղութիւն ամենայնի՝ որ գործէ զբարի ։ նախ հրէի՝ և ապա հեթանոսի ։

11 Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ ։

12 Որք միանգամ առանց օրինացն մեղան, առանց օրինացն կորնչին ։ և որք ընդ օրինաւքն մեղան, օրինաւքն դատեսցին ։

13 Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացք արդարասցին ։

7 Նորանոյ որ համբերութենով բարի գործքերի մէջ կայած են և փառք և պատիւ և չսպականելի բաներ են ուզում, յաւիտենական կեանքըն ։

8 Բայց նորանոյ որ հակառակող են և ճշմարտութենին նոյն ապստամբված՝ և անիրաւութեան եաևէն պնդացած՝ բարկութիւն և սրտմտութիւն՝

9 Նեղութիւն և վիշտք են ամէն մարդոյ վերայ ։ որ չարութիւն կ գործում, առաջ հրէային և յետոյ հեթանոսին ։

10 Փառք և պատիւ և խաղաղութիւն կ ամէնին վերայ՝ որ բարի կ գործում, առաջ հրէային և յետոյ հեթանոսին ։

11 Ինչու որ՝ Աստուծոյ մօտ երեսպաշտութիւն չկայ ։

12 Նորանք՝ որ օրէնքէյն դուրս մեղք գործեցին, էլ օրէնքէյն դուրս կկորչին ։ և նորանք՝ որ օրէնքի տակն (ներքև) մեղք գործեցին, օրէնքով կդատվին ։

13 Պատճառն որ՝ չէ թէ նորանք՝ որ օրէնք լսող են, Աստուծոյ առաջին արդար են՝ բայց օրէնք կատարողներն կարդարանան ։

14 Ա՛յլ յորժամ հեթա-
նոսք՝ որ զօրէնս ո՛չ ունին,
բնութեամբ զօրինայն գոր-
ծիցեն, նոքա՝ որ զօրէնսն ո՛չ
ունին՝ անձանց իւրեանց իսկ
են օրէնք։

15 Որք ցուցանեն զգործս
օրինացն գրեալ՝ ի սիրտս իւ-
րեանց՝ վկայութեամբ մտաց
իւրեանց, և յանդիմանել
զմիմեանս՝ ի խորհրդոց իւ-
րեանց, կամ թէ պատաս-
խանի իսկ տալ,

16 Ցաւուրն յորում դատիցի
Աստուած զգաղտնիս մարդ-
կան՝ ըստ աւետարանիս իմոյ,
՝ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի։

17 Ա՛պա եթէ դու հրէայ
անուանեալ ես, և յեցեալ
ես յօրէնսն՝ և պարծիս Աս-
տուած,

18 ԵՒ գիտես զկամս նորա,
և ընտրես զլաւն, և խրա-
տեալ ես յօրինացն.

19 Վստահ ես յանձն քո
առաջնորդ լինել կուրաց՝
լոյս խաւարելոց,

20 Խրատիչ անզգամաց՝
վարդապետ տղայոց. ունել
զկերպարանս գիտութեան և

14 Որովհետև հեթանոսները՝
որ օրէնքը չունին՝ երբոր
բնութենով օրէնքի գործքե-
րըն անեն. նորանք որ օրէն-
քըն չունին, իրանց անձնե-
րին համար հենց իրանք են
օրէնք։

15 Որ ցոյց են տալիս, թէ
օրէնքի գործքն նորանց սրտե-
րումն գրված է՝ որ նորանց
միտքն էլ վկայումէ և նորանց
մտածմունքներն իրար յան-
դիմանումեն. կամ թէ պա-
տասխան են տալիս,

16 Յն օրն որ Աստուած
մարդկանց ծածուկ բաներըն
կըդատէ՝ իմ աւետարանիս
պէս Ցիսուսի Քրիստոսի
ձեռովն։

17 Ա՛պա դու՝ որ հրէայ ա-
նուանվաճ ես և օրէնքին վե-
րայ յոյս ես դնում և Աս-
տուածով պարծենումես.

18 Յն նորա կամքըն գի-
տումես և ճն որ լաւն է ընտ-
րումես, և օրէնքիցն խրատ-
ված ես.

19 Քո անձիդ վերայ վստա-
հումելուն ունիս՝ որ կուրերի
առաջնորդ լինիս և խաւար-
վածների լոյս.

20 Անմիտների խրատ տը-
ուղ՝ տղաների վարդապետ՝
որ օրէնքի գիտութեան և

Ճշմարտութեան օրինացն։

21 Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգողանալ՝ գողանաս.

22 Որ ասես չշնալ՝ շնաս. որ գարշես ի մեհենայ՝ սրբզանս կողոպտես.

23 Որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես։

24 Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց՝ որպէս և գրեալ է։

25 Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, թլփատութիւն քո անթլփատութիւն եղև։

26 Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ. ոչ ապաքէն անթլփատութիւն նորա ի թլփատութիւն համարեսցի.

27 Եւ դատիցի՝ որ ի բնէ անթլփատութիւն՝ զօրէնսն

Ճշմարտութեան (դըլսի) կերպարանքըն ունենաս։

21 Ուրեմն դու՝ որ քո ընկերիդ սովորցնուս, քո անձիդ չես սովորցնում. դու որ քարոզուս՝ թէ չըգողանան, գողանում ես.

22 Որ ասուս՝ թէ շնուլիւն չըգործեն՝ շնուլիւն ես գործում. դու որ կըռեքերիցն գարշուս՝ սեղանները ես թալանում.

23 Դու՝ որ օրէնքովն պարծենուս, օրէնքին դէմ գործելով Աստուծոյն անարգուս։

24 Ինչու որ՝ Աստուծոյ անունն ձեր պատճառովն հայհոյվում հեթանոսների միջում. ինչպէս որ էլ գըրված է։

25 Թլփատութիւնն շահաւոր է՝ թէ որ օրէնքըն պահես. ապա թէ որ օրէնքին դէմ գործես՝ քո թլփատութիւնդ անթլփատութիւն է։

26 Հայդ թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքները պահէ՝ չէ՞ որ նորա անթլփատութիւնն՝ թլփատութիւն կըհամարվի։

27 Եւ էն որ բնուն անթլփատութիւն է՝ օրէնքըն կա-

կատարելով՝ գթել, որ գրովն և թլփատութեամբն յանցաւոր օրինացն իցես։

28 Զի ոչ եթէ՝ որ յայտնի հրէայն է, և ոչ որ յայտնի մարմնով թլփի սատուածն.

[29 Այլ որ ի ծածուկ հրէայն է, և թլփատութիւն սրտի հոգւով՝ և ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ ի մարդկանէ է, այլ Աստուծոյ։

ԳԼ. Գ։

1 Խակ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին, կամ զի՞նչ օգուտ ի թլփատութենէ անաի։

2 Բազում ինչ ամենայն իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ։

3 Իսկ արդ՝ եթէ չիք հաւատայեալ ոմանց՝ միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատան խափանէ՞ր։

4 Ասդ՝ եղիցի Աստուած ճշմարիտ՝ և ամենայն մարդ սուտ. որպէս և գրեալ է. որպէս արդար եղիցիս ի

տարեալով կըդատէ քեզ, որ գրով և թլփատութեամբ օրէնքի դէմ գործող ես։

28 Պատճառն որ՝ ոչ թէ նա է հրէայ՝ որ դրսի է, և ոչ թէ է թլփատութիւն՝ որ մարմնով դրսի երևութով է.

29 Հապա նա՝ որ ներսինդ ծածուկ հրէայ է, և սրտի թլփատութիւնն հոգովն՝ և ոչ թէ գրով. որ նորա գովասանքն ոչ թէ մարդկանից է, այլ Աստուածմանից։

Գ։

1 Ապա ուրեմն՝ հրէան ի՞նչ աւելի բան ունի՝ կամ էն թլփատութենից ի՞նչ օգուտ է գալիս։

2 Շատ բաներ՝ ամէն կողմանէ. առաջ հէնց էն՝ որ Աստուծոյ տալածները նորանց հաւատացուեցան։

3 Հապա ի՞նչ է. թէ որ մին քանիսն չըհաւատացին՝ միթէ նորանց անհաւատութիւնն Աստուծոյ հաւատքըն կըխափանէ. քաւ լիցի։

4 Ընդեմն թող Աստուած ճշմարիտ լինի և ամէն մարդ սուտ. ինչպէս որ էլ գրված է նրահամար՝ որ արդար լի-

բանս քո, և յայլեհասցես ՚ի դատել քեզ։

5 Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւն մեր զԱստուծոյ արդարութիւն յանդիմանի կայուցանէ՝ զի՞նչ ասեմք. միթէ անիրաւ իցէ Աստուած՝ որ ածէ զբարկութիւն.

6 Ըստ մարդկութեան ասեմ. քանզի լինի՞ ոչ՝ զիարդ դատի Աստուած զաշխարհ։

7 Զի եթէ ճշմարտութիւն Աստուծոյ յիմում ստութեանն առաւելաւ ՚ի փառս նորա, զի՞ և ես իբրև զմեղաւոր դատիմ։

8 Եւ կամ (թէ՝ որպէս հայհոյիմք, և որպէս ասեն զմեզ ոմանք ասել, թէ արասցուք զչարս՝ զի եկեսցէ բարի. որոց դատաստանքն յիրաւի են։

9 Եւ արդ՝ զի՞ւ իւիք առաւել եցեմք. ապաքէն և ոչ իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեալ հրէից և հեթանոսաց՝ ամենայնոցն ընդ մեղս լինելոյ։

10 Որպէս և գրեալ է. թէ ոչ ոք է արդար՝ և ոչ մի։

նմա քո խօսքերումդ և յաղթեսցես՝ երբեմն դատիլս։

5 Իսկ եթէ որ մեր անիրաւութիւնն՝ Աստուծոյ արդարութիւնըն յայտնի և լուսաւորէ, էլ ի՞նչ ասենք. միթէ անիրաւ է Աստուած՝ որ բարկութիւն է թափում.

6 Մարդոյ կերպով եմ ասում. քանզի լինի՞ ասա եթէ չէ՝ Աստուած ի՞նչպէս կը դատէ աշխարհքըս։

7 Ինչու որ՝ եթէ Աստուծոյ ճշմարտութիւնն իմ սուտութենովս աւելացաւ նորա փառքին համար՝ էլ ինչո՞ւ ես մեղաւորի պէս կըդատավիմ։

8 Եւ կամ (եթէ՝ ինչպէս որ մենք հայհոյվումենք և ինչպէս որ մին քանիսն ասումեն մեզ համար՝ որ ասացինք. եթէ չար գործենք՝ որ բարին գայ. որ նորանց դատաստանն ուղղորդ է։

9 Եւ հիմի՞ ի՞նչ բանով աւելի ենք. իրա ի որ՝ իսկի մին բանով չէ. պատճառն որ՝ առաջ մեղադրեցինք հրէաներին և հեթանոսներին՝ որ ամենքն մեղքի տակն են։

10 Ինչպէս որ էլ գրված է՝ եթէ արդար չըկայ՝ իսկի մինն էլ չէ։

11 Եւ ո՛չ գոյ որ իմանայ, եւ ո՛չ ոք է՝ որ խնդրէ զԱստուած։

12 Ամենեքեան խոտորեցան, ՚ի միասին անպիտանացան. ո՛չ ոք է՝ որ առնէ զբարեգործութիւն, եւ ո՛չ ոք է մինչեւ ՚ի մի։

13 Գերեզման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն, թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա։

14 Որոց բերանք անիծից եւ դառնութեամբ լի են։

15 Իրագ են ոտք նոցա հեղուլ զարիւն։

16 Ռեհուծին եւ թշուառութիւն ՚ի ճանապարհս նոցա։

17 Եւ զճանապարհն խաղաղութեան ո՛չ ծանեան։

18 Ո՛չ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա։

19 Հայր գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասեն՝ այնոցիկ՝ որ ընդ օրինօքն են ասեն. զի ամենայն բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ։

20 Զի ՚ի գործոց օրինացն

11 Եւ ո՛չ ով չըկայ որ իմանայ, եւ ո՛չ ով չըկայ որ Աստուծոյն խնդրէ։

12 Ամէնքն ճանապարհէն դուրս գնացին եւ անպիտան ելան՝ ո՛չ ով չըկայ որ քաղցրութիւն անէ. ո՛չ ով չըկայ մինչեւ մինն էլ չըկայ։

13 Նորանց կոկորդն (պղաղն) բաց գերեզման է՝ եւ իրանց լեզուներովն խաբեբայութիւն են անում. (իժ) օձերի թոյնն նորանց սուսնկրի տակն է։

14 Նորանց բերանն անէծքով եւ դառնութեամբ լիքն է։

15 Նորանց ոտներն շուտափնայ են արիւն թափելոյ համար։

16 Կորուստ եւ խեղճութիւն է նորանց ճանապարհներումն։

17 Եւ խաղաղութեան ճանապարհն չըճանաչեցին։

18 Աստուծոյ վախն նորանց աչքերի առաջին չէ։

19 Հայր գիտեմք՝ թէ ամէն ինչ որ օրէնքն ասէ՝ նորանց է ասում, որ օրէնքի տակն են. որ ամէն բերան խըփվի, եւ ամէն աշխարհ Աստուծոյ առաջին դատապարտելի լինի։

20 Պատճառն որ՝ օրէնքի

ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա . քանզի օրինաքն է գիտութիւն մեղաց ։

21 Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինացն անտի՝ և ի մարգարէից ։

22 Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոյ անտի Յիսուսի Քրիստոսի յամենայն հաւատացեալս . և ոչ ինչ է խտիր ։

23 Քանզի ամենեքեան մեղան . և նուազեալ են ի փառաց անտի Աստուծոյ ։

24 Եւ արդարանան ձրի նորին շնորհօք ի ձեռն փրկութեան որ ի Քրիստոս Յիսուս ։

25 Զոր յառաջն եդ Աստուած ի քաւութիւն ի ձեռն հաւատոյ արեամբն նորա , ի հանդէս արդարութեան նորա վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոյ ։

26 ի ներելն Աստուծոյ՝ ի հանդէս արդարութեան նորա ի ժամանակի յայսմիկ. զի եղիցի նա արդար , և արդարացուսցէ զայն՝ որ ի գործս օրինացն իսկ մի մարմին չի արդարանայ նորա առաջի . ինչու որ՝ օրէնքաւն մեղքի գիտութիւն է լինուա ։

21 Բայց հիմիկ՝ հանդերձ առանց օրէնքին Աստուծոյ արդարութիւնն յայտնըլուած է՝ էն որ օրէնքիցն և մարգարէներիցն վկայած է ։

22 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնն ճշմարիտ Քրիստոսի հաւատքիցն էն ամէնին վերայ է գալիս՝ որ հաւատում են . և իսկի զոկութիւն չըկայ ։

23 Ընդհամար որ՝ ամէնքն մեղանչեցին և Աստուծոյ փառքիցն պակասեցան ։

24 Եւ ձրի (ընդ-քաւ) արդարանում էն նորա շնորհքովն՝ էն փրկութեան ձեռովն՝ որ Յիսուս Քրիստոսումն էլաւ ։

25 Որ Աստուած նորան առաջ դրաւ՝ քաւութիւն լինելոյ համար նորա արիւնովն հաւատքի ձեռովն . որ իրան արդարութիւնըն ցոյց տայ՝ էն առաջուց գործուած մեղքերի թողութեան համար ։

26 Իրըզոր Աստուած նորա՝ որ իրան արդարութիւնըն երևացնէ էս ժամանակումս . որ ինքն արդար լինի և արդարացնէ նորան

Հաւատոյն Յիսուսի :

27 Իսկ արդ՝ ոյր են պարտանքն . արգելեան, յորոյ օրինաց , ՚ի գործոց անտի . ոչ , այլ ՚ի հաւատոյն օրինաց :

28 Քանզի համարիմք հաւատով արդարանալ մարդ՝ առանց գործոց օրինաց :

29 Միթէ հրէից միայն իցէ Աստուած՝ և հեթանոսաց ոչ . այո՝ և հեթանոսաց :

30 Զի եթէ մի է Աստուած՝ որ արդարացուցանէ ըլթիատուքիւնն ՚ի հաւատոց, ապա և զանթլփատութիւն նովին հաւատով:

31 Արդ՝ զօրէնսն ինչ խափանի՞մք հաւատովքս . քաւ լիցի· այլ զօրէնսն հաստատեմք :

որ Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն է :

27 Ուրեմն հիմիկ ոչտեղ ծայ պարծանքն . խափանվեցաւ . ոչ օրէնքով . միթէ գործքերի՞ օրէնքովն· չէ . այլ հաւատքի օրէնքովն :

28 Պատճառն որ՝ համարուեմնք, որ մարդն հաւատքով արդարանուեմ առանց օրէնքի գործքերին :

29 Միթէ Աստուած մենակ հրէաներին է և հեթանոսներին չէ· հա՝ հեթանոսներին էլ է :

30 Պատճառն որ՝ մին Աստուած է՝ որ թլփատութիւնըն հաւատքիցն արդարացնուեմ՝ և ապա անթլփատութիւնըն էլ հենց են հաւատքովն :

31 Ապա միթէ օրէնքըն խափանուե՞նք հաւատքով· քաւ լիցի· բայց օրէնքըն հաստատուեմնք :

ԳԼ : Դ :

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք զգտանելն աբրահամու նահապետին մերոյ ըստ մարմնոյ :

2 Զի եթէ աբրահամու գործովք էր արդարացեալ՝ ունէր պարծանս՝ այլ ոչ

1 Ապա ի՞նչ ասենք՝ են որ մեր նահապետ աբրահամն գտաւ մարմնոյ կողմանէ :

2 Ինչու որ՝ եթէ աբրահամն գործքերովն արդարացաճ լինէր՝ իրաւի որ պար-

առ Աստուած ։

3 Իսկ զի՞նչ ասիցէ դիր. Հաւատաց Աբրահամ Աստուած՝ և համարեցաւ նմա յարդարութիւն .

4 Հայց այնմ՝ որ գործէ, ոչ համարին վարձքն ըստ շնորհաց՝ այլ ըստ պարտեաց ։

5 Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն, որ արդարացուցանէ զամբարիշտն, համարին հաւատք նորա յարդարութիւն ։

6 Որպէս և Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ. որում Աստուած համարի արդարութիւն առանց գործոց։

7 Երանի որոց թողան անօրէնութիւնք, և որոց ծածկեցան մեղք իւրեանց ։

8 Երանեալ է այր՝ որում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա ։

9 Արդ՝ երանութիւնս այս ՚ի վերայ թլփատութեան է, եթէ ՚ի վերայ անթլփատութեան. քանզի ասեմք՝ եթէ համարեցան Աբրահամու հաւատքն յարդարութիւն ։

10 Զիա՞րդ ուրեմն համարեցան, ՚ի թլփատութեան՞ թէ ՚ի անթլփատութեան. ոչ ՚ի թլփատութեան, այլ ՚ի անթլփատութեան ։

11 Եւ նշան ընկալաւ թլփատութեան, կնիք արդարութեան հաւատոյն՝ որ էր ՚ի անթլփատութեան, զի լիցի հայր ամենայնի հաւատացելոց ՚ի անթլփատութեան, զի համարեսցի և նոցա յարդարութիւն ։

12 Եւ հայր թլփատութեան ոչ միայն նոցա որ ՚ի թլփատութենէ են, այլ և նոցա որ հետեւին հետքս հաւատոյ հարցն մերոց որ էին ՚ի անթլփատութեան ։

13 Ոչ ՚ի պատուիրանացն օրինացն տուեալ է խոստումն Աբրահամու կամ սերմանն նորա՝ եթէ ինքն ժառանգ լիցի աշխարհի, այլ ՚ի հաւատոյ արդարութեան ։

14 Զի եթէ որ ՚ի պատուիրանացն օրինացն են ժառանգք, ունայնացաւ հաւատն, և դատարկեցաւ խոստումն ։

15 Զի օրէնքն զբարկութիւն գործեն. զի ուր ոչ է օրէնք, ոչ է և յանցանք ։

16 Վասն այսորիկ ՚ի հաւատոյ է, զի ըստ շնորհաց լիցի հաստատուն խոստումն ամենայն սերմանն, ոչ միայն որ ՚ի պատուիրանացն օրինացն է, այլ և որ ՚ի հաւատոյ Աբրահամու, որ է հայր ամենեցուն մերոց ։

17 Որպէս գրեալ է՝ զի հայր բազմաց ազգաց դրի զքեզ առաջի Աստուծոյ, որում հաւատացեր, որ կենդանացուցանէ զմեռեալս, և կոչէ զոչ եղեալսն իբրև զեղեալսն ։

18 Որ ՚ի յոյս հաւատաց ՚ի յոյս, զի լիցի հայր բազմաց ազգաց, ըստ ասելոյն՝ թէ այսպէս լիցի սերմանդ քո ։

19 Եւ ոչ տկարացաւ հաւատովն, ոչ ետես զմարմինն իւր մեռեալ, որ էր հարիւրամեայ, և զպատուականութիւն արգանդոյ Սառայի ։

20 Ոչ ՚ի տկարանալ հաւատոյ տատանեցաւ ՚ի խոստումն Աստուծոյ, այլ զօրացաւ հաւատովն, տուեալ փառս Աստուծոյ ։

21 Եւ ամենայնիւ գիտացեալ, զի զոր խոստացաւ Աստուած՝ զօրէ և առնել ։

22 Վասն այսորիկ համարեցաւ նմա յարդարութիւն ։

23 Ոչ միայն վասն նորա գրեցաւ թէ համարեցաւ նմա, այլ և վասն մեր ։

24 Զի մեզ համարելոց է՝ որ հաւատամք ՚ի յարուցեալն ՚ի մեռելոց զՏէր մեր Յիսուս Քրիստոս ։

25 Որ մատնեցաւ վասն մեղաց մերոց, և յարուցեալ է վասն արդարացուցանելոյ զմեզ ։

5 Արդարացեալ ՚ի հաւատոյ՝ խաղաղութիւն ունիցիմք առ Աստուած ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ։

2 Որով և մուտք ունիցիմք հաւատովք յշնորհս զայս, յորում կայաք, և պարծիմք յուսով փառացն Աստուծոյ ։

3 Ոչ միայն այլ և պարծիմք ՚ի նեղութիւնս, գիտացեալ զի նեղութիւն համբերութիւն գործէ ։

4 Համբերութիւն՝ փորձ, փորձ՝ յոյս ։

5 Յոյս՝ ոչ ամաչեցուցանէ, զի սէր Աստուծոյ տարածեալ է ՚ի սիրտս մեր Հոգւովն սրբով, որ տուեալ է մեզ ։

6 Զի Քրիստոս յորժամ տկարք էաք, ըստ ժամանակի ՚ի վերայ անաստուածոց մեռաւ ։

7 Զի արդարոյ վասն մեռանել ոք գտանի հազիւ, զի վասն բարւոյ գուցէ և մեռանել ոք համարձակեսցի ։

8 Բայց գիւրքն ինչ է աստուած, զի Աբրահամի հաւատոյ Աստուածն, և արդարութիւն համարիցաւ նորան ։

9 Բայց նորան՝ որ գործք է անուամ վարձք չեն համարիւմ շնորհքի տեղ, բայց պարտքի տեղ ։

10 Բայց նորան՝ որ գործք չանէ բայց հաւատայ նորան՝ որ ամբարիշտներըն արդարացնուն՝ նորա հաւատքն համարիւմ արդարութեան տեղ ։

11 Ինչպէս որ Դաւիթն էլ երանելի է ասում էն մարդոյն՝ որ Աստուած նորան արդարութիւն է համարում առանց գործքերի ։

12 Երանի նորանց՝ որ նորանց անօրէնութիւններն թողվան և նորանց մեղքերն ծածկվեցան ։

13 Երանի է էն մարդն՝ որ նորան Տէրն չի համարիլ նորա մեղքերըն ։

14 Ասա էս երանութիւնս միթէ թլփատութեան վերայ է կամ անթլփատութեան վերայ. ինչու որ՝ ասումենք՝ թէ Աբրահամի հաւատքն արդարութիւն համարվեցաւ(նորան) ։

10 Ընդ միւթրդ համարեցան. մինչդեռ ի թլփատութեանն էր՝ եթէ յանթլփատութեան. ոչ ի թլփատութեան, այլ յանթլփատութեան։

10 Ապա ինչպէս համարեցաւ. երբոր թլփատութենովն էր՝ թէ դեռ անթլփատութենուն էր. ոչ թէ թլփատութենուն քայց անթլփատութեան ժամանակուն։

11 Եւ նշանակ առ զթլփատութիւնն, կնիք արդարութեան հաւատոյն՝ որ յանթլփատութենէ անտի։

11 Եւ թլփատութիւնը նշանի տեղ առաւ՝ որ էն հաւատքի արդարութեան կնիք (ֆօհր) լինի որ անթլփատութենուն ունէր։

12 Զի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց, որ յանթլփատութենէ անտի իցեն. առ ի համարելոյ և նոցա արդարութիւն՝ և հայր թլփատութեան՝ որոց ոչ ի թլփատութենէ անտի և եթէ, այլև որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հաւատոյ հօր մերոյ Աբրահամու։

12 Որ նա հայր լինի էնամէն հաւատացեալներին՝ որ անթլփատութենիցն են՝ որ նորանց էլ համարվի արդարութիւնն. և էլ թլփատութեան հայր՝ չէ թէ միայն բանց՝ որ թլփատութենիցն են, քայց նորանց էլ՝ որ էն հաւատքի ճանապարհուն են պնուամ, որ մեր հայր Աբրահամն անթլփատութենուն ունէր։

13 Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու՝ և զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի, այլ ի հաւատոյն արդարութենէ։

13 Պատճառն որ՝ ոչ թէ օրէնքովն էլան Աբրահամին և նորա զաւակին էն աւետիքն որ աշխարհքի ժառանգ լինին՝ քայց հաւատքի արդարութենիցն։

14 Զի եթէ որք յօրինացն են, ժառանգ իցեն. ապա ընդունայն են հաւատքն՝ և դատարկ աւետիքն։

14 Ինչու որ՝ եթէ նորանք՝ որ օրէնքիցն են, ժառանգ լինէին՝ ապա հաւատքն էր և աւետիքն դադարկ։

15 Քանզի օրէնքն զբար-
կութիւն գործեն. բայց ուր
չ՚են օրէնք՝ և չ՚է յանցանք
ինչ։

16 Վասն այնորիկ՝ ի հա-
ւատոյ անտի, զի ըստ շնոր-
հայն իւրէ. առ՝ի լինելոյ
հաստատուն աւետեացն ա-
մենայն զաւակին. չ՚ոչ այնմ
միայն՝ որ յօրինաց անտի, այլ
և այնմ՝ որ՝ի հաւատոյն աբ-
րահամայ, որ է հայր մեր ա-
մենեցուն։

17 Որպէս և գրեալ է, թէ
հայր ազգաց բազմաց տա-
րից զքեզ առաջի Աստուծոյ.
որում հաւատաց՝ եթէ կեն-
դանի առնէ զմեռեալս, և կոչէ
զչգոյն իբրև զգոյ։

18 Որ յանյոյսն յուսով հա-
ւատոյ լինել նմա հայր ազ-
գաց բազմաց. որպէս և ա-
սացաւն, թէ այնպէս եղիցի
զաւակ քո։

19 Եւ նա չ՚երկմտեաց՝ի
հաւատոյն. թէպէտ և հա-
յեցաւ՝ի մարմին իւր այնու-
հետև իբրև՝ի մեռեալ. քան-
զի գհասարեալմանիւք ուրեմն
էր. և՝ի մեռելութիւն յար-
գանդին սառոյի։

15 Պատճառն որ օրէնքն
բարկութիւն է գործում.
բայց որտեղ որ օրէնք չկայ՝
հետևող էլ օրէնքի դէմ մեղք
չկայ։

16 Աբրահամար հաւատքիցն
է՝ որ շնորհքովն լինի. որ ա-
ւետիքն հաստատ լինի ամէն
զաւակին համար. ոչ թէ
մենակ նորա համար, որ օրէն-
քիցն է՝ բայց էլ նորա հա-
մար՝ որ աբրահամի հաւատ-
քիցն է. որ նա մեր ամէնիս
հայրն է։

17 Ինչպէս որ էլ գրված
է, թէ շատ ազգերի հայր
կանեմ քեզ՝ Աստուծոյ ա-
ռաջին. որ նա հաւատաց
նորան՝ թէ մեռելներըն կեն-
դանի է անում՝ և չլինող
բանըն լինողին պէս է կան-
չում։

18 Որ չըյուսալու բանի
մէջն յուսով հաւատաց՝ որ
նա շատ ազգերի հայր լինի.
ինչպէս որ էլ ասվեցաւ՝ թէ
հետևը պիտի լինի քո զաւակդ։

19 Եւ նա չերկմտեցաւ հա-
ւատքիցն՝ թէ և իրան մար-
մինըն այնուհետև մեռածի
պէս տեսաւ. ինչուն որ հա-
րիւր տարեկանի չափ էր՝ և
սառոյի փորըն էլ մեռած։

20 Բայց Աստուծոյ աւետիքին համար երկմտեցաւ անհաւատութենով՝ քայց հաւատքով զօրացաւ, (և) Աստուծոյ փառք տուաւ։

21 Եւ լրան մտքումն հաստատ դրաւ՝ թէ ինչ՝ որ նա խոստացաւ, կարող է անել։

22 Ընդհամար՝ արդարութիւն համարվեցաւ նորան։

23 Բայց ինչ՝ որ գրվեցաւ՝ ոչ թէ միայնակ նորա համար է՝ թէ նորան համարվեցաւ արդարութիւն։

24 Բայց մեզ համար էլ՝ որ մեզ պիտի համարվի. որ մենք հաւատանք նորան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարոյց մեռելներից։

25 Որ նա մատնվեցաւ մեր մեղայ համար՝ և յարութիւն առաւ մեզ արդարացնելոյ համար։

ԳԼ. Ե։

1 Արեմն մենք՝ որ հաւատքովն արդարացած ենք, Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովն։

2 Որ նորանով էլ ընդունեցինք հաւատքով մտնելըն էս շնորհքիս մէջ՝ որ նորա-

20 Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ. այլ զօրացաւ հաւատովք, տալ փառս Աստուծոյ։

21 Եւ հաստատեցաւ ի միտս իւր, եթէ որ խոստացաւն՝ կարօղ է առնել։

22 Վասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն։

23 Ոչ զի գրեցաւն, ոչ եթէ վասն նորա միայն՝ եթէ համարեցաւ նմա։

24 Այլ և վասն մեր՝ որոց համարիլոց է. որք հաւատամք յայն՝ որ յարոյց զՅիսուս զՏէր մեր ի մեռելոց։

25 Որ մատնեցաւ վասն յանցանացն մերոց. և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։

ԳԼ. Ե։

1 Այսուհետև արդարացեալք ի հաւատոյ անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

2 Որով և զբնդունայութիւն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք.

և պարծիմք յուսով փառաց
ըն Աստուծոյ։

3 Եւ ոչ այսչափ միայն,
այլ և պարծիմք ևս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք
զհամբերութիւն գործեն։

4 Համբերութիւն՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս։

5 Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր,
ի ձեռն հոգւոյն սրբոյ՝ որ
տուաւ մեզ։

6 Զի մինչդեռ տկարքն
եաք՝ Քրիստոս վասն մեր ի
ժամանակի ի վերայ ամբարշտաց մեռաւ։

7 Զի վասն արդարոյ հազիւ ոք մեռանիցի. այլ վասն
բարւոյ թերևս համարձակիցի ոք մեռանել։

8 Յայտնեաց Աստուած
զսէրն իւր ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք,

9 Քրիստոս վասն մեր մեռաւ. ոչ՝ արդ առաւել
յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա՝ ապրեսնում կացած ենք՝ և Աստուծոյ վառաց յուսոյն պարծեմք։

3 Եւ ոչ թէ միայնակ եսքեա՛ք՝ այլ մեր նեղութիւներին համար էլ պարծենումք. ինչու որ՝ գիտումենք,
որ նեղութիւնները համբերութիւն են գործում։

4 Համբերութիւնն՝ վարժութիւն, վարժութի՛ն՝ յոյս։

5 Յոյսն իսկի մին ժամանակ չի ամաչեցնում. պատճառն որ՝ Աստուծոյ սէրն
փռված է մեր սրտերի մէջ
սուրբ հոգոյ ձեռովն՝ որ տրվաւ մեզ։

6 Ինչու որ՝ երբոր մենք
դեռ տկար էինք՝ Քրիստոս
մեզ համար իրան ժամանակումն ամբարիշտներին վերայ
մեռաւ։

7 Ապա դժուար կըլինի՝
որ մին արդարի համար մինն
մեռնի. բայց մին բարի մարդոյ համար կըլինի, որ մինն
համարձակվի մեռնել։

8 Աստուած իրան սէրըն
մեզ վերայ յայտնեց՝ որ երբոր մենք դեռ մեղաւոր էինք,

9 Քրիստոս մեզ համար մեռաւ. ապա ո՛րքան աւելի հիմիկ՝ որ արդարացանք նորա
արիւնովն՝ կըփրկվինք նորա-

յուք նոքաւ ՚ի բարկութենէ անտի ։

10 Զի եթէ մինչ լինիք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա՝ ողջասի եւս առաւել ՚ի հաշտեալս մերում՝ ապրեսցուք կենօքն նորա ։

11 Եւ ոչ այսչափ միայն, այլև պարծիմք եւս ՅԱՍՈՒԱԾ ՚ի Տեառն մերոյ Յիսուսէ Քրիստոսէ, որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք ։

12 Զի որպէս ՚ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և ՚ի մեղսոյ անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան ։

13 Քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի. բայց մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ լինին ։

14 Այլ թագաւորեաց մահ յադամայ մինչև յմովսէս՝ և ՚ի վերայ չանցուցեալսդ, ըստ նմանութեան յանցաւածոյն Ադամայ. որ է օրինակ հանդերձելոյն ։

15 Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք նոքա էն բարկութենէյն ։

10 Պատճառն որ՝ եթէ դեռ որ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք նորա որդւոյ մահովն՝ որքան աւելի եւ՝ որ հաշտուած ենք, կապրինք նորա կեանքովն ։

11 Եւ ոչ միայն մինակ էս չափ՝ բայց Աստուծով եւ պարծենումնք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն՝ որ հիմի նորանով հաշտութիւնըն ընդունեցինք ։

12 Պատճառն որ՝ ինչպէս որ միս մարդոյ ձեռովն մեղքն մտաւ աշխարհքս և էն մեղքովն եւ մահն. և էնպէս մահն ամէն մարդկանց վրայ փուվեցաւ. որովհետև ամէնքն մեղանչեցին ։

13 Ինչու որ՝ մինչև օրէնքն, մեղք կար աշխարհքումն՝ բայց մեղքն չի համարվում որտեղ որ օրէնք չըկայ ։

14 Բայց մահն թագաւորեց ադամիցն մինչև մօսէսն նորանց վերայ եւ՝ որ ադամի մեղքին նման չըմեղանչեցին. որ նա օրինակ է նորա համար՝ որ յետոյ գալու էր ։

15 Բայց շնորհքն էնպէս չէ ինչպէս որ մեղքն. ինչու որ՝ եթէ մընի մեղքովն շատ մար-

զումք մեռանի, ոչչափ ևս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգեւքն՝ շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի՝ ի բազումս առաւելաւ ։

16 Եւ ոչ որպէս ի միոջէ յանդուգնելոյն պարգեւքս՝ վասն դատաստանին՝ ի միոջէ յանցուածոյ անտի՝ ի դատապարտութիւն. այլ շնորհքն՝ ի բազմայ յանցուածոյն յարդարութիւն ։

17 Զի եթէ՝ ի միոյն յանցանայ մահ թագաւորեաց միով, ոչչափ ևս առաւել՝ որք պատառելոլիթիւն շնորհայ և պարգեւաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն՝ ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի ։

18 Ապա ուրեմն՝ որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբ՝ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց ։

19 Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս և հնազանդութեամբ միոյն, արդարք բազումք եղիցին ։

դիկ մեռանի՝ եւ ոչքան աւելի Աստուծոյ շնորհքն և պարգեւն մին Յիսուս Քրիստոս մարդոյ շնորհքովն աւելացաւ շատերի վերայ ։

16 Եւ պարգեւն էնպէս չէ՝ ինչպէս էն որ մին մեղաւորիցն էլաւ. ինչու որ՝ դատաստանն էն մին մեղքիցն դատապարտութիւն բերաւ. բայց շնորհքն շատ մեղքերիցն արդարութիւն է տանում ։

17 Պատճառն որ՝ եթէ մըն մեղքին համար մահն թագաւորեց էն մընի ձեռովն, ոչքան եւ աւելի նորանք, որ շնորհայ լիութիւնըն և արդարութեան պարգեւներըն առնեն, կեանքով կըթագաւորեն՝ էն մին Յիսուսի Քրիստոսի ձեռովն ։

18 Ապա ուրեմն՝ ինչպէս որ մընի մեղքովն ամէն մարդկանց վերայ դատապարտութի (եկաւ). հենց էնպէս էլ մընի արդարութենովն ամէն մարդկանց վերայ կենաց արդարութիւն (է գալիս) ։

19 Ինչու որ՝ ինչպէս որ մին մարդոյ անհնազանդութենովն շատ մեղաւորներ էլան՝ էն - պէս էլ մընի հնազանդութենովն շատ արդարներ կըլինին ։

20 Բայց օրէնք ՚ի ներքս անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր առաւել եղեն մեղքն, տառաւել և շնորհքն։

21 Զի որպէս թագաւորեցին մեղքն ՚ի մահու անդ՝ նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ՚ի կեանն յաւիտենից ՚ի Հեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

20 Բայց օրէնքն մէջ ընկաւ՝ որ մեղքն շատանայ. ինչու որ՝ որտեղ որ աւելի էր լաւ մեղքն՝ Էնտեղ էլ աւելի շատացաւ շնորհքն։

21 Պատճառն որ՝ ինչպէս որ մեղքն թագաւորեց մահի ձեռովն՝ Էնպէս էլ շնորհքըն կըթագաւորէ արդարութեանով յաւիտենական կեանքին մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

ԳԼ. Զ։

1 Ասէք արդ՝ զի՞նչ ասիցեմք, յաճախեսցո՞ւք ՚ի մեղսն՝ զի շնորհքն բազմասցին։

2 Քաւ լիցի, որք մեռաք մեղսոյն, զիա՞րդ տակաւին ՚ի նմին կեցցեմք։

3 Կամ ոչ՞ գիտէք՝ զի որ միանգամ մկրտեցաք ՚ի Քրիստոս Յիսուս՝ ՚ի մահ անդր նորա մկրտեցաք։

4 Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ՚ի մեռելոց փառաւք Հօր՝ նոյնպէս և մեք ՚ի նորոգութի՛ւն կենաց շրջեսցուք։

1 Ուրեմն ի՞նչ պիտի ասենք. էլ աւելի վարվինք մեղքի մէջն, որ շնորհքն շատանայ.

2 Քաւ լիցի. մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպէս դեռ ապրինք նորանում։

3 Կամ ձեզ չէ՞ք յիշում՝ ձեզ մենք ամէնքս, որ Յիսուս Քրիստոսումն մկրտվեցանք՝ նորա մահին մէջ մկրտվեցանք։

4 Մկրտութեամբն նորա հետ թաղվեցանք մահի մէջ. որ ինչպէս Քրիստոս Հօր փառքովն մեռելների միջից յարութիւն առաւ՝ հենց Էնպէս մենք էլ նորոգված կեանքումն մանք դանք։

5 Զի եթէ անկակից եղեալք նմանութեան քրիստոսի նորա. այլ և յարութեան նորա լինիցիմք։

6 Զայս գիտասջի՛ք՝ զի հին մարդն մեր խաչակից եղև նմա, զի խափանեսցի մարմին մեղսոյն, մի և ևս ծառայել մեզ մեղսոյն։

7 Զի որ մեռանի՝ արդարացեալ է ի մեղացն անտի։

8 Իսկ եթէ մեռաք ընդ քրիստոսի, հաւատամք՝ թէ և կեցցուք ընդ նմա։

9 Գիտեմք՝ եթէ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ։

10 Զի որ մեռաւն՝ մեղսոյն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ։

11 Ընդունելս և դուք համարեսջի՛ք զանձինս մեռեալս մեղսոյն, և կենդանիս Աստուծոյ ի քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

12 Մի այսուհետև թագաւորեսցեն մեղք ի մահկանացու մարմինս ձեր՝ հնա-

5 Պատճառն որ՝ եթէ մենք նորա հետ ալընկէցեալք. որ նորա մահին նման լինինք. ապա նորա յարութեանն ևս նման կըլինինք։

6 Այս գիտացէք, որ մեր հին մարդն նորա հետ խաչվեցաւ՝ որ մեղաց մարմինն խափանվի՝ որ մենք ևս չըծառայենք մեղքին։

7 Պատճառն որ՝ նա որ մեռնում՝ արդարացած է մեղքիցն։

8 Եւայց եթէ որ քրիստոսի հետ մեռանք՝ հաւատումենք, որ ևս կապրինք նորա հետ։

9 Գիտեմենք որ քրիստոս մեռելներն միջնէն յարութիւն է առել. (և) սրա նից ետև չի մեռնում, և մահն նորա վերայ ևս չի տիրում։

10 Ինչու որ՝ էն որ մեռաւ՝ մեղքին մեռաւ միանգամ, և էն որ կենդանի է՝ Աստուծոյն է կենդանի։

11 Ընդ նոյ ընալես դուք ևս ձեր անձնները մեղքին մեռած համարեցէք, և Աստուծոյն կենդանի մեր Տէր Յիսուսի քրիստոսի ձեռովն։

12 Արհամարհ թող մեղքն չըթագաւորէ ձեր մահկանացու մարմիններին վերայ՝ որ

պանդել յանկուվծանոյ նո-
բա ։

13 Եւ մի պատրաստէք պան-
դամս ձեր ղէն անիրաւու-
թեան մեղացն . այլ պատ-
րաստեցէք զանձինս ձեր Աս-
տուծոյ՝ որպէս ի մեռելոց ի
կենդանիս՝ և զանդամս ձեր
ղէն արդարութեանն Աստու-
ծոյ ։

14 Զի մեղք ձեզ ոչ տի-
րեսցեն . քանզի ոչ էք ընդ
օրինաւք՝ այլ ընդ շնորհօք ։

15 Իսկ արդ՝ զիա՞րդ մե-
ղնիցո՞ւք զի չեմք ընդ օրինաւք՝
այլ ընդ շնորհօք. քաւ լիցի։

16 Ո՞չ գիտէք՝ թէ որում
պատրաստէք զանձինս ձեր
ծառայս ի հնազանդութիւն,
ծառայ էք՝ որում հնազան-
դիքն , եթէ մեղաց՝ ի մահ,
և եթէ ի հնազանդութիւն
արդարութեան՝ ի կեանս ։

17 Այլ շնորհ Աստուծոյ.
զի էիք ծառայք մեղաց՝ հնա-
զանդեցայք ի սրտի՝ որում
աւանդեցայք յառակ վարդա-
պետութեան ։

նորա յանկուվծ իւննելին հնա-
զանդվիք ։

13 Եւ չըլինի որ ձեր ան-
դամներըդ մեղքի անիրաւու-
թեանն զէնք պատրաստէք .
բայց ձեր անձնեըդ պատ-
րաստեցէք Աստուծոյն . ինչ-
պէս մեռելներիցն կենդանի
էլած՝ և ձեր անդամներըդ
արդարութեան զէնք՝ Աս-
տուծոյ համար ։

14 Ինչու որ՝ մեղքն չի տի-
րել ձեզ վերայ . պատճառն
որ՝ օրէնքի նեըքևն չէք, բայց
շնորհքի նեըքևն ։

15 Պա ի՞նչպէս . միթէ
մե՞ղք գործենք՝ նրահամար որ
օրէնքի նեըքևն չենք՝ բայց
շնորհքի նեըքևն . քաւ լիցի։

16 Չէ՞ք գիտուում, թէ ում
որ ձեր անձնեըդ ծառայ էք
պատրաստուում , նորան հնա-
զանդվելոյ համար , նորա ծա-
ռայ էք՝ որ հնազանդվում-
նորան . թէ մեղքին՝ դէպի
մահ և թէ արդարութեան
հնազանդութեանն՝ դէպի
կեանքն ։

17 Բայց շնորհակալութիւն
Աստուծոյ . որ մեղքի ծառայ
էիք . և սրտով հնազանդվե-
ցաք էն վարդապետութեան
օրինակին՝ որ նորան յանձ-
նըվեցաք ։

18 Արդ՝ ազատագեալք ի մեղայ՝ ծառայեցէք արդարու-
թեան ։
19 Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցիք զան-
դամս ձեր ծառայս պղծու-
թեան և անօրէնութեան յա-
նօրէնութիւն՝ նոյնպէս և այժմ պատրաստեցէք զան-
դամս ձեր ծառայս արդարու-
թեան ի սրբութիւն ։

20 Զի մինչ ծառայքն էիք մեղայ՝ ազատագեալ էիք յար-
դարութենէն ։
21 Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ, որով այժմ դամօթի հարեալ էք. զի վախճան նոցա մահ է ։

22 Բայց արդ ազատագեալք ի մեղայն՝ և ծառայեալք Աս-
տուծոյ՝ ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն, և վախճան նորա կեանք յաւիտենից ։

23 Զի թոշակն մեղայ մահ է. այլ շնորհքն Աստուծոյ, կեանք յաւիտենից ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր ։

18 Ապա ուրեմն դուք մեղ-
քերիցն ազատուած՝ ծառայե-
ցէք արդարութեանն ։
19 Մարդկանց կերպով կա-
սեմ՝ ձեր մարմնոյ տկարու-
թեան համար. որ ինչպէս որ ձեր անդամները ծառայ պատրաստեցիք պղծութեան և անօրէնութեան՝ անօրէ-
նութիւն գործելոյ համար՝ հիմա էլ հիմիկ ձեր անդամները ծառայ պատրաս-
տեցէք արդարութեանն՝ սըր-
բութեան համար ։
20 Ինչու որ՝ երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք ար-
դարութենիցն ։
21 Ապա ի՞նչ պտուղ ու-
նէիք էն ժամանակն. որ նո-
ցա համար հիմիկ ամօթ էք քաշում. ինչու որ՝ նորա վերջն մահն է ։
22 Բայց հիմիկ որ մեղքիցն ազատուած և Աստուծոյ ծա-
ռայ էք եղած՝ ձեր պտուղն էն ունիք՝ որ սուրբ լինիք՝ և նորա վերջն յաւիտենական կեանքն է ։
23 Պատճառն որ՝ մեղքի պարտն մահն է՝ բայց Աս-
տուծոյ շնորհքն՝ յաւիտենա-
կան կեանք՝ մեր Տէր Յիսու-
սի Քրիստոսի ձեռքին ։

1 Եթէ ոչ գիտէք՝ եղբարք, զի ընդ գիտուն օրինաց խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդանի իցէ։

2 Վասնզի կին առնակին՝ ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռցի այրն, ազատեալ է յօրինաց առն։

3 Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի եթէ լինիցի առն այլում. և եթէ մեռցի այրն՝ ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում։

4 Այսուհետև և դուք՝ եղբարք, մեռայք օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում որ ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբեր լիցուք Աստուծոյ։

5 Վասնզի մինչ էաք մարմնով, կարիք մեղաց՝ որ օրինօքն էին՝ զօրանային յան դամս մեր, առ ի պտղաբեր առնելոյ զմեզ մահու։

1 Միթէ չէ՞ք գիտում՝ եղբարք, (ինչու որ՝ օրէնք գիտողներին հետ եմ խօսում) որ օրէնքն մարդոյ վերայ տիրում՝ քանի ժամանակ որ նա կենդանի է։

2 Պատճառն որ՝ մարդու նոզ կին՝ իրան կենդանի մարդոյ հետ կապված է օրէնքովն. բայց եթէ որ մարդն մեռնի՝ էն (իրան) մարդոյ օրէնքիցն ազատված է։

3 Ապա ուրեմն՝ քանի որ մարդն կենդանի է՝ նա շընացօղ է կոչվում՝ եթէ որ ուրիշ մարդոյ գնայ. և եթէ որ մարդն մեռնի, էն օրէնքիցն ազատ է՝ որ չըհամարվի շընացօղ՝ եթէ ուրիշ մարդոյ գնայ։

4 Ուրեմն դուք էլ՝ եղբարք, Քրիստոսի մարմնովն մեռաք օրէնքին՝ որ ուրիշի լինիք՝ նորան որ մեռելների միջից յարութիւն է առել՝ որ պտուղ բերինք Աստուծոյն։

5 Ինչու որ՝ քանի որ մարմնով էինք, մեղայ յանկուցիչներն՝ որ օրէնքովն էին՝ զօրանում մեր անդամներում՝ որ մենք պտուղ բերինք մահին։

6 Բայց այժմ դատարկա-
ցաք յօրինաց անտի. քանզի
մեռաք այնմիկ՝ որով ըմբռ-
նեալն էաք, առ՝ ի ծառայել
մեզ նորոգութեամբ հոգւոյն՝
և ոչ հնութեամբ գրոյն ։

7 Իսկ արդ զի՞նչ ասեմք.
օրէնքն մե՞ղք իցեն. քաւ լի-
ցի. այլ զմեղս ոչ գիտէի,
եթէ ոչ օրինաւք. և զցան-
կութիւնն ոչ ճանաչէի, եթէ
ոչ օրինաց էր ասացեալ՝ մի
ցանկանայցես ։

8 Պատճառս առեալ մեղքն
պատուիրանաւն, և գործե-
ցին յիս զամենայն ցանկու-
թիւն. զի առանց օրինացն
մեղք մեռեալ էին ։

9 Իւ ես առանց օրինացն
երբեմն էի կենդանի. այլ եր-
բ և հաս յիս պատուիրանն,
մեղքն կենդանացան ։

10 Իւ ես մեռայ, և գտաւ
ինձ պատուիրանն՝ որ՝ի կեան-
սն էր, նոյն՝ի մահ ։

11 Զի մեղսն պատճառս
առեալ պատուիրանաւն՝ խա-
բեցին զիս, և նովին սպա-
նին ։

12 Ու՛յսուհետև օրէնք սո-
ւրբ են՝ և պատուիրանն սուրբ և
արդար և բարեբար ։

6 Բայց հիմիկ էն օրէնքիցն
արձակվեցանք. ինչու որ՝ մե-
ռանք նորան՝ որ նորանով
բռնըված էինք՝ որ մենք հո-
գով նորոգութենովն ծառա-
յենք և ոչ թէ գրի հընուու-
թենովն ։

7 Ուպա ի՞նչ ասենք. միթէ
օրէնքն մե՞ղք է. քա՛ւ լի-
ցի. բայց մեղքն չէի գի-
տենալ եթէ ոչ օրէնքովն.
և ցանկութիւնըն չէի ճա-
նաչել՝ թէ որ օրէնքն չէր
ասել՝ թէ մի ցանկանար ։

8 Մեղքն պատճառ առաւ
պատուիրանքովն և ինձանուամ
ամէն ցանկութիւն գործեց.
ինչու որ՝ առանց օրէնքին
մեղքն մեռած էր ։

9 Իւ ես առանց օրէնքին
մի՛ ժամանակով կենդանի
էի. բայց երբոր պատուի-
րանքն հասաւ ինձ՝ մեղքն կեն-
դանի եղաւ ։

10 Իւ ես մեռայ՝ և հենց
էն պատուիրանքն՝ որ կենաց
համար էր (տըվածք) ինձ մա-
հի պատճառ եղաւ ։

11 Ինչու որ՝ մեղքն պատ-
ճառ առած պատուիրանքովն
խաբեց ինձ և նորանով սպա-
նեց ։

12 Ուրեմն՝ օրէնքն սուրբ
է՝ և պատուիրանքն էլ սուրբ
և արդար և բարի ։

13 Իսկ արդ՝ ինձ բարին մահ եղև. քաւ լիցի. այլ մեղքն. զի երևեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ. զի եղիցին ըստ առաւելու՝ լեռան մեղքն մեղաւոր ի ձեռն պատուիրանին։

14 Գիտեմք՝ զի օրէնքն հոգևոր են. այլ ես մարմնաւոր եմ ընդ մեղաց վաճառեալ։

15 Զի զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամըն՝ զայն գործեմ։

16 Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են։

17 Այլ արդ՝ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն։

18 Գիտեմ զի ոչ բնակեալ է յիս, այսինքն ի մարմնի իմում, բարի ինչ. զի կամքն առաջի կան ինձ. և առնել զբարին ոչ։

19 Զի ոչ եթէ՝ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ չարն, զայն գործեմ։

20 Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ ևս

13 Ապա միթէ էն՝ որ բարի է, ինձ համար մահ եղաւ. քաւ լիցի. բայց մեղքն. որ երևի թէ՝ մեղքն բարիովն ինձ մահ գործեց. որ մեղքն էլ աւելի մեղաւոր լինի պատուիրանքի ձեռովն։

14 Գիտումնք՝ որ օրէնքն հոգևոր է. բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքին ներքև ծախված։

15 Ինչու որ՝ չեմ գիտում ինչ որ գործումիմ. որ ոչ թէ ինչ որ կամենումիմ՝ էն եմ գործում. բայց ինչ որ ատումիմ՝ էն եմ գործում.

16 Ապա թէ որ՝ ինչ որ չեմ կամենում՝ էն եմ գործում. օրինաց համար վըկայումիմ՝ թէ բարի է։

17 Ապա ուրեմն ոչ թէ ես եմ գործում էն՝ բայց մեղքն՝ որ բնակված է ինձանումն։

18 Գիտումիմ որ ինձանումն՝ այսինքն իմ մարմնումս մին բարի բան բնակված չըկայ. ինչու որ՝ կամք կայ ինձ մօտ, և բարին անելն չըկայ։

19 Պատճառն որ՝ ոչ թէ բարին՝ որ կամենումիմ, անումիմ. բայց չարն՝ որ չեմ կամենում, էն եմ գործում։

20 Ապա թէ որ էն՝ որ չեմ կամենում էն եմ, անում. էլ

ես առնեմ զայն՝ այլ քնա-
կեալ չիս մեղքն ։

21 Ես արդ՝ գտանեմ զօ-
րէիս այնորիկ՝ որ կամիցին առ-
նել չիս զբարին. և ինձ
չարն առաջի կայ ։

22 Հաճեալ եմ ընդ օրէնսն
Աստուծոյ ըստ ներքինն մարդոյն ։

23 Բայց տեսանեմ այլ օ-
րէնս յանդամս իմ, զինեալ
հակառակ օրինացս մտացս իմոց.
և գերեալ զիս օրինօքն մեղաց՝ որ են յանդամս իմ ։

24 Այր ի տառապեալ եմ
ես՝ ո՞վ ապրեցուսցէ զիս ՚ի
մարմնոյ աստի մահու ։

25 Այլ շնորհք Աստուծոյ
՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ. ապա ուրեմն.
ես ինքնին մտօք իմովք ծա-
ռայեմ օրինացն Աստուծոյ.
և մարմնով օրինացն մեղաց ։

ես չեմ անուամ, բայց մեղքն՝
որ ինձանուամ բնակեալ է ։

21 Ուրեմն գտանուամ նորա
օրէնքն որ կամենուամ ես գործել անել ինձանուամ՝ և չարն
իմ առաջիս կայ ։

22 Հաւանեմ եմ կենդանւոյ Աստուծոյ օրէնքին՝ ներսի մարդոյն ։

23 Բայց տեսանում ուրիշ
օրէնք իմ անդամներումս՝ որ
իմ մտքիս օրէնքին դէմ հակառակ է կենդանւոյ և ինձ գերի է բռնում էն մեղքի օրէնքովն՝ որ իմ անդամներումս է ։

24 Ես մին խղճալի մարդ
եմ՝ ո՞վ կապրեցնէ ինձ էս
մահի մարմնիցս ։

25 Միայն թէ Աստուծոյ
շնորհքն մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի ձեռովն. ուրեմն
ես ինքս իմ մտքովս ծառայում եմ Աստուծոյ օրէնքին
և մարմնովս մեղքի օրէնքին։

ԳԼ. Ը ։

1 Ահա այդպէս իսկ՝ ոչ
ինչ դատապարտութիւն է այնոցիկ՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս ։

1 Ահա որ էդպէս է՝ իսկի
դատապարտութիւն չըկայնորանց համար՝ որ Յիսուս
Քրիստոսումն են՝ որ մարմնոյ
պէս չեն վարվում ։

2 Զի օրէնք հոգւոյն կեանց ի Քրիստոս Յիսուս ազատեալին զձեզ յօրինաց մեղացն և մահու:

3 Զի որ անհնարին էր օրինացն՝ որով տկարանայր մարմնով. Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝ և վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ:

4 Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայեմք՝ այլ ըստ հոգւոյն:

5 Զի որք ըստ մարմնոյն՝ զմարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն:

6 Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է. և խորհուրդ հոգւոյն, կեանք և խաղաղութիւն:

7 Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է Աստուծոյ՝ զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նաև կարէ իսկ ոչ:

8 Զի որ մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն:

2 Ինչու որ՝ կենաց հոգւոյ օրէնքն Յիսուս Քրիստոսուն՝ ազատեց զձեզ մեղքի և մահի օրէնքէն:

3 Պատճառն որ՝ էն որ անկարելի էր օրէնքին որով հետև տկար էր մարմնոյ պատճառովն, Աստուած իրան որդին ուղարկեց մեղաւոր մարմնոյ նմանութենովն, և մեղքին համար՝ և մեղքին դատապարտեց էն մարմնուն:

4 Որ օրէնքի արդարութին կատարվի մեզանում՝ որ մարմնոյն պէս չենք վարվում, բայց հոգւոյն պէս:

5 Ինչու որ՝ նորանք որ մարմնոյն պէս են՝ մարմնոյ բաներըն են մտածում՝ և նորանք՝ որ հոգւոյն պէս, հոգւոյ բաներըն:

6 Պատճառն որ՝ մարմնոյ մտածմունքն՝ մահ է. և հոգւոյ մտածմունքն՝ կեանք և խաղաղութիւն:

7 Ինչու որ՝ մարմնոյ մտածմունքն Աստուծոյ դէմ թշնամութիւն է. նրա համար որ՝ Աստուծոյ օրէնքին չի հնազանդվում և էլ կարող չէ (հնազանդվիլ):

8 Պատճառն որ՝ նորանք՝ որ մարմնովն են, չեն կարող Աստուծոյ հաճոյ լինիլ:

9 Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ իսկ հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։

10 Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և հոգին կեն-դանի է վասն արդարութեան։

11 Եթէ հոգի այնորիկ որ յարոյց զՅիսուս ի մեռելոց՝ բնակեալ է ի ձեզ. ապա և որ յարոյց զՅիսուս Քրիս-տոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ հոգւովն իւրով ի ձեզ։

12 Այսուհետև՝ եղբարք, պարտապան եմք ոչ մարմնոյ՝ ըստ մարմնոյ կեալ։

13 Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք։

14 Զի որ հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ։

15 Զի ոչ առիք զՀոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ առիք զՀոգին

9 Բայց դուք մարմնով չէք բայց հոգով՝ եթէ որ Աստուծոյ հոգին ձեզանում բնակ-ւած է. ապա եթէ որ մինն Քրիստոսի հոգին չունի՝ սա նորանն չէ։

10 Բայց եթէ որ Քրիստոս ձեզանում է՝ ապա մարմինն մեռած է մեղքին համար՝ և հոգին կենդանի է արդարու-թեան համար։

11 Թէ որ նորա հոգին՝ որ Յիսուսին յարոյց մեռելնե-րից, ձեզանում բնակւած է՝ ապա նա՝ որ Քրիստոսին յա-րոյց մեռելներից, ձեր մահ-կանացու մարմիններըն էլ կը-կենդանացնէ իրան հոգով, որ ձեզանում բնակւած է։

12 Ուրեմն՝ եղբարք, պար-տական ենք ոչ եթէ մարմնոյն՝ որ մարմնոյն պէս ապրինք։

13 Ինչու որ՝ եթէ մարմնոյն պէս ապրիք՝ կըմեռնիք. բայց եթէ որ հոգով մարմնոյ գործ-քերըն սպանէք՝ կապրիք։

14 Որովհետև որ՝ նորանք որ Աստուծոյ հոգով են վար-ւում՝ նորանք Աստուծոյ որ-դիք են։

15 Ինչու որ՝ ծառայութեան հոգին չէք առել՝ որ միևէլ վախենաք. բայց որդեգիր

որդեգրութեան. որով աղաղակեմք աբբայ. Հայր։

16 Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։

17 Իսկ եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ՝ և ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանայն կրեսցուք ընդ նմա, և փառայն հաղորդ լինիցիմք։

18 Ինձ այսպէս թուի՝ եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոյ փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ։

19 Զի ակնկալութիւն արարածոյ՝ յայտնութեան որդւոցն Աստուծոյ սպասէ։

20 Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ վասն այնորիկ որ հնազանդեցուցին յոյսով։

21 Զի և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ։

22 Գիտեմք, եթէ ամենայն արարածք հեծեծեն և լինելոյ հոգին էք առել, որ նորանով աղաղակումեք՝ աբբա, Հայր։

16 Հենց էն հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստուծոյ որդիք ենք։

17 Իսկ թէ որ որդիք՝ ապա էլ ժառանգներ. Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգ ընկերներ. թէ որ նորա չարչարանքներին ընկեր լինինք՝ փառքին էլ մասնակից կը լինինք։

18 Ինձ էսպէս է երեւում՝ թէ էս ժամանակիս չարչարանքները չեն արժանի են նոր գալու փառքին՝ որ մեզանում պիտի յայտնուի։

19 Ինչու որ՝ ստեղծուածները յոյն Աստուծոյ որդոց յայտնութեանն է սպասում։

20 Պատճառն որ՝ ստեղծուածները հնազանդեցան ունայնութեանն՝ ոչ թէ իրանց կամքով՝ բայց նորա համար՝ որ հնազանդացրուց (նորանց) յոյսով։

21 Ինչու որ՝ հենց իրանք ստեղծուածները էլ ազատուեն ծառայութենից կազատուին՝ Աստուծոյ որդոց փառաւոր ազատութեան պէս։

22 Պատճառն որ՝ գիտենք՝ թէ ամէն ստեղծուած-

երկնեն մինչև ցայժմ ։

23 Եւ ոչ այսչափ միայն ։ այլև մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք՝ որ դեգրութեան ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ ։

24 Զի յուսով ապրեցաք։ այլ յոյս տեսանելի չէ յոյս։ զի զոր տեսանէ ոք՝ զի՞ ևս յուսայ ։

25 Ապա թէ զոր ոչն տեսանեմք յուսամք, համբերութեամբ ակն ունիմք ։

26 Նոյնպէս և հոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեան մերում. զի զոր կամքն չաղօթա՝ որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք ։ այլ ինքնին հոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս ։

27 Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զի՛նչ խորհուրդ է հոգւոյն ։ զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց ։

ներն մինչև հիմիկ հառաչութեամբ՝ և սաստիկ ցաւի և աշխատանքի մէջ են ։

23 Եւ ոչ թէ միայն քան ։ բայց հենց մեք էլ՝ որ հոգոյ պտուղըն ունինք, ինքներս մեր անձներուս համառաչումնք՝ որովհետև որդեգիր լինելոյն ենք սպասում ։ մեր մարմնոյ ազատութեանն ։

24 Ինչու որ մենք յուսով ապրեցանք ։ բայց յոյսն՝ որ տեսնըվուշ, յոյս չէ։ պատճառն որ էն բանն, որ մինն տեսնուշ՝ ինչպէս էլ կըյուսայ նորան ։

25 Բայց թէ որ էն՝ որ չենք տեսնում, նորան յոյս ունինք, ապա համբերութեամբ սպասումնք ։

26 Հենց էնպէս էլ հոգին ձեռն է տալիս մեր տկարութեան ։ ինչու որ մենք չենք գիտում թէ ինչ բանի համար աղօթք անենք ինչպէս որ արժան է՝ բայց ինքն հոգին անասելի հառաչանքով բարեխօս է լինում ։

27 Բայց նա՝ որ սրտերըն քննում, նա գիտում թէ ինչ է հոգոյ խորհուրդն ։ ինչու որ Աստուծոյն վայելած կերպով սրբոց համար բարեխօսում ։

28 Ասայց գիտեմք՝ եթէ ո-
րոց սիրեն զԱստուած՝ յա-
մենայնի գործակից լինի ՚ի
բարիս՝ որք հրաւիրեալքն
կոչեցան ։

29 Զի զորս յառաջն ճա-
նաչէր՝ յառաջագոյն և հրա-
ւիրեաց կերպարանակից լի-
նել պատկերի որդւոյն իւ-
րոյ . զի եղիցի նա անդրա-
նիկ ՚ի մէջ եղբարց բազ-
մաց ։

30 Եւ զորս յառաջագոյնն
հրաւիրեաց՝ զնոսին և կո-
չեաց . և զորս կոչեաց՝ ,
զնոսին և արդարացոյց . և
զորս արդարացոյցն , զնոսին
և փառաւորս արար ։

31 Իսկ արդ զի՞նչ ասեմք
առ այս . եթէ Աստուած ՚ի
մեր կոյս է , ո՞վ իցէ մեր
հակառակ ։

32 Որ յիւր որդւոյն ոչ
խնայեաց՝ այլ վասն մեր ա-
մենեցուն մատնեաց զնա .
զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ
զամենայն շնորհիցէ մեզ ։

33 Ո՞վ իցէ որ մեղադիր
լինիցի ընտրելոց Աստուծոյ.
Աստուած է որ արդարացու-
ցանէ .

28 Ասայց գիտեմնք, որ նո-
րանց՝ որ Աստուծոյն սիրու-
մեն՝ նա ամէն բանի մէջ օգ-
նական է լինելում դէպի բա-
րին նորանց՝ որ հրաւիրելոն
(*) կանչուեցան ։

29 Պատճառն որ նորանց՝
որ առաջուց ճանաչուեց, առա-
ջուց հրաւիրեց՝ որ նորա որ-
դոյ պատկերին նման լինին .
որ նա առաջինեակ լինի շատ
եղբարների մէջուն ։

30 Եւ նորանց՝ որ առաջուց
հրաւիրեց, նորանց էլ կան-
չեց . և նորանց՝ որ կանչեց,
նորանց էլ արդարացրուց .
և նորանց՝ որ արդարացրուց,
նորանց էլ փառաւորը արաւ ։

31 Ուպա ի՞նչ ասենք սրա-
համար . եթէ որ Աստուած
մեր կողմն է՝ էլ ո՞վ կըլինի
մեզ հակառակ ։

32 Որ իրան որդոյն էլ չըխը-
նայեց՝ այլ մեզ ամենիս հա-
մար մատնեց նորան . էլ ինչ-
պէս նորան հետ ամէն բան
չի շնորհիլ մեզ ։

33 Ո՞վ է նա՝ որ Աստուծոյ
ընտրվածներին վերայ մեղա-
դրանք կանէ . Աստուած է՝ որ
արդարացնում է ։

(*) Յունարէն . առաջուց սահմանելոյն պէս ։

34 իսկ արդ՝ ով է որ դատապարտէ։ Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօսէ իսկ է վասն մեր ։

35 Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր ։

36 Որպէս և գրեալ է. վասն քո մեռանիմք զօրհնապաղ, համարեցաք իբրև ոչխար ՚ի սպանդ ։

37 Այլ յայսմ ամենայնի, առաւել յաղթեմք նովաւ՝ որ սիրեացն զմեզ ։

38 Վասնզի հաստատեալ եմ, եթէ ո՛չ մահ և ո՛չ կեանք և ո՛չ հրեշտակ և ո՛չ իշխանութի՛ւնք. և ո՛չ որ կանս և ո՛չ հանդերձեալքն և ո՛չ զօրութի՛ւնք,

39 Ի՛ւ ո՛չ բարձրութի՛ւն և ո՛չ խորութի՛ւն, և ո՛չ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ՚ի Քրիստոս Յիսուս՝ ՚ի Տէր մեր։

34 Ուրեմն ո՞վ է նա՝ որ մեզ կըդատապարտէ. Քրիստոս Յիսուս. որ մեռաւ՝ և աւելի էլ որ հինց ինքն յարութիւն առաւ և Աստուծոյ աջ կողմն է՝ որ հինց ինքն էլ մեզ համար բարեխօս է։

35 Ապա ո՞վ կըբաժանէ մեզ Քրիստոսի սիրուցն. նեղութի՞ւն, թէ չարչարանք, թէ հալածմունք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտ, թէ սուր ։

36 Ինչպէս որ էլ գրված է, թէ քեզ համար ամէն օր մեռնումենք և մորթվելու ոչխարի պէս համարվեցանք ։

37 Բայց էս ամէն բանեբուն էլ աւելի յաղթումենք նորա ձեռովն՝ որ մեզ սիրեց։

38 Պատճառն որ՝ հաստատ գիտումեմ՝ որ ո՛չ մահ և ո՛չ կեանք, և ո՛չ հրեշտակները, և ո՛չ իշխանութիւննեը և ո՛չ հիմիկվան բաներ և ո՛չ յետոյ եկողները, և ո՛չ զօրութիւննեը,

39 Ի՛ւ ո՛չ բարձրութիւննեը, և ո՛չ խորութիւննեը, և ո՛չ մին ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սիրուցն՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է ։

1 Ստուգութեամբ ասեմ ի Քրիստոս՝ և ոչ ստեմ, վկայեն ինձ միտք իմ ի Հոգի սուրբ։

2 Զի տրտմութիւն է ինձ յոյժ՝ և անպակաս ցաւք սրտի իմոյ։

3 Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ։

4 Որ են իսրայէլացիք. որոց որդեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնադրութիւնն և պաշտօնն և աւետիքն,

5 Որոց հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն։

6 Ո՛չ ինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն Աստուծոյ. զի ոչ ամենեքեան՝ որ յԻսրայէլէն են, նոքա իսրայէլեանք իցեն։

7 Նա ոչ որ զաւակն աբրահամու են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ ասհակաւ

1 Ճշմարիտըն ասեմ Քրիստոսով, և սուտ չեմ ասեմ՝ որ էն իմ խղճմտանքս էլ վկայումէ ինձ սուրբ Հոգովն։

2 Որ սաստիկ տրտմութիւն ունիմ և անպակաս ցաւ իմ սրտի մէջն։

3 Ինչու որ՝ փափակելով կնդրուէի՝ որ հենց ես ինքս նզոված լինիմ Քրիստոսիյն իմ եղբարներիս և մարմնաւոր ազգականներիս համար։

4 Որ նորանք իսրայէլացի են. որ նորանցն է որդեգիր լինելն, և փառքն, և կտակարաններն, և օրինադրութիւնն և պաշտօնն և աւետիքն։

5 Որ նորանցն են հարքն՝ որ նորանցից էլ Քրիստոսն է մարմնոյ կողմանէ՝ նա որ ամէնին վերայ է Աստուած, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

6 Իսկի կարելի չէ՝ որ Աստուծոյ խօսքն գետինն ընկնի. ինչու որ՝ ոչ թէ ամէնքն որ իսրայէլիցն են՝ նորանք իսրայէլացիք են։

7 Նա ոչ թէ՝ նորանք որ աբրահամի զաւակ են՝ էն ամէնքն որդիք են. այլ իսա-

կոչեսցի քեզ զաւակ։

8 Այսինքն՝ ոչ եղեն որ որդիք մարմնոյն են, են որդիք Աստուծոյ, այլ որդիք աւետեացն համարին ի զաւակ։

9 Քանզի աւետեաց իսկ է բանս այս, եղեալ ի ժամանակի յայսմիկ եկիցի՝ և եղիցի որդի սառայի։

10 Եւ ոչ այնչափ միայն՝ այլ և ի հռեբեկայ ի միոջէ անկողնոյ սակաւայ հօր մերոյ։

11 Զի մինչև ծնեալ էին, և մինչև բարի ինչ կամ չար գործեալ էին. զի ըստ ընտրութեանն առաջադրութիւնն Աստուծոյ հաստատեսցի.

12 Ո՛չ ի գործոց՝ այլ յայնմանէ՝ որ կոչեացն, ասացաւ նմա.

13 Թէ երէցն կրտսերոյն ծառայեսցէ. որպէս և գրեալ է. Թէ զյակովբ սիրեցի, և զեսաւ ատեցի։

14 Իսկ արդ՝ զիա՞նչ ասեմք. մի թէ անիրաւութի՞ւն իցէ Աստուծոյ. քաւ լիցի։

15 Զի մովսէսի ասէ. ողորմեցայց՝ որում ողորմեցայցն, և գթացայց՝ որում գթացայցն։

հակով քեզ համար զաւակ պիտի կանչվի։

8 Այսինքն՝ ոչ Թէ նորանք որ մարմնոյ որդիք են՝ Աստուծոյ որդիք են. այլ աւետիքի որդիքն զաւակ կըհամարվին։

9 Պատճառն որ՝ էս է յաւուկ աւետիքի խօսք՝ Թէ ես ժամանակումն կըգամ և սառային որդի կըլինի։

10 Եւ ոչ Թէ միանակ էս քան. բայց հռեբեկան էլ մեր հայր իսահակին մին պառկվածքեցն (յղի լինելով։)

11 Որ դեռ նորանք չէին ծնված և դեռ մին բարի կամ չար բան չէին գործած. որ ընտրութեան պէս Աստուծոյ առաջուց սահմանվածն հաստատ մնայ։

12 Ո՛չ Թէ գործքերուցն՝ այլ նորանից՝ որ կանչեց, ասվեցյաւ նորան.

13 Թէ մեծն պիտի ծառայ փոքրին. ինչպէս որ էլ գրված է՝ Թէ յակոբին սիրեցի և եսաւին ատեցի։

14 Ասա՞նք. միթէ Աստուծոյ մօտ անիրաւութի՞ւն կայ. քաւ լիցի։

15 Պատճառն որ՝ նա մովսիսին ասումէ. կողորմիմ ումո՞ր կողորմիմ՝ և գթած կըլինիմ՝ ումո՞ր գթած կըլինիմ։

16 Ասա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին և ոչ ըստ այնմ, որ ընթանայցեն. այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմին ։

17 Քանզի ասէ գիրը ցփարաւոնն. Թէ վասն այնորիկ դրդռեցի զքեզ, զի ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր ։

18 Ապա ուրեմն՝ ումմէ կամի՝ ողորմի, և ումմէ կամի՝ խստանայ ։

19 Իսկ արդ ասիցես, Թէ մեզ ևս զիա՞ դնէ՝ զի կամայ նորա ոչ ոք կայ հակառակ ։

20 Իսկ արդ՝ դու ո՞վ ես՝ մարդ, որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ Թէ ընդէ՞ր այդպէս արարեր զիս ։

21 Ոչ Թէ ոչնիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զոմն ի պատիւ և զոմն յանարգանս ։

22 Ապա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, և յայտնի առնել զզօ-

16 Ուրեմն նորանից չէ՝ որ կամենումէ՝ և ոչ էլ նորանից՝ որ վազումէ՝ բայց Աստուածանից՝ որ ողորմումէ ։

17 Պատճառն որ՝ դիրքն ասումէ փարաւոնին՝ Թէ նրա համար դրդեցի քեզ՝ որ քեզանումէ ցոյց տամ իմ զօրութիւնըս և իմ անունս ամէն երկրի մէջ պատմվի ։

18 Ապա ուրեմն՝ ումէ որ կամենումէ ողորմումէ. և ումէ կամենումէ՝ սլինտ կենումէ ։

19 Ապա լինի որ ասես Թէ, էլ նա ինչի՞ է մեղադրում. պատճառն որ՝ ոչ ով (կարող չէ) նորա կամքին հակառակ կենալ ։

20 Ապա դու ո՞վ ես՝ մարդ՝ որ Աստուծոյն պատասխան տաս. միթէ ստեղծվածն կասէ իրան ստեղծողին՝ Թէ ինչի՞ էդպէս արիր ինձ ։

21 Միթէ բրուտն իշխանութիւն չունի՞ հողի վերայ, որ հենց մի շաղաղվածքիցն ամանները շինէ՝ միսը՝ որ պատուաւոր լինի, և մեկելը՝ որ անարգ լինի ։

22 Ապա Թէ որ Աստուածկամենումէր ցոյց տալ բարկութիւնըն և յայտնել իրան

րութիւն իւր. որ համբերն բազում երկայնմտութեամբ անօթոյն բարկութիւն՝ պատրաստելոյն ի կորուստ ։

23 Զի յայտնի արասցէ զմեծութիւն փառացն իւրոց ի վերայ անօթոյն ողորմութեան, զոր պատրաստեաց ի փառս ։

24 Զոր և կոչեաց զմեզ, ոչ միայն ի հրէից, այլ և ի հեթանոսաց.

25 Որպէս և յովսէէ ասէ. կոչեցից՝ զոր ոչ ժողովրդոցն իմ, ժողովուրդ ինձ. և զսիրեցեալն՝ սիրեցեալ ։

26 Եւ եղիցի ի տեղւոջ՝ յորում ասացաւ նոցա. Թէ ոչ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ ։

27 Եսայի աղաղակէ վասն իսրայէլի. եթէ իցէ թիւ որդւոցն իսրայէլի իբրև ղաւազ ծովու՝ սակաւ ինչ մնայցորդք փրկեսցին ։

28 Զի բան մի հակիրճ և համառօտ արդարութեամբ. զբանն հակիրճ արասցէ Տէր ի վերայ երկրի ։

29 Եւ որպէս ասէ եսայի.

զօրութիւնն՝ որ շատ երկայնմտութենով համբերեց բարկութեան ամաններին՝ որ կորուստի համար պատրաստուած էին.

23 Որ յայտնի ցոյց տայ իւրեան փառաց մեծութիւնը՝ ողորմութեան ամաններին վերայ՝ որ նորանց պատրաստեց փառաց համար ։

24 Որ նորանցմէ մեզ եւ կանչեց, ոչ թէ միայն հրէաներէն, այլ եւ հեթանոսներէն ։

25 Ինչպէս որ յօսէէն եւ ասում է. Ես որ իմ ժողովուրդս չէ, կ՚ինձ ժողովուրդ կըկանչեմ. և չսիրեցեալը՝ սիրեցած ։

26 Եւ կըլինի որ ինտեղն որ ասուեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողովուրդ չէք՝ հոն տեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կըկոչուին ։

27 Եսայի աղաղակում է իսրայէլի համար. թէ որ իսրայէլի որդոց համարն ծովի աւազին պէս շատ լինի՝ (նորանցից) քիչ մնայուք կըմնան ։

28 Պատճառն որ՝ միս կարճ և համառօտ բան (կըլինի) արդարութենով. Տէրն կարճ կանէ բանը երկրի վերայ ։

29 Եւ ինչպէս որ եսային

թէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զսոդոմ լինեաք՝ եւ գոմորայ նմանեաք։

30 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոյ անտի։

31 Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան եւ յօրէնս արդարութեան ոչ ժամանեաց։

32 Ընդէ՞ր. զի ոչ ի հաւատոյ՝ այլ իբրեւ ի գործոց օրինացն. քանզի զթեցին նոքա առ վիմին գայթագղութեան.

33 Որպէս եւ գրեալ է. ահաւասիկ դնեմ ի սիոն քար գայթագղութեան եւ վէմ գլորման. եւ ամենայն որ հաւատասցէ ի նա՝ ոչ ամաչեսցէ։

ասուածք. թէ որ զօրութեանց Տէրն մեզ համար զաւակ չէր թողած, մենք սոդոմին պէս կըլինէինք եւ գոմորին կընըմանէինք։

30 Ուրեմն ի՞նչ ասենք. էն որ հեթանոսներն՝ որ արդարութեան հետէն չէին գնում, արդարութեան հասին՝ էն արդարութեանն՝ որ հաւատքից է։

31 Բայց իսրայէլն՝ արդարութեան օրէնքի հետէն էր գնում եւ արդարութեան օրէնքին չըհասաւ։

32 Ինչո՞ւ համար. նրանից որ հաւատքից (չէն ուղում) բայց օրէնքի գործքերից, պատճառն որ՝ նորանք գայթակղութեան քարին վրայ գլորվեցան։

33 Ինչպէս որ էլ գրված է. ահա ես սիօնի մէջն գայթակղութեան քար եւ գլորելոյ վէմ եմ դնում. եւ ամէն ով որ կըհաւատայ նորան՝ նա չի ամաչիլ։

ԳԼ. ԺԹ։

1 Եղբարք իմ՝ կամք սրտի եւ աղօթիք առ Աստուած, վասն նոցա են ի փրկութիւն։

1 Եղբայրք իմ՝ սրտի կամքըն և դէպի Աստուած աղօթքն նորանց համար էն է, որ փրկվին։

2 Քանզի վկայեմ նոցա՝ թէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գիտութեամբ։

3 Զի տգէտ են Աստուծոյ արդարութեան, և զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութեան Աստուծոյ ոչ հնազանդեցան ։

4 Քանզի կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց ։

5 Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօրինաց անտի է. թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին ։

6 Իսկ զհաւատոյն արդարութենէ այսպէս ասէ. մի ասիցես ՚ի սրտի քումում, ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝ զՔրիստոս իջուցանել ։

7 կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է՝ զՔրիստոս հանել ՚ի մեռելոց ։

8 Այլ զի՞նչ ասէ գիր. մերձ է բանն ՚ի բերան քո, և ՚ի սրտի քումում է. այսինքն է՝ բանն հաւատոյ զոր քարոզեմք ։

9 Զի եթէ խոստովանես

2 Ինչու որ՝ վկայումեմ նոցանց՝ որ Աստուծոյ համար նախանձ ունին՝ բայց գիտութենով չէ ։

3 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնըն չեն գիտում և հենց իրանցըն են կամենում կանգնացել, նրա համար որ Աստուծոյ արդարութենն չըհնազանդվեցան։

4 Ինչու որ՝ Քրիստոսն է օրէնքի վախճանն՝ որ արդար լինի ամէն՝ ով որ հաւատումէ նորան ։

5 Մօսէսն գրում էն արդարութեան համար՝ որ օրէնքիցն է՝ թէ որ մին մարդ էն անէ՝ կապրի նորանով ։

6 Բայց հաւատքի արդարութենն համար էսպէս է ասում. ասես քո սրտումդ՝ ով վերկէրթի երկինքն՝ այսինքն՝ Քրիստոսին վէր բերելու համար ։

7 կամ թէ՝ ով վէրկըդայ անդունդն՝ այսինքն՝ Քրիստոսին մեռելների միջիցն հանելու համար ։

8 Բայց գիրքն ի՞նչ է ասում. էն խօսքն մօտիկ է քո բերանիդ և քո սրտումն է. այսինքն, հաւատքի խօսքն՝ որ քարոզումենք ։

9 Պատճառն որ՝ եթէ քո

ցես բերանով քով Տէր զՅիսուս. և հաւատասցես ի սրտի քում, թէ Աստուած յարոյց նորան ի մեռելոց, կեցցես։

10 Ջի սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք ի փրկութիւն։

11 Քանզի ասէ գիր. ամենայն՝ որ հաւատասցէ ի նա, մի ամաչեսցէ։

12 Ջի ոչ գոյ խտիր հրէի և հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին՝ որք կարդան առ նա։

13 Ջի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։

14 Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչ լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ.

15 Կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. որպէս և գրեալ է. իբրև զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան և աւետարանչացն բարութեա։

բերանով Յիսուսին Տէր դաւանես և քո սրտովդ հաւատաս՝ թէ Աստուած յարոյց նորան մեռելներից՝ դու կապրիս։

10 Ինչու որ՝ սրտով հաւատումք արդարանալոյ համար. և բերանով դաւանութիւն փրկվելոյ համար։

11 Պատճառն որ՝ գիրքն ասումէ՝ ամէն ով որ կըհաւատայ նորան՝ չի ամաչիլ։

12 Ինչու որ՝ Յոհուդիւն չըկայ հրէայի և հեթանոսի մէջ. նրահամար որ՝ ամէնին հենց միև Տէր է՝ որ բաւական է ամէնին համար՝ որ կանչումեն նորան։

13 Ինչու որ՝ ամէն ով որ Տէրի անունըն (իրան) կըկանչէ՝ կապրի։

14 Ապա ի՞նչպէս կանչեն նորան, որ չըհաւատացին. կամ ի՞նչպէս հաւատան նորան, որ չըլսեցին. կամ ինչպէս լսեն, թէ որ միևն չըքարոզէ.

15 Կամ ի՞նչպէս քարոզեն, թէ որ չուղարկվին. ինչպէս որ էլ գրված է. թէ ինչպէս գեղեցիկ են նոյանց ոտներն՝ որ խաղաղութիւն են քարոզում և բարի բաների աւետիք են տալիս։

16 Ա.ՀԼ ո՛չ ամենեքեան հնազանդ եղեն աւետարանին. եսայի ասէ. Տէր՝ ո՞ հաւատաց լսոյ մերում ։

17 Ապա ուրեմն՝ հաւատք ՚ի լսելոյ են, և լուր ՚ի բանէն Քրիստոսի ։

18 Ա.ՀԼ ասեմ, միթէ ո՞չ լուան. մանաւանդ ձի ընդ ամենայն երկիր ել քարբառ նոցա, և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա ։

19 Ա.ՀԼ ասեմ, միթէ իսրայէլ ո՛չ լուաւ. նախ մովսէս ասէ, ես նախանձեցուցից զձեզ ո՛չ ինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմտաւ զկնճեցուցից զձեզ ։

20 Բայց եսայի համարձակի իսկ և ասէ. գտայ այնոցիկ՝ որ զիս ո՛չ խնդրէին. յայտնի եղէ այնոցիկ՝ որ զիս ո՛չ հարցանէին ։

21 Ա.ՀԼ առ իսրայէլ ասէ. զօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւան՝ և հակառակօղ ։

16 Բայց ամենքն հնազանդ չէլան աւետարանին՝ (որ) եսային ասումէ. Տէր՝ ո՞վ հաւատաց մեր խօսքին ։

17 Ուրեմն հաւատքն լսելոյն է, և լսելն՝ Քրիստոսի խօսքիւն ։

18 Բայց ասումեմ. միթէ չլսեցի՞ն. իրաւի է որ նորանց ձայնն դուրս գնաց ամեն երկիրն և նորանց խօսքն մինչև աշխարհքի ծայրերն ։

19 Բայց ասումեմ. միթէ իսրայէլն չլսեց. առաջ մովսէսն է ասում. ես ձեզ նախանձաւոր կըշինեմ մին ո՛չ ինչ ժողովրդով՝ և մին անմիտ ազգով կըկսկծացնեմ ձեզ ։

20 Բայց եսային էլ աւելի համարձակուումէ և ասում. ես գտայ նորանցիկ՝ որ ինձ չէին խնդրում. յայտնի էլայ նորանց՝ որ ինձ համար չէին հարցնում ։

21 Բայց իսրայէլին ասում. ամեն օր իմ ձեռքս մեկնեցի դէպի անհաւատ և հակաւակող ժողովուրդն ։

ԳԼ. ԺԱ ։

1 Ասկ արդ ասեմ, միթէ մերժեաց Աստուած

1 Ապա ասումեմ. միթէ Աստուած դէ՞ն քոյց իրան

ժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի և ես իսրայէլացի եմ, ի զաւակէ աբրահամու, յազգէ բենիամինի։

2 Ո՛չ մերժեաց Աստուած ժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թէ ոչ գիտէք յեղիա զի՛նչ ասէ գիր. որպէս ամբաստան լինի Աստուծոյ զիսրայէլէ։

3 Տէր՝ զմարգարէս քո կոտորեցին և զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, և խնդրեն զանձն իմ։

4 Այլ զի՛նչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ՝ ասէ, եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր բահաղու։

5 Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն։

6 Իսկ եթէ շնորհօք՝ ոչ ևս ի գործոց. ապա թէ ոչ շնորհքն՝ ոչ ևս շնորհք լինին։

7 Իսկ արդ զոր խնդրէրն իսրայէլ, այնմ ոչ եհաս. բայց ընտրութեան եհաս. և այլքն կուրացան.

ժողովուրդէն. քաւ լիցի. ինչու որ՝ ես էլ իսրայէլացի եմ՝ աբրահամի զաւակէն, բենիամինի ցեղէն։

2 Աստուած դէն չըքցեց իրան ժողովուրդն՝ որ նորան առաջուց ճանաչէց. կամ թէ չէ՞ք գիտում թէ գիրքն ինչ է ասում եղիայի համար. թէ ինչպէս նա իսրայէլին դէմ ամբաստանում Աստուծոյ առաջին։

3 Տէր՝ քո մարգարէների կոտորեցին և քո սեղանների կործանեցին. ես մենակ մնացի և իմ անձիս են մանգալիս։

4 Բայց պատասխանն ինչ է ասում նորան. Եօթն հազար մարդ՝ ասում, թողի ինձ համար՝ որ բահաղին ծունր չըդրին։

5 Հենց էնպէս էլ էս ժամանակում չնորհքի ընտրութեան պէս մնացածներ էլան։

6 Բայց թէ որ չնորհքով է՝ էլ գործքերիցն չէ. ապա թէ չէ՝ շնորհքն էլ շնորհք չի լինիլ։

7 Ապա ուրեմն՝ ինչ որ իսրայէլն խնդրում՝ նորան չըհասաւ. բայց ընտրվածները հասին՝ և մնկէլները կուրացան։

8 Որպէս գրեալ է. եա նոցա Աստուած հոգի լիմա- րութեան, աչս՝ որովք ոչ տեսանիցեն, և ականջս՝ ո- րովք ոչ լսիցեն, մինչև ցայ- սօր ժամանակի։

9 Յր դաւիթ ասէ. եղի- ցին սեղանք նոցա յորոգայթ և ի որս և ի գայթագղու- թիւն՝ և ի հատուցումն նո- ցին։

10 խաւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն. և զթիկունս նոցա հանապազ կորացո։

11 Իսկ արդ ասեմ, միթէ վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեսցին. քաւ լիցի. այլ նոցա յանցանօքն փրկու- թիւն հեթանոսաց. զի նա- խանձ արկցէ նոցա։

12 Իսկ եթէ յանցանքն նո- ցա մեծութիւն աշխարհի, և պարտութիւնն նոցա մեծու- թիւն հեթանոսաց. որչափ ևս առաւել լրութիւն նոցա։

13 Այլ ձեզ ասեմ հեթա- նոսաց՝ ցորչափ ժամանակս ի- ցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առ- նեմ։

8 Ինչպէս որ էլ գրված է. Թէ Աստուած տուաւ նորանց թմրութեան հոգի. աչքեր՝ որ նորանով չտեսնեն, և ա- կանջներ՝ որ նորանով չլսեն. մինչև ես օրվան ժամանակս։

9 Յր դաւիթն ասում. նորանց սեղաններն թող ո- րոգայթ (թաղակ) լինին նո- րանց՝ և ակնատ և գայթակ- ղութիւն՝ և նորանց համար հատուցումն։

10 Թող նորանց աչքերն խաւարվին՝ որ չըտեսնեն և նորանց թիկունքներըն միշտ ծռացրու։

11 Ուրեմն ասում եմ. միթէ նրանք գլորվեցան՝ որ կործանվին. քաւ լիցի. այլ նորանց գլորվելովն հեթա- նոսների փրկութիւնն էլաւ՝ որ նախանձ քցէ նորանց սիր- տըն։

12 Բայց թէ որ նորանց ընկնիլն աշխարհքի մեծու- թիւն էլաւ՝ և նորանց տակ քցվիլն՝ հեթանոսների մեծու- թիւն. էլ որքան աւելի նո- րանց լրութիւնն։

13 Բայց ձեզ հեթանոսնե- րիդ ասում եմ. քանի ժամա- նակ որ հեթանոսների առա- քեալ եմ՝ իմ պաշտօնըս փա- ռաւոր կանեմ։

14 Զի [թ]երևս նախանձ արկից նոցա մարմնով իմով՝ և ապրեցուցից զոմանս ի նոցանէ ։

15 Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է՝ իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ կենդանութի՛ ի մեռելոց ։

16 Իսկ եթէ սկիզբն սուրբ է՝ և զանկուածն . և եթէ արմատն՝ ապա և ոստքն ։

17 Իւթէ [յ]ոստոց անտի ո՛մանք փշրեցան , և դու՝ որ ձիթենիդ վայրենի էիր, պատուաստեցար ի՛նոսա, և բաժանորդ եղեր արմատոյն՝ և պարարտութեան ձիթենւոյն ։

18 Մի՛ պարծիր առ ոստովքըն . ապա եթէ պարծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ի՛ վեր ունիս , այլ արմատն զքեզ ։

19 Իսկ արդ ասիցես , ոստքըն փշրեցան՝ զի ես պատուաստեցայց ։

20 Ճարտար է. անհաւատութեամ՛բն փշրեցան , և դու հաւատովք հաստատեցար. մի՛ հպարտանար, այլ երկիր ։

14 Որ լինի թէ՝ իմ մարմնոյս նոյն նախանձ քցեմ նորանց սիրտն և նորանցից մինքանիսին ապրեցնեմ ։

15 Պատճառն որ՝ թէ որ նորանց երեսից քցվելն՝ աշխարհքի հաշտութիւն է՝ ապա նորանց ընտրութիւնն ի՞նչ է՝ եթէ ոչ կենդանի լինիլ մեռելներից ։

16 Իւ թէ որ սկիզբն սո՛ւրբ է՝ ապա հունցվածն էլ՝ և թէ որ արմատն (չէօչն)՝ ապա ճղներն էլ ։

17 Թէ որ ճղերից մինքանիսն փշրըվեցան՝ և դու որ վայրի ձիթենի էիր՝ նորանց վերայ պատրուաստվեցար՝ և հաղորդ էլար արմատին՝ և ձիթենոյ պարարտութեանն ։

18 Մի պարծենար էն ճղերին դէմ . ապա թէ որ պարծենաս՝ (իմացիր) որ ոչ թէ դու ես արմատըն (չէոչն) վերատնուում, այլ արմատն՝ քեզ ։

19 Ուրեմն կըլինի որ ասես ճղերն փշրըվեցան՝ որ ես պատրուաստվիմ ։

20 Լա՛ւ է . նորանք անհաւատութենով փշրըվեցան՝ և դու հաւատքով հաստատվեցար. մի՛ լինիր ամբարտաւան, այլ վախիր ։

21 Զի թէ Աստուած՝ ի բուն ոստն ոչ խնայեաց, զուցէ երբէք և՝ ի քեզ ոչ խնայիցէ։

22 Արդ տես զքաղցրուի, և զսաստկութիւնն Աստուծոյ. ի վերայ կործանելոցն սաստկութիւն, և՝ ի վերայ քո քաղցրութիւնն Աստուծոյ, եթէ կացցես ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ և դու կոչոպեսցիս։

23 Եւ նոքա եթէ ոչ՝ ի նմին անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարօղ է Աստուած միւսանգամ պատուաստել զնոսա։

24 Զի եթէ դու՝ ի բուն ի վայրենի ձիթենւոյ անտի հատար՝ և յանբուն՝ ի բարի ձիթենւոջն պատուաստեցար, որչափ ևս առաւել նոքա, որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն։

25 Ո՛չ կամիմ՝ եղբարք, եթէ տգիտք իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր՝ ի շատէ եղեւ իսրայէլի. մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ։

21 Ինչու որ՝ եթէ Աստուած բնական ճղիերին չխնայեց՝ կըլինի որ քեզ էլ չխնայէ։

22 Ուրեմն տես Աստուծոյ քաղցրութիւնըն և սաստկութիւնըն. կործանվածներին վերայ սաստկութիւնըն և քեզ վերայ Աստուծոյ քաղցրութիւնըն. թէ որ դու հնոյ էն քաղցրութենուն կենաս. ապա թէ չէ՝ դու էլ կըկըտըրվիս։

23 Եւ նորանք թէ որ էն անհաւատութենուն էլ չըկենան՝ կըպատրուավին. ինչու որ՝ Աստուած կարօղ է միւսանգամ պատրուսել նորանոյ։

23 Պատճառն որ՝ եթէ դու բնական վայրի ձիթենուէն կըտըրվեցար և բնութեան դէմ բարի ձիթենոյ վերայ պատրուավեցար՝ էլ որքան աւելի նորանք, որ բնական են. կըպատրուավին իրանց (յատուկ) ձիթենոյն վերայ։

25 Ձեմ կամենում՝ եղբարք, որ չըգիտենաք էս խորհուրդըս՝ որ ձեր անձներումդ ձեզ իմաստուն չըհամարիք. էն որ փոքր՝ ի շատէ իսրայէլին կուրութիւն էլաւ՝ մինչև որ հեթանոսների լիութիւնըն մտնէ։

26 Եւ ապա ասէնայն իսրա-
յէլ կեցցէ՝ որպէս և գրեալ
է՝ եկեսցէ ի սիովնէ փրկիչ՝
և դարձուսցէ զամբարշտու-
թիւնսն ի յակովբայ ։

27 Եւ այս նոցա՝ որ յինէն
ուխտ, յորժամ բարձից զմեղս
նոցա ։

28 Ըստ աւետարանին թըշ-
նամիք են վասն ձեր, ըստ
ընտրութեանն, սիրելիք վասն
հարցն ։

29 Քանզի անզղջ են շնորհք
և կոչումն Աստուծոյ ։

30 Զի որպէս և դուք եր-
բեմն ապստամբ եղիք Աս-
տուծոյ՝ և արդ ողորմութիւն
գտիք առ նոցա ապստամբու-
թեամբն ։

31 Նոյնպէս և նոքա այժմ
ապստամբ եղեն առ ձերով
ողորմութեամբդ՝ զի և նոքա
ողորմութիւն գտցեն ։

32 Քանզի արգել Աստը-
ւած զամենեսին յանհաւա-
նութեան, զի ամենեցուն ո-
ղորմեսցի ։

33 Ո՛վ խորք մեծութեան
և իմաստութեան և գիտու-

26 Եւ նրանից եւս ամէն
իսրայէլն կապրի . ինչպէս որ
էլ գրված է՝ Թէ սիօնիցն
փրկիչ կըգայ և ամբարշտու-
թիւնները դէն կըքցէ յա-
կոբիցն ։

27 Եւ էս է ուխտս պայ-
մանս՝ որ ես նորանց հետ կըդը-
նեմ՝ երբոր նորանց մեղքե-
րըն վերկառնեմ ։

28 Աւետարանին մտիկ տա-
լով՝ նորանք թշնամի են ձեր
պատճառովն . ընտրութեան
մտիկ տալով՝ սիրելի են հա-
րանց համար ։

29 Պատճառն որ՝ Աստու-
ծոյ շնորհքն և կոչումն՝ զղջ-
ջանալ չունի ։

30 Ինչու որ՝ ինչպէս որ
դուք էլ մին ժամանակ ապըս-
տամբված էիք Աստուածա-
նից՝ և հիմիկ ողորմութիւն
գտիք նորանց ապստամբու-
թենովն .

31 Հենց էնպէս էլ նորանք
հիմիկ ապստամբ էլան ձեր
ողորմութենովն . որ նորանք
էլ ողորմութիւն գտնեն ։

32 Պատճառն որ՝ Աստուած
ամէնին անհաւատութեան
մէջ արգելից՝ որ ամէնին ո-
ղորմի ։

33 Ո՛վ (քանի՜ ն) Աստուծոյ
մեծութեան և իմաստութեան

թեանն Աստուծոյ. որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք նորա։

34 Զի հիւ գիտաց զմիտս Տեառն, կամ հիւ խորհրդակից եղև նմա։

35 կամ հիւ ետ նմա փոխ, և առնուցու զփոխարէն ի նմանէ։

36 Զի ի նմանէ՝ և նովաւ՝ և ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս. ամէն։

խորհրդականն. ինչպէս անքննելի են նորա դատաստանները և անհասկանալի են նորա ճանապարհները։

34 Պատճառն որ՝ հիւ գիտաց Տէրի միտքը կամ հիւ խորհուրդի ընկեր կըլինի նորան։

35 կամ հիւ նորան փոխ տըւաւ, որ նորա հատուցումը առնէ նորանից։

36 Պատճառն որ՝ նորանից և նորանով և նորանում է ամէն բան. նորան փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼ. ԺՐ։

1 Աղաչեմ զձեզ՝ եղբարք, զմիաբանամբքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ, հաճոյ Աստուծոյ՝ զլսօսուն պաշտօնդ ձեր։

2 Եւ մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն և ելթէ զինչ են կամք Աստուծոյ՝ բարին և հաճոյն և կատարեալն։

3 Զայս ասեմ շնորհօքն

1 Աղաչում ձեզ՝ եղբարք, Աստուծոյ ողորմութենովն, որ ձեր մարմինները ընդ պատրաստեք կենդանի սուրբ և Աստուծոյ ընդունելի պատարագ՝ որ էն ձեր բանաւոր պաշտօն լինի։

2 Եւ մի կերպարանվիք էս աշխարհքիս կերպարանքովն՝ բայց նորոգվեցէք ձեր մտքի նորոգութենովն՝ որ դուքքըն-նէք էն՝ որ լաւն է. և թէ ինչ է Աստուծոյ կամքն՝ էն բարին՝ և հաճելին և կատարեալն։

3 Աստուծոյ շնորհքովն՝ որ

Աստուածոյ՝ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է՝ ի ձեզ. մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել՝ ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Աստուած չափ հաւատոց։

4 Որպէս՝ ի միում մարմնի անդամս բազումս ունիմք. և անդամքն ամենայն ոչ գնոյն գործ ունին։

5 Նոյնպէս և բազումքս մի մարմին եմք՝ ի Քրիստոս այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։

6 Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝ ըստ չափոյն հաւատոյ,

7 Եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն,

8 Եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեան. որ առատն է՝ ողորմութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝ ըղձմտութեամբ։

9 Սէր առանց կեղծաւորութեան. ատեղ զչար. ղհետ երթալ բարեաց։

ինձ տրուած է՝ ես եմ ասում ամենին՝ որ ձեր միջումն է՝ որ իսկի մին բան չըմտածէք նրանից աւելի, քանթէ էն որ արժան է մտածելոյ. բայց որ մտածելուն պարկեշտ կեանք էնպէս՝ ինչպէս որ Աստուած ամէն մէկին հաւատքի չափըն բաժանեց։

4 Ինչպէս որ մին մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք՝ և էն ամէն անդամներն մին գործ չունին։

5 Նոյնպէս էլ մենք շատերս մին մարմին ենք Քրիստոսում՝ բայց ամէն մէկն իրար հետ անդամ ենք։

6 Մի՛այն թէ կերպ կերպ շնորհքներ ունինք էն շնորհքին պէս՝ որ մեզ տրուած է. եթէ մարգարէութիւն՝ հաւատքի չափովն.

7 Եթէ պաշտօն՝ պաշտամունքի չափովն. եթէ նա՝ որ սովորցնում, վարդապետութեան չափովն.

8 Եթէ նա՝ որ մխիթարում՝ մխիթարութեան չափովն. նա որ առատաձեռն է՝ ուրախութեամբ. նա որ վերակացու է՝ հոգս տանելովն. նա որ ողորմութիւն է անում՝ ուրախ սրտով։

9 Սէրը՝ առանց կեղծաւորութեան (լինի). չարըն ատեցէք, բարոյն հետևեցէք։

10 Ցեղապրսիրութեան առ միմեանս գԹածք. ՚ի պատիւ զմիմեանս երանել։

11 ՚ի փոյթ՝ մի վհերուք. հոգւով եռացեալք, Տեառն ծառայեցէք,

12 Ցուսով լինդայք, նեղութեան համբերեցէք, աղօթից սոսկ կացէք,

13 ՚ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութիւն զհետ երթայք.

14 Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի անիծանէք։

15 Խնդալ ընդ լնդայօղս, լալ ընդ լացօղս։

16 Զնոյն միմեանց խորհիջիք. մի ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիջիք. մի լինիք իմաստուն յանձինս ձեր։

17 Մի ումեք չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան։

18 Իթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք։

19 Մի զանձանց վրէժխնդիր երէք՝ սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. զի գրեալ է՝ Ինձ վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ Տէր։

10 Իղբայրասիրութենով իրար վերայ գԹածք (եղէք)· պատիւ տալով իրար առաջ անցկացէք։

11 Ջանք անելովն՝ Թոյլ չըլլիք· հոգովն ջերմռանդ եղէք՝ Տէրին ծառայեցէք։

12 Ցուսով ուրախացէք· նեղութեան համբերեցէք՝ աղօթքին խիստ հետևեցէք։

13 Սրբոց կարկառուր լինօղ բանին հաղորդ եղէք· օտարասիրութեան հետևեցէք։

14 Զեզ անիծօղներին օրհնեցէք, օրհնեցէքև մի անիծէք։

15 Ուրախացօղներին հետ ուրախացէք, և լացց լինօղներին հետ լացց եղէք։

16 Իրար հետ հենց մին խորհուրդ ունենաք· ամբարտաւան մի լինիք· բայց խոնարհներին հետ խոնարհվեցէք· ձեր անձներուդ ձեզ իմաստուն մի համարիք։

17 Մըննին չարի տեղ չար մի հատուցանէք· ամէն մարդկանց առաջին բարի խորհուրդ ունենաք։

18 Իթէ կարելի լինի ձեզ ամէն մարդկանց հետ խաղաղութիւն ունենաք։

19 Ձեր անձներիդ համար վրէժխնդրութիւն մի անէք

ղի բարկութեան. քանզի կրեալ է. իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝ ասէ Տէր։

20 Այլ եթէ քաղցեալ ի-նչ թշնամի քո՝ հայ տուր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա։

21 Մի յաղթիր ի չարէն. այլ յաղթեա բարեաւն չարին։

սիրելիներ, այլ բարկութեան տեղ տուէք. ինչու որ՝ գրված է՝ թէ վրէժխնդրութիւն անիկն իմ է. և ես հատուցումըն կըտամ, ասումն Տէրն։

20 Ուստի թէ որ քո թշնամին սոված լինի՝ հայ տուր նորան. և թէ որ ծարաւ լինի՝ ջուր տուր նորան. ես անելով կրակի կայծակներ կը-ժողովես նորա գլխին վերայ։

21 Մի յաղթվիր չարից՝ այլ բարիով յաղթիր չարին։

ԳԼ. ԺԴ։

1 Ա՚Ոմն անձն՝ որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ի հնազանդութեան կացցէ. քանզի չիք ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ Աստուծոյ. և որ կան, Աստուծոյ կարգեալ են։

2 Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին։

3 Զի իշխանքն ոչ են երկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց. կամիս չերկնչել

1 Ա՚Մեն անձն՝ որ իշխանութեան ներքև է՝ թող հնազանդութենով կենայ. պատճառն որ՝ իշխանութիւնն խակի մըտից չէ եթէ ոչ Աստուածանից. և նորանք որ կան՝ Աստուածանից են կարգված։

2 Ապա ուրեմն՝ նա որ իշխանութեանն հակառակ է կենում՝ Աստուծոյ հրամանին է հակառակ կենում. և նորանք՝ որ հակառակ են կենում՝ իրանց անձնըրին համար դատաստան կընդունին։

3 Ինչու որ՝ իշխաններն բարի գործքերին վախի պատճառ չեն. բայց չար գործ-

յիշեսցուք զնոսին, զբա-
րիս գործեալ, և ընկալցիս
զդովութիւն ի նմանէ։

4 Զի Աստուծոյ պաշտօ-
նեայ է քեզ ի բարիս. ապա
եթէ չար գործիցես, երկիր.
զի ոչ եթէ վայրապար ածեալ
է սուսեր ընդ մէջ. Աստու-
ծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր
ի բարկութիւն այնմ՝
որ զչարն գործիցէ։

5 Ապա որոյ հարկ է
հնազանդ լինել՝ ոչ միայն
վասն բարկութեանն, այլև
վասն մտացն խղճի։

6 Վասն այնորիկ և հարկս
հարկանեք, զի Աստուծոյ
սպասաւորք են ի նոյն կան-
խեալք։

7 Արդ հատուսջիք ի բա-
քանչիւր զպարտս. ուրում
հարկ՝ հարկն, որում
մաքս՝ մաքսն, որում ակ-
նիւղ՝ ակնիւղն, որում պատ-
ուի՝ պատուն։

8 Եւ մի ումեք պարտա-
պան գտանիցիք, բայց զմի-
մեանս սիրելոյ. զի որ սիրէ
զընկերն. կատարեաց որ էն
իշխանութենիցն չըվախենաս.
բարի գործ արա և նորա-
նից գովասանք կընդունես։

4 Պատճառն որ՝ նա Ա-
ստուծոյ պաշտօնեայ է քեզ
համար դէպի բարին. ապա
եթէ որ չարագործ լինիս՝ վա-
խիր. ինչու որ՝ նա զուր
տեղն սուրըն չի կապիլ մէջ-
քումն. նա Աստուծոյ սպա-
սաւոր է՝ բարկութենով
վրէժխնդրութիւն անելոյ
նորան՝ որ չարըն է գործում։

5 Նրա համար պէտք է
հնազանդ լինել՝ ոչ թէ մի-
նակ բարկութեան համար,
բայց էլ խղճմտանքին հա-
մար։

6 Նրա համար հարկ էլ
վճարումէք. ինչու որ՝ նո-
րանք Աստուծոյ սպասաւոր-
նեըն են. հենց էն քանին
պարապվելոյ համար։

7 Ուրեմն ամէնին վճարե-
ցէք ինչ պարտք որ կայ. ում
որ հարկ՝ հարկըն. ում որ
մաքս (հէ-տրու-հ) մաքսըն.
ում որ վախ՝ վախըն. ում
որ պատիւ՝ պատիւըն։

8 Եւ իսկի մընին պարտա-
կան չըմնաք՝ նորանից զոհ
(սէյէ)՝ որ իրար սիրէք. ին-

ղընկերն , զօրէնսն կատարէ ։

9 Զ՚ի չնայցեսն , և ի սպանանիցես , և ի գողանայցես , և ի սուտ վկայիցես , և ի ցանկանայցես , և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդակի , եթէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ։

10 Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ . լրումն օրինացն սէր է ։

11 Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս . զի արդ ժամ իսկ է մեզ ’ի քնոյ զարթնուլ . զի այժմ մերձ է մեզ փրկութիւն . քանզի յորժամ հաւատացաք ,

12 Գիշերն մերժեցաւ՝ և տիւն մերձեցաւ . ’ի բաց ածցուք այսուհետև զգործս խաւարի , և զգեցցուք ըզգէնն լուսոյ ։

13 Իբրև ’ի տունջեան զգաստացեալք շրջեսցուք . մի անառակութեամբք՝ և արբեցութեամբք , և մի խառն անկողնով՝ և պղծութեամբք , և մի նախանձու՝ և հակառակութեամբ .

չու որ՝ նա որ ընկերըն սիրուն՝ նա օրէնքըն կատարուն ։

9 Ոչն մի չնար , և մի գողնար և մի սուտ վկայեր և մի ցանկանար , և եթէ ինչ որ ուրիշ պատուիրանք կայ , են խօսքուն ժողովածք լորվուն , թէ քո ընկերիդ քո անձիդ պէս սիրեր ։

10 Սէրն իրան ընկերին չար չի՛ անիլ . օրէնքի բոլորվիլն՝ սէրն է ։

11 Ոչս ժամանակիս համար էս եւ գիտացէք . որ հենց հիմիկ ժամանակն է՝ որ քընէյն զարթնենք . պատճառն որ՝ հիմիկ մեզ աւելի մօտ է փրկութիւնն՝ քան թէ էն ժամանակն՝ որ հաւատացինք ։

12 Գիշերն հեռացաւ և ցերեկն մօտեցաւ . ուրեմն հեռու անենք խաւարի գործքերըն և լուսոյ զէնքըն հագնենք ։

13 Ինչպէս ցերեկուն պարկեշտ եղածք մանգանք . չը՛լինի որ անառակութենով և հարբեցութենով և խառն պարկվածներով և պղծութիւններով , և չը՛լինի որ նախանձով և հակառակութենով ։

ցիսուս Քրիստոս. և մարմնոյ խնամ մի տանիք ՚ի ցանկութիւնս։

ԳԼ. ԺԴ։

1 ԱՅԼ զոկարացեալն ՚ի հաւատս ընկալարուք՝ մի խղճիւ երկմտութեանց։

2 Ոմն հաւատայ ուտել զամենայն. և որ հիւանդն է, բանջար կերիցէ։

3 Որ ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ՝ մի անգոսնեսցէ. և որ ոչն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի դատեսցի. քանզի Աստուած զնա ընկալաւ։

4 Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ։ Իւրում տեառն կայ կամ անկանի. բայց կացցէ՝ զի կարող է Տէր հաստատել զնա։

5 Ոմն պահէ օր ըստ օրէ՝ և ոմն պահէ զօրհնանապաղ. իւրաքանչիւրոք զիւր միտս հաստեսցէ։

6 Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի. և որ ոչն խորհի զօրն, Տեառն չխորհի. և որ ուտէ, Տեառն ուտէ, և գոհանայ ՚ի Աստուծոյ. և որ ոչն հագչէ. և մարմնոյ համար հոգս մի անիցէ դիպի ցանկութիւն։

ԳԼ. ԺԴ։

1 Հայց հաւատքի մէջ տկարացածներին ընդունեցէք առանց տարակուսանաց նելոյ խղճմտանքին։

2 Մինն հաւատումէ՝ թէ ամէն բան կարօղ է ուտել. և նա որ հիւանդ է բանջար կուտէ։

3 Նա՝ որ ուտումէ, թող չանարգէ նորան՝ որ չի ուտումէ. և նա՝ որ չի ուտումէ, թող չդատէ նորան՝ որ ուտումէ, ինչու որ Աստուած ընդունեց նորան։

4 Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատես. իրան տիրոջն է կենում կամ ընկնում. բայց կրկենայ. ինչու որ Տէրն կարօղ է հաստատել նորան։

5 Մինն պահումէ օր օրի վերայ, և մէկելն պահումէ ամէն օր. ամէն մէկն թող իրան մտքի ուղածըն անէ։

6 Նա՝ որ օրին մտիկ է անում, Տէրին համար է մտիկ անում. և նա՝ որ օրին մտիկ չի անում, Տէրին համար մտիկ չի անում. և նա՝ որ

ուտէ, Տեառն չուտէ, և գո-
հանայ ՚ի Աստուծոյ։

7 Զի ոչ ոք ՚ի մէնջ ան-
ձամբ կեայ, և ոչ անձամբ
մեռանի։

8 Եթէ կեամք՝ Տեառն
կեամք, և եթէ մեռանիմք՝
Տեառն մեռանիմք. և արդ՝
եթէ կեամք և եթէ մեռա-
նիմք՝ Տեառն եմք։

9 Վասնզի ՚ի նոյն իսկ և
Քրիստոս մեռաւ և եկեաց,
զի մեռելոց և կենդանեաց
առ հասարակ տիրեսցէ։

10 Դու զի՞ դատես զեղ-
բայր քո. կամ ընդէ՞ր ան-
դոնես զեղբայր քո, քանզի
ամենեքեան կայցուք առա-
ջի աթոռին Քրիստոսի։

11 Զի գրեալ է. կեն-
դանի եմ ես՝ ասէ Տէր, ՚ի
ինձ կրկնեսցի ամենայն ծունր՝
և ամենայն լեզու խոստովան
լիցի Աստուծոյ։

12 Ապա ուրեմն՝ իւրաքան-
չիւրոք ՚ի մէնջ ընդ անձին
համարս տացէ Աստուծոյ։

ուտումէ, Տէրին համար է ու-
տում, և Աստուածանից գո-
հանում, և նա՝ որ չի ուտում,
Տէրին համար չի ուտում, և
Աստուածանից գոհանումէ։

7 Պատճառն որ՝ մեզանից
մէնն չըկայ՝ որ ինքն իրան հա-
մար ապրի և ինքն իրան հա-
մար մեռնի։

8 Թէ որ ապրինք՝ Տէրին
ենք ապրում, և թէ որ մեռ-
նինք՝ Տէրին ենք մեռնում.
ուրեմն թէ ապրինք և թէ
մեռնինք՝ Տէրին ենք։

9 Պատճառն որ՝ հենց նրա
համար էլ Քրիստոսն մեռաւ
և կենդանացաւ՝ որ մեռելնե-
րին և կենդանիներին վերայ
առ հասարակ տիրապետէ։

10 Դու ինչո՞ւ համար ես
եղբօրըդ դատում կամ ինչո՞ւ
ես քո եղբօրըդ անարգում.
ինչու որ՝ (մենք) ամէնքս
Քրիստոսի դատաստանի ա-
թոռի առաջին պիտի կենանք։

11 Պատճառն որ՝ գրված է՝
թէ ես կենդանի եմ, ասում
է Տէրն. որ ամէն ծունր ինձ
պիտի չոքվի, և ամէն լեզու
պիտի խոստովան լինի Աս-
տուածոյն։

12 Ուրեմն մեզանից ամէն
մէկն իրան անձին կողմանէ
պիտի համար տայ Աստուծոյն։

13 Այսուհետև՝ մի դի-
մեանս դատեսցուք. այլ ա-
ռաւել զայս դիք՝ ի մտի՝
չդնել գայթագղութիւն եղ-
բօրն։

13 Սրահամալ իրալ չըդա-
տենք. բայց աւելի էս դրիք
ձեր միաքդ, որ եղբօրն խոչ
դայթակղութիւն չըդնենք։

14 Ջայս գիտեմ, և հաս-
տատեալ եմ ի Քրիստոս
Յիսուս, զի ոչ ինչ է պիղծ
նովաւ. բայց այնմ, որ հա-
մարիցի ոք ինչ պիղծ՝ նմա
է պիղծ։

14 Ինս գիտումեմ և հաս-
տատ խմանումեմ Յիսուս
Քրիստոսումն՝ որ խոչ մին
բան պիղծ չէ իրանով. բայց
ով որ մին բան պիղծ կըհա-
մարէ՝ նորա համար է պիղծ։

15 Ջի եթէ վասն կերակ-
րոյ եղբայրն քո տրտմի, ոչ
ևս սիրով գնասցես. մի կե-
րակրովն քով զնա կորուսա-
նես, վասն որոյ Քրիստոսն
մեռաւ։

15 Բայց թէ որ կերակուրի
պատճառով քո եղբայրդ
տրտմումէ էլ դու նորա հետ
սիրով չըվարվեցար. քո կե-
րակուրովն մի կորցնես նո-
րան՝ որ նորա համար Քրիս-
տոս մեռաւ։

16 Մի հայհոյեսցի բարին
ձեր։

16 Ձըլինի որ ձեր բարի
բանն հայհոյվի։

17 Ջի ոչ է արքայութիւն
Աստուծոյ կերակուր և ըմ-
պելի, այլ արդարութիւն և
խնդութիւն և խաղաղու-
թիւն ի հոգին սուրբ։

17 Պատճառն որ՝ Աստու-
ծոյ արքայութիւնն ուտելիք
և խմելիք չէ. բայց արդա-
րութիւն և խաղաղութիւն և
ուրախութիւն սուրբ հոգովն։

18 Ջի որ յայսմ ծառայէ
Քրիստոսի, հաճոյ է Աս-
տուծոյ՝ և ընտիր մարդկան։

18 Ինչու որ՝ նա որ սորա-
նում Քրիստոսին ծառայու-
մէ, Աստուծոյն հաճոյ է և
մարդկանց պատուելի։

19 Ապա այսուհետև զհե՛տ
երթիցուք զհաղաղութեան,
և զշինութեան՝ որ առ մի-
մեանս։

19 Ապա ուրեմն խաղաղու-
թեան ետևէն գնանք և էն
շինութեան՝ որ իրալ մէջ է։

20 Մի վասն կերակրոյ քա-

20 Կերակուրի պատճառովն

կեր զգործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ։

21 Լաւ է ոչ ուտել միս, և ոչ ըմպել գինի. և ոչ՝ որով եղբայրն քո գայթակղի կամ զլթէ կամ տկարանայ։

22 Դու ապաքէն հաւատս ունիս, կալ առանձինն առաջի Աստուծոյ. երանի որ ոչ դատիցի զանձն, որով զընկերն փորձիցէ։

23 Բայց որ խղճէն, թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ է՝ զի ոչ ըստ հաւատոց, զի ամենայն ինչ՝ որ ոչ՝ ի հաւատոյ է՝ մեղք են. այլ այնմ, որ կարօղն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմոյ. և ըստ քարոզութեան Յիսուսի Քրիստոսի ըստ յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակաւքն յաւիտենից լռեցելոյ, և յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս քանդեր Աստուծոյ գործեն. ամէն բան սուրբ է. բայց չար է մարդոյ համար՝ որ խըղճմտանքով է ուտում նորան։

21 Աւելի լաւ է՝ ոչ միս ուտել և ոչ գինի մխել, և ոչ է բանըն (անել՝) որ նորանով քո եղբայրդ գայթակղվում կամ գլորվում կամ տկարանում։

22 Ի հարկէ դու հաւատաք ունիս. ապա քեզ առանձին բանիր Աստուծոյ առաջին. երանի է նորան՝ որ իրան անձըն չըդատապարտէ նորանով՝ որ ընկերին փորձում։

23 Բայց նա՝ որ խղճմտանք է անում, թէ որ ուտէ՝ դատապարտված է. ինչու որ հաւատքիցն չէ. բայց ամէն ինչ որ հաւատքիցն չէ, մեղք է. բայց նորան որ կարող է ձեզ հաստատ պահել իմ աւետարանիս պէս, և Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս՝ են խորհըրդոյ յայտնութեան պէս՝ որ յաւիտենից ժամանակիցն լուռ պահված էր, և հիմիկ մարգարէից գրքերումն յայտնվեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս՝ և հաւատքի հնազանդութիւնըն (գործելոյ

նոսա Ծանուցեալ՝ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի · որում փառք յաւիտեանս · ամէն ։

համար) ամէն հնդհանուռներիւ միջուէն իմացուելու տրուիլ · էն միայն իմաստուն Աստուծոյն՝ նորան փառք յաւիտեանս Յիսուսի Քրիստոսի ձեռուէն · ամէն ։

ԳԼ· ԺԱ։

1 Պարտ է մեզ՝ որ կարօղ եմք՝ զկարուրելիսն տկարացն բառնալ · և մի անձանց և ենթ հաճոյ լինել ։

1 Մենք որ կարօղ ենք, պէտքէն որ տկարներուն տկարութիւնըն վերառնենք և մենակ մեր անձներին հաճոյ չըլլնինք ։

2 Այլ իւրաքանչիւրոք ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս՝ վասն շինուելեան ։

2 Այլ մեզմէից ամէն մէկն ընդհաճոյ լինի ընկերին դէպի բարին՝ շինուելեան համար ։

3 Քանզի և Քրիստոս ոչ ենթէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ է · Նախատինք նախատողացն քոց անկան ի վերայ իմ ։

3 Պատճառն որ՝ Քրիստոս էլ չէ ընդհաճոյ անձին՝ բայց ինչպէս որ էլ գրուած է՝ ընդհանդիպան նախատինքներուն նախատողներուն նայեցան վերայ ընկան ։

4 Զոր որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ · զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց ղոյսն ընկալցուք ։

4 Որ ինչ որ գրուեցաւ՝ մեր վարդապետութեան համար գրուեցաւ՝ որ համբերութենով և գրքերուն մխիթարութենովն յոյսըն ընդունինք ։

5 Այլ Աստուած համբերութեան և ամենայն մխիթարութեան, տացէ ձեզ

5 Որ համբերութեան և ամէն մխիթարութեան Աստուածն տայ ձեզ՝ որ հնդհ

պնդեն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի.

6 Զի միաբանութեամբ՝ ի մի բերան փառաւորք առնիցէք զԱստուած, և զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

7 Վասն որոյ ընկալարուք զմիմեանս. որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ՝ ի փառս Աստուծոյ:

8 Ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ՝ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն:

9 Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւորք առնեն զԱստուած, որպէս և գրեալ է. վասն այսորիկ դոհացայց զքէն՝ ի հեթանոսս, և անուան քումդ սաղմոս ասացից:

10 Եւ դարձեալ ասէ. ուրախ լերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա:

11 Եւ դարձեալ թէ, օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր, և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

12 Եւ դարձեալ եսայի ասէ. եղիցի արմատն յես-

մին մատնմունք ունենալք ի բար հետ՝ Յիսուսի Քրիստոսի (կամաց) պէս:

6 Որ միաբան մին բերա-նով փառաւորք անէք Աստուծոյն և Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հօրըն:

7 Ներահամար իրար ընդունեցէք ինչպէս որ Քրիստոս էլ ձեզ ընդունեց Աստուծոյ փառաց համար:

8 Միայն թէ ասումեմ ձեզ. թէ Քրիստոս թլփատութեան սպասաւոր էլաւ՝ Աստուծոյ ճշմարտութեան համար էր՝ որ հարանց էլած աւետիքըն հաստատէ:

9 Բայց հեթանոսներն ողորմութեան համար փառաւորուին Աստուծոյն. ինչպէս որ էլ գրված է՝ թէ սրա համար կըդոհանամ քեզանից հեթանոսների մէջն, և քո անունիդ սաղմոս կասեմ:

10 Եւ մինէլ՝ թէ ուրախացէք ով հեթանոսներ նորա ժողովրդի հետ:

11 Եւ մինէլ՝ թէ օրհնեցէք Տէրին ամէն հեթանոսներդ և գովեցէք նորան ամէն ժողովուրդներ:

12 Եւ մինէլ եսային ասէ. Յեսսէից՝ն արմատ կըլի-

աեայ. և որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսասցին։

13 ԱՅԼ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ հոգւոյն սրբոյ։

14 Հաստատեալ եմ և ես ինքնին՝ եղբարք իմ, վասն ձեր, զի և դուք լի էք բարութեամբ, լի էք ամենայն գիտութեամբ, կարող էք և զմիմեանս խրատել։

15 ԱՅԼ համարձակագոյնս գրեցի առ ձեզ՝ եղբարք իմ, փոքր ի շատէ, իբրև յիշեցուցանելով ձեզ վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ Աստուծոյ։

16 Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի ի հեթանոս. ըղձակիրոս առնել զաւետարանն Աստուծոյ, զի եղիցի պատարագն հեթանոսացն ընդունելի՝ սրբեալ հոգւովն սրբով։

17 Ունիմ այսուհետև պարծանս ի Քրիստոս Յիսուս առ Աստուած։

18 Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ գործեաց

նի, և նա որ հեթանոսներին համար իշխան կըկանգնի. նոքան յոյս կըդնեն հեթանոսներն։

13 Բայց Յուսոյ Աստուածն լի՛ք անէ ձեզ ամէն ուրախութենով և խաղաղութեամբ՝ որ Յուսով աւելանաք սուրբ հոգւոյ զօրութենովն։

14 Իս ինքս էլ՝ իմ եղբայրքս՝ ձեզ համար հաստատ եմ, որ դուք լիքն էք բարութենով. լիքն էք ամէն գիտութենով՝ (որ) կարող էք իրար խրատել։

15 Բայց համարձակվեցայ՝ եղբարք, և փոքր ի շատ գրեցի ձեզ. իբր թէ ձեր մտքներդ բերելով էն շնորհքին՝ որ ինձ տրվված է Աստուածանից։

16 Որ ես Յիսուսի Քրիստոսի սպասաւոր լինիմ հեթանոսների միջումն. Աստուծոյ աւետարանն ցանկալի անելոյ, որ հեթանոսների պատարագն ընդունելի լինի՝ սուրբ հոգովն սրբված։

17 Սրահամար պարծանք ունինք Յիսուս Քրիստոսումն Աստուծոյ առաջին։

18 Ինչու որ՝ չեմ համարձակվում մին բան խոսել՝ որ

Քրիստոս լինել՝ ի հնազան-
դութիւն հեթանոսաց՝ բա-
նիւք և արդեամբք,

19 Զօրութեամբ նշանաց
և սքանչելեաց, զօրութեամբ
հոգւոյն սրբոյ. որպէս լինիմ քե-
րոզասպէտ և շուրջ՝ մինչև
ի կողմանս Լիւրիկեայոց լնուլ
զաւետարանն Քրիստոսի։

20 Այսպէս առատացեալ
յաւետարանել, ոչ ուր ա-
նուանեցաւ Քրիստոս, զի
մի ի բերդ ևս յայլոյ հիման վերայ
շինեցեմ, այլ որպէս և գրեալ
է,

21 Թէ որոց ոչ պատմե-
ցաւ վասն նորա՝ տեսցեն, և
որոց ոչ իցէ լուեալ՝ ի միտ
առցեն։

22 Վասն որոյ շատ կա-
փանեցայ գալ առ ձեզ։

23 Բայց արդ՝ ոչ ևս գոյ
ինձ տեղի ի կողմանս այսո-
սիկ. և անձուկ յոյժ ունիմ
ի բազում ամաց գալ առ
ձեզ։

24 Զորժամ անցանիցեմ
ի սպանիա, ակն ունիմ
յանցանելոյ առ նոսա՝ տե-
սանել զձեզ. և ի ձէնջ
յուղարկիլ անդր, եթէ նախ

նորան Քրիստոս չընդօրնեց
լինանով՝ հեթանոսներըն
հնազանդացնելոյ համար՝
խօսքերով և գործքերով։

19 Նշանների և հրաշքնե-
րի զօրութենով սուրբ հոգւոյ
զօրութենով. ինչպէս որ ես
երուսաղէմից՝ մինչև Լիւրի-
կացոց կողմերն Քրիստոսի ա-
ւետարանըն լցրի։

20 Այնպէս ջանք արի աւե-
տարանըն քարոզել՝ չէ թէ
որտեղ որ Քրիստոսի անունն
անուանվեցաւ՝ որ չըլինի թէ
ես ուրիշի հիմունքի վերայ
շինեմ. բայց ինչպէս որ էլ
գրված է.

21 Թէ նորանք՝ որ նորանց
չիպատմըվաճ նորա համար՝
կըտեսանեն, և նորանք որ չեն
լսել՝ միտք կառնեն։

22 Այրհամար շատ անգամ
խափանվեցայ ձեզ մօտ գա-
լուց։

23 Բայց հիմիկ ես էս կող-
մերումս էլ տեղ չունիմ. և
շատ տարուց ևոև սաստիկ
փափակ ունիմ՝ որ ձեզ մօտ
գամ։

24 Երբոր անցկընեմ
սպանիա, յոյս ունիմ որ դե-
պի նորանց անցկենալոյ ժա-
մանակն տեսնեմ ձեզ, և
ձեզանից Հանապարհ քցվիմ

իսկ փոքր ՚ի շատէ ձեօք լցայց ։

25 Բայց այժմ երթամ յԵրուսաղէմ պաշտել զսուրբսն,

26 Քանզի հաճոյ թուեցաւ մակեդոնացւոցն և աքայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել ընդ աղքատս սրբոյն՝ որ են յԵրուսաղէմ։

27 Հաճոյ թուեցաւ, քանզի և պարտապան իսկ էին նոցա. զի եթէ հոգևորացն նոցա հաղորդ եղեն հեթանոսք, պարտին և մարմնաւորացն կցորդ լինել նոցա ։

28 Արդ զայս կատարեալ՝ և կնքեալ զպտուղ նոցա, անցից առ ձեօք ՚ի սպանիա ։

29 Ջայս գիտեմ, զի ՚ի գալն առ ձեզ, լրութեամբ օրհնութիւն աւետարանին Քրիստոսի եկից ։

30 Աղաչեմ զձեզ՝ եղբարք, ՚ի տէրն Տեառն մերոյ Յիսուսէ Քրիստոսի և սիրով հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած ։

էնտեղ՝ եթէ առաջ փոքր ՚ի շատէ ձեզանով կըշտանամ ։

25 Բայց հիմիկ երուսաղէմ եմ գնում որ սըրբերին ծառայութիւն կատարեմ ։

26 Պատճառն որ՝ մակեդոնացոց և աքայեցոց հաճոյ եբևեցաւ՝ որ մին հաղորդութիւն անեն աղքատ սըրբերին հետ՝ որ երուսաղէմումն են ։

27 Հաճոյ երևեցաւ. ինչու որ՝ հենց պարտական էլ են նորանց. պատճառն որ՝ եթէ հեթանոսներն նորանց հոգևոր (բաներին) մասնակից էլան՝ պէտք է՝ որ մարմնական (բաներին) էլ մասնակից անեն նորանց ։

28 Ուրեմն էս որ կատարեմ և նորանց պտուղըն իրան տեղն դնեմ, անցկըկենամ սպանիա ձեր միջովն ։

29 Ես գիտումեմ՝ որ երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի աւետարանի առատ օրհնութեամբն կըգամ ։

30 Աղաչումեմ ձեզ՝ եղբարք, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն և հոգոյ սիրովն՝ որ ինձ պատերազմի ընկեր լինիք՝ ինձ համար աղօթք անելով դէպի Աստուած ։

31 Զի ապրեցայց յապըստամբացն, որ ՚ի հրէաստանի են. և պաշտօնն իմ՝ որ յերուսաղէմ, ընդունելի լիցի սրբոցն։

32 Զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ՚ի կամս Աստուծոյ, հանգիայց ընդ ձեզ։

33 Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին. ամէն։

31 Որ փրկվիմ էն ապստամբների ձեռքիցն որ հրէաստանումն են. և իմ ծառայութիւնս՝ որ երուսաղէմի մէջ (եմ տանում) սըրբերին ընդունելի լինի։

32 Որ ուրախութեամբ ձեզ մօտ գամ Աստուծոյ կամքովն և ձեզ հետ հանգիստ առնեմ։

33 Եւ խաղաղութեան Աստուածն ձեզ ամենիդ հետ լինի. ամէն։

ԳԼ. ԺԶ։

1 Յանձն առնեմ ձեզ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն կենքրացւոց.

2 Զի զնա ընկալջիք ՚ի Տէր՝ արժանի սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ. քանզի և նա վերակացու եղև բազմաց, և ինձ գլխովին։

3 Ողջոյն տացիք պրիսկեայ և ակուղլայ՝ գործակցաց իմոց ՚ի Քրիստոս Յիսուս։

4 Որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես միայն գո-

1 Յանձնումեմ ձեզ մեր քոյրըն, որ կենքրացոց եկեղեցոյն սպասաւոր է։

2 Որ Նորան ընդունիք Տէրով. ինչպէս որ սըրբերին արժան է. և Նորան ձեռն տուօղ էլէք՝ ինչ հարկաւոր բանի համար որ կանչէ ձեզ. պատճառն որ՝ նա էլ շատ մարդկանց ձեռնտուաւ, և յատուկ ինձ էլ։

3 Ողջոյն տուէք պրիսկայինն և ակիւղային՝ և իմ գործընկերներս Քրիստոս Յիսուսումն.

4 Որ իմ անձիս տեղակիրանց վըզերըն առաջ դրին. որ Նորանցից ոչ թէ մէնակ

հանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց ։

5 Իւ առ ոմին եկեղեցւոյն նոցա ։ ողջոյն տաջիք եպենետայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ ասիացւոց ի Քրիստոս ։

6 Ողջոյն տաջիք Մարեայ՝ որ բազում վաստակս վաստակեաց ի ձեզ ։

7 Ողջոյն տաջիք անդրոնիկեայ և յունեայ ազգականաց իմոց՝ և գերակցաց, որք եղեւիքն իսկ են յառաքեալս ։ որք և յառաջ իսկ քան զիս եղեն ի Քրիստոս ։

8 Ողջոյն տաջիք ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր ։

9 Ողջոյն տաջիք ուրբանեայ գործակցի իմոյ ի Տէր, և ստաքեայ սիրելւոյ իմոյ ։

10 Ողջոյն տաջիք ապելղեայ՝ որ ընտիրն է ի Տէր ։

11 Ողջոյն տաջիք նոցա, որ յարիստաբուղեայ տանէ անտի են ։ ողջոյն տաջիք հերովդիոնեայ ազգականի իմոյ ։ ողջոյն տաջիք այոզիկ՝ որք ի նարկիսեայ տանէն իցեն ի Տէր ։

եւ եմ շնորհակալ՝ քայց հեթանոսներն ամէն եկեղեցիք նէրն էլ,

5 Իւ նորանց տանն լինող եկեղեցւոյն էլ (ողջոյն տուէք) ։ ողջոյն տուէք ե պենետին՝ իմ սիրելւոյս՝ որ ասիացոց պտուղն է Քրիստոսումն ։

6 Ողջոյն տուէք մարիային՝ որ շատ աշխատանքով աշխատեց ձեր միջումն ։

7 Ողջոյն տուէք անդրոնիկէին և յունէին՝ իմ ազգականներիս, և գերուեթեան ընկերներիս. որ առաքեալներին միջն երևելի են՝ որ նորանք հինց ինձանից առաջ Քրիստոսումն էլան ։

8 Ողջոյն տուէք ամպղեայի իմ սիրելւոյս Տէրով ։

9 Ողջոյն տուէք ուրբանէին՝ իմ գործընկերիս Տէրով, և ստաքիին իմ սիրելւոյս ։

10 Ողջոյն տուէք ապելլէին՝ որ ապնիւ է Տէրով ։

11 Ողջոյն տուէք նորանց՝ որ արիստաբուլի տանիցն են. ողջոյն տուէք հերոդիոնին՝ իմ ազգականիս. ողջոյն տուէք նորանց, որ նարկիսէի տանիցն են՝ Տէրով ։

12 Ողջոյն տաջիք տրիփո-
նեայ և տրիփոսեայ վաստա-
կաւորաց ՚ի Տէր • ողջոյն
տաջիք պերսիդեայ սիրելւոյ ,
որ բազում վաստակս վաս-
տակեաց ՚ի Տէր ։

13 Ողջոյն տաջիք ռուփեայ
ընտրելոյ ՚ի Տէր, և մօր նո-
րա և իմ ։

14 Ողջոյն տաջիք ասինկրի-
տեայ, փղեգոնտեայ, երմեայ,
պատրոբայ, երմայ, և որ ընդ
նոսա եղբարք իցեն ։

15 Ողջոյն տաջիք փիլողո-
գեայ՝ Յուլեայ՝ ներեայ՝ և
քեռ նորա • և ոլիմպեայ ,
և որ ընդ նոսա սուրբք ա-
մենեքին իցեն ։

16 Ողջոյն տաջիք միմեանց
՚ի համբոյր սրբութեան. ող-
ջոյն տան ձեզ ամենայն եկե-
ղեցիք Քրիստոսի ։

17 Աղաչեմ զձեզ՝ եղբարք,
գիտել զայնպիսիսն, որ հեր-
ձուածս և գայթակղութիւնս
առնիցեն արտաքոյ վարդա-
պետութեանն՝ զոր դուքն ու-
սայք. և խորշեցարուք ՚ի նո-
ցանէ ։

18 Զի այնպիսիքն Տեառն
մերում Քրիստոսի ոչ ծա-
ռայեն , այլ իւրեանց որո-
վայնի • և քաղցրաբանու-

12 Ողջոյն տուէք տրիփոնին
և տրիփոսին՝ աշխատաւորնե-
րին Տէրով • ողջոյն տուէք
պերսիդէին սիրելւոյն՝ որ շատ
աշխատանքով աշխատեայ Տէ-
րով ։

13 Ողջոյն տուէք ռուփա-
յին՝ որ ազնիւ է Տէրով. և
նորա և իմ մօրն ։

14 Ողջոյն տուէք ասինկրի-
տին, փղեգոնտին , երմին ,
պատրոբին , երմին , և եղ-
բարներին՝ որ նորանց հետ
են ։

15 Ողջոյն տուէք փիլողոգին
և Յուլիային և ներէային և
նորա ոլիմպիա քրիստոս ամէն
սրբերին՝ որ նորանց
հետ են ։

16 Ողջոյն տուէք իրար սր-
համբուրոյն • ողջոյն են տա-
լիս ձեզ Քրիստոսի ամէն ե-
կեղեցիներն ։

17 Աղաչումմ ձեզ՝ եղ-
բարք, որ մտիկ տաք նորանց
որ հերձուածներ և գայթակ-
ղութիւններ են շինում էն
վարդապետութենիդ դուրս՝
որ դուք սովորեցիք՝ և հե-
ռու քաշվեցէք նորանցից ։

18 Պատճառն որ՝ էնպէսի-
ներն մեր Տէր Քրիստոսին
չեն ծառայում. բայց իրանց
փորին • և քաղցր խօսքերով

թեամբ և օրհնութեամբ պատրաստ անմեղայ ։

19 Զի ձեր հնազանդութիւնն առ ամենեսեան հասեալ է. և արդ՝ ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստուն լինել՝ ի բարիս՝ և անմեղս ի չարիս։

20 Իսկ Աստուածն խաղաղութեան խորտակեսցէ զսատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ. շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ։

21 Ողջոյն տայ ձեզ տիմոթէոս եղբայր և գործակից իմ, և ղուկիոս, և յասոնն, և սոսիպատրոս աղգականք իմ։

22 Ողջոյն տամ ձեզ՝ և ես տերտիոս, որ գիրս գրեցի ի Տէր ։

23 Ողջոյն տայ ձեզ գայիոս տանուտէրն ամենայն եկեղեցւոյն. ողջոյն տայ ձեզ երաստոս շահապետ քաղաքիս, և կուարտոս եղբայր ։

24 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսին. ամէն ։

25 Այլ այնմ, որ կարօղն է հաստատել զձեզ ըստ ա-

և օրհնութիւնով խաբուելն անմեղներուն սրտերըն ։

19 Ինչու որ՝ ձեր հնազանդութիւնն ամէնի (ականջն) հասաւ. և սրահամար ուրախ եմ ձեզ համար. միայն թէ ուզուսիմ՝ որ դուք իմաստուն լինիք դէպի բարին և անմեղ չարի կողմանէ ։

20 Իւ խաղաղութեան Աստուածն կըխորտակէ սատանային ձեր ոտաց ներքեւն շուտով. մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն լինի ձեզ հետ ։

21 Ողջոյն կ՚տալիս ձեզ տիմոթէոս եղբայրն և իմ դործընկերս, և ղուկիոս և յասոն և սոսիպատրոս՝ իմ ազգականներս ։

22 Ողջոյն եմ տալիս ձեզ ես տերտիոս էլ՝ որ կսպ թուղթըս գրեցի Տէրոջ ։

23 Ողջոյն կ՚տալիս ձեզ գայիոս՝ որ իմ և ամէն եկեղեցոյ ընդունողն է. ողջոյն կ՚տալիս ձեզ երաստոս՝ քաղաքիս հոգատարն և կուարտոս եղբայր ։

24 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն (լինի) ձեզ ամէնիդ հետ. ամէն ։

25 Իսկ նորան՝ որ կարող է ձեզ հաստատ պահել իմ

ւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյս այսորիկ՝ ժամանակօք յաւիտենից լռեցեալ,

26 Եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէական՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց. յամենայն հեթանոսս ծանուցեալ՝

27 Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. նմա պատիւ և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

աւետարանիս ասէ և Յիսուսի Քրիստոսի քարոզութեան ասէ՝ էն խորհըրդոյ յայտնութեանն ասէ՝ որ յաւիտենից ժամանակից լռեալ պահված էր,

26 Բայց հիմիկ մարգարէից գրքերովն յայտնըվեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին ասէս՝ և հաւատքի հնազանդութիւնըն (գործելոյ համար) ամէն հեթանոսներին միջումն իմայուամ տըվաւ։

27 Էն միայն իմաստուն Աստուծոյն, նորան փառք յաւիտեանս յաւիտենից Յիսուսի Քրիստոսի ձեռովն. ամէն։

(Հաճախ այլ գրչագիր հրատարակութիւն. ծննդ. ար-հաւատքն յետոյ։)

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ։

—ww—

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս կոչեցեալ ա-
ռաքեալ Յիսուսի Քրիստո-
սի կամօքն Աստուծոյ, և
սոսթենէս եղբայր.

2 Ընկեղեցւոյդ Աստուծոյ՝
որ է ի կորնթոս՝ նուիրեալոց
ի Քրիստոս Յիսուս, կոչե-
ցեալոց սրբոց՝ ամենեքեան
հանդերձ, որք կարդան զա-
նուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի յամենայն տեղիս
նոցա՝ և մեր։

3 Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն յԱստուծոյ
հօրէ մերմէ՝ և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։

4 Գոհանամ զԱստուծոյ
իմոյ յամենայն ժամ վասն
ձեր՝ ի վերայ շնորհացն Աս-
տուծոյ՝ որ տուեալ են ձեզ
ի Քրիստոս Յիսուս։

1 Պօղոս Յիսուսի Քրիս-
տոսի կանչված առաքեալ՝
Աստուծոյ կամքովն և սոս-
թենէս եղբայր.

2 Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ
կորնթոսումն է, Յիսուս
Քրիստոսումն սրբացածներիդ՝
կանչված սրբերիդ՝ էն ա-
մէնին հետ որ մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի անունըն
(իրանց) կանչումեն՝ ամէն նո-
րանց և մեր տեղերումն։

3 Շնորհք (լինի) ձեզ հետ
և խաղաղութիւն Աստուածմանից՝
մեր հօրից և Տէր Յիսուս
Քրիստոսից։

4 Ամէն ժամանակ գոհա-
նումեմ իմ Աստուածմանից
ձեզ համար. Աստուծոյ էն
շնորհքներին համար՝ որ տըր-
ւած են ձեզ Յիսուս Քրիս-
տոսումն։

5 Զի յամենայնի մեծա-
ցարո՛ւք դուք նովաւ՝ ամե-
նայն բանիւ և ամենայն գի-
տութեամբ ։

6 Որպէս վկայութիւն իսկ
Աստուծոյ հաստատեցաւ ՚ի
ձեզ ։

7 Զի դուք մի՛ նուազիք
յիւրեք՝ և մի՛ իւիք շնորհօք, ակն-
կալեալ յայտնութեան Տե՛ր
մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

8 Որ և հաստատեսցէ զձեզ մինչև ՚ի կատարած՝ անարատս՝ յօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

9 Հաւատարի՛մ է Աս-
տուած, որով կոչեցարուք ՚ի հաղորդութիւն որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ։

10 Աղաչեմ զձեզ՝ եղբարք, անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան. և մի՛ իցեն ՚ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք ՚ի նոյն միտս և ՚ի նոյն հանճար ։

11 Ազդ եղեւ ինձ վասն ձե՛ր՝ եղբարք, ՚ի քղուայցւոց անտի, թէ հակառակութիւնք են ՚ի ձեզ ։

12 Այս ասեմ իսկ, զի թէ իւրաքանչիւրք ՚ի ձեզանէ

5 Որ ամէն բանի մէջ հարստացաք նորա՛նով՝ ամէն խօսքով և ամէն գիտութեամբ նով ։

6 Ինչպէս որ հհնոյ Աստուծոյ վկայութիւնն հաստատվեցաւ ձեր միջո՛ւմն ։

7 Որ դուք չըպակասիք իսկի մի՛ն շնորհքով էլ՝ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի յայտնութեան սպասէք ։

8 Որ նա էլ հաստատ կըպահէ ձեզ մինչև վերջն՝ որ անմեղ լինիք մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի օրն ։

9 Հաւատարի՛մ է Աստըւածն՝ որ դուք նորա՛նով կանչվեցաք դէպի նորա որդոյ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հաղորդութիւնն ։

10 Աղաչո՛ւմ ձեզ՝ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ որ ամէնդ հհնոյ մի՛ն խօսք ունենաք, և հերձուածք չըլինի ձեր միջո՛ւմդ. լինչու որ՝ հհնոյ մի՛ն մտքի և մի՛ն կարծիքի մէջ հաստատված էիք ։

11 Ի՛ղբարք՝ ես էն քղուայնիներիցն իմացայ ձեզ համար՝ որ հակառակութիւններ կան ձեզանո՛ւմ ։

12 Ուրեմն էս եմ ասում՝ որ ձեզանից ամէն մէկն ասու-

ասէ · ես պօղոսեան եմ , և միւսն՝ եթէ ես ապողոսեան , և միւսն՝ եթէ ես կեփայեան· և միւսն՝ եթէ ես Քրիստոսեան ։

13 Իսկ արդ՝ բաժանեալ ՚ի՞նչ իցէ Քրիստոս · միթէ պօղո՞ս ՚ի խաչ ելեալ իցէ վասն ձեր , կամ յանուն պօղոսի՞ մկրտեցարուք ։

14 Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ զի ո՛չ ոք ՚ի ձէնջ մկրտեցի՝ բայց միայն զԿրիսպոս՝ և զԳայիոս · զի մի՛ ոք ասիցէ ,

15 Թէ յիմ անուն մկրտեցարուք ։

16 Տաղ եւս կնիք և տանն ստեփաննեայ· և զայլ ոք ո՛չ գիտեմ ամենևին՝ թէ մկրտեցի ։

17 Զի ո՛չ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝ այլ աւետարանել · ո՛չ ճարտարու-թեամբ բանից , զի մի՛ գունայն լիցի խաչն Քրիստոսի ։

18 Զի ճառ խաչին , կորուսեալոցն յիմարութիւն է· այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ ։

19 Զի գրեալ է· կորուսից զիմաստութիւն իմաստ-

մէ՝ թէ ես պօղոսեան եմ , և մէկէլն՝ թէ ես ապողոսեան, և մէկէլն՝ թէ ես կեփասեան, և մէկէլն՝ թէ ես Քրիստոսեան ։

13 Պա ուրեմն բաժան-վա՞ծ է Քրիստոսն · միթէ պօղոս խաչվեցաւ ձեզ համար՝ կամ պօղոսի՞ անունովն մկրտեցաք ։

14 Գոհանում իմ Աստուածանից՝ որ ձեզանից մընին չըմկրտեցի· բայց միայն կրիսպոսին և գայիոսին · որ մինն չասէ ·

15 Թէ դուք իմ անունովս մկրտվեցաք ։

16 Ստեփանի տունըն էլ մկրտեցի · մին ուրիշը իսկի չեմ գիտում, թէ մկրտեցի ։

17 Պատճառն որ՝ Քրիստոս չուղարկեց ինձ մկրտելց , բայց աւետարանըն քարոզե-լց · (և էն) ո՛չ թէ վարպետութեան խօսքերով , որ ունայն չըլինի Քրիստոսի խաչն ։

18 Ինչու որ՝ խաչի խօսքն կորածներին համար յիմարութիւն է , բայց մեզ փրկվածներիս համար՝ Աստուծոյ զօրութիւն (է) ։

19 Ինչու որ՝ գրված է՝ թէ իմաստունների իմաստութիւ-

նոյ , և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից ։

20 Ո՛ւր իմաստուն, ուր դպիրը , ուր քննիչ աշխարհիս այսորիկ ։ Ոչ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ ։

21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած ։ Հաճեցաւ Ն՚ յիմարութեամբ քարոզութեն ապրեցուցանել զհաւատացեալս ։

22 Իսկ որովհետև հրէայք նշան հայցին , և հեթանոսք զիմաստութիւն խնդրեն ,

23 Մեք քարոզեսցուք զխաչեալն Քրիստոս , հրէից դայթագղութիւն, և հեթանոսաց յիմարութիւն ։

24 Բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթանոսաց զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն՝ և Աստուծոյ իմաստութիւն ։

25 Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ ։ և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ ։

նըրն կըկորչնեմ , և խելացիներուն խորհուրդները կանաքեմ ։

20 Ուր՞ իրեղ կայ իմաստուն, իրեղ կարդացօղ ։ իրեղ էս աշխարհքիս քննօղ ։ չէ՞ որ Աստուած էս աշխարհքիս իմաստութիւնըն յիմարացուց ։

21 Նրանհամար որ՝ Աստուծոյ իմաստութենովն աշխարհք իմաստութենով չըճանաչեց Աստուծոյն։ Ն՚ կամեցաւ որ յիմար քարոզութենով ապրեցնէ հաւատացեալներին ։

22 Բայց որովհետև հրէաները նշան են ուզում և հեթանոսներն իմաստութիւն են խնդրում ,

23 Մենք կըքարոզենք խաչված Քրիստոսին՝ հրէաներին համար գայթակղութիւն և հեթանոսներին համար յիմարութիւն ։

24 Բայց հինոյ էն հրէաներին և հեթանոսներին համար որ կանչված են Քրիստոսին (քարոզումենք) Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն ։

25 Պատճառն որ՝ Աստուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկ։ և Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ ։

26 Թէպէտ և ղձեր իսկ կոչումիդ տեսիք՝ եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազնուականք·

27 Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած՝ զի յամօթ արասցէ զիմաստունս· և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս·

28 Եւ զանտոհմս աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն, զի զէնս իմն խափանեսցէ։

29 Որպէս զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ։

30 Ձի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն·

31 Ձի որպէս և գրեալ է· որ պարծին՝ ի Տէր պարծեսցի։

36 Այլ հենց ձեր կոչումըն տեսէք՝ եղբարք, որ (չըկան) ոչ շատ իմաստուններ մարմնոյ կողմանէ, և ոչ շատ զօրաւորներ, և ոչ շատ ազնուականներ։

27 Հապա ես աշխարհքիս յիմարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ իմաստուններին· և աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ զօրաւորներին։

28 Եւ աշխարհքիս ցած մարդկանց և անարգվածներին Աստուած ընտրեց՝ և ոչինչներին՝ որ մինչեան լինողներին ոչինչացնէ։

29 Որ իսկի մին մարմին չըպարծենայ Աստուծոյ առաջին։

30 Ինչու որ՝ նորանից դուք էք Յիսուս Քրիստոսումն՝ որ Աստուածանից մեզ համար էլաւ իմաստութիւն, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն։

31 Որ ինչպէս որ էլ գրված է՝ նա որ պարծենումն՝ Տէրով պարծենայ։

Գլ· Բ։

1 Եւ ես Թէպէտ և եկի առ ձեզ՝ եղբարք, ոչ ըստ

1 Եւ ես էլ՝ եղբարք, ձեզ մօտ եկի, ոչ Թէ իմաս-

առաւելութեան ինչ քանից իմաստութեան պատմել ձեզ զվկայութիւն Աստուծոյ ։

2 Զի ոչ եթէ ՚ի մոլի եղի գիտել ինչ ՚ի ձեզ՝ բայց միայն զՅիսուս Քրիստոս՝ և զնոյն ՚ի խաչ ելեալ ։

3 Եւ ես տկարութեամբ՝ և երկիւղիւ և դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ ։

4 Եւ բանն իմ և քարոզութիւն, ոչ պատիր բանիւք իմաստութեան՝ այլ արդեամբք հոգւոյն և զօրութեամբ ։

5 Զի հաւատք ձեր մի իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ ։

6 Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ, և ոչ զիշխանացն աշխարհիս այսորիկ զնախանձեցոյս ։

7 Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ՚ի փառս մեր ։

8 Զոր ոչ ոք յիշխանացս աշխարհիս այսորիկ ծանեաւ.

տութեան քարձր խօսքերով Աստուծոյ վկայութիւն ձեզ պատմելոյ ։

2 Պատճառն որ՝ միաքս չէի դրած՝ մին ուրիշ բան գիտել ձեր միջումդ՝ բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ և նորան խաչված ։

3 Եւ ես տկարութենով և շատ վախով և դողութենով էլայ ձեզ մօտ ։

4 Եւ իմ խօսքս և՝ քարոզութիւնս՝ ոչ թէ իմաստութեան խաբեբայ խօսքերով էլաւ, այլ հոգոյ ներգործութենովն և զօրութենովն ։

5 Որ ձեր հաւատքն մարդկանց իմաստութենովն չըլինի՝ բայց Աստուծոյ զօրութենովն ։

6 Իմաստութիւն ենք խօսում կատարեալներին հետ, չէ թէ էս աշխարհքիս իմաստութիւնըն, և ոչ էլ էս աշխարհքիս իշխաններինըն՝ որ պիտի խափանվին ։

7 Բայց Աստուծոյ իմաստութիւնըն ենք խօսում, ծածուկ խորհըրդով՝ որ Աստուած յաւիտենից առաջ սահմանեց նորան մեր փառաց համար ։

8 Որ նորան էս աշխարհքի իշխաններից ոչ ով չըճանա-

զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց՝ ի խաչ հանէին։

9 Ա.ՅԼ որպէս և գրեալ է· զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

10 Ա.ՅԼ մեզ յայտնեաց Աստուած հոգւովն իւրով· զի հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ։

11 Զի ո՞ր ի մարդկանէ գիտէ բնչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ ի նմա. նոյնպէս և ոչ զԱստուծոյնն ոք գիտէ՝ եթէ ոչ հոգին Աստուծոյ։

12 Ա.ՅԼ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ զհոգին՝ որ յԱստուծոյ· զի ծանիցուք զայն՝ որ յԱստուծոյ շնորհեցաւ մեզ։

13 Յոր և զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ Հարտարութեամբ բանիւ, այլ վարդապետութեամբ հոգւոյն ընդ հոգևորս զհոգևորսն համեմատեմք։

չէոյ· բնչու որ՝ եթէ Հանապաճ լինէին՝ էլ փառաց Տէրըն խաչի խաչ չէին հանել։

9 Բայց ինչպէս որ էլ գրված է՝ (թէ) ինչ որ աչք չըտեսաւ և ականջ չըլսեց՝ և մարդոյ սիրտն չընկաւ՝ են պատրաստեց Աստուած իրան սիրօղներին համար։

10 Բայց մեզ Աստուած յայտնեց իրան հոգովն· ինչու որ՝ հոգին ամէն բան քննութ, և Աստուծոյ խոր բաներըն էլ։

11 ՊատՃառն որ՝ մարդկանցից ո՞վ է նա՝ որ մարդոյ բանըն գիտենայ՝ եթէ ոչ մարդոյ հոգին, որ նորանում է· ինպէս էլ Աստուծոյ բանըն ոչ ով չի գիտում, եթէ ոչ Աստուծոյ հոգին։

12 Բայց մենք ոչ թէ էս աշխարհքիս հոգին առինք, այլ էն հոգին, որ Աստուածանից է· որ Հանաչենք էն շնորհքըն՝ որ Աստուածանից տըվված մեզ։

13 Որ էս էլ խոսումենք՝ չէ թէ մարդկանցից սովորած վարպետաբան խօսքերով՝ բայց (սուրբ) հոգոյ վարդապետութենովն՝ (և) հոգևորներըն հոգևորներին հետ համեմատումենք։

14 Քանզի չնչաւոր մարդ
ոչ ընդունի զհոգւոյն Աս-
տուծոյ՝ զի յիմարութիւն է
նմա. և ոչ կարէ գիտել՝
եթէ հոգեպէս քննիցի։

15 Իսկ հոգեւորն քննէ զա-
մենայն, և ինքն յոմեքէ ոչ
քննի։

16 Իսկ արդ՝ ո՞վ գիտաց
զմիտս Տեառն, որ և խրատ-
տուէ լինիցի նմա. այլ մեք
զմիտս Քրիստոսի ունիմք։

14 Պատճառն որ՝ մարմնա-
ւոր մարդն Աստուծոյ հոգւոյ
բաներըն չի ընդունում. ին-
չու որ՝ յիմարութիւն է նո-
ցա առաջին. և չի կարող
գիտել՝ որ հոգևոր կերպով
պէտք է քննվի։

15 Բայց հոգևոր մարդն ա-
մէն բան քննուում և ինքն
իսկի մընից էլ չի քննվում։

16 Ապա ո՞վ է որ Տէրի միտ-
քըն գիտայ, որ բան սովոր-
ցնէ նորան. բայց մենք Քրիս-
տոսի միտքըն ունինք։

ԳԼ՝ Գ։

1 Եւ ես՝ եղբարք, ոչ
կարացի խօսել ընդ ձեզ իբ-
րև ընդ հոգեւորս՝ այլ իբրև
ընդ մարմնաւորս։

2 Իբրև տղայոց՝ ի Քրիս-
տոս, կաթն ջամբեցի ձեզ՝
և ոչ կերակուր, զի ոչ ևս
կարէիք. նաև արդ իսկ ոչ
կարէք. քանզի դեռ մարմ-
նաւոր էք։

3 Որ և արդ են իսկ ի
ձեզ հեռ և նախանձ. ո՞չ
ապրքէն մարմնաւոր էք՝ և
ըստ մարդկան գնայք։

1 Եւ ես՝ եղբարք, չըկա-
րացի ձեզ հետ խօսել ինչպէս
հոգևորների հետ, այլ ինչ-
պէս մարմնաւորների հետ։

2 Ինչպէս տղաներին Քրիս-
տոսումն՝ կաթը տուի ձեզ ու-
տել և չէ թէ կերակուր.
ինչու որ՝ դեռ չէիք կարող
և հենց հիմիկ էլ կարող չէք
նրա համար որ դեռ մարմնա-
ւոր էք։

3 Որովհետև դեռ հիմիկ
կռիւ և նախանձ կայ ձեզ-
նում՝ չէ՞ որ մարմնաւոր էք
և մարդկանց կերպով էք
վարվում։

4 Զի որ ասէ ոք՝ Ես
եմ Պաւղոսի, և այլ՝ Ես
եմ Ապողոսի, ո՞չ մարդ-
կան գնայք։

4 Որ ասում է՝ Ես եմ
Պաւղոսի, և ուրիշ՝ Ես եմ
Ապողոսի, չէ՞ որ մարդկան
պէս էք։

ձէնջ՝ ես պօղոսեան եմ, և միւսն՝ թէ ես ապողոսեան, ո՞չ մարդիկ էք. իսկ ա՛րդ՝ ո՛վ է պօղոս, կամ ո՛վ է ապողոսն ։

5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, և իւրաքանչիւր որպէս և Տէրը ետ ։

6 Ես տնկեցի, ապողոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց ։

7 Այսուհետև՝ ո՛չ այն ոք ինչ է՝ որ տնկեացն, և ո՛չ այն՝ որ ջուրն ետ. այլ որ աճեցոյցն Աստուած ։

8 Որ տնկեացն և որ ղջուրն ետ՝ մի են. բայց իւրաքանչիւրոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոյ ։

9 Զի Աստուծոյ գործակից եմք, Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած էք։

10 Ըստ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց այլ է՝ որ շինէն. այլ իւրաքանչիւրոք զգո՛յշ լիցի՝ թէ որպէս շինիցէ ։

11 Զի հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեդեալն՝

սուն՝ թէ ես պօղոսեան եմ՝ և մեկէլն՝ թէ ես ապողոսեան. չէ՞ որ դուք մարդիկ էք. ապա ո՞վ է պօղոսն կամ ո՞վ է ապողոսն ։

5 Պաշտօնեաներ (են). որ նորանոյ ձեռնդրէ հաւատացիք. և ամէն մէկն՝ ինչպէս որ Տէրն տուաւ ։

6 Ես տնկեցի, ապողոսն ջուր տուաւ, բայց Աստուած մեծացրուց ։

7 Ուրեմն ո՛չ նա՝ որ տնկէց, մին բան է՝ և ո՛չ նա՝ որ ջուր տուաւ. բայց Աստուած որ մեծացրուց ։

8 Նա՝ որ տնկէց և նա՝ որ ջուր տուաւ, մին (բան) են. բայց ամէն մէկն իրան վարձքն կառնէ իրան աշխատանքի չափովն ։

9 Ինչու որ՝ մենք Աստուծոյ գործընկեր ենք. դուք Աստուծոյ գործն էք, Աստուծոյ շինվածն էք ։

10 Աստուծոյ շնորհքի չափովն՝ որ ինձ տըվված է՝ իմաստուն ճարտարապետի պէս հիմըն դրի, բայց ուրիշն է՝ որ շինումէ, միայն թէ ամէն մէկն լաւ մտիկ տայ՝ թէ ինչպէս շինէ ։

11 Ինչու որ՝ ո՛չ ոք ուրիշ հիմունք չկարող դնել՝

որ է Յիսուս Քրիստոս ։

12 Եթէ ոք շինէ ՚ի վերայ հիմանս այսորիկ ոսկի՝ արծաթ՝ ականս պատուականս՝ փայտ, խոտ, եղէգն ,

13 Իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ , զի հրով յայտնելոց է ։

14 Եւ զիւրաքանչիւր գործն ղնայրդ և իցէ՝ հուրն փորձեսցէ ։

15 Եթէ ուրուք գործն՝ զոր շինեաց, կացցէ , վարձս առցէ. և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ ՚ի հուր ։

16 Ո՛չ գիտէք՝ եթէ տաճար էք Աստուծոյ՝ և հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ ։

17 Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ. ապականեսցէ զնա Աստուած . զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք ։

18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կամիցի ՚ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ , յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն ։

քան թէ էն որ դրված է. որ է Յիսուս Քրիստոսն ։

12 Թէ որ մինն էս հիմունքիս վերայ շինէ ոսկի , արծաթ, աղնիւ ակուընքներ, փայտ, խոտ, եղէգն (չոփչ) ։

13 Ամէն մէկի գործքն պիտի յայտնըվի . ինչու որ՝ օրն կերևացնէ՝ ինչու որ՝ կրակով պիտի յայտնըվի ։

14 Եւ ամէն մէկի գործքըն թէ ինչպէս է՝ կրակն կըփորձէ ։

15 Թէ որ մըմնի գործքն՝ որ շինեց, հաստատ կենայ՝ վարձք կառնէ . և թէ որ մըմնի գործքն այրվի՝ վնաս կըքաշէ, բայց ինքն կապրի . բայց էնպէս ինչպէս որ կրակով ։

16 Չէք գիտուըմ՝ որ դուք Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ հոգին բնակված է ձեզանուըմ ։

17 Թէ որ մինն Աստուծոյ տաճարըն ապականէ՝ նորան էլ Աստուած կապականէ. ինչու որ՝ Աստուծոյ տաճարն սուրբ է՝ որ էն դուք էք ։

18 Ձըլինի որ մինն իրան անձըն խաբէ . թէ որ ձեզանից մինն կամենայ իմաստուն լինի էս աշխարհքումս , թող նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի ։

19 Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ. քանզի գրեալ է՝ Թէ որ ըմբռնէ զիմաստունս ՚ի խոթագիտութեան նոցա ։

20 Եւ դարձեալ՝ Թէ Տէր գիտէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն ։

21 Այսուհետեւ մի ոք պարծեսցի ՚ի մարդկանէ ։

22 Զի ամենայն ինչ ձեր է. եթէ պօղոս, եթէ ապողոս, եթէ կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ ներկայնս, եթէ հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է ։

23 Դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ ։

19 Պատճառն որ՝ էս աշխարհքիս իմաստութիւնն յիմարութիւն է Աստուծոյ առաջին. ինչու որ՝ գրված է՝ (Թէ) իմաստուններին կըբռնէ իրանց խորագիտութեան մէջն ։

20 Եւ մին էլ՝ Թէ Տէրն ճանաչումէ իմաստուններուն մտածմունքներըն, որ ունայն են ։

21 Որեմն՝ չըլինի որ մարդկանցից մինն պարծենայ ։

22 Պատճառն որ՝ ամէն բան ձեր է· Թէ պօղոս, Թէ ապողոս,Թէ կեփաս,Թէ աշխարհ, Թէ կեանք, Թէ մահ, Թէ հիմիկվընօղ և Թէ նոր գալու բաներն. ամէն բան ձերն է ։

23 Դուք Քրիստոսին (էք)՝ և Քրիստոսն Աստուծոյն ։

ԳԼ· Դ ։

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի՝ և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ ։

2 Ուրդ՝ խնդիր է ՚ի մէջ հաղարապետաց՝ եթէ ոք հաւատարիմ գտցի ։

3 Այլ ինձ և այս անար-

1 Ծոմ մարդիկ էսպէս համարեն մեզ՝ ինչպէս Քրիստոսի պաշտօնեաներըն և Աստուծոյ խորհուրդներուն տնտեսները ։

2 Հիմիկ տնտեսների մէջումն էն են խնդրում՝ որ մինն հաւատարիմ գտնըվի ։

3 Բայց ինձ համար էս էլ

գանք են, եթէ ՚ի ձէնջ դատեցայց՝ կամ քնաւ իսկ ՚ի մարդկանէ. նաև զանձն իմ ոչ քննեմ։

4 Զի ոչ ինչ գիտեմ զանձին իմոյ. այլ ոչ եմ ի սմա արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է։

5 Այսուհետև մի յառաջքան զժամանակն դատիք. մինչև եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս սրտից. և ապա իւրաքանչիւր գովութիւն եղիցի ՚ի Աստուծոյ։

6 Զայս՝ եղբարք, առակեցի յանձն իմ և յապողոս վասն ձեր. զի ՚ի մէնջ ուսջիք՝ մի ինչ առաւել քան զգրեալսն իմանալ. զի մի այր քան զընկեր հպարտասցէք ՚ի վերայ ընկերին։

7 Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ. զի՞նչ ունիս՝ զոր ոչ իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև ոչառեալ։

8 Արդէն իսկ յագեալ իցէք՝ և արդէն մեծացարուք, առանց մեր թագաւորեցիք. և երանի թէ թագաւորէիք՝

հեշտ բան է՝ որ ձեզանից դատիմ՝ կամ իսկի մին մարդուց. էլ ես իմ անձըս չեմ քննում։

4 Ինչու որ՝ իմ անձիս համար բան չեմ գիտում. բայց ոչ թէ սրանով արդարանում. պատճառն որ նա՝ ոչ ինձ քննումէ, Տէրն է։

5 Սրահամար՝ ժամանակից առաջ մի դատէք՝ մինչև որ Տէրն կըգայ՝ որ խաւարի ծածուկ բաներըն կըբերէ լուսոյ մէջ, և սըրտերի խորհուրդներըն կըյայտնէ. և ապա ամէն մէկին գովասանք կըլինի Աստուածանից։

6 Այս բանըս՝ եղբարք, իմ անձիս և ապողոսին վերայ առակով ասացի՝ ձեզ համար. որ մեզանից սովորիք գրվածքից աւելի բան չիմանալ. որ չըլինի թէ մարդ ընկերի վերայ հպարտանայ ընկերի պատճառովն։

7 Ապա ո՞վ է՝ որ քեզ կըքննէ. ի՞նչ ունիս դու՝ որ էն չես առել. և թէ որ առել ես. ինչո՞ւ ես պարծենում՝ չառածի պէս։

8 Հենց հիմիկ կըշտացել էք՝ և հենց հիմիկ հարստացաք՝ առանց մեզ թագաւորեցիք՝ և երանի թէ թա

զի և մեք ընդ ձեզ ըմպա-
ւորիցեմք ։

9 ինձ այսպէս թուի՝ եթէ
զիւղ գառաքեալս յեռնորդս
սրսբ Աստուած՝ իբրև զմա-
հապարտս. զի տեսիլ եղեալ
աշխարհի ; և հրեշտակաց և
մարդկան ։

10 Մեք յիմարք վասն Քրիս-
տոսի, և դուք իմաստունք
ի Քրիստոս. մեք տկարք՝
և դուք հզօրք. դուք փա-
ռաւորեալք՝ և մեք անարգք։

11 Մինչև ցայսօր ժամա-
նակի՝ և քաղցեալք և ծարա-
ւեցեալք և մերկ գնացեալք և
կռփահարեցեալք և անհան-
գիստ եղեալք ։

12 Յս աշխատեցեալք ձեռօք
մերովք. բամբասեին զմեզ՝
օրհնեաք. հալածէին՝ յանձն
առնուաք ։

13 Ձայհոյէին՝ աղաչեալք.
իբրև առակ նշաւակի եղեալք
ամենայն աշխարհի. ամենե-
ցուն փարեալի լինել մինչև
ցայժմ։

14 Ոչ եթէ ամօթ ինչ
առնելով զձեզ՝ գրեմ զայս,
գաւորիկք, որ մեզ էլ ձեզ
հետ ըմպաւորիլիք ։

9 Ինձ էսպէս է երևում՝
թէ Աստուած մեզ առաքեալ-
ներիս շատ յետին արաւ՝ մա-
հապարտների պէս. ինչու որ
աշխարհքի տեսարան էլանք,
հրեշտակաց էլ՝ մարդկանց
էլ ։

10 Մենք յիմար (էլանք)
Քրիստոսի համար, և դուք՝
իմաստուն Քրիստոսումն.
մենք տկար՝ և դուք զօրաւոր.
դուք փառաւորված և մենք
անարգված ։

11 Մինչև էս օրվան ժա-
մանակս սովեցինք և ծարա-
ւեցինք, և մերկ գնացինք և
գլխներս զարկվեցաւ և հան-
գըստութիւն չըգտինք ։

12 Յս աշխատեցինք մը
ձեռներովս. բամբասումէին՝
մեզ և մենք օրհնումէինք,
հալածումէին և մենք սիրով
համբերումէինք ։

13 Ձայհոյումէին և մենք
(նորանց համար) աղաչանք է-
ինք անում. ինչպէս խայտա-
ռակուելեան օրինակ էլանք
ամէն աշխարհքին՝ մինչև հի-
միկ ջնջոց լինելով ամէն
մարդկանց առաջին ։

14 Ձէ եթէ ձեզ ամօթ անելոյ
համար եմ էս գրում. բայց

այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ։

15 Թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք ՚ի Քրիստոս՝ այլ ոչ եթէ բազում հարս. զի ՚ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ։

16 Ընդ՝ աղաչեմ զձեզ նմանօգք լինել՛ք՝ որպէս և ես Քրիստոսի։

17 Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զտիմոթէոս, որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ ՚ի Տէր. որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ, որ ՚ի Քրիստոս Յիսուս. որպէս և ամենայն ուրեք՝ յամենայն եկեղեցիս ուսուցանեմ։

18 Որպէս թէ ես չիցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք հպարտացան։

19 Այլ եկից հուսկ ընդ հուսկ՝ եթէ Տէր կամեսցի. և ՚ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն։

20 Զի ոչ եթէ բանիւք է արքայութիւն Աստուծոյ, այլ զօրութեամբ։

21 Ընդ՝ որպէս կամիք՝ դա-

ինչպէս իմ սիրելի որդիքն՝ բրս խրատումեմ։

15 Թէ և հազարաւոր վարդապետներ ունենաք Քրիստոսումն՝ բայց ոչ թէ շատ հարք. ինչու որ Յիսուս Քրիստոսումն ես աւետարանովն ծնայ ձեզ։

16 Ուրեմն աղաչումեմ ձեզ՝ որ ինձ նմանօղ լինիք. ինչպէս որ ես էլ Քրիստոսի։

17 Ընդհակառակ տիմոթէոսին ուղարկեցի ձեզ մօտ, որ իմ սիրելի և հաւատարիմ որդի է Տէրով. որ ձեր մտքներդ բերէ իմ ճանապարհներըն՝ որ Քրիստոսումն են. ինչպէս որ ամէն տեղ ամէն եկեղեցիներումն սովորցնումեմ։

18 Մին քանիսն ամբարտաւանութեամբ պարծենումեն՝ իբր թէ ես չըպիտի գամ ձեզ մօտ։

19 Բայց կըգամ էս մօտիկ ժամանակներումս թէ որ Տէրն կամենայ՝ և միտքս կառնեմ ոչ թէ գոռոզացածներուն խօսքերըն՝ բայց զօրութիւնըն։

20 Ինչու որ Աստուծոյ արքայութիւնն ոչ թէ խօսքերով է՝ բայց զօրութեամբ։

21 Ինչա՞ ինչպէս էք կա-

աղաչանաց եկիցս առ ձեզ, եւ թէ սիրով հոգւոյն՝ հեզութեան եւ արդարութեան եւ խոնարհութեան ։

մինուն. գաւազանիվ գամ ձեզ մօտ, թէ սիրով և հեզութեան և արդարութեան և խոնարհութեան հոգովն ։

ԳԼ. Ե ։

1 Բնաւ և անուանի իսկ ի ձեզ ընդհ՚ը պոռնկութիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ունել ։

1 Լսակի ձեր միջումդ ինչ պոռնկութիւն է անուանվում, և էնպէսի պոռնկութիւն՝ որ հեթանոսների միջումն էլ չկայ՝ էնպէս որ մինն իրան հօր կնոջն ունենայ ։

2 Իւ դուք հպարտացեալ էք. և ոչ առաւել սգացաք, զի բարձի ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գործեաց ։

2 Իւ դուք գոռոզացած էք՝ և աւելի սուգ չէք վրտնում՝ որ ձեր միջիցն վեր առնըվի նա՝ որ էն բանըն գործեց ։

3 Զի ես թէպէտ մարմնով մեկուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրև ի մօտոյ ընտրեցի. զայն՝ որ այնպէսն գործեաց ՝

3 Իւս թէ և մարմնով հեռու եմ, բայց հոգովս մօտիկ եմ. և սրահամար հենց հիմիկ մօտ լինօղի պէս վըճռեցի՝ որ նորան՝ որ էնպէսի բան գործեց ՝

4 Յանուն Տն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ժողովել ձեզ ի միասին՝ և իմով հոգւոյս՝ զօրութեամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,

4 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ ձեր և իմ հոգով, միտեղ ժողովվելոյ ժամանակումն՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութեան հետ.

5 Մատնել զայնպիսին սատանայի ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի յա-

5 Էնպէսին մատնեմ սատանայի ձեռքն, որ մարմինն սատակվի՝ որ հոգին ապրի

ւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

6 Ո՛չ բարւոք են պարծանքդ ձեր ։ Ո՞չ գիտէք՝ եւ թէ փոքր մի խմոր ջամենայն զանգուածն խմորէ ։

7 Սրբեցէք ՚ի բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմոր ։ քանզի զատիկ մեր պեսաւ Քրիստոս ։

8 Ընդհակառակ արասցուք տօնս ։ ոչ ՚ի խմորն հին, եւ ոչ ՚ի խմորն չարութեան եւ անզգամութեան։ այլ անխմոր սուտզուրեան եւ ճշմարտութեան ։

9 Գրեցի ձեզ ՚ի թղթի այդր չխառնակել ընդ պոռնիկս ։

10 Ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս եւ ընդ յափշտակողս՝ կամ ընդ կռապաշտս ։ ապա թէ ոչ պարտ էիք եւ յաշխարհէ խակ ելանել ։

11 Բայց արդ՝ գրեցի ձեզ չխառնակել ։ եթէ ոք եղբայր անուանեալ, կամ պոռնիկ իցէ կամ կռապարիշ՝ կամ ագահ՝ կամ բամբասող՝ կամ արբեցօղ՝ կամ յափշտակող, մի՛ ընդ Տէր ճաշոյ ։

6 Ձեր պարծանքդ լաւ չէ ։ չէ՞ք գիտեւմ՝ որ մին փոքր խմոր ամէն շաղախն խմորացնուցանէ ։

7 Դէն քացեցէք հին խմորը՝ որ նոր շաղախ լինիք, ինչպէս որ դուք չէք խմորած ։ պատճառն որ՝ Քրիստոս մեզ համար զատիկ (գառն) մորթուեցաւ ։

8 Սրահամար տօն կատարենք ոչ թէ հին խմորով, եւ ոչ թէ չարութեան եւ չարագործութեան խմորովն, բայց արդարութեան եւ ճշմարտութեան չընխմորածովն։

9 Գրեցի ձեզ էդ թուղթով՝ որ չընխառնուիք պոռնիկներու հետ ։

10 Այս էն՝ ոչ թէ էս աշխարհքիս պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ, կամ յափշտակողներուն հետ, կամ կռապաշտներուն հետ ։ ապա թէ չէ՝ պէտք էր ձեզ՝ որ հենց աշխարհքիս դուրս գնայիք ։

11 Բայց հիմիկ գրեցի ձեզ՝ որ չընխառնուիք։ թէ որ մին՝ որ եղբայր է անուանուած, կամ պոռնիկ լինի, կամ ագահ, կամ բամբասող կամ հարբեցող, կամ յափշտա-

ընդ այնպիսուհի և հայ մի՛ ուտել։

12 Զի՞ կայ իմ և զարտաքինսն դատել· ո՞չ ապաքէն դուք զներքինսդ դատիցիք։

13 Իսկ զարտաքինսն Աստուած դատեսցի· բարձէք զչարն ի միջոյ ձերմէ։

կօղ· Էնպիսոյն հետ հայ էլ մի՛ ուտէք։

12 Ինձ ի՞նչ պէտք է՝ որ դըրսինները դատեմ· չէ՞ որ դուք ներսինները պիտի դատէք։

13 Իսկ դըրսինները Աստուած կըդատէ· (դուք) չարը ձեր միջնէն վե՛ր առէք։

ԳԼ· Զ։

1 Խնդիր ոք ունի ընդ ընկերի իւրում, դատել առաջի անիրաւաց՝ և ոչ առաջի սրբոց։

2 Եթէ ոչ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին· և եթէ ձեօք դատի աշխարհ՝ ապա ոչ էք արժանի անարդ ատենից։

3 Ոչ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թո՛ղ թէ զերկրաւորս։

4 Զ երկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգսն եկեղեցւոյ դատաւորս նստուցէ՛ք։

5 Ուռ ամօթոյ ձերոյ ասեմ։

կօղ· Էնպիսոյն հետ հայ էլ մի՛ ուտէք։

12 Ինձ ի՞նչ պէտք է՝ որ դըրսինները դատեմ· չէ՞ որ դուք ներսինները պիտի դատէք։

13 Իսկ դըրսինները Աստուած կըդատէ· (դուք) չարը ձեր միջնէն վե՛ր առէք։

1 Զեղանիցէ մինն՝ թէ որ բան ունիցի իւրան ընկերին հետ, համարձակի՞ւմ՝ որ անիրաւներուն առաջին դատաստան անել և ոչ թէ սըրբերուն առաջին։

2 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ սըրբերն աշխարհքըս կըդատեն· և թէ որ ձեզանով աշխարհքն կըդատվի՝ ապա չէ՞ք արժան՝ որ ցած բաներուն վերայ դատաստան անէք։

3 Չէ՞ք գիտում որ մենք հրեշտակներըն կըդատենք· էլ որքան աւելի երկրաւոր բաներըն։

4 Երկրաւոր բաներուն համար թէ որ դատաստան ունիք նկեղեցոյ ցած մարդկանցըն, ձեղ համար դատաւոր նստացրէ՛ք։

5 Ձեր ամօթի համար եմ

սեմ. այնչափ ոչ գոյ որ իմաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ դատել ՚ի մէջ եղբօր իւրոյ։

6 Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն ՚ի մէջ անհաւատից։

7 Նա արդ՝ ամենևին իսկ վատթարութիւն է ՚ի ձեզ, զի դատաստանք իսկ գոն ՚ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք առաւել նեղիք։

8 Այլ դուք զրկէք և նեղէք, և այդ զեղբարս և։

9 Կամ ոչ գիտէք՝ զի առնիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապաշիշք, ոչ շունք,

10 Ո՛չ իգայեալք, ոչ արուաւէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցօղք, ոչ բամբասօղք և ոչ յափշտակօղք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն։

11 Եւ դուք այնպիսիք ոմանք էիք այլ լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ արդարացարուք յանուն Տեառն

աստուա. եւ էնքան մին իմաստուն մարդ չըկայ ձեր միջումդ՝ որ կարօղ լինի իրաւունք անել իրան եղբարների մէջն։

6 Հայց եղբայր եղբօր հետ դատաստան է գնում. և էն էլ անհաւատների մէջ։

7 Նէ հիմի՝ հենց լսպառ վատ բան է՝ որ ձեր միջումդ դատաստան և կռիւ կայ՝ ինչո՞ւ դուք չէք զրկվում. և աւելի դուք չէ՞ք նեղն մտնում։

8 Հայց դուք զրկում եք և նեղացնում եք՝ և էն էլ ձեր եղբայրներին։

9 Կամ չէ՞ք գիտում՝ որ անիրաւներն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ. մի խաբվիք. ոչ պոռնիկներն, ոչ կռապաշտներն, ոչ շնացօղներն,

10 Ո՛չ էգի տեղ անցնօղներն, ոչ արուաւէտներն, ոչ գողերն, ոչ ագահներն, ոչ հայբեցօղներն, ոչ բամբասօղներն, ոչ յափշտակօղներն, Աստուծոյ արքայութիւնն չեն ժառանգիլ։

11 Նէ դուք էնպէսներ էիք. բայց լուացվեցաք՝ բայց սրբվեցաք, բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիս-

մերոյ Յիսուսի Քրիստոսի, և՝ ի հոգին Աստուծոյ մերոյ։

12 Ամենայն ինչ ինձ լինի արդարև է՝ այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ արդարև է, այլ ոչ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիմ։

13 Կերակուր որովայնի, և որովայն կերակրոյ· այլ Աստուած զսա և զնոսա խափանեսցէ· բայց մարմին ոչ պոռնկութեան՝ այլ Տեառն, և Տէր մարմնոյ։

14 Այլ Աստուած՝ որ և զՏէրն յարոյց, և զմեզ յարուսցէ զօրութեամբ իւրով։

15 Ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի· արդ՝ առեալ զանդամս Քրիստոսի, առնիցեմք անդամս պոռնկի· քաւ լիցի։

16 Կամ եթէ ո՞չ գիտէք՝ զի որ միանայ ի պոռնիկ՝ մի մարմին է· եղիցին՝ ասէ, երկոքին ի մարմին մի։

17 Այլ որ միանայ ի Տէր՝ մի հոգի է։

տոսի անուանովն և մեր Աստուծոյ հոգովն։

12 Ամէն բան կարելի է ինձ, բայց ամէն բան օգուտ չէ· ամէն բան կարելի է ինձ՝ բայց չըլինի որ ես մին բանի իշխանութեան տակն լինիմ։

13 Կերակուրն փորին համար (է) և փորն կերակուրին համար· բայց Աստուած սրան և նորան կըխափանէ· միայն թէ՝ մարմինն պոռնկութեան համար չէ, բայց Տէրին համար· և Տէրն մարմնոյն համար։

14 Բայց Աստուած՝ որ մեր Տէրն յարոյց՝ ձեզ էլ կըյարուցանէ իրան զօրութենովն։

15 Ձե՞ք գիտում՝ որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են· ապա Քրիստոսի անդամները առնենք և պոռնիկի անդամ շինենք· քաւ լիցի։

16 Կամ ձե՞ք գիտում՝ որ նա՝ որ պոռնիկին մօտենում, մին մարմին է (նորա հետ)· երկուսն՝ ասում, մին մարմին կըլինին։

17 Այլ նա՝ որ Տէրին մօտենում՝ մին հոգի է (նորա հետ)։

18 փախերուք ՚ի պոռնկութենէ. զամենայն մեղս՝ զոր և գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝ յիւր մարմնին մեղանչէ:

19 Կամ ոչ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են հոգւոյն սրբոյ՝ որ է ՚ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ. և չէք անձանց տէր:

20 Վասնզի գնոյ գնեցայք. փառաւորեցարուք զԱստուած ՚ի մարմինս ձեր և յոգիս՝ որ է յԱստուծոյ:

18 Փախչք պոռնկութենէն. ամէն մեղք՝ որ մարդ կ՚ընէ, իրան մարմնէն դուրս է. բայց նա՝ որ պոռնկութիւն կ՚անէ, իրան մարմնոյն դէմ կ՚մեղանչէ:

19 Կամ չէք գիտեր, որ ձեր մարմիններն սուրբ հոգւոյ տաճար են՝ որ ձեզի նէ՝ որ Աստուծմէ ունիք և ձեր անձին չէք պատկանիր:

20 Վասն զի գնով ծախուեցաք. էլ փառաւորեցէք Աստուծոյ ձեր մարմնովն և ձեր հոգովն՝ (որ են Աստուծոյն):

ԳԼ. Ի:

1 Այլ վասն որոյ գրեցիքն առ իս, բարւոք է մարդոյ՝ ՚ի կին մարդ չմերձենալ:

2 Բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւրք զիւր կին կալցի. և իւրաքանչիւրք կին զիւր այր կալցի:

3 Կնոջ այր իւր զպարտն հատուսցէ. նոյնպէս և կինն՝ առն իւրում:

1 Բայց էն բանի համար՝ որ ինձ գրեցիք, (ասումեմ) թէ լաւ է մարդոյ համար՝ որ կնկան չդպչուիննայ:

2 Սիայն թէ՝ պոռնկութեան պատճառովն թող ամէն մէկ մարդ իրան կին բռնէ՝ և ամէն մէկ կին թող իրան մարդ բռնէ:

3 Կնկանն իրան մարդն թող պարտքըն վճարէ՝ և էնպէս էլ կինն իրան մարդոյն:

4 Զի կին մարմնոյ լերուամ
ոչ իշխէ՝ այլ այրն. նոյնպէս
և այրն իւրուամ մարմնոյ ոչ
իշխէ՝ այլ կինն։

5 Մի՛ զրկէք զմիմեանս.
բայց եթէ ինչ՝ ի միաբա-
նութենէ առ ժամանակ մի,
զի ուխտիցն պարապիցէք. և
դարձեալ՝ ի նոյն դարձջի՛ք,
զի մի փորձեսցէ զձեզ սա-
տանայ վասն անխառնութեան
ձերոյ։

6 Զայս ասեմ ներելով՝
և ոչ հրաման տալով։

7 Քանզի կամիմ եթէ ա-
մենայն մարդ լինէր իբրև
զիս. այլ իւրաքանչիւրըք զիւր
շնորհս ունի ՚ի Աստուծոյ՝ ոմն
այսպէս և ոմն այնպէս։

8 Բայց ամուրեացն և այ-
րեացն ասեմ, լաւ է նոցա՝
եթէ կայցեն իբրև զիս։

9 Այլ թէ ոչ ունիցին
ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ
է ամուսնանալ՝ քան զբեռ-
նուլ։

10 Այլ կանամբեացն պատ-
ուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր.
կնոջ յառնէ ՚ի մէկնել։

4 Պատճառն որ կինն ի-
րան մարմնոյն վերայ իշխա-
նութիւն չունի՝ բայց մարդն.
ենպէս էլ մարդն իրան մարմ-
նոյն վերայ իշխանութիւն չու-
նի, բայց կինն։

5 Ընդհակառակն որ իրար զրկէք՝
բայց եթէ իրար հետ միա-
բանութիւնը մին քիչ ժամանակ.
որ աղօթքի պարապիք՝ և
մինէլ մինտեղ դարձէք՝ որ
սատանան չըփորձէ ձեզ՝ ձեր
անժուժկալութեան պատճա-
ռովին։

6 Այս ներելով եմ ասում,
և ոչ թէ հրաման տալով։

7 Պատճառն որ կամենու-
մեմ՝ որ ամէն մարդ ինձ պէս
լինէր. բայց ամէն մարդ ի-
րան (յատուկ) շնորհքըն ու-
նի Աստուածմանից. մինն՚ պէս
պէս և մինն էնպէս։

8 Բայց կին չունողներին և
որք ևերիներին ասում եմ թէ՝
լաւ է նորանց համար, որ ինձ
պէս կենան։

9 Այլ թէ որ չըդիմա-
նան՝ թող պսակվին. ինչու
որ աւելի լաւ է պսակվիլ,
քան թէ տաքանալ։

10 Բայց պսակվածներին
պատուիրում ոչ թէ ես՝
այլ Տէրն. որ կինն չըջոկվի
իրան մարդուցն։

11 Ապա եթէ մեկնեսցի, անայր ճասցէ՝ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն՝ կին իւր մի թողուլ։

12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր. եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զնա։

13 Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զայրն։

14 Զի սուրբ է այրն անհաւատ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ սուրբ են։

15 Ապա եթէ անհաւատն մեկնեսցի, մեկնեսցի, զի ոչ ինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ քեռն՝ յայնպիսի իրս. քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած։

16 Զի գիտես՝ կին դու, եթէ զայրն քո ապրեցուսցես. կամ զի՞ գիտես՝ այր դու, եթէ զկինն քո ապրեցուսցես։

11 Ապա թէ որ ջոկվի թող առանց մարդոյ ինոյ՝ կամ մինել իրան մարդոյն հետ հաշտվի. և որ մարդն էլ իրան կինըն բայց չըթողէ։

12 Բայց ուրիշներին ես պատուիրում, չէ թէ Տէրն. որ եթէ մին եղբայր անհաւատ կին ունենայ, և նորան հաճոյ լինի նորա հետ բնակվիլ. թող բայց չըթողէնորան։

13 Եւ կին՝ որ անհաւատ մարդ ունենայ, և նա կամենայ նորա հետ բնակվիլ՝ նա թող մարդոյն չըթողէ։

14 Պատճառն որ՝ անհաւատ մարդն. սրբված է կնոջն, և անհաւատ կինն սրբված է մարդովն. ապա թէ չէ՝ ձեր որդիքն պիղծ կըլինէին. բայց հիմիկ սուրբ են։

15 Բայց թէ որ անհաւատն ջոկվելու լինի, թող ջոկվի. ինչու որ՝ էսպէսի բաների մէջ քրիստոնեայ կամ եղբօր վրայ հարկաւորութի չըկայ. նրա համար որ՝ Աստուած կոչեց մեզ խաղաղութեան մէջ։

16 Ինչ ես գիտում՝ ով կին, որ քո մարդըդ կապրեցնես. և ինչ ես գիտում՝ ով մարդ, որ քո կնըդ կապրեցնես։

17 Եթէ ոչ՝ խրաքանչիւր
ումեք որպէս և բաժանեաց
Տէր, զխրաքանչիւրոք որպէս
և կոչեաց Աստուած՝ այնպէս
գնասցէ· և այսպէս ընդ ա-
մենայն եկեղեցիս պատուիրեմ
ամ ։

18 Թլփատեալ ոք կոչեցաւ՝
մի ցանկասցի անթլփատու-
թեան· Յանթլփատութենէ
ոք կոչեցաւ՝ մի թլփատեսցի·

19 Զի թլփատութիւն ոչ
ինչ է՝ և անթլփատութիւն
ոչ ինչ· այլ պահպանութիւն
Աստուծոյ պատուիրանացն ։

20 Բայց խրաքանչիւրոք
յոր կոչումն կոչեցաւ՝ ՚ի նմին
կացցէ ։

21 Ծառայ կոչեցար՝ մի
փոյթ լիցի քեզ· այլ թէ և
կարիցես ազատ լինել՝ քեզ
այնպէս լաւ իցէ ։

22 Զի որ ՚ի Տէր կոչե-
ցեալ է ծառայ՝ ազատ
տեառն է· նոյնպէս և որ
ազատն կոչեցեալ է՝ ծառայ
Քրիստոսի է ։

23 Գնով գնեցայք՝ մի լինիք
ծառայք մարդկան ։

24 Խրաքանչիւրոք՝ յոր կո-
չումն կոչեցաւ՝ եղբարք, ՚ի
նմին կացցէ առաջի Աստու-
ծոյ ։

17 Միայն թէ՝ ամէն մէկն
ինչպէս որ Տէրն բաժանեց
նորան· ամէն մէկն ինչպէս
որ Աստուած կանչեց նորան,
ենպէս գնայ· և ենպէս ա-
մէն եկեղեցիներուն պատը-
էր եմ տալիս ։

18 Մինն՝ որ թլփատված կան-
չեցաւ, թող անթլփատուճն
չըցանկանայ· միւնն որ անթլ-
փատութենիէն կանչվեցաւ՝
թող չըթլփատվի ։

19 Ինչու որ որ՝ թլփատու-
թիւնն ոչ ինչ է, և անթլ-
փատութիւնն ոչ ինչ· բայց
Աստուծոյ պատուիրանքներն
պահպանութիւնն ։

20 Բայց ամէն մէկն՝ որ կո-
չումի մէջն որ կանչվեցաւ,
թող նորանում կենայ ։

21 Ծառայ կանչվեցար՝
թող՝ հոգս մի աներ· բայց թէ
որ կարենաս ազատ էլ լինել՝
քեզ համար ենպէս էլ լաւ է։

22 Պատճառն որ՝ ծառան
որ տէրոջմէ կանչված է՝ նա
տէրի ազատն է· հենց էն-
պէս էլ ազատն որ կանչված
է՝ Քրիստոսի ծառայ է ։

23 (Մեծ) գնով գնվեցաք՝
մարդկանց ծառայ մի լինիք։

24 Ամէն մէկն ինչ կոչումի
մէջն որ կանչվեցաւ՝ եղբարք,
թող նորանում կենայ Աս-
տուծոյ առաջին ։

25 Ա՛յլ վասն կուսանաց՝ հրաման ինչ՛ի Տեառնէ ո՛չ ունիմ. բայց խրատ տամ՝ որպէս ողորմեալ ուրուք ՛ի Տեառնէ, հաւատարիմ լինել:

26 Համարիմ՝ թէ այնպէս լաւ իցէ. բայց վասն վտանգին՝ որ ՛ի վերայ կայ, բարւոք է մարդոյ թէ այնպէս իցէ:

27 Կապեալ ես ՛ի կնոջ, մի խնդրեր արձակել. արձակեալ ես ՛ի կնոջէ, մի խնդրեր կին:

28 Զի եթէ ամուսնանայցես՝ ո՛չ մեղար. և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ո՛չ մեղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն. այլ ես խնայեցի ՛ի ձեզ:

29 Բայց զայս ասեմ՝ եղբարք, եթէ ժամանակս կարճեալ է այսուհետև. ոյ որ ունիցին կանայս՝ որպէս թէ չունիցին:

30 Եւ որ լացեն՝ որպէս թէ ո՛չ լացեն. և որ խընդանն՝ որպէս թէ չխնդացեն. և որ գնեն՝ որպէս թէ չունիցին:

31 Եւ որ վարեն զաշ-

25 Բայց կուսանքներին հաւմար մին հրաման չունիմ Տէրոյն. միայն թէ խրատ եմ տալիս՝ ինչպէս մինն որ Տէրոյն ողորմութիւն գտաւ՝ հաւատարիմ լինելոյ:

26 Ես համարումեմ՝ թէ ենպէս լաւ է. բայց վըտանգին համար՝ որ մօտիկ է՝ լաւ է մարդոյն՝ որ ենպէս լինի:

27 Կնկան հետ որ կապված ես՝ մի հեռևիը արձակվելոյ. կնկանիցն որ արձակված ես՝ կին՝ մի ուզեր:

28 Բայց թէ որ պսակվիս՝ չըմեղանչեցիր. և թէ որ մին կոյս պսակվի չըմեղանչեց. միայն թէ ենպէսիներն մարմնոյ նեղութիւն կունենան. բայց ես խնայումեմ ձեզ:

29 Բայց էս եմ ասում՝ եղբարք, թէ ժամանակս կարճ է սրանից ետև, որ նորանք որ կին ունին՝ ինչպէս թէ չունենային:

30 Եւ նորանք՝ որ լոյ են լինում, ինչպէս թէ լոյ չըլինէին. և նորանք՝ որ ուրախանումեն, ինչպէս թէ չուրախանային. և նորանք՝ որ ծախու առնումեն, ինչպէս թէ չունենային:

31 Եւ նորանք՝ որ էս աշ-

խարհս՝ որպէս թէ չվայելի-
ցին. զի անցեալ է վայել-
չութիւն աշխարհիս այսորիկ։

32 Ա՛յլ կամիմ զձեզ ան-
հոգս լինել. զի որ անկինն
է՝ հոգայ զՏեառն, թէ ո՛ր-
պէս հաճոյ լիցի Տեառն ։

33 Իւ որ կանամբին է,
հոգայ զաշխարհիս՝ թէ որ-
պէս հաճոյ լիցի կնոջ իւ-
րում ։

34 Իւ ահա մեկնեցան ՚ի
միմեանց առնակինն և կոյս.
զի կոյս հոգայ զՏեառն՝ զի ի-
ցէ սուրբ հոգւով և մարմնով,
և առնակինն հոգայ զաշխար-
հիս՝ թէ որպէս հաճոյ լիցի
առն իւրում ։

35 Ա՛յլ զայս վասն ձերոյ
օգտի ասեմ. ո՛չ եթէ խեղդ
ինչ արկանեմ ձեզ, այլ վասն
պարկեշտութեան՝ և հպատա-
կութեան Տեառն առանց
զբաղանաց ։

36 Ապա թէ ոք ամօթ հա-
մարեսցի վասն կուսին իւրոյ՝
եթէ իցէ ելեալ ըստ չափ,

խարհքըս վայելումն, ինչ-
պէս թէ չըվայելէին, ինչու
որ՝ ես աշխարհքիս պղծեց-
կութիւնն անցել է ։

32 Ուզեմ կամենալմէ որ
դուք հոգսի մէջ չըլլիք.
պատճառն որ նա՝ որ կին չու-
նի, Տէրի բաներին համար
է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի Տէրին ։

33 Իւ նա՝ որ կին ունի,
աշխարհքի բաներին համար
է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի իրան կնկանն ։

34 Իւ եսպէս էլ իրարից
զատված են պատկված կինն
և կոյսն. ինչու որ՝ կոյսն
Տէրի բաներին համար է
հոգս անում՝ որ սուրբ լինի
մարմնով և հոգով, և պատկ-
ված կինն աշխարհքի կողմա-
նէ հոգս է անում՝ թէ ինչ-
պէս հաճոյ լինի իրան մար-
դոյն ։

35 Մ՚իայն թէ՝ ես (բանըս)
ձեր շահի համար եմ ասում.
և չէ թէ ձեր վրաներին խեղ-
դելոյ չուան եմ քցում. բայց
պարկեշտութեան համար՝ և
առանց զբաղմունքի Տէրին
հետևելոյ համար ։

36 Ապա թէ որ մին ամօթ
համարէ իրան կուսին համար՝
որ տարերի չափչփն դուրս է

և այնպէս ինչ պարտ իցէ լինել. զոր կամեսցի արասցէ, ոչ մեղանչէ՝ ամուսնասցի։

37 Իսկ որ հաստատեալ է ի սրտի իւրում, և վտանգ ինչ ոչ իցէ նմա իշխանութիւն ունի ի վերայ կամաց իւրոց. և զայն ընտրեսցէ ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր, բարւոք առնէ։

38 Ընդ որ ամուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ. և որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ։

39 Կին կապեալ է՝ յորքան ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ուր կամիցի ամուսնանալ. այլ միայն Տեառնմբ։

40 Բայց երանելի ևս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու. ես այսպէս համարիմ, եթէ և ունիմ իցէ հոգի Աստուծոյ։

էլլել և ենպէսի բան պէտք է լինիլ. նա ինչպէս որ կամենում թող անէ. չի մեղանչում՝ թող պսակվի։

37 Բայց նա՝ որ իրան սրտի մէջն հաստատել է և մին վտանգ չըկայ նորա համար՝ էլ իրան կամքին վերայ իշխանութիւն ունի և էն ընտրեց իրան սրտումն՝ որ իրան կոյսն պահի՝ նա լաւ է անում։

38 Ընդ նա որ իրան կոյսըն՝ մարդոյ է տալիս, լաւ է անում, և նա՝ որ մարդոյ չի տալիս, էլ աւելի լաւ է անում։

39 Կինն կապված է՝ քանի ժամանակ որ նորա մարդն կենդանի է, բայց թէ որ նորա մարդն ննջէ, ապա ազատ է պսակվելոյ ում հետ որ կամենայ, միայն Տէրով։

40 Բայց էլ աւելի երանելի է. թէ որ էնպէս կենայ՝ իմ տըված խրատին պէս. (բայց) ես էսպէս եմ համարում, թէ ինձանում էլ Աստուծոյ հոգին կայ։

Գլ. Ը։

1 Այլ վասն զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ամենեքին գիտութիւն ունիմք. գիտու-

1 Բայց կըռքերի մասալ-ներին համար գիտումնիք. որ ամենքս գիտութիւն ունինք.

թիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ ։

2 Եթէ ոք կամիցի գիտել ինչ, չևևաս գիտաց՝ որպէս արժանն էր գիտել ։

3 Բայց որ սիրէ զԱստուած, նա է տեղեկացեալ ի նմանէ ։

4 Այլ վասն կերակրոցն զոհելոյ՝ գիտեմք եթէ ոչ ինչ իսկ կուռքդ են յաշխարհի· զի չիք ոք աստուած բայց ի միոյն ։

5 Զի թէպէտ և իցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի· որպէս և են աստուածք բազումք՝ և տեարք բազումք ։

6 Այլ մեզ մի է Աստուած հայր՝ յորմէ ամենայն, և մեք ի նա· և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն, և մեք նովաւ ։

7 Այլ ոչ յամենեսին գիտութիւն է· ոմանք առ սովոր մտաց մինչև ցայժմ զկուռսն իբրև զոհեալ ուտեն· և խղճ մտացն նոցա՝ քանզի տկար է, պղծի ։

գիտութիւն հպարտացնուցէ, բայց սէրն շինուցէ ։

2 Թէ որ մինն մտքի մէջ դնէ թէ բան գիտէ՝ նա դեռ բան չըգիտաց, ինչպէս որ պէտք է գիտել ։

3 Բայց նա՝ որ Աստուծոյն սիրուէ, նա ճանաչված է նորանից ։

4 Ուրեմն զոհված կերակուրներին համար գիտենք որ կըռքերն ոչ ինչ են աշխարհքումս· պատճառն որ՝ իսկի մին աստուած չըկայ էնմըտնից զատ (աստված)։

5 Որ թէ և կան՝ որ աստուածներ անուանվին՝ թէ երկնքումն և թէ երկրի վերայ· ինչպէս որ շատ աստըւածներ կան և շատ տէրեր։

6 Բայց մենք մին Աստուած ունինք, հայրըն՝ որ նորանից ամէն բան է և մենք նորա համար· և մին Տէր Յիսուս Քրիստոս՝ որ նորանով է ամէն բան, և մենք նորանով ։

7 Միայն թէ ամէնքն գիտութիւն չունին· ինչու որ՝ մին քանիսն մինչև հիմիկ կըռքի բանըն զոհված բանի պէս խըղճմտանքով են ուտում, և նորանց խըղճմտանքն՝ որ տկար է՝ պըղծվում ։

8 Ա՛յլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ եթէ չուտեմք՝ պակասիմք ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք ինչ:

9 Բայց զդո՛յշ լերուք, գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագղութիւն լինի-ցի տկարացն:

10 Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմաւ՝ ի մեհենի՝ ոչ ապա խիղճ մտաց նորա, որ տկարութեամբ զգածեալ է՝ անդրէն շինիցի ուտել զղո-հեալն:

11 Եւ կորնչիցի տկար եղբայրն ի քում գիտութեանն, վասն որոյ Քրիստոս մե-ռաւ:

12 Եւ այսպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, ի Քրիստոս մեղանչէք:

13 Վասն որոյ՝ եթէ կե-րակուր գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի զեղբայրն իմ գայթագղեցուցից:

8 Բայց կերակուրն չէ՝ որ մեզ ընդունելի է անուամ Աստուծոյ առաջինն. որ եթէ չուտենք միւն բանով չենք պակասիլ, և եթէ ուտենք միւն բանով չենք աւելանալ:

9 Միայն թէ զդո՛յշ կա-ցէք՝ որ էդ ձեր ազատու-թիւնդ գայթակղութիւն չը-լինի տկարներին համար:

10 Թէ որ միւն քեզ՝ որ էդ գիտութիւնըդ ունիս, կըռքի տան մէջ տեսնէ սեղանատա՝ չէ՞ որ նորա խըղճմտանքն՝ որ տկարութենով բռնըլած է, միւնել կդըդվի որ զոհված բանըն ուտէ:

11 Եւ էն տկար եղբայրն կը-կորչի քո գիտութենովի՝ էն որ նորա համար Քրիստոս մեռաւ:

12 Եւ էսպէս եղբարներին դէմ մեղանչելով և տկարնե-րի խըղճմտանքըն դըդելով՝ Քրիստոսին դէմ մեղք էք գործում:

13 Ընդհամար՝ թէ որ կե-րակուր իմ եղբօրըս գայթակ-ղացնում՝ ես յաւիտեան միս չեմ ուտիլ՝ որ իմ եղբօրըս չըգայթակղացնեմ:

ԳԼ· Թ·

1 ՈՉ ապաքէն ազատ եմ, ոչ ապաքէն առաքեալ եմ, ոչ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմով տեսի, ոչ ապաքէն գործ իմ դուք էք ի Տէր։

2 Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ, այլ դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ի Տէր։

3 Իմ պատասխանի՝ ուր զիս հարցանիցեն, այս է։

4 Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել։

5 Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն զքոյս, կանայս շրջեցուցանել ընդ մեզ· որպէս և այլ առաքեալքն, և եղբարքն Տեառն, և Կեփաս։

6 Եւ՞թէ միայն ես և բառնաբաս ոչ ունիցիմք իշխանութիւն չգործել ինչ։

7 Ո՞ր երբէք զինուորիցի իւրովք ծոշակօք· ո՞ր տընկիցէ այգի և ի պտղոյ նորա ոչ ուտիցէ· ո՞ր արածիցէ խաշն՝ և ի կաթանէ խաշնին ոչ ուտիցէ։

Զի՞ որ ազատ եմ· չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին իմ աչքովս տեսի· չէ՞ որ դուք իմ գործս էք Տէրով։

2 Թէ և ուրիշներին համար առաքեալ չըլինիմ, բայց դեպի ձեզ եմ· ինչու որ իմ առաքելութեան կնիքն (ՖՕՀԸ) դուք էք Տէրով։

3 Ըստեղ որ ինձ հարցնեն, իմ պատասխանս էս է։

4 Մի՞թէ (մենք) իշխանութիւն չունի՞նք ուտելու և խմելու։

5 Մի՞թէ իշխանութիւն չունի՞նք քրիստոներ, կանայք մանաւանդ մեզ հետ ինչպէս որ ուրիշ առաքեալներն և Տէրի եղբարքն եւ, և Կեփաս եւ։

6 Մի՞թէ մենակ ես և բառնաբաս իշխանութիւն չունինք որ բան չընդունինք։

7 Խակի՞ ով է որ հենց իրան պաշարողին զինուորութիւն անէ՝ ով է որ այգի (քաղ) անկէ և նորա պտղին չուտէ· ով է որ հօտ (ՓՐՈՒ) արածացնէ և հօտի կաթնին չուտէ։

8 Մինչեւ ըստ մարդկու-
թեան խօսիցեմ զայս. կամ
մինչ եւ օրէնքն զսոյն ոչ ա-
սիցեն։

9 Ի մովսէսի իսկ յօրէնսն
դրեալ է. ոչ կապեսցես
զցուլիկ եզին կալոտուոյ, մի-
թէ զեզեանց լինչ փոյթ էր
Աստուծոյ։

10 Ո՞չ ապաքէն վասն մեր
ասէ. քանզի վասն մեր գրե-
ցաւ, զի յուսով պարտի՝ որ
սերմանէն, սերմանել. եւ որ
կաստուն՝ յուսով վայելել։

11 Եթէ մեք ի նմա զհո-
գեւորն սերմանեցաք՝ մեծ բնչ
է, եթէ ի նենջ զմարմ-
նաւորսդ հնձիցեմք։

12 Եթէ այլք նորով իշ-
խանութեամբդ վայելեն, ոչ
առաւել եւս մեք, այլ ոչ ի
գործ ինչ արկաք զիշխանու-
թիւնս զայս. քայց ամենայնի
համբերեմք. զի մի խա-
փան ինչ լինիցիմք աւետա
րանին Քրիստոսի։

13 Ո՞չ գիտէք եթէ որ ի
տաճարին գործեն, ի տա-
ճարէ անտի ուտեն. եւ որ
սեղանոյն պաշտօնեայք են,
ի սեղանոյ անտի վայելեն։

14 Նոյնպէս եւ Տէր հրա-

8 Մինչեւ ես բանըս մար-
դոյ կերպով եմ ասում՝ կամ
չէ՞ որ օրէնքն եւ ես բանըս
ասում։

9 Հենց մովսէսի օրէնքում
գրված է՝ թէ կալի մէջ աշ-
խատող եզան դունչը մի կա-
պիր. միթէ Աստուած եզնե-
րին համար էր հոգս անում։

10 Չէ՞ որ մեզ համար է ա-
սում. պատճառն որ՝ մեզ հա-
մար գրվեցաւ, որ նա որ ցանու-
մէ, պէտք է յուսով ցանել. եւ նա՝
որ կաստում, յուսով վայելել։

11 Թէ որ մենք հոգեւորներըս
հոգեւորներըդ սերմեցինք՝ եւ
մեծ բան է՝ որ հոգեւոր
մարմնաւորներըդ հնձենք։

12 Թէ որ ուրիշներն էդ
հոգ վերայ իշխանութիւնդ
կըվայելեն, եւ աւելի ինչո՞ւ
մենք չէ. միայն թէ մենք ես
իշխանութիւնս չըբանայ-
րինք. բայց ամէն բանի հա-
մբերում ենք, որ իսկի խափան
մուենք չըդնենք Քրիստոսի
աւետարանին։

13 Չէ՞ք գիտում թէ նո-
րանք՝ որ տաճարում գործու-
մեն, էն տաճարիցն են ու-
տում. եւ նորանք՝ որ սեղանի
պաշտօնեաներ են, էն սեղա-
նիցն են վայելում։

14 Նոյնպէս եւ Տէրն հրա-

ման եւ. որոց գաւետարանն աւետարանեն, յաւետարանէ անտի կեալ։

15 Բայց ես և ոչ գի ինչ յայսցանէ արկի ՚ի գործ, և ոչ գրեցի գայդ՝ զի ինձ այնպէս ինչ լինիցի. լաւ է ինձ մանաւանդ մեռանել, և ոչ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի։

16 Զի եթէ աւետարանեմ, ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ՚ի վերայ. բայց վա՛յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ։

17 Իբրէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. և ե՛թէ ակամայ՝ տնտեսութի՛ւն յանձն է ինձ։

18 Ի՞նչ արդ՝ զի՛նչ վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելոյն ձրի տայ զաւետարանն, զի մի զեղծիցիմ ինչ իշխանութեամբն իմով յաւետարանի անդ։

19 Վասնզի ազատ էի յամենայնէ՝ և ամենեցուն զանձն ՚ի ծառայութեան կացուցի. զի զբազումս շահեցայց։

20 Եղէ ընդ հրէայսն իբ-

ման՝ տուաւ, որ նորանք որ աւետարանըն քարոզեմն, են աւետարանիչն ասլրին։

15 Բայց ես սրանցից խակի միներն էլ չըբանայրի. և էդ բանըդ չըգրեցի նրահամար որ՝ ինձ էլ էդպէսի բան լինի. էլ աւելի լաւ է ինձ, որ մեռնիմ, քանթէ՝ որ միներն իմ պարծանքըս ունայն համարէ։

16 Պատճառն որ՝ թէ որ աւետարանըն քարոզեմ. էն պարծանք չէ ինձ համար. ինչու որ՝ էն հարկ է ինձ վերայ, բայց վա՛յ է ինձ թէ որ չաւետարանեմ։

17 Թէ որ յօժար կամքով էն անեմ, վարձք կըլինի ինձ, և թէ որ ակամայ (անեմ) էլ տնտեսութիւնն յանձնըված է ինձ։

18 Ապա ես ի՞նչ վարձք ունիմ. էն որ՝ աւետարանելոյ ժամանակն ձրի (ձա՜ւքաա) տամ աւետարանըն, որ իմ իշխանութիւնըս վատ չըբանացնեմ՝ որ էն աւետարանութեան է։

19 Պատճառն որ՝ ամէն(մարդուց) ազատ էլի, և իմ անձըս ամէնին ծառայ արի, որ շատ մարդկանց շահեմ։

20 Հրէաներին հետ հրէա-

րև պհրէայ , ալ պհրէայն շահեցայց ։

21 Եղէ ընդ օրինօք իբրև պայնասիկ՝ որ ընդ օրինօքն էին. իբր ոչ ելթէ ընդ օրինօքն էի , այլ ի որ ընդ օրինօքն իցեն՝ և պնոսա շահեցայց . ընդ անօրէնս եղէ իբրև զանօրէնն . իբր ոչ ելթէ անօրէն ինչ էի Աստուծոյ , այլ ընդ օրինօք Քրիստոսի , ալ շահեցայց զանօրէնսն ։

22 Եղէ ընդ տկարս իբրև պակար՝ ալ պակարն շահեցայց , ընդ ամենայնի ամենայն եղէ, ալ թերևս ապրեցուցից զոմանս ։

23 Զայս ամենայն առնեմ վասն աւետարանին, ալ կցորդ եղէց նմա ։

24 Ո՞չ գիտէք՝ ելթէ որ յասպարիսին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան. բայց մի որ առնու գյաղթութիւն . այնպէս ընթացարուք՝ ալ հասանիցէք ։

25 Ամենայն՝ որ պատերազմի , ամենայնի ժուժկալ լինի . նոքա զի պղծանելի պսակն առնուցուն՝ և մեք աննդուխեան ։

յի պէս ելայ, որ հրէաներըն շահեմ ։

21 Օրէնքին ներքև լինողներին հետ նորանց պէս ելայ, որ օրէնքի ներքևն էին. իբր թէ չէ որ ես օրէնքի ներքևն էի՝ բայց որ նորանց ել շահեմ , որ օրէնքի ներքևն են. անօրէններին հետ անօրէնի պէս ելայ . իբր չէ թէ ես Աստուծոյ առաջին մին անօրէնն էի , բայց Քրիստոսի օրէնքի ներքևն՝ որ անօրէններին շահեմ ։

22 Տկարներին հետ տկարի պէս ելայ՝ որ տկարներին շահեմ . ամենին հետ ամէն բան ելայ, որ լինի թէ մին քանիսըն ապրեցնեմ ։

23 Այս ամէն բաներըս աւետարանին համար եմ անում, որ բաժին ունենամ նորա հետ։

24 Չէ՞ք գիտում՝ թէ նորանք՝ որ ասպարէզի (հեյանի) մէջն վազումն, վազով ամենքն են վազում . բայց միայն է որ յաղթութեան պակըն առնում . դուք էնպէս վազեցէք՝ որ հասնիք ։

25 Ամէն ով որ պատերազմի է անում, ամէն բանից ժուժկալ է կենում . նորանք՝ որ մին ապականելի պակ առնեն , և մեք՝ էն որ չի ապականվիլ ։

26 Արդ՝ ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յաղեւպրեմս. այնպէս մրցիմ, որպէս ոչ ի զէզոմս հնչ. կոծելով ։

27 Այլ ձնշեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ. զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ ։

26 Ուրեմն հինգ ես էնպէս եմ վազում. չէ թէ ինչպէս անորևոյնի բանի համար. էնպէս եմ կռւում՝ չէ թէ ինչպէս քամինների պարկելով ։

27 Հայց իմ մարմինըս նկրթև եմ քցում՝ և հնազանդայնում՝ որ չըլինի թէ ես՝ որ ուրիշներին քարոզեցի, ինքս անպիտան գտնըվիմ ։

ԳԼ· Ժ ։

1 Ո՛չ կամիմ, եղբարք, զի տգէտք իցէք՝ եղբարք, զի հարքն ամենքեան ընդ ամպովն էին. և ամենքեան ընդ ծովն անցին ։

2 Եւ ամենեքեան ՚ի մովսէս մկրտեցան յամպն և ՚ի ծովն։

3 Եւ ամենեքեան զնոյն հոգեւոր կերակուրն կերան ։

4 Եւ ամենեքեան զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ՚ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր գհետ նոցա. և վէմն էր ինքն Քրիստոս ։

5 Այլ ոչ եթէ ընդ բազումս ՚ի նոցանէ հաճեցաւ Աստուած. քանզի տապաստան անկան յանապատի անդ ։

1 Ձեմ կամենում՝ եղբարք՝ որ չըգիտենաք՝ թէ մեր հարքն ամենքն էլ ամպի տակն էին և ամենքն ծովի միջովն անցկացան ։

2 Եւ ամենքն մնացին ձեռովն Մկրտվեցան՝ էն ամպի և ծովի մէջն ։

3 Եւ ամենքն էլ էն հոգևոր կերակուրըն կերին ։

4 Եւ ամենքն էլ էն հոգևոր խմելիքըն խմեցին. ինչու որ՝ էն հոգևոր վէմից էին խմում՝ որ գնում էր նորանց հետ. և էն վէմն հինց ինքն Քրիստոս էր ։

5 Հայց Աստուած նորանցից շատերին չըհաւանեց. ինչու որ՝ էն անապատի մէջն՝ գետինն քցված վէրընկան ։

6 Եւ այն օրինակաւ լինէր վասն մեր. զի մի լինցուք ցանկացօղք չարեաց, որպէս և նոքայն ցանկացան։

7 Եւ մի կռապաշտիչք լինել՝ որպէս ոմանք ի նոցանէ, որպէս և գրեալ է. Նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝ և յարեան ի խաղալ։

8 Եւ մի պոռնկեսցուք. որպէս ոմանք ի նոցանէ պոռնկեցան, և անկան ի միում աւուր քսան և չորք հազարք։

9 Եւ մի փորձեսցուք զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին, և յօձից անտի սատակեցան։

10 Եւ մի տրտնջեսցուք, որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին, և կորեան ի սատակչէ անտի։

11 Այլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա. բայց գրեցաւ վասն մերոյ խրատուս, յորս վախճան յաւիտեանցն եհաս։

12 Այսուհետև որ համարիկ հաստատուն կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի։

13 Փորձութիւն ի ձեր վրայ ոչ է եկեալ բայց ի

6 Եւ էն էլաւ՝ որ մեզ օրինակ լինի. որ չար բաների ցանկացօղ չըլինինք՝ ինչպէս որ նորանք ցանկացան.

7 Եւ կռապաշտ չըլինինք՝ ինչպէս որ նորանցից մին քանիսն (էլան). ինչպէս որ գրված է՝ Լեզ ժողովուրդն նստեց որ ուտի և խմի՝ և վերկացան որ խաղ անեն։

8 Եւ պոռնկութիւն չանենք, ինչպէս որ նորանցից մին քանիսն պոռնկութիւն արին. և մին օրում քսան և չորս հազար մարդ վեր ընկան։

9 Եւ Տէրըն չըփորձենք՝ ինչպէս որ նորանցից մին քանիսն փորձեցին, և էն օձերից սատակվեցան։

10 Եւ չըտրտնջենք՝ ինչպէս որ նորանցից մին քանիսն տրտնջեցին և էն սատակողի ձեռովն կորան։

11 Բայց էն ամէնն օրինակի համար էր նորանց վերայ անցնում. բայց մեզ խրատի համար գրվեցաւ՝ որ ժամանակների վերջն հասաւ մեզ։

12 Ուրեմն ով որ համարէ թէ հաստատ է կանգնած՝ թող զգոյշ լինի, որ վեր չընկնի։

13 Ուրիշ փորձութիւն ձեզ վերայ չի եկել՝ բայց միայն

մարդկանէ · այլ հաւատա-
լիմ է Աստուած՝ որ ոչ
արկցէ զձեզ ’ի փորձուԹիւն
առաւել քան զկար ձեր ·
այլ արասցէ ընդ փորձու-
Թեանն և զելս՝ զի համբերել
կարասջիք ։

14 Վասն որոյ, սիրելիք իմ,
փախերուք ’ի կռապաշտու-
Թենէ ։

15 Իբրև ընդ իմաստունս
խօսիմ· ընտրեցէք ձեզէն՝ զոր
ասեմ ։

16 Բաժակն օրհնուԹեան՝
զոր օրհնեմք, ոչ ապաքէն
հաղորդուԹիւն է արեանն
Քրիստոսի · հացն՝ զոր բե-
կանեմք, ոչ ապաքէն հա-
ղորդուԹիւն է մարմնոյն
Քրիստոսի ։

17 Զի մի հաց՝ մի մար-
մին եմք բազումքս· զի ա-
մենեքեան ’ի միոջէ հացէ ան-
տի վայելեմք ։

18 Տեսէք զԻսրայէլն ըստ
մարմնոյ · ոչ ապաքէն՝ որ
ուտեն ’ի զոհիցն՝ հաղորդ են
սեղանոյն ։

19 Իսկ արդ զի՛նչ ասեմ,
Թէ զոհեալն իցէ ինչ· և
կամ Թէ կուռքն իսկ իցե՞ն
ինչ ։

20 Այլ զոր զոհենն հե-
Թանոսք, դիւաց՝ և ոչ Աս-
մարդկանցից · բայց Աստ-
ուած հաւատարիմ է՝ որ չի
քոյիլ ձեզ փորձուԹեան մէջ
ձեր կարօղուԹենիւն աւելի,
բայց էն փորձուԹեան հետ
դուրս գալըն էլ կանէ՝ որ
կարենաք համբերել ։

14 Ընդհամար՝ իմ սիրե-
լիքս՝ փախէք կռապաշտու-
Թենիւն ։

15 Ինչպէս իմաստունների
հետ եմ խօսում, դուք ինքդ
դատեցէք էն՝ որ ասում եմ ։

16 ՕրհնուԹեան բաժակն՝
(Խաղն) որ օրհնումենք, չէ՞ որ
նա հաղորդուԹիւն է Քրիս-
տոսի արիւնին · հացն՝ որ
կտրումենք՝ չէ՞ որ նա հաղոր-
դուԹիւն է Քրիստոսի մար-
մնոյն ։

17 Որովհետև մին հաց (է),
մենք շատերս մին մարմին ենք·
ինչու որ՝ ամենքս մին հացիցն
ենք վայելում ։

18 Տեսէք իսրայէլեան մարմ-
նոյ կողմանէ· չէ՞ որ նորանք՝
որ մատաղներիցն են ուտում,
մասնակից են սեղանին ։

19 Ասած ի՞նչ ասեմ· միԹէ
զոհածն մին բան է, և կամ
Թէ կռքերն էլ մին բան են ։

20 Հայց էն, որ հեԹանոս-
ներն մատաղ են անում ,

տուծոյ զոհին. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւացս լինել. քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել՝ և զբաժակն դիւացս։

21 Եւ ոչ կարէք՝ ի սեղանոյ Տեառն վայելել՝ և ի սեղանոյ դիւացս։

22 Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն. միթէ զօրագոյնք եցեմք քան զնա. ամենայն ինչ ինձ մարթի է՝ այլ ոչ ամենայն ինչ օգուտ է։

23 Ամենայն ինչ ինձ մարթի է, այլ ոչ ամենայն ինչ շինէ։

24 Մի ոք զանձին ևթէ խնդրիցէ՝ այլ և զընկերին։

25 Ամենայն ինչ՝ որ ի սպանդանոցի վաճառի, կերայք՝ և մի խարէք վասն խղճի մտացդ։

26 Զի Տեառն է երկիր լրիւ իւրով։

27 Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ և կամիցիք երթալ. զամենայն ինչ՝ որ դներին են մատուցանում, և ոչ եթէ Աստուծոյն. (ես) չեմ կամենում՝ որ դուք դևերին մասնակից լինիք. պատճառն որ՝ չէք կարող Տէրի բաժակէն (խաչէն) խմել՝ և դևերի բաժակէն էլ։

21 Եւ չէք կարող Տէրի սեղանիցն վայելել՝ և դևերի սեղանիցն էլ։

22 Կամ եթէ Տէրըն նախանձ շարժենք՝ միթէ (անք) նորանից աւելի զօրաւոր ենք. ամէն բան կարելի է ինձ. բայց ամէն բան օգուտ չէ։

23 Ամէն բան կարելի է ինձ. բայց ամէն բան շինուածք չեն տալիս։

24 Ոչ ոք իր մտքին հետևի, բայց նորան էլ որ ընկերին է։

25 Ամէն բան՝ որ սպանդանոցում (պատրաստուած) ծախվում, կերէք և չը քննէք խղճմտանքի պատճառով։

26 Պատճառն որ՝ երկիրն Տէրինն է իրան ամէն լիութիւնովը։

27 Թէ որ անհաւատներից մէնն կանչէ, ձեզ և դուք կամենաք գնալ՝ ամէն բան

առաջն դնիցի, կերայք՝ և մի խաբէք վասն խղճի մտացդ։

28 Եպա եթէ ոք ասասցէ ձեզ՝ Թէ այդ զոհեալ է, մի ուտիցէք վասն նորա՝ որ դուշակն եղև, և վասն խղճի մտացն։

29 Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զիւրն, այլ զընկերին. իսկ ընդէ՞ր ընաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց։

30 Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ եսն գոհանամ։

31 Արդ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ զի՛նչ և առնիցէք, զամենայն ինչ ՚ի փառս Աստուծոյ արասջի՛ք։

32 Առանց գայթագղութեան դնելոյ հրեից և հեթանոսաց լինիջի՛ք և եկեղեցւոյն Աստուծոյ։

33 Որպէս և ես ամենևին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին։

որ ձեր առաջին դնվի՝ կերէք և չը՛քննէք խըղճմտանքի պատճառովն։

28 Ապա եթէ որ միևն ասէ ձեզ՝ Թէ էդ զոհված բան է՝ մի ուտէք՝ նորա պատճառովն՝ որ իմացուած առաւ և խըղճմտանքի պատճառովն։

29 Ասայ խըղճմտանք եմ ասում ոչ Թէ իրանըն, այլ ընկերինըն. եվ իսկի ինչո՞ւ իմ ազատութիւնս ուիշի դատվի ուրիշի խըղճմտանքիցն։

30 Թէ որ ես շնորհակալութեանով վայելուսում. ինչո՞ւ հայհոյվիմ էն բանի համար՝ որ ես նորա համար (Աստուածանից) գոհանուսում։

31 Ուրեմն՝ Թէ ուտէք, Թէ խմէք, Թէ ինչ գործ էլ որ անէք՝ ամէն բան Աստուծոյ փառաց համար արէք։

32 Առանց գայթակղութեան տալոյ լինէք հրէաներին և հեթանոսներին և Աստուծոյ եկեղեցոյն։

33 Ինչպէս որ ես էլ ամէն բանով ամէնին հաճոյ եմ լինում. իմ անձիս օգուտըն չեմ խնդրում՝ բայց շատերինըն՝ որ փրկվին։

1 Ես մանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի։

2 Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիս յիշէք. և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնս ունիցիք։

3 Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ այր, և գլուխ Քրիստոսի Աստուած։

4 Ամենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր։

5 Իսկ ամենայն կին՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով՝ յամօթ առնէ զգլուխն իւր, զի այնպէս հաստատեալ է։

6 Զի եթէ ոչ սքօղեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գերծուլ, սքօղեսցի։

7 Արն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և փառք Աստուծոյ է.

1 Ընդ նմանօղ էլէք, ինչպէս որ ես էլ Քրիստոսի։

2 Գովուսմամ ձեզ՝ որ իմ ամէն բաներըս յիշուսիք՝ և ինչպէս որ պատուիրեցի ձեզ՝ էն պատուիրանքներըն պահումք։

3 Կամենուսմամ՝ որ դուք գիտենաք՝ թէ ամէն մարդոյ գլուխն Քրիստոս է, և կնկան գլուխն մարդն (է) և Քրիստոսի գլուխն՝ Աստուած։

4 Ամէն մարդ՝ երբոր աղօթք անէ կամ մարգարէնայ՝ և գլուխըն ծածկած ունենայ, ամօթ է անում իրան գլուխըն։

5 Իսկ ամէն կին՝ երբոր աղօթք անէ կամ մարգարէնայ բաց գլխով, ամօթ է անում իրան գլուխըն. ինչու որ՝ էնպէս է համարվում՝ թէ վերսրած է։

6 Որ եթէ կին քող չըքցէ՝ թող իրան մազերըն էլ կտրէ. ապա թէ որ կնկան անպատշաճ է մազերըն կտրել կամ վերսնել՝ թող քող քցէ։

7 Որէ մարդոյ պէտք չէ որ իրան գլուխըն ծածկէ. պատճառն որ նա՝ Աստուծոյ պատ-

իսկ կինն փառք առն իւրոյ է։

8 Զի ոչ եթէ այր՝ ի կնոջէ է, այլ կին յառնէ։

9 Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կին վասն առն։

10 Վասն այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց։

11 Բայց ոչ կին առանց առն, և ոչ այր առանց կնոջ ի Տէր։

12 Զի որպէս կին յառնէ՝ նոյնպէս և այր ի կնոջէ, բայց ամենայն Աստուծոյ։

13 Ի ձեզ դուք ձեզէն տուք զիրաւդ· արժան է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ։

14 Ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ· զի այր եթէ դիսաւոր է՝ անարգանք են նմա։

15 Բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա· զի գեսք փոխանակ զգեստու տրուեալ են նմա։

կեր և փառք է· բայց կինն իրան մարդոյ փառքն է։

8 Ինչու որ՝ ոչ թէ մարդն կնկանից է, բայց կինն մարդուց։

9 Պատճառն որ՝ ոչ թէ մարդն կնկան համար ստեղծուեցաւ՝ բայց կինն մարդոյ համար։

10 Ներհամար պէտք է, որ կինն մեծարանքի նշան դնէ գլխի վերայ հրեշտակներին համար։

11 Միայն թէ՝ ոչ կինն առանց մարդոյ է՝ և ոչ մարդն առանց կնկան Տէրումն։

12 Ինչու որ՝ ինչպէս որ կինն մարդուցն (ելաւ) ենպէս էլ մարդն կնկանիցն (է)· բայց ամէնն Աստուածանից (է)։

13 Բայց դուք ինքներդ իրաւունք դատեցէք· պիտէ կնկան արժան է, որ բայց գլխով աղօթք անէ Աստուծոյ առաջին։

14 Հենց բնութիւնն էլ չի սովորցնում ձեզ՝ պատճառն որ՝ թէ որ մարդն (երկար) մազեր ունի՝ էն անարգանք է նորան։

15 Բայց կինն թէ որ երկար մազեր ունի՝ էն փառք է նորան· ինչու որ՝ երկար մազերն հագուստի տեղ է տրվված նորան։

16 Եպա թէ ոք կամի հա-
կառակօղ լինել, մեք չու-
նիմք այնպիսի սովորութիւն,
և ոչ եկեղեցիքն Աստուծոյ:

17 Այլ զայս պատուիրեմ,
ոչ որպէս թէ գովիցեմ, զի
ոչ ի լաւ այդր՝ այլ ի
վատթարն նկրտիք:

18 Նախ՝ յորժամ ի մի
վայր ժողովիցիք եկեղեցին,
լսեմ երէց հերձուածք գոն
ի ձեզ. և սակաւ ինչ հա-
ւատայի:

19 Հայց և հերձուածք լի-
նելոց են ի ձեզ. զի որ ըն-
տիրն լցեն ի ձեզ՝ երևեսց-
ցին:

20 Զի արդ՝ ի ժողովելն
ձեզ ի միասին՝ ոչ է տունն
Տեառն ձեզ առնել ուտել
ընդ միասին:

21 Զի իւրաքանչիւրք
զիւր ընթրիս յառաջանայ
ուտել, և ոմն քաղցեալ՝ և
ոմն արբեալ:

22 Միթէ տուն ոչ ու-
նիցիք ուտելոյ կամ ըմպելոյ.
եթէ զեկեղեցեաւն Աստու-
ծոյ արհամարհիցէք, և յա-
մօթ առնէք զչքաւորսն, զի՞նչ
ասացից. գովեցո՞ց զձեզ.
Այդմ ոչ գովեմ:

16 Եպա թէ որ միտն կա-
մի նոյնումն հակառակիլ. մեք
ենպէսի սովորութիւն չու-
նինք՝ և ոչ եւ Աստուծոյ ե-
կեղեցիներն:

17 Հայց ես եւ պատուիրու-
մեմ՝ և չեմ գովում ձեզ՝
որ դուք ոչ թէ դէպի լաւն՝
այլ դէպի վատն ընկած վա-
զումեք:

17 Նաեւ՝ երբոր միտեղ
ժողովովումեք եկեղեցոյ մէջն,
լսումեմ որ հերձուածներ կան
ձեր միջումդ. և միտն քիչ եւ
հաւատամ:

19 Հայց հերձուածներ եւ
պիտի լինին ձեր միջումդ՝ որ
նորանք՝ որ ձեզմանում ընտիր
են՝ յայտնի լինին:

20 Ուրեմն երբոր միտեղ
ժողովովումեք՝ Տէրի տունն
ձեզ համար հայ ուտելոյ տեղ
չէ:

21 Պատճառն որ՝ ամէն
մէկն վռազումէ իրան ընթ-
րիքըն ուտելոյ. և միտն սո-
ված է, և միտն հարբած:

22 Միթէ տուն չունիք ու-
տելոյ և խմելոյ. կամ թէ
Աստուծոյ եկեղեցին ոչ ինչ
էք համարում և չքաւորնե-
րին ամօթ էք քցում. ի՞նչ
ասեմ. գովե՞մ ձեզ. էդ քա-
նումդ չեմ գովում:

23 Զի ես ընկալայ ՚ի Տեառնէ՛ զոր և ետու ձեզն առաքեայ, եթէ Տէր Յիսուս ՚ի գիշերին յորում մատնէր, առ հայ ,

24 Գոհացաւ՝ եբեկ և ասէ . առէք՝ և կերայք . այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի . զայս արարէք առ իմոյ յիշատակի ։

25 Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ. այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի ։

26 Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս , և զբաժակս ըմպիցէք , զմահն Տեառն պատմեցէք , մինչև եկեսցէ նա ։

27 Ումեքեան՝ որ ուտիցէ զհացս , կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ , պարտական է ղիցի մարմնոյ և արեան Տեառն ։

28 փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա ՚ի հացէ ան՛ոլ կերիցէ , և ՚ի բաժակէն արբցէ ։

29 Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաս-

23 Պատճառն որ՝ ես Տէրիցն ընդունեցի էն՝ որ ձեզ էլ տուի . որ Տէրը Յիսուսն էն գիշերուն որ մատնըվու-մը , հայ առաւ ,

24 Գոհացաւ , կտրեց և ասաց . առէք , կերէք էս է իմ մարմինս՝ որ ձեզ համար տըվ-ւում . էս արէք իմ յիշատակիս համար ։

25 Նընպէս էլ՝ ընթրիք ու-տելուցն ետև բաժակըն (ը-նը) առաւ և ասաց . էս բա-ժակս նոր ուխտ ու պայման է իմ արիւնով. էս արէք՝ քա-նի անգամ որ խմէք, իմ յի-շատակիս համար ։

26 Քանի անգամ որ էս հացս ուտէք , և էս բաժա-կըս խմէք՝ Տէրի մահըն պատ-մեցէք՝ մինչև որ նա կըզայ ։

27 Ուրեմն ով որ էս հա-ցըս ուտէ կամ Տէրի բաժա-կըն խմէ անարժանութեամբ, նա պարտական կըլինի Տէրի մարմնոյն և արիւնին ։

28 Թող մարդն փորձէ ի-րան անձըն և ապա էն հա-ցիցն ուտէ և էն բաժակիցն խմէ ։

29 Պատճառն որ՝ նա որ ա-նարժանութեամբ է ուտում

տանս անձին իւրում ուտէ և ըմպէ· զի ոչ կարէ զմարմինն Տեառն ։

30 Վասն այնորիկ խակ են՝ ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք· և շատ ևս այն են, որ և ննջեցեալք խակ իցեն ։

31 Ջի եթէ զանձինսքընէաք՝ ապա ոչ դատապարտեաք ։

32 Այլ եթէ դատիմք՝ ի Տեառնէ խրատիմք· զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք ։

33 Այսուհետև՝ եղբարք, յորժամ՝ ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց ճաս ջիք ։

34 Ապա թէ ոք քաղցեալ իցէ՝ ի տան իւրում կերիցէ· զի մի ի դատապարտութիւն ժողովիցիք, բայց զայլ ինչ՝ յորժամ եկիցց, կայժամ պատուիրեցից ։

և խմէ՝ իբրև անձին հաճար դատաստան է ուտէ և խմէ· ընդ որ նա չի ջոկէ զմարմինն ։

30 Ենց նմանապէս էլ ձեր միջումդ շատ հիւանդներ և ցաւագարներ կան· և շատ էլ նորանք են՝ որ ննջած են ։

31 Ինչու որ՝ եթէ մեր անձներըս կըքննէինք, ապա չէինք դատապարտվիլ ։

32 Այլ թէ որ դատվինք՝ Տէրոյն խրատվումենք, որ աշխարհքի հետ չըդատապարտվինք ։

33 Ուրեմն՝ եղբարք, երբոր ժողովվիք ուտելոյ համար, իրար սպասեցէք ։

34 Ապա թէ որ մինն սոված է՝ թող իրան տանն ուտէ· որ դատապարտութեան համար չըժողովվիք· բայց ուրիշ բաներըն՝ երբոր կըգամ, էն ժամանակն կըպատուհրեմ ։

ԳԼ· ԺԲ ։

1 Այլ վասն հոգևորացն, եղբարք, ոչ կամիմ եթէ տգէտք իցէք ։

2 Գիտէք խակ՝ զի մինչ

1 Բայց հոգևոր (շնորհքներէն) համար՝ եղբարք, չեմ կամենում որ չըգիտենաք ։

2 Ենց դուք լաւ գիտու-

հեթանոսքն էիր, առ կուռսն անմռունչս՝ սրպէս երթայիք և գայիք ։

3 Վասն որոյ յուսցանեմ ձեզ· զի ոչ ոք հոգւով Աստուծոյ խօսի՝ և ասիցէ թէ նզովեալ Յիսուս · և ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս , եթէ ոչ հոգւովն սրբով ։

4 Բաժիկք և բաժինք շնորհայ են՝ այլ հոգի նոյն է ։

5 Եւթէ բաժինք պաշտամանց են , այլ Տէր նոյն է ։

6 Եւթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է· որ յաջողէ զամենայն յամենայնի ։

7 Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ ։

8 Ումեմն՝ ի հոգւոյն տուեալ է բան գիտութեան ըստ նմին հոգւոյ ։

9 Մի իւսումն հաւատք նովին հոգւով · այլում շնորհք բժշկութեանց նովին հոգւով ։

մէք՝ որ երբեմն հեթանոս էիք՝ ինչպէս են անձայն կռոցքերին (հեռւաձ) գնումէիք և գայիս էիք ։

3 Ներահամար յայտնի առնումեմ ձեզ՝ որ ոչ ով չըկայ՝ որ Աստուծոյ հոգովն խօսի և Յիսուսին նզովք կարդայ · և ոչ ով չի կարօղ Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ սուրբ հոգովն ։

4 Թէև շնորհքներն բաժանված են · բայց հոգին հենց մին է ։

5 Թէ որ պաշտօնեանեըն բաժանված են, բայց Տէրն հենց մին է ։

6 Թէ որ յաջողութիւններն բաժանված են՝ բայց Աստուած հենց մին է՝ որ ամենըն ոմեն բանի մէջն յաջողումէ ։

7 Բայց ամեն մէկին տըված է հոգւոյ յայտնութիւնն ամեն մէկի շահին համար ։

8 Մըսին հոգւոյն տըվված է իմաստութեան խօսք· ուրիշնին գիտութեան խօսք՝ հենց էն հոգւոյ ձեռովն ։

9 Մէկէլին հաւատք հենց էն հոգովն · ուրիշնին բժըշկութեան շնորհք հենց էն հոգովն ։

10 Ալյուա յաջողութիւն
զօրութեանդ. այլուա մար-
գարէութիւն. այլուա ընտ-
րութիւն հոգւոյ. այլուա
ազգք լեզուաց. այլուա թարգ-
մանութիւն լեզուաց։

11 Ալյ զայս ամենայն յա-
ջողէ մի և նոյն հոգի, և
բաժանէ իւրաքանչիւր որ-
պէս և կամի։

12 Որպէս մարմին մի է, և
անդամս բազումս ունի. և
ամենայն բազում անդամք
մարմնոյն՝ մի մարմին է. նոյն-
պէս և Քրիստոս։

13 Քանզի միով հոգւով
մեք ամենեքին ի մի մարմին
մկրտեցաք. եթէ հրէայք,
եթէ հեթանոսք, եթէ ծա-
ռայք, եթէ ազատք, ամե-
նեքին զմի հոգի արբաք։

14 Քանզի մարմին ոչ մի
անդամ է, այլ բազում։

15 Եթէ ասիցէ ոտն, զի
չեմ ձեռն՝ չեմ ի մարմնոյ
անտի, ոչ այնու չիցէ ի
մարմնոյ անտի։

16 Եւ եթէ ասիցէ ունկն,
վասն զի չեմ աչն՝ չեմ ի
մարմնոյ անտի, ոչ այնու չի-
ցէ ի մարմնոյ անտի։

17 Եթէ ամենայն մարմին

10 Ուրիշին զօրութիւններ
անելոյ յաջողութիւն. ուրի-
շին մարգարէութիւն. ուրի-
շին հոգիներին ընտրութիւն.
ուրիշին կերպ կերպ լիզու-
ներ. ուրիշին լեզուների
թարգմանութիւններ։

11 Բայց ես ամէնքս հենց
էն մին հոգին է յաջողում,
և ամէն մէկին բաժանում,
ինչպէս որ կամենում։

12 Ինչպէս որ մարմինն մին է
և շատ անդամներ ունի՝ և
մարմնոյ էն ամէն շատ ան-
դամներն մին մարմին են, էն-
պէս էլ Քրիստոս։

13 Պատճառն որ՝ մենք ա-
մէնքս մին հոգով մկրտվեցանք
մին մարմին լինելոյ. թէ
հրէաներ, թէ հեթանոսներ,
թէ ծառաներ, թէ ազատներ,
ամէնքս մին հոգին խմեցինք։

14 Ինչու որ՝ մարմինն մին
անդամ չէ՝ այլ շատ։

15 Թէ որ ոտն ասէ, որով-
հետև ձեռն չեմ. էլ էն
մարմնից չեմ. միթէ նրա-
նով էն մարմնից չի՞ լինիլ։

16 Եւ թէ որ ականջն ա-
սէ՝ որովհետև ես աչք չեմ՝
էլ էն մարմնից չեմ. միթէ
նրանով էն մարմնից չի՞ լի-
նիլ։

17 Թէ որ ամէն մարմինն

ակն էր՝ ոբր էր ունկն. և եթէ ամենայն լսելիք էր՝ ոբր էին հոտոտելիք :

18 Բայց արդ՝ Աստուած եդ զանդամսն՝ զմի մի իւրաքանչիւր ի նոցանէ ի մարմնի՝ որպէս և կամեցաւ :

19 Ապա եթէ էր ամենայն մի անդամ, ոբր էր մարմին :

20 Բայց արդ՝ անդամք բազումք են, և մարմին մի :

21 Ո՛չ կարէ ակն ասել ցձեռն, եթէ չէսինձ պիտոյ, և կամ դարձեալ գլուխ ցոտս՝ եթէ չէք ինձ պիտոյ :

22 Այլ առաւել որ թուին անդամք մարմնոյն եթէ տկարագոյնք իցեն, կարևորք են :

23 Եւ որ թուինն եթէ անարգագոյնք իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնեմք. և ամօթագոյնս մեր առաւել ևս պարկեշտութիւն ունին :

24 Եւ պարկեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աստուած խառնեաց զմարմինն, և նուազնին առաւել ևս պատիւ ետ :

25 Զի մի իցեն հերձուած

աչք լինէր՝ ևլ ոբր տեղ էր ականջն. և եթէ որ ամենայն մարմինն լսելիք լինէր՝ ևլ ոբր տեղ էր հոտոտելիքն :

18 Բայց հիմիկ Աստուած անդամեացն՝ նորանցից ամենեկնն մին մին դրաւ մարմնոյ մէջ՝ ինչպէս որ կամեցաւ :

19 Ապա եթէ որ ամենն մին անդամ լինէր՝ ոբր տեղ էր մարմինն :

20 Բայց հիմիկ՝ անդամեացն շատ են, և մարմինն՝ մին :

21 Աչքն չի կարող ձեռին ասել, եթէ ինձ պէտք չես. կամ միևել գլուխն ոտներին, եթէ ինձ պէտք չէք :

22 Բայց աւելի ևլ՝ մարմնոյ էն անդամեացն՝ որ երևուսմն եթէ շատ տկար են, նորանք շատ հարկաւոր են :

23 Եւ նորանք՝ որ երևուսմն, եթէ մարմնոյ շատ անարգվածներն են՝ նորանց ևլ աւելի պատիւ ենք անուամ. և մեր ամօթալիքներն ևլ աւելի պարկեշտութիւն ունին :

24 Եւ մեր պարկեշտ (անդամեացն) միւ բան պէտք չէ. պատճառն որ՝ Աստուած մարմինը բաւեխառնեց, և յածին ևլ աւելի պատիւ տուաւ :

25 Որ էն մարմնոյ մէջն տա-

ւածք ՚ի մարմնի անդ , այլ պի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն ։

26 Եթէ վշտանայ ինչ մի անդամն , վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խընդան ամենայն անդամքն ընդ նմա ։

27 Ա.յլ դուք մարմին Քրիստոսի էք՝ և անդամք յանդամոց նորա ։

28 Եւ զոմա եդ Ա.ստուած յեկեղեցւոջ՝ այս են . նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս , երրորդ՝ զվարդապետս , ապա զօրութիւնս , ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս՝ վարիչս , ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց ։

29 Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն . միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն . միթէ ամենեքին զօրութի՞ւնք իցեն ։

30 Միթէ ամենեքին շնորհս բժշկութե՞ան ունիցին . միթէ ամենեքին ՚ի լեզո՞ւս խօսիցին . միթէ ամենեքին թարգմանի՞ցեն ։

լաձայնութի՞ւն չըլինի, բայց որ հենց էն անդամներն իրար համար հոգս ունենան ։

26 Եւ թէ որ մին անդամ ցաւում՝ ամէն անդամներն էլ նորա հետ ցաւումն . և թէ որ մին անդամ փառաւորվումՙ , ամէն անդամներն էլ նորա հետ ուրախանումն։

27 Բայց դուք Քրիստոսի մարմին էք, և նորա անդամներից անդամներ ։

28 Եւ նորանք՝ որ Ա.ստուած եկեղեցումն դրաւ, առաքեալներն են . առաջ՝ առաքեալներըն . երկրորդ՝ մարգարէներըն. երրորդ՝ վարդապետներըն . յետոյ զօրութիւններըն . յետոյ բժշկութեան շնորհքներըն , օգնութիւններըն, կառավարութիւններըն, կերպ կերպ լեզուներըն, լեզուների թարգմանութիւններըն ։

29 Միթէ ամէնքն առաքե՞ալ են . միթէ ամէնքն մարգարէ՞ են . միթէ ամէնքն վարդապե՞տ են . միթէ ամէնքն զօրութի՞ւն (անօզ) են ։

30 Միթէ ամէնքն բժշկութեան շնորհքնե՞ր ունին. միթէ ամէնքն լեզունե՞ր են խօսում . միթէ ամէնքն թարգմանո՞ւմն ։

31 Բայց նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն են, այլ ես առաւել ևս ձանապարհ ցուցանեմ ձեզ ։

31 Բայց դուք խիստ հետևեցէք են շնորհքներին՝ որ շատ լաւ են · բայց ես էլ աւելի (լաւ) ձանապարհ եմ ցոյց տալիս ձեզ ։

ԳԼ· ԺԳ ։

1 Եթէ զլեզուն մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ, որ հնչէ· կամ իբրև զնդզայս՝ որ զօզանջեն ։

2 Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ զնորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոխել, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ ։

3 Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրուիլ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ ։

4 Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ· սէր ոչ նախանձի, ոչ ամբարձաւաճճէ, ոչ հպարտանայ ։

5 Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի

1 Թէ ես որ մարդկանց և հրեշտակներուն լեզուներովն խօսիմ՝ և սէր չունենամ՝ ես պղինձի պէս կըլինիմ՝ որ ձայն է հանում, կամ ծրնդանեղի պէս՝ որ ձայնուն է ։

2 Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ և ամէն խորհուրդները գիտենամ՝ և ամէն գիտութիւնը· և թէ որ ամէն հաւատք ունենամ, մինչև որ սարերը էլ փոխեմ՝ և սէր չունենամ՝ ոչ ինչ եմ ։

3 Եւ թէ որ իմ ամէն ապրանքը աղքատներին ուտայնեմ, և իմ մարմինը մատնեմ որ այրվի, և սէր չունենամ, ես խկի մէն օգուտ չեմ ունենալ ։

4 Սէրն երկայնամիտ է՝ քաղցր է· սէրն չի նախանձվում, չի գոռոզանում չի հպարտանում ։

5 Չի լըբանում, իրան բանըն չի ուզում · չի

գնաք ։

6 Ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն՝ այլ խնդայ ընդ առուդութիւն ։

7 Ամենայնի տեւէ ։ ամենայնի հաւատայ ։ ամենևին յուսայ ։ ամենայնի համբերէ ։

8 Սէր ո՛չ երբէք անկանի։ եթէ մարգարէութիւնք են՝ խափանեսցին ։ եթէ լեզուք՝ լռեսցեն ։ եթէ գիտութիւն՝ խափանեսցի ։

9 Քանզի փոքր ՚ի շատէ լիտեմք ։ և փոքր ՚ի շատէ մարգարէանամք ։

10 Այլ յորժամ եկեսցէ կատարումն , փոքր ՚ի շատէս խափանեսցի ։

11 Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի , իբրև զտղայ խորհէի , իբրև զտղայ համարէի ։ այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեանն ՚ի բաց խափանեցի ։

12 Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիման ։ այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ , այլ յայնդրդովում , չար բան չի մտածում ։

6 Անիրաւութեան համար չի ուրախանում , բայց Ճշմարտութեան համար ուրախանում ։

7 Ամէն բանի դիմանում , ամէն բանի հաւատում , ամէն բանի համար յոյս ունի , ամէն բանի համբերում ։

8 Սէրն իսկի մին ժամանակ վերչ չի ընկնիլ ։ թէ որ մարգարէութիւններ կան՝ կըխափանուին ։ թէ որ լեզուներ՝ լուռ կըկենան ։ թէ որ գիտութիւն՝ կըխափանուի ։

9 Պատճառն որ՝ փոքր ՚ի շատէ գիտումենք ։ և փոքր ՚ի շատէ մարգարէանումենք ։

10 Բայց երբոր կատարեալն կըգայ՝ էս փոքր ՚ի շատէս կըխափանուի ։

11 Երբոր տղայ էի՝ տղայի պէս էի խօսում , տղայի պէս էի մտածում , տղայի պէս էի համարում ։ բայց երբոր մարդ եղայ՝ էն տղայութեան բաներըն հետս (արի) խափանեցի ։

12 Հիմիկ երբ թէ հայելով մէջն օրինակով ենք տեսնում ։ բայց էն ժամանակն դէմ դէմ ։ հիմիկ փոքր ՚ի շատէ տեղեակ եմ՝ բայց էն ժամա-

ժամ վիտացիկ՝ որպէս և նայն ծանեաւ պիտ ։

13 Բայց արդ՝ միտն հա- ւատաք, յոյս, սէր, տոքա երե- քեան · և մեծ քան զսոսա սէր է ։

նակն էնալէս կըգիտենամ՝ ինչպէս որ էլ նա ինձ ճա- նաչէ ։

13 Ուրեմն կըմնան՝ հաւատք, յոյս, սէր· էս երեքս· և սա- րանցում մեծն սէրն է ։

ԳԼ· ԺԴ ։

1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հո- գևորացն առաւել՝ զի և դուք մարգարէանայցէք ։

2 Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ · զի ոչ ոք կ՝ որ լսէ, բայց հոգւով խօսի խորհուրդս ։

3 Իսկ որ մարգարէանայն, մարդկան խօսի շինուածին և մխիթարութիւն և սփո- փութիւն ։

4 Որ խօսի ի լեզուս՝ զանձն իւր շինէ· և որ մար- գարէանայն՝ զեկեղեցին շինէ։

5 Կամիմ զի ամենեքին դուք ի լեզուս խօսիցիք՝ ա- ռաւել զի մարգարէանայցէք· զի լաւ է՝ որ մարգարէանայն քան զայն՝ որ ի լեզուս խո-

1 Սիրոյն հետևեցէք, և հոգևոր (շնորհքներին) եռա- ջին էլէք· և աւելի նորան, որ դուք էլ մարգարէանաք ։

2 Պատճառն որ նա՝ որ լե- զուներով խոսում, մարդ- կանց հետ չի խոսում, այլ Աստուծոյ հետ· ինչու որ ոչ ով չըկայ, որ լսումի՝ բայց հոգովն խորհուրդներ է խոսում ։

3 Բայց նա՝ որ մարգարէա- նում, մարդկանց շինութիւն և մխիթարութիւն և սիրտ առօղ բան է խոսում ։

4 Նա որ լեզուներով խո- սում, իրան անձն է շի- նում, և նա՝ որ մարգարէա- նում, եկեղեցին է շինում ։

5 (Ես) կամենամ՝ որ դուք ամէնդ լեզուներով խոսիք· բայց էլ աւելի որ մարգարէանաք· ինչու որ՝ ա- ւելի լաւ է նա՝ որ մարգա-

սիցի • քայց եթէ թարգմա-
նիցէ՝ դի եկեղեցին շինու-
թիւն առնուցու ։

6 Հայց այժմ՝ եղբարք,
եթէ եկիցմ առ ձեզ՝ ի լե-
զուս խօսելով • զի՛նչ օգուտ
լինիցիմ ձեզ՝ եթէ ոչ խո-
սիցիմ, կամ յայտնութեամբ,
կամ գիտութեամբ, կամ
մարգարէութեամբ, կամ
վարդապետութեամբ ։

7 Ա՛նպէս՝ որպէս ան-
շունչքն ձայն տայցեն, եթէ
փող, և եթէ քնար • զի
եթէ ընտրութիւն ինչ բար-
բառայն չառնիցեն, զիա՞րդ
ճանաչիցի փողոյն հարկանել՝
կամ քնարին հնչել ։

8 Քանզի եթէ խառնա-
ձայն արձակիցի փողն, ո՞վ
պատրաստեսցի ի պատերազմ։

9 Նոյնպէս և դուք՝ եթէ
լեզուօք ոչ նշանակիցէք
զբանն՝ զիա՞րդ ճանաչիցին
խօսքն • զի լինիցիք այնու-
հետև իբրև ընդ օդս խօսե-
ցեալք ։

10 Զի այնչափ տգք ձայ-
նից են յաշխարհի, և ոչ
ինչ անձայն է ։

11 Իսկ արդ՝ եթէ ոչ գի-

ըէանուամբ քանզի նա՝ որ լե-
զուներով խօսումն• միայն թէ
որ թարգմանէ՝ որ եկեղեցին
շինութիւն առնէ ։

6 Հայց հիմիկ՝ եղբարք,
թէ որ ես ձեզ մօտ գամ և
լեզուներով խօսիմ՝ ինչ օ-
գուտ կըլինի ձեզ • որ չըխո-
սիմ կամ յայտնութեամբ
կամ գիտութեամբ, կամ
մարգարէութեամբ, կամ
վարդապետութեամբ ։

7 Նոյպէս՝ ինչպէս որ
շունչ չունօղ բաներն որ
ձայն են տալիս՝ փող լինի, թէ
քնար լինի, թէ որ ձայնի մի-
ջոցութիւն չանեն • ի՞նչպէս
կըճանաչվի փողի փչելն, կամ
քնարի ձայն հանելն ։

8 Ինչու որ՝ եթէ փողն
խառնած ձայն դուրս տայ՝ էլ
ո՞վ կըպատրաստվի պատերազմի
համար ։

9 Նոյնպէս էլ դուք՝ թէ որ
լեզուներովն բանըն յայտնի
չասէք՝ էն խօսքն ի՞նչպէս կի-
մացվի • ինչու որ՝ իբր թէ օ-
դին (հաւայքն) հետ խօսած
կըլինիք ։

10 Պատճառն որ՝ էն քան
կերպ ձայներ կան աշխարհ-
քումն • և նորանց իսկի մինն
էլ առանց ձայնի չէ ։

11 Ուրեմն թէ որ ես ձայնի

տիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ, որ խօսիցին ընդ իս խուժ, և նա՝ որ խօսիցին ընդ իս՝ դուժ։

12 Նոյնպէս և դուք՝ քանզի նախանձօրդք էք հոգևոցացն, վասն շինուածոյ եկեղեցւոյն խնդրէք՝ զի առաւել ևս իցէք։

13 Վասն որոյ որ խօսին ի լեզուս, ազօթս արասցէ, զի և թարգմանիցէ։

14 Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝ հոգին իմ կայ յաղօթս. այլ միտք իմ անպտուղ են։

15 Իսկ արդ՝ զի՞նչ իցէ. կայցից յաղօթս հոգւով, կայցից յաղօթս և մտօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մտօք։

16 Ապա թէ ոչ՝ եթէ օրհնիցես հոգւով, որ կայցէ ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ ի քում գոհութեանն՝ ամէն. քանզի զոր ասեն՝ նա ոչ գիտէ։

17 Զի դու բարւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։

18 Գոհանամ զԱստուծոյ՝ վասն ամենեցուն ձեր՝ առաւել յեզուաւ խօսիմ։

զօրութիւնըն չըգիտեմ. ապա նորան՝ որ ինձ հետ խօսումէ՝ խուժ կըլինիմ՝ և նա որ ինձ հետ խօսումէ՝ (ինձ համար) դուժ։

12 Նոյնպէս էլ դուք՝ որ հոգևոր (շնորհքներին) հետևումէք՝ եկեղեցոյ շինութեան համար ջանք էք անում՝ որ էլ աւելի աւելանաք։

13 Ուրեմն նա՝ որ լեզուներով խօսումէ, թող աղօթք անէ, որ էլ թարգմանէ։

14 Թէ որ ես աղօթք անեմ. իմ հոգիս է աղօթք անում՝ բայց միաքս պտուղ չի տալիս։

15 Ապա ուրեմն ի՞նչ պիտի լինի. աղօթք անեմ հոգով էլ, աղօթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ։

16 Ապա թէ չէ՝ թէ որ դու օրհնես հոգով՝ նա որ տգէտի կարգումն է՝ ինչպէս ամէն ասէ քո օրհնութեան համար. պատճառն որ՝ նա չի գիտումէն որ դու ասումես։

17 (Իրաւի՛) որ դու լաւ ես գոհանում. բայց ընկերն չի շինվում (նորանով)։

18 Գոհանումեմ Աստուածից իմից՝ ձեզանից ամենիդ աւելի լեզուներով խօսումեմ։

19 Ա.ՀԼ 'Ի ՄԷՋ ԵԿԵՂԵՑՒՑ ԿԱՄԻՄ ԲԱՆՍ ՀԻՆԳ ՄՈԱՔ ԽՕՍԵԼ՝ ԶԼԻ ԵՒ ՉՅԼՍ ԽՐԱԽՈՒՑԵՄ, ՔԱՆ ԲԱՂՈՒՄ ԲԱՆՍ ԼԵԶՈՒԱՒ։

20 Ի՛ՂԱՐՔ՝ ՄԻ ԼԻՆԻՔ ՏՂԱՅՔ ՄՈԱՔ, ՅԼ 'Ի ՀԱՐԵԱՑ ՏՂԱՅԱՑԱՐՒՔ, ԵՒ ՄՈԱՔ ԿԱՏԱՐԵԱԼ ԼԻՆԻՔՔ։

21 ՎԱՆԴԷ ԵՒ ՅՕՐԷՆԱՆ ԴՐԵԱԼ Է, ԵԹԷ ՅՕՏԱՐ ԼԵՉՈՒՍ՝ ԵՒ 'Ի ՀՐԹՈՒՆՍ ՕՏԱՐՈՏԻՍ ԽՕՍԵՑԱՅՑ ԸՆԴ ԺՈՂՈՎՐԴԱՆԴ ԸՆԴ ԱՅԴՄԻԿ, ՍԱԿԱՅՆ ԵՒ Ո՛Չ ԱՅՆՊԷՍ ԼՈՒԻՑԵՆ ԻՆՁ՝ ԱՍԷ ՏԷՐՆ։

22 Ա.ՊԱ ՈՐԵՒՄԻ ԼԵԶՈՒՔ ՆՇԱՆԱԿԻ ՎԱՍՆ ԵՆ՝ Ո՛Չ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ՝ ԱՅԼ ԱՆՀԱՒԱՏԻՑ. ԻՍԿ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ՝ Ո՛Չ ԱՆՀԱՒԱՏԻՑ՝ ԱՅԼ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ։

23 Ա.ՊԱ ԵԹԷ ԳԱՅԵԿ ԵԿԵԼԵՑԻՆ ԱՄԵՆԱՅՆ 'Ի ՄԻ ՎԱՅՐ, ԵՒ ԱՄԵՆԵՔԻՆ 'Ի ԼԵԶՈՒՍ ԽՕՍԻՑԻՆ, ԵՒ ՄԱՆԻԿՆԵՑՆ ԱՆԴՐ ՄԳՔԱՐ ԿԱՄ ԱՆՀԱՒԱՏԱՐ. Ո՞Չ ԱՍԻՑԵՆ՝ ԵԹԷ ՉԼԻ ՄԱԼԻՔԴ։

24 ԻՍԿ ԵԹԷ ԱՄԵՆԵՔԻՆ ՄԱՐԳԱՐԷԱՆԱՑԵՆ, ԵՒ ՄԱՆԻԿՆ

19 Ռայց եկեղեցոյ մէջն աւելի կամենումամ որ հինգ խօսք մտքով խօսիմ՝ որ ուրիշներին խրատ տամ, քան թէ շատ խօսքեր լեզուներով։

20 Ի՛ղձարք՝ մտքով տղայ մի լինիք • բայց չարութեան նոյն (հեռանալով) տղայ կ՚ըլէք եւ մտքով կատարեալ կ՚ըլէք։

21 Պատճառն որ՝ օրէնքումն էլ գրված է՝ թէ օտար լեզուներով եւ օտար պէսպէս բոլով կըխօսիմ էդ ժողովրդդեդ հետ • բայց էնպէս էլ ինձ ականջ չեն դնիլ՝ ասում Տէրն։

22 Ա.պա ուրեմն՝ լեզուներն նշանի համար են՝ ո՛չ թէ հաւատացեալներին այլ անհաւատներին • բայց մարգարէութիւնն ո՛չ թէ անհաւատներին այլ հաւատացեալներին համար է։

23 Ա.պա թէ որ բոլորը եկեղեցին միասին գայ եւ ամէնքն լեզուներով խօսին, եւ տգէտներ եւ անհաւատներ մտնեն էնտեղ՝ միթէ չեն ասիլ թէ՝ դուք գժված էք։

24 Ռայց թէ որ ամէնքն մարգարէանան եւ մին անհա-

ոք անդր անհաւատ՝ կամ տգէտ, յանդիմանի յամենեցունց։

25 Իւ գաղտնիք սրտի նորա յայտնի լինին, և ապա անկեալ ՚ի վերայ երեսաց՝ երկիր պագանիցէ Աստուծոյ, և խոստովան լինիցի՝ թէ արդարև Աստուած է ՚ի ձեզ։

26 Իւ արդ՝ զի՞նչ է՝ եղբարք, յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ ելթէ սաղմոս ունիցի, թէ վարդապետութիւն ունիցի, եւթէ յայտնութիւն ունիցի, թէ լեզուս ունիցի, եւթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ՚ի շինած լինիցի։

27 Իթէ ՚ի լեզուս ոք խօսիցի՝ երկուք, և եւթէ ևս աւելի՝ երեք, և ապա մի ըստ միոջէ. և մինն թարգմանիցէ։

28 Իապա եւթէ չիցէ ոք՝ որ թարգմանիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր և ընդ Աստուծոյ խօսիցի։

29 Իայց մարգարէք երկու կամ երեք խօսիցին, և այլք քննիցին։

ւատ կամ տգէտ մարդ էն տեղ մտնէ՝ նա ամէնքին կըյանդիմանվի և ամէնքին կըքննըվի։

25 Իու նորա սրտի ծածուկն յայտնի կըլինի. և ապա երեսին վերայ ընկած Աստուծոյն երկրպագութիւն կանէ, և խոստովան կըլինի թէ՝ ուղղորդ որ Աստուած ձեր միջումն է։

26 Ուրեմն ի՞նչ էս է՝ եղբարք, երբոր միտեղ ժողովվիք՝ ձեզանից ամէն մէկն թէ սաղմոս ունենայ, թէ վարդապետութիւն ունենայ, թէ յայտնութի՛ ունենայ, թէ լեզուներ ունենայ, թէ թարգմանութիւն ունենայ՝ էն ամէնն թո՛ղ շինութեան համար լինի։

27 Թէ որ մինն լեզուներով խօսի՝ թո՛ղ երկու, և թէ որ էլ աւելի շատ՝ երեք լինին. և ապա մինն մըմնիցն ետև. և մինն թո՛ղ թարգմանէ։

28 Իապա թէ որ մին մարդ չըկայ որ թարգմանէ՝ թո՛ղ լուռ կենայ եկեղեցումն. թո՛ղ իրան մաքուռն և Աստուծոյ հետ խօսի։

29 Իայց մարգարէներն թո՛ղ երկու կամ երեք խօսին, և ուրիշներն քննեն։

30 Ասպա եթէ այլ ումեք՝ որ նստիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ։

31 Քանզի կարօղ էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ. զի ամենեքեան ուսանիցին, և ամենեքեան մխիթարեսցին։

32 Քանզի և հոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից հնազանդին։

33 Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած՝ այլ խաղաղութեան. որպէս յամենայն եկեղեցիս սրբոց։

34 Կանայք յամենայն եկեղեցիս լռեսցեն. զի ոչ հրամայի նոցա խօսել՝ այլ հնազանդ լինել. որպէս և օրէնքն իսկ ասեն։

35 Ասպա եթէ ուսանել ինչ կամիցին, ի տան զարս իւրեանց հարցանիցեն. քանզի անպատեհ է կնոջ մարդոյ ժողովոյ խօսել։

36 Եթէ ի ձէնջ բանն Աստուծոյ ել. և կամ առ ձեզ միայն եհաս։

37 Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել՝ կամ

30 Բայց թէ որ մին ուրիշ՝ որ նստեալ նստած է՝ յայտնութիւն լինի, էն առաջինն թող լռեսցէ։

31 Պատճառն որ՝ կարող էք մինն մըննիլ եւս մարգարէանալ. որ ամէնքն սովորին և ամէնքն մխիթարվին։

32 Ինչու որ՝ հենց մարգարէներուն հոգիներն էլ՝ մարգարէներուն հնազանդվում են։

33 Պատճառն որ՝ Աստուած խռովութեան (Աստուած) չէ, բայց խաղաղութեան. ինչպէս որ սըրբերուն ամէն եկեղեցիներուն։

34 Կանայքն ամէն եկեղեցիներուն լռեսցեն. ինչու որ՝ նորանց հրաման չըկայ որ խօսին՝ այլ որ հնազանդ լինին. ինչպէս որ օրէնքն էլ ասում է։

35 Ասպա թէ որ մին բան կամենան սովորիլ՝ թող տան մէջն իրան մարդկանցին հարցնեն. ինչու որ՝ կնկանն չի վայելում՝ որ եկեղեցում խօսի։

36 Միթէ Աստուծոյ խօսքն ձեզմանի՞ց դուրս եկաւ, կամ թէ մենակ ձե՞զ հասաւ։

37 Բայց թէ որ մինն կարծէ՝ որ նա մարգարէ է, կամ

հոգևոր , պիտասցէ՝ զոր գրեցիք առ ձեզ , թէ Տեառն պատուիրանք են ։

38 Ապա թէ ոք տգիտասցէ , տգիտասցի ։

39 Ուստի՝ եղբարք , նախանձեցարուք մարգարէանալ՝ և զլսօսելն լեզուաց մի արգելուք ։

40 Իւրաքանչիւր ինչ ձեր պարկեշտութեամբ և ըստ կարգի լինիցի ։

հոգևոր՝ թող գիտենայ էդ որ գրեցի ձեզ , որ Տէրի պատուիրանքն է ։

38 Ապա թէ որ միևն տգէտ է՝ թող տգէտ լինի ։

39 Ուրեմն՝ եղբարք, ջանք արէք որ մարգարէանաք , և լեզուներով խօսելն մի արգելէք ։

40 Իւր ձեր ամէն բանն թող պարկեշտութենով և կարգով լինի ։

ԳԼ· ԺԵ ։

1 Յուցանեմ ձեզ՝ եղբարք՝ զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ · զոր և ընկալարուք, յոր և հաստատեալք էք ։

2 Որով ապրեցայքն· որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք · բայց եթէ ՚ի դուր ինչ հաւատայցէք ։

3 Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և եան ընկալայ · թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց ։

4 Իւ զի թաղեցաւ , թէ և յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց ։

1 Համայնումմ ձեջ՝ եղբարք, էն աւետարանըն՝ որ աւետարանեցի՝ որ նորան էլ ընդունեցիք՝ որ նորանում էլ հաստատված էք ։

2 Որ նորանով ապրեցաք, էն բանով՝ որ ձեզ աւետարանեցի, թէ որ բռնած ունենաք , եթէ զուր տեղն չէք հաւատացել ։

3 Պատճառն որ՝ ես առաջուց էն տուի ձեզ՝ որ ես էլ ընդունեցի՝ թէ Քրիստոսն մեր մեղաց համար մեռաւ՝ գրքերի ասածին պէս ։

4 Իւր թէ թաղվեցաւ, և թէ երեք օրուն յարութիւն առաւ՝ գրքերին պէս ։

5 Եւ թէ երևեցաւ կե-
փայի, և ապա երկոտասա-
նիցն.

6 Ապա երևեցաւ աւելի
եւս քան զհինգ հարիւր եղ-
բարց միանգամայն. յորոց
բազումք կան մինչև ցայժմ,
և ոմանք ննջեցին։

7 Եւ ապա երևեցաւ Յա-
կովբայ, ապա առաքելոցն ա-
մենեցուն։

8 Ետուստ յետոյ քան զա-
մենեսին երբեւ անարգի միոջ՝
երևեցաւ և ինձ։

9 Զի ես իսկ եմ տրուսլն
առաքելոց. որ չեմ իսկ ար-
ժանի թէ կոչեցայ առաքեալ.
զի հալածեցի զեկեղեցին Ա-
ստուծոյ։

10 Այլ շնորհօքն Աստու-
ծոյ եմ՝ զինչ և իցեմ. և
շնորհք նորա որ յիս՝ ընդու-
նայն ինչ ոչ եղեն. այլ ա-
ռաւել քան զնոսա ամենեսին
վաստակեցի. և ոչ եթէ ես
այլ շնորհքն Աստուծոյ՝ որ
ընդ իս։

11 Արդ՝ եթէ ես և եթէ
նոքա՝ այսպէս քարոզեցաք,
և դուք այսպէս հաւատացիք։

12 Ապա եթէ Քրիստոս
քարոզի՝ թէ ի մեռելոց յա-
րուցեալ է, զիա՞րդ ասեն
ոմանք ի ձէնջ՝ եթէ յա-

5 Եւ թէ երևեցաւ կե-
փասին և յետոյ էն տասներ-
կուսին։

6 Ցետոյ երևեցաւ հինգ
հարիւրից աւելի եղբայրներին
միանգամ՝ որ նորանցից շա-
տերն մինչև հիմիկ կան՝ և
մին քանիսն ննջեցին (մեռան)։

7 Եւ յետոյ երևեցաւ յա-
կոբին յետոյ ամէն առաքեալ-
ներին։

8 Ամենիցն ետև իբր թէ
մին անպիտանի՝ ինձ էլ երևե-
ցաւ։

9 Ինչու որ՝ ես առաքեալ-
ների յետինն եմ՝ որ հին
արժանի չեմ առաքեալ կո-
չուելոյ. ինչու որ՝ Աստուծ-
եկեղեցին հալածեցի։

10 Բայց Աստուծոյ շնորհ-
քովն եմ ինչ որ եմ՝ և նո-
րա շնորհքն՝ որ ինձանում է
ունայն չէլաւ. բայց նորան-
ցից ամէնքից աւելի աշխա-
տեցի. և ես՝ ոչ թէ ես,
բայց Աստուծոյ շնորհքն՝ որ
ինձ հետ է։

11 Ապա թէ ես՝ և թէ նո-
րանք՝ էսպէս քարոզեցինք, և
դուք էսպէս հաւատացիք։

12 Ապա թէ որ Քրիս-
տոսն քարոզվում՝ որ մեռել-
ների միջից յարութիւն է
առել՝ էլ ի՛նչպէս ձեզանից

րութիւն մեռելոց չկայ։

13 Եթէ յարութիւն մեռելոց չկայ, ապա և Քրիստոս չէ յարուցեալ։

14 Եւ եթէ Քրիստոս չէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնս մեր. ընդունայն են և հաւատքն ձեր։

15 Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ՝ թէ յարոյց զՔրիստոս. զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն։

16 Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա և Քրիստոս չէ յարուցեալ։

17 Եւ եթէ Քրիստոս չէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. և տակաւին ի նմին մեղս կայցէք։

18 Իսկ արդ՝ որ ննջեցինն ի Քրիստոս, կորեաւն արդեօք։

19 Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ։

20 Այլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց.

մինչդեռ ասումն՝ թէ մեռելներն յարութիւն չըկայ։

13 Թէ որ մեռելներն յարութիւն չըկայ, ապա Քրիստ էլ յարութիւն չի առել։

14 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ո՛չնայն է մեր քարոզութիւնս, ո՛չնայն է ձեր հաւատքն էլ։

15 Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնըվում. որ Աստուծոյ համար վկայեցինք՝ թէ Քրիստոսին յարոյց՝ որ իրաւի չըյարոյց. թէ որ մեռելներն յարութիւն չառնեն։

16 Բայց թէ որ մեռելներն յարութիւն չեն առնում՝ ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել։

17 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ո՛չնայն է ձեր հաւատքն՝ և դեռ էն ձեր մեղայ մէջն էք կենում։

18 Ապա նորանք՝ որ Քրիստոսումն ննջեցին (մեռան). կորան։

19 Թէ որ մենք միայն էս կեանքովս յոյս ունինք Քրիստոսի վերայ՝ ամէն մարդկանցից աւելի ողորմելի ենք։

20 Բայց հիմիկ՝ Քրիստոս յարութիւն է առել մեռելների միջից՝ ինքն ննջածնե-

21 Քանզի մարդով եղև մահ. և մարդով յարու-
թիւն մեռելոց:

22 Որպէս ադամաւն ամե-
նեքին մեռանին. նոյնպէս և
Քրիստոսիւ ամենեքեան կեն-
դանասցին:

23 Իւրաքանչիւր յիւրում
կարգի. նախ Քրիստոս, և
ապա Քրիստոսեանք ի գալս-
տեան նորա:

24 Ապա կատարած,
յորժամ տացէ ի ձեռս ըն-
դաւորութիւնն Աստուծոյ՝ և
Հօր. յորժամ խափանեսցէ
զամենայն իշխանութիւնս և
զամենայն պետութիւն և
զզօրութիւն:

25 Զի պարտ է նմա թա-
գաւորել՝ մինչև դիցէ զա-
մենայն թշնամիս ի ներքոյ
ոտից իւրոց:

26 Ցետին թշնամին խա-
փանի՝ մահ. և զամենայն
ինչ հնազանդ արար ի ներ-
քոյ ոտից նորա:

27 Զի յոր ժամ ասիցէ.
Թէ հնազանդեալ է նմա ա-
մենայն, յայտ է՝ Թէ բաց
յայնմանէ՝ որ հնազանդեցոյց
նմա զամենայն:

28 Այլ յորժամ հնազան-
դեսցի նմա ամենայն՝ յայն-

21 Պատճառն որ՝ մարդով
էլաւ մահն՝ և մարդով մե-
ռելոցն յարութիւն:

22 Ինչպէս որ ադամովն ա-
մէնքն մեռնուն՝ էնպէս էլ
Քրիստոսովն ամէնքն կենդա-
նի կըլլին:

23 Մէկ մէկն իրան կար-
գովն. առաջ՝ Քրիստոսն,
և յետոյ Քրիստոսեանները
նորա գալոյ ժամանակուն:

24 Յետ ապա վերջն, երբոր
թագաւորութիւնը Աստու-
ծոյ և Հօր ձեռքն կըտայ. եր-
բոր կըխափանէ ամէն իշխա-
նութիւնները և ամէն պե-
տութիւնն և զօրութիւնը:

25 Պատճառն որ՝ պէտք է
որ նա թագաւորէ՝ մինչև որ
ամէն թշնամիները իրան ո-
տաց ներքևն դնէ:

26 Ցետին թշնամին՝ որ կը-
խափանվի, մահն է. (ինչու
որ) ամէն բան հնազանդա-
րուց նորա ոտաց տակն:

27 Բայց երբոր ասէ՝ թէ
ամէն բան հնազանդ է նո-
րան՝ յայտնի է որ նորանից
զատ (ասէյէ) (է) որ ամէն բան
հնազանդացրուց նորան:

28 Բայց երբոր ամէնն կը-
հնազանդվի նորան՝ էն ժամա-

ժամ և ինքն որդի հնազան-
դեսցի այնմ, որ հնազանդե-
ցոյց նմա զամենայն · զի և-
զիսկի Աստուած ամենայն յա-
մենայնի ։

29 Ապա թէ ոչ զինչ
գործիցեն , որ մկրտիցին
վասն մեռելոց , եթէ ոչ արդա-
րև մեռեալք ոչ յառնիցեն·
ընդէր խակ բնաւ մկրտին
վասն նոցա ։

30 Ընդէր և մեք Ձգնիմք
յամենայն ժամ ։

31 Ըս հանապազ մեռա-
նիմք, ի պարծանս ձեր երդ-
նում՝ եղբարք, զոր ունիմ ի
Քրիստոս Ցիսուս ի Տէր
մեր ։

32 Ւրթէ վասն մարդոյ ի
դազանամարտի ելաւ էի ե-
փեսոս, զինչ օգուտ էր ինձ,
եթէ մեռեալք ոչ յառնեն,
կերիցուք , արբցուք քանզի
վաղիւ մեռանիմք ։

33 Մի խաբիք· ապականեն
զբարս քազցունս բանք չարք։

34 Սթափեցարուք արդա-
րութեամբ՝ և մի մեղանչէք·
զի զիտութիւն Աստուծոյ
ոչ ունին ոմանք · առ ամո-
թիդ ձերոյ ասեմ ։

նակն ինքն որդին էլ կընհնա-
զանդվի նորան՝ որ ամէնքն
հնազանդացուց նորան · որ
Աստուած լինի ամէնն ամէն
բանի մէջ ։

29 Ապա թէ չէ՝ ինչ կա-
նեն նորանք , որ մեռելներին
համար մկրտվումեն՝ թէ որ
մեռելներն յարութիւն չառ-
նեն · էլ իւկի ինչու են նո-
րանց համար մկրտվում ։

30 Ինչու մենք էլ ամէն
ժամանակ նեղութիւն ենք
քաշում ։

31 Ըս ամէն ժամանակ մեռ-
նումենք · երդում եմ ու-
տուս՝ եղբարք, ձեր պարծան-
քովն՝ որ մեր Տէր Ցիսուս
Քրիստոսումն ունիմ ։

32 Թէ որ մարդոյ համար
եփեսոսումն գազաններուն կռվի
մէջ մտել էի՝ էն ինչ օ-
գուտ էր ինձ համար , եթէ
որ մեռելներն յարութիւն
չեն առնում · ուտենք, խմենք,
ինչու որ էգուց կըմեռնինք ։

33 Մի խաբվիք · չար խօս-
քեր ապականումեն քաղցր
վարքերըն ։

34 Ընթիւն կացէք արդա-
րութենով և մեղք մի գոր-
ծէք · ինչու որ միքանիսն
Աստուծոյ գիտութիւն չու-
նին · էս ձեր ամօթի համար
եմ ասում ։

35 ԱՅԼ ասիցէ ոք. զի՞արդ յառնեն մեռեալք՝ կամ որո՞վ մարմնով գայցեն։

36 Ո՛նմիտ՝ դու զոր սերմանեսն, ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի։

37 Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին՝ զոր ծնանելոցն իցէ, սերմանես, այլ հատ միրկ. եթէ ցորենոյ իցէ, և եթէ այլոց սերմանեսայ։

38 Եւ Աստուած տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։

39 Ո՛չ ամենայն մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոյ՝ և այլ մարմին ձկանց։

40 Եւ մարմինք երկնաւորք՝ և մարմինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւորաց՝ և այլ փառք երկրաւորաց։

41 Ա՛յլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք։

35 Բայց կըլինի որ մին ասէ. մեռելներն ինչպէս յարութիւն կառնեն՝ կամ ի՛նչ մարմնով կըգան։

36 Ո՛նմիտ, էն՝ որ դուն սերմանուս, չի կենդանանալ՝ թէ որ (առաջ) չըմեռնի։

37 Եւ էն՝ որ սերմանուս, չէ թէ էն մարմինըն՝ որ պիտի ծնվի՝ սերմանուս, բայց մին մերկ հատ, թէ ցորենի լինի, և թէ ուրիշ սերմունքների։

38 Եւ Աստուած մարմին է տալիս նորան ինչպէս որ էլ կամենուսի՝ և ամէն մէկ սերմունքներին իրանց մարմինըն։

39 Ամէն մարմին հենց մին մարմին չէ. այլ ուրիշ մարմին է մարդկանց՝ ուրիշ մարմին անասուններին, ուրիշ մարմին թռչուններին և ուրիշ մարմին ձկներին։

40 Եւ (կան) երկնաւոր մարմիններ և երկրաւոր մարմիններ. բայց ուրիշ փառք ունին երկնաւորներն՝ և ուրիշ փառք երկրաւորներն։

41 Ուրիշ փառք է արեգականն և ուրիշ փառք լուսնին, ուրիշ փառք աստղներին, և մին աստղն մեկեալ աստեղայն աւելի է փառքով։

Ա2 Նոյնպէս և յարութիւն մեռելոց· սերմանի ապականութեամբ և յառնէ առանց ապականութեան։

Ա3 Սերմանի անարգութիւ՝ և յառնէ փառաւք· սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ։

Ա4 Սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր· եթէ կայ մարմին շնչաւոր, կայ և հոգևոր։

Ա5 Որպէս և գրեալ է· եղև մարդն առաջին ադամ ի շունչ կենդանի. երկրորդն ադամ ի հոգի կենդանարար։

Ա6 Բայց ոչ նախ հոգևորն, այլ շնչաւորն, և ապա հոգևորն։

Ա7 Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն· իսկ եկրորդ մարդն Տէր՝ յերկնից։

Ա8 Որպէս հողեղէնն, նոյնպէս և հողեղէնքն, և որպէս երկնաւորն՝ նոյնպէս և երկնաւորքն։

Ա9 Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին· զգեցցուք և

Ա2 Նոյնպէս եւ յարութիւն մեռելոցն· սերմանի ապականութեամբ՝ և յարուցանի առանց ապականութեան։

Ա3 Սերմանի անարգութեամբ՝ և յարուցանի փառաւք· սերմանի տկարութեամբ՝ և յարուցանի զօրութեամբ։

Ա4 Սերմանի շնչաւոր մարմին և յարուցանի առնուն հոգևոր մարմին· եթէ որ շնչաւոր մարմին կայ՝ հոգևորն էլ կայ։

Ա5 Նոյնպէս էլ գրուած է՝ (եթէ) առաջին մարդ ադամն կենդանի շունչ առեղծուեցաւ· երկրորդ ադամն (է) կենդանի անօղ հոգի։

Ա6 Սակայն եթէ հոգևորն առաջ չէ, բայց շնչաւորն, և յետոյ հոգևորն։

Ա7 Առաջին մարդն երկրիցն է՝ հողից էլած· բայց երկրորդ մարդն է Տէրն՝ երկնքիցն։

Ա8 Ինչպէս որ՝ են հողեղէնն՝ էնպէս էլ հողեղէններս. և ինչպէս որ են երկնաւորն, էնպէս էլ երկնաւորներն։

Ա9 Եւ ինչպէս որ հողեղէնի պատկերըն հագանք՝ երկնա-

զպատակեր երկնաւորին :

50 Բայց զայս ասեմ՝ եղբարք, եթէ մարմին և արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել՝ ոչ կարեն. և ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ :

51 Ահդ՝ խորհուրդ մի ասեմ ձեզ ոչ թէ ամենեքեան ննջեսցուք, այլ ամենեքեան նորոգեսցուք :

52 Յանկարծակի յակն թօթափել՝ և փող յետին. քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեսցուք :

53 Զի պարտ է ապականեալ զանապականութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն :

54 Աւասիկ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և ապականեալ զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ. եթէ ընկլաւ մահ ի յաղթութիւն :

եւոր պատկերըն եւ պիտի հանդնինք :

50 Իսկ այն թէ ես ասեմ՝ եղբարք, որ մարմին և արիւն չեն կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել՝ և ոչ ապականութիւնն անապականութիւնը ժառանգէ :

51 Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ. ոչ թէ մենք ամենքս կընոջնինք (կմեռնինք). այլ ամենքս կընորոգվինք :

52 Յանկարծ աչքի թափ տալում՝ յետին փողի ժամանակում. ինչու որ փողն կըփչվի, և մեռելներն յարութիւն կառնեն առանց ապականութեան և մենք կընորոգվինք :

53 Պատճառն որ՝ պէտք է որ ես ապականութիւնս անապականութիւնը հագնէ՝ և ես մահկանացուս անմահութիւնը հագնէ :

54 Բայց երբոր ես մահկանացուս անմահութիւնը կըհագնէ՝ և ես ապականութիւնս անապականութիւնը, էն ժամանակն կըլինի էն բանն, որ գրված է. թէ մահն քո յաղթութեան մէջն կուլտրվաւ :

55 Որ է՝ մահ, յաղթուա-
թիւն քո· ո՞ւր դժոխք՝ խայ-
թոց քո ։

56 Խայթոց մահու մեղք են,
և զօրութիւն մեղաց օրէնքն։

57 Այլ շնորհք Աստուծոյ,
որ եւս մեզ զյաղթութիւն
ի ձեռն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ։

58 Այսուհետեւ՝ եղբարք իմ
սիրելիք , հաստատուն եղե-
րուք , անշարժ կացէք , ա-
ւաւել լերուք ի գործս
Տեառն յամենայն ժամ, գի-
տասջիք, զի վաստակք ձեր ոչ
են ընդունայն առաջի Տեառն։

55 Որ է մահ՝ ո՞րտեղ է քո
յաղթութիւնդ · դըժոխք՝
ո՞րտեղ է քո ծակօղդ ։

56 Մահի ծակօղն մեղքն
է՝ և մեղքի զօրութիւնն՝ օ-
րէնքն ։

57 Բայց շնորհակալութիւն
(լինի) Աստուծոյ, որ մեզ
յաղթութիւն տուաւ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի ձե-
ռովն ։

58 Ուրեմն՝ իմ սիրելի՛ եղ-
բարքս, հաստատ էլէք , ան-
շարժ կացէք , ամէն ժամա-
նակ աւելի առաջացէք Տէրի
գործումն , գիտացէք որ ձեր
աշխատանքն զուր չեն Տէրի
առաջին ։

ԳԼ· Ժ·Զ ։

1 Այլ վասն հաշուին ,
որ ի սուրբսն է , որպէս
պատուէր ետու եկեղեցեացն
գաղատացւոց , նոյնպէս և
դուք առնիջիք ։

2 Ըստ իւրաքանչիւր մի-
աշաբաթուցն իւրաքանչիւր
ոք ի ձէնջ անձին իւրում
գանձեսցէ՝ որ լինչ և յաջո-
ղեսցի ։

3 Զի մի յորժամ գայ-
ցեմ, յայժամ հաշիւք լինի-

1 Բայց էն տուրք ժողո-
վելոյ կողմանէ՝ որ սըրբերին
համար է՝ ինչպէս որ գաղա-
տացոց եկեղեցիներուն պա-
տուիրեցի՝ էնպէս էլ դուք
արէք ։

2 Ամէն մէկ՝ մէկ շաբթի
օրերն ձեզանից ամէն մէկն
իրան մօտ հաւաքէ՝ ինչ որ կըյաջողվի ։

3 Որ չըլինի թէ երբոր
գամ, էն ժամանակն ժողո-

ցին, այլ յորժամ եկիցէ՝ որ միանգամ ընտրեցէք թղթովք, զնոսա առաքեցից տանել զչնորհսն ձեր Երուսաղէմ։

4 Եպա թէ արժան իցէ և ինձ երթալ՝ ընդ իս երթիցեն։

5 Այլ եկիցէ առ ձեզ՝ յորժամ՝ ի մակեդոնիա անցանիցեմ, քանզի ի մակեդոնիա անցանիցեմ,

6 թէ գէպ լիցի՝ առ ձեզ ճեացից՝ և կամ ձմերեցից. զի և դուք յուղարկիցէք զիս՝ ուր և երթալոցն եմ։

7 Ոչ կամիմ զձեզ այժմ ի հարևանսի տեսանել. ակն ունիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ եթէ Տէր հրամայեսցէ։

8 Բայց այժմ լինիմ Եփեսոս մինչև յաւետեկոստէ։

9 Զի դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր, և հակառակորդք բազումք են։

10 Եւթէ եկեսցէ Տիմոթէոս՝ տեսջի՛ք զի արդ աներկիւղ լինիցի առ ձեզ. զի զգործ Տեառն գործէ՝ որպէս և ես։

վէրն լինի. բայց երբոր գամ հետց էն, որ ձեր թղթերով ընտրեցիք՝ նոյնոց կուղարկեմ՝ որ ձեր շնորհքն տանեն երուսաղէմ։

4 Եպա թէ որ ինձ էլ պէտք լինի գնալ՝ թող ինձ հետ գնան։

5 Բայց ձեզ մօտ կըգամ երբոր մակեդոնիայէն անց կըկենամ. բայց երբոր մակեդոնիայի մէջն մնայկըգամ,

6 Երթէ բանն էնպէս բերէ, ձեզ մօտ կըմնամ. կամ թէ ձմեռըն անցկըկացնեմ. որ դուք ինձ ճանապարհ դնէք՝ որտեղ որ գնալու լինիմ։

7 Ինչու որ՝ չեմ կամենում որ ձեզ հիմիկ անցկենօղի պէս տեսնեմ. յոյս ունիմ որ մի ժամանակ ձեզ մօտ կենամ՝ թէ որ Տէրն հրամայէ։

8 Բայց հիմիկ եփեսոսումն եմ կենում՝ մինչև պենտեկոստէն։

9 Ինչու որ՝ մեծ և հարկաւոր դուռն բացվաճ է ինձ՝ և հակառակօղներն շատ են։

10 Հիմիկ թէ որ տիմոթէոսն գայ. նայեցէք թէ ինչպէս անվախ լինի ձեզ մօտ, ինչոր որ Տէրի գործըն է գործում, ինչպէս որ ես։

11 Մի՛ ոք զնա անդասնեայ, և յուղարկեսջի՛ք զնա խաղաղութեամբ՝ զի եկեսցէ առ ես, քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ։

12 Այլ ոմանք ազդողսն եղբօր՝ յոյժ աղաչեցի զնա, զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ. և արդեօք ոչ էին կամք՝ զի այժմ եկեսցէ. այլ եկեսցէ յորժամ և պատեսցէ։

13 Ընկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարբուք զօրացարուք։

14 Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի։

15 Աղաչեմ զձեզ՝ եղբարբք, գիտէք զտունն ստեփանեայ և փորտունատեայ, որ են պտուղ աքայեացւոց. և ի պաշտօն սրբոցն կարգեցին զանձինս։

16 Զի և դուք հնազանդ լինիցիք այնպիսեացն. և ամենայնի՝ որ գործակից եղէ և վաստակակից։

17 Ուրախ եղէ ի գալ ստեփանեայ և փորտունատեայ և աքայիկոսի, զի զձեր պակասութիւնդ նոքա լցին.

18 Քանզի հանգուցին զո-

11 Ընդունի որ միանդամ նորան, և խաղաղութեան նով ճանապարհ դրէք նորան՝ որ ինձ մօտ գայ. ինչու որ՝ սպասումեմ նորան եղբայրներին հետ։

12 Բայց ապողոս եղբօր համար (գիտացէք) որ շատ աղաչեցի նորան՝ որ ձեզ մօտ գայ եղբարներին հետ. և ի բաւի որ կամք չունէր՝ որ հիմիկ գայ. բայց կըգայ երբոր պարապութիւն կունենայ։

13 Ընդհատ եղէք, հաստատուն կացէք հաւատովն. ժիր եղէք և ուժովացէք։

14 Ձեր ամէն բաներդ թող սիրով լինին։

15 Աղաչումեմ ձեզ՝ եղբարբք, գիտէք ստեփանի և փորտունատի տունը, որ աքայեցոց պտուղն են, և ի բանս անձներըն սրբերուն ծառայութեան տուին։

16 Որ դուք եղ հնազանդ լինիք էնպէսներուն և ամէնին որ գործ քի և աշխատանքին ընկեր են։

17 Ուրախ եղայ ստեփանի և փորտունատի և աքայիկոսի գալուն համար. ինչու որ նորանք ձեր պակասութիւնըն լցին։

18 Պատճառն որ՝ իմ և

գի իմ՝ և զձեր . արդ ծա-
նիջի՛ք զայնպիսիսն ։

19 Ողջոյն տան ձեզ եկեղե-
ցիքն ասիացւոց . ողջոյն շատ
տան ձեզ ՚ի Տէր ակուիղաս,
և պրիսկիլա հանդերձ առա-
նին եկեղեցեաւն իւրեանց ։

20 Ողջոյն տան ձեզ եղ-
բարք ամենեքեան , ողջո՛յն
տուք միմեանց ՚ի համբոյր
սրբութեան ։

21 Ողջոյնդ այդ՝ իմոյ ձե-
ռին պօղոսի է ։

22 Երդ ո՛չ սիրէ զՏէր
Ցիսուս եղիցի նզովեալ՝ մա-
րանաթա ։

23 Շնորհք Տեառն մերոյ
Ցիսուսի Քրիստոսի ընդ
ձեզ ։

24 Իւ սէրն իմ ընդ ա-
մենեսին ձեզ ՚ի Քրիստոս
Ցիսուս . ամէն ։

ձեր հոգւոյն հանգիստ տուին.
ուրեմն ճանաչեցէ՛ք ենպէսիք
ներին ։

19 Ողջոյն են տալիս ձեզ
ասիացոց եկեղեցիները. շատ
ողջոյն են տալիս ձեզ Տէ-
րով ակիւղասն և պրիսկիլան
էն եկեղեցւոյն հետ՝ որ նո-
րանց տանն է ։

20 Ողջոյն են տալիս ձեզ
ամէն եղբարքն .ողջո՛յն տուէք
իրար սո՛ւրբ համբուրմո՛վ ։

21 Իմ ողջոյնդ իմ պօղո-
սիս ձեռի՛ննէ ։

22 Թէ որ մի՛ննՏէր Ցիսու-
սին չըսիրէ՝ անիծվա՛ծ լինի՛
մարանաթա ։

23 Մեր Տէր Ցիսուսի Քրի-
ստոսի շնորհքն ձեզ հետ լինի ։

24 Իւ իմ սէրն ձեզ ամե-
նիդ հետ Ցիսուս Քրիստո-
սո՛ւմն . ամէն ։

Կորնթացւոց վերջոյ առաջին Եպիստոլէ Պետրոսի Գրվե-
ցաւ՝ առնէտնի և Փրսուանատի և ատյեկոսի ձեռօքն ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂԱՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաքն Աստուծոյ, և տիմոթէոս եղբայր եկեղեցւոյդ Աստուծոյ, որ է ի կորնթոս՝ սրբովքդ ամենեքումբք, որ են յամենայն կողմանս աքայեցւոց,

2 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ, և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

3 Օրհնեալ է Աստուած և հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. հայր գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեան։

4 Որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր. առ ի կարօղ լինել մեզ մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն, մխի-

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովն և տիմոթէոս եղբայրն՝ Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ կորնթոսումն է, ամէն սըրբերին հետ՝ որ աքայեցոյ ամէն կողմերումն են,

2 Շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն՝ Աստուածմեր հօրէյն և Տէր Յիսուս Քրիստոսէյն։

3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հայրն. ողորմութեան հայրն և ամէն մխիթարութեան Աստուածն։

4 Որ նա մխիթարումէ մեզ՝ մեր ամէն նեղութիւններումն՝ որ մենք կարօղ լինինք մխիթարել նորանց՝ որ ամէն նեղութիւններէն մէջ են, էն

թարութեամբն՝ որով մեք միսիթարիմք յԱստուծոյ ։

5 Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ՚ի մեզ. նոյնպէս և ՚ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի և միսիթարութիւնն մեր ։

6 Զի եթէ նեղիմք վասն ձերոյ միսիթարութեան և փրկութեան, և եթէ միսիթարիմք վասն ձերոյ միսիթարութեան և փրկութեան, որ յաջողեալն է համբերութիւն նոյնին չարչարանաց. զոր և մեքն չարչարիմք ։

7 Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն՝ նոյնպէս և միսիթարութեանն ։

8 Քանզի՛ չ կամիմ տգէտս լինել ձեզ՝ եղբարք, վասն նեղութեանն մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և ՚ի կենաց ։

9 Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի մի յանձինս ապաստանիցիմք՝ միսիթարութեանցն՝ որ մեզ Աստուածանից նորանով միսիթարվութեամբ ։

5 Պատճառն որ՝ ինչպէս որ Քրիստոսի չարչարանք. ներն աւելցան մեզանում. էնպէս էլ Քրիստոսի ձեռով մեր միսիթարութիւնն աւելի կըլինի ։

6 Որ՝ թէ նեղութիւն քաշինք, էն ձեր միսիթարութե և փրկութեան համար (է). և թէ որ միսիթարվինք՝ ձեր միսիթարութեան համար է՝ որ յաջողվում հենց էն չարչարանքների համբերութենովն՝ որ մենք չարչարվում ենք ։

7 Եւ մեր յոյսն ձեզ համար հաստատ է. ինչու որ գիտութենք թէ՝ ինչպէս որ չարչարանքներին մասնակից էք էնպէս էլ միսիթարութեան ։

8 Պատճառն որ չեմ կամենում՝ եղբարք, որ դուք չըգիտենաք էն նեղութիւնը որ ասիայի մէջն մեզ վերայ եկաւ. ինչու որ՝ մեր կարողութենից աւելի ծանր էր. լաւ մեզ վերայ. մինչև որ մեր կենաց յոյսըն էլ կորել կինք ։

9 Հապա հենց մենք ինքներս մեզ վերայ մեռնելոյ վճիռը առինք. որպէսզի որ՝ մեր

այլ Աստուած՝ որ յարու-
ցանէ զմեռեալս ։

10 Որ յայնպիսի մահուանէ
փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ ։
11 Քանզի յուսացեալ եմք,
եթէ տակաւին փրկեսցէ օգ-
նականութեամբ աղօթից ձե-
րոց վասն մեր · զի՛ ի բազ-
մադէմ շնորհացն՝ որ՛ի մեզ,
բազմօք յաձախեսցեն գո-
հութիւնքն վասն մեր ։

12 Քանզի պարծանք մեր
այս են · վկայութիւն մտաց
մերոց, զի սրբութեամբ և
տուղութեամբ Աստուծոյ,
և ոչ մարմնեղէն իմաստու-
թեամբ, այլ շնորհօքն Աս-
տուծոյ շրջեցաք յաշխարհի ·
բայց առաւել ևս առ ձեզ ։

13 Քանզի ոչ եթէ այլազգ
ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր
ընթեռնուցուքն՝ և գիտակ
լինիցիք · քանզի յուսամ ե-
թէ մինչև՛ի վախճան գի-
տիցէք ։

14 Որպէս խնդրեսուտ եղէք
մեզ փոքր՛ի շատէ, զի պար-
ծանք ձեր եմք, որպէս և
դուք մեր յաւուրն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

անձներիս վերայ Յոյս չընդ-
նենք, բայց Աստուծոյ վերայ,
որ մեռելներին յարուցանող
մեզ ։

10 Որ նա ենպէսի մահիցն
մեզ փրկեց՝ և ել կըփրկէ ։
11 Ինչու որ՝ Յոյս ունինք՝
որ դեռ ել կըփրկէ՝ ձեր մեզ
համար արած աղօթքի օգ-
նականութենովին · որ էն շատ
կերպ շնորհքներիցն՝ որ մե-
զանում են՝ շատերի ձեռովն
գոհութիւննէրն շատանան
մեզ համար ։

12 Պատճառն որ՝ մեր պար-
ծանքն ես է՝ մեր խըղճմտան-
քի վկայութիւնն · որ սրբու-
թենով և Աստուծոյ ձշմար-
տուութենովին և չէ թէ մար-
մնական իմաստութենով,
բայց Աստուծոյ շնորհքովին
վարվեցանք աշխարհքի մէջն,
և ել աւելի ձեզ հետ ։

13 Ինչու որ՝ ուրիշի բան
չենք գրում ձեզ · բայց մե-
նակ էն որ կարդումէք՝ և
տեղեակ էք · որ Յոյս ունիմ
թէ մինչև վերջն կըգիտանաք ։

14 Ինչպէս որ ել փոքր՛ի
շատէ հասկացաք մեզ · ինչու
որ՝ մենք ձեր պարծանք ենք ·
ինչպէս որ դուք ել մերն՝
Տէր Յիսուսի Քրիստոսի օ-
քուռմն ։

15 Եւ յայս ապաստան կա-
միմ նախ առ ձեզ գալ, զի
դուք կրկին շնորհս ընդունի-
ջիք ։

16 Եւ ՚ի ձէնջ երթալ ՚ի
Մակեդոնիա. և դարձեալ
՚ի Մակեդոնիայ գալ առ ձեզ.
և ՚ի ձէնջ յուղարկել ՚ի
Հրէաստան ։

17 Իսկ եթէ զայս խորհե-
ցայ՝ միթէ թեթևութեամբ
ինչ գնացի. և կամ զոր
խորհիմ՝ ըստ մարմնոյ ինչ
խորհիմիմ, այլ զի եղիցի
յինէն կողմանէ, այո՝ այո,
և ոչն՝ ոչ ։

18 Հաւատարիմ է Աս-
տուած՝ զի բանն մեր՝ որ առ
ձեզ եհաս, ոչ է այո, և ոչ ։

19 Քանզի որդին Աստու-
ծոյ Յիսուս Քրիստոս, որ
՚ի ձեզ մեօք քարոզեցաւ, ի-
նէն և սիղուանոսիւ և տիմո-
թէոսիւ. ոչ եղև այո և ոչ.
այլ այն ՚ի նմին եղև։

20 Զի որչափ աւետիքն
Աստուծոյ են՝ ՚ի նմա այո.
վասն որոյ և նովին ամէնն
մեօք ՚ի փառս Աստուծոյ ։

21 Այլ որ հաստատեացն

15 Եւ սրավերայ վստահա-
յեալ՝ կամեցայ առաջ
ձեզ մօտ գալ. որ դուք եր-
կու չափով շնորհք ընդու-
նիք ։

16 Եւ որ ձեզանից գնամ
Մակեդոնիա. և միմիայն մա-
կեդոնիայիցն ձեզ մօտ գամ,
և ձեզանից Հանապարհ.քցվիմ
դէպի Հրէաստան ։

17 Ուրեմն թէ որ էս միաք
արի՝ միթէ թեթեւամտու-
թեան վարվեցայ. և կամ
թէ էն որ միաք եմ անում,
մարմնի կերպով եմ միաք ա-
նում. որ իմ կողմանէս էլ
հան՝ հա լինի և չէն՝ չէ ։

18 Աստուած հաւատարիմ
է՝ որ մեր խօսքն՝ որ ձեզ հա-
սաւ, հա և չէ չէլաւ ։

19 Ինչու որ՝ Աստուծոյ որ-
դին Յիսուս Քրիստոսն, որ
մեզանով ձեր միջումդ քարոզ-
վեցաւ, ինձանով և սիղուա-
նոսով և տիմոթէոսով հա և
չէ չէլաւ՝ բայց հան նորա-
նում էլաւ ։

20 Պատճառն որ՝ որքան
Աստուծոյ աւետիքներ որ
կան՝ նորանում են հան. և
նրահամար էլ ամէնն նորա-
նով՝ որ Աստուծոյն փառք
լինի մեզանով ։

21 Բայց Աստուած է՝ որ մեզ

զմեզ ձեօք հանդերձ ՚ի Քրիստոս, և որ օծ զմեզ Աստուած է։

22 Որ և կնքեաց զմեզ, և ետ զաւհաւատչեայ հոգւոյն ՚ի սիրտս մեր։

23 Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին իմոյ. զի վասն խնայելոյ ՚ի ձեզ՝ ոչ ևս եկի ՚ի կորնթոս. զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս՝ այլ գործակից եմք ընդ ուրախացդ ձերոյ, քանզի հաւատովք հաստատեալ կայք։

ձեզ հետ հաստատեց Քրիստոսուն՝ և մեզ օծեց։

22 Որ նա էլ կնքեց (Հոգին) մեզ և հոգի գրաւէն մեր սրտի մէջ դրաւ։

23 Բայց ես Աստուծոյն վկայ եմ կանչում իմ անձիս վերայ, որ ձեզ խնայելոյ համար մինչև չեկի կորնթոս. ինչու որ՝ չէ թէ հաւատքովս ձեզ վերայ տիրապետուն՝ բայց ձեր ընդհայդ գործընկեր ենք. ինչու որ՝ հաւատքով հաստատ կանգնած էք։

ԴԼ. Բ։

1 Բայց դայս ևս եթէ ընտրեցի՝ զի մի միւսանգամ տրտմութեամբ եկից առ ձեզ։

2 Զի եթէ ես տրտմացուցանեմ զձեզ. և ո՞վ է՝ որ ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ՝ որ տրտմիցին ՚ի նէն։

3 Եւ զայս զի գրեցի՝ զի մի յորժամ գայցեմ տրտմութիւն ինչ կրիցեմ, ուստի արժանդ իցէ զիս ուրախ լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսեան, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենցուն է։

1 Բայց ես էս ընտրեցի՝ որ մինչև տրտմութենով չըգամ ձեզ մօտ։

2 Ինչու որ՝ թէ որ ես ձեզ տրտմացնեմ, էլ ո՞վ է՝ որ ինձ ուրախացնէ՝ եթէ ոչ նա՝ որ ինձանից տրտմութիւն է առնում։

3 Եւ էս գրեցի՝ որ չըլինի թէ երբ որ գամ՝ տըրտմութիւն քաշեմ էն կողմանից՝ որ պէտք էր ինձ ուրախ լինիլ. յոյսըս դրած եմ ձեզ ամէնիդ վերայ՝ որ իմ ուրախութիւնս՝ ձեր ամէնիդ (ուրախութիւն) է։

4 Զի՝ ի բազում վշտաց՝ ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմեսջիք, այլ զի գոնէն իմ գիտասջիք, զոր ունիմ առաւել սպէս առ ձեզ։

5 Ապա եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ զիս տրտմեցոյց՝ այլ փոքր ի շատէ, զի մի ծանրացայց ամենեցուն ձեզ։

6 Շատ է այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ի բազմաց անտի է։

7 Այսուհետև նմին հակառակ՝ մանաւանդ չնորհել ձեզ նմա, և մխիթարել. զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին։

8 Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստատել ի նա զսէրն։

9 Վասն այնորիկ իսկ և գրեցի. զի գիտի առից զձեր՝ եթէ յամենայնի հպատակ իցէք։

10 Զի եթէ ումեք չնորհիցէք՝ և ես. քանզի և ես եթէ չնորհիցեմ, զոր ինչ չնորհիցեմ՝ վասն ձեր ի դէմս Քրիստոսի։

4 Պատճառն որ՝ շատ յուխտէ և սրտիս նեղութենէն գրեցի ձեզ շատ արտասուքով՝ չէ թէ՝ որ տրտմիք՝ բայց որ իմ սէրըս գիտենաք որ առելի ունիմ ձեզ վերայ։

5 Ապա թէ որ մինն տրըտմացրուց՝ չէ թէ ինձ տրըտմացրուց, բայց փոքր ի շատէ՝ որ ձեզ ամենիդ ծանրութիւն չըսամ։

9 Բաւական է էնպէսի մարդոյ համար էն պատիժն՝ որ էն շատերիցն (տըվված) է։

7 Սրանից եաւ՝ նրա հակառակն՝ աւելի ներեցէք դուք նորան և մխիթարեցէք, որ չըլինի թէ շատ սաստիկ տրտմութենիցն էնպէսին խեղդվի։

8 Սրահամար աղաչումմ ձեզ. որ սէրըն հաստատէք նորա վերայ։

9 Էնոյ նրահամար էլ գրեցի ձեզ, որ ձեզ փորձով գիտենամ՝ եթէ ամէն բանի մէջ հնազանդ էք։

10 Բայց թէ որ դուք մընին ներէք՝ ապա ես էլ. պատճառն որ՝ ես էլ թէ որ ներեմ, ինչ բան որ ներումմ՝ ձեզ համար է Քրիստոսի առաջին։

11 Զի մի զրկիցեմք ՚ի սատանայէ· քանզի չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա։

12 Այլ իբրև հասի ես ՚ի տրոյադա յաւետարանն Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ ՚ի Տէր։

13 Ոչ եառու հանգիստ հոգւոյ իմում· քանզի ոչ գտի ես անդ զտիտոս զեղբայր իմ· այլ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ գնացի ՚ի մակեդոնիա։

14 Այլ Աստուծոյ շնորհք՝ որ յամենայնի հռչակ հաղթականէ զմեզ ՚ի Քրիստոս Ցիսուս, և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ միօք յամենայն տեղիս։

15 Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած՝ ՚ի մէջ փրկելոցն և ՚ի մէջ կորուսելոցն։

16 Իմանոց հոտ՝ մահուանէ ՚ի մահ, և ոմանց հոտ՝ կենդանութենէ ՚ի կեանս· և առ այս ո՞ բաւական իցէ։

17 Քանզի ոչ եմք իբրև զայլոսն, որ վաճառական լինին բանին Աստուծոյ· այլ

11 Որ չըղրկվինք սատանայից· ինչու որ՝ նորա մարքի խորհուրդներին անտեղեակ չենք։

12 Բայց երբոր ես հասի տրօադա Քրիստոսի աւետարանին համար՝ և դուռն ինձ համար բաց էր Տէրով։

13 Իմ հոգւոյս հանգիստ չըտուի· ինչու որ՝ ես իմ տիտոս եղբօրըս կնտեղ չըգտի· բայց նորանից բարևձիա արած՝ գնացի մակեդոնիա։

14 Բայց շնորհակալութիւն Աստուծոյն՝ որ ամէն բանի մէջ մեզ հռչակաւոր է առնում Քրիստոս Ցիսուսումն· և իրան գիտութեան հոտըն մեղանով յայտնում ամէն տեղ։

15 Ինչու որ՝ մենք Քրիստոսի անուշ հոտ ենք Աստուծոյ առաջին· փրկվածների մէջն և կորածների մէջն։

16 Մէին քանիսին համար՝ հոտ մահիցն դէպի մահն· և մէն քանիսին համար՝ հոտ կեանքիցն դէպի կեանքն· և ես քանիս համար հարմար բաւական կըլինի։

17 Պատճառն որ՝ ուրիշների պէս չենք, որ Աստուծոյ խօսքըն վաճառականութիւն

իբրև ՚ի հաստատուԹենէ, այլ իբրև ԱՍտուածոյ՝ առաջի Աստուծոյ ՚ի Քրիստոս Յեսուէ։

ԳԼ. Դ։

1 Ասկանիմք այսուհետև վերատին զանձինս ընծայել. Թէպէտ և ոչ պիտոյ իցէն մեզ, որպէս ոմանց՝ ԹուղԹք ընծայուԹեան առ ձեզ, կամ ՚ի ձէնջ։

2 ԱյլԹուղԹք մեր դուք էք՝ գրեալ ՚ի սիրտս մեր, ծանուցեալ և ընԹերցեալ յամենայն մարդկանէ։

3 Ցայտնեալ՝ զի էք ԹուղԹք Քրիստոսի, պաշտեցեալ ՚ի մէնջ. և գրեալ՝ ոչ մրով, այլ հոգւովն Աստուծոյ կենդանւոյ ոչ ՚ի տախտակս քարեղէնս, այլ ՚ի տախտակս սրտի մարմնեղէնս։

4 Ցայս մի այսպիսի ունիմք ՚ի ձեռն Քրիստոսի առ Աստուած։

5 Իբրև ոչ եԹէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև ՚ի մէնջ. այլ բաւականուԹիւնն մեր Աստուծոյ է։

ԳԼ. Դ։

1 Ուրեմն մինէլ սկսուիմնք մեր անձներըս գովելով ձեր առաջին դնել. ԹէԵ և պէտք չէն մեզ՝ ինչպէս որ միւս քանիսին. ձեզ վերայ կամ ձեզմանից (գրած) գովուԹեան ԹղԹեր։

2 Բայց մեր ԹուղԹս դուք էք՝ մեր սրտի մէջ գրած՝ ամէն մարդկանցից համարձակ և կարդացուած։

3 Դուք որ յայտնի էլած էք՝ ԹէԵ Քրիստոսի ԹուղԹն էք՝ մեզանից ծառայած. և գրված՝ ոչ ԹէԵ թանաքով, բայց կենդանի Աստուծոյ հոգովն. ոչ ԹէԵ քարէ տախտակների վերայ, բայց սրտի մարմնէ տախտակների վերայ։

4 Մին էսպէսի յայս ունինք Աստուծոյն՝ Քրիստոսի ձեռովն։

5 Որ ոչ ԹէԵ մենք մեզմեզնով բաւական ենք միս բան միտք անել ինչպէս մեզմանից, բայց մեր ամէն բաւականուԹիւնն Աստուածմանից է։

6 Որ և քաւականս արար զմեզ պաշտօնեայս նորոյ կտակարանաց՝ ոչ գրով, այլ հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ։

7 Զի եթէ պաշտօնն մահու գրով դրոշմեալ՝ ի տախտակսն քարեղէնս եղեւ փառաւք, զի մի կարասցեն հայել որդիքն իսրայէլի յերեսսն Մովսէսի վասն փառացն երեսաց նորա, որ խափանելոյն էր։

8 Որչափ ևս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառաւք։

9 Զի եթէ պաշտօն դատապարտութեանն փառաւք էր, որչափ ևս առաւել պաշտօն արդարութեանն փառաւք։

10 Քանզի ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ մասին, վասն առաւելութեան փառացն։

11 Զի եթէ որ խափանելոյն էր, այն փառաւք էր, որչափ ևս առաւել՝ որ կալոցն է, փառաւք իցէ։

12 Ի սր զղի ունիմք այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ վարեսցուք։

6 Որ նա եւ քաւական առաւ մեզ նոր կտակարանի պաշտօնեայ լինելոյ՝ ոչ թէ գրով, այլ հոգով. ինչու որ՝ գիրն սպանուած, այլ հոգին կենդանացնուած։

7 Բայց թէ որ մահու պաշտամունքն՝ որ գրով քարէ տախտակների վերայ փորած էր՝ փառքով եղաւ՝ մինչեւ խրայելի որդիքն չկրցին մօսէսի երեսին մտիկ անել՝ նորա երեսի փառքին համար, որ խափանուելու էր։

8 Ի՞նչ պիտի աւելի հոգւոյ պաշտամունքն փառքով պիտի լինի։

9 Ինչու որ՝ եթէ դատապարտութեան պաշտամունքն փառքով էր՝ եւ պիտի աւելի արդարութեան պաշտամունքն փառքով է։

10 Այսհամար՝ էն փառաւորուն եւ փառաւոր չէ էս կողմանէս՝ էն աւելի աւելցած փառքին համար։

11 Վասնզի՝ եթէ որ էն որ խափանելու էր՝ փառքով էր՝ եւ պիտի աւելի փառքով է էն՝ որ պիտի հաստատ կենայ։

12 Ուրեմն՝ որ էսպէսի յոյս ունինք, եւ շատ համարձակութեամբ վարվինք։

43 Եւ ոչ սրպէս մովսէս տրկանէր քօղ ՚ի վերայ ե- բհսաց իւրոց, վասն չհայելոյ որդւոցն իսրայէլի ՚ի վախ- ճան խափանելոյն ։

44 Այլ կուրացան միտք նոցա, քանզի մինչև ցայսօր ժամանակի նոյն քօղ ձգեալ կայ ՚ի վերայ ընթերցուածոց հին կտակարանացն. և ոչ վերանայ, զի Քրիստոսիւ խափանելոց է ։

45 Այլ մինչև ցայսօր՝ յորժամ ընթեռնուն զմով- սէս՝ նոյն առադաստ կայ ՚ի վերայ սրտից նոցա ։

46 Այլ յորժամ դարձցին առ Տէր՝ ապա վերասցի ա- ռադաստն ։

47 Զի Տէր հոգին է, ուր հոգի Տեառն է, անդ ազա- տութիւն է ։

48 Եւ մեք ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրև ընդ հայելի տեսեալ՝ ՚ի նոյն պատկեր նո- րոգիմք փառաց ՚ի փառս. որպէս և ՚ի Տեառն հոգւոյ ։

43 Եւ ոչ թէ ինչպէս որ մօսէսն իրան երեսին վերայ քօղ էր քաշում՝ որ իսրայէլի որդիքն չտեսնային էն (բանի) վերջին՝ որ պէտք էր խափան- վի ։

44 Բայց նորանց միտքն կու- րացաւ. ինչու որ՝ մինչև էս օրվան ժամանակս հենց էն քօղն քցված է հին կտակա- րանի կարդացմունքին վե- րայ. և վեր չի առնըվում. որ էն Քրիստոսովն պէտք է խափանվի ։

45 Բայց մինչև էս օր եր- բոր մօսէսին կարդում են, հենց էն ծածկոցն սրտերին վերայ կայ ։

46 Բայց երբոր դէպի Տէրն կըդառնան՝ ապա էն ծածկոցն վեր կառնըվի ։

47 Ինչու որ՝ Տէրն է հո- գին. որտեղ որ Տէր հոգին է՝ էնտեղ ազատութիւն է ։

48 Բայց մենք ամէնքս՝ որ բաց երեսով Տէրի փառքն ինչպէս հայելոյ մէջն տեսնու- մենք՝ հենց էն պատկերի նման նորոգվումենք՝ փառքից դէպի փառք. ինչպէս թէ Տէրի հոգուցն ։

4 Ա՛ստն այսորիկ ունիմք պաշտօնս պայ՝ որպէս և ետաք ողորմութիւն, և ո՛չ նանձրանամք ։

2 Ա՛լ հրաժարեցաք ՚ի գաղանեաց ամօթոյն· զի մի գնասցուք խորամանկութ, և մի նենգեսցուք զբանն Ա՛ստուծոյ· այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ընծայեցուցանել զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Ա՛ստուծոյ ։

3 Ա՛պա թէ ևս ծածկեալ աւետարանն մեր, ՚ի մէջ կորուսելոցն է ծածկեալ ։

4 Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն, զի մի ծագիցէ ՚ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի· որ է պատկեր անեղութեին Ա՛ստուծոյ ։

5 Զի ո՛չ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՅիսուս Քրիստոս զՏէր· և զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի ։

6 Զի Աստուած՝ որ ասաց

4 Արհամարհ մենք էս պաշտօնըս ունինք· ինչպէս որ ողորմութիւն գտինք և չենք ձանձրանում ։

2 Բայց ամօթալի ծածուկ բաներից հետ քաշվեցանք· որ խորամանկութեամբ չը վարվինք և Աստուծոյ խօսքըն չըծռենք· բայց ճշմարտութեան յայտնութեամբ նոքա մեր անձերըս ընդունելի անենք ամէն մարդկանց խղճմտանքին՝ Աստուծոյ առաջին ։

3 Ապա թէ մեր աւետարանն ծածկված էլ լինի, նա կորածների մէջն է ծածկըված ։

4 Որ էս աշխարհքիս Աստուածն է անհաւատների սրտերըն կուրացրուց՝ որ Քրիստոսի փառաւոր աւետարանի լուսաւորութիւնն չըծագէ նորանց վերայ՝ որ նա անեղութի Աստուծոյ պատկերն է ։

5 Ինչու որ՝ մենք ո՛չ թէ մեր անձներըս ենք քարոզում, բայց Յիսուս Քրիստոսին՝ թէ նա Տէրն է՝ և մենք ձեր ծառաներ՝ Քրի համար ։

6 Պատճառն որ՝ Աստը-

՝ի խաւարէ լոյս ծագել. որ
և ծագեաց նոցա ՝ի սիրտս մեր
՝ի լուսաւորութիւն գիտու-
թեան փառացն Աստուծոյ
՝ի դէմս Յիսուսի Քրիստոսի:

7 ԵՒ յոյժ հեռի ունիմք
զդանձս զայս յամանս խեցե-
ղէնս. զի առաւելութիւն զո-
րութեանն իցէ Աստուծոյ,
և ոչ ՝ի մէնջ:

8 Ամենայնի նեղեալք,
այլ ոչ նուաղեալք, կարօ-
տեալք՝ այլ ոչ տարակու-
սեալք:

9 Հալածեալք՝ այլ ոչ
լքեալք. չարչարեալք՝ այլ
ոչ ապտակեալք:

10 Յամենայն ժամ զմահն
Յիսուսի ՝ի մարմինս մեր
կրեցուք՝ զի և կեանքն Յի-
սուսի ՝ի մարմինս մեր յայտ-
նեսցին:

11 Քանզի միշտ մեք՝ որ
կենդանիքս եմք, ՝ի մահ
մատնիմք վասն Յիսուսի. զի
և կեանքն Յիսուսի յայտնի
լիցին ՝ի մահկանացու մար-
մինս մեր:

12 ԵՒ յոյժ հեռի մահ ՝ի մեզ
գործի, և կեանք ՝ի ձեզ:

ւած՝ որ ասաց թէ՝ խաւա-
րիցն լոյս ծագէ՝ ինքն հնչէ
մեր սրտերի մէջն ծագեց՝
Աստուծոյ փառաց գիտու-
թեան լուսաւորութիւնքն
տալոյ Յիսուսի Քրիստոսի
դէմքովն:

7 Բայց ես գանձս (չոչ
նոս) ունիմք հողէ շինած ա-
մանեղութիւն. որ գործեմեան
մեծութիւնն Աստուածանից
լինի, և ոչ թէ մերմանից:

8 Ամէն բանի մէջ նե-
ղայած (ենք) բայց չենք թու-
լացած. կարօտութեան մէջ
կացած՝ բայց տարակուսու-
թիւն չըքաշած:

9 Հալածված՝ բայց երե-
սից չըդնկած. չարչարված,
բայց չըսպառնալված:

10 Ամէն ժամանակ Յի-
սուսի մահըն մեր մարմնում
տանում ենք՝ որ Յսի կեանքն
էլ մեր մարմնում յայտնը-
վի:

11 Որովհետև որ՝ մենք որ
կենդանի ենք՝ միշտ Յիսու-
սի համար մեռնելոյ մէջ ենք
մատնըվում, որ Յիսուսի
կեանքն էլ յայտնըվի մեր
մահկանացու մարմնում:

12 Ուրեմն մահն մեզանում
է գործում, և կեա՛նքն ձե-
զանում:

13 Արդ՝ ունիմք զնոյն հոգի հաւատոյ՝ որպէս և գրեալ է. Հաւատացի վասն որոյ և խօսեցայ. և մեք հաւատամք՝ վասն որոյ և խօսիմք խակ։

14 Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուս ի յարուցէ՝ և յանդիման կացուսցէ ձեօք հանդերձ։

15 Քանզի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն յաճախեալք՝ ի բազմաց՝ ի գոհութենէ անտի՝ առատ լեսցին՝ ի փառս Աստուծոյ։

16 Վասն որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ։

17 Զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանն մերում՝ ի յաւիտենականն առատելութիւն, զմեծութի փառացն գործէ ի մեզ։

18 Քանզի ոչ գիտեմք զերևելիսն՝ այլ զաներևոյթսն. զի երևելիքս առժամանակ մի են, և աներևոյթքն յաւիտենական։

13 Բայց մի՛ն հաւատոյ հոգին ունինք՝ ինչպէս որ եւ գրված է. հաւատացի և նրա համար էլ խօսեցի. մենք էլ հաւատում ենք և հենց սրա համար էլ խօսում ենք։

14 Ինչ ենք գիտում. որ նա՝ որ Յիսուսին յարոյց, մեզ էլ Յիսուսի հետ կը յարուցանէ, և ձեզ հետ (իրան) առաջին կը կանգնացնէ։

15 Պատճառն որ՝ ամէն բան ձեզ համար է. որ շատացած շնորհքն են շատերի գոհութենիցն աւելանայ Աստուծոյ փառաց համար։

16 Ընդհամար էլ չենք թուլանում. բայց թէ և մեր դրսի մարդն ապականվում՝ բայց մեր ներսի մարդս օրէ յօր նորոգվում։

17 Ինչու որ՝ մեր ժամանակաւոր թեթեւ նեղութեան շատութիւնն յաւիտենական աւելութեան փառքի մեծութիւն է գործում մեզ համար։

18 Պատճառն որ՝ էս երևաղ բաներըս չենք գիտում. բայց էն՝ որ չի երևում. ինչու որ երևաղներս մի՛ քիչ ժամանակ են, և չերևաղներն՝ յաւիտենական։

1 Վասնզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած Աստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս։

2 Ուր ընդ այս տոպակամք. քանզի զբնակութիւն երկնից փափագեմք զգենուլ։

3 Միայն թէ յորժամ զգենուցեալքն՝ ոչ մերկ գտանիցիմք։

4 Վասնզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զգին ՚ի վերայ այսր զգենուլ. զի ընկլուսցի մահկանացուս ՚ի կենացդ անտի։

5 Աստ որ յաջողէն մեզ ՚ի սոյն՝ Աստուած է. որ եւ մեզ զառհաւաստեայ հոգեւոյն։

6 Արդ՝ համարձակեմք յամենայն ժամ, և գիտեմք՝ եթէ որչափ յամիմք ՚ի մարմնի աստ՝ օտարանամք ՚ի Տեառնէ։

7 Զի հաւատովք գնա-

1 Պատճառն որ՝ գիտենք որ՝ եթէ մեր երկրաւոր շինվածքի տաճարն քանդվի. Աստուածածնիւ մին շինվածք ունինք՝ մին տաճար առանց ձեռքի գործվածք՝ որ յաւիտենական է երկնքումն։

2 Ուր սրահամար զզվում ենք. ինչու որ՝ ցանկանում ենք հագնիլ էն բնակութիւնըն՝ որ երկնքիցն է։

3 Միայն թէ՝ երբոր էն հագնինք՝ մերկ չըգտնըվինք։

4 Պատճառն որ՝ մենք էս ծածքիս տակն ծանրացած զըգվում ենք. որ չենք կամենում մերկանալ՝ բայց էն սրա վերայ հագնիլ. որ էն մահկանացուս էն կեանքի մէջ առնըվի։

5 Բայց նա՝ որ էս բանը յաջողում մեզ՝ Աստուած է՝ որ հոգի գրաւըն տուաւ մեզ։

6 Ընդհամար ամէն ժամանակ համարձակութիւն ունինք և գիտումենք թէ քանի որ էս մարմնումս ուշանում ենք՝ Տէրից օտարանում ենք։

7 Ինչու որ՝ հաւատքով ենք

նամբ՝ և ոչ կարծեաք։

8 Այլ համարձակիմք՝ և առաւել ևս հաճիլ եմք ելանել ՚ի մարմնոյ սմանէ՝ և մատանել առ Աստուած։

9 Վասն որոյ և առաստա- նամբ. կամ եմք յամիսիմք՝ և եմք ելանիսիմք՝ հաճոյ ևեմ իսիմք նմա։

10 Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի առեանին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ՝ եմք բարի, և եմք չար։

11 Իսկ արդ՝ գահն Տեառն դիտելով չափ, զմարդկան ինչ միտս հաճեմք տակայն առաջի Աստուծոյ յայտնեցոյ եմք. բայց ես յուսամ և ՚ի ձեր միտս յայտնի լինել։

12 Իբր ոչ եմք միւսանգամ պատիս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանոյ վասն մեր, զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ աչս պարծիցին, և ոչ սրտիւք։

13 Զի եմք առանցաք ինչ՝ այն Աստուծոյ է. և եմք գնուամ, և ոչ մեք կարծիքով։

8 Այլ սիրտ ենք առնուամ, և էլ աւելի հաճոյ է մեզ որ էս մարմնոյս դուրս գնանք և Աստուծոյ մօտ մտնենք։

9 Նրանհամար էլ ջանք ենք անում՝ որ եմք ուշադ- նանք և եմք դուրս գնանք՝ միասին հաճոյ լինինք նորան։

10 Պատճառն որ՝ մենք ա- մէնքս պէտք է յայտնի լինինք Քրիստոսի դատաստանի ա- թոռի առաջին. որ ամէն մէկին ընդունի իրան մարմ- նովն. ինչ որ առաջ գոր- ծեայ՝ մեք բարի և մեք չար։

11 Ուրեմն՝ մենք Տէրի ա- հաւորութիւնըն լաւ գիտե- լով՝ մարդկանց միտքըն հա- ւանացնում ենք՝ բայց Աստու- ծոյ առաջին պիտի յայտնի վինք. և ես յոյս ունիմ՝ որ ձեր մտքումդ էլ յայտնի եմ։

12 Չէ որ՝ իբր մեք միևնոյն մեր առնելքըս գովելով ձեր առաջին դնենք. բայց պատ- ճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալոյ՝ որ մենք բան ունենանք նորանց դէմ՝ որ երևութի- պէս պարծե- նում՝ և ոչ մեք սրտով։

13 Ինչու որ մեք որ չափիցն անցկացանք՝ էն Աստուծոյ

պատանամք՝ այն ձեր է։

14 Զի սէրն Քրիստոսի տիրէ մեզ՝ քննել զայս. զի եթէ մին ի վերանակ ամենեցունն մեռաւ, ասէ ուրեմն ամենեքեան մեռեալ էին։

15 Եւ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն ի յոյժ՝ մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ ի վերայ նոցայն մեռաւ, և յարեաւ։

16 Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ և գիտէաք մարմնով զՔրիստոս՝ այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք։

17 Բայց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, և արդ նոր եղեւ ամենայն։

18 Այլ ամենայն ինչ Աստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի Քրիստոսէ. ևետ մեզ պաշտօնն հաշտութեան։

19 Եւ քանզի Աստուած էր՝ Քրիստոսիս պաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս իւրեանց

համար է. և զեր որ չափաւոր ենք՝ էն ձեզ համար է։

14 Պատճառն որ՝ Քրիստոսի սէրն տիրապետէ մեզ՝ որ էս միտք անենք. ինչու որ՝ եթէ մինն ամենուն տեղ մեռաւ՝ ապա ամէնքն մեռած են։

15 Եւ նա ամէնուն վերայ մեռաւ՝ որ նորանք որ կենդանի են, ոչ թէ իրանց անձներուն համար կենդանի լինեն, այլ նորա համար, որ իրանց վերայ մեռաւ և յարութիւն առաւ։

16 Ուրեմն սրանից ետև մենք իսկի մէնուն չենք գիտում մարմնոյ կողմանէ. և թէ և Քրիստոսիկին մարմնոյ կողմանէ՝ բայց հիմի՝ էլ էնպէս չենք գիտում։

17 Բայց թէ որ մինն Քրիստոսում է մին նոր ստեղծուած է. ինչու որ՝ հինն անյայտաւ, և հիմի նոր էլաւ։

18 Մի այն թէ էն ամէնը Աստուածանից է. որ մեզ իրան հետ հաշտացրուց Քրիստոսով և մեզ հաշտութեան պաշտօնէն տուաւ։

19 Ինչու որ՝ Աստուած էր էն, որ Քրիստոսովն աշխարհքըս հաշտացրուց իրան հետ՝ և նորանց մեղքերըն չըհա-

բանոյ, և եդ ՚ի մէջ զբանն հաշտութեան ։

20 Արդ՝ վասն Քրիստոսի պատգամաւորիմք՝ որպէս և Աստուծոյ բարեխօսութիւն մեօք. աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ ։

21 Զի զայն՝ որ ոչն գիտէր վմեղս, վասն մեր մեղս արար· զի մեք եղիցուք նոր վասն արդարութիւն Աստուծոյ ։

մարեայ նորանոյ· և հաշտութեան խօսքըն մեր միջնումն դրաւ ։

20 Ուրեմն Քրիստոսի կողմանէն պատգամաւոր (Էլչի) ենք, ինչպէս որ Աստուած ևՀ յորդորում մեզանով· աղաչումենք Քրիստոսի կողմանէն՝ հաշտվեցէք Աստուծոյ հետ ։

21 Պատճառն որ՝ ինքն նորան՝ որ մեղք չէր գիտցաւ՝ մեզ համար մեղք արաւ՝ որ մենք նորանով Աստուծոյ արդարութիւն լինինք ։

ԳԼ· Զ ։

1 Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք· մի ընդունայն զնորհն Աստուծոյ ընդունել ձեզ ։

2 Զի ՚ի ժամանակի ընդունելութեան՝ ասէ, լուայ քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի քեզ, ահաւասիկ ժամանակ ընդունելի· ահա օր փրկութեան ։

3 Մի և մի իւիք տայցէք պատճառս, զի մի արատասցի պաշտօնն ,

4 Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև պաշտօնեայս Աստուծոյ

Ձեր գործքի ընկեր ենք՝ և աղաչումենք՝ որ դուք Աստուծոյ շնորհքըն զուր տեղն չընդունիք ։

2 Պատճառն որ՝ ասումէ· ընդունելի ժամանակումն լսեցի քեզ, և փրկութեան օրումն օգնեցի քեզ· ահա (հիմիկ) ընդունելի ժամանակ է՝ հիմիկ փրկութեան օրն ։

3 Ձըլինի որ իսկի մեն բանով պայթակղութիւն տաք՝ որ (մեր) պաշտօնն չընդհատվի·

4 Հապա ամեն բանի մէջ ձեր անձնիդ առաջ դիք իբրև Աստուծոյ պաշտօ-

ծոյ՝ համբերութեամբ բազմաւ ՚ի նեղութիւնս, ՚ի վիշտս, ՚ի չարչարանս,

5 ՚ի գանս, ՚ի բանտս, ՚ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ՚ի հսկմունս, ՚ի պահս.

6 ՚ի սրբութեան, ՚ի գիտութեան յերկայնմտութեան ՚ի քաղցրութեան, ՚ի հոգի սուրբ, ՚ի սէր՝ առանց կեղծաւորութեան.

7 ՚ի բանս ճշմարտութեան, ՚ի զօրութեան Աստուծոյ. ՚ի վան զինուն արդարութեան որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է:

8 փառաւք և անարգութիւք, դիւրութեամբ և պարսաւանօք, իբրև մոլարք և ճշմարիտք,

9 իբրև անծանօթք և ծանուցեալք. իբրև մահկանացուք և ահաւասիկ կեանդանի եմք. իբրև խրատեալք և ոչ մահապարտեալք.

10 իբրև տրտմեալք՝ և հանապազ ուրախ եմք. իբրև տնանկք՝ և զբազումս մեծացուցանեմք. իբրև ոչ ինչ ունիցիմք, և զամենայն ինչ ունիմք:

նեանք՝ շատ համբերութեամբ, նոյ նեղութիւններուն, վիշտերուն, չարչարանքներուն,

5 Ծեծուտիներուն, բանտերուն, խռովութիւններուն, աշխատանքներուն, հսկմունքներուն, պահերուն,

6 Սրբութենով, գիտութենով, երկայնմտութենով, քաղցրութենո մ, որ հոգով, առանց կեղծաւորութեան սիրով.

7 Ճշմարտութեան խօսքերովն, Աստուծոյ զօրութենովը՝ արդարութեան զէնքըն առած աջ կողմանէ և ձախ կողմանէ:

8 Փառքով և անարգանքով՝ գովաբանքով և բամբասանքով. ինչպէս մոլորացը. նօղներ՝ և ճշմարիտ խօսողներ,

9 Ինչպէս չըճանաչվածներ և ճանաչվածներ, ինչպէս մեռածներ՝ և ահա կենդանի ենք. ինչպէս պատժվածներ՝ և մահապարտ չըլլավածներ.

10 Ինչպէս տրտմածներ՝ և միշտ ուրախ ենք. ինչպէս աղքատներ՝ և շատերուն հարստացնողներ. ինչպէս մէկ ոչ ինչ ունինք՝ և ամէն բան ունինք:

11 Խերանք մեր բայեալ են առ ձեզ՝ կորնթացիք, և սիրտք մեր ընդարձակեալ է։
12 Ո՛չ ինչ նեղիք ի մեզ՝ բայց եթէ ի դուրս ձեր նեղիցիք։
13 Ընդ զնոյն հատուցումն իբրև ընդ որդեակս ունիմ. ընդարձակեցարուք և դուք։

14 Եւ մի լինիք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի։

15 Եւ կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին։

16 Կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ մեհեանաց, ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք որպէս և ասաց Աստուած. Եթէ բնակեցայց ի նոսա, և պտըտեցայց ի նոսա, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ։

17 Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ

11 Մեր բերանս բացուած է դէպի ձեզ՝ կորնթացիք, և մեր սիրտս լայն արձակ է։
12 Մեզանից մին բանով նեղուելիս չունիք եթէ ոչ ձեր սրտի դուրծից նեղուիք։
13 Հիմիկ՝ որ հանց մին հատուցումըն ինչպէս եթէ իմ որդիքներիս հետ ունենամ՝ դուք էլ լայն արձակ էլէք։

14 Եւ անհաւատներին հետ լծի ընկեր մի լինիք. պատճառն որ՝ ի՞նչ հաղորդութիւն կայ արդարութեանն՝ անօրէնութեան հետ. և կամ եթէ ի՞նչ հաւասարութիւն լուսոյն՝ խաւարին հետ։

15 Եւ կամ եթէ ի՞նչ միաբանութիւն կայ Քրիստոսին՝ բելիարին հետ. կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալն անհաւատին հետ։

16 Կամ ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին՝ կռոքերի տան հետ. բայց դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս որ Աստուած ասաց՝ եթէ նորանց միջումն կըբնակվիմ և նորանց միջումն մանկըտամ. և նորանց Աստուած կըլինիմ, և նորանք իմ ժողովուրդ։

17 Ընդհամառ՝ նորանց միջից դուրս գնացէք և ջոկ-

Տէր և՝ ի պիղծս մի մերձե-
նայք :

18 Եւ ես ընկալայց զձեզ.
և ես եղէց ձեզ՝ ի հայր, և
դուք եղիջիք ինձ յուսաելս
և՝ ի դստեր, ասէ Տէր ա-
մենակալ :

ՂԱ. Ի :

1 Ասկ որովհետև զայս ա-
ւետիս ունիմք՝ սիրելիք,
սրբեսցուք զանձինս մեր յա-
մենայն պղծութենէ մարմնոյ
և հոգւոյ, կատարեսցուք
ըսրբութիւն ահիւն Աստու-
ծոյ :

2 Տարածք մեզ, զի ոչ ո-
մեք մեղաք, և ոչ զոք եղ-
ծաք, և ոչ զոք զրկեցաք :

3 Ո՛չ եթէ ի դատա-
պարտութիւն ինչ ասեմ.
քանզի յառաջ խոկ ասացի,
եթէ ի սրտի մերում կայք՝
ի կեալ և ի մեռանել ընդ
ձեզ :

4 Խոսում համարձակու-
թիւն ե ինձ առ ձեզ. բա-
զում պարծանք են ինձ վասն
ձեր. լի՛ եմ մխիթարութեա-
առաւելեալ եմ ուրախու-
թեամբ յամենայն նեղու-
թիւնս մեր :

վեցէք՝ ասում Տէրն և
պիղծ բաներէ մի մօտենաք :

18 Եւ ես կընդունիմ ձեզ.
և ես հօր տեղ կըլինիմ ձեզ,
և դուք ինձ որդիքների և
աղջկունների տեղ կըլինիք. ա-
սում ամենակարող Տէրն :

ՂԲ. Ա :

1 Հայց որովհետև մենք
ես աւետիքըն, ունինք՝ սի-
րելիներ, մեր անձնըսրբ-
քենք հոգւոյ և մարմնոյ ամէն
պղծութենիյն. սրբութիւ-
նըն կատարենք Աստուծոյա-
հոյն :

2 Մտիկ արէք մեզ՝ որ
մընի դէմ մեզ չարինք, և
մընին ջնաս չտուինք և մը-
նին չըղրկեցինք :

3 Ո՛չ ձեզ դատապար-
տելոյ համար եմ ասում ես.
պատճառն որ՝ հինոյ առաջուց
ասացի՝ որ դուք մեր սրտումն
էք՝ մինչև ձեզ հետ կենդանի
լինիլ և մեռնիլ :

4 Շատ համարձակութիւն
ունիմ դէպի ձեզ. շատ պար-
ծանք ունիմ ձեզ համար.
մխիթարութենով լիքն եմ.
ուրախութենով աւելացած
եմ մեր ամէն նեղութիւննե-
րուն :

5 Քանզի յորժամ հասաք մեք ՚ի Մակեդոնիա, և ոչ միավ իւիք հանգիստ պատաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք· քանզի արտաքոյ մարտք՝ և ՚ի ներքոյ արհաւիրք։

6 Այլ որ միխիթարէն ըզխոնարհս, միխիթարեաց զմեզ Աստուածն ՚ի գալստեանն տիտոսի։

7 Ո՛չ միայն ՚ի գալստեան նորա, այլև ՚ի միխիթարութեանն, զոր միխիթարեցաւ նա ՚ի ձեզ, ՚ի պատմել մեզ զանձնուիրն ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։

8 Զի թէ և տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ էի· քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ և առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ։

9 Այդ՝ ուրախ եմ, ոչ զի տրտմիցիք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք· քանզի տրտմեցաք դուք ըստ Աստուծոյ· զի մի իւիք զրկիցիք ՚ի մէնջ։

5 Պատճառն որ՝ երբոր հասինք մակեդոնիա իսկի մին քանով էլ հանգիստ չըգտաւ մեր մարմինս համար բայց ամէն բանի մէջ նեղուած էինք· բաշերինք· ինչու որ՝ դրսիցն կռիւ, և ներսիցն ահ և վախ (կար)։

6 Բայց նա որ խոնարհներին միխիթարում՝ Աստուած միխիթարեց մեզ տիտոսի գալովն։

7 Ո՛չ թէ մէնակ նորա գալովն՝ բայց էլ էն միխիթարութեովն՝ որ նա ձեր միջումն միխիթարեցաւ· երբոր նա պատմեց մեզ ձեր սրտի վայելումը, ձեր ողբալն և ձեր ջերմեռանդութիւնն ինձ համար· մինչև որ էլ աւելի ուրախացայ։

8 Որ թէ և տրտմացրի ձեզ էն թղթովն՝ չեմ զղջանում· և թէ զղջացած էլ էի որովհետև տեսնում՝ որ էն թուղթն մին փոքր ժամանակ ձեզ տրտմացրուց։

9 Այլ հիմիկ ուրախ եմ՝ ոչ թէ նրահամար որ տրտմացաք՝ բայց որ տրտմեցաք աւելի ապաշխարութեովն· ինչու որ՝ դուք Աստուծով տրտմացաք՝ որ իսկի մեղանից մին բանով վնաս չըքաշէք։

10 Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝ մահ գործէ։

11 Ընդ՝ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ, կամ ազերս, կամ սաստ, կամ երկիւղ, կամ անձուկ, կամ նախանձ, կամ վրէժխնդրութիւն, քանզի յամենայնի ընծայեցուցիք զանձինս ձեր՝ սուրբս լինել յիրիդ յայդմիկ։

12 Ապա ուրեմն՝ թէ և գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ որ զրկեացն, և ոչ վասն այնորիկ՝ որ զրկեցաւն. այլ վասն յայտի լինելոյ փութոյն ձերոյ՝ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ։

13 Վասն այնորիկ մխիթարեալ եմք ի վերայ մխիթարութեանն մերոյ. առաւել և ես ինդայեալք ի վերայ խընդութեանն տիտոսի. քանզի հանգուցեալ էր հոգի նորա ի ձէնջ ամենեցուն,

14 Զի զինչ և պարծեր

10 Պատճառն որ՝ էն տըրտմութիւնն որ Աստուծով է՝ ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց զղջանալոյ. բայց աշխարհքի տրտմութիւնն՝ մահ է գործում։

11 Իմիկ՝ հենց էն որ դուք Աստուծով տրտմեցաք՝ որքան ջանք գործեց ձեզանում, կամ ազաչանք, կամ յանդիմանութիւն, կամ վախ, կամ փափագ, կամ նախանձաւորութիւն կամ վրէժխընդրութիւն. ինչու որ՝ ամէն բանով ցոյց տուիք ձեր անձներըդ՝ որ անմեղ էք էդ բանումդ։

12 Որեմն թէ և ես գրեյի ձեզ՝ ոչ թէ նորա համար էր՝ որ զրկանք արաւ, և ոչ թէ նորա համար, որ զրկանք քաշեց. բայց որ ձեր ջանքն՝ որ մեզ վերայ ունիք, յայտի լինի ձեզ մօտ՝ Աստուծոյ առաջին։

13 Ընդհամար մխիթարած ենք ձեր մխիթարութեան համար. և էլ աւելի ուրախացանք տիտոսի ուրախութեան համար. ինչու որ՝ նորա հոգին ձեր ամէնիցդ հանգիստ էր առած։

14 Պատճառն որ՝ ինչ որ

ցայ առ նմա վասն ձեր՝ ոչ
ամաչեցի· այլ որպէս զա-
մենայն ճշմարտութեամբ խո-
սեցաք ընդ ձեզ, նոյնպէս և
պարծանքն մեր առ տիտոսի
ճշմարիտ եղեն ։

15 ԵՒսաև գութք նորա ա-
ռաւել ևս են ՚ի ձեզ· քան-
զի յիշեցուցանէր մեզ պա-
մենեցուն զձեր հնազանդու-
թիւն· թէ որպէս ահիւ և
դողութեամբ ընկալարուք
զնա ։

16 Ուս արդ՝ ուրախ եմ,
զի յամենայնի համարձակ եմ
առ ձեզ ։

եւ ձեզ համար պարծեցայ
նորա առաջին՝ չամաչեցի·
բայց ինչպէս որ ամէն բան
ճշմարտութեամբ խօսեցինք
ձեզ հետ· Էնպէս եւ մեր
պարծանքն ճշմարիտ էլան
տիտոսի առաջին ։

15 Բայց նորա սէրն էլ ա-
ւելի ձեզ վերայ կապված է·
ինչու որ՝ մեր միտքս էր բե-
րում ձեր ամէնի հնազան-
դութիւնըն՝ թէ ինչպէս ա-
հով և դողալով ընդունեցիք
իրան ։

16 Որահամար՝ ուրախ եմ
որ ամէն բանի մէջ վստա-
հութիւն ունիմ ձեզ վերայ։

ԳԼ· Ը ։

1 Ցուցանեմ ձեզ՝ ե՛ղ-
բարք, զշնորհն Աստուծոյ՝
որ տուեալ են եկեղեցեացն
մակեդոնացւոց ։

2 Զի մեծաւ հանդիպեաւ
նեղութեան՝ առաւելութեան
խնդութեանն նոցա, և ծանր
աղքատութիւն նոցա առաւել
եղև ՚ի մեծութիւն առատու-
թեան նոցա ։

3 Զի ըստ կարի նոցա
վկայեմ, և աւելի քան զկա-
կար ։

1 Ա՛ղբարք՝ ցոյց եմ տա-
լիս ձեզ՝ Աստուծոյն շնորհ-
քըն՝ որ մակեդոնացոց եկե-
ղեցիներին տըվված է ։

2 Ինչու որ՝ նեղութեան
մեծ փորձին էլ աւելի շատ
էլաւ նորանց ուրախութիւնն·
և նորանց ծանր աղքատու-
թիւնն էլ աւելի էլաւ նո-
րանց համար մեծ առատու-
թիւն ։

3 Պատճառն որ՝ իրանց
կարողութեան չափովն՝ (էս)
վկայում եմ՝ և կարողութե-
նից էլ աւելի ։

4 Ինքնակամ բաղուա-
ղաչանօք աղաչեին զՏնօրհն,
և զհաղորդութիւն պաշտա-
մանն, որ ՚ի սուրբսն՝ տալ
ցմեզ։

5 Ո՛չ որչափ ակն ունէաք,
այլև զանձինս ևս հատուն,
նախ Տեառն՝ և ապա մեզ
կամօքն Աստուծոյ։

6 Աղաչել զՏիտոս՝ զի որ-
պէս սկսաւն յառաջադոյն,
նոյնպէս և կատարեսցէ ՚ի
ձեզ և զայդ ևս շնորհս։

7 Այլ որպէս յամենայնի
առաւել էք հաւատովք՝ և
բանիւ և գիտութեամբ և
ամենայն փութով, և որ ՚ի
մէնջ ՚ի ձեզ սէրն է, զի և
յայդմ ևս շնորհի առաւել
լինիցիք։

8 Ո՛չ որպէս հրաման տա-
լով ասեմ, այլ վասն այլոց
փութով, և վասն ձերոյ սի-
րոյ զմտերմութիւնդ փոր-
ձեմ։

9 Գիտէք զի շնորհսն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ զի վասն ձեր աղքա-
տացաւ՝ որ մեծատունն էր,

4 Ինքն իրանց կամքով՝
շատ աղաչանքով աղաչու-
մէն՝ որ էն պաշտօնի շնորհ-
քըն և հաղորդութիւնըն՝ որ
սրբերին է լինում, մեր
ձեռքս տան։

5 Ո՛չ թէ որքան որ յոյս
ունէինք՝ բայց իրանց անձ-
ներըն էլ տուին՝ առաջ Տէ-
րին՝ և ապա մեզ՝ Աստուծոյ
կամքովն։

6 Որ մենք էլ տիտոսին ա-
ղաչեցինք՝ որ ինչպէս որ ա-
ռաջուց սկսեց՝ էնպէս էլ
էդ շնորհըդ կատարէ ձեր
միջումդ։

7 Բայց ինչպէս որ ամէն
բանի մէջ աւելանումէք հա-
ւատքով և խօսքով, և գի-
տութիւնով, և ամէն ջանքով
և ձեր սիրովն որ դէպի մեզ
է՝ ապա էդ շնորհքումդ էլ
աւելացէք։

8 Ո՛չ թէ իբր հրաման
տալով եմ ասում՝ բայց ու-
րիշներուն ջանք տեղ տա-
մալ՝ և ձեր սիրոյ համար
ձեր հաւատարմութիւնն եմ
փորձում։

9 Ինչու որ՝ գիտումէք մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքըն՝ որ ձեզ համար աղ-
քատացաւ նա՝ որ հարուստ

զի դուք նորա աղքատու-
թեամբն մեծասջիք ։

10 Իբր խոտոտ մի յայսմիկ
տամ· զի այն իսկ օգտի ձեզ
է, որք ոչ միայն զառնելն՝
այլ և զկամելն յառաջագոյն
սկսայք ի հերուն հետէ ։

11 Բայց արդ և զառնելն
իսկ կատարեցէք · զի որպէս
յօժարութիւնն ի կամայ ,
նոյնպէս և առնելն ըստ զո-
յին ։

12 Զի եթէ յօժարու-
թիւնն առաջիկայ , ըստ զո-
յին ընդունելի է՝ և ոչ ե-
թէ ըստ չգոյին ։

13 Զի ոչ եթէ այլոց
հանգիստ կամիցիմ, և ձեզ
նեղութիւն ։

14 Այլ հաւասարութեամբ
յայժմոյ ժամանակիս . ձեր
առատութիւնդ ի նոցա
պակասութեանն . զի և նոցա
առատութիւնն եղիցի ի ձե-
րում պակասութեանդ , զի
եղիցի հաւասարութիւն՝ որ-
պէս և գրեալ է ։

15 Թէ որ բազումն առ՝ ոչ
առաւելաւ . և որ սակաւն՝
ոչ նուազեցաւ ։

16 Բայց շնորհք Աստու-

էր՝ որ դուք նորա աղքատու-
թենովն հարստանայք ։

10 Իւ էս բանիս մէջ մի՛ն
խրատ եմ տալիս . ինչուս որ՝
էն օգուտ է ձեզ՝ որ ոչ թէ
միայն անելըն բայց էլ կա-
մենալըն առաջուց սկսեցիք՝
անցկացած տարուն հետէ ։

11 Բայց հիմիկ անելըն էլ
կատարեցէք · որ ինչպէս որ
յօժարութիւնն կամքիցն է
առաջ գալիս՝ էնպէս էլ ա-
նելն՝ ունեցածի չափովն ։

12 Ինչուս որ՝ եթէ յօժա-
րութիւն կայ՝ ունեցածի չա-
փովն ընդունելի է . և չէ
թէ չունեցածի չափովն ։

13 Պատճառն որ՝ չէ թէ
ուրիշներին հանգստութիւն
եմ կամենում՝ և ձեզ նե-
ղութիւն ։

14 Բայց հաւասարութե-
նով հիմիկվայ ժամանակումս
(թմզ) ձեր աւելութիւնդ
(ծառայէ) նորանց պակասու-
թեանն . որ նորանց աւելու-
թիւնն էլ (ծառայէ) ձեր պա-
կասութեանն . որ հաւասա-
րութիւն լինի . ինչպէս որ
էլ գրված է ։

15 Թէ նա՝ որ շատ աթաւ,
չաւելացաւ՝ և նա որ քիչ՝
չըպակասվեցաւ ։

16 Բայց շնորհակալու-

ծոյ, որ արկ զնոյն փոյթ վասն
ձեր ՚ի սիրտ տիտոսի ։

17 Զի զաղաչանսն ընկա-
լաւ՝ փութեացաւ յօժարա-
գոյնս դիմեաց գալ առ ձեզ ։

18 Եւ առաքեցաք ընդ նմա
զեղբայրն՝ որոյ գովուԹիւն
յաւետարանի անդ է ընդ ա-
մենայն եկեղեցիս ։

19 Եւ ոչ այսչափ միայն,
այլ և ձեռնադրեալ յեկե-
ղեցեաց անտի, նշդեհկակից
մեր եղև ՚ի շնորհս յայսոսիկ՝
որ պաշտին ՚ի մէնջ, ՚ի փառս
Տեառն՝ և ՚ի մեր յօժարու-
Թիւն ։

20 Խայց զայս խոշՀեաք իսկ՝
Թէ գուցէ արասցուք ոք ինչ
զնիցէ ՚ի հաստատուԹեանս
յայսմիկ՝ որ պաշտեցաւս ՚ի
մէնջ ։

21 Վասնզի խորհիմք զբա-
րիս՝ ոչ միայն առաջի Տեառն
այլ և առաջի մարդկան ։

22 Եւ առաքեցաք ընդ նո-
սա զեղբայրն մեր զոր՝ ընտ-
րեցաք ՚ի բազում իրս բա-
զում անգամ պինդ գտեալ·

Թիւն (լինի) Ստուհայն՝ որ
հետ էն ջանքըն ձեզ հա-
մար քսեց տիտոսի սիրան ։

17 Ինչու որ՝ իմ աղաչան-
քըս ընդունեց և շատ յօժար
սրտով վռազեց որ ձեզ մօտ
գայ ։

18 Եւ նորա հետ ուղար-
կեցինք էն եղբօրըն՝ որ նո-
րա գովասանքն աւետարա-
նումն է ամէն եկեղեցիների
միջումն ։

19 Եւ չէ Թէ մենակ էս-
քան, բայց նա էն եկեղեցի-
ներիցն էլ ձեռնադրված՝ մեր
պանդըխտուԹեան ընկեր է-
լաւ էս աշխարՀքումս՝ որ
մենք ծառայումենք նորան՝
Ստուծոյ փառաց համար և
մեր յօժար սրտով ։

20 Խայց էս բանիցս զգու-
շուԹիւն կինք անում · որ
չըլինի Թէ մենն մին աղա քցէ
էս հաստատ (լի ւԹեանս)
վերայ՝ որ մենք ծառայումենք
նորան ։

21 ՊատՀառն որ՝ բարի բա-
ներ ենք մտածում չէ Թէ
մենակ Տէրի առաջին, բայց
մարդկանց առաջին էլ ։

22 Եւ նորանց հետ ուղար-
կեցինք մեր եղբօրըն՝ որ նո-
րան շատ բանի մէջ ընտրե-
ցինք և շատ անգամ ժիր

և առաւել ևս այժմ պնդագոյն՝ յուսով մնալ ՚ի Տէր։

23 Բայց եթէ վասն տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է՝ և ձեր գործակից. և եթէ եղբարք մեր՝ առաքեալքն եկեղեցւոյ՝ և փառք Քրիստոսի։

24 Ուր արդ՝ զհանդէս սիրոյ ձերոյ՝ և զմերոյ պարծանացն վասն ձեր, ՚ի դոսա ցուցջի՛ք յանդիման ամենայն եկեղեցեաց։

դինք. և հիմիկ՝ էլ աւելի ջանք անօղ էն մնծ վստահուԹենովՆ՝ որ ունի դէպի ձեզ։

23 Բայց եԹէ որ տիտոսի համար խօսք լինի. նա իմ հաւասարս է և ձեզ համար գործընկերս. և եԹէ որ մեր եղբարներին (համար՝ նորանք) եկեղեցոյ առաքեալներն են և Քրիստոսի փառք։

24 Ուրեմն ձեր սիրոյ չափըն և մեր ձեզ համար պարծենալոյ (պատճառըն) ցոյց տուէք դորանց՝ ամէն եկեղեցիների առաջին։

ԳԼ· Թ։

1 ԱՅԼ վասն պաշտամանն՝ որ ՚ի սուրբսն է, աւելի է ինձ և գրել առ ձեզ։

2 Զի գիտեմ զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ՚ի Մակեդոնացւոցն, Եթէ աքայիքն ՚ի Հերուն հետէ պատրաստ են, և ձեր նախանձն զբազումս յորդորեաց։

3 Ուր առաքեցաք զեղբարսն, զի մի պարծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն

1 Բայց էն պաշտամունքին համար՝ որ սըրբերին է լինում, աւելորդ է ինձ որ դրեմ ձեզ։

2 Ինչու որ՝ գիտումեմ ձեր յօժարութիւնըն՝ որ նորանով մակեդոնացւոց մէջն ձեզ համար պարծեցել եմ. Եթէ աքայեցիքն անկացած տարուն հետէ պատրաստ են, և ձեր ջանքն շատերին յորդորեց։

3 Ուր եղբարներին ուղարկեցինք, որ մեր ձեզ վերայ պարծենալն զուր չըլինի

լինիցին ի մասինդ յայդմիկ· այլ որպէս ասէի խոկ, պատրաստադունք գտանիջիք։

4 Գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ մակեդոնացիքն՝ և գտանիցեն զձեզ անպատրաստս, և ամաչեսցուք մեք· զի մի ասասցուք՝ թէ դուք՝ ի մասինդ յայդմիկ պարծանացդ։

5 Արդ՝ կարևւոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն խոկ եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր՝ ի պատրաստի ունել· այնպէս իբրև զօրհնութիւն, և մի իբրև զագահութիւն։

6 Քանզի որ սերմանէ ՃՀղելով, Ճղելով և հնձես· և որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ։

7 Իւրաքանչիւր որպէս և յօժարեսցի ոք սրտիւ, մի առ հարկի և տրտմութեան, քանզի զտուրս զուարճառաւս սիրէ Աստուած։

8 Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս առատել՝ ի ձեզ· զի յամենայնի յա-

էդ կողմանէդ· բայց ինչպէս որ հենց ասել եմ, լաւ պատրաստ գանըվիք։

4 Որ չլինի թէ՝ երբոր մակեդոնացիքն մեզ հետ գան և ձեզ չըպատրաստված գտնեն՝ մենք էլ ամօթ լինինք· որ չասենք թէ՝ դուք, էդ մեր պարծանքի կողմանէ։

5 Ընդհակառակն հարկաւոր համարեցի եղբայրներին աղաչել, որ առաջուց ձեզ մօտ գան և առաջուց պատրաստեն ձեր առաջուց խոստացած օրհնութիւնը՝ որ պատրաստ լինի էնպէս՝ ինչպէս օրհնութիւն և ոչ թէ ինչպէս ագահութիւն։

6 Պատճառն որ՝ էդ (եմաստում) նա՝ որ խնայելով է սերմում, խնայելով էլ հնձում, և նա՝ որ առատութեամբ է սերմում, առատութեամբ էլ հնձում։

7 Մէն մէկն ինչպէս որ սրտի յօժարութիւն կայ՝ էնթէ հակադրութեամբ և տրտմութեամբ· ինչու որ՝ Աստուած ուրախ տուողներին է սիրում։

8 Բայց Աստուած կարող է ամէն շնորհքները աւելացնել ձեզանում· որ ամէն

մենայն ժամ զամենայն բաւա-
կանութիւն ընկալեալ՝ առա-
ւելութիւք յամենայն գործս
բարութեան ։

9 Որպէս և գրեալ է·
սփռեաց և ետ տնանկաց·
արդարութիւն նորա մնայ
յաւիտեան ։

10 Ա՛յր՝ որ պարգևէ
սերմն սերմանահանաց, և հաց
ի կերակուր, պարգևեսցէ
և բազմացուսցէ զսերմանիս
ձեր, և աճեցուսցէ զպա-
ղիւնս արդարութեան ձերոյ։

11 Յամենայնի մեծացեալք
ամենայն առատութեամբ՝ որ
յորինէն մեօք գոհութիւն
Աստուծոյ ։

12 Զի պաշտօն հարկիս
այսորիկ՝ ոչ միայն առ ի
լնուլ զպակասութիւն սրբ-
ոցն է, այլ և առաւելուլ
բազմօք գոհութիւնս Ա-
ստուծոյ ։

13 Հանդիսիւ պաշտամանս
այսորիկ փառաւորել զԱ-
ստուած ի վերայ հնազանդու-
թեան խոստովանութեան ձե-
րոյ յաւետարանն Քրիստոսի,
և առատութեամբ հաղոր-
դութեանն ի նոսա՝ և յա-
մենեսին· և նոցա աղօթիք
վասն ձեր, քանզի անձկա-

բանի մէջ ամէն ժամանակ
ամէն բաւականութիւն առ-
նէք և ամէն բարի գործքե-
րով աւելնաք ։

9 Ինչպէս որ էլ գրված է·
ցրուեց և ազքատներուն տը-
ւաւ· նորա արդարութիւնն
միւռմէ յաւիտեան ։

10 Հայց նա՝ որ սերմ յա-
ղուներուն սերմ է ընծայում,
և հաց՝ կերակուրի համար,
նա էլ կընծայէ և կըշատաց-
նէ ձեր սերմունքներըն, և
ձեր արդարութեան պտու-
ղըն կըմեծացնէ ։

11 Որ ամէն բանի մէջ հա-
րուստ լինիք ամէն լիութե-
նով՝ որ էն մեզանով գոհու-
թիւն է բերում Աստուծոյն։

12 Ինչու որ՝ էս տուրքիս
պաշտօնն չէ թէ միայն սըր-
բերի պակասութիւնըն լցնե-
լոյ համար է՝ բայց էլ որ
շատերի ձեռովն Աստուծոյ
գոհութիւնն շատանայ ։

13 Որ էս պաշտամունքիս
փորձովն Աստուած փառա-
ւորվի· ձեր Քրիստոսի աւե-
տարանի հնազանդութեան
համար. և էն առատ
հաղորդութենովն՝ որ նորանց
և ամէնին հետ է լինում·
և նորանց ձեզ համար (ա-
րած) աղօթքովն, որ նորանց

ցեալ են առ ձեզ վասն ա-
ռաւել շնորհացն Աստուծոյ՝
որ ի ձեզ ։

14 Ա.ՅԼ շնորհք Աստուծոյ
ի վերայ անպատում պար-
գեւացն նորա ։

փափաքն ձեզ վերայ է՝ Աս-
տուծոյ էն հարուստ շնորհ-
ներին համար՝ որ ձեզմնում
են ։

14 Բայց Աստուծոյ (լինի)
շնորհակալութիւն՝ իբրեւ ան-
պատմելի պարգեւներին հա-
մար ։

ԳԼ. Ժ ։

1 Ա.ՅԼ ես իսկ պօղոս ա-
ղաչեմ զձեզ հեղութեամբն
և հանդարտութեամբն Քրիս-
տոսի, որ յանդիման ձեզ՝
իբրև տառապեալ մի եմ ի
միջի ձերում. բայց ի հե-
ռուստ համարձակիմ առ ձեզ ։

2 Աղաչեմ, զի մի ի մո-
տոյ և եթէ համարձակեցիմ
վստահութեամբ. կամ հա-
մարիցիմ յանդգնել ի վե-
րայ ոմանց՝ որ կարծեն զմեզ
մինջ՝ եթէ ըստ մարմնոյ
գնայցեմք ։

3 Զի թէպէտ և մարմ-
նով գնամք՝ այլ ոչ եթէ
ըստ մարմնոյ զինուորիմք ։

4 Զի զէն զինուորու-
թեան մերոյ ոչ է մարմնա-
ւոր, այլ զօրաւոր յԱստու-
ծոյ, առ ի քակելոյ զա-

1 Բայց հենց ես պօղոս
աղաչում ձեզ՝ Քրիստոսի
հեզութենովն և հանդարտու-
թենովն՝ որ ես ձեր դիմացն
ցած եմ ձեր միջումն՝ բայց
հեռուանցից համարձակ եմ
դէպի ձեզ ։

2 Աղաչում եմ որ չըլինի՝
թէ մօտիցն էլ վստահութե-
նով համարձակ լինիմ. կամ
թէպէտ համարվիմ, որ յան-
դուգն լինիմ մին քանիսին
դէմ, որ մեզ համար կարծու-
մեն՝ թէ մարմնոյ պէս ենք
վարվում ։

3 Ինչու որ՝ թէ և մարմ-
նով ենք վարվում՝ բայց չէ
թէ մարմնոյն պէս ենք զի-
նուորութիւն անում ։

4 Պատճառն որ՝ մեր զի-
նուորութեան զէնքն մարմնա-
ւոր չէ՝ բայց Աստուծով զո-
րաւոր՝ քանդելուն քանդելոյ՝

մուբա· զկսորհուրդս քահանաց։

5 Եւ զամենայն բարձրու-
թիւն հպարտացեալ ՚ի վերայ
գիտութեանն Աստուծոյ · և
գերեմք զամենայն միտս ՚ի
հնազանդութիւն Քրիստո-
սի ։

6 Եւ ՚ի պատրաստի ու-
նիմք խնդրել զվրէժ ամենայն
անհնազանդութեան ՝ յոր-
ժամ ձեր ևս հնազանդու-
թիւնդ կատարեսցի ։

7 Ըստ իւրաքանչիւր երե-
սաց դիտեսջի՛ք , եթէ ոք
վստահ յանձն իցէ Քրիս-
տոսի լինել, զայս խորհեսցի
դարձեալ ՚ի միտս իւր · թէ
որպէս նայն Քրիստոսի է՝
նոյնպէս և մեք ։

8 Զի թէ առաւել ևս
պարծեցայց վասն իշխանու-
թեանս մերոյ՝ զոր ետ մեզ
Տէր ՚ի շինել՝ և ոչ ՚ի կո-
կել զձեզ, ոչ ինչ ամաչե-
ցից ։

9 Զի մի թուեցայց իբ-
րև ահ ինչ արկանել ձեզ
թղթովքս ։

10 Ասիցե՞ք թուղթքս ծա-
նունք են և սաստիկք · բայց
տեսիլ մարմնոյ տկար՝ և
բանն արհամարհեալ ։

խորհուրդներըն են քան-
դում ։

5 Եւ ամէն բարձրութիւ-
նըն՝ որ գոռոզանումէ Աս-
տուծոյ գիտութեան դէմ, և
ամէն միտքըն գերի ենք ա-
նում, որ հնազանդ լինի
Քրիստոսին ։

6 Եւ պատրաստ կացած
ենք վրէժխնդրութիւն անե-
լոյ ամէն անհնազանդութեան
համար՝ ձեր հնազանդութիւն
էլ կատարեալ կըլլնի ։

7 Ամէն մէկի երեսին նա-
յեցէք · թէ որ մինն իրան
անձին վերայ վստահ է՝ որ
նա Քրիստոսին է՝ թող ի-
րան մտքուռն էս էլ մտածէ՝
թէ ինչպէս որ նա Քրիս-
տոսին է՝ էնպէս էլ մենք ։

8 Ինչու որ՝ եթէ էլ աւե-
լի պարծենալու լինիմ մեր
իշխանութեան համար՝ որ
Տէրն տուաւ մեզ , ձեզ շի-
նելոյ և ոչ թէ քանդելոյ
համար՝ իսկի չեմ ամաչիլ ։

9 Որ չերևիմ էբը թէ
վախ քցել ձեզ վերայ էս
թղթերովս ։

10 Լինի՞ որ ասէք · Թըղ-
թերս ծանր են և սաստիկ ·
բայց մարմնոյ կերպարանքն՝
տկար և խօսքն էլ ոչ ինչ
համարված ։

11 Զայս խորհեսցի այնպիսին, զի որպիսիք եմք բանիւք թղթոցդ ՚ի հեռուստ, նոյնպիսիք և ՚ի մօտ արդեամբք։

12 Քանզի ոչ իշխեմք կշռել և հաւասարել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցանեն. այլ անձամբ յանձինս՝ զանձինս չափեն, և ՚ի կշռել անձամբ յանձինս՝ ոչ առնուն ՚ի միտ։

13 Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պարծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին, զոր բաժանեաց մեզ Աստուած չափով՝ հասանել մինչև առ ձեզ։

14 Իբր ոչ եթէ հասու ինչ լիցեմք ՚ի ձեզ, և ձգտեսցուցանիցեմք զանձինս. քանզի մինչև առ ձեզ հասաք աւետարանաւն Քրիստոսի։

15 Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար վաստակօք, բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոյ ձերոյ՝ այդրէն ՚ի ձեզ մեծանալոյ՝ ըստ կանոնիս մերոյ յառաւելութիւն։

11 Ընդէրէն թէ էս միտք անէ՝ թէ մենք ինչպէս որ հեռուանց ենք էդ թղթերի խօսքերումն՝ էնպէս էլ մօտանց (ենք) գործքով։

12 Պատճառն որ՝ մենք չենք համարձակվում մեր անձըն կշռել և հաւասարել մի քանիսին հետ՝ որ իրանց անձներըն գովելով ձեր առաջիդ են դնում. բայց նորանք ինք իրանցով իրանց անձնեըըն չափուումն և էնպէս իրանք իրանց կշռելով՝ բան չեն հասկանում։

13 Բայց մենք ոչ թէ չափից դուրս պարծենումենք. այլ էն կանոնի չափովն՝ որ նորանով Աստուած բաժանեց մեզ՝ հասնել մինչև ձեզ մօտ։

14 Ոչ թէ՝ իբր թէ ձեզ մօտ հասած չըլինէինք և մեր անձերըս երկայնացնէինք. ինչու որ՝ մինչև ձեզ մօտ հասինք Քրիստոսի աւետարանովն։

15 Եւ չափից դուրս չենք պարծենում՝ օտար աշխատանքովն. բայց յոյս ունինք՝ որ ձեր հաւատքի մեծանալով ժամանակուն մինել մեծանանք ձեզանումն աւելումեծնով՝ մեր կանոնիս պէս։

16 ՚ի վեր եւս քան զչեզ աւետարանել՝ ոչ օտար կա- նոնաւ ՚ի պատրաստականս ինչ պարծել ։

17 Զի որ պարծին՝ ՚ի Տէր պարծեսցի ։

18 Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տեառն ընծայեցուցանէ ։

16 Որ ձեզանից էն կողմն էլ աւետարանըն քարոզենք և չէ թէ օտար կանոնով պատրաստվածների վերայ պարծենալ ։

17 Ինչու որ՝ ում որ պար- ծենումն՝ Տիրոջն պարծենայ ։

18 Պատճառն որ՝ ոչ թէ նա՝ որ իրան անձըն գովելով առաջին է դնում՝ նա է ընտրած, այլ նա՝ որ Տէրն նորան գովելով առաջին է դնում ։

ԳԼ· ԺԱ ։

1 Լա՛ւ էր եթէ ներ- էիք փոքր մի և իմում անզգա- մութեանս. այլև անսայէք իսկ ։

2 Նախանձեցուցանեմ զձեզ ՚ի նախանձն Աստուծոյ. զի խոսեցայ զձեզ առն մի- ում, իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի ։

3 Եայց երկնչիմ գուցէ որպէս օձն խաբեաց զեւայ խորամանկութեամբ իւրով՝ ապականեսցին միտք ձեր ՚ի միամտութենէ՝ որ ՚ի Քրիստոս ։

4 Զի եթէ որ գալոյն

1 Լա՛ւ կըլինէր՝ թէ որ միտքիչ իմ յիմարութեանս էլ ներ- էիք. և (ինձ) էլ համբերեցէք ։

2 Ձեզ համար նախանձա- ւոր իմ Աստուծոյ նախան- ձոյն. ինչու որ՝ ձեզ մին մարդոյ հետ նշանեցի՝ որ ինչպէս մին սուրբ կոյս Քրի- ստոսի կանգնացնեմ ։

3 Եայց վախենումեմ՝ որ չըլինի թէ ինչպէս օձն ի- րան խորամանկութեունըն խա- բեց եւային՝ էնպէս էլ ձեր միտքն ապականվի էն միամ- տութենիցն՝ որ Քրիստոսումն է ։

4 Ինչու որ՝ թէ որ մին

իցէ՝ այլ Քրիստոս քարոզի-
ցէ՝ զոր մեքն ոչ քարոզե-
ցաք, կամ ոգի օտար առ-
նուցուք՝ զոր ոչ առէք, կամ
աւետարան օտար՝ զոր ոչ ըն-
կալարուք, բարւոք անսայիք
նոցա ։

5 Բայց ես ոչսպէս համա-
րիմ, թէ ոչ ինչ իւիք պա-
կաս իցեմ քան զլաւ առա-
քեալսն ։

6 Թէպէտ և տգէտ եմ ի-
ցեմ բանիւ, այլ ոչ եղէ
գիտութեամբ . սակայն յա-
մենայնի յայտնեցաք զանձինս
ամենեսին առ ձեզ ։

7 Եւ եղէ զնա ինչ զոր-
ծեցի՝ զի զանձն խոնարհե-
ցուցի . և այն՝ զի դուք
բարձրասջիք , զի ձրի զաւե-
տարանն Աստուծոյ աւետա-
րանեցի ձեզ ։

8 Զայլ եկեղեցիս կողոպ-
տեցի առեալ թոշակ ՚ի ձեր
սպասաւորութիւն ։

9 Եւ յորժամ ներկի առ
ձեզ, թէպէտ և պակասեայ
ինչ, ոչ զոք ՚ի ձէնջ ձան-
ձրացուցի , զի զպակասու-
թիւնն իմ լցին եղբարքն ե-
կեալք ՚ի մակեդոնացւոց .
և յամենայնի առանց ծան-
րանալոյ ձեզ զանձն իմ

գայ և ուրիշ Քրիստոս քա-
րոզէ, որ մենք չքարոզեցինք,
կամ ուրիշ հոգի առնէք՝ որ
չառիք՝ կամ ուրիշ աւետա-
րան , որ չընդունեցիք՝ ապա
լաւ կըհամբերեիք նորանոյ ։

5 Բայց ես էսպէս եմ հա-
մարում՝ թէ իսկի մին բա-
նով էլ պակաս չեմ քան
թէ էն լաւ առաքեալներն ։

6 Թէև տգէտ լինիմ խօս-
քով՝ բայց չէ թէ գիտու-
թենով . միայն թէ ամէն
բանի մէջ իսպառ անձներըս
յայտնեցինք ձեզ ։

7 Կամ թէ մի՞ն մեղք գոր-
ծեցի՝ որ իմ անձըս խոնար-
հայրի՝ և էն նրահամար՝ որ
դուք բարձրանաք. ինչու որ՝
Աստուծոյ աւետարանըն ձրի
(Ֆռ-ջոյ) աւետարանեցի ձեզ։

8 Ուրիշ եկեղեցիներըն
թալանեցի՝ և (նորանցից)
վարձք առի՝ որ ձեզ ծառա-
յեմ ։

9 Եւ երբոր ձեզ մօտ ե-
կի՝ թէ և մի՞ն բանի պակա-
սութիւն քաշեցի՝ ձեզանից
մըրնի՞ն ծանրութիւն չըտուի.
ինչու որ՝ իմ պակասութիւ-
նըս էն մակեդոնացիներից
եկած եղբարքն լցրին . և ա-
մէն բանի մէջ առանց ձեզ

պահեցէք, և պահեցէք։

10 Քանզի դուք յիս Ճշմարտութիւնն Քրիստոսի, զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն ի կողմանս աքայեցւոց։

11 Ընդէ՞ր. իբրու թէ ոչ սիրիցեմ զձեզ. զայն Աստուած գիտէ։

12 Զոր առնեմ՝ և արարից. զի հատից զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառս կամիցին. զի որով պարծիցինն, և նոքա իբրև զձեզ գտանիցին։

13 Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք նենգաւորք, կերպարանին ի կերպարանս առաքելոց Քրիստոսի։

14 Եւ ոչ էն զարմանք; քանզի և ինքն սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ։

15 Եւ ոչ ինչ է մեծ՝ թէ և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև պաշտօնեայք արդարութեան. որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց։

16 Դարձեալ ասեմ. մի ոք համարիցի զիս անզգամ. ծանրութիւն տալոյ, իմ անձըս պահեցի և էլ կըպահեմ։

10 Պատճառն որ՝ Քրիստոսի Ճշմարտութիւնն ինձանում կայ. որ էս պարծանքս աքայեցոց կողմերումն չեն խափանվիլ ինձանից։

11 Ինչո՞ւ համար. իբր թէ ձեզ չե՞մ սիրում. էն Աստուածն է գիտուում։

12 Նէ՛ն որ անուամբ՝ էլ կանեմ՝ որ պատճառըն կտրեմ նորանց՝ որ պատճառ են ինդրուում, որ ինչով որ պարծենումն՝ նորանք էլ մեզ նման գտնըվին։

13 Ինչու որ՝ էնպէսի սուտ առաքեալներն, խաբեբայ մշակներ, Քրիստոսի առաքեալների կերպարանքումն կերպարանվուումն։

14 Եւ զարմանալի բան էլ չէ. ինչու որ՝ հենց ինքն սատանան էլ լուսոյ հրեշտակի կերպարանքըն իրան վերայ է առնում։

15 Եւ իսկի մեծ բան չէ՝ որ նորա պաշտօնեաներն էլ արդարութեան պաշտօնեա ներին նման կերպարանվին. որ նորանց վերջն էլ իրանց գործքերին պէս կըլինի։

16 Մինել ասումում. չըլինի որ մինն ինձ յիմար հա-

ապա թէ ոչ՝ գնանք իբրև զանզգամ ընկալարուք ղիս, զի և ես փոքր մի ինչ պարծեցայց։

17 Եւ զոր խօսիմ ոչ ըստ Տեառն խօսիմ, այլ իբրև անզգամութեամբ՝ ըստ կարգի պդղոյ պարծանայ։

18 Եւ քանզի բազումք պարծին ըստ մարմնոյ՝ և ես պարծեցայց։

19 Մտադիւր իմն անսայիք անմտայն ձերովք իմաստութեամբ։

20 Քանզի անսայք, եթէ ոք խաբէ, կձեզ եթէ ոք ծառայեցուցանէ, եթէ ոք ուտէ կձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ, եթէ ոք զձեզ յանդիման հարկանէ։

21 Ըստ անարգանացդ ասեմ, իբրև թէ մեք տկարացաք արդեօք. յոր ինչ ոք համարձակիցի, անզգամութեամբ ասեմ, համարձակիմ և ես։

22 Երբայեցիք իցեն՝ և ես. իսրայէլացիք իցեն՝ և ես. զաւակ աբրահամու իցեն՝ և ես։

23 Պաշտօնեայք Քրիստո-

մարէ. ապա թէ չէ՝ գոնեայ յիմարի պէս ընդունեցէք ինձ, որ ես էլ մինչեւ պարծենամ։

17 Եւ ես ինչ որ խօսում ոչ թէ Տէրն մտիկ տալով եմ խօսում, այլ ինչպէս յիմարութեամբ՝ ինչպէս որ պարծանքի կարգն բերում է։

18 Որովհետև շատերն մարմնոյ կողմանէն պարծենում՝ ես էլ կպարծենամ։

19 Ցօժար մտքով համբերում անմիտներին՝ ձեր իմաստութեամբ։

20 Պատճառն որ՝ համբերում եք որ մինն խաբէ ձեզ, թէ որ մինն ծառայացնէ, թէ որ մինն ձեր բանն ուտէ, թէ որ մինն բան առնէ, թէ որ մինն գոռոզանայ՝ թէ որ մինն ձեր երեսին զարկէ։

21 Ինձ անարգանքիդ համար եմ ասում՝ իբրև թէ մենք տկարացանք. ինչ բանով որ մինն համարձակվի (յիմարութեամբ ասում եմ) ես էլ կհամարձակվիմ։

22 Երբայեցի՞ են՝ ես էլ. իսրայէլացի՞ են՝ ես էլ. աբրահամի զաւակ են՝ ես էլ։

23 Քրիստոսի պաշտօնա-

սի՞ իցեն, յանդգնագոյնս ա-
սացից՝ լմէ առաւել և ես,
եթէ վաստակօք՝ առաւել,
եթէ պանիւք՝ և առաւել ·
եթէ բանտիւ՝ աւելի քան
զնոսա, եթէ մահուամբք՝
բազում անգամ։

24 Ի հրէից հնգից՝ քա-
ռասուն մինչ պակաս արբի։

25 Երիցս ձաղկեցայ · մի
անգամ քարկոծ եղէ· երիցս
նաւակոծ եղէ· գոհ և գի-
շեր յանդունդս տառապե-
ցայ։

26 Ի ճանապարհս բազում
անգամ, վիշտս Ի գետոց,
վիշտս յաւազակաց, վիշտս
յազգէ, վիշտս Ի հեթանո-
սաց, վիշտս Ի քաղաքի,
վիշտս յանապատի, վիշտս
Ի ծովու, վիշտս Ի սուտ եղ-
բարց։

27 Ի ջանս և Ի վաստակս·
Ի աջնութիւնս բազում ան-
գամ, Ի քաղց և Ի ծարաւ·
Ի պահս բազում անգամ·
Ի ցուրտ և Ի մերկութեան։

28 Թողլ զայլ նեղութիւն·
և զի հանապազ խուժանն

նե՞ր են՝ համարձակութեամբ
կասեմ՝ լմէ էլ աւելի ես էլ,
լմէ աշխատանքով՝ աւելի, լմէ
ծեծով՝ էլ աւելի, լմէ բան-
տով՝ նորանցից աւելի, լմէ
մահով՝ շատ անգամ։

24 Հրէականերից հինգ ան-
գամ՝ քառասունից մինն պա-
կաս ծեծ կերայ։

25 Երեք անգամ ձաղկով
ծեծվեցայ՝ մին անգամ քար-
կոծվեցայ · երեկ և գիշեր
անդընդումն նեղութիւն քա-
շեցի։

26 Շատ անգամ ճանա-
պարհներումն, գետերից նե-
ղութիւններ, աւազակներից
նեղութիւններ, ազգից նե-
ղութիւններ, հեթանոսնե-
րից նեղութիւններ, քաղա-
քի մէջ նեղութիւններ, ա-
նապատի (էջ ՀՀ) մէջ նեղու-
թիւններ, ծովի մէջ նեղու-
թիւններ՝ սուտ եղբայրնե-
րից նեղութիւններ։

27 Ջանքի մէջ և աշխա-
տանքի մէջ՝ շատ անգամ
արթնութիւնների մէջ, սո-
վի և ծարաւի մէջ, շատ ան-
գամ պասի մէջ, ցրտի և
մերկութեան մէջ։

28 Թողլ ուրիշ նեղութիւն-
ները էլ՝ և որ ամէն ժա-

'ի վերայ իմ կուտէը՝ և հոգք ամենայն եկեղեցեացն։

29 Ո՛ր հիւանդանայ՝ և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայ - թագղի՝ և ոչ ես տապա- նամ։

30 Եթէ պարծել ինչ պիտ իցէ, զտկարութեանն պարծեցայց։

31 Աստուած և հայր Տ՛ն մերոյ Յիսուսի Քրիստո- սի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստեմ։

32 'Ի դամասկոս աղգա - պետն արետայ արքայի պահէր զքաղաքն դամասկացւոց ու- նել զիս։

33 Եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ 'ի ձե- ռայ նորա։

մանակ շատ զբաղմունք էր ինձ վերայ կիտում և ամէն եկեղեցիների հոգն։

29 Ո՞վ կըհիւանդանայ և ես չե՞մ հիւանդանալ. և ո՞վ կըգայթակղվի՝ և ես չեմ բորբոքվիլ։

30 Թէ որ պարծենալ պէտք լինի ինձ՝ իմ տկարութենով կըպարծենամ։

31 Աստուած և Տէր Յիսուսի հայրն՝ որ յաւի- տեան օրհնել է՝ գիտէ որ սուտ չեմ ասում։

32 Դամասկոսումն արիտա թագաւորի ազգապետն դա- մասկացոց քաղաքին պահ էր դրել որ ինձ բռնէ։

33 Եւ պատուհանից քճո- ցով կախվեցայ պարսպից և փախայ նորա ձեռքից։

ԳԼ. ԺՌ։

1 Պ՛ըտ՝ պարծել ինչ պարտ իցէ. այլ օգնէ ինչ ոչ, բայց եկից 'ի տեսիլս և 'ի յայտ- նութիւնս Տեառն։

2 Գիտեմ այր մի 'ի Քրիստոս յառաջ քան զյո- րեքտասան ամ, եթէ մարմ- նով՝ ոչ գիտեմ, և եթէ ա-

1 Պէտ պարծենալ որ պէտք լինի՝ էլ օգուտ չի բերում ինձ, բայց կըգամ Տէրի տեսիլքներին և յայտ- նութիւններին մէջ։

2 Մի մարդ գիտեմ Քրիստոսումն տասն չորս տա- րուց առաջ, եթէ մարմնով էր՝ չեմ գիտում և եթէ ա-

ռանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ· յափշտակեալ զայնպիսին մինչև յերրորդ երկինս։

3 Եւ գիտեմ զայնպիսի այր· եթէ մարմնով՝ և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ. Աստուած գիտէ։

4 Զի յափշտակեցաւ ի դրախտն· և լուաւ բանս անհառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել։

5 Վասն այնպիսւոյն պարծեցայց· այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց, բայց եթէ ի տկարութիւնս։

6 Զի եթէ և կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի զճշմարտն ասեմ, այլ անխայտեմ գուցէ ոք համարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր տեսանիցէ յիս, կամ լսիցէ յինէն։

7 Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան՝ կռփել զիս, զի մի հպարտացայց։

8 Եւ վասն այնորիկ երիցս

ռանց մարմնոյ էր՝ չեմ գիտում՝ Աստուած գիտէ· նա յափշտակվեցաւ մինչև երրորդ երկինքն։

3 Եւ գիտեմ այդպիսի մարդը՝ եթէ մարմնով և եթէ առանց մարմնոյ էր՝ չեմ գիտում· Աստուած գիտէ։

4 Որ նա յափշտակվեցաւ դրախտի մէջ և անասելի բաներ լսեց՝ որ մարդոյն պէտք չէ նորանց խօսել։

5 Նրանցից համար պարծենամ՝ բայց իմ անձիս համար չըպարծենամ. բայց միայն իմ տկարութեանս համար։

6 Ինչու որ՝ թէ էլ կամենամ պարծենալ՝ յիմար չեմ լինիլ, պատճառն որ՝ ուղղութիւն եմ ասում. բայց խնայում եմ՝ որ չըլինի թէ մինն ինձ համար աւելի բան համարէ, քանթէ էն՝ որ ինձանից տեսնէ կամ ինձանից լսէ։

7 Եւ որ փառաւոր յայտնութիւններից չըհպարտանամ՝ մարմնոյ խայթ տըլվաւ ինձ՝ սատան հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծէ, որ չըգոռոզանամ։

8 Եւ նրանից համար երեք ան-

անդամ աղաչեցի զՏէր՝ զի
՝ի բաց արասցէ յինէն ։

9 Եւ ասէ ցիս . շնո՛ն են
քեզ շնորհք իմ, զի զօրու-
թիւն իմ ՝ի տկարութեան
կատարի , եւ արդ՝ լաւ եւս
լիցի ինձ պարծել ՝ի տկա-
րութիւնս , զի բնակեսցէ
յիս զօրութիւն Քրիստոսի ։

10 Վասն որոյ հաճեալ եմ
ընդ տկարութիւնս , ընդ
թշնամանս, ընդ վիշտս, ընդ
հալածանս , եւ ընդ նեղու-
թիւնս վասն Քրիստոսի, զի
յորժամ տկարանամ, յայն-
ժամ զօրանամ ։

11 Էղէ անզգամ, քանզի
դուք ստիպեցիք զիս . զի ինձ
պարտ էր ՝ի ձէնջ վկայու-
թիւն առնուլ՝ թէ ոչ ինչ
պակաս գտայ քան զլաւ ա-
ռաքեալսն . զի թէպէտ եւ ես
ոչ ինչ եմ ։

12 Սակայն նշանք առաքե-
լոյ գործեցան ՝ի ձէզ՝ ամե-
նայն համբերութեամբ, նշա-
նօք եւ սքանչեսիւք՝ եւ զո-
րութեամբք ։

13 Եւ արդ զի՞նչ իցէ. ո-
րո՛վ պակաս գտայք քան
զայլ եկեղեցիս . բայց եթէ
այնու՝ զի ես զձեզ ոչ ձանձ-
դամ աղաչեցի Տէրին, որ էն
հեռացնէ ինձանիկ ։

9 Եւ ինձ ասաց. իմ շնորհքս
բաւական է քեզ համար, ինչու
որ իմ զօրութիւնս տկարութ մէջն
է կատարվում. եւ նրահամար
աւելի լաւ կըլինի ինձ տկարու-
թիւններով պարծենալ՝ որ Քրի
զօրութիւն բնակվի ինձանում ։

10 Նրահամար ուրախ եմ
տկարութիւններում, թշնա-
մանքներում , վիշտերում
հալածանքներում եւ նեղու-
թիւններում Քրիստոսի հա-
մար . ինչու որ՝ երբոր տկա-
րանում՝ էն ժամանակն զո-
րանում եմ ։

11 Ցիմար էլայ՝ ինչու որ
դուք բռնադատեցիք (ինձ).
պատճառն որ՝ պէտք էր ինձ
վկայութիւն առնել ձեզանից՝
թէ իսկի մին բանով պակաս
չէլայ քանթէ էն լաւ առա-
քեալներն . որ թէ եւ ես ոչ
ինչ եմ ։

12 Հայտառաքելականնշաններն
ձեր միջում գործվեցան՝ ա-
մէն համբերութեամբ, նշան-
ներով եւ հրաշքներով եւ զո-
րութիւններով ։

13 Ասլա ի՞նչ է՝ որ նորա-
նով պակաս գտաք քանթէ
ուրիշ եկեղեցիներն . եթէ
ոչ նրանով՝ որ ես ծանրու-

բացուցի. շնորհեցիք ինձ զմեսաղ զայդ։

14 Ա Հաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ. և ձեզ բեռն ինչ ոչ եղէց, զի ոչ խնդրեմ ինչ զձերս՝ այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարցն գանձել՝ այլ հարքն որդւոցն։

15 Բայց ես մեծագիւտութեամբ ծախեցից, և ծախեցայց վասն անձանց ձերոց. զի թէպէտ և յառաւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ։

16 Ա Այլ դիցեթ ես ոչ ինչ ծանրացայ ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ։

17 Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞ ի ձէնջ։

18 Ա Զտիտոս գոհացոյս՝ և առաքեցի ընդ նմա զեղբայրն, միթէ ագահեաց ինչ զձեր տիտոս. ոչ նոյնի ոգւով գնացաք. ոչ նոյնի շաւղօք շրջեցաք։

19 Դարձեալ համարիցիք՝ եթէ յողոք անկեալ ինչ

Թիւն չըտուի ձեզ. բաշխեցէք ինձ զայդ ինձ եգ ընծաըդ։

14 Ա Ահա ես երեք անգամն ե՝ որ պատրաստեալ եմ ձեզ մօտ գալոյ՝ և ձեզ բեռն չեմ լինիլ. պատճառն որ՝ ձեր բանը չեմ ուզում՝ բայց ձեզ. ինչու որ՝ ոչ Թէ որդիքն հարանց համար պէտք ե գանձ (խազնայ) հաւաքեն. այլ հարքն որդոց համար։

15 Բայց ես յօժար սրտով ձեր անձնեերիդ համար ծախք կանեմ և ծախք կըլինիմ. Թէ և աւելի սիրելով ձեզ՝ ես քիչ սիրվիմ։

16 Բայց կըլինի՝ որ ես խակի մին բանով ծանրութիւն չէլայ ձեզ. միայն Թէ՝ ես որ խորագէտ էի՝ խելքով բռնեցի ձեզ։

17 Միթէ նորանց ձեռովն՝ որ ձեզ մօտ ուղարկեցի՝ մին բան քաշեցի ձեզանից։

18 Ա Զտիտոսին և նորա հետ էն եղբօրըն էլ ուղարկեցի. միթէ տիտոս ձեզանից մին բան քաշեց. չէ՞ որ մենք հենց մին հոգով վարվեցանք. չէ՞ որ հենց մին ճանապարհով գնացինք։

19 Մին էլ կարծումէք՝ Թէ անուշ խօսքով ձեզ ա-

ձեզ աղերսիցի՛մք, առաջի Աստուծոյ ՝ի Քրիստոս Յիսուս, զի ամենայն ինչ՝ սիրելիք, վասն ձերոյ շինուածեան է։

20 ԱՅԼ երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ որպէս ես կամիմ գտանիցեմ զձեզ. և ես գտանիցիմ ձեզ՝ որպէս և դուք ոչ կամիցիք. գուցէ դարձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովութիւնք։

21 Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. և սուգ առնուցում վասն բազմաց ՝յառաջագոյն մեղուցելոց՝ և ոչ ապաշխարելոց՝ ՝ի վերայ պղծութեանն և պոռնկութեանն և գիջութեան՝ զոր գործեցին։

զաչս մարդոյ։ Աստուծոյ առաջին Քրիստոսումն խօսումնք՝ որ ամէն բան՝ սիրելիներ՝ ձեր շինուածեան համար է։

20 Բայց վախումիս, որ չըլլինի թէ իմ գալոյ ժամանակն ձեզ էնպէս չըգտնեմ՝ ինչպէս որ կամիմ. և ես գտնըվիմ ձեզ համար՝ ինչպէս որ դուք էլ չէք կամիմ. որ միգուցէ չըլլինի կռիւ, նախանձ, բարկութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, խօսք խառնելն, գոռոզութիւններ, ամբարտաւանութիւններ, խըռովութիւններ։

21 Որ չըլլինի թէ միգուցէ իմ գալոյ ժամանակն իմ Աստուածն ինձ ցածացնէ ձեզ մօտ. և սուգ մանեմ շատերին համար՝ որ առաջուց մեղք գործեցին և չապաշխարեցին են պղծութեան և պոռնկութեան և գիճութեան համար՝ որ գործեցին։

ԳԼ. ԺԴ։

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ՝ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։

1 Ահա երեք անգամն է՝ որ ձեզ մօտ եմ գալիս, որ երկու և երեք վկայի բերանէն ամէն բան հաստատվի։

2 Յառաջ ասացի և դարձեալ կանխաւ ասեմ յանդիման երկիցս անգամ, և այժմ ՚ի բացուստ գրեմ յառաջագոյն յանցուցեալոցն՝ և այլոցն ամենեցուն. զի եթէ եկիցեմ դարձեալ՝ ոչ խնայեցից։

3 Եթէ զնիրձ լինդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ ՚խօսի. որ հզօրացեալն է ՚ի ձեզ, և ոչ տկարացեալ։

4 Զի թէպէտ և խաչեցաւ ՚ի մերմէ տկարութենէն, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. և մեք թէպէտ և տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ։

5 Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք ՚ի հոգն հաւատոյ. քննեցէք զանձինս, եթէ ոչ գիտէք զանձինս՝ զի Քրիստոս Յիսուս ՚ի ձեզ է. բայց եթէ անպիտան լինիք։

6 Այլ ակնածիմ թէ գիտիցէք. զի մեք ոչ եմք անպիտանք։

7 Այլ խնդրեմք յԱստուծոյ՝ զի մի՛ ինչ արասցէ ձեզ չար, ոչ զի մեք ընտիրք

2 Առաջուց ասացի և մինչ էլ առաջ ասումեմ, իբր մօտ լինող երկրորդ անգամին՝ և հիմիկ հեռուանոց գրումեմ էն առաջուց մեղք գործածներին և ամէն ուրիշներին՝ որ եթէ միտէլ գամ՝ չեմ խնայիլ։

3 Մի եթէ ուզումէք փորձ առնել Քրիստոսի, որ ինձանով ձեզ հետ խօսումէ՝ որ ձեր միջումն զօրաւոր է և տկար չէ։

4 Ինչու որ՝ թէ և խաչվեցաւ մեր տկարութենիցն, բայց կենդանի է Աստուծոյ զօրութենովն. և մենք թէ և տկարանանք նորա համար՝ բայց կենդանի կըլինինք նորա հետ Աստուծոյ զօրութենովն։

5 Փորձեցէք ձեր անձերըդ՝ եթէ էն հաւատքի միջն կանգնած էք. քննեցէք անձերըդ՝ կամ թէ չէք գիտումէ անձներըդ՝ որ Յիսուս Քրիստոս ձեզանումէ. եթէ ոչ անպիտան լինիք։

6 Բայց յոյս ունիմ որ գիտենաք, թէ մենք անպիտան չենք։

7 Բայց խնդրումէմ Աստուածմանից՝ որ չար բան չանէք. ոչ թէ որ մենք ըն-

երևեսցուք, այլ զի գուք զբարիս գործիցէք՝ և մեք անպիտանք լիցեմք։

8 Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ վերակացու եմք ճշմարտութեանն։

9 Խրախ եմք՝ յորժամ մեք տկարանայցեմք՝ և դուք զօրաւոր իցէք, զդայն խակ և աղօթս առնեմք զձեր հաստատութիւնդ։

10 Վասն այնորիկ զայս ՚ի հեռուստ գրեմ. զի մի յորժամ եկիցե՝ սաստկութեամբ վարեցայց՝ ըստ իշխանութեան, զոր եառ ինձ Տէր ՚ի շինել՝ և ոչ ՚ի քակել։

11 Ա՛յսուհետև՝ եղբարք, ուրջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ։

12 Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն։

13 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն

տիր երևինք, քայց որ գուք բարին գործէք, և մեզ անպիտան գտնըվինք։

8 Ինչու որ՝ չենք կրօղ հակառակ լինիլ ճշմարտութեան. քայց ճշմարտութեան վերակացու ենք։

9 Ուրախ ենք՝ երբոր մենք տկարանուամենք և դուք զօրանաք. հենց դրահամար աղօթք էլ անուամենք, որ դուք հաստատ լինիք։

10 Նրահամար ես հեռուանց եմ գրում՝ որ չըլինի թէ իմ գալուց ժամանակն սաստկութենով վարվիմ՝ իշխանուն չափովն, որ Տէրն նորան տուաւ ինձ շինելոյ և չէ թէ քանդելոյ համար։

11 Այլ այսուհետև՝ եղբարք, ուրջ էլէք, հաստատ կացէք, միխիթարվեցէք, միաբան էլէք, և խաղաղութենով վարվեցէք. և խաղաղութեան և սիրոյ Աստուածն ձեզ հետ լինի։

12 Իրար ողջոյն տուէք որ համբուրվին. ողջոյն են տալիս ձեզ ամէն սըրբերն։

13 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն և Աստուծոյ սէրն և որ հոգոյ հաղորդու-

Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ա- *Թիւնն (լինի) ձեզ ամէնից*
մէնսիւն, ամէն։ *հետ, ամէն։*

Կորնթացոց վերջոյ երկրորդ Եռաշնեն փիլիպոս չաշտիցի
Գըրվեցաւ՝ ուխտուն ի պատիւ Յեսուին։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ։

1 Պօղոս առաքեալ ոչ ի մարդկանէ և ոչ ի միջոցէ մարդոյ, այլ ի Յիսուսէ Քրիստոսէ և Աստուծոյ Հօր, որ յարոյց զնա ի մեռելոց,

2 Եւ որ ընդ իս են եղբարք ամենեքեան, եկեղեցեացդ գաղատացւոց ։

3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ։

4 Որ ետ զանձն իւր վասն մեղացն մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ ասոյ չարէ ըստ կամացն Աստուծոյ և Հօր մերոյ ։

5 Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

6 Զարմանամ, զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ՝ որ կոչեացն զձեզ

1 Պօղոս առաքեալ ոչ (ի մէ) մարդկանցից և ոչ (ի մէ) մարդոյ ձեռօվ՝ այլ Յիսուսի Քրիստոսի ձեռօվն՝ և Աստուծոյ Հօր, որ մեռելներից յարոյց նորան,

2 Եւ ամէն եղբարքն՝ որ ինձ հետ են, գաղատացւոց եկեղեցիներիդ ։

3 Շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած Հօրից, և մեր Տէր Յիսուս Քրիստոսից ։

4 Որ իրան անձն մեր մեղայ համար տուաւ՝ որ մեզ էս չար աշխարհքից փրկէ Աստուծոյ և մեր Հօր կամքին պէս ։

5 Որ նորան (լինի) փառք յաւիտեանս . ամէն ։

6 Զարմանում եմ՝ որ էդպէս շուտով փոփոխվում եք նորանից՝ որ ձեզ կանչեց

՝ի շնորհն Քրիստոսի յայլ աւետարան ։

7 Որ ոչ գոյ այլ, բայց եթէ լինին ոմանք՝ որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի ։

8 Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաք ձեզ, նզովեալ լիցի ։

9 Որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դարձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիք, նզովեալ լիցի ։

10 Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ · կամ խնդրիցեմ մարդկան հաճոյ լինել · եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի ։

11 Ցուցանեմ ձեզ՝ եղբարք, զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն, զի ոչ է ըստ մարդոյ ։

12 Քանզի և ոչ ես ՚ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ, այլ ՚ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։

Քրիստոսի շնորհքի մէջ ։ դէպ ի ուրիշ աւետարան ։

7 Որ էլ ուրիշ (աւետարան) չըկայ · միայն թէ որ մին քանիսն կան որ ձեզ խռովացնում են և կամենում են Քրիստոսի աւետարանըն փոխել ։

8 Բայց թէ որ մենք կամ երկնքից (եկած) հրեշտակ աւետարանէ ձեզ աւելի քան թէ էն որ մենք աւետարանեցինք ձեզ՝ (նա) նզոված լինի ։

9 Ինչպէս որ առաջ ասացինք՝ մինէլ հիմիկ ասում ենք · թէ որ մինն աւելի աւետարանէ քան էն, որ դուք առիք՝ նզոված լինի ։

10 Ապա մարդկանց հաճոյ լինիմ, թէ Աստուծոյն · կամ ուզում որ մարդկանց հաճոյ լինիմ, թէ որ դեռ մարդկանց հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ չէի ։

11 Ցոյց եմ տալիս ձեզ՝ եղբարք, էն աւետարանըն, որ ինձանից աւետարանվեցաւ՝ որ նա մարդոյ քան չէ։

12 Պատճառն որ՝ ես էլ մարդուց չառի (նորան) և իսկի մէնակից չըսովորեցի՝ բայց Յիսուսի Քրիստոսի յայտնութենից ։

13 Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ երբեմն ի հրէաստեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ, և աւար հարկանէի զնա։

14 Եւ յառաջադէմ էի ի հրէաստեանն՝ քան զբազումս հասակակիցս իմ, որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն։

15 Այլ յորժամ կամեցաւ Աստուած՝ որ ընտրեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ի ձեռն շնորհացն իւրոյ

16 Յայտնել զորդին իւր ինձ. զի աւետարանեցից զնա ի հեթանոսս. անդէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի մարմնոյ և արեան։

17 Եւ ոչ եկի յերուսաղէմ, առ որ յառաջադոյն քան զիս առաքեալքն էին. այլ չոգայ յարաբիա, և դար. ձեալ դարձայ ի դամասկոս։

18 Ապա յետ երից ամաց եկի յերուսաղէմ տեսանել զպետրոս. և եղէ առ նմա աւուրս հնգետասան։

19 Զայլ ոք յառաքելոց

13 Ինչու որ՝ լսեր էք դուք իմ վարքըս որ միւս ժամանակ հրէաստեան մէջն էի, որ չափից դուրս հալածում էի Աստուծոյ եկեղեցին և թալանում էի նորան։

14 Եւ հրէաստեան մէջ առաջ էի, քան իմ շատ հասակակից ընկերներ, որ իմ ազգիս մէջն էին. առաջ նախանձաւոր էի իմ հայրենական աւանդութիւններին համար։

15 Բայց երբոր Աստուած կամեցաւ՝ (նա՝ որ) իմ մօրս փորիցն ինձ (ջոկեց) և իրան շնորհքովն կանչեց,

16 Որ իրան որդին ինձանով յայտնէ՝ որ նորան հեթանոսների միջումն աւետարանեմ՝ էն ժամանակն շուտով մարմնոյ և արիւնի խօսք իմաց չըտուի։

17 Եւ չըգնացի երուսաղէմ նորանց մօտ, որ ինձանից առաջ առաքեալներ էին. բայց գնացի արաբիա և միւնէլ դարձայ դամասկոս։

18 Ետոց երեք տարուց և. տև գնացի երուսաղէմ, որ պետրոսին տեսնեմ. և տասնուհինգ օր նորա մօտ. էյ։

19 Առաքեալներից ուրիշ

անսի ոչ տեսի, բայց միայն զյակովբոս զեղբայրն Տեառնի

20 Ասէ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ առաջի Աստուծոյ՝ զի ոչ ստեմ։

21 Ապա եկի ի կողմանս ասորւոց և կիլիկեցւոց։

22 Իսկ յանդանօթիս էի երեսօք եկեղեցեացն՝ որ ի Քրիստոս։

23 Բայց զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսն՝ զոր երբեմն խախտէր։

24 Եւ փառաւորէին ինև զԱստուած։

մընին չըտեսի՝ բայց միայն Տէրի եղբայր յակոբին։

20 Բայց էս բանըս, որ ձեզ գրուսիմ՝ ահա Աստուծոյ առաջին՝ որ սուտ չեմ ասում։

21 Հետոյ եկի ասորոց և կիլիկեցոց կողմերն։

22 Իսկ երեսով ճանաչ չէի (Քրիստոսին) էն եկեղեցիներին՝ որ Հրէաստանի էին Քրիստոսումն։

23 Միայն թէ՝ էն լսել էին, թէ նա՝ որ էն ժամանակն մեզ հալածումէր, հիմիկ էն հաւատըրն է աւետարանում, որ առաջ քանդումէր։

24 Եւ ինձանով փառաւորումէին Աստուծոյն։

ԳԼՈՒԽ Բ։

1 Ապա յետ ամաց չորիքասանից միւսանգամ ելի յերուսաղէմ ընդ բառնաբայ, առեալ ընդ իս և զտիտոս։

2 Եւ ելի ըստ յայտնութեանն. և զգացուցի նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի ի հեթանոս, առանձինն այնոցիկ՝ որ կարծեալք էին, գուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ՝ կամ ընթանայցեմ։

1 Յետոյ տասնուչորս տարուց եսև միևնէլ միևնգամ բառնաբասին հետ գնայի երուսաղէմ և տիտոսին էլ ինձ հետ առի։

2 Եւ (ինչ էլած) յայտնութեան պատճառովն գնացի՝ և նորանց իմայրի էն աւետարանըն՝ որ հեթանոսների միջումն քարոզումէի՝ (և) մասնաւորապէս նորանց՝ որ մեծ էին համարված. որ չըլինի թէ՝ զուր տեղն վազած լինիմ կամ վազեմ։

3 Ա՛յլև ոչ միտոս՝ որ ընդ
ա՛ի հեթանոսաց էր, բըռ-
նադատեցաւ թլփատիլ։

4 Ա՛յլ վասն սպրդողաց
սուտ եղբարցն, որք սպրդե-
ցին մտանել դիտել զազա-
տութիւնն մեր՝ զոր ունիմք
ի Քրիստոս Յիսուս, զի
զմեզ ծառայեցուսցեն։

5 Որոց և ոչ առ ժամա-
նակ մի անսայաք հնազան-
դութեան. զի ճշմարտու-
թիւն աւետարանին հաստա-
տեսցի առ ձեզ։

6 Բայց զկարծելոցն եթէ ի-
նչն ինչ, որպիսի որք երբեմն
էին, չիք ինչ ինձ փոյթ.
քանզի Աստուած ակն մարդ-
կան ոչ առնու. զի ինձ կար-
ծեալք այնպիսի ինչ ոչ զգա-
ցուցին։

7 Ա՛յլ ընդորին հակառակն՝
իբրև տեսին թէ հաւատա-
ցեալ է ինձ աւետարանն
անթլփատութեան. որպէս
պետրոսի թլփատութեան։

8 Զի որ յաջողեացն
պետրոսի յառաքելութիւն
թլփատութեանն, յաջողեաց
և ինձ ի հեթանոս։

9 Եւ գիտացեալ
շնորհս զոր ինձ տուեալ է,
յակովբոս և կեփաս և յովհան-
նէս, որ սիւնք երևեցան,
ձեռն տուին ինձ և բարնա-
բայ հաղորդութեան, զի մեք
հեթանոսաց, և նոքա թլփա-
տութեան։

10 Միայն զաղքատացն
յիշեսցուք, զոր և ես ջան-
կալ էի զայս ինչ առնել։

11 Եւ յորժամ եկն կեփաս
ի Անտիոք, դէմ ընդ երես
կացի նմա, զի դատապարտեալ
էր։

12 Զի նախ քան զգալ
զայնոսիկ յակովբոսի, ընդ
հեթանոսաց ուտէր. և յո-
րժամ եկին նոքա, ետ ի
քաշել և ի բաժանել ինքն
զանձն, երկնչելով զթլփա-
տութենէն։

13 Եւ ընդ նմին ագա-
հացան և այլ հրեայքն, մինչ-
և և բարնաբաս տարեալ
եղև նոցա ի կեղծաւորու-
թիւնն։

14 Այլ յորժամ տեսի
զի ոչ ուղղութեամբ գնան
առ ճշմարտութիւն աւետա-
րանին, ասացի կեփասի առ
երեսս ամենեցուն. եթէ դու
հրեայ ընդ հեթանոսաց և
ոչ հրէականաբար կեցեր,
զիա՞րդ հեթանոսս հրեայա-
կանաբար կենալ կամիս։

15 Մեք բնութեամբ հրեայք
և ոչ մեղաւորք ի հեթանոսաց,

16 գիտացեալ զի ոչ
արդարանայ մարդ ի գոր-
ծոց օրինացն, եթէ ոչ ի հա-
ւատոյ Յիսուսի Քրիստոսի,
և մեք ի Քրիստոս Յիսուս
հաւատացաք, զի արդարա-
նասցուք ի հաւատոյ Քրիս-
տոսի և ոչ ի գործոց օրի-
նացն, զի ոչ ամենայն մարմին
արդարանայ ի գործոց օրի-
նացն։

17 Եթէ ապա մեք փոր-
ձեալ գտանիցուք մեղաւոր-
ք ի Քրիստոս, արդեօք
Քրիստոս մեղաց ծառայ է։
Մի եղիցի։

18 Զի եթէ զոր քակտե-
ցի զայն նորոգեմ, զանցա-
ռող զիս ցուցանեմ։

19 Զի ես օրինաւ օրինա-
ցն մեռայ, զի Աստուծոյ
կեցից. ընդ Քրիստոսի խա-
չեցայ։

20 Կեցից ապա ոչ ես,
այլ կենդանի է ի իս Քրիս-
տոս. և զոր ինչ այժմ կեայ
ի մարմնի, ի հաւատս կեայ
որդւոյն Աստուծոյ, որ սի-
րեաց զիս և մատնեաց զան-
ձն իւր վասն իմ։

21 Ոչ անարգեմ զշնոր-
հս Աստուծոյ. զի եթէ ի
պատճառս օրինացն արդա-
րութիւն, ապա Քրիստոս
ընդունայն մեռաւ։

3 Բայց տիտոսն էլ՝ որ
հեթանոսների միջից ինձ
հետ էր՝ չբռնադատվեցաւ
թլփատվիլ։

4 Իւ էն ներս սրծած
սուտ եղբարների պատճառով,
որ ներս սրծան մտնել՝ մեր
ազատութիւնը քննելոյ հա-
մար՝ որ Քրիստոսումն ու-
նինք, որ մեզ ծառայացնեն։

5 Որանց իսկի մինչև
ժամանակ էլ ականջ չդրինք՝
հնազանդ լինելոյ համար. որ
աւետարանի ճշմարտութիւ-
նը ձեզանում հաստատվի։

6 Բայց էն կարծվածներին
համար՝ թէ մին բան լինին,
ինչպէս մի ժամանակ էին՝ ես
իսկի հոգս չեմ անում. պատ-
ճառն որ՝ Աստուած մարդ-
կանց երեսին չի նայում. ին-
չու որ էն կարծվածներն էն-
պէսի բան չեմացրին ինձ։

7 Բայց նրա հակառակն եր-
բոր տեսին թէ անթլփատու-
թեան աւետարանն ինձ հա-
ւատացված է՝ ինչպէս որ
պետրոսին թլփատութեան
(աւետարանն)։

8 Պատճառն որ՝ նա պետ-
րոսի առաքելութիւնը յա-
ջողեց թլփատութեան մէջն՝
ինձ էլ յաջողեց հեթանոս-
ների մէջն։

9 Եւ գիտացեալ
շնորհս զոր ինձ տուեալ է,
յակովբոս և կեփաս և յովհան-
նէս, որ սիւնք երևեցան,
ձեռն տուին ինձ և բարնա-
բայ հաղորդութեան, զի մեք
հեթանոսաց, և նոքա թլփա-
տութեան։

10 Միայն զաղքատացն
յիշեսցուք, զոր և ես ջան-
կալ էի զայս ինչ առնել։

11 Եւ յորժամ եկն կեփաս
ի Անտիոք, դէմ ընդ երես
կացի նմա, զի դատապարտեալ
էր։

12 Զի նախ քան զգալ
զայնոսիկ յակովբոսի, ընդ
հեթանոսաց ուտէր. և յո-
րժամ եկին նոքա, ետ ի
քաշել և ի բաժանել ինքն
զանձն, երկնչելով զթլփա-
տութենէն։

13 Եւ ընդ նմին ագա-
հացան և այլ հրեայքն, մինչ-
և և բարնաբաս տարեալ
եղև նոցա ի կեղծաւորու-
թիւնն։

14 Այլ յորժամ տեսի
զի ոչ ուղղութեամբ գնան
առ ճշմարտութիւն աւետա-
րանին, ասացի կեփասի առ
երեսս ամենեցուն. եթէ դու
հրեայ ընդ հեթանոսաց և
ոչ հրէականաբար կեցեր,
զիա՞րդ հեթանոսս հրեայա-
կանաբար կենալ կամիս։

15 Մեք բնութեամբ հրեայք
և ոչ մեղաւորք ի հեթանոսաց,

16 գիտացեալ զի ոչ
արդարանայ մարդ ի գոր-
ծոց օրինացն, եթէ ոչ ի հա-
ւատոյ Յիսուսի Քրիստոսի,
և մեք ի Քրիստոս Յիսուս
հաւատացաք, զի արդարա-
նասցուք ի հաւատոյ Քրիս-
տոսի և ոչ ի գործոց օրի-
նացն, զի ոչ ամենայն մարմին
արդարանայ ի գործոց օրի-
նացն։

17 Եթէ ապա մեք փոր-
ձեալ գտանիցուք մեղաւոր-
ք ի Քրիստոս, արդեօք
Քրիստոս մեղաց ծառայ է։
Մի եղիցի։

18 Զի եթէ զոր քակտե-
ցի զայն նորոգեմ, զանցա-
ռող զիս ցուցանեմ։

19 Զի ես օրինաւ օրինա-
ցն մեռայ, զի Աստուծոյ
կեցից. ընդ Քրիստոսի խա-
չեցայ։

20 Կեցից ապա ոչ ես,
այլ կենդանի է ի իս Քրիս-
տոս. և զոր ինչ այժմ կեայ
ի մարմնի, ի հաւատս կեայ
որդւոյն Աստուծոյ, որ սի-
րեաց զիս և մատնեաց զան-
ձն իւր վասն իմ։

21 Ոչ անարգեմ զշնոր-
հս Աստուծոյ. զի եթէ ի
պատճառս օրինացն արդա-
րութիւն, ապա Քրիստոս
ընդունայն մեռաւ։

9 իբրև գիտային զշնորհսն որ տուեալ էին ինձ, յա-
կովբոս՝ և կեփաս և յով-
հաննէս, որ կարծեալք սիւնքն
էին, ձեռն եառուն հաւանու-
թեան ինձ և բառնաբայ·
ղի մեք՝ ի հեթանոսս, և նո-
քա՝ ի թլփատութեանն։

10 Բայց միայն ղի զաղ-
քատսն յիշեսցուք, զոր և
ես փութացայ զնոյն առնել։
11 Ա.ՅԼ յորժամ եկն կե-
փաս Յանտիոք, ընդդեմ
դարձայ նորա· քանզի դոդ
իբրև ստգտեալ իմն էր։
12 Քանզի մինչչև եկեալ
էին ամանք առ՝ ի յակովբայ,
ընդ հեթանոսս ուտէր անխը-
տիր· իսկ իբրև եկին, զա-
տանէր և որոշէր զանձն, եր-
կուսյեալ յայնցանէ՝ որ՝ ի
թլփատութենէ անտի էին։

13 Ւ.ու կեղծաւորեցան ընդ
նմա և այլ հրէայքն· մինչև
բառնաբաս անգամ խոնար-
հեցաւ՝ ի նոցա կեղծաւո-
րութիւնն։

14 Ա.ՅԼ իբրև տեսի թէ
ոչ ուղիղ գնան՝ ի ճշմար-
տութիւն աւետարանին, ա-
սեմ ցկեփաս առաջի բոլոնե-

9 Երբոր իմացան էն
շնորհքըն որ ինձ սըրվաձ էր·
յակոբոսն և կեփասն և յո-
հաննէսն՝ որ նորանք էին
կարծվաձ սիւներն· ինձ և
բառնաբասին ձեռք տուին և
հաւանեցան՝ որ մենք հեթա-
նոսների մէջն (լինինք) և նո-
րանք թլփատվածների (մէջն)։
10 Բայց միայն որ աղքատ-
ներըն յիշենք· որ ես էլ
ջանք արի էն անելոյ։
11 Բայց երբոր կեփաս ե-
կաւ անտիոք՝ ես հակառակ
կացայ նորան· պատճառն որ՝
իբր մեղադրելի էր։
12 Ինչու որ՝ դեռ որ մին
քանի մարդիկ չէին եկած
յակոբէյն· առանց ջոկվելոյ
հեթանոսներին հետ ուտու-
մեր· բայց երբոր եկին, ի-
րան անձըն ջոկումեր և բա-
ժանվումեր՝ վախենալով նո-
րանցիյ՝ որ թլփատութենէյն
էին։
13 Ւ.ու նորա հետ ուրիշ
հրէաներ էլ կեղծաւորու-
թիւն արին· մինչև որ բառ-
նաբասն էլ ծըռվեցաւ դէպի
նորանց կեղծաւորութիւնն։
14 Բայց երբոր տեսի որ ա-
ւետարանի ճշմարտութեան
մէջ շիտակ չեն գնում՝ ա-
մենի առաջին ասացի կեփա-

ցուն, եթէ դու որ հրէայդ ես՝ հեթանոսաբար՝ և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես հեթանոսայ լինել հրեարէն։

15 Մեք բունն հրէայք եմք, և ոչ՝ ի հեթանոսայ մեղաւորք։

16 Այս գիտեմք՝ եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինացն, եթէ ոչ՝ ի հաւատոյն Յիսուսի Քրիստոսի. և մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք զի արդարասցուք ի հաւատոյն Քրիստոսի, և ոչ ի գործոց օրինացն. զի ի գործոց օրինացն ոչ արդարասցի մարմին։

17 Իսկ եթէ մինչ խնդրիւք արդանալ ի Քրիստոս, և գտանիցիմք մեղաւորք. ապա ուրեմն՝ Քրիստոս մեղացն պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի։

18 Զի եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ, ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երևեցուցանեմ։

19 Զի ես օրինօք օրինացն մեռայ, զի Աստուծոյ

սին. եթէ դու՝ որ հրէայ ես, հեթանոսի պէս ես վարվում՝ և ոչ թէ հրէայի պէս, էլ ինչո՞ւ համար ես բռնադատում հեթանոսներին, որ հրէայի պէս վարվին։

15 Ինչու որ մենք բուն հրէաններ ենք, և ոչ թէ հեթանոսներիի միջից մեղաւորներ։

16 Այո՛ գիտումենք՝ որ մարդն օրէնքի գործքերից չի արդարանում. բայց միայն Յիսուսի Քրիստոսի հաւատքից. և մենք Յիսուս Քրիստոսին հաւատացինք, որ Քրիստոսի հաւատքից արդարանանք և ոչ թէ օրէնքի գործքերից. պատճառն որ՝ օրէնքի գործքերից իսկի մին մարմին չի արդարանալ։

17 Այսպա թէ որ մենք՝ երբոր ուզումենք Քրիստոսով արդարանալ՝ էլ մեղաւոր գտնըվինք. ուրեմն Քրիստոս մեղքի պաշտօնեայ էլաւ. քաւ լիցի։

18 Պատճառն որ եթէ էն՝ որ քանդեցի, հենց նրան միևնէլ շինեմ, ապա ես ինքն իմանձս մեղաւոր եմ երևայընումէ։

19 Ինչու որ ես օրէնքով մեռայ օրէնքին՝ որ ապրիմ

կեցիք, և ընդ Քրիստոսի ի խաչ ելիք։

20 Եւ կենդանի եմ այսու հետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս, այլ որ այժմ կեամ մարմնով, հաւատովք՝ որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեացն զիս և մատնեաց զանձն վասն իմ։

21 Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ, զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ։

Աստուծոյն, և ես Քրիստոսի հետ խաչեցայ։

20 Եւ սրանից հետև կենդանի եմ. չէ թէ ես՝ բայց Քրիստոսն կենդանի է ինձանում. բայց ինչ որ հիմիկ կենդանի եմ մարմնով՝ որդոյ Աստուծոյ հաւատքովն եմ կենդանի՝ որ ինձ սիրեց և իրան անձըն ինձ համար մատնեց։

21 Եւ ես Աստուծոյ շնորհքըն չեմ անարգում, ինչու որ եթէ արդարութիւնն օրէնքից էր, ապա Քրիստոս զուր տեղն մեռաւ։

ԳԼ. Գ։

1 Ո՛ անմիտ գաղատացիք, զի նախանձ արար ձեզ (ոչ հնազանդել ճշմարտութեա՛ն)։ որոց դրեթէ առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ի խաչ ելեալ։

2 Զայս միայն կամիմ ուսանել ի ձէնջ. ի գործոց օրինաց զՀոգին ընկալարուք՝ եթէ ի լուոյ հաւատոյ։

3 Այդչափ անմիտ էք, սկսեալ Հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք։

1 Ո՛վ անմիտ գաղատացիք, ո՞վ նախանձով լցրուց ձեզ որ ճշմարտութեանն չլսեք. նազանդվիք. որ համարեա թէ ձեր աչքերիդ առաջին գրվեցաւ Յիսուս Քրիստոսն խաչ հանված։

2 Այս մէնակ կամենումեմ սովորիլ ձեզանից. միթէ օրէնքի գործքերից՞ ընդունեցիք հոգին՝ թէ հաւատքի քարոզութենից։

3 Միթէ էդքան անմիտ էք. հոգով սկսեցիք՝ և հիմիկ մարմնով էք վերջանում։

ԺԱ Եւ այնչափ անուք անոյշն ընդ ձեզ ղօսր՝ թէ իսկ ղօսր ։

5 Իսկ արդ՝ որ բաշխեաց ՚ի ձեզ ՀՈԳԻՆ՝ և յաջողեաց ՚ի ձեզ զօրութիւնս. ՚ի գործոց օրինացն Է՞ եթէ ՚ի լսոյ հաւատոյ ։

6 Որպէս աբրահամ հաւատաց Աստուծոյ՝ և համարեցաւ նմա յարդարութիւն ։

7 Գիտիցէ՛ք արդեօք, զի որք ՚ի հաւատոյ անտի են, նոքա են որդիք աբրահամու։

8 Ցառաջագոյն գիտեր գիր, եթէ ՚ի հաւատոյ անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջագոյն խոստացաւ աբրահամու. թէ ՚ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք ։

9 Այսուհետեւ որք ՚ի հաւատոյ անտի են՝ օրհնին ընդ հաւատացելոյն աբրահամու։

10 Զի որ միանգամ ՚ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է. թէ անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն գրեալսն ՚ի գիրս օրինացն՝ առնել զամենայն ։

ԺԱ Մի՛թէ էնքան նեղուԹիւններն ձեր գլխովն զուր տեղն անցկացան. Թէ որ (էն) զուր լինի ։

5 Ապա նա՝ որ հոգին բաժանեց ձեզ, և ձեր միջումն զօրութիւններ յաջողեց. մի Թէ նա օրէնքի գործքերի՞ն է, Թէ հաւատքի քարոզուԹեանէն ։

6 Ինչպէս որ աբրահամն հաւատաց Աստուծոյն և (էն) համարվեցաւ նորան արդարութիւն ։

7 Ուրեմն գիտացէ՛ք. Թէ նորանք՝ որ հաւատքիցն են, նորանք են աբրահամի որդիք։

8 Գիրքն առաջուց գիտումէր, Թէ Աստուած հաւատքիցն կարդարացնէ հեԹանոսներին (և նրահամար) առաջուց աբրահամին խոստացաւ, Թէ քեզանում պիտի ամէն ազգերն օրհնվին։

9 Ուրեմն նորանք՝ որ էն հաւատքիցն են, օրհնված աբրահամի հետ կօրհնվին ։

10 Պատճառն որ նորանք ամէնքն՝ որ օրէնքի գործքերիցն են, անէծքի տակ են, ինչուր որ գրված է. Թէ անիծեալ լինի ամէն մարդ՝ որ չըկենայ օրէնքի գրքի միջի ամէն գրվածներումն, որ ամէնըն անէ ։

11 Զի օրինաքն ոչ ոք արդարանայ առաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի արդարն՝ ասէ, ի հաւատոյ կեցցէ։

12 Եւայց օրէնքն չեն ի հաւատոյ, այլ որ արասցէ զայն՝ կեցցէ ի նմանէ։

13 Քրիստոս դնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք, զի գրեալ է. Թէ անիծեալ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ։

14 Զի ի հեթանոսս օրհնութիւնն աբրահամու եղիցի ի Քրիստոս Յիսուս, զի մեք զաւետիս հոգւոյն սրբոյ առցուք հաւատովք։

15 Ըստ մարդկութեան ասեմ եղբարք, ապաքէն զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել. և ոչ այլ հրաման ի վերայ այնր առել։

16 Իսկ աբրահամու խոստացան աւետիքն, և զաւակի նորա. և ոչ ասէ՝ զաւակաց իբրև զբազմաց, այլ իբրև զմիոյ, Թէ և զաւակի քումմ, որ է Քրիստոս։

11 Պատճառն որ օրէնքդ ոչ ոյ չէ արդարանում Աստուծոյ առաջին. էն յայտնի է, ինչու որ արդարն ասումմ. հաւատքիցն պիտի ապրի։

12 Եւայց օրէնքն հաւատքիցն չէ, բայց ոյ որ նորան կըկատարէ՝ նա կապրի նորանով։

13 Քրիստոս դնեց մեզ օրէնքի անէծքիցն՝ (ինքն) մեզ համար անէծք լինելով. ինչու որ՝ գրված է. Թէ անիծեալ լինի ամէն, ոյ որ փայտիցն կախված լինի։

14 Որ աբրահամի օրհնութիւնն հեթանոսների մէջն լինի Յիսուս Քրիստոսումն. որ մենք սուրբ հոգով աւետիքըն ընդունինք հաւատքով։

15 Մարդկանց սովորութեան պէս եմ ասում՝ եղբարք, շիտակ որ մին մարդոյ հաստատված կտակըն իսկի մինն չի կարող անարգել, և ոչ էլ նորա վերայ ուրիշ հրաման աւելացնել։

16 ԵՒպա աբրահամին խոստացան էն աւետիքներն, և նորա զաւակին. և չի ասում՝ զաւակներին. ինչպէս շատերին, բայց ինչպէս մինին, Թէ և քո զաւակիդ՝ որ է Քրիստոսն։

17 Բայց զայս ասեմ, զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ ՝ի Քրիստոս. օրէնքն որ յետ չորեքհարիւր և երեսուն ամի եղեան, ոչ կարեն խափանել առ՝ի խափանելոյ զաւետիսն։

17 Բայց ես եմ ասում. էն կտակին, որ առաջուց Աստծուց հաստատված էր Քրիստոսի վերայ, օրէնքն որ չորս հարիւր և երեսուն տարուցն եղավ դրվաւ՝ չի կարող քանդել, էնպէս որ աւետիքն խափանվի։

18 Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւնն, ապա ոչ ևս յաւետեացն, բայց աբրահամու աւետեաց շնորհեաց Աստուած։

18 (Ինչու որ) եթէ ժառանգութիւնն օրէնքից լինէը՝ ապա աւետիքից չէր, բայց Աստուած աբրահամին (էն) շնորհեց աւետիքով։

19 Իսկ ընդէ՞ր իցէն օրէնքն, յանցուածոց վասն յաւելան, մինչև եկեսցէ զաւակն, որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշտակօք ՝ի ձեռն միջնորդի։

19 Ապա օրէնքն ինչ է։ (նա) յանցանքների պատճառովն աւելացաւ՝ մինչև որ գայ (էն) զաւակն՝ որ խոստմունքն նորա համար էլան։ (և) հրեշտակներով կարգվեցաւ միջնորդի ձեռովն։

20 Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց Աստուած միւ է։

20 Բայց միջնորդ մէնին չէ՝ բայց Աստուած մին է։

21 Իսկ արդ՝ օրէնքն հակառակ ինչ իցէն աւետեացն Աստուծոյ։ քանզի լիցի, զի եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել, ապա հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն։

21 Ապա ուրեմն օրէնքն Աստուծոյ աւետիքներին հակառակ է։ քանզի լիցի, պատճառն որ եթէ օրէնք տրվաձ լինէը՝ որ կարօղէը (լինքն) կենդանի անել՝ ապա հաստատ էն օրէնքից էը արդարութիւնն։

22 Այլ փակեցին դիրք զամենեսին ընդ մեղս, զի աւետիքն ՝ի հաւատոց անտի

22 Բայց գիրքն ամէնին մեղքի ներքև փակեց՝ որ աւետիքն Յիսուսի Քրիստոսի

Յիսուսի Քրիստոսի տային հաւատացելոց ։

23 Մինչեւ հաւատքն եկեալ էին՝ ընդ օրինօքն պահեալ պահէաք ի հանդերձեալ հաւատսն, որ յայտնելոց էին ի մեզ ։

24 Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոյն արդարասցուք ։

25 Այլ երբեւ եկին հաւատքն, ոչ ես ընդ դաստիարակաւ եմք ։

26 Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Յիսուս Քրիստոս ։

27 Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք · չիք խիր,

28 Ո՛չ հրէի՝ եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի, եւ ոչ ազատի · ոչ արուի, եւ ոչ իգի · զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս ։

29 Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն աբրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն ժառանգք ։

հաւատքիցն տըվվի հաւատացեալներին ։

23 Դեռ որ հաւատքն չէր եկել՝ օրէնքի ներքեւն փակուած պահվուէինք՝ դէպի էն նոր գալու հաւատքն, որ մեզանում պէտք էր յայտնըվի ։

24 Ուրեմն օրէնքն մեզ համար տղայի վարպետ էլաւ՝ դէպի Յիսուս Քրիստոս (տանելոց) որ հաւատքիցն արդարանանք ։

25 Բայց երբոր հաւատքն եկաւ՝ էլ (մենք) էն վարպետի հրամանի տակն չենք ։

26 Ինչու որ ամէնքդ Աստուծոյ որդիք էք՝ Յիսուսի Քրիստոսի հաւատքովն ։

27 Դուք ամէնքդ, որ Քրիստոսում մկրտվեցաք, Քրիստոսին հագած էք· ջոկուըմիւն չըկայ

28 Ո՛չ հրէայի (ըհուդի) եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի՝ ոչ արէի եւ ոչ էգի · պատճառն որ դուք ամէնքդ մին էք Քրիստոս Յիսուսում ։

29 Ապա թէ որ դուք Քրիսին էք, ուրեմն աբրահամի զաւակներն էք· աւետիքին պէս ժառանգներ ։

1 Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծառայն թէպէտ և տէր իսկ ամենեցուն ։

2 Այլ ընդ հաղարապետս եւ տնտեսս է՝ և ընդ դաւառապետս՝ մինչև ՚ի ժամանակակէտ հօրն ։

3 Նոյնպէս և մեք՝ մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք ։

4 Այլ երբեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդին իւր՝ որ եղև ՚ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք ։

5 Զի զնոսա՝ որ ընդ օրինաւքն էին, գնեսցէ, զի մեք զորդեգրութիւն ընկալցուք ։

6 Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր՝ որ աղաղակէ աբբա՝ հայր ։

8 Այսուհետև չես ծառայ, այլ որդի, եթէ որդի՝ և ժառանգ Աստուծոյ ։

8 Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած՝ ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ՚ի բնէ աստուածք ։

1 Ասեմ եմ ասուած. (թէ) դեռ քանի ժամանակ որ ժառանգն տղայ է՝ նա իսկի ա ւելի չէ քան թէ ծառան. թէ և ամէն բանի տէր է ։

2 Հայց վերակացուներն և տնտեսներն ներքևն է՝ մինչև (իրան) հօր դրած հաստատած ժամանակն ։

3 Նոյնպէս էլ մենք դեռ քանի որ աղայ էինք՝ աշխարհքի սկզբունքներին ներքևն ծառայութեան մէջ էինք ։

4 Հայց երբոր ժամանակի լցվիլն եկաւ՝ Աստուած ուղարկեց իրան որդին, որ կնկանից էլաւ և օրէնքի ներքև մտաւ ։

5 Որ գնէ նորանց՝ որ օրէնքի տակն են՝ որ մենք որդեգրութիւնն ընդունինք ։

6 Եւ դուք որովհետև որդիք էք՝ Աստուած իրան որդոյ հոգին ուղարկեց մեր սրտերի մէջն՝ որ աղաղակում աբբա հայր ։

7 Ուրեմն չես ծառայ՝ բայց որդի. և թէ որ որդի՝ էլ Աստուծոյ ժառանգ ։

8 Հայց էն ժամանակն՝ որ Աստուծոյն չէիք գիտում. նորանց էիք ծառայում՝ որ յաստուկ աստուածներ չէին ։

9 Այլ այժմիկ ծանեալք զԱստուած, մանաւանդ լեալ ծանուցեալք իսկ յԱստուծոյ, զինչո՞ դառնայք միւսանգամ անդրէն ՚ի տարերսն, ՚ի տկարս և յաղքատս, որոց միւսանգամ զսնանիլս ծառայեցուցանել կամիք։

10 Զաւուրս խորհիք, և զամիս, և զժամանակս, և զտարիս։

11 Երկնչիմ ՚ի ձեզ, գուցէ թէ ՚ի զուր ինչ վաստակեցի ՚ի ձեզ։

12 Երջերուք իբրև զիս, քանզի և ես իբրև զձեզ եմ. եղբարք՝ աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս։

13 Գիտէք դուք, զի որ կարուլիեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփորձանսն՝ որ ՚ի մարմնի իմում էին,

14 Ոչ անարգեցիք, և ոչ անպոռնեցիք. այլ իբրև զհրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս՝ իբրև զՔրիստոս Յիսուս։

15 Իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր՝ զաչս

9 Բայց հիմիկ որ ճանաչեցիք Աստուծոյն, մանաւանդ թէ հենց Աստուածանիլ, ճանաչվեցաք՝ եւ ի՞նչպէս միւնիլ կեա՛ք դառնում դէպի էն տկար և աղքատ սկզբունքները, որ կամենում էիք միւնիլ ձեր անձերըդ նորանոյ ծառայութեան մէջն քցել։

10 Հոգում էք անում օրերի մէջ և ամիսների և ժամանակների և տարիների մէջ։

11 Վախում եմ ձեզանից՝ որ չըլինի թէ զուր տեղն աշխատեցի ձեր միջում։

12 Ինձ նման էլէք. ինչու որ ես էլ ձեզ նման էի. եղբարք, աղաչում եմ ձեզ, դուք ինձ դէմ մի՛ն մեղք չէք արել։

13 Դուք գիտում էք՝ որ մարմնոյ տկարութիւնով առաջին անգամն աւետարանեցի ձեզ. և էն փորձանքներըն՝ որ իմ մարմնում էին,

14 Չանարգեցիք և երեսից չըքցեցիք, բայց ինչպէս Աստուծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ, ինչպէս Քրիստոսին։

15 Ուպա հրտեղ է էն ձեր երանութիւնն. վկայում եմ ձեզ համար, որ եթէ կա-

ձեր հանէիք ձ տայիք ինձ ։

16 Արդ զի՞ Թշնամի ի՞մ եղէ ձեզ, զի զատպղն խօսեցայ ։

17 Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ի բարի. և ապագելոյլ կամին զձեզ, զի նոցա նախանձասիրք լինիցիք ։

18 Բայց լաւ է նախանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ, և ոչ միայն յորժամ ի ձերում ինջի իցեմ։

19 Որդեակք իմ, զորս գործեալ վերստին երկնեմ, մինչև նկարեացի Քրիստոս ի ձեզ ։

20 կամէի այժմ գալ առ ձեզ, և փոխել զձայնս իմ, զի առարկուածեալ եմ ես վասն ձեր ։

21 Ասէք ինձ ինձ՝ որ ընդ օրինաւքն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս ։

22 Զի գրեալ է. Թէ աբրահամայ երկու որդիք ելին, մի յազախայ անտի, և մի յազատէն ։

23 Այլ որ յազախայն էր՝

ըստի էր՝ ձեր աչքերըն (էլ) կըհանէիք և ինձ կըտայիք ։

16 Ուրեմն միթէ թշնամի ելայ ձեզ. ներսհամար որ ճշմարիտըն ասացի ։

17 Բայց (նորանք) ձեզ նախանձով են շարժում. չէ թէ բարի բանի համար, և կամենուն ան արգելել ձեզ՝ որ նորանց համար նախանձաւոր լինիք ։

18 Բայց լաւ է բարի բաների համար ամէն ժամանակ նախանձաւոր լինելն. և չէ թէ մէնակ երբոր ձեր մէջումն լինիմ ։

19 Իմ որդեակներս՝ որ ձեզ միեղ յաւով ծնանիմ, մինչև որ Քրիստոս կերպարանվի ձեզմանում ։

20 կամենուիմ որ հիմիկ ձեզ մօտ գամ և իմ ձայնըս փոխեմ, քանզու որ տարակուսանքի մէջ եմ ձեզ համար ։

21 Ասացէք ինձ դուք՝ որ կամենուիք օրէնքի ներքևն լինել՝ միթէ դուք օրէնքըն չէ՞ք կարդացել ։

22 Որ գրուած է. թէ աբրահամ երկու որդիք ունէր, մինըն ազախնից (ջարուհուց), և մէկելըն ազատից ։

23 Բայց նա՝ որ ազախնից

ըստ մարմնոյ ծնեալ էր, և
որ յաղաւաքն՝ ըստ աւետեացն։

24 Որ է առակ օրինակի,
զի այս լինքն են երկու կո-
տակարանքն, մի՝ ի Լերանէ սի-
նայ՝ ի ծառայութիւն ծնեալ,
որ է Հագար։

25 Քանզի Հագարն՝ Լեառն
սինայ է յարաբիա, հաւա-
սար է այսմ երուսաղէմի. զի
ծառայէ որդւովք իւրովք
հանդերձ։

26 Ի.ՅԼ վերինն երուսաղէմ
ազատ է, որ է մայր մեր ա-
մենեցուն։

27 Զի գրեալ է. ուրախ
լեր՝ ամուլ, որ ոչ ծնանիցիր,
գոչեա և աղաղակեա՝ որ ոչդ
երկնիցիր. զի բազում են որ-
դիք սկնդկիդ առաւել քան
զարամբեայն։

28 Ի.ՅԼ մեք՝ եղբարք, ըստ
սահակայ աւետեացն որդիք
եմք։

29 Ի.ՅԼ որպէս յայնժամ,
որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝
հալածէր զայն՝ որ ըստ հոգ-
ւոյն, նոյնպէս և այժմ։

30 Ի.ՅԼ զի՞նչ ասէ գիր.
՝ի բաց հան զաղախինդ և

էր՝ մարմնոյ կողմանէն էր
ծնեալ, և նա՝ որ ազատիկն,
աւետիքին պէս։

24 Որ էս օրինակի առակ է.
լինչու որ հենց էս երկու
կտակարաններն են. մինն սի-
նայ սարիցն ծառայութեան մէջ
ծնվաճ՝ որ հագարն էր։

25 Պատճառն որ՝ հագարն
սինա սարն է՝ արաբիայումն և
հաւասար է էս երուսաղէմիս՝
որ իրան որդիքներովն ծառայ
է։

26 Բայց վերին երուսաղէմն
ազատ է. որ մեր ամենի մայրն
է։

27 Պատճառն որ գրվաճ
է թէ. ուրախ կաց՝ ով ամուլդ,
(չքնէդդ) որ չէիր ծընուում. կան-
չի՛ր և աղաղակիր դու՝ որ ե-
րեխայ չերեզոյ ցաւ չէիր քա-
շում. լինչու որ դու բայց
թողվածդ աւելի որդիք ու-
նիս՝ քան թէ մարդ ունօղն։

28 Բայց մենք՝ եղբարք, ի-
սահակին պէս աւետիքի որ-
դիքն ենք։

29 Բայց լինչպէս որ էն ժա-
մանակումն նա՝ որ մարմնոյ
կողմանէ ծնվաճ էր, հալա-
ծումէր նորան՝ որ հոգոյ կող-
մանէն էր, էնպէս էլ հիմիկ։

30 Բայց գիրքն ի՞նչ է ա-
սում. դուրս հանիր աղա-

զորդի դորա. զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի։

31 Վասն որոյ՝ եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին. ազատութեամբն, որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։

խինըն (ղագաստչէն) և նորա որդին. որ աղախնի որդին ժառանգութիւն չընտանայ ազատի որդւոյն հետ։

31 Սրահամայր՝ եղբարք, մենք աղախնի որդիք չենք, բայց ազատին. էն ազատութենովը՝ որ Քրիստոս նորանով մեզ ազատ արաւ։

ԳԼ. Ե։

1 Պինդ կացէք այսուհետեւ, և մի միւսանգամ ընդ լծոյ ծառայութեան մատնէք։

2 Ահաւասիկ ես պօղոս ասեմ ձեզ. զի եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ։

3 Վկայեմ ամենայն մարդոյ, որ թլփատիցի. թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել։

4 Խափանեալ էք ի Քրիստոսէ, որ օրինօքն արդարանայք. և անկեալ էք ի շնորհացն ան-տի։

5 Զի մեք հոգւովն՝ ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք։

6 Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ կարօղ է, և ոչ անթլ-

2 Ահա ես պօղոս ասում ձեզ, որ եթէ թլփատվիք՝ Քրիստոսն իսկի ձեզ օգնութիւն չի անիլ։

3 Վկայում եմ ամէն մարդոյ համար՝ որ թլփատուած՝ թէ նա պարտական է ամէն օրէնքըն կատարել։

4 Քրիստոսից հեռացած էք՝ (դուք) որ օրէնքովն էք կամենում արդարանալ. և շնորհքից վերընկած էք։

5 Ինչու որ մենք հոգովն հաւատքից ենք սպասում արդարութեան յուսոյն։

6 Պատճառն որ Քրիստոս Յիսուսում ոչ թլփատութիւն մին բան կարո-

փառութիւն , այլ հաւատք սիրով յաջողեալք ։

7 Խարդ ընթանայիք . ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել ։

8 Զի այն հրապոյրք ոչ յայնմանէ են, որ կոչեացն զձեզ ։

9 փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ ։

10 Ես յուսացեալ եմ ի ձեզ Տերամբ՝ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք , և որ խռովեցուցանէ զձեզ՝ կրեսցէ դատաստան, ո՛ որ և իցէ ։

11 Ես՝ եղբարք, եթէ թլփատութիւն քարոզեմ՝ ընդէ՞ր տակաւին հալածիմ, ապա ուրեմն խափանեալ լ-ցէ գայթագղութիւն խաչին ։

12 Երանի՛ թէ մօտակուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն ։

13 Զի դուք յաղատու-թիւն կոչեցեալ էք՝ եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց ։

14 Զի ամենայն օրէնք ի մի բան կատարին. ի սիրես-է և ոչ անթլփատութիւնն. բայց հաւատք որ սիրով յաջողեալ է ։

7 Լաւ էիք վազում. ձեզ ո՞վ յետ կանգնացրուց՝ որ չը-հաւանիք ճշմարտութեանն ։

8 Ինչու որ չէն հաւանացը-նէլն նորանից չէ՝ որ կանչեց ձեզ ։

9 Մինչիչ խմոր բոլոր շա-ղախվածքն խմորացնում ։

10 Բայց ես ձեզ վերայ յոյս ունիմ Տէրոջն, որ ուրիշ բան չըմտածէք . և նա՝ որ խռովայնում ձեզ, դատաս-տան կրքաշէ՝ ով որ լինի ։

11 Բայց ես՝ եղբարք, թէ որ թլփատութիւն քարոզէի՝ էլ ինչո՞ւ համար եմ դեռ հալածվում . ապա ուրեմն խաչի գայթագղութիւնն խա-փանված լինէը ։

12 Երանի՛ թէ (ձեր միջից) կարկէին նորանք, որ խռովայը-նում ձեզ ։

13 Ինչու որ դուք ազա-տութեան մէջ էք կանչվել՝ եղբարք , միայն թէ ձեր ազա-տութիւնն պատճառ չըլնայ մարմնոյն , բայց սիրով ծա-ռայեցէք իրար ։

14 Պատճառն որ ամէն օ-րէնքն էն մին խօսքումն է

ցեան զընկերս քո իբրև զանձն քո։

15 Ապա եթէ զմիմեանս խածատիցէք և ուտիցէք. զգոյշ լերուք՝ գուցէ ՚ի միմեանց սատակիցիք։

16 Ասացի զայս ասեմ. Հոգւով գնացէք, և զցանկութիւն մարմնոյ մի կատարիցէք։

17 Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակադակ մարմնոյ, և զի սոքա միմեանց ՚հակառակ են. մի՛ զոր կամիցիքն զայն առնիցէք։

18 Իսկ եթէ հոգւով վարիք, ապա չէք ընդ օրինաւք։

19 Զի յայտնի են գործք մարմնոյ, այսինքն են. շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն,

20 Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հերձ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք,

21 Շարակնութիւնք, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք, և որ ինչ սոցին նման են, զոր յառաջագոյն ասեմ ձեզ, որպէս և ասացի, եթէ զայսպիսիսն գործեսցեն՝ զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեսցեն։

կատարվում. (Թէ) քո ընկերը քո անձիդ պէս սիրիր։

15 Բայց թէ որ իրար կծէք և ուտէք՝ զգոյշ կացէք որ չըլինի թէ իրարից սատակվիք։

16 Բայց ես եմ ասում. հոգով գնացէք և մարմնոյ ցանկութիւնը մի կատարէք։

17 Պատճառն որ մարմինն ցանկանում հոգուն հակառակ՝ և հոգին մարմնոյն հակառակ. և որովհետև սոքա իրար հակառակ են՝ չըլինի թէ ձեր որ դուք կամենաք (էն) անէք։

18 Բայց թէ որ հոգով վարվիք՝ ապա օրէնքի ներքևն չէք։

19 Պատճառն որ յայտնի են մարմնոյ գործքերն, որ սորանք են. շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն,

20 Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամանքի, կռիւ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ,

21 Շար աչքով նայելին, սպանութիւններ, հարբեցութիւններ, անառակութիւններ և (էլ) ինչ որ սրանց

ջագոյն խակ ասեմ ձեզ, որ-
պէս կանխաւն ասէի, թէ որ
ղպսպիսի ինչ գործեն՝ զար-
քայութիւն Աստուծոյ ոչ
ժառանգեն ։

22 Իսկ պտուղ հոգւոյն այս
է. սէր, խնդութիւն, խաղա-
ղութիւն, երկայնմտութիւն,

23 Քաղցրութիւն, բարու-
թիւն, հաւատք, հեզութիւն,
ժուժկալութիւն. զայսպի-
սեաց ոստի օրէնք չեն հա-
կառակ ։

24 Իսկ որ քրիստոսեանքն
են, զմարմինս իւրեանց՝ ի
խաչ հանին կարեօքն և ցան-
կութեամբքն հանդերձ ։

25 Եթէ կեամք հոգւով՝
ընդ հոգւոյն և քաջանես-
ցուք ։

26 Եւ մի լիցուք սնա-
պարծք՝ միմեանց ձայն տալով,
և ընդ միմեանս նախանձելով։

նմանեն են. ես որ առաջուց
ասումն ձեզ՝ ինչպէս որ էլ
ակնզրն տուումի՝ թէ (նո-
րանք) որ էսպիսի բան են
գործում՝ Աստուծոյ արքա-
յութիւնըն չեն ժառանգիլ ։

22 Բայց հոգոյ պտուղն էս
է. սէր, ուրախութիւն, խա-
ղաղութիւն, երկայնըմտու-
թիւն,

23 Քաղցրութիւն, բա-
րութիւն, հաւատք, հեզու-
թիւն, ժուժկալութիւն.
էսպէսիսներին օրէնքն հակա-
ռակ չէ ։

24 Բայց նորանք՝ որ Քրիս-
տոսին են, իրանց մարմիննե-
րըն խաչ հանեցին ախտերին
և ցանկութիւններին հետ ։

25 Թէ որ հոգով ենք ապ-
րում, էլ հոգոյն հետ վար-
քան լինինք ։

26 Եւ ունայն պարծանքին
չըհետևինք՝ իրար դրդնելով
և իրար վերայ նախանձելով ։

Գլ. Զ ։

1 Ա՛ղբարք՝ եթէ և
զանիից մինն յանկարծ բռնը-
վի ինչ սխալմունքով որ լինի՝
դուք որ հոգևոր էք՝ էնպէ-
սիներին հաստատեցէք հեզու-
թեան հոգով. զգոյշ կա-

1 Ա՛ղբարք՝ եթէ որ մէ-
կը մէնջ յանկարծ բռնը-
վի ինչ սխալմունքով որ լինի՝
դուք որ հոգևոր էք՝ էնպէ-
սիներին հաստատեցէք հեզու-
թեան հոգով. զգոյշ կա-

անձանց՝ զի մի և դուք փոր-
ձիցիք ։

2 Զմիմեանց բեռն բար-
ձէք, և այնպէս կատարեցէք
զօրէնսն Քրիստոսի ։

3 Եթէ համարիցի ոք լի-
նել ինչ՝ և չիցէ, զանձն
իւր խաբէ ։

4 Զգործ իւր կշռեսցէ
իւրաքանչիւրոք, և ապա ան-
ձին իւրում միայն խլաբծանս
ասցէ, և ոչ առ ընկերասն ։

5 Զի իւրաքանչիւրոք զիւր
բեռն բառնալոց է ։

6 Հաղորդութիւն արասց
աշակերտն վարդապետին
յամենայն բարութիւնս ։

7 Մի խաբիք, Աստուած
ոչ արհամարհի ։

8 Զի զոր ինչ սերմանէ
մարդ զնոյն և հնձեսցէ. որ
սերմանէ ի մարմին իւր, ի
մարմնոյ անտի հնձեսցէ պա-
պականութիւն. և որ սեր-
մանէ ի հոգին՝ ի հոգւոյ
անտի հնձեսցէ զկեանսն յա-
ւիտենից ։

9 Այլ զբարիս գործել
մի՛ ձանձրասցուք, զի ի ժա-
մանակի իւրում հնձեսցուք
առանց լքանելոյ ։

10 Այսուհետև մինչդեռ
ունիք ձեր անձերիդ, որ դուք
եւ չըփորձվիք ։

2 Իրար բեռըն վերառէք
և եսպէս Քրիստոսի օրէն-
քըն կատարեցէք ։

3 Թէ որ մինն համարի
(իրան) Թէ մին բան է. և
չըլինի՝ նա իրան անձըն խա-
բումէ ։

4 Մէն մէկն Թող իրան
գործըն կշռէ՝ և ապա մէնակ
իրան անձին պարծանք տայ՝
և չէ Թէ իրան ընկերին մօտ

5 Ինչու որ՝ մէկն մէկի ի-
րան բեռըն պիտի վերառնէ։

6 Աշակերտն Թող հաղոր-
դութիւն անէ վարդապետին
ամէն բարի բաներով ։

7 Մի խաբվիք՝ Աստուած
չի անարգվիր ։

8 Պատճառն որ ինչ որ
մարդն սերմռումէ՝ հենց էն
եւ կըհնձէ. նա՝ որ իրան
մարմնոյ մէջն է սերմռում,
էն մարմնոյն ապականութի-
նըն կըհնձէ. և նա՝ որ հոգւոյ
մէջն է սերմռում, էն հոգւոյն
եւ յաւիտենական կեանքըն
կըհնձէ ։

9 Բայց չըձանձրանանք
բարի գործելուն. ինչու որ
իրան ժամանակումն կըհնձենք
առանց պակասելոյ ։

10 Ուրեմն քանի որ ժամա-

ժամանակս ՚ի ձեռս է՝ գործեսցուք առ ղբարիս ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ ։

11 Տեսէք՝ որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ ։

12 Զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն զի մի զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն։

13 Քանզի որ թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն ոչ պահեն, այլ կամին՝ զի դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին ։

14 Այլ ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն ՚ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսէ. որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է՝ և ես աշխարհի ։

15 Զի (՚ի Քրիստոս Յիսուս), ոչ թլփատութիւն ինչ է, և ոչ անթլփատութիւն, այլ նոր արարած ։

16 Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ՚ի վերայ նոցա և ողորմութիւն՝ և ՚ի վերայ իսրայէլին Աստուծոյ ։

նակն ձեռներումս է՝ բարի գործենք ամենեսեան համար. մանաւանդ հաւատքի ընտանիքներին ։

11 Տեսէք թէ ինչպիսի գրերով գրեցի ձեզ (հենց) իմ ձեռովս ։

12 Այն ամէնքն՝ որ կամեցնում հաճոյ երևիլ մարմնոյ կողմանէ, նորանք են ստիպում ձեզ որ թլփատվիք. մինակ նրահամար՝ որ Քրիստոսի խաչի եռևէն չըդնան ։

13 Ինչու որ հենց նորանք էլ՝ որ թլփատված են, նորանք օրէնքըն չեն պահում. բայց կամենում են որ դուք թլփատվիք՝ որ ձեր մարմնովն պարծենան ։

14 Բայց ինձ քաւ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն. որ նորանով աշխարհքըն ինձ համար խաչված է, և ես էլ աշխարհքին (համար)։

15 Պատճառն որ Յիսուս Քրիստոսումն ոչ թլփատութիւնն մի բան է, և ոչ անթլփատութիւնն՝ բայց նոր ստեղծվածք ։

16 Եւ ամէնքն՝ որ էս կանոնիս միաբան են, նորանց վերայ (լինի) խաղաղութիւն և ողորմութիւն՝ և էլ Աստուծոյ իսրայէլին վերայ ։

17 Այսուհետև աշխատ ոք զինս մի արասցէ, զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ։

17 Սրանիցետև թող մինն չաշխատացնէ ինձ. ինչու որ ես Քրիստոսի չարչարանք. ձերըն իմ մարմնոյս մէջն եմ տանում։

18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում՝ եղբարք. ամէն։

18 Մեր Տէր Յիսուսի Քրի շնորհքն՝ եղբարք, ձեր հոգին հետ լինի՝ ամէն։

Գաղատացոց էջրյ հաւ յաջոխէն Գրէչյու։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս առաքեալ Յի-
սուսի Քրիստոսի՝ կամօքն
Աստուծոյ՝ սրբոց որ են յԵ-
փեսոս, և հաւատացելոց ՚ի
Քրիստոս Յիսուս։

2 Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն յԱստուծոյ
հօրէ մերմէ՝ և ՚ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։

3 Օրհնեալ է Աստուած
և հայր Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի, որ օրհնեաց
զմեզ ամենայն հոգևոր օրհ-
նութեամբ յերկնաւորս ՚ի
Քրիստոս։

4 Իբրպէս ընտրեաց զմեզ
նովաւ յառաջ քան զլինելն
աշխարհի, լինել մեզ սուրբս
և անարատս առաջի նորա
սիրով։

5 Յառաջագոյն սահմա-
նեաց զմեզ յորդեգրութիւն
՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի

1 Պօղոս Յիսուսի Քրիս-
տոսի առաքեալ՝ Աստուծոյ
կամքովն՝ սըրբերին, որ եփե-
սոսումն են և Քրիստոսումն
(լինող) հաւատացեալներին։

2 Շնորհք (լինի) ձեզ հետ
և խաղաղութիւն Աստուած
մեր հօրիցն, և Տէր Յիսուս
Քրիստոսիցն։

3 Օրհնեալ է Աստուած՝
և մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի հայրն՝ որ մեզ օրհնեց
ամէն հոգևոր օրհնութեամբ
երկնաւոր բաներումն Քրիս-
տոսով։

4 Ինչպէս որ ընտրեց մեզ
նորանով՝ աշխարհքի լինե-
լուցն առաջ, որ մենք սուրբ
և անարատ լինինք նորա ա-
ռաջին սիրով։

5 Առաջուց սահմանեց
մեզ, որ հենց իրան որդե-
գիր լինինք Յիսուսի Քրիս-

'ի նմին՝ ըստ հաճութեան կամաց իւրոց։

6 'Ի գովեստ փառաց շնորհայ իւրոց. որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն։

7 Որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհայ 'իւրոյ։

8 Որ առաւելաւ 'ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ։

9 Յայտնի մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում, զոր յառաջագոյն եդ նմանաւ,

10 'Ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի 'ի նմա։

11 Որով և վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջադրութեանն Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոյ կամաց իւրոց։

12 Լինել մեզ 'ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացեալոցս 'ի Քրիստոս։

տոսի ձեռամբ՝ իբրեւ կամքի հաճութեան պէս։

6 Իբրեւ փառաւոր շնորհայ գովասանքին համար, որ սոքանով ուրախացրուց մեզ էն սիրելիովն։

7 Որ նորանով ունինք փրկութի՝ նորա արիւնովն՝ մեղաց թողութիւնն՝ իբրեւ շնորհայ մեծութեան չափովն։

8 Որ էն աւելացաւ մեզա-նում ամէն իմաստութենով և գիտութենով։

9 Ցոյց տուաւ մեզ իբրեւ կամքի խորհուրդներըն՝ իբրեւ հաճոյութեան պէս. էն որ առաջուց դրաւ նորանով։

10 Ժամանակների լցվելոյ տնտեսութեան համար՝ որ ամէն բան բոլորվի Քրիստոսովն՝ ինչ որ երկնքումն է և ինչ որ երկրումն՝ հենց նոքանումն։

11 Որ նորանով էլ ստացանք ժառանգութիւնըն մենք՝ որ առաջուց հրաւիրվեցանք, Աստուծոյ առաջադրութեան պէս՝ որ ամէն բան յաջողումէ իբրեւ կամքի խորհուրդներին պէս։

12 Որ մենք գովասանք լինինք նորա փառայն, որ առաջուց մեր յոյսըն Քրիստոի վերայ ենք դրել։

13 Որով և դուք իբրև լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով և հաւատացեալ կնքեցայք հոգւովն սրբով աւետեաց ։

14 Որ է առհաւատեայ ժառանգութեան մերոյ, ի փրկութիւն նուաճութեան, ի գովեստ փառաց նորա ։

15 Վասն այնորիկ և ես իբրև լուայ զհաւատսն զձեր՝ որ ի Տէր Յիսուս, և զսէրն որ ընդ ամենայն սուրբս ,

16 Ոչ դադարեմ ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս ։

17 Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հայրն փառաց տացէ ձեզ զհոգին իմաստութեան և յայտնութեան գիտութեամբն իւրով ։

18 Լուսաւոր առնել զաչս որտից առ ի գիտել մեզ, զի՛նչ է յոյս կոչման նորա, և զի՛նչ մեծութիւն փառաց ժառանգութեան նորա ի սուրբս ։

19 Եւ զի՛նչ է առաւելութիւն մեծութեան զօրութ-

13 Որ նորանով դուք էլ երբոր ճշմարտութեան խօսքըն լսեցիք՝ ձեր փրկութեան աւետարանը՝ որ նորան էլ երբոր հաւատացիք, աւետիքի սուրբ հոգովն կնքվեցաք ։

14 Որ նա մեր ժառանգութեան գրաւն է, մինչև (իրան) ստացվածի փրկութիւնը՝ որ նորա փառացն գովասանք լինի ։

15 Ընդհամար ես էլ երբոր լսեցի ձեր հաւատքն, որ (ունիք) Տէր Յիսուսին և ձեր սէրըն որ դէպի ամէն սրբերն ունիք ,

16 Չեմ դադարում ձեզ համար գոհութիւն տալուց՝ և յիշումեմ ձեզ աղօթքումս ։

17 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Աստուածն փառաց Հայրն տայ ձեզ իմաստութեան և յայտնութեան հոգին իրան գիտութեանը ։

18 Որ լուսաւոր անէ (մեր) սրտերի աչքերըն՝ որ մենք գիտենանք՝ թէ ի՞նչ է էն մեր կոչումի յոյսն, և ի՞նչ է իրան ժառանգութեան փառաւոր մեծութիւնն, որ է սրբերուն ։

19 Եւ ի՞նչ է նորա զօրութեան գերազանց մեծութիւ-

թեան նորա ՚ի մեզ հաւատացեալս, ըստ յաջողութեան կարողութեան զօրութեան իւրոյ,

20 զոր յաջողեաց ՚ի Քրիստոս, զի յարոյց զնա ՚ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս,

21 ՚ի վերայ ամենայն իշխանութեան, և պետութեան և զօրութեան և տէրութեան, և ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և ՚ի հանդերձեալումն։

22 և զամենայն ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա, և զնա եդ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ,

23 որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու։

նըն մեզանօւմ, որ հաւատացինք իրան կարողութեան յաջողութեան պէս,

20 Որ Քրիստոսումն յաջողեց՝ ինչու որ յարոյց նորան մեռելներէն միջէն և իրան աջ կողմն նստացուց երկինքումն։

21 Ամէն իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէրութեան վերայ՝ և ամէն անուններուն վերայ, որ անունվումն, ոչ թէ միայն նակ էս աշխարհումն, բայց էլ էն նոր եկօղի մէջն։

22 և ամէն բան հնազանդացուց նորա ոտից ներքևն՝ և նորան գլուխ դրաւ եկեղեցւոյ ամէն բաներին վերայ։

23 Որ էն նորա մարմինն է, (նորա) լիութիւնն՝ որ ամէն նըն ամէնի մէջն լցնումէ։

ԳԼ. Բ։

1 և դուք՝ որ մեռեալ էիք ՚ի մեղս ձեր և յանցանս։

2 ըստ երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ

1 և դուք՝ որ մեռած էիք ձեր մեղքերումն և յանցանքներումն։

2 Որ նորանցում մին ժամանակ գնում էիք էս աշխարհքիս սովորութեան պէս՝ էն իշխանին պէս, որ էս օդիս

այժմ ընդմտեալ է յորդիան ապստամբութեան ։

3 Ցորս և մեք ամենեքեան ընդէաք երբեմն ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ, և առնէաք զկամս մարմնոյ՝ և զմտածս, և էաք արդարև որդիք բարկութեան իբրև այլքն ։

4 Ի՛յլ Աստուածն՝ որ մեծն է ողորմութեամբ, վասն բազում սիրոյն իւրոյ՝ զոր սիրեացն զմեզ,

5 Մինչդեռ մեռեալք էաք ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ ի Քրիստոս, քանզի շնորհօք ապրեցարք ։

6 Ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս Ցիսուս ։

7 Զի ցուցցէ ի յաւիտեանսն որ գալոցն են զառաւել մեծութիւն շնորհացն իւրոյ՝ քաղցրութեամբ ի մեզ ի Քրիստոս Ցիսուս ։

8 Զի շնորհօք նորա էք փրկեալք ի հաւատոցն, և այս ոչ ի ձեզ, այլ Աստուծոյ պարգև է ։

(հաւատոյն) միջն իշխանութիւն է անուամ՝ էն չար հոգոյն այս՝ որ հիմիկ մտել է ապստամբութեն որդիքներուն միջը։

3 Որ նորանց միջուին մենք ամէնքս էլ միս ժամանակ ման էինք գալիս՝ մեր մարմնոյ ցանկութիւններուն, և մտքոյ նոյ և մեր կամքն կատարումէինք, և իրաւի բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշներն ։

4 Բայց Աստուածն՝ որ մեծ է ողորմութենով, իրան շատ սիրոյն համար որ սիրեց մեզ,

5 Երբոր մեռած էինք (մեր) մեղքերուն՝ մեզ կենդանի արաւ Քրիստոսուն, ինչու որ շնորհքով ապրեցանք ։

6 Նորա հետ (մեզ) յարոյց և նորա հետ երկնքուն նստոյցրուց՝ Քս Ցիսուսուն։

7 Որ նոր եկող ժամանակներուն յաւիտեան ցոյց տայ իրան շնորհոյ գերազանց մեծութիւնն, էն քաղցրութենով որ մեզ վերայ էլաւ Քս Ցիսուսուն ։

8 Պատճառն որ՝ նորա շնորհքովն փրկված էք հաւատքի ձեռովն. և էս ոչ թէ ձեզմնից է՝ այլ Աստուծոյ պարգևն է ։

9 Ո՛չ ՝ի գործոց, զի մի ոք պարծեսցի ։

10 Զի նորա արարածք եմք՝ հաստատեալք Քրիստոսիւ Ցիսուսիւ ՝ի գործս բարութեան, յորս յառաջագոյն պատրաստեաց Աստուածն ՝ի նոյնս գնասցուք ։

11 Վասն որոյ և դուք յիշեցէք, զի երբեմն հեթանոսք էիք մարմնով. որ կոչեցեալն են անթլփատութի՝ յանուանեալ թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին ։

12 Զի էիք ՝ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի, (և օտարացեալ էիք յարքունութենէն իսրայելի.) և տարագիրք յուխտից աւետեացն, և յոյս ՈՉ ունէիք՝ և անաստուածք յաշխարհի ։

13 Իսկ այժմիկ ՝ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի դուք՝ որ երբեմն հեռաւորք էիք, մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի ։

14 Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի. և զմիջնորմին պատկոյն քակեաց՝ զթշնամութիւն ՝ի մարմնի իւրում ։

9 Ո՛չ թէ գործոցն՝ որ իսկի մինն չըլսարծենայ ։

10 Ինչու որ նորա ստեղծուածն ենք՝ Քրիստոսով Ցիսուսով հաստատուած բարի գործոցերուն համար. որ Աստ նորանց համար առաջուց պատրաստեց մեզ, որ նորանցմով վարուինք ։

11 Ներահամար դուք էլ մտքներդ բերէք՝ որ ժամանակով հեթանոս էիք մարմնով կոզմանէ՝ որ անթլփատութիւն են կոչուած էն մարմնաւոր ձեռքով արած թլփատութենիցն ։

12 Որ էն ժամանակուն էիք առանց Քրիստոսի և օտարացած Իսրայելի քաղաքավարութենիցն. և դուրս արած աւետիքի ուխտուպայմանիցն՝ իսկի յոյս չունէիք, և առանց Աստուծոյ էիք աշխարհքումս ։

13 Բայց հիմիկ Ցիսուսի Քրիստոսի ձեռովն դուք՝ որ ժամանակով հեռաւոր էիք, մօտաւոր էլաք Քրիստոսի արիւնովն ։

14 Պատճառն որ նա է մեր խաղաղութիւնն՝ որ երկուսին մին արաւ. և մէջտեղ դրած պատըն (այսինքն) թշնամութիւնըն քանդեց իրան մարմնովն ։

15 Եւ զօրէնս պատուիրա-
նացն հրամանօքն խափա-
նեաց. զի զերկոսին հաստա-
տեսցէ ինքեամբ ՚ի մի նոր
մարդ, և արասցէ խաղաղու-
թիւն։

16 Եւ հաշտեցուսցէ զեր-
կոսին միով մարմնով ընդ Ա-
ստուծոյ՝ խաչելն իւրով, քան-
զի սպան զթշնամութիւն
յանձին իւրում։

17 Եւ եկն աւետարանեաց
խաղաղութիւն ձեզ հեռա-
ւորաց՝ և խաղաղութիւն
մերձաւորաց։

18 Զի նովաւ ունիմք
ղնուաճութիւն երկոքեան՝ միով
հոգւով առ Հայր։

19 Ապա այսուհետև ոչ էք
օտարք և պանդուխտք, այլ
քաղաքակիցք սրբոց և ըն-
տանիք Աստուծոյ։

20 Շինեալք ՚ի վերայ հի-
մանն առաքելոց և մարգա-
րէից. որոյ է գլուխ անկեա-
նին Քրիստոս Յիսուս։

21 Յորում ամենայն շի-
նուածն յօդեալ և պատշա-
ճեալ՝ աճէ ՚ի տաճար սուրբ
Տէրամբ։

22 Յորում և դուք ընդ-
նին շինիք ՚ի բնակութիւն
Աստուծոյ հոգւով։

15 Եւ հրամանքներով դրած
պատուիրանքների օրէնքըն
խափանեց. որ հենց իրանով
երկուսին մին նոր մարդ (շինէ)
յաստատէ և խաղաղութիւն
անէ։

16 Եւ երկուսին մին մարմ-
նով հաշտացնէ Աստուծոյ
հետ՝ իրան խաչովն. ինչու որ
թշնամութիւնըն սպանեց ի-
րան անձնումն։

17 Եւ եկաւ աւետարանել
խաղաղութիւն ձեզ հեռա-
ւորներիդ և խաղաղութիւն
մօտաւորներին։

18 Պատճառն որ նորանով
երկուքս մին հոգով ունինք
մօտենալըն հօր (Ա. Յ) մօտ։

19 Ապա այսուհետև օտար
և պանդուխտ (ղարիպ) չէք՝
բայց սրբերին հետ քաղա-
քացիներ և Աստուծոյ ըն-
տանիքներ։

20 Առաքելոց և մարգա-
րէից հիմունքին վերայ շին-
ված. որ նորա անկիւնի
գլուխն Յիսուս Քրիստոս է։

21 Որ նորանում բոլոր
շինվածքն միաւորված և յար-
մարված է՝ և աճում (որ
լինի) սուրբ տաճար Տէրոջին։

22 Որ նորանում դուք էլ նո-
րա հետ շինվում Աստուծոյ
բնակարան հոգովն։

1 Ա ման այսորիկ ես պօ-
ղոս կապեալ Յիսուսի Քրի
ստոսի վասն ձեր հեթանոսաց։

2 Թէրևս լուեալ իցէք ձեր
պաշտօնեութիւն շնորհացն Ա-
ստուծոյ, որ տուեալ են ինձ
ի ձեզ։

3 Զի ըստ յայտնուե՛ն
ցուցաւ ինձ խորհուրդն. որ-
պէս յառաջագոյն գրեցի առ
ձեզ սակաւուք։

4 Ո՛ր ի կարօղ լինելոյ
ընթեռնուլ, և ի միտ առ-
նուլ զիմաստութիւնն զիմ՝
ի խորհրդեանն Քրիստոսի։

5 Զի այլոյ ազգաց ո՛չ
ցուցաւ որդւոց մարդկան.
որպէս այժմ յայտնեցաւ
սրբոց առաքելոց և մարգա-
րէից՝ հոգւովն։

6 Լինել հեթանոսաց ժա-
ռանգակիցս՝ և մարմնակիցս,
և հաղորդս աւետեացն ի
Քրիստոս Յիսուս՝ աւետա-
րանաւն,

7 Որոյ եղէ ես սպասաւոր
ըստ պարգևաց շնորհացն
Ա՛ստուծոյ՝ որ տուան ինձ
ըստ յաջողութեան զօրու-
թեան նորա։

1 Սրահամար ես պօղոս՝
որ Յիսուսի Քրիստոսի կապ-
ուածն եմ ձեզ հեթանոսնե-
րիդ համար։

2 Կըլինի որ՝ դուք լսած
եք Ա՛ստուծոյ շնորհացն էն
անտեսութիւնըն՝ ինձ տըւ-
ուած է ձեզ համար։

3 Որ յայտնութեամով ցոյց
տըւուաւ ինձ էն խորհուրդն՝
ինչպէս որ առաջուց կարճա-
ռօտ գրեցի ձեզ։

4 Որ կարօղ լինիք կար-
դալ և մտքներդ առնել իմ
տեղեկութիւնըս՝ որ Քրիս-
տոսի խորհըրդին համար է։

5 Որ ուրիշ անցկացած պո-
տերի մարդկանց զաւակներին
ցոյց չըտըւուաւ, ինչպէս որ
հիմիկ իրան սուրբ առաքեալ-
ներին և մարգարէներին յայտ-
նըւեցաւ հոգովը։

6 Այն որ հեթանոսներն
ժառանգութեան և մարմին
ընկեր են՝ և Քրիստոս Յի-
սուսումն աւետիքին մասնա-
կից՝ աւետարանովը։

7 Որ նորան ես պօղոս
սպասաւոր էլայ՝ Ա՛ստուծոյ
շնորհացն պարգևին պէս՝ որ
տըւուաւ ինձ. ինչպէս որ նո-
րա զօրութիւնն յաջողումէ։

8 ինձ՝ որ տրուպս եմ ա-
մենայն սրբոց, տուան շնորհքս
այս, ՚ի հեթանոսս աւետա-
րանել զանքննին մեծութիւն
Քրիստոսի ։

9 Եւ լուսաւոր առնել
զամենեսին, թէ զի՞նչ է
տնտեսութիւն խորհրդոյն, որ
ծածկեալ էր յամենայն յա-
ւիտեանց առ Աստուծոյ՝ որ
զամենայն ինչ արար ։

10 Զի յայտնեսցի արդ
իշխանութեանց և պետու-
թեանց՝ որ յերկինս են ՚ի
ձեռն եկեղեցւոյ՝ բազմապա-
տիկ իմաստութիւն Աստու-
ծոյ ։

11 Ըստ յառաջադրութեան
յաւիտենից՝ զոր արար ՚ի
ձեռն Տեառն մերոյ Ցիսուսի
Քրիստոսի ։

12 Որով ունիմք զհամար-
ձակութիւն և զնուաճութի՛ւն
յուսոյ ՚ի ձեռն հաւատոյ
նորա ։

13 Վասն որոյ աղաչեմ մի
ձանձրանալ ՚ի նեղութեանս
մերում, որ վասն ձեր է, որ
է փառք ձեր ։

14 Վասն այնորիկ դնեմ
ծունր առ Հայր Տեառն մե-
րոյ Ցիսուսի Քրիստոսի ։

15 Որմէ ամենայն նահա-
պետութիւն յերկինս և յեր-

8 ինձ՝ որ ամենայն սրբոց
րի յետինն եմ, տրվաւ էս
շնորհքս՝ որ հեթանոսներին մի-
ջումն աւետարանեմ Քրիս-
տոսի անքննելի մեծութիւնը ։

9 Եւ ամենին լուսաւորեմ,
թէ ի՞նչ է էն խորհրդոյն
տնտեսութիւնն՝ որ ամէն յա-
ւիտենի ժամանակից հետև
ծածկված էր Աստուծոյ մօտ՝
նա որ ամէն բան արաւ ։

10 Որ հիմիկ իշխանութիւն-
ներին և պետութիւններին՝ որ
երկնքումն են. եկեղեցոյ ձե-
ռովն յայտնըվի Աստուծոյ էն
շատ կերպ իմաստութիւնն ։

11 Էն յաւիտենական առա-
ջադրութեան պէս՝ որ մեր
Տէր Ցիսուսի ձեռովն արաւ ։

12 Որ նորանով ունինք հա-
մարձակութիւն և յուսով
մօտենալըն՝ նորան հաւատա-
լովն ։

13 Ընդհամար աղաչումեմ՝
որ չընձանրանաք մեր նեղու-
թեններումն՝ որ ձեզ համար է,
որ մեր փառքն է ։

14 Ընդհամար ծունր եմ
դնում մեր Տէր Ցիսուսի
Քրիստոսի հօր առաջին ։

15 Որ նորանից ամէն նա-
հապետութիւն երկնքումն և

կրի անուանի ։

16 Զի տայէ ձեզ ըստ մեծութեան փառացն իւրոց, հաստատեալ զօրութեամբ ի ձեռն հոգւոյն իւրոյ ի ներքին մարդն ։

16 Որ իբրեւ մեծ փառքին պէս տայ ձեզ՝ որ նորա հզօրապէս ձեռնի հաստատելիք ներսի մարդումն ։

17 Բնակել Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստատեալք ։

17 Որ Քրիստոս հաւատքով բնակիլ ձեր սրտումդ՝ և սիրով արմատ քացած և հաստատուած լինիք ։

18 Զի կարող լինիջիք հաւանել ընդ ամենայն սուրբս, զի՛նչ է լայնութիւն և բարձրութիւն և խորութիւն և երկայնութիւն ։

18 Որ կարող լինիք ամէն սրբոց հետ իմանալ՝ թէ ի՞նչ է (ես խորհրդով) լայնութիւնն և բարձրութիւնն և խորութիւնն, և երկարութիւնն ։

19 Ճանաչել զաւետիսութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի. զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ ։

19 Որ Քրիստոսի ամէն գիտութենից դերազանց սէրը ճանաչէք՝ որ Աստուծոյ ամէն լիութենովը լցուիք ։

20 Այլ այնմ՝ որ կարօղն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութիւն քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ զօրութեանն՝ որ յաջողեալն է ի մեզ ։

20 Այլ նորան՝ որ կարող է առատութենով անել էն ամէն բաներից աւելի քան թէ էն՝ որ մենք խնդրենք և իմանանք, էն զօրութեան չափովը որ մեզ նում յաջողուած է ։

21 Նմա փառք յեկեղեցւոջ, և ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

21 Նորան (լինի) փառք եկեղեցումն. որ Քրիստոս Յիսուսումն է՝ ամէն սերունդի մէջն յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

ԳԼ· Դ·

1 Աղաչեմ զձեզ ես՝ որ կապեալս եմ ի Տէր, արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք ։

2 Ամենայն խոնարհութեամբ և հեզութեամբ և երկայնմտութեամբ անսալ միմեանց սիրով ։

3 փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան ։

4 Մի մարմին՝ և մի հոգի, որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ ։

5 Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն ։

6 Մի Աստուած և հայր ամենեցուն՝ որ ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին՝ և յամենեսին ի մեզ ։

7 Այլ իւրաքանչիւր ոմանք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի ։

8 Վասն որոյ և ասէ. եկ ի բարձունս. գերեաց զգերութիւն. և եւս պարգեւս մարդկան ։

9 Որ ելն զի՞նչ է, եթէ

1 Ուրեմն աղաչումն ձեզ ես՝ որ կապուած եմ Տէրին համար, որ էնպէս գնաք ինչպէս որ էն կոչումին կըվայելէ որ ձեզ կանչուեցաք ։

2 Ամէն խոնարհութեանով և հեզութեանով և երկայնմտութեանով · և իրար համբերեցէք սիրով ։

3 ջանք արէք հոգւոյ միաբանութիւնըն պահել՝ խաղաղութեան կապովն ։

4 Մին մարմին և մին հոգի՝ ինչպէս որ էլ կոչվեցաք ձեր կոչումի մին յոյսով մէջ ։

5 Մին Տէր է, մին հաւատք, մի մկրտութիւն ։

6 Մին Աստուած և ամէնի հայր՝ որ ամէնին վերայ (է) և ամէնին հետ, և մեր ամէնիս մէջն ։

7 Բայց մեր ամէն մէկիս տրված է շնորհք՝ Քրիստոսի պարգեւներուն չափին պէս ։

8 Որհամար էլ ասում(է) վերելաւ բարձր առ գերին· գերի արաւ գերութիւնըն· և մարդկանց պարգեւներ տուաւ ։

9 Նա՝ որ վեր էլաւ, ի՞նչ

ոչ՝ զի էջ նախ ՚ի տապրին կողմն երկրի ։

10 Որ էջն, նոյն է՝ և որ ելն ՚ի վերոյ քան զամենայն երկինս. զի լցցէ զամենայն։

11 Եւ նա եւս զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս։

12 ՚Ի հաստատուածիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի ։

13 Մինչև հասցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն որդւոյն Աստուծոյ. յայր կատարեալ ՚ի չափ հասակի կատարման Քրիստոսի ։

14 Զի մի յայսմհետէ լիցեմք տղայք խոտորեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան՝ խաբէութեամբ մարդկան. խորամանկութեամբ ՚ի խաբէութիւն մոլորութեան ։

15 Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեսցուք ՚ի նա ըստ ամենայնի, որ է գլուխ Քրիստոս։

16 Որմէ ամենայն մարմինն յօդեալ և պատշա-

է՝ եթէ ոչ առաջ վէրեկաւ երկրի ցած կողմն ։

10 Նա՝ որ վերեկաւ, հինց նա է՝ որ ամէն երկինքներուն աւելի բարձր վեր ելաւ՝ որ ամէնըն լցնէ ։

11 Եւ նա միանգամայն տուաւ որ առաքեալ լինին, միանգամայն մարգարէ, միանգամայն աւետարանիչ, միանգամայն հովիւ և վարդապետ ։

12 Որ սրբերն հաստատուին պաշտամունքի գործին համար՝ Քրիստոսի մարմնոյ շինուելեան համար ։

13 Մինչև որ ամէնքս հասնինք հաւատքի միութեան մէջ և Աստուծոյ որդւոյ գիտութեան մէջ. և կատարեալ մարդ լինինք Քրիստոսի կատարեալ հասակի չափովն։

14 Որ սրանից եւս տղայ չըլլինինք շրջոմիւած և տարուելումս էն կողմն շարժուած վարդապետութեան ամէնքամիներուն՝ մարդկանց խաբեբայութենովն՝ որ խորամանկութենով խաբեն և մոլորացնեն ։

15 Բայց ճշմարիտ լինինք սիրով և ամէնք ամէն բանով նորանում՝ որ է գլուխն Քրիստոս։

16 Որ նորանից բոլոր մարմինն իրար հետ կապուած՝ և

Ճեալ ամենայն խաղալիսք տարբերութեան՝ ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճուճն մարմնոյ գործէ՝ ի շինայ անձին իւրոյ սիրով։

17 Ուրդ զայս ասեմ և ուխտեմ ի Տէր. մի և ես ձեզ զնոյն օրինակ գնալ՝ որպէս և այլ հեթանոսք գնան՝ ունայնութեամբ մտայ իւրեանց։

18 Որոյ խաւարեալ են սիրտք իւրեանց, և օտարացեալ են ի կենաց անտի Աստուծոյ՝ վասն տգիտութեանն՝ որ է ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց։

19 Որք զանձանց ցաւսն հաճին, և մատնեցին զանձինս ցիջութեան, ի գործս ամենայն պղծութեան ագահութեամբ։

20 Այլ դուք ոչ այսպէս ուսարուք զՔրիստոս։

21 Թէպէտ և լուարուք զնմանէ, և նմա՛ուս ուսայք՝ որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի։

22 Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջնի գնացից զմարդն հին՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն։

հաղորդութեան ամէն խաղերոյն յարմարված՝ էն զօրութեան չափովն՝ որ ամէն մէկ անդամուն է՝ էն մարմնոյ աճիլըն գործուէ՝ իրան ան ձըն սիրով շինելոյ համար։

17 Ասիկա էս եմ ասում և վկայում Տէրով՝ որ դուք միևնէ չըգնաք էն կերպովն՝ ինչպէս որ ուրիշ հեթանոսներն են գնում իրանց մտքի ունայնութիւնովն։

18 Որ նորանց սրտերն խաւարված են և օտար են Աստուծոյ կեանքիցն. էն տգիտութեան պատճառովն՝ որ նորանցում է. իրանց սրտերի կուրութեան համար։

19 Որ իրանց անձների յուսըն կտրեցին և իրանց անձնները մատնեցին ցիջութեան՝ ամէն պղծութեան գործքերի մէջ՝ ագահութիւնով։

20 Բայց դուք Քրիստոսին էսպէս չըսովորեցիք։

21 Թէ որ նորանից լսեցիք և նորանով սովորեցիք. ինչպէս որ ճշմարտութիւն է Յիսուսում։

22 Որ ձեզանից դուրս հանէք հին մարդոյն՝ էն առաջին գնացքիցն պէս, նա՝ որ խաբեբայ ցանկութիւններով ապականված է։

23 Եւ նորոգել հոգւովդ մտաց ձերոց ։

24 Եւ զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է՝ արդարութիւնը եւ սրբութեամբ ճշմարտութեան ։

25 Վասն որոյ՝ ի բաց ընկեցէք զստութիւն. խօսեսցարուք զճշմարտութիւն ընդ ընկերի իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք միմեանց անդամք ։

26 Բարկանայք՝ եւ մի մեղանչէք. արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ։

27 Եւ մի տայք տեղի սատանայի ։

28 Որ գողանայրն՝ մի եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ՝ ումմէ պիտոյ իցէ ։

29 Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ. այլ որ ինչ բարին է ի շինած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ՝ որ լսեն ։

30 Եւ մի տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան ։

23 Եւ ձեր մտքի հոգւովն նորոգվիք ։

24 Եւ նոր մարդոյն հագնիք՝ որ Աստուծոյն պէս ստեղծված է ճշմարիտ արդարութենով եւ սրբութենով ։

25 Ընդհամար դէն գցեցէք սուտ ասելըն. խօսեցիք ճշմարտութիւնն ամէն մարդ իրան ընկերին հետ. ինչու որ մենք իրար անդամ ենք ։

26 Թէ որ բարկանաք՝ էլ մի մեղանչէք. թող արեգակն ձեր բարկութեան վերայ չըմտնէ ։

27 Եւ պատճառ չըտաք սատանային ։

28 Նա՝ որ գողանում էր, թող էլ չըգողանայ. բայց էլ աւելի աշխատի իրան ձեռնարովն բարին գործելոյ որ բաւական ունենայ տալոյ ումմէ որ պէտք է ։

29 Ամէն գէշ խօսք չը՛դուրս գայ ձեր բերանից. բայց էն՝ որ բարի է, շինութեան համար հարկաւոր, որ շնորհք տայ նորանոյ՝ որ լսում են ։

30 Եւ մի տրտմացնէք Աստուծոյ սուրբ հոգին՝ որ նորանով կնքվեցաք (ձօհըքվէցաք) դէպի փրկութեան օրն ։

31 Ամենայն դառնութիւն և բարկութիւն և սրամտութիւն և աղաղակ և հայհոյութիւն բարձցի ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ ։

32 Լերուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք . շնորհեալ միմեանց, որպէս և Աստուած ի Քրիստոսիւն շնորհեաց մեզ ։

31 Ամէն դառնութիւն և և բարկութիւն և սրամտութիւն և ազաղակ և հայհոյութիւն թող վերառնուին ձեր միջոյն՝ ամէն չարութեան հետ ։

32 իրար հետ քաղցր եղէք, գթած , որ իրար ներէք՝ ինչպէս որ Աստուած էլ Քրիստոսին մեղ նեղեց ։

ԳԼ· Ե ։

1 Երկերուք նմանողք Աստուծոյ , իբրև որդիք սիրելիք ։

2 Եւ գնայէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ , և մատնեաց զանձն իւր վասն մեր՝ պատարագ և զհնուճի Աստուծոյ ի հոտ անուշից ։

3 Այլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն , կամ ագահութիւն՝ և անուանեսցի մի ի միջի ձերոյս, որպէս և վայել է սրբոց ։

4 Եւ զպարսութիւն՝ կամ խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն՝ որ ոչ վայել է · այլ մանաւանդ գոհութիւն ։

1 Նմանո՛ղ եղէք Աստուծոյն՝ ինչպէս սիրելի որդիքներ ։

2 Եւ սիրով գնացէք, ինչպէս որ Քրիստոս էլ սիրեց մեզ, և իրան անձնէն մեզ համար մատնեց, պատարագ և մատաղ՝ Աստուծոյ անոյշ լինելոյ ։

3 Բայց պոռնկութիւն և ամէն պղծութիւն, կամ ագահութիւն թող էլ չանըւանվի ձեր միջումդ, ինչպէս որ սըրբերին կըվայելէ ։

4 Եւ գարշութիւն, կամ յիմար խօսքեր , կամ ծաղրաբանութիւն՝ որ չըվայելուում, բայց էլ աւելի գոհութիւն ։

5 Զայս տեղեկացեալ գի-

5 Սրան տեջեկայէք գի-

տասջի՛ք. Թէ ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռապաշտ՝ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեան Քրիստոսի և Աստուծոյ:

6 Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեաւք վասն այսորիկ եւս գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան:

7 Մի՛ այսուհետեւ լինիք բաժանորդք նոցա:

8 Զի թէպէտ և երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ի Տէր, իբրև զորդիս լուսոյ գնացէք:

9 Զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է՝ և արդարութեամբ և ճշմարտութեամբ:

10 փորձեցէք՝ զի՛նչ է հաճոյ Տեառն:

11 Եւ մի՛ կայորդ լինիք անպտղութեան գործոցն խաւարի, այլ մանաւանդ յանդիմանեցէք:

12 Զի որ ծածուկ ինչ գործեն ի նոսա՝ զայն և խօսել ամօթ է:

13 Այլ ամենայն ինչ յանդիմանեալ ի լուսոյ՝ յայտնի

տայէք՝ որ ամէն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ նա կռապաշտ է, ժառանգութիւն չունի Քրիստոսի և Աստուծոյ արքայութեանն:

6 Ձգո՛ղուի որ միոն խաբէ ձեզ ունայն խօսքերով. ինչու որ հոգոյ էս պատճառով եւ՝ Աստուծոյ բարկութիւնն գալիս է անհաւատութեան որդիքներին վերայ:

7 Ուրեմն մանանակից մի լինիք նորանոյ հետ:

8 Որ թէ և մին ժամանակ խաւար էիք՝ եւ հիմիկ լոյս էք Տէրուն. լուսոյ որդիքներին պէս գնացէք:

9 Ինչու որ լուսոյ պտուղն ամէն բարութեանով է, և արդարութեանով և, ճշմարտութեանով:

10 փորձեցէք՝ թէ ինչ է հաճոյ Տէրին:

11 Եւ մանանակից մի լինիք խաւարի անպտուղ գործերին, բայց եւ աւելի յանդիմանեցէք (նորանոյ):

12 Պատճառն որ էն՝ որ նորանոյ միջումն ծածուկ գործվուածք, էն եւ խօսքով ասել գարշելի է:

13 Բայց ամէն բան՝ լուսոյն որ յանդիմանվի, յայտ-

լինի. զի ամենայն ինչ՝ որ յայտնի է, լոյս է։

14 Վասն որոյ և ասէ. արի որ ննջեաց, և կանգնեաց ի մեռելոց, և լուսաւոր լիցի քեզ Քրիստոս։

15 Տեսջի՛ք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի իբրև անիմաստք։

16 Այլ իբրև իմաստունք. գնեցէ՛ք զժամանակ՝ զի աւուրքս չարութեան են։

17 Վասն այնորիկ մի լինիք անմիտք, այլ իմացարուք՝ զի՛նչ կամք են Տեառն։

18 Եւ մի արբենայք գինւով, յորում՝ զեղխութիւն է, այլ մանաւանդ լցարուք հոգւով։

19 խօսել ի սիրտս ձեր սաղմոսիւք, և օրհնութեամբք և երգովք հոգեւոր. երգել և սաղմոս ասել ի սիրտս ձեր Տեառն։

20 Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ հօրն և Աստուծոյ։

21 Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի։

22 Կանայք իւրեանց հնա-

նի է լինում. ինչու որ ամէն բան՝ որ յայտնի է, էն լոյս է։

14 Ըրահամաը էլ ասում. վերկաց դու՝ որ քնած ես, և վեր կանգնիր մեռելներից՝ և Քրիստոս կըլուսաւորէ քեզ։

15 Նայեցէք թէ ինչպէս շիտակ գնաք. չէ թէ ինչպէս անխելքներն։

16 Հայց ինչպէս խելացի՝ նեըն՝ գնեցէք ժամանակը, ինչու որ՝ օրերս չար են։

17 Ընահամար մի լինիք անմիտ, այլ իմացէք թէ ինչ է Տէրի կամքն։

18 Եւ մի հարբենաք գինով՝ որ նորանում անառակութիւն կայ, բայց աւելի լցվեցէք հոգով։

19 Որ ձեր սրտերումդ սաղմոսներ և օրհնութիւններ խօսէք և հոգևոր երգեր. որ Տէրին երգէք և սաղմոս ասէք ձեր սրտերումդ։

20 Ամէն ժամանակ ամէն բանի վերայ գոհացէք Աստուածհանից և հօրից մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն։

21 Իրար հնազանդ եղէք Քրիստոսի վախովն։

22 Կանայքն ըմոզ հնազանդ

զնդ լեցին եբեև Տեառն ։

23 Զի այր ե զլուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս գլուխ ե եկեղեցւոյ, և ինքն ե փրկիչ մարմնոյ ։

24 Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի ։

25 Ա՛րք՝ սիրեցէք զկանայս ձեր. որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա ։

26 Զի զնա սրբեսցէ սրբեալ զբուխեամբ աւազանին բանիւ ։

27 Զի կայուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ՝ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ ։

28 Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս՝ որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ ։

29 Զի ոչ ոք երբեք ատեայ զանձն իւր, այլ սնու-

լինին իրանց մարդկանց՝ ինչպէս Տէրն ։

23 Պատճառն որ մարդն է կնկան գլուխն՝ ինչպէս որ Քրիստոս էլ եկեղեցւոյ գլուխն է, և ինքն (իրան) մարմնոյ փրկիչն է ։

24 Բայց ինչպէս որ եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին՝ էնպէս էլ կանայքն իրանց մարդկանց ամէն բանի մէջ ։

25 Մարդիկ՝ սիրեցէք ձեր կանանցըդ, ինչպէս որ Քրիստոս էլ սիրեց եկեղեցւոյն. և իրան անձըն մատնեց նորա համար։

26 Որ նորան սրբէ աւազանի սրբութեամբ՝ խօսքովն ։

27 Որ ինքն իրան առաջին փառաւոր կանգնացնէ եկեղեցւոյն, որ խոկի չունենայ մին արատ կամ կեղտոտուի կամ ուրիշ էսպէս բաներ, բայց որ սուրբ և անարատ լինի ։

28 Հենց էնպէս պէտք է՝ որ մարդիկն իրանց կանանցըն սիրեն, ինչպէս (հենց) իրան մարմիններըն. նա՝ որ իրան կնկանըն սիրումէ, իրան անձըն է սիրում ։

29 Ինչու որ խոկի մին չէ կայ՝ որ իրան անձըն ատէ,

ցանէք և դարմանէք զնա. որպէս և Քրիստոս զեկեղեցի ։

30 Զի անդամք եմք մարմնոյ նորա ՚ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա ։

31 Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ՚ի մարմին մի ։

32 Խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ ՚ի Քրիստոս և յեկեղեցի ։

33 Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կին երկնչեսցի յառնէ իւրմէ։

բայց կերակրեմ և պահպանեմ նորան. ինչպէս որ Քրիստոս եկեղեցոյն ։

30 Պատճառն որ նորա մարմնոյ անդամներն ենք, նորա մարմնից և նորա ոսկորներից ։

31 Սրահամար մարդն կը-թողնէ իրան հօրըն և մօրըն և իրան կնկան հետ կըդնայ, և երկուսն մին մարմին կըլինին ։

32 Այս խորհուրդս մեծ է, բայց ես Քրիստոսի և եկեղեցոյ վերայ եմ ասում ։

33 Բայց հնպէս դուք էլ ամէն մէկդ. ինչու որ ամէն մէկն իրան կնկանըն թողպէս սիրէ, ինչպէս իրան անձըն. և կինն վախենայ իրան մարդուցն ։

ԳԼ. Զ ։

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց ՚ի Տէր, զի այն է արժան ։

2 Պատուեա զհայր քո և զմայր, որ է առաջին պատուիրան յաւետեան ։

3 Զի քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցես ՚ի վերայ երկրի ։

4 Հայրք՝ մի զայրացուցա-

1 Որդիք՝ հնազանդ էղէք ձեր ծնօղներին Տէրոջն. ինչու որ էն է արժանն ։

2 Պատուիր քո հօրըդ և մօրըդ՝ որ էս առաջին պատուիրանն է աւետիքին հետ։

3 Որ քեզ լաւ լինի, և երկար ապրիս երկրի վերայ ։

4 Հայրք՝ մի բարկացնէք

նէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ումամբ Տեառն:

5 Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոյ մարմնաւորաց, ահիւ և դողութեամբ և միամտութեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի:

6 Մի առ ականէ ծառայել իբրև մարդահաճոյք. այլ իբրև ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ:

7 Սրտի մտօք ծառայել՝ իբրև Տեառն, և մի իբրև մարդկան:

8 Գիտացիք՝ թէ իւրաքանչիւրք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի և ի Տեառնէ՝ եթէ ծառայ և եթէ ազատ:

9 Եւ դուք՝ տեարք, զնոյն առնիջիք առ նոսա. նեղելով առնել զպատուհասն. գիտացիք թէ և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս. և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա:

10 Ամենայն զօրացարուք Տերամբ, և կարողութեամբ զօրութեան նորա:

11 Եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, ձեր որդիքներըդ. քայց մծացրիք նորանց խրատով և Տէրի ումանութքովն:

5 Ծառաներ՝ հնազանդէլէք ձեր մարմնաւոր տէրերին վախով և դողալով և ձեր սրտի միամտութեանովն՝ ինչպէս որ Քրիստոսին:

6 Ո՛չ թէ մէնակ աչքերի առաջին ծառայելով՝ ինչպէս մարդոյ հաճոյ լինօղներն՝ քայց ինչպէս Քրիստոսի ծառաներն՝ որ Աստուծոյ կամքըն են անում:

7 Եւ յօժար մտքով են ծառայում ինչպէս Տէրին, և ոչ թէ ինչպէս մարդկանց:

8 Գիտացիք որ ամէն մէկն ինչ բարի որ անի՝ հէնց էն կընդունի Տէրիցն. թէ ծառայ լինի և թէ ազատ:

9 Եւ դուք՝ տէրերդ, հէնց էն արէք նորանց՝ որ նեղելով անէք պատիժըն. գիտացիք որ նորանց և ձեզ էլ Տէր կայ երկնքումն. և նորա առաջին երեսպաշտութիւն չըկայ:

10 Աստուծոյ զօրացիք Տէրով, և նորա զօրութեան կարողութեանովն:

11 Եւ Աստուծոյ զէնքերըն հագէք, որ կարօղ լինիք ա-

զի կարօղ լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի ։

12 Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան • այլ ընդ իշխանութիւնս, եւ ընդ պետութիւս, եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այս չարութեան՝ որ ի ներքոյ երկնից ։

13 Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարօղ լինիցիք ի դիմի հարկանել չարին՝ յաւուրն չարութեան ։

14 Եւ երբեւ զամենայն ինչ կատարիցեք, հաստատուն կացէք • զոտիդ՝ կալջիք պընդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզբահան արդարութեանն ։

15 Եւ ոտքեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան ։

16 Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ • որով կարօղ լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել ։

17 Եւ առէք զսաղաւարտն փրկութեան, եւ զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ։

18 Ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք՝ աղօթս առ-

տանայի հնարքներին հակառակ կենալ ։

12 Ինչու որ մենք մարմնոյ եւ արիւնի հետ պատերազմ չունինք, բայց իշխանութիւններին հետ, էս խաւար աշխարհիս տիրապետողներին հետ, էն չար դևերին հետ՝ որ երկնքի ներքևն են ։

13 Արահամար Աստուծոյ զէնքերըն առէք՝ որ կարօղ լինիք չարին հակառակ կենալ չարութեան օրուն ։

14 Եւ երբոր ամէնըն կատարէք՝ հաստատ կացէք, տեղումդ կանգնեցէք, ձեր մէջքերըդ ճշմարտութենով պնտացրած եւ արդարութեան զրահըն հագած ։

15 Եւ ոտներն կօշիկ հագած՝ խաղաղութեան աւետարանի պատրաստութենովն ։

16 Եւ ամէնին վերայ հաւատքի վահանըն առէք՝ որ կարօղ լինիք չարի ամէն մուխ տըվված նետերըն անցնել ։

17 Եւ փրկութեան սաղաւարտըն առէք, եւ Հոգոյ սուրըն՝ որ Աստուծոյ խօսքն է։

18 Ամէն աղօթքով եւ աղաչանքով աղօթք արէք ա-

նել յամենայն ժամանակի հոգւով, և ի նմին տքնիջիք ամենայն ժուժկալութեամբ, և խնդրուածովք վասն ամենայն սրբոց,

19 Եւ վասն իմ, զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ, համարձակութեամբ յուցանել զխոր հուրդ աւետարանին:

20 Վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս. զի նովին համարձակեցայց, որպէս և պարտ իցէ ինձ խօսել:

21 Բայց զի գիտէիցէք և դուք զինէն, զինչ գործիցեմ. զամենայն ինչ ցուցցէ ձեզ տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ ի Տէր:

22 Զոր առաքեցի առ ձեզ դմին իսկ, զի գիտասջիք դուք զմէնջ. և մխիթարեսցէ սիրտս ձեր:

23 Խաղաղութիւն ընդ եղբարս, և սէր հաւատովք Աստուծոյ ի հօրէ՝ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

24 Շնորհք ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏէր մեր Յիսուս

մէն ժամանակ հոգով. և նորանուամ արթնուն կայէք աղաչանօք անելով,

19 Եւ ինձ համար, որ խօսք տրվի ինձ իմ բերանս բանալոյ ժամանակն՝ որ համարձակութեամբ յայտ առնեմ աւետարանի խորհուրդները:

20 Որ նորա համար իմ կապանքուս պատգամաւոր (էլչի) եմ, որ նորանով համարձակ լինիմ, ինչպէս որ էլ պէտք է ինձ խօսիլ:

21 Բայց որ դուք էլ գիտենաք ինձ համար՝ թէ ինչ եմ գործում, ամէն բան յայտ կըտայ ձեզ տիւքիկոս սիրելի եղբայրն և Տէրումն հաւատարիմ պաշտօնեան:

22 Որ նորան դրահամար ուղարկեցի ձեզ մօտ, որ դուք ինձ համար գիտենաք և մխիթարվիք:

23 Խաղաղութիւն (լինի) եղբարներին հետ և սէր հաւատքով՝ Աստուածմէ հօրից և Տէր Յիսուս Քրիստոսից:

24 Շնորհք (լինի) ձեզ ամենին հետ, որ մեր Տէր Յի-

Քրիստոս անեղծութեամբ . սուսին Քրիստոսին սիրուամն
ամէն : առաջց ապականութեւ. ամէն:

Լիքսացոց ՀԵՐՑ Գրքեցաւ հաօ ՀաղաՀիցն՝ ալՀաՀիչոսի ՅԵՒաՆ :

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌ ՓԻԼԻՊԷՍԻՆ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս և տիմոթէոս ծառայք Յիսուսի Քրիստոսի՝ ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս, որ են ի կողմանս փիլիպեցւոց եպիսկոպոսակցօք և սարկաւագօք.

2 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ, և ի Տեառնէ՝ Յիսուսէ Քրիստոսէ։

3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ ամենայն յիշատակի ձերոց։

4 Ցամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ՝ վասն ձեր ամենեցուն առնել ա-ղօթս խնդութեամբ։

5 Վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչև ցայժմ։

6 Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն ի ձեզ գործս բարիս՝ կատարեսցէ մինչև

1 Պօղոս և տիմոթէոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայներն՝ ամէն սրբերին Յիսուս Քրիստոսումն, որ փիլիպեցոց կողմերումն են՝ եպիսկոպոսներին և սարկաւագներին հետ.

2 Շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր հօրմէն և Տէր Յիսուս Քրիստոսէն։

3 Գոհանում իմ Աստուածիս ամէն ժամանակ որ ձեզ յիշումմ։

4 Ամէն ժամանակ իմ ամէն պատճանքներումս ձեզ ամէնիդ համար աղօթք եմ անում ուրախութեամբ։

5 Ձեր աւետարանին հաղորդ լինելոյն համար՝ էն առաջին օրէն մինչև հիմի։

6 Իւ հաստատ յոյս ունիմ նրա վերայ՝ թէ նա՝ որ ձեզնում սկսեց էս բարի գոր-

յօրն Յիսուսի Քրիստոսի ։

7 Որպէս իրաւ իսկ Թուէ ինձ խորհել զայս վասն ձեր ամենեցուն . վասն ունելոյ ինձ զձեզ ՚ի սրտի ՚ի կապանս իմում, և ՚ի պատասխանատուութեան իմում, և ՚ի հաստատուութեան աւետարանին . կցորդս ինձ շնորհայ զձեզ ամենեսին լինել ։

8 Վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին դթովքն Քրիստոսի Յիսուսի ։

9 Եւ զայն աղօթս առնեմ . զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ՚ի գիտութեան և յամենայն իմաստութեան .

10 Ընտրել ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք և առանց դայթակղութեան ՚ի յաւուրն Քրիստոսի ։

11 Լցեալ պտղովք արդարութեան ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ ՚ի փառս և ՚ի գովեստ Աստուծոյ ։

12 Կամին Թէ գիտիցէք՝ եղբարք , զի որ ինչ վասն իմ էր , եւս քան զեւս ՚ի յառաջադիմութիւն աւետարանին եկն ։

ծըս, էլ կըկատարէ մինչեւ Յիսուսի Քրիստոսի օրն ։

7 Ինչպէս որ իրաւունք է երեւում ինձ մտածելոյ էս (բանըս) ձեզ ամենիդ համար. ինչու որ ձեզ իմ սրտիս մէջն ունիմ իմ կապանքներումս , և իմ պատասխան տալոյ և աւետարանըն հաստատելոյ ժամանակումս . որ դուք ամէնքդ ինձ հետ շնորհացն հաղորդ էլաք ։

8 Աստուած ինձ վկայ է՝ Թէ ինչպէս ձեզ ամենիդ յանկանումս Յիսուսի Քրիստոսի քաղցր սիրովն ։

9 Եւ էն աղօթիք եմ անում՝ որ ձեր սէրն աւելի և աւելի հարստանայ գիտութիւնով և ամէն իմաստութիւնով ։

10 Որ դուք լաւըն ընտրէք, որ հաստատ լինիք և առանց պայթակղութեան Քրիստոսի օրումն ։

11 Արդարութեան պտուղներով լցուած՝ Յիսուսի Քրիստոսի ձեռովն , Աստուծոյ փառքին և գովասանքին համար ։

12 Կամենումէ՝ եղբարք, որ գիտենաք. Թէ ինչ բան որ ինձ վերայ էլաւ, աւելի և աւելի յաջողեց աւետարանի առաջանալըն ։

13 Մինչև կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս յամենայն հրապարակս, և առ այլս ամենեսին։

14 Ընդ առ բազում եղբարս ի Տէր, որ վստահ են կապանաց իմովք՝ առաւել և համարձակել առանց երկիւղի պատմել Աստուծոյ խօսել։

15 Ոմանք առ նախանձու և հակառակութեան, և ոմանք մտադիրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն։

16 Եւ ոմանք ի սիրոյ, գիտեն՝ եթէ ի պատասխանատուութիւն աւետարանին կամ։

17 Եւ ոմանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ, կարծելի հատուցանել ի վիրայ կապանաց իմոց։

18 Ոչայց այս ինչ է. ոչ բով օրինակաւ և իսկ, եթէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութեամբ՝ Քրիստոս պատմի. և ընդ այս խնդամ՝ այլև ուրախ և եղէց։

19 Զի գիտեմ, եթէ այս պահկ ինձ ի փրկութիւն՝ ի ձերոց խնդրուածոց՝ և ի

13 Մինչև որ իմ կապանքներս Քրիստոսումն յայտնի էյան տիւանի բոլոր տան մէջն և ուրիշ ամենքին էլ։

14 Եւ շատ եղբարներին՝ որ իմ կապանքներուս սիրտ առին՝ որ աւելի համարձակ էյան՝ առանց վախի Աստուծոյ բանըն խօսելոյ։

15 Մին քանիսն նախանձաւորութենով և հակառակութեան պատճառով, և մին քանիսն բարէյաժար մտքով քարոզուածն Քրիստոսին։

16 Եւ մինքանիսն սիրով. ինչու որ գիտուածն թէ աւետարանըն Ջատագովելոյ համար կանգնած եմ։

17 Եւ մինքանիսն ծուռ մտքով Քրիստոսին պատմուածն և ոչ թէ պարզ կամքով. ինչու որ կարծուածն թէ իմ կապանքներիս վերայ նեղութիւն բերեն։

18 Ուայց ես ի՞նչ է. որ կերպով որ լինի, թէ պատճառանքով և թէ ճշմարտութենով՝ Քրիստոս պատմըվուածէ և սրահամար ուրախ եմ, և էլ ուրախ կըլինիմ։

19 Ինչու որ գիտուածէ՝ թէ ես բանս ինձ փրկութեան պատճառ կըլինի ձեր ա-

պարգևաց հոգւոյն Ցիսուսի Քրիստոսի,

20 Ըստ ակնկալութեան և յուսոյն իմոյ. վի՛ մի իւիք յամօթի եղէց, այլ ամենայն համարձակութեամբ՝ որպէս և յամենայն ժամ և այժմ մեծասցի Քրիստոս ՚ի մարմնի իմում, եթէ կենօք, և եթէ մահու։

21 Զի ինձ կեանք՝ Քրիստոս է, և մեռանել՝ շա՛հ։

22 Ապա եթէ կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է. և վի՛նչ ընտրեցից՝ զայն ոչ գիտեմ։

23 Ընդեալ եմ յերկոցունց՝ զցանկալին, երանել և ընդ Քրիստոսի լինել՝ առաւել լաւ համարիմ։

24 Այլ կալ ժամալ ասէն ՚ի մարմնի, կարևոր ևս վասն ձեր։

25 Այլ զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ և ժամացից ամենեցուն ձեզ, ՚ի ձեր ջրդգանալ և խրախճանել ՚ի հաւատս։

26 Զի պարծանք ձեր առաւել լիցին ՚ի Քրիստոս Ցիսուս ինձ ՚ի միւսանգամ ղօղ.քներոջն՝ և Ցիսուսի Քրիստոսի հոգւոյ պարգևեն բոջն։

20 Ինչպէս որ ես սպասաւորեմ և յոյս ունիմ՝ որ իսկի մին բանով ամօթի չըլինիմ, բայց ամէն համարձակութեամբ՝ ինչպէս որ ամէն ժամանակ, հիմիկ էլ Քրիստոս փառաւորվի իմ մարմնովս, թէ կեանքով, և թէ մահով։

21 Պատճառն որ ինձ համար Քրիստոս՝ կեանք է, և մեռնելն՝ շա՛հ։

22 Բայց թէ որ ես մարմնոյս կեանքն իմ գործոյս պտուղ է բերում, էլ ես չեմ գիտում թէ որըն ընտրեմ։

23 Երկուսիցն նեղացած եմ. դուրս գալոյ և Քրիստոսի հետ լինելոյ ցանկանալն աւելի լաւ եմ համարում։

24 Այլ էտեղ մարմնովս կենալն, ձեզն աւելի հարկաւոր (է) ձեզ համար։

25 Այլ հաստատ յուսով էս եմ գիտում, որ կըկենամ և կըմնամ ձեզ ամէնիդ հետ. որ դուք առաջանաք և ուրախ լինիք հաւատքումն։

26 Որ ձեր պարծանք աւելի լինի Ցիսուս Քրիստոսումն ինձանով. երբոր ես սրտիկ

գալստեան իմում առ ձեզ ։

27 Միայն թէ արժանի առաւետարանին Քրիստոսի գնայցէք, զի եթէ գայցեմ, և տեսանիցեմ զձեզ. և եթէ հեռի իցեմ, և լսիցեմ զձեզնջի Հաստատուն կայցէք ի միոգի, և միով շնչով նահատակիցիք ի հաւատս աւետարանին,

28 Եւ մի զանգիտիցէք՝ և մի իւիք ի հակառակորդաց անտի. որ է նոցա հանդէս կորստեան, և ձերոյ փրկութեան ։

29 Եւ այդ յԱստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ի նա հաւատալ՝ այլև վասն նորա չարչարիլ ։

30 Զնոյն պատերազմ ունել, զոր յիս տեսէք, և այժմ լսէք յինէն ։

կըգամ ձեզ մօտ ։

27 Միայն թէ ինչպէս որ կըվայելէ աւետարանին՝ էնպէս գնայէք. որ թէ գամ և տեսնեմ ձեզ, և թէ հեռու լինիմ և լսեմ ձեզանից՝ որ հաստատ էք հենց միևնոգով և (ինձ հետ) միև մտքով կանգնիք աւետարանի հաւատքին համար ։

28 Եւ իսկի միև բանով մի վախենաք էն հակառակօդնեբիցն, որ էն նորանց կորստի նշան է և ձեր փրկութեան ։

29 Եւ ձեզ Աստուածանից եղ շնորհք էլաւ Քրիստոսի համար, որ չէ թէ միայակ հաւատաք նորան, բայց էլ նորա համար չարչարվիք ։

30 Եւ հենց էն պատերազմ քաշէք, որ ինձանում տեսիք և հիմիկ լինձանից լսումէք ։

ԳԼ. Բ ։

1 Արդ՝ եթէ միխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս, եթէ սփոփանքութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն հոգւոյ, եթէ գթութիւնք և ողորմութիւնք,

2 Լիացէք զխնդութիւնս իմ. զնոյն խորհիջիք, զնոյն սէր

1 Ուրեմն թէ որ միև միխիթարութիւն կայ Քրիստոսումն, թէ սիրով օրտի հովութիւն, թէ հոգով հաղորդութիւն, թէ գթածութիւն և ողորմութիւն ։

2 Ապա լցրիք իմ ուրախութիւնըս, (որ) հենց միև

յանձին ունիջջիք, համա-
շունչք, միախորհուրդք ։

3 Մի ինչ ըստ գրգռու-
թեան, և մի ինչ ըստ անա-
պարծութեան. այլ խոնար-
հութեամբ զմիմեանս լաւ
համարել առաւել քան զան-
ձինս ։

4 Մի զանձանց և նըթ փի-
տել՝ այլ իւրաքանչիւրոք
զըննկերին ։

5 Զայն խորհեսցի իւրա-
քանչիւրոք ի ձէնջ, որ և
ի Քրիստոս Յիսուս։

6 Որ ի կերպարանս Աս-
տուծոյ է, ոչ ինչ յափշտա-
կութիւն համարեցաւ զհաւասար Աստուծոյ ։

7 Այլ զանձն ունայնա-
ցոյց զկերպարանս ծառայի
առեալ, ի նմանութիւն
մարդկան եղեալ և կերպարա-
նօք գտեալ իբրև մարդ ։

8 Խոնարհեցոյց զանձն,
լեալ հնազանդ մահու չափ
և մահու խաչի ։

9 Վասն որոյ և Աստուած
զնա առաւել բարձրացոյց ։
և շնորհեաց նմա անուն, որ
ի վեր է քան զամենայն ա-
նուն ։

10 Զի յանուն Յիսուսի
Քրիստոսի ամենայն ծունր
միտք ունենասք, հեռոյ մին սէր
ունենասք ձեր միջումդ, մին-
շունչ, մին խորհուրդ ։

3 Ի սկի մին բան չըլինի
դրդռութենով և ոչ էլ ու-
նայն պարծանքի համար ։
բայց խոնարհութենով լծող
մինն մեկէլին իրան տձեվիցն
աւել լաւ համարէ ։

4 Անձնըրիդ բանին մէնակ
մտիկ չըտաք, բայց ամէն մէկն
իրան ընկերի բանին ։

5 Ձեր ամէն մէկն լծող
են մտածէ՝ որ էլ Քրիս-
տոս Յիսուսումն (էլաւ) ։

6 Որ Աստուծոյ կերպա-
րանքումն լինելով իսկի յա-
փըշտակութիւն չըհամարեց
Այն հաւասար լինիլըն ։

7 Բայց իրան անձըն ու-
նայնացրուց, և ծառայի կեր-
պարանքըն առաւ, և մարդոց
նման էլաւ և կերպարանքով
մարդոց պէս գտնաւ ։

8 Իրան անձըն խոնարհցը-
րուց և հնազանդ էլաւ մին-
չեւի մահ, և էլ խաչի մահն։

9 Նըւահամար Աստուած
էլ աւելի բարձրացրուց նո-
րան, և նորան շնորհեց (էն-
պէսի) անուն, որ ամէն ա-
նուններիցն աւելի բարձր է։

10 Որ Յիսուսի Քրիստոսի
անունովն ամէն ծունր դնը-

կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։

11 Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ Հօր։

12 Այսուհետև՝ սիրելիք իմ, որպէս յամենայնի՝ հնազանդեցարուք, մի միայն ի գալստեան իմում, այլ առաւել ևս այժմ՝ յորժամ հեռիս եմ ի ձէնջ, ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք։

13 Զի Աստուած է՝ որ յաջողէ ի ձեզ կամիլն և գառնելն վասն հաճութեան։

14 Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ.

15 Զի եղիջիք անբիծք և անարատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամարկոր և խեղաթիւր ազգին. յորոյ միջի երևիցիք իբրև լուսաւորք յաշխարհի.

16 Զբանն կենաց ունելով՝ յանձինս՝ ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի, վի ոչ ընդունայն ընդունայն ընթացայ՝ և ոչ ընդունայն վաստակեցի։

17 Այլ թէպէտ և նուիրվի երկնաւորներին և երկրաւորներին և երկրի տակ լինողներին։

11 Եւ ամէն լեզու դաւանի, թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին համար։

12 Ուրեմն՝ իմ սիրելիներս, ինչպէս որ ամէն բանով հնազանդվիցաք՝ չէ թէ միայն իմ գալոյ ժամանակն, բայց էլ աւելի հիմիկ՝ երբոր հեռու եմ ձեզմանից. ահով և դողալով գործեցէք ձեր անձնեաց փրկութիւնը։

13 Որովհետև որ Աստուած է, որ յաջողումէ ձեզմանում կամենալը և անելը իրան հաճութեան պէս։

14 Ամէն բան գործեցէք առանց տրտնջելոյ և փըսփսալոյ։

15 Որ լինիք անբիծ և անարատ, Աստուծոյ որդիք, անմեղ էս կամապուշտ և ծուռ ազգումն, որ նորանց միջումն երևիք ինչպէս լոյս աւետարանչներն աշխարհի մէջն։

16 Կենաց խօսքըն պահելով ձեր անձնեումդ. որ էն պարծանք լինի ինձ Քրիստոսումն, որ զուր տեղն չըվազեցի և զուր չաշխատեցի։

17 Բայց թէ և մատաղ

րիմ՝ ի վերայ պատարագի և պաշտաման հաւատոյ ձերոյ, խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր ։

18 Նոյնպէս և դուք խնդացէք՝ և ուրախակից եղերուք ինձ ։

19 Բայց յուսամ՝ ի Տէր Յիսուս զտիմոթէոս վաղվաղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դիւր լինիցի, յորժամ դիտիցեմ ինչ զձէնջ ։

20 Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր ։

21 Զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի ։

22 Բայց զնորա դիտէք և դուք, զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին ։

23 Արդ զսա ակնունիմ արձակել, որպէս նոյնհետայն զանձնէ սուտ դեղիցի ։

24 Այլ յուսացեալ եմ՝ ի Տէր՝ եթէ և ես իսկ ընդ հուսկ եկիցեմ ։

25 Բայց լաւ համարեցայ

լինիմ ձեր հաւատոյքի պատարագին և պաշտամունքին վերայ՝ էլ ուրախ եմ. և ձեզ ամենիդ հետ ուրախանամ ։

18 Նոյնպէս էլ դուք ուրախ էլէք և ինձ հետ ուրախացէք ։

19 Բայց յոյս ունիմ Տէր Յիսուսումն, որ տիմոթէոսին շուտով ուղարկեմ ձեզ մօտ, որ իմ սիրտս էլ հանգիստ լինի, երբոր ձեզ վերայ միւն բան իմանամ ։

20 Պատճառն որ չունիմ միւն ինձ հետ միասիրտ, որ ընտանոյ պէս հոգս տանի ձեր համար ։

21 Ինչու որ ամէնքն իրանց բաներին են մանգալիս և չէ թէ Յիսուսի Քրիստոսի բաներին ։

22 Բայց դուք էլ փորձ էլէք գիտումէք նորան, որ ինչպէս որդի (իրան) հօրն՝ էնպէս ինձ հետ ծառայեց աւետարանին ։

23 Ուրեմն յոյս ունիմ, որ սորան ուղարկեմ շուտով հենց էն ժամանակուն՝ որ իմ անձիս համար կըտեսնեմ ։

24 Բայց յոյս ունիմ Տէրումն, որ հենց ես էլ շուտով գամ ։

25 Բայց լաւ համարեցի՝

զեպափրոդիտոս զեղբայր՝ և զգործակից և զվնասուորակից իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ իմոյ պիտոյից՝ առաքել առ ձեզ։

26 Քանզի և ինքն իսկ յոյժ անձկայեալ է տեսանել պատմենսին զձեզ. և հոգայր՝ զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ։

27 Եւ արդարև խօթացաւ մերձ ՚ի մահ, այլ Աստուածծ ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլև ինձ՝ զի մի սրտմուխթիւն ՚ի վերայ սրտմուխթեան կրկնեմ։

28 Արդ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք. և ես առանց տրտմուխթեան եղէց։

29 Ընկալջիք զնա ՚ի Տէր ամենայն խնդուխթեամբ, և զայնպիսիսն առատատուկանս ունիջիք։

30 Զի վասն գործոյ Տ՚ն մինչև ՚ի մահ մերձեցաւ, դուն գործեալ ոգւովք չափ, զի լցյէ զձեր պակասուխթիւն իմոյ սպասաւորուխթեան։

որ եպափրոդիտոս եղբօրըն՝ իմ գործոյս և զինուորուխթեան ընկերըն՝ էն ձեր առաքեալըն և իմ պէտք լինող բաների պաշտօնեան ուղարկեմ ձեզ մօտ։

26 Ինչու որ հենց ինքն էլ խիստ փափագ ունի, որ ձեզ ամենիդ տեսնէ, և հոգս էր քաշում՝ որ դուք լսել էիք՝ թէ նա հիւանդացաւ։

27 Եւ իրաւի որ հիւանդացաւ մինչև մահ ի մօտ, բայց Աստուած ողորմեցաւ նորան. չէ թէ մենակ նորան, բայց ինձ էլ, որ տրտմուխթիւն տրտմուխթեան վերայ չըքաշեմ։

28 Ուրեմն վռազով ուղարկեցի նորան, որ տեսնելով նորան միևնոյն ուրախ լինիք և ես առանց տրտմուխթեան լինիմ։

29 Ընդունեցէք նորան Տէրումն ամէն ուրախութեամբ, և էպափրոդիտոսին պատուական համարեցէք։

30 Ինչու որ Տէրի գործոյ համար մինչև մահուանիլն մօտեցաւ, հոգս չափ չառնելով, որ լցնէ ինչ որ ձեզ պակասմունքը իմ ծառայութեանս կողմանէ։

1 Ա.յսուհետև՝ եղբարք իմ, ուրախ լերուք ՚ի Տէր· գնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչ ինչ դանդաղելի է, և ձեզ կարի զգուշալի ։

2 Զգոյշ եղերուք ՚ի շանց անտի· զգոյշ եղերուք ՚ի չար մշակաց անտի· զգոյշ եղերուք ՚ի կտրատուածէն անտի ։

3 Զի թլփատութիւնն մեք եմք, որ հոգւովն Աստուծոյ պաշտեմք, և պարծիմք ՚ի Քրիստոս Յիսուս, և ոչ ՚ի մարմին պանծայեալ եմք ։

4 Թէպէտ և ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ ՚ի մարմին, եթէ ոք համարիյի այլազգ վստահ լինել ՚ի մարմին, առաւել ևս ես ։

5 Թլփատութեամբ ութօրեայ · յազգէ իսրայէլի ՚ի ցեղէ բենիամինի · եբրայեցի յեբրայեցւոյ · ըստ օրինացն փարիսեցի ։

6 Ըստ նախանձայոյզն լինելոյ հալածէի զեկեղեցին · ըստ արդարութեան օրինացն լեալ անարատ ։

7 Այլ որ ինչ ինձ շահն

1 Ա.յսուհետև՝ իմ եղբարք, ուրախ եղէք Տէրոջմէ. հենց մին բան գրելն ձեզ՝ ինձ համար ձանձրութիւն չէ՝ և ձեզ շատ զգուշութիւն է տալիս ։

2 Զգոյշ կացէք էն շներէն · զգոյշ կացէք էն չար մշակներէն · զգոյշ կացէք էն ծայրի կտրածներէն ։

3 Ինչու որ թլփատութիւնն մենք ենք, որ ԱՀ հոգովն պաշտում ենք և Քս Յիսուսի պարծենում ենք և մարմնով պարծանք չենք անում ։

4 Թէ և հենց ես էլ էն համարձակութիւն ունիմ մարմնոյ կողմանէ · Թէ որ մին ուրիշ մարդ կարծէ որ մարմնով համարձակ լինի՝ էլ աւելի ես ։

5 Որ ութ օրուայ թլփատվեցայ՝ իսրայէլի ազգիյն, բենիամինի ցեղէյն, եբրայեցի եբրայեցուց (ծնված)՝ օրէնքնոց կողմանէ՝ փարիսեցի ։

6 Ջերմեռանդութեան կողմանէ հալածումի եկեղեցոյն · օրէնքի արդարութեանն մասիկ տալով անարատ էի ։

7 Բայց ինչ բան որ ինձ

էր՝ զայն ինձս համարիմ վ Քրիստոսի ։

8 Այլ և համարիմ իսկ զամենայն ինձս՝ վասն առաւելի գիտութեան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ . վասն որոյ զամենայնի զրկեցայ՝ և համարիմ կղզղանս , զի զՔրիստոս շահեցայց ,

9 Եւ գտայց ՚ի նմա. իբրև ոչ ելիկ զիմ ինչ արդարութիւն՝ որ յօրինացն առնէ, ունկնցիմ,այլ զհաւատոյն Քրիստոսի, որ ԱՍտուծոյ արդարութիւնն է ։

10 Հաւատովք ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն չարչարանաց նորա , կերպասանակից լինել մահու նորա ։

11 Թէ արդեօք հասից ՚ի մեռելոցն յարութիւն ։

12 Իբր ոչ ելիմ արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ իցեմ . զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ լիցէ ըմբռնեալ իսկ իցեմ ՚ի Քրիստոսէ ։

13 Ե՛ղբարք՝ ես ոչ համարիմ զանձն իմ լիցէ հասեալ

շահ էր , էն ինձս եմ հա մարում Քրիստոսի համար ։

8 Եւ հենց ամէն բան էլ ինձս եմ համարում էն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գերազանց գիտութեանն հա մար , որ նորա համար ամէն բանից զրկուեցայ և (նորանց) աղբ եմ համարում՝ որ Քրիստոս ստանամ ,

9 Եւ նորանում գանուիմ. չէ որ իրավունք իմ արդարութիւնը ուենենամ, որ օրէնքից է, բայց էն որ Քրիստոսի հաւատքիցն է . որ էն արդարութիւնը Աստուածանից է ։

10 Որ հաւատքով ճանաչեմ նորան և նորա յարութեան զօրութիւնը, և նորա չարչարանքին մասնակից լինելը՝ որ նորա մահին նման կերպասանուիմ ։

11 Որ լինի թէ մեռելների յարութեանն հասնիմ ։

12 Ոչ որ՝ իրավունք հենց հիմիկ առած լինիմ , կամ թէ հենց հիմիկ կատարեալ էլած լինիմ . հետևումեմ որ հասնիմ նրան, որ նորա համար էլ հենց Քրիստոս Յիսուսիցն բռնուած եմ ։

13 Ե՛ղբարք՝ ես իմ անձը չեմ համարում, որ հասած

իցեմ, բայց մի ինչ ի՝ ղի զառ ՚ի յետոյն մոռացեալ է, և ՚ի յառաջադէմն նկըտեալ եմ ։

14 Ուշ եդեալ ընթանամ ՚ի կէտ կոչմանն Աստուծոյ ՚ի Քրիստոս Ցիսուս ։

15 Ա. յսուհետեւ որ միանգամ կատարեալքդ եք՝ զայս խորհեցարուք. և եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ սակայն և զայն Աստուած ձեզ յայտնեսցէ ։

16 Բայց յոր ժամանեցաքս՝ զոյն խորհել՝ և սմին կանոնի միաբան լինել ։

17 Ընդունդք ինձ եղիջիք՝ եղբարք՝ և դիտասջիք զայնպիսիսն, որ այնպէսն գնացեն, որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ ։

18 Զի բազումք գնան՝ զորոց բազում անգամ ասէի ձեզ. բայց արդ և լալով իսկ ասեմ, զթշնամեացս խաչին Քրիստոսի։

19 Որոց կատարածն կորուստ է. որոց Աստուած որովայնն իւրեանց է. և փառք ամօթին իւրեանց, որք լինիմ. բայց միտ բան ի՝ էն որ յետևի բաներըն մոռացեալ եմ, և դէպի առաջինոցն հասանելոյ ջանք եմ անում ։

14 Մխիթք դնելով վազումն դէպի Աստուծոյ (որկնաւոր) կոչումն նպատակին՝ Քրիստոս Ցիսուսումն ։

15 Ընդհամար զուք ամենքդ՝ որ կատարեալ էք, էս մտածեցէք. և եթէ որ միոք ուրիշ բան մտածէք, էն էլ Աստուած կըյայտնէ ձեզ ։

16 Միայնեթէ նորանում որ մենք հասինք՝ հենց միով կերպով մտածենք և հենց միով կանոնում միաբան լինենք ։

6 Եթէ պարտ է առաջի Աստուծոյ՝ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն ։

7 Եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ ի յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի , յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ ։

8 ի բոց հրոյ առնուլ վրէժս յայնոցանէ՝ որք ոչ ճանաչին զԱստուած , և որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

9 Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց Տեառն՝ և ի փառաց զօրութեան նորա ։

10 Ցորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց , և սքանչելի ի մէջ ամենայն հաւատացելոց · զի հաւատարիմ եղև վկայութիւնն մեր ի վերայ ձեր յաւուր յայնմիկ ։

11 Ցոր և աղօթս առնեմք

թիւնէրուն՝ որ դուք համբերուէք ։

5 Որ էն՝ Աստուծոյ արդար դատաստանի նշան է , որ դուք արժանի լինիք Աստուծոյ արքայութեան՝ որ նորա համար էլ նեղութիւն էք քաշում ։

6 Որ պէտք է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ նեղայնողնեբին նեղութիւն հատուցանէ ։

7 Իւ ձեզ նեղայածներիդ հանգիստ մեզ հետ՝ երբոր Տէր Յիսուսն կը յայտնըվի երկինքէն իրան զօրութեան հրեշտակներովն ։

8 Կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցմով՝ որ Աստուծոյն չեն ճանաչում և մեր Տէր Յիսուսի աւետարանին չեն հնազանդվում ։

9 Որ նորանք պատիժ կըքաշեն , յաւիտենական կորուստըն Տէրի երեսէյն և նորա փառաւոր զօրութենէյն ։

10 Երբոր կըգայ՝ որ փառաւոր լինի իրան սըրբերուըմըն , և զարմանալի ամէն հաւատացեալներուն՝ որ մեր վկայութիւնն որ ձեզ արինք՝ հաւատարիմ կըլինի էն օրուըմըն ։

11 Որ էս պատճառով էլ

վան ձեր յամենայն ժամ, զի գձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած մեր. ամենայն հաճութիւն բարութեան, և գգործս հաւատոցն զօրութեամբ ։

12 Զի փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ, և դուք ի նմա, ըստ շնորհաց Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի ։

ԳԼ. Ե ։

1 Աղաչեմ գձեզ, եղբարք, վասն գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մերոյ ժողովելոյն առ նա ։

2 Մի վազվազակի խռովել ձեզ ի մտայ, և ոչ զարհուրել, ոչ հոգւով և ոչ բանիւ և ոչ թղթովք իբրև թէ ի մէնջ. որպէս թէ ներկեալ հասեալ իցէ օրն Տեառն ։

3 Մի ոք զձեզ խաբեսցէ՝ և ոչ իւիք իրօք, զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան,

ամէն ժամանակ ապրիլ ձեզ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Աստուած ձեզ արժանի անէ ձեր կոչումին. ամէն որ կատարէ ամէն բարի հաճութիւնը և հաւատքի գործքերը զօրութեամբ ։

12 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունն փառաւորի ձեզմանուամ, և դուք նորանուամ, մեր Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքին պէս ։

Ա ։

1 Աղաչեմ ձեզ՝ եղբարք, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գալստին, և մեր հաւաքմամ մեզի ժողովելոյն համար ։

2 Ձի լինի թէ դուք շուտով շարժուիք ձեր մտքէդ և ամէն զարհուրիք ոչ հոգով, և ոչ խօսքով, և ոչ թղթով, իբրև թէ մեզանից(գրած). ինչպէս թէ Տէրի օրն եկած հասած լինի ։

3 Ձի լինի որ ամէն խաբէ ձեզ, և խոկի մեր բանով եղ. պատճառն որ (նա չի գալ) եթէ ոչ առաջ գայ ան ապստամբութիւնն և յայտնուի անօրէնութեան մարդն՝ կորուստի որդին,

4 Հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ աստուած, կամ պաշտօն. մինչև նստել նմա ի տաճարին Աստուծոյ, և ցուցանել զանձն՝ թէ աստուած իցէ:

5 Ոչ յիշէք զի մինչ առ ձեզն իսկ էի ասէի զայս:

6 Եւ արդ դուք ինքնին գիտէք զայն՝ որ ունին յայտնել նմա յիւրում ժամանակի:

7 Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զործանայ. բայց յայնժամ մինչ ի միջոյ բարձցի՝ որ այժմ ունի:

8 Եւ ապա յայտնեսցի անօրէնն, զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ:

9 Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է, ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք ստովք:

10 Եւ ամենայն պատրանօք անիրաւութեան ի վերայ կո-

4 Նա հակառակողն՝ որ գոռոզացած է էն ամէնին վերայ՝ որ աստուած կամ աստուծոյ պաշտօն անուանված է. մինչև որ նա Աստուծոյ տաճարի մէջ կընստի և ի բան անձըն ցոյց կըտայ՝ թէ աստուած է:

5 Չէ՞ք յիշում՝ որ (ես) դեռքանի որ հենց ձեզ մօտ էի՝ էս բանըս ասում էի:

6 Եւ հիմի դուք ինքներդ գիտումէք էն՝ որ խափանումէ, որ նա իրան ժամանակումն յայտնըվի:

7 Ինչու որ անօրէնութեան խորհուրդն հենց հիմի զօրանում է. միայն թէ մինչև էն ժամանակն որ մէջ տեղիցն վերառնըվի նա՝ որ հիմի խափանումէ:

8 Եւ ապա կըյայտնըվի էն անօրէնն՝ որ Տէր Յն կըսատակէ իրան բերանի հոգով՝ և կըխափանէ իրան գալով յայտնութիւնովն:

9 Որ էն (անօրէնի) գալն սատանայի ներգործութիւնից է՝ ամէն զօրութիւնով և սուտ նշաններով և հրաշքներով:

10 Եւ ամէն անիրաւութեան խաբեբայութիւններով նո-

բուսեալոյն . փոխանակ դի զսէրն Ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին , և վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն :

11 Զի դատապարտեսցին ամենեքեան՝ որ ոչ հաւատացին Ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն :

12 Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր՝ եղբարք սիրեցեալք ի Տեառնէ, զի ընտրեաց զմեզ Աստուած ի սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ հոգւոյն՝ և հաւատովք Ճշմարտութեան :

13 Ըստ և կոչեաց զձեզ աւետարանաւն մերով ի փրկութիւն փառացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

14 Այսուհետև՝ եղբարք, հաստատուն կայէք՝ և պինդ կալարուք զաւանդութիւնսն, զոր ուսարուք, եթէ բանիւ և եթէ թղթով մերով :

15 Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և հայր մեր , որ սիրեաց զմեզ և ետ մեզ մխիթարութիւն

բանս վերայ՝ որ կորած են . նոյնահամար որ Ճշմարտութիւն սէրըն չընդունեցին, որ ապրին. հետև նոյնահամար Աստուած մոլորութեան ներգործութիւնըն կուղարկէ նոցա, որ հաւատան ստութեանն :

11 Որ դատապարտին ամենքն՝ որ չըհաւատացին Ճշմարտութեան, բայց հաւան կացան անօրէնութեան :

12 Բայց մենք պէտք է որ ամէն ժամանակ Աստուծոյ գոհանանք ձեզ համար՝ Տէրիկն սիրելի եղբարք, որ Աստուած սկզբէն ընտրեց մեզ՝ որ փրկութիւն ստանայք հոգւոյ սրբութենովն և Ճշմարիտ հաւատքովն :

13 Որ նորա մէջ ձեզ էլ կանչեց՝ մեր աւետարանովն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի փառաւոր փրկութեան մէջ:

14 Ուրեմն՝ եղբարք, հաստատեալ կայէք, և պինդ բռնեցէք էն աւանդութիւններըն որ սովորեցիք՝ թէ խօսքով և թէ մեր թղթով :

15 Բայց ինքն մեր Տէր Յիսուս Քրիստոսն և մեր հայր Աստուածն՝ որ սիրեց մեզ և յաւիտենական մխիթարու-

յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք ,

16 Մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս բարութեան :

Գլ· Գ·

1 Եւ յետ հասանելոյ՝ եղբարք, աղօթս արարէք ի վերայ մեր , զի բանն Տեառն ընթանայցէ . և փառաւորի՛ նոյնպէս յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզդ :

2 Զի ապերախտութիւն յոմանս բնաւ և յանզգամայ մարդոյ . զի ո՛չ ամենեցունն հն հաւատք :

3 Եւ հաւատարիմ է Տէր , որ և հաստատեսցէ զձեզ՝ և պահեսցէ ի չարէ անտի :

4 Վստահ եմք ի ձեզ Տրամբ , թէ զոր պատուիրեմք ձեզ , և առնէք՝ և առնիցէք :

5 Եւ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստուծոյ՝ և ի համբերութիւնն Քրիստոսի :

6 Պատուիրեմ ձեզ՝ եղբարք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոս, խոյս լինել ձեզանէ ամենայն եղբաւր անկարգ կենցաղավարի , և ոչ ըստ աւանդութեան զոր ընկալան ի մէնջ :

7 Զի դուք գիտէք զկերպ որպէս պարտ է նմանել մեզ , զի ո՛չ անկարգ կենցաղավարեցաք ի մէնջ :

8 Ո՛չ ինչ ի հացէ ուտէաք ձրի , այլ ի վաստակի և ի տքնութեան գիշեր և ցերեկ գործելով , զի մի՛ ոք ի ձէնջ ծանրացուցանիցէ :

9 Ո՛չ զի չիցէ մեզ իշխանութիւն , այլ զի զանձինս օրինակ տացուք ձեզ , զի նմանիցէք մեզ :

10 Զի և յորժամ էաք առ ձեզ , զայս պատուիրէաք ձեզ , եթէ որ չուզէ գործել՝ մի՛ և կերիցէ :

11 Զի լուաք ի մէնջ ոմանց անկարգ կենցաղավարելոց , ո՛չ գործելով զամենայն , այլ ընդ հետ ելանելով :

12 Եւ այսպիսեաց պատուիրեմք և յորդորեմք ի Տէր Յիսուս Քրիստոս , զի խաղաղութեամբ գործելով՝ զհաց իւրեանց կերիցեն :

13 Եւ դուք , եղբարք, մի՛ ձանձրանայք բարի գործելով :

14 Եւ եթէ ոք ո՛չ հնազանդի բանիս մերում՝ զայդ նշանակեցէք ի թղթոյ , և մի՛ խառնիք ընդ նմա , զի ամաչեսցէ :

15 Եւ մի՛ իբրև զթշնամի համարիք , այլ նուազուցէք զնա իբրև զեղբայր :

16 Ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ զխաղաղութիւն յամենայն ժամ և յամենայն տեղի : Տէր ընդ ամենեսեան ձեզ :

17 Ողջոյն իմ ձեռամբ Պաւղոսի , որ է նշան յամենայն թղթի , այսպէս գրեմ :

18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսեան ձեզ : Ամէն :

ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ստահակն գնայցէ. և ոչ լսեսջ աւանդութեանն՝ զոր ընկալարուք ի մէնջ։

7 Զի դուք ինքնին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմանիլ մեզ. և ոչ երբէք ստահակեցաք առ ձեզ։

8 Եւ ոչ ձրի պուրուք հաց կերաք, այլ ջանիւ և վաստակով գոյգ և գիշերկ գործէաք՝ վասն չծանրանալ ոմիք ի ձէնջ։

9 Ո՛չ եթէ չունէաք իշխանութիւն. այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանօգս լինել մեզ։

10 Քանզի մինչդեռ առ ձեզն իակ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի։

11 Լուաք զամանդ ի ձէնջ, թէ ստահակութեամբ կեան. գործ՝ ինչ ոչ գործեն, այլ յուլայեալ՝ հետաքրքիր ըլլին։

12 Ընդ այնպիսեսն պատուիրեմք՝ և աղաչեմք ի Տէր քաշվիք ամէն եղբարց, որ անկարգութեամբ են վարվում. և չէ թէ ինչ պատուիրեցինք մեզանից։

7 Ինչու որ դուք ինքներդ գիտեցիք թէ ինչպէս պէտք է ձեզ՝ որ մեզ նմանուիլ. նրանք. որ ձեզ մօտ իսկի ան կարգութեամբ չըլարվեցանք։

8 Եւ եւ ձրի (ոչ-փաց) իսկի մըրնի հացըն չըկերինք. բայց ջանքով և աշխատանքով գիշեր և ցերեկ գործում էինք, որ ձեզանից իսկի մըրնին ծանրութիւն չըտանք։

9 Ոչ թէ որ իշխանութիւն չունինք. բայց որ մեր անձներըս օրինակ տանք ձեզ՝ որ մեզ նմանուլ լինիք։

10 Ինչու որ երբոր հենց ձեզ մօտ էինք՝ էս էինք պատուիրում. թէ նա որ չըկամենայ գործել՝ թող էլ չուտէ։

11 Բայց ձեզանից մինքա նիսին համար լսում ենք՝ որ անկարգութեամբ են վարվում. մին բան չեն գործում՝ բայց ծուլացած հետաքրքիր մարդ են դալիս։

12 Այնպէսիներին պատուիրում ենք և աղաչում ենք Տէր

Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեսցեն՝ եւ զիւրեանց հայ կերիցեն։

13 Այլ դուք՝ եղբարք, մի ձանձրանայք զբարիս գործել։

14 Ապա եթէ ոչ ոք հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուհետեւ, դուք նշանակեսջիք զնա. եւ մի խառնակեսջիք ընդ նմա՝ զի պատկառեսցէ։

15 Բայց մի իբրեւ զթշնամի մի համարիջիք՝ այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր։

16 Ինքն Տէր խաղաղութեան՝ տայցէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս, Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ։

17 Ողջոյնս իմով ձեռն պօղոսի է, որ է նշանակ· յամենայն թուղթս այսպէս գրեմ։

18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ. ամէն։

Յիսուս Քրիստոսումն՝ որ հանդարտութեամբ աշխատեն եւ իրանց հայցն ուտեն։

13 Բայց դուք՝ եղբարք, մի ձանձրանաք բարիք գործելոյն։

14 Ապա թէ որ միանն չըհնազանդվի մեր խօսքիս էդ թղթովդ՝ դուք նշանեցէք նորան եւ մի խառնըվիվք նորա հետ՝ որ ամաչէ։

15 Բայց թշնամոյ պէս մի համարէք (նորան), այլ խրատեցէք նորան իբրեւ եղբայր։

16 Ինքն խաղաղութեան Տէրն տայ ձեզ խաղաղութիւն ամէն ժամանակ, եւ ամէն բանի մէջ, Տէրն ձեզ ամէնքդ հետ (լինի)։

17 Ողջոյնս իմ պօղոսիս ձեռնն է, որ նշան է ամէն թղթերուս. էսպէս եմ գրում։

18 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն ձեզ ամէնքդ հետ լինի. ամէն։

Թէոսողոնիկեցւոց վերջին երկրորդ(ին-ղէ) ամէնն, խաղաղութեան գրվեցաւ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻՈՑ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ, ԱՌԱՋԻՆ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ՝ և Քրիստոսի Յիսուսի յուսոյն մերոյ,

2 Տիմոթեոսի որդւոյ սիրելւոյ հաւատովք՝ շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։

3 Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս՝ մինչ երթայի ի Մակեդոնիա. զի պատուիրես տայցես ոմանոյ չլինել օտարուսմունս,

5 Եւ չհայիլ յառասպելս և ի տոհմամեայս անչափս, որ մանաւանդ խնդիրս յուզեն, և ոչ պաշտօնեութիւն Աստուծոյ հաւատովք։

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ մեր փրկիչ Աստուծոյ հրամանովն՝ և Յիսուսի Քրիստոսի մեր յուսոյն,

2 Տիմոթէոսի՝ սիրելի որդւոյս հաւատքով՝ շնորհք, ողորմութիւն, և խաղաղութիւն (լինի), Աստուծ հօրիցն և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցն։

3 Ինչպէս որ աղաչեցի զքեզ՝ որ երթեսոսուձի ճաս՝ երբոր ես գնումի մակեդոնիա՝ որ պատուիրես մին քանիսին՝ որ օտար ուսմունք չսովորցնեն։

4 Եւ մարդ չբռան առասպել բաներին և ազգահամարներին՝ որ չափ չունին և աւելի վիճաբանութիւններ են գործում, և չէ մեր Աստուծոյ անահասութիւնը՝ որ հաւատքով է։

5 Վասնզի գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ, և ի մաքուր խղճէ, և յանկեղծաւոր հաւատոյ։

6 Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնաբանութիւն դանիկ։

7 Կամին լինել վարդապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին՝ և ոչ վասն որոյ պնդեալն են։

8 Գիտեմք՝ եթէ բարւոք են օրէնք, եթէ ոք գնոսա օրինաբար կրեսցէ։

9 Հայց զայս գիտասցէ՝ զի ի վերայ արդարոյ օրէնք ոչ կան, այլ ի վերայ անօրինաց և անհնազանդից՝ ամպարշատաց և մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, հօր և մօր սպանողաց, մարդասպանաց,

10 պոռնկաց, արուապիտաց, մարդեղուաց, ստոց, ստերդմանց, և եթէ այլ ինչ ի նոյն հակառակ ողջամիտ վարդապետութեանն։

11 Որ ըստ աւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ։

5 Ինչու որ պատուիրանքի գլուխն՝ սէրն է, սուրբ սրտից, և բարի մտքից և անկեղծ հաւատքից։

6 Որ միք քանիսն նորանոյց խնդրից և ունայն բաների եւեթն դնային։

7 Կամենուն օրէնքի վարդապետ լինիլ և իրանք չեն իմանում և ոչ էլ են բաներըն՝ որ նորանց հետևում են։

8 Գիտումենք որ օրէնքն բարի է՝ եթէ որ միևն օրինաւոր կերպով վարէ նորան։

9 Հայց էս պէտք է գիտենայ՝ որ արդարներին վերայ օրէնք չըկայ՝ բայց անօրէններին, անհնազանդներին, ամպարիշտներին, մեղաւորներին, անսուրբներին, պիղծերին, հօր և մօր անարգողներին, մարդ սպանողներին.

10 Պոռնիկներին, արուապէտներին, մարդգողացողներին, սուտ ասողներին, սուտ երդում ուտողներին վերայ, և եթէ որ ուրիշ բան կայ՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեանն։

11 Որ երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին պէս է՝ որ ես հաւատարիմ էլայ նորան։

12 Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, զի հաւատարիմ համարեցաւ կալ ի սպասաւորութիւն։

13 Որ յառաջագոյն հայհոյիչ էի և հալածիչ և թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան և յանհաւատութեան գործէի։

14 Իսկ առաւել եղեն շնորհքք Տեառն մերոյ հաւատովքն և սիրով՝ որ ի Քրիստոս Յիսուս։

15 Հաւատարիմ է բանն՝ և ամենայն ընդունելութեան արժանի է, զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ։

16 Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս հանգոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն՝ յօրինակ այնոցիկ, որ հաւատալոցն իցեն ի նա՝ ի կեանսն յաւիտենից։

17 Այլ թագաւորին յաւիտենից՝ անեղի և անտեսանելւոյ միայն Աստուծոյ՝ փառք և պատիւ յաւիտեանս

12 Շնորհակալ եմ նորա՝ որ զօրացրուց զինձ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն, որ ինձ հաւատարիմ համարեաց և սպասաւորութեան մէջ դրաւ։

13 Որ ես առաջուց հայհոյօղ և հալածօղ և թշնամանօղ էի, բայց ողորմութիւն գտի. ինչու որ տգիտութեամբ և անհաւատութեամբ էի գործում էի։

14 Բայց էլ աւելի շատ եղաւ մեր Տէրի շնորհքն հաւատքովն և սիրովն՝ որ Քրիստոս Յիսուսումն է։

15 Ճշմարիտ է էս խօսքս և ամէն կողմանէ արժանի է ընդունելոյ՝ որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորներն փրկելոյ, որ նոցանից գլխաւորն ես եմ։

16 Բայց նրա համար (ես) ողորմութիւն գըտի. որ առաջ ինձանումն Յիսուս Քրիստոս ցոյց տայ ամէն երկայնմտութիւնըն. որ օրինակ լինի նոցանից՝ որ հաւատալու են նորան յաւիտենական կեանքըն (ստանալոյ) համար։

17 Բայց յաւիտենական թագաւորին՝ էն անապական, անտես և աներևութիւն, էն մին Աստուծոյն՝ (լինի) փառք

յաւիտեանից · ամէն ։

18 Զայս պատուիրան ա-
ռանդեմ քեզ՝ որդեակ իմ
Տիմոթէոս , ըստ կանխակաց
ի քեզ մարգարէութեանցն,
զի զոս զինուորիցիս նոքօք
զգեղեցիկ զինուորութիւնն ։

19 Ունիկիս հաւատս սըր-
բովք մնօք , զոր ոմանք
մերժեալ յանձանց իւրեանց՝
նաւակոծեցան ի հաւատս ։

20 Որոց սակի են՝ Հիմենոս
և ալէքսանդրոս, զորս մատ-
նեցի սատանայի, զի խրատես-
յին չհայհոյել ։

և պատիւ յաւիտեանս յա-
ւիտենից · ամէն ։

18 Այս պատուիրանքս ա-
ւանդեմ քեզ՝ իմ տիմո-
թէոս որդեակս, ըստ մարգա-
րէութիւններին պէս, որ ա-
ռաջուց քեզ վերայ ելան· որ
նորանցով բարի զինուորու-
թեամբ պատերազմիս ։

19 Ունենալով ուրախու-
սութիւն մտքով · որ նորան
մին քանիսն դուրս քցեցին
իրանց անձերիցն և հաւատ-
քումն նաւակոծութիւն քա-
շեցին ։

20 Որ նորանց միջումն են
Հիմենոսն և ալէքսանդրոսն՝
որ նորանց մատնեցի սատա-
նային՝ որ խրատվին չլհայհո-
յել ։

ԳԼ· Բ ։

1 Ես արդ ապաչեմ, նախ
քան զամենայն առնել ա-
զօթս, խնդրուածս, պաղա-
տանս, գոհութիւնս վասն ա-
մենայն մարդկան ։

2 Վասն արքայից և ամենայն իշխա-
նաց , զի խաղաղութեամբ և
հանդարտութեամբ վարես-
ցուք զկեանս մեր , ամենայն
աստուածապաշտութեամբ և
սրբութեամբ ։

1 Սրահամար ապաչումիմ,
որ ամենից առաջ ազօթք
անըվի , խնդրուածք , ապա-
չանք, գոհութիւն ամենմարդ-
կանց համար ։

2 Վանաւանդ թագաւոր-
ներին և ամէն իշխաններին
համար· որ խաղաղութենով և
հանդարտութենով մեր կեան-
քըն վարենք · ամէն աստը-
ւածապաշտութենով և սըր-
բութենով ։

3 Զի այն է քարի և ընդունելի առաջի վրկչին մերոյ Աստուծոյ ։

4 Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն, և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ։

5 Զի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս ։

6 Որ եւս զանձն վրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն ժամանակաց իւրոց ։

7 Ցոր եդայ ես քարոզ և առաքեալ. ճշմարիտ ասեմ ՚ի Քրիստոս՝ և ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք և ճշմարտութեամբ ։

8 Կամիմ՝ զի արք կայցեն յամենայն տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս ՚ի վեր առանց բարկութեան և երկմտութեան ։

9 Նոյնպէս և կանայք ՚ի զարդ խոնարհութեան՝ ակնածութեամբ և պատուոյ զարդարել զանձինս. մի ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ՚ի հանդերձս պատուականս.

3 Ինչու որ էն է բարի և ընդունելի մեր փրկիչ Աստուծոյ առաջին ։

4 Որ կամենուի՝ որ ամէն մարդիկ ապրին՝ և դէպի ճշմարտութեան գիտութիւնն գան ։

5 Պատճառն որ մին Աստուած կայ և մին միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ՝ Յիսուս Քրիստոս մարդն ։

6 Որ իւրան անձնն ամէնին համար փրկութեան պին տուաւ, որ վկայութիւնն իւրան ժամանակներուն ։

7 Որ ես նորա քարոզիչ և առաքեալ կարգուեցայ. ճշմարիտն ասում Քրիստոսում և սուտ չեմ խօսում. (ես) էյայ հեթանոսներն վարդապետ հաւատքով և ճշմարտութեով ։

8 (Ուրեմն) կամենում՝ որ մարդիկ ամէն տեղ աղօթք անեն. սուրբ ձեռներն վեր քաշելայնին առանց բարկութեան և երկմտութեան ։

9 Նոյնպէս էլ կանայքն խոնարհութեան զարդարանքով, ամօթխածութենով և պատուութենով իրանց անձներըն զարդարեն. չէ թէ ոսկէ հիւսվածներով մարգարիտներով շալած՝ կամ պայծառ շորերով ։

10 ԱՅԼ որպէս վայելէ կանանց պատուաճպաշտութիւն յանձնառելոց գործովք բարեաց։

11 Կին մարդ ցածութեամբ ուսցի՝ ամենայն հնազանդութեամբ։

12 ԱՅԼ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ձեռնաբան լինել քան զայր մարդ, այլ ի լռութեան կալ։

13 Զի ադամ նախ ստեղծաւ՝ և ապա եւայ։

14 Եւ ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ և յանցաւ։

15 Բայց կեցցեն վասն որդեծնութեանն՝ թէ կացցեն ի հաւատս և ի սէր և ի սրբութիւն պարկեշտութ։

10 Բայց ինչպէս որ վայել է են կանանց՝ որ աստուածապաշտութիւնըն անձներըն են առել՝ բարի գործքերով։

11 Կինն թող ցածութեամբ սովորի՝ ամէն հնազանդութեամբ։

12 Կնկան հրաման չեմ տալիս՝ որ սովորցնէ և ոչ էլ մարդուն տէրի խօսք խօսի՝ բայց որ լռեա կենայ։

13 Պատճառն որ ադամ առաջ ստեղծվեցաւ, և յետոյ եւան։

14 Եւ ադամ չըխաբվեցաւ՝ բայց կինն խաբվեցաւ և մեղք գործեց։

15 Միայն թէ կապրի որդեծնութեան համար՝ թէ որ կենայ հաւատքով և սիրով և սրբութենով պարկեշտութեան հետ։

ԳԼ· Գ։

1 Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ։

2 Պարտ է եպիսկոպոսին անսպառ լինել, միոյ կնոջ այր, հեզ, ցած, պարկեշտ,

1 Ճշմարիտ է էս խօսքս, թէ որ մինն եպիսկոպոսութեան ցանկանայ՝ մին բարի գործոյ է ցանկանում։

2 Եպիսկոպոսին պէտք է որ անարատ լինի, մին կնկան մարդ, հեզասիրտ, խոնարհ,

հիւրասէր՝ ուսուցիչ.

3 Մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, այլ հանդարտ, մի՛ կռուօղ, մի՛ արծաթասէր։

4 Զի իբրեւ մանն խակ բարւոք վերակացու լիալ իւղ. որդեակս ունիցի, որ՝ ի հնազանդութեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ։

5 Եպա եթէ ոք իբրեւ մանն վերակացու չգիտիցէ լինել, զկարդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի։

6 Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ՝ ի դատաստանս սատանայի անկանիցի։

7 Այլ պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել. զի մի՛ ի նախատինս անկանիցի՝ և յորոգայթս սատանայի։

8 Նոյնպէս և զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զշաքաղս.

9 Այլ ունիցին զխորհուրդ հաւատոյն սուրբ մտօք։

պարկեշտ, օտարասէր՝ սովորցնօղ.

3 Ձի՛ թէ նախատինք մըւօղ՝ և ո՛չ զարկօղ, քայց հանդարտ, չի՛ թէ կռիւանօղ, և ո՛չ արծաթասէր։

4 Որ հենոյ իրան տանն քարի վերակացու էլած լինի. որ որդիքներ ունենայ՝ որ հնազանդ են ամէն պարկեշտութեան։

5 Քայց թէ որ միեն չը գիտենայ իրան տանն վերակացու լինիլ՝ ինչպէս նա՞ եկեղեցոյն հոգաբարձու կը լինի։

6 Ո՛չ թէ հաւատքն նոր եկած՝ որ չըլինի թէ գոռոզանայ և սատանայի դատաստանի մէջն ընկնի։

7 Քայց պէտք է նորան, որ դըրսեներիցն էլ քարի վկայութիւն ունենայ. որ նախատինքի և սատանայի որոգայթին (Տալակէն) մէջ չընկնի։

8 Նոյպէս էլ սարկաւագներն (պէտք է) պարկեշտ լինին, ո՛չ երկու կերպ խօսող, ո՛չ գինեսէր, ո՛չ պիղծ շահ սիրող.

9 Քայց հաւատքի խորհուրդըն սուրբ մտքով ունենան։

10 ինքեանք նախ փորձեսցին, և ապա ի պաշտօնն մատիցեն, կի անարատք իցեն։

11 Նոյնպէս և կանայք նոցա պարկեշտք· մի չարաբասք, հեզք, հաւատարիմք յամենայնի։

12 Սարկաւագք լինիցին միոյ կնոջ ալք, որք որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ իցեն, և տանց իւրեանց։

13 Զի որ բարւոքն պաշտիցեն, աշխիճան բարի անձանց իւրեանց շահին, և բազում համարձակութիւն ի հաւատն՝ որ ի Քրիստոս Ցիսուս։

14 Զայս գրեմ առ քեզ՝ կի ակնունիմ ի մօտոյ գալ։

15 Ապա թէ յամեցից՝ կի գիտասցես, թէ ո՞րպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել· որ է եկեղեցի կենդանւոյ Աստուծոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան։

16 Եւ յայտնի խոկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան· որ երևեցաւ մարմնով՝ արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ հրեշտա-

10 իրանք առաջ թմղ փորձվին, և յետոյ են պաշտօնի մէջ մտնեն՝ որ անապատ լինին։

11 Ինպէս էլ նորանց կանայքն(պէտք է)պարկեշտ(լինին) չէ թէ չարախօս, հեզահոգի, ամէն բանի մէջ հաւատարիմ։

12 Սարկաւագներն (պէտք է) մին կնկան մարդիկ լինին, որ իրանց որդոցն բարի վերակացու էլած լինին՝ և իրանց տըներին։

13 Ինչու որ նորանք, որ պաշտօնըն լաւ են կատարում՝ իրանց անձնելին համար բարի աստիճան են շահվում՝ և շատ համարձակութիւն են հաւատքումն՝ որ Քրիստոս Ցիսուսումն է։

14 Ես գրում քեզ՝ որ էլ յոյս ունիմ որ մօտիկ ժամանակում գամ։

15 Իսայց թէ որ ուշանամ՝ որ գիտենաս թէ ինչպէս պէտք է վարվիլ Աստուծոյ տան մէջն· որ են կենդանի Աստուծոյ եկեղեցին է, ճըշմարտութեան սիւն և հաստատութիւն։

16 Եւ յայտնի էլ մեծ է Աստուածապաշտութեան խորհուրդն, որ նա երևեցաւ մարմնով, արդարացաւ հոգով, յայտնըվեցաւ հրեշտակներին՝

կայ՝ քարոզեցաւ ՚ի հեթա-
նոսս՝ հաւատացաւ եղև յաշ-
խարհի՝ և վերացաւ փառօք։

քարոզվեցաւ հեթանոսներին,
հաւատացվեցաւ աշխարհ-
քումն և վերացաւ փառքով։

ԳԼ Դ։

1 Ա.ՅԼ հոգին սուրբ յայտ-
նապէս ասէ. թէ ՚ի ժամա-
նակս յետինս՝ քակեսցին ո-
մանք ՚ի հաւատոյն. և հայես-
ցին յայս մոլորութեան,
և ՚ի վարդապետութիւնս դի-
ւաց,

2 կեղծաւորութիւն ստա-
բանք, խարեալք իւրեանց
խղճիւն մատց։

3 Որ արգելուցուն յա-
մուսնանալոյ, և ուկնկից՚ն ՚ի
կերակրոց՝ զոր Աստուած
հաստատեաց ՚ի վայելել հա-
ւատացելոյ, և ոյք գիտացել
իցեն ՚ի ճշմարտութեանն
վերայ։

4 Զի ամենայն արարածք
Աստուծոյ բարի են, և չիք
ինչ խոտան. մանաւանդ որ
դոհութեամբ ընդունիցին։

5 Զի սրբի բանիւն Ա-
ստուծոյ՝ և աղօթիւք։

6 Զայս խրատ տուեալ
եղբարց՝ բարւոք պաշտօնեայ
լինիցիս Քրիստոսի Յիսուսի,

1 Բայց սուրբ հոգին
յայտնի ասումէ, թէ յետին
ժամանակներուն մինչեւին
հաւատքին կըհեռանան, և
մոլորութեան հոգիներուն և
դեւերու վարդապետութեան
ներուին մտիկ կըտան։

2 Նորանց որ կեղծաւորու-
թեամբ սուտ են խօսում և
իրանց խըղճմտանքին տագ-
ւած են։

3 Որ պսակվելուն կարգե-
լեն և կըհրաժարեն են կե-
րակուրներիցին՝ որ Աստուած
ստեղծեց՝ որ նորանց վայելին
հաւատացեալներն և նորանք
որ ճշմարտութիւնըն ճանա-
չել են։

4 Պատճառն որ Աստու-
ծոյ ամեն ստեղծուածներն բա-
րի են, և խակի մին բան ա-
նարգելի չէ. մանաւանդ են
որ գոհութեամբ ընդունվում։

5 Ինչու որ՝ Աստուծոյ խօս-
քովն և աղօթքով սրբվում։

6 Այս խրատը որ եղբար-
ներին տաս՝ Քրիստոսի Յի-
սուսի քաջի պաշտօնեայ կը-

ինանիցիս բանիւք հաւատոց, և բարւոք վարդապետու-
թեամբն՝ զորոյ զհետ իսկ եղեր։

7 Ա.ՅԼ ՝ի սիրէ բանիւ՝ և յառաջադրեալ պատաւանեայ հրաժարեսջի՛ր, բայց կրթեա զանձն քո յաստուածպաշտուելիւն։

8 Զի մարմնոյ կրթուելիւն առ սակաւ ինչ օգտակար է· իսկ աստուածպաշտուելիւն առ ամենայն ինչ օգտակար է· և վաւերիս կենաց ունի՝ զարդիս և ղհանդերձելոցն։

9 Հաւատարիմ է բանս՝ և ամենայն ընդունելութեան արժանի է։

10 Զի ՝ի սոյն իսկ վաստակեմք՝ և նախատինս յանձն առնումք· վի յուսացեալ եմք Ա.Ստուածդ կենդանի, որ է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց։

11 Պատուէր տուջիր զայդ՝ և ուսուցանիջի՛ր։

12 Զի մի ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ։ այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք՝ դիտցիւք՝ սիրով, հաւատովք, սրբութեամբ։

լինիս՝ կրճեծանաս և կապրիս հաւատքի խօսքերովն և էն բարի վարդապետութենովն՝ որ նորան հետևեցիր։

7 Բայց սիրէ խօսքերիցն և պատաւներէ առասպելներիցն՝ կեաց կա՛ց՝ բայց վարժացրու քո անձըդ աստուածապաշտութեանումն։

8 Ինչու որ մարմնոյ վարժութիւնն քիչ բանի համար օգուտ ունի· բայց աստուածապաշտութիւնն ամէն բանի համար օգուտ ունի, և հի միկվան և նոր գալու կենաց աւետիքըն ունի։

9 Ճշմարիտ է ինս բանս՝ և ամէն կողմանէ արժանի է ընդունվելոյ։

10 Ինչու որ հենց սրահամար աշխատումենք և նախատինք ենք քաշում՝ որ կենդանի Աստուծոյ վերայ յոյսըն ենք դրել, որ նա փրկիչ է ամէն մարդկանց, և մանաւանդ հաւատացեալներին։

11 Ընդ բանըդ պատուիրիր և սովորցրու։

12 Ըլինի որ միոն քո տղայութիւնըդ անարգէ· բայց օրինակ լինիր հաւատացեալներին խօսքերով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութեամբ։

13 Մինչև գամ ես, մինչ դիր ընթերցուածոց միխիթարութեան՝ վարդապետութեան։

14 Մի անփոյթ առներ զշնորհացդ՝ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան։

15 Զայդ խորհեաց՝ և ի դմին կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։

16 Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ՝ և ի դմին յամեսջիր, զայդ եթէ առնիցես՝ և զանձն ապրեցուցես, և զայնոսիկ՝ որ քեզ լսիցեն։

13 Մինչև որ գամ՝ միտք դիր կարդալոյ մունքին, յորդորմունքին և վարդապետութեանն։

14 Անհոգ մի լինիր ընդ շնորհքին համար՝ որ քեզ անուամ է, որ տրվեալ քեզ մարգարէութեամբ երէցցներէն ձեռնադրութենիդ։

15 Այդ մտածիր զորանում ջանք արա որ քո առաջանալն ամենին յայտնի լինի։

16 Զգոյշ կաց անձիդ և վարդապետութեանդ. և զորանում մնա. էդ թէ որ առնես՝ քո անձըդ կապրեցնես և նորանց էլ՝ որ քեզ կլսեն։

ԳԼ. Ե։

1 Զերն մի պատուհասանեսցես, այլ միխիթարեսջի՛ր իբրև զհայր, զերիտասարդս իբրև զեղբարս։

2 Զպառաւունս իբրև զմայրս, զմանկամարդս իբրև զքոյր՝ ամենայն սըրբութեամբ։

3 Զայրիս պատուեա, որ առցէ այրիքն իցեն։

1 Ծեր (մարդոյն) սաստիկ մի յանդիմաներ՝ բայց յորդորիր նորան ինչպէս հօր. երիտասարդներին՝ ինչպէս եղբարներին։

2 Պառաւներին՝ ինչպէս մարը. մատղաշ կանանց ինչպէս քրվերը ամէն սրբութեամբ։

3 Որբևէրիներին պատուիր՝ նորանց որ ճշմարիտ որբևէրի են։

4 Ասպա թէ ոք այրի՝ որդիս և թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել՝ և զփոխարէնս հատուցանել ծնողացն. զի այն է բարի՝ և ընդունելի առաջի Աստուծոյ ։

5 Իսկ որ ձշմարիտ այրին էյե. և մենացեալ յուսացեալ յԱստուած, և կանխեալ յաղօթս և ի խնդրուածս զցայգ և զցերեկ ։

6 Իսկ դիրգ այրին՝ կենդանացեալ մեռեալ է ։

7 Զայս պատուիրեա՝ զի անարատք իցեն ։

8 Իսկ եթէ ոք իւրոց՝ և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, ի հաւատոյն ուրացեալ է՝ և չար ևս քան զանհաւատսն է ։

9 Այրի ընդ այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ ։

10 Ի գործս բարիս վկայեալ, եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ պհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ զամենայն գործոյ

4 Բայց եթէ որ մին որբևէրի որդիք և թոռունք ունիցի՝ թող (նորանք) առաջ ստվօրին իրանց տանն բարի առնել և ծնօղաց փոխ հատուցանել. ընչո որ կն է բարի և Աստուծոյ առաջին ընդունելի ։

5 Բայց նա՝ որ ձշմարիտ որբևէրի է և մենակ կացած՝ յոյսն Աստուծոյ վրայ է դնում և գիշեր և ցերեկ աղօթքին և աղաչանքին է հաճում ։

6 Բայց փափկասէր որբևէրին՝ հենց կենդանի մեռած է։

7 Ընս պատուիրիր՝ որ անարատ լինին ։

8 Բայց եթէ որ մին իրանն. րին և մանաւանդ ընտանիքներին համար հոգս չունենայ՝ նա հաւատքին ուրացած է և անհաւատներիցն էլ չար է։

9 Ընն որբևէրին որբևէրների կարգին մէջ դասվի՝ որ վաթսուն տարուց պակաս չէ՝ և մին մարդոյ կին էլած է ։

10 Ընս բարի գործքերով վկայված է՝ որ երեխաներ մեծացրած լինի, որ օտարներին ընդունած լինի, որ սրբերի ոտներըն լուացած լինի, որ նեղացածներին ձեռնտուած լինի, որ ամէն բարի գործքե.

բարեաց գՀետ երթեալ ի-
նչ ։

11 Ա՛յլ ի մանկամարդաց
այրեացն հրաժարեաւ, զի յոր-
ժամ խայտան զՔրիստոսիւ՝
ամուսնանալ կամին ։

12 Իսկ զդատաստանն ըն-
դունին, զի զառաջինն հա-
ւատոյն արհամարհեցին ։

13 Մանկամայն և դատար-
կաճառունք ուսանին՝ շրջելք
տանէ ի տուն. և ոչ միայն
դատարկք այլ և վատաբուք
և հետաքրքիրք. և խօսին՝
որ ինչ ոչ է պիտոյ ։

14 Կամիմ զմանկամար-
դացդ ամուսնանալ, որդիս
ծնանիլ, տնարարս լինել, և
մի ինչ պատճառս տալ հա-
կառակողդին ի հայհոյու-
թեան ազգս ։

15 Զի արդէն իսկ ոմանք
խոտորեցան զկնի սատանայի ։

16 Եթէ որ հաւատացեալ
այրիս ունիցի՝ բաւական լի-
չի նոցա, և մի ծանրասցի
եկեղեցւոյն. զի զՀշմարիտ
այրեացն բաւական լինիցի ։

բին հետևած լինի ։

11 Բայց մատղաշ որբևէ-
րիներուց չհետ կաց. ինչու որ
երբոր ուրախութենով աւե-
լանումն՝ Քրիստոսին հա-
կառակ՝ կամենումն պսակվիլ ։

12 Նո դատաստան են ըն-
դունում իրանց վերայ՝ որ ա-
ռաջին հաւատքըն դէն քցե-
ցին ։

13 Այսպէսերայ էլ դործքից
դատարկ ձևալ են սովորում
տանից տուն մանդալով. և
չէ թէ միայն դատարկ, բայց
էլ շատախօս և հետաքրքիր.
և խօսումն ինչ որ պէտք չէ ։

14 Կամենումիմ որ մատղաշ
որբևէրիներն պսակվին, որ-
դիք ծընին, տընաշէն լինին.
և հակառակողին իսկի պատ-
ճառ չըտան՝ հայհոյանք տա-
լոյ ։

15 Ինչու որ հենց հիմիկ
մին քանիսն Հանապարհից
դուրս գնացին սատանայի ե-
տևէն ։

16 Թէ որ մին հաւատա-
ցեալ որբևէրիներ ունենայ՝
նա թող հոգս տանէ նոցանց
համար՝ և եկեղեցւոյն ծան-
րութիւն չըտայ. որ Հշմա-
րիտ որբևէրիներին բաւա-
կան լինի ։

17 Որ բաւեսք վերակացու լինին երիցուն՝ կրկին պատուոյ արժանի եղիցին · մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ։

18 Գրոց ասէ գիր · մի կապեսցես զցուլ եղեն կալոտուոյ · և արժանի է մշակն վարձու իւրոյ ։

19 Ընդ երիցուէ չարախօսութիւն մի ընդունիցես · բայց եթէ երկուք՝ և երիւք վկայիւք ։

20 Իսկ որ մեղանչեն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա , պն և այլքն երկիցեն ։

21 Ի կայսրութիւն պնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի՝ և ընտրելոց հրեշտակաց , պն զպղ պահեսցես առանց մատաճառութեան · մի ինչ առնել առանց ։

22 Զեռս վաղվաղակի յորում վերայ մի դնիցես , և մի կցորդ լինիցես մեղաց օտարաց · զանձն քո սուրբ պահեսջի՛ր ։

23 Ոչ յաւեհաւ մի ջուր և եթ լմպիցես՝ այլ սակաւիկ մի և գինի խառնեսջի՛ր վասն

17 Երիցունքն որ լաւ վերակայութիւն են անում՝ թոդ երկուապատիկ պատուոյ արժանի լինին · և մանաւանդ նոքանք որ խօսքով և վարդապետութեամբ են աշխատում ։

18 Պատճառն որ գիրքն ասումէ՝ (թէ) կալի մէջն աշխատող եղի դունչըն մի կապիր · և (թէ) մշակն արժանի է իրան վարձքին ։

19 Երիցու վերայ չարախոսութիւն մի ընդուներ, բայց միայն երկու կամ երեք վկայով ։

20 Բայց նորանք՝ որ մեղք են գործում , ամէնի առաջին յանդիմանիր՝ որ ուրիշներն էլ վախենան ։

21 Ի կայսրութիւն եմ դնում Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի և ընտրված հրեշտակների առաջին՝ որ էդ պահես առանց քո մտքի հաճոյութեան նայելոյ · խակի մին բան չանես երեսպաշտութեամբ ։

22 Ձեռըն շուտով մի դներ մէնի վերայ , և ուրիշների մեղայն մասնակից մի լինիր · քո անձըդ սուրբ պահիր ։

23 Ոչ յաւեհաւ մէնակ ջուր չը խմես , բայց մինչիչ գինի էլ խառնիր քո ստամոքսի և

ստամոքսի և ստէպ հիւանդութիւններ։

24 Են մարդք՝ որոց մեղքքն յայտնի են՝ և յառաջագոյն հասեալ ի դատաստան, և են՝ որոց զկնի երթան։

25 Նոյնպէս և բարի գործքն յայտնի են. և որ այլապէս ևս լինիլ կարեն՝ թաքչել ոչ կարեն։

շուտ շուտ հիւանդութիւններ հար։

24 Կան մարդիկ՝ որ նորանց մեղքերն յայտնի են և առաջ դատաստանի մէջ հասած. և կան էլ որ հետևէն գալիս են (յայտնըվլումն)։

25 Նոյնպէս էլ բարի գործքերն յայտնի են. և ուրիշ կերպ էլ որ լինին՝ չեն կարող ծածուկ կենալ։

ԳԼ. Զ։

1 Որ միանգամ ընդ լծով Ծառայութեան իցեն, զնոսբաքանչիւրն տեարս պատուի արժանի համարեսցին. զի մի անուն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի։

2 Իսկ որ հաւատացեալ տեարս ունիցին մի արհամարհեսցեն, զի եղբարք են. այլ առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալքն են և սիրելիք. որք զբարերարութիւն յանձինս ունիցին. զայս ուսուցանիջիր՝ և մխիթարեսջիր։

3 Իսկ եթէ ոք այլազգի՛ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ առողջաւորութեան բա-

1 Նորանք որ ծառայութեան լծի տակն են՝ ամէն մէկն թող իրանց տէրերին պատուոյ արժանի համարեն. որ Աստուծոյ անունն և վարդապետութիւնն չհայհոյվի։

2 Բայց նորանք որ հաւատացեալ տէրեր ունին՝ չլինի որ անարգեն, նրահամար որ եղբարք են. բայց էլաւելի ծառայութիւն անեն, նրահամար որ հաւատացեալ և սիրելի են՝ որ բարերարութեան մասնակից են. էս սովորցրու և յորդորիր։

3 Բայց թէ որ մինն ուրիշ կերպով սովորցնէ և մտիկ չըտայ մեր Տէր Յիսուսի Քրի-

նից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ աստուածապաշտութեան վարդապետութեանն։

4 Ականջալիրն հպարտացեալ է, և ոչ ինչ ոչ գիտէ· այլ տապալ ի խընդիրս և ի բանս հակառակութեան· ուստի լինին նախանձ, հերձ, հայհոյութիւն, կարծիք չարեաց,

5 խարդախութիւնք ապականեալոց մտաց մարդկան և օտարացելոց ի ճշմարտութենէ, որ շահավաճառ համարին զաստուածապաշտութիւնն· բայց դու մերժեսջիր յայնպիսեացն։

6 Այլ շահավաճառ մեծ աստուածապաշտութիւն է՝ բաւականութեամբ հանապիտի։

7 Զի ոչ բերաք ինչ յաշխարհս՝ և ոչ տանել ինչ կարասցուք։

8 Այլ ունելք կերակուր և հանդերձս, և այսու շատասցուք։

9 Իսկ որք կամին մեծանալ՝ անկանին ի փորձութիւն և յորոգայթ, և ի ողջամիտ խօսքերին և էն վարդապետութեանն՝ որ աստուածապաշտութեանն կըվայելէ։

4 Ականջալսի մարդն գոռոզացած է և իսկի բան չի՛ գիտուամ· բայց այրվուամ վիճաբանութիւններով և հակառակութեան խօսքերով, որ նորանից լինուամ նախանձութիւն, կռիւ, հայհոյութիւններ, չար կարծիքներ,

5 խարդախութիւններ մարդկանց՝ որ մտքով ապականած և ճշմարտութենից օտարացած են· որ աստուածապաշտութիւնը շահկան արհեստ են համարում· բայց դու կ՚ետ քաշվիր էնպէսիններից։

6 Բայց մեծ շահ է աստուածապաշտութիւնն բաւականութեան հետ։

7 Պատճառն որ իսկի բան չենք բերել ես աշխարհքս՝ և էլ չենք կարենալ մին բան դուրս տանիլ։

8 Բայց լիճ որ կերակուր և շորեր ունինք, էլ նորանով բաւական լինինք։

9 Բայց նորանք որ կամենումն հարստանալ՝ փորձութեան և որոգայթի (Տես 4։)

բազում ցանկութիւնս ան-
միտս և ցնաոսակաս. որք
ընկղմեն զմարդիկ ՚ի սատա-
կուած և ՚ի կորուստ :

10 Զի արմատ ամենայն
չարեաց արծաթասիրութիւն
է. որում ոմանք ցանկա-
ցեալ՝ վրիպեցան ՚ի հաւա-
տոյն, և զանձինս արկին ըզ
բազում ցաւովք :

11 Իսկ դու՝ ով մարդ
Աստուծոյ, փախիր յայնցա-
նէ, և երթ զհետ արդարու-
թեան, պաստուածապաշտու-
թեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբե-
րութեան, զհեզութեան :

12 Եւ մարտիր զբարւոք
մարտն հաւատոյ, և բռնա-
հար ընկալ զկենացն յաւիտենակա-
նից՝ յոր կոչեցարն, և դաւա-
նեցեր զբարւոք դաւանուին
առաջի բազում վկայից :

13 Պատուիրեմ քեզ ա-
ռաջի Աստուծոյ՝ որ կեն-
դանի առնէ զամենայն, և
Յիսուսի Քրիստոսի՝ որ
վկայեաց առաջի պոնտացւոյ
պիղատոսի զբարւոք դաւա-
նութիւնն,

14 Պահել քեզ զպատը-
ւիրանն անբիծ՝ անարատ,
մինչև ՚ի յայտնութիւն Տ-
ն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

և շատ անմիտ և ցնաոսակաց
ցանկութիւնների մէջ են ընկ-
նում. որ մարդկանց սատակու-
մն և կորուստի մէջ են բցում :

10 Պատճառն որ ամէն չա-
րի արմատն (հեղն) արծաթի
սէրն է. որ մին քանիսն յան-
կացան նորան և հաւատքից
թեքվեցան և իրանց անձները
շատ ցաւի մէջ քցեցին :

11 Բայց դու՝ ով աստուծոյ
մարդ, փախիր նորանցից, և
հետևիր արդարութեան, աս-
տուածապաշտութեան, հա-
ւատքին, սիրոյն, համբերու-
թեան, հեզութեան :

12 Եւ պատերազմիր հա-
ւատքի բարի պատերազմով
և պինդ բռնիր յաւիտեանա-
կան կեանքըն՝ որ նորա մէջ
կանչվեցար, և դաւանեցիր
բարի դաւանութիւնն շատ
վկաների առաջին :

13 Պատուիրում եմ քեզ Աս-
տուծոյ առաջին, որ ամէն բան
կենդանի է անում, և Յի-
սուսի Քրիստոսի առաջին՝ որ
բարի դաւանութիւնն վկայեց
պոնտացի պիղատոսի առաջին,

14 Որ դու պատուիրանքըն
մաքուր և անարատ պահես
մինչև մեր Տէր Յիսուսի Քրի
յայտնութիւնն :

15 Զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին՝ և միայն հզօր, թագաւոր թագաւորաց և Տէր տերանց։

16 Որ միայն ունի զանմահու-թիւն՝ բնակեալ ՚ի լոյս ան-մատոյց. զոր ոչ ոք եհաս ՚ի մարդկանէ՝ և ոչ տեսա-նել կարօղ է. որոյմ պա-տիւ և զօրութիւն յաւի-տեանս. ամէն։

17 Մեծատանց՝ որ են յայսմ աշխարհի, պատուէր տացի՛ր՝ մի հպարտանալ և մի յու-սալ ՚ի մեծութիւն մնոտի, այլ Աստուած՝ որ տայ մեզ ամենայն առատապէս ՚ի վայելել։

18 Զբարիս գործել, մե-ծանալ գործովք բարութե-ան, առատս, սիրուն, հաղորդս լի-նել.

19 Գանձել անձանց հիմն բարի ՚ի հանդերձեալս. զի բուռն հարկանիցեն զճշմա-րիտ կենացն։

20 Ո՛վ տիմոթէէ՝ պահեա զաւանդն՝ խոտորեալ ՚ի պըղ-ծոց և ՚ի նորաձայն բանից և ՚ի հակառակութիւնս և ՚ի մոլարանուն կիսութենէ։

15 Որ ժամանակին իրեն ցոյց կուտայ Երանելին եւ միայն Հզօրը, Թագաւորներուն Թագաւորը եւ Տէրերուն Տէրը։

16 Որ միայն անմահութիւն ունի՝ անմատչելի լոյսի մէջ բնակած. որ մարդկանցից իսկի մինն չէ տեսած նորան եւ ոչ էլ կարող է տեսնել. նորան (լինի) պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն։

17 Հարուստներին՝ որ էս աշխարհումն են՝ պատուիրիր որ չհպարտանան, եւ ունայն մեծութեան վերայ յոյսը չդնեն, բայց Աստուծոյ վերայ՝ որ ամէն բան տալիս է մեզ լիութեամբ՝ որ վայելենք։

18 Որ բարին գործեն, բարի գործքերով հարըստանան, առատաձեռք, սիրելի, հաղորդող լինին։

19 Իրանց անձներին համար բարի հիմն դիզեն նոր եկողներուն. որ ճշմարիտ կեանքն ձեռք բերեն։

20 Ո՛վ տիմոթէէ՝ պահիր (քեզ տրվածը) աւանդը. և չհետ կայ պիղծ եւ նորաձայն խօսքերիցն եւ սուտ անուն ունող գիտութեան հակառակութիւններիցն։

21 Որ նորան միևքանիսն ընդունեցին և հաւատքիցն լքեցվեցան, շնորհքն քեզ հետ լինի· ամէն ։

21 Զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց անտի, շնորհք ընդ քեզ ամէն ։

Տիմոթէոսի էջոյ սուրբին Պաւղոսի փրէյսու լուսաբերչէ չաշխինն՝ որ պահապանացոյց հայրաչաղչէն է ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ· ԵՐԿՐՈՐԴ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն՝ որ ի Քրիստոս Յիսուս ։

2 Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ՝ և ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ ։

3 Շնորհ ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմ ի նախնեաց մտօք սրբովք, իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ գյայգ և գցերեկ։

4 Յանկայեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո՝ զի լցայց ուրախութեամբ ։

5 Զմտաւածեալ զան-

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովն՝ կեանքի աւետիքին պէս՝ որ Քրիստոս Յիսուսմ է

2 Տիմոթէոսի սիրելի որդոյս՝ շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուածէ հօրիցն և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցն ։

3 Շնորհակալեմ Աստուածանից՝ որ իմ առաջին հարանցիցս (սկսած) նորան պաշտումիմ սուրբ մտքով ։ որ անպակաս քեզանից յիշատակ եմ անուամիմ աղօթքներումս՝ գիշեր և ցերեկ ։

4 Յանկանումիմ քեզ տեսանել՝ յիշելով զո արտասուքն՝ որ ուրախութենով լցվիմ ։

5 Ինչու որ իմ միտքս եմ

խիղճ հաւատոյն՝ որ են ՚ի քեզ. որ յառաջագոյն բնա-
կեցաւ ՚ի հանոյ քումմ լա-
ւոգեայ, և ՚ի մօր քումմ եւ-
նիկեայ. հաստատեալ եմ՝
թէ և ՚ի քեզ է։

6 Վասն որոյ յիշեցուցա-
նեմ քեզ արծարծել զշնորհս
սոյն Աստուածոյ՝ որ են ՚ի քեզ
՚ի ձեռնադրութենէ իմմէ։

7 Ոչ ետ մեզ Աս-
տուած հոգի վհատութեան,
այլ զօրութեան և սիրոյ՝ և
զգաստութեան։

8 Մի այսուհետեւ ամօթ
համարիցիս զվկայութիւն Տ֊ն
մերոյ՝ և մի զիս վկայեալ նո-
ցա, այլ կոյսդ լեր չարչա-
րանաց աւետարանին՝ ըստ
զօրութեան Աստուծոյ։

9 Որ փրկեաց զմեզ, և
կոչեաց ՚ի կոչումն սուրբ ոչ
ըստ գործոց մերոց՝ այլ ըստ
իւրում յառաջագրութեանն
և շնորհացն, որ տուաւ մեզ
՚ի Քրիստոս Յիսուս յա-
ռաջ քան զժամանակս յա-
ւիտեանից։

10 Բայց յայտնեցաւ այժ-
միկ յերևել փրկչին մերոյ
Յիսուսի Քրիստոսի. որ խա-
փանեաց զմահ՝ և լուսաւոր
եբերաւ կեանս անկեղծ հաւատ-
քին՝ որ քեզանում է. որ
առաջ քո լաւօդիա տատումդ
և քո եւնիկէ մօրումդ բնակ-
վեցաւ. հաստատ դիտումմ
որ եւ քեզանում է։

6 Նորահամար քո միտքդ
եմ եբերում որ զարթնացնես
Աստուծոյ ն շնորհքըն որ
քեզանում է՝ իմ ձեռնադ-
րութենիցն։

7 Պատճառն որ Աստուած
չտուաւ մեզ վախկոտութեան
հոգի՝ այլ զօրութեան, և
սիրոյ և ապրկեշտութեան։

8 Որպէս ամօթ մի համա-
րիր մեր Տէրի վկայութիւնըն
և ոչ ինձ եւ՝ որ նորա կապ-
ուածն եմ. բայց մասնակից
լինիր չարչարանքին՝ աւետա-
րանի համար՝ Աստուծոյ զօ-
րութենով։

9 Որ փրկեաց մեզ և սուրբ
կոչումով կոչեաց. ոչ ելէկ
մեր գործքերուն համար՝ այլ
իրան առաջագրութե և շնորհ-
քին պէս. որ տրվաւ մեզ
Քրիստոս Յիսուսմէ յաւի-
տենական ժամանակներէն ա-
ռաջ։

10 Բայց յայտնըվեցաւ հի-
միկ՝ երբոր փրկիչ Յիսուս
Քրիստոսն երևեցաւ. որ մա-
հըն խափանեց և լուսոյ մէջ

արար պկեանս և զանեղծուա-
ծիւն ի ձեռն աւետարանին։
11 Որոյ եղայ ես քարոզ և առաքեալ՝ և վարդապետ հեթանոսաց ։
12 Վասն որոյ և զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթի համարիմ. քանզի գիտեմ՝ յո՛ հաւատացեալն եմ. և հաստատեալ եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն ։

13 Ունելիցես օրինակ ողջմտութեան բանիցն , զորս յինէն լուար՝ հաւատովք և սիրով՝ որ ի Քրիստոս Յիսուս ։
14 Զբարւոք աւանդն պահեսցի՛ր՝ ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ ։

15 Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան ի ինձ ամենեքեան՝ որ էին Յասիա , որոց սակի են փիղեղոս և Հերմոգենէս ։
16 Տայէ Աստուած ողորմութիւն տանն ոնեսիփորայ. զի բազում անգամ հանգոյց ինձ , և զկապանս իմ ոչ ամօթի համարեցաւ ։
17 Այլ երբեմն եկն ի Հռոմ, սնդագոյնս խնդրեաց զիս՝ և եգիտ ։

բերաւ կեանքըն և անմահութիւնըն իրան աւետարանովն։
11 Որ ես նորա քարոզիչ և առաքեալ կարգվեցայ, և հեթանոսների վարդապետ ։
12 Ընդահամար էլ ես չարչարանքներըս եմ քաշում՝ բայց խակե ամօթ չեմ համարում . պատճառն որ՝ գիտեմ՝ թէ հաւատացել . և հաստատ եմ՝ թէ կարող է իմ աւանդըն պահել մինչև էն օրն ։
13 Ողջամիտ խօսքերի օրինակը (քեզ) ունենաս՝ որ ինձանից լսեցիր՝ հաւատքով և սիրով՝ որ Քրիստոս Յիսուսումն է ։
14 Էն բարի քեզ պահ տրվածն պահիր սուրբ Հոգով ձեռովն , որ մեզանում բնակվածն է ։
15 Էս գիտենաս՝ որ ինձանից ջոկվեցան էն ամէնքն՝ որ ասիայի մէջն էին. որ նոր անց միջումն են փիղեղոս և Հերմոգինէս ։
16 Աստուած ողորմութիւն տայ ոնեսիփորի տանն. ինչու որ շատ անգամ հանգստացրուց ինձ , և իմ կապանքներըն ամօթ չըհամարեց ։
17 Բայց երբոր եկաւ Հռոմ շատ ջանքով մանեկաւ ինձ և գտաւ ։

18 Տայէ նմա Տէր ողորմութիւն գտանել ՚ի Տնէ յաւուրն յայնմիկ. և որչափ ինչ միանգամ լիփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես։

18 Տէրն տայ նորան՝ որ ողորմութիւն գտնէ Տէրոջմէն օրուան. և որքան որ եփեսոսի ծառայութիւն արաւ ինձ՝ էն դու ինքդ լաւ կիտուես։

ԳԼ. Բ։

1 Ա՛յլ դու՝ որդեակ իմ, զօրացիր ընդ շնորհսն՝ որ ՚ի Քրիստոս Ցիսուս։

2 Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք՝ զայն ա-ւանդեսցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւական իցեն և զայլս ուսուցանել։

3 Վշտակից լեր իբրև զքաջ զօրուղ զինուոր Քրիստոսի Ցիսուսի։

4 Ո՛չ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատազի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի։

5 Եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ո՛չ պսակի՝ եթէ ո՛չ ըստ օրինին մարտիցէ։

6 Եւ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ՚ի պտղոյն վայելել։

7 Իմա զինչ ասեմ. տայէ քեզ Տէր լմաստութիւն յամենայնի։

1 Բայց դու՝ իմ որդեակս, զօրացիր էն շնորհքովն՝ որ Քրիստոս Ցիսուսումն է։

2 Եւ էն որ ինձանիկ լսեցիր շատ վկաներէն առաջին՝ էն յանձնիր հաւատարիմ մարդկանց՝ որ կարօղ են ուրիշներին էլ սովորցնել։

3 Նեղութեան ընկեր լինիր ինչպէս Քրիստոսի Ցիսուսի քաջի զինուոր։

4 Ոչ՝ ով՝ որ զինուորութիւն է անում. էս աշխարհքի բաներովն չի զբաղվում՝ որ զօրապետին հաճոյ լինի։

5 Եւ թէ որ մինն կռվի մէջ մտնէ՝ պսակ չի՝ ստանալ թէ որ կարգի պէս չկռվի։

6 Եւ հողագործն որ աշխատութէմ առաջ պէտք է որ պտղէն վայելէ։

7 Իմացիր ինչ եմ ասում. Տէրն տայ քեզ իմաստութիւն ամէն բանի մէջ։

8 Ցիշեա զՔրիստոս Ցիսուս յարուցեալ ի մեռելոց ի զաւակէ դաւթի ըստ աւետարանիս իմոմ։

9 Ցորում չարչարիմ կապանօք չափ՝ իբրև զչարագործ. այլ բանն Աստուծոյ ոչ եղեկ կապեալ իյէ։

10 Ասն այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի և նոքա փրկութեանն հասանիցեն. որ ի Քրիստոս Ցիսուս երկնաւոր փառաքն հանդերձ։

11 Հաւատարիմ է բանս. զի եղեկ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և կեցցուք։

12 Եւ եղեկ համբերեմք, ընդ նմին և թագաւորեսցուք, և եղեկ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ։

13 Եւ եղեկ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ոչ կարէ։

14 Զայս յիշել արասջիր վկայութիւն եդեալ առաջի Աստուծոյ. մի բանակռիւ լինել յոչ ինչ պիտոյ ի կործանումն լսողացն։

15 Փութացջի՛ր զանձն քո ընծիր կացուցանել առաջի

8 Ցիշի՛ր Ցիսուս Քրիստոսին մեռելներէ միջնէն յարուցեալ աւածին՝ որ դաւթի զաւակիցն է, իմ աւետարանին պէս։

9 Որ նորա համար չարչարվումեմ մինչև կապանքի մէջ լինիլ՝ մին չարագործի պէս. բայց Աստուծոյ խօսքն կապված չէ։

10 Ընտրեալներուն համար ամէն բանի համբերումեմ՝ որ նոքանք էլ հասնին փրկութեանն՝ որ Քրիստոս Ցիսուսումն է՝ երկնաւոր փառքին հետ։

11 Ճշմարիտ է խօսքս՝ որ եղեկ նորա հետ մեռանք՝ նորա հետ էլ կապրինք։

12 Թէ որ համբերինք՝ նորա հետ էլ կը թագաւորենք. և թէ որ ուրանանք՝ նա էլ կուրանայ մեզ։

13 Եւ թէ որ չըհաւատանք նա հաւատարիմ կը մնայ. իրան անձը չի կարող ուրանալ։

14 Այս բանը յիշեցուր և Տէրի առաջին վկայութիւն դիր՝ որ խօսքերով կռիւ չանեն՝ որ են անպիտան է և լսողներին կործանումէ։

15 Ջանք արա որ քո անձը ընտիր կանգնացնես Աս-

Աստուծոյ, մշակ առանց ա-
մօթոյ, ուղիղ համառօտել
զբանն ճշմարտութեան։

16 Այլ՝ ի պղծոյ և ի
սնոտի խօսից մերժեսջի՛ր. զի
առաւել յառաջ գայցեն
յամբարշտութիւնս։

17 Եւ բանք նոցա իբրև
զբազկեզ ճարակ դատանեն.
որոյ սակի են Հիմենոս՝ և
Փիղետոս։

18 Որք վրիպեցան՝ ի ճըշ-
մարտութենէ, և ասեն՝ եւ-
թէ յարութիւն մեռելոց
արդէն իսկ եղեալ է. և
կործանեն զհաւատս ոմանց։

19 Այլ հաստատուն հիմն
Աստուծոյ կայ՝ և ունի զկնիքս
զայս, եթէ ծանեաւ Տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. և՝ ի
բաց լիցի յանիրաւութենէ
ամենայն՝ որ անուանէ զանուն
Տեառն։

20 Այլ՝ ի տան մեծի ոչ
միայն են անօթք ոսկեղէնք
և արծաթեղէնք, այլ և
փայտեղէնք և խեցեղէնք են,
որ՝ ի պատուի են, և են՝ որ
յանարգութեան։

21 Եթէ ոք սրբեսցէ զանձն

տուծոյ առաջին՝ (իբր) մշակ
առանց ամօթոյ՝ որ ճշմար-
տութեան խօսքըն շիտակ
կարճառօտ քարոզէ։

16 Բայց պիղծ և ունայն
խօսքերից յետ քաշվիր. ին-
չոր՝ աւելի առաջ են գնում
ամբարշտութիւնների մէջ։

17 Եւ նորանց խօսքերն կեր-
ցավի պէս ուտելով առաջա-
նում են. որ նորանց միջումն
են Հիմենոսն և փիլետոսն։

18 Որ նորանք ճշմարտու-
թենից թեքվեցան, և ա-
սումն՝ թէ մեռելների յա-
րութիւնն հինց հիմիկ եղած
է. և մինչդեռ հաւատքն
կործանում են։

19 Բայց Աստուծոյ հաս-
տատ հիմն կանգնած կայ և էս
կնիքըս (ձօհրըս) ունի՝ թէ
Տէրն ճանաչում նորանց՝ որ
իրանն են. և թէ հեռու լի-
նի անիրաւութենից էն ա-
մէնն, որ Տէրի անունըն ա-
նուանում։

20 Բայց մին մեծ տան մէջ
չէ թէ մէնակ ոսկէ և արծա-
թէ ամաններ կան. բայց էլ
փայտէ և հողէ (ամաններ)
կան՝ որ պատուաւոր բանի
համար են, և կան՝ որ անարգ
բանի համար են։

21 Թէ որ մինն իրան անձն

իւր Յայնպիսեաց անտի, եւ զիսյի անօթի պատուական՝ օրբեալ եւ պիտանի Տեառն իւրում՝ յամենայն գործս քարուքեան պատրաստեալ ։

22 Ա՛յլ Յերիտասարդական ցանկութեանց փախիր· եւ երթ զհետ արդարութե՛ն, զհաւատոյ, զսիրոյ, զխաղաղութեան, զողբութեան, ընդ այնոսիկ, որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք ։

23 Ա՛յլ՝ի յիմար եւ յանխրատ խնդրոց հրաժարեա· գիտասջի՛ր, թէ անտի ծնանին կռիւք ։

24 Բայց ծառայի Տեառն ո՛չ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսին, ուսուցիչ անոխակալ,

25 Ընդդարտուլ խրատել զհակառակողսն· թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութի՛ւն՝ի գիտութի՛ւն ճշմարտութեան ։

26 Ի՛ւ սատանայի՛ն յորոգայթից սատանայի, որոց ցեալք՝ի նմանէ՝ի նորա կամս ։

ծրբէ Էնպէսի (մարդկանցիս) նա պատուական աման կըլինի· սրբված եւ իրան տիրոջն օգտակար՝ ամէն բարի գործքերի համար պատրաստված ։

22 Բայց երիտասարդական ցանկութի՛ւններից փախիր· եւ հետևիր արդարութեան, հաւատքին, սիրոյն, խաղաղութեան, սրբութեան, նրանց հետ միասին, որ Տէրի անունըն (իրանց) կանչում սուրբ սրտով ։

23 Բայց յիմար եւ անխրատ վիճաբանութի՛ւններից յետ քաշվիր· գիտացիր որ նորանցից են կռիւները առաջ գալիս ։

24 Բայց Տէրի ծառային պէտք չէ, որ կռիւ անէ, բայց որ ամէնին հետ հեզասիրտ լինի՝ սովորցնող, ոչ չըպահող,

25 Հակառակողներին հանդարտութի՛ւնով խրատէ· որ լի՛ւ թէ Աստուած նորանց ապաշխարութի՛ւն տայ՝ որ ճշմարտութի՛ւնն իմանան ։

26 Ի՛ւ զգաստանան սատանայի որոգայթներից (Ալէքսէնդր) որ նորանից հօրսացվել են՝ նորա կամքըն անելոց համար ։

1 Այս գիտացիր, եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք ։

2 Զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհնազանդք ծնողաց, անշնորհք, անսուրբք,

3 Անգթք, անգութք, բանսարկուք, անժուժք, վէնք, անբարեսէրք,

4 Մատնիչք, յանդգնաւնք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ՝ քան աստուածասէրք ·

5 Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, և ի զօրութենէնն անտի նորա ուրացեալ իցեն · և խորշեսջի՛ր ի նոցանէ ։

6 Քանզի ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ի տուն, և գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք վարեալք ի պէսպէս ցանկութիւնս ։

7 Որ յամենայն ժամ ուսանին, և երբէք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն ։

8 Այս գիտացիր՝ որ յետ օրերուն չար ժամանակներ կըգան ։

2 Ինչու որ մարդիկ կըլինին անձնասէր, արծաթասէր, հպարտ, ամբարտաւան, հայհոյող, ծնողաց չըհնազանդող, երախտամոռ, չարագործ,

3 Անմարդի, անգութ, խռովութիւն սերմնող, անժուժկալ, կատաղած, բարին չըսիրող,

4 Մատնիչ, յանդուգն, գոռոզ, ցանկութիւն աւելի սիրող քանզի Աստուծոյն սիրող ·

5 Որ աստուածապաշտութեան կերպարանքըն ունին և նորա զօրութենիցն ուրացած են · և յետ քաշվիր նորանցից ։

6 Ինչու որ նորանց միջնէն են՝ որ տանից տուն են մանում և գերի են տանում էն կանանցըն՝ որ մեղքերով լըված կիտված են և կերպ կերպ ցանկութիւններով վարված ։

7 Որ ամէն ժամանակ սովորումն և դէպի ճշմարտութեան գիտութիւնն խակ մին ժամանակ չեն հասնում ։

8 Ա.ՀԼ որպէս յանէսն և յամբրէս հակառակ կացին մովսէսի· նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեան, մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք ի հաւատս։

9 Ա.ՀԼ ոչ երբեք գայցեն յառաջ ի լաւ անդր· քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս և նոցայն իսկ եղև։

10 Ա.ՀԼ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ՝ առաջնորդութեան, յաժարութեան, հաւատոյ, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան,

11 հալածանաց, չարչարանաց· որպիսիք եղեն ինձ յանտիոք և յիկոնիոն և ի լիւստրս, որպիսի հալածանս համբերի· և յամենայնէ փրկեաց զիս Տէր։

12 Ոչ ամենեքին՝ որ կամիցին աստուածապաշտութիւն կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն։

13 Ա.ՀԼ մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն

8 Ինչպէս որ յանէսն և յամբրէսն մօսէսին հակառակ կացան· էնպէս էլ սոքանք հակառակ են կինում ճշմարտութեանն· մարդիկ մտքով ապականված և անպիտանի՝ հաւատքի համար։

9 Բայց իսկի աւելի չեն առաջանալ լաւութեան մէջ· ինչու որ նորանց անմտութիւնն ամենին յայտնի կըլինի· ինչպէս որ էլ նորանցն էլաւ։

10 Բայց դու հետևեցիր իմ վարդապետութեան, առաջնորդութեան, յաժարութեան, հաւատքի, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան,

11 հալածմունքներիս, չարչարանքներիս· ինչպէս որ էլան ինձ վերայ անտիոքումն, և իկոնիոնումն և լուստրա յումն· ինչպէս որ էն հալածմունքներին համբերեցի· և էն ամենիցն Տէրն ինձ ազատեց։

12 Ու ամենքն որ կամենուն աստուածապաշտութեամբ նով ապրիլ Քրիստոս Յիսուսումն· հալածմունքների մէջ պիտի կենան։

13 Բայց չար և կախարդ մարդիկ աւելի առաջ կերթ-

'ի չար անդր. մոլորեալք և մոլորեցուցանիցեն:

14 Ա՛յլ դու հաստատուն կաց՝ յոր ուսար դ, և հաւատարիմ եղեր. գիտես ուստի ուսար:

15 Զի 'ի մանկուԹենէ զգիրս սուրբ գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկուԹիւն՝ 'ի ձեռն հաւատոյն որ 'ի Քրիստոս Յիսուս:

16 Ա՛մենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետուԹիւն են՝ և յանդիմանուԹիւն և յուղղուԹիւն և 'ի խրատ արդարուԹեան:

17 Զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարուԹեան հաստատեալ:

նան չարուԹեան մէջ. մոլորեալ են և մոլորացնումն:

14 Բայց դու հաստատ կաց նրանում, որ սովորեցիր և հաւատացիր. գիտումես (Թէ) ումից սովորեցիր:

15 Որ տղայուԹենիդ սուրբ գրքերըն գիտումես, որ նրանք կարող են քեզ իմաստուն անել փրկուԹեան համար՝ էն հաւատքի ձեռովն՝ որ Քրիստոս Յիսուսումն է:

16 Ամէն գրքերն աստուածաշունչ և օգտակար են վարդապետուԹեան, և յանդիմանուԹեան, և շիտակելոյ և արդարուԹեան խրատ տալոյ համար:

17 Որ Աստուծոյ մարդն կատարեալ լինի՝ ամէն բարի գործքերի մէջ հաստատված:

ԳԼ. Դ:

1 Ես վկայուԹիւնըս դնում Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի առաջին՝ որ կենդանիներին և մեռելներին պիտի դատէ՝ իրան յայտնուԹենովն և ԹագաւորուԹենովն:

2 Դու բանըն քարոզիր. պատշաճ ժամանակ լինի Թէ

1 Օ՛ այս վկայուԹիւն դնեմ առաջի Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս՝ 'ի յայտնուԹեան իւրում և յարքայուԹեան:

2 Քարոզեա զբանն, հաս 'ի վերայ ժամու

և տաբաժամու , յանդիմա-
նեա, սաստեա մխիթարեա ա-
մենայն երկայնմտութեամբ
և վարդապետութեամբ ։

3 Քանզի եկեսցէ ժամա-
նակ ի ողջմտութեան վա բ-
դապետութենն ոչ անսայ-
ցեն · այլ ըստ իւրաքանչիւր
յանկութեանց կուտեսցեն ի-
րեանց վարդապետս՝ ըստ
մարմաջելոյ լսելեաց իւր-
եանց ։

4 Եւ ի՛ ճշմարտութենէ
անտի դարձուցանիցեն զլսե-
լիս՝ և յառասպելս կոչտա-
նեսցին ։

5 Այլ դու զսուրբ կաց
յամենայնի , ճգնեայց , զգոր-
ծըս աւետարանչի գործեա ·
պատշաճօդ քո կատարեալ
կալ ։

6 Զի ես այսուհետև նու-
իրեալ եմ, և ժամանակ գալ-
ձի իմոյ հասեալ կայ ։

7 Զբարւոք պատերազմ
պատերազմեայ , զընթացսն
կատարեցի , զհաւատսն պա-
հեցի ։

8 Այսուհետև կայ ինձ
պսակ արդարութեան պսակն ,
զոր հատուսցէ ինձ Տէր յա-
ւուր յայնմիկ արդարն դա-
տաւոր · ոչ միայն ինձ , այլև
ամենեցուն՝ որ սիրեցին զայա-
չելինի · վերայ հասիր , յան-
դիմանիր , սաստիր , մխիթա-
րիր ամէն երկայնմտութենով
և վարդապետութենով ։

3 Պատահեսցէ որ ժամա -
նակ կըզայ՝ որ ողջամիտ վար-
դապետութենն չեն ականջ
դնիլ · բայց իրանց յաւուրց
յանկութիւններին ալէտ՝ վար-
դապետներ կըղիլեն իրանց
վերայ · ինչպէս որ իրանց ա-
կանջնե բիեռալոյն յաւմամբ է ։

4 Եւ ականջներըն ճշմար-
տութենէն կամ կըդարձնեն
և առասպել բաների մէջ
կընկնին ։

5 Բայց դու արի ահն կաց
ամէն բանի մէջ , ջանք ա -
րա , աւետարան քարոզողի
գործըն գործիր · զի պաշ-
տօնըդ կատարեալ բռնիր ։

6 Ինչու որ ես այսուհետև
նուիրուած եմ և իմ դարձ
անելոյ ժամանակն հասած է ։

7 Ընտիր պատերազմըն
պատերազմեցի , վազելըս կա-
տարեցի, հաւատքն պահեցի ։

8 Ասկայսուհետև պատրաս-
ւած Յիսուսէ ինձ արդարութե-
պսակն՝ որ Տէրն կըտայ
ինձ էն օրուն՝ էն արդար
դատաւորն · և չէ թէ միայ
ինձ , բայց եղ ամէնին , որ

նուիրելուն նորա ։

9 Փութացիր գալ առ իս վաղվաղակի, զի գեմաս եւ Թողց զիս՝ եւ սիրեաց վաշխարհս, եւ գնաց ի Թեսաղոնիկէ ։

10 Կրեսկէս՝ ի գալիլեա, տիտոս ի դալմատիա ։

11 Ղուկաս միայն է ընդ իս, զմարկոս առեալ ընդ քեզ ածիցես՝ զի է ինձ պիտանի ի սպասաւորութիւն ։

12 Զտիւքիկոս առաքեցի Եփեսոս ։

13 Զփիլոնն Թողի ի տրուադայ առ կարպոսի, յորժամ գայցես՝ բերջիր եւ զգիրսն, մանաւանդ զմաշտեանն ։

14 Ալեքսանդրոս գարբին բազում չարչարանս եցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա ։

15 Ցորմէ եւ դու անձնապահ լինիջիր • զի շատ հակառակ եկաց բանից մերոց ։

16 Ցառաջնում ատենին ոչ ոք ինձ ի թիկունս եկաց, այլ ամենեքին Թողին զիս • մի համարեսցի նոցա այն ։

17 Այլ Տէր օգնական ինձ, սիրեցին նորա յայտնութիւնն • վասն որ ես շուտով լինիմ գաս ։

9 Ինչու որ դիմաս Թողից ինձ, և աշխարհքը սիրեց, և գնաց Թեսաղոնիկէ ։

10 Կրեսկէսն էլ՝ գաղատիա • տիտոսն՝ դալմատիա ։

11 Ղուկան մէնակ է ինձ հետ • մարկոսին առնես քեզ հետ բերես • ինչու որ՝ պէտք է ինձ ծառայութեան համար։

12 Տիւքիկոսին ուղարկեցի եփեսոս ։

13 Փիլոնէն դրօադայումն կարպոսի մօտն Թողի • երբոր գաս գրքերն էլ բեր և մանաւանդ մագաղաթի գրքերն ։

14 Ալեքսանդրոս (դարբինն) ինձ շատ չարչարանք տուաւ՝ Տէրն նորան հատուցումն տայ իրան գործքերին պէս ։

15 Դու էլ քո անձդ հեռու պահիր նորանից • ինչու որ նա շատ հակառակ կացաւ մեր խօսքերիս ։

16 Առաջին տխանի մէջն ոչ ով չկացաւ իմ կողմն, բայց ամենքն Թողին ինձ • են Թող չըհամարվի նորանց ։

17 Բայց Տէրն օգնեց ինձ,

և զօրացոյց զնս, զի ևնև քարոզութիւն Հաստատեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք· և ապրեցայ ես ի բերանոյ առիւծուն։

18 Փրկեսցէ զնս Տէր յամենայն գործոց չարաց, և զերծուսցէ զնս յարքայութիւն իւր՝ որ յերկինս է· ումեմ փառք յաւիտեանս յաւիտենից· ամէն։

19 Ողջոյն տուջիր պրիսկեայ և ակիւղեայ՝ և ընեսիփորայ տանն։

20 Երաստոս մնայ ի կորնթոս, զտրոփիմոս թողի ի Միլիտոս հիւանդակին։

21 Փութասջի՛ր յառաջ քան զձմեռն գալ, ողջոյն տան քեզ Եւբուղոս և պուդէս և լինոս և կղոդիա՝ և եղբարք ամենեքեան։

22 Տէր Յիսուս Քրիստոս ընդ ոգւոյդ քումմ, շնորհք ընդ քեզ· ամէն։

և զօրացրուց զնձ՝ որ ինձաւվի, և ամէն հեթանոսքն լսեն· և ես էլ ազատվեցայ առիւծի բերանից։

18 Տէրն կըփրկէ ինձ ամէն չար բաներից և ազատ կըհասցնէ իւրոյ արքայութեանն մէջ, որ երկնքումն է· որ նորան (լինի) փառք յաւիտեանս յաւիտենից· ամէն։

19 Ողջոյն տուր պրիսկէին և ակիւղային, և ընեսիփորի տանն։

20 Երաստոսն մնաց կորնթոսումն· տրոփիմոսին թողի հիւանդ Միլետոսումն։

21 Ձմռանը որ ձմեռնիցն առաջ գաս· ողջոյն են տալիս քեզ եռբուղոսն, և պուդէսն և լինոսն, և կղաւդիա և ամէն եղբարքն։

22 Տէր Յիսուս Քրիստոսն քո հոգւոդ հետ լինի· շնորհքն քեզ հետ· ամէն։

Տէրօքէոսի վէրջ յ երէրորդ Ռուքն որ նա եդիւոցոց եդէեղեցոյ ոոոջ՛ն ցէոնոորդ՛ն եպիւհոդոսն էր՝ հոօց չոշոցէցն գրվեցաւ երբոր պօղոսն երէրորդ անգամ աբանոնի հանգնեց հաօմայ հայոերնէրօնի ոոոջ՛ին։

—*******—

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՏՈՍ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս ծառայ Աստուծոյ և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոյ ընտրելոցն Աստուծոյ, և ի գիտութիւն ճշմարտութեան՝ որ ըստ աստուածպաշտութեան է.

2 Յուսով կենացն յաւիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ քան զժամանակս յաւիտենից.

3 Բայց յայտնեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որով եղէ ես հաւատարիմ ըստ հրամանի փրկիչին մերոյ Աստուծոյ,

4 Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ համարակաց հաւատոյ, շնորհք՝ և խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ՝ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ փրկչէ մերմէ։

1 Պօղոս Աստուծոյ ծառայ և Յիսուսի Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտրեալ-ժողովրդեան հաւատքին պէս և ճշմարտութեան դիտութեան համար՝ որ աստուածապաշտութեանն է.

2 Յաւիտենական կեանքի յոյսով՝ որ նորան յաւիտենական ժամանակներից ա-ռաջ խոստացաւ Աստուած, որ սուտ չի՛ խօսում.

3 Բայց իւրան ժամանակին յայտնեց իւրան խօսքըն քարոզութեամբ, որ ինձ հաւատացեալ մեր փրկիչ Աստուծոյ հրամանին պէս,

4 Տիտոսի սիրելի որդուն՝ մեր հաւատակից հաւատքին պէս՝ շնորհք, (ողորմութիւն) և խաղաղութիւն լինի Աստուած հօրից և մեր փրկիչ Քրիստոս Յիսուսից։

5 Ա՝ման այնորիկ իսկ թո-
ղի զքեզ՝ ի կրեաց, զի որ
ինչ միանգամ պակաս էր՝
ուղղեսցես, և կացուսցես ըս
քաղաքաց երիցուն՝ որպէս
և ես քեզ պատուիրեցի։

6 Եթէ ոք անարատ իցէ,
միոյ կնոջ այր, որդեակս ու-
նիցի հաւատացեալս՝ և ոչ
յամբաստանութիւն անա-
ռակութեան, կամ անհնա-
զանդս։

7 Ձի պարտ է եպիսկո-
պոսին անարատ լինել՝ որ-
պէս և Աստուծոյ տնտեսի.
մի յանդուգն, մի բարկա-
յօղ, մի թիշնամանօղ, մի հար-
կանօղ, մի զօշաքաղ.

8 Այլ՝ հիւրասէր, բա-
րեսէր, յաճ, արդար, սուրբ,
ժուժկալ.

9 Ա՝երակացու լինել հա-
ւատարիմ բանին վարդա-
պետութեան, զի կարօղ ի-
նէ և մխիթարել ողջմտու-
թեամբ վարդապետութեն,
և զհակառակորդսն կըշ-
տամբել։

10 Քանզի բազումք են
անհնազանդք՝ զրախօսք և
մտախաբք. մանաւանդ որ

5 Նրանհամար թողի քեզ
կրետէի մէջն՝ որ ամէն ինչ
որ պակաս է, կարգի դնես և
ամէն մէկ քաղաքների մէջ ե-
րէցներ կանգնացնես՝ ինչպէս
որ ես պատուիրեցի քեզ։

6 Թէ որ մէնն անարատ է,
մէն կնկան մարդ, հաւատա-
ցեալ որդիք ունենայ որ
նորանոյ վերայ չարախօսութի
չըկայ՝ թէ անառակ կամ անհ-
նազանդ են։

7 Պատճառն որ եպիսկո-
պոսն պէտք է որ անարատ լի-
նի ինչպէս Աստուծոյ տըն-
տես. և ոչ թէ յանդուգն,
ոչ բարկա յօղ ոչ նախատինք
խօսօղ, ոչ զարկօղ, ոչ պիղծ
շահ քաղօղ.

8 Հայց օտարասէր, բա-
րեսէր, խոնարհ, արդար,
սուրբ, ժուժկալ.

9 Որ վարդապետութեան
խօսքի հաւատարիմ վերակա-
ցու է՝ որ կարօղ լինի ողջա-
միտ վարդապետութենով յոր-
դորել, և հակառակողներըն
յանդիմանել։

10 Պատճառն որ՝ շատ ան-
հնազանդներ, զուր խօսօղներ,
և միտք խաբօղներ կան.

'ի Թլփատութենէ անտի են։

11 Զորս պարտ է ըմբռնել. որք զամենայն տուեալս կործանեն, և ուսուցանեն զոր չէ արժան՝ վասն զօշաքաղուրեան։

12 Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանոյ իսկ մարգարէ, կրետացիք հանապազասուտք, չարաձիք, դատարկակողոքք։

13 Ճշ ստոյգ է վկայութիւնս այս. վասն որոյ կըշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի առողջասցին 'ի հաւատս։

14 Ուշ հայեսցին 'ի հրէական առասպելս, և 'ի պատուիրս մարդկան զառածելոցն 'ի ճշմարտութենէ։

15 Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց պղծոյն և անհաւատից՝ ոչ ինչ է սուրբ. այլ պղծեալ են միտք և խորհուրդք նոցա։

16 Խոստանան գիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրանան. պիղծք և անհաւանք՝ և յամենայն գործս բարեաց անպիտանք։

մանաւանդ նորանք որ Թլփատութենիցն են։

11 Որ պէտք է նորանց բերանըն խըցկել՝ որ ամէն տըներըն կործանումն՝ և սովորցնումն կ'ըլլան որ արժան չէ. պիղծ շահ քաղելոյ պատճառովն։

12 Նորանցէց մինն՝ հենց իրանց յատուկ մարգարէ ասաց. կրետացիներն միշտ սըտահաւս են, չար ճըճուներ, դատարկափոր։

13 Ճշ էս վկայութիւնս ճըշմարիտ է. նրահամար սաստիկ յանդիմանես նորանց՝ որ առողջ լինին հաւատքումն։

14 Ճշ մտիկ չըտան հրէական առասպելներին և էն մարդկանց պատուիրանքներին՝ որ ճշմարտութենիցն թեքվածք են։

15 Ամէն բան սուրբ է սըրբերին. բայց պիղծերին և անհաւատներին խակի մին բան սուրբ չէ. բայց պղծվածք է նորանց միաքն և խորհուրդնելն։

16 Ճշ խոստանումն թէ Աստուծոյն գիտենան, և իրանց գործքերովն ուրանումն (նորան). որ պիղծ են և անհաւատ և ամէն բարի գործքերի համար անպիտան։

1 Ա.ՅԼ դու խօսեայ որ ինչ վայելէ ողջամիտ վարդապետութեանդ ։

2 Ծերոյ զգաստ լինել, պարկեշտս՝ ցածուն, ողջամիտս ՚ի հաւատս, ՚ի սէր, ՚ի համբերութեան, ՚ի ժուժկալութեան ։

3 Պառաւանոյ նոյնպէս ՚ի զգաստութեան՝ ՚ի սուրբ վայելչութեան, մի բանսարկու՝ մի գինեմոլս, այլ բարեխրատս ·

Դ Ջի զգաստացուցանիցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել՝ որդեսէրս ,

5 Ցածուն, սուրբս, տնապարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց, զի մի բանն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի ։

6 Զհրիտասարդս նոյնպէս աղաչեսջի՛ր՝ ցածուն լինել ,

7 Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն ,

8 Զբանն ողջմտութեր ,

1 Բայց դու խօսիր ինչ որ կըվայելէ ողջամիտ վարդապետութեանդ ։

2 Ծերերին՝ որ զգաստ լինին, պարկեշտ, խոնարհ, ողջամիտ հաւատքի, սիրոյ, համբերութեան, ժուժկալութեամբ ։

3 Նոյնպէս եւ պառաւներին՝ որ զգաստութեամբ լինին՝ սըրբերին վայելուչ վարքով՝ ոչ չարախօս, ոչ գինեմոլ, բայց բարի խրատ տուօղ ·

Դ Որ զգաստացնեն մատղաշ կանանցըն (իրանց) մարդկանցըն սիրելոյ եւ զաւակներըն սիրելոյս ,

5 խոնարհ , սուրբ , տըննաջէն , բարի անօղ , իրանց մարդկանց հնազանդ լինելոյ· որ Աստուծոյ խօսքն եւ վարդապետութիւնն չըհայհոյվի։

6 Նոյնպէս եւ յորդորիր երիտասարդներըն՝ որ խոնարհ լինին ։

7 Ամեն բանի մէջ քո անձըդ բարի գործքերի օրինակ դիր՝ որ վարդապետութենով ունենաս անապատութիւն , սրբութիւն , պարկեշտութիւն ,

8 Ողջամիտ խօսքըն՝ որ մե-

անպարապաւ լինել. զի որ հա-
կառակորդն իցէ՝ յամօթ
լիցի, և մի ինչ ունիցի ա-
սել զմեզ չարութիւն։

9 Ծառայից՝ իւրեանց տե-
րաց հնազանդ լինել՝ և հա-
ճոյ յամենայնի, մի հակա-
ռակօղ,

10 մի՛ հատուս, այլ զա-
մենայն հաւատս ցուցանել
բարութեամբ, զի զվարդա-
պետութիւն փրկչին մերոյ
Աստուծոյ զարդարեսցեն յա-
մենայնի։

11 Քանզի երևեցաւ շնորհն
Աստուծոյ փրկիչ ամենայն
մարդկան։

12 Որ խրատէ զմեզ՝ զի ու-
րացեալք զամբարշտութիւն
և զաշխարհական ցանկու-
թիւնս. զգաստութեամբ և
արդարութեամբ և աստու-
ածապաշտութեամբ կեցցուք
յաշխարհի։

13 Յո՛ ակնկալութիւն երա-
նելի յուսոյն՝ և յայտնու-
թեան փառաց մեծին Աս-
տուծոյ՝ և փրկչին մերոյ Յի-
սուսի Քրիստոսի։

14 Որ ետ զանձն վասն մեր,
զի փրկեսցէ զմեզ յամենայն
անօրէնութենէ, և սրբեսց-
ղադրելի չէ. որ նա՝ որ հակա-
ռակօղ է, ամօթ լինի և խակի
մեզ վերայ չար ասելոյ բան
չունենայ։

9 Ծառաներին (ասա)՝ որ
իրանց տէրերին հնազանդ լի-
նին, և ամէն բանի մէջ հա-
ճոյ, հակառակօղ չըլինին։

10 Բան չըքաշեն պահին՝
բայց ամէն հաւատարմութիւն
ցոյց տան լաւութեամբ. որ
մեր փրկիչ Աստուծոյ վար-
դապետութիւնը զարդարեն
ամէն բաներով մէջ։

11 Պատճառն որ Աստու-
ծոյ փրկութիւն տուող շնորհ-
քըն երևեցաւ ամէն մարդ-
կանց։

12 Որ հը խրատուի մեզ՝
որ ուրանանք ամբարշտու-
թիւնըն և աշխարհական յան-
կուածութիւնները. (և) պարկե-
շտութեամբ, և արդարութեա-
նով և աստուածապաշտու-
թեամբ ապրինք էս աշխարհ-
քումս։

13 Յո՛ մտիկ տանք էն ե-
րանելի յուսոյն և մեծ Աս-
տուծոյ և մեր փրկիչ Յի-
սուսի Քրիստոսի փառաւոր
յայտնութեանն։

14 Որ իրան անձըն մեզ հա-
մար տուաւ, որ մեզ ամէն ա-
նօրէնութենիցն փրկէ և սըբ-

ցե իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան։

15 Զայդ խօսեաց՝ և մխիթարեա՛ և յանդիմանեա՛ ամենայն սաստիւք. ոչ ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ։

ԳԼ. Գ։

1 Եւ յուշ արասջիր նոցա, իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել՝ և հպատակ կալ. և ամենայն գործոց բարութեան պատրաստ գտանել։

2 Մի ոք հայհոյել՝ անկռիւս լինել՝ հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել։

3 Զի էաք երբեմն և մեք անմիտք, անհնազանդք, մոլորեալք ծառայեաք ցանկութեանց և պէսպէս անառակութեանց. չարութեամբ՝ և նախանձու շրջէաք, ատելիք՝ և զմիմեանս ատէաք։

4 Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն

ՏԻՏ. Գ։

1 Եւ նորանոց մտքներն քեր՝ որ իշխանութիւններին և պետութիւններին հնազանդ լինին, հպատակ կենան և ամեն բարի գործքերի համար պատրաստ գըտնըվին։

2 Մընին հակառակ չը՛ հայհոյեն, կռիւ չանեն, հեզ լինին, ամեն մարդկանց ամեն խոնարհութիւն ցույց տան։

3 Ինչու որ մենք էլ մին ժամանակ էինք անմիտ, անհնազանդ, մոլորված, ցանկութիւնների և կերպ կերպ անառակութիւններին ծառայումէինք. չարութենով և նախանձով վարվումէինք, ատելի էինք և իրար ատումէինք։

4 Բայց երբոր մեր փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնն և

փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ,

5 Ո՛չ ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն, և նորոգութեամբ հոգւոյն սրբոյ։

6 Զոր եհեղ ի մեզ առատութեամբ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ։

7 Զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց։

8 Հաւատարիմ է բանս. և ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ առցեն գործոց բարեաց վերակացու լինել հաւատացեալքն Աստուած, զի այն է բարի և օգտակար մարդկան։

9 Այլ գիմարութեան խնդիրս՝ և զտոհմաթիւս, և զկռիւ՝ և զօրինական կռիւսն ի բաց մերժեսջիր. զի անօգուտք են՝ և սնոտիք։

10 Զառնէ հերձուածողէ՝ յետ միանգամ և երկիցս խրատեալոյ՝ հրաժարեսջիր։

և մարդասիրութիւնն յայտնեցաւ,

5 Ոչ զգործս արդարութեան զոր արինք, այլ իրան ողորմութեան համար, ապրեցրուց մեզ նոր ծնունդէն և նորոգութենէն։

6 Որ նորան առատութենով վրայ մեզ վերայ, մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

7 Որ շնորհքով արդարացածՙ յուսով էն յաւիտենական կեանքի ժառանգ լինինք։

8 Հաւատարիմ է խօսքս և կամենումմ որ հինոյ սրանում հաստատ լինիս. որ նորանք որ Աստուծոյն հաւատուն, ջանք անեն բարի գործքերի վերայ կենալոյ. ինչու որ էն է բարի և մարդկանց օգտակար։

9 Բայց յիմար վիճաբանութիւններըն, և ազգահամարներըն և հակառակութիւններըն, և օրէնքի կռիւներըն դէն քցիր. ինչու որ անօգուտ և ունայն են։

10 Հերձուածօղ մարդուց՝ երբոր միներկու անգամ խրատել ես, յետ կացիր։

11 Գիտասջի՛ր՝ զի Թիւ-
բեալ է այնպիսին, և մե-
ղանչէ՝ անձամբ զանձն դա-
տապարտեալ։

12 ԱՀԼ յորժամ յղեսցիս
առ քեզ զԱրտեմաս կամ
զտիւքիկոս, փութասջի՛ր գալ
առ իս ՚ի Նիկոպոլիս. զի
անդ եդի ՚ի մտի ձմերել։

13 Յու զգնոն զօրինական
դպիր և զապողոս փութով
արձակեսջի՛ր, զի մի ինչ պա-
կասիցէ նոցա։

14 Ուսցին և մերքն ևս՝
բարեաց գործոց վերակացու
լինել ՚ի պէտս կարևորս. զի
մի անպտուղք լինիցին։

15 Ողջոյն տան քեզ՝ որ
ընդ իս են ամենեքին, ող-
ջոյն տուր սիրելեաց մերոց
հաւատովք, շնորհք ընդ ձեզ
ամենեսին. ամէն։

11 Գիտացիր որ էնպէսին
ծըռւած է և մեղք է գոր-
ծում՝ ինքն իրան անձըն դա-
տապարտելով։

12 Ասայ երբոր արտեմասին
կամ տիւքիկոսին ուղարկեմ
քեզ մօտ՝ վռազի՛ր որ գաս
նիկոպոլիս ինձ մօտ. ընչու
որ միտքս դրի՝ որ ձմեռն էն տեղ
մնամ։

13 Յու օրէնք գիտօղ զենո-
նին և ապողոսին շուտով ար-
ձակիր. (և նայիր որ խակի) մին
բան չըպակասի նորանց։

14 Ասայ մերունքն էլ թող
սովորին բարի գործքերի վե-
րայ կենալ՝ հարկաւոր բաներ-
րին համար՝ որ առանց պտղոյ
չըլինին։

15 Ողջոյն են տալիս քեզ էն
ամէնքն որ ինձ հետ են. ող-
ջոյն տուր նորանց որ սիրու-
մեն մեզ հաւատքով. շնորհքն
ձեզ ամենիդ հետ լինի. ամէն։

Տիտոսի՝ երբեմն եպիսկոպոսի ճառընտրեալ եպիստոլեան վերին յունական (հելլենական) գրվեցաւ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Պօղոս կապեալ Յի-
սուսի Քրիստոսի, և տիմո-
թէոս եղբայր, փիլիմոնի
սիրելւոյ՝ և գործակից մե-
րոյ,

2 Եւ ապիփեայ քեռ, և
արքիպպոսի զինուորակից մե-
րոյ՝ և առանին եկեղեցւոյդ,

3 Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն Աստուծոյ
հօրէ մերմէ՝ և Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։

4 Գոհանամ զԱստուծոյ
իմոյ՝ յամենայն ժամ յի-
շատակեալ յաղօթս իմ վասն
քո,

5 Իբրև լսեմ զքո հա-
ւատսն և զսէր, զոր ունիս
առ Տէր Յիսուս՝ և առ ա-
մենայն սուրբս,

1 Պօղոս Յիսուսի Քրիս-
տոսի կապուածս և տիմոթէոս
եղբայրն՝ փիլիմոն սիրելոյն և
մեր գործընկերին.

2 Եւ ապիփիա քրոջն և
արքիպոսին մեր զինուորուձեր
ընկերին և եկեղեցոյն որ քո
տանն է,

3 Շնորհք (լինի) ձեզ հետ,
և խաղաղութիւն Աստուած
մեր հօրէյն, և Տէր Յիսուս
Քրիստոսէյն։

4 Գոհանում իմ Աս-
տուածանից ամէն ժամանակ՝
յիշելով քեզ իմ աղօթքումս։

5 Իրրեր լսումեմ քո հա-
ւատքըդ և էն սէրըն, որ ու-
նիս դէպի Տէր Յիսուսն և
դէպի ամէն սըրբերն,

6 Զի հաղորդութիւն հաւատոցն քոց արդյ լինի՝ գիտութեամբ ամենայն բարութեան, որ ՚ի ձեզ է ՚ի Քրիստոս Յիսուս։

7 Խնդութիւն յոյժ ընկալայ՝ և մխիթարութիւն ՚ի վերայ սիրոյն քո. զի գութք սրբոց քով հանգուցեալ են՝ եղբայր։

8 Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ ՚ի Քրիստոս հրաման տալ քեզ զարժանն։

9 Վասն սիրոյ՝ մանաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս և պօղոս ծերացեալ, արդ և կապեալ ևս Յիսուսի Քրիստոսի։

10 Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ՚ի կապանս իմ, զՈնեսիմոս.

11 Որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ քեզ և ինձ պիտանի.

12 Զոր յղեցի առ քեզ։ Եւ դու զդա ընկալջիր՝ այսինքն է զիմ սիրտս։

13 Զոր կամէի առ իս արգելուլ, զի ընդ քո ուսիցի ինձ սպաս ՚ի կապանս աւետարանին։

6 Որ քո հաւատքի հաղորդակցութիւնն պղպաքեր լինի ամէն բարի բաներուն գիտութենովն՝ որ ունիք Քրիստոս Յիսուսմէ։

7 Շատ ուրախութիւն և մխիթարութիւն ընդունեցի քո սիրոյդ պատճառովն. և սրբերուն սրտերն քեզմով հանգիստ են գտել՝ ով եղբայր։

8 Ուրեմն եւ շատ համարձակութիւն ունիմ Քրիստոսմէ՝ հրամայել քեզ ինչ որ արժան է։

9 (Ուստի) սիրոյդ համար աւելի աղաչումեմ. հենց ինքս պէս լինելով՝ ինչպէս որ ծերացած պօղոս. և հիմիկ եղ Յեսուի Քրիստոսի կապուածս։

10 Աղաչումեմ քեզ իմ Ոնեսիմոս որդւոյս համար, որ նորան ծնայ իմ կապանքներս։

11 Որ մին ժամանակ անպիտան էր քեզ. բայց հիմիկ քեզ և ինձ օգտակար.

12 Նորան ուղարկեցի քեզ մօտ։ Ուրեմն ընդունիր զնորան՝ ինչպէս իմ (սեպհական) աղիքս։

13 Կամենայի նորան ինձ մօտ բռնել, որ քո տեղը ծառայութիւն անէ ինձ աւետարանի կապանքներուն։

14 Բայց առանց քո կամացդ ոչ ինչ կամեցայ առնել, զի մի բարիքդ քո՝ ի հարկէ լինիցին՝ այլ կամաւ։

15 Յա՛ թերևս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս դա՛ս։

16 Ա՛լ ևս իբրև ծառայ՝ այլ՝ ի վեր քան զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եւ թէ ինձ այսպէս՝ ո՛րչափ ևս առաւել քեզ մարմնով և Տիրամբ։

17 Յորժէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ զդա՛ իբրև զիս։

18 Յա՛ եթէ յանցաւցեալ ինչ իցէ՝ կամ պարտիցի, զայն ինձ համարեա՛ց։

19 Յա՛ս պօղոս գրեցի ի՛մով ձեռամբ. ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝ թէ և դու զանձն քո ինձ պարտիս։

20 Ա՛յո՛, եղբայր՝ ես քո փոխանակ եղէց ի Տէր. հանգո՛ զաղիսդ իմ ի Քրիստոս։

21 Ցուսացեալ ի հնազանդութիւնդ քո՝ գրեցի առ քեզ. գիտեմ թէ առաւել և քան զոր ասեմդ՝ առնիցես։

14 Բայց առանց քո կամացդ չկամեցայ մի՛ն բան անել՝ որ քո բարիքդ բռնադատու-թեամբ չլինիլին, այլ կամքով։

15 Յա՛ կարելի է՝ թէ նորա համար մի՛ն ժամանակ հեռացաւ քեզմանից՝ որ յաւիտեան ունենաս դորան։

16 Ո՛չ թէ միևնել ինչպէս ծառայ, այլ ծառայից աւելի վեր, ինչպէս սիրելի եղբայր. որ եթէ ինձ կսպէս է, որքան էլ աւելի քեզ՝ թէ մարմնով և թէ Տէրի կողմանէ։

17 Թէ որ ինձ քո ընկեր համարիս, ընդունիր դորան, ինչպէս ինձ։

18 Յա՛ թէ որ քեզ մի՛ն վատ բան արած լինի՝ կամ պարտք ունենայ, էն ինձ համարիր։

19 Յա՛ս պօղոս իմ ձեռով գրեցի. ես կվճարեմ. որ չասեմ քեզ՝ թէ դու քո անձդ ինձ պարտական ես։

20 Յո՛նպէս է եղբայր. թո՛ղ հատուցումըն առնեմ քեզանից Տէրուն. հանգստացրու էդ իմ սրտիքըս Քրիստոսում։

21 Քո հնազանդութեան վերայ վստահացած գրեցի քեզ. ինչու որ գիտեմ որ էլ աւելի կանես, քան թէ էն որ ասում եմ։

22 Միանգամայն և պատրաստեայ՛ր ինձ վանս. քանզի յուսամ եթէ աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ։

23 Ողջոյն տայ ձեզ եպափրաս գերեկից իմ ի Քրիստոս Յիսուս.

24 Իւ մարկոս, և արիստարքոս, և դեմաս, և ղուկաս՝ գործակիցք իմ։

25 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն։

22 Պրաւէրայ կենալոյ տեղ էլ պատրաստիր ինձ. ինչու որ յոյս ունիմ, որ ձեր աղօթքներով շնորհվիմ ձեզ։

23 Ողջոյն է տալիս քեզ եպափրասն իմ գերուեթեան ընկերս՝ Քրիստոս Յիսուսմէ.

24 Իւ մարկոս, և արիստարքոս և դեմաս և ղուկաս՝ իմ գործոյս ընկերներս։

25 Տէր Յիսուսի շնորհքն ձեր հոգւոյդ հետ (լինի)։ ամէն։

Փիլիմոնին ի ապիւսյին՝ անուխտի աբրէրին, ի արչիպուին Հողուածոյ էհէգեցոյ ուրիշաւագին վէրոյ հաօ չաղուէցն Գրվէցոս, անուխտ Յուսոյ ֆէուշ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌ ԵՒՐԱՑԵՑԻՍ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Ի ամսոցն մատամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք ։

2 Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի որով և ստեղծանն զարս ։

3 Որ է լոյս փառացն՝ և նկարագիրը էութեան նորա . որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ . սրբութիւն մեղաց մերոց ապարեալ՝ նստաւ ընդաջմէ մեծութեանն ի բարձունս ։

4 Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս , որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց ։

5 Վասնզի ո՞ երբէք ասաց ի հրեշտակաց . որդի իմ

1 Շատ կերպերով և շատ օրինակներով Աստուած առաջուց մեր հարանց հետ խօսեց մարգարէների ձեռնով ։

2 Յս վերջին օրերումս մեզ հետ խօսեց որդովն . որ նորան ամէն բանի ժառանգ դրաւ , որ նորանով էլ յաւիտեանները արաւ ։

3 Որ նորա փառաց լոյսն է և նորա էութեան պատկերն՝ որ իրան զօրաւոր խօսքովն ամէն բան պահպանումէ . որ երբոր մեր մեղքերի սրբութիւն արաւ՝ մեծութեան աջ կողմն նստեց ի բարձունս ։

4 Յս հրեշտակներից էնքան աւելի գերազանց էլաւ՝ որքան նորանցից աւելի գերազանց անուն ժառանգեց ։

5 Ինչու որ հրեշտակներից որի՞ն ասաց . դու ես իմ

իմ ես դու՝ ես այսօր ծնայ
զքեզ։ և դարձեալ՝ ինչ ես
եղէց նմա ՚ի հայր, և նա
եղիցի ինձ յորդի ։

6 ԱՅլ յորժամ միւսանգամ մուծանէ զանդրանիկն
յաշխարհս, ասէ. երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք
Աստուծոյ ։

7 Եւ առ հրեշտակսն ասէ. ո՛ արար զհրեշտակս իւր
հոգիս, և զպաշտօնեայս իւր
բոց հրոյ ։

8 Իսկ յորդւոն ասէ. աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան՝ գաւազան
արքայութեան քո ։

9 Սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն.
վասն այսորիկ օծ զքեզ Աստուած քո իւղով ուրախութեան՝ առաւել քան զընկերս քո ։

10 Եւ դու Տէր՝ ՚ի սկզբանէ զերկիր հաստատեցեր. և
գործք ձեռաց քոց երկինք
են ։

11 Նոքա կորնչին՝ և դու
կաս և ամենեքեան իբրև զհանդոյս մաշեսցին ,

12 Եւ իբրև զվերարկուս. գալարեսցես զնոսա իբրև

որդիս , ես էսօր ծնայ քեզ.
և մինչ. թէ ես նորան հայր
կընինիմ , և նա ինձ որդի կընինի ։

6 Եւ մինչ՝ երբոր առաջնեկին աշխարհը կ՚մտցնէ՝ ասէ. թող երկրպագեն
թիւն տան նորան Աստուծոյ
ամէն հրեշտակներն ։

7 Հայց հրեշտակներուն համար ասէ. նա որ իրան
հրեշտակներըն հոգի արաւ ,
և իրան պաշտօնեաներըն կրակի բոց ։

8 Հայց որդւոյն ասէ՝ Աստուած քո աթոռդ (կայ)
յաւիտեանս յաւետենից. քո
թագաւորութեան գաւազանն՝ շնորհք գաւազան է ։

9 Սիրեցիր արդարութիւնըն և ատեցիր անօրէնութիւնըն. սրահամար Աստուած՝
քո Աստուածդ օծեց քեզ
ուրախութեան իւղովն , աւելի քանի քո ընկերներըդ ։

10 Եւ դու՝ սկի Տէր, սկզբնէն երկիրը հաստատեցիր.
և երկինքն քո ձեռքի գործն է ։

11 Նորանք կըկորչին, բայց դու կըկենաս, կըմնաս. ամէնքն
շորերի պէս կըմաշվին ,

12 Եւ վերարկուի պէս կըկոլոշես նորանց հագուստիպէս

պչանդերձ, և գալարեսցին. բայց դու նոյն իսկ ես՝ և ամք քո ոչ պակասեն։

13 Ցո՞ երբէք ասաց ՚ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթըշնամիս քո պատուանդան ոտից քոց։

14 Ոչ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ առաքին ՚ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն։

և կըկոլոլվին. բայց դու (միշտ) հենց էն ես և քո տարիներդ չեն պակասիլ։

13 Հրեշտակներից իսկի ո՞րի՞ն ասաց. իմ աջ կողմն նստիր մինչև որ քո թշնամիներըդ քո ոտացդ կոխելիք դնեմ։

14 Չէ՞ որ ամենքն պաշտօնեայ հոգիներ են՝ որ ուղարկվում են սպասաւորութիւն անելոց նորանց համար՝ որ փրկութիւնըն պիտի ժառանգեն։

ԳԼՈՒԽ Բ։

1 Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել ևս ուշկնդիր լինել բանիցն ասացելոց՝ զի մի երբէք նուաղեսցուք։

2 Զի եթէ որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև, և ամենայն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի։

3 Մեք զիա՞րդ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փըրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ ՚ի Տեառնէ. և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ՚ի

1 Եբրահամար պէտք է մեզ, որ էլ աւելի ականջ դնենք էն ասած բաներին, որ չըլինի թէ դատարկացած պակասվինք։

2 Պատճառն որ եթէ էն բանն հաստատ էլաւ որ հրեշտակների ձեռովն խօսվեցաւ՝ և ամէն յանցանքն և անհնազանդութիւնն ընդունեց իրան արդար պատիժըն։

3 Ապա մենք ինչպէս կըպրծնըվինք, թէ որ անհոգ լինինք էնպէսի փրկութեան համար՝ որ սկըզբումն քարոզվեցաւ Տէրէյն, և նորանց

մեզ Հաստատեցաւ՝

4 Վկայեալ Աստուծոյ նշանօք և արուեստիւք և պեսպես զօրութեամբք, և մասամբք Հոգւոյն սրբոյ ըստ իւրոյ կամաց։

5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց գկեանդելոցն, վասն որոյ մեք խօսիմք։

6 Վկայեաց ոք ուրեք՝ և ասէ. զինչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ եթէ այց արասցես նմա։

7 Փոքր մի խնամարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառօք և պատուով պսակեցեր զնա՝ և կացուցեր զնա՝ ի վերայ ձեռակերտաց քոց։

8 Զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. արդ՝ ի հնազանդեցուցանելն զամենայն, ոչ ինչ եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ ևս տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն։

9 Այլ զփոքր մի խնամարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուանն որ լուեցեալ, մեր ի - ջուստ հաստատելոյ.

4 Որ Աստուած նորան վկայեց նշաններով և հրաշք - ներով, և կերպ կերպ զօրու - թիւններով, և սուրբ հոգւոյ բաշխած պարգևներով՝ ինչ - պէս որ ինքն կամեցաւ։

5 Պատճառն որ չէ թէ հրեշտակներին հնազանդ ա - րաւ էն նոր գալոց աշխարհ - քըն՝ որ մենք նորանից խո - սումնք։

6 Մինն վկայեց մինտեղ և ասում. մարդն ի՞նչ է՝ որ դու յիշես նորան, կամ մարդոյ որդին, որ տես գաս նո - րան։

7 Մինչիչ ցած արիր նո - րան քանեմէ հրեշտակներըն. փառքով և պատուով պսա - կեցիր նորան և քո ձեռքի գործքերին վերայ կանգնայ - ցիր նորան։

8 Ամեն քան հնազանդ ա - րիր նորա ոտաց տակն. ու - րեմն ամէնըն որ հնազանդայ - րուց՝ իսկի մին քան չթող - ցից՝ որ հնազանդ չլինի նո - րան. բայց հիմիկ դեռ չենք տեսնում՝ եթէ ամէն քան հնազանդ է նորան։

9 Բայց նորան որ մինչիչ աւելի ցած էլաւ քանեմէ

սանեմք զՅիսուս՝ վասն չարչարանաց մահուն. փառօք և պատուով պսակեալ. զի շնորհօքն Աստուծոյ՝ վասն ամենեցուն զմահ ճաշակեսցէ

10 Ջի վայելէր իսկ նմա, վասն որոյ ամենայն՝ և որով ամենայն, բազում որդիս ի փառս առնել՝ և զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել:

11 Ջի որ սրբէն և որ սրբին՝ ի միոջէ էին ամենեքին, վասն որոյ ոչ ամօթի համարի եղբարս անուանել զնոսա, և ասել.

12 Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ:

13 Եւ դարձեալ. Թէ ես եղէց յուսացեալ ի նա. և դարձեալ. ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած:

14 Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցան արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց. զի մահուն խրտով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ:

հրեշտակներն, տեսնումենք որ Յիսուսն է՝ մահի չարչարանքին համար փառքով և պատուով պսակված որ Աստուծոյ շնորհքովն ամենին համար մահի համըն առնէ:

10 Պատճառն որ վայելուչ էր նորան՝ որ ամէն բան նորա համար և ամէն բան նորանով է, որ շատ որդիք փառքի մէջ տանի, և նորանց փրկութեան առաջնորդըն չարչարանքով կատարէ:

11 Ինչու որ նա՝ որ սրբուն և նորանք՝ որ սրբվումն, ամէնքն էն մըտիկն են. և նրահամար ամօթ չի համարում՝ նորանց եղբայր կոչել և ասել.

12 Կըպատմեմ քո անունը նըդ իմ եղբարներիս, և ի կեղեցոյ միջումն կօրհնեմ քեզ:

13 Եւ միևնել. Թէ ես յուսըս կըդնեմ նորա վերայ. և միևնել. ահա ես և իմ մանուկներս՝ որ նորանց Աստուած տուաւ ինձ:

14 Ուրեմն որովհետև մանկունքն արիւնին և մարմնոյն մասնակից էլան, հենց ինքն էլ մասաւոր լինելով մասնակից էլաւ նորանց. որ իրան մահովն խափանէ նորան, որ մահի իշխանութիւնըն ունէր այսինքն՝ սատանային:

15 Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուան երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութիւն։

16 Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակն աբրահամու բուռն հարկանէ։

17 Ուստի պարտ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոչմանէն անտի, առ ՚ի քաւել զմեղս ժողովրդեանն։

18 Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կարօղ է և փորձանաւորացն օգնական լինել։

15 Եւ ապրեցնէ նորանոյ որ մահէն վախենալով միշտ ծառայութեան մէջ ընկած բնաւ վաճ էին։

16 Պատճառն որ նա իսկի հրեշտակներուն ձեռք չի տալիս. բայց աբրահամի զաւակին կ՚ընդունի ձեռք տալիս։

17 Ընդոյ նրահամար պէտք էր նորան՝ որ իսպառ եղբայրներուն նմանվի. որ ողորմած լինի, և հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ առաջին անելոյ բաներուն, որ ժողովրդի մեղքերըն քաւէ։

18 Ինչու որ նորանով որ ինքն չարչարվեցաւ և փորձվեցաւ, կարօղ է նորանոյ էլ օգնութիւն տալ՝ որ փորձվումն։

ԳԼ. Գ.

1 Ուստի՝ եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս.

2 Որ հաւատարիմ է առաքսէն իւրոյ՝ որպէս և Մովսէս յամենայն ՚ի տան նորա։

3 Զի առաւել ևս փա-

1 Ուրեմն՝ սուրբ եղբարք՝ որ երկնաւոր կոչումին մասնակից էք, մտիկ տուէք մեր դաւանութեան առաքելոյն և քահանայապետին՝ Յիսուս Քրիստոսին։

2 Որ հաւատարիմ է իրան հաստատողին, ինչպէս որ Մովսէսն էլ նորա բոլոր տանն (էլաւ։)

3 Պատճառն որ նա էլա-

ռայ քան զմովսէս արժանի եղև. որչափ առաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելն ։

3 Ամէն տուն կազմի, Յումէ կազմի. իսկ որ զամենայնն արար, Աստուած է ։

5 Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իբրև զծառայ՝ առ ի վկայութիւնն բանիցն ասելոց ։

6 Այլ Քրիստոս իբրև որդի՝ ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք. միայն թէ զմարձակութիւն և զպարծանս յուսոյն մինչև ի վախճան հաստատուն ունիցիմք ։

7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին սուրբ. այսօր եթէ ձայնի նորա լսիցէք,

8 Մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ի դառնութեան յաւուրն փորձութեան յանապատի.

9 Ուր փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս՝ և տեսին զգործս իմ զքառասուն ամ։

10 Վասն որոյ տաղտկացայ ազգիս այնորիկ, և ասացի. միշտ մոլորեալ են սրտիւ, եւ նոքա ուղիղ վարքի արժան եղեն քանզի մօսէսն՝ որքան որ տուն շինօղն աւելի պատիւ ունի քանզի տունն ։

4 Ինչու որ ամէն տուն՝ որ շինվուածի՝ մէկուն է շինվուած. բայց նա որ ամէնքն արաւ՝ Աստուած է ։

5 Մօսէսն հաւատարիմ է նորա բոլոր տան մէջն՝ ինչպէս ծառայ՝ էն ասելոց բաներին վկայ լինելով ։

6 Բայց Քրիստոս՝ ինչպէս որդի իրան տան վերայ. որ նորա տունն հէնց մենք ենք. միայն էթէ էն յուսոյ համարձակութիւնը և պարծանքն մինչև վերջն հաստատ բռնենք։

7 Նրահամար սուրբ հոգին էսպէս է ասում. էս օր էթէ նորա ձայնը լսէք,

8 Մի պնդացնէք ձեր սրտերը՝ ինչպէս որ էն բարկացնելոյ ժամանակումն, փորձութեան օրումն, անապատի (չէօլի) միջումն ։

9 Որ էնտեղ ձեր հարքն փորձեցին ինձ՝ քննեցին ինձ, և իմ գործքերը տեսին քառասուն տարի ։

10 Նրահամար զղվեցայ էն ազգիցն և ասացի. միշտ մոլորված են սրտով, և նոքանք

սրտիւք. և նոքա ոչ ծանեան զՀանապարհս իմ։

11 Որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում՝ թէ մտցեն ՚ի հանգիստ իմ։

12 Տեսէք՝ եղբարք, գուցէ երբեք ՚լինիցի յոմանք ՚ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ լինել յԱստուծոյ կենդանւոյ։

13 Այլ մխիթարեցէք զիմեանս զօրհնասացք՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ. զի մի ոք խստասցի ՚ի ձէնջ խաբէութեամբ մեղայ։

14 Քանզի բաժանորդք եղեալ Քրիստոսի. միայն թէ պահիցուք հաստատութեանն մինչև ցվախճան պինդ կալցուք։

15 Ցասելն, այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութեանն։

16 Քանզի ոմանք լուան և դառնացուցին, այլ ոչ ամենեքեան՝ որ եկեալ էին յԵգիպտոսէ ՚ի ձեռն Մովսէսի։

17 Ցումի՞ տասներկայեաւ զբառասուն ամն. ո՞չ ապաքէն ՚ի յանցուցելոյն. որոց

չըՀանաչեցին իմ Հանապարհս։

11 Ինչպէս որ երդում կերի իմ բարկութեանումս. թէ որ մտնեն իմ հանգստի մէջ։

12 Նայեցէք՝ եղբարք, որ չըլինի թէ ձեզանից մինն անհաւատութեան չար սիրտ ունենայ՝ որ ապստամբ լինի կենդանի Աստուածանից։

13 Բայց իրար մխիթարեցէք ամէն ժամանակ, քանի որ էս օրս առաջիդ կայ. որ չըլինի թէ ձեզանից մինն պնտանայ մեղքի խաբէութենով։

14 ՊատՀառն որ մասնակից եղանք Քրիստոսի. միայն թէ էն սկսած Հաստատութիւնըն մինչև վերջն պինտ բռնենք։

15 Ինչ որ ասում՝ թէ էսօր՝ թէ որ նորա ձայնըն լսէք մի պնտացնէք ձեր սրտերըն ինչպէս որ բարկացնելոյ ժամանակում։

16 Ինչու որ միքանիսն լսեցին և բարկացրին. բայց ոչ թէ էն ամէնքն որ եգիպտոսից դուրս էին եկած Մօսէսի ձեռովն։

17 Որմից զղուեցաւ էն քառասուն տարին. չէ որ էն մեղք գործողներից, որ նո-

ոսկերքն անկան յանապատի անդ ։

18 [Բ]ւմ երդուաւ չմտա նել ՚ի հանգիստն իւր, եթէ ոչ անհաւատիցին ։

19 Յո տեսանեմք՝ զի ոչ կարացին մտանել վասն անհաւատութեան ։

ԳԼ· Դ ։

1 [Ա]րկիցուք այսուհետև, գուցէ ՚ի թողուլ զաւետիսն՝ ՚ի մտանելոյ ՚ի հանգիստն նորա՝ գտանիցի ոք ՚ի ձէնջ նուազեալ ։

2 Քանզի եմք աւետարա նեալք որպէս և նոքայն· այլ նոցա ոչ ինչ օգնեաց լուր բանին, չմտքելոցն ՚ի հնազանդութիւն հաւատոյ ։

3 [Մ]եք մտանեմք ՚ի հանգիստն, որք հաւատացաքս· որպէս և ասացն՝ թէ որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ· թէպէտ և արդիւնքն իսկզբանէ աշխարհի լեալ էին ։

4 Քանզի ասէ ուրեք վ

բանոյ ոմանց ընկան էն անապատի մէջն ։

18 [Բ]ւմ երդում կերաւ՝ որ իրան հանգստի մէջ չը՛պիտի մտնեն՝ եթէ ոչ էն անհաւատներին ։

19 Յո տեսնումենք՝ որ չը կարացին մտնել էն անհաւատութեան պատճառովը ։

Դ ։

1 [Ա]ւրեմն վախենանք՝ որ չըլինի թէ նորա հանգըստի մէջ մտնելոյ աւետիքն թողնելով՝ ձեզմնից միուն պակասացած գտնըվի ։

2 Պատճառն որ աւետիքն քարոզվեցաւ մեզ ինչպէս որ նորանց էլ· բայց նորանց իսկի օգուտ չի՛ բերում խօսքի քարոզութիւնն, որ չը՛կակզացան հաւատքի հնազանդութեան ։

3 Բայց մենք էն հանգստին մէջ ենք մտնում՝ որ հաւատացինք· ինչպէս որ նա էլ ասաց· թէ ինչպէս որ երդում արի իմ բարկութեանում՝ եթէ մտնեն իմ հանգստի մէջ· թէ և գործքերն աշխարհքի սկըզբից կատարված էին ։

4 Ինչու որ միտեղ եօթ-

աւուրն եօթնեւորդի այսպէս։ և հանդեաւ Աստուած յաւուրն եօթնեւորդի յամենայն գործոց իւրոց։

5 Եւ աստ դարձեալ ասէ. Թէ մտցեն ի հանգիստ իմ։

6 Եւ արդ քանզի արգելան ոմանք մտանել ի նա, և որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին վասն անհաւատութեանն։

7 Դարձեալ այլ օր սահմանէ՝ զայսօրն ի դաւիթ, և ասէ՝ յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյնն ասաց, այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր։

8 Զի եթէ զնոսա Յեսուայ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ։

9 Արդ ուրեմն նուաղեալ է շաբաթուն ժողովրդեանն Աստուծոյ։

10 Զի որ եմուտ ի հանգիստն նորա, և նա հանգեաւ յիւրոյ գործոյ անտի. որպէս և Աստուած յիւրայոցն։

11 Փութացարուք այսուհետև մտանել յայն հանգիստ. ներորդ օրին համար էսպէս է ասում. և Աստուած եօթներորդ օրումն հանգիստ առաւ իւրան ամէն գործքերիցն։

5 Եւ էստեղ միևնոյն ասում՝ եթէ մտնեն իմ հանգստի մէջ։

6 Ուրեմն որովհետև մուտ մի որ միևնոյնին նորա մէջ մտնեն՝ և նորանք՝ որ առաջուց աւետիքն քարոզվեցաւ (նորանց), չըմտին անհաւատութեան պատճառով։

7 Միևնոյն ուրիշ օր հաստատում է էսօրըն դաւթումն, և էնքան ժամանակ ներիցն ետև ասում, ինչպէս որ առաջ ասաց. Էսօր որ նորա ձայնըն լսէք, մի պնդացնէք ձեր սրտերըն։

8 Ինչու որ եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ էր տարել՝ էլ նորանից ետև ուրիշ օրի համար չէր խօսիլ։

9 Ապա ուրեմն մուտ շաբաթի հանգիստ՝ Աստուծոյ ժողովըրդին համար։

10 Պատճառն որ նա որ նորա հանգիստն մտաւ՝ նա էլ հանգստացաւ էն իրան գործքերիցն՝ ինչպէս որ Աստուած էլ իրաններիցն։

11 Ուրեմն ջանք անենք էն հանգստին մէջ մտնելոյ. որ

ղի մի ոք ընդ նովին օրինա-
կաւ անհաւատութեանն ան-
կանիցի ։

12 Քանզի կենդանի է
բանն Աստուծոյ՝ և ազդօղ՝
և հատու քան զամենայն սուր
երկսայրի, և անցանէ մինչև
ցօրոշումն շնչոյ՝ և ոգւոյ՝ և
յօդից՝ և ուղղոց. և քննիչ
է մտաց՝ և խորհրդոց սրտիւ։

13 Եւ չի՛ք արարած ան-
բևոյթ Յերեսաց նորա. այլ
ամենայն ինչ մերկացեալ
կայ առաջի աչաց նորա՝ զոր-
մէ մեր բանքս են ։

14 Ունիմք այսուհետև քա-
հանայապետ մեծ անցեալ ըզ
երկինս, զՅիսուս զորդին
Աստուծոյ. սլինդ կալցուք
զխոստովանութիւնն ։

15 Քանզի ոչ ելիք ու-
նիմք քահանայապետ՝ որ չի-
նի կարող չարչարակից լինել
տկարութեան մերոյ. այլ
փորձ է ամենայնիւ ըստ նմա-
նութեան առանց մեղաց ։

16 Արտիցուք այսուհետև
համարձակութեամբ առաջի
աթոռոյ շնորհացն նորա. զի
ընկալցուք զողորմութիւն՝ և
գտցուք շնորհս ի դեպ ժա-
մանակի օգնականութեան ։

չը՛լինի թէ միանգ հենց են
անհաւատութեան օրինակին
պէտ ընկնի ։

12 Ինչու որ Աստուծոյ
խօսքն կենդանի է և զօրաւոր
և աւելի կտրուկ քանիթէ ա-
մէն երկսայրանի սուր, և
ներս է մանուր մինչև շուն-
չի և հոգւոյ և խաղերի և ծու-
ծի բաժանվիլին՝ և սրտի
մտքեր և խորհուրդներ քննո-
ղէ ։

13 Եւ իսկի մին ստեղծված
անթաքուցած չէ նորա երեսիցն՝
բայց ամէն բան մերկ և յայտ-
նի է նորա աչաց առաջին. որ
նորա վերայ մենք խօսումենք։

14 Ուրեմն որովհետև մեծ
քահանայապետ ունինք՝ Քանի
Աստուծոյ որդոյն, որ երկին-
քովը անցկացաւ, էլ պինտ
բռնենք դաւանութիւնը ։

15 Պատճառն որ չէթէ ու-
նինք քահանայապետ՝ որ
չըկարենայ մեր տկարու-
թեան հետ չարչարակից լի-
նիլ. բայց նա ամէն բանով
փորձվեցաւ (մեզ) նման՝ (բայց)
առանց մեղաց ։

16 Ուրեմն համարձակութեա-
նով մօտենանք նորա շնոր-
հաց աթոռին, որ ողորմա-
թիւն ընդունինք և շնորհք
գանենք էն ժամանակուն՝
որ օգնութիւն պէտք է ։

ԳԼ. Ե։

1 Զի ամենայն քահանայապետ՝ ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կայ յաստուածային կողմն անդր. զի մատուսցէ պատարագս և զոհս վասն մեղաց։

2 Ձափով չարչարակից կրօղ է լինել տգիտաց և մոլորելոց. քանզի և ինքն իսկ ակարութեամբ զգաճեալ է։

3 Վասն այնորիկ հարկ է որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մատուցանել պատարագս վասն մեղաց։

4 Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ. այլ կոչեալն Աստուծոյ՝ որպէս և Ահարոն։

5 Նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ. այլ որ խօսեցաւն առ նա՝ Թէ որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ։

6 Որպէս և ի միւսում ասէ. դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։

1 Պատճառն որ ամէն քահանայապետ մարդկանցից առած և մարդկանց համար աստուածային բաներում կանգնած է՝ որ պատարագներ և մատաղներ մատուցանէ մեղաց համար։

2 Որ նա կարօղ է չափով չարչարակից լինել տգէտներին և մոլորուածներին. պատճառն որ հենց ինքն էլ տկարութեամբ պատած է։

3 Ինչն պատճառով պէտք է՝ որ ինչպէս ժողովրդին համար՝ էնպէս էլ իրան անձին համար պատարագ մատուցանէ մեղաց համար։

4 Եւ չէ թէ մինն իրան անձնով է էն պատիւը առնում. բայց նա որ Աստուածանից կանչուած է՝ ինչպէս Ահարոնն։

5 Հենց էնպէս էլ Քրիստոս չէ թէ ինքն վաղ դրաւ իրան անձին՝ որ քահանայապետ լինի. բայց նա որ ասաց նորան՝ Թէ դու ես իմ որդին, ես էսօր ծնայ քեզ։

6 Ինչպէս որ էլ մեկել տեղուն ասում. դու քահանայ ես յաւիտեան մելքիսեդեկի կարգին պէս։

7 Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն, որ կարօղն էր ապրեցուցանել զնա (ի մահուանէ), ուժգին դոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լսելի լինէր առ Լաւուվթեն։

8 Թէպէտ և որդի է՝ ուսաւ ՚ի չարչարանաց անտի զհնազանդութիւն։

9 Եւ իբրև կատարեցաւ՝ եղև ամենայն հնազանդելոց իւրոց պատճառ փրկութեան յաւիտենից։

10 Եւ անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի։

11 Ումանս որոյ բազում է մեզ բանք, և դժուարըմբռնելիս ՚ի մեկնել. քանզի լսելիքդ եղեր ունկանց լսելոք։

12 Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին. դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են նշանագիրք խոսքի բանիցն Աստուծոյ. և եղեր ունկանց կարօտք կաթնոյ և ոչ հաստատուն կերակրոյ։

13 Զի ամենայն՝ որ կաթնակեր է, տգէտ է, բանին արդարութեան. զի մանկիկ է։

7 Նա որ իւրում մարմնոյ օրերուն աղօթք և աղաչանք սաստիկ աղաղակով և արտասուքով մատուցանում էր նորան՝ որ կարող էր ապրեցնել իրան. և լսուեցաւ իրան լաւութեան համար։

8 Թէ և որդի էն՝ չարչարանքներովն հնազանդութիւնը սովրեց։

9 Եւ երբոր կատարուեցաւ՝ իրան ամէն հնազանդողներին համար յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ։

10 Եւ Աստուածմէն անուանուեցաւ (յաւիտենական) քահանայապետ՝ Մելքիսեդեկի կարգին պէս։

11 Որ նորա համար շատ բան ունինք ասելոյ՝ որ դժուար է խօսքերով մեկնել. ինչու որ թմրած և տկար եղած ականջներով։

12 Ընդ որ տեղակ պէտք էր ձեզ վարդապետ լինիլ ժամանակին մտիկ տալով՝ միանալ պէտք է որ դուք սովրիք թէ ինչ են Աստուծոյ խօսքերուն առաջին նշանագիրները. և կարօտ եղած կաթի և ոչ թէ հաստատ կերակուրի։

13 Ինչու որ ամէն՝ ով որ կաթնակեր է, տգէտ է որ-

դարուՀետեան, քանզի տղայ է։

14 Ա՛յլ կատարելոյն է հաստատուն կերակուր. որոյ՝ վասն ՚ի չափոն հասանելոյ ձաշակելիքն կիրթ են ընտրուՀետեան բարւոյ և չարի։

դարուՀետեան խօսքին՝ որով՝ հետև տղայ է։

14 Բայց հաստատ կերակուրն կատարեալներին է. որ նորանք չափահաս են. և ներահաճար ուտելոյ վարժուած զգօն եղբայրք ունին՝ բարին և չարըն իրարիցջոկելոյ համար։

ԳԼ. Զ։

1 Ա՛յսուամենայնիւ որոյ Թողեալ զսան սկզբանն Քրիստոսի, ՚ի կատարումն հնկեսցուք. մի միւսանգամ արկանել հիմն ապաշխարուՀետեան՝ ՚ի մեռելոտի գործոց անտի, և հաւատոյն որ ՚ի Աստուած.

1 Վրահամար Քրիստոսի վարդապետուՀետեան առաջին սկըզբունքներըն Թողնք և դէպի կատարեալն դանք. առանց միւնչ հիմըն դնելոյ ապաշխարուՀետեան էն մեռած գործքերիցն, և հաւատքին՝ որ դէպի Աստուած է։

2 ՚Ի մկրտուՀետենէ և ձեռնադրուՀետեան, և ձեռնադրութեան մեռելոց, և յարութեան մեռելոց, և յաւիտենական դատաստանէ։

2 Եւ մկրտուՀիւններէ ուսմունքին, և ձեռքի ձեռնադրուՀետեան, և մեռելներէ յարութիւն առնելոյն, և յաւիտենական դատաստանին։

3 ՚Ի արդ՝ արասցուք զայն, եթէ Աստուած հրամայեսցէ։

3 Եւ հիմիկ էն անենք՝ Թէ որ Աստուած հրամայէ։

4 Քանզի անհնար է միանգամ մկրտելոյն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւէ, և հաղորդք եղեն հոգւոյն սրբոյ,

4 Պատճառն որ՝ անկարելի է որ նորանք՝ որ միանգամ մկրտած են՝ որ երկնաւոր պարգեւներէն համըն առին և սուրբ հոգւոյն մասնակից էլան,

5 Իւ զգեղեցիկ բանին Աստուծոյ Հաշակս Հաշակեցին, և զգօրութիւնս հանդերձելոյ աշխարհին,

6 Իւ կործանեացին. միւսանգամ նորոգել յապաշխարութիւն. և վերստին՝ ի խաչ հանել անձանց զորդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակել։

7 Քանզի երկիր՝ որ ըմպիցէ զանձրեւ բազում անգամ եկեալ՝ ի վերայ նորա, և ծնանիցի արդիւնս շայեկանս նոցա՝ վասն որոյ գործիցին, ընդունի զօրհնութիւն Աստուծոյ։

8 Իսկ որ բերէ զփուշ և զտատասկ, անպիտան է՝ և մերձ յանէծս. և վախճան նորա յայրուիլն։

9 Բայց հաստատեալ եմ վասն ձեր՝ սիրելիք, ի լաւ անդր, և որ լինի ի փրկութեամբ. զի թէպէտ և այսպէս խօսիմք։

10 Ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ գործոյ ձերոյ և զսիրն՝ որ ցուցէք յանուն նորա. զի պաշտեցէք զսուրբսն՝ և պաշտէք։

11 Իւ մեք ըղձանամք՝ զի իւրաքանչիւրոք ի ձէնջ զնոյն

5 Իւ Աստուծոյ աղնիւ խօսքի, և նորգալոյ աշխարհի զօրութիւնների համըն աւրին։

6 Իւ (յետոյ) կործանվին. որ (նորանք) միներ նորոգվին ապաշխարութիւն գալոյ. ինչու որ՝ Աստուծոյ որդոյն միներ իրանոյ համար խաչեցին և միներ խայտալոկ արին։

7 Պատճառն որ միս հող՝ որ շատ անգամ իրան վերայ եկած անձրևն խմի, և շատաւոր պտուղ բուսայնի նորանոյ համար՝ որ գործեցին նորան, նա Աստուծոյ օրհնութիւնըն կընդունի։

8 Բայց ին որ փուշ և տատասկ բերումի՝ անպիտան ի և անէծքին մօտ. և նորա վերջն՝ այրվիլն ի։

9 Բայց հաստատ եմ ձեզ համար՝ սիրելիներ, որ լաւ կոզմի էք, և էն որ լիքն ի փրկութենով. թէ և էսպէս ենք խօսում։

10 Ինչու որ՝ Աստուած անիրաւ չէ՝ որ մոռանայ ձեր գործքերըն և սէրըն, որ նորա անունովն ցոյց տուիք. նրանով որ սըրբերին ծառայումիք և ծառայումէք։

11 Իւ մենք ցանկանո մենք՝ որ ցեզանից ամէն մէկդ հենց

փոխի ցուցանիցէ ՚ի հաստատութիւն յուսոյն՝ մինչև ցվախճան։

12 Զի մի հիւանդամիտք լինիցիք, նմանո՛ղք եղերուք այնոցիկ, որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն։

13 Զի աբրահամու խոստացեալ զաւետիսն Աստուծոյ, քանզի յայլ ոք ՚ի մեծն չ դոյր երդնուլ։

14 Ցանձն իւր երդուաւ, և ասէ. այո, օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զքեզ։

15 Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն։

16 Ապաքէն մարդիկ՝ որ ինչ ՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն. և ամենայն հակառակութեան նոցա վէճս առ ՚ի հաստատութիւն, երդումն է։

17 Որով առաւել ևս կամեցեալ Աստուածս՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատուն խորհուրդն ի բոց, միջնորդեաց երդմամբ։

18 Զի երկու անփոփոխե-

են ջանքըն ցոյց տայ՝ որ յոյն հաստատ ճոյ մինչև վերջն։

12 Որ մտքով լծյալ չըլլինք։ (բայց) նմանո՛ղ եղէք նորանց, որ հաւատքով և երկայնմտութենով աւետիքները ժառանգեցին։

13 Պատճառն որ՝ Աստուած երբոր աբրահամին տուաւ աւետիքի խոստումնքըն՝ որովհետև մին ուրիշ աւելի մեծ չըկար՝ որ նորանով երդում ուտէ։

14 Իրան անձնովն երդում կերաւ և ասաց։ ուղղրդ որ օրհնելով կօրհնեմ քեզ, և շատացնելով կըշատացնեմ՝։

15 Եւ նա ենպէս երկայնամիտ եղաւ և աւետիքին հասաւ։

16 Իրաւի է որ մարդիկ նոր անով երդում են ուտում՝ որ իրանցից վերև է, և նորանց ամէն հակառակութիւնները վճիռն՝ երդումն է՝ որ նորանով բանն հաստատուի։

17 Նրահամար Աստուած էլ՝ որովհետև էլ աւելի կամեցաւ աւետիքի ժառանգողներին ցոյց տալ իրան խորհըրդոյ հաստատութիւնըն, երդումըն մէջ դրաւ։

18 Որ երկու բանով՝ որ չեն

լի իւրքն՝ որովք անհնարին իյէ տեղ Աստուծոյ, հաստատատուն միխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան եղեալք բռնալ հարկանել զյանդերձեալ յուսոյն.

19 Զի որ իբրև զխարխս հաստատուն և անշարժ ունիմք անձանց մերոց, որ և մըտանիյէ ի ներքին կողմն վարագուրին.

20 Ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւիտենից։

ԳԼ. Ը։

1 Որ Մելքիսեդեկ այս Սաղէմայ քահանայ Աստուծոյ բարձրելոյ. որ ել ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ դայր ի կոտորածէ թագաւորացն՝ և օրհնեաց զնա։

2 Որում և տասանորդս յամենայնէ եհան Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղէմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան։

փոփոխելի, որ նորանցով անկարելի է՝ որ Աստուած սուտ խօսի, հաստատ միխիթարութիւն ունենանք մենք, որ ապաւինեցանք առաջի դրած յոյսըն ձեռքով բռնելոյ։

19 Որ նորան՝ (նաւու) հաստատ և անշարժ երկաթի պէս ունինք մեր անձնեղբս համար. որ էլ մտնում վարագուրի ներսի կողմն։

20 Որ տեղ որ մեր առաջնորդ Յիսուսն մտաւ մեզ համար՝ Մելքիսեդեկի կարգին պէս, յաւիտենական քահանայապետ եղած։

Գ. Ը։

1 Պատճառն որ՝ էս Մելքիսեդեկ սաղէմի թագաւոր էր. բարձրեալ Աստուծոյ քահանայ. որ դուրս եկաւ աբրահամի առաջն՝ երբոր նա թագաւորների կոտորելուցն յետ դարձած գալիս էր՝ և օրհնեց նորան։

2 Որ աբրահամ նորան էլ ամէն բաներից տասանորդ տուաւ. նա առաջ թարգմանվում արդարութեան թագաւոր, և ապա՝ սաղէմի թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր։

3 Անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս նոցանէ՝ որոց ոչ սկիզբն աւուրց և ոչ կատած կենաց. նմանեալ որդւոյ Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր։

4 Արդ տեսէք որպիսի որ էր սա, որում և աբրահամ տասանորդս ետ յաւարէ անալի՝ նահապետն։

5 Եւ որք յորդւոցն ղեւեայ գքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն. այսինքն ի զեղբարս իւրեանց. թէպէտ և ելեալ իցեն յերկանայն աբրահամու։

6 Իսկ չհամարեալն յազգս նոցանէ՝ տասանորդեաց զաբրահամ. և զնա՝ որոյ գաւետիսն ընկալեալ էր, օրհնեաց։

7 Զի առանց ամենայն հակառակութեան, նուաղն ի լաւէն անտի օրհնեսցի։

8 Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն. բայց անդ վկայեաւ՝ թէ կենդանի է. և որպէս բանիւ կարգ է ասել.

3 Առանց հօր, առանց մօր, մին ազգի մէջ չըհամարուածՙ որ ոչ օրերի սկիզբըն ունի, և ոչ կենաց վերջըն. (բայց) Այ որդին նման եւած կենդանի մնում քահանայ։

4 Խիկ տեսէք թէ քանի մեծ էր սա՝ որ աբրահամ նահապետն էլ նորան տասանորդ տուաւ էն (առած) աւարիցն (Քալանիցն)։

5 Եւ ղևիի որդիներիցն նորանք որ քահանայութիւնըն առնումն, հրաման ունին տասանորդ առնելոյ ժողովրդիցն օրընքին պէս. այսինքն իրանց եղբարներիցն. թէ և իրանք էլ աբրահամի երանքիցն (ձէչիցն) են առաջ եկած։

6 Բայց նա, որ նորանց ազգի մէջ չըհամարուածՙ տասանորդ արաւ աբրահամիցն և օրհնեց նորան՝ որ աւետիքներըն ընդունել էր։

7 Խիկ առանց ամէն հակառակութեան է, որ ցածն վերևիցն օրհնըվուի։

8 Եւ էստեղ մեռնելու մարդիկ տասանորդ են առնում. բայց էնտեղ վկայեցաւ թէ նա կենդանի է։

9 Թէ աբրահամաե և զևի իսկ՝ որ զտասանորդսն առ-
նոյր , տասանորդեցաւ ։

10 Զի դերևս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ-
առաջ եղև նմա մելքիսեդեկ ։

11 Իսկ արդ՝ եթէ կատա-
րումն՝ ի ձեռն ղևտացեոց քահանայութեանն էր, քան-
զի ժողովուրդն յայն օրէնս դրեցաւ. զի՞նչ պիտոյ էր ի
կարգին մելքիսեդեկի այլում քահանայ յառնել, և ոչ ա-
սել՝ թէ ըստ կարգին ահա-
րոնի կարգին պէս չասվի ։

12 Այլ փոփոխել քահա-
նայութեանն , հարկ էր և օրինացն փոփոխումն լինել ։

13 Զի ղորմէ այսպէսն ա-
սի՝ յայլմէ ազգէ կալաւ հա-
ղորդութիւն , յորմէ ոչ ոք երբէք եղև հաղորդ սեղա-
նոյն ։

14 Արդ յայտ իսկ է, թէ
յայգմէ յուդայ ծագեաց Տէր մեր . յորմէ ազգէ վասն քա-
հանայից մովսէս ինչ ոչ ճա-
ռեաց ։

15 ԵՒ առաւել յայտ
է՝ թէ ըստ նմանութեան մելքիսեդեկի յառնելոյ է այլ քահանայ ։

9 Ու ինչպէս որ խօսքի
կարգն է բերում. ասեմ թէ
աբրահամովն զևին էլ՝ որ տա-
սանորդ է առնում , տասա-
նորդ տուաւ ։

10 Ինչու որ՝ դեռ նա իրան
հօր երանքումն (ՃՉՀՒՃ) էր՝
երբոր մելքիսեդեկն նորա ա-
ռաջն եկաւ ։

11 Ապա ուրեմն թէ որ կա-
տարելութիւնն ղևտացոց քա-
հանայութենովն էր (ինչու
որ՝ ժողովուրդն նորա ներքևն
օրէնքըն ընդունեց). էլ՞նչ
պէտք էր որ մելքիսեդեկի
կարգին պէս մին ուրիշ քա-
հանայ առաջ գայ՝ և ահա-
րոնի կարգին պէս չասվի ։

12 Քանզի երբոր քահանա-
յութիւնն փոխվում , պէտք
է որ օրէնքն էլ փոխվի ։

13 Պատճառն որ՝ նա որ նո-
րա համար էսպէս է ասվում՝
ուրիշ ցեղի մասնակից է. որ
նորանից իսկի մինն սեղանին
հաղորդ չէլաւ ։

14 Ինչու որ յայտնի բան
է՝ որ մեր Տէրն յուդայի ցե-
ղիցն ծագեց . որ էն ցեղի վե-
րայ մօսէսն իսկի բան չըխո-
սեց քահանայութեան համար ։

15 Ու էլ աւելի յայտնի
է թէ մելքիսեդեկի նմանու-
թեան պէս մին ուրիշ քահա-
նայ պիտի առաջ գայ ։

16 Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան կենդանի անվախճանիկ։

17 Քանզի վկայեցաւ, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։

18 Եւ հարմարհռովթիւն լինի ներ առաջինն պատուիրանին՝ վասն նորին տկարութեան և անշահութեան։

19 Քանզի ոչ ինչ կատարեաց օրէնքն, և մուտ ապագայական յուսոյն՝ որով մերձենամք առ Աստուած։

20 Եւ այնչափ՝ զի ոչ առանց երդման, զի են ոմանք՝ որ առանց երդման են կացեալ քահանայք։

21 Եայց սա երդմամբ՝ ի ձեռն այնորիկ՝ որ ասացն ի նա. երդուաւ Տէր՝ և ոչ ևս զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան։

22 Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր Յիսուս։

23 Եւ բազում են կացեալ քահանայք՝ վասն մահու արգիլ լինելոյ ի մշտնջենաւորել։

16 Որ մարմնաւոր պատուիրանքին պէս չէլաւ բայց վերջն չունօղ կեանքի զօրութեան պէս։

17 Ինչու որ՝ վկայվեցաւ՝ թէ դու քահանայ ես յաւիտենական, Մելքիսեդեկի կարգին պէս։

18 Ընդ դէն է քցվում առաջին պատուիրանքն, իրան տկարութեան և անօգուտ լինելոյն համար։

19 Պատճառն որ՝ օրէնքն իսկի մին կատարելութիւն չըզործեց. և ներս մուտ (աւելի) ապնիւ յոյս. որ նորանով մօտենումենք Աստուծոյ մօտ։

20 Եւ էնքան որ առանց երդումի չէ. (ինչու որ՝ նորանք առանց երդումի քահանայ են էլած.)

21 Բայց սա՝ երդումով նորա ձեռովն՝ որ ասաց նորան. Տէրն երդուաւ և էլէի զղջանալ՝ թէ դու քահանայ ես յաւիտեան։

22 Եւ էնքան աւելի ապնիւ ուխտապայմանի երաշխաւոր (էէքիւ) էլաւ Յիսուան։

23 Եւ (նորանք) շատ քահանայ են էլել. ինչու որ՝ մահն արգելումէր նորանց՝ որ միշտ ճան։

24 Իսկ սա վասն Յաւիտեան կալոյ, առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն։

25 Ըստ է և կենդանի առնել համօրէն կարօղ է զմատուցեալս նովաւ առ Աստուած. քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա։

26 Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս.

27 Որում ոչ հանապազ հարկ է որպէս այլոց քահանայապետից, նախ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել՝ և ապա վասն ժողովրդեանն, իսկ սա զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատուցեալ պատարագ։

28 Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս՝ զդաճեալս տկարութեամբ. իսկ բանն երդման յետ օրինացն՝ զորդի, որ յաւիտեան կատարեալ է։

24 Բայց սա որովհետև յաւիտեան է կենում, քահանայութիւնը ունի առանց անցկենալոյ։

25 Որ նրա համար էլ բոլորովին կարող է կենդանի անել նորանց՝ որ նորանով մօտենում Աստուծոյ մտիկ ու՝ միշտ կենդանի է՝ որ նորանց համար բարեխոսութիւն անէ։

26 Պատշաճն որ՝ հինց էսպէսի քահանայապետ վայելում էր մեզ, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներից զատուած և երկնքից էլ աւելի վեր բարձրացած։

27 Որ նորան պէտք չի ինչպէս ուրիշ քահանայապետներին՝ որ ամէն ժամանակ առաջ իրանց մեղքերի համար պատարագներ մատուցանեն, և յետոյ ժողովրդի համար. բայց սա մին անգամ կատարեց էն նրանով՝ որ իրան անձն պատարագ մատոյց։

28 Օրէնքն մարդկանց կանգնացնում քահանայապետ՝ որ պատած են տկարութեանով. բայց էն երդումի խօսքն՝ որ օրէնքից էլ է (կանգնացնում) որդին որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ· Ը ·

1 Եւ բանից գլուխ խոսիայ՝ այնպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդաջմէ մեծութեան աթոռոյն յերկինս,

2 սրբութեանցն պաշտօնեայ՝ եւ խորանին ճշմարտութեան, զոր Տէրն կանգնեաց՝ եւ ոչ մարդ։

3 Զի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ պատարագս կայ· ուստի հարկ է եւ նմա ունել ինչ՝ զոր մատուցանիցէ։

4 Զի եթէ էր յերկրի, թերեւս չէր իսկ քահանայ· զի գոյին՝ որ մատուցանէին ըստ օրինացն պատարագ·

5 որք առակաւ եւ օրինակաւ պաշտէին երկնաւորացն, որպէս եւ հրամայեցաւ մովսէսի՝ յորժամ գործելոյ էր զվրան ժամուն՝ տեսջի՛ր՝ ասէ· արասցես զամենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի լերինն։

6 Բայց արդ՝ առաւագոյն եւս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւագոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ յաւետագոյն խոստմանց օրինեալ է։

1 Եւ զոր խոսքերի գլուխն է· (մինչ) ունիմք զայսպիսի քահանայապետ, որ նստեաւ յաջ կողմն նստեց երկնքումն։

2 Եւ սրբութեանց պաշտօնեայ է եւ ճշմարիտ խորանի՝ որ նորան Տէրն կանգնեացոյց եւ ոչ լիե մարդ։

3 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մատուցանելոյ պատարագներ մատուցանելոյ համար կարգեալ է· ուրեմն նոքան էլ պէտք է որ միւս բան ունենայ՝ որ մատուցանէ։

4 Ինչու որ եթէ երկրիս էր՝ էլ քահանայ չէր պատճառն որ նորանք կային՝ որ օրէնքին պէս պատարագ էին մատուցանում։

5 Որ նորանք երկնաւոր բաների առակին եւ օրինակին ծառայութեին, ինչպէս որ հրաման էլաւ մովսէսին՝ երբոր էն ժամի խօսքանըն շինելու էր· մտիկ տուր ասում՝ որ ամէն բան անես էն օրինակին պէս· որ ցոյց տըվաւ քեզ սարումն։

6 Բայց հիմի՝ Յիսուս աւելի ալնիւ պաշտամունքի հասաւ՝ որքան ինքն աւելի լաւ ուխտապայմանի միջնորդ

ռաւել աւետիսն օրինադրե-
ցաւ ։

7 Զի եթէ առաջինն ա-
նարատ էր , ապա երկրորդին
տեղի ոչ խնդրէր ։

8 Նա աւանիկ բամբասէ
զնոսա և ասէ . ահաւասիկ
աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր ,
և կատարեցից ՚ի վերայ տանն
Իսրայէլի և ՚ի վերայ տանն
Յուդայ՝ ուխտ նոր .

9 Ո՛չ ըստ ուխտին՝ զոր
եդի ընդ հարս նոցա՝ յա-
ւուր յորում առի ՚ի ձեռն
հանել զնոսա յերկրէն եգիպ-
տացւոց. և զի նոքա ոչ կա-
ցին յուխտին իմում, և ես
անփոյթ արարի զնոցանէ ,
ասէ Տէր ամենակալ ։

10 Ա՛յլ այս է ուխտն՝ զոր
եդից տանն Իսրայէլի յետ
աւուրցն այնոցիկ՝ ասէ Տէր.
տայ զօրէնս իմ ՚ի միտս նո-
ցա՝ և ՚ի սիրտս նոցա գրե-
ցից զնոսա . և եղէց նոցա
Աստուած , և նոքա եղիցին
ինձ ՚ի ժողովուրդ ։

11 Եւ ոչ ևս ուսուցանի-
ցեն իւրաքանչիւր զքաղաքա-
կից իւր , և իւրաքանչիւր
շնորհաց՝ որ կոչեաց զձեզ
յիւր ի յաւիտենական փառս
սորն Քրիստոսիս Յիսուսիս,
որում փոքր մի եղերուք չար-
չարակիցք, նա կազդուրե-
ցուսցէ, կարողացուսցէ, հաս-
տատիցին արասցէ։

11 Նմա իշխանուվիւն և
փառք յաւիտեանս. ամէն։

12 ի ձեռն սիղուիանոսի
հաւատարիմ եղբօր, որպէս
կարծեմ՝ փոքր ի շատէ գրե-
ցի առ ձեզ մխիթարել. և
ի վերայ սորին վկայել. զի
և այս ճշմարիտ շնորհք
Աստուծոյ են՝ յոր հաստա-
տեալ կայցէք։

13 Ողջոյն տայ ձեզ՝ որ ի
բաբելոն ընտրելակից եկե-
ղեցւոյն է և մարկոս որդին
իմ։

14 Ողջոյն տացիք միմեանց
ի համբոյր սրբուվեան.
խաղաղուվիւն ընդ ձեզ ա-
մենեսին, որ էք ի Քրիստոս
Յիսուս. ամէն։

9 Որ հաւատքով հաստատ-
ված՝ հակառակ կենաք նո-
ցան. գիտացէք որ եղ չար-
չարանքներըդ ձեր եղբար-
ներն էլ իրանց անձներուն
քաշեցին էս աշխարհիս մէջն։

10 Ի՛ ամէն շնորհքի Աս-
տուածն, որ ձեզ կանչեց ի-
րան յաւիտենական փառքն
մէջ Քրիստոսով Յիսուսով,
որ մին քիչ նորա չարչարանքին
մանանակից էլաք նա (ձեզ)
զօրացնէ, կարօղացնէ, հաս-
տատ անէ։

11 Նորան (լինի) իշխանուվի
և փառք յաւիտեանս. (ամէն)։

12 Սիղուանոս հաւատարիմ
եղբօր ձեռովն՝ ինչպէս որ
կարծուում, փոքր ի շատ
գրեցի ձեզ՝ որ յորդորեմ
և էս բանիս համար վկայու-
վիւն տամ, թէ հինոյ էս
Աստուծոյ ճշմարիտ շնորհքն
է. որ դուք նորանում հաս-
տատված կանգնած էք։

13 Ողջոյն է տալիս ձեզ՝
ձեզ հետ ընտրված եկեղե-
ցին, որ բաբիլօնուում է և
իմ որդի մարկոսն։

14 Իրար ողջոյն տուէք սուրբ
համբուրով՝ խաղաղուվիւն
(լինի) ձեզ ամենիդ հետ՝ որ
Քրիստոս Յիսուսում էք.
ամէն։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԷՈՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՐԿՐՈՐԴ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Շմաւոն պետրոս՝ ծառայ և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտութիւն մեզ հասեալ հաւատով յարդարութիւն Աստուծոյ մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝

2 Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

3 Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ՝ի կեանս և յաստուածպաշտութի՛ շնորհեալ. ՚ի ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեացն զմեզ յիւր՝ի փառան և՝ի վայելչութիւն։

4 Որով մեծամեծքն և պատուականն աւետիք պարգեւեալ

4 Սիմոն պետրոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և առաքեալ, ձեզ որ մեզ հետ հաւասար պատուական հաւատքին հասիք, մեր Աստուծոյ և փրկիչ Յիսուսի Քրիստոսի արդարութենովն,

2 Շնորհք և խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենովն։

3 Ինչպէս որ նորա աստուածային զօրութիւնն չնորհեց մեզ ինչ ամէն բան, որ կեանքին և աստուածասիրութեան համար (պէտք է) նորա գիտութենովն. որ մեզ կանչեց դէպի (իրան) փառքն և վայելչութիւնն։

4 Ըր նորանոյով շատ մեծ և պատուական աւետիքներ են

են մեզ · դի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինելիմք հաղորդակիցք , փախուցեալք ՚ի ցանկութեաց աշխարհիս և յապականութենէ ։

5 Եւ սմին այսմիկ զամենայն փոյթ ՚ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջի՛ք զառաքինութի՛ն, և առաքինութեամբն զգիտութի՛ւն ,

6 Եւ գիտութեամբն զժուժկալութի՛ւն , և ժուժկալութեամբն զհամբերութի՛ւն , և համբերութեամբն զաստուածապաշտութի՛ւն ,

7 Եւ աստուածապաշտութեամբն զեղբայրասիրութի՛ւն, և եղբայրսիրութեամբն զսէր ։

8 Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝ և ՚ի սոյն յաճախեալ , ո՛չ դատարկս և անպտուղս զձեզ հաստատեցեն ՚ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութի՛ւնն ։

9 Իսկ որ ո՛չն լոյնն առքա մերձ , կոյր է և զաչս ամենայն ՚ի մոռացօնս զարձուցեալ զսրբութի՛ւն առաջնոյ իւրոյն յանցանացն ։

10 Վասն որոյ եղբարք՝ առաւե՛լ փութասջի՛ք՝ զի բարեացն գործովք հաստատուն

տրվված մեզ · որ նորանցով մասնակից լինիք աստուածային բնութեանն՝ (հաւատովք) աշխարհքի ցանկութիւններից և ապականութիւններից յետ փախչելով ։

5 Եւ հենց սրա համար՝ ամէն ջանք արէք, որ ձեր հաւատքին ընդայէք առաքինութիւն , և առաքինութենին գիտութիւն ,

6 Եւ գիտութենին ժուժկալութիւն , և ժուժկալութենին համբերութիւն , և համբերութենին աստուածապաշտութիւն ,

7 Եւ աստուածապաշտութենին եղբայրսիրութիւն , և եղբայրսիրութենին սէր ։

8 Որ եթէ ձեզ բաներս ձեր անձներումդ պահէք՝ և միշտ սորանց հետևիք՝ (սորանք) դատարկ և անպտուղ չեն թողել ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենումն։

9 Բայց նա՝ որ ես բաներս իրան հետ չունի , կոյր է և կարճատես · (և) մոռացել է իրան առաջին մեղքերից սրբվելը ։

10 Աբրահամա՛ եղբարք, աւելի ջանք արէք որ ձեր կոչումն և ընտրութիւնը

զձեր կոչումին, և զընտրութիւն պահիցէք, զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք։

11 Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

12 Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասոյին առաւել և դիտակայն և հաստատելոյն՝ եկեալ հասեալ ճշմարտութեանն։

13 Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ եմ ի մարմնի աստ՝ զարթուցանել ընձեզ յիշատակօք։

14 Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս· որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ։

15 Եւ փութամ ձեպիմ միշտ զձեզ յորդորել· զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսոցիկ։

16 Քանզի ոչ եթէ պատճառեալ ինչ առասպելոյ գհետ երթեալ ցուցաք ձեր զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զօրութիւնն և զգալուստն· հասատատ պահէք բարի գործքերով· պատճառն որ էս պէս անելով իսկի մին ժամանակ չէք մեղանչել։

11 Ինչու որ էսպէս առատութենով կըտըրվի ձեզ՝ որ մտնէք մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի յաւիտենական արքայութիւնն։

12 Ընդհամար միշտ պատրաստ եմ որ ձեզ յիշացնեմ սորանց համար՝ (թէև) լաւ գիտուածէք (էս) եկած հասած ճշմարտութենումն։

13 Պատճառն որ իրաւունք եմ համարում, որ դեռ քանի որ մարմնոյս մէջն եմ յիշացնելով զարթնացնեմ ձեզ։

14 Գիտուածեմ որ շուտով պիտի ինձանից հանեմ իմ մարմինը· ինչպէս որ մեր Տէր Յիսուս Քրիստոսն ցոյց տուաւ ինձ։

15 Եւ ջանք եմ անում և վազցուցեմ միշտ յորդորել ձեզ, որ իմ աշխարհքից դուրս գալուցն եւս՝ էս բաները յիշէք։

16 Պատճառն որ մենք ոչ թէ սուտումուտ հնարված բաների հետևելով ցոյց տըւինք ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութիւնըն և

այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն ։

17 Քանզի առեալ Յ(ի)ս(ո)ւս Աստուծոյ և Հօրէ զփառս և զպատիւ · եկեալ Յայնպիսի բարբառոյ՝ ՚ի մեծ վայելչութենէն փառաց անտի · եթէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ ։

18 Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք ՚ի սբ լերինն ։

19 Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական · որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք· իբրև ճրագի՝ որ տայցէ լոյս ՚ի խաւարուչին տեղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցէ , և արուսեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր ։

20 Բայց նախ այսմ գիտակ լինիջիք· զի ամենայն մարգարէութիւն իւրոյ գրոյ լուծումն ոչ ունի ։

21 Քանզի ոչ եթէ ըստ կամայ մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք , այլ ՚ի հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ Աստուծոյ ։

գալըն · Բայց հենց մենք ինքներս աչքով տեսինք նորա մեծութիւնըն ։

17 Որ Աստուածանից և հօրից փառք և պատիւ առաւ , երբոր էն մեծ վայելչութենէն փառքից էնպէսի ձայն եկաւ · Թէ դա է իմ սիրելի որդին՝ որ դորան հաւանել եմ ։

18 Եւ էս ձայնըս՝ որ երկնքից եկաւ մենք ինքներս լսեցինք· որ հենց նորա հետ էն սուրբ սարումն էինք ։

19 Եւ մարգարէական շատ հաստատ խօսքերըն էլ ունինք· որ եթէ նորանց մտիկ անէք՝ լաւ կանէք· ինչպէս մին ճրագի, որ լոյս տայ մուրճ տեղի մէջն · մինչև որ ցերեկն լուսանայ՝ և արուսեակ (աստղն) ծագի ձեր սրտերումն ։

20 Բայց առաջ էս պէտք է գիտենաք · որ ամէն մարգարէութիւն իրան գրվածքի մեկնութիւնըն չունի ։ (*)

21 Պատճառն որ ոչ թէ մարդկանց կամքին պէս իսկի մին ժամանակ տրվաւ մարգարէութիւն , բայց սուրբ հոգւոյն շարժված խօսեցին Աստուծոյ մարդիկն ։

(*) Ց–նաբէն · որ գրչէ ամէն մարգարէութիւն յառաջ ճեղնուիլոմ չէ լինում ։

1 Լինելին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն՝ որպէս և այժմ ի ձեզ լինելոց սուտ վարդապետք· որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, և զտէրն գնեցեալ զնոսա ուրացեալ՝ ածեն ի վերայ անձանց զարագահասն կորուստ։

1 Սուտ մարգարէք եղեն ի ժողովրդեան մէջ, ինչպէս որ ձեր մէջն եղ պիտի սուտ վարդապետներ լինին· որ ներս պըծած՝ կորստական հերձուածողութիւններ կըմտցնեն· ուրանալով էն Տէրն որ իրանց գնեց՝ (և) իրանց վերայ շուտահաս կորուստ են բերում։

2 Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն· վասն որոյ ճշմարտութեան ճանապարհ հայհոյեսցի։

2 Եւ շատ մարդիկ կըհետեւին նորանց անառակութիւններին· որ նորա համար ճշմարտութեան ճանապարհն կըհայհոյվի։

3 Եւ ագահութիւ մոտացածին բանիւք առնիցեն զձեզ վաճառանդի, որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ, և կորուստն նոցա ոչ նիրհեսցէ։

3 Եւ ագահութենով իրանց մտքից հնարուած խօսքերով ձեզ կըխաբեն (ձեր տեղիցդ)· որ նորանց դատաստանն իսկի մին ժամանակ դատարկ չի կենալ, և նորանց կորուստն ղուր չի հասնիլ։

4 Զի եթէ ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան։

4 Ինչու որ եթէ Աստուած մեղանչող հրեշտակներին չըխըղնայեց, բայց խաւարի կապանքով քցեց տարտարոսն՝ և պահել տուաւ որ դատվին։

5 Նա և ոչ ի սկզբանն աշխարհի խնայեաց· բայց զուրթևերորդն զնոյ՝ զարդա-

5 Եւ առաջին աշխարհքին էլ չըխնայեց· բայց մէնակ նոյին որ ուրթևերորդն էր՝ էն

րութեանն քարող պահեայ ի ջրհեղեղ աշխարհի՝ ամբարշտելոցն աճեալ ։

6 Եւ զքաղաքս սոդովմայեցւոցն և գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ օրինակ առ յապա ամբարշտելոցն կացուցանէր ։

7 Եւ զարդարն զղովտ ձանձրացեալ յանկարգ գիջութեանն գնացեալ փրկեաց ։

8 Քանզի ականատես և ականջալուր արդարն բնակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ ոգիսն նոցա անօրէն գնացիւքն տանջէր ։

9 Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ, և զանիրաւս պահել ի տանջանս աւուրն դատաստանի ։

10 Մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեց իցեն երթեալ. արհամարհօղք տէրութեանն, ժպիրք, յանդգնուք չզանգիտեն ըզիշխանսն հայհոյել ։

11 Ոլ հրեշտակք զօրութիք և կարողութեամբ քան զնո-

արդարութեան քարոզիչն պահեց աշխարհքի ջրհեղեղիցն, որ ամբարիշտներին վերայ աճեց ։

6 Եւ սոդոմայոց և գոմորացոց քաղաքներըն մոխիր դարձնելով՝ դատատան արաւ՝ (որ նորանով) յետոյ եկող ամբարիշտներին օրինակ էր դնում ։

7 Եւ փրկեց արդար ղովտին՝ որ անկարգ գիձութեան վարմունքներովն ձանձրացել էր ։

8 Ինչու որ էն արդարն նորանց մէջ բնակվելով՝ որ աչքովն տեսաւ և ականջովն լսեց՝ օրէցօր իրան սուրբ հոգին տանջում էր նորանց անօրէն գործքերովն ։

9 Տէրն գիտում աստուածապաշտներին փրկել փորձանքից, և անօրէններին պահել դէպի դատաստանի օրն՝ որ տանջվին ։

10 Մանաւանդ նորանց՝ որ մարմնոյ պիղծ ցանկութիւններով եւևէն են գնացած. (որ) տէրութիւնըն անարգում, անամօթներ, յանդուգնները, որ չեն վախում փառքըն հայհոյել ։

11 Թէ և հրեշտակներն որ զօրութենով և կարող-

սա մեծամեծք՝ չածեն զնո-
քօք ՚ի Տեառնէ զՀայհոյու-
ԼԹեանն դատաստան ։

12 Ա՛յլ սոքա իբրև զան-
խօս անասունս ըստ բնածին
բարուցն յեղծումն և կա-
պականութիւն՝ որոց չէնն
գիտակ, հայհոյեն յապակա-
նութեան իւրեանց, և ա-
պականեսցին։

13 Տանջեալք ՚ի վարձուց
անիրաւութեան ։ որ ցան-
կութիւն զաւուրն փափկու-
ԼԹիւն համարին ։ բծկանք,
արատաւորք՝ փափկացեալք ՚ի
պատիրս իւրեանց ։ լեալ ձեզ
խրախճանակիցք ։

14 Ա՛չս ունին հանդգնս
պոռնկաց՝ անդադարս ՚ի մե-
ղաց, պատրեն զանձինս հոգ-
դողդաց։ որ ունին սիրտ հա-
րեալ զագահութեան, ման-
կունք անիծից ։

15 Թողեալ զուղղորդ ճա-
նապարհն՝ մոլորեցան։ զհետ
երթեալ ճանապարհին բա-
զաամայ բէովրնան՝ զվարձս
անիրաւութեան սիրեցին ։

16 Ո՛ր կշտամբանս իւրոյ ա-
նօրէնութեանն ստացաւ զէշն

ենով աւելի մեծ են նորանցից,
հայհոյանքի դատաստան չեն
բերում նորանց վերայ Տէրի
առաջին ։

12 Ա՛յդ սորանք ինչպէս ան-
խօս անասուններ՝ որ իրանց
բնութեան պէս աւերվելոյ և
ապականվելոյ համար են ծըն-
ված, հայհոյում են բանե-
րըն որ չեն գիտում. և ի-
րանց ապականութենովն կա-
պականվին ։

13 Անիրաւութեան վարձ
քովն տանջված. որ նորանք
ցանկութիւն են համարում
էս օրվան փափկութիւնըն ։
որ պղծութեան հետևող
պղտոր, և իրանց խաբեբա-
յութենով փափկացած են, և
ձեր հացկերութեան ընկեր
են լինում ։

14 Պոռնիկների նման աչ-
քեր ունին, որ մեղքից չեն
դադարիլ ։ խաբում են Ք-
ԼԹևամիտների անձներըն ։ որ
սրտեր ունին ագահութենով
բռնվված՝ անէծքի որդիք ։

15 Որ շիտակ ճանապարհըն
թողած՝ մոլորվեցան։ բեո-
րեան բաղաամի ճանապար-
հին հետևելով անիրաւու-
ԼԹեան վարձըն սիրեցին։

16 Որ իրան անօրէնութեն
յանդիմանող ստացաւ էն ան-

անխօսուն· մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝ արդել զմարգարէին զանօրէնութիւն ։

17 Ի. յապիսիքն են աղբիւրք անջրդիք՝ և մէգք վարեալք ի մրրկէ · որոց ազգամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան ։

18 Քանզի մեծաբանս սնոտեաց բարբառեալ պատրեն ի յուղեւթեամբք ցանկութիւք մարմնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն փախչիցին յայնցանէ՝ որ ի մոլորութեանն շրջիցին ·

19 Նոցա ազատութիւն խոստանան , և ինքեանք ապականութեանն ծառայք են· ըստ որում իւիք յաղթիչի ոք , նորին և ծառայ է ։

20 Զի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի գիտութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի , և դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիւցին՝ եղև նոցա վախճանն չար քան զառաջինն ։

21 Զի լաւ էր նոցա եթէ ընաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեան ճանապարհ ·

լսօս էշին· որ մարդոյ ձայնովն խօսելով՝ արգելեց էն մարգարէի անօրէնութիւնըն ։

17 Յ՚աղբիւրներն անջուր աղբիւրներ են, և մրրիկ քամուց քշված ամպեր· որ խաւարի թանձր մթութիւնն նորանց համար պահված կայ յաւիտեան ։

18 (Ինչու որ) մեծ մեծ դատարկ բաներ խօսելով՝ պիճուճութիւններով , մարմնոյ անառակ ցանկութիւններով խաբուսին նորանց, որ ճշմարտապէս փախչում են նորանցից· որ մոլորուած մէջն են ման գալիս

19 Նորանց աղատութիւն են խոստանում, և իրանք ապականութեան ծառաներ են, ինչու որ ինչ բանով որ մին (մարդ) յաղթվի, հենց նորան էլ ծառայ է ։

20 Պատճառ որ եթէ աշխարհքի պղծութիւններից վախան՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենով, և միևել նորանում շաղախված պատաւվին, նորանց վերջն չար կըլինի քանեթէ առաջինըն ։

21 Ինչու որ լաւ էր նոյանց՝ որ իսկի չըճանաչէին արդարութեան ճանապար-

քանզի ծանեան՝ և յետս կացին ՚ի սուրբ պատուիրա-
նէն որ նոցա աւանդեցաւ ։

22 Յկեալ ՚ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնու-
թեան , եթէ շուն դառնայ անդրէն ՚ի փսխած իւր , և
խոզ լուացեալ՝ ընդ տիզմ թաւալեալ ։

Գ·

1 Այս ձեզ՝ սիրելիք , երկրորդ թուղթ գրեմ· ո-
րով զարթուցից ՚ի յիշա-
տակ զհաստատուն միտս ձեր·

2 Ցիշել զյառաջադոյն ա-
սացեալ պատգամս ՚ի սրբոց մարգարէից և յառաքե-
լոյն ձերոյ , զպատուէրս Տեառն և փրկչին ։

3 Ւայց զայս նախ գիտասջիք , զի յաւուրս յետինս ե-
կեսցեն արհամարհօղք՝ այպա-
նօղք , որ ըստ իւրեանց ցան-
կութեանց գնայցեն ։

4 Ւրդ ասիցեն՝ ո՞ւր են ա-
ւետիք գալստեան նորա· զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ ՚ի սկզբանէ արարածոց ։

հըն , քանզի եթ որ ճանաչելոյին , և յետ քաշվերեան են սուրբ պատուիրանքիցն որ տըվաւ նորանց ։

22 Որ նորանց լաւ յարմար է գալիս համաստութեան են ճշմարիտ առակն , թէ շունն մինել դառնուսմ դէպի իրան փսխածն , և լուացուած խոզն ցեխի մէջն թաւալվուսմ ։

Գ·

1 Սիրելիներ՝ էս երկրորդ թուղթն է՝ որ գրուսմ ձեզ , որ սորանով ձեր հաստատ մտքներըդ զարթնացնեմ յիշելոյ համար ։

2 Որ յիշեք են խօսքերըն որ առաջուց ասված են սուրբ մարգարէներիցն՝ և ձեր առաքեալներիցն՝ են Տէրի և փրկչի պատուիրանքներըն ։

3 Ւայց առաջ էս գիտայէք , որ յետին օրերուսն՝ բանի տեղ չըդնօղ , ծաղրանօղ (մարդիկ) կըգան , որ իրանց ցանկութեանց (ուզածին) պէս կըվարվին ։

4 Ւրդ կասեն՝ ո՞ւր է նորա գալու աւետիքն · ինչու որ նրանից ետև որ հարքն վախճանվեցան , ամէն բան հենց էնպէս կենուսմ ծուսմ աշխարհըն ստեղծագործուելեան սկըզբից ետև ։

5 Եւ զայն մոռացեալ լ-
ինէ նոցա՝ որ զայսն կամին ·
եթէ երկինք եղեն ի սկզբա-
նէ՝ և երկիր ի ջրոյ, և
ջրովք հաստատեալ բանիւ
Աստուծոյ ·

6 Վասն որոյ երբեմն աշ-
խարհ ջրհեղեղաւ ապականեալ
կորեաւ ։

7 Եւ այժմ երկինք և եր-
կիր նովին բանիւ պահեալ
են · հրոյ պահեալք յօրն
դատաստանի՝ և կորստեան
մարդկան ։

8 Եւ այս ևս մի լիցի ի
ձէնջ ծածկեալ՝ սիրելիք, զի
մի օր Տեառն իբրև զհազար
ամ է, և հազար ամ իբրև
մի օր ։

9 Ոչ յամեցուսցէ Տէր
զաւետիսն՝ որպէս ոմանք յամր
համարին, այլ երկայնամիտ
լինի առ ձեզ · քանզի ոչ կա-
մի՝ եթէ որ կորիցէ, այլ
զամենեցունն հասանել յա-
պաշխարութիւն ։

10 Այլ եկեսցէ օր Տեառն
իբրև զգող · յորում երկինք
տագնապաւ անցցեն, և բնու-
թիւնք հրով կիզեալ լուծ-
ցին, և երկիր՝ և որ ի նմա
գործք գտանիցին ։

5 Քանզի նորանք՝ որ էս են
ուզում՝ են բանըն մոռացել
են, թէ երկինքն սկըզբիցն
էլաւ, և երկիրս ջրից, և
ջրով հաստատվեցաւ՝ Աս-
տուծոյ խօսքովն ։

6 Ընդհամար էն հին աշ-
խարհքն՝ մին ժամանակ ջրը-
հեղեղով ապականվաճ կորաւ ։

7 Եւ հիմիկ երկինքն և
երկիրս հենց էն խօսքովն կա-
յած ամբարվաճ են կրակի
համար պահվաճ մինչև դա-
տաստանի օրն, և ամբարիշտ
մարդկանց կորուստն ։

8 Եւ էս էլ ձեզանից ծա-
ծուկ չըլինի՝ սիրելիներ, թէ
Տէրի (առաջին) մին օր հա-
զար տարի պէս է, և հազար
տարի ինչպէս մին օր ։

9 Տէրն չի ուշացնիլ (ի-
րան) սեհեիքըն՝ ինչպէս որ
մինքանիսն ուշ են կարծում,
բայց երկայնամիտ է լինում
ձեզ վերայ · պատճառն որ
չի կամենում որ մինն կորչի,
բայց որ ամենքն ապաշխարու-
թեան հասնեն ։

10 Բայց Տէրի օրն գողի
պէս կըգայ · որ նորանում եր-
կինքն սաստիկ ձայնով անցկը-
կենայ, և տարերքն կրակով
վառվաճ կըհալվին, և եր-
կիրն էլ և ամէն բաներն էլ՝
որ նորանում գտնըվին ։

11 Եւ ՚ի լուծանել այսպէս
այսր ամենայնի, որպիսի ինչ
պարտ իցէ ձեզ գտանել ·
այլ սուրբ և աստուածա-
պաշտ կարգաւ ակնունել ,

12 Եւ փութալ հասանել
դալստեան աւուրն Տեառն ·
յորում երկինք հրայրեալք
լուծանիցին , և բնութիւնք
հրդեհեալ հալիցին ։

13 Ընդ երկինս՝ և նո-
րոյ երկրի ըստ աւետեացն
հայեցեալ սպասիցեմք, յորս
արդարութիւնն բնակէ ։

14 Վասն որոյ՝ սիրելիք, այ-
սոցիկ պատեալ , փոյթ յան-
ձին ունիջիք՝ անբիծք և ա-
նարատք գտանել նմա ՚ի խա-
ղաղութիւն ·

15 Եւ զՏեառն երկայնմըտ-
ութիւնն՝ փրկութիւն հա-
մարիջի՛ք, զոր օրինակ և սի-
րելի եղբայրն մեր պօղոս ըստ
շնորհելոյ իմաստութեան նմա
յԱստուծոյ գրեաց ձեզ

16 Որպէս և յամենայն իսկ
թուղթսն խօսի վասն այնո-
ցիկ · յորս գտանի ինչ ինչ
դժուարիմաց , զոր անուս -
մունքն և յողջոյզքն կամա-
կորեն · որպէս և զամենայն
իսկ գիրս առ իւրեանց ան-

11 Հրեայն երբոր էս ամէնս
էսպէս կըհալվի , ինչպէսի
պէտք է գտնըվիլք դուք՝ որ
սուրբ և աստուածապաշտ
կարգով սպասէք ,

12 Եւ ջանք անէք հասնէք
Տէրի գալու օրին, որ նորա-
նում երկինքն կրակով այր-
ված կըքանդվին · և տարեր-
քըն կրակ ընկած կըհալվին ։

13 Բայց նորա խոստմունն-
քին պէս, նոր երկնքի և նոր
երկրի մասին տալով սպասու-
մնէք · որ նորանցում արդա-
րութիւն է բնակվում ։

14 Սրահամար՝ սիրելիներ,
սորանց սպասելով ջանք ա-
րէք՝ որ առանց պղծութեան
և անարատ գտնըվիք նորա ա-
ռաջին խաղաղութեան մէջ ։

15 Եւ Տէրի երկայնամիտ
լինելըն փրկութիւն համա-
րեցէք · ինչպէս որ մեր սիրե-
լի եղբայր պօղոսն էլ էն Աս-
տուածանից իրան տըվված ի-
մաստութեան պէս գրեց ձեզ ։

16 Ինչպէս որ հենց ամէն
թղթերումն էլ խօսում էս
բաներիս համար · որ նորան-
ցում մի քանի դժուար հաս-
կանալու բաներ կան· որ ու-
մունք չըգիտօղներն , և թե-
թևամիտներ նորանց կամքով

ձանոյն կորուսա ։

17 Դուք այսուհետև՝ սիրեցիք, իբրև պիանխապէտս գգուշասջինք, ըլ մի անառակ մոլորութեամբն զգաճեալք՝ անկանիջիք յաստեաց հաստատութեանն ։

18 Աճեցէք շնորհօք և գիտութեամբն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ։ Նմա փառք և այժմ, և յօրն յաւիտենից ։ ամէն ։

ծառումն, ինչպէս որ հինց ամէն գրքերըն էլ, իրանց անձներըն կորցնելոյ համար ։

17 Ուրեմն՝ սիրելիներ, դուք բանը (առաջուց) հասկացօղ-ների պէս զգոյշ կացէք ։ որ չըլինի թէ անառակ մոլորութենով շաղաղված՝ վէր ընկնիք էդ ձեր հաստատութենից ։

18 Աճեցէք մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնորհքովն ։ և գիտութենովն ։ նորան (յինի) փառք հիմիկ էլ՝ և մինչև յաւիտենական օրն էլ ։ ամէն ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵՍՑՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

ԱՌԱՋԻՆ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Որ էրն հսկզբանէ. զոր-
մէ լուաքն՝ որուս ականա-
տեան իսկ եղեաք. ընդ որ
հայեցաքն և ձեռք մեր շո-
շափեցին՝ ի վերայ բանին կե-
նաց ։

2 Եւ կեանքն յայտնեցան,
և տեսաք՝ և վկայեմք և
պատմեմք ձեզ, զյաւիտեան-
կան կենացն, որ էր առ հօր՝
և երևեցաւ մեզ ։

3 Զոր տեսաքն և լուաք՝
պատմեմք և ձեզ զի և դուք
հաղորդութիւն ունիցիք ընդ
մեզ. և մեր հաղորդութիւնն
իցէ ընդ հօր՝ և ընդ որդւոյ
Իւրոյմ Յիսուսի Քրիստոսի։

4 Եւ զայս գրեմք ձեզ,
զի ձեր ուրախութիւնն կա-
տարեալ լինի ։

1 Ինչ որ սկզբէն էր որ՝
նորանցից լսեցինք, որ նորան
հենց մեր աչքերուս տեսինք,
որ նորա վերայ մանիկ տուինք,
և մեր ձեռնէն դիպան կե-
նաց բանին վերայ ։

2 Եւ կեանքն յայտնը-
վեցաւ մեզ, և տեսինք, և
վկայումենք, և պատմումենք
ձեզ (էն) յաւիտենական կե-
նաց համար, որ հօր մօտն
էր, և երևեցաւ մեզ ։

3 Ինչ որ տեսինք և լսե-
ցինք՝ պատմումենք ձեզ, որ
դուք էլ հաղորդութիւն ու-
նենաք մեզ հետ, և մեր հա-
ղորդութիւնն լինի հօր հետ՝
և նորա որդւոյ Յիսուսի
Քրիստոսի հետ ։

4 Եւ ես գրումենք ձեզ
որ ձեր ուրախութիւնն կա-
տարեալ լինի ։

5 Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ՚ի նմանէ՝ եւ պատմեմք ձեզ· զի Աստուած լոյս է, եւ խաւար ՚ի նմա չիք եւ ոչ մի ։

6 Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա՝ եւ ՚ի խաւարի շրջիցիմք, ստեմք՝ եւ ոչ առնեմք ճշմարտութիւնն ։

7 Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք՝ որպէս եւ նա լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս· եւ արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց ։

8 Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք· եւ ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ ։

9 Եպա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա՝ եւ արդար առ ՚ի թողուլ զմեղս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ ։

10 Եւ եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա, եւ բան նորա ոչ է ՚ի մեզ ։

5 Եւ ես է էն աւետիքն որ նորանից լսեցինք եւ պատմումենք ձեզ· թէ Աստուած լոյս է, եւ խսկի մին խաւար չըկայ նորանում ։

6 Եթէ ասենք՝ թէ հաղորդութիւն ունինք նորա հետ, եւ խաւարի մէջ մանք գանք, սուտ ենք ասում՝ եւ ճշմարտութիւնըն չենք առնում ։

7 Բայց եթէ լուսոյ մէջ մանք գանք՝ ինչպէս որ նա լոյս է, (ապա) հաղորդութիւն ունինք իրար հետ· եւ նորա որդոյ Յիսուսի Քրիստոսի արիւնն մեզ սրբում ամէն մեղքից ։

8 Եթէ ասենք՝ թէ մենք մեղք չունինք, մեր անձներըս ենք խաբում, եւ ճշմարտութիւն չըկայ մեզանում ։

9 Եպա եթէ մեր մեղքըն խոստովանինք, նա հաւատարիմ է եւ արդար՝ որ մեր մեղքըն թողէ մեզ, եւ մեզ ամէն անիրաւութենից սրբէ ։

10 Եթէ ասենք՝ թէ մենք խսկի մեղք չըգործեցինք· սուտ ենք անում նորան, եւ նորա խօսքն մեզանում չէ ։

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք, և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Հաւրն զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատն։

2 Նա է քաւութիւն մեղաց մերոց· և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի։

3 Ու յայսմիկ գիտեմք՝ եթէ ճանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։

4 Որ ասիցէ՝ եթէ ճանեայ զնա և զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է՝ և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ։

5 Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարև ի նմա կատարեալ է սէրն Հաւրն, այսուիկ ճանաչեմք՝ եթէ ի նմա եմք։

6 Որ ասիցէ ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս և նայն գնաց։

7 Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր իսկզբանէ ունէիք· և հին

1 Իմ որդեակներս՝ էս եմ գրում ձեզ՝ որ չմեղանչէք, և թէ որ մինն մեղանչէ, բարեխօս ունինք Հաւրն մօտ Յիսուս Քրիստոսին՝ էն արդարին և անարատին։

2 Ու նա է մեր մեղաց քաւութիւնն· և ոչ թէ միայն մերին, բայց եւ ամէն աշխարհքին։

3 Ու սորանով ենք գիտում՝ որ ճանաչեցինք նորան, թէ որ նորա պատուիրանքներըն պահենք։

4 Ով որ ասէ, թէ ճանաչեցի նորան, և նորա պատուիրանքներըն չըպահէ, սուտ է, և ճշմարտութիւն չըկայ նորանում։

5 Հայց նա՝ որ նորա խօսքըն պահում, շնաւակ է՝ որ Հաւրն սէրն նորանում կատարեալ է· սորանով ճանաչում ենք որ նորանում ենք։

6 Ով որ ասում թէ նորանում եմ բնակվում· էնպէս պէտք է գնայ· ինչպէս որ նա գնաց։

7 Սիրելիներ՝ չէ թէ մին նոր պատուիրանք եմ գրում ձեզ, բայց էն հին պատուիրանքըն՝ որ սկըզբից ունեցինք·

պատուիրան՝ բանն ի զոր լուարուք ։

8 Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ ի Քրիստոսմարթիւ՝ ի նմա և ի ձեզ· զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի ։

9 Որ ասէ եթէ՝ ի լոյսն իսկ՝ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է, և՝ ի խաւարի է տակաւին ։

10 Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ՝ և գայթագղուիւն՝ ի նմա չի՛ք ։

11 Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խաւար շրջի· և ոչ գիտէ յո՞ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա ։

12 Գրեմ՝ ձեզ՝ որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա ։

13 Գրեմ ձեզ՝ հարք, զի ծանեայք զսկզբանէն է, գրեմ ձեզ՝ երիտասարդք, զի յաղթեցէք զոր չարին ։

14 Գրեցի ձեզ՝ մանկունք, զի ծանեայք զհայրն·

և հին պատուիրանքն էն լսեցէք՝ որ լսեցէք ։

8 Մի՛ նոր պատուիրանք եմ գրում ձեզ՝ որ ճշմարիտ է նորանում և ձեզանում, ինչու որ խաւարն անց կացաւ և ճշմարիտ լոյսն հիմի երևում է ։

9 Ով որ ասէ թէ լուսոյ մէջն է՝ և իրան եղբօրըն ատէ, սուտ է՝ և դեռ հիմիկ խաւարի մէջն է ։

10 Նա՝ որ իրան եղբօրըն սիրում է, լուսոյ մէջն է բնակում, և գայթակղուիւն չկայ նորանում ։

11 Բայց նա՝ որ իրան եղբօրըն ատում է, խաւարումն է, և խաւարի մէջ է մանգալիս, և չի՛ գիտում թէ ո՞ւր է գնում· ինչու որ խաւարն կուրացրուց նորա աչքերըն ։

12 Գրում եմ ձեզ՝ որդեակներ, պատճառն որ ձեր մեղքերն թողված են ձեզ՝ նորա անուանի համար ։

13 Գրում եմ ձեզ՝ հարք, ինչու որ դուք ճանաչեցիք նորան, որ սկզբիցն (է)· գրում եմ ձեզ՝ երիտասարդներ, ինչու որ դուք յաղթեցիք չարին ։

14 Գրեցի ձեզ՝ մանկունք, պատճառն որ դուք ճանա-

գրեցի ձեզ՝ հարք, զի ծա-
նեայք դուք զայն որ ի սկզբ-
բանէն է, գրեցի ձեզ երի-
տասարդք, զի եք դուք հզո-
բայեալք՝ և բանն Աստուծոյ
ի ձեզ բնակէ, և յաղթե-
ցիք դուք չարին ։

15 Մի սիրէք զաշխարհ՝ և
մի որ ինչ յաշխարհի է ։

16 Եթէ ոք սիրէ զաշխարհ,
ոչ է ի նմա սէր հօր· զի
ամենայն որ ինչ յաշխարհի
է՝ ցանկութիւն է մարմնոյ,
և ցանկութիւն է աչաց, և
ամբարտաւանութիւն աստի
կենացս· որ ոչ է առ ի
հօրէ՝ այլ յաշխարհէ աստի
է ։

17 Եւ աշխարհս անցանէ՝
և ցանկութիւն նորա· իսկ
որ առնէ զկամս Աստուծոյ՝
մնայ յաւիտեան ։

18 Որդեակք՝ յետին ժա-
մանակ է, և որպէս լսեա-
րուք՝ եթէ Նեռն գալոց է,
և արդէն իսկ նեռինք բա-
զումք եկեալ են, որով մար-
թեմբ իմանալ՝ եթէ յետին
ժամանակ է ։

19 Ել ի մէնջ ելին, այլ
ոչ էին ի մէնջ· զի եթէ

չէցիք հօրըն· գրեցի ձեզ՝
հարք, պատճառն որ դուք
ճանաչէցիք նորան՝ որ զկզբ-
բիցն (է)· գրեցի ձեզ, երի-
տասարդներ, ինչու որ դուք
զօրացեալ էք, և Աստուծոյ
խօսքն բնակվումն ձեզանումն,
և դուք յաղթեցիք չարին ։

15 Մի սիրէք աշխարհքըս,
և ոչ եղ են ամէնքն, որ աշ-
խարհքիս մէջն է ։

16 Թէ որ միևն աշխարհքին
սիրէ՝ հօր սէրն նորանում
չէ· պատճառն որ ամէն ինչ
որ աշխարհքումս է, մարմնոյ
ցանկութիւն է, և աչքերի
ցանկութիւն է, և էս կեան-
քիս ամբարտաւանութիւն ·
որ հօրիցն չէ, բայց էս աշ-
խարհքիցս է ։

17 Եւ աշխարհքս անցնիկե-
նում, և (նորա) ցանկութի-
ներն եղ · բայց նա՝ որ Աս-
տուծոյ կամքըն անում, յա-
ւիտեան մնում ։

18 Որդեակներ՝ յետին ժա-
մանակն է, և ինչպէս որ լսե-
ցիք, Թէ նեռն գալու է, և
հենց հիմիկ շատ նեռներ եկել
են, որ սրանով կարող ենք
իմանալ՝ Թէ յետին ժամա-
նակն է ։

19 Մեզանից դուրս գնա-
ցին, բայց մեզանից չէին·

'ի մէնջ էին՝ ապա առ մեզ ճոպին · այլ ի յայտնի լինէին՝ եթէ ոչ էին ամենեքեան նոքա 'ի մէնջ ։

20 Եւ դուք օծումն ունիք առ 'ի սրբոյն, և գիտէք ամենեքին ։

21 Ո՛չ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ եթէ գիտէք զնա · և եթէ, զի ամենայն ստութիւն ոչ է 'ի ճշմարտութենէ անտի ։

22 Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ, որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն, նա իսկ է նեռն, որ ուրանայ զհայր և զորդի ։

23 Ամենայն՝ որ ուրանայ զորդի, և ոչ զհայր ընդունի · իսկ որ խոստովանի, զորդի նա և զհայր ընդունի ։

24 Դուք՝ զոր լուարուքն իսկզբանէ՝ 'ի ձեզ բնակեսցէ · զի եթէ 'ի ձեզ բնակեսցէ՝ զոր իսկզբանէն լուարուք, և դուք յորդի և 'ի հայր բնակեսջիք ։

25 Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանս յաւիտենական ։

պատճառն որ եթէ մեզանից լինէին· ապա մեզ մօտ կըմնային · բայց որ յայտնի լինին՝ եթէ նորանք ամենքն մեզանից չէին ։

20 Եւ դուք օծումն ունիք (էն) սրբոյն, և ամէն (բան) գիտուածք ։

21 Ձե՛զ գրեցի ձեզ՝ իբրեթէ ձշմարտութիւնըն չէք գիտում, բայց որ գիտուածք նորան, և որ ամէն սուտ իւն էն ձշմարտութենիցն չէ ։

22 Բայց ո՞վ է սուտ, եթէ ոչ նա՝ որ ուրանում եթէ Յիսուսն չէ Քրիստոսն. հենց նա է նեռն, որ ուրանում հօրըն և որդուն ։

23 Ամէն՝ ով որ որդուն ուրանում՝ հօրըն էլ չի՛ ընդունում. նա որ որդուն դաւանում, հօրն էլ ընդունում ։

24 Դուք՝ էն որ լսեցիք սկըզբից՝ թող բնակվի ձեզանում · պատճառն որ եթէ որ՝ բնակվի ձեզանում էն որ սկըզբից լսեցիք, դուք էլ կըբնակվիք որդուց և հօր մէջ ։

25 Եւ էս է (էն) աւետիքն՝ որ նա աւետարանեց մեզ՝ (այսինքն) յաւիտենական կեանքըն ։

26 Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մոլորեցուցանիցէ:

27 Եւ դուք օծումնն, զոր ընկալարուք ի նմանէ՝ բնակեսցէ ի ձեզ. և չէ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծումնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի. և ճշմարիտ է՝ և չէ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմա:

28 Եւ այժմ որդեակք, կայէք ի նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն, և մի ամաչեսցուք ի նմանէ ի գալստեան նորա:

29 Զի եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասջի՛ք՝ եթէ ամենայն՝ որ առնէ զարդարութիւն, առ ի նմանէ է ծնեալ:

26 Այս գրեցի ձեզ՝ որ չը-լինի թէ միւնն մոլորացնէ ձեզ:

27 Եւ դուք էն օծումնը-նըն, որ նորանից ընդունեցիք: բնակվի ձեզմնում. և պէտք չէ՝ որ միւնն սովորցնէ ձեզ. բայց ինչպէս որ նորա օծումնն սովորցնում է ձեզ ա-մէն (բանի) համար. էսպէս էլ ճշմարիտ է, և սուտ չէ. և ինչպէս որ նա սովորցրուց ձեզ՝ կայէք նորանում:

28 Եւ հիմիկ՝ որդեակնե՛ր, կայէք նորանում. որ երբոր (նա) կըյայտնըվի, համարձա-կութիւն ունենանք, և չամա-չենք նորանից՝ նորա գալոյ ժամանակումն:

29 Եթէ գիտուէք՝ որ նա արդար է, կիմանաք թէ ա-մէն ով որ արդարութիւն կա-նէ՝ նորանից է ծնվաճ:

ԳԼ· Գ:

1 Տեսէք՝ ո՞րպիսի սէր շնորհեաց մեզ հայր. զի որ-դիք Աստուծոյ կոչեսցուք և մեք, վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ճանեաւ զնա:

2 Սիրելիք՝ այժմ որդիք

1 Տեսէք՝ թէ հայրն ինչ-պէսի սէր շնորհէց մեզ. որ Աստուծոյ որդիք կոչվինք. սրահամար աշխարհքն չի՛ ճա-նաչում մեզ. պատճառն որ նորան (էլ) չըճանաչեց:

2 Սիրելինե՛ր՝ հիմիկ Աս-

Աստուծոյ եմք, և չևևս ի յայտ՝ եթէ զի՛նչ լինելոց լիցեմք · գիտեմք՝ զի յորժամ նա յայտնասցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և ի՛ն է ։

3 Եւ ամենայն՝ որ ունի զայս յոյս յանձին, սրբէ զանձն իւր՝ որպէս և նայն սուրբ է ։

4 Ամենայն՝ որ զմեղս գործէ, նա և զանօրէնութիւն առնէ, և ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է ·

5 Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ, և ՚ի նմա մեղք չ՚է են ։

6 Ամենայն որ ՚ի նմա է հաստատեալ՝ չ՚է մեղանչէ · և ամենայն որ մեղանչէ, չ՚է տեսաւ զնա՝ և չ՚է ճանեաւ զնա ։

7 Մանկունք՝ մի ոք զձեզ խաբեսցէ · որ առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս և նայն արդար է ։

8 Եւ որ առնէ զմեղս՝ ՚ի սատանայէ է, զի իսկզբանէ սատանայ մեղանչէ · վասն այսորիկ յայտնեցաւ որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի ։

տուծոյ որդիք ենք, և դեռ յայտնի չէ, թէ ինչ պիտի լինինք · գիտեմք՝ թէ երբոր նա կրկին յայտնուի՝ նորան նման կըլինինք · ինչու որ կըտեսանենք նորան ինչպէս որ է ։

3 Եւ ամէն ով որ ես յոյսը ունի իրանում, սրբումէ իրան անձնէն՝ ինչպէս որ նա սուրբ է ։

4 Ամէն ով որ մեղք է գործում՝ նա անօրէնութիւն էլ է անում և հենց ինքն մեղքն անօրէնութիւն է ։

5 Եւ գիտեմք՝ թէ նա նրահամար յայտնըցաւ՝ որ (մեր) մեղքերըն վերառնէ. և նորանում մեղք չ՚կայ ։

6 Ամէն ով որ նորանում հաստատված է՝ չ՚ի մեղանչում · և ամէն ով որ մեղանչումէ, չ՚է տեսաւ նորան՝ և չ՚է ճանաչէց նորան ։

7 Մանկունք՝ չ՚լինի թէ մինն ձեզ խաբէ. նա՝ որ արդարութիւն է անում, արդար է, ինչպէս որ նա էլ արդար է ։

8 Եւ որ մեղք է անում սատանայից է · ինչու որ սատանան հենց սկըզբից մեղանչումէ · նրահամար յայտնըվեցաւ Աստուծոյ որդին՝ որ սատանայի գործքերըն քանդէ ։

9 Ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նորա ի սմա մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ:

10 Ասյսուիկ յայտնի են ի միմեանց որդիք Աստուծոյ և որդիք սատանայի, ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր:

11 Զի այս է պատուիրանն՝ զոր լուարուք իսկզբանէ՝ զի սիրեսցուք զմի-մեանս:

12 Ոչ որպէս կայէնն ի չարէ անտի էր՝ և սպանցէզբայրն իւր, և վասն զի սպան զնա. զի իւր գործքն չար էին և եղբօրն բարիք:

13 Եւ մի՛ ինչ զարմանայք՝ եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ:

14 Մեք գիտեմք՝ զի փո-խեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղ-բարս. իսկ որ ոչն սիրէ, ան-ձնէն ի մահուն մնայ:

15 Ամենայն որ ատեայ զեղ-բայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդա-

9 Ամէն ով որ Աստուա-ծանիկ է ծնուած՝ մեղք չի ա-նում. ինչու որ նորա սերմն միւսի նորանում. և կարող չէ մեղանչել ալատճառն որ Աստուածանիկ է ծնուած:

10 Այսանով իրարիկ (ջոկ-ված) կայանի են Աստուծոյ որդիքն և սատանայի որդիքն. ամէն ով որ արդարութիւն չի անում՝ նա Աստուածա-նիկ չէ, և ոչ եղ նա՝ որ ի-րան եղբօրն չի սիրում:

11 Ինչու որ էս է էն պա-տուիրանքն՝ որ սկզբից լսե-ցիք՝ որ պէտք է իրար սիրենք՝

12 Ոչ ինչպէս կայէնն (որ) չարիցն էր՝ և իրան եղ-բօրն սպանեց. և ինչու հա-մար սպանեց նորան. նրա՛ն համար որ իրան գործե-րըն չար էին և եղբօրն բարի:

13 Մի զարմանաք՝ եղբարք, եթէ աշխարհքս ատէ ձեզ:

14 Մենք գիտումենք՝ որ մահիցն դէպի կեանքն փոխ-վեցանք. ալատճառն որ եղ-բարներին սիրումենք. բայց ով որ չի սիրում եղբարնե-րին, մահի մէջն է միւսի:

15 Ամէն ով որ իրան եղ-բօրըն ատումէ մարդասպան է, և գիտումէք որ ամէն մար-

սպան ունի կեանս յաւիտենական յանձին Աստուծոյ· զի նա զանձն իւր եդ վասն մեր· և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս ։

17 Որ ունիցի կեանս ինչ զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ զդուռն իւր առ՝ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ՝ ի նմա իցէ բնակեալ ։

18 Որդեակք՝ մի բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ ։

19 Ընդ այսմիկ գիտեմք զի՝ նուագեալք՝ եթէ՝ ի ճշմարտութենէ անտի իցեմք· և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց ։

20 Եթէ ստգտանիցէն զմեզ սիրտք մեր՝ այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ զամենայն ։

21 Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած ։

22 Ընդ որ ինչ հայցեմք, առնումք՝ ի նմանէ· զի զպատ-

դասպան յաւիտենական կեանքըն չունի հաստատուած իրա-նում ։

16 Որանով գիտացինք սէրըն, որ նա իրան անձըն դրաւ մեզ վերայ· և մենք էլ պէտք է մեր եղբարց վերայ դնենք մեր անձնեերըս ։

17 Ի՞նչ՝ որ էս աշխարհքիս ապրանքըն ունենայ, և տեսնէ թէ իրան եղբայրն կարօտ է մին բանի, և իրան դուռըն փակէ նորանից, էլ ինչպէս Աստուծոյ սէրն բնակ-ած կըլինի նորանում ։

18 Որդեակներ՝ ոչ թէ խօսքերով և լեզուներով սիրենք, այլ գործով և ճըշմարտութեանով ։

19 Ընդ սրանով Ճանաչվում-ենք· թէ ենք Ճշմարտութենից ենք· և նորա առաջին կանգնէք մեր սրտերի քննութիւնըն ։

20 Եթէ մեր սրտերն մեղադրեն մեզ· բայց Աստուած մեր սրտերից էլ մեծ է, և ամէն բան գիտէ ։

21 Սիրելիներ՝ եթէ մեր սրտերն չըմեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք Աստուծոյ առաջին ։

22 Ընդ ինչ որ խնդրենք՝ կառնենք նորանից· պատճառն

ուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք ։

23 Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր ։

24 Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ՚ի նմա է հաստատեալ՝ և նա ՚ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ ՚ի մեզ ՚ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ ։

որ նորա պատուիրանքներըն պահումնք. և էն բաներըն՝ որ նորա առաջին հաճոյ են, անումնք ։

23 Եւ էս է նորա պատուիրանքն, որ հաւատանք նորա որդւոյ Յիսուսի Քրիստոսի անունին, և իրար սիրենք ինչպէս որ նա պատուիրանք տըւաւ մեզ ։

24 Եւ նա՝ որ նորա պատըւիրանքներըն պահումէ, նա րանում հաստատուած է՝ և նա նորանում. և սրանից գիտումնք եթէ բնակվումէ մեզանում էն հոգուն, որ (նա) տուաւ մեզ ։

ԳԼ· Դ ։

1 Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք· այլ ընտրեցէք զհոգիսն՝ եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ ։

2 Եւ մեք այսուիկ ճանաչեմք զհոգին Աստուծոյ, ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱստուծոյ է նա ։

3 Եւ ամենայն հոգի՝ որ ոչ խոստովանի զՅիսուս

1 Սիրելիներ՝ ամէն հոգոյ մի հաւատաք· բայց փորձեցէք հոգիներըն եթէ Աստըւածմանից են· պատճառն որ շատ սուտ մարգարէներ են եկել աշխարհք ։

2 Եւ մենք սրանով գինք ճանաչումէ Աստուծոյ հոգին· ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած է խոստովանումէ, նա Աստուածածնից է ։

3 Եւ ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով

մարմնով եկեալ, չէ նա Աստուածոյ · և այս նեռինն է, զորմէ լուարուք՝ եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է ։

4 Դուք Աստուծոյ էք՝ որդեակք, և յաղթեցէք նոցա · զի մեծ է որ ի ձեզ է՝ քան զայն որ յաշխարհին է ։

5 Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և աշխարհ լսէ նոցա ։

6 Մեք Աստուծոյ եմք · որ գԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ, և որ չէ Աստուծոյ՝ ոչ լսէ մեզ · այսուհետ ճանաչեմք զհոգին ճշմարտութեան և զհոգին խաբէութեան ։

7 Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր Աստուծոյ է · և ամենայն որ սիրէ՝ Աստուծոյ է ծնեալ՝ և ճանաչէ զԱստուած ։

8 Ոչ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է ։

9 Ոչ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զորդին իւր միածին առա-

եկած չի խոստովանուիր, նա Աստուածանից չէ, և էանտիքրիստոսի (հոգին) է · որ նորա համար լսեցիք թէ գալու է, և հիմի աշխարհումն է ։

4 Դուք Աստուածանից էք՝ որդեակներ, և յաղթեցիք նորանց · պատճառն որ նա՝ որ ձեզանում է, մեծ է քան թէ նա՝ որ աշխարհքի մէջն է ։

5 Նորանք աշխարհքիցն են, նրա համար աշխարհքիցն են խօսում, և աշխարհքն լսում նորանց ։

6 Մենք Աստուածանից ենք · ով որ Աստուծոյն ճանաչում, լսում մեզ, և ով որ Աստուածանից չէ՝ չի լսում մեզ · սրանով ենք ճանաչում ճշմարտութեան հոգին, և խաբեբայութեան հոգին ։

7 Սիրելիներ՝ իրար սիրենք, ինչու որ սէրն Աստուածանից է · և ամէն ով որ սիրում՝ Աստուածանից է ծնուած, և ճանաչում Աստուծոյն ։

8 Նա՝ որ չի սիրում Աստուծոյն չի ճանաչում, ինչու որ Աստուած սէր է ։

9 Ոչ սրանով Աստուծոյ սէրն երևեցաւ մեր միջում, որ Աստուած իրան միածին

քեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք ։

10 Այսմ է սէրն · ոչ զի մեք սիրեցաք զԱստուած ՝ այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր ՝ի քաւութիւն մերոց ։

11 Սիրելիք ՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել ։

12 ԶԱստուած ուրուք երբէք չի՛ք տեսեալ · եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ՝ի մեզ բնակէ, և սէր նորա ՝ի մեզ կատարեալ է ։

13 Յայսմիկ գիտեմք, եթէ մեք ՝ի նմա բնակեալ եմք՝ և նա ՝ի մեզ, զի ՝ի հոգւոյն իւրմէ ետ մեզ ։

14 Եւ մեք տեսաք՝ և վկայեմք զի Հայր առաքեաց զորդին իւր փրկիչ աշխարհի ։

15 Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է որդի Աստուծոյ, Աստուած ՝ի նմա բնակէ՝ և նա յԱստուած ։

16 Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք զսէրն Աստուծոյ ՝ զոր ունի առ մեզ, Աստուած սէր է, և որ կայ ՝ի սէրն՝ որդին ուղարկեց աշխարհք, որ նորանով կենդանի լինինք։

10 Սրանում է սէրն՝ որ ոչ մենք սիրեցինք Աստուծոյն, բայց որ նա սիրեց մեզ, և իրան որդին ուղարկեց մեր մեղքերըն քաւելոյ համար ։

11 Սիրելինե՛ր՝ եթէ Աստուած էսպէս սիրեց մեզ, ապա մենք էլ պէտք է իրար սիրենք։

12 Իսկի մին ժամանակ մինն չի՛ տեսել Աստուծոյն · մի՛ որ (մենք) իրար սիրենք՝ Աստուած մեզանում է բնակվում, և նորա սէրն մեզանում կատարեալ է ։

13 Սրանով գիտումենք որ մենք նորանում ենք բնակված՝ և նա մեզանում · որ իրան հոգուն տուաւ մեզ ։

14 Եւ մենք տեսինք և վկայումենք, որ Հայրն իրան որդին ուղարկեց աշխարհքի փրկիչ (լինելոյ) ։

15 Ով որ դաւանի՝ մի՛ Յիսուս է Աստուծոյ որդին, Աստուած նորանում է բնակվում՝ և նա Աստուածանում։

16 Եւ մենք հաւատացինք և ճանաչեցինք Աստուծոյ սէրըն՝ որ ունի մեզ վերայ · Աստուած սէր է՝ և ով որ

բնակեալ է յԱստուած, և Աստուած ՚ի նմա բնակէ։

17 Ցայսմիկ կատարեալ է սէրն նորա ՚ի մեզ· զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստանի, զի որպէս և նայն է՝ նայնպէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ։

18 Երկիւղ ոչ գոյ ՚ի սէր, այլ սէրն կատարեալ ՚ի բաց մերժէ զերկիւղն· զի երկիւղ ընդ տանջանօք է· իսկ որ երկնչէն, չէ կատարեալ ՚ի սէրն։

19 Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ։

20 Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է· որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսանէ՝ զիա՞րդ կարիցէ սիրել։

21 Եւ զայս պատուէր ունիմք առ ՚ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

սիրոյ մէջն է կենում՝ Աստուծոյ մէջն է բնակվում· և Աստուած նորանում է բնակվում։

17 Սրանում է նորա սէրն կատարեալ մեզ հետ· որ համարձակութիւն ունինք դատաստանի օրում· պատճառն որ ինչպէս որ նա է՝ էնպէս էլ մենք ենք էս աշխարհումս։

18 Վախ չըկայ սիրոյ մէջն· այլ կատարեալ սէրն հեռացնում է վախին· ինչու որ վախն տանջանք ունի· բայց նա՝ որ վախում է, կատարեալ չէ սիրոյ մէջն։

19 Մենք սիրենք Աստուծոյն· պատճառն որ առաջ նա սիրեց մեզ։

20 Թէ որ մէնն ասէ, թէ սիրում եմ Աստուծոյն, և իրան եղբօրըն ատէ՝ նա սուտ է· ինչու որ նա՝ որ իրան եղբօրըն որ տեսնում չէ սիրում, Աստուծոյն որ չի տեսել՝ ինչպէս կարօղ է սիրել։

21 Եւ էս պատուիրանքըս ունինք նորանից, թէ նա որ Աստուծոյն սիրում է, իրան եղբօրըն էլ սիրէ։

Գ Լ· Ե

1 Ամէն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոսն,

1 Ամէն ով որ հաւատում՝ թէ Յիսուս է Քրիստոսն,

ԱՍտուծոյ ծնեալ է. և ա-
մէնայն որ սիրէ զծնօղն, սի-
րէ և զծնեալն ի նմանէ։

2 Այսուիկ ճանաչեմք՝ ե-
թէ սիրեմք զորդին Աստու-
ծոյ, յորժամ զԱստուած
սիրեսցուք՝ և զպատուիրանս
նորա արասցուք։

3 Քանզի այս է սէրն Աս-
տուծոյ, եթէ զպատուիրանս
նորա պահեսցուք. և պա-
տուիրանք նորա չեն ինչ ծա-
նուկք։

4 Զի ամենայն որ յԱս-
տուծոյ ծնեալ է՝ յաղթէ
աշխարհի, և այս է յաղթու-
թիւնն՝ որ յաղթէ աշխար-
հի, հաւատքն մեր։

5 Ո՞ւ ո՞վ է՝ որ յաղթի-
չէ աշխարհի. եթէ ոչ՝ որ
հաւատայցէ՝ եթէ Յիսուս
է որդի Աստուծոյ։

6 Սա՛ է որ եկն ջրով և
հոգւով և արեամբ, Յիսուս
Քրիստոս. ոչ՝ ջրով միայն,
այլև արեամբ և ջրով. և
հոգին է՝ որ վկայէ, զի հո-
գին ճշմարտութիւն է։

7 Զի երիք են որ վկայեն
յերկինս, Հայր, Բանն և
Աստուածանից է ծնեալ. և
ամէն ոք որ ծնօղին սիրէ,
նորանից ծնեալին էլ սիրէ։

2 Սրանով գիտենք ճանաչում՝
թէ Աստուծոյ որդին (*) եր-
բոր Աստուծոյն սիրենք, և
նորա պատուիրանքները ա-
նենք։

3 Պատճառն որ Աստուծոյ
սէրն էս է, որ նորա պատը-
ւիրանքներն պահենք, և նո-
րա պատուիրանքներըն իսկի
ծանր չեն։

4 Ինչու որ ամէն ոք որ
Աստուածանից է ծնված,
յաղթում աշխարհքին. և
էս է յաղթութիւնն որ աշ-
խարհքին յաղթում՝ (այնինչ)
մեր հաւատքն։

5 Ու՞մ է որ յաղթում
աշխարհքին, բայց միայն նա՝
որ հաւատում, թէ Յիսուս
Աստուծոյ որդին է։

6 Սա՛ է որ եկաւ ջրով և
հոգով և արիւնով՝ (այնինչ)
Յիսուս Քրիստոսն. ոչ թէ
մենակ ջրով՝ բայց արիւնով
և ջրով. և հոգին է որ վկա-
յում. որ հենց հոգին է
ճշմարտութիւնն։

7 Պատճառն որ երեք են
որ երկնքումն վկայումն՝

(*) Յունարէն. Աստուծոյ որդիներըն։

հոգին սուրբ · և երեքինս մի են ։

8 Եւ երեք են որ վկայեն յերկրի · հոգի , ջուր և արիւն · և երեքինն մի են ։

9 Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք՝ ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ , այս է վկայութիւն Աստուծոյ , զի վկայեաց ի վերայ որդւոյն իւրոյ ։

10 Որ հաւատայ յորդին Աստուծոյ , ունի յանձին դվկայութիւնս զայս · որ ոչ հաւատայ որդւոյ Աստուծոյ , սուտ առնէ զնա · քանզի ոչ հաւատայ վկայութեան՝ զոր վկայեաց Աստուած ի վերայ որդւոյն իւրոյ ։

11 Եւ այս իսկ է վկայութիւնն , զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած · և այս են կեանք՝ որ յորդին նորա են ։

12 Որ ընդունի զորդին ընդունի և զկեանս և որ ոչ ընդունի զորդին Աստուծոյ , և ոչ զկեանս ընդունի ։

13 Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիք · և զի հայքն և քանն և սուրբ հոգին · և էս երեքս մի են ։

8 (Եւ) էս երեքս են որ երկրուռն վկայումեն , հոգին, և ջուրն , և արիւնն · և էս երեքս մի են ։

9 Եթէ մարդկանց վկայութիւնըն ընդունումենք , ապա ուրեմն Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է · (ինչու որ) էս է Աստուծոյ վկայութիւնն , որ վկայեց իւրան որդւոյն վերայ ։

10 Ով որ հաւատումէ Աստուծոյ որդւոյն · էս վկայութիւնըս ունի իրան անձնուռն ով որ չի հաւատումէ Աստուծոյ որդւոյն , սուտ է անուռ նորան · պատճառն որ չի հաւատումէ էն վկայութեն, որ Աստ վկայեց իրան որդւոյ վերայ ։

11 Եւ հենց էս է վկայութիւնն , որ Աստուած յաւիտենական կեանքըն տուաւ մեզ · և էս կեանքս էն է՝ որ նորա որդւոյ միջումն է ։

12 Ով որ որդւոյն ընդունի՝ (նա) կեանքըն էլ կընդունի· և ով որ Աստուծոյ որդւոյն չընդունի , (նա) կեանքըն էլ չի՝ ընդունիլ ։

13 Էս (բանըս) գրեցի ձեզ որ հաւատաք՝ յաւիտենական կեանքն ունիք, և (էլ)

հաւատացէք յանուն որդւոյն Աստուծոյ ։

14 Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ ։

15 Ձի եթէ գիտեմք՝ եթէ լսէ հայցուածոյն մերոյ · ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ ։

16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ոչ առ ի մահ, խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ ի մահ՝ են մեղք՝ որ մահուընչափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես ։

17 Ամենայն անիրաւութիւն մեղք են · և են մեղք՝ որ մահուընչափ են ։

18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ · այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ ։

19 Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք, և աշխարհ ամենայն ի չարի կայ ։

որ հաւատաք Աստուծոյ որդւոյ անուանին ։

14 Եւ ես է ես համարձակութիւնն որ մեզ ունինք նորա մօտ · եթէ ինչ որ նորա կամայ պէս խնդրենք կլսէ մեզ ։

15 Եւ եթէ որ գիտեմք՝ եթէ մեր խնդրվածքնելին կլսէ, ապա գիտեմք՝ որ կառնենք (մեր) խնդրվածքնեըրն՝ որ խնդրեմք նորանից ։

16 Թէ որ մինն տեսանէ՝ եթէ իրան եղբայրն մեղանչել է (ենպէսի) մեղքով՝ որ դէպի մահն չէ, թող խնդրէ (Աստուածանից) և կեանք կըտայ նորան՝ (այնոցին) նորան որ մեղանչել է չէ եթէ դէպի մահ · կայ մեղք՝ որ մահու չափ է · նորա համար ես չեմ ասում որ խնդրես ։

17 Ամէն անիրաւութիւն մեղք է · և կայ մեղք որ մահու չափ է ։

18 Գիտեմք որ ամէն ով որ Աստուածանից է ծնուած մեղք չի գործէ, բայց նա՝ որ Աստուածանից է ծնուած, իրան անձըն պահեմ, և չարն չի մօտենեմ նորան ։

19 Գիտեմք որ (մենք) Աստուածանից ենք, և բոլոր աշխարհը չարութեան մէջ է կենում ։

20 Եւ գիտեմք, եթէ որդին Աստուծոյ եկն, և եւս մեզ միտս. զի ճանչցուք զՃշմարիտն. և եմք ի Ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, զի նա է Ճշմարիտ Աստուած, և կեանք յաւիտենական։

20 Եւ գիտեմք որ Աստուծոյ որդին եկաւ, և մեզ միտք տուաւ, որ Ճշմարիտը ճանաչենք. և Ճշմարտի մէջ ենք, (այսինքն) նորա որդի Յիսուս Քրիստոսին. սա ճշմարիտ Աստուած է և յաւիտենական կեանք։

21 Որդեակք՝ պահեցէք զանձինս ի կռապաշտութենէ։

21 Որդեակներ՝ (ձեր) անձնեերըդ պահեցէք կռապաշտութենից։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԱՑԻ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐԿՐՈՐԴ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Յերիցուէ առ ընտրեալ կիւրիա, և առ որդեակս իւր, զոր եսդ սիրեմ ճշմարտու-
թեամբ, և ոչ եմիք ես միայն, այլ և ամենեքեան, որք գիտակ են ճշմարտութեանն.

2 Վասն որոյ ճշմարտութեանն՝ որ ՚ի մեզ հաստատեալ է, ևլ և ընդ ձեզ լի-
նիցի. և դուք յաւիտենից ընդ մեզ իցէք,

3 Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի հօրէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ որդւոյն հօր՝ ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ ձեզ։

4 Ուրախ եղէ յոյժ, զի

1 Երեցս կողմանէ ընտրեալ կիւրիայիդ, և իւրեանց որդեակներին՝ որ ես ՚ի ճշմարտութեան սիրեմ, ճշմարտութենով, և ոչ միայն ես, այլ ամենայն որ ճշմարտութիւն ճանաչել են.

2 Զոր ճշմարտութեան պատճառաւն որ մեզ ՚ի մեզ հաստատեալ է, որ նա էլ ձեզ հետ լինի, և դուք յաւիտեան մեզ հետ լինիք,

3 Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Աստուած Հօրմէն, և Տէր Յիսուս Քրիստոսէն Հօր որդուն լինի ձեզ հետ, ճշմարտութենով և սիրով։

4 Շատ ուրախ եղայ, որ

գալ յորդեկայդ քոյ՝ որ գնան Ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ՚ի Հօրէ ։

5 Եւ այժմ աղաչեմ զքեզ՝ կիւրիա, իբրև ոչ եղէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր խոկզբանէն ունէաք, զի սիրեսցուք զմիմեանս ։

6 Եւ այս է սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանայ նորա· և այս է պատուիրանն, զի որպէս լուաբուք խոկզբա. նէ՝ ըստ նմին գնասջիք ։

7 Զի բազում մոլորեցուցիչք եղեն յաշխարհ · որ ոք ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է և նեռն։

8 Զգո՛յշ լինիջիք անձանց՝ զի մի կորուսանիցէք՝ զոր վաստակեցէք, այլ զի առնուցուք բովանդակ վարձս ։

9 Ամենայն որ յանցանէ՝ և ոչ կայ ՚ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ Ճանաչէ · որ կայ ՚ի վարդապետութեանն, նա և զօրդի և զհայր ընդունի ։

10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս

քո որդեակներիցդ գոլ որ Ճշմարտութեամբ են գնում, ըստ պատուիրանքին պէս որ հօրից առինք։

5 Եւ հիմիկ աղաչումեմ քեզ կիւրիայ, իբր ոչ թէ մին նոր պատուիրանք եմ գրում քեզ, այլ հենց էն որ սկզբից ունէինք · որ իրար սիրենք ։

6 Եւ էս է սէրն, որ նորա պատուիրանքներին պէս գնանք և էս է պատուիրանքն, որ ինչպէս որ լսեցիք սկզբից էնպէս գնաք ։

7 Ինչու որ շատ մոլորայնօղներ դուրս եկին աշխարհքի մէջ · ով որ չի դաւանում Յիսուս Քրիստոսին, որ մարմնով է եկած, նա մոլորայնօղ է և նեռն։

8 Զգո՛ յշ կայնք անձերիդ որ չըլինի թէ կորցնէք էն որ վաստակեցիք · բայց որ բոլոր վարձք առնէք ։

9 Ամէն ով որ յանցանք գործէ, և չըկենայ Քրիստոսի վարդապետութեան մէջն, Աստուծոյն չի Ճանաչում · ով որ կենում վարդապետութեան մէջն, նա որդոյն էլ և հօրըն էլ ընդունում է ։

10 Թէ որ մինն ձեզ մօտ գայ և էս վարդապետութիւ-

ոչ ունիցի, մի ընդունիցիք զնա ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա։

11 Եւ որ առասցէ նմա ողջոյն՝ կցմրդ լինի չարեաց գործոց նորա։

12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիւ և դեղով գրել· զի ակնունիմ ինձ իսկ գալ առ ձեզ, և բերան ի բերան խօսել· զի ուրախասիրեալ մեր լցէ կատարեալ։

13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ, ընդհանուր ընդ ձեզ։

նըս չունենայ, մի ընդունիք նորան (ձեր) տունն· և ողջոյն մի տաք նորան։

11 Իւր որ ողջոյն ասէ նորան, մասնակից կըլինի նորա չար գործքերին։

12 Շատ բան ունէի ձեզ գրելոյ· բայց չկամեցայ թղթով և թանաքով (գրել) պատճառն որ յոյս ունիմ՝ որ հիմա ես ինքն գամ ձեզ մօտ, և բերանէ բերան խօսիմ· որ մեր ուրախասիրելին կատարեալ լինի։

13 Ողջոյն են տալիս քեզ քո ընտրեալ քրոջ որդիքն· շնորհք (լինի) ձեզ հետ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵՑԻՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՐԲՈՐԴ։

1 Յերկայուէ առ պապիոս սիրելի՝ զոր եսդ սիրեմ ճշմարտութեամբ ։

2 Սիրելի՝ վասն ամենայն երայց քոյ յաջողութեան և առողջութեան աղօթս առնեմ. որպէս ի իսկ յաջողութիւն անձինդ քո ։

3 Յոյժ ուրախ եղէ ՚ի գալ եղբարց՝ և լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ, որպէս գնաս դու ճշմարտութեամբ ։

4 Մեծ ևս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ. զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտութեամբ գնան ։

5 Սիրելի՝ հաւատարիմ գործես զայդ, զոր եթէ առնիցես առ եղբարս՝ զդոյն և առ օտարս ։

4 Էրէկցիս կողմանէ սիրելի պապիոսիդ՝ որ ես սիրումեմ ճշմարտութենով ։

2 Սիրելի՝ քո ամէն բանի յաջողութեան և առողջութեան համար՝ աղօթք եմ անում ինչպէս որ քո անձնդ էլ յաջողութեան մէջ է ։

3 Շատ ուրախ էլայ երբոր եղբարքն եկին, և քո ճշմարտութեանդ վկայ եղան, ինչպէս որ դու ճշմարտութենով գնում ես ։

4 Ոչ այսանից աւելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսում եմ թէ իմ որդեակներս ճշմարտութենով են գնում ։

5 Սիրելի՝ հաւատարմութենով ես գործում էդ՝ ինչ որ անում ես եղբարներին, հէնց էդ էլ օտարականներին էս։

6 Որք վկայեին զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ որոց բարիս արարեալ յուզարկես արժանիս Աստուծոյ։

7 Զի վասն անուանն ելին, և ոչ ինչ յումեքէ առնուն զհեթանոսականացն։

8 Մեք այսուհետև պարտիմք ընդունել զայնպիսիսն, զի գործակիցք լիցուք ճշմարտութեանն։

9 Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջադիմի ի նոցանէ է՝ դիտէրէփէս, ոչ ընդունի զմեզ։

10 Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից զգործս նորա՝ զոր առնէ, բանիւք չարսիոք շատախոսութեան առնէ զմեզ աշխատ, և ոչ այսքիւք շատացեալ, ոչ ինքն ընդունի զեղբարս, և զայնոսիկ՝ որ ընդունիին, արգելու։ Նաև յեկեղեցւոյ ևս հանէ։

11 Սիրելի՝ մի լինիցիս նմանօղ չարի՝ այլ բարւոյ. զի որ զբարիս առնէ Աստուծոյ է. և որ զչարիս գործէ՝ նա ոչ եհաս երբեք զԱստուած։

6 Որ նորանք քո (արաճ) սիրոյդ վկայութիւն տուին եւ կեղեցոյ առաջին. որ եթէ նորանց Աստուծոյ արժանաւոր ճանապարհ քոյս, լաւ կանես։

7 Ինչու որ (Քրիստոսի) անունին համար դուրս եկին, և խակի մին հեթանոսից մին բան չեն առնում։

8 Ուրեմն պէտք է որ մենք ընդունինք էնպէսիներին. որ օգնական լինինք ճշմարտութեան գործոյն։

9 Մին բան գրեցի եկեղեցոյն. բայց դիոտրէփէս՝ որ նորանց միջումն առաջ ընկնողն է, մեզ չի ընդունում։

10 Ալսահամար թէ որ գամ՝ նորա գործքերըն կըյիշեմ՝ որ նա անում. շատախօսութեան չար խօսքերով նեղայ նում մեզ. և սրանով էլ բաւական չի լինում. ինքն չի ընդունում եղբայրներին, և նոյնոց էլ՝ որ ընդունում են, արգելում. և եկեղեցոյ մէջից էլ հանում։

11 Սիրելի՝ մի լիներ նման չարին՝ բայց բարոյն. ինչու որ ով որ բարի է գործում՝ Աստուածմանից է, և ով որ չարիք է գործում՝ նա խակի մին ժամանակ Աստուծոյն չի՛ տեսաւ։

12 Զ դեմատրեայ վկայեալ
է յամենեցունց, և յեկեղեց-
ւոյն՝ և ի ձշմարտութենէ,
և մեք վկայեմք · և դու գի-
տես՝ զի ձշմարիտ է մեր
վկայութիւնն ։

13 Բայում ինչ ունէի
գրել քեզ · այլ ոչ կամիմ
քարտիսիւ և գելով գրել ։
14 Զի ակնածիմ ի մո-
տոյ իսկ տեսանել զքեզ , և
բերան ի բերան խօսել ։

15 Խաղաղութիւն ընդ քեզ
ողջոյն տան քեզ սիրելիք ,
ողջոյն տացիր սիրելեայ մե-
րոյ Եւրաքանչիւր յանուանէ ։

12 Դեմատր (բարի) վկայու-
թիւն ունի ամենիցն, (և եկե-
ղեցւոյն էլ,) և հենց ձշմար-
տութենիցն էլ, և մենք էլ
վկայումենք· և դու գիտուս
որ մեր վկայութիւնն ձշմա-
րիտ է ։

13 Շատ բան ունէի քեզ
գրելոյ, բայց չեմ կամենում
թղթով և թանաքով գրել ։
14 Պատճառն որ յոյս ու-
նիմ որ հենց մօտ ժամանա-
կումս քեզ տեսնեմ , և բե-
րանէ բերան քեզ հետ խօսիմ։
15 Խաղաղութիւն (լինի)
քեզ հետ· ողջոյն են տալիս
քեզ սիրելիքն · ողջոյն տուր
մեր սիրելիներին ամէն մէկին
իրան անունովն ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵՍՑՑ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑ։

1 Յուդայ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և եղբայր Յակոբայ հնձանոսայ՝ որ Աստուծոյ հօրէ էք սիրեցեալք, և Յիսուսի պահեալք և ընտրեալք,

2 Ողորմութիւն ձեզ՝ և խաղաղաղութիւն և սէր բազմասցի։

3 Սիրելիք՝ զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեան, հարկ յանձին կալայ գրել ձեզ և աղաչել՝ զի ճգնեցիք ի վերայ հաւատոյն, որ միանգամ աւանդեցաւն սրբոց։

4 Քանզի սպրդեցին մարդիկ ոմանք, որ յառաջագոյն խակ կատարեալ էին ի սոյն դատաստան. ամբարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն իշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ու-

1 Յուդայ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և յակոբայ եղբայր ձեզ (հնձանոսներիդ) որ Աստուած հօրիցն սիրուած էք, և Յիսուս Քրիստոսում պահուած և ընտրուած,

2 Ողորմութիւն, խաղաղութիւն և սէր շատանայ ձեզ վերայ։

3 Սիրելիներ՝ որովհետև ամէն ջանք արի որ գրեմ ձեզ մեր հասարակաց փրկութեան համար. հարկ էլաւ ինձ որ գրեմ ձեզ, և աղաչեմ. որ ջանք անէք էն հաւատքին վերայ՝ որ միանգամ սրբերին պահ տրուաւ։

4 Պատճառն որ մի քանիսն ներս սլեցան մէջն, որ նորանք հինց առաջուց հաստատուած էին էս դատաստանիս համար. ամբարիշտներ՝ որ մեր Աստուծոյ շնորհքն անկարգութիւն դարձրին. և էն միակ (Աստուածն և) իշխա-

բացեալք ։

5 Ցիշեցուցանել ձեզ այս-
ուհետեւ կամ է ինձ՝ որ պի-
տէրդ զամենայն · զի Աս-
տուած միանգամ զժողո-
վուրդն փրկեաց յեգիպտոսէ.
երկրորդ անգամ զանհաւատ-
սըն կորոյս ։

6 Եւ զհրեշտակս՝ որ ոչ
պահեցին զիւրեանց իշխանու-
թիւնն , այլ թողին զի-
րեանց բնակութիւնն , ՚ի
դատաստանս մեծի աւուրն՝
մշանջենաւոր կապանօք պա-
հեաց ՚ի խաւարի։

7 Որպէս սոդոմ և գոմոր,
և որ շուրջ զնոքօք քաղաքքն,
որ ըստ նմին օրինակի պոռն-
կեցան զհետ ընկերացն մարմ-
նոյ , կան առաջի օրինակ ՝
կրակաւիանական հրոյն ընկա-
լեալ զդատաստան ։

8 Ըստ նմին օրինակի և
սոքա իբրեւ քնով դանդա-
ղեալք՝ զմարմին պղծեն, զտէ-
րութիւնս քամահեն՝ զփառս
հայհոյեն ։

9 Ուր միքայէլ հրեշտա-
կապետ՝ յորժամ բանակռիւ
սատանայի վիճեալ տայր պա-
տիւ, և մեր Տէր Յս Քրիս-
տոսին ուրացան ։

5 Արդ համար իմ կամք
ես եմ որ ձեր միաքն բերեմ
ձեզ որ էս ամէն բաներըս
գիտուիք. թէ Աստուած մի-
նանգամ ժողովուրդն փրկեց
եգիպտոսիցն. և երկրորդ ան-
գամ՝ անհաւատներն կորց-
րուց ։

6 Եւ էն հրեշտակներըն
որ իրանց իշխանութիւնըն
չըպահեցին, այլ իրանց բնա-
կութիւնըն թողին. (նա) յա-
ւիտենական կապանքներով
խաւարի մէջ պահեց մեծ օրի
դատաստանին համար ։

7 Ինչպէս որ սոդոմն և գո-
մոր, և նորանց չորս կողմի
քաղաքներն, որ հենց էն կեր-
պով պոռնըկվեցան (իրանց)
ընկերների մարմիններին հետ
օրինակի համար առաջ-
նորդ դրվան՝ յաւիտենական
կրակի դատաստան ընդունե-
լով ։

8 Հենց էսպէս էլ սորանք
իբր քնով թմրացած՝ մար-
միներն պղծումեն. տէրութի-
ներին անարգումեն, և փառ-
քըն հայհոյումեն ։

9 Մինչ որ միքայէլ հրեշ-
տակապետն երբոր բանակռիւ
սատանայի հետ հակառակվե-

ասախանի վասն մոխսեան մարմնոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյուխեան դատաստանն հանդուրժել՝ այլ ասէ, սատեսցի՛ ի քեզ Տէր։

10 Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն, և զոյն ևս՝ զոր բնութեամբ իբրև զանխոս անասունս գիտեն, ի նոսին ապականեսցին։

11 Ա՛ւայ ե նոցա, զի ըստ Կանապարհին կայենի գնացին, և ըստ մոլորութեան բազամաց վեղխեան զհետ վաձուց, և ըստ հակառակութեան կորխայ կորեան։

12 Սոքա են ատեցեալք, շոգմոգք, երիթեալ զհետ ցանկութեանց իւրեանց. ի սէրս իւրեանց խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք. աներկիւղ զանձիս Ճարակեն. ամպք անջրդիք՝ հողմակոծեալք, ծառք պտղակորոյսք, տնպտուղք, կրկնամեռք, խլեալք արմատքի,

13 Կնդասա ալիք ծովու, որ միշտ փրփրեն զխրեանց ան-

լով պատասխան էր տալ մեռելի մարմնոյն համար, չը-համարձակեցաւ հայհոյական դատաստան անել, բայց ասաց՝ Տէրն քեզ պատժէ։

10 Բայց սորանք են բանըն որ չեն իմանում. հայհոյում. և ինչ որ էլ անխոս անասունի պէս բնութենով գիտումն՝ նորանցով կապականվին։

11 Ա՛ւայ ե նորանց. ինչու որ կայէնի Ճանապարհովն գնացին. և բազամամ մոլորութեան պէս չար վարձի շահին հետևեցին, և կորխայ հակառակութեան պէս կորան։

12 Սորանք ատելի են (և) քաղցրախոս խաբեբայք, որ իրանց ցանկութիւններին են հետևում, իրանց սէրըն ցոյց են տալիս խաբեբայութենով. ձեզ հետ ուրախութեան ընկեր են լինում և առանց վախի (իրանց) անձներըն արածայնում. անջուր ամպեր, քամիներով անդադար տատանուած. պտուղ կորցնող ծառեր, անպտուղ, երկու անգամ մեռած, արմատից (տէ-ւէղ) պոկուած,

13 Ծովու կատաղած ալիք-ներ, որ միշտ իրանց անձնե-

ձանց զամօթ · աստեղք մո-
լորք , որոց վիհ խաւարին
յաւիտենից պահեալ է ։

14 Մարգարէացաւ վասն
նոցա և հօթներորդն յադա-
մայ ենովք, և ասէ· ահաւա-
սիկ եկն Տէր բիւրովք սրբովք
հրեշտակօք ,

15 Առնել դատաստան ըստ
ամենայնի , և յանդիմանել
զամենայն ամբարիշտս վասն
գործոց իւրեանց , զոր ամ-
բարշտեցին · և վասն ամե-
նայն խիստ բանից , զոր խօ-
սեցան զնմանէ մեղաւորք և
ամբարիշտք ։

16 Սոքա են տրտնջողք և
չոմոդք, երթեալք ըստ իւ-
րեանց անձանց ցանկութեց ·
և բերանք նոցա զամբար-
տաւանս բարբառին · առնուն
ակն երեսաց վասն օգտի ։

17 Ասացէ դուք՝ սիրելիք ,
յիշեցէք զկանխասաց բանս
զառաքելոցն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ·

18 Զի ասէին ձեզ , եթէ
՝ի յետին ժամանակս եղիցին
մարդք արհամարհօղք , ե-

րի ամօթըն են փրփրացնում·
մոլորված աստեղները, որ յա-
ւիտենական խաւարի անդունդն
նորանց համար է պահ-
ված ։

14 Նոքա էլ՝ որ եօթներ-
որդն է Ադամից, սորանց հա-
մար մարգարէացաւ՝ և ասաց·
ահա՛ Տէրն հազարաւոր սուրբ
հրեշտակներով եկաւ ։

15 Որ դատաստան անէ ա-
մէնքին , և ամբարիշտներին
յանդիմանէ իրանց գործե-
րին համար՝ որ նորանք ամ-
բարշտութեամբ գործեցին ·
և ամէն կոպիտ և ծանր խօս-
քերին համար՝ որ ամբարիշտ-
ներն և մեղաւորներն նորա-
նից խօսեցին ։

16 Սորանք են տրտնջողներ
և փսփսողներ, որ իրանց անձ-
ների ցանկութիւնների պէս
են գնում· և նորանց բե-
րաններն ամբարտաւան բա-
ներ են խօսում· երեսպաշ-
տութիւն են անում շահի
համար ։

17 Ասացէ դուք՝ սիրելիներ,
յիշեցէք մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի առաքելոց առա-
ջուց ասած խօսքերըն ։

18 Ինչու որ ասում էին ձեզ՝
թէ յետին ժամանակներում
անարգող մարդիկ կըլինին ,

լթեալք ըստ իւրեանց ամբաշտութեանցն յանկուեցաւ։

19 Սոքա են նշաւակեալք շնչաւորք, որ զոգին ոչ ունիցին ։

20 Այլ մեք՝ սիրելիք, եղիցուք շինեալ զանձինս սրբութեամբն հաւատոյ ՚ի հոգին սուրբ • կացցուք յաղօթս,

21 Պահել զանձինս սիրովն Աստուծոյ • ակնուանել ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի կեանսն յաւիտենականս ։

22 Եւ ոմանց դատապարտելոյ լինիջիք կշտամբիչք,

23 Եւ զոմանս ապրեցուցանիջիք, յափշտակեալ ՚ի հրոյ• եւ ոմանց ողորմեսջի՛ք եր֊կիւղիւ դատել, եւ զպատմուճանն որ ՚ի մարմնոյն իսկ աղտեղեալ ։

24 Եւ այնմ, որ կարօղն է պահել զձեզ անսայթաս եւ անբիծս, հաստատել առաջի իւրոյ փառացն աներկիւղն ցնծութեամբ ։

25 Միոյն Աստուծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, փառք, մեծու-

որ իրանց ամբաշտութեան ցանկութեանցն հետևին կըգըներան ։

19 Սորանք են ջոկվածք հեռացածք շնչաւորներ, որ հոգի չունին ։

20 Բայց մենք՝ սիրելիներս, մեր անձներըս սուրբ հաւատքին վերայ շինենք, և սուրբ հոգովն աղօթք անենք ։

21 Մեր անձերըս Աստուծոյ սիրովն պահենք • մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողորմութեանն մտիկ տալով՝ յաւիտենական կենացն համար ։

22 Եւ մինքանխին որ դատապարտվելոյ վերայ են, խրատ տուէք ։

23 Եւ մինքանխին ապրեցուէք՝ կրակից դուրսքաշելով, և մինքանխին վերայ խղճացէք՝ որ վախով դատապարտէք էն շորը էլ՝ որ մարմնից կեղտոտվածք է ։

24 Եւ նորան՝ որ կարող է անարատ և անկեզտ պահել ձեզ, (և) իրան փառաց առաջին կանգնացնել առանց վախի ցնծութեամբ ։

25 Էն միս Աստուծոյն՝ և մեր փրկիչ Յիսուս Քրիստոսին՝ (էնի) փառք, մեծու-

թիւն, զօրութիւն և իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեան, և այժմ և յամենայն յաւիտեանս ամէն։

թիւն, զօրութիւն և իշխանութիւն ամէն յաւիտեան՝ նախքան առաջ, և հիմիկ և ամէն յաւիտեաններուն ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՒԻՏՈՐԱՆՁԻ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

1 Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինել նեղոց է վաղվաղակի. և նշանակեաց առաքելով ի ձեռն հրեշտակի իւրոյ, առ ծառայ իւր Յովհաննէս։

2 Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ և զվկայութիւն Յիսուսի Քրիստի՝ զոր եահս. և որ էր՝ և որ լինելոցն էր յիտ այնորիկ։

3 Երանի՝ որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր ի սմա գրեալ է. զի ժամանակն մերձեալ է։

1 Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնն՝ որ նորան Աստուած տուաւ իրան՝ որ ցոյց տայ իրան ծառաներին՝ էն որ շուտով պիտի լինի. և իրան հրեշտակի ձեռովն ուղարկեց նշանց տուաւ իրան Յօհաննէս ծառային։

2 Որ վկայեց Աստուծոյ բանին, և Յիսուսի Քրիստոսի վկայութեանն որ տեսաւ էն որ էր, և նրանից ետև պիտի լինէր։

3 Երանի նորան որ կարդայ կամ լսէ էս մարգարէութեան խօսքերըն, և պահէ էն՝ որ սորանումն գրված է. ինչու որ ժամանակն մօտայել է։

4 Յովհաննէս առ եօթն եկեղեցիս՝ որ են Ասիայ, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ՝ յԵկեն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն հոգւոցն՝ որ են առաջի աթոռոյն իւրոյ։

5 Եւ ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռելսն, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և ելոյծ զմեզ ի մեղաց մերոց արեամբն իւրով։

6 Եւ արար զմեզ թագաւորս և քահանայս Աստուծոյ և Հօր իւրոյ. որում փառք և զօրութիւն՝ յաւիտեան և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

7 Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. և տեսցեն զնա ամենայն աչք, և տեսցեն զնա ծակեցին զնա ամենեքեան յերկրի, և կոծեսցին ի վերայ նորա. այո՛ ամէն։

8 Ես եմ այբ և ես եմ քէն, ասէ Տէր Աստուած, որ էն՝ և որ է՝ և որ գալոցն է՝ ամենակալ։

9 Ես Յովհաննէս եղբայր

4 Յովհաննէս եօթն եկեղեցւոց որ ասիոյ մէջն են, շնորհք (լինի) ձեզ հեա՝ և խաղաղութիւն Աստուածմանից՝ նորանից որ է, և որ էր, և որ գալու է, և եօթն հոգիներից, որ նորա աթոռի առաջին են։

5 Եւ Յիսուս Քրիստոսից էն հաւատարիմ վկայից, որ մեռելների մէջից առաջինն է, և երկրի թագաւորների իշխան. որ մեզ սիրեց, և մեր մեղաց կապանքներըն արձակեց իրան արիւնով։

6 Եւ մեզ արար թագաւորներ և քահանաներ Աստուծոյ և իրան հօր համար. որ նորան (լինի) փառք և զօրութիւն՝ հիմիկ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

7 Ահա գալիս է ամպերով. և ամէն աչքերն կըտեսանեն նորան, և երկրի ծայրերն, և նորանք էլ որ խոցեցին նորան. և երկրի ամէն ազգերն կոծ կանեն նորա վերայ՝ իրաւի. ամէն։

8 Ե՛ս եմ ալփան, և ես եմ քէն, ասում է Տէր Աստուածն, նա որ է, և որ էր, և որ գալու է, Ամենակալողն։

9 Ես Յովհաննէս ձեր ե-

ձեր և հաւատարակից նեղու-
թեան՝ և արքայութեան՝ և
համբերութեան որ ի Յի-
սուս. եղէ ես ի կղզւոջն
որ անուանեալ կոչի պատմոս՝
վասն բանին և վասն վկայ-
ութեանն Յիսուսի Քրիստոսի։

10 Եւ եղև յիս հոգի ի
կիւրակէի աւուր, և լուայ
զձայն զհետ իմ մեծ իբրև
զձայն փողոյ, որ ասէր ցիս.
Ես եմ ալփա և ովմ. սկա-
ձին և վերջին.

11 Զոր տեսանես՝ գրեա
ի գիրս, և տուր տանել
Յեովհ եկեղեցիս՝ որ Եփե-
սոս և ի զմիւռնիա՝ ի պեր-
գամոն և ի Թիւատիրա և
ի սարդիկէ, և ի փիլադել-
փիա, և ի լաւոդիկեա։

12 Եւ դարձայ տեսանել
զձայնն՝ որ խօսէր ընդ իս. և
ի դառնալն իմում տեսի
եօթն ճրագարան ոսկի։

13 Եւ ի մէջ եօթն ճրա-
գարանացն նման որդւոյ մար-
դոյ, զգեցեալ պատմուճան
պճղնաւոր, և գօտեւորեալ
առ ստեամբքն գօտի ոսկե-
ղէն.

14 Եւ գլուխ նորա և հերքն
իբրև վասր սպիտակ՝ և որ-
բայր և հաւատաւ ընկերք նե-
ղութեան, և արքայութիւն և
համբերութիւն որ Ցիսու-
սումն է. ես պատմոս ասված
կղզեացի (ապոյոֆ) էի՝ Աս-
տուծոյ բանին համար, և
Յիսուսի Քրիստոսի վկայու-
թեանն համար։

10 Եւ հոգի էլաւ ինձ վե-
րայ կիրակի օրուն, և լսի ե-
տեւէս ինձ մեծ ձայն լսելի
ինչպէս փողի, որ ասումէր ինձ՝
ես եմ ալֆան և օն, սկա-
ձինն և վերջինն։

11 Ինչ որ տեսնումես գրէր
մի գրքի մէջ, և տուր տա-
նել էն եօթն եկեղեցիներուն
որ Եփեսոսի և զմիւռնիայի, և
պերգամոնի, և Թիւատիրիայի,
և սարդիկէի, և փիլադելփեա-
յի, և լաւոդիկեայի մէջն ին։

12 Եւ դարձայ որ էն ձայ-
նըն տեսնեմ, որ ինձ հետ խո-
սումէր. և երբոր դարձայ՝
եօթն ոսկի ճրագակալ տեսի։

13 Եւ էն եօթն ճրագ-
կալներուն մէջումն (մին նկար)
որդի մարդոյ նման, որ եր-
կար կապայ ունէր հագած մին-
չեւ ոտներուն պճղներն, և ծը-
ծերին մօտ ոսկի գօտիկ կա-
պած։

14 Եւ նորա գլուխն և մա-
զերն բըրդի պէս, և ձիւնի

պէս զձիւն. և աչք նորա որ-
պէս բոց հրոյ.

15 Եւ ոտք նորա նմանեալ
պղնձոյ ծխելոյ ի մէջ հնո-
ցի հրաշեկ, և ձայն նորա
իբրև զձայն ջուրց բազմաց։

16 Եւ ունէր յաջոյ ձե-
ռինն իւրում աստեղս եօթն,
և ի բերանոյ նորա ելանէր
սուր երկբերանեան. և ե-
րեսք նորա իբրև զարեգակն
Ճառագայթեալ երևէին։

17 Եւ իբրև տեսի զնա՝
անկայ առ ոտս նորա իբրև
զմեռեալ. և եդ ի վերայ իմ
զաջ իւր և ասէ ցիս. մի
երկնչիր, ես եմ առաջինն, և
ես եմ յետինն.

18 Եւ ես եմ կեանք՝ և ես
նոյն որ մեռայ, և եմ կեն-
դանի այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից՝ ամէն,
և ունիմ զբանալիսն մահու
և դժոխոց։

19 Գրեա զոր տեսանես՝ որ
էն, և որ յապայ՝ և որ հան-
դերձեալ է լինել այս։

20 Զխորհուրդ եօթն աստե-
ղացդ՝ զոր տեսերդ յաջս իմ,
և զեօթն Ճրագարանս ոսկիս.

պէս սպիտակ. և նորա աչ-
քերն կրակի բոցի պէս։

15 Եւ նորա ոտներն կարմ-
րած (պղնիւ) պղնձի պէս որ
փուռն մէջն կրակով կարմ-
րած է և նորա ձայնն շատ
ջրերի ձայնի պէս։

16 Եւ իբրև աջ ձեռի մէջն
եօթն աստեղներ ունէր. և
նորա բերանիցն երկու բերա-
նի սուր էր դուրս գալիս, և
նորա երեսն արեգական պէս
Ճառագայթած էր երևում։

17 Եւ երբոր տեսի նորան՝
մեռածի պէս վէր ընկայ նորա
ոտների առաջին. և իրան
աջ ձեռըն ինձ վերայ դրաւ՝
և ասաց ինձ. մի վախենար՝
ես եմ առաջինն և (ես եմ)
վերջինն։

18 Եւ (ես եմ) կեանքն, և
ես (եմ) նա որ մեռայ՝ և (ա-
հա) կենդանի եմ հիմիկ և
միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից՝ ամէն, և ունիմ մահի
և դժոխքի բանալիքներըն։

19 Գրիր ինչ որ տեսնու-
մես՝ և ինչ որ է, և ինչ որ
յետոյ լինելու է։

20 Իմն եօթն աստեղների
խորհուրդըն որ իմ աջ ձե-
ռս մէջն տեսիր, և էն եօթն

եօթն աստեղքն՝ հրեշտակք եօթն եկեղեցեացն են, և Հրապարանքն եօթն՝ եօթն եկեղեցիքն են։

ոսկի Հրագաւկալներըն. եօթն աստեղունեըն եօթն եկեղեցինեըի հրեշտակներըն են, և եօթն Հրագաւկալներն՝ եօթն եկեղեցեացն են։

ԳԼ· Բ։

1 Ա՛ռ հրեշտակ եփեսացւոյ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ կալօղն՝ որ ունի զաստեղս եօթն յաջու ձեռին իւրում, և շրջի ի մէջ եօթն աշտանակի ոսկեայ։

1 Ա՛ռ եփեսացոց եկեղեցոյ հրեշտակին գրիր. ետսէս ե ասում (էն) կալօղն՝ որ եօթն աստեղներըն ունի իրան աջ ձեռումն, և եօթն ոսկի Հրագաւկալների մէջն ման ե գալիս։

2 Գիտեմ զգործս քո և զվաստակս քո և զհամբերութիւն քո. և զի ոչ բառնաս զչարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս՝ և ոչ են, և հնբրայեցիս՝ և ստեն։

2 Գիտուեմ քո գործքերըդ, և քո վաստակներըդ և քո համբերութիւնըդ. և որ չարերին չես համբերում, և (էլ) փորձեցիր նորանց որ իրանց առաքեալ են ասում՝ և չեն, և եբրայեցի (են ասում) և սուտ են։

3 Եւ համբերեցեր և վշտացար վասն անուան իմոյ՝ և ոչ նեղեցար։

3 Եւ իմ անունիս համար համբերեցիր, և նեղուելի չես քաշեցիր և աշխատեցիր (և չերեժուլացար)։

4 Այլ ունիմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին լքեր։

4 Բայց ես եմ ասում քեզ՝ որ առաջին սէրըն լքեցիր։

5 Ցիշեա այժմ ուստի անկար՝ և ապաշաւեա, և զառաջին գործսն քո արա. ապա լիցէ ինչ՝ գամ ես վաղ-

5 (Ուրեմն) յիշիր (լիցէ) որտեղից վէր ընկար, և զղջացիր, և քո առաջին գործքերըն արա. ապա լիցէ՝ ես

վազակի, և շարժեցից զաշտանակս քո ի թափուրջ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցիս։

6 Ընդ այս արար զի աստուածս գործեան նիկողայոսի, զոր ես ատեմ։

7 Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ զինչ ասէ հոգին սուրբ առ եկեղեցիսն։ որ յաղթիցէն, սաց նմա տալ ի փայտէն կենաց՝ որ է ի միջ դրախտին Աստուծոյ։

8 Եւ առ հրեշտակ զմիջատնացոյց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ ամոսիկացին և անմահականն, որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ։

9 Ցեսի զգործս քո՝ և զնեղութիւն և զաղքատութիւնդ, այլ ազգատութիւն քո մեծութիւն եղիցի, և զհայհոյութիւնն՝ որ ասէին զինքեանս հրեայս գոլ՝ և չեն ինչ, այլ ժողով սատանայի։

10 Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարիլ։ ահա հանդերձ բանսարկուն արկանիլ ի ձեզ ի բանտ, զի փորձիցիք, և ունիք նեղութիւն աւուրս տասն։ լեր հաւատարիմ մինչև ի մահ, և տացից քեզ զպսակն կենաց։

կըզամ շուտով, և քո ձրագդ կըշարժեմ իրան տեղիկն՝ թէ որ չապաշխարես։

6 Նոցա ես բանըս արա՝ որ նիկողայոսի գործերըն ատես, են որ ես էլ ատումիմ։

7 Ով որ լսելոյ ականջ ունի՝ լսեզ ինչ որ սուրբ հոգին ասումէ եկեղեցիներին, ով որ յաղթուածի՝ տալու է նոցա վոսկեայն ուտել կըսամ, որ Աստուծոյ դրախտի մէջն է։

8 Եւ զմիւռնացւոց եկեղեցւոյ հրեշտակին գրէ։ Ասէս ես ասումէ նա՝ որ ունի սկիզբըն ու վերջ, որ ելաւ մեռեալ՝ և կենդանացաւ։

9 Ցեսի քո գործերըդ՝ և նեղութիւնդ և աղքատութիւնդ, բայց քո ազգատութիւնդ մեծութիւն կըլինի, և (նորանց) հայհոյութիւնըն, որ իրանց համար ասումեն թէ հրեայ են, և չեն, բայց ասատանայի ժողով (են)։

10 Մի վախենար ես բանեըրիցն որ պիտի չարչարուիս։ ահա սատանան պատրաստած է որ ձեզմանից բանտ մէջ դըցե, որ փորձուիք, և տասն որ նեղութիւն կունենաք։ հաւատարիմ կաց մինչև ի մահ, և կենաց պսակըն կըտամ քեզ։

11 Որ ունի ականջս լսելոյ՝ լսելիցի զինչ հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ, ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն։

12 Եւ առ հրեշտակին՝ որ Պերգամոյ եկեղեցին, գրեա, այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրեալ։

13 Ես գործս քո՝ և զի բնակեալ ես ուր աթոռն է սատանայի. և ունիս զանուն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ յաւուրս, յորում անմեղ պատուկնայն իմ հաւատարիմ եղև, զի վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացեալ՝ որ սպանաւ ի ձէնջ, որ կայք՝ ուր սատանայ է բնակեալ։

14 Այլ ունիմ առ քեզ սակաւ, զի կայ առ քեզ վարդապետութիւնն բաղաամայ՝ որ ուսոյց զբազակ դնել գայթագղութիւն առաջի որդւոցն Իսրայելի, ուտել նոցա զսնեալ՝ և պոռնկել։

15 Այսպէս և դու ունիս զվարդապետութիւն նիկողայեացիցն՝ զոր ես ատեմ։

16 Ընդ՝ ապաշխարեա, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի առ քեզ, և պատերազմիմ ընդ նոսա սրով բերանոյ իմոյ։

17 Որ ունի ականջս լսելոյ՝ լսելիցի զինչ հոգին ասէ եկեղեցեաց. որ յաղթէ՝ տացեմ նմա զմանանայն ծածկեալ, և տացեմ նմա քար սպիտակ, և ի քարին անուն նոր գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց որ առնու։

18 Եւ առ հրեշտակին՝ որ Թիատիրացւոց եկեղեցին, գրեա, այսպէս ասէ՝ որդի Աստուծոյ որ ունի զաչսն իբրև զբոց հրոյ, և ոտքն նմանեալ արոյտ պղնձի։

19 Գիտեմ գործս քո, և զսէր և զհաւատս և զծառայութիւն և զտանջանս քո, և զգործս քո զվերջինսն՝ քան զառաջինսն։

20 Այլ ունիմ զքեզ սակաւ, զի հանդուրժես կնոջ Յեզաբելի՝ որ կոչէ զանձն մարգարէ, և ուսուցանէ և մոլորեցուցանէ զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զսնեալ։

21 Եւ տուի նմա ժամանակ զի ապաշխարեսցէ, և ոչ կամի ապաշխարել ի պոռնկութենէ իւրմէ։

22 Ահա արկից զնա ի մահիճ, և որ պոռնկեալ ընդ նմա ի նեղութիւն մեծ, եթէ ոչ ապաշխարեսցեն ի գործոց իւրեանց։

23 Եւ զորդիսն նորա սատակեցից ի մահ, և գիտասցեն ամենայն եկեղեցիք, եթէ ես եմ որ քննեմ երիկամունս և սիրտս, և տացեմ ձեզ ըստ գործոց ձերոց։

24 Ձեզ ասեմ և մնացելոց ի Թիատիրա, որ ոչ ունիք զվարդապետութիւնդ այդ, որ ոչ գիտացաք զխորս սատանայի, որպէս ասեն, ոչ արկից ի ձեզ զբեռն այլ։

25 Բայց զոր ունիք՝ պահեցէք մինչև եկից։

26 Եւ որ յաղթէ և պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տացեմ նմա զիշխանութիւն ի վերայ ազգացն,

27 Եւ հովուիցէ զնոսա գաւազանաւ երկաթի, իբրև զամանս բրուտի խորտակեսցի,

28 Որպէս և ես առի ի հաւր իմմէ, և տացեմ նմա զաստեղն առաւօտու։

29 Որ ունի ականջս լսելոյ՝ լսելիցի զինչ հոգին ասէ եկեղեցեաց։

կի ։ և պատրաստեցայք ընդ նոսա սրով բերանոյ ձիոյ ։

47 Որ ուրախի ականջս լսել՝ լսէր՝ լուխկ պինչ հոգին ասէ առ եկեղեցիս ։ որ յաղթեցէ՝ սաց նմա ուտել ի մանանայէն թաքուցելոյ , և սաց նմա գիր սրբութեան , և գրեալ անուն նոր ի գիրն, զոր ոչ ոք գիտէ՝ բայց ինքն որ առնուն ։

48 Իսս առ հրեշտակն որ ի Թիւատիրայ եկեղեցին՝ գրեա՝ այսպէս ասէ որդին Աստուծոյ , որոյ աչք իւր են իբրև վառ հրոյ, և ոտք նորա նման պղնձի ձիւոյ ։

49 Գիտեմ գործս քո՝ և սէր և հաւատս՝ և պաշտօն քո համբերութիւնդ՝ և զի բազում է վաստակ քո վերջինն քան զառաջինն ։

20 Այլ ասեմ առ քեզ բազում՝ զի լծեցեր կինն զիզաբէլ՝ որ ասէր գինքն մարգարէ, և ուսուցանէր մինչ պոռնկել՝ և ուտել զպղծեալ ։

21 Իսս ետու նմա ժամանակ ապաշխարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ոչ ապաշխարեցին ։

և կըճակիմ նորանց հետ իմ բերանոյս սրովն ։

47 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝ լիցի լսել ինչ որ Հոգին ասասէ եկեղեցիներուն ։ Ով որ յաղթուածէ՝ կերակրեցուցանել կու տամ նորան , և սրբութեան գիր կու տամ նորան և էն գրի վերայ նոր անուն գրած , որ խակի մինչեւ չի՛ գիտուիր , բայց միայն նա՝ որ առնուի ։

48 Իսս Թիւատիրի եկեղեցւոյ հրեշտակին գրէ՝ Եսպէս է ասուած Աստուծոյ որդին , որ նորա աչքերն կրակի բոցի նման են , և նորա ոտքերը մաքուր պղինձի պէս ։

49 Գիտեմ քու գործերդ , և սէրդ , և հաւատքդ , և քու ծառայութիւնդ , և քու համբերութիւնդ ։ որ քու վերջին աշխատանքդ շատ է քու առաջինէն ։

20 Հապա քեզ շատ եմ ։ ասած՝ Եր որ կիսաբէլ կնիկը թոյլ տուիր՝ որ մարգարէ կերեւար ասուած իրան , և իմ ծառաներս մոլորութիւն է սորվեցնուած , որ պոռնկութիւն անեն և (կռոտքի) միսով ուտեն ։

21 Իսս ժամանակ տուի նորան , որ ապաշխարեն իրենց պոռնկութենեն համար , և չապաշխարեցին ։

22 Ա Հաւատակ ես արկանեմ
ձեզ ՚ի հնոյ, և գործակիցս
իւր ընդ որս չեղայաւ՝ ՚ի նո-
գութիւնս մեծամեծս . եթէ
ոչ ապաշխարեսցեն ՚ի գոր-
ծոց իւրեանց :

23 Յիս զբրդիս նոցա սպա-
նից մահուամբ . և ճանի-
ցեն ամենայն եկեղեցիք՝ թէ
ես եմ՝ որ քննանեմ զե-
րիկամուսինս և զսիրտս . և
տամ ձեզ իւրաքանչիւր ըստ
գործոց իւրեանց :

24 Ա՛յլ ձեզ ասեմ՝ որք ՚ի
Թիւատիրէ եք , և ոչ ունիք
զվարդապետութիւնս զայս ,
որ ոչ ճանիցէք զխորս սա-
տանայի՝ զոր խօսին՝ ոչ ար-
կից զձեզ ճանրութիւն :

25 Ա՛յլ զոր ունիք , պա-
հեցէք՝ մինչև ես գամ :

26 Յիս որ յաղթէ՝ և պա-
հէ զգործս իմ՝ մինչև յկա-
տար , տաց նմա իշխանու-
թիւն ՚ի վերայ ազգաց :

27 Յիս հովուեսցէ գոսա
գաւազանաւ երկաթեայ , և
իբրև զամանի բրտի փշրես-
ցէ գոսա :

28 Իպէս և ես ընկալայ ՚ի
հօրէ իմմէ , և տաց նոցա
գլուսապն առաւօտուան :

22 Ա՛հա ես նորան փոսն
մէջ կը ձգեմ, և նորա գործա-
կիցները էլ որ նա նորանց
հետ չեղաւ՝ մեծ մեծ նեղու-
թիւնների մէջ , թէ որ չա-
պաշխարեն իրանց գործե-
րից :

23 Յիս նորանց որդիները
մահով կը սպանեմ՝ և ամէն
եկեղեցիները կը ճանաչեն՝ թէ
ես եմ որ քննում եմ երիկա-
մուհերների և սրտերը , և
տալիս եմ ձեզ ամէն ինչ ի-
րեան գործերի չափով :

24 Ասացի ձեզ առաւել՝ որ
Թիւատիրում եք, և ես վար-
դապետութիւնս չունիք՝ որ
սատանայի խորութիւնները
էլ չը ճանաչեցիք, ինչպէս որ
նորանք խօսում են : Ձեզ վի-
րայ ծանրութիւն չեմ դնիլ :

25 Ասացի էն որ ունիք պա-
հեցէք մինչև ես գամ :

26 Յիս ով որ յաղթում՝
և իմ գործերը պահում
մինչև վերջը, նորան իշխանու-
թիւն կը տամ ազգերի վերայ :

27 Յիս երկաթէ գաւազա-
նով կը հովուէ նորանց , և
բրուտի (հողից չինած) ամանի
պէս կը փշրէ նորանց :

28 Ինչպէս որ ես էլ իմ
հօրից ընդունեցի՝ և կը տամ
նորանց առաւօտուան աստեղը :

29 Ով որ ականջ ունի լսելու՝ լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին։

Գ։

1 Ջու առ հրեշտակ սարդիսեցւոց եկեղեցւոյն գրեա՝ այսպէս ասէ՝ որ ունի կեանքն Հոգին Աստուծոյ՝ և կեանքն աստեղս։ ասեմ գործս քո՝ զի անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես։

2 Լ՚ար արթուն՝ և հաստատեա զայսուհետեւ՝ զի հատանել ես մեռանել։ քանզի չի գտի գործս քո կատարեալ առաջի Աստուծոյ։

3 Արդեօք յիշեա լիցես որպէս յուսարն, և պահեա և ապաշխարեա։ ապա լիցէ չգոլարթնասցես՝ գայ որպէս գող։ և չգիտես որ իմանայ գաս քեզ։

4 Ունիս սակաւ մի զանուն ստրգիսեցւոցն, որք չեզ աղտեցուցին զհանդերձս իւրեանց։ և քայլեն ի սպիտակս՝ որովհետեւ արժանի եգեն։

5 Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս։ և չեջջիցեմ անուն նորա ի գրքէն կենացն

29 Ով որ ականջ ունի լսելու լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին։

Գ։

1 Ջու սարդիսացոց եկեղեցւոյ հրեշտակին գրիր. Սպէսէ ասում է նա՝ որ Աստուծոյ եօթը հոգիները, և (եօթ) եւ լծը աստեղները ունի. այսպէս գործերդ գիտեմ որ կենդանի անուն ունիս, և մեռած ես։

2 Արթնի՛ր կաց և պահի՛ր եաև հաստատի՛ր, որ (քեզ ասում) պիտի մեռնիս։ որովհետեւ ոչ գտայ գործերդ կատարեալ Աստուծոյ առաջին։

3 Ուրեմն միտքդ բե՛ր լսէ՛ր ինչպէս լսեցիր և պահի՛ր, և ապաշխարի՛ր։ ապա եթէ որ չարթնանաս՝ կուգամ գողի պէս, և չգիտես ո՛ր ժամում եմ գալու քեզ վրա։

4 (Ունայն) ունես մի քանի անուններ եկ սարդիսացոց մէջն, որ իրանց հագուստները չեն աղտոտել, և սպիտակ (հագուստով) են պիտի գնան, որովհետեւ արժանի եղան։

5 Ով որ յաղթի՛ւ՝ նա պէս սպիտակ կը հագցուի և նո. րա անունն կեանց գրքից չի

դպրութեանէն կենայ։ Եւ խոս-
տովանեցայ ցտեսուն Տեառն
ասելովք հոր իմոյ՝ եւ առաքի-
չիս հրեշտակոյ ։

6 Որ ոչխի ականջս լսելոյ՝
լսելիք դիւոյ ասէ հոգիս առ
եկեղեցիս ։

7 Իբրեւ առ հրեշտակին փի-
լադելփեայ եկեղեցւոյն գրեաս
պատկերեալ առ առաքեալն, Չլմա-
րիտն, որ ունի զփականս դաւ-
թին։ բանայ՝ եւ ոչ ոք կ որ
փակէ, եւ փակէ՝ եւ ոչ ոք կ
որ բանայ ։

8 Ցեսի գործս քո ։ ահա
եառ առաջի քո դուռն բա-
ցեալ ։ զոր ոչ ոք կարէ փա-
կել ։ զի սակաւիկ ուժս գո-
րուեցեր, եւ պահեցեր զբանս
իմ՝ , եւ ոչ ուրացար զանուն
իմ։

9 Ընծաւսիկ ես տամ
քեզ ժողովոյ սատանային, որք
ասեն զինքեանս հրեայս գոլ՝
եւ ոչ են, այլ սուտ ։ արա-
րից զնոսա՝ զի եկեսցեն՝ եւ
երկրպագցեն առաջի ոտից
քոց, և ճանիցեն, զի ես սի-
րեցի զքեզ ։

10 Զի պահեցեր զբան
համբերութեան իմոյ, եւ ես
պահեցից զքեզ ի ժամ փոր-

ջելիք ։ եւ կրկաւանեմ ես ։
բա անուանըն իմ՝ հօրս առա-
ջին եւ հօրա հրեշտակերի ա-
ոաջին ։

6 Որ (լսելոյ) ականջ
ունի՝ լիցի լսել ինչ որ հո-
գին առաքեալ եկեղեցիներին ։

7 Իբրեւ փիլադելփեայի եկե-
ղեցոյ հրեշտակին գրիր։ ես ։
պէս կ առաքեալ առաջին, Ճշմա-
րիտն, որ դաւթի բանալիս ։
ներկոյն ունի։ բանայէ՝ եւ ոչ
ոք չկարէ զոր փակէ, եւ փակէ՝
եւ ոչ ոք չկարէ, որ բանայէ ։

8 Ցեսի զո գործերըդ։ ա-
հա զո առաջիդ (մեր) բաց ։
ւած դուռըն գրի, որ ոչ ոք
ոչ կարէ չէ փակել ։ ին-
չոյս որ քիչ զորութիւն ու ։
նես, եւ իմ խօսքերըդ պահե-
ցիր, եւ իմ անուանըդ չուրա ։
ցար ։

9 Ընդ ես առաջնոյն ժո-
ղովրըդ քեզ եմ տալիս, որ
իրանց համար առաւելն լինք
հրեայ են՝ և չեն, բայց սուտ
են առաւել։ ահա կտեմ զո-
րանոյ՝ որ գան զո առաջիդ
առաջին երկրպագութիւն ա-
նեն, և ճանաչին լինք ես սի-
րեցի քեզ ։

10 Որովհետեւ իմ համբե ։
րութեան խօսքըն պահեցիր ։
ես էլ քեզ կըպահեմ փոր-

ձուլեաւն քո. որ Հանդերձեալ ե գալ յամենայն ազգս երկրի։

11 Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ քո։

12 Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի ևս ելցէ. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմ, որ իջանէր յերկնից Աստուծոյ իմոյ, և անուն նորա նոր։

13 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ, սկիզբն սկզբան արարածոյ Աստուծոյ։

15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ։

16 Այլ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հանձն ձանրի ժամուճն (սահմռուկ). որ սիրէ գայ բազում աշխարհքին վերայ որ փորձէ ամենին, որ երկրի երեսի վերայ բնակեալ են։

11 Հայ կըգամ շուտով, (պինդ) բռնիր էն որ ունիս, որ չըլինի թէ մինն առնէ քո պսակըդ։

12 Ով որ յաղթուիմ՝ սիւն կանեմ նորան իմ Աստուծոյ տաճարումն, և էլ դուրս չի գնալ. և նորա վերայ կըգրեմ իմ Աստուծոյ անունըն, և իմ Աստուծոյ քաղաքի անունըն, (այսինքն) նոր երուսաղէմինըն՝ որ երկնքիցն սիրէ վերգայ իմ Աստուածանիցս, և իմ նոր անունըս։

13 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ հոգին ասումէ եկեղեցիներին։

14 Եւ լաւոդիկեայ եկեղեցոյ հրեշտակին գրիր. Քսպես է ասում՝ ամէնն էն հաւատարիմ և ճշմարիտ վկան, Ա՛յ Աստեղծուածներուն սկիզբն։

15 Գիտումիմ գործքերըդ՝ որ ոչ ցուրտ ես՝ և ոչ տաք. պէտք էր որ դու ցուրտ լինէիր՝ և կամ տաք։

16 Բայց դու գոլ ես՝ և ոչ տաք և ոչ ցուրտ. որ սիրէ

դերձեալ ես փսխիլ ՚ի բերանոյ իմմէ ։

17 Զի ասես . Մեծասուն եմ՝ և մեծացայ , և ոչ իւիք կարօտ եմ . և ոչ գիտես՝ եթէ դու ես ողորմելի և հեզգ և աղքատ՝ մերկ և կոյր ։

18 Ա՛րդ՝ ես խորհրդակից եղէց քեզ , ած գնեա՛ ՚ինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ՝ զի մեծասցիս , և հանդերձս սպիտակս զի զգեցցիս՝ զի մի երեւեսցի անվայելչութիւն մերկութեան քո . և դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես ։

19 Ես՝ զոր սիրեմ , յանդիմանեմ և խրատեմ . նախանձեա այժմ , և ապաշխարեա ։

20 Ո՛հաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ . եթէ ոք լուիցէ ձայնի իմոյ՝ և բանայցէ զդրունսն , մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա , և նա ընդ իս ։

21 Որ յաղթէ՝ տայց նմա նստել ընդ իս յաթոռ իմ , որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ հօր իմոյ ։

22 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս ։

փսխըվիս իմ բերանիցս ։

17 Պատճառն որ ասումես թէ հարուստ եմ . և մեծացայ , և իսկի մին բանով կարօտ չեմ . և չես գիտուր՝ թէ դու ողորմելի ես , և ծոյլ , աղքատ , մերկ , և կոյր ։

18 Ուրեմն ես խրատ տամ քեզ . դնիր , ած ինձանից կրակում փորձված ոսկի , որ հարըստանաս , և սպիտակ շորեր՝ որ հագնիս , որ քո մերկութեան ամօթն չերեւի . և դեղ դիր քո աչքերիդ որ տեսնես ։

19 Ես ում որ սիրումեմ յանդիմանումեմ և խրատումեմ . ուրեմն ջանք արա , և ապաշխարիր ։

20 Ո՛հա ես դուռն առաջին կանգնած եմ և թակումեմ . թէ որ մին լսէ իմ ձայնըս և դուռըն բանայ , կըմտնեմ նորա մօտն՝ և ընթրիս կանեմ նորա հետ , և նա ինձ հետ ։

21 Ով որ յաղթումէ կըտամ նորան , որ ինձ հետ նստի իմ աթոռիս վերայ , ինչպէս որ ես յաղթեցի՝ և նստեցի իմ հօրս աթոռն ։

22 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ հոգին ասումէ եկեղեցիներին ։

4 Եւ եհաս ամէն բաներիցս եւ՝ տեսի, եւ ահա (մին) դուռն էր բացուած երկնքումն եւ էն առաջինն ձայնն որ փողի պէս լսեցի՝ խօսումէր ինձ հետ եւ ասում. վեր էլիր էս տեղ եւ ցոյց կրտամ քեզ ինչ որ լինելոց է յետին ժամանակներումն։

2 Եւ հենց էն ժամումն (հաճախա՛կ) հոգի եկաւ ինձ վերայ. եւ տեսի որ մին աթոռ կար երկնքումն։

3 Եւ նա՝ որ աթոռին վերայ նստած էր, յասպիս եւ սարդիոն ակունքի նման տեսիլք ուներ։

4 Եւ էն աթոռի չորս կողմանն կամարանչ կարմիր գոտիկ կար, որ զըմրուխտի նման տեսիլք ուներ. եւ աթոռի չորս կողմանն քսան եւ չորս աթոռներ (կային), եւ էն աթոռներին վերայ քսան եւ չորս երէցներ նստած էին սպիտակ շորեր հագած, եւ իրանց գլխներումն ոսկի պսակներ։

5 Եւ էն աթոռից վերայ լսւտակումներ եւ ձայներ եւ որոտմունք էլին դուրս գալիս. եւ եօթն լամբարներ կրակով բորբոքուած աթոռի առաջին

1 Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ եւ ահա դրուն եբ-կնից բացեալ էին, եւ ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս եւ ասէր. ե՛լ այսր, եւ ցուցից քեզ՝ զի՞նչ լինելոց է յապա ժամանակս։

2 Եւ ժամանեալ էի հոգի, եւ տեսի աթոռ մի՝ զի կայր երկինս։

3 Եւ՝ ի վերայ աթոռոյն նստեր նման տեսլեան ակնոյ յասպսի եւ սարդիոնի։

4 Եւ քահանայք շուրջ զաթոռովն նմանք տեսլեան գմբեթի. եւ շուրջ զաթոռովն աթոռք քսան եւ չորք, եւ ի վերայ աթոռոյն նստեին քսան եւ չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, եւ ի գլուխս նոցա պսակս ոսկիս։

5 Եւ յաթոռոյ անտի եւ էանէին փայլատակմունք եւ ձայնք եւ որոտմունք. եւ եօթն ջամբարք հրոյ բորբոքեալ առաջի աթոռոյն,

որ են եօթն հոգիքն Աստուծոյ ։

6 Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նման սպիտակուեան սառին , և ի մէջ աթոռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ ։

7 Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին նման պուպակի, և երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցեալ ։

8 Եւ չորից կենդանեացն էին միոյ ի նոցանէ վեց թեւք, շուրջանակի և ի ներքոյ լի էին աչօք, ոչ հանդչէին՝ ոչ գիւր և ոչ գիշեր՝ ասելով. սուրբ, սուրբ, սուրբ Տէր Աստուած ամենակալ՝ որ էր, և ես , որ գալոց ես ։

9 Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նստելոյն ի վերայ աթոռոյն՝ կենդանեացն յաւիտեանս յաւիտենից ,

10 Անկանէին քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն , և երկիր պագանէին կենդանեացն յաւիտեանս յաւիտենից. և դնէին զպսակս

որ նորանք Աստուծոյ եօթն հոգիներն են ։

6 Եւ աթոռի առաջին պատկոյ (շո՜շոյէ) պէս ծով կար սպիտակ սառուցի նման , և աթոռի մէջն չորս կենդանիք (կայեն) որ առաջուց և յետուց լիքն էին աչքերով ։

7 Եւ առաջին կենդանին առիւծի նման էր, և երկրորդ կենդանին եղի նման , և երրորդ կենդանին մարդոյ երես (ունէր), և չորրորդ կենդանին նման թռչուն լծուած արծուի նման ։

8 Եւ են չորս կենդանիքն ամէն մէկն վեց թեւ ունէին իրանց չորս կողմանէն և ներսեւանց լիքն էին աչքերով . և հանգիստ չէին առնում՝ ոչ ցերեկ և ոչ գիշեր՝ ասելով . սուրբ, սուրբ, սուրբ , Տէր Աստուած ամենակարող, որ էիր, և ես, և գալոց ես ։

9 Եւ երբ որ են կենդանիքն փառք, և պատիւ և գոհութիւն էին տալիս աթոռի վերայ նստողին, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից ,

10 Քսան և չորս երէցներն վեր էին ընկնում աթոռի վերայ նստողի առաջին և երկրպագութիւն էին տալիս նորան, որ կենդանի է յաւիտ-

իւրեանոյ առաջի ամիսոյն
ասելով,

11 Արժանի ես՝ Տէր Աս-
տուած մեր սուրբ, առնուլ
փառս և պատիւ և զօրու-
թիւն, զի դու ստեղծեր զա-
մենայն. և ՚ի կամիլն քո
ստեղծան՝ և կան հաստա-
տուն։

տեանս յաւիտենից. և երա-
պատկերըն վէր էին դնուա
ամիսոյն առաջնոյն և ասում.

11 Արժանի ես մ՚ր սուրբ
Տէր Աստուած՝ որ փառք և
պատիւ, և զօրութիւն առ
նես. պատճառն որ դու ստեղ-
ծեցիր ամէն բան, և քո կա-
մենալով ստեղծուեցան և կե-
նում են հաստատ։

ԳԼ. Ը։

1 Եւ տեսի ՚ի ձեռս ա-
ջոյ՝ որ նստէր ՚ի վերայ ամի-
սոյն՝ գիրք գրեալ ներքոյ և
արտաքոյ, և կնքեալ եօթն
կնքով։

2 Եւ տեսի հրեշտակ մի
զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի ձայն
մեծ. ո՞ է արժանի բանալ
զգիրքս՝ և լուծանել զկնիքք
նորա։

3 Եւ ոչ ոք կարէր՝ ոչ
՚ի յերկինս և ոչ յերկիր և
ոչ ՚ի ներքոյ երկրի՝ բանալ
զգիրքն, զի ոչ տեսին զնա։

4 Եւ ես լայի ուժգին՝ զի
ոչ ոք գտաւ արժանի բա-
նալ զգիրքն և հայել ՚ի նա։

1 Եւ ամիսոյն վերայ նստո-
ղի աջ ձեռուն մին գիրք տե-
սի, որ ներսևանոյ և դրսևանոյ
գրված էր, և եօթն կնքով
(ֆօհրով) կնքված։

2 Եւ մին զօրաւոր հրեշ-
տակ տեսի՝ որ մեծ ձայնով
կանչուածէր և քարոզուածէր.
ո՞վ է արժանի բանալ էս գիր-
քըս՝ և սորա կնիքներըն (ֆօհր-
ներըն) արձակել։

3 Եւ իսկի մինն՝ ոչ երկն-
քումն և ոչ երկրի վերայ, և
ոչ երկրի ներքևումն՝ կարօղ
չէր էն գիրքըն բանալ, և ոչ
էլ տեսնել նորան։

4 Եւ ես սաստիկ լաց էի
լինում, որ ոչ ով չը գտաւ
արժանի, որ էն գիրքըն բա-
նայ, և նորա մէջ նայի։

5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Մի լար, ահաւասիկ յաղթեաց առիւծն յայգէն Յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ զգիրքն՝ եւ լուծանել զեօթն կնիքսն նորա։

6 Եւ տեսի՝ ի մէջ աթոռոյն եւ ի մէջ չորից կենդանեացն՝ եւ ի մէջ երիցանցն գառն կայր զնեալ, որ ունէր եօթն եղջիւրս՝ եւ աչս եօթն, որ են հոգիք Աստուծոյ՝ որ են առաքեալ ընդ ամենայն երկիր։

7 Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր ի վերայ աթոռոյն։

8 Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի գառնին. եւ ունէին իւրաքանչիւր քնար՝ եւ բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն։

9 Եւ օրհնէին երգս նորս եւ ասէին. արժանի ես առնուլ զգիրդ՝ եւ բանալ զկնիք դորա, զի զնար՝ եւ գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ քով՝ յամենայն ազգաց եւ ի

5 Եւ էն երէցներիցն մինն ասաց ինձ՝ լաց մի լինիր, ահա յաղթեց էն առիւծն որ յուդայի ցեղիցն է՝ դաւթի արմատիկն (հէռհէցն), որ գիրքըն բաց անէ՝ և նորա եօթըն կնիքներըն (հէռհրնէրըն) արձակէ։

6 Եւ տեսի էն աթոռի միջուցի՝ և չորս կենդանիների միջուցի, և երէցների միջուցի մին գառն էր կանգնած մորթածի նման, որ եօթն եղջիւր ունէր՝ և եօթն աչք, որ Աստուծոյ եօթն հոգիքն են. որ ուղարկված են ամէն երկիրներն։

7 Եւ նա եկաւ՝ և էն աթոռի վերայ նստողի աջ ձեռիցն (էն գիրքըն) առաւ։

8 Եւ երբոր գիրքըն առաւ չորս կենդանիքներն և քսան և չորս երէցներն վէր էին ընկնում գառի առաջին. և նորանց ամէն մէկն քնար (սաղթուր) ունէին՝ և ոսկի բուրվառ լինկով լիքն, որ սրբոց աղօթքն է։

9 Եւ նոր երգով օրհնում էին և ասում. (դու) արժանի էս էդ գիրքըդ առնել՝ և դորա կնիքներըն բանալ, ինչու որ մորթվեցար, և քո արիւնովդ մեզ գնեցիր Աս-

լեզուաց և ի ժողովոյ հեթանոսաց ։

10 Եւ արարեր զոսա Աստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս՝ թագաւորել ի վերայ երկրի ։

11 Եւ տեսի, և լուայ ձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և զէրիւքն կենդանեօքն և զքահանայիւքն, և էր թիւն նոցա՝ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց ։

12 Ասէին ձայնիւ մեծաւ. արժան է գառնդ զեռնեալ առնուլ զմեծութիւն և զմաստութիւն և զղօրութիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն ։

13 Եւ ամենայն արարածք՝ որ են յերկինս և յերկրի և ի ծովս և որ ի նոսա՝ լուայ զի ասէին. որ նստի յաթոռն՝ և գառնն օրհնեալ բարձրացեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից ։

14 Եւ չորք կենդանիքն ասէին. ամէն, և երիցունքն անկանէին առաջի նորա և երկրպագանէին ։

տուծոյ համար ամէն ազգերից, և լեզուներից, և հեթանոսների ժողովրդից ։

10 Եւ մեր Աստուծոյն համար թագաւորներ և քահանաներ արիր, որ երկրի վերայ թագաւորութիւն անեն ։

11 Եւ տեսի՝ և շատ հրեշտակների ձայն լսեցի՝ որ աթոռի և չորս կենդանիների և երէցների չորս կողմն էին կանգնած. և նորանց համարն էր բիւրք բիւրոց և հազարք հազարաց ։

12 Որ մեծ ձայնով ասումէին արժանի է գառնդ, որ մորթուած՝ որ մեծութիւն և իմաստութիւն և զօրութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն առնէ ։

13 Եւ ամէն տեղ ստեղծուածներն որ երկնքումն են և երկրի վերայ, և ծովումն և նորանք որ նորա մէջն են, (էն ամենից) լսեցի որ ասումէին. (նա) որ աթոռին վերայ նստած է՝ և գառն էլ, օրհնուած բարձրացած և փառաւորուած (լինի) յաւիտեանս յաւիտենից ։

14 Եւ չորս կենդանիքներն ասումէին. ամէն, և երէցներն վեր էին ընկնում նորա առաջին և երկրպագութիւն էին անում ։

ԳԼ· Զ·

4 Յե տեսի զև երբայ զմին 'ի կնբոյն, և լուայ 'ի միոյ 'ի չորից կենդանեացն իբրև ձայն որոտման՝ զև ասէը՝ Թէ գամ։

2 Յե տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և եկն յաղթօղն՝ զև յաղթեսցէ։

3 Յե յորժամ եբայ զկնիքն երկրորդ, լուայ երկրորդ կենդանւոյն՝ զև ասէը, գամ։

4 Յե ել այլ ձի կարմիր. և որ հեծեալն էր 'ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զև զմիմեանս զնոցին. և տուաւ նմա սուր մի մեծ։

5 Յե յորժամ եբայ զկնիքն երրորդ՝ լուայ երրորդ կենդանւոյն՝ զև ասէը Թէ գամ. և տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր 'ի վերայ նորա՝ ունէր կշիռ 'ի ձեռին իւրում։

4 Յե տեսի որ դառն էն կնիքերիցն մինըն բայ արաւ և էն չորս կենդանիքներն մըննին լսեցի որոտմանքի ձայնի պէս՝ որ ասուէր Թէ կըգամ։ (*)

2 Յե տեսի՝ և ահա մին սպիտակ ձի. և նա՝ որ նորա վերայ հեծած էր՝ մին աղեղ ունէր. և մին պսակ տըվաւ նորան. և եկաւ յաղթօղն, որ յաղթէ։

3 Յե երբոր երկրորդ կնիքըն բայ արաւ, երկրորդ կենդանիքն լսեցի, որ ասուէր Թէ կըգամ։ (*)

4 Յե ուրիշ ձի դուրս եկաւ կարմիր. և նա՝ որ նորա վերայ հեծած էր, նորան տըվաւ որ խաղաղութիւնըն վեր առնէ երկրիցն, որ իրար մորթեն. և մին մեծ սուր տըվաւ նորան։

5 Յե երբոր երրորդ կնիքըն բայ արաւ, երրորդ կենդանիքն լսեցի, որ ասուէր՝ Թէ կըգամ. (*) և տեսի՝ և ահա մին սև ձի, և նա՝ որ նորա վերայ նստած էր՝ կշիռ ունէր իրան ձեռուէն։

(*) Յունարէն. է՛կ և այ՛ս։

6 Եւ լուայ ձայն՝ ի միջոյ չորից կենդանեացն. կապիճ մի ցորեան՝ դինարի միոջ, և երեք կապիճ գարի՝ դինարի միոջ. և ձէթ և գինի մի՛ պնասեցուցես։

7 Եւ յորժամ եբաց գկնիքն չորրորդ, լուայ ձայն՝ ի չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր, Լե՛ւ գամ։

8 Եւ տեսի, և ահա ձի շլորտս, և որ նստէրն՝ ի վերայ, ունէր զմահ, և դժոխք երթային զկնա նորա. և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի, սատակել սրով և սովով և մահուամբ՝ և գազանօք երկրի։

9 Եւ յորժամ եբաց գկնիքն հինգերորդ՝ տեսի՝ ի ներքոյ սեղանոյն զհոգիս սպանեալ մարդկան վասն բանին Աստուծոյ՝ և վասն վկայութեան նորա զոր ունէին։

10 Որք ասէին՝ ի ձայն մեծաձայն՝ մինչև ե՞րբ՝ Տէր սուրբ և ճշմարիտ՝ ոչ դատիս, և խնդրես զվրէժ արեան մերոյ

6 Եւ լսեա կենդանիքն երի միջոյն ձայն լսելի՝ (Լե՛ւ) մին կապիճ չափ ցորենն մին դեռանի և երեք կապիճ չափ գարին մին դենարի և ձէթին և գինւոյն վնաս չընասես։

7 Եւ երբոր չորրորդ կնիքը բաց արաւ, չորրորդ կենդանիին ձայն լսեցի, որ ասէր՝ Լե՛ւ կըգամ։ (*)

8 Եւ տեսի՝ և ահա մին մոխրաւանկ ձի։ և նա՝ որ նորա վերայ նստած էր, նորա անունն մահ էր, և դժոխք էր գնում նորա ետևէն. և իշխանութիւն արվաւ նորան աշխարհքի չորրորդ բաժնի վերայ, որ սրով և սովով և մահով՝ և երկրի գազաններովն սատակէ։

9 Եւ երբոր հինգերորդ կնիքըն բաց արաւ, տեսի էն ամէն (մարդկանց) հոգիքըն, որ մորթված էին Աստուծոյ բանին համար և նորա վկայութեան համար՝ որ ունէին։

10 Ու մեծ ձայնով աղաղակին սուրբ Տէր և ճշմարիտ՝ մինչև ե՞րբ դատաստան չես անում և մեր արիւնի ոխը չես

(*) Յունարէն է՛կ ե՛ւ պէ՛ս։

ի բնակչաց երկրի ։

11 Եւ տուաւ նոցա արկա-
նելիս սպիտակս , և ասացաւ
նոցա զի հանգիցեն փոքր մի
ժամանակ, մինչև լցցին ծա-
ռայակիցք նոցա և եղբարք
նոցա՝ որք հանդերձեալ են
կատարիլ իբրև զնոսա ։

12 Եւ տեսի յորժամ եբաց
գկնիքն վեցերորդ՝ եղև շար-
ժումն մեծ, և արեգակն եղև
սեաւ իբրև զվսպերտս այծե այ,
և լուսինն բոլորովին եղև
արիւն ։

13 Եւ աստեղք երկնից թա-
փեցան ի յերկիր, որպէս
տերև թզենւոյ, զի ուժգին
շարժիցի ի հողմոյ ։

14 Եւ երկինն իբրև զմա-
դաղաթեայ գիրս գալարեր ։
և ամենայն լերինք և կղզիք
ի տեղւոյ իւրեանց շարժե-
ցան ։

15 Եւ թագաւորք երկրի
և իշխանք՝ հազարապետք և
մեծամեծք և զօրաւորք՝ և ա-
մենայն ծառայք և ամենայն
ազատք թաքուցին գինքեանս
յայրս և ի ծերպս վիմաց ։

խնդրում երկրի վերայ քնա-
կողներից ։

11 Եւ սպիտակ վերարկու-
ներ տրվաւ նորանց , և աս-
վեցաւ նորանց, որ մին քիչ
ժամանակ հանգիստ առնեն,
մինչև որ նորանց ծառայ ըն-
կերներն և նորանց եղբար-
ներն էլ կատարվին՝ որ նո-
նանց պէս պիտի սպանվին ։

12 Եւ տեսի երբոր վեցե-
րորդ կնիքըն բաց արաւ ,
(երկրի) մեծ շարժմունք է-
լաւ. և արեգակն սևացաւ այ-
ծի մազէ կարկատանի պէս ,
և լուսինն իսպառ արիւնի պէս
էլաւ ։

13 Եւ երկնքի աստեղներն
թափվեցան երկրի վերայ ինչ-
պէս թըզի (ծառի) տերև, որ
աստիկ շարժվումէ քամուցմէ ։

14 Եւ երկինքն մագաղաթէ
գրքի պէս կօլօլվումէր. և ա-
մէն սարեր և կղզիներ (տե-
ղէն) իրանց տեղիցն չարժվե-
ցան ։

15 Եւ երկրի թագաւորներն
և իշխաններն՝ հազարապետա-
ներն և մեծամեծներն և զօ-
րաւորներն՝ և ամէն ծառա-
ներն , և ամէն ազատներն
թաքցրին իրանց անձներըն՝
այրերի (տաշտաձէրի) և սարե-
րի քարերի մէջն ։

16 Եւ ասէին [ա]ւերեալքն աստուածքին, վէր ընկեր մեզ վերայ, և դարբերին՝ [զ]ի ծածկեսցէ մեզ [զ]թոռն վերայ նաասոյն երեսից, և դառն բարկութենէն։

17 Ի[նչ]ու որ նորա բարկութեան մեծ օրն եկել է, և ով կարող է կենալ նորա առաջին։

ԳԼ. Ը։

1 Եւ սորանից եւս տեսի՝ որ չորս հրեշտակ կանգնած էին երկրի չորս անկիւնաւն, և երկրի չորս քամին էր բռնել էին՝ որ քամի չվ[ի]չէ, ո[չ] երկրի վերայ՝ ո[չ] ծովի վերայ, և ո[չ] ծառերի վերայ,

2 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ արեւելքից դուրս եկաւ, և կենդանի Աստուծոյ կնիքը (ՃՀՔԸ) ունէր. և մեծ ձայնով աղաղակեց դէպի էն չորս հրեշտակներն, որ իշխանութիւն էին առել որ երկիրը և ծովն ապականեն։

3 Եւ ասաւ՝ մի՛ ապականէք երկիր, ո[չ] երկրին, ո[չ] ծովուն, և ո[չ] էլ ծառերին, դադարեցէք մինչև որ մեր Աստուծոյ ծառաներին վերայ կնիք (ՃՀՔ) դնեմ (իւրանց ճակատներուն)։

16 Եւ ասէին լերանց՝ [զ]ի անկերուք ի վերայ մեր, և գլուխք՝ [զ]ի ծածկեցէք զմեզ։

17 Ո[չ]ի եկն օր մեծ բարկութեան նորա, և ո՞վ կարէ կալ առաջի նորա։

Գ[Լ]. Ը։

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս, զի կային ի չորս անկիւնս երկրի, և ուն[ե]ին զչորս հողմս երկրի՝ զի մի շնչեսցէ հողմ ի վերայ երկրի, և մի՛ ի ծովս՝ և մի՛ ի ծառս։

2 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել յարեւելից, և ունէր զկնիք Աստուծոյ կենդանւոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց առեալ էր իշխանութիւն ապականել զերկիր և զծով։

3 Եւ ասէր՝ մի՛ ապականէք երկիր՝ մի՛ ծովս՝ մի՛ ծառս, դադարեցէք մինչև կնքեսցուք զծառայս Աստուծոյ իմոյ ի ճակատս նոցա։

4 Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր քառասուն և չորք հազար կնքեալք յազգէ որդւոցն իսրայելի ։

5 Յազգէն յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն ռուբենի երկոտասան հազար կնքեալ, յազգէն գադայ՝ երկոտասան հազար կնքեալ ։

6 Յազգէն ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն նեփթաղղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ ։

7 Յազգէն շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ ։

8 Յազգէն զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն յովսեփեայ երկոտասան հազար կնքեալ, յազգէն բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ ։

9 Յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բազում որոյ ոչ կարէր թիւ, յամենայն հեթանոսաց և յամենայն ազգաց և յամենայն լե-

4 Եւ կնքեալներուն համարը լսեցի՝ (որ էր) հարիւր քառասուն և չորս հազար՝ որ կնքուեցան իսրայէլի որդոց ամէն ցեղերէն ։

5 Յուդայի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Ռուբենի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Գադայ ցեղէն՝ տասներկու հազար կնքուած ։

6 Ասերի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Նեփթաղիմի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Մանասէի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած ։

7 Շմաւոնի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Ղեւիի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Իսաքարի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած ։

8 Զաբուղոնի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Յովսէփի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած. Բենիամինի ցեղէն՝ տասներկու հազար կնքուած ։

9 Յետ այսորիկ տեսի՝ և ահա շատ ժողովուրդ (կար) որ հնարաւոր չէր համար չկար, ամէն հեթանոսներէն և ամէն ցեղերէն և ամէն

զբաւայ և յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն և առաջի գառինն՝ արկեալ զիւրեւամբք հանդերձս սպիտակս, և արմաւենիս ՚ի ձեռս իւրեանց ։

10 Եւ զաղաղակէին ՚ի ձայն մեծ՝ և ասէին • փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի ՚ի վերայ աթոռոյն, և գառինն։

11 Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն և զերիցամբքն և զչորիւքն կենդանեաքն, և անկանէին յերեսս առաջի աթոռոյն ՚ և երկիրպագանէին Աստուծոյ,

12 Ասելով • ամէն օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

13 Եւ ասէ ցիս մի յերիցանցն անտի • սոքա որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝ ո՞յք են՝ և կամ ուստի՞ գան ։

14 Եւ ասացի ցնա • Տէր՝ դու գիտես. և ասէ ցիս. սոքա են՝ որ գան ՚ի վշտաց մեծ

լեզուներից և ամէն ժողովուրդներից, որ աթոռի առաջին և գառի առաջին կանգնած էին իրանց վերայ սպիտակ շորեր քցած, և իրանց ձեռներումն արմաւենիներ (բռնած)։

10 Եւ զաղաղակումէին բարձր ձայնով՝ և ասում • փրկութիւն մեր Աստուծոյն որ աթոռի վերայ նստումէ, և գառինն ։

11 Եւ ամէն հրեշտակներն կանգնած էին աթոռի և երէցների, և չորս կենդանիքների չորս կողմովն, և վէր էին ընկնում երեսներին վերայ աթոռի առաջին՝ և երկրպագութիւն էին անում Աստուծոյն ,

12 Ասելով՝ ամէն օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք (լինի) մեր Տէր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից • ամէն ։

13 Եւ էն երէցներից միւնն ասաց ինձ. սորանք՝ որ սպիտակ շորեր են հագել, ո՞վ են, և կամ ո՞րտեղից են գալիս ։

14 Եւ ասացի նորան. Տէր՝ դու ես գիտում. և ասաց ինձ. սորանք են որ մեծ նեղու-

նաց և լուացին զարկանե-
լիս իւրեանց՝ և սպիտակա-
ցուցին արեամբ գառինն։

15 Վասն այնորիկ են ա-
ռաջի աթոռոյն Աստուծոյ՝
և պաշտեն գնա զտիւ և
զգիշեր ի տաճարի նորա. և
որ նստի ի վերայ աթոռոյն՝
բնակեալ է ի նոսա։

16 Ոչ քաղցիցեն և ոչ
ծարաւիցեն, և ոչ ոք մեղ-
ցէ նոցա՝ ոչ արեգակն և ոչ
ոևէք։

17 Եւ գառնն ի միջոյ ա-
թոռոյն իւրոյ հովուեսցէ գնո-
սա, և առաջնորդեսցէ նոցա
ի կենաց աղբիւր ջրոյ կեն-
դանւոյ. քանզի եհատ Աս-
տուած զամենայն արտօսր
յերեսաց նոցա։

ԳԼ. Ը։

1 Եւ յորժամ եբաց զկնի-
քըն եօթներորդ՝ եղև լռու-
թիւն յերկինս՝ որպէս կէս
ժամու։

2 Եւ տեսի հրեշտակս
եօթն, որ առաջի Աստուծոյ
կային. և տուաւ նոցա եօթն
փող։

3 Եւ այլ հրեշտակ եկն
թիւններից են գալիս, և ի-
րանց վերարկուները լուա-
ցին՝ և սպիտակացրին գառի
արիւնով։

15 Ներահամար Աստուծոյ
աթոռի առաջին են՝ և ցե-
րեկ և գիշեր պաշտամունն նո-
րան իրան տաճարի միջում.
և նա՝ որ աթոռի վերայ նըս-
տած է, բնակված է նորանց
միջում։

16 Ո՛չ կըսովին, և ո՛չ կը-
ծարաւին. և ո՛չ ոլ չի նե-
ղացնել նորանց՝ ո՛չ արեգակն
և ո՛չ տաքութիւնն։

17 Եւ գառն իրան աթոռի
միջից կարածացնէ նորանց,
և կառաջնորդէ նորանց դէ-
պի կենաց աղբիւրի (կենդա-
նի) ջուրն. և Աստուած
սրբեց ամէն արտասուքըն
նորանց երեսներից։

ԳԼ. Ը։

1 Եւ երբ որ եօթներորդ
կնիքըն բացարաւ՝ լռութիւն
եղաւ երկնքումն կէս ժամի
(սահաթ) չափ ժամանակ։

2 Եւ եօթն հրեշտակներ
տեսի՝ որ Աստուծոյ առաջին
կանգնած էին. և եօթն փող
տըվաւ նորանց։

3 Եւ մին ուրիշ հրեշտակ

եկայ առ սեղանն, և ոչնեը խնկանոյ ոսկի. և տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն։

4 Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոյն ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ։

5 Եւ եղեալ հրեշտակն զխնկանոցն ՚ի հրոյ սեղանոյն՝ և արկ զնա յերկիր. և եղեւ որոտումն և ձայնք և փայլատակումն և շարժումն մեծ։

6 Եւ եօթն հրեշտակքն որ ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ ՚ի հարկանել։

7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղեւ կարկուտ և հուր և արիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր, և կերբորդ մասն երկրի այրեաց, և երրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց։

8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, և եղեւ երրորդ մասն ծովոյն արիւն։

եկաւ կանգնեաց սեղանին մօտ, և ոսկի խնկաման ունէր. և շատ խունկ տրվաւ նորան, որ (նորանով) ամէն սըրբերի աղօթքըն մատուցանէ էն ոսկի սեղանին վերայ որ աթոռի առաջին էր։

4 Եւ խնկերի ծուխն՝ սրբոց աղօթքն վեր ելաւ հրեշտակների ձեռներիցն Աստուծոյ առաջին։

5 Եւ հրեշտակն էն խնկամանըն լցրուց էն սեղանի կրակիցն, և քցեց նորան երկրի վերայ. և որոտմունք և ձայնեք և փայլատակմունք և մեծ շարժ ելաւ։

6 Եւ էն եօթն հրեշտակներն, որ էն եօթն փողերըն ունէին՝ իրանց պատրաստեցին որ փչեն։

7 Եւ առաջին հրեշտակն փողըն փչեց, և ելաւ կարկուտ և կրակ և արիւն խառնըված՝ և ընկաւ երկրի վերայ և երկրի երրորդ բաժինըն այրեց, և ծառերի երրորդ բաժինըն այրեց, և բոլոր կանանչ խոտերըն այրեց։

8 Եւ երկրորդ հրեշտակն փչեց, և մին մեծ սարի պէս որ կրակով բորբոքված էր՝ ընկաւ ծովի մէջ. և ծովի երրորդ բաժինն արիւն դարձաւ։

9 Եւ սատակեցաւ երրորդ մասն ղուղակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ. և երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ։

10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զջահ բար, և անկաւ յերրորդ մասն գետոց և ազբերաց։

11 Եւ էր անուն աստեղն դառնութիւն. և բազումք մեռան ի դառնութենէ ջուրցըն։

12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրաւորեցաւ երրորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խաւարեաւ երրորդ մասն նոցա. և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս։

13 Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցեալ ի մէջ երկնից՝ ձայն մեծ, վայ, վայ, վայ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն երիցն եւս փողոց, որ կամիցին հրեշտակքն հարկանել։

9 Եւ լոզացող կենդանիքներուն երրորդ բաժինն սատկեցաւ, և նաև եղ որ կենդանի շունչ ունէր՝ ապականեցաւ. և նաւերուն երրորդ բաժին ծովին մէջ կործանեցաւ։

10 Եւ երրորդ հրեշտակն փչեց, և մին մեծ աստղ ընկաւ երկնքէն՝ լամբարի (ջահի) պէս բորբոքուած. և ընկաւ գետերուն և աղբիւրներուն երրորդ բաժինին վրայ։

11 Եւ աստեղին անունն դառնութիւն էր. և շատ մարդիկ մեռան էն ջուրերուն դառնութենէն։

12 Եւ չորրորդ հրեշտակն փչեց. և վիրաւորուեցաւ արեգական երրորդ բաժինն, և լուսնի երրորդ բաժինն, և աստեղներուն երրորդ բաժինն, և նորանց երրորդ բաժինն խաւարեցաւ. և ցերեկի երրորդ բաժինն լոյս չէր տար, և հնոց ինպէս էլ գիշերի երրորդ բաժինն։

13 Եւ տեսի, և ձայն լսեցի, որ մին հրեշտակ երկնքի մէջտեղ թռած մեծ ձայնով աղաղակէր. վայ, վայ, վայ նոցանց՝ որ բնակուած են երկրի վերայ, երբոր էն մնկնել երեք փողերուն ձայնն կըլինի. որ հրեշտակներն պիտի փչեն։

ԳԼ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողեր. և տեսի զի աստղ մի անկաւ յերկինից, և տուաւ նմա բանալի գբոյն անդնդոց.

2 Եւ ելանէր ծուխ ի գբոյն որպէս ջծուխ հնոցի մեծի. և խաւարեցաւ արեգակն և օդք.

3 Եւ ի գբոյն ելանէր մարախ ի յերկիր. և տուաւ նոցա իշխանութիւն իբրև զկայթոցս կարճի:

4 Եւ ասացաւ նոցա՝ զի մի՛ մեղսցեն խոտոյ երկրի և մի ամենայն ծառոյ, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին զկնիք ի վերայ Ճակատաւ իւրեանց:

5 Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի սպանանիցեն զնա, այլ չարչարեսցեն զնոսա ամիս հինգ. և չարչարանք նոցա իբրև զկայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ:

6 Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի գտցեն. և ցանկասցեն մեռանել՝ և փախիցէ ի նոցանէ մահ:

10 Եւ սատանայ որ մոլորեցուցանէր զնոսա ընկեցաւ յլիճն հրոյ և ծծմբոյ, ուր և գազանն և սուտ մարգարէն, և տանջեսցին ցդէպ և ցյաւիտեանս յաւիտենից։

11 Եւ տեսի զաթոռ մեծ սպիտակ և զնստողն ի նմա, յորմէ փախեան երկիր և երկինք, և տեղի չգտաւ նոցա։

12 Եւ տեսի զմեռեալսն մեծս և զփոքունս կանգնեալս առաջի աթոռոյն, և գրքեր բացան. և գիրք այլ բացան որ է կենդանութեան գիրք, և դատեցան մեռեալքն ըստ գործոց իւրեանց, որպէս գրեալ էր ի գրոցն։

13 Եւ ետ ծովն զմեռեալսն որ ի նմա էին, և մահ և դժոխք ետուն զմեռեալսն որ ի նոսա էին, և դատեցան ամենեքին ըստ գործոց իւրեանց։

14 Եւ մահ և դժոխք ընկեցան յլիճն հրոյ. սա է մահ երկրորդ։

15 Եւ որ ոչ գտաւ գրեալ յգրոցն կենդանութեան՝ ընկեցաւ յլիճն հրոյ։

ԻԱ

1 Եւ տեսի զերկինս նոր և զերկիր նոր. զի առաջին երկինքն և առաջին երկիրն անցին գնացին, և ծովն ոչ է ևս։

2 Եւ զքաղաքն սուրբ զԵրուսաղէմ նոր տեսի իջանել յերկնից յԱստուծոյ, պատրաստեալ իբրեւ զհարս զարդարեալ առ արանս իւր։

3 Եւ լուայ զձայն մեծ յաթոռոյն ասելով. Ահա՛ խորան Աստուծոյ ընդ մարդկամբ, և բնակեսցէ ընդ նոսա, և նոքա ազգք նորա եղիցին, և ինքն Աստուած ընդ նոսա եղիցի նոցա։

4 Եւ սրբեսցէ Աստուած զամենայն արտասուս յաչաց նոցա, և մահ ոչ եղիցի ևս, և ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ ևս եղիցի, զի առաջինքն անցին գնացին։

5 Եւ ասէ նստողն ի վերայ աթոռոյն. Ահա՛ նոր ստեղծանեմ զամենայն։ Եւ ասէ ցիս. Գրեա՛, զի ճշմարիտ և հաւատարիմ են բանք սոքա։

6 Եւ ասէ ցիս. Եղեն։ Ես եմ Ա և Ո, սկիզբն և վախճան. ես ծարաւեցելոյն տացեմ աղբերէ ջրոյ կենդանւոյ ընդ պարգեւ։

7 Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զամենայն, և եղէց նմա Աստուած, և նա եղիցի ինձ որդի։

8 Բայց վհատողաց և անհաւատից և պղծելոց և սպանողաց և պոռնկաց և գաղտնագործաց և կռապաշտաց և ամենայն սուտ երդնուաց՝ բաժին նոցա լիճն հրոյ և ծծմբոյ, որ է մահ երկրորդ։

9 Եւ եկն առ իս մի ի հրեշտակացն որ ունէին զեօթն բաժակսն լի եօթանց պատուհասաց վերջնոց, և խօսեցաւ ընդ իս՝ և ասէ. Եկ այսր և ցուցից քեզ զհարսն կին Գառնն։

10 Եւ տարաւ զիս ոգի յանապատ։ Եւ տեսի զքաղաքն սուրբ զԵրուսաղէմ նոր իջանել յերկնից յԱստուծոյ,

11 ունելով զփառս Աստուծոյ. և լոյս նորա նման քարոյ պատուականի, իբրեւ զքար յասպեայ բիւրեղանման։

12 Եւ պարիսպ մեծ և բարձր ունէր քաղաքն, և ունէր տասն և երկու դրունս, և ի դրունսն տասն և երկու հրեշտակք, և անուանք գրեալք որ են անուանք տասն և երկուց ազգաց որդւոց Իսրայէլի։

13 Ի հիւսիսոյ դրունս երեք, և ի հարաւոյ դրունս երեք, և յարեւելից դրունս երեք, և յարեւմտից դրունս երեք։

14 Եւ պարիսպ քաղաքին ունէր տասն և երկու հիմունս, և ի նոսա տասն և երկու անուանք տասն և երկուց առաքելոցն Գառնն։

15 Եւ որ խօսէր ընդ իս՝ ունէր եղէգն չափոյ ոսկի, զի չափեսցէ զքաղաքն և զդրունսն նորա և զպարիսպն նորա։

16 Եւ քաղաքն քառակուսի դիրք ունի, և երկայնութիւն նորա իբրեւ զլայնութիւն նորա. և չափեաց զքաղաքն եղէգնով ոսկի ի տասն հազարս ասպարիզաց, և երկայնութիւն և լայնութիւն և բարձրութիւն նորա հաւասարք են։

17 Եւ չափեաց զպարիսպն նորա հարիւր քառասուն և չորից կանգնաց, չափ մարդոյ որ է հրեշտակի։

18 Եւ շինուած պարսպին նորա ի քարանց յասպեայ, և քաղաքն ոսկի մաքուր նման ապակւոյ մաքրոյ։

19 Եւ հիմունք պարսպին քաղաքին զարդարեալ էին ամենայն քարանց պատուականաց. հիմն առաջին յասպեայ, երկրորդ սափիր, երրորդ քաղկեդոն, չորրորդ զմրուխտ,

20 հինգերորդ սարդիոն, վեցերորդ սարդիոս, եօթներորդ քրիսոլիթ, ութերորդ բերիղղոս, իններորդ տոպազ, տասներորդ քրիսոպրաս, տասն և մեկերորդ յակինթոս, տասն և երկուերորդ ամեթիստոս։

21 Եւ տասն և երկու դրունսն տասն և երկու մարգարիտք են, և իւրաքանչիւր դրունք ի մի մարգարտէ էին. և հրապարակ քաղաքին ոսկի մաքուր իբրեւ զապակի թափանցիկ։

22 Եւ տաճար ոչ տեսի ի նմա, զի Տէր Աստուած Ամենակալ տաճար նորա է և Գառն։

23 Եւ քաղաքն ոչ պիտի ունի զարեգակն և զլուսին զի լուսաւորեսցեն նմա, զի փառք Աստուծոյ լուսաւորեցին զնա, և լոյս նորա Գառն է։

24 Եւ ազգք որ կեցցեն ի լուսոյ նորա գնասցեն, և թագաւորք երկրի բերցեն զփառս իւրեանց ի նա։

25 Եւ դռունք նորա ոչ գոցցին ցցերեկ, զի գիշեր ոչ եղիցի անդ։

26 Եւ բերցեն զփառս և զպատիւ ազգաց ի նա։

27 Եւ ոչ մտցէ ի նա ամենևին պղծութիւն և որ առնէ զանարգութիւն և զստութիւն, այլ միայն որ գրեալք են ի գրոցն կենդանութեան Գառնն։

ԻԲ

1 Եւ ցոյց ինձ գետ մի ջրոյ կենդանւոյ պայծառ իբրեւ զբիւրեղ, որ ելանէր յաթոռոյ Աստուծոյ և Գառնն։

2 Ի մէջ հրապարակի քաղաքին և գետոյն յայսկոյս և յայնկոյս ծառ կենաց որ արդիւնս տասն և երկու բերէ, իւրաքանչիւր ամսոյ արդիւնս իւր տայ, և տերեւք ծառոյն ի բժշկութիւն ազգաց։

3 Եւ ամենայն նզովք ոչ եղիցին ևս. և աթոռ Աստուծոյ և Գառնն ի նմա եղիցի, և ծառայք նորա պաշտեսցեն զնա։

4 Եւ տեսցեն զերեսս նորա, և անուն նորա ի ճակատս նոցա։

5 Եւ գիշեր ոչ եղիցի ևս, և ոչ պիտի լուսոյ և ոչ պիտի արեգական, զի Տէր Աստուած լուսաւորեսցէ նոցա, և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ասէ ցիս. Ճշմարիտ են բանք սոքա, և հաւատարիմ է Տէր Աստուած հոգեաց մարգարէիցն, և առաքեաց զհրեշտակ իւր ցուցանել ծառայից իւրոց զորս պարտ է լինել շուտով։

7 Եւ ահա՛ գամ շուտով։ Երանի՛ որ պահէ զբանս մարգարէութեան գրոցս։

8 Եւ ես Յովհաննէս որ լսէի և տեսանէի զսոսա։ Եւ յորժամ լսէի և տեսանէի՝ անկայ երկիր պագանել առաջի ոտից հրեշտակին որ ցուցանէր ինձ զսոսա։

9 Եւ ասէ ցիս. Տես մի՛ արասցես, ծառայ եմ ես քո և եղբարց քոց մարգարէիցն և որ պահեն զբանս գրոցս։ ԶԱստուած երկիր պագանել։

10 Եւ ասէ ցիս. Մի՛ կնքեր զբանս մարգարէութեան գրոցս, զի ժամանակ մերձ է։

11 Որ անիրաւ է՝ անիրաւեսցի ևս, և որ պիղծ է՝ պղծեսցի ևս, և որ արդար է՝ արդարասցի ևս, և որ սուրբ է՝ սրբասցի ևս։

12 Եւ ահա՛ գամ շուտով, և վարձս իմ ընդ իս է, հատուցանել իւրաքանչիւր ումեք որպէս գործ իւր իցէ։

13 Ես եմ Ա և Ո, սկիզբն և վախճան, առաջինն և յետինն։

14 Երանի՛ որ լուանան զհանդերձս իւրեանց, զի իշխանութիւն լիցի նոցա ի ծառն կենաց, և մտցեն ի քաղաքն դռամբք։

15 Արտաքոյ են շունք և դեղատունք և պոռնիկք և սպանողք և կռապաշտք և ամենայն որ սիրէ և առնէ զստութիւն։

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել ձեզ զայս ի վերայ եկեղեցեաց. ես եմ արմատ և ազգ Դաւթի, աստղ պայծառ առաւօտեան։

17 Եւ Հոգին և հարսն ասեն. Եկ։ Եւ որ լսէ՝ ասասցէ. Եկ։ Եւ որ ծարաւի՝ եկեսցէ, և որ կամի՝ առցէ զջուր կենաց ընդ պարգեւ։

18 Վկայեմ ես ամենայն որ լսէ զբանս մարգարէութեան գրոցս սորա. եթէ ոք յաւելցէ ի սոսա՝ յաւելցէ Աստուած ի վերայ նորա զհարուածս գրեալս ի գրոցս սորա։

19 Եւ եթէ ոք պակասեցուսցէ ի բանից գրոցս մարգարէութեան սորա՝ պակասեցուսցէ Աստուած զբաժինն նորա ի ծառոյ կենաց և ի քաղաքէ սրբոյ և ի սոցանէ որ գրեալք են ի գրոցս սորա։

20 Ասէ որ վկայէ զայս. Այո՛ եկից շուտով։ Ամէն։ Եկ Տէր Յիսուս։

21 Շնորհք Տեառն Յիսուսի ընդ ամենեսեան։ Ամէն։

մայուն մեծ ։

7 Եւ ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զարմացար, ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, և զգազանին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեօթն գլուխն՝ և զտասն եղջիւրն ։

8 Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր, և չէր, և հանդերձեալ է ելանել ի գժոխոց՝ և ի կորուստ երթալ. և զարմացան ամենեքեան՝ որ բնակեալ են ի վերայ երկրի. որոց ոչ էր գրեալ անուանք նոցա ի գիր կենաց իսկզբանէ աշխարհի. զոր տեսանէիր զգազանն, զի էր՝ և չէ և մերձ է։

9 Այստ է իմաստութիւն՝ որ ունի միտս, և եօթն գլուխն՝ եօթն լերինք են, ուր կինն նստեալ էր ի վերայ նոցա. և նոքին թագաւորք են եօթն. և թագաւորք [եօթն դոլով,

10 Իւրն անկան, և մին եկայ, և մինն ոչ է եկեալ. և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի ։

11 Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և նա ուրեմն է. և սի նորան՝ մեծ զարմանքով զարմացայ ։

7 Եւ հրեշտակն ասաց ինձ ինչո՞ւ համար զարմացար. ես կասեմ քեզ եղ կնկան խորհուրդը, և էն գազանինը էլ՝ որ նորան վերկալած ունի. որ եօթն գլուխ ունի և տասն եղջիւր ։

8 Գազանդ որ տեսիր՝ նա էր, և չէ, և պիտի դժոխքից դուրս գայ՝ և կորուստն գնայ՝ և ամէնքն որ երկրի վերայ բնակված են. որ նորանց անունները գրված չեն կենաց գրքին մէջ աշխարհի սկզբից՝ տեսնելով գազանը՝ որ էր, և չէ, և մօտ է ։

9 Այստեղ է իմաստութիւնը՝ որ միտք ունի. էն եօթն գլուխն՝ եօթն սարերն են որ կինն նորանց վերայ նըստած է. (և եօթն թագաւորներն են.) և եօթն թագաւոր որ էին ։

10 Հինգն վէր ընկան, և մինն կայ, և մինն դեռ չի եկել. և երբոր գայ՝ փոքրիկ ժամանակ ունի ։

11 Եւ գազանն որ էր, և չէ, նա էլ ուրեմն է.

է յհօթանոյ անուն, և ՚ի կորուստ երթալոյ է։

12 Եւ տասն եղջիւրն՝ զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոյ չեւ՚ն է առեալ զիշխանութիւն, այլ առնուն՝ և կան իշխանք ՚ի մի ժամ. և առնուն նոքա զիշխանութիւն գազանին։

13 Սոքա մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան։

14 Եւ ընդ գառինն պատերազմին. և գառն յաղթէ նոցա. զի Տէր է նոցա, և թագաւոր թագաւորաց. և որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք՝ և հաւատացեալք,

15 Եւ ասաց ցիս. և զջուրն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են, և բազմութիւնք և ազգք և լեզուք։

16 Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին, նոքա տեսցեն զպոռնիկն՝ և առեսցեն զնա, և զմարմին նորա կերիցեն՝ և այրեսցեն զնա հրով։

17 Քանզի Աստուած եդ ՚ի սիրտս նոցա առ ՚ի լինել նոցա մի կամս, և տալ զթագաւորութիւն իւրեանց գազանին, մինչև կատարեսցին բանք Աստուծոյ։

18 Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի թագաւորութիւն ՚ի վերայ երկրի։

ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի զայլ հրեշտակ իջանել յերկնից, որ ունէր զիշխանութիւն մեծ, և երկիր լուսաւորեցաւ ՚ի փառաց նորա։

2 Եւ աղաղակեաց զօրութեամբ՝ և ասէ. Անկաւ, անկաւ Բաբելոն մեծ, և եղեւ բնակարան դիւաց, և բանտ ամենայն ոգւոց պղծութեան, և բանտ ամենայն թռչնոց պղծութեան և ատելեաց։

3 Զի յգինւոյ սրտմտութեան պոռնկութեան նորա արբուցին ամենայն ազգք, և թագաւորք երկրի պոռնկեցան ընդ նմա, և վաճառականք երկրի զօրացան յանդունդ հարստութեան նորա։

4 Եւ լուայ զայլ ձայն յերկնից ասելով. Ելէք յնմանէ, ժողովուրդ իմ, զի մի՛ հաղորդիցիք մեղաց նորա, և զի մի՛ զպատուհասացն նորա առցէք։

5 Զի հասին մեղք նորա մինչև յերկինս, և յիշեաց Աստուած զանիրաւութիւնս նորա։

6 Հատուցէք նմա որպէս և նա հատոյց ձեզ, և կրկնակի կրկնակի հատուցէք ըստ գործոց նորա. յորում բաժակի խառնեաց՝ խառնեցէք նմա կրկնակի։

7 Որչափ փառաւորեաց զանձն իւր և զհանդիսացաւ, այնչափ տուք նմա տանջանս և սուգ. զի ասէ ՚ի սրտի իւրում. Նստիմ թագուհի, և այրի մի՛ եղէց, և սուգ մի՛ տեսից։

8 Վասն այսորիկ մի՛ աւուր մեռանիցին զնա հարուածք նորա, մահ և սուգ և սով, և հրով այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած որ դատեաց զնա։

9 Եւ լացեն և սգասցեն վասն նորա թագաւորք երկրի, որ պոռնկեցան և զհանդիսացան ընդ նմա, յորժամ տեսցեն զծուխ հրոյ այրման նորա,

10 Կայցեն յհեռաստանի վասն երկիւղի տանջանաց նորա, և ասասցեն. Վա՛յ, վա՛յ քաղաքին մեծի Բաբելոնի, քաղաքին հզօրի, զի մի՛ ժամու եկն դատաստան քո։

11 Եւ վաճառականք երկրի լացեն և սգասցեն վասն նորա, զի զապրանս նոցա ոչ ոք գնէ յետ այսորիկ,

12 Զապրանս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և մարգարտի և բիսոսի և ծիրանւոյ և մետաքսի և կարմրոյ և ամենայն փայտից անուշահոտից և ամենայն կերպասեղինաց և ամենայն կերպասից ոսկեղինաց և ամենայն անօթոց արուեստից և ամենայն անօթոց արուեստից ՚ի փղոսկրէ և ամենայն անօթոց արուեստից ՚ի թանկագին փայտից և ՚ի պղնձէ և ՚ի երկաթէ և ՚ի մարմարէ,

13 Եւ զդարչնոյ և զհոտոտից և զանուշահոտից և զհիւրոյ և զգինւոյ և զձիթոյ և զսեւխոտոյ և զցորենոյ և զանասնոց և զոչխարաց և զձիոց և զկառաց և զմարմնոց և զհոգիս մարդկան։

14 Եւ պտուղ ցանկութեան հոգւոյ քո հեռացաւ յքէն, և ամենայն քաղցր և պայծառ կորեան ՚ի քէն, և ոչ ևս գտանիցեն զնոսա յետ այսորիկ։

15 Վաճառականք այսոցիկ որ հարստացան յնմանէ՝ կայցեն յհեռաստանի վասն երկիւղի տանջանաց նորա, լացեն և սգասցեն,

16 Եւ ասասցեն. Վա՛յ, վա՛յ քաղաքին մեծի, որ զգեցեալ էր կերպասեղինաւ և ծիրանեաւ և կարմրով, և ոսկեղինաւ և պատուականաւ քարամբ և մարգարտիւ,

17 Զի մի՛ ժամու աւերեցաւ այսչափ հարստութիւն։ Եւ ամենայն նաւավար և ամենայն որ ՚ի նաւս ինչ գնայ, և նաւագունդ և որ ՚ի ծովու գործեն, հեռաստանի կայցեն,

18 Եւ տեսցեն զծուխ հրոյ այրման նորա, և ասասցեն. Որ նման քաղաքի մեծի։

19 Եւ հեղուն զհող ՚ի գլուխս իւրեանց, և լացեն և սգասցեն, և ասասցեն. Վա՛յ, վա՛յ քաղաքին մեծի, որ ՚ի նմա հարստացան ամենեքին որ ունէին զնաւս ՚ի ծովու ՚ի հարստութենէ նորա, զի մի՛ ժամու աւերեցաւ։

20 Ուրախ լերուք վասն նորա, երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք, զի դատեաց Աստուած զդատաստան ձեր ՚ի նմանէ։

21 Եւ առ մի հրեշտակ հզօր զքար իբրև զաղաւ մեծ, և եհար ՚ի ծովն՝ և ասէ. Այսպէս մի՛ ժամու կորիցէ Բաբելոն մեծ քաղաքն, և մի՛ եւս ոչ գտանիցի։

22 Եւ ձայն նուագողաց և երգեցողաց և փողահարաց և շեփորահարաց մի՛ եւս ոչ լուիցի ՚ի քէն, և ամենայն արուեստաւոր ամենայն արուեստից մի՛ եւս ոչ գտանիցի ՚ի քէն, և ձայն աղաց մի՛ եւս ոչ լուիցի ՚ի քէն,

23 Եւ լոյս մոմեղինի մի՛ եւս ոչ լուսաւորեսցէ ՚ի քէն, և ձայն փեսայի և հարսնեաց մի՛ եւս ոչ լուիցի ՚ի քէն. զի վաճառականք քո էին մեծամեծք երկրի, զի ՚ի հմայութեանդ քոյ մոլորեցան ամենայն ազգք։

24 Եւ ՚ի նմա գտան զարիւն մարգարէից և սրբոց և ամենայն սպանելոց յերկրի։

ԺԹ

1 Եւ յետ այսորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով. Ալէլուիա. փրկութիւն և փառք և զօրութիւն Աստուծոյ մերոյ է,

2 Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա. զի դատեաց զպոռնիկն մեծ զոր ապականեաց զերկիր ՚ի պոռնկութենէ իւրմէ, և վրէժ հատոյց արեան ծառայից իւրոց յձեռաց նորա։

3 Եւ ասացին երկրորդ. Ալէլուիա. և ծուխ նորա ելանէ յանդունդս յաւիտենից։

4 Եւ անկան քսան և չորք երէցք և չորք կենդանիքն, և երկիր պագին Աստուծոյ որ նստէր յաթոռն՝ և ասացին. Ամէն, ալէլուիա։

5 Եւ ելանէ ձայն յաթոռոյն ասելով. Օրհնեցէք զԱստուած մեր ամենեքին ծառայք նորա, որ երկնչիք յնմանէ, փոքունք և մեծամեծք։

6 Եւ լուայ իբրև զձայն բազմութեան մեծի, և իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև զձայն որոտման հզօրի, որ ասէին. Ալէլուիա. զի թագաւորեաց Տէր Աստուած մեր ամենակալ։

7 Ցնծասցուք և ուրախ լիցուք, և տացուք զփառս նմա. զի եկն հարսնիք Գառնոյ, և կինն նորա պատրաստեաց զանձն իւր։

8 Եւ տուաւ նմա զգենուլ զգեստ կտաւ մաքուր և պայծառ. զի կտաւ արդարոցն են արդարութիւնք։

9 Եւ ասէ ինձ. Գրեա՛. Երանի՛ որ ՚ի հարսնեացն Գառնոյ կոչեցեալ են։ Եւ ասէ ինձ. Ճշմարիտ են բանք Աստուծոյ։

10 Եւ անկայ առաջի ոտից նորա երկիր պագանել նմա. և ասէ ինձ. Մի՛ արասցես. զի ծառայ ընկերակից քո եմ և եղբարց քոց որ ունին զվկայութիւն Յիսուսի. զԱստուած երկիր պագանել. զի վկայութիւն Յիսուսի է հոգի մարգարէութեան։

11 Եւ տեսի զերկինս բացեալս, և ահա ձի սպիտակ, և որ նստէր ՚ի նմա կոչեցեալ Հաւատարիմ և Ճշմարիտ, և ՚ի արդարութեան դատէ և պատերազմի։

12 Եւ աչք նորա իբրև զբոց հրոյ, և ՚ի գլուխ նորա պսակք բազումք, և անուն գրեալ որ ոչ ոք գիտէ զայն բայց ինքն։

13 Եւ զգեցեալ էր զգեստ արեամբ շաղախեալ, և կոչի անուն նորա Բան Աստուծոյ։

14 Եւ զօրքն որ ՚ի երկինս էին հետևեցան նմա ՚ի ձիս սպիտակս, զգեցեալք կտաւ սպիտակ և մաքուր։

15 Եւ ՚ի բերանոյ նորա ելանէր սուր երկսայրի, զի նովաւ հարկանիցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթի, և նա կոխեսցէ զհնձան գինւոյ սրտմտութեան և բարկութեան Աստուծոյ ամենակալի։

16 Եւ ունի ՚ի զգեստ և ՚ի ազդր իւր գրեալ անուն. Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց։

17 Եւ տեսի զհրեշտակ մի կանգնեալ ՚ի մէջ արեգական, և աղաղակեաց զօրութեամբ մեծաւ՝ և ասէ առ ամենայն թռչունս որ թռչին ՚ի միջօկս երկնից. Եկայք ժողովեցարուք ՚ի ճաշ մեծի Աստուծոյ,

18 Զի կերիցէք զմարմինս թագաւորաց և զմարմինս հազարապետաց և զմարմինս զօրաւորաց և զմարմինս ձիոց և հեծելազորաց նոցա, և զմարմինս ամենայն ազատաց և ծառայից և փոքունից և մեծամեծաց։

19 Եւ տեսի զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողովեալս ՚ի պատերազմ ընդ նստողին ՚ի ձիոյն և ընդ զօրին նորա։

20 Եւ բռնեցաւ գազանն և ընդ նմա սուտ մարգարէն որ արար զհրաշս առաջի նորա, որով մոլորեցոյց զամենեսեան որ առին զկնիք գազանին և որ երկիր պագին պատկերի նորա. կենդանի կորեան երկոքին ՚ի հուր որ այրի ՚ի ծծումբ։

21 Եւ զայլսն սրով սպանին որ ելանէ յբերանոյ նստողին ՚ի ձիոյն, և ամենայն թռչունք կշտացան ՚ի մարմնոց նոցա։

Κ

1 Եւ տեսի հրեշտակ մի իջանել յերկնից, որ ունէր զբանալի անդնդոցն և շղթայ մեծ ՚ի ձեռին իւրում։

2 Եւ բռնեաց զվիշապն զօձն հին, որ է սատանայ և դիաւոլոս, և կապեաց զնա հազար ամ,

3 Եւ ձգեաց զնա յանդունդն, և գոցեաց և կնքեաց ՚ի վերայ նորա, զի մի՛ եւս մոլորեցուսցէ զազգս մինչև կատարեսցին հազար ամք. և յետ այսորիկ արձակեալ լիցի սակաւ ինչ ժամանակ։

4 Եւ տեսի զաթոռս, և նստան ՚ի նոսա, և դատաստան տրուեցաւ նոցա. և զհոգիս սրոցն որ սպանան վասն վկայութեան Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և որ ոչ երկիր պագին գազանին և ոչ պատկերի նորա, և ոչ առին զկնիք ՚ի ճակատս և ՚ի ձեռս իւրեանց, և կեցին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ։

5 Եւ մեռեալքն ոչ կեցին մինչև կատարեսցին հազար ամք. սա է յարութիւն առաջին։

6 Երանի՛ և սուրբ է որ ունի զբաժին յարութեանն առաջնոյ. զայսոսիկ երկրորդ մահ ոչ իշխէ, այլ քահանայք Աստուծոյ և Քրիստոսի լինիցին և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ։

7 Եւ յորժամ կատարեսցին հազար ամք, արձակեալ լիցի սատանայ ՚ի բանտէ իւրմէ,

8 Եւ ելցէ մոլորեցուցանել զազգս որ ՚ի չորս կողմանս երկրի, զԳոգ և զՄագոգ, ժողովել զնոսա ՚ի պատերազմ, որոց թիւ իբրև զաւազ ծովու։

9 Եւ ելին ՚ի լայնութիւն երկրի և պատեցին զբանակ սրբոցն և զքաղաքն սիրելի. և իջին հուր յԱստուծոյ յերկնից և կերաց զնոսա,

10 Եւ սատանայ որ մոլորեցուցանէր զնոսա արկցի ՚ի ծովակ հրոյ և ծծմբոյ, ուր և գազանն և սուտ մարգարէն, և տանջեսցին ՚ի դարս դարուց։

11 Եւ տեսի զաթոռ մեծ սպիտակ և զնստողն ՚ի նմա, յորմէ փախեան երկիր և երկինք, և տեղի չգտաւ նոցա։

12 Եւ տեսի զմեռեալսն մեծս և զփոքունս կանգնեալս առաջի աթոռոյն, և գրքեր բացեալք, և այլ գիրք մի բացեալ որ է կենդանութեան, և դատեցան մեռեալքն ՚ի գրեալսն ՚ի գրքերն ըստ գործոց իւրեանց։

13 Եւ ետ ծովն զմեռեալսն որ ՚ի նմա էին, և մահ և դժոխք ետուն զմեռեալսն որ ՚ի նոսա էին, և դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։

14 Եւ մահ և դժոխք արկանին ՚ի ծովակ հրոյ. սա է մահ երկրորդ։

15 Եւ որ ոչ գտանիցի գրեալ ՚ի գրքի կենդանութեան, արկանիցի ՚ի ծովակ հրոյ։

ԻԱ

1 Եւ տեսի երկինս նոր և երկիր նոր. զի առաջին երկինքն և առաջին երկիրն անցին, և ծովն ոչ է այլ եւս։

2 Եւ զքաղաքն սուրբ Երուսաղէմ նոր տեսի զնա իջանել յերկնից ՚ի կողմանէ Աստուծոյ, պատրաստեալ իբրև զհարս զարդարեալ առ արանս իւր։

3 Եւ լուայ ձայն մեծ յաթոռոյն ասելով. Ահա՛ խորան Աստուծոյ ընդ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա, և նոքա ժողովուրդք նորա լինիցին, և ինքն Աստուած ընդ նոսա լիցի Աստուած նոցա։

4 Եւ սրբեսցէ Աստուած զամենայն արտասուս յաչաց նոցա, և մահ մի՛ եւս ոչ լիցի, և ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ մի՛ եւս ոչ լիցի, զի առաջինքն անցին։

5 Եւ ասէ նստողն ՚ի յաթոռոյն. Ահա՛ նոր ստեղծանեմ զամենայն. և ասէ ինձ. Գրեա՛. զի ճշմարիտ և հաւատարիմ են բանք սոքա։

6 Եւ ասէ ինձ. Եղեն. Ես եմ Ալփա և Օմեգա, սկիզբն և վախճան. ես ծարաւեցելոյն տաց ՚ի ներքինէ աղբերէ կենդանի ջուր ՚ի գնոյ։

7 Որ յաղթէ ժառանգեսցէ զամենայն, և ես լինիցիմ նմա Աստուած, և նա լիցի ինձ որդի։

8 Բայց երկչոտացելոցն և անհաւատիցն և պղծելոցն և սպանողացն և պոռնկաց և կախարդաց և կռապաշտաց և ամենայն սուտ երդնուլոցն՝ բաժին նոցա ՚ի ծովակ հրոյ և ծծմբոյ որ այրի, որ է մահ երկրորդ։

9 Եւ եկն առ իս մի ՚ի հրեշտակացն որ ունէին զեօթն բաժակս լի եօթն պատուհասաց վերջնոցն, և խօսեցաւ ընդ իս ասելով. Եկ՛ ցուցից քեզ զհարսն կին Գառնոյ։

10 Եւ տարաւ զիս ՚ի հոգի ՚ի լեառն մեծ և բարձր, և ցոյց ինձ զքաղաքն սուրբ Երուսաղէմ նոր, որ իջանէր յերկնից ՚ի կողմանէ Աստուծոյ,

11 Ունելով զփառս Աստուծոյ. և լոյս նորա նման քարի պատուականի, իբրև զքար յասպեայ բիւրեղանման,

12 Եւ պարիսպ մեծ և բարձր, և ունէր տասն և երկու դրունս, և ՚ի դրունսն տասն և երկու հրեշտակք, և անուանք գրեալք որ են անուանք տասն և երկուց ազգաց որդւոց Իսրայէլի։

13 Յարեւելից դրունք երեք, և յարեւմտից դրունք երեք, և ՚ի հիւսիսոյ դրունք երեք, և ՚ի հարաւոյ դրունք երեք։

14 Եւ պարիսպ քաղաքին ունէր տասն և երկու հիմունս, և ՚ի նոսա տասն և երկու անուանք առաքելոցն Գառնոյ։

15 Եւ որ խօսէր ընդ իս ունէր եղէգն չափոյ ոսկի, զի չափեսցէ զքաղաքն և զդրունսն նորա և զպարիսպն նորա։

16 Եւ քաղաքն քառակուսի դիրք ունի, և երկայնութիւն նորա իբրև զլայնութիւն. և չափեաց զքաղաքն եղէգնով ՚ի տասն հազարս ասպարիզաց. երկայնութիւն և լայնութիւն և բարձրութիւն նորա հաւասարք են։

17 Եւ չափեաց զպարիսպն նորա հարիւր քառասուն և չորս կանգուն, չափ մարդոյ որ է հրեշտակի։

18 Եւ շինուած պարսպին նորա ՚ի քարէ պատուականէ, և քաղաքն ոսկի մաքուր նման ապակւոյ մաքրոյ։

19 Եւ հիմունք պարսպին քաղաքին զարդարեալ էին ամենայն պատուական քարամբ. հիմն առաջին յասպեայ, երկրորդ սափիր, երրորդ քաղկեդոն, չորրորդ զմրուխտ,

20 Հինգերորդ սարդիոն, վեցերորդ սարդիոս, եօթներորդ քրիսոլիթ, ութերորդ բերիղղոս, իններորդ տոպազ, տասներորդ քրիսոպրաս, տասնմեկերորդ յակինթոս, տասներկուերորդ ամեթիստոս։

21 Եւ տասն և երկու դրունքն տասն և երկու մարգարտիք էին, և իւրաքանչիւր դրունք ՚ի մի մարգարտէ էին. և հրապարակ քաղաքին ոսկի մաքուր իբրև զապակի թափանցիկ։

22 Եւ տաճար ոչ տեսի ՚ի նմա. զի Տէր Աստուած Ամենակալ տաճար նորա է, և Գառն։

23 Եւ քաղաքն ոչ պիտի ունի զարեգակն և զլուսին զի լուսաւորեսցեն նմա. զի փառք Աստուծոյ լուսաւորեցին զնա, և լոյս նորա Գառն է։

24 Եւ ազգք որ կեցցեն ՚ի լուսոյ նորա գնասցեն, և թագաւորք երկրի բերցեն զփառս իւրեանց ՚ի նա։

25 Եւ դռունք նորա ոչ գոցեսցին ՚ի տուընջեան, զի գիշեր ոչ իցէ անդ։

26 Եւ բերցեն զփառս և զպատիւ ազգաց ՚ի նա։

27 Եւ ոչ մտանիցէ ՚ի նա ամենևին պղծութիւն, և ոչ որ առնէ զանարգութիւն և զստութիւն, այլ միայն որ գրեալ են ՚ի գրքի կենդանութեան Գառնոյ։

ԻԲ

1 Եւ ցոյց ինձ զգետ մի ջրոյ կենդանի, պայծառ իբրև զբիւրեղ, որ ելանէր յաթոռոյ Աստուծոյ և Գառնոյ,

2 ՚ի մէջ հրապարակի քաղաքին. և յայսմ և յայնմ կողմանէ գետոյն ծառ կենաց, որ արդիւնաբերէ զերկոտասան պտուղս, զմի մի պտուղ յամսեան իւրում տայ. և տերեւք ծառոյն ՚ի բժշկութիւն ազգաց։

3 Եւ ամենայն նզովք մի՛ եւս ոչ լիցին. և աթոռ Աստուծոյ և Գառնոյ ՚ի նմա լիցի, և ծառայք նորա պաշտեսցեն զնա,

4 Եւ տեսցեն զերեսս նորա, և անուն նորա ՚ի ճակատս իւրեանց։

5 Եւ գիշեր մի՛ եւս ոչ լիցի, և ոչ պիտի լուսոյ և ոչ պիտի արեգական, զի Տէր Աստուած լուսաւորեսցէ նոցա, և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ասէ ինձ. Ճշմարիտ են բանք սոքա. և Տէր Աստուած հոգեաց մարգարէից առաքեաց զհրեշտակ իւր ցուցանել ծառայից իւրոց զորս պարտ է շուտով լինել։

7 Եւ ահա՛ եկից շուտով. երանի՛ որ պահէ զբանս մարգարէութեան գրքիս սորին։

8 Եւ ես Յովհաննէս որ լսէի և տեսանէի զսոսա. և յորժամ լսէի և տեսանէի՝ անկայ երկիր պագանել առաջի ոտից հրեշտակին որ ցուցանէր ինձ զսոսա։

9 Եւ ասէ ինձ. Մի՛ արասցես. զի ծառայ ընկերակից քո եմ և եղբարց քոց մարգարէից, և որ պահեն զբանս գրքիս սորին. զԱստուած երկիր պագանել։

10 Եւ ասէ ինձ. Մի՛ կնքեր զբանս մարգարէութեան գրքիս սորին. զի ժամանակ մերձ է։

11 Որ անիրաւ է՝ անիրաւեսցի՛ եւս. և որ պիղծ է՝ պղծեսցի՛ եւս. և որ արդար է՝ արդարասցի՛ եւս. և որ սուրբ է՝ սրբասցի՛ եւս։

12 Եւ ահա՛ եկից շուտով, և վարձս իմ ընդ իս է, հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց։

13 Ես եմ Ալփա և Օմեգա, սկիզբն և վախճան, առաջին և յետին։

14 Երանի՛ որ լուանան զպատմուճանս իւրեանց, զի իշխանութիւն լիցի նոցա ՚ի ծառն կենաց, և մտանիցեն ՚ի քաղաքն դռամբք։

15 Արտաքոյ են շունք և դեղատունք և պոռնիկք և սպանողք և կռապաշտք և ամենայն որ սիրէ և առնէ զստութիւն։

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել ձեզ զայս ՚ի վերայ եկեղեցեաց. ես եմ արմատ և ազգ Դաւթի, աստղ պայծառ առաւօտեան։

17 Եւ Հոգին և հարսն ասեն. Եկ՛. և որ լսէ՝ ասասցէ. Եկ՛. և որ ծարաւի՝ եկեսցէ, և որ կամի՝ առցէ զջուր կենդանի ՚ի գնոյ։

18 Վկայեմ ես ամենայն որ լսէ զբանս մարգարէութեան գրքիս սորին. եթէ ոք յաւելցէ ՚ի սոսա, յաւելցէ Աստուած ՚ի վերայ նորա զհարուածս որ գրեալ են ՚ի գրքիս սորին։

19 Եւ եթէ ոք պակասեցուցանիցէ ՚ի բանից գրքոյ մարգարէութեան սորին, պակասեցուցանիցէ Աստուած զբաժին նորա ՚ի գրքէ կենդանութեան և ՚ի քաղաքէ սրբոյ և ՚ի յորում գրեալ են ՚ի գրքիս սորին։

20 Ասէ վկայն զայս. Ես եկից շուտով. ամէն. եկ՛ Տէր Յիսուս։

21 Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսեան։ Ամէն։

գաւօրուԹիւն գազանին՝ մինչև կատարեսցի բանն Աստուծոյ։

18 Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի գԹագաւորուԹիւն ի վերայ Թագաւորացն երկրի։

ԳԼՈՒԽ ԺԷ։

1 Եւ եկեալ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր իշխանուԹիւն մեծ, և երկիր լուսաւորեցաւ ի փառաց նորա։

2 Եւ աղաղակեաց ի ձայն մեծ՝ ասելով. անկաւ Բաբելոն մեծն, որ եղեալ էր բնակուԹիւն դիւաց՝ և արգել ամենայն այսոց պղծոյ, և բանտ պահպանուԹեան ամենայն ոգւոյ անսրբոյ՝ և ատելոյ։

3 Վասն զի ի բարկուԹենէ գինւոյ պոռնկուԹեան նորա արբին ամենայն ազգք և Թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան. և վաճառականք երկրի՝ ի նորա զօրուԹեանն յօրանալոյ մեծացան։

4 Եւ լուայ ձայն յերկնից

և որ (իրանց) ԹագաւորուԹիւնըն տան գազանին՝ մինչև որ Աստուծոյ խօսքն կատարվի։

18 Եւ կինն որ տեսիր՝ էն մեծ քաղաքն է, որ ԹագաւորուԹիւն է անում երկրի ԹագաւորուԹիւնների վերայ։

ԳԼՈՒԽ ԺԷ։

1 Եւ էս բաներիցս եաւ տեսի որ մին ուրիշ հրեշտակ երկնքիցն վէր էր գալիս, որ մեծ իշխանուԹիւն ունէր, և երկիրն լուսաւորվեցաւ նորա փառքիցն։

2 Եւ մեծ ձայնով աղաղակեց և ասաց՝ վէր ընկաւ էն մեծ Բաբիլոնն, և էլաւ դևերի բնակուԹիւն, և ամէն պիղծ հոգիների կենալոց տեղ և ամէն անասուրբ և ատելի հոգիների բանտ։

3 Պատճառն որ նորա պոռնկուԹեան գինոյ բարկուԹենիցն խմեցին ամէն ազգերն և երկրի Թագաւորներն՝ որ նորա հետ պոռնկեցան. և երկրի վաճառականներն հարըստացան նորա փափկուԹեան առատուԹենիցն։

4 Եւ ձայն լսեցի երկնքից

զի ասէր · եկէք ՚ի միջոյ դո-
րա ժողովուրդ իմ, զի մի
հաղորդ լիցիք մեղաց դորա,
և մի զհարուածս դորա ըն-
դունիցիք ·

5 Զի հասին կոյտք մեղք
դոյա մինչև յերկինս. և յի-
շեաց Աստուած զամբարշտու-
թիւնս դորա ։

6 Իւ հատուցանէ դմա՝
որպէս և հատոյց մեղ, և
առցէ դա երկապատիկ ըստ
գործոց իւրոց · և զբաժակն
որով խառնեացն՝ խառնեցէք
դմա կրկին ։

7 Իւ որչափ փառաւոր-
եաց զինքն և խայտաց, այն-
չափ հատուցէք դմա սուգ ·
զի ՚ի սրտի իւրում ասէր՝
Թէ յաւիտեան ժամ նստայց
ես Թագուհի՝ և այրի ոչ ես
եղէց ։

8 Վասն այնորիկ ՚ի միում
աւուր եկեսցեն ՚ի վերայ դո-
րա հարուածք՝ մահ և սուգ
և սով, և ՚ի հուր այրեսցի ·
զի հզօր է Տէր Աստուած՝
որ դատեցաւն զնա ։

9 Իւ լայցեն՝ և կոծես-
ցին ՚ի վերայ նորա թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան և զգայնացան, յորժամ տեսցեն զծուխ հրոյ այրման նորա ։

10 Կայցեն ՚ի հեռաստանի վասն երկիւղի տանջանաց նորա՝ և ասասցեն · վա՛յ վա՛յ քաղաքդ մեծ Բաբելոն, քաղաք հզաւոր, զի ՚ի միում ժամու եկն դատաստան քո ։

11 Իւ վաճառականք երկրի լայցեն և սգասցեն ՚ի վերայ նորա, զի զապրանս նոցա ոչ ոք գնէ յետ այսորիկ ։

12 Զապրանս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և մարգարտաց և բիսոսի և ծիրանեաց և մետաքսի և կարմրոյ և ամենայն տեսակ տեսակ փայտից անուշահոտից և ամենայն տեսակ կահուց ոսկեղինաց և կահուց պղնձեղինաց և կահուց երկաթեղինաց և կահուց մարմարիոնեղինաց ։

13 Եւ դարչնոյ և համեմոյ և խնկոյ և միւռոնի և կնդրուկի և գինւոյ և իւղոյ և սեւխոտոյ և ցորենոյ և անասնոց և ոչխարաց և ձիոց և կառաց և մարմնոց և հոգիս մարդկան ։

14 Եւ պտուղք ցանկութեան հոգւոյ քո հեռացան ՚ի քէն, և ամենայն քաղցր և պայծառ կորեան ՚ի քէն, և ոչ ևս գտցեն զնոսա յետ այսորիկ ։

15 Վաճառականք այսոցիկ որ հարստացան ՚ի նմանէ՝ կայցեն ՚ի հեռաստանի վասն երկիւղի տանջանաց նորա՝ լալով և սգալով ։

16 Եւ ասասցեն · վա՛յ վա՛յ քաղաքդ մեծ որ զգեցեալ էիր սուսերազգեստ և ծիրանեաց և կարմրոյ և ոսկւով զարդարեալ և քարամբ պատուականաւ և մարգարտաւ ։

17 Զի ՚ի միում ժամու աւերեցաւ այսքան հարստութիւն · և ամենայն կառավար և ամենայն որ ՚ի նաւս գնայ և նաւավարք և որ ՚ի ծովու գործեն՝ հեռի կացին ։

18 Եւ աղաղակեցին տեսեալ զծուխ հրոյ այրման նորա՝ և ասացին · որ նման քաղաքի մեծի քան զքաղաքդ ։

19 Եւ հեղին զհող ՚ի գլուխս իւրեանց և աղաղակեցին լալով և սգալով և ասացին · վա՛յ վա՛յ քաղաքդ մեծ որ ՚ի քեզ հարստացան ամենեքին որ ունէին նաւս ՚ի ծովու ՚ի պատուականութենէ նորա ՚ի միում ժամու աւերեցաւ ։

20 Ուրախ լեր ՚ի նմանէ երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք · զի դատաստան ձեր դատեաց Աստուած ՚ի նմանէ ։

21 Եւ առ հրեշտակ մի զոր հզաւոր զհանդերձ ՚ի ձեռին իւրում իբրև զքար մեծ ջրհեղեղի և ընկէց ՚ի ծովն և ասաց · այսպէս ՚ի միում ժամու ընկեցցի Բաբելոն քաղաք մեծ և ոչ ևս գտցի ։

22 Եւ ձայն քնարահարաց և երգեցողաց և փողահարաց և շեփորահարաց ոչ ևս լուիցի ՚ի քեզ ։ և ամենայն արհեստաւոր ամենայն արհեստի ոչ ևս գտցի ՚ի քեզ ։ և ձայն աղաց ոչ ևս լուիցի ՚ի քեզ ։

23 Եւ լոյս ճրագի ոչ ևս լուսաւորեսցէ ՚ի քեզ ։ և ձայն փեսայի և հարսնեաց ոչ ևս լուիցի ՚ի քեզ ։ զի վաճառականք քո էին մեծամեծք երկրի ։ զի ՚ի գինւոյ քոյ մոլորեցան ամենայն ազգք ։

24 Եւ ՚ի նմա գտաւ արիւն մարգարէից և սրբոց և ամենայն սպանելոց ՚ի վերայ երկրի ։

ին ՚ի վերայ դորա թաղա-
ւորք երկրի, որք ընդ դմա
պառնկեցան և խաղային. և
հեծեսցեն՝ յորժամ տեսցեն
ղծուածս կիզման տանջանաց
դորա։

10 ՚Ի հեռատանել կայցեն
վասն երկիւղի տանջանաց դո-
րա՝ և ասասցեն. վայ քաղա-
քիդ մեծի բաբելովնի. քա-
դաք հզօր, զի ՚ի միում ժա-
մու եկին հասին դատաստանք
քո։

11 Եւ վաճառականք երկրի
ողբասցեն և սգասցեն ՚ի վե-
րայ քո, զի բեռն նոցա ոչ
ոք գնէ։

12 Եւ շահք որ ՚ի քէն՝
ոչ ևս իցէ՝ ոսկւոյ և արծա-
թոյ և ականց պատուականաց՝
և մարգարտաց և բեհեզոյ և
ծիրանւոյ և ոսկեթել և որ-
դան, և ամենայն փայտ խնկոյ՝
և ամենայն անօթ փղոսկրեայ,
և ամենայն անօթ ՚ի փայտե
պատուականէ և ՚ի պղնձոյ
և յերկաթոյ և ՚ի կաւոյ։

13 Եւ կինաման և ամ-
նայն խունկ և իւղ և կնդ-
րուկ, և գինի և ձէթ և նա-
շիհ և ցորեան, և ստացուա-

դորա վերայ երկրի թագաւոր-
ներն՝ որ դորա հետ պոռ-
նկեցան և խաղային. և
ողք կանեն երբոր տանջան-
քով դորա այրվելոյ ծուխն
կրտեսանեն։

10 Հեռու կրկանգնեն. դո-
րա տանջանքի վախեցն՝ և կա-
սեն. վայ քեզ, մե՛ծ քաղաք
բաբիլ՛ոն, զաւրաւոր քաղաք.
ինչու որ հենց մի՛ ժամուն
(սահաթո՛ն) քո դատաստանդ
եկաւ հասաւ։

11 Եւ երկրի վաճառակա-
ներն ողբ և սուգ կանեն քեզ
վերայ, ինչու որ իսկի մինն
չըկայ որ նորանց բեռներըն
առնէ։

12 Եւ քեզանից էլ շահ
չի՛ լինիլ. ոսկոյ և արծաթի
և պատուական ակունքների՝
և մարգարիտի և բեհեզի և
ծիրանի, և ոսկեթելի և կար-
միր որդի (ղըռմըզի) և ամեն
կերպ խնկե փայտի՝ և ամեն
փղի ոսկորից շինած ամաններ.
և ամեն ապնիս փայտից և
պղնձից և երկաթից և կիր
(ճըռճո՛) քարից շինած աման-
ներ։

13 Եւ կինամո՛ն (ջարչի՛ն) և
ամեն կերպ խունկ, և իւղ և
կնդրուկ, և գինի և ձէթ, և
շաբմաղի ալիւր և ցորեն, և

մեծք ամենայն, արջառ և ոչխար· և երիվարաց և կառաց՝ որ վայել է մարմնոց և ոգւոց մարդկան։

14 Եւ ամենայն ցանկութիւն անձին քո գնաց՝ ի քէն, և ամենայն լուսաւիայլ վայելչութիւնն, պարարան և գերն և սպիտակն գնաց՝ ի քէն, և ոչ ևս գայցես զայդ։

15 Եւ ամենայն շահաւաճառք այսոքիւք մեծացեալք՝ ի քէն՝ ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց քոց լալով՝ և սուգ առնելով։

16 Եւ ասասցեն· վայ վայ քաղաք մեծ· որ զգեցեալ էիր բեհեզս և ծիրանիս և որդան և ոսկեզօծս՝ և քարինս պատուականս՝ և մարգարիտս·

17 Զի ի միում ժամու պակասեցաւ այսչափ մեծութիւն քո· և ամենայն նաւավար՝ և ամենայն որ ի տեղւոյն տեղեկանաւն, և նաւազք և որք միանգամ ուղևորեալք դործեն՝ ի հեռաստանէ կայցեն լալով,

18 Եւ աղաղակեսցեն՝ տեսնելով զծուխ հրոյ նորա՝ և ասացեն՝ զո՞ր նման է քաղաքս մեծ։

19 Եւ հեղուն զհող ի գլուխս իւրեանց՝ և աղաղակեսցեն լալով և սգալով՝ և ասացեն· վայ վայ քաղաք մեծ· որ ընդ նմա մեծացան ամենեքին որ ունէին զնաւս ի ծովու ի մասնաւորութենէ նորա՝ զի ի միում ժամու աւերեցաւ։

20 Ուրախ լեր ի նմա երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք՝ զի դատեաց Աստուած զդատաստան ձեր ի նմանէ։

21 Եւ առ հրեշտակ մի զոր հզօր՝ զհանդերձ իբրև զքար մի մեծ՝ և եդ զնա ի ծովն՝ և ասաց· այսպիսի մեծութեամբ արկցի քաղաքն Բաբելոն՝ և ոչ ևս գտցի։

22 Եւ ձայն քնարահարաց և երգեցողաց և փողահարաց և շեփորահարաց՝ ոչ ևս լուիցի ի քէն ամենևին, և ամենայն արուեստաւոր ամենայն արուեստի ոչ ևս գտցի ի քէն, և ձայն աղաց ոչ ևս լուիցի ի քէն,

23 և լոյս մոմեղինի ոչ ևս երևեսցի ի քէն, և ձայն փեսայի և հարսնեաց ոչ ևս լուիցի ի քէն· զի վաճառականք քո էին մեծամեծք երկրի, զի ի հրապուրանաց քոց ամենայն ազգք մոլորեցան։

24 Եւ ի նմա գտան զարիւն մարգարէից և սրբոց՝ և ամենայնի որ սպանեալ էին ի վերայ երկրի։

ԺԹ

1 Եւ յետ այսորիկ լուայ ձայն մեծ ամենայն բազմութեան երկնից՝ որ ասէին· ալէլուիա· փրկութիւն և փառք և զօրութիւն Աստուծոյ մերոյ է։

2 Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա· զի դատեաց զպոռնիկն մեծ՝ որ ապականէր զերկիր ի պոռնկութենէ իւրմէ՝ և վրէժ հատոյց արեան ծառայից իւրոց ի ձեռանէ նորա։

3 Եւ երկրորդ անգամ ասացին· ալէլուիա· և ծուխ նորա ելանէ յաւիտեանս յաւիտենից։

4 Եւ անկան քսան և չորք երէցքն և չորք կենդանիքն՝ և երկիր պագին Աստուծոյ որ նստէր ի վերայ աթոռոյն՝ և ասացին· ամէն ալէլուիա։

5 Եւ ելանէ ձայն ի վերայ աթոռոյն՝ որ ասէ· օրհնեցէք զԱստուած մեր ամենայնք ծառայք նորա՝ և որ երկնչիք ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք։

6 Եւ լուայ իբրև զձայն բազմութեան մեծի՝ և իբրև զձայն ջուրց բազմաց՝ և իբրև զձայն հզօր որոտման՝ որ ասէին· ալէլուիա· զի տիրացաւ Տէր Աստուած մեր ամենակալ։

7 Ցնծասցուք և ուրախ լիցուք և տացուք զփառս նմա· զի եկեալ է հարսնիքն Գառնին՝ և կինն նորա պատրաստեաց զանձն իւր։

8 Եւ տուաւ նմա զգենուլ զգեստ պատուական՝ փայլուն և սպիտակ· զի զգեստ պատուականն արդարութիւնք են սրբոցն։

9 Եւ ասէ ինձ հրեշտակն· գրեա· երանի՝ որ ընդ հարսնիսն Գառնին կոչեցելոցն են։ Եւ ասէ ինձ· այս են ճշմարիտ բանք Աստուծոյ։

10 Եւ անկայ առաջի ոտից նորա՝ երկիր պագանել նմա։ Եւ ասէ ինձ· տես մի արասցես զայդ· զի ծառայ եմ ես քեզ և եղբարց քոց որ ունին զվկայութիւն Յիսուսի· զԱստուած երկիր պագ։ Զի վկայութիւն Յիսուսի է հոգի մարգարէութեան։

11 Եւ տեսի զերկինս բացեալս՝ և ահա ձի սպիտակ՝ և որ նստէր ի վերայ նորա՝ կոչեցեալ հաւատարիմ և ճշմարիտ՝ և արդարութեամբ դատէ և պատերազմի։

12 Եւ աչք նորա իբրև զբոց հրոյ՝ և ի գլուխ նորա պսակք բազումք՝ և անուն գրեալ որ ոչ ոք գիտէ զայն՝ բայց միայն ինքն։

13 Եւ զգեցեալ էր հանդերձ արեամբ շաղախեալ՝ և կոչեցաւ անուն նորա Բան Աստուծոյ։

14 Եւ զօրքն որ յերկինս էին՝ հետևեցան նմա ձիովք սպիտակաւք՝ զգեցեալք բեհեզիս սպիտակս և մաքուրս։

15 Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր երկսայրի՝ զի նովաւ հարկանիցէ զազգսն՝ և նա հովուեսցէ զնոսա երկաթեայ գաւազանաւ՝ և նա կոխեսցէ զհնձան գինւոյ բարկութեան և սրտմտութեան Աստուծոյ ամենակալի։

16 Եւ ունի ի հանդերձի իւրում և ի ազդրի իւրում անուն գրեալ՝ Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց։

17 Եւ տեսի զհրեշտակ մի կանգնեալ ի մէջ արեգական՝ և աղաղակեաց ձայնիւ մեծաւ՝ և ասէ առ ամենայն թռչունս որ թռչին ի միջի երկնից· եկայք ժողովեցարուք ի ճաշ մեծի Աստուծոյ՝

18 զի կերիջիք զմարմինս թագաւորաց և զմարմինս հազարապետաց և զմարմինս զօրաւորաց և զմարմինս ձիոց և հեծելազորաց նոցա՝ և զմարմինս ամենայն ազատաց և ծառայից՝ և փոքունց և մեծամեծաց։

19 Եւ տեսի զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողովեալս՝ առնել պատերազմ ընդ հեծելազորին և ընդ զօրին որ ելանէր ի բերանոյ նորա։

20 Եւ բռնեցաւ գազանն և ընդ նմա սուտ մարգարէն որ արարեալ էր զհրաշս առաջի նորա՝ որովք մոլորեցոյց զամենեսեան որ ունէին զկնիք գազանին և որ երկիր պագանէին պատկերի նորա՝ կենդանի արկանեցան երկու գազանքն ի ծովն որ այրի հրով և ծծմբով։

21 Եւ զայլսն սպանին սրով հեծելազորին որ ելանէր ի բերանոյ նորա՝ և ամենայն թռչունք կշտացան ի մարմնոցն նոցա։

Κ

1 Եւ տեսի հրեշտակ մի իջանէր յերկնից՝ որ ունէր զբանալի անդնդոցն և շղթայ մեծ ի ձեռին իւրում։

2 Եւ բռնեաց զվիշապն զօձն հինն՝ որ է սատանայ և Սատանայ՝ և կապեաց զնա հազար ամ։

3 Եւ ձգեաց զնա յանդունդն՝ և եդ զնա ի նմա՝ և կնքեաց զդուռն նորա ի վերայ նորա՝ մինչև լցցին հազար ամքն· և յետ այսորիկ պարտ է արձակել զնա սակաւ ինչ ժամանակ։

4 Եւ տեսի զաթոռս՝ և նստան ի վերայ նոցա՝ և դատաստան տրուեցաւ նոցա։ Եւ զհոգիս նոցա որ սպանեալ էին վասն վկայութեան Յիսուսի և վասն բանին Աստուծոյ՝ և որ ոչ երկիր պագին գազանին և ոչ պատկերի նորա՝ և ոչ առին զկնիք նորա ի ճակատս իւրեանց և ի ձեռս իւրեանց՝ և կեցին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ։

5 Եւ մեռեալքն ոչ կեցին մինչև լցցին հազար ամքն։ Սա է յարութիւն առաջին։

6 Երանի և սուրբ է որ ունի զբաժին յարութեան առաջնոյ՝ ի սոսա երկրորդ մահ ոչ իշխէ՝ այլ քահանայք Աստուծոյ և Քրիստոսի լինիցին և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ։

7 Եւ յորժամ լցցին հազար ամքն՝ արձակեսցի Սատանայ ի բանտէ իւրմէ։

8 Եւ ելցէ մոլորեցուցանել զազգսն որ ի չորս կողմանս երկրի՝ զԳոգ և զՄագոգ՝ ժողովել զնոսա ի պատերազմ՝ որոց թիւ իբրև զաւազ ծովու։

9 Եւ ելին ի լայնութիւն երկրի՝ և պատեցին զբանակ սրբոցն և զքաղաքն սիրելի՝ և իջին հուր յերկնից ի վերայ նոցա՝ և կերիցէ զնոսա։

10 Եւ սատանայ որ մոլորեցուցանէր զնոսա՝ արկցի ի ծովն հրոյ և ծծմբոյ՝ ուր և գազանն և սուտ մարգարէն՝ և տանջեսցին ի դարս դարուց։

11 Եւ տեսի զաթոռ մեծ սպիտակ՝ և զնստեալն ի վերայ նորա՝ յորմէ փախեան երկիր և երկինք՝ և տեղի չգտաւ նոցա։

12 Եւ տեսի զմեռեալսն մեծս և զփոքունս՝ կանգնեալս առաջի աթոռոյն՝ և գրքեր բացան՝ և այլ գիրք մի բացաւ որ է կենդանութեան գիրքն՝ և դատեցան մեռեալքն ի գրեալսն ի գրքերն՝ ըստ գործոց իւրեանց։

13 Եւ ետ ծովն զմեռեալսն որ ի նմա էին՝ և մահ և դժոխք ետուն զմեռեալսն որ ի նոսա էին՝ և դատեցան ամենեքին ըստ գործոց իւրեանց։

14 Եւ մահ և դժոխք արկանեցան ի հուր՝ սա է մահ երկրորդ՝ հուր այրեցուցանէ։

15 Եւ որ ոչ գտաւ գրեալ ի գրքի կենդանութեան՝ արկանեցաւ ի հուր։

ԻԱ

1 Եւ տեսի երկինս նոր և երկիր նոր՝ զի երկինքն առաջինք և երկիրն առաջին անցին գնացին՝ և ծովն ոչ է ևս։

2 Եւ զքաղաքն սուրբ Երուսաղէմ նոր՝ տեսի զնա իջանէր յերկնից ի կողմանէ Աստուծոյ՝ պատրաստեալ իբրև զհարսն զարդարեալ առ արանս իւր։

3 Եւ լուայ ձայն մեծ յաթոռոյն՝ որ ասէր· ահա խորան Աստուծոյ ընդ մարդկան՝ և բնակեսցէ ընդ նոսա՝ և նոքա լինիցին նորա ժողովուրդք՝ և ինքն Աստուած ընդ նոսա լիցի նոցա Աստուած։

4 Եւ սրբեսցէ Աստուած զամենայն արտասուս ի նոցանէ՝ և մահ ոչ իշխէ ևս՝ և ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ իշխէ ևս՝ զի առաջինքն անցին գնացին։

5 Եւ ասէ նստեալն ի վերայ աթոռոյն· ահա նոր ամենայն առնեմ։ Եւ ասէ ինձ· գրեա· զի ճշմարիտ և հաւատարիմ են բանքս այսոքիկ։

6 Եւ ասէ ինձ· եղեն։ Ես եմ Ա և Ո՝ սկիզբն և վախճան։ Ես ծարաւեցելոյն տացեմ ի ներքինէ աղբերէ կենաց ընդ ձրի։

7 Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զամենայն՝ և եղէց նմա Աստուած՝ և նա եղիցի ինձ որդի։

8 Բայց երկչոտաց և անհաւատից և պղծելոց և մարդասպանաց և պոռնկաց և գաղտնադիտաց և կռապաշտաց և ամենայն սուտ երկրպագուաց՝ բաժին նոցա լիցի ի լճի հրոյ և ծծմբոյ՝ որ է մահ երկրորդ։

9 Եւ եկն առ իս մի ի հրեշտակաց եօթն որ ունէին զեօթն բաժակս լի եօթն պատուհասաց վերջնոց՝ և խօսեցաւ ընդ իս՝ և ասէ· եկ ցուցից քեզ զհարսն զկին Գառնին։

10 Եւ տարաւ զիս ի հոգի ի լեառն մեծ և բարձր՝ և ցոյց ինձ զքաղաքն սուրբ Երուսաղէմ՝ որ իջանէր յերկնից ի կողմանէ Աստուծոյ՝

11 ունելով զփառս Աստուծոյ՝ և լոյս նորա նման քարոյ թանկագնի իբրև զքար յասպեայ՝ որ իբրև զբիւրեղ պայծառ։

12 Եւ պարիսպ նորա մեծ և բարձր՝ ունելով դրունս տասներկու՝ և ի դրունսն տասներկու հրեշտակք՝ և անուանք գրեալք որ են անուանք տասներկու ցեղից որդւոց Իսրայէլի։

13 Ի կողմանէ արևելից դրունք երեք՝ և ի կողմանէ հիւսիսոյ դրունք երեք՝ և ի կողմանէ հարաւոյ դրունք երեք՝ և ի կողմանէ արևմտից դրունք երեք։

14 Եւ պարիսպ քաղաքին ունի հիմունս տասներկու՝ և ի նոսա անուանք տասներկու առաքելոցն Գառնին։

15 Եւ որ խօսէր ընդ իս՝ ունէր եղեգն չափոյ ոսկի՝ զի չափեսցէ զքաղաքն և զդրունսն նորա և զպարիսպն նորա։

16 Եւ քաղաքն քառակուսի կայ՝ և երկայնութիւն նորա իբրև զլայնութենէ նորա։ Եւ չափեաց զքաղաքն եղեգամբն ի տասն հազարս ասպարիզաց՝ և երկայնութիւն նորա և լայնութիւն և բարձրութիւն հաւասարք են։

17 Եւ չափեաց զպարիսպ նորա հարիւր քառասուն և չորս կանգուն՝ չափ մարդոյ որ է հրեշտակի։

18 Եւ շինուած պարսպին նորա ի քարէ յասպեայ՝ և քաղաքն ոսկի մաքուր նման ապակւոյ մաքրոյ։

19 Եւ հիմունք պարսպին քաղաքին զարդարեալ են ամենայն քարանց պատուականաց՝ հիմն առաջին յասպեայ՝ երկրորդ սափիր՝ երրորդ քաղկեդոն՝ չորրորդ զմրուխտ՝

20 հինգերորդ սարդիոն՝ վեցերորդ սարդիոս՝ եօթներորդ քրիսողիտ՝ ութերորդ բերիղղոս՝ իններորդ տոպազ՝ տասներորդ քրիսոպրասոս՝ տասնմեկերորդ յակինթոս՝ տասներկուերորդ ամեթիստոս։

21 Եւ տասներկու դրունքն տասներկու մարգարիտք են՝ և իւրաքանչիւր դրունք ի մի մարգարտէ էին՝ և հրապարակ քաղաքին ոսկի մաքուր իբրև զապակի թափանցիկ։

22 Եւ տաճար ոչ տեսի ի նմա՝ զի Տէր Աստուած Ամենակալ տաճարն է նորա և Գառն։

23 Եւ քաղաքն ոչ պիտի ունի զարեգակն և զլուսին՝ զի փայլեցուցանիցեն նմա՝ զի փառք Աստուծոյ լուսաւորեցին զնա՝ և լոյս նորա Գառն է։

24 Եւ ազգք որ կեցցեն՝ գնասցեն ի լոյս նորա՝ և թագաւորք երկրի բերցեն զփառս իւրեանց ի նա։

25 Եւ դրունք նորա ոչ գոցեսցին ցերեկ՝ զի գիշեր ոչ իցէ անդ։

26 Եւ բերցեն զփառս և զպատիւ ազգաց ի նա։

27 Եւ ոչ մտցէ ի նա ամենևին ոչ ինչ պղծելի՝ և ոչ որ առնէ զպղծութիւն և զստութիւն՝ բայց միայն որ գրեալ են ի գրքի կենդանութեան Գառնին։

ԻԲ

1 Եւ ցոյց ինձ գետ մի ջրոյ կենդանի՝ պայծառ իբրև զբիւրեղ՝ որ ելանէր յաթոռոյ Աստուծոյ և Գառնին։

2 Ի մէջ հրապարակի նորա՝ և յայսկոյս և յայնկոյս գետոյն՝ ծառ կենաց՝ որ արդիւնս տասներկու բերէ՝ իւրաքանչիւր ամսեան արդիւնս իւր տայ՝ և տերեւք ծառոյն ի բժշկութիւն ազգաց։

3 Եւ ամենայն նզովք ոչ իցեն ևս՝ և աթոռ Աստուծոյ և Գառնին ի նմա իցէ՝ և ծառայք նորա պաշտեսցեն զնա։

4 Եւ տեսցեն զերեսս նորա՝ և անուն նորա ի ճակատս իւրեանց։

5 Եւ գիշեր ոչ իցէ ևս՝ և ոչ պիտի լուսոյ ճրագի և ոչ պիտի լուսոյ արեգական՝ զի Տէր Աստուած լուսաւորեսցէ նոցա՝ և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ասէ ինձ· այս են ճշմարիտ և հաւատարիմ բանք։ Եւ Տէր Աստուած հոգեաց մարգարէիցն սրբոց առաքեաց զհրեշտակ իւր՝ ցուցանել ծառայից իւրոց զորս պարտ է լինել շուտով։

7 Եւ ահա գամ շուտով։ Երանի որ պահէ զբանս մարգարէութեան գրոցս այսորիկ։

8 Եւ ես Յովհաննէս եմ որ լսէի և տեսանէի զայս ամենայն։ Եւ յորժամ լսէի և տեսանէի՝ անկայ երկիր պագանել առաջի ոտից հրեշտակին որ ցուցանէր ինձ զայս ամենայն։

9 Եւ ասէ ինձ· տես մի արասցես զայդ· զի ծառայ եմ ես քեզ և եղբարց քոց մարգարէիցն և որ պահեն զբանս գրոցս այսորիկ։ ԶԱստուած երկիր պագ։

10 Եւ ասէ ինձ· մի կնքեսցես զբանս մարգարէութեան գրոցս այսորիկ· զի ժամանակ մերձ է։

11 Որ անիրաւ է՝ անիրաւեսցի դեռ՝ և որ պիղծ է՝ պղծեսցի դեռ՝ և որ արդար է՝ արդարասցի դեռ՝ և որ սուրբ է՝ սրբասցի դեռ։

12 Եւ ահա գամ շուտով՝ և վարձս իմ ընդ իս է՝ հատուցանել իւրաքանչիւր ումեք որպէս գործ իցէ նորա։

13 Ես եմ Ա և Ո՝ առաջին և յետին՝ սկիզբն և վախճան։

14 Երանի որ լուանան զհանդերձս իւրեանց՝ զի իշխանութիւն իցէ նոցա ի ծառն կենաց՝ և ի դրունսն մտանել ի քաղաքն։

15 Արտաքոյ են շունք և դեղատունք և պոռնիկք և մարդասպանք և կռապաշտք՝ և ամենայն որ սիրէ և առնէ զստութիւն։

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ՝ վկայել ձեզ զայս ամենայն ի վերայ եկեղեցեաց։ Ես եմ արմատ և ազգ Դաւթի՝ աստղ պայծառ առաւօտեան։

17 Եւ Հոգին և հարսն ասեն· եկ։ Եւ որ լսէ՝ ասասցէ· եկ։ Եւ որ ծարաւի՝ եկեսցէ։ Եւ որ կամի՝ առցէ ջուր կենաց ընդ ձրի։

18 Վկայեմ ես ամենայն որ լսէ զբանս մարգարէութեան գրոցս այսորիկ· եթէ ոք յաւելցէ ի նոսա՝ յաւելցէ Աստուած ի նա զհարուածս որ գրեալ են ի գրքի սմին։

19 Եւ եթէ ոք պակասեցուցանիցէ ի բանից գրոցս մարգարէութեանս այսորիկ՝ պակասեցուցանիցէ Աստուած զբաժին նորա ի գրքէ կենդանութեան՝ և ի քաղաքէ սրբոցն՝ և ի բաներէ գրեալ ի գրքի սմին։

20 Ասէ վկայեալն զայս ամենայն· ահա գամ շուտով։ Ամէն։ Եկ Տէր Յիսուս։

21 Շնորհք Տեր Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսեան։ Ամէն։

ասնելով զԴաւիթ կիզման նո-
րա, ասելով. ո՞ նման է քա-
ղաքիս այսմիկ մեծի։

19 Եւ արկանէն հող ՚ի վե-
րայ գլխոց իւրեանց՝ և դու-
ժալով ձայնիւ մեծաւ՝ լա-
լով և սգալով ասացեն.
վա՛յ վա՛յ քաղաք մեծ, որով ա-
մենեքեան մեծանայաք՝ որք
ունէաք գնաւս ՚ի ծովս՝ վասն
պատուականութեան քո. զի
՚ի միում ժամու ապականեալ
կործանեցար։

20 Ուրա՛խ լերուք ՚ի վերայ
նորա երկինք՝ և սուրբ առա-
քեալք և մարգարէք. զի դա-
տեցաւ Աստուած զդատաս-
տան ձեր ՚ի դմանէ։

21 Եւ առ հրեշտակն հզօր՝
քար մի իբրև զերկան մեծ,
և ընկէց ՚ի ծով՝ ասելով.
այսպէս յարձակմամբ անկցի
բաբելոն քաղաք մեծ, և
այլ ո՛չ ևս գտցի։

22 Եւ ձայն քնարերգաց և
երաժշտահանաց՝ արուեստա-
կանաց՝ և փողահարաց՝ և
թմբկի, այլ ո՛չ ևս լսի-
ցի ՚ի քեզ։

23 Եւ լոյս ճրագի և ձայն
երկանի՝ այլ ո՛չ ևս երևես-
ցի ՚ի քեզ և ձայն փեսայի և
այրեկաց ծուխն տեսանելով
(և) կասեն, ո՞ր (քաղաք) նման
է էս մեծ քաղաքիս։

19 Եւ հող կը քցեն իրանց
գըլխներին վերայ, և մեծ այ-
նով կաղաղակեն և լայ և սուգ
անելով կասեն. վա՛յ վա՛յ մեծ
քաղաք, որ (քեզանով) էինք
հարստանում ամէնքս, որ ծովի
վերայ նաւեր ունէինք քո
պատուականութեան համար.
ի՛նչպէս մի՛ ժամի (ահաւոր)
մէջ ապականված կործանե-
ցար։

20 Ուրա՛խ եղէք նորա վերայ
երկինք՝ և սուրբ առաքեալք
և մարգարէք, ինչու որ Աս-
տուած ձեր դատաստանը դա-
տեց դորա վերայ։

21 Եւ մի՛ զօրաւոր հրեշ-
տակ՝ մի՛ քար առաւ մեծ
ջաղացաքարի պէս՝ և քցեց
ծովի մէջ ասելով. Էսպէս
պիտի սաստիկ վերըվերկին բա-
բիլոնն մեծ քաղաքն, և էլ
չի՛ գանըվիլ։

21 Եւ էլ քնար ածողների,
և երաժիշտների և պրուես-
տականների, և փող փչողնե-
րի և թմբուկի ձայն չը՛պի-
տի լսվի քո միջումդ։

23 Եւ ճրագի լոյս և ջա-
ղայի ձայն էլ իսկի չը՛պիտի
երևի քո միջումդ. և փեսա-

ձայն հարսին այլ ոչ ևս լսել ի քեզ. և ոչ վաճառական քո՝ փառաւորք և մեծամեծք երկրի, որ զուարճացեալ էին ի քեզ. վասն զի կախարդութեամբ դեղոտուեցաւ քո ամենայն ազգք։

24 Եւ ի քեզ ամենայն արիւն մարգարէից և սրբոց գտաւ, և ամենայն դրելոց յերկրին կենդանեաց։

ի ձայն և հարսի ձայն էլ չըլսիւի լսվի քեզանումդ. և ոչ էլ քո վաճառականներդ երկրի (մարդկանց) մեծաւորներ և փառաւորներ (կըլիներ). որ նորանք քեզանով էին ուրախանում, պարծեանում. ինչու որ քո դեղոտուեցան կախարդութեանդ ամէն ազգերն մոլորվեցան։

24 Եւ քեզանումդ գտաւ մարգարէների և սրբերի և էն, ամէնի արիւնն որ կենդանեաց երկրումն դրված են։

ԳԼ. ԺԹ։

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով. ալէլուիա, փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն Աստուծոյ մերում.

2 Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա. զի դատեաց զպոռնիկն մեծ ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց նորա։

3 Եւ կրկին անգամ օրհնեցին և ասացին, ալէլուիա.

1 Եւ սրանից ետև մեծ բազմութեան ձայն լսեցի երկնքումն որ ասումէին. ալէլուիա. փրկութիւնն և փառք և պատիւ և զօրութիւնն մեր Աստուծոյն։

2 Ինչու որ նորա դատաստանները ճշմարիտ և արդար են, որովհետև էն մեծ պոռնիկին դատից իրան պոռնկութեանն. և իրան ծառաներուն արիւնի վրէժը խնդրեց նորա ձեռքից։

3 Եւ երկրորդ անգամ էլ (օրհնեցին) և ասացին. ալէ-

և ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից։

4 Եւ անկան քսան և չորք երիցունքն՝ և չորք կենդանիքն, և երկիրպագին Աստուծոյ՝ որ նստէր յաթոռն՝ ասելով, ամէն՝ ալէլուիա։

5 Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. օրհնեցէք զԱստուած մեր ամենայն ծառայք նորա, և որք երկնչիք ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք։

6 Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝ իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև զձայն հզօր որոտման, ասելով դարձեալ. ալէլուիա, զի թագաւորեաց Տէր Աստուած մեր ամենակալ։

7 Խնդամք՝ և ցնծամք և տամք փառս նմա, եկն հարսանիք գառնին, և կինն հարսն նորա պատրաստեաց զինքն։

8 Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է բեհեզն արդարութիւն սրբոցն։

9 Եւ ասէ ինձ հրեշտակն՝

լուիա. և նորա ծուխն դուրս էր գալիս յաւիտեանս յաւիտենից։

4 Եւ քսան և չորս երէցներն և չորս կենդանիքներն վէր ընկան՝ և երկրպագեցին Աստուծոյն՝ որ իրան փառաց աթոռի վերայ նստած էր՝ և ասացին. ամէն՝ ալէլուիա։

5 Եւ աթոռիցն ձայն էր դուրս գալիս՝ ասելով. օրհնեցէք Աստուծոյն՝ նորա ամէն ծառաներդ, և դուք էլ որ նորանից վախենում էք՝ փոքրներդ և մեծերդ։

6 Եւ մեծ բազմութեան ձայն լսեցի՝ շատ ջրերի ձայնի պէս, և սաստիկ որոտների ձայնի նման, որ ինէլ աւետում է. ալէլուիա. պատճառն որ ամենակարող Տէր Աստուածն է թագաւորել։

7 Խնդանք և ուրախ լինենք, և փառք տանք նորան. քանզի որ գառի հարսանիքն եկաւ (հասաւ). և կինն՝ (նորա հարսն) իրան պատրաստեց։

8 Եւ տրվեցաւ նորան՝ որ սպիտակ սուրբ և լուսով փայլող բեհեզ հագնի. քանզի որ բեհեզն սրբոց արդարութիւն է։

9 Եւ (էն երէցներից մինն

յիս. գրեա զայդ, երանելիք են ամենեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս հարսանեաց գառինն ։

10 Եւ ես անկեալ առաջի ոտից նորա, երկիրպագի նմա. և առ ցիս. անտես՝ մի անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք ունին վկայութիւն Յիսուսի. Զառաւն Աստուծոյ միայն երկրպագեա. քանզի հաստատութիւն Յիսուսի է տեսիլք, և հոգի մարգարէութեանդ. զի վկայութիւն Յիսուսի է հոգւոյն որբով, որ՝ ի մարգարէսն էր ։

11 Եւ տեսի զերկինս բացեալ, և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր ՚ի նմա՝ հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարութեամբ դատի՝ և պատերազմի ։

12 Եւ աչք նորա բոց հրոյ, և ՚ի վերայ գլխոյ նորա պսակք բազումք. և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտաստ՝ բայց ինքն. գրիր էգ. երանելի՛ են էն ամենքն՝ որ կանչեալ են գառին հարսանիքի ընթրիքն. (և ասաց ինձ՝ էս են Աստուծոյ Ճշմարիտ խօսքերն։)

10 Եւ ես վիր ընկայ նորա առաջին որ երկրպագուիւն անեմ նորան. և ասաց ինձ. զգոյշ կաց՝ մի ընկներ իմ առաջիս, ինչու որ ես էլ ծառայ ընկեր եմ քեզ հետ և քո եղբարներին հետ, որ Յիսուսի վկայութիւնը ունին. միակ Տէր Աստուծոյն երկրպագուիւն արա (պատճառն որ էգ ասելդ և մարգարէութեան հոգին Յիսուսի հաստատութեունն է.) ինչու որ Յիսուսի վկայութիւնն սուրբ հոգին է. որ մարգարէներուն էր ։

11 Եւ տեսի երկինքըն բացված, և ահա մի սպիտակ ձի, (և) նա՝ որ նորա վերայ հեծած էր, (կոչվումէր) հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարութեունով է դատաստան անում, և կռվում ։

12 Եւ նորա աչքերն կրակի բոյի (պէս էր,) և նորա գլխի վերայ շատ պսակներ կար, և անուն ունէր գրած, որ նո-

տէ՝ բայց միայն ինքն ։

13 Եւ արկեալ զնուրհաւ հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն նորա՝ բան Աստուծոյ ։

14 Եւ զօրավարք երկնից՝ և զօրք երկնից պէտ էր թային նորա ձիով սպիտակաւք, զգեցեալ բեհեզս սուրբս և սպիտակս ։

15 Եւ ՚ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեայ. և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման բարկութեան Աստուծոյ ամենակալի ։

16 Եւ ունէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ և ՚ի վերայ անդամոյ իւրոց գիր գրեալ. Թագաւոր թագաւորաց, և Տէր տերանց ։

17 Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ՚ի վերայ արեգական, զի աղաղակեաց ՚ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ ։

18 Եւ կերիջիք զմարմինս թագաւորաց, և (զմարմինս հզօրաց,) և զմարմինս երիվարան իսկի մինն չի գիտեմ. բայց միայն ինքն ։

